ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես բուհական ուսումնական ձեռնարկ տնտեսագիտական մասնագիտությունների համար

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հ. Բ. Ղուշչյանի ընդհանուր խմբագրությամբ և
ղեկավարությամբ

ԵՐԵՎԱՆ
Տնտեսագետ
2005

ՀՏԴ 33(07)
ԳՄԴ 65g73
Մ 188

Հրատարակվում է ԵՊՏԻ
գիտական խորհրդի որոշմամբ

Գրախոս՝ տ.գ.դ., պրոֆ. Ա.Հ. Արշակյան

Մ 188 Մակրոտնտեսական կարգավորում: Ուս. ձեռնարկ.- (տ.գ.դ., պրոֆ. Հ. Բ. Ղուշչյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ), - Եր.: Տնտեսագետ, 2005, 610 էջ:

Ուսումնական ձեռնարկում լուսաբանվում են մակրոտնտեսական կարգավորման ուսումնասիրության առարկան և խնդիրները, մեթոդաբանությունը և մեթոդները, տնտեսական մոդելները, հոսքերը, պաշարները և մակրոտնտեսական ցուցանիշների համակարգն ու դրան ներկայացվող պահանջները: Առանձնակի ուշադրություն է դարձվում մակրոտնտեսական կարգավորման պետական մարմինների տնտեսական գործառույթների մեկնաբանմանը, ՀՀ կառավարման մարմինների կառուցվածքի ուսումնասիրմանը: Պարզաբանվում են երկրի մակրոտնտեսական քաղաքականության հիմնախնդիրները տնտեսական և սոցիալական ոլորտներում: Հանգամանորեն ներկայացվում են ամբողջական եկամտի արտադրության, բաշխման և օգտագործման մեխանիզմները, տնտեսական աճի գնահատման, ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի մոդելները, ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության, մակրոտնտեսական հավասարակշռության և ՀՀ տնտեսական քաղաքականության մեխանիզմները տնտեսության բոլոր ոլորտներում:

Նախատեսված է տնտեսագիտական բուհերի ուսանողների, դասախոսների, ասպիրանտների համար:

$$Մ\frac{0601000000}{719(01)-2005}2005$$

ԳՄԴ 65g73

ISBN 9 9941-51-11-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

Գլուխ 1. Մակրոտնտեսական կարգավորման առարկան և խնդիրները 5
1.1. Տնտեսական համակարգի էությունը և առանձնահատուկ գծերը 5
1.2. Շուկայական տնտեսության առանձնահատկությունները և անկատարությունը 13
1.3. Մակրոտնտեսական պետական կարգավորման անհրաժեշտությունը 17
1.4. Պետության տնտեսական գործունեության հիմնական բնագավառները և գործառույթները 20
1.5. Պետության դերին վերաբերող տեսությունները, դրանց առանձնահատկությունները և բնորոշ գծերը 23
1.6. Մակրոտնտեսական կարգավորման ուսումնասիրության առարկան, օբյեկտը, նպատակները և լծակները 26
1.7. Մակրոտնտեսական կարգավորումը և տնտեսական օրենքները 30
1.8. Մակրոտնտեսական կարգավորման խնդիրները 33
Ամփոփում 36
Թեստեր և խնդիրներ 37
Հիմնական հասկացություններ 38
Հարցեր կրկնության համար 39

Գլուխ 2. Մակրոտնտեսական կարգավորման մեթոդաբանությունը 40
2.1. Մակրոէկոնոմիկայի ծագումը, անհրաժեշտ նախադրյալները և սկզբունքները 40
2.2. Մակրոտնտեսական վերլուծության ուղղությունները 44
2.3. Տնտեսության պետական կարգավորման մեթոդները 47
2.4. Տնտեսական մոդելներ, պաշարներ և հոսքեր 52
2.5. Մակրոտնտեսական ցուցանիշներին ներկայացվող պահանջները և հաշվարկման կարգը 54
2.6. Կենսամակարդակի ցուցանիշները և դրանց հաշվարկման կարգը 60
2.7. Գործազրկությունը և դրա մակարդակի հաշվարկումը: Օուկենի օրենքը 62
Ամփոփում 64
Թեստեր և խնդիրներ 65
Հիմնական հասկացություններ 66
Հարցեր կրկնության համար 67

Գլուխ 3. ՀՀ մակրոտնտեսական կարգավորման պետական մարմինները, դրանց գործառույթները 68
3.1. ՀՀ կառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքը 68
3.2. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կառուցվածքը և գործառույթները 71
3.3. ՀՀ ճյուղային նախարարությունների և գերատեսչությունների գործառույթները 74
3.4. ՀՀ կենտրոնական բանկի գործառույթները և կառուցվածքը 77

3.5. Կառավարման տարածքային մարմինները և տնտեսության մակրոտնտեսական կարգավորման բնագավառում դրանց գործառույթները 80
Ամփոփում 83
Թեստեր և խնդիրներ 84
Հիմնական հասկացություններ 85
Հարցեր կրկնության համար 85

Գլուխ 4. Ազգային տնտեսությունը և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը 86
4.1. Ազգային տնտեսության բնութագիրը և զարգացման խնդիրները 86
4.2. Պետության տնտեսական խնդիրները 89
4.3. Ազգային տնտեսության ռազմավարական պլանավորումը 92
4.4. Ազգային տնտեսության զարգացման կանխատեսման հիմնահարցերը 95
4.5. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի էությունը և դրանց դասակարգումը 97
4.6. ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման և հաստատման կարգը 101
4.7. Տնտեսության պետական կարգավորման մեջ օգտագործվող ցուցանիշները, դրանց ներկայացվող պահանջները և դասակարգումը 103
Ամփոփում 108
Թեստեր և խնդիրներ 109
Հիմնական հասկացություններ 110
Հարցեր կրկնության համար 111

Գլուխ 5. Տնտեսության կայունացման մակրոտնտեսական քաղաքականությունը 112
5.1. Տնտեսական տատանումներ և տնտեսական պարբերաշրջաններ. 112
5.2. Տնտեսական պարբերաշրջանի տեսությունները 119
5.3. Տնտեսական տատանումների գործոնները 123
5.4. Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի փոփոխությունները կարճ և երկար ժամկետներում 126
5.5. Տնտեսության կայունացման քաղաքականությունը 134
5.6. Տնտեսության կայունացման քաղաքականության իրականացման մեխանիզմը 138
Ամփոփում 143
Թեստեր և խնդիրներ 144
Հիմնական հասկացություններ 146
Հարցեր կրկնության համար 146

Գլուխ 6. Ազգային արդյունքի արտադրությունը, բաշխումը և օգտագործումը 147
6.1. Ապրանքների և փողի շրջանառությունը տնտեսությունում 147
6.2. Ապրանքների և ծառայությունների արտադրությունը: Արտադրական ֆունկցիա 150
6.3. Ամբողջական եկամտի բաշխումը 152
6.4. Ապրանքների և ծառայությունների պահանջարկը 160
6.5. Հավասարակշռությունը ապրանքների և ֆինանսական շուկաներում: Հավասարակշռված տոկոսադրույքը 164

Ամփոփում....169
Թեստեր և խնդիրներ....170
Հիմնական հասկացություններ....172
Հարցեր կրկնության համար....173

Գլուխ 7. Տնտեսական աճը և դրա պետական կարգավորումը....174
7.1. Տնտեսական աճ հասկացությունը և դրա էությունը....174
7.2. Տնտեսական աճի գործոնները....179
7.3. Տնտեսական աճի մոդելավորումը....181
7.4. Տնտեսական աճի պետական կարգավորումը....194
Ամփոփում....200
Թեստեր և խնդիրներ....201
Հիմնական հասկացություններ....203
Հարցեր կրկնության համար....203

Գլուխ 8. Արդյունաբերական քաղաքականություն....204
8.1. Արդյունաբերական քաղաքականության էությունը և հիմնական գծերը....204
8.2. Արդյունաբերության զարգացման հիմնական ուղղությունները և խնդիրները....208
8.3. Արդյունաբերական արտադրանքի գնահատման ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդիկան....212
8.4. Արդյունաբերական արտադրության զարգացման ծրագրի հիմնավորումը....217
Ամփոփում....224
Թեստեր և խնդիրներ....225
Հիմնական հասկացություններ....227
Հարցեր կրկնության համար....228

Գլուխ 9. Ագրարային քաղաքականություն....229
9.1. ՀՀ ագրարային քաղաքականության էությունը և հիմնական գծերը....229
9.2. Գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունները....231
9.3. Ագրոպարենային ծրագրի բովանդակությունը, բաժինները և ցուցանիշները....233
9.4. Բուսաբուծության զարգացման խնդիրները և ցուցանիշները....237
9.5. Անասնաբուծության զարգացման խնդիրները և ցուցանիշները....241
9.6. Գյուղատնտեսական մթերքների պետական ռեսուրսների ձևավորման հիմնախնդիրները....243
Ամփոփում....247
Թեստեր և խնդիրներ....248
Հիմնական հասկացություններ....250
Հարցեր կրկնության համար....250

Գլուխ 10. Գիտատեխնիկական և նորամուծական պետական քաղաքականություն....251
10.1. Գիտատեխնիկական պետական քաղաքականությունը....251
10.2. Նորամուծությունների բովանդակությունը, դերը, տեսակները և դասակարգումը....255

10.3. Նորամուծական գործունեության պետական կարգավորման անհրաժեշտությունը և քաղաքականության մշակման հիմքերը ... 261
10.4. Նորամուծությունների պետական քաղաքականության ուղղությունները ... 264
10.5. Նորամուծական գործունեության պետական կարգավորման ձևերը ... 266
10.6. Նորամուծական գործունեության ֆինանսական ապահովման համակարգը ... 268
10.7. Նորամուծական գործունեության ենթակառուցվածքի ձևավորումը ... 272
10.8. Մտավոր սեփականության շուկայի կարգավորումը ... 273
Ամփոփում ... 276
Թեստեր և խնդիրներ ... 277
Հիմնական հասկացություններ ... 279
Հարցեր կրկնության համար ... 279

Գլուխ 11. Մակրոտնտեսական քաղաքականությունը արտադրական ենթակառուցվածքների ճյուղերում ... 280
11.1. Տրանսպորտի մակրոտնտեսական քաղաքականության էությունը և հիմնական գծերը ... 280
11.2. Տրանսպորտի գործունեության գնահատման ցուցանիշների հաշվարկման մեթոդիկան ... 283
11.3. Կապի գործունեության գնահատման ցուցանիշները և դրանց պետական կարգավորումը ... 287
11.4. Կապիտալ շինարարության քաղաքականության հիմնական գծերը ... 288
11.5. Կապիտալ շինարարության զարգացման ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդիկան ... 291
11.6. Առևտրի և հասարակական սննդի պետական կարգավորման հիմնահարցերը ... 298
Ամփոփում ... 307
Թեստեր և խնդիրներ ... 308
Հիմնական հասկացություններ ... 310
Հարցեր կրկնության համար ... 311

Գլուխ 12. Արտաքին տնտեսական և արժութային քաղաքականությունը ... 312
12.1. Մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկումը բաց տնտեսությունում ... 312
12.2. Կապիտալի և ապրանքների միջազգային հոսքերը ... 316
12.3. Արժույթի փոխանակային կուրսերը ... 322
12.4. ՀՀ արտաքին տնտեսական կապերի բնույթը և առևտրի զարգացման առնձնահատկությունները ... 329
Ամփոփում ... 335
Թեստեր և խնդիրներ ... 336
Հիմնական հասկացություններ ... 338
Հարցեր կրկնության համար ... 338

Գլուխ 13. Ներդրումային քաղաքականությունը 339
13.1. Ներդրումային քաղաքականության էությունը, խնդիրները, ...339
13.2. Ներդրումների դերը ընդլայնված վերարտադրության գործում 342
13.3. Պետության ներդրումային քաղաքականության ձևավորումը ՀՀ-ում 345
13.4. Ներդրումների ֆինանսավորման աղբյուրները.....348
13.5. Մասնավոր ներդրումների պետական խթանման լծակները.....352
13.6. Ներդրումները արտադրական ոլորտում 356
13.7. Ներդրումները բնակարանային տնտեսության մեջ և պաշարներում 361
13.8. Ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատումը.. 365
Ամփոփում.....370
Թեստեր և խնդիրներ.....372
Հիմնական հասկացություններ.....375
Հարցեր կրկնության համար 375

Գլուխ 14. Սոցիալական քաղաքականություն 376
14.1. ՀՀ սոցիալական համակարգը.....376
14.2. Բնակչության կենսամակարդակի բարձրացման և սոցիալական զարգացման ծրագրերը 381
14.3. Բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրները և դրանց կարգավորման պետական քաղաքականությունը 387
14.4. Կրթության պետական քաղաքականությունը.....392
14.5. Առողջապահության պետական կարգավորման խնդիրները և առողջապահության զարգացման ծրագրի բաժիններն ու ցուցանիշները 395
14.6. Մշակույթի և սպորտի զարգացման ծրագրերը 399
Ամփոփում.....402
Թեստեր և խնդիրներ.....403
Հիմնական հասկացություններ.....405
Հարցեր կրկնության համար 406

Գլուխ 15. Բնակչության զբաղվածության մակրոտնտեսական քաղաքականությունը 407
15.1. Աշխատանքային ռեսուրսների բնութագիրը.....407
15.2. Աշխատանքի շուկայի պետական կարգավորումը 410
15.3. Աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռները.....419
15.4. Գործազրկության բնական մակարդակը և դրա ձևերը.....422
15.5. Կայուն իրական աշխատավարձը և սպասման գործազրկությունը 426
15.6. Աշխատանքի արտադրողականությունը և դրա աճի գործոնները.428
Ամփոփում.....432
Թեստեր և խնդիրներ.....433
Հիմնական հասկացություններ.....435
Հարցեր կրկնության համար 435

Գլուխ 16. Դրամավարկային քաղաքականությունը.....436
16.1. Դրամավարկային քաղաքականության խնդիրները 436

16.2. Փողի էությունը, գործառույթները և կառուցվածքը 438
16.3. Փողի շուկան և դրա հավասարակշռությունը 440
16.4. Դրամավարկային հարաբերությունների պետական կարգավորումը 446
16.5. Դրամավարկային քաղաքականության իրականացման մարմինները 448
16.6. Ինֆլյացիան և դրա առաջացման պատճառները 449
16.7. Ինֆլյացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները 453
16.8. Հակաինֆլյացիոն քաղաքականություն 457
16.9. Ինֆլյացիայի և հակաինֆլյացիոն կարգավորման առանձնահատկությունները ՀՀ-ում 460
Ամփոփում 464
Թեստեր և խնդիրներ 465
Հիմնական հասկացություններ 467
Հարցեր կրկնության համար 467

Գլուխ 17 Հարկաբյուջետային և մաքսային քաղաքականությունը 468

17.1. Ֆինանսների և ֆինանսական հարաբերությունների պետական կարգավորումը 468
17.2. Հարկերի էությունը և ՀՀ հարկային համակարգը 471
17.3. Հարկային քաղաքականության սկզբունքները 475
17.4. Պետական տուրքերի էությունը և դրանց համակարգը 479
17.5. Բյուջետային համակարգը և դրա դերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում 483
17.6. ՀՀ պետական պարտքը և դրա կարգավորման մեխանիզմը 493
17.7. ՀՀ մաքսային քաղաքականությունը և դրա պետական կարգավորման հիմնախնդիրները 496
Ամփոփում 500
Թեստեր և խնդիրներ 501
Հիմնական հասկացություններ 503
Հարցեր կրկնության համար 504

Գլուխ 18. Գնագոյացման մակրոտնտեսական կարգավորումը 505

18.1. Գնագոյացման պետական կարգավորման հիմնախնդիրները 505
18.2. Գնագոյացման տեսությունների առանձնահատկությունները 507
18.3. Գների գործառույթները 510
18.4. Գնագոյացման սկզբունքներն ու մեթոդները 512
18.5. Գնագոյացման վրա ազդող գործոնները և դրանց դասակարգումը 514
18.6. Գնագոյացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները 518
Ամփոփում 522
Թեստեր և խնդիրներ 523
Հիմնական հասկացություններ 525
Հարցեր կրկնության համար 525

Գլուխ 19. Ամբողջական պահանջարկի կարգավորման քաղաքականությունը կարճ ժամկետում 526
19.1. IS-LM մոդելի ընդհանուր բնութագիրը 526
19.2. Ապրանքների և ծառայությունների շուկան: IS կորի կառուցումը .529
19.3. Փողի շուկան և LM կորի կառուցումը 539
19.4. Հավասարակշռությունը կարճ ժամկետում 545
19.5. Տնտեսական ակտիվության տատանումների բացատրությունը IS-LM մոդելի օգնությամբ 546
19.6. IS-LM մոդելը՝ որպես ամբողջական պահանջարկի տեսություն....552
19.7. IS-LM մոդելը կարճ և երկար ժամկետներում....554
Ամփոփում 557
Թեստեր և խնդիրներ 558
Հիմնական հասկացություններ 560
Հարցեր կրկնության համար 560

Գլուխ 20. Ամբողջական առաջարկի կարգավորման քաղաքականությունը 561
20.1. Ամբողջական առաջարկի կորը և դրա մեկնաբանումները 561
20.2. Ամբողջական առաջարկի 4 մոդելների մեխանիզմը 566
20.3. Ֆիլիպսի կորը 570
20.4. Ինֆլյացիայի և գործազրկության միջև ընտրության հիմնահարցը 572
20.5. Սպասումները ամբողջական առաջարկի մոդելում....575
20.6. Հիստերեզիս և նորքեյնսականություն 582
Ամփոփում 584
Թեստեր և խնդիրներ 585
Հիմնական հասկացություններ 586
Հարցեր կրկնության համար 586

Գլուխ 21. Մակրոտնտեսական կարճաժամկետ հավասարակշռության ապահովման քաղաքականությունը 587
21.1. Մանդել-Ֆլեմինգի մոդելը և դրա օգնությամբ լուծվող խնդիրները 587
21.2. Փոքր բաց տնտեսությունը «լողացող» փոխանակային կուրսի դեպքում 590
21.3. Փոքր բաց տնտեսությունը հաստատագրված փոխանակային կուրսի պայմաններում 594
21.4. ՀՀ արժույթի փոխանակային կուրսը և դրա ձևավորման պայմանները 598
Ամփոփում 602
Թեստեր և խնդիրներ 603
Հիմնական հասկացություններ 605
Հարցեր կրկնության համար 605

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժամանակակից շուկայական տնտեսությունը հանդես է գալիս որպես «խառը» տնտեսական համակարգ: Դա նշանակում է, որ տնտեսության զարգացման վերաբերյալ որոշումներ կայացնելու և դրանց կատարման համար պատասխանատու են ոչ միայն տնտեսավարող սուբյեկտները, այլ նաև պետությունը՝ ի դեմս երկրի կառավարության: Տնտեսական հարաբերությունների պետական կարգավորումը հատկապես կարևորվում է անցումային շրջանում գտնվող երկրներում, որոնցից մեկն էլ Հայաստանի Հանրապետությունն է: Տնտեսության մակրոտնտեսական կարգավորման անհրաժեշտությունը սովորաբար բացատրվում է շուկայական հարաբերությունների անկատարությամբ և թերություններով, որոնք դրսևորվում են տնտեսական ու սոցիալական բազմաթիվ խնդիրները շուկայական ինքնակարգավորման միջոցով լուծելու անկարողության հետևանքով: Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև հասարակական բարիքների նկատմամբ պահանջարկի առկայությամբ և պետական միջոցներով դրանք բավարարելու գիտակցությամբ, սոցիալական բարիքների բավարարման առանձնահատկություններով և տնտեսության մեջ պետական հատվածի գոյությամբ: Հետևաբար՝ մակրոտնտեսական կարգավորման խնդիրն առաջանում է տնտեսությունը որպես մեկ միասնական համակարգ դիտարկելու և դրա բնականոն զարգացումն ապահովող միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությունից: Թեև սուբյեկտներն ազատ են իրենց գործողություններում, այնուամենայնիվ, առնչվում են երեք տիպի հարաբերությունների՝

- հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների և պետության միջև,
- հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների միջև,
- հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների և հասարակության անդամների միջև:

Այդ հարաբերությունները պահանջում են պետական և իրավական կարգավորում: Իսկ դրա համար անհրաժեշտ է տնտեսավարման իրավահավասար պայմաններ ստեղծել բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար, ապահովագրել նրանց գործունեությունը, կարգավորել երկրի ֆինանսական վիճակը և տնտեսական զարգացումը: Ասվածից հետևում է, որ մակրոտնտեսական կարգավորումն անհրաժեշտ է երկրի համապետական խնդիրները լուծելու, աշխատուժի լրիվ զբաղվածություն ապահովելու, ընդհանուր տնտեսական հավասարակշռություն ստեղծելու, տնտեսության ճյուղային կառուցվածքը կատարելագործելու, արտադրության ռեսուրսների տարածքային տեղաբաշխման հարցերը կարգավորելու և արդյունավետ օգտագործելու համար:

Մակրոտնտեսական կարգավորման բազմաբնույթ և բազմատեսակ խնդիրների իմացությամբ բարձրորակ տնտեսագետ կադրեր պատրաստելու նպատակով ԵՊՏԻ-ում բոլոր մասնագիտությունների ուսումնական ծրագրերում նախատեսված է «Մակրոտնտեսական կարգավորում» առարկան: Մինչև այս գրքի շարադրումը, ԵՊՏԻ մակրոէկոնոմիկայի ամ-

բիոնը հրատարակել էր ուսումնական ձեռնարկ, որով վերջին չորս տարիների ընթացքում իրականացվում է դասավանդումը: Սակայն այդ չորս տարիներին հանրապետության կառավարման կառուցվածքում զգալի փոփոխություններ են տեղի ունեցել, փոփոխվել են նաև տնտեսության պետական կարգավորման մեխանիզմները, ընդունվել են նոր օրենքներ և օրենսդրական ակտեր, տնտեսական զարգացման ընթացքում ձևավորվել են նոր օրինաչափություններ, տնտեսության զարգացման բոլոր ոլորտներում՝ նոր ծրագրեր ու նպատակներ: Միաժամանակ նորացվել է առարկայական ծրագիրը: Նոր ծրագրում ուշադրություն է դարձվում տնտեսության բոլոր ուղղություններին վերաբերող տնտեսական քաղաքականության ուսումնասիրությանը: Ծրագիրը ընդգրկում է 21 թեմա՝ նախկին 17-ի փոխարեն: Առանձնապես խորացվել են արդյունաբերական, ագրարային, նորամուծական գործունեության քաղաքականությունների բաժինները: Ծրագրից հանվել են շահույթի, շահութաբերության և արտադրության ծախսերին վերաբերող հարցերը, որոնք նպատակահարմար է դիտարկել միկրոէկոնոմիկա առարկայի սահմաններում:

Ուսումնական ձեռնարկի շարադրանքի ընդհանուր գիտական ղեկավարումն ու խմբագրումն իրականացրել է տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Բ. Ղուշչյանը:

Ուսումնական ձեռնարկը շարադրվել է այն օրենքների ու օրենսդրական ակտերի շրջանակներում, որոնք գործում են ՀՀ-ում՝ 2005թ. դրությամբ: Բնականաբար, տնտեսավարման իրավական դաշտի փոփոխության դեպքում դրանք կարտացոլվեն հետագա հրատարակություններում: Հաշվի են առնվել ընթերցողների դիտողությունները, վերացվել են առանձին բաժիններում տեղ գտած վրիպակները:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում բոլոր այն կազմակերպություններին և անձանց, որոնք հանդես են եկել նախկինում հրատարակված նույնանուն ձեռնարկի գրախոսությամբ, արել են արժեքավոր դիտողություններ և նպաստել են այս գրքի լույսընծայմանը:

Ուսումնական ձեռնարկի առանձին գլուխները և հատվածները շարադրել են.

տ.գ.դ., պրոֆ. Հ.Բ. Ղուշչյանը (գլ. 1, 2, 3, 12, 21)
Գ.Վ. Բաղդասարյանը (գլ. 17, 18)

տ.գ.թ., պրոֆ. Ի.Տ. Տիգրանյանը (գլ. 4.1, 4.2, 4.5, 4.6, 4.7, 5.3, 5.4, 5.5, 5.6, 8, 9)

տ.գ.թ., դոցենտներ Ք.Ջ. Վարդանյանը (գլ. 6, 19), Հ.Ս. Հովհաննիսյանը (գլ.7, 20), Ռ.Մ. Մանուկյանը (գլ. 13), Ծ.Ջ. Կարապետյանը (գլ. 10, 14), Ա.Հ. Մուրադյանը (գլ. 15), Լ.Ա. Կիրակոսյանը (գլ.16), Գ.Ա. Ավագյանը (գլ. 5.1, 5.2)

տ.գ.թ., ասիստենտներ Կ.Հ. Գրիգորյանը (գլ. 4.3, 4.4)
Թ.Մ. Մկրտչյանը (գլ. 11.1, 11.2, 11.3)
Ա.Գ. Բաղդասարյանը (գլ. 11.4, 11.5, 11.6)

ԳԼՈՒԽ 1

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- *Ո՞րն է տնտեսական համակարգի էությունը և ինչ առանձնահատկություններ է դրսևորում տարբեր երկրներում:*
- *Որո՞նք են տնտեսական համակարգի բնութագրիչները:*
- *Ինչո՞ւ է անհրաժեշտ շուկայական տնտեսության մակրոտնտեսական կարգավորումը:*
- *Ի՞նչ հարցեր չի լուծում շուկան ժամանակակից տնտեսությունում:*
- *Որո՞նք են պետության հիմնական գործառույթները մակրոտնտեսական կարգավորման ընթացքում:*
- *Ո՞րն է մակրոտնտեսական կարգավորման ուսումնասիրության օբյեկտը, և պետությունը ինչ լծակներ է կիրառում մակրոտնտեսական կարգավորման ընթացքում:*
- *Ինչպե՞ս են միմյանց հետ կապված մակրոտնտեսական կարգավորումը և տնտեսական օրենքները, մակրոտնտեսական կարգավորման տեսությունը և տնտեսագիտական մյուս դասընթացները:*

1.1. Տնտեսական համակարգի էությունը և առանձնահատուկ գծերը

Տնտեսական համակարգի էությունը

Նյութական և հոգևոր բարիքների ստեղծման գործընթացում հասարակության տրամադրության տակ գտնվող ռեսուրսները վերածվում են որոշակի ծավալի, կազմի ու որակի արտադրանքի ու ծառայությունների, որոնք բավարարում են մարդկանց պահանջմունքները: Եթե այդ գործընթացները պատկերացնենք որպես հասարակության և բնության միջև փոխհարաբերություններ, ապա կդիտարկենք տնտեսական համակարգ հասկացությունը:

Տնտեսական համակարգը ներառում է մի կողմից՝ նպատակներ, մյուս կողմից՝ միջոցներ և ուղիներ: Նպատակները վերաբերում են հասարակության պահանջմունքներին, իսկ միջոցները և ուղիները՝ օբյեկտիվ աշխարհի պայմաններին, ուժերին և զարգացման օրենքներին: Տնտեսական համակարգի երկու կողմերի փոխհարաբերության դիալեկտիկան հետևյալն է. հասարակության զարգացման ընթացքում առաջանում են խզումներ հասարակական պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների միջև: Այդ խզումների հաղթահարման ուղին

արտադրողական ուժերի զարգացումն է: Հասարակությունը մշտապես կատարելագործում է բնության վրա ազդելու միջոցները, եղանակները, այսինքն՝ արտադրողական ուժերը:

Արտադրողական ուժերն իրենց հերթին բաժանվում են բնականի և վերարտադրականի:

Բնական արտադրողական ուժերն են՝ հողը, բնական ռեսուրսները, հասարակության համար դրանց մատչելիությունը և որակը:

Վերարտադրականը (գրականության մեջ հաճախ անվանվում է հասարակական) ներառում է ստեղծված արտադրության միջոցները և մարդկանց կուտակած փորձը, արտադրության կազմակերպման եղանակները և գործարարության բնագավառի նվաճումները:

Հասարակության զարգացման ընթացքում փոփոխվում է բնական միջավայրի՝ տնտեսական համակարգի գործունակության վրա ունեցած ազդեցությունը:

Քաղաքակրթության զարգացման նախաշեմին տնտեսության զարգացումը գլխավորապես պայմանավորված էր բնական միջավայրի ազդեցությամբ: Ավելի ուշ շրջանում բնական միջավայրի ազդեցությունը տնտեսական համակարգի գործունակության վրա թուլանում է, չնայած մի շարք գործոններ դեռևս շարունակում են ակտիվ ազդեցություն ունենալ: Դրանք են.

1. տնտեսական շրջանառության գործընթացում ընդգրկվում են բավականին շատ, մատչելի և որակյալ բնական ռեսուրսներ,
2. տնտեսության զարգացման մասշտաբները, կենսոլորտի էվոլյուցիան և երկրաբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս ավելացնելու առավել սահմանափակ ռեսուրսների օգտագործումը,
3. բնական ռեսուրսների մի շարք տեսակների ձեռքբերումը դժվարանում է, դրանք արդյունահանվում են երկրի ավելի խորը ընդերքից:

Ավելի վատ որակի, դժվար մատչելի բնական ռեսուրսների օգտագործումը, բնապահպանական տեխնոլոգիաների կիրառումը զգալի ծախսումներ են պահանջում, սակայն ի հայտ են գալիս բնական ռեսուրսների մեխանիկական, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկանիշների օգտագործման նոր ոլորտներ, որոնց շնորհիվ տնտեսական համակարգի հետագա կենսունակությունը չի նվազում, քանի որ մեծանում է դրա վրա հասարակության ունեցած ազդեցությունը: Հասարակության ազդեցությունը պայմանավորված է նրա պահանջմունքների բավարարման օբյեկտիվ պահանջով, որն ավելանում է ինչպես բնակչության աճին, այնպես էլ մարդկանց գիտակցության և մտավոր զարգացմանը զուգընթաց:

Այսպիսով, տնտեսական համակարգի զարգացման շարժիչ ուժը ***հասարակության ամբողջական պահանջմունքների*** աճն է, որոնք կարող են լինել ***անմիջական և միջանկյալ***:

Հասարակության անմիջական պահանջմունքները ձևավորվում են սոցիալական, տնտեսական, բնական, ազգային և այլ հատկանիշներով պայմանավորված կենսապայմանների համար անհրաժեշտ բարիքների ամբողջությունից:

Միջանկյալ պահանջմունքները ձևավորվում են արտադրության կառուցվածքային փոփոխությունների, արտադրության նոր միջոցների ստեղծման կամ բնական նոր ռեսուրսների հայտնաբերման ու օգտագործման ազդեցությամբ: Անմիջական ու միջանկյալ պահանջմունքների բավարարումը որոշվում է տնտեսական համակարգի գործունակությամբ, որը բնության համակարգի վրա հասարակական համակարգի փոխադարձ ազդեցության ձևերի ու մեթոդների ամբողջություն է:

Տնտեսական համակարգը, որպես հասարակության ու բնության փոխազդեցության և միասնության արդյունք, կանխորոշում է հասարակության ակտիվ դերը բնության վերափոխման և ինքնավերափոխման գործում:

Բնությունը երկրագնդի վրա ձևավորվել է միլիոնավոր տարիների ընթացքում, սակայն նրանում էական փոփոխություններ կատարվել են վերջին մի քանի հարյուրամյակներին՝ պայմանավորված հասարակական պահանջմունքների զգալի փոփոխությամբ:

Տնտեսական համակարգը, այդ երկու համակարգերից բացի, ընդգրկում է նաև հասարակական արտադրության մեջ մարդկանց ներգրավելու մեթոդների ամբողջությունը, այսինքն՝ արտադրահարաբերությունների իրավական, սոցիալական համակարգերը:

Տնտեսական համակարգի տեսակները

Երկրի ամբողջ տնտեսության և նրա առանձին տնտեսավարող սուբյեկտների գործունեության կազմակերպումը պահանջում է շարժվել որոշակի դրդապատճառներով, որոնք խթանում կամ կաշկանդում են տնտեսական գործունեությունը: Այդ դրդապատճառները տնտեսական համակարգի բոլոր տեսակների համար միասնական չեն: Շուկայական տնտեսության պայմաններում դրանք հանդես են գալիս տնտեսավարող սուբյեկտների համար շահույթի ավելացման կամ նվազման միջոցով: Պլանային տնտեսության դրդապատճառները վերաբերում են ընդհանուր տնտեսական խնդիրների իրագործմանը: Երկու դեպքում էլ տնտեսության զարգացման յուրահատուկ դրդապատճառներ գոյություն ունեն: Տարբերությունն այն է, թե ինչպես են դրանք իրականացվում:

Առանձին տնտեսավարող սուբյեկտների պլանները կոորդինացվում են կենտրոնացված կարգով, եթե պետական կառավարման մարմինները մշակում են սոցիալ-տնտեսական զարգացման միասնական պլան:

Շուկայական տնտեսությունում պլան մշակում են տնտեսավարող սուբյեկտները, իսկ դրանց կոորդինացումը, փոխհամաձայնեցումը կատարվում է ***ապակենտրոնացված կարգով***, շուկայական մեխանիզմի օգնությամբ:

Այսպիսով, տնտեսավարող սուբյեկտների գործունեության կոորդինացումը տնտեսական համակարգի կարևորագույն հատկանիշներից

մեկն է: Ըստ այդ հատկանիշի՝ տնտեսական համակարգը ներկայանում է կենտրոնացված կառավարվող կամ շուկայական տնտեսության ձևով: Առաջինն անվանում ենք նաև պլանային, իսկ երկրորդը՝ շուկայական կարգավորվող տնտեսություն, չնայած տնտեսական գործունեության պլաններ մշակում են տնտեսավարող բոլոր սուբյեկտները:

Տնտեսական համակարգի հաջորդ հատկանիշը սեփականության ձևի տարբերությունն է: Արտադրության միջոցները մի դեպքում հիմնականում պատկանում են տնտեսավարող սուբյեկտներին, տնային տնտեսություններին, մյուս դեպքում՝ ամբողջ հասարակությանը կամ նրա առանձին կոլեկտիվներին: Առաջին դեպքում տնտեսական համակարգը անվանում ենք *կապիտալիստական,* երկրորդ դեպքում՝ *սոցիալիստական:*

Տնտեսական համակարգի երկու հատկանիշների (կոորդինացում և սեփականություն) համակցումը բնութագրում է տնտեսական համակարգի տեսակը. շուկայական տնտեսությունը կարող է հանդես գալ կապիտալիստական և սոցիալիստական, իսկ կոորդինացումը՝ կապիտալիստական տնտեսության կենտրոնացված կառավարման և սոցիալիստական կենտրոնացված կառավարման տեսքով:

Տնտեսական համակարգի նշված ձևերի ներկայացումը զուտ տեսական ենթադրության, գիտական վերացարկման արդյունք է, քանի որ իրականում տնտեսական համակարգերն ունեն հետևյալ տեսքը.

		Պլանների կոորդինացման ձևերը	
		Շուկայական կարգավորում	*Կենտրոնացված կարգավորում*
Արտադրության միջոցների սեփականությունը	Մասնավոր սեփականություն	Կապիտալիստական շուկայական տնտեսություն	Կապիտալիստական տնտեսության կենտրոնացված կառավարում
	Հասարակական սեփականություն	Սոցիալիստական շուկայական տնտեսություն	Սոցիալիստական կենտրոնացված կառավարում (պլանային տնտեսություն)

Նկ. 1.1. ***Տնտեսական համակարգի տիպերը***

Տնտեսական համակարգի նշված ձևերը հանդես են գալիս միայն ընդհանուր գծերով՝ որպես տնտեսական համակարգի հիմնական հատկանիշ: Այսպես, սոցիալիստական շուկայական տնտեսության տիպիկ օրինակ էր Հարավսլավիայի տնտեսությունը, որը, ըստ հարավսլավացի տնտեսագետ Կ. Միխայլովիչի[1], 1960-ական թվականների տնտեսական բարեփոխումներից հետո էական արդյունքներ չապահովեց և հետագայում այդ երկրի քաղաքական մասնատման պատճառ դարձավ:

Կապիտալիստական տնտեսության կենտրոնացված կառավարման ցայտուն օրինակ էր Գերմանիայի տնտեսությունը նացիոնալ-սոցիալիստ-

[4] Ò ·^<‡•"›·Ã1Ž¶",„·Ã–…¶<ýfi–‡…¿ ›·¿ –•',"…¿ ˙ € fl"…•<›··/Ò 1/Ž¶",„·¶</4<;91

ների տիրապետության (1933-1945թթ.) ընթացքում, որը, չնայած նպաստեց ռազմականացման նպատակների իրականացմանը, բայց տնտեսության մյուս բնագավառներում մրցակցության բացակայության պատճառով իրական տնտեսական արդյունքներ չապահովեց:

Տնտեսական համակարգի գործունակության առումով, նշված երկու հատկանիշները առավելապես համապատասխանում են միմյանց սեփականության և կոորդինացման որոշակի ձևերի պայմաններում: Այսպես, տնտեսական զարգացման պլանների կենտրոնացված կոորդինացման հնարավորություններն ավելի իրական են հասարակական սեփականության պայմաններում, քանի որ այդ սեփականության տնօրինողը պետությունն է:

Մասնավոր սեփականության պայմաններում յուրաքանչյուր սեփականատեր իր սեփականությունը օգտագործում է շուկայի պահանջներին համապատասխան, և շուկան է կոորդինացնում առանձին ապրանքարտադրողների գործողությունները: Ուստի գործունակ տնտեսական համակարգի տեսակներ հիմնականում կարելի է համարել սոցիալիստական պլանային վարչահրամայական տնտեսությունը և կապիտալիստական շուկայական կարգավորվող տնտեսությունը:

Պարզ է, որ շուկայական կարգավորման տարրեր գոյություն ունեցել են սոցիալիստական երկրներում, և տնտեսության պետական կոորդինացում գոյություն ունի աշխարհի զարգացած բոլոր երկրներում (Ֆրանսիա, Իսպանիա, Շվեդիա, Ճապոնիա, ԱՄՆ և այլն): Պետության կողմից տնտեսության կենտրոնացված կոորդինացման ու կարգավորման գործընթացը բացատրվում է կապիտալիստական շուկայական տնտեսություն ունեցող բոլոր երկրներում արտադրության միջոցների պետական սեփականության առկայությամբ և տնտեսավարող սուբյեկտների գործողությունների կարգի ու իրավական համակարգի կենտրոնացված սահմանմամբ: Ուստի տնտեսական համակարգերը գլխավորապես հանդես են գալիս *խառը տիպի* տնտեսությամբ, իսկ տնտեսության տեսակների դասակարգումը զուտ տեսական վերլուծության արդյունք է:

Տնտեսական համակարգի բաղադրիչները և կառուցվածքը

Տնտեսական համակարգի բաղադրիչները կարելի է դիտարկել բնագավառների, *տնտեսական գործառույթների և կառավարման մակարդակների* առումով: Տնտեսական համակարգը ընդգրկում է նյութական և հոգևոր արտադրության բնագավառները:

Նյութական արտադրության բնագավառում ստեղծվում են իրային տեսք ունեցող բարիքներ, և մատուցվում են ծառայություններ՝ այդ բարիքների արտադրության համար: Նյութական բարիքներ ստեղծվում են արդյունաբերության, գյուղատնտեսության, անտառտնտեսության, կապիտալ շինարարության ոլորտում: Նյութական ծառայություններ մատուցվում են տրանսպորտի, կապի, առևտրի, հանրային սննդի և այլ ճյուղերում:

Հոգևոր բարիքների արտադրության բնագավառում ստեղծվում են հոգևոր արժեք ունեցող ոչ նյութական բարիքներ, և մատուցվում են ոչ նյութական ծառայություններ առողջապահության, կրթության և այլ բնագավառներում:

Տնտեսության մեջ ստեղծված ամբողջ արդյունքի մեջ տնտեսական համակարգի առանձին բաղադրիչների բաժինը հաճախ օգտագործվում է *տնտեսական համակարգի կառուցվածքը* գնահատելու համար: Այսպես, նյութական և ոչ նյութական արտադրության բնագավառների հարաբերակցությունը անվանում ենք *տնտեսության ներքին կառուցվածք* և գնահատում ենք այդ բնագավառներում ընդգրկված աշխատանքային ռեսուրսների, զբաղեցված հիմնական ֆոնդերի, թողարկված արտադրանքի և կատարված ծառայությունների տեսակարար կշիռներով՝ ամբողջ տնտեսության համապատասխան ցուցանիշներում:

Տնտեսական համակարգի կարևորագույն գործառույթը նյութական բարիքների վերարտադրությունն է, այսինքն՝ արտադրության գործընթացի անընդհատությունը:

Վերարտադրության ամբողջ գործընթացում առանձին բաղադրիչներ են՝ *արտադրությունը, բաշխումը, փոխանակումը և սպառումը:*

Արտադրությունը մարդկանց պահանջմունքների բավարարման աղբյուրն է, այն գործընթացը, որից սկսվում է ցանկացած արդյունքի ստեղծումը, և որի ընթացքում մարդը բնության առարկաներն ու իրերը հարմարեցնում է իր պահանջմունքներին:

Վերարտադրության վերջին բաղադրիչը սպառումն է, որը տնտեսական համակարգի վերջնական նպատակն ու շարժման դրդապատճառն է: Արտադրության և սպառման միջև գոյություն ունի բարդ դիալեկտիկական կապ: Այսպես, սպառման աճը արտադրության զարգացման շարժիչ ուժն է, սակայն սպառումը իր հերթին կախված է արտադրության զարգացման, սպառման նոր առարկաների արտադրության յուրացման մակարդակից:

Բաշխումը և փոխանակումը միջնորդավորում են արտադրության և սպառման փոխադարձ կապը, ձևավորում են դրանց փոխազդեցության և ծագող հակասությունների լուծման մեխանիզմը:

Բաշխումը որոշիչ դեր է խաղում ստեղծվող արդյունքի ավելացման գործում, ուստի տնտեսական համակարգի արդյունավետությունը հաճախ որոշվում է բաշխման մեխանիզմի հիման վրա:

Բաշխման հավասարարության սկզբունքը ծնում է անգործունակություն: Մինչդեռ անձնական վաստակի և աշխատողի կողմից ծախսված աշխատանքի ծավալի միջև ուղղակի կապի հաստատման դեպքում բաշխումը ակտիվ ներգործություն է ունենում արդյունքի մեծացման վրա: Մեր երկրի տնտեսության ճգնաժամային վիճակի դրսևորման պատճառներից մեկը դեռևս 60-ական թվականներին սկսված բաշխման հավասարարության սկզբունքն էր[1]:

Փոխանակությունը տնտեսական համակարգի այն բաղադրիչն է, որը շարժման մեջ է դնում տնտեսական հավասարակշռության ստեղծման մե-

[1] Ղուշչյան Հ. Բ., Մակրոէկոնոմիկա, Երևան, 1992թ., էջ 59-60:

խանիզմը և պահանջարկի ու առաջարկի միջոցով ոչ միայն կարգավորում է շուկայական իրավիճակների հարաբերակցությունը, այլև ապահովում է արտադրության ռեսուրսների բաշխման արդյունավետությունը:

Շուկայական իրավիճակները, ըստ մրցակցության բնույթի, լինում են՝ կատարյալ և անկատար, ըստ ռեսուրսների բաշխման ու օգտագործման արդյունավետության՝ հավասարակշիռ և անհավասարակշիռ:

Կատարյալ շուկան ենթադրում է արտադրության և հասարակության պահանջմունքների միջև հավասարակշռություն, շուկայի մասնակիցների միջև պարզ և արագ կազմակերպվող փոխհարաբերություններ, ազատ մրցակցություն և կոոպերացիա շուկայի այն բազմաթիվ մրցակիցների միջև, որոնցից որևէ մեկի բացակայությունը էական ազդեցություն չի գործում շուկայական իրավիճակի վրա:

Շուկան անկատար է, եթե չկա ազատ մրցակցություն, գործում են մենաշնորհային կամ խմբային արտադրողներ կամ սպառողներ, ովքեր կարողանում են գրավել շուկայի պահանջարկի կամ առաջարկի նշանակալից մասը և շուկայում թելադրում են իրենց պայմանները:

Հավասարակշիռ շուկան այն ինքնակազմակերպվող բաց տնտեսական համակարգն է, որտեղ պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունը ձևավորում է հավասարակշիռ գին, որը արտաքին ուժերի և հոսքերի ազդեցությամբ կարող է շեղվել իր հավասարակշիռ վիճակից, սակայն դրանց բացակայության դեպքում վերադառնում է իր նախկին վիճակին:

Անհավասարակշիռ շուկան ձևավորվում է տնտեսական այն համակարգերում, որոնցում պահանջարկի և առաջարկի միջև անհավասարակշռությունը պահպանվում է երկար ժամանակահատվածում, և առաջանում են ինչպես կանոնավոր տատանվող, այնպես էլ քաոսային ինքնաբերաբար կազմակերպվող շեղումներ շուկայական հավասարակշիռ վիճակից ու հաճախ դառնում տնտեսական անկումների ու ճգնաժամերի պատճառ:

Շուկայական գինը ապահովում է համարժեքություն փոխանակության ընթացքում և դրանով նպաստում արտադրության և սպառման միջև անմիջական կապի ստեղծմանը: Այլ խոսքով, սպառվում է այնքան, որքան արտադրվում է, և արտադրվում է այնքան, որքան սպառման պահանջարկ գոյություն ունի: Նման հավասարակշռության մեխանիզմը Ադամ Սմիթը անվանում էր «անտեսանելի ձեռք», որը յուրաքանչյուր ապրանքարտադրողի ստիպում է, իր շահերից ելնելով, բավարարել շուկայի պահանջները: Այսպիսով, «անտեսանելի ձեռքը» շուկայական տնտեսությունում կարգավորում է արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման ներդաշնակությունը և ապահովում այդ բաղադրամասերի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը: Սակայն տնտեսության զարգացման կայունությունը Ադամ Սմիթը կապում է նաև «տեսանելի ձեռքի» գործողության, այսինքն՝ տնտեսության պետական կարգավորման հետ:

Տնտեսության պետական կարգավորումը իրականացվում է տնտեսավարման և կառավարման տարբեր մակարդակների փոխազդեցության

միջոցով: Այսպիսի մակարդակներ են. առաջինը՝ տնտեսությունը, որպես մի ամբողջական օրգանիզմ՝ մակրոմակարդակ, երկրորդը՝ տնտեսության ճյուղերը և բնագավառները, որոնք կապող օղակ են մակրոմակարդակի և տնտեսավարող սուբյեկտների միջև և երրորդը՝ տնտեսավարող սուբյեկտները, տնային տնտեսությունները՝ որպես միկրոմակարդակ:

Այդ երեք մակարդակները, որպես տնտեսական համակարգի բաղադրիչներ, արտացոլում են տնտեսության փոխհարաբերությունների բնույթը: Սոցիալիստական պլանային տնտեսության պայմաններում կենտրոնացված կարգով սահմանվող առաջադրանքները ենթակա էին պարտադիր կատարման երկրորդ մակարդակի՝ տնտեսության ճյուղերի և գերատեսչությունների կողմից, որոնք, իրենց հերթին, այդ առաջադրանքները փոխանցում էին տնտեսավարող սուբյեկտներին և փորձում զանազան վարչական և տնտեսական մեթոդներով ապահովել կենտրոնացված կարգով սահմանված առաջադրանքների կատարումը:

Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսավարող սուբյեկտները ազատ են այնպիսի որոշումներ կայացնելիս, որոնք շուկայի պահանջները բավարարելու նպատակ ունեն: Նրանց և ճյուղային գերատեսչությունների հարաբերություններն ունեն փոխադարձ պատասխանատվության վրա հիմնված պայմանագրային բնույթ և բխում են այն իրավական նորմերի կատարման պահանջներից, որոնք մակրոմակարդակում սահմանվում են տնտեսավարող սուբյեկտների, գերատեսչական ու պետական մարմինների փոխհարաբերությունների համար:

Տնտեսական համակարգի բնութագրիչները

Աշխարհի մի շարք երկրներ ունեն տնտեսական զարգացման բարձր մակարդակ, մյուսների մակարդակը բարձր չէ, սակայն որևէ փուլում ունեն տնտեսական աճի բարձր տեմպեր, երրորդներն ունեն զարգացման ցածր մակարդակ և դեռևս չեն կարողանում արագացնել տնտեսական աճի տեմպերը: Դրանց տնտեսական նվաճումները համեմատելու համար պետք է օգտվել տնտեսական համակարգի հիմնական բնութագրիչներից:

Տնտեսական համակարգի բնութագրիչները այն մեծություններն են, որոնք արտահայտում են համակարգի էական հատկանիշները: Այդպիսի բնութագրիչներ են՝ տնտեսական աճի տեմպերը և պարբերաշրջանները, գործազրկությունը, ազգային արժույթի կուրսի փոփոխությունը, ինֆլյացիան և մակրոտնտեսական այլ մեծություններ, որոնք միկրոմակարդակում գնահատել և օգտագործել հնարավոր չէ:

Տնտեսական համակարգի կենսունակությունը տվյալ պահին գնահատվում է տնտեսական աճի տեմպերով, որը տվյալ տարում ստեղծված նյութական բարիքների և ծառայությունների ծավալի հարաբերությունն է դրա բազային ծավալին: Տնտեսական աճի բարձր տեմպերը ապահովում են երկրի առաջընթացը և բարձրացնում տնտեսական զարգացման մակարդակը: Այսպես, եթե որևէ երկիր ունի տնտեսական աճի միջին տարեկան 4,5% աճ, ապա երկրի արդյունքը կկրկնապատկվի 15 տարում, իսկ 7% աճի դեպքում՝ 10 տարում: Դրա համար բավական է 70 թիվը բա-

ժանել երկրի տնտեսական աճի միջին տեմպերի վրա, և ստացված թիվը ցույց կտա, թե քանի տարում է երկրի ազգային արդյունքը կրկնապատկվելու:

Տնտեսական պարբերաշրջաններն արտահայտում են երկրի տնտեսության զարգացման շարժունակությունը, քանի որ դրանք ցույց են տալիս տնտեսական աճի տեմպերի կրճատման, նույնիսկ՝ անկման դեպքերը:

Գործազրկությունը տնտեսության զարգացման գնահատման ընդհանրական մեծություն է, արտացոլում է աշխատունակ բնակչության, աշխատանքային ռեսուրսների զբաղվածության վիճակը: Սովորաբար գործազրկությունը համարվում է շուկայական տնտեսության ամենաբացասական հատկանիշներից մեկը:

Ինֆլյացիան տնտեսական զարգացման ընթացքը կաշկանդող ամենավարակիչ հիվանդությունն է, որը, չավելացնելով և չփոքրացնելով ազգային արդյունքի իրական մեծությունը, թույլ է տալիս այդ արդյունքը վերաբաշխել հասարակության անդամների միջև և դրանով իսկ խոչընդոտում է տնտեսական բնականոն գործունեությունը: Ինֆլյացիայի մեծությունը գնահատվում է գների ինդեքսի միջոցով, որը սովորաբար հաշվարկվում է սպառողական զամբյուղի մեջ ընդգրկված ապրանքների գների հիման վրա:

Ազգային արժույթի փոխանակային կուրսը այլ երկրի արժույթի այն քանակությունն է, որը փոխանակվում է տվյալ երկրի միավոր արժույթով: Արժույթի փոխանակային կուրսի մակարդակը էական ազդեցություն է գործում երկրի արտաքին բոլոր հարաբերությունների ձևավորման ու դրանց գործունակության վրա:

Տնտեսական համակարգի բոլոր բնութագրիչները հետագա շարադրանքում կքննարկվեն ավելի մանրամասն:

1.2. Շուկայական տնտեսության առանձնահատկությունները և անկատարությունը

Շուկայական տնտեսության առանձնահատկությունները ձևավորվում են այն արտադրահարաբերությունների համակարգին համապատասխան, որի տնտեսական հիմքը բազմասեփականության առկայությունն ու կատարյալ մրցակցության մյուս պայմանների ստեղծումն է: Ազատ մրցակցությունը շուկայական տնտեսության գործունակության կարևորագույն պայմանն է, և այն պետք է ապահովել տնտեսական գործունեության բոլոր բնագավառներում: Իր հերթին, մրցակցության ապահովումը կապված է գների ազատականացման, ֆինանսավարկային կայուն համակարգի ստեղծման, երկրի արժույթի ազատ փոխարկելիության ապահովման, արտաքին տնտեսական կապերի պետական մենաշնորհի վերացման, կառավարման բոլոր սուբյեկտների միջև հարաբերությունների պայմանագրային կարգավորման հետ:

Այսպիսով, շուկայական տնտեսության գործունակությունը պայմանավորված է նրանով, թե որքանով են կայացել շուկայական տնտեսության ինստիտուտները, ինչպիսին են մրցակցության պայմանները, իրավական նորմերը և պետական կարգավորման լծակները:

Շուկայական տնտեսության առանձնահատկությունները դրսևորվում են ռեսուրսների օգտագործման, ինքնակարգավորման մեխանիզմի առկայության, տնտեսական զարգացման ընթացքում ոչ բնականոն վիճակների ձևավորման ու հաղթահարման և հասարակության սոցիալական կարիքները լուծելու հնարավորության ոլորտներում:

Ռեսուրսների բաշխման և օգտագործման մեխանիզմ

Տնտեսական ցանկացած գործունեության նպատակը մարդկային որոշակի պահանջմունքների բավարարումն է: Մարդկային պահանջմունքները ձևավորվում են ամեն օր, ամեն ժամ և անընդհատ են: Այդ պահանջմունքները աճում են ինչպես բնակչության աճի, այնպես էլ մարդկանց մտավոր զարգացման հետևանքով: Պահանջմունքների աճի սահմանափակումներ ժամանակի և տարածության մեջ գոյություն չունեն: Դրանք կարող են դրսևորել կտրուկ աճի միտումներ: Սակայն այն բարիքները, որոնց վերափոխման միջոցով հասարակությունը բավարարում է պահանջմունքները, բնության մեջ սահմանափակ են: Ուստի շուկայական տնտեսության առաջին և հիմնական առանձնահատկությունը ռեսուրսների օգտագործման լավագույն մեխանիզմի առկայությունն է:

Յուրաքանչյուր ապրանքարտադրող, մրցակցելով մյուս ապրանքարտադրողների հետ, կարողանում է դիմանալ մրցակցությանը և շատ դեպքերում՝ դուրս մղել մյուսներին, եթե նա ռեսուրսները օգտագործում է ավելի արդյունավետ և իր արտադրանքը թողարկում է ավելի քիչ ծախսերով:

Ռեսուրսների օգտագործման շուկայական մեխանիզմի բարելավումը հաճախ կապվում է «Պարետոյի բարելավում» հասկացության հետ:

«Պարետոյի բարելավում» է համարվում տնտեսական այնպիսի գործընթացը, որի դեպքում շուկայի մասնակիցներից որևէ մեկի կենսամակարդակի բարձրացում է տեղի ունենում՝ առանց մյուս մասնակիցների կենսամակարդակի իջեցման: Եթե «Պարետոյի բարելավումները» հասել են մի սահմանի, որ շուկայի մասնակիցներից ոչ մեկի կենսամակարդակը այլևս հնարավոր չէ բարելավել մյուսների մակարդակի անփոփոխ լինելու պայմաններում, ապա այդ վիճակը համապատասխանում է Պարետոյի օպտիմալությանը, և ռեսուրսների օգտագործումը տվյալ պահին հնարավոր չէ բարելավել: Սակայն շուկայական դաժան մրցակցությունը պարտադրում է բոլոր ապրանքարտադրողներին նորից ու նորից մտածել ռեսուրսների (հողի, հիմնական ֆոնդերի, աշխատուժի, կապիտալի) օգտագործման բարելավման մասին, հաջողության դեպքում առաջ անցնել մյուսներից, և նման մրցապայքարը դառնում է անընդհատ:

Այսպիսով, տնտեսական ռեսուրսներն ունեն մեկ հիմնական հատկություն՝ հազվագյուտ կամ սահմանափակ են և դրա պատճառով արտադրության ծավալը և սպառման բավարարումը նույնպես սահմանա-

փակ են, ուստի շուկայական համակարգը իր առջև խնդիր է դնում լուծել հասարակության անդամների պահանջմունքները սահմանափակ ռեսուրսներով բավարարելու խնդիրները:

Շուկան՝ որպես ինքնակարգավորվող համակարգ

Ինքնակարգավորվող համակարգը ճշգրիտ պատկերելու համար պետք է հաշվի առնել, որ տնտեսական, ինչպես և բնական երևույթները ընթանում են երկու որակական տեսքով՝ կարգավորված և քաոսային:

Կանոնավոր գործող տնտեսական համակարգը, հավասարակշռությունը ապրանքների նկատմամբ գոյություն ունեցող պահանջարկի և առաջարկի միջև, ապրանքարտադրողների միջև մշտական կայուն մրցակցությունը կարգավորված տնտեսության նախապայման են: Այդ նույն երևույթները քաոսային են տնտեսական ճգնաժամի, ապրանքների առաջարկի խիստ պակասի, փողի արժեզրկման, ապրանքարտադրողներից որևէ մեկի ունեցվածքի աճուրդային վաճառքի դեպքում:

Եթե տնտեսական գործընթացները որոշակի կայունություն են հանդես բերում, ապա հնարավոր է կանխագուշակել դրանց ընթացքը, և տնտեսությունը հավասարակշռված է զարգանում:

Սակայն հաճախ տնտեսական գործընթացներից յուրաքանչյուրի կարգավորման ընթացքում տեղի են ունենում դրանց կարգավորիչ պարամետրերի այնպիսի փոփոխություններ, որոնք տնտեսական գործընթացները դարձնում են անկառավարելի: Այդպիսի դեպքերում տնտեսական համակարգը կարող է հանդես բերել ինքնակարգավորման մեխանիզմներ: Ինքնակարգավորման մեխանիզմները ձևավորվում են տնտեսական համակարգի նոր իրավիճակի պայմաններում, որի առաջացումը պայմանավորված է արտաքին ազդեցություններով:

Սովորաբար համակարգը բաց է համարվում, եթե նրա արտաքին սահմաններով տեղի են ունենում էներգիայի փոխակերպումներ, նյութական հոսքեր, որոնք տվյալ համակարգը դարձնում են անհավասարակշիռ, սակայն ձևավորված նոր իրավիճակը ենթարկվում է այլ կարգի կարգավորման: Այսպես, ամբողջ երկրի տնտեսության զարգացման ընթացքում ձևավորվում են տնտեսական առավելագույն և նվազագույն մակարդակներ, որոնք կարող են խոչընդոտել տնտեսության զարգացումը, հանգեցնել ճգնաժամային իրավիճակների:

Շուկայական տնտեսության առանձնահատկությունը նման ճգնաժամային իրավիճակներում ինքնակարգավորվող մեխանիզմների գործունեությունն ուժեղացնելն է: Այսպես, եթե տեղի է ունեցել ապրանքների գերարտադրություն, և ապրանքների գները իջնում են, որի հետևանքով ֆիրմաները ազատում են աշխատողների մի մասին, ու նրանք դառնում են գործազուրկ, ապա աշխատանքի շուկայում աշխատուժի գները իջնում են, գործատերերը շահագրգռված են ավելի շատ աշխատողներ վարձել և ավելացնել արտադրության ծավալը: Ինքնակարգավորման նման մեխանիզմը գործում է տնտեսության զանազան բնագավառներում, որոնց կանդրադառնանք ապրանքների, ծառայությունների, աշխատան-

քի ու կապիտալի շուկաների հիմնական օրինաչափությունների ուսումնասիրման ընթացքում:

Երկրի ամբողջ տնտեսության համար, որպես բաց տնտեսական համակարգ, ինքնակարգավորման մեխանիզմն ավելի գործունակ է, եթե՝

ա/ տնտեսության զարգացման պարամետրերը ժամանակի մեջ կայուն են,

բ/ բացակայում են փողի և ապրանքների արտաքին չկարգավորված հոսքերը,

գ/ տնտեսական համակարգը հավասարակշիռ վիճակից ինքնուրույն դուրս չի գալիս:

Ուստի ինքնակարգավորման մեխանիզմն ավելի կենսունակ է այն իրավիճակներում, երբ համակարգի պարամետրերը կայուն են ավելի երկար ժամանակաշրջանում: Այդ է պատճառը, որ անցումային տնտեսության պայմաններում ինքնակարգավորման մեխանիզմը դեռևս լիովին չի գործում:

Շուկայի ազդեցության ոլորտից դուրս գտնվող բնագավառները

Ցանկացած շուկայական տնտեսության մեջ, հատկապես անցումային փուլում գտնվող երկրներում, դրսևորվում են ոչ բնականոն երևույթներ, որոնք շուկան կարգավորել չի կարող, և պետության կողմից ժամանակին դրանք չկարգավորելու դեպքում կարող են առաջանալ հասարակական աղետներ:

Դրանցից առաջինը ***սոցիալական անհավասարությունն*** է: Հատկապես շուկայական տնտեսությանն անցման սկզբնական շրջանում, երբ տեղի է ունենում գների ազատականացում, հասարակության՝ մի կերպ իրենց պահանջմունքները բավարարող մասը զրկվում է սպառման ամենաանհրաժեշտ առարկաներ ձեռք բերելու հնարավորությունից, քանի որ գների բարձրացման պետական փոխհատուցումը մի քանի տասնյակ անգամ հետ է մնում գների աճի տեմպերից:

Շուկան, հատկապես անցման շրջանում, պահպանողականություն է դրսևորում *գիտության*, *գիտական հետազոտությունների* զարգացման ու ներդրման նկատմամբ: Եթե խոշոր ձեռնարկությունները և ֆիրմաները կոնստրուկտորական նոր մշակումներ կատարելու ու ներդնելու հնարավորություններ ունեն, ապա մասնավորեցվող մանր ձեռնարկությունները զրկված են այդպիսի հնարավորությունից:

Շուկան չի արձագանքում *համապետական, ազգային նշանակություն* ունեցող *սոցիալական, բնապահպանական* և այլ ծրագրերի իրագործման պահանջներին: Շուկայական տնտեսության մեջ, միայն վերջին հաշվով է շուկան նպաստում արտադրության զարգացմանը և այդ ճանապարհով՝ նման ծրագրերի իրագործման համար ազգային միջոցների ստեղծմանը:

Շուկայական համակարգում կարող են առաջանալ նաև այլ ձախողումներ, որոնք չեն ինքնակարգավորվում: Այդպիսի ձախողումների հիմ-

նական պատճառներից են՝ մրցակցության սահմանափակումները, արտաքին ազդեցությունները և ոչ ամբողջական տեղեկատվությունը:

Մրցակցության սահմանափակումները պայմանավորված են տվյալ շուկայում մենաշնորհային դիրք ունեցող արտադրողի, ծառայություն մատուցողի առկայությամբ, որը մշտապես հանգեցնում է ռեսուրսների անարդյունավետ օգտագործման: Ուստի պետության միջամտությամբ փորձ է արվում վերացնել այդ մենաշնորհային դիրքը: Դա շատ ավելի դժվար է, եթե տվյալ մենաշնորհը բնական է: Այդպիսին են զանազան ծառայություններ մատուցողները, որոնց տարանջատման դեպքում ծախսերը չեն կրճատվում, այլ ավելանում են: Բնական մենաշնորհի ձևավորման հիմքում ընկած է արտադրության մասշտաբից կախված խնայողությունը: Եթե բնական մենաշնորհը հնարավոր չէ հաղթահարել, և ծախսերի տնտեսում հնարավոր չէ ռեսուրսների արդյունավետ օգտագործման տեսանկյունից, ապա պետական ազդեցությունը հանդես պետք է գա տվյալ մենաշնորհային գործունեության վրա ազդելու և դրա առանձին կողմերը կարգավորելու տեսանկյունից:

Արտաքին ազդեցությունները շուկայական գործունեության և ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա հանդես են գալիս այն պարզ պատճառով, որ գոյություն ունեն ռեսուրսների օգտագործման առավել լավ տարբերակներ, որոնք դեռևս չեն իրագործվել, և սպառողը վճարում է ռեսուրսների վատ օգտագործման համար: Եթե որևէ մեկը օգտագործում է սահմանափակ ռեսուրսներ, չփոխհատուցելով դրանց լրիվ արժեքը, ապա ծախսերի մի մասը բաժին է ընկնում տնտեսական կյանքի մյուս մասնակիցներին, և գոյություն ունի բացասական արտաքին ազդեցություն: Սակայն, եթե որևէ տնտեսավարող սուբյեկտ իր համար ճանապարհ է կառուցում, որից օգտվում են մյուսները, ապա գոյություն ունի դրական արտաքին ազդեցություն: Այսպիսի դեպքերում պետական կարգավորման ազդեցությունը հիմնականում արտահայտվում է դրական արտաքին ազդեցությունների միջոցով:

Ոչ լրիվ տեղեկատվությունը հանգեցնում է ռեսուրսների անարդյունավետ օգտագործման: Այսպես, զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում սովորական է պետության մասնակցությունը շուկայի տեղեկատվական ենթակառուցվածքների ձևավորմանը: Տեսականորեն, կատարյալ մրցակցության շուկայում վաճառողները և գնորդները օգտվում են անվճար տեղեկատվությունից: Իրական շուկայում ոչ ոք չի ունենում ամբողջական տեղեկատվություն, և նրանք, ովքեր ավելի մեծ ծավալի տեղեկատվություն ունեն, ավելի լավ դիրք են գրավում: Ընդհակառակը, տեղեկատվական անճշտությունը, հատկապես ծառայությունների բնագավառում, հանգեցնում է ռեսուրսների լրացուցիչ ծախսումների:

1.3. Մակրոտնտեսական պետական կարգավորման անհրաժեշտությունը

Մենք համոզվեցինք, որ «մաքուր» տնտեսական համակարգ չկա, և շուկայական տնտեսությունը, որպես կանոն, հանդես է գալիս խառը համակարգի տեսքով: Դա նշանակում է, որ տնտեսական որոշումներ կայացնում և դրա համար տնտեսական պատասխանատվություն կրում են ոչ միայն տնտեսավարող սուբյեկտները, այլ նաև պետությունը՝ ի դեմս երկրի կառավարության: Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը սովորաբար բացատրվում է շուկայական տնտեսության անկատարությամբ և թերություններով, հասարակական բարիքների պահանջարկի առկայությամբ, սոցիալական բարիքների բավարարման առանձնահատկությամբ, տնտեսության մեջ պետական հատվածի առկայությամբ:

Նշված բոլոր հանգամանքները վճռական դեր են խաղում տնտեսության պետական կարգավորման գործում: Սակայն մակրոտնտեսական կարգավորման անհրաժեշտությունը բխում է նաև տնտեսությունը որպես միասնական օրգանիզմ դիտարկելու և դրա զարգացման պահանջները կատարելու խնդիրներից: Չնայած տնտեսավարող սուբյեկտներն ազատ են իրենց գործողությունների մեջ, այնուամենայնիվ, նրանք մտնում են երեք տիպի հարաբերությունների մեջ.

♦ հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների և պետության միջև (հարկային, վարկային, բնապահպանական, ռազմական և այլն),

♦ հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների միջև (ապրանքների ու ծառայությունների առք ու վաճառք, ռեսուրսների մատուցում և այլն):

♦ հարաբերություններ տնտեսավարող սուբյեկտների և հասարակության անդամների միջև (աշխատուժի վարձակալություն, ապրանքների ու ծառայությունների վաճառք, խնայողությունների օգտագործում):

Նշված բոլոր հարաբերությունները պահանջում են պետական, իրավական կարգավորում: Իհարկե, մակրոտնտեսական կարգավորումն անհրաժեշտ է նաև տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը ապահովագրելու համար: Դրա համար պահանջվում են՝ տնտեսավարման իրավահավասար պայմանների ստեղծում, քաղաքական իրավիճակի կանոնավորում, երկրի ֆինանսական վիճակի և տնտեսական զարգացման կայունացում:

Միանգամայն պարզ է, որ շուկայական ինքնակարգավորման մեխանիզմը չի կարող լուծել երկրի համապետական զարգացման խնդիրները, քանի որ աշխատուժի լրիվ օգտագործման, տնտեսական ընդհանուր հավասարակշռության պահպանման, տնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործման, արտադրության ռեսուրսների տարածքային տեղաբաշխման հարցերում այդ համակարգը հանդես է բերում թերություններ:

Շուկայական տնտեսության վերը նշված թերությունների վերացման նպատակով իրականացվում են մակրոտնտեսական կարգավորման մի շարք միջոցառումներ, որոնք պետական կարգավորման են ենթարկվում շուկայական տվյալ համակարգի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Այդպիսի միջոցառումներ են.

♦ *Մրցակցության ապահովումը*

Շուկայական մրցապայքարը հանգեցնում է ինչպես ապրանքարտադրողների մի մասի դուրսմղմանը, այնպես էլ դրանց միավորմանը, որոնց հետևանքով տեղի է ունենում կապիտալի կենտրոնացման և համակենտրոնացման գործընթաց: Չնայած նոր ձեռնարկությունների ստեղծմանը՝ նրանք չեն կարողանում մրցակցել նախկին ֆիրմաների հետ, և շուկայական մրցակցությունը ժամանակի ընթացքում վերածվում է մենաշնորհային տիրապետության: Պետությունը պարտավոր է սահմանել իրավական, տնտեսավարման և սոցիալական այնպիսի նորմեր, պայմաններ, որոնք ապահովում են մրցակցությունը և արգելակում մենաշնորհային շուկաների ձևավորումը: Նման օրենսդրություն և տնտեսական պայմաններ անցումային երկրներում ստեղծվում են աստիճանաբար:

♦ *Սոցիալական ապահովությունը* անհրաժեշտ է հասարակության բոլոր այն անդամների համար (թոշակառուներ, հիվանդներ, երեխաներ, հաշմանդամներ, գործազուրկներ, որբեր), ովքեր շուկայական հարաբերությունների մեջ չեն մտնում և չեն կարող ազգային արդյունքից իրենց բաժինը ստանալ աշխատանքի կամ կապիտալի դիմաց: Այդպիսի ապահովությունը պետությունը պարտավոր է իրականացնել նաև աշխատուժի շուկայում ընդգրկված աշխատողների համար, որպեսզի գործատուները վարձու աշխատողին վճարեն նվազագույն կենսական պահանջները բավարարող աշխատավարձ:

Տնտեսական ընդհանուր կայունության պայմաններն անհրաժեշտ են, որպեսզի առանձին ճյուղերի, բնագավառների տնտեսավարող սուբյեկտները տնտեսական առանձնահատուկ իրավիճակներում չհայտնվեն: Օրինակ, բավական է արհեստականորեն իջեցնել երկրի արժույթի կուրսը այլ երկրների արժույթների նկատմամբ, և ներմուծումը ավելի թանկ է դառնում այդ երկրում, իսկ ներմուծվող հումքի բազայի վրա զարգացող ճյուղերի տնտեսավարող սուբյեկտները կարող են հայտնվել ֆինանսական ծանր դրության մեջ:

Միկրոտնտեսական ճգնաժամերի հաղթահարման անհրաժեշտություն զգացվում է, եթե երկրի առանձին ճյուղերի ձեռնարկություններ, արտաքին և ներքին անբարենպաստ պայմանների ազդեցությամբ, սկսում են զանգվածային ձևով կրճատել արտադրության ծավալը, ազատել աշխատողներին: Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է դրանց համար ապահովել հարկային, վարկային առավելություններ, որոնց ազդեցությամբ ճգնաժամը հաղթահարվում է, և ձեռնարկությունները շարունակում են իրենց բնականոն գործունեությունը:

Հասարակական բարիքների բավարարումը նույնպես հնարավոր չէ կազմակերպել շուկայական համակարգի միջոցով, քանի որ դրանք ազատ օգտագործվում են բնակչության կողմից և անվճար են: Այսպես, արտաքին և ներքին անվտանգությունը, տեղական և պետական կառավարման մարմինների գործառույթները, իրավական մարմինների, դպրոց-

ների ծառայություններից, ավտոճանապարհներից, կամուրջներից օգտվելը ապահովելու համար պահանջվում են ծախսումներ, սակայն դրանց համար ոչ ոք չի վճարում: Ուստի դրանք հասարակական բարիքներ են: Հասարակական բարիքների մատուցումը իրականացվում է պետական կարգավորման, ֆինանսական միջոցների ծախսման միջոցով, և շուկայական մեխանիզմը այդ գործընթացի վրա էական ազդեցություն հանդես չի բերում:

Հասարակական բարիքների մի մասը սոցիալական բնույթ ունեն: Դրանք այն ծառայություններն են, որոնք մատուցվում են բնակչությանը, և անհնար է չափել հասարակության անդամների կողմից դրանց սպառման չափը (աղբահանումը, կոյուղին, զբոսայգիները):

Այդպիսի բարիքների վերարտադրության կազմակերպումը դուրս է շուկայական հարաբերությունների շրջանակից, և պետության կողմից կարգավորման պարտադիր գործառույթներ են իրականացվում նման բարիքների վերարտադրության համար:

Վերջապես, տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը բացատրվում է պետական սեփականության գոյությամբ: Այն, որ տնտեսության արտադրական ենթակառուցվածքները, գիտահետազոտական, փորձարարական, նախագծային-հետազոտական գործունեություն իրականացնող կազմակերպությունները պետական սեփականություն են, կանխորոշում է պետական կարգավորման կարևորությունը դրանց գործունեության կազմակերպման համար: Պետական կարգավորումը անհրաժեշտ է շուկայական մրցակցության պայմաններում պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների կարգավորումն ապահովելու և համապետական նշանակության խնդիրներ իրականացնելու համար:

Պետական հոգածության առարկա են ազգային արժեքներ համարվող օբյեկտները (պետական հողեր, անտառային զանգվածներ, ազգային արգելանոցներ, պատմական հուշարձաններ, թանգարաններ):

Պետական ձեռնարկությունները (հատկապես սպասարկման բնագավառում) առավելագույն շահույթի ստացման նպատակ չեն հետապնդում, ուստի և կարող են մրցակցող մասնավոր ձեռնարկությունների ճնշմանը չդիմանալ, եթե չլինի օժանդակություն պետական բյուջեից: Սակայն այդ ձեռնարկությունները խոչընդոտում են մասնավոր ձեռնարկությունների կողմից սպասարկման սակագները մենաշնորհային ձևով բարձրացնելուն և նպաստում են գների կայունացմանը:

1.4. Պետության տնտեսական գործունեության հիմնական բնագավառները և գործառույթները

Շուկայական տնտեսության պայմաններում պետության հիմնական խնդիրը երկրի տնտեսական և սոցիալական կայունության ապահովումն է:

Այս խնդրի լուծումը պահանջում է միմյանց հետ փոխադարձաբար կապված մի շարք խնդիրների իրականացում.

- տնտեսական պարբերաշրջանների համահարթում,
- դրամաշրջանառության կայունացում,
- մրցակցության խթանում,
- արտաքին տնտեսական հավասարակշռության ապահովում,
- տնտեսության կառուցվածքի բարելավում,
- բնակչության զբաղվածության ապահովում,
- երկրի ներքին շուկայում գների կայունացում,
- բնության պահպանություն և բնական ռեսուրսների բանական օգտագործում,
- բնակչության սոցիալական ապահովում:

Ինչպես տեսնում ենք, այդ խնդիրներն ունեն ընթացիկ, միջին-ժամկետ և հեռանկարային բնույթ: Խնդրի բնույթը որոշում է նաև դրա փոխկապվածությունը մյուս խնդիրների հետ: Այսպես, տնտեսական աճի տեմպերի արագացման համար պահանջվում է մասնակի խնդիրների իրականացում դրամաշրջանառության բնագավառում՝ աշխատողների աշխատավարձի բարձրացում և այլն:

Միջինժամկետ խնդիրների իրականացումը վերաբերում է հատկապես տնտեսական պարբերաշրջանների համահարթմանը, երբ պետությունը խրախուսում է արտաքին ներդրումները ապրանքների և ծառայությունների առաջարկը կրճատող ճյուղերում, որը հնարավորություն է տալիս նոր աշխատատեղերի բացման շնորհիվ ավելացնել այդ ճյուղերի արտադրանքի առաջարկը և արտահանումը:

Պետության տնտեսական գործառույթները վերաբերում են դրամավարկային և հարկաբյուջետային կարգավորմանը, հասարակական բարիքների ստեղծմանը, պետական գնումների իրականացմանը և դրանց գծով պետական պատվերների կազմակերպմանը, պետական պաշարների ստեղծմանը:

Դրամավարկային համակարգի կարգավորումը երկրի կենտրոնական (որոշ երկրներում՝ ազգային) բանկի մենաշնորհն է, որն իրականացվում է տնտեսական զարգացման կայունություն ապահովելու նպատակով: Եթե կենտրոնական բանկը շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածն ավելացնում է ավելի արագ տեմպերով, քան տվյալ երկրի համախառն ներքին արդյունքն է աճում, ապա տեղի է ունենում ազգային արժույթի ինֆլյացիա, և ապրանքների գները բարձրանում են: Սովորաբար փողի զանգվածի կարգավորումը իրականացվում է բաց շուկայում կատարվող գործարքների միջոցով, երբ երկրի բնակչությանը վաճառվում և հետ են գնվում պետական կարճաժամկետ պարտատոմսեր, որոնց գործողության մեխանիզմը կուսումնասիրենք դասընթացի 16-րդ գլխում:

Հարկաբյուջետային կարգավորումը պետության տնտեսական կարեվորագույն գործառույթն է, որի միջոցով պետությունը հնարավորություն է ստանում երկրի զարգացման հիմնական խնդիրների լուծման նպատակով իր ձեռքում կենտրոնացնել ստեղծված ազգային արդյունքի մի մասը և օգտագործել երկրի պաշտպանության, սոցիալական ոլորտի զարգացման, բնապահպանական և ազգային նշանակության այլ խնդիրների

լուծման համար: Այդ միջոցները կենտրոնացվում են պետական բյուջեում, որի աղբյուրներ են հանդիսանում հարկերը, տուրքերը, պետության արտաքին եկամուտները, իսկ ծախսման ուղղություններ են՝ ազգային տնտեսության ֆինանսավորումը, երկրի կառավարման և պաշտպանության, առողջապահության և սոցիալական մյուս ոլորտների ծախսերի ֆինանսավորումը: Որքան ավելի մեծ է պետական բյուջեում ընդգրկվող միջոցների տեսակարար կշիռն ազգային արդյունքի մեջ, այնքան հարկաբյուջետային քաղաքականությունը մեծ դեր է խաղում շուկայական տնտեսության պետական կարգավորման գործում: Այսպես, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ պետական բյուջեի միջոցով բաշխվող արդյունքի տեսակարար կշիռը 1990-ական թվականների կեսերին ԱՄՆ-ում և Ճապոնիայում կազմում էր 35-40%, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և Կանադայում՝ մոտ 50%, Շվեդիայում՝ 60%: Դա նշանակում է, որ տնտեսության պետական կարգավորման դերն այդ երկրներում ավելի մեծ է, քան շուկայական տնտեսություն ունեցող նախկին ԽՍՀՄ երկրներում, որոնցում այդ ցուցանիշը փոքր է 25%-ից:

Հասարակական բարիքների ապահովումը աշխարհի բոլոր երկրներում իրականացվում է պետության կողմից, և այդ գործառույթը կախված չէ երկրում շուկայական տնտեսության ձևավորման ու զարգացման վիճակից: Մենք արդեն պատկերացում կազմեցինք հասարակական բարիքների էության մասին և պետք է իմանանք, որ հասարակական բարիքների արտադրությունը և հասարակության անդամներին դրանց մատուցումը շուկայական գործունեությանը վստահել չի կարելի, քանի որ շուկայական հավասարակշռությունը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության բարեկեցությանը, և պետությունը միջոցներ է ձեռնարկում հասարակական բարիքների անխափան մատուցման համար: Հասարակական բարիքների մի մասը կարող է մատուցվել շուկայական մեխանիզմով (վճարովի առողջապահություն, կրթություն), սակայն հասարակության բոլոր անդամները չեն կարող այդ ճանապարհով օգտվել հասարակական բարիքներից: Դա նշանակում է հասարակության անդամների մի մասի գոյությունը վտանգի տակ դնել: Այդ է պատճառը, որ տվյալ բնագավառում պետության գործառույթը այդ ապրանքների ու ծառայությունների շուկայական պահանջարկը դրանց պետական առաջարկով լրացնելն է: Հասարակական մի շարք բարիքների առաջարկ կատարվում է միայն պետության կողմից (ներքին և արտաքին պաշտպանունակության, պետական տեղեկատվական համակարգ, երկրի կառավարման համակարգ և այլն), որի համար վճարում է միայն պետությունը և անվճար մատուցում հասարակության անդամներին:

Պետական գնումները կատարվում են երկրի կառավարման, արտաքին և ներքին պաշտպանության, ինչպես նաև սոցիալական բնագավառների նյութական ծախսերը հոգալու համար: Փաստորեն պետական գնումները պետական ծախսերի նյութական մասն են: Պետական ծախսերը բաղկացած են նյութական ծախսերից և պետական բյուջետային բնագավառի աշխատողներին տրվող աշխատանքի վարձատրության ծախսերից: Ուստի պետական ծախսերը գերազանցում են պետական

գնումները: Պետական գնումներ կատարվում են ռազմական տեխնիկա, պետական կարիքների համար պահանջվող սպառման առարկաներ ձեռք բերելու, պետական կենտրոնացված կապիտալ ներդրումներ կատարելու, առողջապահության, կրթության, սպորտի և այլ բնագավառների նյութական կարիքները հոգալու համար: Պետական գնումների իրականացման ձևերից մեկը պետական պատվերն է:

Պետական պատվերները կարող են տրվել սեփականության տարբեր ձևերի պայմաններում գործող ձեռնարկություններին՝ պայմանագրային հիմունքներով: Ձեռնարկություններին պետական պատվերի տեսքով տրվող առաջադրանքների անվանացանկը ՀՀ-ում հաստատվում է Կառավարության, իսկ պետական պատվերի տեսականին՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից: Նախապես տրվում են մրցութային հայտարարություններ պետական գնումների ծավալի և անվանացանկի նշումով, և մրցույթով հաղթող ձեռնարկությունների հետ կնքվում են պայմանագրեր՝ արտադրանքի մատակարարման ծավալի, տեսականու, ժամկետների և այլ ցուցանիշների վերաբերյալ:

Պետական պահուստները սովորաբար ստեղծվում են տվյալ երկրի համար կարևորագույն արտադրանքի տեսակների գծով, որոնք պահելու դեպքում չեն փչանում, և պետությունը այդ պահուստների միջոցով ազդում է տվյալ արտադրանքի շուկայական գնի վրա: Այդպիսի պաշարներ նպատակահարմար է ստեղծել հացահատիկի, վառելիքի և մի շարք այլ զանգվածային սպառում ունեցող արտադրանքների համար:

1.5. Պետության դերին վերաբերող տեսությունները, դրանց առանձնահատկությունները և բնորոշ գծերը

Պետության դերը շուկայական տնտեսության կարգավորման անմիջական գործընթացում և տնտեսագիտության տեսական քննարկումներում արտահայտվում է երկու ծայրահեղություններով՝ պետության կողմից տնտեսական բոլոր լուծումների կենտրոնացված իրականացումից մինչև տնտեսավարող սուբյեկտների լիակատար տնտեսական ինքնուրույնություն: Պատահական չէ, որ երբ տնտեսագետները փորձում էին դասակարգել պետական միջամտության աստիճանը տարբեր երկրներում և դրանք թվարկել՝ կախված տնտեսական գործընթացներին պետական մասնակցության աստիճանից, ստացվում էր՝ Ալբանիա, Խորհրդային Միություն, Հարավսլավիա, Շվեդիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Հոնկոնգ հերթագայությունը[1]:

Դեռևս 1776 թվականին Ա. Սմիթը իր հայտնի աշխատության մեջ առաջադրել է պետության ակտիվ դերը, որը նրա և հաջորդող դասականների աշխատություններում հիմնականում հանգում էր երկրի արտաքին պաշտպանությանը, ներքին կարգի պահպանությանը, իրավական

[1] × ·°–³ ¤1⁄⁄ ″³,«‰° ™1⁄1 „‹•–,†· ™1Ž¶″,″„·¶‹1Ò 1⁄⁄⁄ –•″⁄⁄4<<6⁄…1451

համակարգի ստեղծմանը, լուսավորությանը, կրթությանը և ազգային արժույթի կեղծում թույլ չտալուն:

Հետագայում Ջոն Ստ. Միլը «Քաղաքատնտեսության սկզբունքները» աշխատությունում սահմանում է պետության դերը տնտեսական քաղաքականության բնագավառում: Դրանք զանազան ձևակերպումներով հանդիպում են գերմանացի Կ. Խ. Ռաուի (1855), Ջ. Մ. Քեյնսի հոր՝ Ջոն Ն. Քեյնսի աշխատություններում: Սակայն մինչև մարքսիստական տնտեսագիտության ստեղծումը և դրա գործնական իրականացումը սոցիալիստական տնտեսության տեսքով, դասական տնտեսագիտությունը պետությանն էր վերագրում համազգային խնդիրների լուծումը պետության տնտեսական քաղաքականության միջոցով: Նշված տեսության զարգացման գործում Ռուսաստանում զգալի դեր են խաղացել Պ. Ա. Ստոլիպինը և Ս. Յու. Վիտեն: Սոցիալիստական տնտեսության պլանավորման և կառավարման տեսության ստեղծումը և դրա գործնական իրագործումը էական ազդեցություն գործեցին արևմտյան երկրների քաղաքական գործիչների գործունեության վրա, հատկապես տնտեսության պետական կարգավորման հարցերում: 20-րդ դարի քաղաքական գործիչներ Լ. Էրհարդը, Վ. Բրանդտը (Գերմանիա), Ֆ. Ռուզվելտը (ԱՄՆ), Շառլ դը Գոլը (Ֆրանսիա), Մ. Թեթչերը (Մեծ Բրիտանիա) զգալի դեր խաղացին տնտեսության պետական կարգավորման միջոցով երկրի տնտեսական հաջողությունների ապահովման գործում:

Պետության դերի հարցում հեղափոխական մոտեցում էր 1936թ. Ջ. Մ. Քեյնսի «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսությունը» գրքի հրատարակումը, որը ոչ միայն շուկայական տնտեսության ճգնաժամային վիճակների հաղթահարման հիմք դրեց, այլ նաև պետության ակտիվ միջամտության տեսության քննարկմանը մասնակցող բոլոր տնտեսագետների դավանանքները երկու խմբի՝ նոր քեյնսականների և նորդասականների (լիբերալներ) բաժանելու սկիզբ հանդիսացավ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անկախություն ստացած մի շարք երկրներ (Հնդկաստան, Ինդոնեզիա, Եգիպտոս, Ալժիր և այլն) պետք է տնտեսության զարգացման ուղղությունների ընտրություն կատարեին. ստեղծել պետական կարգավորման ենթարկվող տնտեսություն՝ սոցիալական հիմնական հարցերի կենտրոնացված լուծմամբ, թե՝ շուկայական տնտեսություն՝ տնտեսավարող սուբյեկտների լիակատար տնտեսական ազատությամբ: Սկզբնական շրջանում ավելի մեծ էր այն տնտեսագետների ազդեցությունը, ովքեր տնտեսության պետական կարգավորման հարցում համամիտ էին Ջ. Մ. Քեյնսի տեսակետին: Նույնիսկ Ջ. Քենեդին, 1962թ. դառնալով ԱՄՆ նախագահ, իրեն շրջապատեց երիտասարդ քեյնսականներով, ովքեր տնտեսության պետական կարգավորման ջատագովներ էին: Սակայն սոցիալական նվաճումների հարցում նոր զարգացող դեմոկրատական երկրները էական հաջողություններ չունեցան: Դեռ ավելին, կատարյալ շուկայական տնտեսություն և պետական պասիվ միջամտություն ունեցող մի շարք երկրներ (Թաիլանդ, Սինգապուր, Թայվան, Ինդոնեզիա) 20-րդ դարի վերջին ուղղակի տնտեսական հրաշք ցուցաբերեցին: Դա նորդասականների համար առիթ հանդի-

սացավ զարգացնելու պետության պասիվ միջամտության գաղափարը: Իրենց աշխատություններում պետական միջամտության բացասական կողմերը սկսեցին երևան հանել հատկապես Մ. Ֆրիդմենը, Ֆ. Ա. Հայեկը, Ռ. Լուկասը, ովքեր, լինելով լիբերալ տնտեսության կողմնակիցներ, այն կարծիքին էին, որ պետական ցանկացած միջամտություն ոչ միայն չի կարող լուծել շուկայական տնտեսության բացթողումները, այլ ընդհակառակը՝ շատ դեպքերում այդպիսի միջամտությունը զգալի վնաս կարող է հասցնել տնտեսությանը: Նոր դասականները պետության միջամտության ավելորդությունը բացատրում են տնտեսական գործընթացների և տնտեսական լուծումների միջև գոյություն ունեցող խզումներով, տնտեսական երևույթների կանխագուշակման և գնահատման դժվարություններով:

Նորքեյնսականները պետության միջամտությունը կապում են «անտեսանելի ձեռքի» գործողության հետ, շեշտելով, որ շուկայական «անտեսանելի ձեռքը» լուծում է առանձին ապրանքարտադրողների խնդիրները, նրանց՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման հարցերը, սակայն համապատասխանությունը ամբողջ երկրի ռեսուրսների արդյունավետ օգտագործման պահանջին կարող է լուծվել պետության տնտեսական քաղաքականությամբ:

20-րդ դարի 30-ական թվականներին տնտեսագիտությունը անդրադարձավ պետության տնտեսական քաղաքականությանը առնչվող հարցերին, քանի որ մինչ այդ պետության կողմից լուծվում էին շուկայական տնտեսության միայն առանձին հիմնախնդիրներ: 1929-1933թթ. մեծ ճգնաժամը առաջադրեց պետության մշտական միջամտության խնդիրը: Այն տնտեսագիտության առջև խնդիր դրեց մշակել պետության տնտեսական քաղաքականության հիմնադրույթներ՝ տնտեսական նպատակների որոշման, տնտեսական համակարգին դրանց համապատասխանության հետազոտության համար, գտնել պետական կառավարման մարմինների փոխադարձ գործողությունների անհրաժեշտ լուծումներ: Պետության տնտեսական քաղաքականության նշված հիմնախնդիրներին անդրադարձան տնտեսագիտական տարբեր դպրոցներ՝ առաջարկելով դրանց լուծման տարաբնույթ մոտեցումներ: Այդ մոտեցումները միմյանցից տարբերվում են հիմնականում փողի, կապիտալի տոկոսադրույքի, գների մակարդակի կարգավորման հարցերում: Ուստի պատահական չէ, որ պետության պասիվ միջամտության կողմնակիցներին անվանում են նաև մոնետարիստներ, որոնք գտնում են, որ պետությունը, բացի փողի զանգվածի կարգավորումից, չպետք է մասնակցի տնտեսական մյուս հիմնախնդիրների լուծմանը: Տնտեսագիտական դպրոցները պետության տնտեսական քաղաքականության կամ տնտեսության պետական կարգավորման հարցում միմյանցից տարբերվում են պահանջարկի և առաջարկի հաշվեկշռվածության մեխանիզմի բնութագրման ժամանակ: Բոլոր դասականները հենվում են Սեյի օրենքի գործողության վրա, որ իբր պահանջարկը ինքնըստինքյան որոշվում է առաջարկի հիման վրա, և դրանց միջև հաշվեկշռվածության հաստատման համար պետական միջամտության կարիք չի զգացվում: Նրանք գտնում են, որ

սպառման և ներդրումների ծավալները կախման մեջ են տոկոսադրույքից, ուստի տոկոսադրույքի բարձրացման ժամանակ մարդիկ ավելի շատ են խնայում և ավելի քիչ են սպառում, որի հետևանքով տոկոսադրույքը իջնում է, և ներդրումներն աճում են: Այլ խոսքով՝ հավասարակշռության մեխանիզմը կարգավորում է տոկոսադրույքը, իսկ վերջինս կարգավորում է պահանջարկը և այն հավասարեցնում առաջարկին: Քեյնսականները ապրանքների պահանջարկի մեծությունը կապում են արտադրության ծավալից կախված՝ սպառման ծավալի և տոկոսադրույքից կախված՝ ներդրումների ծավալի հետ: Այսինքն, երբ սպառումը կրճատվում է, ապա կրճատվում է նաև պահանջարկը: Ուստի այդ դեպքում պետության խնդիրը խթանող հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնելն է, այսինքն՝ պետությունը պետք է կրճատի հարկերը կամ ավելացնի պետական գնումները: Հետագայում կհամոզվեք, որ պետության ակտիվ միջամտություն պահանջվում է նաև փողի զանգվածի ավելացման, այսինքն՝ դրամավարկային քաղաքականության հարցում: Խթանող դրամավարկային քաղաքականությունը կարճ ժամկետում ավելացնում է ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկը, ուստի, ըստ քեյնսականների՝ այն նպաստում է արտադրության ծավալի աճին և գործազրկության կրճատմանը:

Այսպիսով, դասականները և քեյնսականները առաջադրում են ապրանքների, աշխատուժի և փողի շուկաներում հավասարակշռության մեխանիզմի գործողության տարբեր մոտեցումներ, որոնց կանդրադառնանք հետագա թեմաների ուսումնասիրության ժամանակ:

1.6. Մակրոտնտեսական կարգավորման ուսումնասիրության առարկան, օբյեկտը, նպատակները և լծակները

Ինչպես նշվեց, տնտեսագիտական գրականության մեջ տնտեսության պետական կարգավորում և պետության տնտեսական քաղաքականություն հասկացությունները հաճախ նույնացվում են: Հետևաբար, տնտեսության պետական կարգավորման տեսության ծագումը նույնպես վերագրվում է 20-րդ դարի 30-ական թվականներին: Սակայն որպես ինքնուրույն դասընթաց՝ արևմտյան տնտեսագիտական կրթության համակարգում այն սկսեց դասավանդվել 50-ական թվականներից:

Միանգամայն պարզ է, որ սոցիալիստական երկրներում այդ դասընթացին փոխարինում էր ժողովրդական տնտեսության պլանավորում առարկան, քանի որ արտացոլում էր պետության տնտեսական քաղաքականության ամբողջ էությունը:

Տնտեսության պետական կարգավորման առարկան ընդգրկում է պետական իրավասու հաստատությունների և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող իրավական, գործադիր և վերահսկող բնույթի միջոցառումների տիպային համակարգը, որի նպատակը

գործող սոցիալ-տնտեսական համակարգի համապատասխանեցումն է փոփոխվող շուկայական իրադրությանը:

Սոցիալ-տնտեսական գործընթացները, որոնք նույն կարգով ու մեթոդներով չեն կարող կարգավորվել պետության կողմից, պահանջում են բազմաթիվ ու բազմապիսի լուծումներ: Այդ է պատճառը, որ շուկայական տնտեսության զարգացման տարբեր փուլերում առաջադրվում են պետության միջամտության առանձնահատուկ մեթոդներ ու եղանակներ, որոնք պետք է մշակվեն և առաջադրվեն տնտեսության պետական կարգավորման տեսության կողմից: Ուստի դասընթացի առարկան պետության տնտեսական քաղաքականության խնդիրների, դրանց լուծման ուղիների բացահայտումն է, քաղաքականության այն բոլոր ուղղությունների, սկզբունքների մշակումը, որոնք պետք է կիրառվեն շուկայական տնտեսության մասնակից բոլոր սուբյեկտների գործունեությունը կոորդինացնելու և երկրի զարգացման համապետական խնդիրներին համապատասխանեցնելու համար:

Պետական կարգավորման կոնկրետ ուղղությունները, ձևերը, մասշտաբները յուրաքանչյուր երկրում որոշվում են տնտեսական ու սոցիալական հիմնախնդիրների բնույթին համապատասխան: Դրանք մեկընդմիշտ տրված և մշտական օգտագործվող ձևեր ու ուղղություններ չեն: Որևէ մեկի ընտրությունը պահանջում է իրավիճակի, հատկապես մակրոմակարդակի իրավիճակի բազմակողմանի վերլուծություն:

Մակրոտնտեսական վերլուծության հիման վրա պետական տնտեսական քաղաքականությանը առնչվող որոշումներ կայացնելը պահանջում է տնտեսության իրավիճակների, նպատակների, համակարգի շահերի համապատասխանության վերլուծություններ:

Այսպիսի վերլուծությունը անհրաժեշտ է, քանի որ տնտեսական լուծումների այն մեթոդները, ազդեցության գործիքները, որոնք օգտագործվում էին սոցիալիստական տնտեսության մեջ, շուկայականում կիրառելի չեն: Պահանջվում են տնտեսավարող սուբյեկտների վրա ազդելու նոր եղանակներ՝ տնտեսավարման կարգի, հարկերի, զանազան նորմերի, մաքսային վճարների, արժութային կուրսերի, բյուջետային ծախսումների միջոցով:

Այսպիսով, տնտեսության մակրոտնտեսական կարգավորման առարկան տնտեսության զարգացման օրինաչափությունների բացահայտման, տնտեսական զարգացման վրա պետական գործիքներով ազդելու, պետության տնտեսական քաղաքականության ուղղությունները մշակելու մեթոդաբանության ստեղծումն ու զարգացումն է: Այն պետք է ներառի ինչպես մակրոտնտեսական իրավիճակի գնահատման, տնտեսական զարգացման առանձնահատկությունների, չլուծված հիմնախնդիրների բացահայտման մեթոդաբանությունը, այնպես էլ երկրի առջև դրված հիմնական նպատակների իրագործման միջոցների, ռեսուրսների հարաբերման ու գնահատման կարգը: Դրա հետ միասին, տնտեսության պետական կարգավորման դասընթացը պետք է ներկայացնի բոլոր այն միջոցառումները, ձևերը և գործիքները, որոնք, ապահովելով տնտեսավարող սուբյեկտների շահերը, միաժամանակ խթանում են նրանց՝ լու-

ծելու համապետական խնդիրներ: Այսպես, եթե կապիտալի տերը արտադրության իրական հատվածում ներդրումներ կատարելու շահագրգռվածություն է հանդես բերում, ապա դա նպաստում է ազգային այնպիսի խնդրի լուծմանը, ինչպիսին գործազրկության կրճատումն է:

Տնտեսության պետական կարգավորման դասընթացի ուսումնասիրության օբյեկտը երկրի ամբողջ տնտեսությունն է, այն գործընթացների ու հարաբերությունների տարրերը, որոնք կապված են տվյալ երկրի ամբողջ արդյունքի արտադրության, դա սպառելու և կուտակելու, ինչպես նաև աշխատանքային ռեսուրսների զբաղվածությունը ապահովելու, դրամաշրջանառությունը նորմալ կազմակերպելու հետ:

Դասընթացի ուսումնասիրության օբյեկտը չպետք է շփոթել տնտեսության պետական կարգավորման օբյեկտի հետ, որի մեջ ընդգրկվում են ձեռնարկությունները, ճյուղերը, տարածաշրջանները, ընդհանուր տնտեսական գործընթացները, արտաքին կապերը և այլն: Մակրոտնտեսական կարգավորումը զբաղվում է ոչ թե առանձին ձեռնարկությունների, այլ տվյալ երկրի արտադրության ամբողջական ծախսումների ու արդյունքների գնահատման մեթոդների ուսումնասիրությամբ և դրանց վրա ազդելու միջոցների բացահայտմամբ: Նրա խնդիրն է պարզել ինֆլյացիայի, գործազրկության հաղթահարման ուղիները, բացահայտել սպառման հիմնական միտումները տվյալ փուլում: Այդ բոլորը կատարելու համար անհրաժեշտ է հենվել մակրոէկոնոմիկայի կողմից տրված եզրակացությունների վրա: Այսպես, հնարավոր չէ պարզել գործազրկության կրճատման հնարավորությունները, եթե մակրոէկոնոմիկայի կողմից ճշգրտված չեն գործազրկության էությունը, ցուցանիշները, հաշվարկման կարգը և այլն:

Մակրոտնտեսական կարգավորման նպատակները բխում են երկրի առջև ծառացած քաղաքական, տնտեսական, բնապահպանական, պաշտպանական, քաղաքացիական հասարակության զարգացման արդի խնդիրներից: Դրանք բոլորը սովորաբար արտացոլվում են երկրի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերում, որոնց մանրամասն կանդրադառնանք 4-րդ թեմայում:

Տնտեսության պետական կարգավորման նպատակների մասին ճշգրիտ պատկերացում կազմելու համար դրանք կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

- ***մակրոտնտեսական իրավիճակի պահպանման նպատակներ***՝ գործազրկության տվյալ մակարդակը պահելու և կրճատելու, դրամաշրջանառության մեջ հավասարակշռությունը չխախտելու, ազգային արժույթի կուրսի կայունությունը ապահովելու, տնտեսական աճի նախկին տեմպերը չկրճատելու և այլն,
- ***առաջադիմական գործընթացների խթանում***՝ առաջադիմական տեխնոլոգիաների ստեղծում, արտահանվող արտադրանքի ներուժի ավելացում, արտադրանքի նոր տեսակների թողարկում, նոր հումքատեսակների յուրացում,

- ***գլխավոր նպատակների իրականացմանը օժանդակող չեզոք նպատակներ***՝ գիտահետազոտական կենտրոնների ստեղծում, արտադրանքի տարբեր տեսակների համար տոնավաճառների կազմակերպում, արտահանման ներուժի գովազդում,
- ***ոչ տնտեսական նպատակների իրականացման տնտեսական միջոցառումներ***՝ բնապահպանական շինարարություն, ռազմական բազաների ստեղծում, տրանսպորտային մայրուղիների կառուցում, արտակարգ իրավիճակներից խուսափելու միջոցառումներ և այլն:

Մակրոտնտեսական կարգավորման նպատակների իրագործման համար պետական իշխանության մարմինները պետք է կիրառեն շուկայական տնտեսության մասնակից սուբյեկտների գործունեության վրա ազդելու վարչական, բարոյական ու տնտեսական լծակներ, որոնցից յուրաքանչյուրի արդյունավետությունը կարող է դրսևորվել պետական կարգավորման առանձին գործընթացներում:

Տնտեսության պետական կարգավորման գործընթացում կիրառվում են *արգելման, թույլատրման և պարտադրման* վարչական միջոցներ: Արգելման միջոցներով սահմանվում է գործունեության որոշ տեսակներով զբաղվելու, արտադրանքի մի շարք տեսակներ արտադրելու, փոխադրելու, վաճառելու արգելք:

Թույլատրման միջոցներ են այն պետական որոշումները, որոնք տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն են տալիս որոշակի պայմաններում իրագործել թույլատրելի գործողություններ:

Պարտադրման միջոցներ են գործողությունների իրականացման որոշակի սահմանափակումները (արտադրական գործընթացներում անմնացորդ տեխնոլոգիաների օգտագործումը, մաքրիչ հարմարանքների տեղադրումը և այլն):

Վարչական լծակները հիմնականում օգտագործվում են բնապահպանական, սոցիալական, արտակարգ իրավիճակների, հասարակական կարգի պահպանության, տնտեսակարգի և պետական կառավարման կառուցվածքի փոփոխության գործընթացներում:

Բարոյական լծակներ կիրառվում են երկրի կառավարության նկատմամբ վստահությունը բարձրացնելու նպատակով: Մակրոտնտեսական խնդիրների իրագործումը կախված է այն բանից, թե ինչպիսին է տնտեսավարող սուբյեկտների վստահությունը կառավարության դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության նկատմամբ: Այսպես, եթե կառավարությունը հայտարարի, որ առաջիկայում փողի զանգվածը կայուն է պահելու, ապա կապիտալի տերերը կաշխատեն վարկեր տրամադրել կայուն տոկոսադրույքով:

Կիրառվող վարչական և բարոյական լծակների արդյունքները պայմանավորված են տնտեսական լծակների նպատակայնությամբ: Այդպիսի լծակներ են՝ դրամավարկային քաղաքականությունը, պետական բյուջեն և հարկային քաղաքականությունը, արտաբյուջետային հիմնադրամները, պետական սեփականության առկայությունը և դրա միջոցով մրցակցու-

թյան ապահովումը: Տնտեսական այս լծակներից յուրաքանչյուրը կներկայացնենք հետագա թեմաներում և կուսումնասիրենք դրանց գործողության մեխանիզմները:

1.7. Մակրոտնտեսական կարգավորումը և տնտեսական օրենքները

Մակրոտնտեսական կարգավորման միջոցառումները բխում են երկրի ամբողջ տնտեսության զարգացման օբյեկտիվ խնդիրներից և չպետք է հակասեն տնտեսական օրենքների պահանջներին:

Տնտեսական զարգացման ընթացքը բնորոշվում է շուկայական մեխանիզմների կատարելությամբ, իսկ պետական կարգավորման ընթացքը՝ տնտեսական օրենքների ճանաչողությամբ: Դա նշանակում է, որ տնտեսական օրենքները գործում են օբյեկտիվորեն: Մարդիկ պետք է հասկանան ինչպես բնության, այնպես էլ տնտեսության զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները, օրենքները:

Տնտեսական օրենքը արտահայտում է տնտեսական երևույթների, գործընթացների միջև գոյություն ունեցող մշտական, կայուն, կրկնվող ներքին պատճառահետևանքային կապերը, որոնք էական դեր են խաղում երևույթի փոփոխման, զարգացման ընթացքում: Տնտեսական օրենքները սկսում են գործել տնտեսական որոշակի պայմանների առկայության դեպքում, այդ պայմանների վերացման դեպքում դադարում են գործել համակարգին յուրահատուկ օրենքները: Մարդիկ կարող են ստեղծել տնտեսական գործընթացների անհրաժեշտ պայմաններ, և դրանից հետո կարող են գործել տնտեսական որոշակի օրենքներ, սակայն մարդիկ տնտեսական օրենքներ ստեղծել կամ չեղյալ համարել չեն կարող: Իհարկե, մարդիկ կարող են հասկանալ տնտեսական օրենքների էությունը, դրանց էական գծերը, պահանջները և իրենց գործողություններում առաջնորդվել այնպիսի սկզբունքներով, որոնք ապահովում են տնտեսական երևույթի անկաշկանդ զարգացումը: Այդպիսի դեպքերում մարդկանց ցանկությունները և տնտեսական օրենքների պահանջները զուգորդվում են, և տնտեսության զարգացումը ավելի հարթ է ընթանում՝ առանց վրիպումների ու ճգնաժամերի: Սակայն, երբ տնտեսական օրենքների պահանջները չեն գիտակցվում կամ սուբյեկտիվորեն չեն կատարվում, առաջանում են տնտեսական անկայուն վիճակներ, որոնք հաղթահարելու համար ավելի շատ միջոցներ ու ժամանակ է պահանջվում: Այսպես, 1960-ական թվականների սկզբին Չինական Ժողովրդական Հանրապետությունում (ՉԺՀ) առանձին նահանգների «ավելորդ» բրինձը անվարձահատույց տրվեց բրնձի վատ բերք ստացած նահանգներին, հաջորդ տարիներին այդ նահանգներում նույնպես բրնձի խիստ պակասություն զգացվեց: Ինչպես տեսնում ենք, խախտվել էր միայն համարժեքային փոխանակության օբյեկտիվ պահանջը: Տնտեսական օրենքների ազդեցությունը քողարկված է հանդես գալիս, ընդ որում, այն դրսևորվում է որպես հիմնական օրինաչափություն, միտում: Այսպես, եթե բնակչության եկամուտներն ավելանում են, ապա դրանց համապատասխան չափով չեն ավելանում սննդամթերքի սպառումը, ծառայությունների կամ տրանսպորտային փոխադրումների ծավալները: Այդ երևույթների միջև կապը մշտական է, սակայն քանակապես կայուն չէ, ուստի տնտեսական

օրենքների ճանաչողության խնդիրն է՝ պարզել այդ քանակական օրինաչափությունների փոխկապվածությունները և դրանք օգտագործել տնտեսության պետական կարգավորման գործընթացում: Ոչ մի նշանակություն չունի, թե տնտեսական օրենքների պահանջները ինչ պատճառով չեն կատարվում: Մարդիկ չեն գիտակցում այդ պահանջները կամ գիտակցում են, բայց չեն ցանկանում կատարել: Երկու դեպքում էլ ձևավորվում են տնտեսական անբնականոն երևույթներ, որոնց հաղթահարումը զգալի նյութական միջոցներ և այլ ռեսուրսներ է պահանջում:

Տնտեսական օրենքների պահանջների կատարման համար անհրաժեշտ է, որ տնտեսական վերլուծություններն ունենան օբյեկտիվ բնույթ և չհետապնդեն որևէ կուսակցության քաղաքական նպատակները, հակառակ դեպքում այդ վերլուծության վրա հիմնված տնտեսության պետական կարգավորման միջոցառումները կարող են տնտեսական աղետալի վիճակների առաջացման պատճառ դառնալ: Քաղաքական գործիչները, բացի համապետական հետաքրքրություններ ու շահեր ունենալուց, ունեն նաև անձնական շահեր ու նպատակներ, որոնք ավելի ցայտուն արտահայտվում են ընտրությունների նախօրեին: Այդ է պատճառը, որ երբ քաղաքական գործիչները հանդես են բերում անձնական շահեր ու նպատակներ, տնտեսական զարգացման պետական կարգավորումը էական արդյունքներ չի ապահովում: Տնտեսական անկումները և մակրոտնտեսական բացասական երևույթներն ավելի են խորանում, երբ կուսակցությունները, օգտվելով տնտեսական անհաջողություններից, ձգտում են հասնել իշխանության, ինչպես տեղի ունեցավ ՀՀ քաղաքական անկախացման շրջանում: Այսպիսի դեպքերում տնտեսական օրենքների գործողության օրինաչափությունները չեն պահպանվում, որի հետևանքով տնտեսական կորուստները և սոցիալական բախումները խիստ մեծանում են:

Տնտեսական օրենքների պահանջների կատարումը պետական կարգավորման ընթացքում ենթադրում է իրավական պետության ստեղծում, տնտեսավարման և գործարարության կայուն իրավական դաշտ, որն ապահովում է իրավահավասար պայմաններ սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված տնտեսավարող սուբյեկտների համար: Եթե մրցակցության տնտեսական օրենքը պահանջում է իրավահավասար հարկային, մաքսային և այլ պայմաններ, ապա երկրի օրենսդրությունը չպետք է խախտի այդ պահանջը: Տնտեսության պետական կարգավորման արդյունքներն ավելի ամբողջական են դառնում, եթե կարգավորման միջոցառումները հիմնվում են տնտեսական բոլոր օրենքների ընդհանուր պահանջների վրա, որոնք էական դեր են կատարում շուկայական տնտեսության մեխանիզմում: Այսպես, տնտեսության զարգացման շարժիչ ուժը պահանջարկի օրենքն է, սակայն պահանջվում է պահանջարկի օրենքի գործողությունները դիտարկել առաջարկի օրենքի գործողության շրջանակներում, քանի որ տնտեսական հավասարակշռությունը պահպանվում է այդ երկու օրենքների փոխադարձ կապի հիման վրա: Ընդհանրապես, տնտեսության պետական կարգավորման ընթացքում տնտեսական օրենքներին չպետք է վերագրել առաջնային կամ երկրորդական բնույթ:

Հետևաբար, տնտեսության պետական կարգավորման ընթացքում տնտեսական ցանկացած օրենքի որևէ պահանջը չկատարելը էական ազդեցություն է գործում տնտեսական նվաճումների, հավասարակշռության և ընդհանուր առմամբ՝ շուկայական տնտեսության գործունակության վրա:

Տնտեսության պետական կարգավորումը իր հերթին զգալիորեն ազդում է տնտեսական օրենքների գործողության վրա: Պետական կառավարման մարմինների ընդունած որոշումների գիտականությունը և կարգավորման գործիքների ճշգրիտ ընտրությունը նպաստում են տնտեսության կարգավորմանը՝ տնտեսական օրենքներին և օրինաչափություններին համապատասխան: Հատկապես տնտեսության երկարատև կարգավորման ընթացքում տնտեսական արդյունքներն ակնառու են, եթե պահպանվում է տնտեսական քաղաքականության ռազմավարությունը: Պետք է տարբերակել անցումային շրջանի և կատարյալ շուկայական տնտեսության քաղաքականության ռազմավարությունները: Անցումային շրջանում ստեղծվում են պետական կարգավորման դժվարություններ, ուստի անհրաժեշտ է կիրառել կարգավորման այնպիսի գործիքներ ու լծակներ, որոնք բացառում են սոցիալական ծայրահեղությունները, բնակչության մի մասի ծայրահեղ աղքատությունը:

Կատարյալ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում պետական կարգավորման մեթոդների, լծակների, գործիքների ընտրությունը կարելի է կատարել՝ հաշվի առնելով այլ երկրների փորձը: Այլ խոսքով, անցումային տնտեսություն ունեցող երկրներում ձևավորվում են իրավական, տնտեսական, սոցիալական, արտադրության միջոցների մասնավորեցման այնպիսի առանձնահատկություններ, որոնք հաճախ բացառում են այլ երկրների անցումային տնտեսության փորձի օգտագործումը: Օրինակ՝ 1994-1995թթ. ՀՀ-ում ինֆլյացիայի տեմպերը խիստ գերազանցում էին Ռուսաստանի Դաշնության նույն ցուցանիշը, իսկ 1998-2000թթ. ընդհակառակը, այդ տեմպերը ավելի բարձր էին ՌԴ-ում, որի հետևանքով այդ երկու երկրներից ոչ մեկը չէր կարող ընդօրինակել մյուսին ինֆլյացիայի տեմպերի կրճատման գործիքների ընտրության հարցում, թեկուզ այն պատճառով, որ Հայաստանում ինֆլյացիայի բարձր տեմպերը բացատրվում էին շրջանառության մեջ փողի զանգվածի ավելացման, իսկ Ռուսաստանում՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերի չափից ավելի թողարկման հանգամանքով:

Տնտեսական օրենքների մեխանիզմը ավելի արդյունավետ է գործում, եթե պետական կարգավորման համար տվյալ երկրի օրենսդիր և գործադիր մարմինները հանդես են բերում որոշումների, օրենսդրական ակտերի և կարգավորման գործիքների ընտրության միասնություն: Այդ երկու մարմինների հակադիր որոշումների դեպքում շուկայի սուբյեկտները թերահավատորեն են վերաբերում պետական որոշումներին, և տնտեսության պետական կարգավորման լծակների ազդեցությունը թուլանում է:

Այսպիսով, տնտեսության պետական կարգավորման գործընթացում տնտեսական օրենքների պահանջների կատարման արդյունքները ի հայտ են գալիս տնտեսության կարգավորման մարմինների ճկուն քաղա-

քականության, նրանց կողմից տնտեսական զարգացման օրինաչափության բացահայտման և գործնական կիրառման արդյունքում:

1.8. Մակրոտնտեսական կարգավորման խնդիրները

Մակրոտնտեսագիտության կողմից լուծվող խնդիրները

Մակրոտնտեսական հետազոտությունների արդյունքները օգտագործվում են տնտեսության պետական կարգավորման գործընթացում: Ուստի մակրոտնտեսական վերլուծության խնդիրները որոշվում են այն փոխադարձ կապերի հիման վրա, որոնք գոյություն ունեն մակրոէկոնոմիկայի և տնտեսական մյուս գիտությունների միջև: Մակրոէկոնոմիկան ուսումնասիրում է տվյալ երկրի տնտեսական գործունեության ընդհանուր արդյունքները և, այդ առումով, ունի առանձնահատուկ խնդիրներ.

♦ Մակրոէկոնոմիկան ընդհանրացնում է տնտեսական գիտությունների հետազոտության արդյունքները, դրանք կապակցում է միմյանց և օգտագործում երկրի տնտեսության կարգավորման, տնտեսական քաղաքականության առաջադրման գործընթացում: Դա նշանակում է, որ մակրոէկոնոմիկայի առջև դրվող առաջին հիմնահարցը երկրի տնտեսության զարգացման ուղիների բացահայտումն է:

♦ Մակրոէկոնոմիկան կապող օղակ է տնտեսական գիտությունների կիրառական հետազոտությունների ընդհանրացման ոլորտում և իր եզրակացությունները տնտեսության կենսագործունեության կայունության վերաբերյալ տրամադրում է տնտեսական բոլոր գիտություններին: Ուստի այն համընդհանուր խնդիրը, որը դրվում է մակրոէկոնոմիկայի կողմից երկրի տնտեսության զարգացման համար, տարրալուծվում և առանձին գիտությունների կողմից օգտագործվում է տնտեսության տարբեր բնագավառներում:

♦ Մակրոէկոնոմիկան առաջադրում է տնտեսության զարգացման այն ռազմավարական խնդիրներն ու հիմնահարցերը, որոնք բխում են երկրի տնտեսական զարգացման տվյալ փուլի նպատակից և պետք է դրվեն տնտեսական քաղաքականության հիմքում: Այլ խոսքով, մակրոէկոնոմիկան տնտեսական քաղաքականության ձևավորման գործիք է:

♦ Մակրոէկոնոմիկան հնարավորություն է տալիս ամբողջական գնահատել երկրի տնտեսության բոլոր ճյուղերի գործունեության արդյունավետությունը և իր առջև խնդիր է դնում գնահատել և ընդհանրացնել տնտեսական գործունեության տարբեր բնագավառների արդյունքները, միավորել դրանք և արտահայտել ընդհանուր ցուցանիշներով:

♦ Մակրոտնտեսական հետազոտությունը հնարավորություն է տալիս կատարելու համընդհանուր համեմատություններ, պարզելու տարբեր երկրների զարգացման ու ինդուստրացման մակարդակները: Միայն դրա շնորհիվ է հնարավոր վեր հանել առանձին երկրների՝ տնտեսական զարգացման գործում թույլ տված սխալները, բացահայտել այդ երկրների տնտեսության աշխուժացման ներքին և արտաքին գործոնները, կայունացման ուղիները:

♦ Մակրոտնտեսական հետազոտությունների միջոցով փոխկապակցվում են տվյալ երկրի տնտեսական, քաղաքական, բնապահպանական, սոցիալական, պաշտպանական և այլ համակարգերի այն հիմնախնդիրները, որոնք հնարավոր չէ լուծել իրարից անկախ:

Մակրոտնտեսական կարգավորման առարկայի և մյուս գիտությունների փոխադարձ կապը

Տնտեսական երևույթների ուսումնասիրությամբ զբաղվում են տնտեսական տարբեր գիտություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նպատակները, ընտրում է ուսումնասիրության որոշակի մեթոդներ և կատարում իր առջև դրված խնդիրները:

Այսպես, տնտեսագիտության տեսությունը ուսումնասիրում է արտադրության տնտեսական հարաբերությունների բնագավառը, այսինքն՝ տնտեսության կազմակերպման մեխանիզմների սկզբունքները, ընդհանուր գծերը, որոնք հիմք են հանդիսանում տնտեսական բոլոր գիտությունների զարգացման համար: Սակայն արտադրության, բաշխման, փոխանակման, սպառման օրինաչափությունների ուսումնասիրությունները միայն գիտական հետաքրքրասիրության բավարարման նպատակով չեն կատարվում: Դրանք տնտեսության կարգավորման միջոցով վերարտադրական գործընթացները բարելավելու նպատակ ունեն: Դա նշանակում է, որ տնտեսության պետական կարգավորման համար տնտեսագիտության տեսությունը մեթոդաբանական և գիտական հիմք է, իսկ մակրոտնտեսական կարգավորումը այն գործընթացն է, որի օգնությամբ հարստանում է տնտեսագիտության տեսության գործնական զինանոցը և բավարարվում գիտական հետազոտությունների վերջնական նպատակը տնտեսագիտության բնագավառում: Այդ իմաստով մակրոտնտեսական վերլուծության և պետական կարգավորման կապեր ձևավորվում են տնտեսական բոլոր գիտությունների հետ: Եթե ճյուղային էկոնոմիկաներից յուրաքանչյուրը բացահայտում է տնտեսության որևէ ճյուղի զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, ապա դրանք խիստ անհրաժեշտ են պետության տնտեսական քաղաքականության ձևավորման ու գործադրման համար, քանի որ տարբեր ճյուղերի շուկայական գործընթացները միևնույն սխեմայով ու ձևով կարգավորել հնարավոր չէ: Որքան էլ առաջարկի ու պահանջարկի միջև շուկաներում ձևավորվում են ընդհանուր օրինաչափություններ, այնուամենայնիվ, ավտոմեքենաների, խոշոր սարքավորումների և գյուղատնտեսական մեքենաների շուկաները պահանջում են դրանց կարգավորման առանձնահատուկ ձևեր ու մեթոդներ: Ուստի մակրոտնտեսական կարգավորումը հենվում է ճյուղային էկոնոմիկաների հետազոտությունների վրա: Հաճախ տնտեսագետների վիճաբանության առարկա են այն հարցերը, թե պետական բյուջեի, երկրի ազգային բանկի, հարկային քաղաքականության հիմնահարցերը վերաբերում են ֆինանսական, վարկային գիտությանը, թե՝ մակրոէկոնոմիկային:

Գիտության մեջ չկան խիստ ընդգծված սահմաններ, հատկապես, եթե այդ գիտությունների ուսումնասիրության օբյեկտը նույն երևույթներն ու գործընթացներն են: Ուստի, եթե խոսքը վերաբերում է պետական բյուջեի եկամուտների ու ծախսերի կառուցվածքի առանձին հոդվածների ձևավորմանը, երկրի ազգային բանկի կողմից դրամաշրջանառության կազմակերպմանը, հարկերի առանձին տեսակների հաշվարկման ու գանձման կարգին, ապա այդ գործընթացներով զբաղվում է ֆինանսների մասին գիտությունը: Իսկ եթե խոսքը պետական բյուջեի հաշվեկշռվածության, դրա պակասուրդի լրացման աղբյուրների որոնման, ազգային բանկի դրամավարկային քաղաքականության սկզբունքների որոշման և հարկային մեխանիզմի հիմնական ուղղությունների գնահատման մասին է, ապա դրանցով զբաղվում է մակրոէկոնոմիկան:

Այսպիսով, կարելի է ասել, որ տնտեսական բոլոր գիտությունները ընդգրկում են երկու մակարդակների ուսումնասիրություններ:

Առանձին ձեռնարկությունների, տնտեսավարող սուբյեկտների արտադրության գործընթացի կազմակերպման, աշխատուժի ընդգրկման և վարձատրության կազմակերպման, արտադրանքի և հումքի ձեռքբերման, շահույթի բաշխման և օգտագործման օրինաչափությունների ուսումնասիրությունները վերաբերում են միկրոմակարդակին:

Մակրոմակարդակին են վերաբերում հասարակական արտադրության ներուժի, ռեսուրսների և արդյունքների փոխհարաբերությունների, երկրի ֆինանսական դրության, աշխատուժի զբաղվածության, բնակչության փոփոխության մասին հետազոտությունները: Ուստի տնտեսական բոլոր գիտությունները փոխկապված են և լրացնում են հետազոտությունների շրջանակները: Այսպես, տնտեսական երևույթների, գործընթացների քանակական կապերի ուսումնասիրությամբ զբաղվում են էկոնոմետրիկան և վիճակագրությունը, որոնք բացահայտում են տնտեսության զարգացման քանակական օրինաչափությունները և դրանք օգտագործում ինչպես միկրո, այնպես էլ մակրոմակարդակի հիմնախնդիրներ լուծելու համար: Եթե խոսքը առանձին ձեռնարկությունների արտադրանքի գնահատման և հաշվարկման կարգի ու մեթոդիկայի մասին է, ապա վիճակագրական գնահատումը միկրոմակարդակին է վերաբերում, իսկ ազգային հաշիվների համակարգը, որպես վիճակագրական ու հաշվապահական գիտությունների օբյեկտ, միաժամանակ նաև մակրոէկոնոմիկայի ուսումնասիրության օբյեկտ է:

Այսպիսով, տնտեսական բոլոր գիտությունները փոխկապված են, լրացնում են իրար, օգտվում են մյուսների հետազոտության արդյունքներից: Չնայած այդ գիտություններից յուրաքանչյուրն ունի իր ուսումնասիրության օբյեկտը, առարկան, հարցերի ու հիմնախնդիրների շրջանակները, այնուհանդերձ, բոլորի առջև դրված է կարևորագույն խնդիր՝ պարզել երկրի տնտեսության զարգացման ու առաջընթացի հետագա ուղին, բացահայտել տնտեսական դժվարությունների ու անբնականոն վիճակների հաղթահարման միջոցները, հնարավորությունները: Այդ խնդիրն է դրված նաև պետական քաղաքականության, տնտեսագիտության, տնտե-

սության պետական կարգավորման և պետական գործիչների գործունեության հիմքում:

Ամփոփում

1. Տնտեսական համակարգի զարգացման շարժիչ ուժը հասարակության ամբողջական, այսինքն՝ անմիջական և միջանկյալ պահանջմունքների աճն է: Տնտեսական համակարգերը սովորաբար հանդես են գալիս խառը տիպով:
2. Տնտեսական համակարգի բնութագրիչները բազմաթիվ են: Մակրոմակարդակում դրանք տնտեսական աճի տեմպերն ու պարբերաշրջաններն են, գործազրկությունը, ինֆլյացիան և արժույթի փոխանակային կուրսը:
3. Շուկան, որպես ինքնակարգավորվող համակարգ, լուծում է հասարակության անդամների պահանջմունքները սահմանափակ ռեսուրսներով առավելագույնս բավարարելու խնդիրը:
4. Շուկայի ազդեցության ոլորտից դուրս են տնտեսության ոչ մրցակցային բնագավառները՝ սոցիալական ապահովությունը, գիտության և գիտական հետազոտությունների, ազգային և բնապահպանական ծրագրերի լուծման խնդիրները: Այդ խնդիրների լուծումը պահանջում է տնտեսության պետական կարգավորում:
5. Պետության տնտեսական գործառույթները վերջին հաշվով հանգում են տնտեսության դրամավարկային և հարկաբյուջետային կարգավորմանը, հասարակական բարիքների ստեղծմանը և դրանք հասարակությանը մատուցելուն, պետական գնումների իրականացմանը և պետական պատվերների կազմակերպմանը, պետական պաշարների և պահուստների ստեղծմանը:
6. Տնտեսության կարգավորման գործում պետության ակտիվ կամ պասիվ միջամտության հարցը մշտական բանավեճի առարկա է եղել քեյնսականների և դասականների միջև և այժմ նոր հիմնավորումների պահանջ է առաջադրում նորքեյնսականներին և նորդասականներին:
7. Տնտեսության մակրոտնտեսական կարգավորման առարկան տնտեսության զարգացման օրինաչափությունների բացահայտման, տնտեսական զարգացման վրա պետական գործիքներով ազդելու, պետության տնտեսական քաղաքականության ուղղությունները մշակելու մեթոդաբանության ստեղծումն ու զարգացումն է:

Թեստեր և խնդիրներ

1. Տնտեսական համակարգը.

ա. տնտեսության բոլոր ճյուղերի ամբողջությունն է,
բ. տնային տնտեսությունների և ձեռնարկությունների միասնությունն է,
գ. բնության և հասարակության փոխազդեցության ձևերի և միջոցների ամբողջությունն է,
դ. մարդկանց փոխհարաբերությունների ամբողջությունն է:

2. Տնտեսական ռեսուրսները.

ա. անսահմանափակ են, ուստի արտադրության ծավալն ու սպառման բավարարումը՝ սահմանափակ,
բ. անընդհատ աճում են, ուստի սպառման բավարարումը դառնում է անհնար,
գ. հազվագյուտ կամ սահմանափակ են, ուստի արտադրության ծավալն անսահմանափակ է,
դ. հազվագյուտ կամ սահմանափակ են, ուստի արտադրության ծավալն ու սպառման բավարարումը նույնպես սահմանափակ են:

3. Պետության միջամտությունը տնտեսությանը՝ ըստ նոր քեյնսականների.

ա. պետք է լինի ակտիվ և կիրառվեն դրամավարկային լծակներ,
բ. պետք է լինի ակտիվ և կիրառվեն հարկաբյուջետային լծակներ,
գ. պետք է լինի պասիվ և իրականացվի հետևողական կուրսով,
դ. պետք է լինի պասիվ և իրականացվի միայն դրամաշրջանառության ոլորտում:

4. Պետության միջամտությունը տնտեսական կյանքին՝ ըստ մոնետարիստների.

ա. բացառվում է, քանի որ շուկան ինքնակարգավորվող համակարգ է,
բ. պետք է լինի միայն դրամաշրջանառության ոլորտում,
գ. պետք է լինի հարկաբյուջետային լծակների կիրառմամբ,
դ. պետք չէ, քանի որ տնտեսական սուբյեկտները ռացիոնալ մտածողներ են:

5. «Պարետոյի բարելավում» է համարվում տնտեսական այնպիսի գործընթացը, որի դեպքում.

ա. շուկայի մասնակիցներից որևէ մեկի կենսամակարդակը բարձրանում է՝ առանց մյուս մասնակիցների կենսամակարդակի իջեցման,
բ. շուկայի մասնակիցներից մեկի կենսամակարդակը բարձրանում է, մյուսներինը՝ իջնում,
գ. շուկայի բոլոր մասնակիցների կենսամակարդակը մնում է անփոփոխ,
դ. շուկայի մասնակիցների մի մասի կենսամակարդակը իջնում է, մյուսներինը մնում է անփոփոխ:

6. Մակրոտնտեսական կարգավորման նպատակներ չեն.

ա. տնտեսական աճի ապահովումը և զբաղվածության մակարդակի բարձրացումը,

բ. քաղաքական կայունության և սոցիալական արդարության ապահովումը,

գ. գների մակարդակի կայունացումը,

դ. արտաքին տնտեսական հավասարակշռության ապահովումը:

7. Տնտեսության մակրոտնտեսական կարգավորումը չի ուսումնասիրում.

ա. պետության տնտեսական քաղաքականությունը,

բ. մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության միտումները,

գ. տնտեսավարող սուբյեկտների վարքը,

դ. տնտեսական տատանումների պատճառները:

8. Մակրոտնտեսական կարգավորման օբյեկտ չեն.

ա. երկրի տնտեսությունը,

բ. հասարակական վերարտադրության՝ շուկայական մեխանիզմի կողմից չկարգավորվող հարաբերությունները,

գ. տնտեսական տատանումները,

դ. շուկայական սուբյեկտների գործունեությունը:

Հիմնական հասկացություններ

Տնտեսական համակարգ
Անմիջական պահանջմունքներ
Միջանկյալ պահանջմունքներ
Տնտեսական համակարգի կառուցվածք
Կատարյալ շուկա
Անկատար շուկա
Հավասարակշիռ շուկա
Անհավասարակշիռ շուկա
Պարետոյի բարելավում
Անտեսանելի ձեռք
Տեսանելի ձեռք
Տնտեսության պետական կարգավորման նպատակներ
Միկրոմակարդակ
Մակրոմակարդակ

Հարցեր կրկնության համար

1. Որո՞նք են տնտեսական համակարգի առանձնահատուկ գծերը տնտեսական զարգացման տարբեր մակարդակներում:
2. Ի՞նչ հատկանիշներով են տարբերվում տնտեսական համակարգի տիպերը:
3. Շուկայի ինչպիսի՞ վիճակներ գիտեք, և դրանք ինչո՞վ են տարբերվում միմյանցից:
4. Որո՞նք են տնտեսական համակարգի բնութագրիչները, ինչպե՞ս են դրանք բնութագրում երկրի զարգացման մակարդակը:
5. Ի՞նչ ենք հասկանում «պարետոյի բարելավում» ասելով:
6. Շուկայի ինքնակարգավորման մեխանիզմը ի՞նչ պայմաններում է ավելի գործունակ:
7. Որո՞նք են շուկայի ազդեցության ոլորտից դուրս գտնվող բնագավառները և շուկայական համակարգի ձախողումների պատճառները:
8. Ինչպիսի՞ հարաբերությունների մեջ են շուկայական համակարգի տնտեսավարող սուբյեկտները: Ինչո՞վ է պայմանավորված շուկայական տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը:
9. Թվարկեք երկրի տնտեսական և սոցիալական զարգացման կայունության ապահովման բոլոր 9 խնդիրները:
10. Ինչպե՞ս են դասականները հիմնավորում տնտեսական կյանքին պետության պասիվ միջամտության նպատակահարմարությունը:
11. Ինչպե՞ս են քեյնսականները հիմնավորում պետության ակտիվ միջամտության անհրաժեշտությունը շուկայական կարգավորմանը:
12. Որո՞նք են տնտեսության պետական կարգավորման վրա պետության ազդեցության լծակները:
13. Որո՞նք են տնտեսության պետական կարգավորման նպատակները:
14. Որո՞նք են տնտեսության պետական կարգավորման վարչական միջոցները:
15. Ինչո՞ւ պետք է հաշվի առնել տնտեսական օրենքների պահանջները տնտեսության պետական կարգավորման գործընթացում:
16. Ի՞նչ խնդիրներ է լուծում մակրոէկոնոմիկան:
17. Ինչո՞ւ պետք է տարբերակել միկրոմակարդակի և մակրոմակարդակի ուսումնասիրության խնդիրները:

ԳԼՈՒԽ 2

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Որո՞նք էին մակրոէկոնոմիկայի՝ որպես գիտության ծագման և զարգացման նախադրյալները:
- Որո՞նք են մակրոտնտեսական կարգավորման սկզբունքները:
- Ի՞նչ հիմնական ուղղություններով են իրականացվում մակրոտնտեսական վերլուծությունները:
- Գիտական հետազոտությունների ինչ ընդհանուր մեթոդներ գոյություն ունեն:
- Մակրոտնտեսական վերլուծությունները ինչպիսի՞ առանձնահատուկ մեթոդներով են իրականացվում:
- Ի՞նչ նպատակով են օգտագործվում տնտեսական մոդելները:
- Ի՞նչ մակրոտնտեսական ցուցանիշներ են հաշվարկվում ազգային արդյունքը գնահատելու համար, և դրանց հաշվարկման ինչ եղանակներ գոյություն ունեն:
- Որո՞նք են բնակչության կենսամակարդակի ցուցանիշները, ինչպե՞ս են դրանք գնահատվում:
- Ինչպե՞ս գնահատել գործազրկության մակարդակը:

<h2>2.1. Մակրոէկոնոմիկայի ծագումը, անհրաժեշտ նախադրյալները և սկզբունքները</h2>

 Մակրոէկոնոմիկայի ծագումը

<p>

Գիտությունները ծագում են հասարակական ծայրահեղ պահանջմունքների ձևավորման պահերին, երբ գիտական մտքի նախկին նվաճումներն այլևս չեն բավարարում՝ բացահայտելու տեղի ունեցող երևույթները և չեն կարողանում լուծել խիստ կարևոր ու անհրաժեշտ հիմնախնդիրները: Այդպիսի վիճակում էր տնտեսագիտությունը 20-րդ դարի 30-ական թվականներին: Մինչ այդ դասական տնտեսագիտությունը բացատրում էր, որ արտադրության ծավալը որոշվում է առկա արտադրական ներուժով, այսինքն՝ կապիտալի և աշխատանքի քանակությամբ, դրանք են որոշում ապրանքների և ծառայությունների առաջարկը, իսկ վերջինս կարողանում է իրեն համապատասխան պահանջարկ ձևավորել, և տեղի է ունենում շուկայի հավասարակշռում: Սակայն 1929-1933թթ.

տնտեսական ճգնաժամը, որն ընդգրկեց շուկայական տնտեսություն ունեցող բոլոր երկրները, կասկածի տակ դրեց դասական տնտեսագիտության այդ դրույթը, քանի որ աշխատանքի և կապիտալի ծավալը չէր կրճատվել, մինչդեռ առանձին երկրներում արտադրության ծավալը կրճատվել էր նույնիսկ 30%-ով (ԱՄՆ): Ուստի տնտեսական ճգնաժամը նոր բացատրություն էր պահանջում: Այդպիսի բացատրությամբ հանդես եկավ Ջոն Մեյնարդ Քեյնսը (1883-1946): Իր «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսությունը» աշխատությամբ կասկածի տակ դնելով դասական տնտեսագիտության դրույթները՝ Քեյնսը ապացուցեց, որ արտադրության ծավալը որոշվում է ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկի հիման վրա, որ պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունը հիմնականում ապահովում է պահանջարկը, որ պահանջարկի խթանման միջոցով կարելի է ազդել արտադրության ծավալի ավելացման վրա, որ պահանջարկի խթանում կարելի է իրականացնել սպառման, ներդրումների և պետական գնումների ծավալների ավելացման միջոցով, իսկ դրանց վրա կարելի է ազդել պետական որոշակի քաղաքականությամբ: Այսպիսով, Քեյնսը մակրոէկոնոմիկայի գիտական տեսության առաջին մշակողն էր, չնայած մինչ այդ մակրոտնտեսական վերլուծություններ կատարվել էին Ֆրանսուա Քենեի և Կարլ Մարքսի կողմից: Փաստորեն, Քեյնսը ոչ միայն մակրոէկոնոմիկայի հիմնադիրն է, այլ նաև մակրոտնտեսական կարգավորման անհրաժեշտության հիմնավորողը: Պատահական չէ, որ հետպատերազմյան շրջանում (Քեյնսի մահից հետո) «Մակրոտնտեսական կարգավորում» դասընթացը սկսեցին դասավանդել Արևմտյան Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի, Ճապոնիայի և մի շարք այլ երկրների տնտեսագիտական բուհերում: Այդ դասընթացը գրականության մեջ նշվում էր «Պետության միջամտությունը տնտեսությանը», «Տնտեսության պետական կարգավորում», «Պետական տնտեսական քաղաքականություն», «Պետական մոնոպոլիստական կապիտալիզմ» անվանումներով: Հատկապես վերջին բնորոշումը՝ «Պետական մոնոպոլիստական կապիտալիզմ», մասամբ է համապատասխանում պետական կարգավորման էությանը, քանի որ պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը վերաբերում է տնտեսության բոլոր բնագավառներին և բոլոր սոցիալական շերտերին: Ժամանակակից շուկայական տնտեսություն ունեցող բոլոր երկրներում սոցիալ-տնտեսական գործընթացները՝ կրթության, սոցիալական ապահովման, շրջակա միջավայրի պահպանության և այլ բնագավառների խնդիրները կարգավորվում են պետության կողմից: «Տնտեսության պետական կարգավորում» և «պետական տնտեսական քաղաքականություն» տերմիններն ավելի համահունչ են նշված գործընթացներին: Այսօր աշխարհի բոլոր տնտեսագետները կողմնակից են տնտեսության պետական կարգավորմանը և տարակարծիք են միայն այդ կարգավորման շրջանակների, ձևերի, ինտենսիվության և մոտեցումների հարցերում, որոնք տարբեր երկրներում, տնտեսական տարբեր իրավիճակներում կարող են պահանջել պետական կարգավորման առանձին մոտեցումներ: Ընդհանուրն այն է, որ աշխարհի բոլոր երկրներում պետությունը իրա-

կանացնում է շուկայական տնտեսության կարգավորման գործառույթ:

 Մակրոտնտեսական կարգավորման նախադրյալները

Շուկայական տնտեսության պայմաններում հանդես են գալիս տնտեսության պետական կարգավորման որոշակի նախադրյալներ: Դրանք են.

♦ Շուկայական տնտեսության պայմաններում որպես շուկայի մասնակիցներ են հանդես գալիս սեփականատերեր, զանազան գործունեությամբ զբաղվողներ, որոնց շահերը երկրի ընդհանուր շահերին ոչ միայն չեն համապատասխանում, այլև հակասում են: Ուստի, եթե տնտեսավարող սուբյեկտների շահերը հակասում են միմյանց և պետության ընդհանուր շահերին, պահանջվում է պետության կարգավորիչ միջամտությունը: Այսպես, ֆերմերները ցանկանում են կրճատել հողի հարկը, արդյունաբերողները՝ շահութահարկը, իսկ կրթության և առողջապահության զարգացման համար պետական բյուջեում միջոցներ են անհրաժեշտ, և պետությունը հարկերը կրճատել չի կարող:

♦ Շուկայական տնտեսությունում ձևավորվում են խմբային շահեր: Մարդկանց որոշ խմբերի շահերը համընկնում են, ուստի նրանք միավորվում են, ստեղծում են ասոցիացիաներ, արհեստակցական միություններ և իրենց պահանջների իրականացման համար պայքար են ծավալում, հանդես են գալիս մամուլում, հեռուստատեսությամբ, պետական մարմիններին ներկայացնում են որոշակի պահանջներ: Սակայն խմբային շահերը նույնպես կարող են հակասել պետական շահերին: Օրինակ, պետությունը պահանջում է պահպանել շրջակա միջավայրը, մինչդեռ արդյունաբերողները, լրացուցիչ ծախսեր չկատարելու համար, արտանետվող գազերի, կեղտաջրերի մաքրման սարքեր չեն օգտագործում: Ուստի պետական կարգավորումը պարտադիր է նման հարցերի լուծման համար:

♦ Սոցիալական տարբեր խմբերի, հաճախ նաև՝ տարբեր տարածքների բնակչության շահերը հակասում են միմյանց, և այդ շահերի պաշտպանության համար ձևավորվում են քաղաքական հոսանքներ, կուսակցություններ, որոնք ոչ միայն պահանջներ են ներկայացնում պետական մարմիններին, այլ նաև ցանկանում են նվաճել քաղաքական իշխանությունը՝ սոցիալական տվյալ խմբի պատվերները կատարելու համար: Այսպիսի դեպքերում կուսակցությունները ձգտում են կատարել սոցիալական ավելի մեծ խմբերի ցանկությունները՝ ընտրություններում հաղթանակ տանելու համար: Այդ է պատճառը, որ տնտեսության պետական կարգավորման գործընթացը ընդգրկում է նաև քաղաքական իշխանության շրջանակները և վերաբերում է նաև պետության օրենսդիր գործունեությանը:

♦ Սոցիալական տարբեր խմբերի շահերն արտահայտվում են այդ խմբերի գործունեության գովաբանության միջոցով (լոբբիզմ), որը պետական մարմիններին ներկայացվում է որպես որոշակի տնտեսական արդյունք ստանալու միտում: Ուստի, պետական կարգավորման անհրաժեշտություն առաջանում է նաև այդ նպատակով:

♦ Տվյալ երկրի քաղաքացիները, իրավաբանական անձինք փոխհարաբերությունների մեջ են մտնում այլ երկրների տնտեսավարող սուբյեկտների հետ, և այդ հարաբերությունները, բացի միջկառավարական համաձայնագրերից, առանձին երկրների ներսում ենթակա են պետական կարգավորման: Այսպիսով, տնտեսության պետական կարգավորման նախադրյալները շուկայական տնտեսությունում ձևավորվում են շուկայական ինստիտուտների առաջացման և դրանց գործունեության հիման վրա: Եվ քանի որ այդ ինստիտուտները ներկայացնում են տնտեսական տարբեր շահեր ունեցողներ, ուստի պահանջվում է դրանց համապատասխանեցումը ընդհանուր համապետական շահերին: Այսպես, բանկային համակարգին ձեռնտու է բարձր տոկոսադրույքներով վարկի տրամադրումը, որը հակասում է վարկ վերցնող տնտեսավարող սուբյեկտների շահերին, որոնք գերադասում են խիստ ցածր տոկոսադրույքները: Պետությանը անհրաժեշտ է վարկերի միջոցով ավելացնել ներդրումների ծավալը: Ուստի նա փորձում է կարգավորել այդ տոկոսադրույքները այնպես, որ կապիտալի պահանջարկի և առաջարկի կտրուկ փոփոխությունը էականորեն չազդի ներդրումների կրճատման վրա, այլ խոսքով, պետական կարգավորումը նաև շահերի զուգակցման, համապատասխանեցման գործընթաց է:

♦ Տնտեսության պետական կարգավորման կարևորագույն նախադրյալ է գիտության զարգացումը, պետական կարգավորման ավելի կատարյալ մեթոդների ու եղանակների ստեղծումը: Դա կատարվում է ոչ միայն տնտեսագիտության, այլ նաև բնական գիտությունների նվաճումները տնտեսության կարգավորման գործընթացում օգտագործելու միջոցով: Դրան մեծապես նպաստում է նաև զանգվածային տեղեկատվական համակարգերի զարգացումը, որը հնարավորություն է ընձեռում օգտագործելու այլ երկրների փորձը, ամբողջ աշխարհի տնտեսական հետազոտությունների արդյունքները: Վերջին 50 տարիների տնտեսագիտական հետազոտությունները հիմնականում նվիրված են մակրոտնտեսական երևույթների և գործընթացների ուսումնասիրությանը (Մ. Ֆրիդմեն, Ֆ. Մոդիլյանի, Ք. Էրոու, Ս. Ֆիշեր, Ա. Շվարց, Ռ. Հարրոդ, Ջ. Հիքս, Դ. Պատինկին, Փ. Սամուելսոն, Ջ. Թոբին): Այդ ուսումնասիրությունները հիմք են հանդիսանում պետական կարգավորման ավելի կատարյալ մեթոդների ու գործիքների կիրառման համար:

 Մակրոտնտեսական կարգավորման սկզբունքները

<p>

Առանձին տնտեսական իրավիճակներում տնտեսությունը արդյունավետ կարգավորելու համար պահանջվում են առանձնահատուկ մոտեցումներ և սկզբունքներ: Սակայն գոյություն ունեն սկզբունքներ, որոնք պետական կարգավորման գործընթացներում ընդհանուր են և պետք է պահպանվեն տնտեսական բոլոր իրավիճակներում: Դրանք են. </p>

♦ Տնտեսավարող բոլոր սուբյեկտների, քաղաքացիների և իրավաբանական անձանց *իրավահավասարությունը* և փոխադարձ տնտեսական *պատասխանատվությունը*: Փոխադարձ տնտեսական պատասխանատվություն անհրաժեշտ է նաև քաղաքացիների, իրավաբանական անձանց և պետական մարմինների միջև:

♦ Կարևոր սկզբունք է *պայմանագրային* տնտեսության ստեղծումը, այսինքն, եթե պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև հարաբերությունները դուրս են գալիս նախապես սահմանված նորմատիվային շրջանակներից, ապա դրանք պետք է լուծվեն երկկողմանի համաձայնեցված պայմանագրի հիման վրա:

♦ Պետական կարգավորող մարմինների *հարաբերական անկախությունը**,* որն անհրաժեշտ է տնտեսավարող սուբյեկտների և պետական շահերի համապատասխանեցումը իրավահավասար պայմաններում իրականացնելու համար: Եթե պետական կառավարման հիերարխիկ աստիճաններում գոյություն ունեն օրենսդիր, գործադիր և իրավապահ մարմիններ, ապա պետական շահերը սուբյեկտիվորեն չգերադասելու համար իրավապահ մարմինները պետք է անկախ լինեն տեղի գործադիր մարմիններից:

♦ Պետական կարգավորման խնդիրներից մեկը հասարակության ավելի մեծ զանգվածի կարծիքի ուսումնասիրությունը և դրա օգտագործումն է: Այդ սկզբունքը թույլ է տալիս բարձրացնել պետական մարմինների նկատմամբ հասարակության վստահությունը, ստեղծել տնտեսության կարգավորման այնպիսի եղանակներ, որոնք *ակտիվացնում* են հասարակության մասնակցությունը երկրի համապետական հիմնախնդիրների լուծմանը:

♦ Վերջապես, տնտեսական կյանքը մեկընդմիշտ տրված և նախապես ծրագրավորված երևույթների ու գործընթացների ամբողջություն չէ: Երկրի զարգացման ընթացքում ձևավորվում են *արտակարգ իրավիճակներ**,* անբնականոն երևույթներ, որոնք արագ և արտակարգ լուծումներ են պահանջում: Այդպիսի դեպքերում գործողության ձևերից մեկը պետական առանձնահատուկ ուշադրությունն է տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, որոշակի զիջումների, արտոնությունների տրամադրումը, որը հաճախ կարող է ժամանակավոր լինել՝ մինչև արտակարգ իրավիճակի հաղթահարումը:

<h2>2.2. Մակրոտնտեսական վերլուծության ուղղությունները</h2>

Պետության տնտեսական քաղաքականության ռազմավարությունը ձևավորվում է մակրոտնտեսական քաղաքականության մեթոդաբանության՝ տնտեսական զանգվածային վերլուծություններ կատարելու և դրանց արդյունքները օգտագործելու հիման վրա: Նախ և առաջ պահանջվում է մշակել տնտեսության առաջիկա զարգացման հիմնադրույթը, որը կատարվում է մակրոտնտեսական վերլուծության հետևյալ ուղղությունների հիման վրա.

 Տնտեսական իրավիճակի վերլուծություն

Տնտեսության զարգացման արդի վիճակը պետք է ներկայացնել դրական և բացասական կողմերով, ձեռք բերված նվաճումներով և տնտեսության չլուծված խնդիրներով, ռեսուրսների օգտագործման գնահատմամբ, տնտեսության մեջ ձևավորված անբնականոն իրավիճակների պատճառներով: Այսպես, վերլուծելով ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը անկախացման շրջանում (1991թ.), կարելի է տալ հետևյալ գնահատականը. տնտեսությանը բնորոշ էր անհաշվեկշռվածությունը, ֆինանսական անկայունությունը, արտադրության միջոցների և սպառման առարկաների մշտական պակասը, դրամաշրջանառության անկայունությունը, փողի արժեզրկումը, ստեղծվող արդյունքի բարձր նյութատարությունը և արտադրության առավելապես էքստենսիվ աճը, «ստվերային տնտեսությունը»[1]: Անցած տասնամյակի ընթացքում այս բնութագրերին գումարվել են նաև գործազրկության բարձր մակարդակը, արժույթի կուրսի տատանումները, երկրի արտաքին պարտքի ավելացումը, ստեղծվող արդյունքի կրճատումը և բնակչության ակտիվ արտագաղթը: Այդ ամենի պատճառները ոչ միայն տնտեսական նախկին համակարգի թերություններն էին, այլ նաև հանրապետության անկախացումից հետո տնտեսության պետական կարգավորման գործում թույլ տրված բազմաթիվ սխալները, պետական մակարդակի հասած կոռուպցիան և թալանը, արտադրական ներուժի քայքայումը:

 Նպատակների վերլուծություն

Տնտեսական քաղաքականության հիմնադրույթը ներառում է երկրի կարևորագույն նպատակները: Մինչդեռ երկրի առջև դրվում են տնտեսական, սոցիալական, պաշտպանական, բնապահպանական բազմաթիվ նպատակներ, որոնք վերլուծելու և յուրաքանչյուրի էությունը, խնդիրները պարզելու համար անհրաժեշտ է դրանք անվանակարգել, այնուհետև դասակարգել ըստ ոլորտների, բնույթի, իրականացման

[1] Իրավիճակների բացատրությունը տես՝ Հ. Բ. Ղուշչյան, «Մակրոէկոնոմիկա», Երևան 1992թ., էջ 27:

ժամանակահատվածի, առաջնայնության աստիճանի: Ըստ ոլորտների պետք է առանձնացնել արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, այսինքն՝ արտադրական ոլորտի, այնուհետև՝ սպասարկման, արտաքին հարաբերությունների և այլ ոլորտների նպատակներ: Ըստ բնույթի՝ նպատակները դասակարգվում են տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ խմբերում: Ըստ ժամանակահատվածի՝ գոյություն ունեն ընթացիկ, միջինժամկետ և հեռանկարային նպատակներ: Ըստ առաջնայնության՝ կարող են լինել գլխավոր և միջնորդավորվող նպատակներ: Նպատակները կարելի է խմբավորել նաև հետևյալ խմբերում՝ ներդաշնակ, չեզոք և հակասող: Դա հնարավորություն կտա պարզելու նպատակների փոխհարաբերությունները և դրանց համար օգտագործվող ռեսուրսների ընդհանրությունը: Օրինակ, եթե պետական բյուջեից հնարավոր է ավելացնել ուսուցիչների աշխատավարձը, ապա դա բնակչության կենսամակարդակի բարձրացման և կրթության զարգացման խթանման նպատակներ է հետապնդում, որոնք ներդաշնակ են: Սակայն, եթե տվյալ միջոցառումը չեզոք է մասնավոր ներդրումների խթանման նպատակների նկատմամբ, ապա հակասող է պաշտպանության ծախսերի ավելացմանը, քանի որ պետական բյուջեից հնարավոր է ավելացնել կամ կրթության, կամ պաշտպանության ծախսերը:

Նպատակների վերլուծությունը պահանջում է ստեղծել նաև «նպատակային ծախսի» կմախքը, որը պետք է արտահայտի բոլոր նպատակների դասակարգումը և խմբավորումը:

<span class="”sppodzag”> ***Տնտեսական համակարգի շահերի համապատասխանության վերլուծություն***

Արդեն նշվել է, որ շուկայական տնտեսության սուբյեկտների՝ տնային տնտեսությունների, ֆիրմաների և պետության շահերը ոչ միայն չեն համընկնում, այլև հաճախ հակամետ են: Ուստի նման վերլուծության խնդիրն է պարզել, թե պետական շահերի պաշտպանության տվյալ տարբերակի դեպքում որքանով են պահպանվում կամ խախտվում շուկայական տնտեսության ինքնակարգավորման սկզբունքները, և որքանով շուկան կարող է գործել արդյունավետ: Այսպես, ՀՀ-ում արտադրության միջոցների մասնավորեցման ընթացքում հաշվի չառնվեց շուկայական գործարարության ակտիվացման պահանջը, որի հետևանքով մասնավորեցումը ավելի խորացրեց տնտեսական ճգնաժամը և բնակչության արտագաղթի պատճառ դարձավ: Իհարկե, շուկայական տնտեսության անցման ընթացքում տեղի է ունենում աշխատուժի որոշ մասի դուրս մղում, սակայն մասնավորեցվող ձեռնարկությունների չաշխատելու պատճառով դուրս մղվեց աշխատուժի գերակշիռ մասը:

Շահերի համապատասխանեցման վերլուծություն անհրաժեշտ է մանր, միջին և խոշոր ձեռներեցության, ինչպես նաև մենաշնորհային դիրք ունեցող արտադրությունների շահերը պետական շահերին հարմարեցնելու համար: Խիստ կարևոր է արտադրողի և սպառողի շահերի փոխհամաձայնեցումը, քանի որ նախկին տնտեսությունում կարգադրող էր արտադրողը, շուկայական տնտեսությունում՝ սովորաբար սպառողը,

իսկ անցումային տնտեսությունում հանդես է գալիս և՛ նորը, և՛ հինը: Այդ է պատճառը, որ անցումային տնտեսություններում շահերի փոխհամաձայնեցումը իրագործվում է դժվարությամբ և զգալիորեն կաշկանդում է պետության կարգավորիչ ազդեցությունը:

 Պետական կարգավորման գործիքների կիրառելիության վերլուծություն

Պետական կարգավորման ազդեցությունը հանդես է գալիս որոշակի գործիքների համակցության միջոցով: Դրանցից յուրաքանչյուրը կարող է ազդեցություն ունենալ տնտեսական որոշակի պայմաններում: Այդ պայմանների փոփոխության դեպքում պետական տվյալ գործիքի ազդեցությունը կարող է չեզոքանալ, ուստի, ելնելով տնտեսական իրավիճակից, անհրաժեշտ է պարզել, թե պետական կարգավորման գործիքներից յուրաքանչյուրը տնտեսավարող սուբյեկտների շահերին ինչպես է առնչվում, և ովքեր են շահում կամ տուժում տվյալ գործիքի կիրառումից: Այսպես, եթե երկրի կենտրոնական բանկը ավելացնում է փողի զանգվածը և դրանով ազդում տոկոսադրույքի իջեցման վրա, ապա դրանից տուժում են կապիտալի տերերը, շահում են ներդրողները, և դա կատարվում է երկրի տնտեսության իրական հատվածի զարգացման համար: Այսպիսով, այս վերլուծության խնդիրն է պարզել պետական կարգավորման գործիքի քանակական ազդեցությունը և գտնել կիրառման ծայրահեղ սահմանը, որից հետո այդ գործիքը կիրառել չի կարելի, քանի որ այն կարող է տնտեսապես կործանել որևէ տնտեսավարող սուբյեկտի: Այսպես, պետությունը կարող է սահմանել արտադրանքի մի քանի տեսակների (որոնց արտադրությունը մենաշնորհային բնույթ ունի) գների վերին մակարդակ, սակայն այդ գինը չպետք է ցածր լինի արտադրության ծախսերից և պետք է ապահովի միջին շահույթ: Եթե տվյալ գործիքը ազդեցություն ունի տնտեսական երևույթի վրա, ապա այդ ազդեցությունը կայուն և մշտական չէ: Այդպիսին է տոկոսադրույքի ազդեցությունը ներդրումների խթանման վրա: Որքան տոկոսադրույքը իջնում է, այնքան այդ ազդեցությունը զգայուն է դառնում, սակայն որոշակի աստիճանում այդ ազդեցությունը չեզոքանում է, որն անվանում ենք «փողի ծուղակ»: Փաստորեն դա այն վիճակն է, որի դեպքում ներդրումների վրա տոկոսադրույքի ազդեցությունը վերանում է, տնտեսության մեջ ներդրումները կարող են չավելանալ, իսկ դա խոչընդոտում է տնտեսական աճին:

Այսպիսով, տնտեսական բոլոր վերլուծությունները վերաբերում են թվարկված չորս խմբերից որևէ մեկին և արտահայտում են տնտեսական զարգացման հիմնադրույթի մշակման համապատասխան բաղադրիչի էությունը:

<h2>2.3. Տնտեսության պետական կարգավորման մեթոդները</h2>

Քանի որ որպես հոմանիշներ ենք օգտագործում «տնտեսության պետական կարգավորում» և «պետության տնտեսական քաղաքականություն» հասկացությունները, ուստի տնտեսական երևույթների ուսումնասիրության և դրանց կանխատեսման բոլոր եղանակներն ու ձևերը կարող ենք վերագրել նաև տնտեսության պետական կարգավորմանը: Դրանք ինչ-որ չափով համընկնում են նախկին ժողովրդական տնտեսության պլանավորման մեթոդաբանության հետ: Այսպես, տնտեսական աճի տեմպերը խթանելու նպատակով անհրաժեշտ է նախ ունենալ տվյալ երկրի տնտեսական աճի տեմպերի կանխատեսվող չափը և այնուհետև փորձել շուկայական տնտեսության մասնակիցներին ներգրավել տնտեսական աճի խթանման գործում:

Տնտեսական կանխատեսումը բարդ ու դժվարին գործընթաց է: Տնտեսական զարգացման գործոններն այնքան բազմաբնույթ ու բազմազան են, որ հաճախ հնարավոր չէ տալ դրանց ազդեցության քանակական գնահատականը: Եթե տնտեսական առաջընթացի տեխնիկական, տեխնոլոգիական գործոնների ազդեցությունը քանակապես գնահատելի է, ապա սոցիալական, հոգեբանական և մարդկային այլ գործոնների ազդեցությունը գնահատվում է մոտավոր եղանակով: Այդ է պատճառը, որ տնտեսության պետական կարգավորման և մակրոտնտեսական վերլուծության ժամանակ օգտագործվում են գիտության ընդհանուր և առանձնահատուկ մեթոդներ:

<span class="”uպpodzag”> ***Գիտության ընդհանուր մեթոդները***

Բնության, հասարակության և մտածողության զարգացման ընթացքը ուսումնասիրելիս օգտագործվում են որոշակի սկզբունքներ ու եղանակներ, որոնց ամբողջությունը անվանում են ուսումնասիրության մեթոդներ: Դրանցից հիմնականներն են՝ դիալեկտիկան, գիտական վերացարկումը (աբստրակցիա), ինդուկցիան և դեդուկցիան, վերլուծական, համեմատական, մաթեմատիկական և վիճակագրական մեթոդները:

Դիալեկտիկան սովորեցնում է, որ իրերը, առարկաները, երևույթները շարժման, զարգացման մեջ են, և դրանց վիճակների դիտարկումը պետք է կատարվի տեղի ունեցող փոփոխությունների գնահատմամբ: Դա հատկանշական է տնտեսական երևույթներին, որոնք ոչ միայն փոխվում են, այլև հաճախ հանդես են բերում կտրուկ շրջադարձեր, այսինքն՝ զարգացմանը հետևում է անկումը: Դեռ ավելին, զարգացման ընդհանուր միտումը երբեմն փոխարինվում է պարբերական անկմամբ, և ձևավորվում է տնտեսական պարբերաշրջան: Պարբերաշրջանային դիալեկտիկական զարգացման ընթացքում յուրաքանչյուր հաջորդ պարույրում տնտեսական նվաճումները նոր փուլ են թևակոխում: Ուստի դիալեկտիկական մեթոդն անհրաժեշտ է տնտեսական զարգացման ընթացքը ճշգրիտ կանխատեսելու համար:

Գիտական վերացարկումը տնտեսական բազմագործոն երևույթների ուսումնասիրության եղանակ է, որի ընթացքում մտովի վերանում ենք տվյալ երևույթի վրա ազդող մի շարք գործոնների ազդեցությունից և հաշվի ենք առնում մեզ հետաքրքրող գործոնի ազդեցությունը: Այսպես, եթե գիտենք, որ երկրում ստեղծվող արդյունքը աճում է կապիտալի, աշխատանքի ավելացման և տեխնոլոգիական առաջադիմության շնորհիվ, ապա կապիտալի ավելացման հաշվին արդյունքի աճը հաշվարկելու համար ենթադրում ենք, որ աշխատանքը չի ավելանում և տեխնոլոգիական առաջադիմություն տեղի չի ունենում: Այդպիսի հաշվարկ ներկայացված է դասընթացի 7-րդ թեմայի ուսումնասիրության ընթացքում: Նման ենթադրությունը գիտական վերացարկում ենք անվանում, քանի որ իրականում արտադրության բոլոր գործոնները փոխկապված են, փոփոխվում են և պահանջվում է մտովի պատկերացնել միայն մեկ գործոնի փոփոխությունը:

Ինդուկցիան և դեդուկցիան մտաեզրահանգման մեթոդներ են, որոնք ենթադրում են եզակի փաստերի հիմա վրա կատարել եզրահանգումներ, և ենթադրությունների ճշտությունը ստուգել իրական փաստերի հետ համեմատելու միջոցով: Դատողությունների այսպիսի շղթա՝ խորհրդածությունից մինչև եզրակացություններ, անհրաժեշտ է հատկապես մակրոտնտեսական ուսումնասիրությունների ժամանակ, քանի որ այդ մակարդակի երևույթներն անտեսանելի են, դրանք հանդես են գալիս միայն որպես առանձին երևույթների հանրագումար: Այսպես, եթե փողի շուկայում տոկոսադրույքը բարձրանում է, ապա ներդրումների պահանջարկը կրճատվում է, դրան հետևում է արտադրության ծավալի կրճատումը, գործազրկությունը աճում է: Գործազրկության կրճատման համար ապրանքների գները պետք է բարձրանան: Ուստի արտադրության ծավալի կրճատումը հանգեցնում է դրան, և գործազրկության կրճատման նախադրյալներ շուկան իր մեջ պարունակում է: Այս երևույթների փոխադարձ կապի ուսումնասիրությունը ներկայացված է 15-րդ թեմայում:

Վերլուծությունը ցանկացած գիտության՝ եզրակացություններ կատարելու հիմնական մեթոդն է: Մեզ շրջապատող աշխարհի բոլոր երևույթների էությունը հնարավոր չէ պատկերացնել առանց վերլուծելու: Վերլուծությունը թույլ է տալիս երևույթը, առարկան դիտարկել մանրամասնորեն, դրանց վրա ազդող գործոնների ամբողջությամբ: Դրա համար պահանջվում է պարզել յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափը, առանց որի երևույթի հետագա փոփոխությունը գնահատել հնարավոր չի լինի: Այսպես, բնակչության թվակազմի վրա ազդում են տվյալ տարում ծնվածների, այլ վայրերից փոխադրվածների, այլ վայրեր փոխադրվածների և մահացածների ցուցանիշները: Պարզ է, որ բնակչության թվի կանխատեսման համար նախ պետք է պարզել այդ գործոններից յուրաքանչյուրի ազդեցության չափը, փոփոխության միտումները: Այդ բոլորը պարզելուց հետո կատարվում է ընդհանրացում, այսինքն՝ ինչպիսին կլինի գործոնների

ազդեցության ընդհանուր չափը կանխատեսվող ժամանակաշրջանի ընթացքում:

Վերլուծությունը կարող է լինել որակական և քանակական: Որակական վերլուծությունը բացահայտում է երևույթի հիմնական որակական հատկանիշները: Օրինակ, խորհրդային տնտեսությանը բնորոշ էր սպառման առարկաների մշտական պակասը:

Քանակական վերլուծության միջոցով պարզվում է երևույթի վրա տարբեր գործոնների ազդեցության չափը: Եթե տնտեսական աճի 60%-ը ձեռք է բերվում արտադրական ռեսուրսների աճի հաշվին (էքստենսիվ աճ), ապա մնացած 40%-ը ռեսուրսների օգտագործման բարելավման արդյունք է (ինտենսիվ աճ):

Համեմատական մեթոդը անհրաժեշտ է երևույթի բնութագիրը տարբեր ժամանակներում և այլ երևույթների հետ համեմատելու համար: Որևէ երկրի՝ մեկ բնակչի հաշվով արտադրված ազգային եկամտի ծավալը դեռևս ոչինչ չի բնութագրում, եթե չի համեմատվում մեկ այլ երկրի նույն ցուցանիշի հետ: Այսպես, 2003 թ. Հայաստանում մեկ բնակչի հաշվով արտադրվել է 245 հազար դրամի համախառն ներքին արդյունք: Համեմատելու համար այն արտահայտում ենք ԱՄՆ դոլարով և համեմատում այլ երկրների նույն ցուցանիշի հետ:

Մաթեմատիկական մեթոդներ օգտագործվում են բոլոր այն գիտությունների կողմից, որոնք քանակական վերլուծություններ են կատարում և դիտարկում են առարկաների, երևույթների քանակական կապերը: Այդպիսի դեպքերում պահանջվում է երևույթի հիմնական հատկանիշները նշանակել մաթեմատիկական նիշերով, կազմել այդ երևույթի փոփոխության մաթեմատիկական մոդելը (դրան կանդրադառնանք հաջորդ հարցի ուսումնասիրության ժամանակ), լուծել այն մաթեմատիկական եղանակով և ստացված արդյունքները գնահատել:

Վիճակագրական մեթոդները նույնպես քանակական ուսումնասիրությունների նպատակով են օգտագործվում: Դրանք անհրաժեշտ են առարկաների, երևույթների մասին զանգվածային տեղեկատվություն հավաքելու, դրանք որոշակի վիճակագրական մեթոդներով դասակարգելու, կապերը գնահատելու և զարգացման միտումները հայտնաբերելու համար:

Մակրոտնտեսական առանձնահատուկ մեթոդները

Մակրոտնտեսական վերլուծություններ կատարելու համար պահանջվում են նաև առանձնահատուկ մեթոդներ: Դրանք են՝ համակարգային վերլուծությունը, դինամիկ հետազոտությունը, հաշվեկշռային, նորմատիվային և ծրագրանպատակային մեթոդները:

Համակարգային վերլուծությունը մեթոդաբանական միջոցների և ընթացակարգերի ամբողջություն է, օգտագործվում է

քաղաքական, տնտեսական, սոցիալական բնույթի բարդ հիմնախնդիրների լուծումը նախապատրաստելու, հիմնավորելու և իրականացնելու համար: Նման վերլուծության կիրառումը մակրոտնտեսական կարգավորման գործընթացում պայմանավորված է նրանով, որ մակրոմակարդակի երևույթների վրա ազդող գործոնները քանակապես հաճախ գնահատելի չեն, և հիմնահարցի լուծման համար պահանջվում են այլընտրանքային տարբերակներ, որոնցից լավագույնի ընտրությունը կատարվում է արդյունավետության այս կամ այն ցուցանիշի օգնությամբ:

Համակարգային վերլուծության հիմնական սկզբունքներն են.

- հիմնահարցի լուծմանը վերաբերող որոշումների ընդունումը պետք է սկսել վերջնական նպատակների, դրանց հասնելու չափանիշների ճշգրիտ ընտրությունից,
- հիմնահարցը պետք է դիտարկել ամբողջականության մեջ և քննարկել յուրաքանչյուր մասնավոր լուծման հետևանքները,
- համակարգի առանձին բաղադրամասերի նպատակները պետք է համահունչ լինեն ամբողջ ծրագրի նպատակին:

Համակարգային վերլուծության առանցքային հարցերից մեկը տնտեսական երևույթի այնպիսի մոդելի մշակումն է, որը ներառի երևույթի վրա բոլոր գործոնների ազդեցության գնահատումը: Դա հնարավորություն է տալիս շատ արագ որոշելու այլընտրանքային տարբերակներից յուրաքանչյուրի համար պահանջվող ռեսուրսները, սպասվող արդյունքները: Համակարգային վերլուծության կիրառման գործընթացն ընդլայնվել է էլեկտրոնային և համակարգչային տեխնիկայի ստեղծման ու կիրառման շնորհիվ:

Դինամիկ հետազոտությունը մակրոտնտեսական երևույթների հետազոտության հիմնական եղանակն է: Մի կողմից՝ մակրոտնտեսական երևույթների գործընթացների բազմագործոն բնույթը հնարավորություն չի տալիս ճշգրիտ որոշել ընդհանուր արդյունքների վրա այս կամ այն գործոնի ազդեցության չափը, մյուս կողմից՝ տնտեսական երևույթի և նրա վրա ազդող գործոնի միջև կապը զուտ մաթեմատիկական կապի տեսք չունի: Տնտեսական գործընթացների քանակական կապերը միտումների բնույթ ունեն, ուստի մակրոտնտեսական արդյունքների և ռեսուրսների միջև քանակական կապերը կայուն չեն: Դրա համար մակրոտնտեսական դինամիկ հետազոտությունը պետք է կատարել բավականին երկար ժամանակաշրջանի համար: Որքան ավելի երկար է ուսումնասիրվող ժամանակաշրջանը, այնքան մակրոտնտեսական դինամիկան համեմատությունների ավելի իրական հնարավորություն է տալիս: Մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշների վերլուծությունը, ինչպիսին ազգային եկամտի, կատարված կապիտալ ներդրումների ծավալներն են, պետք է կատարվեն մի քանի տասնամյակների կտրվածքով, որի դեպքում է միայն

հնարավոր պարզել տնտեսության լճացման, անկման, աշխուժացման և վերելքի օրինաչափությունները: Եթե այդ երևույթներից յուրաքանչյուրը ուսումնասիրվող ժամանակահատվածում կրկնվում է միայն մեկ կամ երկու անգամ, ապա դրանց օրինաչափությունների մասին եզրակացությունները կարող են ճշգրիտ չլինել: Ուստի մակրոտնտեսական երևույթների հետազոտությունները պետք է կատարել բավականին երկար ժամանակահատվածի համար, որը թույլ է տալիս պարզել մակրոտնտեսական ցուցանիշների աճի տեմպերի, թափի և այլ հատկանիշների դրսևորման ձևերը:

Հաշվեկշռային մեթոդը մակրոտնտեսական հետազոտությունների և կանխատեսման հիմնական եղանակներից մեկն է: Դա բացատրվում է նրանով, որ տնտեսական գործընթացները երկակի բնույթ ունեն, դրանք մի կողմից արդյունքների ստեղծման, մյուս կողմից՝ ռեսուրսների օգտագործման գործընթացներ են: Միաժամանակ, մակրոմակարդակի ցուցանիշների ընդհանուր հաշվեկշռվածությունը, կայունությունը հնարավոր է արտահայտել այդ մեթոդի օգնությամբ: Տնտեսության հաշվեկշռվածությունը զարգացման այնպիսի վիճակ է, երբ համապատասխանություն է ստեղծվում ռեսուրսների և դրանցից ստացվող արդյունքների ծավալների միջև: Այդ համապատասխանեցումը արտահայտելու համար մշակվում են ազգային եկամտի արտադրության և բաշխման, հիմնական ֆոնդերի, աշխատանքային ռեսուրսների ամփոփ հաշվեկշիռներ: Այդ հաշվեկշիռները մակրոտնտեսական քանակական կապերը գնահատելու և արտահայտելու միջոց են: Հաշվեկշռային մեթոդը համընդհանուր կապերի արտահայտման եղանակ է, սակայն տնտեսական որոշակի կապեր մասնակի բնույթ ունեն, դրանց ուսումնասիրությունը կատարվում է նորմատիվային մեթոդով:

Նորմատիվային մեթոդը դիտարկում է տնտեսական երևույթների առանձին, մասնակի կապերը, որոնք հիմնականում կիրառվում են մակրոտնտեսական կարգավորման գործընթացում: Նորմատիվային մեթոդի դերը շուկայական տնտեսությունում հանգում է պետության կողմից տնտեսավարող սուբյեկտների համար որոշակի նորմատիվային մեթոդների սահմանմանը, որոնք որոշում են դրանց գործունեության շրջանակները: Այդպիսի նորմատիվներ են հարկային դրույքաչափերը, վերաֆինանսավորման տոկոսադրույքները, արտահանման և ներմուծման մասնաբաժինները և այլն:

Ծրագրանպատակային մեթոդը կիրառվում է մակրոտնտեսական կարգավորման գործընթացում: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ տնտեսական, սոցիալական, բնապահպանական, գիտատեխնիկական ծրագրեր մշակելիս նախ սահմանվում է ծրագրի վերջնական նպատակը, այնուհետև որոշվում են ծրագրի կատարման համար անհրաժեշտ ռեսուրսները, իրականացման ժամկետները, իրականացնող սուբյեկտները, պատասխանատու կազմակերպությունները: Այդպիսի դեպքերում պետությունը կարող է նպատակային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութական և

ֆինանսական ռեսուրսներ հատկացնել առանձին տնտեսավարող սուբյեկտներին:

<h2>2.4. Տնտեսական մոդելներ, պաշարներ և հոսքեր</h2>

Մակրոտնտեսական բոլոր մեթոդների օգտագործման նպատակը, վերջին հաշվով, տնտեսական զարգացման ծրագրերի մշակումն է և դրանք տնտեսական քաղաքականության հիմքում դնելը: Այդպիսի ծրագրերի մշակման համար օգտագործվում են տնտեսական մոդելներ, որոնք տնտեսական երևույթների քանակական արտահայտման եղանակ են: Երկրի տնտեսական զարգացման ընթացքում ձևավորվում են մակրոտնտեսական ցուցանիշների որոշակի մակարդակներ, որի հիման վրա առաջադրվում են տնտեսական քաղաքականության հետագա խնդիրները: Այդ մեծություններն ընդգրկվում են տնտեսական մոդելներում, հաշվարկվում են տնտեսական զարգացման ծրագրի առաջադրանքները, որոնք տնտեսական մոդելի ելքային մեծություններ են: Այդ մեծությունները նույնպես բաժանվում են երկու խմբի՝ ծրագրի կառուցվածքային առաջադրանքներ և տնտեսական քաղաքականության առաջադրանքներ: Տրված են համարվում այն ցուցանիշները, որոնք դիտվում են կայուն, չեն ստացվում մոդելի փոփոխականների միջոցով և ձեռք են բերվել տնտեսական զարգացման նախորդ փուլում: Դրանցից են՝ արտադրական և բնական ռեսուրսները, բնակչության թիվը:

Տնտեսական քաղաքականության ցուցանիշները նույնպես մոդելում ներառվում են որպես տրված մեծություններ, սակայն դրանք փոփոխվում են քաղաքականությանը համապատասխան: Դրանցից են՝ կառավարական ծախսերը, հարկային դրույքաչափերը, նվազագույն աշխատավարձը և այլն:

*Ծրագրի կառուցվածքային առաջադրանքները*արտահայտում են մակրոտնտեսական ցուցանիշների միջև քանակական կապերը և հիմք են հանդիսանում նպատակային ցուցանիշների հիմնավորման համար: Դրանցից են՝ անձնական սպառման ծախսերը, ամորտիզացիայի հատկացումները, աշխատանքի ծախսումները և այլն:

*Տնտեսական քաղաքականության առաջադրանքները*արտահայտում են ծրագրի նպատակային մեծությունները: Դրանք են՝ պետական բյուջեի եկամուտները, սպառման ապրանքների գները, բանկային վարկերը, ներդրումները և այլն:

Մոդելի մուտքային (էկզոգեն) և ելքային (էնդոգեն) մեծությունները միմյանց հետ կապվում են որոշակի հավասարումների միջոցով, որոնք արտահայտում են ելքային մեծությունների կախվածությունը մուտքային մեծություններից: Տնտեսական մոդելը տնտեսական գործընթացի, երևույթի պարզագույն, քանակական պատկերն է: Մոդելը արտահայտում է միայն տնտեսական երևույթի

կմախքը, նրա ընդհանուր պատկերը: Տնտեսական երևույթը ավելի հարուստ, բազմակողմանի և ընդգրկուն է: Մոդելը արտահայտում է միայն երևույթի վրա ազդող մի քանի գործոնների ազդեցությունը:

Ցուցանիշների կապը տնտեսական մոդելներում

<table><tr><td>

Մուտքային ցուցանիշներ	Տրված մեծություններ	Մոդելի հավասարումների համակարգը	Ծրագրի կառուցվածքային առաջադրանքներ	Ելքային ցուցանիշներ
	Տնտեսական քաղաքականության փոփոխականներ		Տնտեսական քաղաքականության առաջադրանքներ	

</td></tr></table>

Որքան ավելի շատ գործոնների ազդեցություն է հաշվի առնվում տնտեսական մոդելներում, այնքան մոդելները մոտ են լինում իրականությանը և արտահայտում են տնտեսական երևույթի էությունը: Սակայն ինչպիսի բարդ ու բազմագործոն մոդելներ էլ օգտագործվեն, միևնույն է, դրանք տնտեսական երևույթների, գործընթացների ամբողջությունը ընդգրկել չեն կարող: Չնայած դրան՝ տնտեսական մոդելների օգտագործումը անհրաժեշտ է երկու հիմնական նպատակներով, ըստ որի՝ այդ մոդելները լինում են վերլուծական և կանխատեսման:

Վերլուծական մոդելները նպատակ ունեն տնտեսական զարգացման ցուցանիշների միջև գտնել քանակական ճշգրիտ կապեր, որոնք որոշակի ժամանակի ընթացքում կայուն են և արտահայտում են ռեսուրսների օգտագործման վիճակը:

Կանխատեսման մոդելները հիմք ընդունելով արտադրության գործոնների դինամիկան և դրանց ազդեցությունը արտադրության աճի վրա, հնարավորություն են տալիս կանխատեսելու արտադրության ծավալի աճը, իսկ դրա հիման վրա՝ նաև մակրոտնտեսական արդյունքային մյուս մեծությունները՝ սպառումը, ներդրումները, պետական ծախսերը: Տնտեսական մոդելների կիրառման ժամանակ անհրաժեշտ է մակրոտնտեսական մեծությունները տարբերակել ըստ դրանց բնութագրության: Կիրառվում են պաշարներ և հոսքեր արտահայտող մեծություններ:

Պաշարները բնութագրում են մակրոտնտեսական մեծությունների առկա պահային վիճակը: Այդպիսի մեծություններ են՝ արտադրական ռեսուրսները, բնակարանային ֆոնդը, պետական պարտքը, կապիտալի պաշարը և այլն:

Հոսքերը արտահայտում են մակրոտնտեսական մեծությունների դինամիկ փոփոխությունը, դրանց շարժը ժամանակի միավորի ընթացքում (օրինակ՝ մեկ տարում): Այդպիսի ցուցանիշներ են՝ արտադրված համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ներդրումների

ծավալը, պետական բյուջեի պակասուրդը: Սովորաբար հոսքերի և պաշարների ֆիզիկական էությունը պատկերացնելու համար ասվում է՝ ջրավազանի ջուրը համարվում է պաշար, իսկ ջրավազանը լցնող ծորակի ջուրը՝ հոսք:

Ցուցանիշների բաժանումը հոսքերի և պաշարների էական դեր է խաղում մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունն ընկալելու համար, քանի որ հոսքերը և դրանց մեծությունները հնարավորություն են ընձեռում արագ հաշվարկելու պաշարների մեծությունները: Իսկ պաշարները երկրի տնտեսական վիճակի գնահատման և ձեռք բերված նվաճումները արտահայտելու ցուցանիշներն են:

<h2>2.5. Մակրոտնտեսական ցուցանիշներին ներկայացվող պահանջները և հաշվարկման կարգը</h2>

Ցուցանիշները տնտեսական երևույթների, գործընթացների քանակական հատկանիշները բնութագրող մեծություններ են: Մակրոտնտեսական ցուցանիշները արտահայտում են երկրի ամբողջ տնտեսության գործունեության արդյունքները և դրանց օգտագործման ուղղությունները: Սովորաբար բոլոր երկրների համար սահմանվում է ցուցանիշների հաշվարկման միասնական կարգ, որն անվանվում է «Ազգային հաշիվների համակարգ»: Այդ համակարգը պարունակում է սկզբունքներ, ըստ որոնց՝ մակրոտնտեսական ցուցանիշները հաշվարկվում են որոշակի պահանջներին համապատասխան: Նախ, դրանք պետք է արտահայտեն ամբողջ երկրում ստեղծված արդյունքը, թողարկված արտադրանքը և կատարված ծառայությունները:

Երկրորդ հիմնական պահանջը վերաբերում է դրանց հաշվարկման մեթոդիկայի պարզությանը: Ցուցանիշները պետք է ունենան հաշվարկման պարզագույն, հստակ մեթոդիկա, որպեսզի հնարավոր լինի համադրել տարբեր ժամանակների գործունեության արդյունքները:

Վերջապես, այդ ցուցանիշները պետք է արտացոլեն տնտեսական տվյալ կատեգորիայի էությունը, նրա էական հատկանիշների ամբողջությունը:

Մակրոտնտեսական ցուցանիշները իրենցից ներկայացնում են տվյալ հասկացության միավորված ագրեգատային մեծությունը: Օրինակ, երբ հարկեր տերմինը օգտագործում ենք որպես մակրոտնտեսական հասկացություն, ապա նկատի է առնվում պետության բոլոր հարկային եկամուտները՝ անկախ հարկերի տեսակներից, գանձման եղանակից, վճարող սուբյեկտից և այլն:

Մակրոտնտեսական արդյունքային ցուցանիշներից ավելի շատ կիրառելի են համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ), համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ), ազգային եկամտի (ԱԵ), զուտ ազգային արդյունքի (ԶԱԱ), անձնական և տնօրինվող անձնական եկամտի ցուցանիշները:

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) տվյալ երկրի տարածքում որոշակի ժամանակի ընթացքում (սովորաբար՝ մեկ տարում) արտադրված բոլոր ապրանքների և կատարված ծառայությունների շուկայական արժեքների գումարն է, անկախ այն հանգամանքից, թե որ երկրի գործակալի գործունեության արդյունքն է:

Սկսած 1993 թվականից՝ աշխարհի բոլոր երկրներում ազգային արդյունքը հաշվարկվում է ՀՆԱ-ի միջոցով: Մինչ այդ ազգային արդյունքը հաշվարկվում էր համախառն ազգային արդյունքի միջոցով:

Համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ) տվյալ երկրի գործակալների կողմից արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների շուկայական արժեքների գումարն է, անկախ այն հանգամանքից, թե որ երկրում է գործունեությունն իրականացվել:

Այսպիսով, ՀՆԱ-ն և ՀԱԱ-ն հաշվարկվում են նույն կարգով, սակայն իրարից քանակապես տարբերվում են:

ՀԱԱ = ՀՆԱ + տվյալ երկրի գործակալների կողմից այլ երկրներում ստեղծած արդյունք - այլ երկրների գործակալների կողմից տվյալ երկրում ստեղծած արդյունք:

Պարզ է, որ ՀՆԱ-ն ավելի ճիշտ է բնութագրում տվյալ երկրի տնտեսական իրավիճակը և ավելի հեշտությամբ է հաշվարկվում:

ՀՆԱ-ը հաշվարկվում է երեք եղանակով՝

1. ***Այն տնտեսավարող առանձին սուբյեկտների կողմից ավելացված արժեքների գումարն է:***

Այսպես, վերցնենք թեթև արդյունաբերության երեք ձեռնարկություն: Ենթադրենք՝ մանածագործական ֆաբրիկան արտադրում է 120 մլն դրամի թել և վաճառում գործվածքեղենի ֆաբրիկային: Գործվածքեղենի ֆաբրիկան իր հերթին արտադրում է 200 մլն դրամի գործվածքեղեն և վաճառում կարի ֆաբրիկային: Կարի ֆաբրիկան դրանից պատրաստում է 250 մլն դրամի հագուստեղեն և վաճառում է բնակչությանը: Փաստորեն, այս օրինակում արժեքի ավելացում տեղի ունեցավ.

Մանածագործական ֆաբրիկայում 120 մլն դրամ

Գործվածքեղենի ֆաբրիկայում 200-120=80 մլն դրամ

Կարի ֆաբրիկայում 250-200=50 մլն դրամ

Ինչպես տեսնում ենք, ավելացված արժեքների գումարը հավասար է վերջնական արտադրանքի արժեքին, որը վաճառվում է բնակչությանը: Սակայն ավելի ճշգրիտ է ՀՆԱ-ն ավելացված արժեքների տեսքով հաշվարկելը, քանի որ կտորեղենի մի մասն էլ կարող է վաճառվել բնակչությանը, և այդ ժամանակ կհամարվի վերջնական արտադրանք: Փաստորեն ձեռնարկություններում թողարկվող արտադրանքի մի մասը պատրաստ է վերջնական սպառման համար (հագուստ, կոշիկ, հաց, մսամթերք

ավտոմեքենաներ և այլն), մյուս մասը դեռևս արտադրական վերամշակման պետք է ենթարկվի (հանքաքար, մետաղ, գլանվածք, կաշի, ալյուր և այլն) և կոչվում է միջանկյալ արտադրանք: Այսպիսով, ավելացված արժեքը ձեռնարկության արտադրանքի շուկայական արժեքի և կատարած նյութական ծախսերի՝ միջանկյալ արտադրանքի տարբերությունն է: Ապրանքները գնահատվում են շուկայական արժեքով, իսկ ծառայությունների մի մասի համար կատարվում են վճարումներ, որոնք նույնպես գումարվում են ավելացված արժեքների գումարին: Երկրի ՀՆԱ ծավալի հաշվարկման ժամանակ ընդգրկվում են ցուցանիշներ, որոնք արտահայտում են իրականում չկայացած վճարումներ: Այսպես, եթե մարդիկ զբաղեցնում են ուրիշի սեփականություն հանդիսացող բնակարանը, ապա դրա համար տալիս են վարձավճար, որը ՀՆԱ-ում ընդգրկվում է որպես վարձակալների ծախսեր և որպես բնակարանների սեփականատերերի եկամուտներ: Սակայն, եթե մարդը բնակվում է իր սեփական բնակարանում, ապա նա իրականում վարձ չի վճարում, սակայն այդ բնակարանի համար ՀՆԱ-ում նույնպես ընդգրկվում է «վարձավճարի» գումար, որը ՀՆԱ ծավալի հաշվարկման ժամանակ ավելանում է որպես *պայմանական հավելադիր արժեք* և ընդգրկվում այդ ծավալում: Փաստորեն այդպիսի գումարը դիտվում է որպես բնակարանի տիրոջ եկամուտ, քանի որ նա օգտվում է բնակարանից և վարձ չի վճարում: Նույնպիսի հավելադիր արժեք են համարվում պետական բյուջետային բոլոր ծառայողների աշխատավարձի գումարները:

Տնտեսության մեջ տեղի են ունենում արժեմեծացման գործընթացներ, որոնց ընթացքում ստեղծված արժեքը հաշվարկել և ՀՆԱ-ում ընդգրկել հնարավոր չէ: Դրանք վերաբերում են ընտանիքներում պատրաստված ճաշի և ընդհատակյա տնտեսական գործունեության ընթացքում տեղի ունեցող արժեմեծացման գործընթացներին:

2. ***Համախառն ներքին արդյունքը տվյալ երկրի տարածքում կատարվող բոլոր ծախսերի (ոչ արտադրողական) գումարն է, որը բաղկացած է 4 հիմնական տարրերից:*** Դրանք են՝ սպառում (C), ներդրումներ (I), պետական ծախսեր (G) և զուտ արտահանում (NX): Տառային նշանակումները իրենցից ներկայացնում են այդ հասկացությունների անգլերեն բառերի առաջին տառերը:

Սպառումը տնային տնտեսությունների կողմից ձեռք բերվող կարճաժամկետ (հագուստ, սնունդ, կոշիկ) և երկարաժամկետ (ավտոմեքենա, հեռուստացույց) օգտագործման ապրանքների և ծառայությունների արժեքների գումարն է:

Ներդրումները ընդգրկում են այն ծախսերը, որոնք կատարվում են արտադրական հիմնական ֆոնդերի ընդլայնման, բնակարանային շինարարության և արտադրական պաշարների ավելացման համար:

Պետական ծախսերը վերաբերում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարվող

ծախսերին, որոնց մեջ մտնում են ապրանքների ձեռքբերումը և այդ մարմինների աշխատողների աշխատավարձը:

Զուտ արտահանումը տվյալ երկրից ապրանքների և ծառայությունների արտահանման և դրանց ներմուծման արժեքների տարբերությունն է:

ՀՆԱ այս 4 բաղադրիչների էությունը, կազմը և կառուցվածքը հետագայում կդիտարկվի ավելի մանրամասն:

3. *Համախառն ներքին արդյունքը տվյալ երկրի բնակչության բոլոր խմբերի վերջնական եկամուտներն են և հիմնական կապիտալի մաշվածքը*:

Այդ կազմը դիտարկելու համար անհրաժեշտ է հաշվարկել զուտ ազգային արդյունքը (ԶԱԱ):

ԶԱԱ-ը տվյալ տարում ավելացած արժեքների գումարն է, այսինքն՝

ԶԱԱ = ՀԱԱ - հիմնական կապիտալի մաշվածքի արժեքը:

Մակրոտնտեսական հաջորդ ցուցանիշը *ազգային եկամուտն է:*

Ազգային եկամուտը նոր ստեղծված արժեքների գումարն է: Այն հաշվարկելու համար անհրաժեշտ է զուտ ազգային արդյունքից հանել անուղղակի հարկերը, որոնք գանձվում են դրանց իրացման գործընթացում և ձեռնարկությունների արտադրանքի արժեքի մեջ չեն հաշվարկվում: Դրանց մեծությունը ՀՆԱ-ում ընդգրկվում է պետական ծախսերի տեսքով.

ԱԵ = ԶԱԱ - անուղղակի հարկեր

ԱԵ-ն բնակչության կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշն է, քանի որ արտահայտում է բնակչության բոլոր խավերի եկամուտները: Այն ներառում է 5 հիմնական բաղադրամասեր՝ *աշխատավարձ, սեփականատերերի եկամուտներ, ռենտա, ընկերությունների շահույթ, զուտ տոկոս:*

Աշխատավարձը պետական և մասնավոր հատվածների աշխատողների ստացած վարձատրությունն է: Զարգացած երկրներում այն կազմում է ԱԵ-ի երեք քառորդ մասը, ՀՀ-ում 2003 թ. կազմում էր ԱԵ-ի շուրջ 47 տոկոսը:

Սեփականատերերի եկամուտները ստացվում են այն տնտեսություններում, որոնք իրենց գործունեությունը կազմակերպում են աշխատուժ չվարձելով:

Ռենտա ստանում են իրային կապիտալի տերերը, որոնք իրենց կապիտալը տալիս են վարձակալության:

Ընկերությունների շահույթի մի մասը մնում է իրենց տրամադրության տակ (հարկերը վճարելուց հետո), որն օգտագործվում է արտադրության հետագա ընդլայնման համար:

Զուտ տոկոսը ձևավորվում է բանկային և այլ կազմակերպությունների կողմից տրված վարկերի դիմաց ստացված գումարներից: Երկրի ձեռնարկությունները վճարում են բանկերին տոկոսներ: Եթե դրանից հանենք ձեռնարկությունների ստացած տոկոսները՝ նրանց տրված վարկերի դիմաց և ավելացնենք այլ երկրների գործակալների կողմից վճարված վարկային տոկոսների գումարը, ապա կստանանք տվյալ երկրի ազգային եկամտի մեջ *զուտ տոկոսը*: Օրինակ, ԱՄՆ-ում այն կազմում է ԱԵ-ի 8.8%-ը:

Այսպիսով, երեք եղանակներով՝ որպես ավելացված արժեքների գումար, որպես երկրում կատարվող ծախսերի գումար և որպես տնային տնտեսությունների և տնտեսավարող սուբյեկտների վերջնական եկամուտներ հաշվարկելիս ՀՆԱ ծավալները պետք է համապատասխանեն միմյանց, քանի որ տվյալ երկրում արտադրված արդյունքը հավասար է բաշխված և օգտագործված արդյունքին: Եթե ազգային հաշվարկներում դրանց միջև առաջանում են տարբերություններ, անվանում ենք *վիճակագրական շեղումներ:*

Մակրոտնտեսական հիմնախնդիրների լուծման ընթացքում անհրաժեշտ է լինում հաշվարկել նաև *անձնական և անձնական տնօգնվող եկամուտների ցուցանիշները**,* որոնց միջոցով գնահատվում են բնակչության կենսամակարդակի, սոցիալական ապահովվածության, սպառման իրավիճակները:

Ազգային հաշիվների համակարգում անձնական եկամուտները հաշվարկելիս պահանջվում է տնային տնտեսությունների, տնտեսավարող սուբյեկտների և պետության հարաբերությունների քանակական գնահատում կատարել:

Նախ՝ տնտեսավարող սուբյեկտները պետությանը վճարում են հարկեր, որն ԱԵ-ի մեջ արտահայտվում է պետական ծախսերում, երկրորդ՝ բնակչությանը պետության կողմից տրվում են անհատույց վճարումներ (թոշակներ, կենսաթոշակներ, նպաստներ), սակայն դրանք ժամանակին գանձվում են սոցիալական ապահովագրության վճարների տեսքով և, վերջապես, կապիտալի տերերը ստանում են անձնական եկամուտ՝ տոկոսների ձևով: Բայց, քանի որ կապիտալի տերերը հաճախ նաև ընկերությունների սեփականատերեր են, ապա իրենց հերթին վճարում են զուտ տոկոս:

Այսպիսով, քանակական տեսքով այդ փոխհարաբերությունները գնահատելու միջոցով կարելի է անցում կատարել և ԱԵ ցուցանիշից հաշվարկել տվյալ երկրի տնային տնտեսությունների անձնական եկամուտը:

Անձնական
եկամուտը = Ազգային եկամուտ
- Տնտեսավարող սուբյեկտների շահույթ
- Սոցիալական ապահովագրության
անդամավճարներ
- Զուտ տոկոս

+ Շահութաբաժիններ
+ Բնակչությանը պետության կողմից տրված անհատույց վճարումներ
+ Տոկոսների ձևով ստացված անձնական եկամուտ:

Անձնական տնօրինվող եկամուտը (ԱՏԵ) անձնական եկամտի և բնակչության կողմից պետությանը վճարվող հարկային և ոչ հարկային վճարումների տարբերությունն է:

Այսպիսով, ներկայացրեցինք մակրոտնտեսական արդյունքային ցուցանիշները, որոնք հաշվարկվում են ՀՆԱ-ի միջոցով: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ՀՆԱ ցուցանիշը արտահայտվում է տարբեր գներով և մոտեցումներով:

Ուստի տարբերում ենք *անվանական և իրական, փաստացի և ներուժային* ՀՆԱ ծավալի ցուցանիշներ:

Անվանական ՀՆԱ-ն տվյալ տարում արտադրված ապրանքների ու մատուցված ծառայությունների շուկայական արժեքն է՝ արտահայտված տվյալ տարվա գործող միջին գներով: Պարզվում է, որ այդ ծավալը կարող է մեծանալ ինչպես ապրանքների քանակի ավելացման, այնպես էլ դրանց գների բարձրացման դեպքում, որը մեզ հնարավորություն չի տալիս դիտարկել ՀՆԱ իրական աճը:

Իրական ՀՆԱ-ն այն ապրանքների ու ծառայությունների ամբողջությունն է, որոնք արտադրվել են երկրում: ՀՆԱ-ն հաշվարկելու համար այդ ապրանքները և ծառայությունները հաշվարկում ենք այն տարվա գներով, որի հետ համեմատում ենք: Իրականում դա տնտեսագետի պատկերացումն է ՀՆԱ ֆիզիկական բովանդակության ավելացման մասին, քանի որ ոչ մի սպառող, որը գնում է պաղպաղակ կամ խնձոր, երբեք չի մտածում, որ երեք տարի առաջ դրանք բոլորովին այլ գին ունեին: Ուստի իրական ՀՆԱ-ն միայն վերլուծական բովանդակություն և էություն ունի և թույլ է տալիս համեմատել տարբեր տարիների ՀՆԱ արտադրության ծավալները:

Փաստացի ՀՆԱ-ն առանձին տարիներին ստեղծված ապրանքների ու ծառայությունների շուկայական արժեքն է՝ միասնական համադրելի գներով արտահայտած: Եթե դիտարկում ենք ՀՆԱ աճն անցած, ասենք՝ 10 տարիների ընթացքում, ապա դրանք բոլորը պետք է արտահայտված լինեն միևնույն (որևէ տարվա) գներով: Փաստացի ՀՆԱ աճի տեմպերը կարող են խիստ տատանվել՝ բարձրանալ, իջնել, նույնիսկ՝ դառնալ բացասական, երբ դրա արտադրության իրական ծավալը անցյալ տարվա համեմատությամբ կրճատվում է: Ուստի տնտեսական վերլուծություններում օգտագործում ենք նաև ներուժային ՀՆԱ ցուցանիշը:

Ներուժային ՀՆԱ-ն այն ապրանքների ու ծառայությունների ամբողջության արժեքն է, որոնք երկիրը կարող է արտադրել իր արտադրական ռեսուրսների օգտագործման միջին լարվածության պայմաններում: Դա նշանակում է, որ փաստացի ՀՆԱ-ն տատանվում է ներուժային ՀՆԱ-ի շուրջը: Ներուժային ՀՆԱ-ի աճի տեմպերը սովորաբար

ավելի կայուն են, քանի որ արտադրական հնարավորություններն ավելանում են աշխատուժի, կապիտալի կայուն տեմպերով աճի և տեխնոլոգիական որոշակի կայուն առաջադիմության պայմաններում: Փաստացի ՀՆԱ արտադրության տատանումները տնտեսական պարբերաշրջանների առկայության արդյունք են, որը բնորոշ է շուկայական ինքնակարգավորվող տնտեսական համակարգին:

<h2>2.6. Կենսամակարդակի ցուցանիշները և դրանց հաշվարկման կարգը</h2>

Երկրի տնտեսական զարգացման ընդհանուր նպատակը բնակչության բարեկեցության աճն է: Բարեկեցության աճն արտահայտվում է կենսամակարդակի բարձրացմամբ: Բնակչության կենսամակարդակը արտահայտում է այն ապրանքների ու ծառայությունների ամբողջությունը, որոնք ձեռք են բերվում յուրաքանչյուր բնակչի կողմից:

Այն արտահայտելու համար տվյալ երկրի ՀՆԱ-ն կամ ազգային եկամուտը հարաբերում ենք երկրի բնակչության թվին: Մեկ բնակչի հաշվով արտադրված ՀՆԱ կամ ազգային եկամտի ծավալի հաշվարկումը թույլ են տալիս համեմատել տարբեր երկրների բնակչության կենսամակարդակները: Սակայն այդ ցուցանիշները հաշվարկվում են տվյալ տարվա գործող գներով և չեն արտահայտում երկրի բնակչության կենսամակարդակի դինամիկան: Այսպես, եթե մեկ բնակչի եկամուտները ՀՀ-ում 1995թ. կազմել են 70.3 հազար դրամ, իսկ 1999թ.՝ 245 հազար դրամ, ապա դա չի նշանակում, որ բնակչության կենսամակարդակը այդ 4 տարում ավելացել է 6.5 անգամ: Հարցն այն է, որ 1999թ. հազար դրամով մի քանի անգամ ավելի քիչ ապրանքներ ու ծառայություններ են ձեռք բերվում, քան 1995թ.: Այդ հակասությունը լուծելու համար հաշվարկվում է ապրանքների և ծառայությունների գների ինդեքսը: Սակայն յուրաքանչյուր երկրում թողարկվում են ապրանքների հազարավոր տեսակներ: Ուստի նպատակահարմար է հաշվարկել սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ): Մարդկանց կողմից սպառվող ապրանքների մի մասը որոշակիորեն կայուն է և մշտապես ընդգրկվում է սպառողական զամբյուղում:

Սպառողական զամբյուղը ընդգրկում է առաջին անհրաժեշտության այն ապրանքները և ծառայությունները, որոնք բավարարում են մարդու բնականոն կենսագործունեությունը: Դրանք հաշվարկվում են մեկ բնակչի համար և արտահայտում են մարդու կենսաբանական պահանջմունքները: Ուստի յուրաքանչյուր երկրում սպառողական զամբյուղը ընդգրկում է ապրանքների ու ծառայությունների այն տեսականին, որը բնորոշ է տվյալ երկրի բնակչությանը՝ կախված բնակլիմայական պայմաններից, ազգային առանձնահատկություններից և երկրի տնտեսական զարգացման մակարդակից:

Սպառողական զամբյուղի ձեռքբերման համար կատարվող ծախսերն աճում են և ցույց են տալիս սպառողական գների ինդեքսի փոփոխությունը: Հետևաբար, եթե սպառողական զամբյուղի մեջ մտնող ապրանքների և ծառայությունների տարեկան սպառման ծավալը հաշվարկվում է տվյալ տարվա և նախորդ տարվա գներով, ապա դրանց հարաբերությունը ցույց է տալիս գների փոփոխությունը մեկ տարում: Այդ փոփոխությունը (ինդեքսը) հաշվարկելու ժամանակ ընդունվում է սպառողական զամբյուղի կայուն կազմ:

Այսպես, եթե սպառողական զամբյուղի ապրանքների քանակը բազային տարում նշանակենք q-ով, այդ ապրանքների ընթացիկ գները P_1-ով, իսկ բազային գները՝ P_0 –ով, ապա սպառողական գների ինդեքսը հաշվարկվում է ՍԳԻ<img src="images/nk261.bmp">$=\frac{\sum q_0 P_1}{\sum q_0 P_0}$ բանաձևով, որտեղ՝ Σ-ն գումարի նշանն է, այսինքն՝ բոլոր ապրանքները բազմապատկվում են իրենց գներով և գումարվում են իրար:

ՍԳԻ-ն գների փոփոխության միակ ցուցանիշը չէ: Գների փոփոխությունը հաճախ հաշվարկվում է ապրանքների և ծառայությունների հիմնական խմբերի համար: Օրինակ, ՀՀ-ում արդյունաբերական ապրանքների գները 1995-1999թթ. աճել են 20, պարենային ապրանքների գները՝ 50 տոկոսով, ծառայությունների գները՝ 5 անգամ: Այդ հաշվարկները նույնպես չեն ընդհանրացնում ապրանքների գների փոփոխությունը, քանի որ չեն ընդգրկում ֆիրմաների, ընկերությունների կողմից ձեռք բերվող այն ապրանքների գները, որոնք հետագա վերամշակման են ենթարկվում:

Գների փոփոխության այդպիսի ընդհանրական ցուցանիշ է *ՀՆԱ-ի դեֆլյատորը:*

ՀՆԱ դեֆլյատորը արտահայտում է ապրանքների ու ծառայությունների այն ամբողջության գների փոփոխությունը, որոնց արժեքը ընդգրկվում է ՀՆԱ կազմում: Փաստորեն, դեֆլյատորը արտահայտում է անվանական և իրական ծավալների հարաբերությունը:

ՀՆԱ դեֆլյատորը =

Եթե փորձենք հաշվարկել ապրանքների բոլոր տեսակների գների փոփոխությունը, ապա.

ՀՆԱ դեֆլյատորը $=\frac{\sum P_1 q_1}{\sum P_0 q_1}$,

որտեղ՝ q_1 –ը ընթացիկ տարում արտադրված ապրանքների քանակն է: Ինչպես տեսնում ենք, ՀՆԱ դեֆլյատորը և ՍԳԻ-ն գների ընդհանուր մակարդակի փոփոխության մասին տալիս են տարբեր տեղեկատվություն: Այդ տարբերությունները ձևավորվում են երեք պատճառներով: Նախ՝ ՀՆԱ դեֆլյատորն արտահայտում է տվյալ տարում երկրում ար-

տադրված բոլոր ապրանքների և կատարված ծառայությունների գների, իսկ ՍԳԻ-ն՝ միայն սպառողների կողմից ձեռք բերված որոշակի անվանացանկի ապրանքների և ծառայությունների գների փոփոխությունը:

Երկրորդ՝ ՀՆԱ դեֆլյատորն արտահայտում է միայն տվյալ երկրում արտադրված և կատարված ծառայությունների գների փոփոխությունը, մինչդեռ ՍԳԻ-ն ընդգրկում է նաև այնպիսի ապրանքների գների փոփոխությունը, որոնք արտադրվել են այլ երկրներում և սպառվել տվյալ երկրում:

Երրորդ՝ ՍԳԻ-ն հաշվարկվում է ապրանքների և ծառայությունների անփոփոխ հավաքածուի համար: ՀՆԱ դեֆլյատորն արտացոլում է տվյալ տարում արտադրված ապրանքների և կատարված ծառայությունների գների փոփոխությունը: Դա նշանակում է, որ ինդեքսների հաշվարկման ժամանակ որպես կշիռներ հանդես եկող ապրանքների տեսականին կայուն է ՍԳԻ-ի համար և փոփոխուն՝ դեֆլյատորի համար: Ապրանքների անփոփոխ կազմով ինդեքսն անվանում են նաև Լասպեյրեսի ինդեքս, իսկ փոփոխվող կազմի ինդեքսը, այսինքն՝ ՀՆԱ դեֆլյատորը, նաև Պաաշեի ինդեքս: Նշված երեք հանգամանքները զգալի տարբերություն են առաջացնում այդ երկու ցուցանիշների փաստացի մակարդակների միջև, որը տնտեսագիտության վիճահարույց հարցերից է:

Դրանց տարբերությունը կարող է մեծ լինել, երբ տվյալ երկրում արտադրվող ապրանքների տեսականին փոփոխվում է, երբ սպառման կառուցվածքում մեծանում է ներմուծվող ապրանքների տեսակարար կշիռը, երբ կտրուկ բարձրանում են արտահանվող ապրանքների գները: Ընդհանուր առմամբ, գների փոփոխությունը նպատակահարմար է գնահատել ՀՆԱ դեֆլյատորի միջոցով, եթե ցանկանում ենք արտահայտել իրական տնտեսական աճը և նպատակահարմար՝ ՍԳԻ-ի միջոցով, եթե արտահայտում ենք բնակչության կենսամակարդակի փոփոխությունը:

Սովորաբար ինֆլյացիայի տեմպերի գնահատումը կատարվում է ՍԳԻ-ի միջոցով՝ նկատի ունենալով, որ ինֆլյացիան առաջին հերթին ազդում է բնակչության կենսամակարդակի վրա:

<h2>2.7. Գործազրկությունը և դրա մակարդակի հաշվարկումը: Օուկենի օրենքը</h2>

Երկրի մակրոտնտեսական իրավիճակի գնահատման ցուցանիշներից մեկը բնակչության զբաղվածության աստիճանն է: Բնակչության զբաղվածությունը վերաբերում է աշխատուժի մեջ ընդգրկվող բնակչությանը: Բնակչության մի մասը չի ընդգրկվում երկրի աշխատուժի կազմում (դեռահասներ, սովորողներ, կենսաթոշակառուներ), մյուս մասը հանդիսանում է աշխատուժը:

Աշխատուժն իր հերթին բաժանվում է տնտեսության մեջ զբաղվածների և գործազուրկների: Գործազրկության մակարդակը հաշվարկվում է գործազուրկների թիվը բաժանելով զբաղվածների և գործազուրկների

թվերի գումարի վրա՝ արտահայտված տոկոսներով: Գործազրկության մակարդակը տատանվում է. տնտեսության վերելքի տարիներին կրճատվում է, իսկ անկման տարիներին՝ ավելանում: Սակայն շուկայական տնտեսություն ունեցող բոլոր երկրներում գործազրկության որոշ մակարդակ մշտապես գոյություն ունի: Ուստի այն մակարդակը, որի շուրջը տատանվում են գործազրկության ցուցանիշները, անվանում են *գործազրկության բնական մակարդակ*:

Սովորաբար գործազուրկ է համարվում այն մարդը, որը չի աշխատում՝ սպասելով նոր աշխատանքի, ժամանակավորապես ազատվում է կամ փնտրում է աշխատանք: Այն մարդիկ, ովքեր աշխատել չեն ցանկանում, չեն ընդգրկվում աշխատուժի կազմում: Դա ազդում է բնակչության զբաղվածության տոկոսի վրա, քանի որ այն որոշվում է երկու ցուցանիշների միջոցով՝ աշխատուժի բաժինը բնակչության թվի մեջ և գործազուրկների տեսակարար կշիռը աշխատուժի մեջ: Դրանցից որևէ մեկի մակարդակի իջեցման դեպքում բնակչության զբաղվածության աստիճանը իջնում է: Իսկ դա խիստ կարևոր է երկրի տնտեսության զարգացման համար, քանի որ գործազրկության կրճատման դեպքում տնտեսական աճի տեմպերը բարձրանում են:

Տնտեսական աճի տեմպերի և գործազրկության մակարդակի միջև գոյություն ունեցող փոխադարձ կապի ուսումնասիրությամբ զբաղվել է տնտեսագետ Արթուր Օուկենը: Նա պարզել է ԱՄՆ տնտեսության համար այդ երկու ցուցանիշների քանակական կապը, որ փորձնական եղանակով ապացուցում է իր ճշմարտացիությունը: Ըստ Օուկենի՝ ՀՆԱ աճի տեմպերն արագանում են գործազրկության մակարդակի՝ իր բնական մակարդակից իջնելու և դանդաղում են գործազրկության մակարդակի աճի դեպքում:

ՀՆԱ իրական ծավալի փոփոխությունը տոկոսներով հաշվարկվում է 3% - 2 (Ս - Ս^{ո}) տեսքով, որտեղ՝ Ս-ն գործազրկության փաստացի մակարդակն է՝ արտահայտված տոկոսով, իսկ Ս^{ո}–ը՝ գործազրկության բնական մակարդակն է՝ արտահայտված տոկոսով: Ըստ բանաձևի՝ գործազրկության մակարդակի անփոփոխ լինելու պայմաններում, այլ գործոնների ազդեցությամբ, ՀՆԱ-ն աճում է 3%-ով, իսկ գործազրկության մակարդակի 1% փոփոխությունը դրա վրա ազդում է 2 տոկոսով:

Ամփոփում

1. Մակրոտնտեսական վերլուծություններ կատարվել են Ֆ. Քենեի, Ջ. Միլի, Կ. Մարքսի կողմից, սակայն մակրոէկոնոմիկայի՝ որպես գիտության ծագումը կապվում է Ջ. Մ. Քեյնսի «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսությունը» աշխատության հետ (1936թ.):

2. Տնտեսական միտքը վերջին 50 տարիների ընթացքում հիմնականում ուսումնասիրում է մակրոտնտեսական երևույթները և մակրոտնտեսական կարգավորման սկզբունքները, մեթոդները, վերլուծության ուղղությունները կատարելագործելու նպատակ է հետապնդում:

3. Տնտեսության մակրոտնտեսական կարգավորման գործընթացում գիտության ընդհանուր և մակրոտնտեսական վերլուծության առանձնահատուկ մեթոդների օգտագործումը բացատրվում է տնտեսական համակարգի վրա ազդող գործոնների բազմությամբ և դրանց առանձնահատկություններով:

4. Տնտեսական մոդելները տնտեսական երևույթների, գործընթացների քանակական կապերի գնահատման հիման վրա դրանց հետագա փոփոխությունը կանխատեսելու միջոց են, սակայն տնտեսական երևույթի էությունը և բովանդակությունը ոչ մի մոդելով ամբողջությամբ արտահայտել հնարավոր չէ:

5. Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) հաշվարկման երեք եղանակների դեպքում ստացվում է նույն ծավալի ցուցանիշ: Եթե դրանք իրարից տարբերվում են, ապա տարբերությունը պետք է համարել վիճակագրական շեղում:

6. Բնակչության կենսամակարդակի փոփոխության գնահատման հիմնական ցուցանիշը սպառողական գների ինդեքսն է (ՍԳԻ), քանի որ արտահայտում է սպառողական զամբյուղի ձեռքբերման համար անհրաժեշտ փողի քանակության ավելացումը:

7. Երկրում ապրանքների գների փոփոխությունը գնահատվում է ՀՆԱ դեֆլյատորի ցուցանիշով, քանի որ այն արտահայտում է ինչպես սպառման առարկաների, այնպես էլ արտադրական սպառման համար օգտագործվող արտադրանքի գների փոփոխությունը:

8. Գործազրկության մակարդակի և տնտեսական աճի միջև գոյություն ունեցող քանակական կապը տարբեր երկրներում կարող է հանդես գալ տարբեր քանակական հարաբերությամբ, և ըստ Ա. Օուկենի՝ հաշվարկումը վերաբերում է միայն ԱՄՆ-ին:

Թեստեր և խնդիրներ

1. Հետևյալ բոլոր ցուցանիշները մակրոտնտեսական են, բացառությամբ.

ա. ամբողջական եկամտի,
բ. սպառողական գների ինդեքսի,
գ. գործազրկության մակարդակի,
դ. մեքենաշինական գործարանի արտադրանքի քանակի:

2. Նշվածները հոսք են, բացառությամբ.

ա. զուտ ներդրումների,
բ. պետական պարտքի,
գ. բյուջեի պակասուրդի,
դ. աշխատանքը կորցրած մարդկանց թվի:

3. ՀՆԱ-ն.

ա. որոշակի ժամանակահատվածում արտադրված ապրանքների և մատուցված ծառայությունների ամբողջական շուկայական արժեքն է,
բ. սպառման, ներդրումների, պետական գնումների և զուտ արտահանման գումարը,
գ. և՛ ամբողջական եկամուտը, և՛ ամբողջական ծախսերը,
դ. բոլոր տարբերակները ճիշտ են:

4. Տնտեսության եկամուտը ճշգրտորեն հավասար է.

ա. վերջնական ապրանքների և ծառայությունների արտադրության վրա կատարվող ամբողջական ծախսերին,
բ. ամբողջական սպառողական ծախսերին,
գ. ամբողջական ներդրումային ծախսերին,
դ. սպառողական և պետական ծախսերի գումարին:

5. Ֆերմերը արտադրել է 1 կգ հացահատիկ և 100 դրամով հանձնել ալրաղացին, ալրաղացը դրանից ստացված ալյուրը 180 դրամով վաճառել է հացթուխին: Հացթուխը դրանից թխված ամբողջ հացը վաճառել է 420 դրամով: Այս գործողությունների արդյունքում ՀՆԱ-ն.

ա. կմնա նույնը,
բ. կավելանա 420 դրամով,
գ. կավելանա 140 դրամով,
դ. կավելանա 700 դրամով:

6. Օուկենի օրենքի համաձայն՝ եթե գործազրկության մակարդակը մեկ տարվա ընթացքում աճում է 1%-ով, ապա իրական ՀՆԱ-ն.

ա. ավելանում է 3%-ով,
բ. կրճատվում է 2.5%-ով,
գ. ավելանում է 1%-ով,
դ. անփոփոխ է մնում:

Հիմնական հասկացություններ

Տնտեսության պետական կարգավորում
Տնտեսական իրավիճակի վերլուծություն
Նպատակների վերլուծություն
Շահերի համապատասխանեցման վերլուծություն
Գործիքների կիրառելիության վերլուծություն
Համակարգային վերլուծություն
Դինամիկ հետազոտություն
Հաշվեկշռային մեթոդ
Նորմատիվային մեթոդ
Ծրագրանպատակային մեթոդ
Պաշարներ և հոսքեր
Տնտեսական մոդելներ
Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)
Համախառն ազգային արդյունք (ՀԱԱ)
Զուտ ազգային արդյունք (ԶԱԱ)
Ազգային եկամուտ (ԱԵ)
Անձնական եկամուտ
Անձնական տնօրինվող եկամուտ
Սպառողական գների ինդեքս (ՍԳԻ)
ՀՆԱ դեֆլյատոր
Գործազրկության բնական մակարդակ
Օուկենի օրենք

Հարցեր կրկնության համար

1. Կարող էր արդյոք մակրոտնտեսական կարգավորումը ձևավորվել 19-րդ դարում:
2. Մակրոտնտեսական վերլուծության ուղղություններից որո՞նք են համարվում հիմնականը:
3. Ինչո՞ւ են մակրոտնտեսական կարգավորման գործընթացում օգտագործվում ընդհանուր և առանձնահատուկ մեթոդներ:
4. Ի՞նչ մակրոտնտեսական ցուցանիշներ կարող եք թվարկել որպես հոսքեր և որպես պաշարներ:
5. Ինչպիսի՞ն պետք է լինեն մակրոտնտեսական ցուցանիշները:
6. Թվարկեք մակրոտնտեսական ծավալային ցուցանիշները:
7. Ազգային եկամուտը հասարակության անդամների վերջնական եկամուտների ի՞նչ տարրերից է բաղկացած:
8. Ի՞նչ ցուցանիշներով է նպատակահարմար գնահատել բնակչության կենսամակարդակի փոփոխությունը:
9. Ինչպե՞ս է ձևավորվում գործազրկության բնական մակարդակը:
10. Ի՞նչ մեծությունների միջև է կապ հաստատում Օուկենի օրենքը:

ԳԼՈՒԽ 3

ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ,ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Այս գլխում կդիտարկվեն հետևյալ հարցերը.

- Որո՞նք են օրենսդիր և գործադիր մարմինների գործունեության հիմնական ոլորտները:
- Ո՞ր մարմինների կողմից են լուծվում տնտեսության պետական կարգավորման հարցերը:
- Որո՞նք են ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության տնտեսության պետական կարգավորման գործառույթները:
- Ինչպիսի՞ գործառույթներ են իրականացնում ճյուղային նախարարությունները տնտեսության պետական կարգավորման գործում:
- Որո՞նք են կառավարման տարածքային մարմինների գործառույթները տնտեսության պետական կարգավորման բնագավառում:

3.1. ՀՀ կառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքը

Հայաստանի Հանրապետությունը նախագահական կառավարման երկիր է: Դա նշանակում է, որ ՀՀ բնակչության կողմից ընտրվող նախագահը զուգակցում է օրենսդրական և գործադիր գործառույթները: ՀՀ օրենսդրական մարմինը ՀՀ Ազգային ժողովն է, ՀՀ գործադիր կառավարման մարմինը ՀՀ կառավարությունն է:

ՀՀ օրենսդրական և գործադիր մարմինների գործառույթները կարգավորվում են ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի մասին ՀՀ օրենքներով, ՀՀ նախագահի հրամանագրերով և ՀՀ Ազգային ժողովի որոշումներով:

ՀՀ տնտեսության կառավարման և պետական կարգավորման գործառույթներ իրականացնող մարմինները կարելի է խմբավորել.

- տնտեսության կարգավորման հանրապետական մարմիններ,
- տնտեսության կարգավորման ճյուղային գերատեսչական մարմիններ,

♦ տնտեսության կարգավորման տարածքային մարմիններ:

Տնտեսության կարգավորման հանրապետական մարմինները

Տնտեսության կարգավորման ընդհանուր հանրապետական գործառույթներ իրականացնում են ՀՀ նախագահը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ կառավարությունը, որոնք գործում են ՀՀ սահմանադրության հիման վրա և իրականացնում են օրենսդրական և գործադիր նախաձեռնության փոխհամաձայնեցում: Դիտարկենք դրանց գործառույթները ՀՀ տնտեսության կարգավորման բնագավառում:

ՀՀ նախագահի գործառույթները

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունը երկրի ներսում ու միջազգային հարաբերություններում և հրապարակելով ՀՀ օրենքները՝ ՀՀ նախագահը անմիջականորեն մասնակցում է երկրի ներքին և արտաքին տնտեսական հարաբերությունների կարգավորմանը, երկրի և ժողովրդի առջև պատասխանատվություն է կրում տնտեսական իրավիճակի բարելավման հարցերում:

Նշանակելով և ազատելով ՀՀ վարչապետին, Կառավարության անդամներին, ՀՀ նախագահը զուգակցում է օրենսդրական և գործադիր գործառույթները, քանի որ իրավունք ունի ղեկավարելու ՀՀ կառավարության գործունեությունը՝ նախագահելով Կառավարության նիստերին, իսկ Կառավարության նշանակումը օրենսդրական նախաձեռնություն է:

ՀՀ նախագահը իրականացնում է արտաքին հարաբերությունների ընդհանուր ղեկավարումը: Հանրապետության արտաքին տնտեսական հարաբերություններ իրականացնում են ինչպես ՀՀ կառավարությունը, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտները, սակայն դրանց կարգավորման խնդիրները լուծվում են այն կադրերի, դիվանագիտական աշխատողների աջակցությամբ, որոնց նշանակում է ՀՀ նախագահը:

ՀՀ նախագահի գործառույթները բազմազան են նաև երկրի պաշտպանության գործում. նա զինված ուժերի գլխավոր հրամանատարն է, պատասխանատուն՝ քաղաքացիների պաշտպանության, անվտանգության ապահովման, արտակարգ իրավիճակներում որոշումների ընդունման, արտերկրի հայության շահերի պաշտպանության և այլ հարցերում:

ՀՀ նախագահի գործառույթները վերաբերում են նաև դատական մարմինների ձևավորմանը, դատախազական պաշտոնների նշանակմանը և ազատմանը: Փաստորեն, նախագահը կարգավորում է հանրապետության ամբողջ դատահիրավական համակարգը:

Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները բխում են ՀՀ սահմանադրությունից և ենթակա են կատարման հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ Ազգային ժողովը

ՀՀ Ազգային ժողովը գործում է ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ Ազգային ժողովի մասին օրենքին և իր կանոնակարգին համապատասխան: ՀՀ Ազգային ժողովում գործում են 6 մշտական հանձնաժողովներ, որոնք

քննարկում են ՀՀ օրենքների նախագծերը: ՀՀ ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնությամբ կարող են հանդես գալ պատգամավորները և Կառավարությունը:

Տնտեսության կառավարման գործունեության բնագավառում ԱԺ հիմնական գործառույթը ՀՀ պետական բյուջեի հաստատումն է: Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի հոդվածների համամասնականությամբ:

Պետական բյուջեի կատարումը, եկամուտների և ծախսերի համապատասխանությունը սահմանված բյուջեի հոդվածներին վերահսկում է Ազգային ժողովը:

Տնտեսության կարգավորման բնագավառում ԱԺ գործառույթներն են նաև տնտեսության տարբեր բնագավառների մասին տեղեկատվություն ապահովելը, Կառավարությանը անվստահություն հայտնելը, ՀՀ կենտրոնական բանկի նախագահ նշանակելը, Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահ նշանակելը:

ՀՀ ԱԺ գործառույթներում, ըստ ՀՀ սահմանադրության, չեն ներառված սոցիալ-տնտեսական զարգացման ընթացիկ և հեռանկարային ծրագրերի քննարկումը և հաստատումը (կատարվում է Կառավարության կողմից): Սակայն յուրաքանչյուր նոր վարչապետի նշանակման ժամանակ Ազգային ժողովը քննարկում է վարչապետի գործունեության ռազմավարական ծրագիրը և հավանություն տալու դեպքում հաստատում է վարչապետին:

ՀՀ կառավարությունը

ՀՀ կառավարությունը տնտեսության կարգավորման գերագույն գործադիր մարմինն է, որը կազմված է վարչապետից և նախարարներից: Կառավարության լիազորությունները սահմանված են ՀՀ սահմանադրությամբ, իսկ կառուցվածքը և գործունեության կարգը՝ ՀՀ նախագահի հրամանագրով: ՀՀ կառավարության կազմը բազմիցս փոփոխվել է 1991-2004թթ., քանի որ մի շարք նախարարություններ միավորվել են, հետագայում՝ բաժանվել: Վերջին Կառավարության (որը ձևավորվել է 2004թ. մարտի 16 -ին՝ ՀՀ նախագահի հրամանագրով) կազմում ձևավորվեցին 14 նախարարություններ և երկու նախարարներ՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեության համակարգման ու Կառավարության աշխատակազմի ղեկավարման գծով, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական ծառայություններ, կոմիտեներ, վարչություններ:

ՀՀ կառավարության՝ տնտեսության պետական կարգավորման գործառույթները սահմանված են ՀՀ սահմանադրության 89 հոդվածով.

- Կառավարությունը իր գործունեության ծրագիրը ներկայացնում է ԱԺ հաստատմանը,
- ԱԺ հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը և ապահովում է դրա կատարումը,

- կառավարում է պետական սեփականությունը, որի համար Կառավարության կազմում ստեղծվել է պետական գույքի կառավարման վարչություն,
- իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային, հարկային քաղաքականություն,
- ապահովում է պետական քաղաքականության իրականացումը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում, որի համար ստեղծվել են համապատասխան նախարարություններ,
- ապահովում է հանրապետության պաշտպանությունը, ազգային անվտանգությունը և իրականացնում արտաքին քաղաքականություն՝ համապատասխան նախարարությունների ծառայությունների միջոցով:

Տնտեսության ամբողջական կառավարման գործընթացն առաջին հերթին վերաբերում է պետական բյուջետային համակարգի ձևավորմանը և պետական ֆինանսավորմանը, որի կատարման և նախագծի մշակման հարցերով կարող է անվստահություն հայտնվել Կառավարությանը, որի դեպքում նոր Կառավարությունը նույնպես պետք է ԱԺ հաստատմանը ներկայացնի բյուջեի նախագիծը:

3.2. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կառուցվածքը և գործառույթները

ՀՀ անկախացումից հետո տնտեսության մեջ կատարվող բարեփոխումները վերաբերում էին նաև կառավարման մարմինների վերակառուցմանը, որի արդյունքում նախկին ՀՀ պետպլանի փոխարեն ստեղծվեցին ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ արտաքին տնտեսական կապերի նախարարությունները: 1993թ. այդ երկու նախարարությունները միավորվեցին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում: Հետագայում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը միավորվեց ՀՀ ֆինանսների նախարարության հետ, ապա անջատվեց՝ որպես առանձին նախարարություն, և վերջապես, 1999թ. նոյեմբերին, ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունները նորից միավորվեցին: Նոր՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը ՀՀ կառավարության կողմից հաստատվեց 2000թ. ապրիլին: Նախարարության կենտրոնական ապարատի կառուցվածքում ստեղծվեցին 11 գլխավոր վարչություններ, գլխավոր վարչության կարգավիճակով՝ ապահովագրական տեսչություն և գործերի կառավարչություն, 14 վարչություններ և երկու բաժին (Եվրոմիության տեխնիկական օգնության կոորդինացման բաժին և հատուկ բաժին), ինչպես նաև՝ նախարարի աշխատակազմ:

Ստեղծված գլխավոր վարչությունները իրականացնում են բյուջետային գործընթացի կառավարումը, բյուջետային ծախսերի ֆինանսական

ծրագրավորումը, համակարգչային տեխնոլոգիաների սպասարկումը, հաշվապահական հաշվառումը և աուդիտի մեթոդաբանության, մակրոտնտեսական քաղաքականության, միկրոտնտեսական ծրագրերի, պետական եկամուտների քաղաքականության մշակումը, պետական մասնակցության մոնիտորինգը, ֆինանսական վերահսկողությունը և իրավաբանական ծառայությունները:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հիմնական խնդիրներն են.

- ՀՀ պետական բյուջեի նախագծեր մշակելը և դրանք ՀՀ կառավարություն ներկայացնելը,
- ՀՀ պետական բյուջեի կատարման աշխատանքների կազմակերպումը,
- ՀՀ ֆինանսատնտեսական, վարկային, հարկային, մաքսային, բյուջետային և ֆինանսական շուկայի միասնական քաղաքականության մշակման և իրականացման ապահովումը,
- ֆինանսական շուկայի մասնակիցների գործունեության կարգավորումը և լիցենզավորումը (ապահովագրական, աուդիտորական կազմակերպություններ, գրավատներ, խաղատներ),
- հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների, աուդիտի մեթոդաբանության մշակումը,
- պետական մարմինների գործունեության և եկամուտների ֆինանսական ընթացիկ վերահսկողության իրականացումը,
- տնտեսության և սոցիալական համակարգի զարգացման հեռանկարային ծրագրերի և կանխատեսումների մշակումը:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գործառույթները ամրագրված են նաև ըստ 12 հիմնական ոլորտների: Այդ ոլորտներն են.

- մակրոտնտեսական և միկրոտնտեսական քաղաքականությունը,
- պետական եկամուտների քաղաքականությունը,
- պետական բյուջեի նախագծի մշակումը,
- բյուջեի կատարումը,
- հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորումը,
- արժութային կարգավորումը,
- ապահովագրության, խաղատների, վիճակախաղերի և գրավատների գործունեության կարգավորումը,
- օտարերկրյա ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացումը,
- վճարահաշվարկային համակարգի կազմակերպումը,
- ֆինանսական վերահսկողությունը,
- տնտեսության պետական կարգավորումը և պետական սեփականության կառավարումը,
- պետության գույքային շահերի պաշտպանությունը:

Նշված բոլոր գործառույթներն ունեն տնտեսության պետական կարգավորման բնույթ, սակայն տնտեսության անմիջական կարգավորմանը

վերաբերում են մակրոտնտեսական և միկրոտնտեսական, պետական եկամուտների քաղաքականության, պետական բյուջեի նախագծի մշակման և տնտեսության պետական կարգավորման ու պետական սեփականության կառավարման ոլորտների գործառույթները:

Մակրոտնտեսական և միկրոտնտեսական քաղաքականության ոլորտում իրականացվող գործառույթները վերլուծական, հետազոտական, կազմակերպական, վերահսկողական բնույթի են և ընդգրկում են[1] .

- Միկրոտնտեսական և մակրոտնտեսական հետազոտությունների ու վերլուծությունների իրականացում:
- Միջազգային ֆինանսական համագործակցության ապահովում: Միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ տնտեսական զարգացման ծրագրերի մշակում ու կատարման ընթացքի վերահսկողություն, եթե դրանք ֆինանսավորվում են այդ կազմակերպությունների կողմից:
- ՀՀ միկրոտնտեսական և մակրոտնտեսական հիմնական նպատակային ցուցանիշների որոշում ու սահմանում, տնտեսության զարգացման մակրոտնտեսական ծրագրավորում և վերջինիս մոնիտորինգի ապահովում:
- ՀՀ-ին տրամադրվող արտաքին նպատակային փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների պայմանների և ծրագրային նպատակների ուսումնասիրություն ու վերլուծություն,
- ՀՀ դրամավարկային քաղաքականության մշակման բնագավառում ՀՀ կենտրոնական բանկի հետ համագործակցության ապահովում:
- ՀՀ տարածքային, նպատակային ծրագրերի մշակմանը մասնակցություն:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գործառույթները տնտեսության պետական կարգավորման և պետական սեփականության կառավարման ոլորտում հիմնականում կազմակերպական և վերահսկողական բնույթի են ու ընդգրկում են.

- Բանկերի և այլ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության ֆինանսական արդյունքների հաշվառում և դրանց բաշխման վերահսկողություն:
- ՀՀ առևտրային կազմակերպություններում պետական մասնակցի (բաժնետիրոջ) լիազորությունների իրականացում:
- Պետական սեփականություն հանդիսացող թանկարժեք քարերի ու մետաղների պահուստների կառավարում:
- Պետականացված և պետության կողմից բռնագանձված գույքի իրացման աշխատանքների ընթացիկ վերահսկողություն:
- ՀՀ-ին տրամադրվող ապրանքային վարկերի ու նվիրատվությունների հաշվառում և դրանց իրացման կազմակերպում:

[1] Գործառույթները ներկայացված են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կանոնադրության մեջ նշված հաջորդականությամբ:

- Որոշակի արտադրանքների և ծառայությունների սակագների հաստատում:
- Տնտեսության արտադրական և ոչ արտադրական ոլորտներում պետական սեփականության մասնավորեցման հայեցակարգի ու ճյուղային քաղաքականության մշակմանը մասնակցություն:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն ունի տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, որն իրականացնում է ֆինանսների և էկոնոմիկայի բնագավառների կիրառական ու գործնական հիմնահարցերի տնտեսագիտական վերլուծություններ:

3.3. ՀՀ ճյուղային նախարարությունների և գերատեսչությունների գործառույթները

ՀՀ կառավարության կազմում ճյուղային նախարարություններ ստեղծվել են արդյունաբերության և առևտրի, գյուղատնտեսության, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, արտադրական գործունեություն իրականացնող ճյուղերի և ոչ արտադրական ճյուղերի՝ կրթության և գիտության, առողջապահության, ինչպես նաև՝ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի կառավարման համար: Մյուս բոլոր նախարարությունները ՀՀ տարածքում ընդհանուր ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդիրներ իրականացնելու նպատակ ունեն (ազգային անվտանգություն, արդարադատություն, արտաքին և ներքին գործեր, պաշտպանություն, սոցիալական ապահովություն, պետական գույքի կառավարում) և տնտեսության պետական կարգավորման համակարգին չեն դասվում, քանի որ իրենց բնագավառում իրականացնում են ուղղակի պետական կառավարման գործառույթ:

Ճյուղային նախարարությունների կառուցվածքները միմյանցից տարբերվում են իրենց ապարատում ստեղծված վարչությունների թվով, որոնց նպատակը տվյալ նախարարության առանձին գործառույթների իրականացումն է: Այսպես, 2000թ. ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարությունում գոյություն ուներ մեկ գլխավոր վարչություն, 23 վարչություն և մեկ բաժին, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում՝ 15, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում՝ 3, ՀՀ էներգետիկայի նախարարությունում՝ 10 վարչություններ: Բոլոր ճյուղային նախարարությունների կառուցվածքում ընդհանուրը վարչությունների կազմակերպատնտեսական, ֆինանսատնտեսական, իրավաբանական, ներդրումային քաղաքականության, միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքների կազմակերպման և համակարգման, մասնավորեցման, լիցենզավորման, գիտության և գիտատեխնիկական առաջադիմության, արտաքին տնտեսական քաղաքականության, արտադրական ենթակառուցվածքների հետ աշխատանքների համակարգման գործառույթներն են: Իհարկե, ճյուղային նախարարությունների նշված վարչությունները հաճախ տարբեր անվանումներ ունեն, սակայն դրանց հիմնական գործա-

ռույթները նույնն են: Այսպես, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում գոյություն ունի օրենսդրական և իրավաբանական վարչություն, մյուս նախարարություններում՝ իրավաբանական վարչություն, սակայն դրանց գործառույթները հիմնականում նույնն են՝ տվյալ ճյուղի գործունեությանը վերաբերող ՀՀ օրենքների, օրենսդրական ակտերի նախագծերի մշակում, ՀՀ այլ նախարարությունների, գերատեսչությունների, կառավարման տարածքային մարմինների կողմից մշակվող և իրենց ճյուղերի գործունեությանը վերաբերող իրավական ակտերի քննարկման աշխատանքներ: Այդ քննարկումները հնարավորություն են տալիս համապատասխանեցնելու այլ կազմակերպությունների մշակած իրավական ակտերի պահանջները տվյալ ճյուղի զարգացման խնդիրներին:

Ճյուղային նախարարությունների մյուս վարչությունների գործառույթները խիստ սահմանազատված են ըստ տվյալ ճյուղի առանձին բնագավառների: Օրինակ, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում այդպիսին են ակնագործության, ոսկեգործության և գեղարվեստական իրերի արտադրության վարչությունը, թեթև և փայտամշակման արդյունաբերության վարչությունը, հանքարդյունաբերության և շինանյութերի արդյունաբերության վարչությունը :

Եթե գործունեության բնագավառների առումով նախարարությունների գործառույթները տարբերվում են, ապա ընդհանուրն այն է, որ բոլոր ճյուղային նախարարություններն անմիջական կառավարում կարող են իրականացնել միայն պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների նկատմամբ՝ ապահովելով դրանց տնտեսական ինքնուրույնությունը ձեռնարկատիրության զարգացման բնագավառում:

Ճյուղային նախարարությունների խնդիրները վերաբերում են տնտեսության տվյալ բնագավառին.

- նպաստել մրցունակությանը և շուկայական մրցակցային դաշտին,
- տնտեսության այդ ճյուղը համաշխարհային տնտեսության մեջ ներգրավելուն,
- տնտեսության այդ ճյուղում ներդրումների ավելացմանը,
- տնտեսության այդ ճյուղում գիտատեխնիկական նվաճումների ներդրմանը,
- պաշտպանել տնտեսության այդ ճյուղի արտադրանքի և ծառայությունների սպառողների շահերը,
- մեծացնել տնտեսության այդ ճյուղի դերը ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում:

Ինչպես տեսնում ենք, ճյուղային նախարարությունները իրականացնում են տվյալ ճյուղի բազմակողմանի զարգացմանը նպաստելու քաղաքականություն և անմիջաբար չեն միջամտում տվյալ ճյուղի տնտեսավարող սուբյեկտների՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացման գործընթացին:

Ուստի, ճյուղային նախարարությունների գործառույթները սահմանափակվում են հիմնականում հետևյալ շրջանակներում.

- մշակել տվյալ ճյուղի կողմից թողարկվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների ծավալների ավելացման և իրացման խթանման ծրագրեր,
- աջակցել միջազգային կազմակերպությունների հետ տվյալ ճյուղի տնտեսավարող սուբյեկտների համագործակցությանը,
- օժանդակել տվյալ ճյուղի տնտեսավարող սուբյեկտների մրցունակության բարձրացմանը ներքին և արտաքին շուկաներում և վարել մրցունակության բարձրացման քաղաքականություն, իրագործել այդ քաղաքականությունը ցուցահանդեսների կազմակերպման միջոցով,
- նախապատրաստել և ՀՀ կառավարություն ներկայացնել տնտեսության տվյալ ճյուղի զարգացմանը նպաստող միջազգային երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի նախագծեր,
- տվյալ ճյուղի արտադրանքի, ծառայությունների սակագների կարգավորման վերաբերյալ ՀՀ կառավարությանը ներկայացնել առաջարկություններ,
- իրականացնել տվյալ ճյուղում ներդրումային ծրագրերի մշակման և իրագործման քաղաքականություն,
- ապահովել տվյալ ճյուղի արտադրանքի արտադրության և սպառման շուկաների վերաբերյալ տեղեկատվություն և իրականացնել այդ տեղեկատվության վերլուծությունը,
- մշակել տվյալ ճյուղի զարգացման հիմնական ուղղությունների ապահովման քաղաքականությունը և դրա հիման վրա կազմել համապատասխան ենթաճյուղերի ու բնագավառների զարգացման ծրագրեր,
- մշակել նոր տեխնոլոգիաների ներդրման և տվյալ ճյուղում նորամուծական քաղաքականության իրականացման հիմնական ուղղությունները,
- գիտական համաժողովների, սեմինարների կազմակերպման և տեղեկատվական այլ ձևերի միջոցով ապահովել գիտական և գիտատեխնիկական մշակումներ իրականացնող կազմակերպությունների կապը տվյալ ճյուղի տնտեսավարող սուբյեկտների հետ,
- մշակել և իրագործել տվյալ ճյուղում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ծրագրեր,
- մշակել տվյալ ճյուղի արտադրանքը սպառողների շահերի պաշտպանության քաղաքականություն և դրա իրագործման համալիր միջոցառումներ,
- կազմել տվյալ ճյուղի գործունեության վերաբերյալ ՀՀ-ում մշակվող օրենքների և օրենսդրական ակտերի նախագծերը և դրանք ներկայացնել ՀՀ կառավարություն,
- լիցենզիաներ տրամադրել տվյալ ճյուղի տնտեսավարող այն սուբյեկտներին, որոնց գործունեության համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվում է պետական հատուկ լիցենզիա (թույլտվություն):

Բացի վերը նշված ընդհանուր գործառույթներից, որոնք իրականացվում են ճյուղային բոլոր նախարարություններում, յուրաքանչյուր նախարարություն իրականացնում է նաև այլ գործառույթներ, որոնք առնչվում են տվյալ ճյուղի գործունեության առանձնահատուկ բնագավառներին: Այսպես, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համար այդպիսին է զբոսաշրջության զարգացմանն ուղղված գործունեությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում՝ կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի կազմակերպումը:

3.4. ՀՀ կենտրոնական բանկի գործառույթները և կառուցվածքը

Երկրի կենտրոնական բանկը (որոշ երկրներում՝ Ազգային բանկ, ԱՄՆ-ում՝ Ֆեդերալ պահուստային համակարգ) իր խնդիրներով ու գործառույթներով առաջնային դերակատարում ունի ամբողջ բանկային համակարգում և երկրի դրամավարկային քաղաքականության հիմնական իրագործողն է:

ՀՀ կենտրոնական բանկը (ԿԲ) ձևավորվել է ԽՍՀՄ կենտրոնական բանկի հայկական հանրապետական բանկի բազայի հիման վրա՝ հանրապետությունում սեփական փողային համակարգը (1993 թ.) մտցնելուց հետո:

Լինելով տնտեսության ինքնուրույն բնագավառի կառավարման գործունեություն իրականացող մարմին՝ ՀՀ կենտրոնական բանկը ունի որոշակի տնտեսական ինքնուրույնություն, իր գործառույթները իրականացնում է «ՀՀ ԿԲ մասին», «Բանկերի ու բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքներով և գործունեության հիմնական խնդիրների կատարման վերաբերյալ պարզաբանումներ է տալիս ՀՀ Ազգային ժողովին:

ՀՀ ԿԲ հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է, որից ելնելով սահմանվում են ԿԲ մյուս խնդիրները:

Այդ նպատակի իրագործման համար ՀՀ ԿԲ-ն՝

1. Թողարկում է շրջանառության մեջ և պահուստներում գտնվող ՀՀ դրամը, կազմակերպում է դրամաշրջանառությունը երկրում, կարգավորում է մաշված դրամանիշների փոխարինումը նորերով, որոշում է նոր դրամանիշների անհրաժեշտ տեսականին և քանակությունը, պատվիրում և կազմակերպում է դրանց տպագրությունը:
2. Տիրապետում, օգտագործում և տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները:
3. Ձևավորում և զարգացնում է գործուն վճարահաշվարկային համակարգ:
4. «ՀՀ կենտրոնական բանկի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ Կենտրոնական բանկը ՀՀ պետական բյուջեն հաստատվելուց հետո 10 օրվա ընթացքում Ազգային ժողով է

ներկայացնում դրամավարկային քաղաքականության ծրագիրը, որի մեջ արտացոլվում են նախորդ տարվա մակրոտնտեսական իրավիճակը, հարկաբյուջետային քաղաքականությունը, տնտեսության արտաքին հատվածի և ինֆլյացիայի վերլուծությունները, դրամավարկային քաղաքականության միտումները: Ներկայացվում են նաև ծրագրավորվող տարվա դրամավարկային քաղաքականության հիմնական խնդիրները և դրանց իրագործման հետ կապված ռիսկերը, ՀՀ բանկային համակարգի և վճարահաշվարկային հարաբերությունների զարգացման միտումները:

Այսպես. 2004 թվականի դրամավարկային քաղաքականության իրագործման հիմնական առանձնահատկությունները համարվեցին՝

- տարվա ընթացքում փողի բազան ընդլայնվելու է բացառապես զուտ ներքին ակտիվների հաշվին, մասնավորապես բանկերի (առևտրային) հետ ռեպո համաձայնագրերի կնքման միջոցով,
- կառավարության կողմից պետական պարտատոմսերի տեղաբաշխման հարթ ընթացքի ապահովման նպատակով առավել կդրսևորվի դրամական և հարկաբյուջետային քաղաքականությունների կոորդինացումը:

2004 թ. ծրագրում նախատեսվել է.

- բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացում,
- ֆինանսական կայունացման հետագա ամրապնդում:

ՀՀ ԿԲ-ն յուրաքանչյուր տարվա համար ՀՀ Ազգային ժողովին է ներկայացնում ֆինանսական հաշվետվությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ, որը ներառում է բանկի տարեկան հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը, դրամական միջոցների, կապիտալի շարժի մասին հաշվետվությունները:

ՀՀ ԿԲ կառուցվածքը փոփոխվում է դրամավարկային քաղաքականության խնդիրներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքը
(2004 թ. վերջի դրությամբ)



3.5. Կառավարման տարածքային մարմինները և տնտեսության մակրոտնտեսական կարգավորման բնագավառում դրանց գործառույթները

Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային միավորներ են մարզերը և համայնքները[1]: Մարզերում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում:

Մարզերը իրագործում են ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում հանրապետության գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: ՀՀ-ում ստեղծվել են 10 մարզեր՝ նախկին 37 վարչատարածքային շրջանների փոխարեն: Մարզի կարգավիճակ ունի նաև Երևան քաղաքը, ուստի Երևանի քաղաքապետը նշանակվում է ՀՀ նախագահի կողմից՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ: Համայնքները իրականացնում են տեղական ինքնակառավարում: Գյուղական և քաղաքային համայնքներում գյուղապետերը, քաղաքապետերը և համայնքի ավագանին ընտրվում են ուղղակի, իրավահավասար, փակ քվեարկությամբ: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումը իրականացվում է թաղային 12 համայնքներում՝ թաղապետերի միջոցով:

Տնտեսության պետական կարգավորման գործընթացը իրականացնում են մարզերը և համայնքները: Տարբերությունն այն է, որ մարզային կառավարման մարմինը պետական լիազորված մարմին է, և նրա գործառույթն է պետական կառավարումը: Համայնքները տեղական ինքնակառավարման մարմին են և իրենց գործունեության ընթացքում իրականացնում են պարտադիր, պատվիրակված և կամավոր լիազորություններ: Նշված լիազորությունների գծով համայնքների գործունեությունը, ըստ բնագավառների, մանրամասն ներկայացված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում[2]: Համայնքներում տնտեսության կառավարման և կարգավորման գործընթացը վերաբերում է տնտեսության ճյուղերի տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը և հանգում է միկրոտնտեսական կարգավորմանը: Իհարկե, առանձին համայնքների գործունեությունը էական ազդեցություն կարող է ունենալ ՀՀ բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացման, արտահանման ծավալի, ապրանքային շուկաներում առաջարկի ավելացման վրա: Սակայն համայնքները ՀՀ մակրոտնտեսական հիմնահարցերի լուծմանը անմիջաբար մասնակցել չեն կարող: Այդ պատճառով տնտեսության մակրոտնտեսական կարգավորման տարածքային խնդիրները պետք է դիտարկել ՀՀ մարզերի առումով:

ՀՀ մարզերը տարբերվում են իրենց տարածքով, բնակչության թվով, ռեսուրսներով և ՀՀ ՀՆԱ արտադրության ծավալում ունեցած տեսակարար կշռով:

---

[1] Տե՛ս «ՀՀ սահմանադրություն», Երևան, Մխիթար Գոշ, 1997, էջ 39:

[2] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման հիմունքներ», Երևան, 2000, էջ 348:

Աղյուսակ 3.1

ՀՀ մարզերի ընդհանուր բնութագիրը

Մարզի անվանումը	*Տարածքը (քառ.կմ)*	*Մարզի կենտրոնը*	*Համայնքների թիվը մարզում*		*Բնակչությունը 2002թ. (հազ.մարդ)*	
			քաղաք	*գյուղ*	*ընդամենը*	*այդ թվում՝ քաղաք.*
Երևան	227	Երևան	12	-	1246.1	1246.1
Արագածոտն	2753	Աշտարակ	3	111	168.1	47.0
Արարատ	2086	Արտաշատ	4	93	311.4	99.1
Արմավիր	1242	Արմավիր	3	94	323.3	123.2
Գեղարքունիք*	5348*	Գավառ	5	87	278.6	102.4
Լոռի	3789	Վանաձոր	8	105	392.3	262.7
Կոտայք	2089	Հրազդան	7	60	328.9	200.3
Շիրակ	2681	Գյումրի	3	116	361.4	242.1
Սյունիք	4506	Կապան	7	106	164.0	115.1
Վայոց ձոր	2308	Եղեգնաձոր	3	41	69.4	28.4
Տավուշ	2704	Իջևան	4	58	156.5	62.6
Ընդամենը	*29733*		*47*	*871*	*3800.0*	*2529.0*

**Գեղարքունիքի մարզի տարածքում ներառված է Սևանա լիճը:*

Այսպիսով, ըստ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի, Հայաստանում ստեղծվել է 930 համայնք, որից 47-ը՝ քաղաքային, 871-ը՝ գյուղական և 12-ը՝ թաղային համայնքներ Երևան քաղաքում:

Քաղաքային համայնքները Լոռու մարզում 8-ն են, Սյունիքի, Կոտայքի մարզերում՝ 7-ական: Քաղաքային բնակչության տեսակարար կշիռը մեծ է Լոռու, Կոտայքի և Շիրակի մարզերում: Քաղաքային և գյուղական բնակչության տեսակարար կշիռը մատնանշում է տվյալ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղվածությունը:

Մարզային կառավարման մարմինը՝ մարզպետարանը, զբաղվում է տվյալ մարզում տնտեսության ճյուղերի պետական կարգավորման խնդիրներով.

♦ մարզպետարանը ապահովում է արտադրական ենթակառուցվածքների անխափան աշխատանքը, նպաստում է մարզի տնտեսության համալիր զարգացմանը,

♦ յուրահատուկ խնդիրներ է իրականացնում գյուղատնտեսական արտադրության սպասարկման, անասունների և մշակաբույսերի զանազան հիվանդությունների դեմ պայքարի կազմակերպման գործում, նպաստում է ոռոգելի տնտեսությունների զարգացմանը,

♦ ապահովում է մարզի տարածքի բնակչության սոցիալական զարգացումը, կրթության, առողջապահության և սոցիալական մյուս բնագավառների զարգացման պետական կարգավորումը,

♦ կազմակերպում է մարզի տրանսպորտային ձեռնարկությունների գործունեությունը, տրամադրում է լիցենզիաներ՝ տրանսպորտի զանազան տեսակներով բնակչությանը սպասարկելու համար և պատասխանատվություն է կրում ավտոճանապարհների շահագործման ու վերականգնման համար,

♦ լուծում է նաև մարզի տեղական նշանակության բնական ռեսուրսների, պետական ֆոնդի հողատարածությունների օգտագործման հարցերը:

Ամփոփում

1. ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության գործառույթները տնտեսության մակրոտնտեսական կարգավորման հարցերում ոչ թե կրկնում, այլ լրացնում են միմյանց և նպատակ ունեն իրականացնել օրենսդրական և գործադիր նախաձեռնության փոխհամաձայնեցում:
2. ՀՀ մակրոտնտեսական կարգավորման բոլոր գործառույթների կոորդինացման մարմինը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն է, որն իր բոլոր գործառույթները իրականացնում է տնտեսության 12 հիմնական ոլորտներում:
3. ՀՀ ճյուղային նախարարությունների և գերատեսչությունների վերահսկողական գործառույթներն են՝ այդ ճյուղերի տնտեսավարող սուբյեկտներին գործարարության հարցում օգնություն ցուցաբերելը և տվյալ ճյուղում պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների գործունեության նկատմամբ պետական կառավարում իրականացնելը:
4. Կառավարման տարածքային մարմինները իրականացնում են ՀՀ կառավարության կողմից առաջադրվող խնդիրները առանձին տարածաշրջաններում:

Թեստեր և խնդիրներ

1. ՀՀ օրենսդրական մարմինը.
ա. Առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունն է,
բ. Սահմանադրական դատարանն է,
գ. ՀՀ կառավարությունն է,
դ. ՀՀ Ազգային ժողովն է:

2. Թվարկվածները ՀՀ տնտեսության կառավարման և պետական կարգավորման մարմինների խմբեր են, բացառությամբ.
ա. տնտեսության պետական կարգավորման տարածքային մարմինների,
բ. տնտեսության պետական կարգավորման հանրապետական մարմինների,
գ. հասարակական կազմակերպությունների,
դ. տնտեսության պետական կարգավորման ճյուղային գերատեսչական մարմինների:

3. ՀՀ նախագահի գործառույթները չեն վերաբերում.
ա. արտաքին հարաբերությունների ընդհանուր ղեկավարմանը,
բ. դատական մարմինների ձևավորմանը և կարգավորմանը,
գ. քաղաքացիների պաշտպանությանը և անվտանգության ապահովմանը,
դ. տնտեսության տարբեր բնագավառների վերաբերյալ տեղեկատվության ապահովմանը:

4. ՀՀ կառավարությունը կազմված է.
ա. նախագահից և վարչապետից,
բ. նախագահից և նախարարներից,
գ. վարչապետից և նախարարներից,
դ. նախագահից և սահմանադրական դատարանի նախագահից:

5. ՀՀ պետական բյուջեի կատարման աշխատանքները կազմակերպում է.
ա. ՀՀ պետական ծառայությունները,
բ. Ազգային ժողովը,
գ. Սահմանադրական դատարանը,
դ. Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

6. Հայաստանի Հանրապետության.
ա. մարզերում իրականացվում է տեղական ինքնակառավարում,
բ. համայնքներում իրականացվում է պետական կառավարում,
գ. և՛ մարզերում, և՛ համայնքներում իրականացվում է պետական կառավարում,
դ. մարզերում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում:

Հիմնական հասկացություններ

Մակրոտնտեսական կարգավորման գործառույթներ
Պետական կառավարման գործառույթներ
Պետական կառավարում
Տեղական ինքնակառավարում

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ տարբերություններ կան ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության՝ տնտեսության պետական կարգավորման գործառույթների միջև:
2. Ինչո՞ւ է տնտեսության պետական կարգավորման հարցում կենտրոնական դերը պատկանում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը:
3. ՀՀ հարկային պետական ծառայությունը կատարո՞ւմ է արդյոք տնտեսության պետական կարգավորման իր գործառույթները:
4. Տնտեսության պետական կարգավորման հարցում ի՞նչ տարբերություններ կան ճյուղային նախարարությունների և գերատեսչությունների գործառույթների միջև:
5. Ո՞րն է տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների տարբերությունը:

Գ Լ Ո Ւ Խ 4

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Ինչպիսի՞ն է ազգային տնտեսության բնութագիրը:
- Որո՞նք են պետության տնտեսական խնդիրները:
- Ի՞նչ է ռազմավարական պլանավորումը:
- Որո՞նք են ազգային տնտեսության զարգացման կանխատեսման հիմնահարցերը:
- Ո՞րն է ազգային տնտեսության կազմակերպման ռազմավարությունը:
- Ի՞նչ խնդիրներ են կատարում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը տնտեսության պետական կարգավորման գործում:
- Ինչպե՞ս են մշակվում և ընտրվում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը:
- Ի՞նչ ցուցանիշներ են օգտագործվում տնտեսության պետական կարգավորման մեջ, և ի՞նչ պահանջներ են ներկայացվում դրանց:

4.1. Ազգային տնտեսության բնութագիրը և զարգացման խնդիրները

Շուկայական կողմնորոշում ունեցող տնտեսությունը հիմնված է սեփականության տարբեր ձևերի վրա: Սեփականության մասնավոր ձևերի վրա հիմնված ձեռնարկությունների ամբողջությունը իրենից ներկայացնում է մասնավոր տնտեսություն: Պետական ձեռնարկությունները կազմում են տնտեսության պետական հատվածը, որի բաժինը, տնտեսության վարչահրամայական համակարգի համեմատությամբ, զգալիորեն կրճատվել է: Մասնավոր և պետական տնտեսությունների ամբողջությունը ազգային տնտեսությունն է: Հասկանալի է, որ բաց տնտեսության պայմաններում ցանկացած երկիր բազմաթիվ թելերով կապված է այլ երկրների հետ, բայց կառավարությունն առաջին հերթին կարգավորում է իր ազգային տնտեսությունը: Երկրի ազգային հանրությունը հանդես է գալիս որպես տնտեսական գործունեության ծավալման առավել փոխկապված և կազմակերպված ձև: Գոյություն ունի ազգի երկու հասկացություն՝ մարդկանց՝ պատմականորեն ձևավորված հանրություն և երկիր, պետություն:

Տնտեսագիտական մտքի պատմությունը վկայում է տնտեսագետների՝ «ազգ» հասկացության բնորոշումների փոփոխությունների մասին:

Այսպես, ըստ Դ. Ռիկարդոյի՝ ազգը աշխարհագրական տարածություն է, որն օժտված է բնական գործոններով, անհամաչափ պտղաբերությամբ հողով, որոնք բնորոշում են տնտեսական գործունեությունը: Ստյուարտ Միլը ազգը համարում է տարածաշրջան, որի ներսում արտադրության գործոնները շարժուն են, բայց դրանց շարժունությունը սահմանափակվում է պետական սահմաններով: Ֆ. Պերուի բնորոշմամբ՝ ազգը անհատների և խմբերի ամբողջություն է, որը պատկանում է պետական հարկադրանքի մենաշնորհ իրավունքով օժտված պետությանը: Ռ. Բարը սահմանել է ազգերի տնտեսական հայեցակարգը: Ըստ նրա՝ ազգը նախ, տնտեսական այնպիսի գործունեության կենտրոն է, որը տարբերվում է ըստ բնույթի (գյուղատնտեսություն, արդյունաբերություն և այլն), ըստ ծագման (անհատական, պետական և այլն), ըստ բնութագրի (կապիտալիստական, ոչ կապիտալիստական), ըստ գործունեության պայմանների (մրցակցային, մենաշնորհային և այլն): Երկրորդ, ազգը այնպիսի ուժերի կենտրոն է, որի նշանակությունն ու ազդեցությունը դուրս է գալիս աշխարհագրական և քաղաքական տարածության շրջանակներից: Երրորդ, ազգը տնտեսական, քաղաքական և հոգևոր հատկանիշներով համախմբվածություն է: Այսպիսով, ազգը ներկայացնում է աշխարհի այն բաղկացուցիչ մասը, որն օժտված է տնտեսական, աշխարհաքաղաքական և հոգևոր բնույթի առանձնահատկություններով, որոնք նրան տարբերակում են այլ ազգերից և առաջ են բերում նրանց հետ փոխադարձ կապի անհրաժեշտություն:

Ինչ վերաբերում է ազգային տնտեսությանը, ապա այն երկրի տնտեսությունն է, նրա կազմը, կառուցվածքը, առանձին տարրերի փոխադարձ կապերը: Ազգային տնտեսությունը մի համալիր է, որի բաղադրամասերն ունեն ընդհանրություն, և այդ տնտեսության առանձին հատվածների միջև գոյություն ունեն փոխադարձ կապեր:

Տնտեսագիտության խնդիրն է ներկայացնել առանձին տնտեսական սուբյեկտների գործունեությունը միավորող սերտ հարաբերությունները: Երկիրը, որպես ազգային հանրություն, ունի գերագույն իշխանություն, որին այս կամ այն չափով ենթարկվում են տնտեսավարող բոլոր սուբյեկտները: Երկիրը նաև, այսպես կոչված՝ «հոգևոր սկզբունքների» ամբողջություն է, և նրա բնակիչների միջև գոյություն ունի համեմատական միատարրություն, որն ազգային տնտեսական հանրությանը տալիս է միասնություն, իսկ ազգային դրամական միավորը ամրապնդում է այդ միասնությունը:

Տնտեսական գործունեությունն ուսումնասիրելու ժամանակ հատկապես ազգային շրջանակների ընտրությունն արդարացված է նաև համազգային քանակական ցուցանիշների (ազգային վիճակագրություն) վերլուծության մեթոդների զարգացմամբ և տնտեսական քաղաքականությամբ:

Յուրաքանչյուր երկիր պայմաններ է ստեղծում ամբողջ տնտեսական գործունեության կամ նրա առանձին հատվածների հաջող զարգացման համար: Դա սկզբունքային նշանակություն ունի երկրի կողմից համաշխարհային տնտեսության մեջ որոշակի դիրք գրավելու համար: Երկրի առանձնահատկություններից շատերը հեշտացնում կամ ընդհակառակը՝

դժվարացնում են ազգային տնտեսության ճյուղերի և ֆիրմաների հաջող զարգացումը: Այդ առանձնահատկությունները բազմաբնույթ են՝ սկսած ֆիրմաների կառավարման մեթոդները որոշող վարքի նորմերից, մինչև որակյալ աշխատուժի մի շարք տեսակների առկայությունը կամ բացակայությունը երկրում, պահանջարկի բնույթը ներքին շուկայում, ներքին ներդրողների առջև դրված նպատակները:

Էական դեր է խաղում նաև երկրի քաղաքական համակարգը, որի նպատակը հանրությանը կենսունակորեն գործող ամբողջության մեջ ինտեգրելն է:

Տնտեսական գործունեությունը սահմանափակելով առանձին երկրի շրջանակներով՝ ամենևին խնդիր չի դրվում այն անջատել համաշխարհային հանրությունից: Ազգային տնտեսությունը դիտարկվում է որպես բարձրագույն համակարգի՝ համաշխարհային տնտեսական համակարգի բաղադրամաս: Հետևաբար, ազգային տնտեսության առանձնահատկությունները որոշվում են ոչ միայն ներքին, այլև արտաքին գործոններով: Այդ պատճառով ազգային տնտեսության գործունեությունն ապահովող գործոնները կարելի է բաժանել երկու խմբի՝ ներքին և արտաքին:

Արտաքին գործոնները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- տնտեսական,
- քաղաքական,
- ժողովրդագրական,
- մշակութային:

Համաշխարհային հանրության տնտեսական գործոններից են՝ աշխատանքի միջազգային բաժանումը, այս կամ այն երկրի տեղը համաշխարհային շուկայում, աշխարհի առանձին տարածքներում, այսպես կոչված, «առևտրային պատերազմների» զարգացումը, որի հետևանքով կարող են լինել ազգային տնտեսության կառուցվածքային փոփոխություններ:

Քաղաքական գործոնները կարող են հանդես գալ ամենատարբեր ձևերով: Դրանցից են՝ էմբարգոյի հայտարարումը ապրանքների ու ծառայությունների վրա, առավել բարենպաստ ռեժիմի տրամադրումը կամ արգելումը, երկիրը այս կամ այն առևտրաքաղաքական միության մեջ ընդունելը (կամ չընդունելը), դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կամ խզումը, մուտքը այս կամ այն ռազմաքաղաքական կազմակերպությունների մեջ և այլն:

Համաշխարհային հանրության մեջ ժողովրդագրական գործոնները գլխավորապես հանդես են գալիս աշխատուժի միգրացիայի փոփոխություններով:

Մշակութային գործոնները կարող են ազգային տնտեսության վրա ազդել զանգվածային մշակույթի տարածման դեպքում, որը մի կողմից ազդում է համապատասխան ճյուղերի վիճակի վրա (օրինակ՝ կինեմատոգրաֆիան), մյուս կողմից՝ արժութային պաշարների արտահոսքի վրա:

Ազգային տնտեսության գործունեության ապահովման ներքին գործոններն են՝

- ազգային տնտեսական գործունեություն իրականացնող գործակալները,
- այդ գործունեության կազմակերպման ձևերը,
- երկրի շրջանակներում տնտեսական գործունեության վերլուծության մեթոդները:

Ազգային տնտեսական գործունեությունն իրականացվում է հակասական, երբեմն՝ անտագոնիստական տարբեր նպատակներ հետապնդող մարդկային զանգվածների կողմից: Նրանց գործունեության շարժառիթները պայմանավորված են մի կողմից՝ շահերի և պահանջմունքների այլազանությամբ, իսկ մյուս կողմից՝ դրանք իրականացնելու միջոցների և մեթոդների բազմազանությամբ, ինչպես նաև՝ անհրաժեշտ միջոցների և մեթոդներին հասնելու հնարավորությունների տարբերությամբ:

4.2. Պետության տնտեսական խնդիրները

Ազգային տնտեսական գործունեությունը և սոցիալական հարաբերությունները կարգավորելու գործում էական դեր ունի ազգային պետությունը, որի կարևորագույն խնդիրներից մեկը ազգային տնտեսության կայունության և վերարտադրության ցանկալի տեմպերի ապահովումն է: Դա նշանակում է, որ տնտեսության հաջող զարգացման անհրաժեշտ պայման է տնտեսական և սոցիալական խնդիրների լուծման նպատակով պետության իրականացրած նպատակաուղղված գործունեությունը: Այդպիսի գործունեությունը վերաբերում է կառավարման բնագավառին, որի կենտրոնական օղակը պլանավորումն է: Պլանավորումը հատուկ տեղ է գրավում հասարակությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարման, դրանց ուղղությունների և դինամիկայի կարգավորման, առևտրային կազմակերպությունների կանոնավոր գործունեության ապահովման համակարգում: Երկրի ազգային տնտեսության բոլոր մակարդակներում մշակվող կանխատեսումները, ծրագրերը և պլանները կառավարման համապատասխան սուբյեկտների քաղաքականության իրականացման կարևոր գործիք են: Ազգային տնտեսության հաջող կառավարման համար պետական կառավարման և իշխանության տեղական մարմինները պետք է նախատեսեն ստույգ նպատակներ, նախապատրաստեն գիտականորեն հիմնավորված միջոցառումներ՝ այդ նպատակներին հասնելու համար: Բոլոր այդ խնդիրները լուծվում են կարգավորման և պլանավորման միջոցով:

Նախկին ԽՍՀՄ-ում գոյություն ուներ պլանավորման համընդհանուր համակարգ, որն ընդգրկում էր կառավարման բոլոր սուբյեկտների և տնտեսավարող մարմինների գործունեությունը՝ խստորեն կարգավորելով նրանց կենսագործունեությունը: Բոլոր մակարդակների պլաններն ունեին օրենքի ուժ, իսկ դրանք չկատարողները պատժվում էին օրենսդրությամբ սահմանված կարգով: Շուկայական հարաբերություններին անցնելուց հետո իրադրությունը արմատապես փոխվեց: Շուկայական հարաբերու-

թյուններին խորթ է պլանները տնտեսավարող սուբյեկտներին վարչականորեն պարտադրելու համակարգը, քանի որ նրանք իրավական և տնտեսական տեսանկյունից լրիվ անկախ են և՛ պետական իշխանության, և՛ կառավարման մարմիններից: Առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեությունը կարգավորվում է միայն երկրում գործող օրենսդրությամբ և պայմանագրային հարաբերություններով: Այդ պատճառով առաջանում են երկու օրինաչափ հարցեր.

1. պլանավորումը արդյո՞ք համատեղելի է շուկայական տնտեսության հետ,
2. ի՞նչ չափով է այն անհրաժեշտ տնտեսավարող սուբյեկտներին՝ գործունեությունը կազմակերպելու և պետությանը՝ իր գործառույթները կատարելու համար:

Քանի որ պլանավորումը կառավարման կենտրոնական օղակն է, դրա անհրաժեշտությունը նախ բացատրվում է կառավարման օբյեկտիվ անհրաժեշտությամբ: Իսկ կառավարումը հասարակության յուրահատուկ հատկությունն է նրա զարգացման ցանկացած աստիճանում:

Շուկայական տնտեսությունում մակրոտնտեսական կարգավորման և պլանավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հիմնախնդիրների լուծման կարևորությամբ, որոնք շուկայական տնտեսությունը լուծել չի կարող (շուկայական տնտեսության թերությունները մեկնաբանված են առաջին գլխում):

Պլանավորման ձևերը բազմազան են: Դրանք որոշվում են ըստ կառավարման մակարդակների և բնույթի: Մասնավորապես, տարբերում են՝

ա) ճյուղային, տարածաշրջանային, սոցիալական, գիտատեխնիկական, էկոլոգիական, ֆինանսական և այլ պլանավորում,

բ) կախված պլանավորման մակարդակից՝ միջճյուղային, ընդհանուր պետական, տարածաշրջանային, տնտեսավարող սուբյեկտների մակարդակ,

գ) կախված պլանավորման հորիզոնից՝ երկարաժամկետ, կարճաժամկետ և ընթացիկ (տարեկան):

Պլանավորումը տարբերվում է նաև՝ կախված լուծվող հիմնախնդիրների շրջանակից՝ ինդիկատիվ, իմպերատիվ, ռազմավարական:

Պլանավորումը կատարում է պետության, նրա առանձին սուբյեկտների, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների քաղաքականության իրականացման գործիքի դեր:

Ինդիկատիվ (սահմանական) պլանը համալիր փաստաթուղթ է, որը կոնկրետ ցուցանիշների տեսքով արտահայտում է սոցիալ-տնտեսական զարգացման նպատակները, դրանց հասնելու համար նախատեսվող միջոցառումները կամ իրականացման միջոցները, անհրաժեշտ ֆինանսական և նյութական ռեսուրսները: Ինդիկատիվ պլանավորումն ունի երկու կարևոր առանձնահատկություն: Առաջին առանձնահատկությունն այն է, որ ինդիկատիվ պլանն ունի հանձնարարական բնույթ: Մասնավոր շուկայական հատվածի ձեռնարկությունների և կազմակերպությունների համար ինդիկատիվ պլանի ցուցանիշները պարտադիր նշանակություն չունեն, որի պատճառով բոլոր մակարդակների պետական մարմինները

պարտավոր են նախատեսել հատուկ միջոցառումներ, որպեսզի շուկայական կառույցները հետևեն այդ պլանի ցուցանիշներին: Դրա համար անհրաժեշտ է ընդունել իրավական, տնտեսական միջոցառումներ և վերահսկել օրենքների և իշխանության մարմինների որոշումների կատարումը:

Ինդիկատիվ պլանի երկրորդ առանձնահատկությունը դրա տարբերակային բնույթն է: Սոցիալ-տնտեսական զարգացման նպատակային սահմանումները, նախապլանային կանխատեսումների ցուցանիշները փոխանցվում են կոնկրետ հաշվեկշիռների մեջ, որոնք բավական մանրամասն են բնութագրում տարածքի արտադրական և սոցիալական ոլորտների զարգացումը: Դա հնարավորություն է տալիս պլանային ժամանակաշրջանում օպերատիվ ձևով մշակել և իրականացնել ձևավորված իրավիճակին համապատասխանող միջոցառումներ:

Ինդիկատիվ պլանը ունի մի շարք բաժիններ, որոնք կարող են փոփոխվել՝ կախված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վիճակից: Այդ բաժիններն են՝ ընդհանրացնող մակրոտնտեսական ցուցանիշները, սոցիալական զարգացումը, արտադրության զարգացման ցուցանիշները, սպառողական շուկան, աշխատանքային ռեսուրսները, գիտությունը և գիտական սպասարկումը, ներդրումները, տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացումը, արտաքին տնտեսական կապերը, ֆինանսական պլանը: Ելնելով ինդիկատիվ պլանավորման բնույթից՝ կարելի է այն անվանել նաև մասնավոր պլանավորում:

Տնտեսության պետական հատվածը անհրաժեշտ է դիտարկել որպես ազգային տնտեսության յուրատեսակ «լոկոմոտիվ»: Պետական հատվածի զարգացումը կառավարելու միջոցով պետությունը կարող է ուղղակի և անուղղակի ներգործել ինչպես մասնավոր հատվածի, այնպես էլ ամբողջ ազգային տնտեսության վրա:

Պետական հատվածի զարգացման պլանը ազգային տնտեսության զարգացման համալիր պլանի բաղկացուցիչ մասն է և արտահայտում է պետական ձեռնարկությունների զարգացումը: Այդ փաստաթուղթն ունի իմպերատիվ (պահանջ, հրաման) բնույթ, և դրա ցուցանիշները պարտադիր են ստորադաս ձեռնարկությունների համար:

Կապված հասարակության մեջ տեղի ունեցող տնտեսական և սոցիալական գործընթացների դինամիզմի աճի, ներքին և արտաքին շուկաներում իրավիճակների կտրուկ փոփոխությունների, հեռանկարային ժամկետում հասարակության զարգացման կայունության ապահովման անհրաժեշտության հետ՝ էլ ավելի է մեծանում ռազմավարական պլանավորման դերը սոցիալ-տնտեսական համակարգի մակրո- և միկրո մակարդակներում:

Ռազմավարական պլանավորմանը բնորոշ է առանցքային նպատակների առաջադրումը, որոնց լուծումից է կախված սոցիալ-տնտեսական առաջադիմությունը, նախատեսված նպատակների օրգանական կապակցումը ռեսուրսների ծավալի և կառուցվածքի հետ, տնտեսության վրա արտաքին գործոնների ազդեցության գնահատումը, արտաքին և ներքին միջավայրի փոփոխություններին հարմարվելու ունակությունը և այլն:

Ռազմավարական պլանավորումը համահունչ է ազգային տնտեսության պլանավորմանը, որն ընդգրկում է ինչպես մասնավոր, այնպես էլ պետական հատվածի գործունեությունը:

4.3. Ազգային տնտեսության ռազմավարական պլանավորումը

Ազգային տնտեսության պետական կարգավորման համակարգում հատուկ տեղ է գրավում ռազմավարական պլանավորումը: Ինչպես նշվել է, վերջինիս դերը սոցիալ-տնտեսական համակարգի մակրո- և միկրոմակարդակներում աստիճանաբար մեծանում է՝ կապված հասարակությունում տեղի ունեցող տնտեսական և սոցիալական գործընթացների աճող դինամիզմի, արտաքին և ներքին շուկաներում իրավիճակի արագ փոփոխության և երկարաժամկետ հեռանկարում հասարակության կայուն զարգացման ապահովման անհրաժեշտության հետ:

Ռազմավարական պլանավորումը մարդկանց պրակտիկ գործունեության հատուկ տեսակ է, պլանային աշխատանք, որը ներառում է ռազմավարական որոշումների (կանխատեսումների, ծրագրերի նախագծերի և պլանների տեսքով) մշակումը՝ առաջադրելով կառավարման համապատասխան օբյեկտների վարքագծի այնպիսի նպատակներ և ռազմավարություններ, որոնց իրականացումը ապահովում է դրանց արդյունավետ գործունեությունը երկարաժամկետ հեռանկարում և արտաքին միջավայրի փոփոխվող պայմաններին արագ հարմարվողականությունը:

Ռազմավարական պլանավորումն ունի հետևյալ բնորոշ գծերը.

- նպատակադրումները միջինժամկետ և երկարաժամկետ հեռանկարների համար,
- կողմնորոշումը դեպի առանցքային նպատակները, որոնց իրականացումից է կախված պլանավորվող համակարգի գոյատևումը և սոցիալ-տնտեսական առաջընթացը,
- առաջադրված նպատակների և դրանց իրականացման համար անհրաժեշտ առկա ու պլանավորվող հեռանկարում ստեղծվելիք ռեսուրսների օրգանական կապը,
- պլանավորվող օբյեկտի վրա արտաքին բազմաթիվ գործոնների դրական և բացասական ազդեցությունների գնահատումը, բացասական ազդեցությունների մեղմացման կամ չեզոքացման, ինչպես նաև դրական ազդեցությունների օգտագործման նպատակով իրականացվող միջոցառումների հարմարվողական բնույթը:

Ռազմավարական պլանավորման էությունը բացահայտվում է նրա ընթացակարգի միջոցով: Մակրոէկոնոմիկայում ռազմավարական պլանավորման հիմնական ընթացակարգն ունի հետևյալ փուլերը. ռազմավարական կանխատեսում, ռազմավարական ծրագրավորում և ռազմավարական նախագծում:

Ռազմավարական կանխատեսումն ազգային տնտեսության՝ որպես մեկ ամբողջության, նրա առանձին օղակների և կառուցվածքային տարրերի զարգացման ռազմավարական պլանավորման ընթացակարգի կարևորագույն փուլերից է: Դա օբյեկտի հնարավոր իրավիճակների կանխատեսման այլընտրանքային ուղիների և ժամկետների մասին փորձնական կամ գիտականորեն հիմնավորված դատողություն է:

Ռազմավարական ծրագրավորումը ռազմավարական պլանավորման ընթացակարգի երկրորդ փուլն է: Այն հիմնվում է կանխատեսումների մշակումների վրա և նպատակ ունի կազմելու համալիր նպատակային ծրագրերի նախագծեր, լուծելու ազգային տնտեսության զարգացման, միջճյուղային, ճյուղային, տարածքային ու տնտեսավարող սուբյեկտների հիմնախնդիրները:

Մակրոտնտեսական ռազմավարական պլանավորման մեջ ծրագիրն արտացոլում է որոշակի ժամկետում (5, 10, 15 և ավելի տարի) կառավարման տեղական օբյեկտի իրավիճակի գիտական կանխատեսումը: Ռազմավարական ծրագիրը հասցեագրված, դիրեկտիվության տարբեր աստիճաններ ունեցող փաստաթուղթ է, որն ընդգրկում է առաջադրված նպատակների, խնդիրների՝ առավել արդյունավետ ուղիներով և հաստատված ժամկետներում լուծումն ապահովող սոցիալ-տնտեսական, արտադրական, ֆինանսական, գիտահետազոտական, կազմակերպատնտեսական և այլ միջոցառումների համակարգ: Այդ միջոցառումները համաձայնեցվում են միմյանց հետ ըստ ժամկետների, ռեսուրսների և կատարողների:

Ռազմավարական պլանավորման գործընթացում մշակվող ծրագրերի համակարգում հատուկ տեղ են գրավում համալիր նպատակային ծրագրերը (ՀՆԾ): ՀՆԾ առանցքը նրա գլխավոր նպատակն է, որի կատարումը պահանջում է ծրագրի հիմնական բովանդակությունը կազմող բազմատեսակ համալիր միջոցառումներ: ՀՆԾ միասնական նպատակը դիտվում է այն խնդիրների համախմբության մեջ, որոնք կոնկրետ կատարողների կողմից և որոշակի ռեսուրսային ապահովվածությամբ լուծվում են միջոցառումների համակարգի միջոցով:

Քանի որ ծրագրի նպատակը, վերջին հաշվով, հասարակական, այդ թվում՝ շուկայական պահանջմունքների բավարարումն է, ուստի ծրագրային պարբերաշրջանը սովորաբար ընդգրկում է վերարտադրական գործընթացի բոլոր փուլերը՝ ծրագրային արտադրանքի արտադրությունը, բաշխումը, փոխանակումը և սպառումը: Այդ պատճառով համալիր ռազմավարական ծրագրի խնդիրների և միջոցառումների փոխկապվածությունը պայմանավորված է ոչ միայն նպատակների միասնականությամբ, այլ նաև այնպիսի կապի տեսակով, ինչպիսին է վերջնական արտադրանքի կամ ծառայության, տեխնոլոգիայի, հումքային ռեսուրսների, արտադրական բազայի, սպառողների, տարածքային և տրանսպորտային ընդհանրությունը:

Օգտագործվող ռեսուրսներն ընդգրկում են նպատակին հասնելու համար անհրաժեշտ նյութական, աշխատանքային, ֆինանսական և տեղեկատվական ռեսուրսների ծախսերը:

Ռազմավարական պլանավորման ընթացակարգի եզրափակիչ փուլը **նախագծումն** է, որի ընթացքում մշակվում են բոլոր մակարդակների և ժամանակային հորիզոնների ռազմավարական պլանների նախագծերը: Ռազմավարական պլանի նախագիծը, ըստ էության, կառավարման համապատասխան սուբյեկտների կողմից ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ որոշման նախագիծ է:

Նախագծման գործընթացում մշակվում են կառավարման համապատասխան օբյեկտների զարգացման մեկից ավելի տարբերակներ, որպեսզի հնարավոր լինի ընտրել տվյալ տնտեսական իրավիճակի համար ռազմավարական պլանի օպտիմալ նախագիծ և ունենալ այնպիսի տարբերակ, որը ապագայում համապատասխանի տնտեսավարման փոփոխվող պայմաններին ու շուկայական իրավիճակին:

Ռազմավարական պլանի նախագիծը չունի դիրեկտիվ բնույթ և ենթակա չէ պարտադիր կատարման: Նախագիծը դիրեկտիվության (պարտադիր լինելու) այս կամ այն աստիճանի հատկությունը ձեռք է բերում սահմանված կարգով հաստատվելուց հետո: Շուկայական տնտեսությունում ռազմավարական պլանի ցուցանիշների կատարման պարտադրանքի ամենաբարձր աստիճանը տնտեսության սկզբնական օղակում է:

Սակայն կառավարման մակարդակի բարձրացմանը զուգընթաց, պարտադրանքի աստիճանը նվազում է և ապահովվում է ոչ թե վարչական, այլ տնտեսական մեթոդներով և իրավունքի ինստիտուտներով: Շուկայական տնտեսությունում դիրեկտիվ բնույթ ունի և ձեռք է բերում օրենքի ուժ միայն պետական բյուջեն: Բայց այն կարող է կատարվել այն չափով, որչափով կանխատեսված իրավիճակը ազգային տնտեսությունում համապատասխանում է փաստացի ձևավորվածին:

Ռազմավարական պլանավորման օբյեկտը կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում տնտեսավարող սուբյեկտների, ազգային տնտեսության կառուցվածքային տարրերի գործունեությունն է, երկրի ամբողջ ազգային տնտեսությունը:

Ռազմավարական պլանավորման մեթոդաբանությունը ռազմավարական կանխատեսումների, ծրագրերի նախագծերի և պլանների մշակման տրամաբանության, առանձնահատուկ սկզբունքների և մոտեցումների, ռազմավարական պլանավորման գործընթացում օգտագործվող ցուցանիշների օպտիմալության հիմնավորման մեթոդների օրգանական միասնությունն է:

Ռազմավարական պլանավորման նպատակներն ապագայի որոշակի պահին պլանավորման համապատասխան օբյեկտի ցանկալի իրավիճակներն են կամ գործունեության արդյունքները: Պլանավորման խնդիրները նույնպես նպատակներ են, որոնց հասնելը ցանկալի է ժամանակի որոշակի պահին՝ ռազմավարական պլանավորման ժամանակաշրջանի սահմաններում:

Պլանավորվող ժամանակաշրջանում նպատակները կարող են անհասանելի լինել, սակայն այդ ընթացքում պետք է հնարավոր ամեն ինչ անել դրանց հասնելու համար: Խնդիրները, ըստ էության, պետք է իրականացվեն պլանավորվող ժամանակաշրջանում, սակայն ոչ միշտ է

հնարավոր դրան հասնելը: Այն նպատակը, որին երբեք հնարավոր չէ հասնել, բայց կարելի է անվերջ մոտենալ, կոչվում է իդեալ:

Քանի որ ռազմավարական պլանավորումը հասարակության, ինչպես նաև ընկերությունների կառավարման համակարգի կենտրոնական տարրն է, ուստի պետք է ունենա կառավարման չորս ընդհանուր սկզբունքներ.

1. տնտեսության և քաղաքականության միասնականությունը քաղաքականության առաջնահերթության պայմաններում,
2. կենտրոնացման և ինքնուրույնության միասնականությունը,
3. վարչական որոշումների գիտական հիմնավորվածությունը և արդյունավետությունը,
4. շահերի առաջնահերթության պայմաններում ընդհանուր և տեղական շահերի զուգակցման ու կառավարչական որոշումների իրականացման գործում անհատական և կոլեկտիվ շահագրգռվածության խթանումը:

Այդ ընդհանուր սկզբունքներից բացի, ռազմավարական պլանավորումը հիմնվում է նաև երեք առանձնահատուկ կամ լոկալ սկզբունքների վրա.

1. օպտիմալ համամասնականության ապահովումը՝ առանձնացնելով առաջատար օղակները,
2. կանխատեսումների, ռազմավարական ծրագրերի և պլանների միասնականությունն ու համալիրությունը,
3. ծրագրերի ու պլանների մշակման գործընթացի, դրանց կատարման հնարավորությունների ապահովման և վերահսկողության իրականացման միասնականությունը:

4.4. Ազգային տնտեսության զարգացման կանխատեսման հիմնահարցերը

Շուկայական տնտեսության պայմաններում զգալիորեն աճում է տնտեսության զարգացման կանխատեսման դերը: Շուկայական տնտեսությանը բնորոշ են մշտական տատանումները, որոնք անմիջականորեն ազդում են յուրաքանչյուր գնորդի և վաճառողի ճակատագրի ու եկամտի վրա: Մեծ և անուղղելի սխալներ թույլ չտալու համար պետք է գնահատել շուկայական տեղաշարժերի հնարավոր այլընտրանքները, մրցակիցների և գործակալների վարքը արտաքին ու ներքին շուկաներում: Այդ իսկ պատճառով ռազմավարական կանխատեսումը շուկայական ռազմավարության և մարտավարության ձևավորման համար դառնում է անհրաժեշտ տարր տնտեսավարման ցանկացած մակարդակում՝ սկսած անհատ արտադրողից, առևտրային կազմակերպություններից, վերջացրած ամբողջ հասարակությամբ:

Շուկայական տնտեսությունում ռազմավարական կանխատեսումը հանդես է գալիս իբրև ելակետային հիմք՝ երկարաժամկետ ծրագրերի և

պլանների հիմնավորման համար: Սա կապված է այն բանի հետ, որ բազմաթիվ գործընթացներ, որոնք հանդես են գալիս որպես վերարտադրության կարևոր գործոն, ունեն անորոշության չափազանց բարձր աստիճան: Այդ իսկ պատճառով կարելի է միայն կանխատեսել նրանց շարժն ու ազդեցությունը սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Ռազմավարական կանխատեսումը հանդես է գալիս նաև իբրև կարևորագույն կապող օղակ հասարակության կյանքի բոլոր բնագավառների կարգավորման տեսության և պրակտիկայի միջև: Այն կատարում է 2 կարևորագույն գործառույթ՝ կանխատեսում (երբեմն անվանում են նաև նկարագրական) և կարգադրում կամ նախացուցում (գրավոր հրաման): Վերջինս օժանդակում է գործունեության պլանում կանխատեսման ձևակերպմանը:

Կանխատեսումը ապագայում ցանկալի կամ հնարավոր իրավիճակների նկարագրումն է: Կարգադրման կամ նախացուցման գործառույթը ծրագրավորման զանազան հիմնախնդիրների լուծման նախագծերի նախապատրաստումն է:

Կանխատեսման գործընթացը կարող է իրականացվել 2 կարևորագույն ուղղությամբ՝ տեսաբանական-ճանաչողական և կառավարչական: Ռազմավարական կանխատեսման տեսաբանական-ճանաչողական ուղղության նշանակությունը մեծ է կանխատեսումների կազմման աշխատանքներում, մեթոդների և մեթոդաբանության ուսումնասիրման և կատարելագործման ընթացքում, ազգային տնտեսության զարգացման և սոցիալական հարաբերությունների համակարգում դրսևորվող միտումների բացահայտման գործում:

Ռազմավարական կանխատեսման կառավարչական ուղղությունը ենթադրում է կառավարչական որոշումների գիտական մակարդակը բարձրացնելու անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու նպատակով օգտագործել հասարակության տնտեսական և սոցիալական զարգացման կանխատեսումները: Այդ նախադրյալներից են՝ սոցիալ-տնտեսական գործընթացների զարգացման միտումների գիտական վերլուծությունները, ազգային տնտեսության զարգացման կանխատեսումների տարբերակների, ընդունվող որոշումների արդյունքների հնարավոր գնահատականները:

Քանի որ յուրաքանչյուր ձևի կանխատեսում ունի յուրահատկություններ, ուստի առաջանում է կանխատեսումների տիպաբանության ստեղծման անհրաժեշտություն:

Կանխատեսման ոլորտում առանձնացվում են.

1. մակրոտնտեսական և կառուցվածքային կանխատեսում,
2. ազգային տնտեսության առանձին համալիրների զարգացման կանխատեսումներ (վառելիքաէներգետիկ, ագրոարդյունաբերական, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների, ֆինանսավարկային),
3. ճյուղային և տարածքային կանխատեսումներ,
4. տնտեսավարող սուբյեկտների գործունեության, ինչպես նաև առանձին արտադրությունների և ապրանքների կանխատեսում:

Կախված խնդիրների բնույթից և լուծման ժամանակից՝ կանխատեսումները բաժանվում են հետևյալ խմբերի.

ա) ռազմավարական և մարտավարական,

բ) օպերատիվ,

գ) կարճաժամկետ,

դ) միջինժամկետ,

ե) երկարաժամկետ:

Կախված ուսումնասիրվող օբյեկտի բնույթից՝ կանխատեսումը կարող է կատարվել տարբեր բնագավառների համար: Առանձին կանխատեսվում են տնտեսական, սոցիալական և ներքաղաքական հարաբերությունների զարգացումը, ազգային տնտեսության զարգացման շարժը, բնակչության վերարտադրությունը, աշխատանքի շուկայի իրավիճակը, կադրերի պատրաստումը, բնական ռեսուրսների օգտագործումը և դրանց վիճակը, բնակչության կյանքի մակարդակը, որակը, եկամուտները, ֆինանսավարկային հարաբերությունների զարգացումը և այլն:

Ըստ ֆունկցիոնալ նշանակության՝ կանխատեսումները լինում են նորմատիվային և հետախուզական: Նորմատիվային կանխատեսումը մշակվում է նախապես որոշված նպատակների բազայի հիման վրա: Նրա խնդիրը կանխատեսման օբյեկտի հնարավոր վիճակին ապագայում հասնելու ուղին ու ժամկետները որոշելն է: Հետախուզական կանխատեսումը հիմնված է անցյալում և ներկայում հետազոտվող օբյեկտի զարգացման ապագա միտումների պայմանական շարունակման վրա և շեղվում է այդ միտումները փոխելու ունակ գործոնների ազդեցության հետևանքով:

4.5. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի էությունը և դրանց դասակարգումը

Ինչպես նշվեց նախորդ հարցերը շարադրելիս, երկրի տնտեսական քաղաքականությունն արտացոլվում է սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում: Այդպիսի ծրագրերը մշակվում են ինչպես վարչահրամայական տնտեսական համակարգի, այնպես էլ շուկայական տնտեսության պայմաններում: Սակայն շուկայական ինքնակարգավորման պայմաններում կազմվող տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերը դիրեկտիվ բնույթ չունեն և չեն պարտադրվում տնտեսավարող սուբյեկտներին:

Տնտեսական կարգավորման գործառույթը պետությունն իրականացնում է այդ ծրագրերի և երկարաժամկետ կանխատեսումների միջոցով: Բանն այն է, որ սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագիր ունենալու համար անհրաժեշտ է երկարաժամկետ կանխատեսում, որի միջոցով որոշվում են հասարակության առաջընթացի պայմանները և գործոնները: Դրանք են՝ բնապահպանական իրավիճակը, բնական ռեսուրսների առկայությունը, սպասվող նոր տեխնոլոգիական լուծումները, գիտատեխնիկական առաջադիմությունը և դրանցով պայմանավորված՝

կառուցվածքային փոփոխությունները, հասարակության մտավոր ներուժը և երկրի դեմքը համաշխարհային տնտեսական կապերի համակարգում: Երկարաժամկետ կանխատեսումը հնարավորություն է տալիս տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական, բնապահպանական կարևոր հիմնախնդիրները լուծել միասնաբար, որոշել զարգացման գերակա ուղղությունները:

Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը, ըստ էության, երկարաժամկետ կանխատեսումները ընթացիկ տնտեսական կարգավորման հետ զուգակցելու միջոց են:

Տնտեսական զարգացման ծրագիրն արտահայտում է երկրի տվյալ փուլի զարգացման ամենահիմնական խնդիրը: Ներկայումս հանրապետության տնտեսական ծրագրերը հանդիսանում են տնտեսության պետական կարգավորման հիմնական ձև: Դրանք պետության տնտեսական գործունեությունը կողմնորոշում են դեպի կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդիրների առաջնահերթ լուծումը: Ձեռք բերվող վերջնական արդյունքը դառնում է ծրագրի մշակման ելակետ, իսկ այդ նպատակի իրականացումը հիմնավորվում է կոնկրետ միջոցառումների համակարգով: Այդ համակարգը ընդգրկում է ինչպես համապետական կազմակերպական միջոցառումներ, այնպես էլ տնտեսական ու կազմակերպական լծակներ, որոնց օգնությամբ ներգործում է շուկայական տնտեսության տնտեսավարող սուբյեկտների վրա: Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը նախատեսում են նաև ծրագրերի կատարման համար անհրաժեշտ ռեսուրսները, որոնք հանդես են գալիս որպես ծրագրի արդյունքային ցուցանիշների վրա ազդող գործոններ:

Ասվածից հետևում է, որ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը տնտեսապես և գիտականորեն հիմնավորված ու հաշվեկշռված առաջադրանքների համակարգ է, որն արտահայտում է մակրոմակարդակի ցուցանիշների կանխատեսվող մակարդակն ու տնտեսական աճի տեմպերը: Այն ընդգրկում է ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին ճյուղերի զարգացմանը վերաբերող ցուցանիշներ: Ծրագրում ընդհանուր ձևով տրվում են մակրոտնտեսական ցուցանիշների՝ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ), համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ), ազգային եկամտի (ԱԵ), վերջնական արտադրանքի նախատեսվող ծավալները, կառուցվածքը և աճի տեմպերը, արտադրական ռեսուրսների՝ հիմնական ֆոնդերի, շրջանառու միջոցների աճը, նոր բնական ռեսուրսների և հանքավայրերի շահագործումը, արտադրական և ոչ արտադրական կապիտալ ներդրումների ծավալը, ֆինանսական և այլ ամփոփ ցուցանիշները:

Տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերը կարող են լինել տնտեսության կայունացման և տնտեսական աճի ծրագրեր: Դրանք հիմնականում տնտեսական աճի ծրագրեր են: Դա բացատրվում է նրանով, որ տնտեսական զարգացման տեմպերը որոշիչ դեր ու նշանակություն ունեն բնակչության սպառման մակարդակի աճի, սոցիալական ապահովման ու զարգացման և երկրի այլ՝ տնտեսական, քաղաքական, բնապահպանական հիմնախնդիրների լուծման գործում: Տնտեսության

կայունացման ծրագրի վերջնական նպատակը տնտեսության տատանումների վերացումն է և կայուն մակարդակի պահպանումը, իսկ տնտեսական աճի ծրագրինը՝ աճի տեմպերի ապահովումը:

Տնտեսական աճի ծրագրերը դասակարգվում են տարբեր հատկանիշներով: Ըստ դրանցում օգտագործվող տնտեսական մոդելների տիպերի, դրանք լինում են՝ *հաշվեկշռված տնտեսական աճի, սահմանափակ և անսահմանափակ հորիզոնով, մայրուղային տնտեսական աճի ծրագրեր:*

Հաշվեկշռված աճի ծրագրի մոդելն առաջին անգամ մշակել են Ռ.Հարրոդը և Ե.Դոմարը, 1940-ական թվականների վերջին: Այդ մոդելը ենթադրում է տնտեսության այնպիսի հաշվեկշռված աճի տեմպեր, որոնց դեպքում տնտեսության բոլոր բաղադրամասերը ժամանակի մեջ փոփոխվում են միևնույն արագությամբ՝ ապահովելով երկրի աշխատունակ բնակչության լրիվ զբաղվածություն: Հաշվեկշռված տնտեսական աճ կարելի է ապահովել ազգային եկամտի կուտակման և սպառման ֆոնդերի օպտիմալ հարաբերակցության պայմաններում:

Տնտեսական աճի ծրագրերի մշակման հիմնախնդիրներից մեկը լավագույն տարբերակի ընտրության չափանիշի ճիշտ որոշումն է: Հասարակությունը կարող է ցանկանալ ավելացնել մեկ շնչի անձնական սպառումը կամ բարձրացնել հասարակական պահանջմունքների բավարարման աստիճանը: Դրանցից յուրաքանչյուրը պահանջում է տարբեր բնույթի տնտեսական աճի ծրագրեր: Այդ առումով լինում են *սահմանափակ և անսահմանափակ հորիզոնով տնտեսական աճի ծրագրեր:*

Անսահմանափակ հորիզոնով տնտեսական աճի ծրագրերը նպատակ ունեն կանխատեսել այնպիսի աճ, որը կապահովի սպառման առավելագույն ծավալ: Սահմանափակ հորիզոնով տնտեսական աճի ծրագրերը մշակվում են որոշակի ժամանակահատվածի համար և նպատակ ունեն լուծելու այդ ժամանակահատվածի հիմնական խնդիրը:

Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը դասակարգվում են նաև ըստ *ընդգրկվող ժամանակահատվածի, ըստ բովանդակության և ըստ առաջադրանքների համասեռության:*

Ըստ ընդգրկվող ժամանակահատվածի՝ ծրագրերը լինում են *երկարաժամկետ* (15-20 տարի), *միջինժամկետ* (5-10 տարի) և *ընթացիկ* (տարեկան): Երկարաժամկետ սոցիալ-տնտեսական ծրագրերը ընդգրկում են կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական գծերը և բնութագրում տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները հեռանկարային ժամանակաշրջանում: Այդ ծրագրերում կանխատեսվող ցուցանիշները մոտավոր բնույթ ունեն, քանի որ տնտեսական կյանքի կանխատեսումը հեռանկարում համեմատաբար դժվար իրագործելի խնդիր է: Երկարաժամկետ ծրագրերում նախատեսվում են ինչպես տնտեսական ու սոցիալական արդյունքային ցուցանիշների փոփոխությունները, այնպես էլ տնտեսության զարգացման ռեսուրսային ցուցանիշների անհրաժեշտ տեղաշարժերը: Դրանք վերաբերում են նոր օգտակար հանածոների և էներգիայի աղբյուրների ստեղծմանը, ջրաշինարարական, բնապահպանական պետական աշխատանքներին և նմանատիպ այլ խնդիրների լուծմանը: Միջինժամկետ ծրագրերում, հատկապես 5-ամյա

ժամկետի համար, նախատեսվող խնդիրներն ու առաջադրանքները ներկայացվում են ավելի որոշակիացված և համեմատաբար մանրամասն: Այսպես, օրինակ, եթե արդեն հայտնաբերվել են նոր օգտակար հանածոներ, ապա կարող են սահմանվել դրանց օգտագործման ուղիները, եթե ստեղծվել են նոր տեխնիկական միջոցներ և տեխնոլոգիաներ, ապա կարելի է մշակել դրանց արտադրության և ներդրման նախագծեր: Միջինժամկետ ծրագրերը մշակելիս նկատի է առնվում, որ երկրի տրամադրության տակ գտնվող ռեսուրսները որոշակիորեն կայուն են և մեծ փոփոխություններ չեն կրելու, ուստի տնտեսական կանխատեսումներն ավելի ճշգրիտ են, քան երկարաժամկետ կանխատեսումները:

Ընթացիկ (տարեկան) ծրագրերն ավելի մանրամասն ցուցանիշներ են պարունակում տնտեսական և սոցիալական բոլոր բնագավառների մասին և կոնկրետացնում են երկարաժամկետ և միջինժամկետ ծրագրերում տվյալ տարվա համար կանխատեսված խնդիրներն ու ցուցանիշները: Դրանք միաժամանակ ընդգրկում են զարգացման տվյալ պահին երկրի տնտեսության առջև ծառացած նոր խնդիրները և լուծման հնարավոր միջոցներն ու ուղիները: Ընթացիկ ծրագրերում նախատեսված առաջադրանքներն անհամեմատ ավելի ճշգրիտ ու որոշակի են, քան միջինժամկետ և երկարաժամկետ ծրագրերում:

Ըստ բովանդակության՝ տնտեսական ծրագրերն ունենում են հետևյալ ուղղվածությունները.

- սոցիալ-տնտեսական, որոնց նպատակն է բարձրացնել բնակչության կենսամակարդակը, ապահովել զբաղվածություն և լուծել բազմաթիվ այլ հիմնախնդիրներ,
- գիտատեխնիկական, որոնց վերջնական նպատակը գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական հիմնախնդիրների լուծումների և հետազոտական, կոնստրուկտորական և այլ աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացումն է,
- արտադրատնտեսական, որոնք արտահայտում են ոլորտին վերաբերող միջճյուղային հիմնախնդիրների լուծումները, նոր արտադրությունների, արտադրատեսակների, տեխնոլոգիական գործընթացների ներդրման և յուրացման առաջադրանքները,
- տարածքային, որոնք լուծում են նոր տարածաշրջանների յուրացման և արդեն կազմակերպված շրջանների տնտեսական ու սոցիալական բարեփոխումների հիմնախնդիրները,
- բնապահպանական, որոնք ուղղված են խոշոր բնապահպանական նախագծերի իրականացմանը, բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը և շրջակա միջավայրի պահպանության բարելավմանը,
- կազմակերպական-տնտեսական, որոնք ուղղված են տնտեսության կառավարման ձևերի ու մեթոդների, կառուցվածքի կատարելագործմանը:

Տնտեսական ծրագրերի առաջադրանքներն իրենց տնտեսական համասեռության հատկանիշով դասակարգվում են ըստ որոշակի խմբերի՝

գոյացնելով տնտեսական համալիր ծրագրի այն բաժինները, որոնք իրական և տրամաբանական կապերով սերտորեն կապված են միմյանց:

Տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերում արտացոլվում են ոչ միայն ծրագրի մշակման համար անհրաժեշտ մուտքային, այլ նաև ծրագրի նպատակն արտահայտող ելքային ցուցանիշները: Այդ ցուցանիշները տրված են նախորդ գլուխներում:

4.6. ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման և հաստատման կարգը

Տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերը, մինչև շուկայական հարաբերություններին անցնելը, ինչպես նշվեց, մշակվում և իրականացվում էին դիրեկտիվ, պլանային համակարգի միջոցով: Այդ համակարգը չկարողացավ հաղթահարել տնտեսության մեջ առաջացած արատավոր միտումները, նպաստեց ազգային տնտեսությունը տնտեսական ճգնաժամի մեջ ներքաշելուն: Այդ ճգնաժամն արտահայտվեց հասարակական արտադրության ցածր արդյունավետությամբ, տնտեսական աճի տեմպերի անկմամբ, կարևորագույն ապրանքների պակասուրդով, փողի արժեզրկմամբ և գների աճով, հասարակական պահանջմունքները բավարարելու անկարողությամբ: Այս ամենը ձևավորեց այն կարծիքը, որ՝ շուկայական տնտեսական համակարգին անցնելու դեպքում կվերանա պետության կողմից տնտեսական ծրագրերի մշակման անհրաժեշտությունը:

Սակայն, մեր տնտեսությունը բնութագրելով որպես կարգավորվող շուկայական տնտեսություն, չպետք է մոռանալ այն փաստը, որ գոյություն չունեն տնտեսական կառավարման զուտ պլանային կամ զուտ շուկայական մոդելներ, այլ կան խառը տնտեսական համակարգեր, որտեղ պետական պլանային և շուկայական կարգավորիչները կազմում են մեկ միասնական ամբողջություն:

Իրականում, տնտեսական և սոցիալական համապետական ծրագրերը մշակվել և մշակվում են ոչ միայն թույլ զարգացած, ճգնաժամային իրավիճակում գտնվող երկրներում, այլ նաև զարգացած և սեփականաշնորհման բարձր մակարդակ ունեցող երկրներում: Հատկապես այս երկրներում է, որ պետությունը ուղղակի աջակցում է տնտեսական այն առաջնային խնդիրների լուծմանը, որոնք արտահայտում են կառուցվածքային քաղաքականությունը, տարածվում են շուկայական հարաբերությունների ներդրման սահմանափակ հնարավորություններ ունեցող ոլորտների վրա: Այդ ոլորտներում պետական միջամտությունը ենթադրում է գիտատար և ոչ շահութաբեր, սակայն հասարակության համար օգտակար ճյուղերի և ձեռնարկությունների գործունեությանը օժանդակություն, թերզարգացած շրջանների ինդուստրացում (նոր ձեռնարկությունների կառուցում, աշխատատեղերի ստեղծում, կադրերի վերապատրաստում), շրջակա միջավայրի պահպանում, բնապահպանական խոշոր ծրագրերի իրականացում:

Շուկայական համակարգի պայմաններում երկրի համապետական զարգացման ծրագրի մշակումը, վերջին հաշվով, հանգում է արտադրական հարաբերությունների մասնակիցների տնտեսական և սոցիալական շահերի օբյեկտիվ գնահատմանը և այդ շահերի իրականացման առավել արդյունավետ ուղիների ընտրությանը: Այլ կերպ ասած՝ պետական տնտեսական ծրագրերը մեծ թե փոքր ձեռնարկություններին օգնում են ընտրել իրենց նպատակին հասնելու ճիշտ ուղին: Վերջապես, առանց սոցիալ-տնտեսական համալիր ծրագրերի մշակման՝ անհնար կլիներ ճիշտ ընտրել պետական տնտեսական քաղաքականության այս կամ այն ուղին: Ի դեպ, պետական քաղաքականության ուղղություններն ինքնանպատակ չեն: Դրանց նպատակը երկրի տնտեսական զարգացման ապահովումն է, մակրոտնտեսական խնդիրների իրագործումը՝ գործազրկության և ինֆլյացիայի կրճատումը:

ՀՀ տնտեսական և սոցիալական ծրագրերի մշակումը իրականացվում է մի շարք փուլերով: Դրանց նախորդում է հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի և բարեփոխումների ընթացքի վերլուծությունը: Այդպիսի վերլուծության միջոցով պարզվում է երկու կարևոր հարց. նախ՝ նախորդ ծրագրի կատարման արդյունքում տնտեսությունն ինչ նվաճումների է հասել, ինչպիսին է առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը, և որքանով են իրականացվել բարեփոխումների ծրագրում նախատեսված միջոցառումները: Երկրորդ՝ պարզվում է, թե ինչ սխալներ, բացթողումներ են եղել, որոնք բացասաբար են անդրադարձել տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերի իրականացման վրա: Դա կարևոր է ոչ միայն գալիք ժամանակաշրջանում նման սխալներից խուսափելու, դրանք չկրկնելու, այլ նաև նոր ծրագրերը ճիշտ և իրատեսորեն կազմելու համար:

Տնտեսական ծրագրերի մշակման առաջին փուլում հանրապետության կառավարությունը հանձնարարություն է տալիս համապատասխան նախարարություններին, տնտեսավարող սուբյեկտներին և կազմակերպություններին՝ առաջարկություններ ներկայացնել համապատասխան բնագավառների զարգացման հիմնական ուղղությունների, միտումների և առաջնահերթությունների կանխատեսումների վերաբերյալ: Դրանք ամփոփվում են համապատասխան նախարարություններում և ներկայացվում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, որը իր համապատասխան ստորաբաժանումների միջոցով կազմակերպում է տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերի մշակման աշխատանքները, կազմում ծրագիրը և ներկայացնում ՀՀ կառավարության քննարկմանը: Դրանով ավարտվում է տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրի մշակման երկրորդ փուլը և սկսվում է երրորդը: Այս փուլում կառավարությունը հանգամանորեն քննարկում է ծրագրի նախագիծը, կատարում իրական տնտեսական իրավիճակից բխող անհրաժեշտ փոփոխություններ: Քննարկման արդյունքում, համապատասխան փոփոխություններով հանդերձ, ծրագիրն ընդունվում է:

ՀՀ-ում տնտեսական-սոցիալական ծրագրերը մշակվում են ըստ առանձին բաժինների, հետևյալ հաջորդականությամբ.

1. սոցիալ-տնտեսական իրավիճակը և բարեփոխումների ընթացքը հանրապետությունում,
2. ծրագրի նպատակը և խնդիրները,
3. տնտեսական բարեփոխումների ծրագիրը,
4. տնտեսական քաղաքականությունն առանձին ոլորտներում:

Ծրագրի այդ բաժինները սերտորեն փոխկապված են և արտահայտում են տվյալ ժամանակահատվածի տնտեսական, սոցիալական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններն ու հիմնախնդիրները, որոնք ձևավորվում են առաջին բաժնում և արտացոլվում են ձեռք բերված նվաճումների և բարեփոխումների ընթացքի վերլուծության միջոցով:

Ծրագրի երկրորդ բաժնում իրենց արտացոլումն են գտնում նպատակը և այն խնդիրները, որոնց լուծման ճանապարհով պետք է այն դառնա իրականություն:

Տնտեսական բարեփոխումների բաժինը ընդգրկում է ֆինանսական և սոցիալական քաղաքականության, կազմակերպական, կառուցվածքային բարեփոխումների ուղղությունները, արտաքին տնտեսական և տարածաշրջանային քաղաքականությունը:

Ծրագրի վերջին բաժնում իր արտացոլումն է գտնում առանձին ոլորտներում իրականացվող տնտեսական քաղաքականությունը: Այստեղ առանձին ենթաբաժիններով ցույց են տրվում արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և կապի, կապիտալ շինարարության, էներգետիկայի, բնակարանային կոմունալ տնտեսության, բնապահպանության և բնօգտագործման, գիտության և կրթության, առողջապահության, մշակույթի և այլ ոլորտների զարգացման խնդիրները և առաջադրանքները:

Տնտեսական ծրագրերի նշված բաժիններում նախատեսվող խնդիրներն իրենց արտացոլումն են գտնում համապատասխան ցուցանիշներում: Այդ ցուցանիշները վերաբերում են տնտեսության տարբեր ճյուղերի և ոլորտների զարգացմանը և արտահայտում են տնտեսական ու սոցիալական երևույթների քանակական և որակական կողմերը: Ծրագրում օգտագործվող ցուցանիշները լինում են բնաիրային կամ բնաձևային (չափվում են չափի բնական միավորներով՝ կգ, մ^2, կվտ, տ և այլն), արժեքային, քանակական, որակական, բացարձակ և հարաբերական, վերջնական և միջանկյալ, ամփոփ կամ մասնակի, մակրոտնտեսական և միկրոտնտեսական:

4.7. Տնտեսության պետական կարգավորման մեջ օգտագործվող ցուցանիշները, դրանց ներկայացվող պահանջները և դասակարգումը

Տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերում նախատեսված ընդլայնված վերարտադրության գործընթացը կոնկրետ արտահայտություն է ստանում ցուցանիշների համակարգի միջոցով, որը, ըստ էու-

թյան, փոխադարձաբար կապված տեխնիկա-տնտեսական և այլ առաջադրանքների ու դրանց կից հաշվարկների ամբողջությունն է: Այն արտահայտում է ծրագրերի տնտեսական, սոցիալական, քաղաքական խնդիրները, բնութագրում է տնտեսության և նրա առանձին ճյուղերի զարգացումը, դրանց քանակական փոփոխությունները, որակական և կառուցվածքային տեղաշարժերը, տնտեսության տարբեր ճյուղերի ու բնագավառների, տնտեսական շրջանների ու մարզերի փոխադարձ կապերը:

Բանն այն է, որ տնտեսական հասկացություններն ու կատեգորիաներն արտահայտում են տնտեսական կյանքում օբյեկտիվորեն տեղի ունեցող երևույթներն ու գործընթացները, ինչպես նաև դրանց փոխադարձ կապերը: Որպեսզի դրանք վերացական, տեսական դատողություններից վերածվեն տնտեսության կարգավորման գործնական միջոցների, պետք է ձեռք բերեն իրական նշանակություն, այսինքն՝ ունենան հաշվարկման մեթոդիկա և կոնկրետ քանակական որոշվածություն: Դրանք հենց տնտեսական ցուցանիշներն են: Տնտեսական ցուցանիշներն արտահայտում են տնտեսական կատեգորիաների էությունը: Սակայն որքան բարդ ու բազմազան են տնտեսական երևույթները, այնքան դժվար է դրանք մեկ ցուցանիշի միջոցով արտահայտելը: Այդ պատճառով մեկ տնտեսական կատեգորիան երբեմն արտահայտվում է մի քանի ցուցանիշների միջոցով: Օրինակ, «տնտեսական արդյունավետություն» կատեգորիան արտահայտում է ստացված արդյունքների և կատարված ծախսերի հարաբերակցությունը: Ընդ որում՝ գոյություն ունեն և՛ ստացված արդյունքները գնահատող բազմաթիվ ցուցանիշներ (ՀՆԱ, ՀԱԱ, ԱԵ, շահույթ և այլն), և՛ կատարած ծախսերը հաշվառող մի շարք ցուցանիշներ (հասարակական ամբողջական ծախսեր, նյութական, աշխատանքային, ֆինանսական ծախսեր): Տնտեսության զարգացմանը զուգընթաց, ցուցանիշների համակարգը շարունակ ընդլայնվում է:

Որպեսզի ցուցանիշների համակարգը ծառայի տնտեսական խնդիրների լուծման նպատակին, պետք է համապատասխանի որոշակի պահանջների: Դրանք են՝

- պետք է արտահայտի ինչպես ամբողջ ընդլայնված վերարտադրության գործընթացը, այնպես էլ նրա առանձին ոլորտների փոխադարձ կապերն ու կախվածությունները և կոորդինացնի վերարտադրության հիմնական տարրերը,
- արտահայտի ծրագրի կարևորագույն նպատակներն ու խնդիրները,
- խթանի ձեռնարկությունների ու կազմակերպությունների՝ տրված առաջադրանքների կատարումն ապահովելու շահագրգռվածությունը,
- միասնական լինի բոլոր մարզերի, նախարարությունների և գերատեսչությունների համար,
- ապահովի առանձին ճյուղերի առաջադրանքների անհրաժեշտ կապի կոորդինացում, ընդգրկի ներճյուղային, միջճյուղային, ընդհանուր տնտեսական և միջշրջանային կապերը ինչպես աշխատանքային, այնպես էլ նյութական և ֆինանսական ռեսուրսների օգտագործման բնագավառում,

- ցուցանիշները լինում են հասցեագրված, այսինքն՝ ծրագրերում պետք է նախատեսվեն առաջադրանքների կոնկրետ կատարողները՝ նախարարությունները, կազմակերպությունները,
- անհրաժեշտության դեպքում ծրագրերը պետք է որոշակիացվեն, փոփոխվեն՝ ելնելով տվյալ բնագավառի կամ շրջանի առանձնահատկություններից,
- տնտեսության պետական կարգավորման, հաշվապահական հաշվառման և վիճակագրության մեջ ցուցանիշները պետք է ունենան մեթոդաբանական միասնականություն և համադրելիություն:

Տնտեսության պետական կարգավորման մեջ օգտագործվող ցուցանիշների ընդարձակ ցանկն ուսումնասիրելու, վերլուծելու, նպատակին օգտագործելու, տնտեսական կապերի մասին առավել ավարտուն և ամբողջական պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է դասակարգել որոշակի սկզբունքներով: Ցուցանիշների համակարգում կարելի է ընդգրկել հետևյալ խմբերը. ամփոփ և մասնակի, մակրոտնտեսական և միկրոտնտեսական, քանակական և որակական, բնեղեն և արժեքային, բացարձակ և հարաբերական, վերջնական և միջանկյալ:

Ըստ տնտեսական երևույթների վրա ազդող գործոնների հաշվառման, տնտեսության կարգավորման ցուցանիշները լինում են ամփոփ կամ մասնակի: Բանն այն է, որ տնտեսական երևույթների վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնց ազդեցության չափը կարելի է հաշվարկել կամ առանձին-առանձին, կամ բոլորը միասին: Եթե ցուցանիշներն արտացոլում են բոլոր գործոնների ազդեցությունը միասին, ապա կոչվում են ամփոփ ցուցանիշներ: Իսկ եթե ցուցանիշը ցույց է տալիս առանձին գործոնի ազդեցությունը, ապա կոչվում է մասնակի: Օրինակ, արտադրության արդյունավետությունը, տնտեսական աճն արտահայտող ցուցանիշները ամփոփ ցուցանիշներ են, իսկ առանձին արտադրանքների աճի ցուցանիշները՝ մասնակի:

Ըստ տնտեսավարման մակարդակների՝ տնտեսական ցուցանիշները հիմնականում լինում են մակրոտնտեսական և միկրոտնտեսական:

Առաջին խումբ ցուցանիշները տնտեսական երևույթներն արտահայտում են ամբողջ տնտեսության մասշտաբով (արտադրության ծավալի մակրոտնտեսական ցուցանիշները, ամբողջական ծախսերը, գործազրկության մակարդակը, ինֆլյացիայի տեմպը և այլն): Տնտեսության պետական կարգավորմանը անմիջականորեն վերաբերում են հենց այս խմբի ցուցանիշները:

Միկրոտնտեսական ցուցանիշներն արտահայտում են տնտեսության առանձին օղակների գործունեությունը, որը ենթակա է ազատ ձեռներեցության կանոններին, շուկայական հարաբերությունները կարգավորող օրենքներին:

Ըստ տնտեսական երևույթների բնույթի գնահատման՝ ցուցանիշները լինում են քանակական և որակական, որոնք արտացոլում են տնտեսության տարբեր մակարդակներում տեղի ունեցող քանակական և որակական տեղաշարժերը, հետևաբար համապատասխանաբար բնու-

թագրում են արտադրության աճի էքստենսիվ և ինտենսիվ գործոնները, կառուցվածքային տեղաշարժերը և այլն:

Քանակական ցուցանիշները բնութագրում են տնտեսության զարգացման կամ աշխատանքների կատարման ուղղակի արդյունքները: Դրանք կարող են լինել ծավալային կամ ցանցային ցուցանիշներ: **Ծավալային ցուցանիշներն** արտացոլում են արտադրանքի արտադրության չափերը, օրինակ՝ արտադրանքի արտադրության առաջադրանքները ինչպես բնեղեն, այնպես էլ արժեքային արտահայտությամբ, ներդրումների, ապրանքաշրջանառության ծավալը և այլն:

Ցանցային ցուցանիշներն են ձեռնարկությունների, կազմակերպությունների քանակը, ինչպես նաև ուսանողների կոնտինգենտը և այլն: **Քանակական ցուցանիշները** տնտեսական ու սոցիալական զարգացման ծրագրերում մեծ տեղ են գրավում, ծրագրի որոշ բաժիններում նախատեսվում են միայն քանակական ցուցանիշներ:

Որակական ցուցանիշները բնութագրում են արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և բաժանվում են երկու խմբի՝ տեխնիկա-տնտեսական ու տեխնիկա-արտադրական նորմեր և տնտեսական որակական ցուցանիշներ: Տեխնիկա-տնտեսական նորմերը և չափերը բնութագրում են արտադրանքի որակը, տեսականին, իսկ տեխնիկա-արտադրական նորմերը՝ հիմնական և շրջանառու ֆոնդերի օգտագործումը, սպասարկման որակը և այլն: Այդպիսի նորմերը և չափերը հնարավորություն են տալիս արտադրության չափերը հիմնավորել արտադրական կարողությունների, հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի արդյունավետ օգտագործման տեսանկյունից, ինչպես նաև ապահովել անհրաժեշտ կապ ծրագրի առանձին մասերի, վերարտադրության գործընթացի տարբեր կողմերի միջև:

Տնտեսական որակական ցուցանիշները բնութագրում են տնտեսական գործունեության որակական կողմը, մակարդակը: Այդպիսի ցուցանիշներ են շահույթի, շահութաբերության, ֆոնդահատույցի, աշխատանքի արտադրողականության, բերքատվության, անասունների մթերատվության, արտադրանքի ինքնարժեքի մակարդակի և այլ ցուցանիշներ: Որակական ցուցանիշների նշանակությունը էլ ավելի մեծացավ տնտեսական բարեփոխումներից հետո:

Ըստ արտահայտման եղանակների՝ տնտեսական ցուցանիշները լինում են բնեղեն և արժեքային:

Բնեղեն ցուցանիշները բնութագրում են ներճյուղային, միջճյուղային, նյութահիրային կապերը և հնարավորություն են տալիս որոշելու թողարկվող արտադրանքի, կատարվող ծառայությունների ու աշխատանքների կոնկրետ քանակը՝ արատահայտված բնեղեն չափման միավորներով (տ, կմ, հատ, մ, կգ և այլն): Դրա հետ մեկտեղ, այդպիսի ցուցանիշները հնարավորություն են տալիս սահմանելու անհրաժեշտ համամասնություններ արտադրանքի կարևորագույն տեսակների արտադրության և սպառման միջև, որոշելու արտադրանքի կոնկրետ տեսակների նկատմամբ տնտեսության և բնակչության պահանջը: Սակայն այդ ցուցանիշների օգնությամբ հնարավոր չէ արտահայտել ընդհանուր

բնույթի համամասնությունները վերարտադրության տարբեր կողմերի միջև, որոշել ՀՆԱ, ՀԱԱ, ԱԵ, արտադրական ֆոնդերի արժեքը և այլն: Այդ նպատակով անհրաժեշտ է օգտագործել նաև արժեքային ցուցանիշներ, որոնք սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի բոլոր տարրերը արժեքային արտահայտությամբ համաձայնեցնելու հնարավորություն են տալիս: Վերջին հաշվով, արժեքային ցուցանիշների գոյությունը պայմանավորված է ապրանքային արտադրության առկայությամբ և արժեքի օրենքի գործողություններով:

Ըստ հաշվարկման ձևերի՝ տնտեսական ցուցանիշները լինում են **բացարձակ** և **հարաբերական**:

Առաջին խմբի մեջ ընդգրկվող ցուցանիշները բնութագրում են տնտեսական առաջադրանքների մեծությունը, դրանց փոփոխությունները բացարձակ մեծություններով, որոնք կարող են հաշվարկվել ինչպես բնեղեն, այնպես էլ արժեքային արտահայտությամբ (արտադրանքի առանձին տեսակների արտադրության քանակը, դրանց փոփոխությունները, հիմնական ֆոնդերի արժեքը, արտադրության ծավալը և այլն):

Հարաբերական ցուցանիշները բնութագրում են համապատասխան տնտեսական գործընթացների շարժը, դինամիկան, կառուցվածքը. արտահայտվում են հարաբերական մեծություններով (տոկոսներով, գործակիցներով, պրոմիլներով, տեսակարար կշիռներով): Հարաբերական ցուցանիշներն ավելի մեծ դեր են խաղում հատկապես հեռանկարային ժամանակաշրջանի համար կատարվող հաշվարկներում:

Ըստ արտադրանքի օգտագործման բնույթի՝ տնտեսական ցուցանիշները լինում են **վերջնական** և **միջանկյալ**: Վերջնական ցուցանիշները բնութագրում են վերջնական սպառման, անձնական և հասարակական՝ ոչ արտադրական սպառման, կուտակման, արտահանման համար օգտագործվող արտադրանքի և ծառայությունների քանակը: Վերջնական ցուցանիշները հաճախ անվանում են նաև արդյունքային ցուցանիշներ:

Իսկ միջանկյալ ցուցանիշները բնութագրում են միջճյուղային և ներճյուղային շրջանառությունը, այսինքն՝ արտադրանքի այն մասը, որը նորից վերադառնալու է արտադրության գործընթաց և ենթարկվելու վերջնամշակման:

Ամփոփում

1. Ազգային տնտեսության գործունակության վրա ազդում են արտաքին և ներքին գործոններ, որոնք պետք է դրվեն ազգային տնտեսության ռազմավարության հիմքում:
2. Ռազմավարական պլանավորումը ներառում է ռազմավարական որոշումների մշակումը և կառավարման համապատասխան օբյեկտների վարքագծի այնպիսի նպատակների և ռազմավարությունների առաջադրումը, որոնց իրականացումն ապահովում է դրանց արդյունավետ գործունեությունը երկարաժամկետ հեռանկարում:
3. Ռազմավարական կանխատեսումը օբյեկտի հնարավոր իրավիճակների կանխատեսման այլընտրանքային ուղիների և ժամկետների մասին փորձնական կամ գիտականորեն հիմնավորված փաստաթուղթ է:
4. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը տնտեսության պետական կարգավորման գործում ծառայում են որպես հիմնական գործիքներ և արտացոլում են պետության տնտեսական քաղաքականության ռազմավարությունը:
5. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը մշակվում են պետական կառավարման բոլոր մարմինների անմիջական մասնակցությամբ և հաստատվում են ՀՀ կառավարության կողմից:
6. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում օգտագործվում են բազմաթիվ ցուցանիշներ, որոնք պետք է բավարարեն մի շարք կարևորագույն պահանջներ և ծառայեն տնտեսության պետական կարգավորման նպատակին: Այդ ցուցանիշները դասակարգվում են մի շարք հատկանիշների հիման վրա:

Թեստեր և խնդիրներ

1. ***Նշված տարբերակներից որը ազգային տնտեսության գործունեությունն ապահովող արտաքին գործոն չէ.***
   ա. տնտեսական,
   բ. քաղաքական,
   գ. մշակութային,
   դ. երկրաբանական:

2. ***Կախված պլանավորման մակարդակից՝ պլանավորման ձևեր են.***
   ա. տարածաշրջանային,
   բ. միջճյուղային,
   գ. գերատեսչական,
   դ. ընդհանուր պետական:

3. ***Կախված լուծվող հիմնախնդիրների շրջանակներից՝ պլանավորման ձևեր են.***
   ա. մարտավարական,
   բ. իմպերատիվ,
   գ. ռազմավարական,
   դ. ինդիկատիվ:

4. ***Ինդիկատիվ պլանի բաժիններից են.***
   ա. ընդհանրացնող մակրոտնտեսական ցուցանիշներ,
   բ. արտաքին տնտեսական կապեր,
   գ. ֆինանսական պլան,
   դ. վերոնշյալներից բոլորը:

5. ***Ռազմավարական պլանավորման ընթացակարգի փուլերից չէ.***
   ա. ռազմավարական նպատակադրում,
   բ. ռազմավարական կանխատեսում,
   գ. ռազմավարական ծրագրավորում,
   դ. ռազմավարական նախագծում:

6. ***Ռազմավարական պլանի նախագիծը.***
   ա. ունի խորհրդանշական բնույթ,
   բ. ունի նախընտրական բնույթ,
   գ. ունի դիրեկտիվ բնույթ,
   դ. չունի դիրեկտիվ բնույթ:

7. ***Կախված խնդիրների բնույթից և լուծման ժամանակից՝ կանխատեսման խմբերը լինում են.***
   ա. ռազմավարական և մարտավարական,
   բ. օպերատիվ,
   գ. կարճաժամկետ,
   դ. վերոնշյալներից բոլորը:

8. Տնտեսական աճի մոդելներ են.

ա. հաշվեկշռված տնտեսական աճի մոդել,
բ. սահմանափակ և անսահմանափակ հորիզոնով մոդել,
գ. Հեքշեր-Օհլինի մոդել,
դ. մայրուղային տնտեսական աճի մոդել:

9. Տնտեսության պետական կարգավորման մեջ օգտագործվող ցուցանիշները դասակարգվում են ըստ հետևյալ խմբերի.

ա. ամփոփ և մասնակի,
բ. վերջնական և միջանկյալ,
գ. բնեղեն և արժեքային,
դ. սոցիոլոգիական և սոցիալական:

10. Նշվածներից ո՞րն է կանխատեսման գործառույթ.

ա. կանխագուշակում,
բ. նախագծում,
գ. նախազգացում,
դ. կանխարգելում:

Հիմնական հասկացություններ

Ազգային տնտեսություն
Ինդիկատիվ պլանավորում
Իմպերատիվ պլանավորում
Ռազմավարական պլանավորում
Ռազմավարական կանխատեսում
Ռազմավարական ծրագրավորում
Համալիր նպատակային ծրագիր
Ռազմավարական պլանավորման օբյեկտ և սուբյեկտ
Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր
Տնտեսական ցուցանիշներ

Հարցեր կրկնության համար

1. Ազգային տնտեսությունն ի՞նչ բաղադրամասեր ունի, որոնց նկատմամբ նույն տնտեսական քաղաքականությունը չի իրականացվում:
2. Որո՞նք են ազգային տնտեսության զարգացման գործոնները, և դրանք ի՞նչ խմբերում են ընդգրկվում:
3. Ո՞րն է ռազմավարական պլանավորման դերը ազգային տնտեսության պետական կարգավորման գործում, որո՞նք են դրա բնորոշ գծերը, նպատակները և խնդիրները:
4. Որո՞նք են ռազմավարական պլանավորման ընթացակարգերը:
5. Ո՞րն է ռազմավարական կանխատեսման դերը շուկայական տնտեսությունում, որո՞նք են գործառույթները, ուղղությունները և տեսակները:
6. Ի՞նչ տարբերություններ կան ինդիկատիվ և ռազմավարական պլանավորման միջև:
7. Ի՞նչ փուլերով է մշակվում ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը և ի՞նչ բաժիններից է բաղկացած:
8. Ի՞նչ ցուցանիշներ են օգտագործվում պետական կարգավորման մեջ և ի՞նչ հատկանիշներով են դրանք դասակարգվում:

ԳԼՈՒԽ 5

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ է տնտեսությունը երբեմն ունենում աճի կտրուկ անկումներ ու վերելքներ, ինչպե՞ս են դրանք դրսևորվում կարճ և երկար ժամկետներում:
- Ինչպե՞ս են տնտեսական տատանումները դրսևորվում ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի կորերի տեղաշարժերի միջոցով:
- Ինչո՞ւ է կարճ և երկար ժամկետներում ամբողջական պահանջարկի փոփոխությունը ազդում արտադրության ծավալի կամ գների մակարդակի վրա:
- Ի՞նչ է տնտեսության կայունացման քաղաքականությունը, ինչպես կարելի է այն իրագործել:
- Մակրոտնտեսական քաղաքականության ի՞նչ ձևեր գոյություն ունեն, ինչպե՞ս պետք է դրանք օգտագործվեն:

5.1. Տնտեսական տատանումներ և տնտեսական պարբերաշրջաններ

Տնտեսական զարգացման ընթացքը հարթ չէ, զարգացումը տեղի է ունենում անհավասարաչափ՝ որոշակի վերելքներով և անկումներով: Տնտեսական աճի դինամիկայի տատանումներ դիտարկվում են հատկապես վերջին 200 տարիների ընթացքում. առաջին տնտեսական ճգնաժամերը հիշատակվում են 1821թ. Անգլիայում և 1840թ.՝ Գերմանիայում:

Տնտեսական տատանումների հետևանքով իրական ՀՆԱ-ի աճի տեմպերը կտրուկ տատանվում են: Հաճախ դիտարկվում են տնտեսական ակտիվության անկումային ժամանակաշրջաններ, երբ բնակչության եկամուտները նվազում են, իսկ գործազրկության մակարդակը՝ աճում: Պարբերաբար փոխվում են տոկոսադրույքի, փոխանակային կուրսի մակարդակները, փողի զանգվածը: Սակայն տնտեսական պարբերաշրջանի փուլերի հիմնական ինդիկատորները թողարկման ծավալն ու զբաղվածության կամ գործազրկության մակարդակներն են: Պարբերաշրջան

բառը ծագել է հունական kyklos՝ շրջան բառից, ենթադրում է տնտեսական համակարգի վերադարձ նախկին վիճակին:

Տնտեսական պարբերաշրջանը արտադրության ծավալի, զբաղվածության մակարդակի և ինֆլյացիայի տեմպի պարբերական տատանումներն են: Նշված ցուցանիշների փոփոխության մակարդակը և ուղղվածությունը՝ բնութագրելով տնտեսական զարգացումը, ներկայացնում է տնտեսական իրավիճակը: Ուստի տնտեսական պարբերաշրջանը կարելի է սահմանել որպես երկու նույնատիպ տնտեսական իրավիճակների միջև ընկած ժամանակաշրջան, իսկ տնտեսական տատանումները՝ որպես տնտեսական ակտիվության մակարդակների՝ իրար հաջորդող վերելքներ ու անկումներ (վայրէջքներ):

Տնտեսական պարբերաշրջանի հիմնական փուլերն են վերելքն (էքսպանսիա) ու անկումը (ռեցեսիա): Տնտեսական պարբերաշրջանի կառուցվածքում առանձնացվում են ակտիվության բարձր ու ցածր կետերը (տե՛ս նկ. 5.1):



Նկ. 5.1. *Տնտեսական պարբերաշրջանի փուլերը*

Տնտեսական պարբերաշրջանի ընդհանուր տևողությունը սովորաբար չափվում է տնտեսական ակտիվության երկու բարձր կամ երկու ցածր կետերի միջև ընկած ժամանակաշրջանով: Անկման տևողությունը չափվում է ակտիվության բարձր և դրան հաջորդող ցածր կետերի միջև ընկած ժամանակաշրջանով, իսկ վերելքի տևողությունը՝ ակտիվության ցածր և դրան հաջորդող բարձր կետերի միջև ընկած ժամանակշրջանով:

Ներկայումս տնտեսագետներն առանձնացնում են տնտեսական պարբերաշրջանի 4 փուլեր.

➢ ***Վերելքի փուլ***. Այս փուլում տարեցտարի աճում է իրական ՀՆԱ-ն, կրճատվում է գործազրկության մակարդակը: Նկատվում է իրական կապիտալի և ներդրումների կտրուկ աճ: Զարգանում է նորամուծական

գործունեությունը, ստեղծվում են նոր ձեռնարկություններ և նոր ապրանքներ, արտադրական հզորություններն աշխատում են գերծանրաբեռնված, բարձրանում են արժեթղթերի և բաժնետոմսերի կուրսերը, տոկոսադրույքները, աշխատավարձը, ավելանում են ապրանքանյութական պաշարները: Տնտեսավարող սուբյեկտները ստանում են շահույթ: Վերելքի փուլում տնտեսությունը զարգացման նոր մակարդակ է ձեռք բերում:

➢ ***Ճգնաժամ*** *(ռեցեսիա, անկում).* Այս փուլում կրճատվում է գործարար ակտիվությունը, իջնում է գների մակարդակը, կրճատվում են իրական ներդրումները, արտադրության ծավալները: Որոշ ուշացումով աճում է գործազրկության մակարդակը, կրճատվում է շահույթը, ավելանում են բանկային պարտավորությունները, սնանկանում են ձեռնարկություններն ու բանկերը, վարկային տոկոսադրույքները բարձրանում են: Անկման փուլը համեմատաբար կարճ է տևում:

➢ ***Դեպրեսիա*** *(ստագնացիա).* Այս փուլի տևողությունն անհամեմատ երկար է: Արտադրության ծավալները շարունակում են կրճատվել, իսկ գործազրկության մակարդակը՝ բարձրանալ: Ներդրումների ծավալը մոտենում է 0-ի: Դեպրեսիայի փուլը տնտեսական կյանքի նոր պայմաններին և պահանջներին հարմարվելու, նոր հավասարակշռություն ձեռք բերելու փուլ է: Տնտեսավարող սուբյեկտները դրսևորում են որոշակի անվստահություն, գործելակերպի անկանոնություն: Հատկապես տուժում են առևտրային միջնորդները, բորսային գործակալները: Այս փուլում չնայած անկումը դադարում է, սակայն աճի միտումներ չեն նկատվում:

➢ ***Աշխուժացում.*** Այս փուլը գործարար ակտիվության վերականգնման փուլ է: Աճում են արտադրության ծավալը, զբաղվածության, գների մակարդակները, տոկոսադրույքները: Աշխուժացումն ամենից առաջ դրսևորվում է արտադրության միջոցներ արտադրող ճյուղերում: Կատարվում են նոր ներդրումներ, և ակնհայտ է դառնում, որ խնայողություններն ամբողջությամբ ներդրվում են: Բարելավվում է մակրոտնտեսական իրավիճակը, որից հետո սկսվում է տնտեսական աճ:

Մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող ցուցանիշները, կախված տնտեսական պարբերաշրջանի ժամանակ փոփոխության ձևից, կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

➢ ***համապարբերաշրջանային,***
➢ ***հակապարբերաշրջանային,***
➢ ***ոչ պարբերաշրջանային:***

Համապարբերաշրջանային փոփոխականները աշխուժացման և վերելքի փուլում ունեն աճի, իսկ անկման և դեպրեսիայի փուլում՝ նվազման միտում (օրինակ՝ արդյունաբերական արտադրանքի ծավալը, շահույթը, տոկոսադրույքները, փողի զանգվածը):

Հակապարբերաշրջանային փոփոխականներն աճում են ճգնաժամի և դեպրեսիայի ժամանակ և նվազում՝ աշխուժացման և վերելքի ժամանակ (օրինակ՝ գործազրկության մակարդակը, ապրանքանյութական պաշարները):

Ոչ պարբերաշրջանային փոփոխականների փոփոխության միտումները պայմանավորված չեն տնտեսական պարբերաշրջանի փուլերով (օրինակ՝ հիմնարար հետազոտություններին, ազգային պաշտպանությանն ուղղված պետական ծախսերը, որոշ երկրների արտահանումը (ԱՄՆ), որոշ երկրների ներմուծումը (Ճապոնիա): Մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկայից ելնելով՝ հնարավոր է կանխագուշակել մոտալուտ ճգնաժամը: Այս տեսանկյունից մակրոտնտեսական ցուցանիշները կարելի է դասակարգել առաջանցիկ և ուշացող ցուցանիշների խմբերում:

Տնտեսական պարբերաշրջանի տիպերը

Ժամանակակից տնտեսագիտությանը հայտնի են պարբերականության բազմաթիվ տեսակներ: Տնտեսագիտությունը դրանցից առանձնացնում է հետևյալ չորս տիպերը.

1. ***Ժուգլարի պարբերաշրջան***: Ընդգրկում է 7-12 տարվա տևողություն ունեցող պարբերաշրջաններ: Ստացել է Ժուգլարի պարբերաշրջան անվանումը՝ Անգլիայի և ԱՄՆ-ի արդյունաբերական տատանումների բնույթի ուսումնասիրության գործում մեծ ավանդ ունեցող Կլեմենտ Ժուգլարի պատվին: Այս տատանումները համընկնում են ներդրումների պարբերաշրջանների հետ, որոնք իրենց հերթին առաջացրել են ՀՆԱ-ի, ինֆլյացիայի տեմպի և գործազրկության մակարդակի փոփոխություններ:

Այս պարբերաշրջանը հայտնի է նաև որպես «բիզնես-պարբերաշրջան», «արդյունաբերական պարբերաշրջան», «միջին պարբերաշրջան»:

Առաջին արդյունաբերական ճգնաժամը հասունացել է 1821թ. Անգլիայում: 1847-1848թթ. ԱՄՆ-ի և եվրոպական մի շարք երկրներում ծագած ճգնաժամը առաջին համաշխարհային արդյունաբերական ճգնաժամն էր: Դրան հաջորդեցին 1857թ. և 1866թ. ճգնաժամերը: Ճգնաժամեր գրանցվեցին 1873թ., 1920-1921թթ., 1929-1933թթ, 1937-1938թթ, որոնցից առանձնանում է 1929-1933թթ. ժգնաժամը՝ արտադրության ծավալների կտրուկ և երկարատև անկմամբ: Եթե 19-րդ դարում արդյունաբերական պարբերաշրջանի տևողությունը կազմել է 10-12 տարի, ապա 20-րդ դարում այն իջել է մինչև 7-9 տարի:

➢ ***Կիտչինի պարբերաշրջան***: Այս պարբերաշրջանը անվանում են նաև պաշարների պարբերաշրջան: Տևողությունը 2-4 տարի է: Կարճաժամկետ ալիքներին առաջին անգամ ուշադրություն է դարձրել Ժոզեֆ Կիտչինը՝ ապրանքանյութական պաշարների շարժի ժամանակ վաճառքի գների և ֆինանսական հաշիվների ուսումնասիրման հիման վրա: Պաշարների մակարդակը յուրաքանչյուր ֆիրմայի տնտեսական գործունեության կարևոր պարամետրերից է: Անկանխատեսելի ազդակների հետևանքով ամբողջական պահանջարկում պաշարների մեծությունը փոփոխվում է: Քանի որ ֆիրմաները ցանկանում են պաշարները պահել որոշակի մակարդակի վրա, ապա դրանց չպլանավորված ավելացմանը կամ կրճատմանը արձագանքում են արտադրության ծավալների համապատասխան փոփոխությամբ:

Ռեցեսիայի փուլում ֆիրման կրճատում է պաշարների ծավալը մինչև նորմատիվային մակարդակը, և արդյունքում արտադրության ծավալները նույնպես կրճատվում են: Ֆիրմաների նման վարքագիծը դառնում է տնտեսական տատանումների կարևոր պատճառ:

➢ ***Կուզնեցի պարբերաշրջան:*** Այս պարբերաշրջանի տևողությունը 16-25 տարի է: 1930-ական թվականներին ԱՄՆ-ում վերլուծաբանները առաջին անգամ հաշվարկեցին բնակարանային շինարարության նպատակով կատարվող ներդրումների տարեկան ծավալի ինդեքսները և նկատեցին կտրուկ աճի և խորը անկման՝ իրար հաջորդող երկարատև ժամանակահատվածներ: Նման տատանումները անվանեցին «շինարարական պարբերաշրջան»: 1946թ. Սայմոն Կուզնեցը իր «Ազգային եկամուտ» աշխատությունում հանգել է հետևության, ըստ որի՝ ԱԵ-ի, սպառողական ծախսերի, համախառն ներդրումների ցուցանիշները բացահայտում են փոխկապակցված քսանամյա տատանումներ: Ի դեպ, շինարարությունում այդ տատանումները դրսևորվում են ամենամեծ ամպլիտուդով: Աշխատության հրապարակումից հետո «շինարարական պարբերաշրջան» տերմինի փոխարեն գործածվել է «երկարատև տատանումներ» տերմինը, իսկ 1955թ.՝ վերանվանվել «Կուզնեցի պարբերաշրջան»:

➢ ***Կոնդրատևի պարբերաշրջան:*** Այս պարբերաշրջանը հայտնի է նաև «երկար ալիքներ», «կեսդարյա ալիքներ» անվանումներով: Երկար ալիքների տեսության ստեղծման փորձեր արվել են 20-րդ դարի վերջերին: Սակայն առաջին անգամ դա նկարագրել է ռուս տնտեսագետ Նիկոլայ Կոնդրատևը՝ 1922թ.: Նա շարադրեց իր հետազոտությունների արդյունքները, որոնք վերաբերում էին 1770-1926 թթ. մի շարք զարգացած երկրների ապրանքային գների ինդեքսների, տոկոսադրույքների, ռենտայի, աշխատավարձի, արտադրանքի կարևոր տեսակների արտադրության ծավալների դինամիկային:

«Մեծ» վերելքի սկիզբը Կոնդրատևը կապում է հիմնարար բնույթի գիտատեխնիկական հեղաշրջման հետ, որն առաջ է բերում նորամուծական ակտիվության վերելք: Երկար ալիքների հիմքը ներդրումային պարբերաշրջանն է: Այս պարբերաշրջանի շարժիչ ուժ է նաև տնտեսության կառուցվածքի և գնային համամասնությունների վերածնավորումը: Ի դեպ, հումքի և սննդամթերքի գների փոփոխությունները երկար ալիքի գործողության մեխանիզմի կենտրոնական օղակն են: Կարևոր տեղ է զբաղեցնում արտադրության և փոխանակման պայմանների, ողջ շուկայական տնտեսական համակարգի պարբերաբար նորացումը, կատարելագործումը, տարերային զարգացող տնտեսությունից անցումը կարգավորվող՝ սոցիալական տնտեսության:

Զգալի դեր ունեն նաև սոցիալ-քաղաքական և սոցիալ-հոգեբանական մակրոցուցանիշների արմատական փոփոխությունները, որոնցից հատկանշականներն են՝ առաջադիմական ռեֆորմները, մեծ պատերազմների միգրացիոն գործընթացները:

Մեծ պարբերաշրջանը տևում է 40-60 տարի, այդ պատճառով անվանվում է նաև «կեսդարյա»: Այս պարբերաշրջանի գործողության մեխանիզմը հետևյալն է. տեխնիկական նորամուծությունների ներդրումը և ներ-

դրումային գործընթացի ընդլայնումը խթանում են արտադրությունն ու ամբողջական պահանջարկը, նպաստում են գների մակարդակի աճին: Գործազրկության մակարդակը կրճատվում է, աշխատանքի արտադրողականությունն ու աշխատավարձը բարձրանում են: Այս գործընթացներն առնչվում են ողջ տնտեսությանը՝ փոխելով մարդկանց ապրելակերպը: Տնտեսական աճին լրացուցիչ ազդակներ կարող են հաղորդել տեղային պատերազմները: Տնտեսությունը մոտենում է պարբերաշրջանի բարձր կետին: Նկատվում են տեղաշարժեր եկամուտների բաշխման կառուցվածքում, ավելանում են արտադրության ծախսերը, շահույթի աճը դանդաղում է: Տնտեսությունում նկատվում է ստագֆլյացիա: Տնտեսության վերելքին հաջորդում է երկարատև անկումը: Չնայած մարդիկ առաջվա նման լի են հույսով, սակայն իրական վիճակը այլ է: Տեղի է ունենում պարտավորությունների աճ, որը ցանկացած պահի կարող է ավարտվել կործանմամբ: Արտադրական հզորությունների ավելցուկ է նկատվում, ձեռնարկությունները մասսայաբար փակվում են, գործազրկությունն աճում է, գները ընկնում են:

Տնտեսական տատանումների պատճառները

Տնտեսագիտական մտքի ուղղությունները ամենատարբեր ձևով են մեկնաբանում գոյություն ունեցող տնտեսական տատանումները: Այս հիմնահարցի վերաբերյալ միանշանակ եզրահանգումներ անելը դժվար է, քանի որ տարբեր երկրներում տնտեսական տատանումները էապես տարբերվում են իրենց տևողությամբ, հաճախականությամբ և առաջացման պատճառներով: Գրեթե չկա այնպիսի տնտեսագետ, ով չի անդրադարձել պարբերաշրջանների հիմնախնդրին: Գիտնականներից յուրաքանչյուրը փորձել է բացահայտել տնտեսական ակտիվության տատանումների պատճառները: Պատճառը, հավանաբար, արևային բծերի պարբերաբար երևան գալն է, որն ազդում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության վրա: Միգուցե տնտեսական տատանումների պատճառները թաքնված են այն քաղաքական որոշումներում, որոնք երկրներին հասցնում են պատերազմական վիճակի: Հայտնի է, որ համաշխարհային և տեղային պատերազմները խախտում են հակամարտ երկրների տնտեսական հավասարակշռությունը: Միգուցե խնդիրը աշխարհագրական մեծ հայտնագործություններն են, որոնք նպաստում են բնակչության միգրացիային, կամ էլ մակրոտնտեսական տատանումները գիտական մեծ հետազոտությունների հետևանք են: Որոշ տնտեսագետներ էլ տատանումների պատճառները փնտրում են տնտեսական գործընթացների մեջ՝ գտնելով որ տնտեսական տատանումների պատճառներ են հիմնական արտադրական ֆոնդերի նորացման որոշակի ժամանակաշրջանը, դրամավարկային համակարգի գործունակության օրինաչափությունները, աշխատավարձի և աշխատանքի առաջարկի տատանումները, ներդրումային գործընթացների և ֆոնդային բորսաների գործունեության անկանխատեսելի վարքագիծը: Ընդհանուր առմամբ, տնտեսական տատանումներ առաջացնող գործոնները դասակարգվում են ըստ էկզոգեն (արտածին) և էնդոգեն (ներծին) խմբերի: Ներկայացնենք տնտեսա-

գիտական մտքի այն հիմնական ուղղությունները, որոնք փորձում են բացատրել տնտեսական տատանումների պատճառները:

Առաջին ուղղությունը պարբերաշրջանների պատճառ է համարում սահմանափակ վճարունակ պահանջարկով պայմանավորված՝ բնակչության անբավարար սպառումը: Այս տեսակետի կողմնակիցները ուտոպիստներն ու մարքսիստներն են: Այս ուղղության հետևողական ներկայացուցիչ է նաև ձախ քեյնսականության առաջնորդ Ջ. Ռոբինսոնը: Նրանք պարբերաշրջանների դեմ պայքարի ուղի են համարում սպառման խթանումը:

Երկրորդ ուղղությունը ճգնաժամերի պատճառ է համարում ճյուղերի միջև գոյություն ունեցող ոչ օպտիմալ համամասնությունները, գործարարների տարերային գործողությունները, այսինքն՝ տնտեսության անհավասարակշռությունը: Այս վարկածը խոսում է ինչպես ի օգուտ, այնպես էլ ի վնաս պետական կարգավորման: Մի կողմից, պետությունը պետք է նպաստի օպտիմալ ճյուղային համամասնությունների ձևավորմանը, մյուս կողմից, այդպիսի անհամամասնություններ կարող են առաջանալ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների թերությունների և բացթողումների հետևանքով: Այս ուղղության ակնառու ներկայացուցիչը Ֆրիդրիխ ֆոն Հայեկն է: Ըստ նրա՝ գերարտադրության հիմնական պատճառը պետության կողմից ավելցուկային ֆինանսավորումն է (էժան վարկեր, ուռճացած պահանջարկ):

Տնտեսագիտական մտքի երրորդ ուղղությունը ճգնաժամերը բացատրում է արտաքին՝ քաղաքական, ժողովրդագրական, բնական գործոնների ազդեցությամբ: Մի շարք տնտեսագետներ տնտեսական պարբերաշրջանները բացատրում են քաղաքական այլ պատահական իրադարձություններով: Այսպես, պատերազմական ժամանակ կտրուկ աճում է ռազմական արտադրանքի նկատմամբ պահանջարկը, իսկ խաղաղություն ձեռք բերելուց հետո ռազմական ծախսերը կրճատվում են, որին հետևում է տնտեսական անկումը: Այս ուղղության որոշ տնտեսագետներ տնտեսական պարբերաշրջանների պատճառ են համարում փոփոխվող մոնետար քաղաքականությունը: Այսպես, ազատական կառավարությունը, որպես կանոն, իրականացնում է ընդլայնողական, խթանող դրամավարկային քաղաքականություն, իսկ պահպանողականը՝ զսպող: Փաստորեն իրականացվող մոնետար քաղաքականության պարբերաբար փոփոխվող բնույթը պայմանավորում է տնտեսական տատանումների գոյությունը:

Չորրորդ ուղղությունը պարբերաշրջանները բացատրում է բնակլիմայական պայմանների փոփոխությամբ: Հետաքրքրական է մարժինալիստ Ու. Ջևոնսի տեսությունը, որը կապ է տեսնում գործարար ակտիվության պարբերաշրջանների և տասը տարին մեկ տեղի ունեցող արևային բծերի դասավորության փոփոխությունների միջև: Նա այդպիսի փոփոխություններով է բացատրում բերրի և ոչ բերրի տարիների հաջորդափոխությունը և տնտեսության անցումը ճգնաժամային վիճակից գործարար ակտիվության վիճակին: Այս տեսակետի կողմնակից է նաև Ա.Չիժևսկին: Նա ապացուցում է, որ մարդկային զարգացման ընթացքը

ենթարկվում է արեգակնային ակտիվության փոփոխություններին: Մթնոլորտում առկա էլեկտրոնային մասնիկների բաղադրության փոփոխությունը ազդում է մարդկանց ֆիզիկական վիճակի վրա և առաջացնում այս կամ այն սոցիալ-տնտեսական դրսևորումը:

Հինգերորդ ուղղությունը ճգնաժամերը բացատրում է հոգեբանական նկարագրի օգնությամբ: Ճգնաժամերի հոգեբանական տեսության կողմնակիցները՝ հիմնականում ավստրիական դպրոցը, գտնում են, որ տնտեսական պարբերաշրջանի յուրաքանչյուր փուլին հատկանշական է որոշակի հոգեբանական պատկեր, որի ազդեցությամբ ձևավորվում է ներդրումների նկատմամբ վերաբերմունք: Ըստ այս տեսության ներկայացուցիչ Ժ.Շումպետերի՝ փոփոխվող իրավիճակը ձևավորում է ներդրումային պարբերաշրջանի անհամաչափություն, որն էլ տնտեսական տատանումների պատճառ է դառնում:

5.2. Տնտեսական պարբերաշրջանի տեսությունները

Հարկ է նշել, որ պարբերականության խնդիրը հետաքրքրել է փիլիսոփաներին դեռևս Հին Հունաստանի և Հին Չինաստանի ժամանակներից: Սակայն տնտեսագետներն այս խնդրին ուշադրություն են դարձրել 19-րդ դարի սկզբներին, երբ Ժ. Սիսմոնդին և Թ. Մալթուսը ուսումնասիրեցին տնտեսության ճգնաժամերն ու պարբերական երևույթները: Սկզբնական շրջանում պարբերականության գաղափարը ժխտվում էր և, որպես Սեյի օրենքին (առաջարկն է ծնում պահանջարկ) հակադրություն, պարբերականության բացառիկությունը դիտարկվում էր որպես մասնավոր և պատահական երևույթ: Հետագայում տնտեսագետները՝ առաջինը Կ. Մարքսը, հատուկ ուշադրություն դարձրեցին տնտեսական պարբերաշրջանների ուսումնասիրության հարցին:

Տնտեսական պարբերաշրջանի տեսությունները բազմազան են, որը գործարար ակտիվության պարբերաշրջանի առաջացման պատճառների և գործողության մեխանիզմի վերաբերյալ տարբեր կարծիքների գոյության հետևանք է: Բացի այդ, գործարար ակտիվության տատանումները զգալի տարբերվում են իրենց տևողությամբ, պարբերականությամբ և ծագման պատճառներով:

Տնտեսական պարբերաշրջանների ժամանակակից տեսությունը գոյություն ունեցող տարբեր մոդելների ամբողջությունն է: Մոդելները կարելի է դասակարգել ըստ հիմնական մակրոտնտեսական դպրոցներին դրանց պատկանելիության:

Ըստ այս հատկանիշի՝ առանձնացվում են տնտեսական պարբերաշրջանի քեյնսյան և նորդասական մոդելները:

Տնտեսական պարբերաշրջանի քեյնսյան մոդելները

Առանձնացվում են տնտեսական պարբերաշրջանի հին և նոր մոդելներ: Ըստ էության, այդ մոդելները կամ էկզոգեն են, կամ էնդոգեն: Էկզո-

գեն մոդելներում տատանումների դինամիկան կայուն չէ, և տևողությունը կախված է էկզոգեն շոկերից ու սահմանափակումներից: Էնդոգեն մոդելներում կայուն տատանումները բացատրվում են մոդելի բնույթով:

Եթե քեյնսյան հին մոդելները ձևակերպում են պարբերականության ելակետային վարկածը, ապա նոր մոդելները այդ վարկածը հիմնավորում են: Քեյնսյան մոդելների դասակարգումը ներկայացնենք գծապատկեր 5.1–ի օգնությամբ:

Գծապատկեր 5.1



Քեյնսյան առավել հայտնի էկզոգեն մոդելներից են Սամուելսոն–Հիքսի և Տևեսի մոդելները: Ըստ այս հայեցակարգի՝ տնտեսական տատանումների առաջացման ազդակը անկախ, ավտոնոմ պահանջարկի փոփոխությունն է: Քեյնսյան տեսությունից հետևում է, որ ամբողջական պահանջարկի աճը առաջացնում է բազմարկչային էֆեկտ, որի արդյունքում ազգային արդյունքի աճը գերազանցում է ամբողջական պահանջարկի հավելաճը:

Քանի դեռ տնտեսությունում առկա են ազատ արտադրական հզորություններ, ամբողջական պահանջարկի աճը բավարարվում է գոյություն ունեցող արտադրական հզորությունների հաշվին: Երբ արդեն առկա հզորությունները ի վիճակի չեն բավարարելու ամբողջական պահանջարկը, գործատուները ստիպված են նոր ներդրումներ կատարել, արդյունքում առաջանում է բազմարկչի և արագացուցչի փոխազդեցություն:

Ազգային արդյունքի տատանումները կախված են տնտեսական համակարգի որակական բնութագրիչներից՝ արագացուցչից, սպառման սահմանային հակվածությունից կամ բազմարկչից և փողի շուկայի գործոններից: Որքան մեծ է անկախ պահանջարկի փոփոխության մեծությունը, այնքան մեծ է տատանման ալիքը և տևողությունը: Փողի շուկայի գործոնների ազդեցության դիտարկումը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ բանկային համակարգը նույնպես ի վիճակի է կարգավորել տնտեսական տատանումները:

Այս մոդելները տնտեսական պարբերաշրջանի մաթեմատիկական մոդելի ստեղծման առաջին քայլերն են և դժվար թե կարողանան լիովին բացատրել տնտեսական տատանումների իրական բնույթը:

Քեյնսյան դպրոցի էնդոգեն մոդելներից է Կալդորի մոդելը: Եթե նախորդ մոդելներում տնտեսական տատանումների առաջացման համար անհրաժեշտ է էկզոգեն փոփոխականների փոփոխություն, ապա Կալդորի մոդելը տալիս է իրավիճակային տատանումների էնդոգեն բացատրությունը: Ելակետային դատողությունը ներդրումների և խնայողությունների փոխհարաբերության բնույթն է: Երբ եկամտի մակարդակը ցածր է, տնտեսությունում մեծ է գործազրկությունը, և արտադրական հզորություններն ամբողջությամբ չեն օգտագործվում և նոր ներդրումներ չեն պահանջվում: Մյուս կողմից, եկամուտների ցածր մակարդակի ժամանակ խնայողության սահմանային հակումը հարաբերականորեն բարձր է, քանի որ մարդիկ հավատ չունեն վաղվա օրվա հանդեպ և խնայում են «սև օրվա» համար: Վերելքի շրջանում ձեռք է բերվում լրիվ զբաղվածություն, և օգտագործվում են արտադրական հզորություններ: Արտադրության հետագա ընդլայնումը պահանջում է էական ներդրումներ: Այս շրջանում մարդիկ աստիճանաբար կրճատում են խնայողությունը և ավելացնում սպառումը:

Ավելցուկային զբաղվածության և եկամուտների բարձր մակարդակի շրջանում ներդրումներ կատարելը կապված է չհիմնավորված, չարդարացված բարձր ծախսերի հետ, քանի որ տոկոսադրույքը և աշխատավարձը գտնվում են իրենց առավելագույն մակարդակում: Այս պայմաններում խնայողության սահմանային հակումը նորից կրճատվում է, քանի որ մարդիկ կարող են կատարել ավելի մեծ սպառողական ծախսեր և միևնույն ժամանակ խնայել ավելի շատ: Այժմ ծանոթանանք գործողության մեխանիզմին:

Երբ ներդրումները գերազանցում են խնայողությունները, բարիքների (ապրանքների և ծառայությունների) շուկայում առաջանում է պակասուրդ, որը խթանում է արտադրության աճը: Ազգային արդյունքը ավելանում և հասնում է իր հավասարակշիռ մակարդակին: Եթե այդպիսի իրավիճակը պահպանվում է երկար, տնային տնտեսությունները ավելացնում են խնայողությունների ծավալը՝ բարեկեցության բարձրացման համար: Այս դեպքում խնայողությունները գերազանցում են ներդրումները: Բարիքների շուկայում առաջանում է ավելցուկ, արտադրության ծավալները կրճատվում են՝ մինչև նոր կարճաժամկետ հավասարակշռության հաստատումը: Այս դեպքում հավասարակշռություն է հաստատվում տնտեսական ակտիվության ցածր մակարդակի պայմաններում: Եթե որոշ ժամանակ արտադրության ծավալները պահպանվում են ցածր մակարդակի վրա, պատրաստի արտադրանքի պաշարները կրճատվում են: Որոշ ժամանակ անց նորից նկատվում է բարիքների պակասուրդ, որը արտադրության ընդլայնման ազդանշան է: Այնուհետև տնտեսությունը ձեռք է բերում նոր հավասարակշիռ վիճակ տնտեսական ակտիվության բարձր մակարդակի պայմաններում:

Նորքեյնսյան մոդելները հիմնվում են սպասումների անկայունության և գների ու աշխատավարձի կայունության վրա: Նորքեյնսյան դպրոցի տնտեսագետները գների և աշխատավարձի կոշտությունը, մրցակցության ինստիտուցիոնալ սահմանափակումները համարում են պարբերաշրջանների շարժիչ ուժը: Կատարյալ մրցակցության պայմաններում ցանկացած արտաքին ազդակի ազդեցությունը կմարի: Քանի որ ներդրումների վերաբերյալ որոշումները պայմանավորված են գործարարների «հոտային բնազդով», ներդրումներին հատուկ է անկայունությունը, որը կարող է լինել գործարար ակտիվության պարբերաշրջանների առաջացման կարևոր գործոն: Անվանական աշխատավարձի կայունության պայմաններում, ներդրումների ծավալի փոփոխությամբ պայմանավորված ամբողջական պահանջարկի տատանումները դրսևորվում են ոչ թե գների մակարդակի, այլ թողարկման ծավալների տատանումներով:

Տնտեսական պարբերաշրջանի նորդասական մոդելները

Քեյնսյան տեսությունները մինչև 1970-ական թվականները գերիշխող էին, քանի որ դասականների հիմնական դրույթները գների և աշխատավարձի ճկունության, կատարյալ մրցակցության վերաբերյալ հանգեցնում էին նրան, որ պահանջարկի ցանկացած փոփոխություն ազդում էր գների, բայց ո՛չ թողարկման իրական ծավալի վրա: Սակայն վերջին տարիներին առաջարկվել են գների և աշխատավարձի բացարձակ ճկունության մոդելներ, որտեղ ամբողջական պահանջարկի ազդակները կարող են առաջացնել ոչ միայն փոփոխություններ ամբողջական առաջարկում, այլև պարբերաշրջանային տատանումներ:

Պարբերաշրջանի դասական մոդելների դասակարգումը ներկայացնենք գծապատկեր 5.2-ի օգնությամբ:

Գծապատկեր 5.2



Մոնետարիստական մոդելների հիմքը Մ. Ֆրիդմենի մոնետարիստական տեսությունն է: Ըստ մոնետարիստական հայեցակարգի՝ տատանումների պատճառը փողի առաջարկի էկզոգեն շոկերն են, և տնտեսությունը նոր հավասարակշռությանը հարմարվում է փողային ազդակի միջոցով: Եթե Ֆրիդմենի տեսությունը տատանումները բացատրում է շատ աղոտ, ապա Դ.Լեյդլերը իր մոդելում փորձում է ներկայացնել փողի առաջարկի, իրական եկամտի և գների մակարդակի կախվածությունը: Այս մոդելում հավասարակշռություն կարող է ձեռք բերվել ինչպես միանգամից, այնպես էլ՝ տատանումներով: Դիտարկվող մոդելում տնտեսությունը գալիս է հավասարակշռության վիճակի լրիվ զբաղվածության պայմաններում, և դրամավարկային քաղաքականությունը՝ գործազրկության մակարդակի վրա ազդելու տեսանկյունից, երկարաժամկետում դրսևորում է չեզոքություն, իսկ կարճաժամկետում կարող է ազդել զբաղվածության վրա: Դասական դպրոցի առավել հայտնի մոդել է իրական պարբերաշրջանի տեսությունը, որը ելնում է գների ճկունության և դասական երկվության ենթադրությունից և տնտեսական տատանումների հիմնական պատճառը համարում է տեխնոլոգիական առաջադիմությունը: Տեխնոլոգիական նոր նվաճումները անմիջականորեն ազդում են ինչպես իրական ամբողջական պահանջարկի, այնպես էլ իրական ամբողջական առաջարկի վրա:

Նորդասականները փորձում են տնտեսական տատանումները բացատրել անկատար տեղեկատվության և աշխատողների սխալ պատկերացումների մոդելների օգնությամբ: Այս մոդելների գործողության մեխանիզմն ավելի հանգամանորեն կներկայացնենք հետագա շարադրանքում:

5.3. Տնտեսական տատանումների գործոնները

Տնտեսական տատանումների հիմնահարցը տնտեսագետների և քաղաքական գործիչների ուշադրության կենտրոնում է: Առաջինները փորձում են բացահայտել դրանց առաջացման պատճառները և առաջարկել համապատասխան դեղատոմսեր, իսկ երկրորդները դրանք օգտագործում են իրենց քաղաքական նպատակներն իրագործելու, հատկապես ընտրարշավների ժամանակ հաղթանակ տանելու համար:

Տնտեսագետներն առաջարկել են տարբեր ժամանակներում գործարար ակտիվության տատանումները բացատրող տեսություններ: Մի շարք հեղինակներ ուշադրությունը կենտրոնացնում են նորամուծությունների վրա: Նրանք պնդում են, որ այնպիսի գլխավոր տեխնիկական նորություններ, ինչպիսիք են երկաթուղային ճանապարհները, ավտոմեքենաները կամ սինթետիկ թելերը, մեծ ազդեցություն են գործում ներդրումների և սպառողական ծախսերի վրա, հետևապես և՝ արտադրության, զբաղվածության և գների մակարդակի վրա: Սակայն այդպիսի խոշոր նորարարություններ հաճախ հանդես չեն գալիս և դրանով իսկ հանգեցնում

են տնտեսական ակտիվության անկայունությանը: Մի շարք տնտեսագետներ տնտեսական պարբերաշրջանները բացատրում են քաղաքական և այլ պատահական իրադարձություններով: Օրինակ, պատերազմները կարող են տնտեսական տեսանկյունից զուտ քայքայիչ լինել: Բանն այն է, որ պատերազմական գործողությունների ծավալման ժամանակ աննախադեպ աճում է ռազմական արտադրանքի պահանջարկը, իսկ ինֆլյացիայի մակարդակը կտրուկ բարձրանում է, սակայն խաղաղություն ձեռք բերելուց հետո ռազմական ծախսերը կրճատվում են, որին հետևում է տնտեսական անկումը: Կան և այնպիսի տնտեսագետներ, ովքեր տնտեսական պարբերաշրջանները համարում են զուտ մոնետար երևույթ: Այսպես, նրանց կարծիքով, երբ կառավարությունը չափազանց շատ փող է թողարկում, ապա առաջանում է ինֆլյացիոն բում, իսկ փողի համեմատաբար փոքր քանակն արագացնում է արտադրության անկումը և գործազրկության աճը:

Չնայած կարծիքների այսպիսի բազմազանությանը, տնտեսագետների մեծ մասը համարում է, որ արտադրության և զբաղվածության մակարդակը անմիջականորեն որոշող գործոնը ընդհանուր կամ ամբողջական ծախսերի մակարդակն է: Շուկայական կողմնորոշում ունեցող տնտեսությունում ձեռնարկություններն ապրանքներ ու ծառայություններ արտադրում են այն դեպքում, եթե դրանք կարելի է վաճառել: Պարզապես, եթե ընդհանուր պահանջարկը փոքր է, ապա շատ ձեռնարկությունների համար ձեռնտու չէ թողարկել մեծ ծավալի արտադրանք և ծառայություններ: Այստեղից էլ ցածր է արտադրության, զբաղվածության և եկամուտների մակարդակը: Ընդհանուր ծախսերի բարձր մակարդակը ենթադրում է, որ արտադրության աճը շահույթ է բերում, հետևաբար արտադրությունը, զբաղվածությունը և եկամուտները կավելանան:

Տնտեսական տատանումների պատճառների բացահայտման հարցում տնտեսագետներին հետաքրքրում է երկու հարց: Նախ, արտադրության և զբաղվածության մակարդակների տատանումների բոլոր հնարավոր պատճառներից որոնք են լավագույն ձևով ներկայացնում տնտեսական ակտիվության փաստացի տատանումները: Երկրորդ, ինչպես բացատրել այն փաստը, որ բազմաթիվ երկրներում արտադրությունը, զբաղվածությունը և այլ մակրոտնտեսական երևույթները, ըստ էության, ենթարկվում են պարբերաշրջանային տատանումների: Նշված հարցադրումներին պատասխանելիս հարկ է նկատի ունենալ երկու կարևոր հանգամանք: Նախ, տնտեսագիտական մտքի ուղղությունները ամենատարբեր ձևով են մեկնաբանում առկա տնտեսական տատանումները: Այսօր չկա որևէ տեսական կամ փորձնական հետազոտություն, որի հեղինակներին հաջողված լինի միանշանակ եզրակացությունների հանգել տնտեսական պարբերաշրջանների տեսության կարևորագույն հիմնահարցերի շուրջ: Երկրորդ, վերոհիշյալ հարցերի մեկնաբանությունները սկզբունքորեն տարբերվում են ըստ երկրների: Տարբեր երկրներում տնտեսական տատանումները էապես տարբերվում են իրենց տևողությամբ, պարբերականությամբ և առաջացման պատճառներով: Արտաքին առևտրի պայմաններից էական կախում ունեցող փոքր երկրներում կա-

տարվող տնտեսական գործընթացները տարբերվում են արտաքին աշխարհից փոքր կախվածություն ունեցող մեծ երկրների տնտեսական գործընթացներից: Հումք արտահանող երկրները կրում են այլ կարգի գործոնների ազդեցություն, քան պատրաստի արտադրանք արտահանողները: Տնտեսական տատանումների տեսության շրջանակներում անհնար է տալ բոլոր այդ հարցերի պատասխանները: Այնուամենայնիվ պետք է նկատել, որ տնտեսական ակտիվության պարբերաշրջաններն ունեն ընդհանուր գծեր, որով հնարավոր են դարձնում դրանց տեսական ուսումնասիրությունը:

Ինչպես նշվեց, տնտեսական տատանումները ոչ միայն կանխատեսելի և կարգավորվող չեն, այլ նաև կարող են լինել կարճատև և երկարատև, կրկնվել ավելի հաճախ կամ պակաս հաճախականությամբ: Հետևաբար տնտեսական տատանումների մոդելը ինչպես կարճ ժամկետի, այնպես էլ երկար ժամկետի համար դիտարկելու անհրաժեշտություն է առաջանում: Սակայն անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչով են տարբերվում կարճ և երկար ժամկետները: Մակրոտնտեսագետների մեծամասնությունը համարում է, որ տնտեսության զարգացման բնույթի արմատական տարբերությունները կարճ և երկար ժամկետներում կապված են գների դինամիկայի տարբերությունների հետ: Երկար ժամկետում գներն օժտված են բավարար ճկունությամբ և այդ պատճառով արձագանքում են առաջարկի և պահանջարկի փոփոխություններին: Սակայն կարճ ժամկետում բազմաթիվ ապրանքների գները «գամվում են» ինչ-որ մակարդակի վրա և չեն փոփոխվում: Կարճ և երկար ժամկետներում գների վարքի տարբերությունների բնույթը պայմանավորում է նաև տնտեսական քաղաքականության արդյունքների տարբերությունը այդ նույն ժամկետներում:

Կարճ և երկար ժամկետներում տնտեսության զարգացման տարբերությունները բացահայտելու համար դիտարկենք դրամավարկային քաղաքականության փոփոխությունների հետևանքները: Ենթադրենք՝ կենտրոնական բանկը 5%-ով անսպասելի նվազեցնում է փողի առաջարկը: Դասական մոդելի համաձայն՝ երկար ժամկետում փողի առաջարկի չափերն ազդում են անվանական ցուցանիշների, այլ ոչ թե՝ իրական ցուցանիշների վրա: Այդպիսի սկզբունքային մոտեցումը հայտնի է որպես դասական երկվություն: Հիշենք, որ դասական երկվությունը տեսություն է, որը տնտեսական ցուցանիշները բաժանում է իրական (բնաձևային կամ հարաբերական գներ) և անվանական (արժեքային) փոփոխականների: Հետևաբար երկար ժամկետում փողի առաջարկի հինգ տոկոս իջեցումը հանգեցնում է բոլոր ապրանքների գների 5%-ով իջեցմանը, այն դեպքում, երբ իրական աշխատավարձը, գործազրկության մակարդակը և արտադրության ծավալը մնում են անփոփոխ: Իսկ կարճ ժամկետում բազմաթիվ ապրանքների գները չեն արձագանքում դրամական քաղաքականության փոփոխություններին: Միայն գների որոշ տեսակներ կարող են աննշան փոփոխություններ կրել: Այդպիսի գները ճկուն չեն: Այդ պատճառով փողի առաջարկի կարճաժամկետ հետևանքները տարբեր են երկարաժամկետից:

Տնտեսական տատանումների մոդելը պետք է հաշվի առնի գների փոփոխությունը կարճ ժամկետում: Հետագայում կհամոզվենք, որ երբ փողի առաջարկի փոփոխություններին համապատասխան՝ գները չեն փոփոխվում, ապա խախտվում է դասական երկվության սկզբունքը, և դրամավարկային քաղաքականությունն ուժեղ ազդեցություն է թողնում արտադրության ծավալի և զբաղվածության վրա: Հատկապես փողի առաջարկի ընթացիկ փոփոխությունների հետ համապատասխանության գալու՝ գների անընդունակության պատճառով և այդ համապատասխանությունը վերականգնելու համար պետք է տեղի ունենան արտադրության ծավալի և զբաղվածության տատանումներ: Բանն այն է, որ եթե գները ճկուն չեն, ապա արտադրության ծավալը կարող է շեղվել դասական մոդելով որոշվող մակարդակից: Ըստ դասական մոդելի՝ արտադրության ծավալը կախված է աշխատանքի և կապիտալի առաջարկից, ինչպես նաև ունեցած տեխնիկայից ու տեխնոլոգիայից: Այստեղ գների ճկունությունը մեծ դեր է խաղում՝ ապահովելով առաջարկի և պահանջարկի մեծությունների մշտական հավասարակշռություն: Սակայն, երբ գները ճկուն չեն, արտադրության ծավալը նույնպես կախված է ապրանքների և ծառայությունների պահանջարկից, որն, իր հերթին, ենթակա է դրամավարկային, հարկաբյուջետային քաղաքականությունների և այլ գործոնների ազդեցությանը: Հետևապես, գների՝ ճկուն չլինելու հանգամանքը հիմք է հանդիսանում տնտեսությունը կայունացնելու նպատակով դրամավարկային քաղաքականությունը հաջողությամբ իրականացնելու համար:

Պահանջարկի և առաջարկի մոդելը, հանդիսանալով ամբողջ տնտեսագիտական տեսության հիմնական հայեցակարգը, ցույց է տալիս, թե ինչպես են ցանկացած ապրանքի վաճառքի գինը և ծավալը որոշվում պահանջարկի և առաջարկի փոխներգործությամբ: Տնտեսական տատանումներն ուսումնասիրելու համար օգտագործում ենք այդ մոդելի, այսպես կոչվող՝ «լայնամասշտաբ» տարբերակը՝ ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի մոդելը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու գների ընդհանուր մակարդակի և արտադրության ամբողջական ծավալի ձևավորման գործոնները: Այն միաժամանակ սկզբունքային հիմք է հանդիսանում տնտեսության դինամիկան երկար և կարճ ժամկետներում համադրելու համար: Եթե ապրանքի առաջարկի և պահանջարկի մոդելը նկատի է առնում միայն մեկ ապրանքի, ապա ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի մոդելն ընդգրկում է բոլոր ապրանքների և ծառայությունների շուկաների փոխազդեցությունները:

5.4. Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի փոփոխությունները կարճ և երկար ժամկետներում

Տնտեսական երկարատև և կարճատև տատանումների էությունը և պատճառները հասկանալու համար կարևոր է գների ճկունության ուսումնասիրումը: Անհրաժեշտ է պարզաբանել կախվածությունը գների ճկունության և տնտեսական տատանումների միջև: Դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի ու դրանց կորերի փոփոխությունները, ինչպես նաև դրանց վրա ազդող դրամավարկային, հարկաբյուջետային քաղաքականությունները, տնտեսության կայունացման ուղիները: Նախ քննարկենք ամբողջական պահանջարկը:

ա) Ամբողջական պահանջարկի կորը և դրա տեղաշարժերը

Ամբողջական պահանջարկը ցույց է տալիս կախվածությունը գնողունակ պահանջարկ ունեցող արտադրված արտադրանքի քանակի և գների ընդհանուր մակարդակի միջև: Հետևաբար, ամբողջական պահանջարկի կորը ցույց է տալիս ապրանքների և ծառայությունների այն քանակը, որ պետք է գնվի գների ամեն տվյալ մակարդակի դեպքում: Հետագայում (19-րդ գլխում) ուսումնասիրելու ենք ամբողջական պահանջարկի կարգավորման քաղաքականությունը: Այստեղ մեր խնդիրն է պարզաբանել ամբողջական պահանջարկի կորի կառուցման հարցը և որոշել դրա փոփոխությունները կարճ և երկար ժամկետներում: Ամբողջական պահանջարկի կորի կառուցման համար կարող ենք օգտագործել փողի քանակական տեսության հավասարումը.

$$MV= PY, \text{ որտեղ՝}$$

M-ը փողի առաջարկն է,

V-ն՝ փողի շրջապտույտի արագությունը (որն այստեղ ընդունում ենք կայուն),

P-ն՝ գնի մակարդակը,

Y-ը՝ արտադրված ապրանքների և ծառայությունների քանակը:

Այս հավասարման հիման վրա կառուցված ամբողջական պահանջարկի կորը ներկայացված է 5.2 նկարում:



Ամբողջական պահանջարկի կորը կախվածություն է ապրանքների և ծառայությունների ընդհանուր քանակի և գների միջին մակարդակի միջև: Երբ գների ընդհանուր մակարդակը P_1-ից իջնում և դառնում է P_2, ամբողջական պահանջարկն ավելանում է և Y_1-ից դառնում Y_2: Այսինքն, ամբողջական պահանջարկի կորը արտահայտում է հակադարձ կախվածություն եկամուտների մեծության և գների մակարդակի միջև:

Նկ. 5.2. Ամբողջական պահանջարկի կորը

Փողի քանակական տեսությունը հաստատում է այն միտքը, որ փողի առաջարկն արտադրության ծավալը որոշում է անվանական արտահայտությամբ, որն իր հերթին կախված է գների մակարդակից և արտադրված արտադրանքի քանակից: Ամբողջական պահանջարկի կորի գրաֆիկը կառուցված է փողի առաջարկի M մակարդակի համար: Այդ կորն արտահայտում է կախվածությունը գնի P մակարդակի և ապրանքների ու ծառայությունների Y պահանջարկի միջև: Ամբողջական պահանջարկի կորը թեքված է դեպի ներքև: Որքան բարձր է գնի P մակարդակը, այնքան փոքր է փողի M/P իրական պաշարը: Այդ պատճառով փոքր է ապրանքների և ծառայությունների Y պահանջարկը:

Ամբողջական պահանջարկի կորը ցույց է տալիս նաև, որ գների մակարդակի իջեցումն ավելացնում է ապրանքների և ծառայությունների ծավալը: Այդ հակադարձ կախվածությունը բացատրվում է երեք պատճառով՝ գների ընդհանուր մակարդակի իջեցումը հանգեցնում է իրական հարստության մեծացմանը, տոկոսադրույքի նվազմանը, որոնք էլ նպաստում են սպառման, ներդրումների և զուտ արտահանման պահանջարկի ավելացմանը: Դա նշանակում է, որ ավելի մեծ պահանջարկ է ներկայացվում ապրանքների և ծառայությունների նկատմամբ:

Կարևոր է նկատի ունենալ, որ ամբողջական պահանջարկի կորը նկարագրվում է «այլ հավասար պայմաններում» սկզբունքով: Բանն այն է, որ այդ կորը բացատրելիս փողի առաջարկն ընդունվում է որպես կայուն մեծություն, և ամբողջական պահանջարկի յուրաքանչյուր կոր նկարագրվում է որոշակի քանակի փողի համար:

Ինչպես նշեցինք, ամբողջական պահանջարկի կորի գրաֆիկը կառուցվում է փողի որոշակի զանգվածի տրված մեծությանը համապատասխան: Եթե փողի առաջարկը փոխվում է, ապա ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժվում է: Դիտարկենք երկու դեպք՝ առաջին, ենթադրենք՝ կենտրոնական բանկը կրճատում է փողի առաջարկը: Փողի

քանակական տեսության հավասարումը (MV=PY) խոսում է այն մասին, որ փողի առաջարկի կրճատումը հանգեցնում է անվանական արտահայտությամբ արտադրության արժեքային ծավալի (PY) համապատասխան կրճատման: Այդ պատճառով գնի յուրաքանչյուր տրված մակարդակին համապատասխանում է արտադրված արտադրանքի փոքր քանակ, իսկ արտադրված արտադրանքի յուրաքանչյուր տրված քանակին՝ գնի առավել ցածր մակարդակ, որի հետևանքով ամբողջական առաջարկի կորը տեղաշարժվում է դեպի ձախ՝ ներքև, ինչպես ցույց է տրված 5.3 նկարում:

Երկրորդ դեպք, ենթադրենք՝ կենտրոնական բանկն ավելացնում է փողի առաջարկը, արտադրության ծավալը (PY) մեծանում է: Այդ պատճառով գնի ցանկացած տրված մակարդակին համապատասխանում է արտադրության մեծ ծավալ, իսկ արտադրված արտադրանքի յուրաքանչյուր տրված քանակին՝ գնի առավել բարձր մակարդակ: Դրա հետևանքով ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժվում է դեպի աջ՝ վերև, ինչպես ցույց է տրված 5.4 նկարում: Ամբողջական պահանջարկի կորը կարող է տեղաշարժվել նաև այլ գործոնների ազդեցությամբ:



Երբ երկրի կենտրոնական բանկը կրճատում է փողի առաջարկը, գների նույն մակարդակի պայմաններում կտրուկ նվազում է ամբողջական պահանջարկը, AD_1 կորը տեղաշարժվում է դեպի ձախ՝ ներքև և ստանում AD_2 կորի դիրքը:

Նկ. 5.3. Ամբողջական պահանջարկի կտրուկ նվազում



Երբ կենտրոնական բանկն ավելացնում է փողի առաջարկը, գների նույն մակարդակի պայմաններում կտրուկ ավելանում է ամբողջական պահանջարկը, AD_1 կորը տեղաշարժվում է դեպի աջ՝ վերև և ստանում AD_2 կորի դիրքը:

Նկ. 5.4. Ամբողջական պահանջարկի կտրուկ աճ

բ) Ամբողջական առաջարկի կորը և դրա տեղաշարժերը

Ամբողջական առաջարկի կորը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու ֆիրմաների արտադրած և վաճառած ապրանքների ու ծառայությունների ծավալների մասին՝ գների յուրաքանչյուր տվյալ մակարդակի պայմաններում: Երկար ժամկետում ամբողջական առաջարկի կորը ուղղաձիգ է, այն դեպքում, երբ կարճ ժամկետում ունի դրական թեքվածություն: Դրանց պատճառների պարզաբանումը հնարավորություն կտա կողմնորոշվելու կարճ և երկար ժամկետներում տնտեսական տատանումների վարքի փոփոխության հարցերում:

Քանի որ երկար ժամկետում տնտեսության գործունեությունը նկարագրվում է դասական մոդելով, ապա ամբողջական առաջարկի կորը կկառուցենք դրա հիման վրա: Դասական մոդելի համաձայն՝ արտադրված ապրանքների և ծառայությունների քանակը կախված է միայն աշխատանքի ու կապիտալի ծախսերից և ունեցած տեխնոլոգիայից: Դա նշանակում է, որ արտադրության ծավալը երկար ժամկետում կախված չէ գների մակարդակից, արտադրանքը նույնն է գների բոլոր մակարդակների համար, հետևապես ամբողջական առաջարկի կորը ստանում է ուղղահայաց գծի տեսք, որը ցույց է տրված 5.5 նկարում:



Երկար ժամկետում գները խիստ ճկուն են, և գների ցանկացած փոփոխության նկատմամբ ամբողջական առաջարկը անտարբեր է, ուստի ունի ուղղահայաց գծի տեսք: Այն նշանակում ենք LRAS, որն անգլերեն նշանակում է երկար ժամկետի ամբողջական առաջարկ:

Նկ. 5.5. Ամբողջական առաջարկի կորը երկար ժամկետում

Ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի կորերի հատման կետը ցույց է տալիս գնի մակարդակը: Ամբողջական պահանջարկի փոփոխություններն ազդում են գների վրա, իսկ արտադրության ծավալի վրա չեն ազդում: Ինչպես նշեցինք, փողի առաջարկը կրճատելու դեպքում ամբողջական պահանջարկի կորը տեղափոխվում է ներքև: Դա ցույց է տրված 5.6 նկարում: Տնտեսությունը ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջակի կորերի հատման կետից (E_1) անցնում է նոր հատման կետ: Քանի որ ամբողջական առաջարկի կորը ուղղաձիգ է, ապա ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժը առաջ է բերում միայն գնի մակարդակի փոփոխություն:

Ամբողջական առաջարկի ուղղաձիգ կորը բավարարում է դասական երկվության պայմաններին, քանի որ ցույց է տալիս, որ արտադրված արտադրանքի քանակը կախված չէ ամբողջական պահանջարկից, հետևաբար կախված չէ փողի առաջարկից: Արտադրված արտադրանքի Y քանակը կոչվում է արտադրության մակարդակ լրիվ զբաղվածության պայմաններում կամ արտադրության բնական մակարդակ: Դա արտադրության այն մակարդակն է, որի պայմաններում տնտեսության ռեսուրսները լրիվ օգտագործվում են կամ, որ ավելի իրական է, գործազրկությունը գտնվում է բնական մակարդակի վրա:



Գների ճկունությունը ենթադրում է, որ փողի զանգվածի կրճատման դեպքում փողի իրական պաշարը կրճատվում է: Դրա հետևանքով AD_1 կորը տեղաշարժվում է ձախ՝ ներքև և հավասարակշռությունը E_1 կետից փոխադրվում է E_2 կետ:

Նկ. 5.6. Ամբողջական պահանջարկի կորի փոփոխությունները երկար ժամկետում

Անհրաժեշտ է նշել, որ դասական մոդելը և ամբողջական առաջարկի ուղղահայաց կորը կիրառելի են միայն երկարաժամկետ վերլուծությունների համար: Իսկ կարճ ժամկետում որոշ ապրանքների գները ճկուն չեն և չեն հարմարվում պահանջարկի փոփոխություններին: Այդ պատճառով ամբողջական առաջարկի կորը կարճ ժամկետում ուղղահայաց գիծ չէ: Դա ապացուցելու համար ենթադրենք, որ բոլոր ֆիրմաները նախօրոք թողարկել են արտադրանքի գնացուցակներ, որոնց վերահիրատարակումը զգալի ծախսեր է պահանջում: Այդ պատճառով գները չեն փոխվում: Գների տվյալ մակարդակի պայմաններում ֆիրմաները ձգտում են լիովին բավարարել իրենց գնորդների պահանջարկը: Արտադրանքի պահանջվող քանակն արտադրելու համար նրանք վարձում են լրացուցիչ աշխատողներ: Քանի որ գների մակարդակը չի փոխվում, ապա ամբողջական առաջարկի կորը ստանում է հորիզոնական դիրք (նկ. 5.7):



Ամբողջական առաջարկի կարճաժամկետ կորն ունի հորիզոնական գծի տեսք, քանի որ արտադրանքի քանակության ճկունությունը գների ցանկացած փոփոխության նկատմամբ ձգտում է անվերջության: Այն նշանակում ենք SRAS, որը անգլերեն նշանակում է կարճ ժամկետի ամբողջական առաջարկ:

Նկ. 5.7. Ամբողջական առաջարկի կարճաժամկետ կորը

Կարճ ժամկետում տնտեսական հավասարակշռության կետ է հանդիսանում ամբողջական պահանջարկի կորի և ամբողջական առաջարկի հորիզոնական գծի հատման կետը: Այդ դեպքում ամբողջական պահանջարկի չափերի փոփոխությունն ազդում է արտադրության ծավալի վրա: Եթե կենտրոնական բանկը կրճատում է փողի առաջարկը, ապա ամբողջական պահանջարկի կորը շարժվում է դեպի ձախ, ինչպես ցույց է տրված 5.8 նկարում: Տնտեսությունում տեղի է ունենում անցում ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի կորերի հատման E_1 կետից նոր՝ E_2 կետ: Քանի որ գնի մակարդակը չի փոխվում, ամբողջական պահանջարկի փոփոխությունը առաջ է բերում միայն արտադրության ծավալի կրճատում: Ամբողջական պահանջարկի հանկարծակի անկումից հետո ֆիրմաները գները չեն փոփոխում և իրենց արտադրանքն իրացնում են փոքր քանակությամբ, որը նրանց ստիպում է կրճատել զբաղվածությունը և արտադրության ծավալը:



Գների կայունության պայմաններում փողի զանգվածի ամեն մի կրճատում տեղաշարժում է ամբողջական պահանջարկի կորը դեպի ձախ՝ ներքև: Դրա հետևանքով հավասարակշռությունը E_1 կետից փոխադրվում է E_2 կետ՝ ցույց տալով արտադրության ծավալի կրճատումը Y_1 –ից Y_2:

Նկ. 5.8. Ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժը կարճ ժամկետում

Ամփոփելով կատարած մակրոտնտեսական վերլուծության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ կարճ ժամկետում գները ճկուն չեն, ամբողջական առաջարկի կորը հանդես է գալիս հորիզոնական տեսքով, և ամբողջական պահանջարկի փոփոխություններն ազդում են արտադրության ծավալի վրա: Իսկ երկար ժամկետում գները ճկուն են, ամբողջական առաջարկի կորը ուղղահայաց գիծ է, և ամբողջական պահանջարկի փոփոխություններն ազդում են միայն գների մակարդակի վրա: Դա նշանակում է, որ ամբողջական պահանջարկի փոփոխության հետևանքները տարբեր ժամանակահատվածներում միատեսակ չեն:

Այժմ քննարկենք ամբողջական պահանջարկի կրճատման բոլոր հետևանքները կարճ և երկար ժամկետներում, այսինքն՝ կարճաժամկետ

տատանումների վերլուծությունից անցնենք երկարաժամկետ տատանումների վերլուծությանը:

Ենթադրենք՝ տնտեսությունը երկարաժամկետ հավասարակշռության վիճակում է, ինչպես ցույց է տրված նկար 5.9-ում, որտեղ բերված են նաև երեք կորերը. ամբողջական պահանջարկի կոր, ամբողջական առաջարկի երկարաժամկետ կոր՝ LRAS և ամբողջական առաջարկի կարճաժամկետ կոր՝ SRAS: Երկար ժամկետում հավասարակշռությունը ձեռք է բերվում ամբողջական առաջարկի երկարաժամկետ կորի և ամբողջական պահանջարկի կարճաժամկետ կորի հատման կետում: Գները փոխվում են այնպես, որպեսզի ապահովեն այդ հավասարակշռությունը:



Հավասարակշռությունը կարճ և երկար ժամկետներում չի փոխվում, քանի որ դեռևս ամբողջական պահանջարկի փոփոխություն տեղի չի ունեցել, և տնտեսությունը կայուն վիճակում է:

Նկ. 5.9. Երկարաժամկետ հավասարակշռություն

Քանի որ տնտեսությունը գտնվում է երկարաժամկետ հավասարակշռության վիճակում, ապա ամբողջական պահանջարկի կորը նույնպես անցնում է այդ կետով:

Եթե կենտրոնական բանկը կրճատի փողի առաջարկը, ապա ամբողջական պահանջարկի կորը կշարժվի դեպի ձախ (նկար 5.10), որը կարճ ժամկետում (եթե գները ճկուն չեն) կհանգեցնի A-ից B կետին անցմանը: Այդ դեպքում զբաղվածության մակարդակը և արտադրության ծավալը նույնպես կլինեն բնական մակարդակից ցածր: Պետք է նշել, որ ժամանակի ընթացքում պահանջարկի կրճատման պատճառով աշխատավարձը և գները նույնպես կիջնեն: Դրան զուգընթաց, ամբողջական պահանջարկի կորը կտեղաշարժվի ներքև, մինչև երկարաժամկետ հավասարակշռության նոր կետը՝ C:



Եթե տնտեսության կայուն վիճակում հավասարակշռությունը A կետում է, ապա փողի զանգվածի կրճատման հետևանքով կարճ ժամկետում փոխադրվում է B կետ, և տեղի է ունենում թողարկման ու եկամուտների կրճատում: Երկար ժամկետում հավասարակշռությունը շարժվում է AD_2 կորի երկայնքով և վերադառնում ամբողջական առաջարկի LRAS կորի վրա: Այսինքն՝ վերականգնվում է արտադրության նախկին ծավալը՝ գների ավելի ցածր մակարդակի պայմաններում:

Նկ. 5.10. *Ամբողջական պահանջարկի կրճատման հետևանքները կարճ և երկար ժամկետներում*

5.5. Տնտեսության կայունացման քաղաքականությունը

Ինչպես համոզվեցինք, տնտեսական տատանումներն ընդհանուր առմամբ սկսվում են ամբողջական պահանջարկի կամ ամբողջական առաջարկի փոփոխությունների պատճառով, այսինքն՝ դրանց համապատասխան՝ կորերը տեղաշարժվում են և փոխում տնտեսության հավասարակշռության վիճակը:

Կորերի համապատասխան տեղաշարժերը, որոնք տեղի են ունենում որոշակի գործոնների ազդեցությամբ, տնտեսագիտության մեջ անվանում ենք տնտեսական ցնցումներ կամ ցնցակաթվածներ: Դրանց ներգործությունը տնտեսության վրա դրսևորվում է նրանով, որ արտադրության ծավալը և զբաղվածությունը շեղվում են բնական մակարդակից: Ուստի անհրաժեշտություն է առաջանում բացահայտել ցնցակաթվածների առաջացման մեխանիզմը և տնտեսության կարգավորման միջոցներ ձեռնարկել: Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի մոդելը բացահայտում է այդ բնույթի ցնցումների հետևանքով տնտեսական տատանումների առաջացման մեխանիզմը: Այդ մոդելը կարող է օգտագործվել նաև ցնցումների չեզոքացմանը և տնտեսական տատանումների վերացմանն ուղղված մակրոտնտեսական քաղաքականության արդյունքների գնահատման համար: Այդպիսի քաղաքականությունը կոչվում է կայունացման քաղաքականություն: Դա պետական քաղաքականություն է, որը արտադրության ծավալը և զբաղվածությունը բնական մակարդակի

վրա պահելու գործընթացը կարգավորելու նպատակ ունի: Քանի որ փողի առաջարկը, պետական գնումները և հարկերը մեծ ազդեցություն են գործում ամբողջական պահանջարկի վրա, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները հանդիսանում են կայունացնող քաղաքականության կարևորագույն բաղադրատարրերը: Այդպիսի քաղաքականությունների էությունը հանգամանորեն կպարզաբանվի հետագա շարադրանքում: Այստեղ նկարագրենք միայն այդ քաղաքականությունների ազդեցություններն ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի կտրուկ փոփոխությունների վրա:

Ամբողջական պահանջարկի կտրուկ փոփոխության ցայտուն օրինակ է բանկային հաշիվներից փողի բացթողնման համար ավտոմատ գանձման մեքենաների կիրառումը ԱՄՆ-ում: Այդ հարմարանքների կիրառումը հանգեցրեց կանխիկ փողի պաշարների նկատմամբ պահանջարկի կրճատման: Ենթադրենք՝ մինչև ավտոմատների ներդրումը բնակչությունը շաբաթը մեկ անգամ բանկից վերցնում էր 100 դոլար և ամբողջ շաբաթ ծախսում, ձեռքի փողը միջին հաշվով կազմում էր 50 դոլար: Ավտոմատների ներդրումից հետո բնակչությունը բանկից փող կստանա շաբաթը 2 անգամ՝ 50-ական դոլար, իսկ ձեռքի փողը միջին հաշվով կկրճատվի կրկնակի և կկազմի 25 դոլար, որը հավասարազոր է փողի շրջանառության արագության կրկնակի ավելացմանը: Փողի զանգվածի անփոփոխ մնալու պայմաններում առկա փողի շրջապտույտի արագության աճի հետևանքով ամբողջական պահանջարկի կորը տեղափոխվում է աջ (նկար 5.11):



Փողի շրջապտույտի արագացման հետևանքով AD_1 կորը շարժվում է դեպի աջ՝ վերև, և արտադրության ծավալը A կետից փոխադրվում է B կետ: Երկար ժամկետում տեղի է ունենում գների փոփոխություն, և հավասարակշռությունը AD_2 կորի երկայնքով շարժվում է դեպի ամբողջական առաջարկի երկարաժամկետ կորը: Ուստի երկար ժամկետում հավասարակշռությունը վերականգնվում է արտադրության բնական մակարդակի վրա՝ ավելի բարձր գների պայմաններում:

Նկ. 5.11. Ամբողջական պահանջարկի դրական տեղաշարժի ազդեցությունը կարճ և երկար ժամկետներում

Վերլուծության սկզբնական պահին երկարաժամկետ հավասարակշռության վիճակը A կետում է: Ամբողջական պահանջարկի աճի և փողի շրջապտույտի արագացման հետևանքով տնտեսությունում տեղի է ունենում տեղափոխություն A կետից B կետ, որտեղ արտադրության ծավալը գերազանցում է բնական մակարդակը: Դա տեղի է ունենում կարճ ժամկետում, երբ ֆիրմաները շատ ապրանքներ վաճառում են նախկին գներով: Այդ պատճառով նրանք վարձում են ավելի շատ աշխատող, ստեղծում լրացուցիչ աշխատատեղեր և ավելի ինտենսիվորեն են օգտագործում սարքավորումները:

Ժամանակի ընթացքում ամբողջական պահանջարկի բարձր մակարդակը հանգեցնում է գնի բարձրացման: Գնի աճին զուգընթաց՝ արտադրանքի նկատմամբ պահանջարկը նվազում է, իսկ արտադրության մակարդակն աստիճանաբար մոտենում է բնականին, տեղի է ունենում անցում B-ից C կետ: Գնի ավելի բարձր մակարդակին անցնելու գործընթացում ապրանքների արտադրության և ծառայությունների ծավալը գերազանցում է բնականին: Արտադրության այդ վերելքը չեզոքացնելու և արտադրությունը բնական մակարդակին մոտ մակարդակի վրա պահելու համար կենտրոնական բանկը կարող է կրճատել փողի առաջարկը, որպեսզի չեզոքացնի դրա շրջապտույտի արագության աճի հետևանքները: Դա ամբողջական պահանջարկը կայունացնելու հնարավորություն կտա: Կենտրոնական բանկը հնարավորություն ունի նաև պահանջարկի՝ արտադրության ծավալի և զբաղվածության վրա ունեցած հետևանքները նվազեցնել կամ վերացնել՝ փողի առաջարկի վրա հսկողություն սահմանելու ճանապարհով:

Տնտեսական տատանումների առաջացման պատճառ են նաև ամբողջական առաջարկի կտրուկ փոփոխությունները: Դա տնտեսական պայմանների այնպիսի կտրուկ փոփոխություն է, որը ազդում է ինչպես ապրանքների արտադրության ծախսերի, այնպես էլ ֆիրմաների սահմանած գների վրա: Առաջարկի փոփոխությունները անմիջաբար ազդում են գնի մակարդակի վրա: Այդ պատճառով դրանք հաճախ անվանում են գնային ցնցակաթվածներ: Ցնցակաթվածները կարող են լինել բարենպաստ և անբարենպաստ: Բարենպաստ ցնցումների օրինակ կարող է լինել ՆԱԵԿ-ի կողմից նավթի գների իջեցումը, որը հանգեցնում է արտադրության ծախսերի կրճատման և գների իջեցման: Իսկ անբարենպաստ ցնցումները և ցնցակաթվածները առաջ են բերում արտադրության ծախսերի ավելացում և գների աճ: Դրա օրինակ կարող են լինել բերք ոչնչացնող երաշտը, շրջակա միջավայրի պաշտպանության նոր օրենսդրությունը, արիմիութենական պայքարի ակտիվացումը, ՆԱԵԿ-ի կողմից գների բարձրացումը և այլն:

Առաջարկի անբարենպաստ փոփոխությունների հետևանքները պատկերված են 5.12 նկարում: Ամբողջական առաջարկի կարճատև կորը տեղաշարժվում է վերև: Այստեղ անտեսում ենք այն հանգամանքը, որ առաջարկի փոփոխությունը կարող է կրճատել արտադրության բնական մակարդակը, որի հետևանքով ամբողջական առաջարկի երկարատև կորը տեղափոխվում է ձախ: Եթե ամբողջական պահանջարկը մնում է

կայուն, ապա տեղի է ունենում անցում A-ից B կետ, գնի մակարդակը բարձրանում է, իսկ արտադրության ծավալը՝ կրճատվում: Այդպիսի վիճակը կոչվում է ստագֆլյացիա, քանի որ ստագնացիան (արտադրության անկումը) զուգակցվում է ինֆլյացիայի (գնի աճ) հետ:

Ամբողջական առաջարկի ոչ բարենպաստ ցնցումների հետևանքները մեղմելու նպատակով կարելի է ամբողջական պահանջարկը կարգավորել տնտեսական քաղաքականության երկու տարբերակների միջև ընտրություն կատարելու ճանապարհով: Առաջին տարբերակը կայուն ամբողջական պահանջարկի պահպանումն է (նկար 5.12), երբ արտադրության և զբաղվածության մակարդակները բնականից ցածր են: Վաղ թե ուշ գները կնվազեն մինչև նախկին մակարդակը, և լրիվ զբաղվածությունը կվերականգնվի (A կետ): Սակայն այս տարբերակը ձեռք է բերվում արտադրության կրճատման հիվանդագին գործընթացի միջոցով:



Ամբողջական առաջարկի անբարենպաստ կտրուկ փոփոխությունը հանգեցնում է գների կտրուկ փոփոխության կարճ ժամկետում, որի հետևանքով հավասարակշռության A կետը AD կորի երկայնքով բարձրանում է մինչև կարճաժամկետ SRAS$_2$ կորի հետ հատվելը: Այսինքն՝ գների կտրուկ աճը հանգեցնում է արտադրության ծավալի կրճատման:

Նկ. 5.12. Առաջարկի ոչ բարենպաստ ցնցում

Երկրորդ տարբերակը ամբողջական պահանջարկի ավելացումն է՝ նպատակ ունենալով ավելի արագ վերականգնել արտադրության բնական մակարդակը (նկար 5.13): Եթե ամբողջական պահանջարկի աճը իր մեծությամբ համընկնում է ամբողջական առաջարկի ցնցակաթվածի հետ, ապա տեղի է ունենում տեղափոխություն A-ից C կետ: Այս դեպքում կենտրոնական բանկին հաջողվում է մեղմել առաջարկի ցնցակաթվածի հետևանքները: Այդ որոշման թերությունն այն է, որ գների բարձր մակարդակը պահպանվում է նաև ապագայում: Ի դեպ, գոյություն չունի ամբողջական պահանջարկը տվյալ մակարդակի վրա պահելու այնպիսի եղանակ, որի դեպքում ապահովվի ինչպես լրիվ զբաղվածություն, այնպես էլ գնի կայունություն:

Այսպիսով, ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի մոդելները ցույց են տալիս նաև դրամավարկային քաղաքականության դերը: Ի դեպ, սխալ դրամավարկային քաղաքականությունը կարող է

տնտեսության ցնցակաթվածների աղբյուր լինել, իսկ ճիշտ քաղաքականությունը կարող է չեզոքացնել ցնցակաթվածները և կայունացնել տնտեսությունը: Ուստի անհրաժեշտ է պարզաբանել նաև տնտեսական քաղաքականության և նրա առանձին բաղադրատարրերի էությունը և դերը ոչ միայն տնտեսական տատանումների կայունացման, այլև տնտեսության զարգացման առումով:



Ամբողջական առաջարկի կտրուկ փոփոխության ազդեցությունը արագ հաղթահարելու նպատակով երկրի կենտրոնական բանկը կարող է միանգամից ավելացնել շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածը: Վերջինս ամբողջական պահանջարկի AD$_1$ կորը կփոխադրի AD$_2$ կորի դիրքը, և հավասարակշռությունը կվերականգնվի C կետում: Այսինքն՝ հավասարակշռությունը կվերականգնվի արտադրության նախկին ծավալի և գների ավելի բարձր մակարդակի դեպքում:

Նկ. 5.13. Առաջարկի ոչ բարենպաստ ցնցման մեղմացումը

5.6. Տնտեսության կայունացման քաղաքականության իրականացման մեխանիզմը

Տնտեսության զարգացումը էապես կախված է տվյալ երկրի կառավարության տնտեսական քաղաքականությունից: Տնտեսական քաղաքականությունը կառավարության տնտեսական միջոցառումների, ծրագրերի, տնտեսությունը վարելու կուրսի, ձևերի ու եղանակների ամբողջությունն է: Տնտեսագետները տարակարծիք են տնտեսական քաղաքականության բնույթին առնչվող հարցերում: Ոմանք գտնում են, որ անկայունությունը տնտեսությանը բնորոշ հատկություն է, որ ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի փոփոխությունների ազդեցությամբ տնտեսությունը մշտապես ենթարկվում է ցնցումների: Առանց տնտեսության կայունացմանն ուղղված դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության, դրանք կարող են հանգեցնել արտադրության ծավալների անարդյունավետ տատանումների, սրել գործազրկությունն ու ինֆլյացիան: Իսկ Միլտոն Ֆրիդմենի կարծիքով, տնտեսությունը ներքնապես կայուն է: Եթե ժամանակ առ ժամանակ այն ենթարկվում է ուժեղ և վտանգավոր տատանումների, ապա դա ոչ ճիշտ տնտեսական քաղաքականության պատճառով է: Ըստ նրա՝ ամենևին հարկ չկա նպատակաուղղված միջոցառումների օգնությամբ կարգավո-

ռել տնտեսությունը, ընդհակառակը, տնտեսական քաղաքականությունը մշակելիս պետք է հաշվի առնել հնարավորությունների սահմանափակությունը և բավարարվել նրանով, որ այդ քաղաքականությունը տնտեսությանը վնաս չտա:

Տնտեսագետների շրջանում բանավեճերը երկու հարցի շուրջ են: Առաջինը՝ արդյոք դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները պետք է ակտիվ դեր ունենան տնտեսության կայունացման գործում, թե դրանց դերը ընթացիկ տնտեսական տատանումներին հարմարվելն է: Երկրորդը՝ արդյոք տնտեսական քաղաքականությունը պետք է հետապնդի կայուն նպատակներ, թե քաղաքական գործիչներն իրենց հայեցողությամբ պետք է գործնականորեն արձագանքեն միայն տնտեսական պայմանների փոփոխությանը:

Տնտեսության կայունացումը այն առաջնահերթ հիմնախնդիրներից է, որ իր առջև դնում է կառավարությունը: Քաղաքականությունը մշակելիս ուշադրության կենտրոնում է այն հարցը, թե ձեռնարկվող միջոցները ինչպիսի ազդեցություն կունենան ինֆլյացիայի և գործազրկության վրա:

Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների մշակումն ու իրականացումը միշտ էլ եղել են կառավարության ավանդական գործառույթները, սակայն միայն 1940-ական թվականների վերջերին ձևավորվեց այն կարծիքը, որ դրանցում պետք է ընդգրկվեն կայունարար միջոցառումներ: Այսպես, ԱՄՆ-ում 1946թ. ընդունվեց զբաղվածության մասին օրենքը, որը վկայությունն էր այն բանի, որ կառավարությունն իր վրա է վերցնում մակրոտնտեսական իրավիճակի կայունացման քաղաքականությունը: Եվ, իսկապես, պետությունը պարտավորվեց մշտապես վարել այնպիսի քաղաքականություն, որն ուղղված լինի զբաղվածության ապահովմանը և արտադրության զարգացմանը:

Տնտեսական քաղաքականությունը կարող է լինել *ակտիվ կամ պասիվ*: Ակտիվ տնտեսական քաղաքականության կողմնակիցները գտնում են, որ պետությունը պետք է ակտիվ միջամտի տնտեսական գործընթացներին: Նրանց կարծիքով, անկման ժամանակաշրջանին բնութագրական են բարձր գործազրկության, եկամուտների և բնակչության բարեկեցության ցածր մակարդակներ, իսկ ամբողջական պահանջարկը և ամբողջական առաջարկը կարգավորելու նպատակով իրականացվող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները կանխում են այդ անկումները: Հետևաբար, նրանց կարծիքով պետությունը չպետք է հրաժարվի տնտեսությունը կայունացնող այդ հզոր լծակներից:

Պասիվ տնտեսական քաղաքականության կողմնակիցները քննադատաբար են վերաբերվում կառավարության՝ տնտեսության կայունացման միջոցառումներին, համարելով, որ նա պետք է ձեռնպահ մնա տնտեսական քաղաքականությունից: Այդպիսի տեսակետի ձևավորումը պայմանավորված է քաղաքականության ընդունման և իրականացման գործընթացների միջև ժամանակային խզումների գոյությամբ:

Բանն այն է, որ տնտեսական կայունությունը հեշտությամբ ձեռք կբերվի, եթե քաղաքականության ազդեցությունը դրսևորվի անմիջապես:

Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները տնտեսության վրա ներգործում են ոչ թե անմիջապես, այլ որոշ ժամանակահատվածից հետո: Դա նշանակում է, որ տևական խզումներ (լագեր) են առաջանում քաղաքականության իրականացման և տնտեսության վրա դրանց ազդեցության միջև: Այդպիսի երկարատև և կայուն խզումների առկայությունը բարդացնում է տնտեսության կայունացման խնդիրները:

Տնտեսագետները տարբերում են կայունարար քաղաքականության խզումների երկու տեսակ՝ *ներքին և արտաքին*: Ներքին խզումը այն ժամանակամիջոցն է, որն ընկած է տնտեսական կաթվածի (շոկի) և տնտեսական պատասխան միջոցառումներ իրականացնելու որոշման ընդունման պահի միջև: Բանն այն է, որ մինչև այդպիսի միջոցառումների հաստատումը անցնում է որոշակի ժամանակ՝ տվյալ միջոցառման օրենսդրական ձևակերպման համար: Արտաքին խզումը այն ժամանակամիջոցն է, որն ընկած է այդ քաղաքականության այս կամ այն միջոցառման հաստատման պահի և այն ժամանակի միջև, երբ դրանք սկսում են արդյունքներ տալ:

Հարկաբյուջետային քաղաքականությանը բնորոշ են երկարատև ներքին խզումները, որովհետև բյուջեի ծախսումները կամ հարկերը վերանայելու համար անհրաժեշտ է ձեռք բերել երկրի նախագահի և Ազգային ժողովի համաձայնությունը: Նման ձգձգումները հարկաբյուջետային քաղաքականությունը դարձնում են տնտեսական կայունացման բավականաչափ խաթարված լծակ: Իսկ դրամավարկային քաղաքականությանը բնորոշ են արտաքին խզումները: Այսպես, եթե երկրի կենտրոնական բանկն ավելացնում է փողի զանգվածը, ապա փողի շուկայում իջնում է բանկային տոկոսադրույքը, իսկ դա ազդում է ներդրումների ավելացման վրա և հանգեցնում արդյունքի ավելացմանը: Սակայն այդ ազդեցությունը ժամանակ է պահանջում:

Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների միջոցառումների իրականացման գործընթացում առկա խզումները դժվարացնում են դրանց հիմնական նպատակի՝ տնտեսության կայունացման խնդրի լուծումը: Պասիվ տնտեսական քաղաքականության կողմնակիցները պնդում են, որ այդ խզումների պատճառով կայունացման հաջողված քաղաքականությունը դառնում է անհնար, քանի որ տնտեսության կայունացման միջոցառումները շատ հաճախ հատուցվում են անկայունությամբ: Այս կամ այն միջոցառումը իրականացնելու որոշման ընդունման և դրա ներգործման սկզբի միջև ընկած ժամանակամիջոցում տնտեսության վիճակը կարող է փոփոխվել, և այդժամ ակտիվ քաղաքականությունը կարող է խթանել կամ կաշկանդել տնտեսության զարգացումը: Ակտիվ տնտեսական քաղաքականության կողմնակիցները գտնում են, որ դրա ընդունման ժամանակ պետք է զգույշ լինել: Սակայն դրանից չի հետևում, որ քաղաքականությունը պետք է լինի պասիվ՝ հատկապես խորը և տևական անկման պայմաններում:

Կայունարար քաղաքականության որոշ միջոցներ, որոնք կոչվում են «ինքնակայունարարներ», նպատակամղված են հատկապես այդ խզումների կրճատմանը: Դրանք, առանց քաղաքական կուրսի հատուկ

ճշգրտումների, խթանում կամ կաշկանդում են տնտեսական աճը: Այդպիսի կայունարարներ են եկամտահարկերի և գործազրկության ապահովագրության համակարգերը: Տնտեսական անկումների ժամանակաշրջանում, քաղաքացիների և կորպորացիաների եկամուտների կրճատմանը զուգընթաց, հարկերը նվազում են ինքնաբերաբար՝ առանց հարկային օրենսդրության հատուկ փոփոխությունների: Իսկ գործազրկությունից ապահովագրության համակարգն ինքնաբերաբար ապահովում է վճարումների ավելացում, քանի որ, գործազրկության աճին զուգընթաց շատերն են դիմում նպաստներ ստանալու համար: Այս երկու ինքնակայունարարները ներքին խզումներից զերծ հարկաբյուջետային քաղաքականության տարատեսակներ են:

Կայունարար քաղաքականության հաջող իրականացման համար անհրաժեշտ է կանխատեսել ապագա տնտեսական իրավիճակը: Առանց այդ իրավիճակի ճիշտ կանխատեսման՝ անհնար է տվյալ պահին ճիշտ տնտեսական քաղաքականություն ընտրել և ուղղել ամբողջական պահանջարկի ընդլայնմանը կամ դրա կրճատմանը: Դժբախտաբար, տնտեսության վերաբերյալ գիտելիքների պակասի պատճառով, շատ միտումներ մնում են անկանխատեսելի: Ապագա տնտեսական իրավիճակը կանխատեսելիս որոշվում են ինֆլյացիայի, գործազրկության և այլ փոփոխականների հավանական մեծությունները:

Հայտնի մակրոտնտեսագետ Ռ. Լուկասի կարծիքով, քաղաքական գործիչների գիտելիքները շատ բնագավառներում սահմանափակ են: Նա առանձնացնում է սպասումների ձևավորման հիմնահարցը: Ազդելով սպառողների, ներդրողների և տնտեսական այլ գործակալների վարքի վրա, սպասումները կարևոր դեր են խաղում տնտեսության մեջ: Սպասումները, բացի բազմաթիվ այլ գործոններից, կախված են նաև կառավարության տնտեսական քաղաքականությունից, որը պետք է հաշվի առնել այդ քաղաքականության ճշգրտման հնարավոր հետևանքները գնահատելիս: Ըստ Ռ. Լուկասի՝ քաղաքական տարբեր միջոցառումների գնահատման ավանդական մեթոդները բավարար չափով հաշվի չեն առնում քաղաքականության ներգործությունը սպասումների ձևավորման վրա: Այդ ավանդական մեթոդների քննադատությունը անվանում են Լուկասի քննադատություն:

Ակտիվ կամ պասիվ տնտեսական քաղաքականության ընտրությունը կախված է այն բանից, թե ինչպես են գնահատվում պատմության դասերը, այսինքն՝ թե կայունարար քաղաքականությունը ինչպիսի դեր է խաղացել պատմության մեջ: Սակայն պատմության դասերը նույնպես չեն կարող միանշանակ որոշել կայունարար քաղաքականության տարբերակի ընտրության հարցը: Պատմական դեպքերին տրվում են ոչ միանշանակ մեկնաբանումներ: Դրա վառ վկայությունը մեծ ճգնաժամի պատճառների քննարկումն է: Մի շարք տնտեսագետների կարծիքով դրա հիմնական պատճառը մասնավոր ծախսումների կտրուկ կրճատումից առաջացած անկումն է, իսկ մյուսների կարծիքով՝ փողի առաջարկի զգալի կրճատումը:

Տնտեսագետների հաճախակի բանավեճերի առարկա է նաև տնտեսական քաղաքականության կայունության նպատակահարմարության հարցը: Դրա իրականացումը ենթադրում է նախօրոք հրապարակել այն միջոցառումները, որոնք կձեռնարկվեն այս կամ այն տնտեսական իրավիճակում: Այս հարցը չի նույնացվում տնտեսական քաղաքականության ակտիվ կամ պասիվ լինելու հետ: Տնտեսական քաղաքականության կայունությունը կարող է լինել ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ: Օրինակ, պասիվ քաղաքականության կայունության դեպքում նախատեսվում են փողի առաջարկի տարեկան 3% հավելաճի անփոփոխ տեմպեր, իսկ ակտիվ տարբերակի դեպքում կարելի է առաջնորդվել հետևյալ կանոնով.

Փողի առաջարկի աճի տեմպերը =3% + (գործազրկության փաստացի մակարդակ՝ 6%): Առաջին դեպքում, մինչև 6% գործազրկության պայմաններում, փողի առաջարկը տարեկան կաճի 3%-ով, իսկ երկրորդ դեպքում, եթե տարեկան գործազրկությունը գերազանցում է 6%-ը, ապա փողի առաջարկը կավելանա նաև այդ գերազանցման չափով:

Բազմաթիվ տնտեսագետներ գտնում են, որ տնտեսական քաղաքականության հարցերը կարևոր են, և ճիշտ չէ դրանք քաղաքական գործիչների հայեցողությանը թողնելը: Գոյություն ունի այն մտավախությունը, որ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների հզոր լծակները կարող են հայտնվել անհիրազեկ կամ հարմարվողականորեն տրամադրված քաղաքական գործիչների ձեռքում, որը վտանգավոր է և դրական արդյունքներ ապահովել չի կարող: Հայտնի է, որ քաղաքական գործիչները մակրոտնտեսական քաղաքականությունն օգտագործում են իրենց նախընտրական արշավների ժամանակ: Ընտրությունների ընթացքում իրականացվող ձեռնարկումների ժամանակաշրջանը անվանում են գործարար ակտիվության քաղաքական պարբերաշրջան: Տնտեսական քաղաքականության կայունացման օգտին է խոսում քաղաքականության մեջ առկա անհետևողականության հիմնահարցը: Լինում են դեպքեր, երբ քաղաքական գործիչները դիտավորյալ նախօրոք հայտարարում են իրենց ծրագրած տնտեսական միջոցառումների մասին, որպեսզի ներգործեն մասնավոր հատվածում տնտեսական գործակալների սպասումների վրա: Բայց հետագայում, երբ անհատներն իրենց գործողությունները կառուցում են ձևավորված սպասումների համաձայն, քաղաքական գործիչները հրաժարվում են իրենց խոստումներից: Այդ պայմաններում տնտեսական գործակալները դադարում են հավատալ նրանց հայտարարություններին: Այդպիսի իրավիճակում անհրաժեշտ է վարել կայուն տնտեսական քաղաքականություն: Բանն այն է, որ քաղաքական գործիչներին որքան քիչ գործողությունների ազատություն է տրված, այնքան հաջողությամբ են լուծվում առաջադրված խնդիրները:

Ամփոփում

1. Տնտեսական պարբերաշրջանները օբյեկտիվ բնույթ ունեն և դրանց մեծացման վրա հնարավոր է ազդել տնտեսական քաղաքականությամբ: Այդ հարցում տնտեսագետներին օգնության է գալիս այդ տատանումների կարճաժամկետ և երկարաժամկետ առանձնահատկությունների բացահայտումը:

2. Ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժերը կապվում են փողի զանգվածի կարճաժամկետ փոփոխության հետ, որի հետևանքով այդ կորի հատվելը ամբողջական առաջարկի կարճաժամկետ կորի հետ առաջ է բերում արտադրության ծավալի, իսկ ամբողջական առաջարկի երկարաժամկետ կորի հետ՝ գների մակարդակի փոփոխություն:

3. Կայունացման քաղաքականությունը երկրի կառավարության այն միջոցառումների համակարգն է, որի շնորհիվ տնտեսական կտրուկ տատանումները մեղմանում են, և տնտեսական հավասարակշռությունը վերականգնվում է: Խոսքը վերաբերում է այն տատանումներին, որոնք տեղի են ունենում ամբողջական պահանջարկի կամ ամբողջական առաջարկի կտրուկ փոփոխության հետևանքով:

4. Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների իրականացման ընթացքում գոյություն ունեցող ներքին և արտաքին խզումների փաստը դեռևս չի ապացուցում տնտեսության զարգացման գործում պետության ակտիվ կամ պասիվ քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը, այլ միայն զգուշացնում է քաղաքական գործիչներին դրանց կիրառման ճիշտ ուղղության և ժամանակի ընտրության մասին:

Թեստեր և խնդիրներ

1. ***Ենթադրենք՝ գների մակարդակը 1 է, իսկ արդյունքը՝ 100: ԿԲ-ն ավելացնում է փողի առաջարկը 10 տոկոսով: Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի մոդելին համապատասխան, գների և արդյունքի փոփոխության ամենահավանական երթուղին (հաջորդականությունը) կլինի.***

   ա. Y.100 → 110 → 100 P.1 → 1.0 → 1.1
   բ. Y. 100 → 100 → 100 P.1 → 1.1 → 1.1
   գ. Y. 100 → 105 → 105 P.1 → 1.0 → 1.1
   դ. Y. 100 → 100 → 105 P.1 → 1.1 → 1.0

2. ***Կարճ ժամկետում ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժի արդյունքում.***

   ա. առաջանում են ամբողջական արդյունքի իրական ծավալի տատանումներ,
   բ. առաջանում են գների մակարդակի տատանումներ,
   գ. ամբողջական արդյունքի իրական ծավալը չի փոփոխվում,
   դ. պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:

3. ***Գների մակարդակի իջեցումը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է.***

   ա. իրական հարստության մեծացման ու տոկոսադրույքի իջեցման,
   բ. իրական հարստության մեծացման ու տոկոսադրույքի բարձրացման,
   գ. իրական հարստության կրճատման ու տոկոսադրույքի բարձրացման,
   դ. իրական հարստության կրճատման ու տոկոսադրույքի իջեցման:

4. ***Եթե գների մակարդակը բարձրացել է, իսկ արտադրության ծավալը՝ նվազել, ապա դա հետևանք է.***

   ա. ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժի դեպի աջ,
   բ. ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժի դեպի ձախ,
   գ. ամբողջական առաջարկի անբարենպաստ ցնցման,
   դ. ամբողջական առաջարկի կորի տեղաշարժի դեպի աջ:

5. ***Երկար ժամկետում արտադրության ծավալը որոշվում է.***

   ա. փողի առաջարկով, պետական ծախսերի և հարկերի մակարդակով,
   բ. կապիտալով, աշխատանքով և տեխնոլոգիայով,
   գ. ամբողջական պահանջարկով,
   դ. տոկոսադրույքի մակարդակով:

6. ***Արտահայտությունների ո՞ր զույգն է ճիշտ ներքոնշյալ նախադասության համար:***

   «Ներքին խզումը այն ժամանակահատվածն է, որն ընկած է .... և տնտեսական քաղաքականության պատասխան միջոցառումների ..... միջև»:

   ա. տնտեսական ցնցման ի հայտ գալու, ընդունման պահի,

բ. ցնցման պահի, արդյունքների ստացման պահի,
գ. գների բարձրացման արդյունքների, ստացման պահի,
դ. որևէ միջոցառման, ընդունման պահի:

7. Երկարատև արտաքին ժամանակային խզումները բնորոշ են.
ա. հարկային քաղաքականությանը,
բ. դրամավարկային քաղաքականությանը,
գ. բյուջեի ծախսերի փոփոխման քաղաքականությանը,
դ. բյուջեի հավասարակշռության ապահովման քաղաքականությանը:

8. LRAS-ը արտահայտվում է Y=2000, իսկ SRAS-ը՝ P=1 պայմաններով: AD-ն տրված է Y=2.M/P հավասարմամբ: Փողի առաջարկը՝ M=1000: Գնային շոկի արդյունքում կարճատև SRAS-ը բարձրանում է P1=1.25 գների մակարդակ: Որոշել.
ա) կարճատև հավասարակշռության կոորդինատները շոկից հետո,
բ) ԿԲ-ն որքան պետք է ավելացնի փողի առաջարկը, որպեսզի տնտեսությունում ապահովվի արտադրության ծավալի նախկին մակարդակը:

9. Փողի իրական պաշարի պահանջարկը ներկայացված է $(\frac{M}{P})^D = kY$ *հավասարմամբ: Փողի շրջանառության արագությունը հավասար է 10-ի, գների մակարդակը՝ P=2, իսկ M=10000: Ենթադրենք՝ ԿԲ-ն փողի առաջարկն ավելացրել է 20%-ով: Որոշել.*
ՀՆԱ-ն և գների մակարդակը երկարաժամկետ և կարճաժամկետ հավասարակշռության նոր պայմաններում:

10. Տնտեսությունը գտնվում է երկարաժամկետ հավասարակշռության վիճակում և բնութագրվում է հետևյալ կերպ: LRAS-ը տրված է Y=2800 հավասարմամբ, SRAS-ը՝ P=1 հավասարմամբ: AD-ն տրված է Y=3.5 x M/P հավասարմամբ, որտեղ՝ M=800: Տեղի է ունեցել առաջարկի անբարենպաստ շոկ, որի հետևանքով գների մակարդակը բարձրացել է մինչև 1.4, իսկ արտադրության ծավալի ներուժային մակարդակը կրճատվել է մինչև 2500: Որոշել.
ա) ՀՆԱ-ն՝ 1.4 գների մակարդակի դեպքում և գինը՝ ՀՆԱ-ի 2500 մակարդակի դեպքում՝ կարճատև և երկարատև ժամանակահատվածներում, եթե ԿԲ-ն փողի առաջարկը պահում է կայուն,
բ) փողի առաջարկի փոփոխությունը, որն անհրաժեշտ է արտադրության ծավալը 2800 մակարդակում պահելու համար:

Հիմնական հասկացություններ

Տնտեսական տատանումներ

Տնտեսական պարբերաշրջան

Գործարար պարբերաշրջան

Շինարարական պարբերաշրջան

Ամբողջական պահանջարկ

Ամբողջական առաջարկ

Կայունացման քաղաքականություն

Ակտիվ տնտեսական քաղաքականություն

Պասիվ տնտեսական քաղաքականություն

Ներքին խզում (ներքին լագ)

Արտաքին խզում (արտաքին լագ)

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞վ են տարբերվում տնտեսական տատանումները տնտեսական պարբերաշրջաններից:
2. Որո՞նք են տնտեսական պարբերաշրջանների հիմնական տեսակները:
3. Որո՞նք են տնտեսական պարբերաշրջանի փուլերը, ի՞նչ առանձնահատուկ գծեր ունեն դրանք:
4. Որո՞նք են տնտեսական տատանումների պատճառները:
5. Ի՞նչ տարբերություններ կան կարճաժամկետ և երկարաժամկետ տատանումների միջև:
6. Ի՞նչ գործոնների ազդեցությամբ է տեղաշարժվում ամբողջական պահանջարկի կորը:
7. Որո՞նք են ամբողջական առաջարկի կորի կտրուկ տեղաշարժերի պատճառները:
8. Որո՞նք են տնտեսական կայունացման գործիքները, և ինչպե՞ս պետք է դրանք օգտագործել:
9. Ի՞նչ տեսակետներ գոյություն ունեն մակրոտնտեսական կարգավորման քաղաքականության նպատակահարմարության մասին:
10. Ինչպե՞ս է հիմնավորվում ակտիվ կամ պասիվ տնտեսական քաղաքականության ընտրությունը:
11. Որո՞նք են տնտեսական քաղաքականության կայունության առավելությունները:

ԳԼՈՒԽ 6

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Ու՞մ կողմից է արտադրվում ամբողջական եկամուտը, և ի՞նչ գործոններ են որոշում դրա մեծությունը:
- Ինչպե՞ս է բաշխվում ազգային արդյունքը, դրա որ մասն են ստանում աշխատանքի և որը՝ կապիտալի սեփականատերերը:
- Ինչպե՞ս է օգտագործվում ամբողջական եկամուտը սպառման, ներդրումների և պետական ծախսերի նպատակներով:
- Ի՞նչն է հավասարակշռում ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև փոխառու միջոցների առաջարկն ու պահանջարկը:
- Ինչպե՞ս է տնտեսական քաղաքականությունը ազդում ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա:

6.1. Ապրանքների և փողի շրջանառությունը տնտեսությունում

Ազգային արդյունքի արտադրության, բաշխման և օգտագործման գործընթացների ու մեխանիզմների մակրոտնտեսական վերլուծության հիմքում ընկած է տնտեսությունում ապրանքների և փողի շրջանառության մոդելը, որն ավելի ընդհանուր ձևով կոչվում է «եկամուտներ – ծախսեր» փողի հոսքերի շրջանառության մոդել:

Ապրանքների և փողի շրջանառությունը տնտեսությունում տեղի է ունենում տնտեսական սուբյեկտների միջև, որոնք իրար հետ հարաբերվում են ապրանքների և ծառայությունների, արտադրության գործոնների և ֆինանսական շուկաներում: Շուկայական տնտեսության սուբյեկտներ են համարվում.

1. տնային տնտեսությունները,
2. ձեռնարկությունները,
3. պետությունը:

Տնային տնտեսությունը մեկ կամ մի քանի անձից բաղկացած տնտեսական միավոր է, որը՝

- տնտեսական որոշումները ընդունում է ինքնուրույն,
- արտադրության որևէ գործոնի սեփականատեր է,
- ձգտում է առավելագույն չափով բավարարել իր պահանջմունքները:

Տնային տնտեսություն են համարվում սպառողները, վարձու աշխատողները, կապիտալի, հողի, արտադրության միջոցների սեփականատերերը:

Ձեռնարկությունը այնպիսի տնտեսական միավոր է, որը՝

- տնտեսական որոշումները ընդունում է ինքնուրույն,
- ձեռք է բերում արտադրության գործոններ, կազմակերպում է ապրանքային արտադրություն, արտադրանքը վաճառում այլ ձեռնարկություններին, տնային տնտեսություններին և պետությանը,
- ձգտում է առավելագույն շահույթ ստանալ:

Պետությունը, որպես շուկայական տնտեսության սուբյեկտ, հանդես է գալիս պետական կառավարական մարմինների ձևով: Վերջիններս ունեն քաղաքական իշխանություն, սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքներ ու պարտականություններ՝ համապետական շահերի և նպատակների իրագործման համար տնտեսական սուբյեկտների և շուկայի վրա վերահսկողություն սահմանելու գործում:

Տնային տնտեսությունները և ձեռնարկությունները կազմում են տնտեսության *մասնավոր հատվածը:*

Նշված ինստիտուցիոնալ միավորները սերտորեն համագործակցում են բոլոր երեք շուկաներում՝ ապրանքների ու ծառայությունների, արտադրության գործոնների և ֆինանսական՝ ձևավորելով յուրօրինակ «ծախսեր-եկամուտներ» փողի հոսքերի շրջանառությունը:

Իրական տնտեսությունում տեղի ունեցող փողի հոսքերը դիտարկենք տնտեսական սուբյեկտների տեսանկյունից:

Տնային տնտեսությունները արտադրության գործոնների տրամադրման դիմաց ստացած եկամտից (աշխատավարձ + շահույթ + ռենտա + տոկոսային եկամուտ) պետությանը վճարելով մասնավոր հարկերը՝ մնացած տնօրինվող եկամուտը օգտագործում են սպառողական ծախսերի և մասնավոր խնայողությունների համար:

Ձեռնարկությունները ապրանքների ու ծառայությունների վաճառքից ստացած եկամուտը օգտագործում են արտադրության գործոնների ձեռքբերման դիմաց վճարելու և պետությանը հարկեր վճարելու համար:

Շրջանառությունը ներկայացնող գծապատկերից երևում է, որ պետությունը մասնակցում է փողի հոսքերի շրջանառությանը և կապված է ինչպես մասնավոր հատվածի սուբյեկտների, այնպես էլ շուկաների հետ: Պետությունը, ստանալով հարկային եկամուտները, պետական գնումներ է կատարում արտադրության գործոնների և ապրանքների ու ծառայությունների շուկայից, եկամուտների և ծախսերի բացասական մնացորդի (պետական բյուջեի պակասուրդի) դեպքում՝ դիմում է ֆինանսական շուկային՝ թողարկում պետական փոխառություններ:

Եթե տնային տնտեսությունները որոշում ընդունեն կրճատել սպառողական ծախսերը, ապա ամբողջական պահանջարկը կկրճատվի, և ձեռնարկությունը ստիպված կլինի կրճատել թողարկվող արտադրանքի ծավալը, դա իր հերթին կնվազեցնի ամբողջական եկամուտը: Այսինքն՝ ամբողջական պահանջարկը որոշում է արտադրության և զբաղվածու-

թյան մակարդակը, վերջինս՝ ամբողջական եկամտի մեծությունը, իսկ սա էլ, իր հերթին, ձևավորում է ամբողջական պահանջարկը:

Գծապատկեր 6.1

Ազգային արդյունքի հոսքերի շրջանառություն



«Արտաքին աշխարհը» տնտեսական գործակալների այն խումբն է, որի հետ շփվում են երկրի գործակալները՝ բաց տնտեսության պայմաններում: Արտաքին աշխարհի առկայությունը «եկամուտներ-ծախսեր»

հոսքերից առաջացնում է արժույթի «արտահոսք»՝ ներմուծման համար, և միաժամանակ, այլ հոսքերում ներգրավվում են լրացուցիչ միջոցներ՝ արտահանման տեսքով:

«Արտահոսք» է համարվում երկրի ներսում արտադրված ապրանքի գնումից բացի որևէ այլ նպատակով եկամտի օգտագործումը (օրինակ՝ հարկերի վճարումը, խնայողությունների կուտակումը, ներմուծված ապրանքների ծախսերը):

«Ներհոսք» է համարվում երկրի ներսում արտադրված ապրանքների վրա կատարվող սպառողական ծախսերի ցանկացած ավելացումը (օրինակ՝ ներդրումները, պետական ծախսերը, արտահանումը):

Ազգային արդյունքը բնութագրող իրական և փողի հոսքերի շրջանառությունը ցույց է տալիս, որ այդ հոսքերը հաջորդում են միմյանց, եթե գոյություն ունի հավասարակշռություն տնային տնտեսությունների, ձեռնարկությունների, պետության և մնացյալ աշխարհի ամբողջական ծախսերի և արտադրության ամբողջական ծավալի միջև: Տնտեսական գործակալներից մեկի ծախսերից ձևավորվում են մյուսի եկամուտները՝ պատճառն ու հետևանքը փոխում են տեղերը՝ առաջացնելով ծախսերի ու եկամտի անընդհատ շրջանառություն:

Գծապատկերում ներկայացված փոխհարաբերությունների ուսումնասիրությունը սկսվում է երկրի ամբողջական արդյունքը արտադրող ձեռնարկություններից: Նախ ցույց է տրվում, թե ինչպես է որոշվում ձեռնարկությունների արտադրանքի ծավալը, այնուհետև՝ թե ինչպես է ամբողջական եկամուտը արտադրության գործոնների շուկայի միջոցով բաշխվում տնային տնտեսությունների միջև, ինչպես է օգտագործվում տնային տնտեսությունների ստացած եկամուտը, ինչպես է ձևավորվում ամբողջական պահանջարկը, ինչպես է հաստատվում հավասարակշռությունը ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի միջև:

6.2. Ապրանքների և ծառայությունների արտադրությունը: Արտադրական ֆունկցիա

Ամբողջական արդյունքի արտադրության ծավալը որոշվում է արտադրության գործոնների և արտադրական ֆունկցիայի միջոցով:

Արտադրական ֆունկցիա է կոչվում որևէ արտադրանքի ծավալի և դրա արտադրության համար անհրաժեշտ արտադրության գործոնների քանակների միջև եղած կախվածությունը:

Արտադրության գործոններն են՝ կապիտալը (K), այսինքն՝ արտադրության միջոցները, և աշխատանքը (L), այսինքն՝ աշխատաժամանակը կամ աշխատողների թիվը:

Վերլուծության պարզության նպատակով K-ն և L-ը ընդունում ենք որպես տրված մեծություններ, այսինքն՝ համարում ենք, որ տնտեսությունն ունի հաստատագրված ծավալով կապիտալ և աշխատանք՝ $K=\bar{K}$, $L=\bar{L}$: Ընդունում ենք նաև, որ K-ն և L-ը օգտագործվում են ամբողջությամբ, այսինքն՝ տնտեսությունում լրիվ զբաղվածություն է:

Ռեսուրսների լրիվ զբաղվածությունը ենթադրում է, որ ընդհանուր արտադրական հզորություններում չբեռնված, չօգտագործվող հզորությունների բաժինը կազմում է 10-20%, իսկ բնական գործազրկության մակարդակը՝ 6.5-7.5%:

Արտադրական ֆունկցիան՝ Y=F(K, L), ցույց է տալիս, թե ինչպես են աշխատանքը և կապիտալը որոշում արտադրության ծավալը՝ Y-ը: Թողարկվող արտադրանքի ծավալը ֆունկցիա է կապիտալի և աշխատանքի քանակից: Արտադրական ֆունկցիան ցույց է տալիս ամբողջական եկամտի ծավալի կախվածությունը կապիտալի և աշխատանքի քանակից և արտացոլում է երկրում տվյալ պահին գոյություն ունեցող կապիտալի և աշխատանքի միացման տեխնոլոգիան:

Արտադրական շատ ֆունկցիաներ ունեն հատկություն, որը կոչվում է կայուն հատույց մասշտաբից: Դա նշանակում է, որ եթե արտադրության գործոններն ավելանում են որևէ դրական Z մեծությամբ, ապա արտադրության ծավալը նույնպես աճում է նշված մեծությամբ, այսպես.

$$ZY= F(ZK, ZL),$$

որտեղ՝ $Z > O$:

Օրինակ, եթե աշխատանքը և կապիտալը երկար ժամկետում ավելանան 5%-ով, ապա արտադրության ծավալը նույնպես կավելանա 5%-ով: Ասում են նաև, որ եթե կապիտալի և աշխատանքի միջին ամբողջական ծախսերի հարաբերությունը արտադրության ծավալին երկար ժամկետում մնում է *անփոփոխ,* ապա առկա է *կայուն հատույց մասշտաբից,* եթե կապիտալի և աշխատանքի միջին ամբողջական ծախսերը երկար ժամկետում կրճատվում են արտադրության ծավալի աճին զուգընթաց, ապա առկա է *տնտեսում* (դրական էֆեկտ)՝ պայմանավորված արտադրության մասշտաբների աճով կամ՝ *աճող հատույց մասշտաբից,* և եթե երկար ժամկետում միջին ամբողջական ծախսերն աճում են արտադրության ծավալի աճից ավելի արագ, ապա առկա է *ծախսերի աճ (բացասական էֆեկտ)*՝ պայմանավորված արտադրության մասշտաբների աճով կամ՝ *նվազող հատույց մասշտաբից*:

Արտադրության գործոնները և արտադրական ֆունկցիան միասին երկար ժամկետում որոշում են ամբողջական առաջարկը, և քանի որ կապիտալը և աշխատանքը համարում ենք տրված մեծություններ, ապա.

$$Y=F(\bar{K}, \bar{L})= \bar{Y}$$

Երկար ժամկետում տնտեսությունում արտադրվող ծառայությունների ընդհանուր ծավալը որոշվում է տնտեսությունում առկա կապիտալի, աշխատանքի քանակով և տեխնոլոգիայի մակարդակով:

$Y= \bar{Y}$ տեսքով արտահայտվող արտադրության ծավալը համապատասխանում է դասական մակրոտնտեսագիտական տեսությանը: Արտադրության $\bar{Y}$ ծավալն անվանում են լրիվ զբաղվածության կամ, որ նույնն է՝ բնական գործազրկության պայմաններում արտադրված արտադրանքի ծավալ, ներուժային ՀՆԱ:

6.3. Ամբողջական եկամտի բաշխումը

Այժմ դիտարկենք, թե ինչպես է ձեռնարկությունների կողմից արտադրված ամբողջական եկամուտը արտադրության գործոնների շուկաների միջոցով բաշխվում կապիտալի և աշխատանքի սեփականատերերի՝ տնային տնտեսությունների և ձեռնարկությունների միջև: Տնտեսագետները երկար են ուսումնասիրել արտադրության գործոնների շուկաները, որ պարզեն, թե ինչպես է կատարվում եկամտի բաշխումը: 19-րդ դարի հայտնի տնտեսագետ Կ.Մարքսը կապիտալի և աշխատանքի սեփականատերերի եկամուտների ստացումը բացատրում էր անհրաժեշտ և հավելյալ արդյունքների բաշխման միջոցով: Մենք կքննարկենք *ամբողջական եկամտի բաշխման ժամանակակից տեսությունը՝ ամբողջական եկամտի բաշխումը ըստ արտադրության գործոնների գների, որը ստացել է բաշխման նոր դասական տեսություն* անվանումը:

Արտադրության գործոնի գինը փողի այն քանակությունն է, որը վճարվում է գործոնի միավորը ձեռք բերելիս: Աշխատանք գործոնի գինը անվանական աշխատավարձն է, որը նշանակենք W-ով, կապիտալ գործոնի գինը կապիտալի վարձավճարն է, որը նշանակենք R-ով: Արտադրության գործոնի գինը որոշվում է գործոնների շուկայում առաջարկի և պահանջարկի փոխազդեցությամբ: Ինչպես նախօրոք պայմանավորվել էինք, արտադրության գործոնների առաջարկը մեր վերլուծության ընթացքում համարում ենք կայուն, հետևաբար գործոնի առաջարկը ներկայացնող կորը ընդունում է ուղղահայաց գծի տեսք.



Գործոնի հավասարակշռված գինը ձևավորվում է գործոնի առաջարկի ու պահանջարկի հատման կետում: Այդ կետում գործոնի քանակը հավասարակշռված է:

Նկ. 6.1. Արտադրության գործոնի գնի ձևավորումը

Որպեսզի պարզենք, թե ինչպես է ձեռնարկությունը որոշում իրեն անհրաժեշտ արտադրության գործոնի պահանջարկը, նախ պետք է հիշենք, որ արտադրության գործոնների պահանջարկը կախյալ (միջնորդավորված) պահանջարկ է, այսինքն՝ կախված է ձեռնարկության կողմից թողարկվող ապրանքի արտադրության ծավալի մասին ձեռնարկության որոշումից, երկրորդ, պետք է ծանոթանանք «տիպիկ ձեռնարկություն» հասկացությանը: Տիպիկ ձեռնարկությունը.

- *Մրցակցային է* ինչպես այն շուկայում, որտեղ վաճառում է իր արտադրանքը, այնպես էլ այն շուկայում, որտեղից գնում է արտադրության գործոնները, հետևաբար, լինելով փոքր՝ նշված շուկաների համեմատությամբ, ձեռնարկությունը որևէ ազդեցություն չունի շուկայում ձևավորված գների վրա և ընդունում է այդ գները որպես տրված, այնպիսին, ինչպիսին դրանք ձևավորվել են շուկայական տվյալ պայմաններում: Եթե ձեռնարկությունը, որը ձգտում է առավելագույնի հասցնել շահույթը, փորձի բարձրացնել արտադրանքի վաճառքի գինը, այն պարզապես չի վաճառվի, եթե փորձի իջեցնել աշխատավարձը, աշխատողները կգնան այլ ձեռնարկություն: Հետևաբար, ձեռնարկությունը կապիտալ է վարձակալում շուկայում տրված R գնով, աշխատանք՝ W գնով և իր արտադրանքը վաճառում է տրված P գնով (ընդունում ենք, որ ամբողջ կապիտալը պատկանում է տնային տնտեսություններին այնպես, ինչպես աշխատանքը):
- Ձեռնարկությունը արտադրության գործոններ է գնում և արտադրանք արտադրում շահույթ ստանալու նպատակով: *Ձեռնարկությունը ձգտում է առավելագույն շահույթի:*

Ձեռնարկության շահույթը որոշվում է ձեռնարկության հասույթից (համախառն եկամտից) հանելով արտադրության գործոնների ձեռքբերման վրա կատարված ամբողջական ծախսերը: Ձեռնարկության հասույթը հավասար է արտադրանքի միավորի վաճառքի գնի (P-ի) և ձեռնարկության արտադրության ծավալի (Y-ի) արտադրյալին:

Հասույթը = Px Y

Ձեռնարկության շահույթը ստացվում է ձեռնարկության հասույթից հանելով կապիտալ ձեռք բերելու վրա կատարված ծախսերը (RK) և աշխատանք ձեռք բերելու վրա կատարված ծախսերը (WL): Հետևաբար՝

Շահույթը = PxY - WxL- RxK

Որպեսզի ցույց տանք շահույթի կախվածությունը արտադրության գործոններից, օգտագործենք արտադրական ֆունկցիան՝ շահույթի բանաձևում Y-ը փոխարինելով իր արժեքով՝ F(K,L) -ով:

Y=F(K, L) դեպքում կունենանք.

Շահույթը =PF(K,L) -WL-RK:

Ձեռնարկությանը հայտնի են արտադրանքի միավորի վաճառքի շուկայում ձևավորված P գինը, միավոր կապիտալ ձեռք բերելու R գինը և միավոր աշխատանք ձեռք բերելու W գինը:

Ձեռնարկությունը տրված $\bar{P}$, $\bar{W}$, $\bar{R}$ գների պայմաններում ընտրում է այնպիսի քանակությամբ աշխատանք և կապիտալ, որ շահույթը լինի առավելագույնը:

Որպեսզի պարզաբանենք, թե ձեռնարկությունը ինչպես է որոշում իրեն անհրաժեշտ կապիտալի և աշխատանքի մեծությունը, ծանոթանանք նոր հասկացությունների:

Աշխատանքի սահմանային արդյունք՝ MPL

Ենթադրենք՝ մեկ աշխատողը արտադրում է 10 դետալ, ձեռնարկությունը վարձում է երկրորդ աշխատողին, միասին նրանք արտադրում են 18 դետալ, վարձված երրորդ աշխատողի դեպքում ձեռնարկության ընդ-

հանուր արտադրանքը կազմում է 24 դետալ: Հետևաբար, երկրորդ աշխատողի սահմանային արդյունքը 8 դետալ է, իսկ երրորդինը՝ 6 դետալ:

Այսպիսով՝ աշխատանքի սահմանային արդյունքը աշխատանքի լրացուցիչ միավորով ստեղծված արտադրանքի լրացուցիչ քանակությունն է.

$$MPL=F(\bar{K},L+1) - F(\bar{K},L)$$

Արտադրական ֆունկցիաների մեծամասնությունն ունի նվազող սահմանային արդյունքի հատկություն, այսինքն՝ եթե $K=\bar{K}$, ապա յուրաքանչյուր հաջորդ լրացուցիչ աշխատող ավելի քիչ լրացուցիչ արդյունք է ստեղծում, քան նախորդը:

Աշխատանքի սահմանային արդյունքի գրաֆիկն ունի հետևյալ տեսքը.



Կորը ցույց է տալիս, որ որքան ավելանում է աշխատողների թիվը, այնքան կրճատվում է արտադրվող լրացուցիչ արտադրանքի քանակը:

Նկ. 6.2. Աշխատանքի սահմանային արդյունքի կորը

MPL-ը ցույց է տալիս նաև շահույթը առավելագույնի հասցնելու նպատակ ունեցող ձեռնարկության՝ աշխատանքի նկատմամբ դրսևորած պահանջարկի կորը:

Այդ է պատճառը, որ արտադրական ֆունկցիաները, որևէ գործոնի քանակի ավելացմանը զուգընթաց (երբ մյուս գործոնները չեն փոխվում), դառնում են ավելի մեղմ թեքված (զառիկող):



Այս կորը ցույց է տալիս, թե անփոփոխ կապիտալի պայմաններում ինչպես է արտադրանքի ծավալը կախված աշխատանքից: MPL-ը աշխատանքի սահմանային արդյունքն է:

Նկ. 6.3. Արտադրական ֆունկցիա

Երբ մրցակցային, շահույթը առավելագույնի հասցնել ձգտող ձեռ-

նարկությունը որոշում է ընդունում լրացուցիչ աշխատանքի միավոր վարձելու մասին, առաջին հերթին մտածում է, թե դա ինչպես կազդի իր շահույթի վրա և համեմատում է լրացուցիչ աշխատանքով ստեղծված արտադրանքի վաճառքից ստացած համախառն եկամուտը միավոր աշխատանքի ձեռքբերման ծախսի՝ անվանական աշխատավարձի հետ:

Ձեռնարկությունը, վարձելով մեկ լրացուցիչ աշխատող, նրա աշխատանքի և թողարկած արտադրանքի շնորհիվ ստանում է լրացուցիչ հասույթ, որը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Լրացուցիչ հասույթը = լրացուցիչ արտադրանք x արտադրանքի միավորի գին:

Լրացուցիչ հասույթը= MPLxP

Լրացուցիչ արտադրանքը հավասար է աշխատանքի սահմանային արդյունքին, իսկ արտադրանքի միավորի վաճառքի գինը՝ P-ն, տրված է, հետևաբար՝ ձեռնարկության լրացուցիչ շահույթը ստացվում է լրացուցիչ հասույթից հանելով աշխատանքի միավորի գինը՝ W-ն.

Δշահույթը=MPLxP-W

Ձեռնարկատերը գիտի, որ քանի դեռ լրացուցիչ հասույթը գերազանցում է անվանական միավոր աշխատավարձը, լրացուցիչ աշխատանքը ավելացնում է շահույթը: Հետևաբար, ձեռնարկությունը աշխատող է վարձում այնքան ժամանակ, մինչև որ աշխատանքի հերթական լրացուցիչ միավորը այլևս լրացուցիչ շահույթ չի բերում, այսինքն՝ քանի դեռ MPL-ը չի փոքրանում այնքան, որ լրացուցիչ հասույթը հավասար լինի աշխատավարձին.

MPLx P=W կամ MPL=W / P

W/P արտահայտությունը անվանում ենք իրական աշխատավարձ կամ աշխատանքի իրական գին: **Իրական աշխատավարձը** աշխատանքի վարձատրությունն է՝ արտահայտված ոչ թե փողով, այլ ապրանքների և ծառայությունների քանակությամբ, դա այն գնողունակ կարողությունն է (արտահայտված ապրանքների և ծառայությունների քանակությամբ), որը ձեռնարկությունը վճարում է աշխատանքի յուրաքանչյուր միավորին: Որպեսզի առավելագույնի հասցնի իր շահույթը, ձեռնարկությունը աշխատողներ է վարձում այնքան ժամանակ, քանի դեռ *աշխատանքի սահմանային արդյունքը չի հավասարվել իրական աշխատավարձին:*

Ձեռնարկությունն իրեն անհրաժեշտ կապիտալի պահանջարկը որոշում է այն նույն տրամաբանությամբ, ինչ որ աշխատանքի պահանջարկի դեպքում էր:

Տնտեսագետները «կապիտալ» ասելով հասկանում են անցյալում արտադրված և կուտակված, նոր ապրանքների և ծառայությունների արտադրության համար ներկայումս օգտագործվող ներդրումային միջոցները՝ մեքենաները, սարքավորումները, գործարանային շենքերն ու կառույցները, տրանսպորտային միջոցները, իրացման ցանցը և այլն:

Կապիտալի սահմանային արդյունք՝ MPK

Կապիտալի սահմանային արդյունքը կապիտալի լրացուցիչ միավորով ստեղծված արտադրանքի լրացուցիչ քանակությունն է:

$$MPK = F(K+1, \bar{L}) - F(K, \bar{L})$$

Կապիտալի յուրաքանչյուր լրացուցիչ միավորի բերած լրացուցիչ շահույթը (Δշահույթը) հավասար է կապիտալի միավորով ստեղծված լրացուցիչ համախառն եկամտի (MPKxP) և կապիտալի միավորի վարձավճարի (R-ի) տարբերությանը.

$$\Delta\text{շահույթը} = MPKxP - R$$

Ձեռնարկությունը կապիտալ կվարձի այնքան ժամանակ, քանի դեռ լրացուցիչ շահույթ է ստանում: Հենց որ ձեռնարկության լրացուցիչ հասույթը՝ MPKxP-ն հավասարվում է կապիտալի միավորի վարձավճարին՝ R-ին, MPKxP=R կամ որ նույնն է, հենց որ MPK=R/P, ձեռնարկությունը այլևս նոր կապիտալ չի վարձակալի, քանի որ լրացուցիչ շահույթ այդ պայմաններում չի ստանա:

R/P-ն անվանում են կապիտալի իրական գին:

Այսպիսով, մրցակցային և առավելագույն շահույթի ձգտող ձեռնարկությունը արտադրության գործոնների նկատմամբ պահանջարկի մասին որոշում ընդունելիս հետևում է այս պարզ կանոնին՝ *ձեռնարկությունը արտադրության յուրաքանչյուր գործոնի նկատմամբ պահանջարկ է դրսևորում այնքան ժամանակ, քանի դեռ այդ գործոնի սահմանային արդյունքը չի հավասարվել գործոնի իրական գնին:* Իմանալով արտադրության գործոնի առաջարկը, որը տրված է նախօրոք, վերլուծության սկզբում, որոշելով նաև ձեռնարկության պահանջարկը արտադրության յուրաքանչյուր գործոնի նկատմամբ, ստանում ենք արտադրության գործոնների հավասարակշռված իրական գները, որոնց համաձայն իրականացվում է ամբողջական եկամտի բաշխումը արտադրության գործոնների միջև:

Արտադրության գործոնները իրար հետ կապված են: Դրանցից մեկի առաջարկի փոփոխությունը ազդում է մյուսների շուկայի և գների վրա: Քանի որ արտադրության գործոնները օգտագործվում են համատեղ, ապա դրանցից մեկի արտադրողականությունը կախված է մյուսների քանակից: Արդյունքում՝ ցանկացած գործոնի առաջարկի փոփոխությունը փոխում է մյուսների եկամտաբերությունը:

Նվազող սահմանային արդյունքի համաձայն, արտադրության գործոնի քանակի ավելացումը կրճատում է դրա սահմանային արդյունքը, հետևաբար նաև՝ դրա իրական գինը, իսկ այն գործոնը, որի առաջարկը սահմանափակ է, աչքի է ընկնում բարձր սահմանային արդյունքով և բարձր իրական գնով:

Օրինակ, 14-րդ դարում Եվրոպայում տարածված ժանտախտի համաճարակը մի քանի տարում 1/3-ով կրճատեց բնակչության թիվը: Աշխատանքի առաջարկի կրճատումը ավելացրեց աշխատանքի սահմանային արդյունքը և իրական եկամուտը: Քանի որ աշխատանքն ու հողը (միջնադարյան Եվրոպայի հիմնական արտադրության գործոնը) միասին են օգտագործվում, ապա աշխատանքի առաջարկի կրճատումը ազդեց հողի շուկայի իրավիճակի վրա: Աշխատող գյուղացիների թվի կրճատումը իջեցրեց արտադրության մեջ ներգրավվող հողի լրացուցիչ միավորից ստացվող արդյունքը, և հողի սահմանային արդյունքն ու հողի գինը

իջավ: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ժանտախտի հետևանքով աշխատողների իրական եկամուտներն աճել են 2 անգամ, իսկ հողատերերի ռենտային եկամուտները նվազել են ավելի քան 50%-ով:

Ամբողջական եկամտի բաշխումը

Այժմ կարող ենք բացատրել, թե ինչպես է բաշխվում տնտեսության ամբողջական եկամուտը: Եթե ընդունենք, որ գործող բոլոր ձեռնարկությունները մրցակցային են և ձգտում են առավելագույն շահույթի, ապա արտադրության գործոններից յուրաքանչյուրին բաժին է հասնում այնքան արդյունք, որքան սահմանային արդյունք է ավելացնում թողարկվող արդյունքի ծավալին: Այլ խոսքով՝ ընդհանուր իրական ծախսերն աշխատանքի վրա կամ աշխատողների ընդհանուր իրական եկամուտը հավասար է աշխատանքի սահմանային արդյունքի և աշխատողների թվի արտադրյալին՝ MPLxL, իսկ ընդհանուր իրական ծախսերը կապիտալի վրա կամ կապիտալի սեփականատերերի իրական ընդհանուր եկամուտը կապիտալի սահմանային արդյունքի և կապիտալի արտադրյալն է՝

MPK x K:

Աշխատանք և կապիտալ ձեռք բերելու համար ձեռնարկության կատարած բոլոր ծախսերը հավասար են (MPKxK) + (MPLxL)-ի: Ձեռնարկության ստացած ամբողջական եկամտից՝ Y-ից, արտադրության գործոնների ձեռքբերման վրա կատարված բոլոր ծախսերը հանելուց հետո մնում է ձեռնարկության սեփականատերերի ընդհանուր իրական եկամուտը, որը կոչվում է իրական տնտեսական շահույթ:

Իրական տնտեսական շահույթը =Y-MPLxL-MPKx K, կամ՝ ստեղծված արդյունքը իրենից ներկայացնում է.

Y=MPLx L + MPK x K + իրական տնտեսական շահույթ:

Այսինքն, ամբողջական եկամուտը՝ Y-ը, հավասար է աշխատողների, կապիտալի սեփականատերերի, ձեռնարկությունների սեփականատերերի իրական եկամուտների գումարին:

Եթե արտադրական ֆունկցիան ունի կայուն հատույց մասշտաբից, ապա արտադրության գործոնների սեփականատերերի ստացած ամբողջական իրական եկամուտների գումարը հավասար է արտադրված ամբողջական եկամտին՝ Y-ին.

Y=F(K,L)= MPK x K +MPL x L

Այս բանաձևը մաթեմատիկոս էյլերի հայտնի թեորեմն է:

Վերոնշյալից բխում է, որ իրական տնտեսական շահույթը հավասար է O-ի: Եթե արտադրության յուրաքանչյուր գործոնին բաժին է ընկնում իր սահմանային արդյունքը, ապա արտադրության գործոնների դիմաց բոլոր վճարումների գումարը հավասար է թողարկված արտադրանքի ծավալին: Այլ խոսքով՝ կատարյալ մրցակցության պայմաններում ձեռնարկության ձգտումը առավելագույն շահույթի հանգեցնում է այն բանին, որ տնտեսական շահույթը հավասարվում է զրոյի:

Այդ դեպքում ինչպես է բացատրվում շահույթի գոյությունը տնտեսությունում: Մենք պետք է իմանանք, որ տնտեսագետը և հաշվապահը

տարբեր մոտեցումներով են տնտեսագիտական հաշվարկներ կատարում, մասնավորապես դա վերաբերում է ձեռնարկության ծախսերի, եկամուտների, շահույթի հաշվարկմանը:

Եթե տնտեսագետը հաշվում է ձեռնարկության տնտեսական շահույթը որպես հասույթի և բոլոր երևացող ու թաքնված ծախսերի տարբերություն, ապա հաշվապահը հաշվարկում է հաշվապահական շահույթը՝ հասույթից հանելով միայն արտադրության երևացող ծախսերը: Որպեսզի լավ պատկերացնենք վերոնշվածը, բերենք պարզագույն օրինակ: Ենթադրենք՝ ձեռնարկությունը պետք է նոր հաստոց գնի, որն արժե երեք միլիոն դրամ: Ձեռնարկությունը ունի մեկ միլիոն դրամ, ևս երկու միլիոն դրամ վարկ է վերցնում բանկից՝ տարեկան 5% տոկոսադրույքով: Ձեռնարկության հաշվապահը ծախսերը հաշվելիս հաշվի է առնում միայն երևացող ծախսերը՝ երկու միլիոն դրամ X 5% =100 հազար դրամը, որը ձեռնարկությունը պետք է վճարի որպես բանկի վարկի տոկոս: Տնտեսագետի տեսանկյունից նախատեսվող գնման ծախսերն ավելի շատ են և հավասար են 150 հազար դրամի (100 հազար դրամը երևացող ծախսն է՝ բանկի վարկի տոկոսի վճարումը, իսկ 50 հազարը չերևացող ծախսն է՝ բաց թողնված հնարավորությունը՝ մեկ միլիոն դրամից չստացած տոկոսային եկամուտը):

Բնականաբար, հաշվապահը և տնտեսագետը ձեռնարկության համախառն եկամտից հանելով հաշվարկված ծախսերը՝ տարբեր մեծության շահույթներ կստանան: Այսպիսով, գոյություն ունեն տնտեսական շահույթ և հաշվապահական շահույթ հասկացությունները: Մենք ենթադրել էինք, որ արտադրության գործընթացին մասնակցում են 3 կողմեր՝ ձեռնարկատերերը, աշխատանքի և կապիտալի տերերը, որոնք էլ ազգային արդյունքից ստանում են իրենց բաժինները:

Իրական կյանքում կապիտալի սեփականատերերը հենց ձեռնարկատերերն են, իսկ ավելի հստակ՝ ձեռնարկությունների սեփականատերերն են: Շահույթ ասելով նկատի է առնվում և՛ տնտեսական շահույթը, և՛ կապիտալի սեփականատերերի եկամուտը: Այսպիսի սահմանմամբ որոշված եկամուտը կոչվում է հաշվապահական շահույթ: Եթե վերը նշված նախապայմանները մոտավորապես ճիշտ են ներկայացնում տնտեսությունը, ապա «շահույթ» հասկացությունը ազգային հաշվարարության մեջ իրենից ներկայացնում է կապիտալի դիմաց ստացված եկամուտը՝ MPK x K-ն:

Այսպիսով, ամբողջական եկամտից յուրաքանչյուր գործոն ստանում է իր բաժինը՝ հավասար իր սահմանային արդյունքին, և տեղի է ունենում ամբողջական եկամտի բաշխում արտադրության գործոնների միջև:

Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան

1927թ. ամերիկացի տնտեսագետ (հետագայում՝ սենատոր) Պոլ Դուգլասը հիմնավորեց, որ ժամանակի ընթացքում ազգային եկամտի՝ կապիտալին և աշխատանքին անցած մասը չի փոխվում, այսինքն՝ արտադրության գործոնների բաժիններն ամբողջական եկամտում կայուն են:

Այն արտադրական ֆունկցիան, որն ունի արտադրության գործոնների կայուն բաժինների հատկություն, եթե գործոնները միշտ ստանում

են իրենց սահմանային արդյունքները, ներկայացրեց մաթեմատիկոս Չարլզ Կոբը՝

$$Y=AK^{\alpha} L^{1-\alpha}$$

Այդ ֆունկցիան կոչվեց Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիա, որտեղ՝

α-ն ցույց է տալիս կապիտալի բաժինը եկամտում, այսինքն՝ α-ն որոշում է, թե եկամտի որ մասն է բաժին հասնում կապիտալի սեփականատերերին, և որ մասն է հատկացվում աշխատողների վարձատրությանը: $0<\alpha<1$ և կայուն է, A-ն դրական գործակից է, որը ցույց է տալիս կապիտալի և աշխատանքի միացման տեխնոլոգիայի ազդեցությունը ամբողջական եկամտի ծավալի վրա:

Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան ունի 3 հատկություն.

1. Կայուն հատույց մասշտաբից $zY= A (zK)^{\alpha} (zL)^{1-\alpha}$, այսինքն, եթե կապիտալը և աշխատանքը ավելացնենք միևնույն չափով, ապա արտադրության ծավալը կավելանա նույն z չափով ($z > 0$):

2. Արտադրության գործոնների սահմանային արդյունքները համեմատական են դրանց միջին արտադրողականությանը: Դա հիմնավորելու համար հաշվենք գործոնների սահմանային արդյունքները:

Աշխատանքի սահմանային արդյունքը (MPL) ստանալու համար $Y=AK^{\alpha}L^{1-\alpha}$ ֆունկցիան ածանցում ենք ըստ L-ի՝

$$MPL=(1-\alpha)AK^{\alpha}L^{-\alpha}=(1-\alpha)\,Y/L$$

Կապիտալի սահմանային արդյունքը ստանալու համար $Y=AK^{\alpha}L^{1-\alpha}$ ֆունկցիան ածանցում ենք ըստ K-ի՝

$$MPK=\alpha AK^{\alpha-1}L^{1-\alpha}=\alpha Y/K$$

Y/L-ը կոչվում է աշխատանքի միջին արտադրողականություն, իսկ Y/ K –ը՝ կապիտալի միջին արտադրողականություն:

Հաշվի առնելով, որ $0<\alpha<1$ և կայուն է, կարելի է անել 3 հետևություն, որոնք մեկնաբանում են արտադրության գործոնների սահմանային արդյունքների փոփոխության պատճառները՝

- կապիտալի ավելացումը մեծացնում է MPL-ը և կրճատում MPK-ն,
- աշխատանքի ավելացումը մեծացնում է MPK-ն և կրճատում MPL-ը,
- A-ի (տեխնոլոգիական առաջադիմության ազդեցությունը ներկայացնող չափորոշիչ) ավելացումը համամասնորեն մեծացնում է երկու գործոնների սահմանային արդյունքները:

3. Արտադրության գործոնները ստանում են իրենց սահմանային արդյունքները, և α գործակիցը ցույց է տալիս, թե եկամտի որ մասն է բաժին ընկնում աշխատանքին, որը՝ կապիտալին:

Այսպիսով, աշխատանքի վրա կատարված ընդհանուր ծախսերը հավասար են՝

$MPLxL= (1-\alpha) Y$, կապիտալի վրա կատարվածը՝ $MPK \times K = \alpha Y$:

$(1-\alpha)$-ն աշխատանքի բաժինն է ամբողջական եկամտում, իսկ α-ն կապիտալի բաժինն է ամբողջական եկամտում:

Աշխատողների եկամտի $(1-\alpha)Y$-ի հարաբերությունը կապիտալի

սեփականատերերի եկամտին՝ (αY)-ին, հավասար է (1-α)/α-ի և կայուն է (ինչը և հայտնաբերել էր Դուգլասը): Սրանից հետևում է, որ արտադրության գործոնների բաժինները կախված են միայն α--ից և կախված չեն ո՛չ K-ից, ո՛չ L-ից, ո՛չ A-ից:

6.4. Ապրանքների և ծառայությունների պահանջարկը

Մենք դիտարկեցինք՝ ինչ գործոններից է կախված արտադրության ծավալը, և ինչպես է եկամուտը բաշխվում կապիտալի և աշխատանքի միջև: Այժմ դիտարկենք, թե ինչպես է օգտագործվում արտադրված եկամուտը:

Փակ տնտեսությունում արտադրված ամբողջական արդյունքը օգտագործվում է 3 նպատակով.

- սպառվում է (C) տնային տնտեսությունների կողմից,
- ներդրվում է (I) տնային տնտեսությունների և մասնավոր ձեռնարկությունների կողմից,
- պետության կողմից ծախսվում է (G) հասարակական կարիքների համար:

ՀՆԱ-ի նշված երեք տարրերը ներկայացվում են ազգային հաշիվների հիմնական հավասարմամբ, որը նույնություն է.

Y=C+I+G

Դիտարկենք, թե ՀՆԱ-ն ինչպես է օգտագործվում վերոնշյալ տնտեսական սուբյեկտների կողմից:

Սպառումը սովորաբար կազմում է ՀՆԱ-ի գրեթե 2/3-ը: Երկար ժամկետում ՀՆԱ-ի և սպառողական ծախսերի փոփոխությունները համարյա միանման են, իսկ կարճ ժամկետում սպառողական ծախսերը ավելի քիչ են տատանվում, քան ՀՆԱ-ն, քանի որ կախված են տնօրինվող եկամտից, որն իր մեծությամբ և տարրերով տարբերվում է ՀՆԱ-ից: Մասնավորապես, տնօրինվող եկամտի երկու կարևոր բաղկացուցիչները՝ հարկերը և տրանսֆերտները, գործում են որպես ավտոմատ կայունացուցիչներ՝ անկման ժամանակ հարկերը կրճատվում են, տրանսֆերտները՝ աճում, որը թույլ չի տալիս, որ տնօրինվող եկամուտը կրճատվի այնքան արագ, որքան արագ կրճատվում է ՀՆԱ-ն: Տնային տնտեսությունները, իրենց տրամադրած արտադրության գործոնների՝ աշխատանքի և կապիտալի դիմաց ստանալով ամբողջական եկամուտը՝ Y-ը, վճարում են հարկերը պետությանը և որոշում, թե մնացած՝ տնօրինվող եկամտի որ մասը սպառեն, որը՝ խնայեն: Տնօրինվող եկամուտը ամբողջական եկամտի և զուտ հարկերի տարբերությունն է՝ Y-T: Զուտ հարկերը տնային տնտեսությունների կողմից պետությանը վճարված հարկերի՝ $T_{վճ.}$ և պետությունից ստացված տրանսֆերտների՝ T_t տարբերությունն են.

$$T=՝ T_{վճ.} - T_t$$

Տրանսֆերտը մի ինստիտուցիոնալ միավորի կողմից մյուսին տրամադրվող անհատույց օգնությունն է՝ փողի, ապրանքի կամ ակտիվի տեսքով:

Տնօրինվող եկամուտը տնային տնտեսությունները սպառում և խնայում են.

$$Y\text{-}T = C + S,$$

որտեղ՝ C -ն սպառումն է,

S-ը խնայողությունն է:

Սպառումը ֆունկցիա է՝ տնօրինվող եկամտից և ուղղակիորեն կախված է դրա մակարդակից: Որքան մեծ է տնօրինվող եկամուտը, այնքան բարձր է սպառման մակարդակը: (Այս պնդումները բխում են քեյնսյան տնտեսագիտական տեսությունից):

C= C (Y-T): Սա կոչվում է սպառման ֆունկցիա:

Սահմանային հակվածությունը սպառման նկատմամբ՝ MPC-ն, սպառման փոփոխության հարաբերությունն է տնօրինվող եկամտի փոփոխությանը և ցույց է տալիս, թե որքանով է փոփոխվում սպառումը տնօրինվող եկամուտը 1 միավորով փոփոխելիս:

Սպառման և խնայողությունների փոփոխությունների վրա ազդող գործոնները բազմաթիվ են, օրինակ՝ տնային տնտեսությունների կուտակած հարստության չափը, գների մակարդակը, սպասումները, հարկային դրույքաչափերը: Միաժամանակ պետք է հիշել, որ սպառումը և խնայողությունները համեմատաբար կայուն են, եթե պետությունը հատուկ չի փորձում ազդել դրանց փոփոխության վրա:

Ներդրումներ

Ե՛վ ձեռնարկությունները, և՛ տնային տնտեսությունները ձեռք են բերում ներդրումային ապրանքներ: Ձեռնարկությունները գնում են ներդրումային ապրանքներ, որ ավելացնեն կապիտալի պաշարը և փոխհատուցեն մաշված կապիտալը: Տնային տնտեսությունները գնում են նոր տներ, որը նույնպես ներդրումների մի մասն է կազմում:

Ներդրումային ապրանքների քանակությունը, որի նկատմամբ պահանջարկ է ներկայացված, կախված է տոկոսադրույքից: Վերջինս կապիտալի օգտագործման գինն է: Ներդրումային նախագիծը կլինի շահավետ, եթե դրանից սպասվող շահույթը գերազանցի կատարված ծախսերին, կամ եթե դրանից սպասվող շահույթի նորմը գերազանցի տոկոսադրույքին:

Քանի որ տոկոսադրույքը ցույց է տալիս ներդրումային նախագծերի ֆինանսավորման արժեքը, ապա դրա բարձրացումը հանգեցնում է այն բանին, որ կրճատվում է շահութաբեր ներդրումային նախագծերի թիվը, և, հետևաբար, կրճատվում է նաև ներդրումային ապրանքների պահանջարկը:

Ենթադրենք՝ տնտեսավարող սուբյեկտը պետք է որոշում ընդունի, թե արդյոք ձեռնտու է 1 մլն դրամ արժողությամբ նոր հաստոցի ձեռքբերումը, եթե դրանից ակնկալվում է տարեկան 80 հազ. դրամի շահույթ: Սուբյեկտը որոշում կայացնելու համար համեմատում է այդ գործարքից սպասվող շահույթի նորմը՝ 8%, և 1 մլն դրամի փոխառնման գինը՝ տոկոսադրույքը: Եթե վերջինս գերազանցում է 8%-ը, ապա սուբյեկտը կորոշի նոր հաստոց ձեռք չբերել, իսկ եթե փոքր է 8%-ից, ապա կգնի հաստոցը:

Տնտեսագետները տարբերում են *անվանական և իրական տոկոսադրույքներ:*

Տոկոսադրույքների տարբերությունը առաջանում է ինֆլյացիայի կամ դեֆլյացիայի ժամանակահատվածներում, այսինքն՝ գների անկայունության փուլերում:

Իրական տոկոսադրույքը = անվանական տոկոսադրույք – ինֆլյացիա:

Իրական տոկոսադրույքը ցույց է տալիս փոխառնման իրական ծախսը: Այսպիսով, կապը տոկոսադրույքի և ներդրումների միջև արտահայտվում է հետևյալ ֆունկցիայով.

$$I=I(r)$$

որտեղ՝ r –ը իրական տոկոսադրույքն է:

Նշված ֆունկցիոնալ կապը հակադարձ է: Այսինքն՝ որքան բարձր է իրական տոկոսադրույքը, այնքան ցածր է ներդրումային պահանջարկը: Ներդրումային ֆունկցիայի ավելի ընդլայնված տեսքը այսպիսին է՝ $I=c-dr+fY$, որտեղ՝

c-ն ավտոնոմ ներդրումներն են՝ պայմանավորված արտաքին տնտեսական գործոններով (օրինակ՝ օգտակար հանածոների պաշարները),

d-ն գործակից է, որը ցույց է տալիս ներդրումների զգայունությունը տոկոսադրույքի փոփոխությունների նկատմամբ,

f-ը սահմանային հակումն է ներդրումների նկատմամբ և հաշվարկվում է

$$\Delta I / \Delta Y$$

Y-ը ամբողջական եկամուտն է:

Հաճախ նշված ֆունկցիայով որոշվող ներդրումները կոչվում են խթանվող, քանի որ ներդրումային ծախսերի մեծությունը կախված է ՀՆԱ փոփոխությունից: Քանի որ ներդրումները ֆինանսավորվում են գործարարության շահույթից, ապա դրանք կաճեն, եթե շահույթը ավելանա, իսկ վերջինս ավելանում է, եթե ավելանում է ամբողջական եկամուտը: Ընդ որում, եթե ՀՆԱ-ն ավելանում է, ապա ներդրումներն ավելանում են ոչ միայն հիմնական կապիտալում, այլև պաշարներում և բնակշինարարության մեջ:

Պետք է հիշել, որ մակրոմակարդակում, արդեն գոյություն ունեցող ակտիվների վերաբաշխումը տարբեր անձանց միջև, տնտեսության համար ներդրում չի համարվում: Ներդրումները այն իմաստով, որ օգտագործում են մակրոտնտեսագետները, ենթադրում են նոր կապիտալի ստեղծում:



Ներդրումային ֆունկցիան ներդրումների ցանկալի ծավալը կապում է իրական տոկոսադրույքի հետ: Ներդրումները կախված են իրական տոկոսադրույքից, քանի որ վերջինս փոխառնման գինն է: Ներդրումների և տոկոսադրույքի կապը հակադարձ է, այդ պատճառով էլ կորը ձախ-վերևից ուղղված է աջ-ներքև:

Նկ. 6.4. Ներդրումային ֆունկցիա

Պետական գնումներ

Ամբողջական պահանջարկի երրորդ տարրը պետական գնումներն են: Պետական գնումներ կատարում են ինչպես պետական կառավարման մարմինները, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինները: Եթե առաջինները գնում են, օրինակ՝ զենք, զինամթերք, ռազմավարական հումք, պաշարներ, պետական ծառայողների աշխատանքը, ապա մյուսները՝ գրքեր՝ գրադարանների համար, վճարում են դաստիարակներին, ուսուցիչներին, կառուցում դպրոցներ և այլն:

Պետական ծախսերն ավելի ընդգրկուն հասկացություն են, քան պետական գնումները: Պետական ծախսերը ընդգրկում են.

- պետական գնումները,
- տրանսֆերտները,
- պետական պարտքի գծով տոկոսային վճարումները (պետական պարտքի սպասարկումը):

Պետության եկամուտները հիմնականում գոյանում են հարկերից: Տրանսֆերտները «հակադարձ» հարկեր են և ազդում են պահանջարկի վրա անուղղակիորեն՝ ավելացնելով տնային տնտեսությունների տնօրինվող եկամուտը:

Զուտ հարկերը՝ T, ստացվում են՝ վճարված հարկերից հանելով տրանսֆերտները: Հնարավոր է երեք դեպք՝ պետական բյուջեի հետ կապված.

1. G>T՝ պետական ծախսերը գերազանցում են պետության եկամուտները,
2. G< T ՝ պետական ծախսերը քիչ են պետության եկամուտներից,
3. G= T ՝ պետության ծախսերն ու եկամուտները հավասար են:

Առաջին դեպքում պետբյուջեն պակասուրդով է: Վերջինս ֆինանսավորվում է՝ մեծացնելով պետական պարտքը, այսինքն՝ պետությունը անհրաժեշտ միջոցները փոխ է առնում ֆինանսական շուկաներում: Երկրորդ դեպքում պետական բյուջեի մնացորդը դրական է, և պետությունը դա կարող է օգտագործել չմարված փոխառությունները փակելու համար՝ կրճատելով պետական պարտքը: Երրորդ դեպքում ունենք հաշվեկշռված պետական բյուջե:

Քանի որ G-ն և T-ն տնտեսական քաղաքականության լծակներ են, ապա կարող ենք գրել՝ $G=\overline{G}$ և $T=\overline{T}$, այսինքն՝ պետական ծախսերը և հարկերը տնտեսական մոդելներ մտցվում են որպես արտածին (էկզոգեն) փոփոխականներ:

Այսպիսով, փակ տնտեսությունում ապրանքների և ծառայությունների ամբողջական պահանջարկը՝ AD-ն բաղկացած է սպառողական ապրանքների պահանջարկից՝ C-ից, ներդրումային ապրանքների պահանջարկից՝ I-ից և պետության պահանջարկից՝ G-ից:

$$AD=C+I+G$$

6.5. Հավասարակշռությունը ապրանքների և ֆինանսական շուկաներում: Հավասարակշռված տոկոսադրույքը

Հավասարակշռությունը ապրանքների և ծառայությունների շուկայում

Ուղեցույց ունենալով փողի միջոցների շրջանառության գծապատկերը՝ մենք քննարկեցինք ապրանքների և ծառայությունների առաջարկն ու պահանջարկը: Այժմ ապացուցենք, որ ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի հավասարակշռության հաստատման գործում կարևոր դեր ունի տոկոսադրույքը:

Ամբողջական պահանջարկը արտահայտվում է՝ $Y=C+I+G$, որտեղ՝

$C=C(Y-T)$ - սպառումը ֆունկցիա է տնօրինվող եկամտից,

$I= I(r)$ - ներդրումները կախված են իրական տոկոսադրույքից,

$G=\bar{G}$. $T=\bar{T}$ - պետության ծախսերը և եկամուտները հարկաբյուջետային քաղաքականության արտածին (էկզոգեն) փոփոխականներն են:

Տեղադրենք հավասարման մեջ՝

$$Y=C(Y-\bar{T}) + I(r) + \bar{G}$$

Ամբողջական առաջարկը որոշվում է արտադրության հայտնի, տրված գործոններով և արտադրական ֆունկցիայով՝

$$Y= F(\bar{K}, \bar{L}) = \bar{Y}:$$

Միավորելով արտադրված արտադրանքի պահանջարկի և առաջարկի հավասարումների պայմանները, կստանանք՝

$$\bar{Y}=C(\bar{Y}-\bar{T})+I(r) + \bar{G}$$

Հավասարումից պարզ է դառնում, որ r իրական տոկոսադրույքն է ազդում պահանջարկի և առաջարկի հավասարակշռության վրա: r-ը պետք է փոփոխվի այնպես, որ հավասարեցնի ապրանքների և ծառայությունների պահանջարկը դրանց առաջարկին: Որքան բարձր է իրական տոկոսադրույքը, այնքան ցածր է ներդրումների ծավալը, հետևաբար նաև՝ ամբողջական պահանջարկը:

Հավասարակշռված իրական տոկոսադրույքի պայմաններում ապրանքների և ծառայությունների պահանջարկը հավասարվում է դրանց առաջարկին.

$$AD=AS$$

Հավասարակշռությունը ֆինանսական շուկայում

Ազգային հաշիվների հիմնական հավասարումը փակ տնտեսության համար կարելի է ներկայացնել այսպես.

$$Y-C-G=I$$

(Y-C- G)-ն նշանակենք S-ով, կստանանք՝ $S=I$

S-ը ազգային խնայողություններն են և ցույց են տալիս ամբողջական արդյունքի այն մասը, որը մնում է սպառողների և պետության պահանջարկը բավարարելուց հետո: Ազգային խնայողությունները բաժանվում

են մասնավոր խնայողությունների՝ $S_մ$ = Y-C-T և պետական խնայողությունների՝ $S_պ$ =T-G:

S=I-ը ցույց է տալիս, որ ամբողջությամբ վերցրած՝ տնտեսության համար ազգային խնայողությունները պետք է հավասար լինեն ներդրումներին: Տեղադրելով յուրաքանչյուր տարրի արժեքը՝ կստանանք.

$$Y-C(Y-T) - G= I(r)$$

Պետական ծախսերը և եկամուտները տրված են հարկաբյուջետային քաղաքականությամբ, իսկ Y-ը որոշվում է արտադրության գործոնների և արտադրական ֆունկցիայի միջոցով.

$G= \bar{G}$, $T= \bar{T}$, $Y= \bar{Y}$, կստանանք՝

$\bar{Y}-C(\bar{Y}-\bar{T}) - \bar{G} = I(r)$, կամ՝ $\bar{S}= I(r)$

S-ը կախված է Y-ից և հարկաբյուջետային քաղաքականության փոփոխականներից՝ G-ից և T-ից:

Անփոփոխ Y-ի, G-ի և T-ի պայմաններում անփոփոխ են նաև ազգային խնայողությունները՝ S-ը:

S=I(r) արտահայտությունը կարևոր հարցեր է առաջ բերում. օրինակ՝ ինչպիսի՞ն է ներդրումների և խնայողությունների հավասարակշռության մեխանիզմը: Ի՞նչն է դրդում որոշ մարդկանց՝ խնայողություններ անելու, իսկ մյուսներին՝ ներդնելու: Այս հարցերի պատասխանը կարելի է գտնել ֆինանսական շուկայի գործելու սկզբունքներում: Արժեթղթերի և փոխառությունների շուկան, բանկերը և շուկայի այլ կառուցվածքներ նպաստում են ազգային խնայողությունների ձևավորմանը և ուղղում դրանք ազգային ներդրումների իրականացմանը:

Եթե Y-ը, G-ն, T-ն հայտնի են, ապա S-ը տրված է՝ $S= \bar{S}$: Կառուցենք ֆինանսական շուկայի (ենթադրենք՝ դա միայն փոխառու միջոցների շուկա է) գրաֆիկական մոդելը:



Իրական տոկոսադրույքը (r) տատանվում է այնպես, որ հավասարակշռի ներդրումներն ու խնայողությունները: Ուղղահայացը ցույց է տալիս փոխառու միջոցների առաջարկը՝ խնայողությունները, իսկ թեք գիծը՝ փոխառու միջոցների պահանջարկը՝ ներդրումները:

Նկ. 6.5. Խնայողությունները, ներդրումները և տոկոսադրույքը

Ազգային խնայողություններն անվանում ենք նաև փոխառու միջոցների առաջարկ, իսկ ներդրումները՝ փոխառու միջոցների պահանջարկ: Վերջինս կախված է իրական տոկոսադրույքից, որը հանդես է գալիս որպես փոխառու միջոցների գին:

Տոկոսադրույքը փոփոխվում է այնպես, որ փոխառու միջոցների պահանջարկը հավասարվի դրանց առաջարկին: Հավասարակշռված տոկոսադրույքի պայմաններում ներդրումները հավասար են խնայողություններին, կամ փոխառու միջոցների պահանջարկը հավասար է դրանց

առաջարկին:

Քաղաքականության ազդեցությունը ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա

Հարկաբյուջետային քաղաքականությունը ազդում է ամբողջական պահանջարկի, ազգային խնայողությունների, դրանով՝ ներդրումների և հավասարակշռված տոկոսադրույքի վրա:

Ենթադրենք՝ պետությունը իրականացնում է խթանող հարկաբյուջետային քաղաքականություն և ավելացնում է պետական ծախսերը ΔG չափով: Ամբողջական պահանջարկը ապրանքների և ծառայությունների նկատմամբ ավելանում է ΔG-ով: Սակայն, քանի որ արտադրանքի թողարկման ծավալը կայուն է, ապա պետության ծախսերի ավելացումը պետք է իրականանա պահանջարկի որևէ այլ տարրի կրճատման հաշվին: Քանի որ (Y-T) տնօրինվող եկամուտը անփոփոխ է, ապա C-ն նույնպես անփոփոխ է, ուրեմն պետք է կրճատվեն ներդրումները ΔG չափով: Ներդրումները կկրճատվեն, եթե տոկոսադրույքը բարձրանա: Հետևաբար, պետական ծախսերի ավելացումը հանգեցնում է պետական խնայողությունների, ապա նաև՝ ազգային խնայողությունների կրճատման, տոկոսադրույքը ֆինանսական շուկայում բարձրանում է, և ներդրումները կրճատվում են: Արդյունքում՝ պետական ծախսերը դուրս են մղում ներդրումները:



Խթանող հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում խնայողությունների կրճատումը S-ը տեղաշարժում է ձախ, և իրական տոկոսադրույքը բարձրանում է: Դա կրճատում է ներդրումները՝ I_1-ից I_2:

Նկ. 6.6. Խնայողությունների կրճատումը

Եթե պետությունը իրականացնի խթանող հարկաբյուջետային քաղաքականություն և կրճատի հարկերը, ապա տնօրինվող եկամուտը, հետևաբար նաև սպառումը կաճեն, ազգային խնայողությունները կկրճատվեն, իրական տոկոսադրույքը կբարձրանա, և ներդրումները կկրճատվեն: Գրաֆիկորեն կունենանք նույն պատկերը, ինչ՝ նախորդ դեպքում:

Ներդրումային պահանջարկը երկրում կարող է ավելանալ մի շարք դեպքերում.

- ներդրողների համար հարկային և վարկային արտոնություններ սահմանելու,
- տեխնոլոգիական առաջադիմության և այլն:

Ներդրումային պահանջարկի ավելացման հետևանքը ֆինանսական

շուկայի հավասարակշռության վրա գրաֆիկորեն կարելի է պատկերել հետևյալ կերպ.



Ներդրումային պահանջարկի խթանումը ներդրումների կորը կտեղաշարժի աջ՝ վերև, իրական տոկոսադրույքը կբարձրանա, սակայն ներդրումների հավասարակշռված ծավալը չի փոխվի:

Նկ. 6.7. Ներդրումային պահանջարկի խթանումը

Քանի որ փոխառու միջոցների առաջարկը չի փոխվել, ապա ներդրումային պահանջարկի ավելացումը հանգեցրել է միայն տոկոսադրույքի բարձրացման, իսկ ներդրումների հավասարակշռված մակարդակը մնացել է անփոփոխ:

Բնականաբար, մենք ուրիշ արդյունք կստանայինք, եթե փոփոխեինք սպառման ֆունկցիան և ենթադրեինք, որ սպառումը և տոկոսադրույքը կապված են: Քանի որ տոկոսադրույքը խնայողություններից ստացվող եկամուտն է, ապա ավելի բարձր տոկոսադրույքը կկրճատի սպառումը և կավելացնի խնայողությունները: Կստանանք խնայողությունների նոր կոր, որը ուղղված է ձախ-ներքևից աջ-վերև:



Ներդրումների կորի տեղաշարժը աջ՝ վերև կբարձրացնի իրական տոկոսադրույքը, խնայողությունները կավելանան, կավելանա նաև ներդրումների հավասարակշռված մակարդակը:

Նկ. 6.8. Խնայողությունների, տոկոսադրույքի և ներդրումային պահանջարկի կապը

Այս դեպքում, եթե ներդրումային պահանջարկն ավելանա, ապա կբարձրանա հավասարակշռված տոկոսադրույքը և ներդրումների հավասարակշռված ծավալը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ բարձր տոկոսադրույքի պայմաններում տնային տնտեսություններն ավելի քիչ կսպառեն և ավելի շատ կխնայեն, և ներդնելու համար ռեսուրսներ կազատվեն.

Վերջում ավելացնենք, որ այս թեմայում ուսումնասիրված՝ ապրանք-

ների և ծառայությունների արտադրությունը, բաշխումը և օգտագործումը բացատրող մոդելն անվանվում է *ընդհանուր հավասարակշռության մոդել*, որը բացատրում է գների փոփոխության կարևորությունը ամբողջական պահանջարկն ու ամբողջական առաջարկը հավասարակշռելիս: Գործոնների գների փոփոխությունը հավասարակշռում է արտադրության գործոնների շուկան, տոկոսադրույքի փոփոխությունը՝ ֆինանսական շուկան:

Ամփոփում

1. Արտադրության գործոնները՝ կապիտալը և աշխատանքը, և արտադրական ֆունկցիան որոշում են տնտեսությունում արտադրվող ապրանքների և ծառայությունների ծավալը՝ ամբողջական առաջարկը:
2. Մրցակցային, առավելագույն շահույթի ձգտող ձեռնարկությունը արտադրության գործոնների նկատմամբ պահանջարկ է դրսևորում այնքան ժամանակ, քանի դեռ գործոնների սահմանային արդյունքները չեն հավասարվել գործոնների իրական գներին:
3. Եթե արտադրական ֆունկցիան ունի կայուն հատույց մասշտաբից, ապա արտադրված ողջ արդյունքը բաշխվում է արտադրության գործոնների միջև՝ ըստ այդ գործոնների իրական գների:
4. Արտադրված ամբողջական արդյունքը փակ տնտեսությունում օգտագործվում է սպառման, ներդրման և պետական գնումների նպատակներով: Սպառումը կախված է տնօրինվող եկամտից, ներդրումները՝ իրական տոկոսադրույքից, իսկ հարկերը և պետական ծախսերը տրված են տնտեսական քաղաքականությամբ և տնտեսական մոդել մտցվում են որպես արտաքին (էկզոգեն) փոփոխականներ:
5. Իրական տոկոսադրույքը տատանվում է, փոփոխում ներդրումների ծավալը, այդպիսով հավասարակշռելով և՛ ապրանքների շուկան, և՛ ֆինանսական շուկան: Վերջիններս փոխկապված են և փոխազդում են տոկոսադրույքի միջոցով:
6. Խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը կրճատում է ազգային խնայողությունները, տոկոսադրույքը բարձրանում է, և ներդրումները կրճատվում են: Ներդրումային պահանջարկի ավելացումը բարձրացնում է իրական տոկոսադրույքը:
7. Ներդրումային պահանջարկի աճը ավելացնում է ներդրումների ծավալը միայն այն դեպքում, երբ բարձր տոկոսադրույքը խթանում է լրացուցիչ խնայողությունները:

Թեստեր և խնդիրներ

1. *Ենթադրենք՝ արտադրական ֆունկցիան տրված է Y=AK0.5 L0.5 տեսքով, որտեղ՝A=10, K= 64, L=25: Այդ դեպքում ինչի՞ են հավասար.*
   ա. ՀՆԱ-ն,
   բ. աշխատանքի մասնակցությամբ արտադրված արտադրանքի քանակը,
   գ. կապիտալի մասնակցությամբ արտադրված արտադրանքի քանակը,
   դ. աշխատանքի վճարման համար օգտագործված եկամտի մասը,
   ե. կապիտալի վճարման համար օգտագործված եկամտի մասը,
   զ. իրական աշխատավարձը,
   է. կապիտալի վարձակալման իրական վճարը:
   Վերահաշվարկել «ա-է» կետերում պահանջվող մեծությունները, երբ A=10.1: Ինչո՞ւ են «դ» և «ե» կետերի պատասխանները մնացել նույնը:

2. *Տնտեսությունը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. սպառողական ծախսեր՝ 2300, համախառն մասնավոր ներդրումներ՝ 700, պետական գնումներ՝ 800, տրանսֆերտային հատկացումներ՝ 100, պետական պարտքի տոկոսային վճարներ՝ 100, վճարված հարկեր՝800: Ենթադրենք՝ ՀՆԱ-ն հավասար է ՀԱԱ-ին, և պետությունն ունի միայն ներքին պարտք:*

3. *Տրված է սպառման ֆունկցիան՝ C= C + 0.6 (Y-T): Հաշվել ազգային և մասնավոր խնայողությունների տարբերության փոփոխությունը, եթե սպառողների տնօրինվող եկամուտն ավելացել է 200 միավորով:*

4. *Ժամանակի յուրաքանչյուր տվյալ պահին տնտեսությունում.*
   ա. արտադրության ծավալը հաստատուն է, քանի որ կապիտալի և աշխատանքի առաջարկը հաստատուն է,
   բ. արտադրության ծավալը հաստատուն է, քանի որ հաստատուն է ապրանքների և ծառայությունների պահանջարկը,
   գ. արտադրության ծավալը փոփոխվում է, քանի որ փոփոխվում է կապիտալի և աշխատանքի պահանջարկը,
   դ. արտադրության ծավալը չի փոփոխվում, իսկ կապիտալի և աշխատանքի զուգակցման տեխնոլոգիան փոփոխվում է:

5. *Տնտեսական շահույթը հավասար է 0-ի, եթե.*
   ա. արտադրության գործոնները ստացել են իրենց սահմանային արդյունքները, և կա նվազող հատույց մասշտաբից,
   բ. արտադրության գործոնները ստացել են իրենց սահմանային արդյունքները, և կա կայուն հատույց մասշտաբից,
   գ. արտադրության գործոնները չեն ստացել իրենց սահմանային արդյունքները, և կա կայուն հատույց մասշտաբից,
   դ. արտադրության գործոնները ստացել են իրենց սահմանային արդյունքները, որովհետև ձեռնարկությունը տիպիկ է:
6. *Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայի համաձայն.*

ա. եկամտում աշխատանքի բաժինը կախված է L-ի մեծությունից, իսկ կապիտալի բաժինը՝ K-ի մեծությունից,
բ. աշխատանքին և կապիտալին անցած եկամուտը կախված է միայն A-ի մեծությունից,
գ. աշխատանքին և կապիտալին անցած եկամուտը կախված է միայն α-ի մեծությունից,
դ. աշխատանքին և կապիտալին անցած եկամուտը կախված է գործոնների հարաբերակցությունից:

7. Եթե տրված է հետևյալ սպառման ֆունկցիան՝ C= 150+0.65 (Y-T), և T-ն ավելանում է 1-ով, ապա ազգային խնայողությունները.
ա. կրճատվում են 0.65-ով,
բ. կրճատվում են 0.35-ով,
գ. ավելանում են 0.65-ով,
դ. ավելանում են 0.35-ով:

8. Վերլուծությունը սկսում ենք ֆինանսական շուկայի հավասարակշռության վիճակից: Եթե պետությունը ավելացնի պետական ծախսերը, ապա.
ա. սպառումը նվազում է, իրական տոկոսադրույքը բարձրանում է, ներդրումների հավասարակշռված մակարդակը՝ նվազում,
բ. պետական խնայողությունները կրճատվում են, իրական տոկոսադրույքը բարձրանում է, ներդրումները՝ նվազում,
գ. ազգային խնայողությունները նվազում են, իրական տոկոսադրույքը իջնում է, ներդրումներն ավելանում են,
դ. պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ, քանի որ ներդրումները դուրս են մղվում խնայողությունների կողմից:

9. Պետությունը հարկերը բարձրացրել է 100 մլն դրամով: MPC-ն հավասար է 0,7-ի: Այդ դեպքում.
ա. մասնավոր խնայողությունները կկրճատվեն 30 մլն դրամով, իսկ ազգային խնայողությունները կավելանան 100 մլն դրամով,
բ. ազգային խնայողությունները կավելանան 70 մլն դրամով, իսկ մասնավոր խնայողությունները կկրճատվեն 30 մլն դրամով,
գ. ազգային խնայողությունները կավելանան 100 մլն դրամով, իսկ պետական խնայողությունները՝ 70 մլն դրամով,
դ. և՛ ազգային, և՛ պետական խնայողությունները կավելանան 100 մլն դրամով:

10. Ներդրողներին ներդրումային հարկային վարկի տրամադրումը.
ա. ավելացնում է հարկային բեռը և բարձրացնում տոկոսադրույքը,
բ. ավելացնում է ներդրումները և բարձրացնում տոկոսադրույքը,
գ. ավելացնում է ներդրումները և իջեցնում տոկոսադրույքը,
դ. ներդրումների ծավալը չի փոխում, իսկ տոկոսադրույքը բարձրացնում է:

Հիմնական հասկացություններ

Շուկայական տնտեսության սուբյեկտներ

Տնային տնտեսություն

Արտադրության գործոններ

Արտադրական ֆունկցիա

Տնտեսական շահույթ

Սպառման սահմանային հակում

Հաշվապահական շահույթ

Կայուն հատույց մասշտաբից

Աշխատանքի սահմանային արդյունք (MPL)

Կապիտալի սահմանային արդյունք (MPK)

Իրական աշխատավարձ

Կապիտալի իրական վարձավճար

Ազգային խնայողություններ

Մասնավոր խնայողություններ

Պետական խնայողություններ

Ներդրումային ֆունկցիա

Փոխառու միջոցների առաջարկ

Փոխառու միջոցների պահանջարկ

Հարցեր կրկնության համար

1. Ինչպե՞ս են փոխազդում և ինչպե՞ս են փոխկապված շուկայական տնտեսության սուբյեկտներն ու շուկաները:
2. Ինչպե՞ս է որոշվում ազգային արդյունքի ծավալը:
3. Ինչպե՞ս է ձեռնարկությունը որոշում իրեն անհրաժեշտ արտադրության գործոնի ծավալը:
4. Ո՞րն է գործոնների սահմանային հատույցի դերը ազգային արդյունքը բաշխելիս:
5. Որքա՞ն իրական եկամուտ են ստանում աշխատանքի և կապիտալի սեփականատերերը:
6. Ինչպե՞ս է որոշվում սպառման չափը:
7. Ինչպե՞ս է ձևավորվում ներդրումային պահանջարկը: Ո՞րն է ներդրումային պահանջարկի ֆունկցիան:
8. Ի՞նչ տարբերություններ կան պետական գնումների և պետական ծախսերի միջև:
9. Ի՞նչ են հարկերը, տրանսֆերտները և զուտ հարկերը:
10. Ի՞նչն է հավասարակշռում ապրանքների և ծառայությունների պահանջարկն ու առաջարկը:
11. Բացատրե՛ք ֆինանսական շուկայի հավասարակշռության մեխանիզմը:
12. Ի՞նչ ազդեցություն ունի հարկաբյուջետային քաղաքականությունը ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա:
13. Ինչպե՞ս են ներդրումները «դուրս մղվում» պետական ծախսերի կամ սպառման կողմից:

ԳԼՈՒԽ 7

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԵՎ ԴՐԱ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Ինչո՞վ է պայմանավորված տնտեսական աճը, և ինչո՞ւ է այս հիմնահարցին կենտրոնական տեղ հատկացվում մակրոտնտեսական հետազոտություններում:
- Չնայած երկրի հզորության ամրապնդման և բնակչության բարեկեցության բարձրացման խնդրում ունեցած նշանակությանը՝ այնուամենայնիվ, ինչո՞ւ տնտեսագետները միասնական կարծիք չունեն այս հիմնահարցի վերաբերյալ:
- Ինչո՞ւ շատ երկրներ թեև ապահովում են տնտեսական աճ, սակայն չեն հարստանում, այլ մնում են աղքատ:
- Ի՞նչ գործոններով է պայմանավորված տնտեսական աճը, և ինչպես կարելի է քանակապես չափել դրանցից յուրաքանչյուրի «ներդրումը» տնտեսական աճի մեջ:
- Ի՞նչ լծակներ և տնտեսական քաղաքականության ուղղություններ են կիրառվում տնտեսական աճի պետական կարգավորման բնագավառում:

<a name="par1" id="par1"><h3>**7.1. Տնտեսական աճ հասկացությունը և դրա էությունը**</h3><a>

Տնտեսական աճի սահմանումը
Տնտեսական աճի տեսության հիմնական խնդիրը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. ի՞նչ ձևով է հնարավոր ավելացնել արտադրական կարողությունների կամ ՀՆԱ ծավալը լրիվ զբաղվածության պայմաններում:
Տնտեսական աճը սահմանվում և չափվում է փոխադարձաբար կապված երկու ցուցանիշով. <ul class="beztoch">
1. որոշակի ժամանակի միավորի ընթացքում իրական ՀՆԱ ծավալի աճ,
2. ժամանակի միավորի ընթացքում ՀՆԱ աճ՝ բնակչության մեկ շնչի հաշվով:

Եթե ուշադրության կենտրոնում է երկրի ռազմաքաղաքական ներուժը, ապա առավել հարմար է առաջին ցուցանիշը: Տարբեր երկրների բնակչության կենսամակարդակները համեմատելիս ակնհայտորեն

գերադասելի է երկրորդը: Օրինակ, Հնդկաստանի ՀՆԱ ծավալը երկու անգամ գերազանցում է Շվեյցարիայի համապատասխան ցուցանիշը, սակայն բնակչության կենսամակարդակով Հնդկաստանը 60 անգամ հետ է մնում Շվեյցարիայից:</p>

      Տնտեսական աճի նշանակությունը

Ինչո՞ւ է տնտեսական աճը դիտվում որպես կարևոր նպատակ: Պատասխանը ակնհայտ է: Բնակչության մեկ շնչի հաշվով ազգային արդյունքի ավելացումը նշանակում է կենսամակարդակի բարձրացում: Աճող տնտեսությունն ավելի մեծ հնարավորություններ ունի բավարարելու նոր ձևավորվող պահանջմունքները և լուծելու սոցիալ-տնտեսական հիմնահարցերը ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Մի կողմից՝ իրական եկամուտների աճը մեծացնում է ընտանիքների հնարավորությունները. այն է՝ ճանապարհորդություններ, նոր սարքավորումների ձեռքբերում, բարձրագույն կրթություն և այլն՝ առանց մյուս բարիքներից զրկվելու: Մյուս կողմից՝ տնտեսական աճը հնարավորություն է տալիս իրականացնելու աղքատության դեմ պայքարի ծրագրերը՝ առանց սպառման մակարդակի կամ ներդրումների նվազման: Տնտեսական աճը հեշտացնում է ռեսուրսների սահմանափակության հիմնահարցի լուծումը:

Սովորաբար տնտեսական աճը չափվում է տարեկան հավելաճի տեմպի տոկոսով: Օրինակ, եթե իրական ՀՆԱ-ն Հայաստանում 2001թ. կազմել է 1175 մլրդ դրամ, իսկ 2002թ.՝ 1327 մլրդ դրամ, ապա աճի տեմպը կկազմի 12,9% (1327 / 1175 x 100): Ինչպես տեսնում ենք, 1% տնտեսական աճը կազմում է մոտ 13 մլրդ դրամ ազգային արդյունք: Այդ պատճառով տնտեսագետները շատ ցավագին են ընդունում աճի տեմպերի նույնիսկ չնչին անկումները: Աղքատ երկրում տնտեսական աճի տեմպի նույնիսկ կես տոկոսով նվազումը կարող է հանգեցնել բնակչության մի մասի սովամահության: Բացի այդ, տարիների ընթացքում նույնիսկ աճի տեմպերի փոքր տարբերությունը կարող է ունենալ վճռական նշանակություն: Ենթադրենք՝ երկու երկրներում ՀՆԱ ծավալները տվյալ պահին նույնն են: Եթե աճի միջին տարեկան տեմպը առաջին երկրում կազմել է 2, իսկ երկրորդում՝ 5 տոկոս, ապա “70” թվի կանոնի համաձայն՝ առաջին երկրում ՀՆԱ-ն կկրկնապատկվի 35 տարում / 70 : 2 /, իսկ երկրորդում՝ ընդամենը 14 տարում / 70 : 5 /:

Տնտեսական աճի միտումները և բնորոշ գծերը

XVIII դարի վերջին տարածում էր գտել այն տեսակետը, որ ապագայում բնակչության աճը կսահմանափակվի՝ կապված մարդկանց պահանջմունքները բավարարելու՝ հողի սահմանափակ հնարավորությունների հետ: Եթե բնակչության թվաքանակի աճը տնտեսական հնարավորությունների համեմատ ավելի արագ է կատարվում, ապա բնակչության աճը կանգ կառնի եթե ոչ պատերազմի, ապա այնպիսի պատճառներով, ինչպիսիք են սովը և համաճարակները: «Բնակչության պահանջմունքներն այնքան կգերազանցեն մարդկանց գոյության միջոցների վերարտադրության՝ հողի ունակությունը, որ նրանց անժամանակ կործանումը այս կամ այն ձևով անխուսափելի է»,- գրում էր Թոմաս Մալթուսը (Thomas Malthus, First essay on population 1798. London: 1966, pp. 139.):

Բարեբախտաբար Մալթուսի կանխատեսումները չիրականացան, և անցած երկու դարերի ընթացքում տեղի է ունենում կայուն աճ:

Ստորև ներկայացված աղյուսակի տվյալների հանաձայն՝ 1000 տարի բնակչության մեկ շնչի հաշվով աճ չի գրանցվել, իսկ բնակչությունը այդ ընթացքում աճել է տարեկան 0,1 տոկոսով: Հաջորդ հարյուրամյակներում նկատվում է որոշ աճ, սակայն շատ ցածր տեմպերով: Շեշտակի փոփոխություն է կատարվում վերջին երկու դարերի ընթացքում, երբ մեկ շնչի հաշվով թողարկումն աճում է տարեկան 1,6 տոկոսով: Ըստ Սայմոն Կուզնեցի ուսումնասիրությունների՝ աճի ժամանակակից տեմպերը արդյունաբերական հեղաշրջման արդյունք են: Անգլիայում՝ 1780-1820թթ., ԱՄՆ-ում՝ 1810-1860թթ., Գերմանիայում՝ 1820-1870թթ.: Այս երկրներում տնտեսական զարգացման վաղ փուլերում դիտվում էր համախառն եկամտի և բնակչության աճ, որը ուղեկցվում էր տեխնոլոգիական կատարելագործումներով:

Վերջին 15 դարերի ընթացքում Եվրոպայի զարգացումը բնութագրող ցուցանիշները (տես՝ Джеффри Д. Сакс, Фелипе Ларрен Б., Макроэкономика. Глобальный подход. М., 1999, էջ 599:)

Զարգացման փուլեր	Ժամանակա-շրջանը	Բնակչության հավելաճը (%)	Մեկ բնակչի հաշ-վով թողարկման հավելաճը (%)
Ագրարային կապի-տալիզմ	/ 500-1500թթ./	0,1	0,0
Զարգացած ագրա-րային կապիտալիզմ	/ 1500-1700թթ./	0,2	0,1
Առևտրային կապի-տալիզմ	/ 1700-1820թթ. /	0,4	0,2
Կապիտալիզմ	/ 1820-1980թթ. /	0,9	1,6

Ինչու է մի երկրում տնտեսական աճն արագանում, մյուսում՝ ոչ: Մաքս Վեբերը դա բացատրում է տնտեսության և կրոնի միջև եղած կապով: Ըստ նրա՝ կապիտալիզմի զարգացման առավել նպաստավոր պայմաններ կան այն երկրներում, որտեղ դավանում են բողոքականություն: Վերջինս խրախուսում է շահույթի ստացումը, միաժամանակ քարոզում է խնայողություն և ինքնասահմանափակում, որոնք անհրաժեշտ են կապիտալի կուտակման համար:

Ավելի լուրջ տեսությունները ընդգծում են այնպիսի գործոնների դերը, ինչպիսիք են տեխնոլոգիան և մասնավոր սեփականությունը:

Որոնք են ժամանակակից տնտեսական աճի բնորոշ գծերը: Տնտեսական աճի առաջին առանձնահատկությունը գյուղատնտեսական հատվածի տեսակարար կշռի նվազման միտումն է: ԱՄՆ-ում 1920թ. աշխատուժի 70%-ը զբաղված էր գյուղատնտեսության մեջ: 1987թ. այդ ցուցանիշը կազմում էր 3%: Ինչու է եկամտի աճի պարագայում ագրարային հատվածի

բաժինը այդպես արագ կրճատվում: Պատճառները պայմանավորված են և՛ առաջարկի, և՛ պահանջարկի գործոններով: Առաջարկի առումով դիտարկելիս ագրարային հատվածի արտադրողականությունը ունի խիստ արագ աճելու միտում: Պահանջարկի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եթե բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտն աճում է, ապա սննդամթերքի նկատմամբ պահանջարկի բաժինը կրճատվում է: Չևաականորեն սնունդը հանդիսանում է առաջին անհրաժեշտության ապրանք, այլ ոչ թե պերճանքի առարկա, այդ պատճառով սննդամթերքի պահանջարկի ճկունությունը փոքր է մեկից:

Ագրարային հատվածի բաժնի կրճատմանը հակառակ՝ նախ ավելանում է արդյունաբերության, այնուհետև՝ ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռը:

Բարձր տնտեսական աճի փուլ մտնող երկրներին բնորոշ է ուրբանիզացման (քաղաքակենտրոնացման) գործընթացը, որը Կուզնեցը բնութագրում է որպես բնակչության կենտրոնացում խիտ բնակեցված, համեմատաբար խոշոր տարածաշրջաններում: Ուրբանիզացումը ագրարային հատվածի բաժնի կրճատման և արդյունաբերության ծաղկման հետևանք է: Արդյունաբերական արտադրությունը իրականացնում են խոշոր ֆիրմաները, որոնք օգտագործում են համակենտրոնացման առավելությունները, այսպես կոչված՝ տնտեսում արտադրության մասշտաբներից: Այդպիսի ֆիրմաները նպատակահարմար են գտնում տեղավորվել միմյանցից մոտ հեռավորության վրա, որպեսզի օգտագործեն ընդհանուր ենթակառուցվածքը՝ կոմունիկացիաները, տրանսպորտային միջոցները, էներգամատակարարումը և այլն: Վերջնական արդյունք թողարկող ֆիրմաները ձգտում են մոտ գտնվել խոշոր սպառող կենտրոններին, որոնք հանդիսանում են իրացման շուկաներ: Այլ ֆիրմաներին մոտ գտնվելու արդյունքում ստացվող ծախսերի տնտեսումը կոչվում է ագլոմերացիայի արդյունք:

Փաստարկներ տնտեսական աճի դեմ

Որքան էլ տարօրինակ է, վերջին տարիներին տնտեսական աճի նպատակահարմարության վերաբերյալ կասկածներ են ծագել այն երկրներում, որտեղ հասել են բարձր կենսամակարդակի: Այդ կասկածները հիմնավորվում են մի շարք փաստարկներով: <ul class="beztoch">

1. Շրջակա միջավայրի աղտոտումը: Տնտեսական աճի հակառակորդները պնդում են, որ ինդուստրացումն ու տնտեսական աճը ծնում են այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են՝ միջավայրի աղտոտումը, արդյունաբերական թափոնները և աղմուկը, տրանսպորտային խցանումները և այլն: Գործնականում այն ամենը, ինչ օգտագործվում է արտադրության մեջ, ժամանակի ընթացքում վերադառնում է շրջակա միջավայր՝ թափոնների տեսքով: Որքան բարձր է տնտեսական աճը և կենսամակարդակը, այնքան ավելի շատ թափոններ պետք է «կուլ տա» շրջակա միջավայրը: Բարձր կենսամակարդակի հասած ցանկացած երկրում տնտեսության հետագա աճը կարող է բավարարել ավելի ու ավելի ոչ էական պահանջմունքներ՝ հանգեցնելով էկոլոգիական ճգնաժամի: Այդ պատճառով, շատ տնտեսագետներ այն

կարծիքին են, որ տնտեսական աճը պետք է նպատակասլաց ձևով կասեցվի:

2. Տնտեսական աճի կողմնակիցները ենթադրում են, որ այն ինքնըստինքյան լուծում է սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները: Սակայն այս պնդումը ապացուցված չէ: Տնտեսական աճի հակառակորդները պնդում են, որ երկրում աղքատության հիմնահարցը, ըստ էության, բաշխման և ոչ թե արտադրության խնդիր է: Դրա լուծման համար անհրաժեշտ է քաղաքական կամք և համարձակություն, այլ ոչ թե հասարակական արդյունքի աճ:

3. Հոգեբանական ճգնաժամ: Տնտեսական աճի հակառակորդները ենթադրում են, որ տեխնոլոգիայի կատարելագործման հիման վրա արտադրության աճը մարդկանց մեջ ծնում է անհանգստություն և անվստահություն, քանի որ տարիների ընթացքում նրանց կուտակած մասնագիտական փորձը և հմտությունները հնանում են: Չնայած տնտեսական աճը ապահովում է մեզ «կյանքի միջոցներով», այն չի կարող ապահովել «լավ կյանք»: Տեխնիկական առաջադիմությունը արհեստավորներին ու մտավորականներին վերածել է մեքենաների կցորդի, որոնք միայն կոճակներ են սեղմում և կորցրել են աշխատանքից գեղագիտական բավարարվածություն ստանալու զգացումը: Տնտեսական աճի արդյունքները հաշվեկշռելիս արդյոք սա չպե՞տք է համարվի էական կորուստ:

Փաստարկներ տնտեսական աճի օգտին

Տնտեսական աճի կողմնակիցները այն կարծիքին են, որ տնտեսական աճն ապահովում է կենսամակարդակի բարձրացում, թուլացնում է հակասությունները բնակչության տարբեր խմբերի միջև: Միաժամանակ ռազմական ներուժը հզորացնելու, աղքատների, ծերերի օգնության ծրագրեր իրականացնելու, կրթական և առողջապահական համակարգերը կատարելագործելու հնարավորություն է ստեղծվում: <ul class="beztoch">

1. Տնտեսական աճի կողմնակիցները գտնում են, որ եթե նույնիսկ հասարակությունը հրաժարվի տնտեսական աճից և ՀՆԱ-ն պահի որոշակի մակարդակի վրա, միևնույն է, շրջակա միջավայրի վրա արտադրության բացասական ազդեցությունը կմնա: Այս տնտեսագետների կարծիքով՝ միջավայրի աղտոտումը ոչ թե տնտեսական աճի, այլ սխալ գնագոյացման հետևանք է: Այսպես. բնական ռեսուրսների մեծ մասը /օդը, ջուրը, անտառները և այլն/ համարվում են «ընդհանուր սեփականություն» և գին չունեն: Այդ պատճառով դրանք օգտագործվում են չափազանց ինտենսիվ և ոչ արդյունավետ: Դրա համար անհրաժեշտ է օրենսդրորեն հատուկ հարկեր սահմանել, որպեսզի կանխվի այդ ռեսուրսների ոչ բանական, անարդյունավետ օգտագործումը: Իհարկե կան հիմնախնդիրներ՝ կապված շրջակա միջավայրի աղտոտման հետ: Սակայն տնտեսական աճի սահմանափակումը դրանք չի լուծում: Այդ տնտեսագետների կարծիքով, որպեսզի սահմանափակվի աղտոտումը, պետք է սահմանափակել հենց աղտոտումը և ոչ թե տնտեսական աճը:

2. Եկամուտների անհավասարություն: Հազիվ թե միջին դասի ընտրողները համաձայնվեն, որ իրենց եկամուտները վերաբաշխվեն ի օգուտ աղ-

քատների: Ավելի շուտ նրանք կողմնակից կլինեն, որ աճող հասարակական արդյունքի մի փոքր ավելի մասը հատկացվի աղքատներին: Եկամուտների բաշխման կառուցվածքը վերջին 50 տարիներին գրեթե չի փոխվել: Այդ պատճառով ցածր եկամուտներ ունեցողների տնտեսական վիճակի բարելավման հիմնական աղբյուրը տնտեսական աճի արդյունքում եկամուտների ընդհանուր մակարդակի բարձրացումն է:

3. Արտադրատնտեսական նկատառումներ: Տնտեսական աճի կողմնակիցները պնդում են, որ աճի դանդաղեցումը ինքնաբերաբար չի ազդի մարդկային արժեքների վրա և բարեկեցիկ կյանք չի ապահովի: Իրականում կարելի է սպասել հակառակը: Սարքավորումների կատարելագործումը, որպես կանոն, նվազեցնում է աշխատանքի լարվածությունը և դժբախտ դեպքերը: Օդափոխվող շինությունները շատ ավելի հարմար են աշխատանքի համար, քան հին ֆաբրիկաների հեղձուցիչ արտադրամասերը: Բացի այդ, հենց տնտեսական աճով ապահովվող բարձր կենսամակարդակն է մարդկանց հնարավորություն տալիս ժամանակը ծախսել կրթության, ինքնազարգացման վրա:

<h3> *7.2. Տնտեսական աճի գործոնները* </h3>

 Գործոնների դասակարգումը

Ցանկացած երկրի տնտեսական աճը պայմանավորված է երեք խումբ հիմնական՝ առաջարկի, պահանջարկի և բաշխման գործոններով: Առաջարկի գործոններն են. <ul class="beztoch">

1. աշխատանքային ռեսուրսների քանակը և որակը,
2. հիմնական կապիտալի ծավալը,
3. տեխնոլոգիան:

Սրանք ապահովում են արտադրանքի ֆիզիկական ծավալի աճը: Սակայն անհրաժեշտ է տարբերել աճի հնարավորությունը իրական աճից: Իրական աճի համար կարևոր է երկու հանգամանք, որոնցից մեկը պահանջարկի, մյուսը՝ բաշխման գործոններն են: Նախ՝ երկրի աճող արտադրական ներուժը իրացնելու համար անհրաժեշտ է ապահովել ավելացած ռեսուրսների լիակատար օգտագործումը: Դրա համար պահանջվում է ավելացնել համախառն ծախսերը: Երկրորդ՝ տնտեսական աճի վրա ազդում են բաշխման գործոնները: Այսինքն՝ կարևոր է ոչ միայն ռեսուրսները տնտեսական շրջանառության մեջ ընդգրկելը, այլև դրանք առավել արդյունավետ օգտագործելը:

Բոլոր գործոնների միջև փոխադարձ կապը երևում է արտադրական հնարավորությունների կորից (նկ. 7.1): Կորը ցույց է տալիս տվյալ քանակի ռեսուրսի և տվյալ տեխնոլոգիայի պայմաններում զանազան ապրանքների առավելագույն ծավալի թողարկման հնարավոր տարբերակները: Առաջարկի յուրաքանչյուր գործոնի ավելացումը նպաստում է, որ արտադրական հնարավորությունների կորը տեղափոխվի աջ: Սակայն տնտեսության ար-

տադրական ներուժը իրացնելու հնարավորությունը սահմանափակվում է պահանջարկի և բաշխման գործոններով:

Ինչպես նշվեց, արտադրական հնարավորությունների կորը կարող է տեղափոխվել աջ: Սակայն արտադրության ծավալը չի հասնում իր ներուժային մակարդակին: Արտադրության իրական ծավալի կորը կարող է գտնվել AB-CD կորերի միջև ընկած տարածքում: Ասենք, տարվա ընթացքում աշխատուժը ավելացել է 100 000 մարդով: Արտադրական ներուժը աճեց: Սակայն որպեսզի արտադրության ծավալը իսկապես աճի, անհրաժեշտ է. նախ՝ բոլորին ապահովել աշխատատեղով և երկրորդ՝ հատկապես այնպիսի աշխատատեղով, որտեղ նրանք կաշխատեն արդյունավետ: Եթե նրանք մնան գործազուրկ, կամ բժիշկը աշխատի որպես փականագործ, արտադրական ներուժի ծավալը չի իրացվի, արտադրական գործոնի աճը չի ապահովի տնտեսական աճ:





Նկ. **7.1. Տնտեսական աճը և արտադրական հնարավորությունների կորը**

Պահանջարկի և ռեսուրսների բաշխման գործոնների կարևորությունը չանտեսելով, տնտեսական աճի հիմնահարցերը քննարկելիս հիմնական ուշադրությունը դարձվում է առաջարկի գործոններին: Տնտեսական աճը որոշվում է այն գործոններով, որոնք ամբողջական առաջարկի կորը տեղաշարժում են աջ: Ընդ որում, իրական արդյունքը և եկամուտը կավելանան երկու եղանակով՝ ռեսուրսների ավելի մեծ ծավալ ներգրավելով և եղած ռեսուրսները ավելի արդյունավետ օգտագործելով: Վերջինս աշխատանքի արտադրողականության բարձրացման արդյունք է:

Ամերիկացի տնտեսագետ Էդվարդ Դենիսոնը 50 տարվա տվյալների հիման վրա հաշվարկել է ԱՄՆ-ում տնտեսական աճի գործոնների քանակական ազդեցությունը: Ըստ այդ հաշվարկների՝ միջին տարեկան աճը կազմել է 3%, որի 32%-ը աշխատանքային ծախսումների քանակի ավելացման, 68%-ը՝ աշխատանքի արտադրողականության աճի արդյունք է: Ինչպես տեսնում ենք, տնտեսական աճի գլխավոր աղբյուրը ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումն է:

Աշխատանքի արտադրողականության աճը, ըստ Դենիսոնի, ապահովվել է հետևյալ հինգ գործոնների շնորհիվ՝ տեխնիկական առաջադիմություն (28%), կապիտալի ծախսեր (19%), կրթություն և մասնագիտական ուսուցում (14%), արտադրության մասշտաբներից տնտեսում (9%), ռեսուրսների բաշխման բարելավում (8%), այլ գործոններ (22%):

Գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք բացասաբար են ազդում տնտեսական աճի վրա: Դրանցից են՝ աշխատանքի պաշտպանության, շրջակա միջավայրի պահպանման օրենսդրական պահանջները: Դրանք պահանջում են լրացուցիչ ծախսեր, որոնք կրճատում են հիմնական կապիտալի համար կատարվող ներդրումները: Այդպիսի բացասական գործոններ են նաև աշխատանքի նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքը, տնտեսական հանցագործությունները, աշխատանքային կոնֆլիկտների ժամանակ աշխատանքի դադարեցումը, անբարենպաստ կլիմայական պայմանները և այլն:

Գործոնների մի խումբ էլ չի ենթարկվում քանակական չափման: Օրինակ՝ սոցիալական, բարոյահոգեբանական և քաղաքական մթնոլորտը երկրում:

Քանակական գնահատման չի ենթարկվում նաև բնական ռեսուրսների առկայության ազդեցությունը տնտեսական աճի վրա:

 <h3>7.3. Տնտեսական աճի մոդելավորումը</h3>

Աճի մոդելների նկարագրությունը

Տնտեսական աճի մոդելները, ինչպես ցանկացած մոդել, իրական տնտեսական գործընթացների վերացական, պարզեցված արտացոլումն են՝ մաթեմատիկական հավասարումների կամ գրաֆիկների տեսքով: Բազմաթիվ վերացարկումներն ու սահմանափակումները, որոնք բնորոշ են յուրաքանչյուր մոդելի, արդեն կանխավ հեռացնում են այն իրական կյանքից: Այնուամենայնիվ դրանք հնարավորություն են տալիս վերլուծելու և կանխատեսելու այնպիսի բարդ տնտեսական երևույթի առանձին կողմերը, ինչպիսին տնտեսական աճն է:

Ժամանակակից իրականության մեջ օգտագործվում են տնտեսական աճի երկու խումբ մոդելներ. քեյնսյան և նոր դասական: Աճի քեյնսյան մոդելները հիմնականում օգտագործում են կարճաժամկետ հավասարակշռության մոդելների նույն տրամաբանությունը: Միայն թե այստեղ պահանջարկի վերաբերյալ քննարկումները լրացվում են այն

գործոններով, որոնք որոշում են առաջարկի դինամիկան և բացահայտում են տնտեսության մեջ պահանջարկի և առաջարկի դինամիկ հավասարակշռության պայմանները: Այս մոդելների հիմքում ընկած է Լեոնտևի արտադրական ֆունկցիան՝ կապիտալի հաստատուն սահմանային արտադրողականությամբ: Ֆունկցիայի առանձնահատկությունն այն է, որ նրանում բացակայում է արտադրության գործոնների, այն է՝ աշխատանքի և կապիտալի փոխադարձ փոխարինելիությունը: Այստեղ արտադրության աճի հիմնական աղբյուրն են համարվում ներդրումները: Աճի քեյնսյան մոդելներից ամենատարածվածը Ե. Դոմարի և Ռ. Հարրոդի մշակած մոդելներն են:

Նոր դասական մոդելների հիմքում բազմագործոնային արտադրական ֆունկցիաներն են, մասնավորապես՝ Կոբբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան, որոնք թույլ են տալիս գործոնների փոխադարձ փոխարինելիություն, ունեն կայուն հատույց մասշտաբից հատկություն և նկարագրում են տնտեսական աճը երկարատև ժամանակաշրջանում: Այդպիսի մոդելներ են Ռ. Սոլոուի և Է. Ֆելպսի մշակած տնտեսական աճի մոդելները:

      Ե. Դոմարի մոդելը

Այս մոդելում տնտեսության մեջ պահանջարկի և առաջարկի ավելացման միակ գործոն է համարվում ներդրումների աճը: Եթե տվյալ ժամանակահատվածում ներդրումներն աճել են ΔI չափով, ապա հաշվի առնելով քեյնսյան բազմարկչի էֆեկտը՝ կարող ենք ասել, որ ամբողջական պահանջարկի աճը կկազմի.

 $_{\Delta}Y_{AD} = {}_{\Delta}I \times k = {}_{\Delta}I \times 1/1\text{-}MPC = {}_{\Delta}I / MPS = {}_{\Delta}I \times 1/s$

որտեղ՝

k – ծախսերի բազմարկիչն է,

MPC – սպառման սահմանային հակումը,

MPS – խնայողությունների սահմանային հակումը,

s – խնայողության նորմը:

Ամբողջական առաջարկի ավելացումը կարելի է ներկայացնել որպես.

 $_{\Delta}Y_{As} = h \times {}_{\Delta}K$

որտեղ՝ h–կապիտալի սահմանային արտադրողականությունը /ֆոնդահատույց/, որը ընդունված է որպես հաստատուն մեծություն,

$_{\Delta}K$ – կապիտալի հավելաճը,

Վերջինս ապահովվում է համապատասխան ներդրումներով, հետևաբար կարող ենք գրել, որ. $_{\Delta}K = I$, այստեղից էլ՝

 $_{\Delta}Y_{As} = h \times I$

Հավասարակշիռ տնտեսական աճ կապահովվի, եթե պահանջարկը հավասարվի առաջարկին.

 $_{\Delta}I / s = h \times I$ կամ $_{\Delta}I/I = h \times s$

Հավասարակշռության պայմաններում ներդրումները հավասար են խնայողություններին.

 I =S իսկ S = s xY

Եթե խնայողության նորմը ընդունում ենք հաստատուն, ապա եկամտի մակարդակը հանդիսանում է համամասնական մեծություն ներդրումներից.

 $_{\Delta}Y/Y = {}_{\Delta}I/I = h \times s$

Եթե ընդունենք, օրինակ, որ h = 0,85, իսկ s = 0,2, ապա $_{\Delta}Y/Y = 0,85 \times 0,2 = 17\%$: Եթե կապիտալի սահմանային արդյունքը լինի ավելի բարձր, ապա նույն աճի տեմպը կարելի է ապահովել խնայողության ավելի ցածր մակարդակով. այսպես, եթե h = 1,25, իսկ s = 0,14, ապա $_{\Delta}Y/Y = 1,25 \times 0,14 = 17\%$:

Այսպիսով, ըստ Ե. Դոմարի տեսության, տնտեսության մեջ գոյություն ունի իրական եկամտի աճի հավասարակշիռ տեմպ, որը ենթադրում է արտադրական կարողությունների լրիվ օգտագործում: Այն ուղիղ համամասնական է խնայողության նորմին և կապիտալի սահմանային արտադրողականությանը՝ $_{\Delta}Y/_{\Delta}K$: Ներդրումները հանդես են գալիս որպես էկզոգեն, տրված մեծություն:

Ռ. Հարրոդի մոդելը

Ի տարբերություն նախորդ մոդելի, այստեղ ներդրումները հանդես են գալիս որպես էնդոգեն փոփոխական, և կիրառվում է ոչ թե բազմարկչի, այլ ակսելերատորի սկզբունքը: Այդ սկզբունքի համաձայն՝ եկամտի ցանկացած աճ հանգեցնում է ներդրումների համամասնական աճի փոփոխությանը.

$I_t = v (Y_t - Y_{t-1})$

որտեղ՝ v - ակսելերատորն է:

Ընդունելով, որ ներդրումները հավասար են խնայողություններին, ակսելերատորի մոդելում ամբողջական պահանջարկը կունենա հետևյալ տեսքը.

 $Y_t = I_t/ s = v (Y_t - Y_{t-1})/ s$

Ինչպես է որոշվում ամբողջական առաջարկը: Ձեռնարկատերերը պլանավորում են իրենց արտադրության ծավալը՝ ելնելով նախորդ ժամանակաշրջանում տնտեսության մեջ ձևավորված իրավիճակից: Եթե նախորդ ժամանակաշրջանում պահանջարկի վերաբերյալ նրանց կանխատեսումները ճիշտ էին, և պահանջարկը հավասարակշռել էր առաջարկը, ապա ձեռնարկատերերը թողարկման ծավալի աճի տեմպերը կթողնեն անփոփոխ: Եթե պահանջարկը տնտեսության մեջ գերազանցել է առաջարկը, նրանք կավելացնեն արտադրության ընդլայնման տեմպերը: Եթե առաջարկն է գերազանցել պահանջարկը, նրանք կկրճատեն աճի տեմպերը: Դա կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով.

 $(Y_t - Y_{t-1}) / Y_{t-1} = a (Y_{t-1} - Y_{t-2})/ Y_{t-2}$

Եթե նախորդ ժամանակահատվածում պահանջարկը հավասար է եղել առաջարկին, ապա a = 1, եթե պահանջարկը գերազանցել է առաջարկը՝

a > 1 և a < 1, եթե պահանջարկը եղել է առաջարկից ցածր: Հետևաբար տնտեսության մեջ ամբողջական առաջարկը կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

 $Y_t = Y_{t-1}$ (a x (Y_{t-1} - Y_{t-2})/ Y_{t-2}+1)

Հավասարակշռված տնտեսական աճը ենթադրում է ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի հավասարություն.

 v (Y_t - Y_{t-1})/ s = Y_{t-1} (a x Y_{t-1} - Y_{t-2}/ Y_{t-2}+1)

Որոշ ձևափոխումներով կարող ենք ստանալ.

 v/ s (Y_t - Y_{t-1})/ Y_{t-1} = a (Y_{t-1} - Y_{t-2}/ Y_{t-2})+1

Ընդունենք՝ նախորդ ժամանակաշրջանում պահանջարկը հավասար է եղել առաջարկին, այսինքն՝ a = 1: Այդ դեպքում ձեռնարկատերերի վարքի վերաբերյալ մեր ենթադրությունների համաձայն՝ ընթացիկ ժամանակաշրջանում նրանք կպահպանեն արտադրության աճի նախկին տեմպերը.

 (Y_t - Y_{t-1})/ Y_{t-1} = (Y_{t-1} - Y_{t-2}/ Y_{t-2}) = $_{\Delta}Y$/ Y_{t-1}

Այդ դեպքում նախորդ արտահայտությունը կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.

 v/ s x $_{\Delta}Y$ / Y_{t-1}= ΔY / Y_{t-1} + 1

Այստեղից՝ թողարկման հավելաճի հավասարակշիռ տեմպը կկազմի.

 $_{\Delta}Y$ / Y_{t-1}= s/ v- s

s/v- s արտահայտությունը Հարրոդը անվանեց «երաշխավորված» աճի տեմպ. պահպանելով այն՝ ձեռնարկատերերը կարող են գոհ մնալ իրենց կայացրած որոշումից, քանի որ պահանջարկը կհամապատասխանի առաջարկին, և նրանց սպասումները կիրականանան: Եթե ձեռնարկատերերի կողմից պլանավորված աճի փաստացի տեմպերը շեղվեն երաշխավորված տեմպից, ապա տնտեսական համակարգը աստիճանաբար դուրս կգա հավասարակշիռ վիճակից:

Հարրոդը սահմանել է նաև «բնական» աճի տեմպ հասկացությունը: Դա այն առավելագույն տեմպն է, որը ապահովում է ակտիվ բնակչության աճ և տեխնիկական առաջադիմություն, ինչպես նաև աշխատանքի և կապիտալի լրիվ օգտագործում:

Եթե երաշխավորված աճի տեմպը, որը բավարարում էր ձեռնարկատերերին, գերազանցում է բնականին, ապա աշխատուժի անբավարարության հետևանքով փաստացի տեմպը ավելի ցածր կլինի երաշխավորվածից: Ձեռնարկատերերը կկրճատեն արտադրության ծավալները, տնտեսությունը անկում կապրի: Եթե երաշխավորված աճի տեմպը փոքր է բնականից, ապա փաստացի տեմպը կգերազանցի երաշխավորվածը, քանի որ աշխատուժի ավելցուկը հնարավորություն կտա ավելացնելու ներդրումները: Տնտեսական համակարգը կսկսի վերելք ապրել:

Տնտեսական համակարգի իդեալական զարգացումը տեղի է ունենում, եթե երաշխավորված, բնական և փաստացի աճի տեմպերը

հավասարվում են: Այդ ժամանակ ապահովվում է նաև լրիվ զբաղվածություն: Սակայն, քանի որ երաշխավորված աճի տեմպի պայմաններից ներդրումների ցանկացած շեղում համակարգը հանում է հավասարակշռությունից, խորանում է առաջարկի ու պահանջարկի միջև ճեղքվածքը, Հարրոդի մոդելում դինամիկ հավասարակշռությունը դառնում է անկայուն:

Հաճախ այս երկու մոդելները միավորվում են մեկ միասնական՝ Հարրոդ-Դոմարի մոդելում: Երկու մոդելների հիմքում էլ այն հետևությունն է, որ արտադրության տվյալ տեխնիկական մակարդակի պայմաններում տնտեսական աճը պայմանավորված է խնայողության սահմանային հակմամբ:

Այս մոդելների սահմանափակությունը արտահայտվում է նրանում, որ մոդելում արտադրության գործոնների՝ աշխատանքի և կապիտալի փոխադարձ փոխարինելիությունը բացակայում է, որը ոչ միշտ է համապատասխանում իրականությանը: Այս թերությունը վերանում է նոր դասականների կողմից առաջադրված մոդելներում, որոնցից ամենատարածվածը Ռ.Սոլոուի տնտեսական աճի մոդելն է:

Սոլոուի մոդելը

Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռոբերտ Սոլոուն մշակել է տնտեսական աճի հետազոտման գործոնային մոտեցման մոդել, որը արտացոլում է խնայողությունների, կապիտալի կուտակման և տնտեսական աճի միջև կապերը: Մոդելի պարզագույն տարբերակում բնակչության մեկ շնչի հաշվով թողարկումը աճող ֆունկցիա է կապիտալ-աշխատանք հարաբերությունից և տեխնոլոգիայից:

Սոլոուի աճի մոդելը հնարավորություն է տալիս վերլուծելու տնտեսությունը ոչ թե կայուն, ստատիկ վիճակում, այլ նրա փոփոխությունները ժամանակի ընթացքում: Դինամիկ վերլուծության միջոցով հնարավոր է պարզել, թե ժամանակի ընթացքում ինչպես են խնայողությունը, բնակչության աճը և տեխնոլոգիական առաջադիմությունը ազդում արտադրության աճի վրա: Մոդելը բացահայտում է, թե ինչու է մի երկրում կենսամակարդակը բարձր, մյուսում՝ ցածր: Մոդելի օգնությամբ կարող ենք դիտարկել, թե ինչպես է տնտեսական քաղաքականությունը ազդում կենսամակարդակի բարելավման վրա:

Ապրանքների առաջարկը և արտադրական ֆունկցիան

 Յուրաքանչյուր պահի համար արտադրության առաջարկը որոշվում է արտադրական ֆունկցիայով.

 Y = F (K,L)

Այն ունի կայուն հատույց մասշտաբից հատկություն.

 zY = F (zK, zL)

Արտադրական ֆունկցիայի այդ հատկությունից բխում է, որ այն կարելի է բազմապատկել 1/ L արտահայտությամբ.

 Y/ L = F (K/ L, 1)

Հավասարումը ցույց է տալիս, որ մեկ աշխատողին բաժին ընկնող արտադրանքի ծավալը ֆունկցիա է մեկ աշխատողին բաժին ընկնող կապիտալից: Մեկ աշխատողին բաժին ընկնող ցուցանիշները նշանակենք փոքրատառերով. y=Y/L - աշխատանքի արտադրողականությունն է, k=K/L – կապիտալազինվածությունն է: Արտադրական ֆունկցիան կստանա y = f (k) տեսքը:

Գրաֆիկորեն ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.

y = f (k)



*<img src="images/nk73.bmp"> *
*   *
* *Նկ. 7.3. ***Արտադրությունը, սպառումը և ներդրումները***
* *
*   *

Որքան բարձր է կապիտալազինվածությունը /k/, այնքան մեծ է արտադրության f(k) ծավալը, և շատ են ներդրումները: Այս հավասարման մեջ գոյություն ունեցող կապիտալի k պաշարը կապվում է նոր կապիտալի i կուտակման հետ: Խնայողության նորմը թողարկված արդյունքը բաժանում է c սպառման և i կուտակման՝ յուրաքանչյուր k-ի համար: Ցանկացած k-ի համար արտադրության ծավալը f(k)-ն է, ներդրումները՝ sf(k)-ն, սպառումը՝ f(k) – sf(k)-ն: Սակայն կուտակված կապիտալը մաշվում է, և յուրաքանչյուր տարի դրա մի մասը դուրս է գրվում: Եթե ամորտիզացիայի նորմը նշանակենք δ, տարեկան դուրս գրվող կապիտալը կլինի՝ δk: Այսպիսով, կապիտալի փոփոխությունը, կախված այդ երկու մեծություններից՝ ներդրումներից և մաշվածքից, կորոշվի.

$_{\Delta}k = i - \delta k$

բանաձևով, որտեղ $_{\Delta}k$ – ն մեկ աշխատողին բաժին ընկնող կապիտալի հավելաճն է: Քանի որ ներդրումները հավասար են խնայողություններին, ապա.

 $_{\Delta}k = sf(k) - \delta k$

Այժմ համատեղենք ներդրումների sf(k) և դուրսգրման δk գրաֆիկները:



Կայուն մակարդակը՝ k-ն, աշխատողների այն կապիտալազինվածությունն է, որի դեպքում ներդրումները հավասար են դուրս գրվող գումարին՝ K* կետում երկու կորերը հատվում են: $k_1 < k^*$ դեպքում ներդրումները գերազանցում են դուրս գրվող գումարը և կապիտալի պաշարներն աճում են: $k_2 > k^*$ դեպքում ներդրումները փոքր են դուրս*



Կապիտալազինվածություն

<img

src="images/nk74.bmp">

 Նկ.7.4. ***Ներդրումները, մաշվածքը և կապիտալազինվածության մակարդակը***

Ինչպես տեսնում ենք, գոյություն ունի կապիտալազինվածության միակ մակարդակ, որտեղ ներդրումները հավասար են ամորտիզացիային: Այդ մակարդակում $\Delta k = 0$: Այն կոչվում է կայուն կապիտալազինվածության վիճակ և նշանակվում է $k*$ - ով: Ենթադրենք՝ կապիտալի պաշարները փոքր են կայուն մակարդակից և գտնվում են k_1 կետում: Այդ դեպքում ներդրումները գերազանցում են դուրս գրվող գումարը: Այսպիսով, կապիտալազինվածությունն ավելացվում է արտադրության աճի հետ միասին, մինչև մոտենա $k*$ կայուն մակարդակին: Նույն ձևով, եթե կապիտալի պաշարները սկզբնական վիճակում գերազանցում են $k*$-ը, կապիտալը դուրս է գրվում ավելի արագ, քան ավելացվում է: Կապիտալազինվածությունը կկրճատվի՝ կրկին մոտենալով կայուն մակարդակին: Այն պահին, երբ մեկ աշխատողի հաշվով կապիտալի պաշարները հասնում են կայուն մակարդակի, ներդրումները հավասարվում են մաշվածքի դուրս գրվող գումարին, և կապիտալազինվածությունը ոչ կաճի, ոչ էլ կնվազի:

Ինչպե՞ս կարելի է հաշվարկել կայուն կապիտալազինվածության մակարդակը: Ենթադրենք՝ արտադրական ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.

 $Y = K^{1/2} L^{1/2}$

 $y = Y/ L = K^{1/2} L^{1/2}/ L = (K/ L)^{1/2} = k^{1/2} = \sqrt{k}$

Այսինքն, մեկ աշխատողին բաժին ընկնող արդյունքը հավասար է մեկ աշխատողին բաժին ընկնող կապիտալի պաշարի մեծության քառակուսի արմատին: Հիշենք, որ.

 $\Delta k = sf(k) - \delta k$

Քանի որ կայուն վիճակում $\Delta k = 0$, ապա հետևում է.

 $0 = sf(k*) - \delta k*$ կամ $k*/ f(k*) = s/\delta$

 $k*/ \sqrt{k*} = s/\delta$

 k∗ = $(s/\delta)^2$

Եթե խնայողության նորմը հավասար է 0,3 իսկ ամորտիզացիան՝ 0,1, ապա կայուն կապիտալազինվածությունը կկազմի $(0,3/0,1)^2 = 9$

      Կապիտալի կուտակումը

Իսկ ինչ տեղի կունենա, եթե խնայողության նորմը փոփոխվի: Ենթադրենք՝ տնտեսությունը սկսում է զարգանալ՝ գտնվելով կայուն վիճակում $k*_1$ կապիտալի պաշարների և s_1 խնայողության նորմի պայմաններում: Այնուհետև խնայողության նորմը մեծանում է s_1-ից s_2՝ առաջ բերելով sf(k) կորի համապատասխան տեղաշարժ դեպի վեր:



Խնայողության s նորմի աճը նշանակում է, որ ներդրումների չափը կապիտալազինվածության ցանկացած մակարդակի դեպքում կդառնա ավելի մեծ: Ուստի տեղի է ունենում խնայողության ֆունկցիայի տեղաշարժ դեպի վեր: Կապիտալի պաշարներն աճում են, քանի դեռ տնտեսությունը չի հասել նոր կայուն վիճակի՝ ավելի բարձր կապիտալազինվածությամբ և արտադրողականությամբ:

<img

src="images/nk75.bmp">

    &nb

sp;   &nb

sp;

 Նկ.7.5. ***Խնայողության նորմի և կապիտալազինվածության կապը***

Խնայողությունների սկզբնական s_1 մակարդակի և կապիտալի $k*_1$ պաշարի պայմաններում ներդրումները իրոք փոխհատուցում են կապիտալի դուրսգրումը: Խնայողության նորմի բարձրացումից անմիջապես հետո ներդրումները մեծանում են, բայց կապիտալի պաշարը, հետևաբար շարքից դուրս գրվող չափը, առայժմ մնում են անփոփոխ, արդյունքում՝ ներդրումները գերազանցում են դուրս գրվող գումարը: Կապիտալն աստիճանաբար աճում է մինչև այն պահը, քանի դեռ տնտեսությունը չի հասել նոր կայուն վիճակի՝ ավելի մեծ $k*_2$ կապիտալազինվածությամբ և աշխատուժի ավելի բարձր արտադրողականությամբ, քան նախորդ կայուն վիճակում:

Սոլոուի մոդելը ցույց է տալիս, որ եթե խնայողության նորմը ավելի բարձր է, ապա տնտեսությունը, բոլոր մնացած հավասար պայմաններում,

կունենա կապիտալի մեծ պաշար և արտադրության ավելի մեծ ծավալ: Եթե խնայողության նորմը ավելի ցածր է, ապա տնտեսությունը կունենա կապիտալի փոքր պաշար և արտադրության փոքր ծավալ: Պետք է նկատի ունենալ, որ խնայողության նորմի մեծացումը տնտեսական աճ ապահովում է մինչև այն պահը, քանի դեռ տնտեսությունը չի հասել նոր կայուն վիճակի: Եթե տնտեսությունում պահպանվում է խնայողության բարձր նորմը, ապա և՛ կապիտալազինվածությունը, և՛ արտադրողականությունը կլինեն բարձր, սակայն պահպանել տնտեսական աճի բարձր տեմպեր չի հաջողվի:

*   *

Բնակչության աճը և դրա ազդեցությունը կապիտալի կայուն պաշարի վրա* *

Մինչև այժմ մենք ընդունել ենք, որ բնակչությունը չի աճում: Իրականում բնակչության թիվը կայուն չէ: Այդ հանգամանքը մոդելի մեջ հաշվի առնելու համար ենթադրենք՝ բնակչությունը և աշխատուժը աճում են n կայուն տեմպով: Եթե, օրինակ, բնակչության տարեկան աճը 1% է, ապա n=0,01:

Ինչպես արդեն նշել ենք, ներդրումներն ավելացնում են կապիտալի պաշարը, իսկ կապիտալի մաշվածքը պակասեցնում է այն: Սակայն աշխատողների թվի աճը նույնպես հանգեցնում է նրանցից յուրաքանչյուրի կապիտալազինվածության կրճատման: Հետևաբար.

$\Delta k = i - (\delta + n)\, k$

Հավասարումը ցույց է տալիս, որ բնակչության աճը կրճատում է կապիտալազինվածությունը նույն ձևով, ինչպես ամորտիզացիան: $(\delta + n)\, k$ – ն կարելի է դիտել որպես ներդրումների կրիտիկական չափ: Դա այն ներդրումներն են, որոնք անհրաժեշտ են մեկ աշխատողի հաշվով կապիտալի պաշարը պահպանելու համար: Եթե i-ը փոխարինենք sf(k)-ով, կստանանք՝ $\Delta k = sf(k) - (\delta + n)\, k$:

Այսպիսով, $(\delta + n)\, k$-ն ներդրումների այն ծավալն է, որն անհրաժեշտ է կապիտալազինվածությունը կայուն մակարդակի վրա պահելու համար: Որպեսզի տնտեսությունը մնա կայուն վիճակում, ներդրումները պետք է փոխհատուցեն կապիտալի դուրսգրման և բնակչության աճի հետևանքները: Ըստ ներկայացված գրաֆիկի՝ բնակչության աճի արդյունքում ուղիղը տեղափոխվում է վեր: Նոր կայուն մակարդակին բնորոշ է ավելի փոքր կապիտալի պաշար:



Ինչպես կապիտալի դուրսգրումը, այնպես էլ բնակչության աճը մեկ աշխատողի հաշվով կապիտալի պաշարի կրճատման պատճառներից են: Տնտեսության կայուն վիճակ ապահովելու համար sf(k) ներդրումները պետք է փոխհատուցեն կապիտալի դուրսգրման և բնակչության աճի հետևանքները՝ (δ+n)k: Բնակչության աճի տեմպի մեծացումը բնակչության աճը և մաշվածքը ներկայացնող գիծը շարժում է վերև ու փոքրացնում կապիտալազինվածության մակարդակը:

<img src="images/nk76.bmp">

 Նկ. 7.6. Բնակչության աճը՝ ըստ Սոլոուի մոդելի

Հետևաբար, Սոլոուի մոդելը նախատեսում է, որ բնակչության աճի ավելի բարձր տեմպեր ունեցող երկրները պետք է ունենան փոքր կապիտալազինվածություն և այստեղից՝ ավելի ցածր եկամուտներ: Ահա թե ինչու որոշ երկրներ հարուստ են, մյուսները՝ աղքատ:

Բացի այդ, մոդելը տարեկան աճի պատճառները բացատրելու հնարավորություն է տալիս: Քանի որ տնտեսության կայուն վիճակում կապիտալը և արտադրության ծավալն աճում են նույն տեմպով, ինչ որ՝ բնակչությունը, ապա արտադրության ծավալը մեկ աշխատողի հաշվով մնում է անփոփոխ, սակայն բնակչության աճը ապահովում է համախառն թողարկման անընդհատ աճ:

*   *

Տեխնոլոգիական առաջադիմության ազդեցությունը* *

Տեխնոլոգիական առաջադիմության ազդեցությունը կապիտալի կայուն պաշարի վրա ցույց տալու համար բավական է արտադրական ֆունկցիայում մտցնել նոր անդամ.

 Y = F (K,L x E)

որտեղ՝ E-ն մեկ աշխատողի աշխատանքի արդյունավետության գործակիցն է: L x E բաղադրիչը ներկայացնում է աշխատուժը՝ չափված անփոփոխ արդյունավետությամբ աշխատանքի միավորներով: Այսպես, եթե մեկ աշխատողը օրական թողարկում էր 10 հազար դրամի արտադրանք, այժմ արտադրողականության բարձրացման շնորհիվ թողարկում է 12 հազար դրամի, ուրեմն արտադրողականությունը աճել է 20%-ով: Եթե նախկինում աշխատում էր 50 մարդ, ապա նախկին արտադրողականության դեպքում կպահանջվի 50 x 1,2 = 60 աշխատող: Այլ խոսքով, մեր օրինակում E =1,2, իսկ դրա աճի տեմպը՝ g = 0,2:

Քանի որ աշխատուժն աճում է n, իսկ յուրաքանչյուրի արտադրողականությունը՝ g տեմպով, ապա աշխատանքի արդյունավետ միավորների L x E քանակությունը աճում է n + g տեմպով:

Տեխնոլոգիական առաջադիմությունը աշխատանքի արդյունավետության հավելաճի միջոցով ներկայացնելը դարձնում է այն բնակչության աճին համանման: Այստեղ մենք վերլուծում ենք տնտեսությունը նախնական արդյունավետությամբ աշխատանքի միավորին ընկնող քանակական միավորներով: Այդ դեպքում k=K/(LxE)-ն կապիտալն է աշխատանքի սկզբնական արդյունավետությամբ միավորի հաշվով, իսկ y=Y/(LxE)-ն աշխատանքի սկզբնական արդյունավետությամբ միավորի հաշվով արտադրության

ծավալն է: Ընդունելով այս պայմանները՝ կարող ենք գրել y = f(k): Տնտեսության վերլուծությունը կատարվում է նույն ձևով, ինչ որ՝ բնակչության աճի դեպքում: Նախկին հավասարումն այժմ կունենա հետևյալ տեսքը.

 $\Delta k = sf(k) - (\delta + n + g)\, k$

Այս բանաձևում g տարրը՝ տեխնոլոգիական առաջադիմության տեմպը, առկա է, որովհետև k-ն աշխատանքի կայուն արդյունավետությամբ միավորի հաշվով կապիտալի քանակությունն է: Եթե g տարրը մեծ է, ապա աշխատանքի կայուն արդյունավետությամբ միավորների ընդհանուր քանակությունը աճում է արագ, իսկ կապիտալի հավելաճը աշխատանքի նման միավորի համար համեմատաբար փոքր է և կարող է նույնիսկ դառնալ բացասական:



Աշխատանքի կայուն արդյունավետությամբ միավորի կապիտալազինվածությունը

Երբ k-ն որոշված է որպես աշխատանքի կայուն արդյունավետությամբ միավորի կապիտալազինվածություն, աշխատանքի յուրաքանչյուր միավորի հատույցի աճը տեխնոլոգիական առաջադիմության հետևանքով առաջ է բերում k-ի փոքրացում: Տնտեսության կայուն վիճակում ներդրումները՝ sf(k), փոխհատուցում են k-ի փոքրացումը նրա դուրս գրվելու, բնակչության աճի և տեխնոլոգիական առաջադիմության հետևանքով:

հաշվով արդյունքը աճում է g տեմպով, իսկ արտադրության ծավալը՝ n + g տեմպով: Սոլոուի մոդելը ցույց է տալիս, որ միայն տեխնոլոգիական առաջադիմությամբ կարող է բացատրվել անընդմեջ աճող կենսամակարդակը:

*   *

Է. Ֆելպսի մոդելը* *

Սոլոուի մոդելի կատարելագործումը հնարավորություն տվեց գտնելու տնտեսագիտության կարևորագույն հարցերից մեկի լուծման բանալին՝ որն է խնայողության և սպառման օպտիմալ հարաբերակցությունը, որքան տնտեսական արդյունք պետք է սպառվի այսօր և որքան պետք է խնայվի ապագայի համար: Դրանց մեջ գոյություն ունի հարաբերական հակասություն՝ մեկի ավելացումը հանգեցնում է մյուսի կրճատմանը: Չափից ավելի բարձր սպառումը փոքրացնում է ապագա արտադրության հնարավորությունները, իսկ չափից ավելի խնայողությունները կրճատում են ընթացիկ սպառումը:

Այժմ դիտարկենք, թե կապիտալի կուտակման որ չափերն են համարվում օպտիմալ: Է. Ֆելպսը ապացուցեց, որ դա կապիտալի կուտակման այն մակարդակն է, որը ապահովում է կայուն վիճակ՝ սպառման առավելագույն մակարդակի դեպքում: Այն անվանվեց կապիտալի կուտակման՝ Ոսկյա կանոնին համապատասխան մակարդակ և նշանակվում է k**:

*   ***Կայուն վիճակների համեմատությունը***:* * * Որպեսզի պարզենք, թե տնտեսությունը համապատասխանում է Ոսկյա կանոնին, թե՝ ոչ, նախ պետք է որոշենք մեկ աշխատողի սպառման չափը, այնուհետև բացահայտենք, թե կայուն վիճակներից որն է բավարարում առավելագույն սպառում: Սկսենք ազգային հաշիվների նույնությունից.

 y = c + i ձևափոխենք c = y – i տեսքի:

Կայուն կապիտալազինվածության պայմաններում y-ը f(k)–ն է, իսկ քանի որ կապիտալազինվածությունը չի փոխվում, ներդրումները հավասար են դուրսգրմանը՝ δk-ի: Հետևաբար մեկ աշխատողի սպառումը կլինի.

 c* = f(k*) - δk*

Այս հավասարումը ցույց է տալիս, որ սպառման կայուն մակարդակը թողարկման և կապիտալի դուրսգրման տարբերությունն է կայուն վիճակում: Այն ցույց է տալիս, որ կապիտալազինվածության մեծացումը նպաստում է արտադրանքի աճին, սակայն միաժամանակ ավելի շատ արդյունք է անհրաժեշտ դուրս գրված կապիտալը փոխհատուցելու համար:



*Գոյություն ունի միայն մեկ խնայողության նորմ, որը բերում է Ոսկյա կանոնին համապատասխան կապիտալազինվածության մակարդակի՝ k**: Խնայողության նորմի փոփոխությունը կտեղաշարժի sf(k) կորը, որը կհանգեցնի նոր կայուն վիճակի, սակայն ավելի ցածր սպառման մակարդակով:*

<img
src="images/nk78.bmp">

    &nb
sp;

Նկ. 7.8. Խնայողության նորմը և Ոսկյա կանոնը

   &n
bsp;

Գրաֆիկում սպառումը կայուն վիճակում արտադրության ծավալի և դուրսգրման տարբերությունն է: Գրաֆիկից երևում է, որ գոյություն ունի կապիտալազինվածության k** միակ մակարդակ՝ Ոսկյա կանոնի մակարդակ, երբ սպառումը հասնում է առավելագույնի: Շոշափողը զուգահեռ է δk գծին: Համեմատելով տարբեր կայուն վիճակները՝ անհրաժեշտ է հաշվի առնել կապիտալազինվածության ազդեցությունը ինչպես արտադրության ծավալի, այնպես էլ կապիտալի դուրսգրման վրա: Մի կողմից, եթե կապիտալազինվածությունը փոքր է Ոսկյա կանոնին համապատասխան մակարդակից, ապա կապիտալի պաշարների աճը հանգեցնում է դուրս գրվող կապիտալի ավելացմանը գերազանցող արտադրության աճի: Այդ դեպքում սպառումն ավելանում է: Արտադրական ֆունկցիայի կորն ավելի ուղղաձիգ է, քան δk գիծը, այնպես որ նրանց միջև տարածությունը աճում է k*-ի ավելացմանը զուգընթաց: Մյուս կողմից, եթե կապիտալի ծավալը գերազանցում է Ոսկյա կանոնին համապատասխան մակարդակը, կապիտալազինվածության հետագա աճը նվազեցնում է սպառումը, քանի որ արտադրանքի թողարկման աճը փոքր է ստացվում կապիտալի դուրս գրվող կապիտալի մեծությունից: Այդ դեպքում արտադրական ֆունկցիայի գրաֆիկը ավելի զառիկող է, քան δk գիծը, այնպես որ երկու կորերի միջև տարբերությունը կրճատվում է k*-ի աճի դեպքում: Ոսկյա կանոնի մակարդակին համապատասխանող կապիտալազինվածության դեպքում արտադրական ֆունկցիան և δk գիծն ունեն միատեսակ թեքվածություն, և սպառումը հասնում է առավելագույն մակարդակի:

Այդ նույն եզրակացությանն այլ ճանապարհով հանգելու համար ենթադրենք՝ սկզբնական կապիտալազինվածությունը հավասար է k*-ի, և դիտարկված է կապիտալի ավելացման հնարավորություն մինչև k^{*+1}: Արտադրանքի լրացուցիչ թողարկման ծավալը կկազմի $f(k^{*+1}) - f(k*)$, որը կապիտալի սահմանային հատույցն է՝ MPK: Դուրս գրվող գումարի հավելաճը կապիտալի մեկ միավորով ավելացնելու հետևանքով, շարքից դուրսգրման δ նորմն է: Զուտ արդյունքը կապիտալի այդ մեկ միավոր լրացուցիչ ավելացումից կկազմի MPK - δ, այսինքն՝ կապիտալի սահմանային արդյունքից հանած դուրսգրման նորմը: Եթե կայուն վիճակում կապիտալի պաշարն ավելի փոքր է, քան Ոսկյա կանոնին համապատասխան մակարդակը, ապա կապիտալի աճը ավելացնում է սպառումը, քանի որ կապիտալի սահմանային արդյունքը բարձր է, քան շարքից դուրս գալու նորմը: Եթե կապիտալի կայուն պաշարը գերազանցում է Ոսկյա կանոնին համապատասխան մա-

կարդակը, ապա կապիտալի աճը կրճատում է սպառումը, քանի որ կապիտալի սահմանային արդյունքը փոքր է, քան շարքից դուրս գալու նորմը: Ուստի, երբ MPK = δ, հենց Ոսկյա կանոնն է:

Նկատենք, որ բնակչության աճն ազդում է Ոսկյա կանոնին համապատասխան կապիտալի կուտակման մակարդակի վրա: Քանի որ արտադրության կայուն ծավալը f(k∗)-ն է, իսկ կայուն վիճակի ներդրումները (δ + n)` k*, սպառման կայուն մակարդակը կարելի է որոշել.

 c* = f(k∗) - (δ + n) k*

Սպառման մակարդակը ավելացնող k*-ի մակարդակն այնպիսին է, որ MPK = δ + n կամ MPK- δ = n:

Տեխնոլոգիական առաջադիմության գնահատումը ևս մոդելում փոփոխում է Ոսկյա կանոնի դրսևորման պայմանները: Ոսկյա կանոնը որոշում է կապիտալի կուտակման այն կայուն մակարդակը, որի դեպքում առավելագույնի է հասցվում սպառումը կայուն արդյունավետությամբ աշխատանքի միավորի համար: Սպառման կայուն մակարդակը անփոփոխ արդյունավետությամբ աշխատանքի միավորի համար կկազմի.

 c* = f(k∗) - (δ + n + g) k*

Սպառման կայուն մակարդակը առավելագույն է դառնում, եթե.

** ** MPK = δ + n + g կամ MPK- δ = n + g** **

Այսպիսով, Ոսկյա կանոնին համապատասխան կապիտալի պաշարի դեպքում կապիտալի զուտ սահմանային արդյունքը (MPK-δ) հավասարվում է արտադրանքի ծավալի (n + g) հավելաճին:

Հարկ է ընդգծել, որ տնտեսությունը ինքնաբերաբար չի ձգտում Ոսկյա կանոնի կայուն վիճակին: Որոշակի կայուն կապիտալազինվածության Ոսկյա կանոնով ընտրությունը նշանակում է նաև որոշակի խնայողության նորմի ընտրություն: Խնայողության նորմը ընտրվում է տարբեր խնայողության նորմերի դեպքում կայուն վիճակները համեմատելու միջոցով: Պայմաններ. y = $\sqrt{k}$; δ = 0,1

s	k*	y*	δ k*	c*	MPK	MPK - δ
0.0	0.0	0.0	0.0	0.0	∞	∞
0.1	1.0	1.0	0.1	0.9	0.500	0.400
0.3	9.0	3.0	0.9	2.1	0.167	0.067
0.5	25.0	5.0	2.5	2.5	0.100	0.000
0.7	49.0	7.0	4.9	2.1	0.071	-0.029
1.0	100.0	10.0	10.0	0.0	0.050	-0.050

Աղյուսակից տեսնում ենք, որ որքան բարձր է խնայողության նորմը, այնքան մեծ է կապիտալը, ինչն իր հերթին հանգեցնում է թողարկման աճին և դուրսգրվող կապիտալի ավելացմանը: Սպառման կայուն մակարդակը

/արտադրանքի թողարկման և դուրս գրվող գումարի տարբերությունը/ սկզբից աճում է խնայողության աճին զուգընթաց, իսկ այնուհետև՝ կրճատվում է: Ամենամեծ մակարդակը ձեռք է բերվում խնայողության 0,5 նորմի դեպքում: Խնայողության այդ նորմը ապահովում է Ոսկյա կանոնին համապատասխանող կայուն վիճակ:

 <h3>**7.4. Տնտեսական աճի պետական կարգավորումը**</h3>

*   *

Խնայողությունների խթանումը

Սոլոուի և Ֆելպսի աճի մոդելները ցույց են տալիս, թե ինչպես է խնայողության նորմը պայմանավորում կապիտալազինվածության և արտադրողականության կայուն մակարդակը: Ըստ Ոսկյա կանոնի՝ կայուն վիճակին համապատասխանում է խնայողության նորմի որոշակի մեծություն, որը մեկ աշխատողի հաշվով ապահովում է առավել սպառում և, այդպիսով, ավելացնում է տնտեսական բարեկեցությունը: Այդ արդյունքները օգնում են լուծելու տնտեսական քաղաքականության առաջնային հարցը. խնայողության նորմը տնտեսությունում չափազանց բարձր է, չափազանց ցածր, թե՝ օպտիմալ:

Եթե կապիտալի սահմանային զուտ արտադրողականությունը (MPK- δ) բարձր է, քան արտադրողականության աճի տեմպը, ապա տնտեսությունը գործում է քիչ կապիտալով, քան պահանջվում է ըստ Ոսկյա կանոնի: Այդ դեպքում խնայողության նորմի աճը կհանգեցնի կայուն վիճակի՝ սպառման ավելի մեծ ծավալի պայմաններում: Մյուս կողմից, եթե կապիտալի զուտ սահմանային արտադրողականությունը ցածր է արտադրության աճի տեմպից, ապա տնտեսությունը գործում է կապիտալի մեծ պաշարների պայմաններում, և խնայողության նորմը պետք է կրճատել:

Հաճախ այն երկրներին, որոնք ցանկանում են տնտեսական աճ ապահովել, խորհուրդ է տրվում բարձրացնել խնայողության նորմը: Արդյոք բարձր խնայողության նորմը նպաստո՞ւմ է ավելի բարձր տնտեսական աճին: Եվ այո՛, և ո՛չ: Որքան էլ զարմանալի է, Սոլոուի մոդելում խնայողությունների մակարդակը կայուն տնտեսական աճի վրա ոչ մի ազդեցություն չի թողնում: Անկախ խնայողության s մակարդակից, երկարատև ժամանակաշրջանում տնտեսությունը զարգանում է n տեմպով: Սակայն խնայողությունների մակարդակը կարող է ազդել տնտեսական աճի վրա կարճ ժամկետում, ինչպես նաև մեկ շնչին բաժին ընկնող եկամտի վրա՝ երկար ժամկետում:

Խնայողության նորմի փոփոխությունը պետական քաղաքականությամբ կարելի է իրականացնել կամ ուղղակի ճանապարհով, անմիջականորեն ավելացնելով պետական խնայողությունը, կամ անուղղակի ճանապարհով՝ մասնավոր խնայողությունների խթանմամբ:

Տնտեսական աճի պետական կարգավորման վերաբերյալ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Քեյնսյան դպրոցի ներկայացուցիչները տնտե-

սական աճը դիտարկում են պահանջարկի գործոնների տեսանկյունից: Ցածր աճի տեմպերը նրանք բացատրում են համախառն ծախսերի ցածր մակարդակով, որը չի ապահովում ՀՆԱ իրական աճ: Այդ պատճառով նրանք առաջարկում են ցածր տոկոսադրույքներ /«էժան փողերի» քաղաքականություն/, որը խթանում է ներդրումները: Անհրաժեշտության դեպքում հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է օգտագործվել պետական ծախսերը և սպառումը կրճատելու նպատակով, այն հաշվով, որ ներդրումների բարձր մակարդակը չհանգեցնի ինֆլյացիայի:

Ի հակադրություն այս տեսության՝ «առաջարկի էկոնոմիկայի» կողմնակիցները շեշտը դնում են տնտեսական համակարգի արտադրական ներուժը մեծացնող գործոնների վրա: Այս գործոնների ազդեցությամբ համախառն առաջարկի կորը տեղափոխվում է աջ: Մասնավորապես նրանք կոչ են անում նվազեցնել հարկերը՝ խնայողություններն ու ներդրումները խթանելու, ձեռնարկատիրական ռիսկը խրախուսելու համար: Այս տնտեսագետներն առաջարկում են իջեցնել կամ վերացնել շահութահարկը, մասնավորապես՝ հարկային արտոնություններ սահմանել ներդրումների համար:

Պետական խնայողությունները պետության եկամուտների ու ծախսերի տարբերությունն են: Եթե ծախսերը գերազանցում են եկամուտները, առաջանում է բյուջեի պակասուրդ: Պակասուրդը կամ պետական ծախսերի ավելացումը դուրս է մղում ներդրումները: Կապիտալի պաշարի կրճատումը պետական պարտքի մի մասն է, որն ընկնում է հաջորդ սերնդի ուսերին: Հետագայում մենք կհամոզվենք, որ պետական ծախսերի ավելացումը կարճ ժամկետում խթանում է եկամտի աճը և կայունացնող ազդեցություն կարող է ունենալ տնտեսական շոկերի ժամանակ: Սակայն երկար ժամկետում տնտեսական աճի վրա այն թողնում է բացասական ազդեցություն: Հետևաբար, պակասուրդի կրճատումը նպաստում է ազգային խնայողությունների մակարդակի բարձրացմանը:

Քեյնսականները շեշտը դնում են կարճաժամկետ նպատակների վրա՝ մասնավորապես համախառն ծախսերի վրա ներգործելու միջոցով ՀՆԱ բարձր մակարդակը ապահովելու համար: Առաջարկի էկոնոմիկայի կողմնակիցները առավելություն են տալիս երկարաժամկետ նպատակներին՝ հիմք ընդունելով այն գործոնները, որոնք ապահովում են ՀՆԱ աճը լրիվ զբաղվածության և արտադրական կարողությունների լրիվ օգտագործման պայմաններում:

*   *

Արդյունավետության աճի գնահատումը և խթանումը* *

Նախորդ ամբողջ վերլուծությունը ցույց տվեց, որ արտադրության աճը պայմանավորված է ինչպես արտադրության գործոններով, այնպես էլ դրանց արդյունավետության բարձրացմամբ, որը տեխնոլոգիական առաջադիմության արդյունք է: Ինչպես հաշվարկել դրանցից յուրաքանչյուրի բաժինը տնտեսական աճի մեջ:

Սկզբում ենթադրենք՝ տեխնոլոգիական փոփոխությունները բացակայում են՝ Y = F (K,L): Արտադրության ծավալը փոխվում է միայն օգտագործվող աշխատանքի կամ կապիտալի քանակության փոփոխության

հետևանքով: Եթե կապիտալի քանակությունը աճում է ΔK միավորով, որքանով կաճի արտադրանքի թողարկումը: Հիշենք կապիտալի սահմանային արդյունքի բանաձևը.

 MPK = F (K+1, L) – F(K,L)

Կապիտալի սահմանային արդյունքը ցույց է տալիս, թե որքան է ավելանում արտադրանքը, եթե կապիտալը ավելանում է մեկ միավորով: Ուստի, երբ կապիտալը աճում է ΔK միավորով, արտադրության ծավալը ավելանում է MPK x $_{\Delta}$K չափով: Օրինակ, կապիտալի սահմանային արդյունքը հավասար է 0,2, այսինքն, կապիտալի լրացուցիչ միավորը արտադրության ծավալը մեծացնում է 0,2 միավորով: Եթե կապիտալը ավելանա 10 միավորով, ապա արտադրանքի լրացուցիչ քանակությունը կկազմի.

 $_{\Delta}$Y = MPK x $_{\Delta}$K = 0,2 x 10 = 2

Ավելացնելով կապիտալը 10 միավորով, ստանում ենք տարեկան 2 միավոր լրացուցիչ արդյունք:

Նույն ձևով հաշվարկում ենք աշխատանքի քանակի փոփոխությունների ազդեցությունը: Աշխատանքի սահմանային արդյունքը՝ MPL-ը ցույց է տալիս, թե որքանով է փոփոխվում արդյունքը, եթե աշխատանքը ավելացվում է մեկ միավորով.

 MPL = F (K, L+1) – F(K,L)

Ուստի, երբ աշխատանքի քանակությունը աճում է ΔL միավորով, արտադրանքի թողարկումը աճում է MPL x ΔL չափով: Ենթադրենք՝ աշխատանքի սահմանային արդյունքը հավասար է երկուսի, այսինքն՝ աշխատանքի լրացուցիչ միավորը արտադրության ծավալը մեծացնում է երկու միավորով: Եթե աշխատանքի քանակը ավելացնենք 10 միավորով, արտադրանքի լրացուցիչ ծավալը կլինի.

 $_{\Delta}$Y = MPL x $_{\Delta}$L = 2 x 10 = 20

Ավելացնելով աշխատանքի ծախսը 10 միավորով՝ ստանում ենք 20 միավոր տարեկան լրացուցիչ արդյունք: Այժմ ենթադրենք՝ երկու գործոնները փոփոխվում են միաժամանակ: Այդ դեպքում.

 $_{\Delta}$Y = (MPK x $_{\Delta}$K) + (MPL x $_{\Delta}$L)

 $_{\Delta}$Y = (MPK x $_{\Delta}$K) K/K+ (MPL x $_{\Delta}$L) L/L

 $_{\Delta}$Y /Y= (MPK x K)/Y x $_{\Delta}$K/K+ (MPL x L)/ Y x $_{\Delta}$L/L

Հիշենք, որ (MPK x K)-ն կապիտալի ընդհանուր հատույցն է, հետևաբար (MPK x K)/Y-ը կապիտալի բաժինն է արտադրված արդյունքում: Նմանապես, (MPL x L)-ը աշխատանքի համար ընդհանուր վարձատրությունն է, իսկ (MPL x L)/ Y-ը աշխատանքի բաժինն է արտադրված արդյունքում: Ընդունելով, որ արտադրական ֆունկցիան ունի կայուն հատույց մասշտաբից հատկությունը, էյլերի թեորեմը հաստատում է, որ այդ երկու բաժինների գումարը հավասար է մեկ միավորի: Այդ դեպքում կարելի է գրել.

 $_{\Delta}$Y /Y = a $_{\Delta}$K/K + (1-a) $_{\Delta}$L/L

որտեղ՝ a-ն կապիտալի բաժինն է, (1-a)՝ աշխատանքի բաժինը եկամտում: Եթե, օրինակ, եկամտի մեջ կապիտալի բաժինը կազմում է 30%, այսինքն՝ a=0.3, կապիտալի քանակի 10%-ով աճը կհանգեցնի արտադրության 3% աճի: Այդ դեպքում աշխատանքի ծախսերի 10%-ով աճը կհանգեցնի արտադրվող արտադրանքի 7%-ով աճի:

Տեխնոլոգիական առաջադիմության հետևանքով ժամանակի ընթացքում արտադրական ֆունկցիան փոխվում է: Այն արտահայտվում է հետևյալ տեսքով.

 Y = A F (K, L),

որտեղ՝ A-ն տեխնոլոգիայի ընթացիկ մակարդակի չափն է, որն անվանում ենք գործոնների ամբողջական արտադրողականություն: Փոփոխվող տեխնոլոգիան ավելացնում է տնտեսական աճի գործոնների ներդրման բաժինների կապի հավասարման մեջ ևս մեկ բաղադրիչ.

 $_{\Delta}Y /Y = a\ _{\Delta}K/K + (1-a)\ _{\Delta}L/L + {}_{\Delta}A/ A$
 $_{\Delta}A/ A = {}_{\Delta}Y /Y - a\ _{\Delta}K/K - (1-a)\ _{\Delta}L/L$,

որտեղ՝ ΔA/A՝ թողարկման հավելաճի տեմպի այն մասն է, որը չի բացատրվում գործոնների ծախսերի փոփոխությամբ, այսինքն՝ գործոնների ամբողջական արտադրողականության հավելաճի ներդրումը հաշվարկված է մնացորդային եղանակով: Սա անվանում են Սոլոուի մնացորդ:

Տնտեսագետները Սոլոուի մնացորդը հաճախ մեկնաբանում են որպես տեխնիկական առաջադիմության հաշվին ապահովվող տնտեսական աճի բաժինը: Իրականում Սոլոուի մնացորդը հաշվարկվում է որպես տնտեսական աճի այն մասը, որը պայմանավորված է անմիջականորեն չափման չենթարկվող գործոններով: Այսինքն, այդ մնացորդը ավելի ճիշտ կլինի գնահատել որպես տնտեսական աճի այն մասը, որը ձեռք է բերվել գործոնների գումարային արդյունավետության աճի շնորհիվ:

Սոլոուն առաջին տնտեսագետն էր, որ արտադրական ֆունկցիան օգտագործեց տնտեսական աճի աղբյուրները քանակապես չափելու համար: Ելակետային հանդիսացան 40 տարվա կտրվածքով 1 մարդ-ժամին բաժին ընկնող ՀՆԱ-ն, 1 մարդ-ժամին բաժին ընկնող կապիտալը և կապիտալի բաժինը եկամտի մեջ: Այս տվյալների հիման վրա նա հաշվարկեց առաջին երկու փոփոխականների աճի տեմպերը և ստացավ տեխնիկական առաջադիմության արագությունը՝ որպես մնացորդ:

Հաշվարկների արդյունքները չափազանց հետաքրքիր էին: Մեկ մարդ-ժամի հաշվով թողարկումը ԱՄՆ-ում 1909-1949թթ. կրկնապատկվել էր: Ընդ որում, առավել ուշագրավ էին այդ աճի աղբյուրների մասին տվյալները: Աճի միայն 12 տոկոսն էր պայմանավորված կապիտալազինվածության աճով: Մնացած 88 տոկոսը բաժին էր ընկնում մնացորդին, այսինքն՝ տեխնիկական առաջադիմությանը կամ, ավելի ճիշտ՝ արդյունավետության աճին:

Զարգացող երկրների համար այս մեթոդով կատարված հաշվարկները հանգեցրին արմատապես այլ արդյունքների, քան ԱՄՆ-ի համար ստացած ցուցանիշներն էին: Ըստ յոթ խոշոր լատինաամերիկյան

երկրների տվյալների՝ 1940-1974թթ. համար կատարված հաշվարկները ցույց տվեցին, որ կապիտալի կուտակումը ապահովում է տնտեսական աճի զգալիորեն ավելի մեծ մասը, քան տեխնիկական առաջադիմությունը /այսինքն՝ Սոլոուի մնացորդը/:

Այս մեթոդի կիրառմամբ ամերիկյան տնտեսագետ էդվարդ Դենիսոնը ցույց տվեց, որ 1929-1982թթ. ընթացքում ԱՄՆ-ում ազգային եկամտի միջին տարեկան աճի տեմպը կազմել է 3,2%, իսկ մեկ շնչի հաշվով եկամտի աճը՝ 1,6%: Ինչպես և Սոլոուն, Դենիսոնը ապացուցեց, որ մեկ աշխատողին բաժին ընկնող կապիտալի քանակի ավելացումը շատ «համեստ» դեր է կատարում տնտեսական աճի գործընթացում: Այս գործոնը որոշում է մեկ շնչի հաշվով թողարկման միայն 15%-ը:

Ինչպես տեսնում ենք, Սոլոուի մոդելը ցույց է տալիս, որ բնակչության մեկ շնչի հաշվով եկամտի մշտական աճը պայմանավորված է տեխնոլոգիական առաջադիմությամբ: Պետական քաղաքականության շատ միջոցառումներ ուղղված են հենց տեխնոլոգիական առաջադիմության խթանմանը: Օրինակ, պատենտավորման համակարգը ժամանակավոր մենաշնորհ է ապահովում նոր արտադրանքը ստեղծողին: Հարկերի մասին օրենքը արտոնություններ է նախատեսում գիտահետազոտական կազմակերպությունների համար: Բյուջեի կամ հատուկ ֆոնդերի հաշվին ֆինանսավորվում են տեսական հետազոտությունները:

Ռոբերտ Լուկասի տնտեսական աճի նոր տեսության մեջ արտադրողականության աճը սերտորեն կապվում է մարդկային, այլ ոչ թե անշարժ կապիտալի մեջ ներդրումների հետ: Ըստ այդ հետազոտությունների՝ կոնկրետ մարդու վրա կատարված ներդրումները բարձրացնում են ոչ միայն տվյալ անձի արտադրողականությունը, այլև նպաստում են մյուս աշխատողների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Ըստ Լուկասի հաշվարկների՝ մարդկային կապիտալի արդյունավետության նկատմամբ թողարկման առաձգականությունը կազմում է 0,4: Այսինքն՝ արդյունավետության 10% աճն ապահովում է 4% արտադրանքի աճ: Եզրակացությունն այն է, որ կրթությունը և մասնագիտական պատրաստվածությունը, որոնք ավելացնում են մարդկային կապիտալը, պետք է ֆինանսավորվեն պետության կողմից, և հնարավոր է ավելի մեծ չափով, քան կատարվում է այժմ:

Արդյունավետության աճի վրա էական ազդեցություն են թողնում նաև ԳՀ աշխատանքները: ԳՀ աշխատանքների ներգործությունը թողարկման վրա գնահատելու համար վերլուծաբանները այն ընդունում են որպես կապիտալի հատուկ տեսակ և մտցնում են արտադրական ֆունկցիայի մեջ՝ որպես հատուկ փոփոխական: Այդ մեթոդով կատարված հաշվարկները ցույց են տվել, որ ԳՀ աշխատանքներ-կապիտալի և եկամտի միջև առաձգականությունը տատանվում է 0,06-0,1 միջակայքում, այսինքն՝ ԳՀ աշխատանքներ-կապիտալի 10% աճը ապահովում է 0,6 – 1,0% եկամտի ավելացում:

*   *

Ինդուստրիալ քաղաքականություն* *

Որպես կապիտալի կուտակման արագացման այլընտրանքային քաղաքականություն, կառավարությունը կարող է իրականացնել ուղղակի ներդրումներ: Որոշ տնտեսագետներ քարոզում են ինդուստրիալ քաղաքականություն, որը իրականացնելով՝ կառավարությունը իր վրա է վերցնում արդյունաբերության կառուցվածքի ձևավորման ուղղակի, ակտիվ դերը և դրա միջոցով՝ տնտեսական աճի խթանումը: Կառավարությունը կարող է ավելացնել սեփական ներդրումային ծախսերը հատկապես ենթակառուցվածքում, բարձր արտադրողական ճյուղերի զարգացումը արագացնելու, ցածր արտադրողական ճյուղերից ռեսուրսները վերաբաշխելու միջոցներ ձեռնարկել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ենթակառուցվածքում պետական ներդրումները էական ազդեցություն են թողնում աճի ընդհանուր տեմպերի վրա: Երկրի տնտեսության ենթակառուցվածքի զարգացումը կապված է էլեկտրակայանների, ավտոճանապարհների, ջրանցքների, օդանավակայանների, նավահանգիստների, ջրամատակարարման, կոյուղու և նման համակարգերի կառուցման հետ: Ենթակառուցվածքում պետական ներդրումների և մասնավոր ներդրումների միջև գոյություն ունի ֆունկցիոնալ կապ: Նոր ճանապարհների, կամուրջների կառուցումը արագացնում է արտադրանքի առաքումը, ժամանակակից հիդրոկայանների կառուցումը նվազեցնում է էներգածախսերը, հետևաբար և՝ ընդհանուր ծախսերի մակարդակը մասնավոր ձեռնարկություններում: Ուղղակի կապ գոյություն ունի նաև ենթակառուցվածքում կատարվող ներդրումների և աշխատանքի արտադրողականության միջև: Այնպիսի երկրներ, ինչպիսին, օրինակ, Ճապոնիան է, որտեղ ենթակառուցվածքում պետական ներդրումները կազմում են ՀՆԱ ավելի քան 5%-ը, ունեն արտադրողականության աճի բարձր տեմպեր, ի տարբերություն ԱՄՆ-ի, որտեղ այս ցուցանիշը ցածր է 1%-ից, և արտադրողականությունն էլ աճում է համեմատաբար դանդաղ:

Ամփոփում

1. Չնայած բոլոր երկրներին բնորոշ են տնտեսական տատանումները, որի ընթացքում արձանագրվում են թողարկման ժամանակավոր անկումներ, համաշխարհային զարգացման միտումը երկարատև տնտեսական աճն է, որն առկա է երկրների մեծ մասում, ընդ որում՝ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամտի աճը տեղի է ունենում միայն վերջին 200 տարիներին, որը բացատրվում է այդ ժամանակաշրջանի տեխնոլոգիական առաջընթացով:

2. Տնտեսական աճի մեխանիզմը բացահայտելու համար անհրաժեշտ է ցուցաբերել գործոնային մոտեցում: Այդ դեպքում ագրեգացված աճի տեմպը իրենից ներկայացնում է երեք փոփոխականների գումար՝ տեխնիկական առաջադիմության տեմպը, աշխատուժի աճի տեմպը՝ բազմապատկած թողարկման մեջ աշխատանքի բաժնով և կապիտալի աճի տեմպը՝ բազմապատկած թողարկման մեջ կապիտալի բաժնով:

3. Խնայողությունների աճը նպաստում է ինչպես բնակչության մեկ շնչին բաժին ընկնող թողարկման, այնպես էլ «կապիտալ-աշխատանք» հարաբերակցության աճին, սակայն կայուն վիճակում տնտեսության աճի տեմպը չի փոխվում: Երկար ժամկետում խնայողության նորմի աճը չի ազդում աճի տեմպի վրա:

4. Բնակչության աճի ավելի բարձր տեմպը նպաստում է տնտեսության աճի տեմպի ավելացմանը, սակայն մեկ շնչի հաշվով թողարկումը կայուն վիճակում նվազում է: Կայուն վիճակում արագացված տնտեսական աճի միակ պայմանը տեխնիկական առաջադիմությունն է:

5. Ինչ պետք է անի կառավարությունը տնտեսական աճ ապահովելու համար: Մակրոտնտեսական մակարդակում կառավարությունը կարող է ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք նպաստում են ազգային խնայողությունների ու ներդրումների ավելացմանը՝ պետական խնայողության աճ և մասնավոր խնայողությունների հարկային խրախուսում, գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում, բյուջեի պակասուրդի կրճատում և այլն:

Թեստեր և խնդիրներ

1. Եթե խնայողության նորմը ավելանում է, ապա.

ա. տնտեսությունը անընդհատ կունենա բարձր աճի տեմպեր,
բ. կապիտալ/ աշխատանք հարաբերությունը անընդհատ կաճի,
գ. տնտեսությունը կունենա աճի բարձր տեմպեր այնքան ժամանակ, մինչև կհասնի կապիտալի կայուն պաշարի նոր, ավելի բարձր մակարդակի,
դ. կապիտալի կայուն պաշարը վերջին հաշվով կփոքրանա:

2. Կապիտալի կուտակման Ոսկյա կանոնի մակարդակում կապիտալի սահմանային արդյունքը հավասարվում է.

ա. իրական տոկոսադրույքին,
բ. ամորտիզացիայի մակարդակին,
գ. խնայողությունների մակարդակին,
դ. աշխատանքի սահմանային արդյունքին:

3. Եթե տնտեսությունը կայուն է, բնակչության աճ և տեխնոլոգիական փոփոխություններ չկան, իսկ կապիտալի սահմանային արդյունքը մաշվածքի տոկոսից փոքր է, ապա.

ա. տնտեսությունը համապատասխանում է Ոսկյա կանոնին,
բ. մեկ աշխատողի հաշվով սպառման կայուն մակարդակը ավելի բարձր կլիներ, եթե խնայողության նորմը լիներ ավելի ցածր,
գ. մեկ աշխատողի հաշվով սպառման կայուն մակարդակը ավելի բարձր կլիներ, եթե խնայողության նորմը լիներ ավելի բարձր,
դ. մաշվածքի տոկոսը պետք է փոքրանար և հասներ մեկ աշխատողի հաշվով սպառման Ոսկյա կանոնին:

4. Եթե երկու տնտեսություններ տարբերվում են միայն բնակչության աճի տեմպերով, ապա բնակչության աճի ավելի բարձր տեմպեր ունեցող տնտեսությունը կունենա.

ա. թողարկման աճի ավելի ցածր տեմպեր,
բ. թողարկման աճի ավելի բարձր տեմպեր,
գ. մեկ մարդուն բաժին ընկնող թողարկման աճի ավելի ցածր տեմպեր,
դ. մեկ մարդուն բաժին ընկնող թողարկման աճի ավելի բարձր տեմպեր:

5. Սոլոուի մնացորդը արտացոլում է.

ա. տեխնոլոգիական առաջադիմության ազդեցությունը տնտեսական աճի տեմպի վրա,
բ. կրթության վրա կատարվող ծախսերի ավելացման ազդեցությունը տնտեսական աճի վրա,
գ. գործոնների ամբողջական արտադրողականության հավելաճի ներդրումը արտադրանքի ծավալի հավելաճի մեջ,
դ. տնտեսության պետական կարգավորման ազդեցության չափը արտադրանքի ծավալի հավելաճի վրա:

6. *Մեկ աշխատողին բաժին ընկնող թողարկումը կազմում է 10 միավոր, կապիտալի ընդհանուր պաշարը 1000 է, իսկ արտադրական ֆունկցիան ունի* $y = k^{1/2}$ *տեսքը: Որքան է աշխատուժի քանակը.*

7. *Արտադրական ֆունկցիան ներկայացված է* $Y = 2K^{0.5} L^{0.5}$ *տեսքով: Բնակչության աճը կազմում է տարեկան 1%: Երկիրը տարեկան տնտեսում է թողարկման ծավալի 10%-ը: Դուրսգրման նորման հավասար է տարեկան 3%-ի: Տեխնոլոգիական առաջադիմության տեմպը տարեկան կազմում է 2%: Որքա՞ն է տվյալ պայմաններում մեկ աշխատողի հաշվով սպառման կայուն մակարդակը:*

8. *Արտադրական ֆունկցիան ունի* $y = \sqrt{k}$ *տեսքը.*

ա/ Որոշեք y-ի կայուն վիճակը s, n, g, δ մեծությունների դեպքում:

բ/ Զարգացած երկիրն ունի խնայողության 28% նորմ և բնակչության տարեկան 1% հավելաճ: Թույլ զարգացած երկիրն ունի խնայողության 10% մակարդակ և բնակչության 4% հավելաճ: Երկու երկրներում էլ g = 0.02, δ = 0.04:

Գտե՛ք y-ի կայուն վիճակը յուրաքանչյուր երկրի համար:

9. *Սոլոուի մոդելում արտադրական ֆունկցիան ունի հետևյալ տեսքը.* $y = 0.64\sqrt{k}$*: Դուրսգրման նորման կազմում է 5%, բնակչությունը աճում է տարեկան 1%-ով, տեխնոլոգիական առաջադիմության տեմպը հավասար է 2%-ի:*

Ինչի՞ է հավասար խնայողության նորմը Ոսկյա կանոնի պահանջի պայմաններում:

10. *Երկրի արտադրական ֆունկցիան բնութագրվում է* $Y = K^{0.5} L^{0.5}$ *հավասարումով: Դուրսգրման նորման կազմում է տարեկան 6%: Բնակչությունը աճում է տարեկան 2%-ով: Տեխնոլոգիական առաջադիմությունը բացակայում է:*

Որոշել սպառման առավելագույն ծավալը Ոսկյա կանոնին համապատասխանող պայմաններում:

Հիմնական հասկացություններ

Կապիտալի կայուն պաշար

Բնակչության մեկ շնչի հաշվով թողարկում

Կապիտալ-աշխատանք հարաբերություն

Երկարատև տնտեսական աճ

Աշխատանքի արդյունավետություն

Տնտեսում մասշտաբից

Սոլոուի աճի մոդել

Կապիտալազինվածություն

Տեխնոլոգիական առաջադիմություն

Կապիտալի կուտակման Ոսկյա կանոն

Աշխատանքի կայուն արդյունավետությամբ միավոր

Աշխատանք խնայող տեխնոլոգիական առաջադիմություն

Սոլոուի մնացորդ

Ինդուստրիալ քաղաքականություն

Հարցեր կրկնության համար

1. Որո՞նք են տնտեսական աճի այն աղբյուրները, որոնք ապահովում են կենսամակարդակի բարձրացում:
2. Ինչպե՞ս կարող է երկիրը ավելացնել ներդրումները՝ առանց կրճատելու ընթացիկ սպառման մակարդակը:
3. Ինչու՞ է ավելի բարձր խնայողության նորմ ունեցող երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով թողարկումն ավելի բարձր:
4. Ի՞նչ ազդեցություն կարող է թողնել ազգային խնայողությունների մակարդակի վրա աշխատողների թոշակների երաշխավորմանն ուղղված պետական քաղաքականությունը:
5. Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ 1990 թ. ԱՄՆ-ում ընդունված ներգաղթի մասին օրենքը ՀՀ տնտեսական աճի վրա, որը նպաստում է բարձրորակ աշխատուժի ներհոսքին Միացյալ Նահանգներ:

ԳԼՈՒԽ 8

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասարակական արտադրության արդյունավետությունը պայմանավորված է տնտեսության իրական հատվածի և դրա ճյուղերի զարգացման հնարավորությունների օգտագործմամբ: Ուստի արդյունաբերության բնագավառում վարվող տնտեսական քաղաքականությունը վճռական դեր է խաղում տնտեսության կայունացման գործում:

Այս գլխում քննարկվել են.

- Արդյունաբերության զարգացման օրինաչափությունները, ծրագրերը և դրանցում արտացոլվող ցուցանիշները:
- Արդյունաբերական քաղաքականության էությունը և հիմնական գծերը:
- Արդյունաբերության զարգացման հիմնական ուղղությունները և խնդիրները:
- Արդյունաբերական արտադրանքի գնահատման ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդաբանությունը:
- Արդյունաբերական արտադրության զարգացման ծրագրի հիմնավորման հարցերը:
- Արդյունաբերական արտադրության զարգացման ծրագրի փոխադարձ կապը տնտեսության մյուս ճյուղերի ու սոցիալական ոլորտի զարգացման ծրագրերի հետ:

8.1. Արդյունաբերական քաղաքականության էությունը և հիմնական գծերը

Արդյունաբերական քաղաքականությունը ձևավորվում է՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման մեջ արդյունաբերության ճյուղի ունեցած դերն ու նշանակությունը:

Արդյունաբերությունը տնտեսության այն ճյուղն է, որտեղ թողարկվում է արտադրության միջոցների ու սպառման առարկաների հիմնական մասը (շուրջ 9/10-ը): Հետևապես արդյունաբերության զարգացմամբ է պայմանավորված ինչպես հասարակական արտադրության զարգացումը, այնպես էլ բնակչության կենսամակարդակի բարձրացումը:

Արդյունաբերությունը տնտեսության առաջատարն է, որոշիչը, որով բնորոշվում է տվյալ երկրի զարգացման մակարդակը: Խորհրդային իշխանության վերջին տարիներին ՀՀ արդյունաբերությունը թողարկում էր ազգային արդյունքի կեսից ավելին: Հայաստանի անկախացումից

հետո, հասկանալի պատճառներով, կրճատվեց ոչ միայն համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), այլ նաև արդյունաբերության համախառն արտադրանքը: 2003թ. արդյունաբերության համախառն արտադրանքը կազմեց ՀՆԱ-ի միայն 27.6%-ը: Դա չի նշանակում, որ նվազել է արդյունաբերության դերը: Երևույթը ժամանակավոր է: Ապագայում արդյունաբերական արտադրանքի բաժինը ՀՆԱ-ում դարձյալ կավելանա և կապահովի ամբողջ տնտեսության և սոցիալական ոլորտի զարգացումը:

Արդյունաբերության առաջատար դերը պայմանավորված է նաև նրանով, որ այս ոլորտում են ընդգրկված հանրապետության աշխատանքային ռեսուրսների զգալի մասը և հիմնական արտադրական ֆոնդերի մոտ կեսը:

Քանի որ արդյունաբերության զարգացումը բնութագրում է ամբողջ տնտեսության զարգացման մակարդակը, ապա արդյունաբերության զարգացման համալիր ծրագիրը կարևոր նշանակություն ունի տնտեսական և սոցիալական զարգացման մյուս ծրագրերի համակարգում: Արդյունաբերության զարգացման ծրագիրը կապված է արտադրության մյուս ճյուղերի զարգացման ծրագրերի հետ, որը պայմանավորված է այդ ճյուղերի իրական փոխադարձ կապերով:

Այդ նպատակով քննարկենք արդյունաբերության և արտադրության մյուս ճյուղերի իրական կապերը: Այսպես, արդյունաբերությունը գյուղատնտեսության համար արտադրում է գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, պարարտանյութեր, էլեկտրաէներգիա և այլն: Դա նշանակում է, որ գյուղատնտեսության ինտենսիվ զարգացումը անվերապահորեն կապված է արդյունաբերության զարգացման հետ: Մյուս կողմից, արդյունաբերության որոշ ճյուղեր, ինչպիսիք են թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը, զարգանում են գյուղատնտեսական հումքի բազայի վրա և կախված են գյուղատնտեսության զարգացումից:

Նույնպիսի կապ գոյություն ունի արդյունաբերության և կապիտալ շինարարության միջև: Արդյունաբերության զարգացումը հնարավոր է նոր արտադրական կարողությունների և հիմնական ֆոնդերի գործարկման դեպքում, իսկ դա կատարվում է կապիտալ շինարարության միջոցով: Մյուս կողմից, կապիտալ շինարարության ծավալները առաջին հերթին կախված են արդյունաբերության զարգացման խնդիրներից, և այդ ճյուղի զարգացման նյութատեխնիկական բազան՝ շինարարական մեքենաներն ու մեխանիզմները, շինարարական նյութերը, էլեկտրաէներգիան և այլն, արտադրում է արդյունաբերությունը:

Փոխկապված են նաև արդյունաբերությունը և տրանսպորտը: Մի կողմից՝ տրանսպորտի ամբողջ շարժակազմը, օգտագործվող էլեկտրաէներգիան, վառելիքը և մյուս նյութերն արտադրվում են արդյունաբերության մեջ, մյուս կողմից՝ տրանսպորտային փոխադրումների մեծ մասը կազմում է արդյունաբերական արտադրանքը կամ արդյունաբերական ձեռնարկություններում օգտագործվող հումքը, նյութերը, վառելիքը և այլն: Դա նշանակում է, որ տրանսպորտի զարգացումը հնարավոր չէ առանց արդյունաբերության զարգացման, իսկ հումքի, նյութերի, վառե-

լիքի, սարքավորումների և այլնի նկատմամբ արդյունաբերության պահանջարկը բավարարվում է տրանսպորտային միջոցներով:

Արդյունաբերության ծրագիրը սերտորեն կապված է նաև աշխատանքային ռեսուրսների օգտագործման, սոցիալական զարգացման և, հատկապես, բնակչության կենսամակարդակի բարձրացման ծրագրերի հետ: Արդյունաբերական արտադրության ինտենսիվ աճն ապահովվում է աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցով, իսկ վերջինս ապահովում է հասարակական արտադրության արդյունավետություն, ինչպես նաև բնակչության եկամուտների աճ: Արդյունաբերության և բնակչության կենսամակարդակի բարձրացման ծրագրերի կապն արտահայտվում է նաև նրանում, որ սպառման առարկաները հիմնականում արտադրում է արդյունաբերությունը:

Տնտեսության զարգացման գործում առաջնային նշանակություն ունի արդյունաբերական քաղաքականության մշակումը և դրա իրականացումը: Շուկայական տնտեսությանն անցման շրջանում կուտակված քաղաքական, տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների լուծման համար առանձնապես կարևորվեց նոր իրողություններին համահունչ արդյունաբերական քաղաքականության մշակումը, որը ենթադրում էր տնտեսական և սոցիալական նպատակներին հասնելուն ուղղված տնտեսական, իրավական և վարչական լծակների արդյունավետ ու համալիր կիրառում:

Ընդհանուր առմամբ, անցումային շրջանում հանրապետության արդյունաբերական քաղաքականությունն ուղղված էր հետևյալ խնդիրների լուծմանը.

- արդյունաբերության մեջ պետական համակողմանի աջակցության հստակ մեխանիզմի ձևավորում և գործադրում այն բազային ձեռնարկությունների նկատմամբ, որոնք պայմանավորում են տնտեսական հավասարակշռությունը, նպաստում ներքին ու արտաքին կոոպերացիայի զարգացմանը,
- տեխնիկատնտեսական աջակցություն զարգացող ձեռնարկություններին,
- միջնորդավորված աջակցություն այն ձեռնարկություններին, որոնք միջազգային շուկաներ դուրս գալու հարցում ակնկալում են օժանդակություն,
- համակողմանի աջակցություն ավանդական արտադրություններին:

Ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում ՀՀ արդյունաբերության զարգացման գործում պետության գլխավոր խնդիրը կառուցվածքային փոփոխությունների օպտիմալ քաղաքականության մշակումն ու իրականացումն է: Այդպիսի քաղաքականությունն անմիջական ազդեցություն ունի արդյունաբերության ճյուղերի կառուցվածքի վրա: Արդյունաբերության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները ներկայացված են 8.1 աղյուսակում:

Ըստ աղյուսակի տվյալների՝ ՀՀ համար կարևոր նշանակություն ունեցող գունավոր մետալուրգիայի արդյունաբերության բաժինը վերջին

5 տարիների ընթացքում ավելի քան եռապատկվել է, որը նաև այդ բնագավառում պետական աջակցության ուժեղացման արդյունք է: Ընդհանուր առմամբ, այդ տարիներին վերամշակող արդյունաբերության բաժինը զգալիորեն մեծացել է՝ 1999թ. 64.1%-ից 2003թ. հասել է 67.0%-ի: Էապես մեծացել է նաև հանքարդյունաբերության բաժինը՝ 3.9%-ից դարձել է 10.9%: Դրան հակառակ՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման բաժինը նվազել է և 32.0%-ից դարձել 22.1%[2] : Բերված տվյալները վկայում են, որ արդյունաբերության կառուցվածքը աստիճանաբար կատարելագործվում է, որը դրականորեն կազդի հանրապետության տնտեսական զարգացման վրա:

Աղյուսակ 8.1

Արդյունաբերության ճյուղային կառուցվածքը 1999-2003թթ. (տոկոսներով)[1]

Արդյունաբերության ճյուղերը	Տարիներ	
	1999	2003
Ամբողջ արդյունաբերությունը	100	100
այդ թվում՝		
էլեկտրաէներգիա	32.0	19.5
սև մետալուրգիա	0.1	0.0
գունավոր մետալուրգիա	6.0	21.7
քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն	2.9	2.0
մեքենաշինություն և մետաղամշակում	3.1	4.8
անտառային, փայտամշակման և ցելյուլոզի, թղթի արդյունաբերություն	0.3	1.0
շինանյութերի արդյունաբերություն	3.2	3.3
ապակու և հախճապակու-ճենապակու արդյունաբերություն	0.2	0.3
թեթև արդյունաբերություն	1.3	1.2
սննդի արդյունաբերություն	39.4	36.6
ալրաղաց-ձավարեղենի կերերի արդյունաբերություն	4.2	2.6
պոլիգրաֆիական արդյունաբերություն	1.1	1.5

Արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունների քաղաքականությունը, որպես կապիտալի ազատ ու արագ տեղաշարժի, հիմնական ֆոնդերի նորացման, տնտեսական մրցակցության խթանման, ներդրումային ակտիվության և արտահանման խրախուսման, ինչպես նաև կազմակերպությունների և պետության շահերի զուգամիտման կարևոր նախադրյալ, ուղեկցվում է ամորտիզացիոն, ներդրումային, հարկային ու տնտեսական քաղաքականության մյուս ոլորտներում համարժեք և ներդաշնակ վերափոխումներով, որն արդյունաբերական ընկերությունները կվերածի շուկայական կոնյունկտուրայի փոփոխություններին ճկուն

[2] Նույն տեղում, էջ 270:

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004թ., Երևան, էջ 269-270:

արձագանքող և հետագա զարգացման առումով անհրաժեշտ ներուժ ունեցող սուբյեկտների:

Արդյունաբերության զարգացումը ներկայումս կարող է խարսխվել ներմուծման փոխարինման ճանապարհով ներքին շուկայի պահանջարկի բավարարման և արտահանման վրա: Բանն այն է, որ Հայաստանի ներքին շուկան փոքր է և չի կարող ժամանակակից բոլոր արտադրությունների զարգացման հիմք հանդիսանալ: Սակայն ներմուծման փոխարինումը կարող է կիրառվել սահմանափակ ոլորտներում և ժամանակահատվածում: Նման պայմաններում արտահանման խթանումը դառնում է արդյունաբերության զարգացման կարևորագույն պայման: Այդ առումով ավելի է կարևորվում արդյունաբերության առկա հզորությունների օգտագործման արդյունավետության բարձրացման, արտադրական և անձնական սպառման պահանջների ճիշտ որոշման, ինչպես նաև արտաքին շուկաներում վարքագծի ձևավորման և այլ խնդիրների լուծումը: Այդ նպատակով բացահայտվում են գերակա ճյուղերի զարգացման հնարավորությունները, որոնք պետք է իրենց արտացոլումը գտնեն ՀՀ տնտեսական զարգացման ծրագրերում:

Արդյունաբերական քաղաքականությունը երկրի կառավարության միջոցառումների ամբողջությունն է՝ ուղղված արդյունաբերության աճի տեմպերի ավելացմանը, արդյունաբերական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացի կազմակերպմանը և արդյունավետ իրականացմանը, արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը, ներքին և արտաքին շուկաներում մրցունակ ապրանքների արտադրության ծավալների և անվանացանկի ավելացմանը, արդյունաբերության մեջ նյութական և աշխատանքային ռեսուրսների, հիմնական ֆոնդերի արդյունավետ օգտագործմանը, համաշխարհային տնտեսության հետ հայրենական արդյունաբերության սերտաճմանը, մրցակցային դաշտի ձևավորմանը, ներդրումների ներգրավմանը և դրանց պաշտպանությանը, արդյունաբերության մեջ գիտատեխնիկական նվաճումների և արտասահմանյան առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը:

ՀՀ արդյունաբերական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը ոլորտի վերակառուցումը և վերականգնումն է: Իհարկե, մտածել, որ նախկին արդյունաբերական հսկա ձեռնարկությունների արտադրական գործունեությունը նույնությամբ պետք է վերականգնել, սխալ կլինի: Այդպիսի ձեռնարկություններն անհրաժեշտ է վերակառուցել և վերականգնել՝ հաշվի առնելով հանրապետության ներքին և արտաքին պահանջարկը:

Արդյունաբերական քաղաքականությունն արտացոլվում է արդյունաբերության զարգացման համալիր ծրագրում:

8.2. Արդյունաբերության զարգացման հիմնական ուղղությունները և խնդիրները

Արդյունաբերական քաղաքականությամբ որոշվում են արդյունաբերության զարգացման ուղղությունները և առաջադրվում այն խնդիրները, որոնք լուծվելու են արդյունաբերության զարգացման ծրագրերը կենսագործելու ընթացքում: Շուկայական տնտեսությանն անցման փուլում երկրի տնտեսության, այդ թվում նաև արդյունաբերության զարգացման հիմնական ուղին համարվեց մասնավորեցումը, որը հնարավորություն տվեց մեծացնելու մասնավոր հատվածը, ձևավորելու միջին խավ և զարգացնելու փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Արդյունաբերության զարգացման կարևոր ուղղություններից մեկն էլ տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիման վրա արտահանման ծավալների ավելացումն է: Այս գործում հատկապես կարևորվում է գյուղատնտեսական հումքը վերամշակող ձեռնարկությունների դերն ու նշանակությունը: ՀՀ համար այսօր առաջնային խնդիր է ներմուծման փոխարինումը տեղական արտադրանքով, որը արտահանման և ներմուծման հարաբերակցությունը ի օգուտ առաջինի փոխելու հնարավորություն կընձեռի և կապահովի լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ հանրապետության տնտեսության զարգացման համար:

Ժամանակակից պայմաններում ՀՀ արդյունաբերության զարգացումը պետք է ընթանա հատկապես գերակա ուղղություններով, որոնցից են՝ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերությունը, էներգետիկան, քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, լեռնահանքային արդյունաբերությունը, գյուղատնտեսական հումքի վերամշակման արդյունաբերությունը: Դրանց զարգացմամբ է պայմանավորված ՀՀ ամբողջ տնտեսության զարգացումը:

Արդյունաբերության զարգացման համալիր ծրագրում ներառված խնդիրները, ընդհանուր առմամբ, կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում ընդգրկված են արդյունաբերության զարգացման հիմնական խնդիրները, որոնք առաջնային լուծում են պահանջում: Դրանք են.

1. Արդյունաբերական արտադրության աճի կայուն տեմպերի ապահովումը: Այդ նպատակով անհրաժեշտ է շարունակ կատարելագործել արդյունաբերական արտադրության ճյուղային կառուցվածքը, զարգացնել առաջադիմական այն ճյուղերը, որոնք տեխնիկական առաջադիմության կրողներ են, և դրանց զարգացումից է էապես կախված ոչ միայն արդյունաբերության, այլ նաև տնտեսության մյուս ճյուղերի ու սոցիալական ոլորտի զարգացումը:
2. Արդյունաբերական արտադրանքի նկատմամբ տնտեսության և բնակչության պահանջարկի՝ առավելագույն չափով բավարարումը:
3. Երկրի պաշտպանունակության ամրապնդումը, բանակի տեխնիկական հագեցվածության ապահովումը:
4. Տեխնիկական առաջադիմության նվաճումների ներդրման շնորհիվ արդյունաբերության նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Այդ հիմնական խնդիրներին զուգահեռ, զարգացման առանձին փուլերում առաջանում են խնդիրներ, որոնք լուծվում են ընթացիկ փուլերի զարգացման ծրագրերով: Դրանք ընդգրկվում են երկրորդ խմբում և վերաբերում են.

- արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցմանն ու վերականգնմանը, մասնավորեցված ձեռնարկությունների աշխատանքային գործունեության կազմակերպմանը,
- արդյունաբերության պետական և մասնավոր հատվածների միջև մրցակցության ապահովմանը,
- փոքր և միջին ձեռներեցության զարգացմանը,
- մասնավոր հատվածի դերի բարձրացմանը և այլն:

Կենտրոնացված կապիտալ ներդրումների և սեփական ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում, ունենալով հիմնական ֆոնդերի մաշվածության բարձր աստիճան, հիմնականում անմրցունակ արտադրանք, մեծածավալ ժամկետանց պարտավորություններ, ՀՀ արդյունաբերական համալիրի արտադրական գործունեությունը վերջին տարիներին խոր ճգնաժամ ապրեց: Ավանդական տնտեսական կապերի խզման և շուկաների կորստի պատճառով արդյունաբերական ընկերությունների զգալի մասը չէր աշխատում կամ աշխատում էր հզորությունների նվազագույն չափով, որի հետևանքով արտադրության ծավալներն ու աշխատատեղերի քանակը կտրուկ կրճատվեցին: Ստեղծված իրավիճակում առաջացան նոր խնդիրներ, որոնց լուծումը արդյունաբերության համակողմանի զարգացում ապահովելու հնարավորություն կտա:

ՀՀ արդյունաբերության զարգացման ռազմավարական նպատակը առաջիկա տարիներին պետք է լինի կայուն և արդյունավետ գործող, մեծ ավելացված արժեք ապահովող և ռեսուրսախնայող արտադրությունների վրա հիմնված, դեպի արտադրական շուկաներ նպատակաուղղված, ներհանրապետական և միջպետական արտադրական կոոպերացիայի բարձր աստիճան ունեցող, բնապահպանական պահանջները բավարարող արդյունաբերական համալիրի ստեղծումը:

Այդ նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1. ձևավորել ՀՀ արդյունաբերության զարգացման պետական (նպատակային) ծրագրերի մշակման հիմքերը,
2. անհրաժեշտ պայմաններ ստեղծել ներհանրապետական արտադրական կոոպերացիայի համար,
3. արդյունաբերության ոլորտում խրախուսել ներդրումները և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը,
4. ներդնել սնանկացման հասած ընկերությունների արդյունավետ վերակազմակերպման համակարգ,
5. զարգացնել արդյունաբերությանն օժանդակող ենթակառուցվածքները,
6. խթանել արտահանումը,
7. պատրաստել և վերապատրաստել անհրաժեշտ կադրեր:

Չնայած առկա տնտեսական պայմանների՝ ներքին շուկայի սահմանափակվածության ու արտաքին շուկաներ մուտք գործելու հիմնախնդիրների պատճառով հնարավոր չէ ծավալել լայն միջճյուղային ու ներճյուղային արտադրական կոոպերացիա և ակնկալել արտադրության ծավալների և աշխատատեղերի զգալի աճ, ՀՀ-ում գերակա ճյուղերի բազային ընկերությունների զարգացման միջոցով (օրինակ՝ քիմիական արդյունաբերություն) կարելի է խթանել ինչպես տվյալ, այնպես էլ այլ ճյուղերի առանձին ընկերությունների արտադրության ընդլայնումը:

Կոոպերացիայի կատարյալ ձև են կլաստերները, որոնք մրցակցող և համագործակցող ձեռնարկությունների, մատակարարների, ծառայություններ մատուցող ձեռնարկությունների, հետազոտական ինստիտուտների և փոխկապակցված ինստիտուտների աշխարհագրական խմբավորումներ են: Այս պայմաններում ձեռնարկությունները հաճախ կենտրոնացվում են այնպիսի վայրերում, որտեղ բիզնեսի կազմակերպման պայմաններն ավելի բարենպաստ են, ինչպես նաև որակյալ աշխատուժն ու հետազոտական ինստիտուտների փորձագիտական գիտելիքները մատչելի են: Կլաստերներն անկախ ընկերությունների և կազմակերպությունների խմբեր են, որոնք մասնագիտացած են կիրառվող ընդհանուր տեխնոլոգիաներով և կապված են հմտություններով, կոնկրետ ոլորտում գիտատար են կամ ավանդական, կարող են լինել կազմակերպչական կամ ոչ կազմակերպչական:

ՀՀ-ում կոոպերացիայի և կլաստերների ձևավորման ու զարգացման նպատակով իրականացվում են գործուն միջոցառումներ պետական գնումների ծավալներում հնարավորինս ավելացնելու այն արտադրատեսակների ծավալները, որոնք ներկայումս ներմուծվում են, սակայն հնարավոր ու տնտեսապես արդյունավետ է դրանք արտադրել հանրապետությունում: Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջվող արտադրատեսակների գնումներն իրականացվում են հանրապետության արդյունաբերական ընկերությունների միջև կնքվող համապատասխան պայմանագրերով: Նշված միջոցառումները կարևորվում են նրանով, որ մի կողմից արտադրողի և սպառողի միջև կստեղծվեն կայուն, երկարաժամկետ և փոխշահավետ տնտեսական կապեր, ինչպես նաև նպաստավոր պայմաններ ոչ միայն արտադրության ծավալների, այլ նաև աշխատատեղերի ավելացման համար, իսկ մյուս կողմից՝ կավելանան ընկերությունների սեփական ֆինանսական միջոցները, կբարձրանա նրանց տեխնիկական մակարդակը, կստեղծվեն նոր տեխնոլոգիաներ և արտադրատեսակներ, կբարելավվի վերջիններիս որակը և այլն:

Արդյունաբերության առջև դրված այդ երկու խմբի խնդիրները ներառվում են ծրագրի առանձին բաժիններում, որոնք փոխադարձաբար կապված են և լրացնում են միմյանց:

Արդյունաբերության զարգացման ծրագրի բաժիններն են.

1. արդյունաբերության զարգացման ներկա վիճակի վերլուծությունը,
2. արդյունաբերության զարգացման հիմնական խնդիրները և նպատակը,

3. արդյունաբերության բարեփոխումների և կառուցվածքային փոփոխությունների ծրագիրը,
4. արդյունաբերական արտադրանքի թողարկման ցուցանիշները,
5. արդյունաբերական արտադրության ծրագրի հիմնավորումը՝ ըստ նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների:

8.3. Արդյունաբերական արտադրանքի գնահատման ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդաբանությունը

Ծրագրի բաժիններից յուրաքանչյուրում մշակվում են ցուցանիշներ, որոնք արտացոլում են արդյունաբերության զարգացման խնդիրները: Արդյունաբերության արտադրական ծրագիրը մշակվում է՝ ելնելով ճյուղի արտադրանքի նկատմամբ երկրի ներքին և արտաքին պահանջարկից: Արդյունաբերական արտադրանքի պահանջարկը ձևավորվում է երկրի բնակչության և տնտեսության, պետական պահուստների ձևավորման և արտահանման պահանջարկների ամբողջությունից: Պահանջարկի հիման վրա ձևավորվում է պետական պատվերը:

Արտադրական ծրագրում մշակվող ցուցանիշները բաժանվում են երկու խմբի՝ բնաիրային և արժեքային:

Արդյունաբերական արտադրանքի գնահատման բնաիրային ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդաբանությունը

Բնաիրային ցուցանիշների որոշումը արդյունաբերության արտադրական ծրագրի մշակման ելակետն է: Այլ կերպ ասած, ըստ այդ ցուցանիշների որոշվում է, թե արդյունաբերությունը որքան արտադրանք պետք է թողարկի բնեղեն արտահայտությամբ, և դրա հիման վրա հաշվարկվում են ծրագրի մյուս ցուցանիշները: Բնաիրային արտահայտությամբ ցուցանիշները որոշվում են չափի բնական միավորներով՝ տ, կգ, զույգ, հատ, քմ, կվտ/ժամ, գծ.մետր և այլն:

Արդյունաբերության արտադրական ծրագրի հիմնական բնաիրային ցուցանիշներն են արտադրանքի անվանացանկը և տեսականին: Ծրագրում նախատեսվում է միայն խիստ կարևոր արտադրատեսակների արտադրությունը: Մասնավորապես, դրանք այն արտադրատեսակներն են, որոնք ապահովում են տնտեսության զարգացման տեմպերն ու համամասնությունները՝ մետաղի տարբեր տեսակների գլանվածքը, վառելիքի տարբեր տեսակները, սարքավորումները, էլեկտրաէներգիան և այլն: Բնաիրային արտահայտությամբ հաշվարկվում են նաև այն արտադրանքների քանակները, որոնք պայմանավորում են բնակչության կենսամակարդակը՝ սպառման համար անհրաժեշտ կարևորագույն արտադրատեսակները՝ միս, հացահատիկ, գործվածքեղեն և այլն:

Բնաիրային արտահայտությամբ որոշվում է պաշտպանական նշանակություն ունեցող, ինչպես նաև այն արտադրատեսակների քանակը, որոնցով կարգավորվում են արտաքին առևտրական հարաբերությունները և ճշգրտվում արտահանման ծավալները: Արտադրանքի կարևորա-

գույն տեսակների անվանացանկում ընդգրկվում են նաև այն ապրանքները, որոնք բնորոշում են գիտատեխնիկական առաջընթացը՝ քիմիական արդյունաբերության և մեքենաշինության արտադրանքի կարևորագույն տեսակները:

Արտադրական ծրագիրը մշակելիս առաջին հերթին, ըստ էության, որոշվում է արտադրվող արդյունաբերական արտադրանքի անվանացանկը: Անվանացանկում ընդգրկվում են արտադրանքի հիմնական խմբերը: Սակայն արտադրանքի առանձին տեսակների նկատմամբ բնակչության և տնտեսության պահանջարկը շուկայում որոշակի է, ուստի արտադրության ծավալը ըստ տեսականու որոշում են տնտեսավարող սուբյեկտները:

Արտադրանքի անվանացանկը որոշելու համար անհրաժեշտ է նախապես հաշվարկել արդյունաբերական արտադրանքի նկատմամբ տնտեսության և բնակչության պահանջարկը: Պահանջարկը որոշվում է ինչպես արտադրության միջոցների, այնպես էլ սպառման առարկաների նկատմամբ: Դրա համար օգտվում ենք ինչպես արտադրության միջոցների, այնպես էլ սպառման առարկաների ծախսման նորմերից: Օրինակ, աշխատանքի առարկայի նկատմամբ պահանջարկը ($Ï_i$) որոշելիս անհրաժեշտ է աշխատանքի տվյալ առարկայի ծախսման նորմը (H_i) բազմապատկել այդ արտադրանքը սպառող ճյուղի արտադրության ծավալով (Q_i).

$$Ï_i = Q_i x H_i$$

Սպառման առարկաների պահանջարկը որոշելիս ելնում են դրանց սպառման փաստացի ու կենսաբանական նորմերից և բնակչության թվաքանակից:

Աշխատանքի գործիքների պահանջարկը որոշելիս հաշվի են առնվում կատարվող աշխատանքների ծավալը (վերածած մեքենաժամերի), տվյալ մեքենայի աշխատաժամանակի օգտակար ֆոնդը և աշխատաժամանակի օգտագործման գործակիցը:

Արդյունաբերական արտադրանքի տարբեր տեսակների պահանջարկը որոշելիս մշակվում են հարյուրավոր նյութական հաշվեկշիռներ, որոնք հնարավորություն են տալիս ամբողջացնել տնտեսության և բնակչության պահանջարկը տվյալ արտադրանքի նկատմամբ: Այդպիսի հաշվեկշիռներ են կազմվում ինչպես սպառման առարկաների, այնպես էլ արտադրության միջոցների համար: Դրանք ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են այդ առարկաների տնտեսական բովանդակությամբ և իրացման ու սպառման առանձնահատկություններով: Նյութական հաշվեկշիռները մշակվում են մի ընդհանուր մոտավոր սխեմայով: Իսկ երբ նյութական հաշվեկշիռը մշակվում է կոնկրետ առանձին ապրանքատեսակի համար, ապա հաշվի են առնվում վերոհիշյալ առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված՝ հաշվեկշռի սխեման որոշ փոփոխություններ է կրում: Նյութական հաշվեկշիռները բաղկացած են երկու մասից՝ ռեսուրսների և ռեսուրսների բաշխման կամ օգտագործման: Ռեսուրսային մասը ցույց է տալիս դրանց

գոյացման աղբյուրները, իսկ բաշխման մասը՝ դրանց օգտագործման ուղղությունները: Ըստ էության, բաշխման մասն իրենից ներկայացնում է տվյալ արտադրանքի նկատմամբ պահանջարկը: Եթե պահանջարկը գերազանցում է ռեսուրսները, ապա այն կրճատվում է երկրորդական ճյուղերի պահանջի նվազեցման հաշվին: Սակայն որոշ դեպքերում կարող է նախատեսվել չբավարարված պահանջ՝ ծրագրի կատարման ընթացքում լրացուցիչ ռեսուրսներ ստանալու ակնկալիքով:

Արդյունաբերական արտադրանքի նյութական հաշվեկշիռները կազմվում են հետևյալ մոտավոր սխեմայով (թվերը պայմանական են).

Աղյուսակ 8.2

Սև մետաղների գլանվածքի նյութական հաշվեկշիռը (հազ.տ)

Ռեսուրսներ	քա-նակ	Ռեսուրսների բաշխումը	քա-նակ
1. Արտադրությունից (ընդամենը և ըստ գոյացման աղբյուր-ների)	2.0	1. Արտադրություն	8.0
2. Ներմուծում	13.0	2. Կապիտալ շինարարություն	4.0
3. Պետական պահուստների օգտագործում	2.0	3. Սեփական կարիքների համար	1.0
4. Մնացորդը տարվա սկզբին այդ թվում՝	5.0	4. Շուկայական ֆոնդեր	4.0
ա) մատակարարների մոտ բ) սպառողների մոտ	2.0 3.0	5. Արտահանում	-
		6.Պետական պահուստների համալրում	2.0
		7. Մնացորդը տարվա վերջին այդ թվում՝ ա) մատակարարների մոտ բ) սպառողների մոտ	3.0 1.5 1.5
Հաշվեկշիռ	22.0	Հաշվեկշիռ	22.0

Արդյունաբերական արտադրության բնաիրային ցուցանիշները հաշվարկելիս կարևոր նշանակություն է տրվում արտադրանքի որակի բարձրացմանը, որը հավասարազոր է լրացուցիչ արտադրանքի թողարկմանը: Սակայն լրացուցիչ արտադրանքի թողարկումն ավելի շատ ռեսուրսներ և ծախսեր է պահանջում, քան որակի բարձրացումը: Հետևաբար, արտադրանքի որակի բարձրացումը հասարակական արտադրության արդյունավետությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշ է:

Արտադրանքի որակը արդյունաբերության տարբեր ճյուղերում բնութագրվում է տարբեր հատկանիշներով. սննդարդյունաբերության և թեթև արդյունաբերության ճյուղերում՝ տեսակայնության գործակցով, մեքենաշինության մեջ՝ դիմացկունությամբ, երկարակեցությամբ, ամրու-

թյամբ, քիմիական արդյունաբերության մեջ՝ ամրությամբ, անջրանցիկությամբ, միջին տարեկան վազքով (անվադողերի արտադրություն) և այլն: Իսկ արդյունաբերության մի շարք ճյուղերի արտադրանքի որակը գնահատվում է կարգերով՝ բարձրագույն, առաջին, երկրորդ, երրորդ:

Պետական չափորոշիչներով սահմանվում են արտադրանքի տարբեր տեսակների որակական բոլոր չափանիշները, որոնց համապատասխան ապահովվում է արտադրանքի որակը:

Ասվածից հետևում է, որ արդյունաբերության ծրագրում օգտագործվում են նաև այնպիսի ցուցանիշներ, որոնք արտահայտում են երևույթների ոչ միայն քանակական, այլ նաև որակական կողմերը: Ի դեպ, նշենք, որ որակական ցուցանիշներն իրենց հերթին կարող են լինել տեխնիկատնտեսական ու տեխնիկաարտադրական նորմեր, նորմատիվներ և տնտեսական որակական ցուցանիշներ:

Դրանցից առաջիններն արտահայտում են թողարկվող արտադրանքի, օգտագործվող տեխնիկայի, տեխնոլոգիայի և ռեսուրսների որակական կողմերը, իսկ տնտեսական որակական ցուցանիշները սինթետիկ ցուցանիշներ են և բնութագրում են ամբողջ տնտեսական գործունեության որակական կողմը: Այսպես, եթե տնտեսությունը արդյունավետ, որակյալ տնտեսական գործունեություն է ծավալում, ապա աշխատանքի արտադրողականության, շահութաբերության մակարդակները բարձրանում են, ինքնարժեքը՝ կրճատվում:

Արդյունաբերական արտադրանքի գնահատման արժեքային ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդաբանությունը

Արդյունաբերության և դրա առանձին ճյուղերի արտադրության ծավալն ամբողջությամբ որոշելու համար անհրաժեշտ է արտադրանքի տարբեր տեսակները դարձնել համադրելի: Դա կատարվում է արտադրանքի տարբեր տեսակներն արժեքային արտահայտությամբ չափելու միջոցով: Եթե բնաիրային ցուցանիշների հիման վրա որոշվում է արդյունաբերական արտադրանքի նկատմամբ պահանջարկը և արտադրանքի քանակը, ապա արժեքային ցուցանիշների միջոցով սահմանվում են արդյունաբերական արտադրության աճի տեմպերը, համամասնությունները արդյունաբերության տարբեր ճյուղերի միջև: Այդ ցուցանիշների միջոցով է որոշվում նաև արդյունաբերության տեղը ՀՆԱ արտադրության մեջ:

Արդյունաբերական արտադրության հիմնական արժեքային ցուցանիշներն են՝ համախառն արտադրանքը, ապրանքային արտադրանքը և իրացված արտադրանքը: Ծանոթանանք դրանցից յուրաքանչյուրի էությանը և հաշվարկման կարգին:

Երկրի արդյունաբերության համախառն արտադրանքը հաշվարկվում է գործարանային մեթոդով: Դա նշանակում է, որ արդյունաբերության կամ դրա ճյուղի համախառն արտադրանքի ծավալի մեջ չի կարող ներառվել համախառն ներքին շրջանառությունը: Տնտեսավարող սուբյեկտները համախառն արտադրանքում ներառում են.

- պատրաստի արտադրանքը, որի պատրաստման գործընթացն ավարտվել է, ընդունվել տեխնիկական վերահսկողության բաժնի կողմից և հանձնվել պատրաստի արտադրանքի պահեստ,
- իրացվող կիսաֆաբրիկատների արժեքը,
- դրսի պատվերով կատարվող արդյունաբերական աշխատանքների արժեքը,
- տարայի արժեքը (երբ արտադրանքն իրացվում է տարայով),
- անավարտ արտադրության՝ տարեվերջի և տարեսկզբի մնացորդների տարբերությունը,
- սեփական մեքենաների, սարքավորումների, հիմնական ֆոնդերի կապիտալ վերանորոգման աշխատանքների արժեքը, եթե դրանք կատարվում են ձեռնարկության կոլեկտիվի ուժերով, մեքենաներով ու սարքավորումներով:

Համախառն արտադրանքի ծավալը որոշելու համար հաշվի են առնվում թողարկվող արտադրանքի քանակը և գները՝ բնաիրային արտահայտությամբ: Համախառն արտադրանքը գնահատվում է ձեռնարկության մեծածախ գներով: Իսկ արտադրության աճի տեմպերը որոշելու համար համախառն արտադրանքը գնահատվում է նաև համադրելի գներով: Համադրելի անփոփոխ գներ են համարվում որևէ ժամանակաշրջանում գործող ձեռնարկության մեծածախ գները, և հետագա բոլոր տարիների արտադրանքը հաշվարկվում է այդ գներով: Դա կատարվում է տարբեր ժամանակահատվածները համադրելի դարձնելու համար:

Ապրանքային արտադրանքը համախառն արտադրանքից տարբերվում է նրանով, որ դրանում անավարտ արտադրանքի մնացորդների տարբերությունը չի ներառվում, իսկ մյուս բոլոր տարրերը նույնն են: Այդ պատճառով այն ճյուղերում ու ձեռնարկություններում, որտեղ արտադրական պարբերաշրջանի տևողությունը կարճ է, և անավարտ արտադրության ծավալը՝ փոքր, տվյալ տարվա համախառն և ապրանքային արտադրանքների ծավալները համընկնում են: Իսկ այն ճյուղերում, որտեղ անավարտ արտադրության մնացորդները շատ են՝ նավաշինություն, ծանր մեքենաշինություն և այլն, համախառն արտադրանքի ծավալը գերազանցում է ապրանքային արտադրանքի ծավալը: Ապրանքային արտադրանքը գնահատվում է գործող գներով:

Համախառն և ապրանքային արտադրանքի ցուցանիշները ներառում են ինչպես նոր ստեղծված արդյունքը, այնպես էլ առարկայացած աշխատանքի արժեքը: Այլ կերպ ասած՝ այդ ցուցանիշները կախված են ոչ միայն տվյալ ձեռնարկության կոլեկտիվի աշխատանքից, այլև օգտագործվող հումքի, նյութերի, վառելիքի, սարքավորումների արժեքից: Դա նշանակում է, որ այդ ցուցանիշներն ամբողջությամբ չեն բնութագրում ձեռնարկության տնտեսական գործունեությունը, քանի որ արտադրանքի տեսականին ի օգուտ նյութատար արտադրատեսակների փոխելու դեպքում համախառն ու ապրանքային արտադրանքների ծավալներն արհեստականորեն կմեծանան: Այդ ցուցանիշների մյուս թերությունն այն է, որ

դրանք դեռևս չեն բնորոշում արտադրվող արտադրանքի որակը: Բանն այն է, որ բոլոր արտադրատեսակները մտնում են համախառն ու ապրանքային արտադրանքների մեջ՝ անկախ այն բանից՝ դրանց որակը բարձր է, թե՝ ոչ: Դա է պատճառը, որ այդ ցուցանիշներին զուգահեռ հաշվարկվում է նաև իրացվող արտադրանքի ծավալը:

Արտադրանքի իրացման ծավալը ներառում է այն արտադրանքը, որն օտարվել է տվյալ ձեռնարկությունից և դրա դիմաց ձեռնարկության՝ բանկում ունեցած հաշվարկային հաշվում ստացվել է այդ արտադրանքի արժեքը: Այլ կերպ ասած՝ եթե ապրանքային արտադրանքը բնորոշում ենք որպես իրացման ենթակա արտադրանք, ապա իրացման ծավալի ցուցանիշը բնութագրում է ապրանքային արտադրանքի այն մասը, որն իրացվել է: Իսկ արտադրանքի իրացումը կարևոր է, դրանում է իրացման ծավալի ցուցանիշի առավելությունը մյուս արժեքային ցուցանիշների նկատմամբ: Իրացվում է այն արտադրանքը, որը որակյալ է և պահանջարկ ունի, հետևաբար ձեռնարկությունը շահագրգռված է՝ արտադրելու որակյալ արտադրանք և մարքեթինգային ուսումնասիրությունների միջոցով ճշտում է այդպիսի արտադրանքի պահանջարկն ու իր գործունեությունը կազմակերպում՝ ելնելով դրանից: Սակայն պետք է նշել, որ իրացման ծավալի ցուցանիշը նույնպես զերծ չէ այն թերություններից, որոնք բնորոշ են համախառն և ապրանքային արտադրանքներին: Այս ցուցանիշը նույնպես զգայուն է նյութատարության նկատմամբ, և դրա վրա ազդում են գնագոյացման պայմանները:

Արտադրանքի իրացման ծավալի ցուցանիշը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$P=T+Q_H-Q_K$$, որտեղ՝

T –ն՝ ապրանքային արտադրանքն է,

Q_H –ը՝ չիրացված արտադրանքի մնացորդը տարվա սկզբին,

Q_K -ն՝ չիրացված արտադրանքի մնացորդը տարվա վերջին:

Արտադրանքի իրացման ծավալի ցուցանիշը արտահայտվում է արտադրանքի իրացման շուկայական փաստացի գներով: Իրացման ծավալի ցուցանիշը չի ընդգրկում վերադարձվող տարայի, ինչպես նաև իրացված մեքենաների, սարքավորումների արժեքը: Որպես կանոն, արտադրանքի իրացման ծավալի ցուցանիշը չի համընկնում համախառն արտադրանքի և ապրանքային արտադրանքի ցուցանիշների հետ, քանի որ ժամանակի տեսանկյունից արտադրությունը և իրացումը չեն համընկնում:

8.4. Արդյունաբերական արտադրության զարգացման ծրագրի հիմնավորումը

Արդյունաբերության զարգացման ծրագիրը կազմելուց հետո այն հիմնավորվում է անհրաժեշտ նյութական, ֆինանսական և աշխատան-

քային ռեսուրսներով ապահովվածությամբ: Ծրագիրը հիմնավորվում է հիմնականում բնաիրային ցուցանիշների օգնությամբ: Այսպես՝ բնաիրային ցուցանիշներով է որոշվում արտադրական ծրագրի կատարման համար անհրաժեշտ հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի քանակը, ինչպես նաև արտադրական կարողությունները: Աշխատանքի առարկաների ծախսման առաջադիմական նորմերի և արտադրանքի կարևորագույն տեսակների՝ ծրագրված առաջադրանքների արտադրյալով պարզվում է դրանց նկատմամբ պահանջարկը, և միջոցառումներ են ձեռնարկվում այն բավարարելու համար:

Առանձնահատուկ նշանակություն ունի արտադրական ծրագրի հիմնավորումը ըստ արտադրական կարողությունների և հիմնական արտադրական ֆոնդերի: Արտադրական կարողությունը տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրման և արտադրության ու աշխատանքի կազմակերպման ժամանակակից պայմաններում արտադրանք թողարկելու առավելագույն հնարավորությունն է որոշակի ժամանակահատվածում, սովորաբար՝ մեկ տարում: Արտադրական կարողությունների մեջ հաշվարկվում են ձեռնարկության կամ ճյուղի տրամադրության տակ գտնվող բոլոր մեքենասարքավորումները, բացի պահուստային և օժանդակ ու փորձարարական արտադրամասերի մեքենասարքավորումներից: Արտադրական կարողությունները որոշելիս որպես ելակետ են ընդունվում հիմնական, այսինքն՝ պատրաստի արտադրանք թողարկող արտադրամասերի կարողությունները:

Արտադրական կարողությունները չափվում են բնաիրային արտահայտությամբ, այն նույն չափի միավորներով, որոնցով գնահատվում է թողարկվող արտադրանքը (տ, կգ, կվտ/ժամ, զույգ, հատ, գծ. մետր, քառ.մ., խմ և այլն): Արտադրական ծրագիրը արտադրական կարողություններով հիմնավորելու համար անհրաժեշտ է նախ պարզել գործող արտադրական կարողությունների օգտագործման արդյունավետությունը, այնուհետև՝ որոշել դրանց նկատմամբ ընդհանուր պահանջը: Եթե պարզվում է, որ այն չի բավարարում արտադրական ծրագիրը կատարելու պահանջները, ապա որոշվում են լրացուցիչ պահանջները և դրանց բավարարման ուղիները: Այդ նպատակով կազմվում են արտադրական կարողությունների հաշվեկշիռներ՝ ըստ առանձին արտադրությունների: Այդ հաշվեկշիռները կազմվում են ինչպես հաշվետու տարվա, այնպես էլ գալիք ժամանակաշրջանի համար: Մեկ աղյուսակի միջոցով (թվերը պայմանական են) ներկայացնենք դրանց կազմման մեթոդաբանությունը (տես՝ աղյուսակ 8.3):

Նախ կազմենք հաշվետու տարվա (8.3 աղյուսակ) արտադրական կարողությունների հաշվեկշիռը, որը բնութագրում է գործող արտադրական կարողությունների փաստացի փոփոխությունները տարվա ընթացքում և դրանց օգտագործման վիճակը:

Ըստ էության, հաշվետու տարվա հաշվեկշռի հիմնական տվյալները լրացվում են հաշվապահական հաշվետվությունների հիման վրա: Ենթադրենք՝ այդպիսի տվյալներով հաշվետու տարվա սկզբին կոշիկի արտադրության արտադրական կարողությունները կազմել են 2000.0

հազ. զույգ, տարվա ընթացքում դրանք ավելացել են ևս 200.0 հազ. զույգով, և շարքից դուրս է եկել 300.0 հազ.զույգ կոշիկի արտադրական կարողություն, փաստացի թողարկած արտադրանքը կազմել է 1500.0 հազ. զույգ կոշիկ: Այդ տվյալների հիման վրա նախ հաշվարկում են արտադրական կարողությունների միջին տարեկան աճը: Ենթադրենք՝ տարվա ընթացքում ավելացած 200.0 հազ. զույգի թողարկման արտադրական կարողությունների մի մասը (100.0 հազ. զույգ) գործարկվել է մարտի 1-ին, իսկ մյուս մասը՝ հունիսի 1-ին: Քանի որ արտադրանքի թողարկման ծավալը հաշվարկվում է միջին տարեկան կարողությունների հիման վրա, ուստի անհրաժեշտ է հաշվարկել դրանց միջին տարեկան աճը: Նույն դատողություններով հաշվարկվում է նաև շարքից դուրս եկած միջին տարեկան կարողությունների քանակը: Ենթադրենք՝ տարվա ընթացքում դրանք շարքից դուրս են եկել հետևյալ ժամկետներում. ապրիլի 1-ին՝ 120.0 հազ. զույգ, հուլիսի 1-ին՝ 130.0 և սեպտեմբերի 1-ին՝ 50.0 հազ. զույգ կոշիկի թողարկման կարողություն:

Աղյուսակ 8.3

Կոշիկի արտադրության արտադրական կարողությունների հաշվեկշիռը (հազ. զույգ)

Հ/Հ	Ցուցանիշները	Հաշվետու տարի	Գալիք տարի
1.	Արտադրական կարողությունները տարվա սկզբին	2000.0	1900.0
2.	Արտադրական կարողությունների աճը տարվա ընթացքում	200.0	3000.0
3.	Արտադրական կարողությունների միջին տարեկան աճը	142.0	1150.0
4.	Շարքից դուրս եկած արտադրական կարողությունները տարվա ընթացքում	300.0	300.0
5.	Շարքից դուրս եկած միջին տարեկան արտադրական կարողությունները	172.0	155.0
6.	Արտադրական կարողությունները տարվա վերջում	1900.0	4600.0
7.	Գործող միջին տարեկան արտադրական կարողությունները	1970.0	2750.0
8.	Արտադրանքի թողարկումը	1500.0	2200.0
9.	Արտադրական կարողությունների օգտագործման գործակիցը	0.7614	0.8

Արտադրական կարողությունների միջին տարեկան աճը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\overline{X}_{տ.ա} = \frac{x_1 \cdot t_1 + x_2 \cdot t_{2+} \dots +_{x_n} \cdot t_n}{12} \quad (1)$$

որտեղ՝

$x_1, x_2.....x_n$-ը տարբեր ժամկետներում շարք մտած կարողությունների քանակներն են,

$t_1, t_2.....t_n$-ը՝ մինչև տարվա վերջ դրանց աշխատած ամիսների թվերը,

12-ը՝ տարվա ամիսների թիվն է:

Մեր օրինակում.

$$\bar{X}_{\text{տ.ա}} = \frac{100.0 \cdot 10 + 100.0 \cdot 7}{12} = \frac{170.0}{12} = 141.7 \approx 142.0 \text{ հազ. զույգ:}$$

Շարքից դուրս եկած միջին տարեկան կարողությունները հաշվարկվում են նույն բանաձևով, այն տարբերությամբ, որ այստեղ X_1, X_2 և այլն ընդունվում են որպես տարբեր ժամկետներում շարքից դուրս եկած կարողությունների քանակներ, իսկ t_1, t_2 և այլն՝ որպես մինչև տարվա վերջ դրանց չաշխատած ամիսների թիվ: Մեր օրինակում.

$$\bar{X}^1_{\text{տ.ա}} = \frac{120.0 \cdot 9 + 130.0 \cdot 6 + 50.0 \cdot 4}{12} = 171.6 \approx 172.0 \text{ հազ. զույգ:}$$

Արտադրական կարողությունները հաշվետու տարվա վերջում որոշվում են տարեսկզբի արտադրական կարողություններին (1-ին հոդված) գումարելով տարվա ընթացքում ավելացած կարողությունները (2-րդ հոդված) և հանելով տարվա ընթացքում շարքից դուրս եկած կարողությունների քանակը (4-րդ հոդված): Մեր օրինակում տարվա վերջում դրանք կկազմեն 1900.0 հազար զույգ (2000.0 + 200.0 – 300.0):

Իսկ գործող միջին տարեկան կարողությունները որոշվում են տարեսկզբի կարողություններին ավելացնելով կարողությունների միջին տարեկան աճը (3-րդ հոդված) և հանելով շարքից դուրս եկած կարողությունների միջին տարեկան քանակը (5-րդ հոդված).

2000.0 + 142.0 – 172.0 =1970.0 հազ. զույգ կոշիկ:

Արտադրական կարողությունների օգտագործման գործակիցը որոշ-վում է հետևյալ բանաձևով.

$$K = \frac{Q}{\bar{N}} \quad (2)$$

որտեղ՝

Q – ն՝ թողարկված արտադրանքի քանակն է,

$\bar{N}$ – ը՝ գործող միջին տարեկան արտադրական կարողությունների քանակը:

Մեր օրինակում՝

$$K = \frac{1500.0}{1970.0} = 0.7614$$

[1] Այստեղ և հետագայում ներկայացված բանաձևերում տառի վերևում դրված գծիկը ցույց է տալիս դրանց միջին մեծությունը:

Այժմ հաշվարկենք աղյուսակի երկրորդ սյունակի (գալիք տարվա) ցուցանիշները: Գալիք տարվա (պլանային) հաշվեկշռի հիման վրա հիմնավորվում է արտադրական ծրագիրը և որոշվում արտադրական կարողությունների նկատմամբ ընդհանուր և լրացուցիչ պահանջները: Պլանային հաշվեկշիռը մշակելու համար հիմք են ընդունվում մեքենա-սարքավորումների տեխնիկական հնարավորությունները, ինչպես նաև դրանց օգտագործման առաջադիմական նորմերը:

Գալիք տարվա հաշվեկշռի առանձին հոդվածների որոշման հաջորդականությունը փոխվում է, սակայն առաջին քայլով դարձյալ որոշում ենք արտադրական կարողությունները տարվա սկզբին, որը հավասար է հաշվետու տարվա վերջի դրությամբ առկա կարողություններին: Մեր օրինակում՝ 1900.0 հազ. զույգ:

Այնուհետև որոշում ենք թողարկվող արտադրանքի քանակը գալիք տարում, որն, ըստ էության, պահանջի հիման վրա որոշված է արտադրական ծրագրով: Ենթադրենք՝ նախատեսված է հաջորդ տարի թողարկել 2200.0 հազար զույգ կոշիկ: Այդ թիվը տեղադրում ենք պլանային հաշվեկշռի 8-րդ տողում: Հաջորդ քայլով պարզում ենք, թե ինչ չափով կարող ենք բարելավել արտադրական կարողությունների օգտագործման աստիճանը: Որքան բարձր լինի արտադրական կարողությունների օգտագործման գործակիցը, այնքան փոքր կլինի դրանց ընդհանուր պահանջարկը: Հետևաբար, վերջինս որոշելուց առաջ ուսումնասիրվում են գործող կարողությունների ՕԳ-ի բարձրացման ուղիները: Դրանք երկուսն են՝ *ինտենսիվ և էքստենսիվ*:

Ինտենսիվ ուղին ենթադրում է աշխատաժամանակի օգտագործման արդյունավետության բարձրացում, միավոր աշխատաժամանակում արտադրանքի թողարկման ավելացում:

Էքստենսիվ ուղին ենթադրում է սարքավորումների, մեքենաների աշխատաժամանակի երկարացում, հերթափոխության գործակցի մեծացում: Ենթադրենք՝ որակական տնտեսական վերլուծության միջոցով պարզել ենք, որ արտադրական կարողությունների գործակիցը կարելի է բարձրացնել և հասցնել 0.8-ի: Այժմ օգտագործելով (2) բանաձևը՝ կարող ենք որոշել արտադրական կարողությունների ընդհանուր պահանջը $(\overline{N})$ գալիք տարում:

$$\overline{N} = \frac{Q_1}{K_1} = \frac{2200.0}{0.8} = 2750.0 \text{ հազար զույգ կոշիկ:}$$

Այս թիվը գրանցում ենք 7-րդ սյունակում:

Այնուհետև պարզում ենք արտադրական կարողությունների լրացուցիչ պահանջարկը, որն անհրաժեշտ է շարքից դուրս եկող կարողությունները (ծառայության ժամկետը լրանալու պատճառով) փոխարինելու, արտադրության ծավալի աճի պահանջարկը լրացնելու համար: Հետևաբար, լրացուցիչ պահանջարկը կարող ենք որոշել հետևյալ բանաձևով՝

$$\overline{N}_{\text{լր.}} = \overline{N}_1 - N_{\text{տ.սկ.}} + \overline{N}_2,$$

որտեղ՝

$N_{տ.սկ}$ –ն՝ արտադրական կարողությունների քանակն է տարվա սկզբին,

$\bar{N}_2$ –ը՝ շարքից դուրս եկող կարողությունների միջին մեծությունը:

Մեր օրինակում $\bar{N}_2$ –ը դեռևս չունենք: Այն որոշելու համար ենթադրենք՝ տարվա ընթացքում շարքից դուրս են գալու ևս 300.0 հազ. զույգ կոշիկ արտադրելու արտադրական կարողություններ. հաջորդ տարվա ապրիլի 1-ին շարքից դուրս է գալու 120.0 հազ զույգի թողարկման կարողություն, 80.0-ը՝ հուլիսի 1-ին, իսկ մնացած 100.0-ը՝ հոկտեմբերի 1-ին: Վերոհիշյալ $\bar{X}$-ի բանաձևով կարող ենք հաշվարկել՝

$$\bar{X} = \frac{120.0 \cdot 9 + 80.0 \cdot 6 + 100.0 \cdot 3}{12} = 155.0$$ հազար զույգ կոշիկ:

Արտադրության ծավալի հավելաճի համար անհրաժեշտ արտադրական կարողությունները կարող ենք որոշել արտադրության ծավալի բացարձակ հավելաճի և նոր գործարկված կարողությունների օգտագործման գործակցի հարաբերությամբ: Ի դեպ, նոր գործարկված կարողությունների օգտագործման գործակիցը կարող է ավելի փոքր լինել՝ կապված այդ կարողությունների յուրացման ժամկետների հետ:

Հաջորդ քայլով որոշում ենք արտադրական կարողությունների նկատմամբ լրացուցիչ պահանջարկը՝

$\bar{N}_{\text{լր.}}$ = 2750.0 – 1900.0 + 300.0 =1150.0 հազ. զույգ կոշիկ:

Բնականաբար, այդքան արտադրական կարողությունները տարվա սկզբից միանգամից չեն գործարկվելու: Իմանալով դրանց գործարկման ժամկետները՝ պետք է պարզենք, թե ե՞րբ, որքա՞ն կարողություններ գործարկենք, որպեսզի դրանց միջին տարեկան մեծությունը կազմի 1050.0 հազ. զույգ: Սակայն այդպիսի հաշվարկները որոշակի դժվարությունների հետ են կապված: Ուստի օգտվում ենք սահմանված նորմատիվներից, որոնց համաձայն նախատեսվում է, որ նոր գործարկված (շարքից դուրս եկած կարողությունների) միջին տարեկան մեծությունը հավասար է դրանց ընդհանուր քանակի 35 տոկոսին: Օգտվելով $\frac{\bar{N}}{0.35}$ հարաբերությունից՝ կարող ենք մեր օրինակում որոշել արտադրական կարողությունների աճը տարվա ընթացքում:

Այն կկազմի՝ $\frac{1050.0}{0.35} = 3000.0$ հազար զույգ կոշիկ:

Արտադրական կարողությունների աճը կարելի է ապահովել երեք ճանապարհով՝

1. նոր կարողությունների գործարկում,
2. գործող կարողությունների վերակառուցում և ընդլայնում,
3. մեքենաների, սարքավորումների նորացում և տեխնոլոգիական գործընթացների կատարելագործում:

Տնտեսապես ավելի արդյունավետ են վերջին երկու ուղիները: Այդ դեպքում անհրաժեշտ չի լինում կապիտալ ներդրումներ կատարել գոր-

ծարանային վարչության շենքերի կառուցման, բնակելի տարածությունների շահագործման, նոր կոմունիկացիաների կառուցման համար և այլն:

Այժմ կարող ենք որոշել նաև արտադրական կարողությունների քանակը գալիք տարվա վերջում՝

$$N_{\text{տ.վ.}} = N_{\text{տ.սկ.}} - N_{\text{շ.դ.ե.}} + N_{\text{աճը}} = 1900.0 - 300.0 + 3000.0 = 4600.0 \text{ հազ.զույգ:}$$

Արտադրական ծրագիրը արտադրական կարողություններով հիմնավորելու համար անհրաժեշտ է պարզել նաև, թե ինչ արդյունավետությամբ պետք է օգտագործվեն հիմնական ֆոնդերը պլանավորվող ժամանակաշրջանում: Եթե արտադրական կարողությունները արտացոլում են հիմնական ֆոնդերի ներուժային հնարավորությունները և բնութագրում են վերջիններիս սպառողական նշանակությունը, ապա հիմնական ֆոնդերը չափվում են արժեքային արտահայտությամբ և ցույց են տալիս մեքենաների, սարքավորումների, շենքերի, կառույցների և այլնի արժեքը: Քանի որ տարբեր ճյուղերի ձեռնարկությունների արտադրական կարողությունները չեն կարող գումարվել, այդ պատճառով տնտեսության ճյուղերի արտադրական ներուժը չափվում է նաև հիմնական ֆոնդերի մեծությամբ: Բազմատեսակ արտադրանք թողարկող որոշ ճյուղերում և արտադրություններում արտադրական կարողությունները նույնպես հաշվարկվում են արժեքային արտահայտությամբ: Այդպիսի արտադրություններից են գործիքաշինական, ռետինատեխնիկական և այլ արտադրությունները, հիմնական ֆոնդերի օգտագործումը, որը կարող է բնորոշվել ֆոնդահատույցի և ֆոնդատարության ցուցանիշներով: Ֆոնդահատույցը ցույց է տալիս, թե որքան արտադրանք է ստացվում հիմնական ֆոնդերի մեկ միավորից, իսկ ֆոնդատարությունը՝ թե միավոր արտադրանքի վրա որքան հիմնական ֆոնդ է ծախսվում:

Հիմնական ֆոնդերի օգտագործումը պլանավորելու համար ելնում ենք հաշվետու ժամանակաշրջանում հիմնական ֆոնդերի օգտագործման վերլուծությունից: Պարզում ենք ֆոնդահատույցի մակարդակը և վերլուծում դրա վրա ազդող գործոնները: Դրանք նույնպես էքստենսիվ և ինտենսիվ գործոններ են: Էքստենսիվ գործոններից են՝ մեքենասարքավորումների աշխատաժամանակի օգտագործումը, սարքավորումների հերթափոխության գործակցի աճը, վերանորոգման ժամանակի կրճատումը և այլն: Վերլուծության միջոցով պարզվում է՝ կա՞ն արդյոք աշխատաժամանակի կորուստներ, որոշվում է հերթափոխության գործակիցը և համեմատվում առաջավոր ձեռնարկությունների նույն ցուցանիշի հետ, սարքավորումների օգտագործման ժամանակը համեմատվում է դրանց նորմատիվային ժամկետների հետ: Ֆոնդահատույցի բարձրացման ինտենսիվ գործոններն են՝ արտադրական սարքավորումների նորացումը, արտադրական գործընթացների մեքենայացումն ու ավտոմատացումը, նոր տեխնոլոգիաների արմատավորումը: Տեխնիկատնտեսական վերլուծության հիման վրա պարզվում է, թե ինչ չափով կարելի է բարձրացնել ֆոնդահատույցի ցուցանիշը և ապահովել արտադրական ծրագրի կատարումը:

Ամփոփում

1. Երկրի տնտեսության արդյունավետությունը պայմանավորված է իրական տնտեսության և դրա առանձին ճյուղերի զարգացման հնարավորությունների օգտագործմամբ: Այդ տեսակետից առանձնապես կարևորվում է արդյունաբերության ոլորտում իրականացվող տնտեսական քաղաքականությունը:

2. Արդյունաբերական քաղաքականությունը երկրի կառավարության միջոցառումների ամբողջությունն է՝ ուղղված արդյունաբերության աճի տեմպերի ավելացմանը, վերակառուցմանն ու վերականգնմանը, արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը, ներքին և արտաքին շուկաներում մրցունակ արտադրանքի աճին, ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, համաշխարհային տնտեսությանը հայրենական արդյունաբերության սերտաճմանը, գիտատեխնիկական նվաճումների ներդրմանը և այլն:

3. Արդյունաբերության զարգացման գործում կարևոր նշանակություն ունի գերակայությունների և հիմնական ուղղությունների ճիշտ որոշումն ու դրանց առաջնահերթ զարգացման ապահովումը, որն առնչվում է ներդրումային քաղաքականության կիրառման հետ:

4. Արդյունաբերական քաղաքականության կենսագործման գործում կարևոր նշանակություն ունի ճյուղի զարգացման իրատեսական ծրագրերի կազմումն ու դրա կատարման ապահովումը: Իսկ ծրագրերը կարող են իրատեսական լինել, եթե դրանք ապահովվեն անհրաժեշտ ֆինանսական, նյութական և աշխատանքային ռեսուրսներով ու հիմնական ֆոնդերով:

5. Արդյունաբերական քաղաքականության խնդիրները իրենց արտացոլումն են գտնում արդյունաբերական արտադրանքի գնահատման ցուցանիշներում, որոնք բաժանվում են բնաիրային և արժեքային արտահայտության ցուցանիշների: Բազմաթիվ ցուցանիշներ են օգտագործվում նաև արդյունաբերության արտադրական ծրագիրը հիմնավորելու համար:

Թեստեր և խնդիրներ

1. ***Արդյունաբերության զարգացմամբ է պայմանավորված.***
   ա. հասարակական արտադրության զարգացումը,
   բ. բնակչության կենսամակարդակի բարձրացումը,
   գ. ինչպես հասարակական արտադրության զարգացումը, այնպես էլ կենսամակարդակի բարձրացումը,
   դ. գիտության զարգացումը:

2. ***Արդյունաբերական արտադրանքի պահանջարկը ձևավորվում է.***
   ա. երկրի բնակչության և տնտեսության պահանջարկների գումարից,
   բ. երկրի բնակչության, տնտեսության ու արտահանման պահանջարկների գումարից,
   գ. երկրի բնակչության և արտահանման պահանջարկների գումարից,
   դ. բնակչության և տնտեսության, պետական պահուստների ձևավորման ու արտահանման պահանջարկների գումարից:

3. ***Արդյունաբերության զարգացման արտադրական ծրագրում ցուցանիշները լինում են.***
   ա. բնաիրային և արժեքային,
   բ. քանակական և որակական,
   գ. տեխնիկատնտեսական և տեխնիկաարտադրական նորմեր,
   դ. վերը թվարկվածները միասին:

4. ***Արդյունաբերական արտադրության արժեքային ցուցանիշներն են.***
   ա. համախառն արտադրանքն ու ապրանքային արտադրանքը,
   բ. ապրանքային արտադրանքն ու իրացված արտադրանքը,
   գ. համախառն արտադրանքն ու իրացված արտադրանքը,
   դ. համախառն, ապրանքային և իրացված արտադրանքները:

5. ***Ապրանքային արտադրանքը համախառն արտադրանքից տարբերվում է նրանով, որ նրա մեջ չի մտնում.***
   ա. պատրաստի արտադրանքը,
   բ. անավարտ արտադրանքի մնացորդների տարբերությունը,
   գ. տարայի արժեքը,
   դ. կիսաֆաբրիկատների արժեքը:

6. ***Ճյուղերում և ձեռնարկություններում համախառն ու ապրանքային արտադրանքների ծավալները համընկնում են, եթե.***
   ա. արտադրական պարբերաշրջանի տևողությունը կարճ է, անավարտ արտադրության ծավալը փոքր է,
   բ. արտադրական պարբերաշրջանի տևողությունը կարճ է, անավարտ արտադրության ծավալը մեծ է,
   գ. արտադրական պարբերաշրջանի տևողությունը երկար է, իսկ անավարտ արտադրության ծավալը փոքր է,

դ. արտադրական պարբերաշրջանի տևողությունը երկար է, իսկ անավարտ արտադրության ծավալը մեծ է:

7. *Արտադրանքի իրացման ծավալի ցուցանիշը որոշվում է.*
   ա. ապրանքային արտադրանքի ծավալով,
   բ. ապրանքային արտադրանքի ծավալի և տարվա սկզբին չիրացված արտադրանքի մնացորդի գումարով,
   գ. տարեվերջին չիրացված արտադրանքի մնացորդով,
   դ. ապրանքային արտադրանքի ծավալի և տարվա սկզբին չիրացված արտադրանքի մնացորդի գումարից հանելով տարվա վերջին չիրացված արտադրանքի մնացորդը:

8. *Արտադրական կարողությունների օգտագործման գործակիցը գալիք ժամանակաշրջանում կազմում է 0.8, իսկ արտադրված արտադրանքը արժեքային արտահայտությամբ հավասար է 400000: Որքան կկազմի արտադրական կարողությունների նկատմամբ պահանջարկը կամ արտադրական կարողությունների միջին տարեկան արժեքը գալիք ժամանակաշրջանում.* $K = \frac{Q}{\overline{N}}$ $\overline{N} = \frac{Q}{K}$
   ա. 300, բ. 340, գ. 500000, դ. 400:

9. *Որքա՞ն կկազմի արտադրանքի իրացման ծավալի ցուցանիշը, եթե հայտնի է, որ ապրանքային արտադրանքը կազմել է 370 հատ կամ 1850 դրամ /մեկ միավորի գինն է 5 դրամ/, տարվա սկզբին չիրացված արտադրանքի մնացորդը կազմել է 159 միավոր կամ 795 դրամ, իսկ տարվա վերջին չիրացված արտադրանքի ծավալը՝ 99 միավոր կամ 495 դրամ:*
   ա. 200 միավոր կամ 1000 դրամ,
   բ. 350 միավոր կամ 1750 դրամ,
   գ. 400 միավոր կամ 2000 դրամ,
   դ. 430 միավոր կամ 2150 դրամ:

10. *2000 թ. արտադրվել է (Q) 396000 դրամ համախառն արտադրանք, իսկ արտադրական կարողությունների միջին տարեկան արժեքը կազմել է ($\overline{N}$) 1980000 դրամ: Արտադրական կարողությունների օգտագործման գործակիցը կկազմի* $K = \frac{Q}{\overline{N}}$
   ա. 0.2, բ. 1.0, գ. 0.8, դ. 0.5:

Հիմնական հասկացություններ

Արդյունաբերական քաղաքականություն

Արդյունաբերության զարգացման համալիր ծրագիր

Արտադրանքի անվանացանկ

Արդյունաբերական արտադրանքի նյութական հաշվեկշիռ

Արտադրանքի տեսականի

Արդյունաբերական արտադրանքի նկատմամբ պահանջարկ

Համախառն արտադրանք

Ապրանքային արտադրանք

Իրացված արտադրանք

Արտադրական կարողություններ

Հիմնական արտադրական ֆոնդեր

Հիմնական ոչ արտադրական ֆոնդեր

Արտադրական կարողությունների օգտագործման գործակից

Արտադրական կարողությունների հաշվեկշիռ

Արտադրական կարողությունների և հիմնական ֆոնդերի օգտագործման բարելավման էքստենսիվ ուղի

Արտադրական կարողությունների և հիմնական ֆոնդերի օգտագործման ինտենսիվ ուղի

Հարցեր կրկնության համար

1. Որո՞նք են արդյունաբերական քաղաքականության բնորոշ գծերը:
2. Որո՞նք են ՀՀ արդյունաբերության զարգացման հիմնական ուղղությունները:
3. Որո՞նք են արդյունաբերության զարգացման հիմնական խնդիրները:
4. Ի՞նչ բաժիններով է կազմվում արդյունաբերության արտադրական ծրագիրը:
5. Որո՞նք են արդյունաբերական արտադրանքի բնեղեն ցուցանիշներ, և ի՞նչ միավորներով են դրանք չափվում:
6. Թվարկե՛ք արդյունաբերական արտադրանքի արժեքային ցուցանիշները:
7. Ինչպե՞ս են հաշվարկվում համախառն, ապրանքային և իրացվող արտադրանքները:
8. Ինչո՞ւ է արդյունաբերական արտադրանքը գնահատվում բնաիրային և արժեքային ցուցանիշներով:
9. Ի՞նչ ռեսուրսներով է հիմնավորվում արդյունաբերության արտադրական ծրագիրը:
10. Ինչպե՞ս է արդյունաբերության արտադրական ծրագիրը հիմնավորվում ըստ արտադրական կարողությունների և հիմնական ֆոնդերի:
11. Ինչպե՞ս է որոշվում արտադրական կարողությունների միջին տարեկան աճը:
12. Ինչպե՞ս է որոշվում շարքից դուրս եկած կարողությունների միջին տարեկան մեծությունը:
13. Ինչպե՞ս է որոշվում արտադրական կարողությունների օգտագործման գործակիցը:
14. Ի՞նչ գործոններ են ազդում արտադրական կարողությունների օգտագործման գործակցի բարելավման վրա:

ԳԼՈՒԽ 9

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երկրում վարվող ագրարային քաղաքականությունը վճռական դեր է խաղում տնտեսության կայունացման և հետագա զարգացման գործում:

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- ՀՀ ագրարային քաղաքականության էությունը և հիմնական գծերը:
- Գյուղատնտեսական արտադրության զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները:
- Գյուղատնտեսական արտադրության և տնտեսության մյուս ճյուղերի ու բնագավառների փոխադարձ կապերը, որոնք իրենց արտացոլումն են գտնում նշված ճյուղերի զարգացման ծրագրերում:
- Ագրոպարենային ծրագրի բովանդակությունը, բաժինները և ցուցանիշները:
- Որո՞նք են բուսաբուծության զարգացման խնդիրները և ցուցանիշները:
- Որո՞նք են գյուղատնտեսական մթերքների պետական ռեսուրսների ձևավորման հիմնախնդիրները:

9.1. ՀՀ ագրարային քաղաքականության էությունը և հիմնական գծերը

Ագրարային քաղաքականությունը երկրի կառավարության միջոցառումների ամբողջությունն է՝ ուղղված գյուղատնտեսական արտադրության աճի տեմպերի ավելացմանը, գյուղացիական տնտեսությունների գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ծավալների ավելացմանը, ցանքատարածությունների կառուցվածքի բարելավմանը, գյուղատնտեսական մթերքների կարևորագույն տեսակների գծով երկրի ներքին պահանջարկի բավարարմանը, ներքին և արտաքին շուկաներում գյուղմթերքների մրցունակության բարձրացմանը, գյուղատնտեսության մեջ նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև հիմնական ֆոնդերի արդյունավետ օգտագործմանը, գիտատեխնիկական նվաճումների և առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը և այլն:

Այդ միջոցառումների կարևորությունն ավելի է մեծանում ներկա փուլում: Հանրապետությունում տեղի ունեցած գործընթացները հանգեցրին երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմանը:

Բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ագրարային ոլորտի բարեփոխումները և սեփականաշնորհումը չտվեցին այն արդյունքները, որոնք նախօրոք ակնկալվում էին: Մասնավորապես, հողի սեփականաշնորհմանը անմիջապես չհաջորդեց գյուղատնտեսության սպասարկման և գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգի մասնավորեցումը, նոր շուկայական ենթակառուցվածքների ձևավորումը: Երկրի բնակչության ցածր գնողունակության, նախկին առևտրատնտեսական կապերի խզման և արտաքին հաղորդակցության ուղիների շրջափակման պատճառով զգալիորեն նվազեց գյուղացիական տնտեսությունների ապրանքանյութական մակարդակը, կրճատվեցին վերարտադրողական կարողությունները, գյուղատնտեսական արտադրանքի իրացման և նյութատեխնիկական մատակարարումների լուրջ դժվարություններ ստեղծվեցին: Գյուղատնտեսության հետագա զարգացումն ապահովելու և գյուղմթերքների նկատմամբ բնակչության ու տնտեսության պահանջարկը բավարարելու նպատակով 2004-2015թթ. համար կազմվել է ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարական ծրագիր, որը խնդիր է դնում ապահովել հանրապետությունում ագրարային բարեփոխումների քաղաքականության շարունակականությունը, հստակեցնում է ագրարային քաղաքականության ռազմավարական նպատակը, ուղղությունները: Այդ ռազմավարական ծրագրում հիմք ընդունելով անցած ժամանակահատվածում ագրարային բարեփոխումների արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով թույլ տրված սխալներն ու բացթողումները, իրատեսորեն գնահատելով գյուղատնտեսության հիմնախնդիրները, սահմանվում են գյուղատնտեսության զարգացման հիմնական ուղղությունները:

Ագրարային քաղաքականության հիմնական ռազմավարական նպատակն է նպաստել հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացմանը, բարձրացնել պարենային ապահովվածության մակարդակը և ավելացնել գյուղական բնակչության եկամուտները: Այդ նպատակներն իրագործելու համար սահմանվել են հետևյալ ենթանպատակները.

- ավելացնել գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը և բարձրացնել արտադրության արդյունավետությունը,
- արդյունավետ օգտագործել գյուղատնտեսության առկա արտադրական ներուժը՝ հողային, ջրային, աշխատանքային, գիտատեխնիկական ռեսուրսները, հաղթահարել գյուղական աղքատությունը, կրճատել գյուղական բնակչության արտահոսքը՝ ապահովելով ոչ գյուղատնտեսական զբաղվածության բավարար մակարդակ,
- բարելավել գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը, մեծացնել շահութաբեր արտադրանքի բաժինը,
- խորացնել միջազգային տնտեսական կապերը:

Չնայած այն հանգամանքին, որ շուկայական տնտեսության պայմաններում պետական միջամտությունը սահմանափակ է, այնուամենայնիվ վերոհիշյալ նպատակներին հասնելու համար պետությունը պետք է իրականացնի մի շարք գործառույթներ, որոնցից կարևորներն են.

աջակցությունը արտադրության խոշոր ինժեներական և սոցիալական ենթակառուցվածքների և օրենսդրական հիմքերի ստեղծմանը, ազատ մրցակցության ապահովմանը, գյուղատնտեսական հողերի մոնիտորինգը և պահպանությունը, անասունների և բույսերի համաճարակային և կարանտին հիվանդությունների կանխարգելումը, գիտատեխնիկական ապահովումը, աջակցությունը տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններին, զարգացման ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը, շուկայական հարաբերությունների խորացումը և այլն:

Ագրարային քաղաքականությունն ունի իր ռազմավարական խնդիրները, որոնք հանգում են հետևյալին.

- ընդլայնել ագրարային բարեփոխումները, զարգացնել շուկայական ենթակառուցվածքները և կատարելագործել տնտեսավարման ձևերն ու մեխանիզմները,
- ներդնել առաջադիմական ագրոտեխնիկական համակարգ, բարձրացնել սերմնաբուծության, սելեկցիայի, բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների արդյունավետությունը,
- զարգացնել տոհմային գործը և բարելավել անասնաբուծության համակարգը,
- զարգացնել գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրությունները և գյուղի սոցիալական ենթակառուցվածքները,
- բարձրացնել գյուղատնտեսության գոտիական մասնագիտացման աստիճանը և արդյունավետ տեղաբաշխել արտադրությունը:

Նշված խնդիրները միաժամանակ դրանք լուծելու հիմնական ուղղություններն են, որոնց հանգամանորեն կանդրադառնանք թեմայի մյուս հարցերը շարադրելիս:

Ագրարային քաղաքականության հիմքում պետք է դրվեն նաև գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունները:

9.2. Գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունները

Գյուղատնտեսության բնագավառում արդյունավետ տնտեսական քաղաքականություն վարելու և գյուղական բնակչության զբաղվածությունը ապահովելու, գյուղացիական տնտեսությունների արտադրությունն արդյունավետ կազմակերպելու, դրանց արտադրանքն իրացնելու, գյուղական բնակչության կենսամակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են գյուղատնտեսությանը:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններով: Այս առանձնահատկությունը մի կողմից արտահայտվում է բերքատվության մակարդակի, իսկ մյուս կողմից՝ տարբեր տարածաշրջաններում բերքի ստացման ժամկետների տարբերություններով: Բնական պայմանների տարբե-

ությունների պատճառով հողի պտղաբերությունը տարբեր է: Բանն այն է, որ հողն ունի համապիտանի հատկություն, և նույն հողակտորի վրա կարելի է աճեցնել բազմաթիվ մշակաբույսեր, բայց հողի բաղադրության և կլիմայի տարբերությունների պատճառով ապահովվում է բերքատվության տարբեր մակարդակ: Ուստի խնդիրն այն է, որ յուրաքանչյուր հողատարածության վրա աճեցվի այն մշակաբույսը, որը կապահովի բարձր արդյունավետություն:

Այս առանձնահատկության պատճառով լինում են բերրի և ոչ բերրի տարիներ, այսինքն՝ ժամանակի մեջ արդյունքները տատանվում են: Դա նշանակում է, որ պետք է գյուղատնտեսական արտադրությունն ապահովագրել որոշակի կայուն ֆինանսական ռեսուրսներով, իսկ շուկայական առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը կարգավորել պետական միջամտությամբ: Դա կարելի է իրականացնել մի կողմից՝ արտոնյալ գներով պետական գնումներ կատարելու, մյուս կողմից՝ գյուղատնտեսական մթերքների պետական ռեսուրսներ ստեղծելու ճանապարհով:

Բնակլիմայական առանձնահատկություններով է պայմանավորված նաև գյուղատնտեսական արտադրության սեզոնային բնույթը: Գյուղատնտեսական արտադրանքն արտադրվում է հիմնականում տարվա 2-րդ և 3-րդ եռամսյակներում, բայց դրա պահանջարկը կա ամբողջ տարվա ընթացքում: Հետևաբար գնային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գյուղատնտեսական արտադրանքի առաջարկի և պահանջարկի հարաբերակցության վրա սեզոնային գործոնի ազդեցության մեղմմանը: Բանն այն է, որ տարվա տարբեր ժամանակահատվածներում արտադրված գյուղատնտեսական մթերքների արտադրության ծախսերը նույնպես տարբեր են:

Գյուղատնտեսական արտադրության մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ աշխատանքի և արտադրության ժամանակը հավասար չեն. արտադրության ժամանակն ավելի երկար է, քան աշխատանքի ժամանակը: Իհարկե, այսպիսի անհամապատասխանություն առկա է նաև արդյունաբերության որոշ ճյուղերում՝ կաշվի, գինու, կոնյակի արտադրություններում, բայց դա զանգվածային բնույթ չի կրում: Այս առանձնահատկությամբ պայմանավորված՝ գյուղատնտեսության մեջ աշխատանքի և կապիտալի օգտագործման արդյունավետությունը համեմատաբար ցածր է, որը պետք է հաշվի առնել ինչպես աշխատուժի զբաղվածության, այնպես էլ պետական ֆինանսավարկային քաղաքականության մշակման ժամանակ:

Գյուղատնտեսական արտադրության առաձնահատկություններից մեկն էլ այն է, որ արտադրության հիմնական միջոցը՝ հողը, սահմանափակ է, հատկապես քիչ են լավագույն հողատարածությունները: Հասարակության պահանջմունքները չեն կարող բավարարվել միայն լավագույն հողատարածությունների օգտագործման միջոցով: Հրամայական պահանջ է առաջանում օգտագործել նաև վատ և վատագույն հողատարածությունները: Հողի սահմանափակությունը պահանջում է այս ճյուղի զարգացումն ապահովել ինտենսիվ ճանապարհով, այսինքն՝ միավոր հողատարածության վրա ավելի շատ կապիտալ և աշխատանք ներդնելու

ճանապահով: Հետևաբար, պետական ագրարային քաղաքականությունը մշակելիս պետք է նկատի ունենալ, որ արդյունքները գյուղատնտեսության մեջ ներդրված միջոցներից կարող են փոքր լինել և ուշ ստացվել: Այդ հանգամանքը պետք է հաշվի առնել հատկապես հարկային քաղաքականություն իրականացնելիս:

Գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններից պետք է համարել նաև այն, որ դրանում գործող տնտեսությունները համեմատաբար փոքր են և հիմնականում կազմավորված են գյուղական մեկ ընտանիքի սահմաններում: Դա լրջորեն խոչընդոտում է գյուղատնտեսական արտադրության արդյունավետ կազմակերպմանը և ավելի է դժվարացնում գյուղատնտեսական արտադրության մեքենայացման և քիմիացման խնդիրը, մանավանդ որ անցումային փուլում տնտեսությունները ֆինանսական միջոցների խիստ կարիք ունեն: Ներկայումս ՀՀ-ում մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, որից 1.1 հա՝ վարելահող, որը հնարավորություն չի տալիս իրականացնելու արդյունավետ տնտեսավարում և կիրառել առաջադիմական տեխնոլոգիաներ: Միաժամանակ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, վարելահողերի մի մասը նպատակային նշանակությամբ չի օգտագործվում, զգալիորեն նվազել են գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, խաղողի և պտղատու այգիների տարածքները: Գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է առաջիկայում ապահովել գյուղացիական տնտեսությունների խոշորացում, որը հնարավոր է միայն հարկային և վարկային ճիշտ քաղաքականության իրականացման միջոցով:

Գյուղատնտեսության մեջ առաջացած հիմնախնդիրները լուծելու նպատակով կազմված է ՀՀ ագրոպարենային համակարգի զարգացման ծրագիր, որում կարևոր տեղ են գրավում բուսաբուծության և անասնաբուծության զարգացման ենթածրագրերը:

9.3. Ագրոպարենային ծրագրի բովանդակությունը, բաժինները և ցուցանիշները

Ագրոպարենային համակարգի զարգացման ծրագիրը ընդգրկում է՝

1. ծրագրի նպատակն ու հիմնական խնդիրները,
2. ագրոպարենային համակարգի իրավիճակի համառոտ բնութագիրը,
3. ագրոպարենային համակարգի բարեփոխումների հիմնական միջոցառումները,
4. ծրագրի իրագործումից ակնկալվող արդյունքները,
5. ծրագրի իրականացման վերահսկողությունը:

Ծրագրի հիմնական նպատակն է համապատասխան մեխանիզմների ձևավորման և համալիր միջոցառումների իրականացման միջոցով հան-

ռապետության ագրարային հատվածում խորացնել և ամրապնդել տնտեսական բարեփոխումները, լուծել համակարգում կուտակված խնդիրները, նպաստել գյուղացիական տնտեսությունների ու տնտեսավարող մյուս սուբյեկտների գործունեության աշխուժացմանը, մրցունակ ապրանքային տնտեսությունների ձևավորմանը, գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության արդյունավետության բարձրացմանը:

Ծրագրի իրականացումը պայմաններ կստեղծի հանրապետության ագրոպարենային համակարգի զարգացման համար, առավել հուսալի կդարձնի երկրի պարենային պաշտպանվածությունը, կնպաստի բուսաբուծական հիմնական մթերքների նկատմամբ բնակչության պահանջմունքների բավարարմանը և արտաքին շուկա դուրս գալուն: Ծրագրի հիմնական խնդիրներն են.

- խորացնել և ամրապնդել բարեփոխումների ու մասնավորեցման գործընթացը,
- բարելավել գյուղացիական տնտեսությունների նյութատեխնիկական մատակարարումների ու արտադրական սպասարկումների վիճակը,
- լուծել գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրները,
- իրականացնել խթանող պետական տնտեսական քաղաքականություն, կատարելագործել կառավարման կառուցվածքը և բարձրացնել դրա արդյունավետությունը,
- ապահովել գյուղական համայնքների սոցիալական զարգացումը, ամրապնդել լեռնային և սահմանամերձ շրջանները:

Ծրագրի երկրորդ բաժնում համառոտ վերլուծվում են ագրոպարենային համակարգի ձեռքբերումները և այն խնդիրները, որոնց լուծման համար մշակվում է բարեփոխումների ծրագիր: Ըստ առանձին բնագավառների՝ ագրոպարենային համակարգի ձեռքբերումները բնութագրվում են հետևյալ տվյալներով: Ագրոպարենային համակարգը ներառում է 337 հազար գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսական, սննդի և վերամշակող արդյունաբերության, առևտրի և սպասարկման ձեռնարկություններ ու կազմակերպություններ:[1] Ագրոպարենային համալիրի նպատակաուղղված զարգացումը հնարավորություն կտա սեփական արտադրության արդյունավետությունը բարձրացնելու միջոցով ավելացնել բնակչության՝ պարենով ապահովվածության աստիճանը և բարելավել կենսամակարդակը:

Ագրոպարենային համակարգում իրականացված բարեփոխումների շնորհիվ գյուղատնտեսական արտադրության վերականգնման ու հետագա զարգացման նախադրյալներ են ստեղծվել: Ներկայումս արդեն կասեցվել են արտադրության անկումային միտումները, և նկատվում են կայունացման, իսկ որոշ ճյուղերում՝ նաև աճի դրսևորումներ:

Սակայն առաջադիմական միտումներին զուգահեռ, համակարգի զանազան ճյուղերում առաջացել են լուծում պահանջող մի շարք հիմնա-

[1] ՀՀ ագրոպարենային համակարգի 1998-2002թթ. բարեփոխումների ծրագիր, ՀՀ գյուղնախարարություն, Երևան, 1998թ.:

խնդիրներ: Բանն այն է, որ դեռևս չեն ձևավորվել գյուղի արտադրական ներուժի լիարժեք օգտագործման և գյուղատնտեսական արտադրությունն արդյունավետ վարելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ, չեն լուծվել գյուղացիական տնտեսությունների նյութատեխնիկական մատակարարումների ու արտադրական սպասարկումների կազմակերպման խնդիրները: Գյուղացիական տնտեսությունների մեծ մասը իրենց փոքր չափերի ու արտադրանքի իրացման մեխանիզմների անկատարության պատճառով վերածվել են մանր բնամթերային տնտեսությունների, որոնց բազայի վրա անհնար է կազմակերպել ապրանքային արտադրություն: Ոռոգելի հողերի օգտագործման էական դժվարություններ են առաջացել, բացակայում են ոռոգման ջրով ապահովելու հատուկ համակարգերը:

Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխությունները, վերամշակող ձեռնարկությունների ցածր վճարունակությունը, անմրցունակ արտադրատեսակների թողարկումը և արտադրանքի իրացման դժվարությունները բացասաբար են անդրադարձել նաև սննդի վերամշակող արդյունաբերության վրա: Ագրոպարենային համակարգի ձեռնարկությունները սեփական և փոխառու միջոցների անբավարարության պատճառով հայտնվել են ֆինանսական ծանր վիճակում և, ըստ էության, զրկված են շրջանառու միջոցների համալրման և ընդլայնված վերարտադրություն կազմակերպելու հնարավորություններից:

Որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել գյուղատնտեսական արտադրությունում: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը ՀՆԱ մեջ 2003թ. կազմել է մոտ 25.3%[2]: Գյուղացիական տնտեսությունները հիմնական հողօգտագործողներն են, որոնց սեփականաշնորհվել է վարելահողերի 71.7%-ը, բազմամյա տնկարկների՝ 73.3 և խոտհարքների՝ 48.4%-ը[3]: Գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան 98%-ը արտադրվում է գյուղացիական տնտեսությունների (մասնավոր հատվածի) կողմից: Նոր պայմաններում արմատապես փոխվել է հողաշինարարության պատկերը, քանի որ հողատարածությունները մասնատվել են ավելի քան 1.2 մլն հողակտորների: Այդ պայմաններում առանձնահատուկ կարևորություն է ստացել ոռոգման համակարգի և դրա ներտնտեսային ցանցի արդիականացման խնդիրը:

Անցման շրջանում դրական տեղաշարժեր գրանցվեցին բուսաբուծության ճյուղում՝ հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի արտադրության բնագավառում: Աստիճանաբար փոխշահավետ պայմանագրային հարաբերություններ են ձևավորվում արտադրող և վերամշակող կազմակեպությունների միջև:

Աղետալի երկրաշարժի, արտաքին հաղորդակցության ուղիների շրջափակման և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների կրճատման պատճառով հատկապես տուժեց անասնապահությունը:

---

[2] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2004թ., էջ 214, 300:

[3] ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն (նախագիծ), ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, 2004թ., էջ 4:

Սկզբնական շրջանում զգալիորեն կրճատվեցին տավարի, խոզի, ոչխարի գլխաքանակները: Ներկայումս այդ բնագավառում նկատվում են որոշակի կայունացման միտումներ: Զարգացման բարձր տեմպեր ունի թռչնաբուծությունը, նկատելի առաջընթաց կա տավարաբուծությունում, խոզաբուծությունում: Իսկ վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը և արտահանման ծավալների համեմատական աճը որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմացմանը և տնտեսության ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Զգալի փոփոխություններ են կատարվել սննդի և վերամշակող արդյունաբերության արտադրական ենթակառուցվածքներում: Սեփականաշնորհվել է ճյուղի ձեռնարկությունների գերակշռող մասը, որը խթանել է անհատ ձեռներեցների ու տնտեսավարող այլ սուբյեկտների գործունեությունը՝ սննդամթերքի արտադրության կազմակերպման առումով: Պարենամթերքի ապրանքային արտադրության ծավալում ավելանում է արտոնագրված տնտեսավարող սուբյեկտների բաժինը:

Հանրապետությունում իրականացված միջոցառումների, պարենային հացահատիկի ներկրումների և գյուղացիական տնտեսություններից հացահատիկի գնումների կազմակերպման շնորհիվ լուծվել են բնակչությանը հացով ապահովելու և պահուստային պաշարներ ստեղծելու հիմնախնդիրները: Որոշակի աշխատանքներ են կատարվել վերամշակող արդյունաբերության մեջ ներդրումներ կատարելու, թողարկվող արտադրատեսակները արտահանելու ուղղությամբ: Չնայած այդ ձեռքբերումներին՝ զգալի դժվարություններ են ստեղծվել նաև վերամշակող արդյունաբերության մեջ: Բանն այն է, որ դեռևս ցածր է արտադրական կարողությունների օգտագործման աստիճանը, որը պայմանավորված է ձեռնարկությունների տեխնիկական ցածր մակարդակով և ֆինանսական սուղ միջոցներով, հումքի ներկրման համար անհրաժեշտ տրանսպորտային ծախսերի աճով, արտադրանքի ցածր որակով, ոչ պատշաճ փաթեթավորմամբ, մարքեթինգի վատ կազմակերպմամբ, ներքին շուկայում պահանջարկի նվազմամբ:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման կարևորագույն խնդիրներից է գյուղացիական տնտեսությունների ջրատնտեսական, տեխնիկական, տեխնոլոգիական, վառելիքաէներգետիկ և այլ սպասարկումների բարելավումը:

Հաշվի առնելով հանրապետության բնակլիմայական պայմանները՝ առանձնահատուկ կարևորություն ունի ոռոգման խնդրի լուծումը, քանի որ վարելահողերի 80%-ի վրա մշակաբույսերի աճը հնարավոր է միայն ոռոգման պայմաններում: Ջրային տնտեսության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել միասնական պետական քաղաքականություն, բարելավել ջրատնտեսական կառույցների տեխնիկական վիճակը, կատարելագործել ոռոգման համակարգի կառավարման կառուցվածքը, իրականացնել ոռոգման ջրի հիմնավորված սակագնային քաղաքականություն, բարձրացնել այդ համակարգի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը, նվազեցնել կորուստները:

Գյուղացիական տնտեսությունների պահանջներին չի համապատասխանում և խոչընդոտում է արտադրության ինտենսիվացման մակարդակի բարձրացումը նաև նյութատեխնիկական մատակարարումների և սպասարկումների ներկա վիճակը: Համապատասխան կառույցների կողմից սահմանված բարձր գների, սպասարկումների ցածր որակի և այլ պատճառներով գյուղացիական տնտեսությունները հաճախ հրաժարվում են այդ ծառայություններից ու սպասարկումներից: Գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության հետևանքով տարիներ շարունակ գյուղտեխնիկան չի նորացվում, իսկ եղածները շահագործվում են նորմատիվով նախատեսվածից 10-15 տարի ավելի:

Ծրագրի երրորդ բաժնում նախատեսվում են այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել ագրոպարենային համակարգի առանձին բնագավառներում առաջացած խնդիրները լուծելու համար: Դրանք, ինչպես նաև ծրագրերում օգտագործվող ցուցանիշներն ու դրանց հաշվարկման մեթոդիկան կներկայացնենք առանձին ենթածրագրերում:

Գյուղատնտեսության զարգացման ենթածրագրերում օգտագործվում են բազմաթիվ ցուցանիշներ, որոնց հաշվարկման նպատակն է բնութագրել ինչպես գյուղատնտեսական ռեսուրսների ծավալը, այնպես էլ դրանց օգտագործման արդյունավետությունն ու գյուղմթերքների արտադրության ծավալները: Ելնելով դրանից՝ ծրագրում օգտագործվող ցուցանիշները բաժանվում են երեք խմբի՝

1. ռեսուրսային ցուցանիշներ (հողատարածություններ, վարելահողեր, դրանց կառուցվածքը, անասունների թվաքանակը և այլն),
2. արդյունավետության ցուցանիշներ (1 հա բերքատվությունը, մեկ կենդանու մթերատվությունը, բրդատվությունը, կաթնատվությունը, ձվատվությունը և այլն),
3. արդյունքային ցուցանիշներ (գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրության ծավալները՝ ըստ մշակաբույսերի, անասնաբուծության արտադրանքը և այլն):

9.4. Բուսաբուծության զարգացման խնդիրները և ցուցանիշները

Գյուղատնտեսությունը, ինչպես նշվեց, բավարարում է պարենամթերքների նկատմամբ բնակչության պահանջարկը և արդյունաբերության պահանջարկը՝ գյուղատնտեսական հումքի նկատմամբ: Հողի մասնավորեցումից հետո գյուղատնտեսության բնագավառում առաջացան մի շարք դժվարություններ, որոնք գյուղատնտեսության տարբեր ենթաճյուղերում՝ բուսաբուծության և անասնաբուծության մեջ, դրսևորվում են տարբեր ձևերով:

Այսպես, բուսաբուծության արդյունավետության վրա բացասաբար են ազդում օգտագործվող գյուղատնտեսական հողատեսքերի փոքր չա-

փերը, կտրտվածությունն ու մասնատվածությունը, որոնք խոչընդոտում են աշխատանքների մեքենայացումը, ցանքաշրջանառությունների կիրառումը և ագրոտեխնիկական համալիր միջոցառումների իրականացումը: Այդ պայմաններում հողագործական, խոշոր ապրանքային տնտեսությունների, ընկերությունների ստեղծման և կոոպերացման բավարար աշխատանքներ չեն կատարվում:

ՀՀ գյուղատնտեսական օգտագործելի հողատեսքերը 1997թ. տվյալներով կազմում են 1391.4 հազ. հա, այդ թվում՝ վարելահողեր՝ 494.3 հազ. հա (35.5%), բազմամյա տնկարկներ՝ 63.8 հազ. (4.6%), խոտհարքներ՝ 138.9 հազ. (10.0%), արոտներ՝ 694 հազ. հա[4](49.9%):

Չեն մշակվել տասնյակ հազարավոր հեկտար վարելահողեր: Տարեցտարի կրճատվում են խաղողի և պտղատու այգիները, որի պատճառը գնման ցածր գների և իրացման հստակ մեխանիզմների բացակայությունն է: Իրացման և էներգետիկ դժվարությունների հետևանքով մշակությունից դուրս են մնացել տնտեսական բարձր արդյունքներ ապահովող ծխախոտն ու խորդենին: Սակայն վերջին տարիներին «Գրանդ Տոբակո» ընկերության արդյունավետ աշխատանքի շնորհիվ էապես փոխվել է գյուղացու վերաբերմունքը ծխախոտի արտադրության նկատմամբ: Ներքին շուկայի թույլ պաշտպանվածության պատճառով սեփական արտադրության բանջարեղենի արժեքավոր շատ տեսակներ դժվարությամբ են իրացվում ու վերամշակվում:

Անմխիթար վիճակում է բնական կերային ռեսուրսների՝ արոտների օգտագործումը, կրճատվել են կերային մշակաբույսերի ցանքատարածությունները[5]: Արդյունքում՝ գյուղատնտեսական հողատեսքերի գրեթե 60%-ի օգտագործումը խաթարված է, արմատական բարելավման կարիք ունեն վարելահողերի 30%-ը և բնական կերահանդակների 54%-ը: Արարատյան հարթավայրում 28 հազ. հա հողերի մելիորատիվ վիճակը տագնապալի է, որի պատճառը գերխոնավությունն ու կրկնակի աղակալումն է:

Ջրամատակարարման համակարգի և գյուղտեխնիկայի հնարավորությունները չեն համապատասխանում այսօրվա պահանջներին և օգտագործվում են ցածր արդյունավետությամբ: Ելնելով ստեղծված իրավիճակից, բուսաբուծության առջև ծառացել են հետևյալ հիմնական խնդիրները.

- մշակությունից դուրս մնացած վարելահողերի աստիճանական ներառումը շրջանառության մեջ,
- հողերի (հատկապես Արարատյան հարթավայրի) մելիորատիվ վիճակի բարելավումը,
- սերմնաբուծության և սորտաթարմացման խնդիրների լուծումը,
- բուսաբուծական մթերքների արտադրության ծավալների ավելացումը այն հաշվով, որ առավել չափով բավարարվի բնակչության պահանջարկը դրանց նկատմամբ,

[4] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2004, էջ 299:
[5] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2004, էջ 304:

- բարձր արդյունավետ ապրանքային գյուղացիական տնտեսությունների ստեղծումը:

Նշված խնդիրները լուծելու համար գյուղատնտեսության բարեփոխումների ծրագրերով նախատեսվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնց նպատակն է բուսաբուծության ինտենսիվ զարգացման ապահովումը, գյուղացիական տնտեսություններում, սերմնաբուծական ձեռնարկություններում հացահատիկի, կարտոֆիլի, խաղողի, պտղի և բանջարեղենի արտադրության ավելացումը, բնական արոտների արդյունավետ օգտագործումը, գյուղացիական տնտեսություններին սպասարկող կառույցների օգտագործման արդյունավետության բարձրացումը և այլն:

Երկրի ագրոպարենային համակարգի զարգացման ծրագրի խնդիրներն արտացոլվում են ծրագրի առանձին ենթաբաժիններում հաշվարկվող ցուցանիշներում: Գյուղատնտեսական արտադրության հիմնական ցուցանիշը համախառն արտադրանքն է, որը հաշվարկվում է բուսաբուծության և անասնաբուծության համախառն արտադրանքի գումարով: Այդ ցուցանիշը հնարավորություն է տալիս մի կողմից՝ որոշել գյուղատնտեսական արտադրության զարգացման մակարդակը, իսկ մյուս կողմից՝ պարզել ճյուղի արտադրանքի բաժինը հանրապետության ՀՆԱ-ում:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը որոշվում է ինչպես ընթացիկ, այնպես էլ համադրելի գներով: Վերջինիս միջոցով հնարավոր է պարզել գյուղատնտեսական արտադրության աճի տեմպերը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը որոշելիս առաջին հերթին հաշվարկվում են բուսաբուծության զարգացման ցուցանիշները, որոնք կարելի է բաժանել երեք խմբի՝

- հողատարածությունները և դրա կառուցվածքը բնութագրող ցուցանիշներ,
- բուսաբուծության համախառն բերքը՝ ըստ առանձին մշակաբույսերի,
- բերքատվությունը՝ ըստ առանձին մշակաբույսերի:

Բուսաբուծության համախառն բերքը որոշելու համար անհրաժեշտ է իմանալ վարելահողերի մակերեսը: Բանն այն է, որ հողատարածությունների մի մասն օգտագործվում է որպես վարելահող, իսկ մյուսը՝ որպես արոտավայր: Վարելահողերի ծավալը որոշելու նպատակով կազմվում է վարելահողերի հաշվեկշիռ, որտեղ ցույց են տրվում.

ա) մշակվող վարելահողերը տարվա սկզբին,

բ) վարելահողերի կրճատումը (այդ թվում՝ խոշոր ջրամբարների կառուցման, արդյունաբերական շինարարության, բազմամյա տնկարկների պատճառով),

գ) վարելահողերի աճը (այդ թվում՝ ճահիճների չորացման, խամ ու խոպան հողերի յուրացման, չօգտագործված վարելահողերի մշակման և այլ պատճառներով),

դ) վարելահողերը գալիք ժամանակաշրջանում:

Առանձին մշակաբույսերի աճեցման համար նախատեսվող վարելահողերը ընտրվում են՝ հաշվի առնելով գյուղատնտեսական առանձին շրջանների տնտեսական առանձնահատկությունները, ջրով ապահովվածությունը, կապիտալ ներդրումների նկատմամբ պահանջը: Հաշվի են առնվում նաև քիմիացման մակարդակը, ցանքատարածությունների կառուցվածքի բարելավման հնարավորությունները, համապատասխան ցանքաշրջանառության կիրառումը, մելիորացիան և մասնագիտացումը:

Մեծ ուշադրություն է դարձվում այն մշակաբույսերի վարելահողերի ընտրությանը, որոնց աճեցման համար անհրաժեշտ են առանձնահատուկ կլիմայական պայմաններ (շաքարի ճակնդեղ, ծխախոտ և այլ տեխնիկական մշակաբույսեր): Գյուղատնտեսական մշակաբույսերի կառուցվածքը և դրանց ցանքատարածությունը որոշվում է՝ ելնելով նախորդ տարվա բերքատվությունից, աճից և բուսաբուծական մթերքների նկատմամբ պահանջարկից:

Առանձին մշակաբույսերի վարելահողերի չափը որոշելիս անհրաժեշտ է ընտրել տվյալ շրջանի համար արդյունավետ ցանքաշրջանառություն: Ցանքաշրջանառությունը միևնույն հողամասում մշակաբույսերի մշակման՝ խիստ սահմանված կարգով հերթականությունն է: Այն ժամանակաշրջանը, որի ընթացքում յուրաքանչյուր հողամասում ցանվում են շրջանառության մեջ դրված բոլոր մշակաբույսերը, կոչվում է ցանքաշրջանառության ռոտացիա: Ռոտացիան տևում է այնքան տարի, որքան մշակաբույս կա ցանքաշրջանառության մեջ: Իսկ եթե բերքը մեկ տարում ստացվում է երկու անգամ, ապա ռոտացիան կրկնակի կրճատվում է: Ցանքաշրջանառությունը հողի պտղաբերության բարձրացման, բերքատվության ավելացման, անասնաբուծության համար կերի կայուն բազայի ստեղծման, հողի օգտագործման բարելավման կարևոր միջոցառումներից մեկն է:

Բուսաբուծության ծրագրի մյուս կարևոր ցուցանիշը բերքատվությունն է:

Բերքատվության մակարդակի բարձրացմանը նպաստում են հողի պտղաբերության ավելացումը, հանքային և օրգանական պարարտանյութերի խելամիտ օգտագործումը, հողերի մելիորացիան, հակաէրոզիոն միջոցառումների իրականացումը, սերմնաբուծության բարելավումը, բերքատու տեսակների և հիբրիդների ներդրումը, մշակաբույսերի վնասատուների, կրծողների, հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումները, բերքի կորստի բացառումը, վարելահողերի կառուցվածքի բարելավումը, ճիշտ ցանքաշրջանառության կիրառումը, ոռոգելի հողատարածությունների ավելացումը, ագրոտեխնիկական բոլոր միջոցառումների և բերքահավաքի ժամանակին կազմակերպումը: Տարբերում ենք բերքատվության երկու ցուցանիշ՝

1. մի շարք տարիների փաստացի միջին բերքատվությունը,
2. բերքը արմատի վրա:

Առաջինը հաշվարկվում է ըստ ամբարային կամ պահեստային բերքատվության և ցույց է տալիս մշակաբույսերի հավաքված, պահեստավորված բերքը: Իսկ բերքը արմատի վրա ցուցանիշը վերաբերում է դեռևս

չհավաքված բերքին, որն արմատի վրա է: Դրանց տարբերությունը նրանում է, որ կարող է արմատի վրա լավ բերք աճեցվել, բայց զանազան պատճառներով պայմանավորված՝ ավելի քիչ բերք հավաքվել: Բերքատվության հաշվարկման համար հիմք է ընդունվում փաստացի պահեստային բերքատվությունը: Ունենալով առանձին մշակաբույսերի ցանքատարածությունները և դրանց բերքատվությունը, կարող ենք որոշել բերքատվության ցուցանիշը՝ ըստ առանձին մշակաբույսերի, համախառն բերքի ցուցանիշը (բերքատվություն՝ բազմապատկած ցանքատարածությամբ):

9.5. Անասնաբուծության զարգացման խնդիրները և ցուցանիշները

Գյուղատնտեսական արտադրության երկրորդ կարևորագույն ճյուղը անասնաբուծությունն է, որի գլխավոր նպատակը անասնաբուծական մթերքների նկատմամբ բնակչության և պետության պահանջարկի առավել լրիվ բավարարումն է: Չնայած դրան, բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով այսօր դեռևս հնարավոր չէ այդ գլխավոր խնդիրը լուծել: Բանն այն է, որ անցումային շրջանում էական դժվարություններ առաջացան նաև անասնաբուծության բնագավառում: Այսպես, հողի, գյուղտեխնիկայի և անասունների սեփականաշնորհման սկզբնական փուլում թույլ տրված սխալների, ներկրվող հատիկային կուլտուրաների ծավալների աննախադեպ կրճատման, սեփական կերարտադրության սուղ հնարավորությունների պատճառով զգալիորեն կրճատվեցին անասունների գլխաքանակը և անասնաբուծական մթերքների արտադրության ծավալները: ՀՀ-ում 1991-1993թթ. տավարի գլխաքանակը կրճատվեց 65.2 հազար, խոզերինը՝ 143.0 հազ., ոչխարներինը՝ 287.1 հազ. գլխով, կաթի արտադրությունը նվազեց 14.5 հազ., մսինը՝ 51.9 հազ. տոննայով: Հետագայում անասնաբուծության մեջ նկատվեցին կայունացման որոշ միտումներ. և՛ անասնաբուծական մթերքների արտադրության ծավալը, և՛ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը սկսեց աստիճանաբար ավելանալ: Չվի արտադրության աճը հնարավորություն է տվել գրեթե վերացնել դրա ներմուծումը: Սակայն անասնաբուծության մեջ դարձյալ կան բազմաթիվ դժվարություններ ու չլուծված խնդիրներ: Ամբողջությամբ չեն օգտագործվում խոզաբուծական և թռչնաբուծական ֆաբրիկաների կարողությունները, իսկ դրանց մի մասն էլ ընդհանրապես չի գործում: Բրդի իրացման դժվարությունների հետևանքով նվազում է ոչխարների գլխաքանակը և ոչխարաբուծության արդյունավետությունը: Բարձիթողի վիճակում է տոհմային և արհեստական սերմնավորմամբ հոտի վերարտադրության կազմակերպման գործը: Անասնաբուծության զարգացման բնագավառում ստեղծված իրավիճակը պահանջում է լուծել հետևյալ հիմնական խնդիրները.

- բարելավել տոհմային գործի և հոտի վերարտադրության կազմակերպման վիճակը, վերականգնել արհեստական սերմնավորման աշխատանքները,
- բարձրացնել դաշտային կերարտադրության և արոտամարգագետնային տնտեսության արդյունավետությունը,
- ընդլայնել անասնաբուծական մթերքների արտադրության ծավալները և մեծացնել դրանց նկատմամբ պահանջարկի բավարարման աստիճանը,
- ընդլայնել կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման աշխատանքները:

Նշված խնդիրները լուծելու համար գյուղատնտեսության բարեփոխումների ծրագրով նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է տնտեսություններում, անասնաբուծության մեջ վերականգնել տոհմային կայանների գործունեությունը, կազմակերպել տոհմային անասունների բուծումն ու վաճառքը, վերականգնել թռչնաֆաբրիկաները և խոզաբուծական համալիրները, արդյունավետ օգտագործել բնական արոտավայրերը, կազմակերպել անասնաբուժական ծառայություններ և այլն:

Անասնաբուծության զարգացման ծրագրում նույնպես հաշվարկվում են մի շարք ցուցանիշներ, որոնք բնութագրում են անասնաբուծական մթերքների արտադրության ծավալը, մեկ անասունի միջին մթերատվությունը, անասունների գլխաքանակը և կերային բազան:

Այդ ցուցանիշները որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել անասնաբուծության առանձնահատկությունները՝ կերային բազայի զարգացման հնարավորությունները, անասնահոտի ցեղային կառուցվածքը, անասնաբուծական մթերքների սպառման աշխարհագրությունը, փոխադրման պայմանները, հոտի վերարտադրության բնական հնարավորությունները և տարբեր անասունների բազմացման աճի տեմպերը: Անասնաբուծական մթերքների ծավալը որոշելու համար մի շարք հաշվարկներ են կատարվում անասունների գլխաքանակի և մթերատվության վերաբերյալ: Անասունների գլխաքանակը որոշելու համար մշակվում են հոտի շրջանառության հաշվեկշիռներ, որոնց միջոցով պարզվում են հոտի սեռահասակային կազմի փոփոխությունը տարվա ընթացքում, հոտի բնական աճը, անասունների վաճառքը, արագ բազմացող կենդանիների աճի բարձր տեմպերը (խոզեր, թռչուններ և այն), արդյունաբերական հիմքի վրա մսի, կաթի, ձվի և այլ մթերքների արտադրման հնարավորությունները: Դա նշանակում է, որ անասունների գլխաքանակը որոշվում է հոտի շրջանառության մեթոդով: Հոտի շրջանառություն ասելով հասկանում ենք դրա սեռահասակային կազմի փոփոխությունը տարվա ընթացքում: Անասնագլխաքանակի շարժն արտացոլվում է հոտի շրջանառության հաշվեկշռում, որտեղ առանձին տողերով ցույց են տրվում անասնահոտի տեսակները, նրանց տարիքային խմբերը: Այնուհետև ցույց են տրվում անասունների գլխաքանակը տարվա սկզբին, անասնագլխաքանակի աճը, այդ թվում՝ բնական վերարտադրության և գնումների

հաշվին: Հաշվեկշռի ելքային մասում ցույց է տրվում անասունների անցումը ավելի բարձր տարիքային խումբ, սպանդը, կորուստները: Ունենալով անասունների գլխաքանակը տարվա սկզբին և դրա փոփոխությունները տարվա ընթացքում, կարող ենք որոշել անասնահոտի գլխաքանակը տարվա վերջին:

Հաշվարկվում են նաև մթերատվության ցուցանիշները՝ մեկ կովի կաթնատվությունը, մեկ ոչխարի միջին տարեկան բրդատվությունը, մեկ ածան հավի միջին տարեկան ձվատվությունը, մսատվությունը և այլն:

Անասնաբուծության զարգացման համար կարևոր նշանակություն ունի կերային բազայի զարգացումը: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել բոլոր կերաբույսերի մշակման միջոցառումներ: Անասնակերի նկատմամբ պահանջը հաշվարկվում է անասնաբուծական մթերքների ծավալի և զոոտեխնիկական նորմերի արտադրյալով: Զոոտեխնիկական նորմերով նախատեսվում է անասնաբուծական առանձին մթերքների մեկ միավորի արտադրության համար անհրաժեշտ կերամիավորների քանակը: Կերամիավորներով ստացված անասնակերի պահանջը հնարավոր է այնուհետև որոշել ըստ անասնակերի առանձին տեսակների: Անասնակերը բաժանվում է չորս խմբի՝ կանաչ զանգված, կոշտ կեր, հյութալի կեր և համակցված կեր: Զոոտեխնիկական նորմերով սահմանված է կոնկրետ կերատեսակի քանակության համապատասխանությունը մեկ կերամիավորին:

9.6. Գյուղատնտեսական մթերքների պետական ռեսուրսների ձևավորման հիմնախնդիրները

Գյուղատնտեսական արտադրության զարգացման ծրագրում հաշվարկվում են նաև գյուղատնտեսական մթերքների կարևորագույն տեսակների պետական ռեսուրսները: Դրանք ռազմավարական նշանակություն ունեցող կենսամթերքներ են՝ հացամթերք, մսամթերք և պահածոյացված կաթնամթերք, որոնց պետական ռեսուրսների ստեղծումն անհրաժեշտ է ազգային անվտանգության ապահովման, համապետական կարիքների բավարարման, ինչպես նաև երկրի բանակի կերակրման համար: Նախկինում գյուղմթերքների պետական ռեսուրսները ստեղծվում էին պետական գնումների ճանապարհով, որոնք սահմանվում էին կենտրոնացված կարգով և պարտադիր էին բոլոր տնտեսությունների համար: Ներկայումս հնարավոր չէ այդպիսի քաղաքականություն վարել, սակայն գուղացիական տնտեսությունները կարող են իրենց արտադրանքը վաճառել պետությանը՝ պետական ռեսուրսներ ձևավորելու համար:

Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պետական պահանջարկը որոշելիս մշակվում են այդպիսի մթերքների հաշվեկշիռներ, որոնցով որոշվում են նաև դրանց արտադրության ծավալները: Գյուղատնտեսական մթերքների պահանջարկի որոշման հիմքում դրվում են այդ մթերքների սպառման գիտաբժշկական նորմերը,

իսկ ընթացիկ կարճաժամկետ ծրագրերը մշակելիս հաշվի են առնում արտադրության և սպառման մակարդակը, ինչպես նաև արտադրության հնարավոր զարգացումն ու սպառման աճը: Գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պետական պահանջարկը բաղկացած է քաղաքային բնակչության պահանջարկից, պետական պահուստների լրացման, գյուղատնտեսական մթերքների արտահանման և գյուղատնտեսական հումքի նկատմամբ արդյունաբերության պահանջարկից: Գյուղատնտեսական մթերքների նկատմամբ քաղաքային բնակչության պահանջարկը որոշվում է քաղաքային բնակչության թվաքանակի և մեկ բնակչի կողմից սպառվող մթերքի տարեկան ծավալի արտադրյալով: Այսպես, եթե ՀՀ-ում բնակչության թիվը 3.2 մլն մարդ է, և մեկ շնչի հաշվով անհրաժեշտ է 150 կգ հացահատիկ, ապա դա նշանակում է, որ հացահատիկի նկատմամբ քաղաքային բնակչության պահանջարկը կազմում է 480.0 հազ. տ: Այնուհետև հարկ է պարզել, թե այդ պահանջարկի որ մասը կարող ենք բավարարել տեղական ռեսուրսների գնման և որ մասը՝ ներմուծման հաշվին:

Գյուղատնտեսական մթերքների պետական ռեսուրսների հաշվեկշիռները բաղկացած են ռեսուրսների և դրանց բաշխման մասերից: Ռեսուրսային մասում ցույց են տրվում դրանց ձևավորման աղբյուրները՝ գնումները տարբեր տիպի տնտեսություններից, ներմուծումը, պետական պահուստների օգտագործումը և մնացորդը տարվա սկզբին: Հաշվեկշռում պետական ռեսուրսների բաշխումը ցույց է տրվում ըստ դրանց օգտագործման նպատակի՝ վերամշակման, շուկայում իրացնելու, արտահանման, պետական պահուստների համալրման համար, ինչպես նաև մնացորդը տարվա վերջում:

Բուսաբուծական մթերքների պետական ռեսուրսների հաշվեկշիռները մշակվում են գյուղատնտեսական տարվա (հուլիսի 1-ից մինչև հաջորդ տարվա հունիսի 30-ը ներառյալ), իսկ անասնաբուծական մթերքներինը՝ օրացուցային տարվա կտրվածքով:

Քանի որ գյուղատնտեսական մթերքների մի մասը գյուղացիական տնտեսություններում օգտագործվում է արտադրական նպատակներով (որպես սերմացու և ֆուրաժ), ինչպես նաև անձնական կարիքների բավարարման համար, մշակվում են նաև համախառն ռեսուրսների հաշվեկշիռներ՝ հատկապես բուսաբուծական մթերքների համախառն բերքը որոշելու համար: Այդ հաշվեկշռի ռեսուրսային մասում ցույց են տրվում պաշարները տարվա սկզբին՝ արտադրությունից և այլ մուտքերից, իսկ բաշխման մասում՝ գյուղմթերքների արտադրական սպառումը, անձնական սպառումը, պաշարները տարվա վերջին, իրացումը, վաճառքը պետությանը, շուկայում և հասարակական կազմակերպություններին:

Հարկ է նշել, որ գյուղատնտեսական մթերքների համախառն ռեսուրսներն ավելի մեծ են, քան պետական ռեսուրսները: Սակայն բոլոր տեսակի տեխնիկական մշակաբույսերի համախառն ու պետական ռեսուրսները հավասար են, քանի որ այդպիսի արտադրանքներից անձնական սպառում չի կատարվում, որքան արտադրվում, այնքան էլ վաճառվում է:

Գյուղատնտեսական արտադրության զարգացման գործում կարևոր նշանակություն ունի նրա նյութատեխնիկական բազայի ամրապնդումը, որն ապահովում է նաև ինտենսիվության աստիճանի բարձրացումը: Ուստի գյուղատնտեսության զարգացման ծրագրում հաշվարկվում են նաև գյուղատնտեսական արտադրության մեքենայացման, էլեկտրիֆիկացման և քիմիացման մի շարք ցուցանիշներ, որոնք միաժամանակ գյուղատնտեսության նյութատեխնիկական մակարդակի ցուցանիշներ են: Գյուղատնտեսության բնագավառում մեքենայացման մակարդակը բավականին ցածր է, որը կապված է այն բանի հետ, որ նախկինից ժառանգած մեքենաները բավականին մեծ ու հզոր են և չեն կարող արդյունավետ օգտագործվել մասնավորեցված գյուղացիական մանր տնտեսություններում: Մյուս կողմից, անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով դեռևս չեն ստեղծվել մանր հողակտորների վրա աշխատող մեքենաներ: Այս տեսանկյունից կարևորվում է նաև համապիտանի գյուղմեքենաների ստեղծման խնդիրը: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մեքենաներ, որոնք կատարեն բազմատեսակ գյուղատնտեսական աշխատանքներ:

Ընդ որում, ՀՀ-ում դեռևս դանդաղ է նորացվում տրակտորային պարկը: Այսպես, եթե 1999թ. գյուղատնտեսության մեջ օգտագործվել է 12.5 հազար տրակտոր, ապա 2003թ. այդ թիվը հասել է 14.2-ի, գրեթե չի փոխվել տրակտորային գութանների, սերմնացանների, կուլտիվատորների, հացահատիկահավաք կոմբայնների քանակը[6]: Գյուղատնտեսության մեքենայացման ծրագիրը մշակելիս նախ անհրաժեշտ է պարզել գյուղատնտեսական աշխատանքների ընդհանուր ծավալը և դրանց մեքենայացման աստիճանը: Գյուղատնտեսական աշխատանքները միմյանցից խիստ տարբերվում են, ուստի դրանց ամբողջ ծավալը ստանալու համար անհրաժեշտ է աշխատանքները վերածել պայմանական աշխատանքի՝ հիմք ընդունելով մեկ միավոր փափուկ վարը: Անհրաժեշտ է պարզել, թե այդպիսի աշխատանք կատարելու համար քանի ձիաուժ հզորություն է հարկավոր (աշխատանքի նորմը): Ունենալով այդ տվյալները՝ կարող ենք որոշել գյուղատնտեսական մեքենաների նկատմամբ ընդհանուր պահանջարկը: Հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$\Pi = \frac{0}{\text{Н} \cdot \text{Т}}$$

որտեղ՝

О – ն՝ գյուղատնտեսական աշխատանքների ընդհանուր ծավալն է՝ արտահայտված փափուկ վարով (հա),

Н – ն՝ մեկ ձիաուժ հզորության աշխատանքների կատարման նորմը՝ մեկ օրվա ընթացքում,

Т – ն՝ գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամկետն է (օրերով):

Գյուղատնտեսության մեքենայացման համար անհրաժեշտ ամբողջ էներգետիկ հզորությունը որոշելուց հետո կարող ենք պարզել պա-

[6] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2004, էջ 303:

հանջվող մեքենաների թիվը՝ ըստ առանձին աշխատանքների: Գյուղատնտեսության մեքենայացման համար անհրաժեշտ մեքենաների լրացուցիչ պահանջարկը որոշելու նպատակով մշակվում է քաշող ուժի հաշվեկշիռ, որի ռեսուրսային մասում ցույց են տրվում եղած մեքենաների կամ էներգետիկ հզորությունները, իսկ բաշխման մասում՝ դրանց նկատմամբ ընդհանուր պահանջարկը: Ռեսուրսային և բաշխման մասերի տարբերությունը կազմում է մեքենաների ու սարքավորումների լրացուցիչ պահանջարկը: Ընդ որում, քաշող ուժի ընդհանուր մեծությունը բաժանելով աշխատողների թվի վրա՝ ստանում ենք մեքենազինվածության մակարդակը գյուղատնտեսության մեջ: Գյուղատնտեսության մեջ արտադրության էլեկտրիֆիկացումը չափվում է էլեկտրաէներգիայի օգտագործման ծավալով: Էլեկտրաէներգիան գյուղատնտեսության մեջ ծախսվում է ինչպես արտադրական, այնպես էլ կոմունալ-կենցաղային նպատակներով: Վերջին տարիների ընթացքում էլեկտրաէներգիայի օգտագործումը գյուղատնտեսության մեջ աստիճանաբար կրճատվում է: Այսպես, եթե 2000թ. այն կազմել է 475.5, ապա 2003թ.՝ 222.28 մլն կվտ/ժամ[7]: Էլեկտրաէներգիայի պահանջարկը գյուղատնտեսության մեջ որոշելու համար օգտվում ենք գյուղատնտեսական աշխատանքների առանձին տեսակների ծավալներից և դրանց միավորի վրա էլեկտրաէներգիայի ծախսի՝ գոյություն ունեցող նորմերի արտադրյալից: Այն կարելի է որոշել նաև ելնելով ոչ թե նորմերից, այլ հաշվետու ժամանակաշրջանում արտադրանքի միավորի հաշվով փաստացի ծախսված էլեկտրաէներգիայի քանակից:

Գյուղատնտեսական արտադրության զարգացման գործում կարևոր նշանակություն ունի նաև քիմիացումը, որը նույնպես գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան բնութագրող ցուցանիշներից է: Եթե արդյունաբերության մեջ քիմիացումը նշանակում է պլաստմասսաների, քիմիական սինթետիկ նյութերի, քիմիական տեխնոլոգիաների օգտագործում, ապա գյուղատնտեսության մեջ քիմիացումը նշանակում է քիմիական պարարտանյութերի, թունաքիմիկատների, հերբիցիտների և այլնի օգտագործում, որոնք նպաստում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության աճին: Պարարտանյութերի պահանջարկը որոշվում է ըստ պարարտանյութերի տեսակների՝ ելնելով գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների բնույթից (ազոտական, ֆոսֆորական, կալիումական) և պարարտանյութերի կիրառման ագրոքիմիական նորմերից: Ընդհանուր առմամբ պարարտանյութերի պահանջարկը ցույց է տրվում երկու ցուցանիշով՝ բնեղեն արտահայտությամբ և սպիտակուցի պարունակությամբ:

Գյուղատնտեսական արտադրության նյութատեխնիկական բազայի ամրապնդման խնդիրը ժամանակակից պայմաններում իրագործվում է տնտեսության կարգավորման շուկայական մեխանիզմի միջոցով, որը դեռևս կատարելագործման կարիք և հողատարածքների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակ ունի:

---

[7] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2004, էջ 282:

Ամփոփում

1. Երկրի տնտեսության կայունացման գործում կարևոր դեր է խաղում գյուղատնտեսությունը, որը թողարկում է ինչպես գյուղատնտեսական հումք՝ արդյունաբերության համար, այնպես էլ գյուղմթերքներ՝ սպառման համար: Ուստի երկրի ագրարային քաղաքականությունը կարևոր դեր է խաղում բնակչության կենսամակարդակի բարձրացման գործում:

2. Ագրարային քաղաքականությունը այն միջոցառումների ամբողջությունն է, որոնք ուղղված են գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը, այդ արտադրանքի նկատմամբ բնակչության և տնտեսության պահանջարկի բավարարմանը, գյուղական բնակչության զբաղվածության ապահովմանը, գյուղացիական տնտեսությունների արտադրության արդյունավետ կազմակերպմանը, դրանց արտադրանքի իրացմանը, հողատեսքերի և մյուս ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

3. Այդ միջոցառումների դերն ավելի է մեծանում ներկա ժամանակաշրջանում, երբ անցումային փուլում հանրապետությունում տեղի ունեցած գործընթացները հանգեցրին երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմանը:

4. Գյուղատնտեսական արտադրության հետագա զարգացումն ապահովելու նպատակով իրականացվող բարեփոխումներն արդյունավետ կլինեն, եթե հաշվի առնվեն գյուղատնտեսության առանձնահատկությունները, և իրականացվող միջոցառումները համահունչ լինեն ճյուղի առջև ծառացած խնդիրների լուծմանը:

5. Գյուղատնտեսությունում առաջացած հիմնախնդիրները լուծելու նպատակով մշակվում է ագրարային համակարգի զարգացման ծրագիր, որում կարևոր տեղ են գրավում բուսաբուծության և անասնաբուծության զարգացման ենթածրագրերը: Դրանք արտացոլում են ոչ միայն ճյուղի զարգացման հիմնախնդիրները, այլ նաև լուծման մեխանիզմներն ու անհրաժեշտ միջոցառումները: Դրանցում հաշվարկվող ցուցանիշները բնութագրում են ճյուղի զարգացման վիճակը, ակնկալվող զարգացումները, գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան և այլն:

Թեստեր և խնդիրներ

1. ***Գյուղատնտեսական արտադրության հիմնական ցուցանիշը համախառն արտադրանքն է, որը հաշվարկվում է.***
   ա. բուսաբուծության և անասնաբուծության համախառն արտադրանքի գումարով,
   բ. բուսաբուծության համախառն արտադրանքի ծավալով,
   գ. անասնաբուծության համախառն արտադրանքի ծավալով,
   դ. բուսաբուծության և անասնաբուծության ենթաճյուղերի համախառն արտադրանքի տարբերությամբ:

2. ***Թվարկվածներից որը բուսաբուծության զարգացման ցուցանիշ չէ.***
   ա. հողատարածությունների ծավալը և կառուցվածքը բնութագրող ցուցանիշներ,
   բ. բուսաբուծության համախառն բերքը՝ ըստ առանձին մշակաբույսերի,
   գ. բերքատվությունը՝ ըստ առանձին մշակաբույսերի,
   դ. անասնահոտի ցեղային կառուցվածքը:

3. ***Գալիք ժամանակաշրջանում վարելահողերի ծավալը որոշելու նպատակով հաշվարկում են.***
   ա. մշակվող վարելահողերը տարվա սկզբին,
   բ. մշակվող վարելահողերի մեծությունից հանում են կրճատված վարելահողերի մեծությունը,
   գ. տարվա սկզբին մշակվող վարելահողերի մեծությանը գումարում են ավելացած վարելահողերի մեծությունը,
   դ. տարվա սկզբին մշակվող վարելահողեր-կրճատված վարելահողեր + ավելացած վարելահողեր:

4. ***Գյուղատնտեսական մշակաբույսերի կառուցվածքը և նրանց ցանքատարածությունը որոշվում է՝ ելնելով.***
   ա. նախորդ տարվա բերքատվությունից,
   բ. մշակաբույսի աճից,
   գ. բուսաբուծական մթերքների նկատմամբ պահանջարկից,
   դ. վերը թվարկվածները միասին:

5. ***Թվարկվածները մտնում են անասունների գլխաքանակը որոշելու նպատակով մշակված՝ հոտի շրջանառության հաշվեկշռի մեջ, բացառությամբ.***
   ա. հոտի տեսակները, նրանց սեռահասակային կազմի փոփոխությունը տարվա ընթացքում,
   բ. հոտի բնական աճը,
   գ. անասունների վաճառքը, մորթը, գնումները,
   դ. բերքահավաքի ճիշտ կազմակերպումը:

6. ***Հոտի շրջանառություն ասելով հասկանում ենք.***

ա. սեռահասակային կազմի փոփոխությունը տարվա ընթացքում,
բ. գլխաքանակը տարվա սկզբին,
գ. գլխաքանակը տարվա վերջին,
դ. ընդհանուր գնումները:

7. Անասնահոտի գլխաքանակը տարվա վերջում հավասար է.
ա. տարեսկզբի գլխաքանակին,
բ. տարեսկզբի գլխաքանակ + տարվա ընթացքում աճ,
գ.տարեսկզբի գլխաքանակ + տարվա ընթացքում աճ - տարվա ընթացքում ելք,
դ. տարեսկզբի գլխաքանակ + տարվա ընթացքում ելք:

8. 2000թ. սկզբին մշակվող վարելահողերը կազմում էին 357000 հա, նույն տարում վարելահողերի ծավալը, ջրամբարներ կառուցելու և բազմամյա տնկարկների պատճառով, կրճատեցին 177 հազ. հա-ով: Հետո ճահիճների չորացման և խամ ու խոպան հողերի յուրացման ճանապարհով վարելահողերը ավելացրին 132 հազ. հա-ով: Գալիք ժամանակաշրջանում վարելահողերը կկազմեն.
ա. 312000 հա,
բ. 300000 հա,
գ. 350000 հա,
դ. 280000 հա:

9. Տարվա սկզբին անասունների գլխաքանակը կազմել է 599 հատ: Տարվա ընթացքում ավելացել է 378-ով, իսկ տարվա վերջին արտահանել են 269-ը: Անասնահոտի գլխաքանակը տարվա վերջին կկազմի.
ա. 700,
բ. 702,
գ. 708,
դ. 710:

10. 2001թ. անասնաբուծական մթերքների ծավալը կազմում էր 2379 կգ, իսկ զոոտեխնիկական նորմը, որն անհրաժեշտ է կենդանուն կերակրելու համար՝ 3 կգ: 2002թ. անասնաբուծական մթերքների ծավալը կազմում էր մինչև 2667 կգ: Որքանո՞վ է ավելացել անասնակերի պահանջարկը.
ա. 664,
բ. 764,
գ. 864,
դ. 964:

Հիմնական հասկացություններ

Ագրարային քաղաքականություն

Ագրոպարենային համալիր
Բուսաբուծություն
Ցանքաշրջանառության ռոտացիա
Անասնաբուծություն
Անասնահոտի շրջանառության հաշվեկշիռ
Պետական ռեսուրսների հաշվեկշիռ
Համախառն ռեսուրսների հաշվեկշիռ
Բուսաբուծության համախառն արտադրանք
Անասնաբուծության համախառն արտադրանք
Բերքատվություն
Մթերատվություն
Անասունների կերային բազա

Հարցեր կրկնության համար

1. Որո՞նք են ագրարային քաղաքականության հիմնական գծերը:
2. Որո՞նք են գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունները:
3. Ինչպե՞ս են դասակարգվում գյուղատնտեսական հողերը:
4. Ի՞նչ բաժիններից է կազմված ագրոպարենային ծրագիրը:
5. Որո՞նք են գյուղատնտեսության ծրագրի հիմնական ցուցանիշները:
6. Ի՞նչ ենթաճյուղեր ունի գյուղատնտեսական արտադրությունը և որո՞նք են դրա հիմնական խնդիրները:
7. Ինչպե՞ս է որոշվում բուսաբուծության համախառն արտադրանքը:
8. Ինչպե՞ս է որոշվում անասնաբուծության համախառն արտադրանքը:
9. Ի՞նչ մեթոդով է որոշվում անասունների գլխաքանակը:
10. Ի՞նչ հաշվեկշիռներ են մշակվում գյուղատնտեսության ծրագրում:
11. Ինչպե՞ս է որոշվում գյուղատնտեսական մեքենաների ընդհանուր պահանջարկը:
12. Ինչպե՞ս է որոշվում գյուղատնտեսական մեքենաների լրացուցիչ պահանջարկը:
13. Ինչպե՞ս է որոշվում պարարտանյութերի պահանջարկը:
14. Ի՞նչ դեր ունեն գյուղատնտեսական ռեսուրսների պետական պահուստները:
15. Որո՞նք են գյուղատնտեսական արտադրության նյութատեխնիկական բազայի ցուցանիշները:

ԳԼՈՒԽ 10

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Պետական գիտատեխնիկական քաղաքականությունը:
- Նորամուծությունների բովանդակությունը և դասակարգումը:
- Պետական նորամուծական քաղաքականությունը:
- Նորամուծական գործունեության պետական կարգավորման անհրաժեշտությունը:
- Նորամուծությունների պետական քաղաքականության ուղղությունները և պետական կարգավորման ձևերը:
- Նորամուծական գործունեության ֆինանսական ապահովման մեխանիզմը:
- Նորամուծական գործունեության ենթակառուցվածքի ձևավորման անհրաժեշտությունը:
- Մտավոր սեփականության շուկայի կարգավորման խնդիրները:

10.1. Գիտատեխնիկական պետական քաղաքականությունը

Գիտատեխնիկական առաջադիմությունը պայմանավորում է յուրաքանչյուր երկրի զարգացման տեմպերը, տնտեսական աճի հնարավորությունները:

Գիտատեխնիկական առաջադիմությունը (ԳՏԱ) գիտության և տեխնիկայի լայնամասշտաբ զարգացումն է, դրա նվաճումների օգտագործման հիման վրա աշխատանքի միջոցների և առարկաների, արտադրության և աշխատանքի կազմակերպման մեթոդների և ձևերի կատարելագործման գործընթացը:

Տնտեսական կյանքում ԳՏԱ-ն արտահայտվում է արտադրության արդյունավետության և աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման և այլ տնտեսական ցուցանիշների բարելավման մեջ: ԳՏԱ սոցիալական հետևանքներն են աշխատանքային պայմանների բարելավումը, աշխատաժամանակի խնայողությունը, ծանր, ֆիզիկական աշխատանքը մեքենայականով փոխարինելը:

ԳՏԱ արդյունավետության քննարկումը և՛ տնտեսական, և՛ սոցիալական ոլորտներում հնարավորություն է տալիս բացահայտել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում այդ բնագավառների ցուցանիշների համակարգում:

ԳՏԱ արագացման գործում գլխավոր դերը *պատկանում է* պետության միասնական գիտատեխնիկական քաղաքականությանը: Այն միջոցառումների համակարգ է՝ ուղղված կրթության, գիտության զարգացման և տեխնիկայի առաջադիմության *աջակցությանը*: Այսինքն՝ խոսքը նոր գիտելիքների ստացման և նորագույն տեխնիկական ու տեխնոլոգիական մշակումների իրականացման մասին է:

Պետական նորամուծական քաղաքականությունը ներառում է պետական մակարդակով ծրագրվող և իրականացվող տնտեսական, կազմակերպական, իրավական միջոցառումներ, որոնց նպատակը ԳՏԱ նվաճումների արագ փոխանցումն ու տարածումն է արտադրության և ծառայությունների ոլորտներում: Նորամուծական քաղաքականությունը կապող դեր է խաղում պետական գիտատեխնիկական և արդյունաբերության պետական քաղաքականության միջև: Պետական գիտատեխնիկական քաղաքականությունը սոցիալ-տնտեսական քաղաքականության ընդհանուր բաղկացուցիչ մասն է, որն արտահայտում է պետության վերաբերմունքը գիտական և գիտատեխնիկական գործունեության նկատմամբ, որոշում է պետական իշխանության մարմինների գործունեության նպատակները, ուղղությունները, ձևերը գիտության, տեխնիկայի և դրանց նվաճումների իրացման ոլորտում: Պետական գիտատեխնիկական քաղաքականության գլխավոր խնդիրն է ԳՏԱ կարևորագույն ուղղությունների ընտրությունը և զարգացումը:

ԳՏԱ գործընթացի պետական կարգավորումը իրականացվում է գիտատեխնիկական ծրագրերի մշակման միջոցով:

Գիտատեխնիկական զարգացման ծրագրերն ունեն պարզորոշ արտահայտված նպատակային բնույթ, իսկ դրանց ձևավորման գործընթացն անցնում է մի շարք փուլերով: Դրանք կարող են ընթանալ հետևյալ հաջորդականությամբ. նախ՝ գիտատեխնիկական ծրագրի նպատակների և հիմնական բնութագրիչների որոշում և մանրամասնում, այնուհետև՝ կատարողների ընտրություն, ռեսուրսային ապահովման պլանավորում և վերջնական արդյունքների գնահատում:

Գիտատեխնիկական զարգացման համալիր ծրագրերը մշակվում և ներկայացվում են մի քանի բաժիններով.

- ԳՏԱ գերակայություններ և գիտատեխնիկական զարգացման հիմնական առաջադրանքներ,
- արտադրանքի նոր տեսակների արտադրության յուրացում,
- բարձր տեխնոլոգիաների ներդրում, արտադրական գործընթացների մեքենայացում, ավտոմատացում,
- գիտատեխնիկական արտաքին հարաբերություններ,
- գիտական կադրերի պատրաստում,
- գիտության ֆինանսավորում:

ԳՏԱ պլանավորման ընթացքում օգտագործվում է ցուցանիշների մի ամբողջ համակարգ: Այդպիսի ցուցանիշներից են՝ գիտական հետազոտությունների ընթացիկ ծախսերը, ներդրումներ՝ հիմնարար և կիրառական գիտություններում, գիտաշխատողների թիվը, գիտական կազմա-

կերպությունների հիմնական ֆոնդերի արժեքը, հայտնագործությունների թիվը, գիտատեխնիկական նվաճումների ներդրումից ստացվող տնտեսական արդյունքը, գիտական աշխատությունների թիվը, վաճառված կամ գնված լիցենզիաների թիվը:

Պարբերաբար կատարելագործվում են նաև ԳՏԱ կառավարման մեթոդները: Շուկայական տնտեսության ժամանակակից պայմաններում ավելի տարածված են արտադրության տեխնիկական զարգացման անուղղակի խթանման տարբեր մեթոդները: Դրանք հիմնվում են հարկային և վարկային զանազան արտոնությունների վրա, ինչպես օրինակ՝ արագացված ամորտիզացիան կամ գիտահետազոտական աշխատանքների ծախսերի ազատումը հարկերից: Լայնորեն օգտագործվում է նաև մտավոր սեփականության իրավունքը, որն ընդգրկում է ինչպես արդյունաբերական սեփականությունը, այնպես էլ այն ստեղծագործությունները, որոնք պահպանվում են հեղինակային իրավունքով:

Գիտատեխնիկական գործունեությանը վերագրվում են նաև հիմնարար և հետախուզական գիտական հետազոտությունները, կիրառական և փորձնական-նախագծային աշխատանքների կատարումը և վերջապես՝ գիտական արդյունքների ստացումը:

Շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան գիտատեխնիկական զարգացման և նորամուծական գործընթացների ֆինանսավորման մեխանիզմի կատարելագործումը դառնում է անհրաժեշտություն:

ԳՏԱ հիմքը հանդիսացող հիմնարար գիտական հետազոտությունների համար ֆինանսավորման գլխավոր աղբյուրը բյուջետային հատկացումներն են: Երկրի համար գլխավոր ուղղություններ ներկայացնող ԳՀ աշխատանքների ֆինանսավորումը իրականացվում է բյուջետային հատկացումների և շահագրգիռ ձեռնարկությունների և կազմակերպությունների միջոցների ճկուն զուգակցման ուղիով: Կիրառական հետազոտությունները գլխավորապես ապահովվում են տնտեսավարող սուբյեկտների միջոցներով, պետական որոշակի աջակցության պայմաններում: Զարգացած երկրներում գիտատեխնիկական հետազոտությունների ֆինանսավորում հիմնականում իրականացնում է մասնավոր հատվածը: Որքան մեծանում է գիտական հետազոտությունների ներդրումների առևտրային ուղղվածությունը, այնքան կրճատվում է պետական ֆինանսավորման բաժինը:

Գիտությանը հատկացվող միջոցները ՀՀ բյուջեում չեն ներկայացվում ըստ ուղղությունների և բնագավառների: Այս բացը վերացնելու համար ժամանակակից պայմաններում նախատեսվում է միջոցները տեղաբաշխել պայմանագրային եղանակով, հաճախ մրցույթների ձևով:

ՀՀ-ում գիտության ոլորտի ֆինանսավորումն կատարվում է ըստ երկրում գործող օրենքների: Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման աղբյուրներ մեր երկրում համարվում են.

1. ՀՀ պետական բյուջեն,
2. պայմանագրերից գոյացած միջոցները,

3. հիմնադրամները, ներառյալ արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հատկացումները և քաղաքացիների ներդրումները,
4. դրամաշնորհները,
5. վարկերը,
6. գիտական, հրատարակչական, խորհրդատվական և օրենքով չարգելված այլ գործունեությունից գոյացած միջոցները,
7. գիտական արդյունքների ներդրումից և իրացումից գոյացած միջոցները:

Բոլոր այս միջոցների շարքում անցումային շրջանում ավելի կարևորվում է բյուջետային ֆինանսավորումը: Բյուջետային ֆինանսավորումը ՀՀ-ում իրականացվում է հետևյալ երեք ձևերով՝

1. բազային ֆինանսավորում,
2. նպատակային-ծրագրային ֆինանսավորում,
3. թեմատիկ (պայմանագրային) ֆինանսավորում:

Բազային ֆինանսավորումը ենթադրում է, որ միջոցները հատկացվում են գիտական հիմնարկների կարևորագույն, հիմնարար նշանակություն ունեցող հետազոտությունների իրականացման, ինչպես նաև գիտական ոլորտի ենթակառուցվածքների պահպանման և ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման նպատակներով: Ըստ էության, դա ԳՀ-ական կազմակերպությունը որպես միասնական կառույց պահպանելու միջոց է:

Նպատակային-ծրագրային ֆինանսավորումն իրականացվում է մրցութային հիմունքներով և ուղղված է գիտության ու տեխնիկայի գերակա ոլորտների պետական գիտատեխնիկական ծրագրերի մարտավարական և ռազմավարական խնդիրների լուծմանը: 2003 թ. տվյալներով՝ ՀՀ-ում պետական նպատակային (ծրագրային) ֆինանսավորման բաժինը հասել է գիտության ֆինանսավորման ամբողջ ծախսերի 1%-ին կամ 27 մլն դրամի: Բյուջետային միջոցների մեծ մասը հատկացվել է թեմատիկ (պայմանագրային) ֆինանսավորմանը:

Թեմատիկ (պայմանագրային) ֆինանսավորումն ուղղված է գիտնականների և հետազոտական խմբերի նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացմանը: Այն հնարավորություն է տալիս ֆինանսավորման հայտեր ներկայացնելու այն ծրագրերի իրականացման համար, որոնք, չնայած իրենց արդիականությանն ու բարձր գիտական արժեքին, փոքր ծավալի պատճառով չեն կարող տեղ գրավել պետական նպատակային ծրագրերում կամ դառնալ ԳՀ-ական կազմակերպության հիմնական ուղղություն:

ՀՀ-ում բյուջետային ֆինանսավորման բաժինը ՀՀ բյուջեից կատարվող ամբողջ ծախսերի կազմում բավականին չնչին է, և դրանց տեսակարար կշիռը վերջին տարիներին կազմել է մեկից փոքր-ինչ ավելի մեծություն՝ մինչև 1.34: Իսկ գիտությանը տրամադրվող ծախսերը կազմում են ՀՆԱ-ի մոտ 0.2%-ը:

Պետության գիտատեխնիկական քաղաքականությունը ներկայումս չի կարող սահմանափակվել միայն ֆինանսավորման հիմնահարցերին անդրադառնալով: Այն պետք է ընդգրկի գիտական կազմակերպություններին և գիտաշխատողներին պաշտպանող այնպիսի միջոցառումներ և գործողություններ, որոնք կօգնեն նրանց ստեղծագործական աշխատանքում:

Պետական քաղաքականության մեջ առաջնային են նաև սոցիալ-հումանիտար հետազոտությունների հիմնահարցերը: Երկար տարիներ մեր երկրում գիտական արդյունքների ներդրման սոցիալական հետևանքները չեն հետազոտվել, լիովին բացակայել են հումանիտար հետազոտությունները: Հետևաբար երկրի գիտատեխնիկական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը պետք է դառնա գիտատեխնիկական կադրերի հուսալի սոցիալական պաշտպանվածության ապահովումը:

Գիտության սոցիալական հետևանքների գնահատման իմաստով կարևորվում է գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման հարցը: Այստեղ ուշադրություն է դարձվում նոր մասնագիտությունների նկատմամբ տնտեսության ներկայացրած պահանջարկին: ՀՀ-ում գործում են գիտական կադրերի պատրաստման հետևյալ ձևերը. ասպիրանտուրա, դոկտորանտուրա և հայցողների համակարգ:

Գիտական կադրերի պատրաստման և որակավորման գնահատման նպատակով կառավարությունը սահմանում է համապատասխան չափանիշներ և ստեղծում իրավական հիմքեր: Այս առումով կարևոր նշանակություն ունի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը[1]:

10.2. Նորամուծությունների բովանդակությունը, դերը, տեսակները և դասակարգումը

Ցանկացած երկրի զարգացման շարժիչ ուժը տեխնոլոգիական և տեղեկատվական զարգացման մակարդակն է, և երկիրը, անկախ իր տնտեսության վարման եղանակից ու ձևից, անհնար է պատկերացնել առանց նորամուծությունների: Վերջիններս տնտեսական կյանքի առաջընթացի կարևոր գրավականն են: Ընդունված է հետևյալ արտահայտությունը. «Նորամուծությունները XXI դարի կրոնն են»: Ի նկատի ունենալով, որ ցանկացած երկիր կարող է առաջնային դիրք գրավել, եթե ունի նկատելի մրցակցային առավելություններ և արտահանվող արտադրանքի մեծ ծավալներ, հասկանալի է դառնում, որ նորամուծություններն անհրաժեշտ ու պարտադիր են: Հետևաբար դրանց կարգավորման և ֆինանսական ապահովման պետական մեխանիզմների բացահայտման կարևորությունը և ուսումնասիրությունը պարտադիր է դառնում:

[1] ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 33 (131):

Նորամուծությունների վերաբերյալ տարբեր ձևակերպումներ և բնորոշումներ կան գրականության մեջ: Գոյություն ունեն ոչ միայն գիտական, այլև իրավական փաստաթղթեր, որոշումներ, հրահանգներ, օրենքներ, բառարաններ, որոնցում ձևակերպված է նորամուծությունների և նորամուծական գործունեության բովանդակությունը: Տնտեսագիտական բառարաններում նորամուծությունը բնորոշվում է որպես ստեղծագործական գործունեության արդյունք, որն ուղղված է արտադրանքի նոր տեսակների, տեխնոլոգիաների մշակմանը և տարածմանը, նոր կազմակերպական ձևերի ներդրմանը:

Մեկ այլ փաստաթղթում նորամուծությունը բնութագրվում է որպես նորամուծական գործունեության վերջնական արդյունք, որը նոր կերպարանք է ստացել շուկայում ներդրված նոր կամ կատարելագործված արդյունքի մեջ: Այդ արդյունքը կարող է լինել որևէ ապրանք, տեխնոլոգիական գործընթաց կամ սոցիալական ծառայության նոր ձև:

Լայն իմաստով նորամուծությունը կարող է բնութագրվել որպես գիտատեխնիկական (տեխնոլոգիական), կազմակերպատնտեսական, արտադրական կամ այլ տիպի նոր լուծումների գործնական կիրառում: Նորամուծությունն ունի միջֆունկցիոնալ բնույթ, ստեղծում է «որակական» թռիչք, քանդում է հին կանոնները, տանում է դեպի համակարգից դուրս եկող ելքի: Որպես կանոն, նորամուծությունը համակարգային բնույթ ունի և հանգեցնում է ոլորտի բոլոր կամ մի քանի տարրերի փոփոխության:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում նորամուծական գործունեությունը ներկայացված է որպես գիտական արդյունքների օգտագործմանը, նոր արդյունքների ստացմանը, թողարկվող արտադրանքի որակի բարձրացմանը և ծախսերի նվազեցմանն ուղղված գործունեություն:

Նորամուծություն հասկացությունը պետք է բավարարի մի շարք պահանջների: Նախ և առաջ պետք է տարբերել նորույթը և նորամուծությունը: Նորույթը հիմնարար, կիրառական հետազոտությունների, մշակումների և փորձարարական աշխատանքների ձևակերպված արդյունքն է գործունեության որևէ ոլորտում, որն ուղղված է վերջինիս արդյունավետության բարձրացմանը: Նորույթը կարող է ձևակերպվել հայտնագործության, արտոնագրերի, ապրանքային նշանների, ռացիոնալիզատորական առաջարկությունների, կառավարման նոր եղանակների, գիտական նոր մոտեցումների, նոր ձևերի կամ սկզբունքների, նոու-հաուների, տարբեր փաստաթղթերի, տարբեր մարքեթինգային ուսումնասիրությունների և այլնի տեսքով:

Ցանկացած ներդրում նորույթի մշակման գործընթացի մի մասն է կազմում: Այդ գործընթացներում ավելի կարևոր է այդ նորույթը ներդնել և վերածել նորամուծության, այսինքն՝ ավարտել նորամուծական գործունեությունը և ստանալ դրական արդյունք, որից հետո սկսել նորամուծությունների դիֆուզիան, այսինքն՝ դրա տարածումը, ընդլայնումը: Նորույթի մշակման համար անհրաժեշտ է իրականացնել մարքեթինգային հետազոտություն, գիտահետազոտական աշխատանք, արտադրության և

տեխնոլոգիական գործընթացների նախապատրաստում, այնուհետև հավաքագրել ստացված արդյունքները և ձևակերպել դրանք: Նորամուծությունը նորույթի ներդրման վերջնական արդյունքն է: Դրա նպատակը կառավարման օբյեկտը փոփոխելն է, որի արդյունքում կստացվի տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, գիտատեխնիկական կամ այլ տեսակի արդյունք:

Նորամուծությունները երբեմն համարվում են նովացիաներում կատարվող ներդրումներ: Նովացիա բառը լատիներեն փոփոխություն, թարմացում բառից է ծագում և ըստ էության նշանակում է նորույթ, որը չի եղել նախկինում: Այս դատողությունից ելնելով՝ նորամուծությունը ներկայացվում է որպես նյութականացված արդյունք՝ կապիտալի ներդրումից: Այդ ներդրումը կարող է կատարվել նոր տեխնիկայում կամ տեխնոլոգիայում, արտադրության, աշխատանքի, սպասարկման և կառավարման նոր ձևերում, ներառյալ նաև հսկողությունը, հաշվառումը, պլանավորումը, վերլուծությունը և այլն: Նորամուծությունը հաճախ անվանում են նաև նորամուծական արդյունք:

Նորամուծությունների հետ սերտորեն կապված են բացահայտում և հայտնագործություն հասկացությունները:

Հայտնագործությունը ենթադրում է նոր սարքեր, գործիքներ ու հարմարանքներ, որոնք ստեղծվել են մարդու կողմից:

Բացահայտումը բնության՝ նախկինում անհայտ երևույթների դիտարկումն է կամ էլ նախկինում անհայտ տվյալների, տեղեկությունների հավաքագրման, ստացման գործընթաց:

«Նորամուծություն» հասկացության բովանդակային նկարագիրն առաջին անգամ տրվել է Ջ. Ա. Շումպետերի՝ 1911թ. լույս տեսած «Տնտեսական զարգացման տեսություն» աշխատության մեջ: Այս գրքում գիտնականը ցույց է տվել, թե հասարակական-տնտեսական զարգացման ինչ փոփոխություններ են տեղի ունենում, և ինչպիսի նոր համակցություններ են առաջանում: Նոր համակցությունը ազգային տնտեսության մեջ գոյություն ունեցող արտադրության միջոցների, պաշարների այլ կիրառումն է: Ըստ էության, նա ներկայացրել է նորամուծական գործընթացի բնութագիրը՝ բացահայտելով տեխնոլոգիայի, կառավարման ոլորտում տնտեսական զարգացման փոփոխությունները՝ որպես ռեսուրսների օգտագործման նոր համակցություններ:

Նորամուծություն հասկացությունը (լայն իմաստով) վերաբերում է նոր կամ կատարելագործված արտադրանքի և ծառայությունների ստեղծմանը տարբեր ոլորտներում (արտադրություն, կառավարում), դրանց արտադրության և իրականացման եղանակներին:

Նորամուծությունների յուրահատուկ բովանդակությունը կազմում են այն փոփոխությունները, որոնք ընդգրկում են նոր արտադրանքի, տեխնոլոգիական նոր գործընթացների օգտագործումը, նոր հատկություններով արտադրանքի ներդրումը, նոր հումքի օգտագործումը, փոփոխությունները արտադրության և դրա նյութատեխնիկական ապահովման կազմակերպման մեջ, իրացման նոր շուկաների ի հայտ գալը:

Այս բոլոր բնորոշումները նորամուծությունը ներկայացնում են որպես տնտեսագիտական կատեգորիա, հետևաբար արտահայտում են նորամուծությունների արտադրության և իրացման առավել ընդհանուր, էական հատկանիշները, կապերն ու կապակցությունները:

Կարելի է ասել՝ նորամուծությունը նորույթի ստեղծման, ներդրման գործընթաց է՝ ի նկատի ունենալով, որ այդ գործընթացը զարգանում է ժամանակի ընթացքում և ունի հստակ արտահայտված փուլեր: Նորամուծական գործընթացը ենթադրում է գիտության, տեխնիկայի և արտադրության միավորման նոր ձևեր: Նորամուծություններն օժտված են տարբեր հատկություններով, որոնք բազմաթիվ ու բազմատեսակ են: Հետևաբար դրանց դասակարգումները տարբեր են:

Նորամուծական ոլորտը ներառում է գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքների, մարքեթինգի, ձեռնարկատիրական կառուցվածքի տարբեր օբյեկտներ, բուհերը, ամբողջ կրթական համակարգը, առանձին գիտնականների և հայտնագործողների, որոնց գործունեության նպատակը նորամուծությունների նկատմամբ տնտեսության պահանջների բավարարումն է:

Հասկանալի է, որ նորամուծական գործունեության հիմքում գիտատեխնիկական գործունեությունն է: Նորամուծական գործունեությունը հասարակական կյանքի տարբեր կողմերի նպատակաուղղված վերափոխումն է՝ սոցիալական, տնտեսական և գործնական այլ արդյունքներ ստանալու նպատակով: Հետևաբար նորամուծական գործունեությունն ունի կիրառական ուղղվածություն: Զուտ տնտեսական իմաստով նորամուծական գործունեությունն ուղղված է արտադրության գործոնների համակցման նոր մակարդակի, նոր ձևերի ստացմանը, և դա արվում է գիտատեխնիկական նոր գիտելիքների օգտագործման շնորհիվ: Ընդհանրապես գործունեություն հասկացությունն ընդգրկում է գիտակցված, նպատակաուղղված բնույթ ունեցող որոնողական ակտիվությունը, իսկ դա նշանակում է, որ գործունեությունն իր հետևից բերում է արտաքին աշխարհի փոփոխություն:

Նորամուծական գործընթացն ունի զարգացման օբյեկտիվ միտում, նրա մասնակիցները ունեն և դրսևորում են իրենց շահերը: Նորամուծական գործընթացում գործում են տարբեր տնտեսական հարաբերություններ՝ նորույթը ստեղծողի, ռեսուրսների սեփականատիրոջ, նորույթն օգտագործողի և տնտեսական գործակալների միջև: Նորամուծական գործընթացում ձևավորվում են առանձին տնտեսական հարաբերություններ, որոնք միջնորդավորված են դրամական հատուկ հոսքերով (վենչուրային միջոցներով և համապատասխան տեղեկատվությամբ):

Նորամուծական ներուժը կապված է մտավոր, գիտատեխնիկական, արտադրական, նյութական և ֆինանսական ներուժի առկայության հետ, որոնք ապահովում են նորամուծությունների իրացման հնարավորությունները: Այդ ներուժի իրացումը պահանջում է շուկայի հիմնական հատվածների զարգացում՝ ապրանքներ առաջարկողներից մինչև դրա օգտագործման հարցում շահագրգռվածները:

Ժամանակակից պայմաններում նորամուծություններն ունեն ցայտուն արտահայտված շուկայական կողմնորոշում, որը, սակայն, չի բացառում պետական ներգործության ազդեցությունը դրանց վրա:

Նորամուծական գործունեության պետական կարգավորումը ենթադրում է, որ պետական կառույցները պետք է ուսումնասիրեն նորամուծությունների ամբողջ գործընթացը և նորամուծական գործունեության տնտեսական պայմանները:

Նորամուծական գործունեությունը կապված է նորամուծությունների ստեղծման, յուրացման և տարածման հետ, ու դրան բնորոշ է երեք հիմնական հատկանիշ՝

ա. գիտատեխնիկական նորույթ,

բ. արտադրական կիրառում,

գ. առևտրային իրացում:

Նորամուծությունները բազմաթիվ են իրենց հատկանիշներով: Դրանք կարելի է դասակարգել առանձին խմբերի: Տնտեսագիտական գրականության մեջ ուսումնասիրվում և քննարկվում են նորամուծությունների տարբեր տեսակներ, որոնք խմբավորվում և դասակարգվում են՝ ելնելով դասակարգման համար առանձնացված հատկանիշներից: Նորամուծությունների դասակարգումը հնարավորություն է տալիս պարզաբանել և լուծել այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են՝

1. Նորամուծությունների տարբեր տեսակների և իրականացվող նորամուծական ռազմավարության փոխկապվածության ապահովումը:
2. Նորամուծությունների տարբեր տեսակների միջոցով կառավարման տնտեսական մեխանիզմների և ձևերի մշակումը:
3. Տարբեր շուկաներում նորամուծությունների իրացման ձևերի ընտրությունը:

Ըստ կարևորության՝ դրանք կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

- արմատական,
- բարելավող,
- ձևափոխող:

Այսպիսի բաժանման հիմքում ընկած են նորամուծությունների իրացման առաջատարության և կատարելագործման միտումները:

Ըստ մեզ հետաքրքրող նյութի ուղղվածության և բնագավառի, նորամուծությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

1. Գիտատեխնիկական նորամուծություններ: Սրանք այն նորամուծություններն են, որոնք նպատակ ունեն ստեղծել նոր արտադրանք կամ ծառայություն կամ էլ կատարելագործել դրանք՝ ըստ տեխնոլոգիական բովանդակության:
2. Կառավարման նորամուծություններ, որոնք ուղղված են արտադրության կառավարման և արդյունքի փոխանակման գործընթացի կատարելագործմանը:
3. Սոցիալ-տնտեսական նորամուծություններ, որոնք փոփոխում են մարդկանց կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները:

Նորամուծությունները կարող են դասակարգվել նաև ըստ դրանց կիրառման բնագավառների, ըստ տնտեսության առանձին ճյուղերի և այլն: Օրինակ, ըստ կազմակերպության գործունեության ոլորտի, նորամուծությունները կարող են լինել՝

- արդյունաբերական,
- առևտրային,
- սոցիալական,
- ֆինանսական և այլ:

Մենք պարզեցինք, որ նորամուծությունը տնտեսագիտական կատեգորիա է, հետևաբար այն ցույց է տալիս նորամուծությունների արտադրության և իրացման առավել ընդհանուր, էական, մշտապես գործող հատկանիշները, կապերն ու հարաբերությունները:

Ցանկացած կատեգորիա իր էությունը բացահայտում է այն գործառույթներում, որոնք իրականացնում է: Նորամուծություններն իրականացնում են երեք գործառույթ՝

- վերարտադրական
- ներդրումային
- խթանող:

Առաջինը նշանակում է, որ նորամուծությունները ընդլայնված վերարտադրության ֆինանսավորման աղբյուր են: Նորամուծության վաճառքից ստացված դրամական հասույթը ստեղծում է ձեռնարկատիրական շահույթ: Վերջինս դառնում է ֆինանսական ռեսուրսների աղբյուր, միևնույն ժամանակ՝ նաև նորամուծական գործունեության արդյունավետության չափանիշ: Նորամուծության իրացումից ստացվող շահույթը կարող է օգտագործվել տարբեր ուղղություններով, այդ թվում՝ կարող է վերածվել կապիտալի, որը կարող է ուղղվել բոլոր ներդրումների, ինչպես նաև նոր նորամուծությունների ֆինանսավորմանը: Նորամուծությունների իրացումից ձեռնարկատերերը ստանում են շահույթ, որը նրանց հիմնական նպատակային ֆունկցիան է, հետևաբար հենց դա էլ խթան է դառնում, որ ձեռնարկատերերը ձգտեն նորամուծություններ կատարել և անընդհատ ուսումնասիրեն պահանջարկը:

Անհրաժեշտ է բացահայտել և իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող են կատարելագործել նորամուծությունների կառավարման և կարգավորման ամբողջ գործընթացը: Այդպիսի միջոցառումներից են.

1. նորամուծությունների այնպիսի քաղաքականության մշակում, որը հաշվի կառնի այդ ոլորտի համաշխարհային փորձը,
2. նորամուծական գործունեության համար համապատասխան օրենսդրության և նորմատիվային ակտերի ստեղծում, որոնք կապահովեն բարենպաստ միջավայր,
3. նորամուծական գործունեության ֆինանսատնտեսական մեխանիզմի ու շուկայական ենթակառուցվածքի ձևավորում,
4. տնտեսության մեջ կուտակման ֆունկցիայի իրագործման միջավայրի խթանում այն հաշվով, որ մեծանա դրա նորամուծական ուղղվածությունը:

10.3. Նորամուծական գործունեության պետական կարգավորման անհրաժեշտությունը և քաղաքականության մշակման հիմքերը

Նորամուծական գործունեությունն էական ազդեցություն ունի ամբողջ տնտեսակարգի վրա, հետևաբար ենթադրվում է, որ այն պետք է ունենա պետական աջակցություն: Մեր երկրում շատ երկար ժամանակ անհամապատասխանություն կար ձեռք բերած նվաճումների ու դրանց ներդրման, իրացման միջև: Հանրապետության պետական բյուջեից միջոցներ են հատկացվել միայն հիմնարար գիտություններին, այնինչ զարգացած երկրներում գիտության համար նախատեսված ծախսերի մեծ մասն ուղղվում է նորամուծություններին: Նորամուծությունների պետական կարգավորումը պետք է մի կողմից դիտել որպես գիտական նվաճումները արտադրության մեջ փոխանցելու և յուրացնելու, իսկ մյուս կողմից՝ պետական և շուկայական կառույցների հետ փոխհամագործակցության գործընթաց: Սա էական է այն իմաստով, որ նորամուծությունների պետական քաղաքականության մշակումը ենթադրում է մի շարք խնդիրների լուծում: Դրանցից են՝

1. պարզել նորամուծական գործունեության դերը շուկայական տնտեսությունում,
2. բացահայտել նորամուծությունների գնահատման մեթոդները,
3. ստեղծել նորամուծությունների պետական կարգավորման մեխանիզմներ,
4. բացահայտել այն աղբյուրները, որոնք կապահովեն նորամուծական գործունեության ֆինանսավորումը,
5. մշակել նորամուծական գործունեության պետական կարգավորման ժամանակակից ուղիներ:

Նորամուծական գործունեության պետական կարգավորման առարկան մեր երկրի նորամուծական գործընթացներն են և այն օբյեկտները, որոնք կապված են նորամուծական գործունեության հետ:

Ընդհանրապես նորամուծությունների ոլորտում պետությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1. միջոցների կենտրոնացում գիտատեխնիկական և փորձակոնստրուկտորական աշխատանքների և նորամուծությունների ուղղությամբ,
2. նորամուծական գործունեության կոորդինացում,
3. նորամուծությունների խթանում, այդ ոլորտում մրցակցության ապահովում, նորամուծական ռիսկերի ապահովագրություն և հնացած արտադրանքի թողարկման համար պետական պատվերների համակարգի կիրառում,
4. նորամուծական գործունեության կադրային ապահովում,
5. նորամուծական ենթակառուցվածքի ձևավորում,
6. պետական հատվածի ճյուղերում նորամուծական գործընթացների ինստիտուցիոնալ ապահովում,

7. նորամուծական գործունեության տարածքային և միջազգային գործընթացների կարգավորում:

Նորամուծությունների ոլորտում պետության դերի բարձրացումը օբյեկտիվ գործընթաց է, քանի որ անընդհատ նորամուծական գործունեությունը ձեռնարկությունների համար շահավետ է, և դրա իրականացման համար պայմաններ ձևավորելիս մշտապես անհրաժեշտ են լինում լրացուցիչ խթաններ: Իսկ այդպիսի խթաններ միշտ չէ, որ կարող է շուկան տրամադրել: Լրացուցիչ խթանման գործառույթը իրականացնում է պետությունը՝ իր տնտեսական քաղաքականության տարբեր գործիքների միջոցով:

Նորամուծությունների պետական կարգավորումը ենթադրում է որոշակի մեխանիզմների և տարրերի գոյություն: Օրինակ՝ չափազանց կարևոր են նորամուծական գործունեության ֆինանսական ապահովման մեխանիզմները, անհրաժեշտ գերակայությունների ձևակերպումը, նորամուծական պետական քաղաքականության մշակումը:

Նորամուծական գործունեության մարտավարությունն իրականացվում է հասարակական զարգացման կոնկրետ նպատակներին համապատասխան: Հաշվի են առնվում ԳՏԱ գերակայությունները, ֆինանսավորվող նորամուծությունների փորձաքննության, դրանց ընտրության, ինչպես նաև արդյունավետության չափանիշները: Նորամուծական գործունեության ռազմավարությունը ուղղված է նորամուծությունների գործընթացի կազմակերպմանը, փորձագիտական քննության անցկացմանը, գերակայությունների բացահայտմանը, վերահսկողության տարբեր ձևերի ու մեթոդների համակարգի և նորմերի փոփոխմանը: Նորամուծությունների արդյունավետ ռազմավարությունը կարելի է ապահովել վերը նշվածների հաշվեկշռվածության և համամասնության միջոցով: Այս բոլոր գործընթացները կարող են կարգավորվել պետական մարմինների արդյունավետ գործունեության միջոցով:

Նորամուծությունների պետական կարգավորումն իրականացվում է այնպիսի ձևերով ու մեթոդներով, որոնք համապատասխանում են այն ներուժին, որն ունի ազգային տնտեսությունը: Նորամուծությունների գործընթացի բարենպաստ միջավայր ստեղծելու համար պետությունը ձևավորում է իր քաղաքականությունը, նպատակներն ու իրականացման սկզբունքները: Պետական նորամուծական քաղաքականությունը ձևավորվում է իրեն հատուկ մեխանիզմով:

Նորամուծությունների պետական քաղաքականությանը զուգահեռ, երկրում իրականացվում է գիտատեխնիկական քաղաքականություն, որը ներառում է նպատակաուղղված միջոցառումների այնպիսի ամբողջություն, որոնք նպաստում են գիտության և տեխնիկայի զարգացմանը: Իսկ պետական նորամուծական քաղաքականությունն այն միջոցառումների համակարգն է, որոնք նպաստում են տնտեսավարող սուբյեկտների կողմից նորամուծական գործունեության ինտենսիվ զարգացմանը:

Նորամուծությունների պետական քաղաքականությունը պետական տնտեսական քաղաքականության մի մասն է և ենթարկվում է տնտեսության զարգացման և քաղաքականության իրականացման նույն ձևերին ու

կանոններին: Նորամուծությունների պետական քաղաքականությունն իրականացնում է պետությունը՝ իր գործադիր մարմինների միջոցով՝ հենվելով երկրի օրենսդրական ակտերի վրա: Նորամուծությունների քաղաքականությունը մշակելիս հաշվի է առնվում երկրի տնտեսական զարգացման մակարդակը, իսկ գործնականում նորամուծությունների քաղաքականությունն իրականացնելիս օգտագործվում են բազմաթիվ լծակներ և կառույցներ: Այդպիսիք մեր երկրում կարող են ստեղծվել և գործել միայն որոշակի կառուցվածքային փոփոխությունների դեպքում:

Թե՛ երկրի տնտեսական քաղաքականությունը, թե՛ նորամուծությունների պետական քաղաքականությունը պետք է ուղղված լինեն այնպիսի խոշոր խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝

1. կարևորագույն սոցիալական նշանակություն ունեցող հիմնահարցերը, երկրի տնտեսական և էկոլոգիական անվտանգությունը,
2. տնտեսության կառուցվածքային վերափոխումների իրականացումը և ՀՀ համար կարևորագույն նշանակություն ունեցող ենթակառուցվածքի ձևավորումը,
3. ոչ հեռանկարային և հնացած արտադրությունների կրճատումը և վերացումը,
4. ռեսուրսների բոլոր տեսակների արդյունավետ և խնայողաբար օգտագործումը,
5. շուկայական տնտեսության պայմաններին ձեռնարկությունների և գիտական կազմակերպությունների հարմարվողականությունը,
6. արտահանման ներուժի մեծացումը:

Նորամուծությունների պետական քաղաքականությունը միջոցառումների մի համակարգ է, որը ուղղված է նոր կատարելագործված արտադրանքի ստացման տեխնոլոգիական և սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացին, և այդ համակարգը մշակվում է գիտելիքների և գիտական մտքի օգտագործման նպատակով: Նորամուծությունների պետական քաղաքականությունն իրականացվում է տարբեր նպատակներով, որոնք կարելի է ձևակերպել որպես երկրի տնտեսական զարգացման և կարևորագույն հիմնահարցերի լուծման նպատակներ: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները՝

1. հանրապետության գիտատեխնիկական ներուժի պահպանում,
2. ժամանակակից տեխնոլոգիական համակարգերի ձևավորում և հների դուրսմղում,
3. արտադրանքի գիտատարության և մրցունակության բարձրացում:

Այս և մնացած բոլոր նպատակներն իրականացվում են՝ ելնելով գիտատեխնիկական և նորամուծական քաղաքականությունների մի քանի հիմնական սկզբունքներից: Դրանք են՝

1. գիտական և գիտատեխնիկական ստեղծագործության ազատությունը,
2. մտավոր սեփականության իրավական պաշտպանվածությունը,
3. գիտության և կրթության ինտեգրումը,
4. գիտության և տեխնիկայի ոլորտում մրցակցության ավելացումը,

5. ռեսուրսների կենտրոնացումը գիտական զարգացման գերակա ուղղություններում,

6. նորամուծությունների գնահատման նորագույն մեթոդների կիրառումը:

Տնտեսական զարգացման ընթացքում կարևորվում է նորամուծությունների արդյունավետության գնահատումը և նպատակահարմարության բացահայտումը: Տնտեսագիտության մեջ գոյություն ունեն նորամուծությունների գնահատման տարբեր մեթոդներ, որոնց սկզբունքների և հաշվարկման եղանակները տարբեր են:

Տնտեսագիտական վերլուծությունները ցույց են տալիս, որ երկրի նորամուծական զարգացումը կարող է ընթանալ երեք տարբեր կողմերի շահագրգիռ գործունեության արդյունքում: Այդ երեք կողմերն են՝

1. գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական աշխատանքների ոլորտը՝ որպես նորամուծությունների աղբյուր,

2. արտադրությունը՝ որպես նորամուծությունների պատվիրատու,

3. պետությունը, որը կառավարում, կարգավորում է այս երկու կողմերի փոխհարաբերությունները:

Այսպիսի սխեմայով նորամուծական գործընթացը դիտարկելիս հնարավոր է ցույց տալ գործընթացի մասնակից այդ երեք կողմերի շահերը, հետևաբար կարգավորել, կառավարել դրանց միջև ծագած խնդիրները, համամասնությունները և ցույց տալ գերակայությունները:

10.4. Նորամուծությունների պետական քաղաքականության ուղղությունները

ՀՀ-ում նորամուծությունների պետական քաղաքականությունը ձևավորվում է տնտեսական իրավիճակին և գործընթացներին համապատասխան և կարող է իրականացվել՝ հաշվի առնելով զարգացած նորամուծական տնտեսություն ունեցող երկրների փորձը:

ՀՀ-ում նորամուծական քաղաքականության հիմնական խնդիրը բարենպաստ նորամուծական միջավայրի ստեղծումն է: Պետական աջակցությունն այս ոլորտում իրականացվում է տարբեր ձևերով, ինչպես օրինակ՝ ուղղակի ֆինանսավորում, անհատ հետազոտողներին և փոքր ձեռնարկություններին բանկային փոխատվությունների տրամադրում, տարբեր վենչուրային հիմնադրամների ստեղծում, սարքավորումների և մեքենաների արագացված ամորտիզացիայի մեթոդի կիրառում, նորամուծական ենթակառուցվածքի ժամանակակից տարրերի ստեղծում և այլն:

ՀՀ-ում նորամուծությունների պետական քաղաքականությունը նպատակահարմար է իրականացնել հետևյալ ուղղություններով՝

1. Երկրի նորամուծական ակտիվության խթանում, որը կավելացնի հայրենական արտադրանքի մրցունակությունը:

2. Պետական աջակցության զուգակցում մասնավոր ձեռնարկատիրական գործունեությանը՝ առաջադիմական տեխնոլոգիաների յուրացման գործում, փոքր և միջին բիզնեսում:

3. Նորամուծական գործունեության ակտիվացում, աջակցություն տեղերում և տեխնոլոգիաների միջազգային փոխանակման գործընթացին:

4. Մտավոր սեփականության շուկայի կարգավորման գործիքների ստեղծում և ազգային տնտեսությունում նորամուծություններով զբաղվող ձեռնարկատերերի շահերի պաշտպանություն:

5. Նորամուծական գործունեության ենթակառուցվածքի ձևավորում և զարգացում: Նորամուծական նախագծերի ազգային տեղեկատվական ֆոնդի ստեղծում, տեղեկատվական տարբեր համակարգերի ձևավորում, ֆինանսավորման տարբեր համակարգերի ստեղծում և պետական, մասնավոր ու այլ ներդրողների ներգրավում նորամուծական գործունեության մեջ:

6. Նորամուծական նախագծերի և ծրագրերի ընտրության մրցութային համակարգի ստեղծում:

Գիտությունից մինչև արտադրություն կարևորվում են տարբեր մեթոդներ, օրենսդրական ակտեր և մեխանիզմներ: Շուկայական տնտեսությունում նորամուծական գործընթացներն իրականացվում են առանձնահատուկ մեխանիզմներով: Այդ մեխանիզմի գլխավոր տարրերից են՝

1. Ինստիտուցիոնալ և օրենսդրական պայմանների ձևավորումը: Դրանք հնարավորություն են տալիս ստեղծելու նորամուծական գործունեության նոր, առաջադիմական ձևեր և այդ բնագավառում բիզնեսի զարգացման առանձին պայմաններ:

2. Հարկային համակարգի բարեփոխումները, որոնց նպատակը հարկային բեռը պարզեցնելն է, բոլոր սուբյեկտների համար, անկախ դրանց սեփականության ձևից և ֆինանսավորման աղբյուրներից, նորամուծական գործունեության համար շահավետ պայմաններ ստեղծելը: Սա վերաբերում է հարկման բազայի և հարկերի գանձման մեխանիզմի ճշգրտմանը, ինչպես նաև ամորտիզացիոն քաղաքականությանը: Վերջինս, հարկերի արտոնյալ գանձման համակարգի հետ մեկտեղ, կարող է մեծացնել նորամուծությունների ֆինանսավորման գրավչությունը առևտրային բանկերի համար:

3. Արտաքին տնտեսական միջոցառումների իրականացումը: Սա նշանակում է, որ կարող են ստեղծվել տարբեր առևտրային ներկայացուցչություններ, որոնք արտասահմանյան գործընկերների հետ համատեղ կմշակեն պայմաններ և ձեռնարկություն կստեղծեն: Նրանց մշակած պայմանները պետք է բարենպաստ լինեն հայրենական գիտատար արտադրանքի թողարկման և արտաքին շուկայում դրա իրացման համար: Այդ ցանցը կարող է օգտակար լինել նաև հայրենական նորամուծությունների մասին տեղեկատվություն ստանալու և գովազդի համար:

4. Պետական երաշխիքների ապահովումը: Սա նշանակում է արտասահմանյան վարկային ուղղություններում նորամուծական ծրագրերի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում: Տարբեր երկրներում

կարող են ստեղծվել նաև հասարակական համատեղ միավորումներ: Արտասահմանյան ներդրումների համար խթան կհանդիսանան արտոնյալ վարկերի տրամադրումը և նորամուծական նախագծերը ֆինանսավորող՝ մրցութային հիմքով ընտրված առևտրային բանկերին պետական երաշխիքներ տալը:

10.5. Նորամուծական գործունեության պետական կարգավորման ձևերը

Պետությունը կարող է նորամուծական գործունեության վրա ազդել տարբեր ձևերով ու եղանակներով: Նորամուծությունների ոլորտում պետական ազդեցության եղանակները կարող են լինել ուղղակի և անուղղակի: Դրանց հարաբերակցությունը պայմանավորված է գոյություն ունեցող տնտեսական իրավիճակով և գործող տնտեսական հիմնադրույթներով: Տնտեսագետների մի մասն այն կարծիքին է, որ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է շեշտը դնել շուկայի վրա, իսկ մյուսները առաջնային են համարում պետական ակտիվ միջամտությունը:

Նորամուծական գործունեության վրա պետական կարգավորման ուղղակի ազդեցությունը իրականացվում է պետական շուկայի միջոցով: Նորամուծությունների պետական շուկան տնտեսական մեխանիզմ է, որը միջնորդավորում է հարաբերությունները իր՝ նորամուծությունների պատվիրատուի և որպես նորամուծությունների կապալառու հանդես եկող ֆիրմաների ու ձեռնարկությունների միջև: Նորամուծությունների պետական կարգավորման ուղղակի մեթոդները կիրառվում են առավելապես վարչական և նպատակային ձևերով:

Վարչական ձևը դրսևորվում է ուղղակի դոտացիոն ֆինանսավորմամբ, որն իրականացվում է նորամուծական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի համաձայն: Ուղղակի դոտացիոն ֆինանսավորման ընթացքում պետությունը հանդես է գալիս պատվիրատուի դերում և վճարում է իր պատվերների համար: Նորամուծությունների պետական շուկայում դինամիկ զարգացում ապահովելու արդյունավետ եղանակ է համարվում նախագծերի ընդունման փորձագիտական ճանապարհը: Մրցութային ընտրության ընթացքում ակնհայտորեն երևում է պետության կարգավորիչ դերը, որն այդ ընթացքում իրականացվում է ծրագրանպատակային ձևով, այսինքն՝ պետությունն աջակցում է կոնկրետ նպատակային ծրագրերին և դրանց ֆինանսավորումն իրականացնելով պայմանագրերի ձևով՝ սերտորեն կապակցում է նորամուծական գործունեություն իրականացնող երկու կողմերը, դրանց պարտավորություններն ու իրավունքները, ինչպես նաև պայմանագրերում նշվում են աշխատանքը սկսելու ժամկետները, աշխատանքը կատարողները, աշխատանքի բնույթը, նախատեսվող տույժերն ու տուգանքները և այլ իրավունքներ ու պարտականություններ: Այդ պայմանագրերը միմյանցից տարբերվում են նրանով, որ դրանց մի խմբում կարող են նախատեսվել հաստատագրված գումարներ, իսկ մյուսներում՝ ծախսերի փոխհատուց-

ման և շահույթի ստացման չափը, այսինքն՝ այդ տարբերությունները հիմնականում վերաբերում են կատարողի և պատվիրատուի պատասխանատվության աստիճանին:

Նորամուծական գործընթացը կազմակերպելու և կարգավորելու ընթացքում պետական կառույցներն օգտվում են նաև կարգավորման անուղղակի լծակներից: Անուղղակի տնտեսական մեթոդների միջոցով ձևավորվում են տարբեր հասարակական տնտեսական պայմաններ: Կարգավորման այսպիսի մեթոդների շարքն են դասվում հարկային և ամորտիզացիոն քաղաքականությունը, վարկային և ֆոնդային քաղաքականությունը, գնային կարգավորումը, հովանավորչական քաղաքականությունը: Անուղղակի մեթոդներն իրականացվում են տնտեսական կարգավորման տարբեր գործիքների միջոցով: Այս մեթոդներն ազդում են արդյունաբերական ֆիրմաների նորամուծական ռեսուրսների մատչելիության, դրանց գնի և կառուցվածքի վրա:

Շուկայական տնտեսությունում նորամուծական գործունեությունը դառնում է ֆինանսական ռեսուրսների հավաքագրման և վերաբաշխման կարևոր ուղի: Այն իրականացվում է նորամուծությունների վարկավորման միջոցով: Այդ գործընթացի հիմնական սուբյեկտներ են վարկային հիմնարկներն ու բանկերը: Բանկային համակարգի տարբեր սուբյեկտների միջև ծագում և ձևավորվում են բազմաթիվ հարաբերություններ, իրականացվում են գործառնություններ, որոնց ժամանակ դրսևորվում է յուրաքանչյուր կողմի շահը և գործունեության արդյունավետությունը: Վերջինս կարելի է որոշել ոչ միայն բանկային գործառնությունների որակով, այլև տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների արդյունքներով: Դրանցից է կախված ներդրման արդյունավետությունը, վարկերի վերադարձելիությունը և ֆինանսավարկային հարաբերությունների բոլոր մասնակիցների ակտիվությունը:

Նորամուծական գործունեության վարկավորումը ենթադրում է ներդրումային տարբեր ձևերի առկայություն: Այս նպատակով կարելի է ստեղծել մասնագիտացված վարկային ինստիտուտներ, ինչպես օրինակ՝ մասնագիտացված նորամուծական բանկերը:

Առավել տարածված է հարկային և վարկային քաղաքականությունների տարբեր տարրերի կիրառումը: Վարկային քաղաքականությամբ կարգավորվում է առավել մատչելի ֆինանսական ռեսուրսների ծավալը՝ նորամուծությունների ֆինանսավորման ակտիվությունը մեծացնելու համար: Վարկային կարգավորումն իրականացվում է նաև փոխառության տոկոսի մակարդակը կարգավորելու միջոցով: Իսկ կարգավորելով նորամուծությունների ֆինանսական ռեսուրսների գինը և կառուցվածքը՝ պետությունը հնարավորություն է ունենում ակտիվացնելու նորամուծական գործընթացները:

Շուկայական տնտեսությունում անընդհատ մեծանում է նորամուծական գործունեության ակտիվացման անուղղակի լծակների դերը: Նորամուծական գործունեության խթանումը կապված է գիտության առևտրային միտումների ավելացման, գիտության ոլորտում մասնավորի դերի մեծացման, նաև նորամուծությունների բազմաթիվ այլ ձևերի ի

հայտ գալու հետ: Ահա այս իմաստով էլ կարևորվում է հարկային, վարկային, ամորտիզացիոն, գնային քաղաքականությունների դերը:

Զարգացած երկրների հարկային քաղաքականությունը արտադրական ներդրումները խթանում է միայն նոր տեխնիկայի, նոր նյութերի, նոր տեխնոլոգիայի օգտագործման մասով: Հարկային քաղաքականությունը հնարավորություն է տալիս հարկային աջակցության միջոցով ձեռնարկություններին տրամադրել բազմաթիվ արտոնություններ: Դրանք վերաբերում են ներդրումային և նորամուծական գործունեության իրական նվաճումների ձեռքբերմանը: Պետությունը կարող է նորամուծական գործունեության վրա ազդել հարկային կանոնների, հարկագանձման դրույքաչափերի, հարկագանձման կառուցվածքի և այլնի փոփոխությամբ: Հարկային քաղաքականության օգնությամբ զարգացման կոնկրետ փուլերում կարող է օպտիմալ հարաբերակցություն ստեղծվել նորամուծական գործունեության ֆինանսավորման բյուջետային միջոցների և ինքնաֆինանսավորման ձևերի միջև: Հարկային քաղաքականությունը հնարավորություն է տալիս միջոցառումներ իրականացնել տարբեր ուղղություններով: Եթե այդ միջոցառումների արդյունքում ավելանում են նորամուծական գործունեությանը տրամադրվող միջոցները, ապա այն իր ազդեցությունն է ունենում արտադրության զարգացման, հիմնական կապիտալի նորացման և շուկայական բազմաթիվ կառույցների վրա, որոնք կարող են նպաստել նորամուծական գործունեությանը (օրինակ՝ բանկային համակարգը):

Հարկային քաղաքականության միջոցով պետությունն ազդում է նորամուծական գործունեության բոլոր կողմերի վրա: Դիֆերենցելով հարկման պայմանները՝ հնարավոր է ազդել ֆիրմայի նորամուծական ռեսուրսների կառուցվածքի, դրանց արժեքի մատչելիության և ժամկետային պարամետրերի վրա: Հարկային քաղաքականությունը կարող է նախատեսել հարկային լրահատկացումներ գործունեության որոշակի տեսակների համար, օրինակ՝ եկամտի հարկվող մասից այն գումարի բացառումը, որը կապված է նոր մեքենաների ու սարքավորումների ստեղծման ու ներդրման հետ: Վերջինս կարող է նպաստել հիմնական կապիտալի նորացմանը:

Նորամուծական գործունեության վրա պետական անուղղակի ազդեցության գործիք է նաև մրցակցային կանոնները կարգավորող օրենսդրությունը:

10. 6. Նորամուծական գործունեության ֆինանսական ապահովման համակարգը

Նորամուծությունների ֆինանսավորումն իրականացվում է տարբեր մեխանիզմներով՝ տնտեսական զարգացման աստիճանին ու գոյություն ունեցող համակարգին համապատասխան: Այդ ֆինանսական համակարգը կազմված է տարբեր տարրերից և ներառում է հետևյալը՝

1. նորամուծական գործունեության ֆինանսավորման աղբյուրները,
2. տարբեր աղբյուրներից ստացվող միջոցների հավաքագրման մեխանիզմը և այդ կապիտալի ներդրման քաղաքականությունը,
3. ներդրումների հսկողության մեխանիզմը,
4. նորամուծական գործունեության համար տրամադրված միջոցների վերադարձելիությունը:

Նորամուծական գործունեության ֆինանսավորման առանձնահատկություններից են աղբյուրների բազմազանությունը և ֆինանսական ռեսուրսների օգտագործման առավել բարձր արդյունավետությունը: Նորամուծական նախագծի ընտրության հիմքում դրվում է ֆինանսական հատույցի գաղափարը, դրա հիման վրա են որոշվում նորամուծական գործունեության վերջնական արդյունքները, ֆինանսական քաղաքականության կենսունակությունը և պետության ու տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների բնույթն այդ ոլորտում:

Ֆինանսական ապահովման էությունն արտացոլվում է նորամուծությունների ոլորտում ֆինանսների գործառույթային ուղղություններում: Ֆինանսական ապահովման միջոցով իրականացվում է երեք հիմնական գործառույթ՝

1. Վերարտադրության, որի դեպքում գործում է նյութական և ֆինանսական ռեսուրսների հաշվեկշռվածության սկզբունքը վենչուրային կապիտալի շրջապտույտի բոլոր փուլերում: Այս գործառույթն իրականացնելիս ֆինանսական ռեսուրսները միջնորդավորում են նորամուծական կապիտալի շարժը՝ նրա բոլոր փուլերում: Հետևաբար ֆինանսական ռեսուրսները արագացնում կամ դանդաղեցնում են ներդրումների հոսքը դեպի նորամուծական գործունեության ոլորտներ:
2. Բաշխման, որը դրսևորվում է դրամական հոսքերի ձևավորմամբ և օգտագործմամբ՝ կապիտալի արդյունավետ կառուցվածքն ապահովելու համար իրականացվող գործողություններում: Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում նորամուծական կապիտալի ձևավորումը տեղի է ունենում վենչուրային կազմակերպություններում և այլ ֆինանսական կառույցներում:
3. Հսկողության, որը իրականացվում է նորամուծությունների ոլորտում իրական դրամական պտույտի ֆինանսական մոնիտորինգի միջոցով: Դա նշանակում է, որ հսկողություն է իրականացվում ֆինանսական նորամուծությունների, բոլոր տիպի նորամուծությունների ստեղծման պայմանների, տարբեր վճարային հաշվարկների և ֆինանսական գործողությունների նկատմամբ:

Ֆինանսական ապահովում անվանում ենք այն գործունեությունը, որն ուղղված է կապիտալի ներգրավմանը, բաշխմանն ու օգտագործմանը, ինչպես նաև ռիսկային կապիտալի շուկայում իրականացվող՝ դրանց կառավարման գործունեությունը: Նորամուծական գործունեության ապահովման առումով չափազանց կարևոր է ֆինանսական ներուժի ձևավորման և օգտագործման խնդիրների համակարգը: Նորամուծությունների ֆինանսական ներուժը այն ռեսուրսների ամբողջությունն է, որ հասարակությունն առանձնացնում է նորամուծական նախագծերի իրա-

գործման համար: Ֆինանսական ապահովման համակարգը կարող է ավելի կամ պակաս ճկուն և ընկալունակ լինել՝ կապված տնտեսությունում ընթացող տարբեր գործընթացների հետ: Այդպիսի գործընթացներ են՝

1. Տնտեսության զարգացման ընդհանուր միջոցները և շուկային անցնելու պայմանները,
2. Նորամուծական գործունեության համար պետության տրամադրած միջոցները և ընդհանրապես նորամուծությունների ֆինանսական ներուժի օպտիմալ հարաբերակցություններն ու փոփոխությունները,
3. Տնտեսության մեջ նորամուծական գործունեության զարգացման միտումները՝ նկատի ունենալով, որ այդ միտումները ձևավորվում են շուկայական ինքնակարգավորման մեխանիզմի ազդեցությամբ:

Նորամուծական գործունեությունը ֆինանսական մեծ միջոցներ պահանջող գործունեություն է և, հետևաբար, տնտեսավարող սուբյեկտները երբեմն սեփական միջոցներով չեն կարողանում կազմակերպել այդ գործընթացը: Ընդհանրապես մասնավոր հատվածը չի կարող իր վրա վերցնել գիտության ֆինանսավորման խնդիրը: Այն կարող է այդ գործընթացին մասնակցել մասնակիորեն:

Նորամուծությունների ֆինանսավորման գործընթացում, եթե միայն մասնավոր հատվածն է իր վրա մեծ ծախսեր վերցնում, ապա կրճատվում է ստացվող շահույթի մեծությունը, նվազում մրցակցությունը: Դրա համար էլ պետությունն իր վրա է վերցնում նորամուծությունների ֆինանսավորման ծախսերի մի մասը, սակայն այս դեպքում դժվարություններ են ծագում պետական բյուջեի համար: Միևնույն ժամանակ, մակրոմակարդակում նորամուծություններին ուղղված ներդրումները չեն կարող միայն շահույթի նպատակ ունենալ: Օրինակ՝ հիմնարար հետազոտություններում կատարվող ներդրումները: Դրանք ընդհանրապես գիտությունը զարգացնելու նպատակ ունեն:

Նորամուծական գործունեությունում պետական մասնակցությունը կարող է դրսևորվել ինչպես կենտրոնացված միջոցներով ֆինանսական աջակցությամբ (ուղղակի ֆինանսավորում), այնպես էլ շուկայական մեխանիզմների կիրառման պայմանների ստեղծմամբ (անուղղակի ֆինանսավորում):

Շուկայական տնտեսությունում տարածված է ֆինանսավորման պայմանագրային ձևը, որը կիրառվում է մրցութային կարգով: Պայմանագիր է կնքվում պետական մարմնի ղեկավարի և կապալառուի միջև՝ նախատեսելով, որ պատվիրատուն ֆինանսական վերջնահաշիվ կներկայացնի կապալառուին միայն աշխատանքի ավարտից հետո: Այդ պայմանագրի հիմնական առավելություններից են՝

1. Գիտահետազոտական ոլորտը ենթարկվում է առևտրային նպատակների, այսինքն՝ այն ուղղվում է սպառողների պահանջների բավարարմանը:
2. Պայմանագիրը թեթևացնում է գիտության և արտադրության ինտեգրումը: Այդ ժամանակ հնարավոր է դառնում գիտաարտադրական համալիրների ստեղծումը:

3. Պայմանագիրը նպաստում է պետության կողմից նորամուծությունների իրականացմանը, ինչպես նաև խթանում տնտեսական արդյունավետությունը մասնավոր հատվածում:

Նորամուծական գործունեության ֆինանսավորման կարգը միկրոմակարդակում այլ է: Ձեռնարկություններում այդպիսի ֆինանսավորումը իրականացվում է հետևյալ ձևերով՝

1. ինքնաֆինանսավորում,
2. փոխառու միջոցների ներգրավում,
3. խառը և այլ աղբյուրներից միջոցների ներգրավում:

Ինքնաֆինանսավորումը դրամական միջոցների կառավարման ֆինանսական մարտավարությունն է, որը նպատակ ունի ընդլայնված վերարտադրության ֆինանսավորման համար կապիտալ կուտակել: Ինքնաֆինանսավորում կարող է իրականացվել՝

- կուտակված կապիտալացված շահույթի հաշվին,
- կուտակված ամորտիզացիոն ֆոնդից,
- պահուստային ֆոնդի միջոցներից, որի նպատակն է ծածկել ժամանակավոր վնասները,
- սեփական կապիտալից կամ կանոնադրական ֆոնդից:

Փոխառու միջոցները կարող են գոյանալ հետևյալ աղբյուրներից՝

- բանկային վարկերից, նախ և առաջ՝ երկարաժամկետ և կարճաժամկետ ներդրումային վարկերից,
- ֆոնդային շուկայում ձեռնարկության թողարկած հատուկ փոխառությունների իրացումից ստացվող միջոցներից,
- առևտրային վարկի միջոցով. սա այն դեպքն է, երբ գնովի նյութական ռեսուրսները կարող են ձեռք բերվել ապառիկ կամ էլ վճարի հետաձգմամբ,
- լիզինգով, երբ հատուկ պատվիրված սարքավորումը որոշակի ժամանակով օգտագործելու թույլտվություն է ձեռք բերվում (վարձակալության իրավունքով):

Ներգրավված միջոցներից են՝

- կազմակերպության, ձեռնարկության հիմնադիր փայատերերի և բաց բաժնետիրական ընկերություններում ձեռք բերած բաժնետոմսերի տերերի ներգրավված միջոցները,
- ֆոնդային շուկայում բաժնետոմսերի տեղաբաշխումից ստացվող միջոցները:

Խառը և այլ աղբյուրներից է նորամուծական վարկը, որն առաջանում է այն ժամանակ, երբ կնքվում է արտադրանքի իրացման ֆորվարդային պայմանագիր, որի դեպքում հետաձգվում է մատակարարման ժամկետը, սակայն պատվիրատուից ստացվում է լրիվ վճարը (բայց բավականին ցածր գնով):

Նորամուծական գործունեության ֆինանսավորման համար, ըստ էության, կարող է լինել երկու աղբյուր՝

1. ձեռնարկության միջոցները,
2. կողմնակի մասնագիտացված վենչուրային ներդրողների և կրեդիտորների միջոցները:

Շուկայական տնտեսությանը բնորոշ հասկացություն է ռիսկային կապիտալը: Այն ի հայտ է եկել այդ տնտեսության ձևավորման հետ: Ռիսկային կապիտալը նորամուծությունների իրականացման կարևոր և արդյունավետ գործիք է և լայն տարածում ունի զարգացած երկրներում: Վենչուրային կապիտալը երկարաժամկետ ռիսկային կապիտալ է, որը ներդրվում է նոր և արագ զարգացող ընկերությունների բաժնետոմսերում՝ նպատակ ունենալով ստանալ բարձր շահույթ՝ այդ բաժնետոմսերը ֆոնդային բորսայում գրանցվելուց հետո: Վենչուրային ֆինանսավորման դեպքում հիմնադիրներից մեկի ուղղակի ներդրումները օգտագործվում են մյուսի տեխնոլոգիական նվաճումների առևտրականացման համար: Վենչուրային (ռիսկային) ձեռնարկությունները օպերատիվ ձևով մշակում և արդյունաբերական նմուշի փուլին են հասցնում բազմաթիվ նորույթներ: Շատ հիմնարար նորամուծություններ իրականացնելու համար պահանջվում են խոշոր կապիտալ ներդրումներ, իսկ փոքր ձեռնարկություններն այդպիսի միջոցներ չունեն: Ահա այս խոչընդոտը վերացնելու համար գոյություն ունեն ռիսկային հիմնադրամները: Դրանց ցանկը կարող է լինել տարբեր, նայած, թե ըստ ինչ հատկանիշի են դրանք խմբավորում:

Վենչուրային ներդրողները արհեստավարժ ձևով վերլուծում են բաժնետերերի ռիսկային նորամուծությունները և դրա հիման վրա կատարում ներդրումներ: Այդպիսի վենչուրային ներդրողների համար կարևոր է պարզել, թե տվյալ ձեռնարկությունն ինչպես է նախապատրաստված հեռանկարային ներդրումային նորամուծական նախագծին: Վենչուրային ներդրողները պետք է պարզեն նորամուծական նախագծի համար անհրաժեշտ գիտատեխնիկական կուտակված ներուժը: Նրանց անհրաժեշտ է նաև իմանալ, թե որտեղ է հնարավոր գտնել առևտրային շահավետ գնորդ, և նրա հետ ինչ համաձայնագիր է նախատեսվում կնքել, այսինքն՝ վենչուրային ներդրողները պարզում են, թե որքանով է ձեռնարկությունը պատրաստ կազմակերպական, տեխնոլոգիական և առևտրային ապագա գործընթացներին:

10.7. Նորամուծական գործունեության ենթակառուցվածքի ձևավորումը

Նորամուծական գործունեության ենթակառուցվածքն այն կառույցների ամբողջությունն է, որոնք սպասարկում և ապահովում են նորամուծական գործունեության իրականացումը: Նորամուծությունների ենթակառուցվածք ստեղծելու համար կարևոր նշանակություն ունեն ինստիտուցիոնալ վերափոխումները՝ սեփականաշնորհումը, ֆինանսաարդյունաբերական խմբերի ստեղծումը, փոքր ձեռնարկատիրության գոյությունը և այլն: Սրանք բոլորն ուղղված են նորամուծական ենթակառուցվածքի ստեղծմանը և, վերջին հաշվով, նպաստում են նորամուծական գործունեության ակտիվացմանը, իսկ դա նշանակում է, որ երկիրը կարող է ունենալ մրցունակ արտադրանք և յուրացնել բարձր տեխնոլոգիաներ:

Նորամուծությունների ենթակառուցվածքում կարող են լինել նորամուծական զարգացման բազմաթիվ ու բազմատեսակ ֆոնդեր, ապահովագրական ընկերություններ, և այդ ամենի համար անհրաժեշտ է ստեղծել իրավական նորմատիվային հիմք: Հենվելով այդպիսի իրավական դաշտի վրա՝ հնարավոր կլինի ստեղծել նորամուծական կենտրոններ, տեխնոպարկեր, գիտական ինկուբատորներ, տեխնոպոլիսներ, ստանդարտացման և սերտիֆիկացման կենտրոններ, նորամուծական գործունեությանը սպասարկող ծառայություններ, իսկ դրանց ստեղծման համար անհրաժեշտ է խթանել տեղեկատվական ցանցի զարգացումը:

Նորամուծական ենթակառուցվածքի ձևավորումը ենթադրում է նաև բանկային և ֆինանսական համապատասխան կառույցների ստեղծում, (օրինակ՝ նորամուծական բանկեր, նորամուծական բորսաներ, նորամուծական տարբեր ֆիրմաների թողարկած արժեթղթեր, երաշխիքագրավային ֆոնդեր և այլն):

Ենթակառուցվածքի հիմնական գործառույթը տնտեսավարման արտաքին պայմանների ստեղծումն է առանձին տնտեսավարող սուբյեկտների և ամբողջ ազգային տնտեսության համար:

Նորամուծական ենթակառուցվածքում ներառված բոլոր կազմակերպությունները գտնվում են որոշակի տեխնոլոգիական և տնտեսական կապերի մեջ, որոնք արտահայտում են նորամուծական գործունեության տարբեր փուլերի միասնությունը:

Նորամուծական ոլորտի ենթակառուցվածքն ապահովում է տնտեսության հարմարվողականությունը, նպաստում է առաջադիմական տեխնոլոգիայի հավաքագրմանը և արդյունքի վերածմանը: Այս գործընթացի հիմքում նորամուծական ոլորտի և շուկայի միջև բազմատեսակ և երկարատև փոխկապվածությունն է:

Նորամուծական գործունեության ենթակառուցվածքի բաղադրիչ ոլորտներն են՝ տրանսպորտը և կապը, ինֆորմատիկան և հեռահաղորդակցությունը, ֆինանսավարկային ոլորտը, ֆոնդային շուկան, միջնորդների ցանցը, հատուկ բնույթի ծառայություններ մատուցող ընկերությունները և ձեռնարկությունները:

Նորամուծական ենթակառուցվածքի պետական և ոչ պետական կազմակերպությունների միաժամանակյա գոյությունը ենթադրում է դրանց փոխազդեցության իրավական և տնտեսական մեխանիզմներ:

10.8. Մտավոր սեփականության շուկայի կարգավորումը

Նորամուծությունների պետական կարգավորման գործընթացը ենթադրում է նաև մտավոր սեփականության շուկայի կարգավորում: Տարբեր երկրների մրցունակությունը և համեմատական առավելությունները էապես կախված են մտավոր սեփականության շուկայի զարգացման աստիճանից, որը վճռորոշ դեր ունի ազգային տնտեսության մրցակցային

առավելությունների ապահովման գործում: Մտավոր սեփականությունն իրավունք է, որը վերաբերում է գրական, գեղարվեստական և գիտական ստեղծագործություններին, գյուտերին, գիտական հայտնագործություններին, արդյունաբերական սեփականության որոշ տեսակներին, համաձայնագրերին: Նշված բոլոր իրավունքները վերաբերում են ոչ նյութական օբյեկտի, այսինքն՝ մարդկային մտքի արդյունքին: Մտավոր սեփականությունը բաղկացած է երկու տարրերից՝

1. հեղինակային իրավունք,
2. արդյունաբերական սեփականություն:

Գիտական գիտելիքների բոլոր տեսակները ձևավորվում են մարդկանց մտավոր, ստեղծագործական ճանաչողության միջոցով: Այն ապահովում է բնության և հասարակության մասին գիտելիքների կուտակումը, տարածումը և օգտագործումը, իսկ դրանք ուղղվում են արտադրության կատարելագործմանը, նոր ապրանքների ստեղծմանը, մարդկանց կենսապայմանների բարելավմանը, մշակութային մակարդակի բարձրացմանը, բնության և հասարակության արդյունավետ փոխգործունեությանը: Հեղինակային իրավունքն ունի պահպանության իր օբյեկտներն ու առանձնահատկությունները: Հեղինակային իրավունքով պահպանվող օբյեկտներ են գրական, գիտական, արվեստի գործերը, համակարգչային բոլոր ծրագրերը և դրանց ածանցյալ ստեղծագործությունները: Հեղինակային իրավունքի պահպանման առանձնահատկությունները իրավական բնույթի են: Հեղինակային իրավունքը չի տարածվում գաղափարների, մեթոդների և տեսակետների վրա: Այն կարող է ապահովել միայն դրանց ներկայացման ձևի պահպանումը: Հարակից իրավունք հասկացությունը վերաբերում է բեմադրություններին, տարբեր կատարումներին, ձայնագրություններին և տեսագրություններին, հեռարձակող կազմակերպությունների եթերային և մալուխային հաղորդումներին: ՀՀ-ում գործում է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքը, որով պահպանվում են հեղինակային իրավունքի բազմաթիվ օբյեկտներ, ինչպիսիք են՝ գրական և գիտական գործերը, դրամատիկ և երաժշտական ստեղծագործությունները, կինոֆիլմերը, գեղանկարչության, ճարտարապետական, լուսանկարչական, դեկորատիվ արվեստի գործերը, տառատեսակները, ԷՀՄ ծրագրերը և այլ ստեղծագործություններ:

Մտավոր սեփականության շուկայի կարգավորման նպատակը հասարակական և մտավոր ստեղծագործողի անհատական շահերի կանոնակարգումն է:

Արդյունաբերական սեփականությունը մտավոր սեփականության բաղկացուցիչն է, որը ցույց է տալիս այդ սեփականության օբյեկտի օգտագործման իրավատիրոջ բացառիկ իրավունքը և հիմնականում պաշտպանվում է արտոնագրով կամ վկայագրով: Արդյունաբերական սեփականությունը սահմանվում է որպես արտոնագրված կամ չարտոնագրված ցանկացած գիտելիք, որը ենթակա է իրացման և կարող է փոխանցվել: Ըստ էության, դա արտադրության համար համակարգված գիտելիքների ամբողջություն է: Արդյունաբերական սեփականությունը չպետք է շփոթել

արտադրության մեջ օգտագործվող շարժական և անշարժ գույքի հետ: Արդյունաբերական սեփականության օբյեկտներ են՝

1. գյուտերը,
2. օգտակար մոդելները,
3. արդյունաբերական նմուշները,
4. սելեկցիոն նվաճումները,
5. ապրանքների ծագման վայրի տեղանունները,
6. ֆիրմային անվանումները,
7. ապրանքային և սպասարկման նշանները,
8. ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաները,
9. չբացահայտված տեղեկատվությունը (նոու- հաու):

Առաջին չորսը պաշտպանվում են արտոնագրով, հաջորդ չորսը՝ վկայագրով, իսկ նոու-հաուն պաշտպանվում է քաղաքացիական իրավունքի կանոններով: «Նոու-հաու»-ն իրենից ներկայացնում է ձեռնարկության կողմից կուտակված գիտական և տեխնոլոգիական գիտելիքները, արտադրական փորձը՝ նախագծային, հետազոտական, կառավարչական, առևտրային, ֆինանսական բնագավառներում:

Արդյունաբերական սեփականության օբյեկտների ստեղծման, օգտագործման, փորձաքննության, պահպանության հետ կապված գույքային և ոչ գույքային հարաբերությունները կարգավորվում են «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքով:

Արտոնագիրը վկայում է սեփականության օբյեկտի օգտագործման բացառիկ իրավունքը, օբյեկտի առաջնությունը, դրա նկատմամբ հեղինակությունը և տեխնիկական լուծման նոր մակարդակը:

ՀՀ-ում մտավոր սեփականության շուկայի իրավական կարգավորումը իրականացվում է նաև «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին», «Աշխարհագրական անվանումների մասին», «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին», «Գովազդի մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

ՀՀ-ն միացել է մտավոր սեփականությանն առնչվող միջազգային բազմաթիվ համաձայնագրերի և դարձել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության անդամ: Մտավոր սեփականության շուկայի կարգավորման ընթացքում կարևորվում է մտավոր սեփականության օբյեկտների գնահատման հիմնախնդիրը: Դրա լուծումը ենթադրում է այնպիսի միջոցառումների ամբողջություն, որը թույլ կտա արժեքավորել գնահատվող մտավոր սեփականության օբյեկտը՝ որպես ապրանք: Գոյություն ունեն գնահատման տարբեր մեթոդներ: Արդյունաբերության սեփականության օբյեկտի արժեքը գնահատողի կողմից օբյեկտի տնտեսական օգտակարության հիմնավորումն է:

Ամփոփում

1. Նորամուծական քաղաքականությունը կապող դեր է կատարում պետական գիտատեխնիկական ու արդյունաբերական քաղաքականության միջև:
2. Յուրաքանչյուր տնտեսակարգի մրցակցային առավելությունները, զարգացման տեմպերն ու աճի հնարավորությունները կապված են նորամուծական գործունեության հետ:
3. Նորամուծական գործունեության կարգավորման և ֆինանսական ապահովման մեխանիզմների ուսումնասիրումն ու բացահայտումն անհրաժեշտություն է:
4. Նորամուծությունների պետական քաղաքականությունը հետապնդում է տարբեր նպատակներ և իրականացվում է որոշակի մեթոդներով ու ձևերով:
5. ՀՀ-ում նորամուծական քաղաքականության հիմնական խնդիրը բարենպաստ նորամուծական միջավայրի ստեղծումն է:
6. Նորամուծական գործունեության ֆինանսավորման առանձնահատկությունները պայմանավորված են գոյություն ունեցող աղբյուրների բազմազանությամբ:
7. Վենչուրային կապիտալը շուկայական տնտեսությանը բնորոշ, հատուկ հասկացություն է:
8. Նորամուծական ենթակառուցվածքի ստեղծումը ապահովում է առաջադիմական տեխնոլոգիաների հավաքագրում և վերածում մրցունակ ապրանքների:
9. Մտավոր սեփականության շուկայի կարգավորումը վճռորոշ դեր ունի երկրի մրցունակության և համեմատական առավելությունների ապահովման գործում:

Թեստեր և խնդիրներ

1. ՀՀ-ում գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման աղբյուր չեն.

1. վարկերը,
2. դրամաշնորհները,
3. տեղական բյուջեների միջոցները,
4. խորհրդատվական գործունեությունից ստացված միջոցները:

2. Նորամուծություն կարող է լինել.

1. ապրանքը,
2. տեխնոլոգիական գործընթացը,
3. սոցիալական ծառայության նոր ձևը,
4. բոլորը միասին:

3. Նորամուծություններին հատուկ չէ.

1. առևտրային իրացումը,
2. գիտատեխնիկական նորույթը,
3. վիճակագրական ընտրությունը,
4. արտադրական կիրառումը:

4. Նորամուծությունների պետական քաղաքականության խնդիրը չէ.

ա) պետական կարգավորման մեխանիզմների ստեղծումը,
բ) նորամուծությունների գնահատման մեթոդների սահմանումը,
գ) սոցիալական պայմանների բարելավումը,
դ) նորամուծությունների ֆինանսավորման ուղիների բացահայտումը:

5. Հեղինակային իրավունքով պահպանվող օբյեկտ չէ.

ա) գիտական ստեղծագործությունը,
բ) արդյունաբերական նմուշը,
գ) արվեստի ստեղծագործությունը,
դ) համակարգչային ծրագիրը:

6. Շուկայում համանմանը չունեցող, սպառողական պահանջարկ ներկայացնող նոր արտադրատեսակի գինը կարող է սահմանվել՝ առաջին հերթին հիմնվելով հետևյալի վրա.

ա) բացահայտված պահանջարկի,
բ) յուրացվող արտադրատեսակի մրցակցային առավելությունների,
գ) ինքնարժեքի կալկուլյացիայի,
դ) թողարկման և վաճառահանման նախատեսվող ծավալի:

7. *Նշվածներից որը նորամուծական գործունեության անուղղակի կարգավորման մեխանիզմ չէ.*
   ա) հարկային քաղաքականությունը,
   բ) դոտացիոն ֆինանսավորումը,
   գ) վարկային քաղաքականությունը,
   դ) գնային համակարգը:

8. *Նորամուծական գործունեության ֆինանսավորման փոխառու միջոց չէ.*
   ա) լիզինգը,
   բ) առևտրային վարկը,
   գ) պահուստային ֆոնդը,
   դ) ներդրումային վարկը:

9. *Ըստ 2005 թվականի ՀՀ պետական բյուջեի՝ գիտությանը հատկացվող միջոցները կազմում են ընդամենը 4102622,1 հազ. դրամ: Այդ շրջանակներում հաստատված ծախսային ուղղություններից են.*
   - *գիտական պետական կազմակերպություններում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացում՝ 1505774,0 (հազ. դրամ)*
   - *գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում՝ 832644,1 (հազ. դրամ)*
   - *ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում՝ 81058,9 (հազ. դրամ)*
   - *գիտական կադրերի պատրաստում՝ 54455,3 (հազ. դրամ)*
   - *պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում՝ 1077689,8 (հազ. դրամ):*

Հաշվել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային և նպատակային ֆինանսավորման ձևերով առանձնացված միջոցների մեծությունը:

10. *Լիցենզիայի գնի մեջ ինչի՞ է հավասար գյուտի արտոնագրման իրավունքի փոխանցման մեծությունը, եթե հայտնի է, որ գյուտը օգտագործողի տարեկան շահույթը՝ Gd, մեկ միավոր արտադրանքից (որ ստացվում է նոր տեխնոլոգիայի կիրառումից) կազմում է 120$, միջին տարեկան պլանավորվող թողարկումը՝ Q, և վաճառքը՝ 1000 հատ:*

Լիցենզիայի ժամկետը 7 տարի է: Արտոնագրի տերը նպատակային արդյունքը իրացնում է 15 ԱՄՆ դոլարով (P_2): Վերահսկվող շուկաներում պլանավորվում է լիցենզավորված տեխնոլոգիայով արտադրանքը վաճառել 17 ԱՄՆ դոլար (P_1) գնով:

Հիմնական հասկացություններ

Գիտատեխնիկական առաջադիմություն
Պետական գիտատեխնիկական քաղաքականություն
Նորամուծություններ
Նորամուծությունների ոլորտ
Նորամուծական գործընթաց
Նորամուծական ներուժ
Նորամուծական պետական քաղաքականություն
Նորամուծությունների մարտավարություն
Նորամուծությունների ռազմավարություն
Նորամուծությունների ֆինանսական ապահովման համակարգ
Նորամուծական ենթակառուցվածք
Մտավոր սեփականություն
Հեղինակային իրավունք
Արդյունաբերական սեփականություն

Հարցեր կրկնության համար

1. Ինչպե՞ս են կապված պետական գիտատեխնիկական և նորամուծական քաղաքականությունները:
2. Ինչո՞վ են տարբերվում նորամուծությունը և նորույթը:
3. Որո՞նք են նորամուծությունների գործառույթները:
4. Որո՞նք են նորամուծական գործունեության հիմնական հատկանիշները:
5. Ինչպիսի՞ խնդիրներ է լուծվում նորամուծությունների պետական քաղաքականության միջոցով:
6. Ի՞նչ մեխանիզմներով է իրականացվում նորամուծությունների պետական քաղաքականությունը:
7. Որո՞նք են նորամուծական գործունեության պետական աջակցության ուղղակի և անուղղակի միջոցները:
8. Ո՞րն է նորամուծական գործունեության ֆինանսական ապահովման էությունը:
9. Ի՞նչ տարրերից է բաղկացած նորամուծական գործունեության ֆինանսական ապահովման համակարգը:
10. Նորամուծական գործունեության ֆինանսական ապահովման ի՞նչ աղբյուրներ կարող են ձևավորվել ՀՀ տնտեսությունում:
11. Ո՞րն է նորամուծական ենթակառուցվածքի ձևավորման անհրաժեշտությունը:
12. Ի՞նչ տարրերից է բաղկացած մտավոր սեփականությունը:

Գ Լ Ո Ւ Խ 11

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Տրանսպորտի մակրոտնտեսական քաղաքականության էությունը:
- Տրանսպորտային գործունեության պետական կարգավորման խնդիրները:
- Տրանսպորտի գործունեության ցուցանիշների հաշվարկման կարգը:
- Կապի գործունեության պետական կարգավորումը:
- Կապիտալ շինարարության պետական քաղաքականությունը:
- Կապիտալ շինարարության ցուցանիշների հաշվարկումը:
- Առևտրի և հանրային սննդի պետական կարգավորումը:

11.1. Տրանսպորտի մակրոտնտեսական քաղաքականության էությունը և հիմնական գծերը

Տրանսպորտը էական նշանակություն ունի երկրի ամբողջ տնտեսության զարգացման գործում: Տրանսպորտի միջոցով իրականացվում են բեռնափոխադրումներ, ուղևորափոխադրումներ, մատուցվում ծառայություններ բնակչությանը: Տնտեսության մյուս ճյուղերի հետ միասին տրանսպորտը մասնակցում է համախառն ներքին արդյունքի ստեղծմանը և ուրույն տեղ է գրավում աշխատանքի հանրային բաժանման մեջ:

Բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտն արտադրական գործընթացը շարունակում է շրջանառության ոլորտում: Արտադրական գործընթացը համարվում է ավարտված, երբ արտադրված արտադրանքը հասցվում է սպառողին: Բեռնատար տրանսպորտում նոր սպառողական արժեք չի ստեղծվում, սակայն տեղի է ունենում ստեղծված արժեքի մեծացում: Տրանսպորտում կատարվում են նաև զգալի բեռնման-բեռնաթափման աշխատանքներ: Հենց արտադրանքի տեղափոխման, բեռնման և բեռնաթափման աշխատանքների ծավալներով պայմանավորված՝ տեղի է ունենում արտադրանքի արժեքի մեծացումը:

Երկրի տրանսպորտային համակարգը սովորաբար ներառում է երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակաշարային, ծովային և գե-

տային տրանսպորտի տեսակները: Սպառողական արժեքների փոխադրումը, որի ընթացքում տեղի է ունենում փոխադրվող առարկաների արժեքի մեծացումը, իրենից ներկայացնում է տրանսպորտի արտադրանքը: Արտադրական գործընթացի այս առանձնահատկությամբ տրանսպորտը տարբերվում է տնտեսության մյուս ճյուղերից՝ արդյունաբերությունից, շինարարությունից և գյուղատնտեսությունից:

Տրանսպորտային գործընթացի առանձնահատկությունները մի կողմից պայմանավորում են տրանսպորտի առավելագույն մասնակցությունը ՀՆԱ ստեղծմանը, իսկ մյուս կողմից, պահանջում են զգալի աշխատանքային ծախսեր և մեծ կապիտալ ներդրումներ՝ տրանսպորտային համակարգի շահագործումն ապահովող հիմնական ֆոնդեր ստեղծելու համար:

Տրանսպորտի կարևոր դերն այն է, որ նպաստում է արտադրողական ուժերի արդյունավետ տեղաբաշխմանը, արտադրության մասնագիտացման ու կոոպերացման մակարդակի բարձրացմանը, նոր տնտեսական շրջանների ձևավորմանը, ապահովում է բնական հարստության օգտագործումը: Տարբեր մարզերի և շրջանների տնտեսական զարգացման մակարդակների համահարթեցումը, քաղաքների և բնակավայրերի տեղաբաշխումը էապես կախված են տրանսպորտի մատչելիությունից: Տրանսպորտն ապահովում է նաև արտաքին տնտեսական կապերն ու ազդում դրանց ուղղվածության վրա:

2003թ. ՀՀ բեռնափոխադրումները կազմել են 7061.1 հազ. տոննա, իսկ բեռնաշրջանառությունը՝ 1744.6 մլն տ/կմ: Փոխադրումների ընդհանուր ծավալը տրանսպորտի առանձին տեսակների միջև բաշխվել է հետևյալ կերպ.

- երկաթուղային փոխադրումները կազմել են 2125.5 հազ. տոննա, կամ փոխադրումների 30,1%-ը, որից ներհանրապետական փոխադրումները՝ 637.65 հազ. տոննա կամ մոտ 30%-ը,
- ավտոտրանսպորտով՝ 4086.2 հազ. տոննա, այսինքն՝ 57,9%-ը,
- օդային տրանսպորտով՝ 8.8 հազ. տոննա՝ 0,12%-ը,
- խողովակաշարային տրանսպորտով 840.6 հազ. տոննա՝ 11,9%-ը:

Տրանսպորտի զարգացումը կարգավորելու նպատակով մշակվում է տրանսպորտի և կապի զարգացման ծրագիր, որը սերտորեն կապված է տնտեսական ու սոցիալական զարգացման մյուս ծրագրերի հետ:

Տրանսպորտի ծրագրի հիմնական խնդիրն է՝ բավարարել տնտեսության և բնակչության պահանջարկը բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների նկատմամբ: Տրանսպորտի առջև դրված կարևոր խնդիրներից են՝ փոխադրումների ինտենսիվության մեծացումը և փոխադրման ծախսերի կրճատումը: Վերջինս նաև տնտեսության առանձին ճյուղերի արտադրանքի ինքնարժեքի կրճատման կարևոր գործոն է: Տրանսպորտային ծախսերի կրճատման նպատակով միջոցառումներ են մշակվում տրանսպորտի շարժակազմի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու, բեռնման և բեռնաթափման աշխատանքները մեքենայացնելու, փոխադրման եղանակները բարելավելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ: Տրանսպորտի

առանձին տեսակներով կատարվող ուղևորափոխադրումների մեջ ՀՀ-ում գերակշռում է ավտոմոբիլային տրանսպորտը: Այսպես, 2003թ. ՀՀ-ում կատարված ուղևորափոխադրումների 85.5%-ը բաժին է ընկնում ավտոմոբիլային, 0.6%-ը՝ երկաթուղային, 0.5%-ը՝ օդային և 13.4%-ը՝ էլեկտրատրանսպորտին[1]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի աշխարհագրական դիրքը և քաղաքական իրավիճակը ավելի են կարևորում ավտոմոբիլային տրանսպորտի դերը հանրապետության տնտեսության զարգացման գործում:

ՀՀ տնտեսության հետագա զարգացումը զգալիորեն պայմանավորված է հատկապես արտերկրի հետ տնտեսական կապերի զարգացմամբ ու ամրապնդմամբ: Այդ տեսակետից կարևոր նշանակություն է ձեռք բերում երկաթուղային տրանսպորտը, որի արդյունավետությունը բարձրացնելու և ծովային տրանսպորտի ծառայություններից օգտվելու համար ՀՀ տրանսպորտի ճյուղի առջև խնդիր է դրված Բաթումում ստեղծել լաստանավ և արագացնել ՌԴ-ից և այլ երկրներից փոխադրումները Հայաստան:

Շուկայական տնտեսության պայմաններում, հատկապես անցման փուլում, տնտեսության մյուս ճյուղերի նման, փոխվում է նաև տրանսպորտի մակրոտնտեսական քաղաքականության էությունը: Տրանսպորտային միջոցների, ձեռնարկությունների և երթուղիների մասնավորեցմամբ՝ տրանսպորտի բնագավառում պետության վարած քաղաքականությունը որակապես նոր իմաստ է ստանում: Այս դեպքում պետությունը հանդես է գալիս վերահսկողական, կարգավորման և անվտանգության ապահովման գործառույթներով: Ընդ որում, պետության այս գործառույթներն առավել կարևորվում են հատկապես ուղևորափոխադրումների դեպքում: Իսկ Հայաստանում, վերը նշված գործոններով պայմանավորված, ուղևորափոխադրումների, ինչպես նաև, բեռնափոխադրումների գերակշիռ մասն իրականացվում է ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով: Քանի որ պետությունը ուղղակիորեն դրանք ապահովել չի կարող, ուստի նրա կարգավորիչ դերը կարող է հանդես գալ միայն երթուղիների (միջքաղաքային, ներքաղաքային, միջմարզային, միջհանրապետական) մրցույթներում: Պետությունը սահմանում է միջազգային ստանդարտներին համապատասխան այնպիսի նորմեր, չափանիշներ և չափորոշիչներ, որոնք հնարավորություն կտան ապահովել հանրապետության ավտոմոբիլային պարկի տեխնիկական հագեցվածության բարձր մակարդակ և անվտանգ շահագործում:

Տնտեսության մեջ ունեցած դերով և իր առանձնահատկություններով պայմանավորված՝ տրանսպորտը կապված է տնտեսության բոլոր ճյուղերի հետ: Այդ կապը փոխադարձ է, և տնտեսության մյուս ճյուղերի զարգացումը տրանսպորտի առանձին տեսակների զարգացման անհրաժեշտություն է առաջացնում:

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004 թ., Երևան:

Տրանսպորտի և տնտեսական ու սոցիալական զարգացման մյուս ծրագրերի փոխադարձ կապն արտացոլվում է ծրագրի ցուցանիշներում, որոնք ներկայացնում են նաև տրանսպորտի առջև դրված խնդիրները:

11.2. Տրանսպորտի գործունեության գնահատման ցուցանիշների հաշվարկման մեթոդիկան

Տրանսպորտի ծրագրում օգտագործվում են ցուցանիշներ, որոնք միասնական են տրանսպորտի բոլոր ենթաճյուղերի համար: Այդպիսի ընդհանուր ցուցանիշներ են. առաքվող բեռների քանակը, փոխադրումների միջին հեռավորությունը (կմ), բեռնաշրջանառությունը (տոննա-կմ), ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կիլոմետր, ուղևոր-մղոն):

Բացի դրանցից, գործնականում կիրառվում են տրանսպորտի աշխատանքների առանձին կողմերը բնութագրող ցուցանիշներ՝ վագոնի պտույտի արագությունը, պտույտի տևողությունը, միջին դինամիկ բեռնվածությունը, միջին ստատիկ բեռնվածությունը, գնացքի նետտո և բրուտտո քաշերը, վագոնի միջին օրական վազքը, ավտոպարկի օգտագործման գործակիցը և այլն: Տրանսպորտի ծրագրի առանցքային հիմնական ցուցանիշը բեռնաշրջանառության ծավալն է, որը, սովորաբար, իրենից ներկայացնում է փոխադրված բեռների քանակի և փոխադրման միջին հեռավորության արտադրյալը: Բեռնաշրջանառության հիման վրա հաշվարկվում են բեռնափոխադրումների ծրագրի մյուս ցուցանիշները:

Բեռնափոխադրումների ցուցանիշների հաշվարկման մեթոդիկան

Բեռնափոխադրումների ծավալը հաշվարկվում է ինչպես ընթացիկ տարվա, այնպես էլ հեռանկարային ժամանակաշրջանի համար: Ծրագրերի մշակման նախնական փուլում, ինչպես նաև հեռանկարի համար, բեռնափոխադրումների ծավալը կարող է որոշվել՝ ելնելով բեռնափոխադրումների ծավալի և արտադրության ծավալի աճի տեմպերի միջև առկա փոխադարձ կապից: Որպես կանոն, արտադրության ծավալի աճին զուգընթաց աճում է նաև բեռնափոխադրումների ծավալը: Սակայն այդ ցուցանիշների աճի հարաբերակցության վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք կարող են խախտել արտադրության ծավալի և բեռնափոխադրումների ծավալի միջև համամասնությունը: Այսպես, արտադրողական ուժերի տեղաբաշխման կատարելագործումը նպաստում է բեռնափոխադրումների ծավալի ավելի դանդաղ տեմպերով աճին: Սակայն արտադրության ծավալի աճի և փոխադրումների ծավալի աճի միջև շեղումները մեծ չեն և, որպես կանոն, ունենում են դինամիկ հավասարակշռված բնույթ: Դա բացատրվում է նրանով, որ փոխադրումների ծավալի վրա, բացի արտադրողական ուժերի տեղաբաշխումից, ազդում են նաև նոր արտադրական համալիրների ստեղծումը, տնտեսության զարգացումը և արտադրության աճը, նոր շրջանների տնտեսական յուրացումը, գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը, նոր հանքային ռեսուրսների օգտագործումը, արտադրության մասնագիտացման և կոոպերացման խորացումը, արտասահմանյան երկրների հետ տնտեսական և մշա-

կութային կապերի զարգացումը: Վերջին տարիների ընթացքում մեր երկրում ՀՆԱ-ն աճում է ավելի արագ, քան բեռնափոխադրումների ծավալը: Դա պայմանավորված է նրանով, որ հանրապետությունում արտադրության աճի տեմպերը դեռևս շատ ցածր են և բավարարում են միայն արտադրության վայրի պահանջները, իսկ մյուս կողմից, արտահանման ծավալները դեռևս փոքր են:

Փոխադրումների ծրագրում բեռնափոխադրումների ծավալը որոշելիս արտադրության աճի և բեռնափոխադրումների աճի միջև կապը օգտագործում են հետևյալ կերպ. ենթադրենք՝ 2000-2004թթ. ՀՆԱ-ն աճել է 20%-ով (IP), իսկ բեռնափոխադրումների ծավալը (IQ)՝ 15%-ով: Ենթադրենք նաև, որ առաջիկա 5 տարում արտադրության ծավալը (IP_1) ավելանալու է 125%-ով: Փոխադրումների ծավալի աճը (IQ_1) կարող ենք որոշել հետևյալ բանաձևով՝

$$IQ_1 = IQ/Ip \times IP_1 = 115/120 \times 125 = 119.8\%$$

Բեռնաշրջանառության ծավալն ավելի ճշգրիտ որոշվում է տարվա կտրվածքով: Տվյալ դեպքում բեռնաշրջանառության ծավալը որոշելու համար նախ որոշվում է փոխադրման ենթակա բեռների քանակը: Այդ նպատակով կարևորագույն բեռնատեսակների համար կազմվում են արտադրության և սպառման շրջանային հաշվեկշիռներ, որոնք հնարավորություն են տալիս որոշելու, թե արտադրված արտադրանքի որ մասն է մնում տեղում օգտագործելու, և որ մասն է ենթակա փոխադրման: Եթե նախորդ մեթոդն ուներ հիմնականում կողմնորոշող նշանակություն, ապա այս հաշվեկշռային մեթոդը հնարավորություն է տալիս ճշգրիտ որոշելու փոխադրման ենթակա բեռների ծավալը: Արտադրության և սպառման շրջանային հաշվեկշիռը կազմվում է հետևյալ տեսքով.

(հազար տոննա)

Բեռների անվանումը	Ռեսուրսները			Ռեսուրսների բաշխումը							
								Ենթակա է փոխադրման			
									այդ թվում		
	Մնացորդը սկզբում տարվա	Արտադրվել է	Ընդամենը	Օգտագործվել է տեղում	Մնացորդը տարվա վերջում	Փոխադրվել է ձեռնարկությունում	Ընդամենը	Ամբողջը	Կախվածություն	Ավտոտրանս-պորտային	...
1. Հացաբեռներ	1.0	100.0	101.0	10.0	2.0	5.0	17.0	84.0	54.0	30.0	..
2. Կարտոֆիլ											
3. Շինարարական կոնստրուկ-ցիաներ											

Հաշվեկշռի տվյալներից երևում է, որ փոխադրման ենթակա բեռների քանակը որոշվում է բեռների ռեսուրսների և դրանց՝ տեղում օգտա-

գործվող ու ձեռնարկության տրանսպորտով փոխադրվող բեռների գումարի տարբերությամբ:

Արտադրության և սպառման շրջանային հաշվեկշիռներից բացի, մշակվում են նաև տրանսպորտային հաշվեկշիռներ, որոնք բնութագրում են ներկրվող և արտահանվող բեռների ծավալները: Այս հաշվեկշիռները լինում են դրական կամ բացասական մնացորդով և բնութագրում են տնտեսական կապերն այլ շրջանների և երկրների հետ: Մնացորդը դրական է այն դեպքում, երբ տվյալ շրջանն ավելի շատ արտահանում է, քան ներկրում: Հակառակ դեպքում, հաշվեկշիռը բացասական մնացորդով է:

Համեմատաբար մեծ է ավտոմոբիլային և օդային տրանսպորտով փոխադրման ինքնարժեքը: Այդ պատճառով ավտոմոբիլային տրանսպորտով բեռները փոխադրվում են առավել կարճ տարածությունների վրա, իսկ օդային տրանսպորտով փոխադրվում են շուտ փչացող բեռները: Հետևաբար, տրանսպորտի այս կամ այն տեսակին առավելություն տալու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև տրանսպորտի տվյալ տեսակի զարգացման հնարավորությունները, օժանդակ ծախսերը, աշխարհագրական դիրքը, փոխադրվող բեռնատեսակների հատկությունները և այլն:

Բեռնաշրջանառության ծավալը որոշելու համար անհրաժեշտ է ունենալ ոչ միայն փոխադրման ենթակա բեռների քանակը, այլ նաև փոխադրման միջին հեռավորությունը: Դա առնչվում է տրանսպորտային տնտեսական կապերի ճիշտ ընտրության հետ: Որքան ճիշտ են ընտրվում արտադրողների և սպառողների տնտեսական կապերը, այնքան նվազագույն են լինում տրանսպորտային ծախսերը: Տնտեսական կապերը ճիշտ ընտրելու համար կազմվում են շախմատային տեսքի աղյուսակներ, որոնց միջոցով արտադրողներն ու սպառողներն ամրակցվում են իրար:

Արտադրողների և սպառողների կապերի հիման վրա որոշվում է փոխադրումների միջին հեռավորությունը:

Ուղևորաշրջանառության ցուցանիշների հաշվարկման մեթոդիկան

Փոխադրումների ծրագրի բաղկացուցիչ մասն են կազմում ուղևորափոխադրումները: Դրանք հաշվարկելու համար նախ որոշում են բնակչության շարժունության ցուցանիշը, հետևյալ բանաձևով՝

$K = W / H$,

որտեղ՝ K-ն՝ բնակչության շարժի գործակիցն է,

W-ն՝ ուղևորաշրջանառությունը (ուղևոր-կմ),

H–ը՝ բնակչության թվաքանակն է:

Այդ գործակիցը ցույց է տալիս, թե երկրի յուրաքանչյուր բնակիչ տարեկան քանի կիլոմետր ուղևորություն է կատարում: Գալիք ժամանակաշրջանի ուղևորաշրջանառության ծավալը որոշելու համար հաշվի են առնվում այն գործոնները, որոնք ազդում են բնակչության շարժունության վրա: Դրանցից հիմնականը բնակչության իրական եկամուտների աճն է: Հեռանկարային ժամանակաշրջանի վերջին տարվա համար ուղևո-

ռաշրջանառության ծավալը, պայմանավորված բնակչության իրական եկամուտների աճով, կարող ենք որոշել հետևյալ բանաձևով՝

$$W = K \bullet Ig \bullet \Delta IK\ (H + \Delta H),$$ որտեղ՝

K – ն՝ բնակչության շարժունության գործակիցն է,

Ig-ն՝ բնակչության իրական եկամուտների աճի ինդեքսը,

ΔIK-ն՝ բնակչության շարժունության աճի գերազանցումը իրական եկամուտների աճին,

H-ը՝ բնակչության թիվը բազիսային տարում,

ΔH-ը՝ բնակչության բացարձակ հավելաճը հեռանկարային ժամանակաշրջանում:

Ընթացիկ ժամանակաշրջանում (մեկ տարվա կտրվածքով) ուղևորաշրջանառության ծավալը կարող ենք որոշել այլ ձևով՝

$$W = K \bullet 2I'K \bullet D,$$ որտեղ՝

I′K-ն՝ մեկ դրամ իրական եկամտին բաժին ընկնող ուղևոր-կմ-ի միջին տարեկան աճի ինդեքսն է: Այն բազմապատկվում է երկուսով, որովհետև ծրագրի մշակման պահին հաշվետու տարվա տվյալները դեռևս հայտնի չեն,

D-ն՝ իրական եկամուտների գումարն է՝ հաջորդ տարում:

Ուղևորաշրջանառության ծավալը որոշելիս, բացի բնակչության եկամուտների աճից, հաշվի են առնվում նաև դրա վրա ազդող այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ արտադրողական ուժերի զարգացումը, բնակչության խտությունը, նոր շրջանների տնտեսական յուրացումը, հանգըստյան տների, զբոսաշրջության բազաների տեղաբաշխվածությունը, տրանսպորտային ցանցի զարգացումը, հաղորդակցման արագության մեծացումը, տրանսպորտային սակագների մակարդակը, բնակչության եկամուտների և ծախսերի կառուցվածքը և այլն:

Տրանսպորտի ծրագրի մշակման ժամանակ կարևոր է ոչ միայն փոխադրումների ծավալի որոշումը, այլ նաև դրա հիմնավորումը համապատասխան ռեսուրսներով՝ շարժակազմով, վառելիքով, էներգիայով, օժանդակ նյութերով և այլն: Ծրագրի հիմնավորման համար նույնպես օգտագործվում են բազմաթիվ ցուցանիշներ, ինչպես օրինակ՝ վառելիքի, էլեկտրաէներգիայի, աշխատուժի նկատմամբ պահանջարկը: Բոլոր տեսակի ռեսուրսների պահանջարկը որոշվում է դրանց ծախսման նորմերի և արտադրության ծավալի արտադրյալով:

Ծրագրի հիմնավորման գործում շատ կարևոր է տրանսպորտն անհրաժեշտ շարժակազմով ապահովելը: Այդ նպատակով պետք է պարզել առկա շարժակազմի օգտագործման արդյունավետությունը, դրա բարձրացման ուղիները և շարժակազմի նկատմամբ լրացուցիչ պահանջարկը: Պետք է նշել, որ շարժակազմի նկատմամբ լրացուցիչ պահանջարկը պայմանավորված է գործող շարժակազմի օգտագործման արդյունավետությամբ և փոխադրումների ծավալով: Գործող շարժակազմի օգտագործման բարելավումը հավասարազոր է նոր շարժակազմ ներգրավելուն:

Տրանսպորտի գործող շարժակազմի օգտագործման աստիճանը պարզելու համար կիրառվում են մի շարք ցուցանիշներ, որոնք տրանսպորտի առանձին տեսակների համար տարբեր են: Օրինակ, երկաթուղային տրանսպորտում շարժակազմի օգտագործման ցուցանիշները բաժանվում են երկու խմբի.

1. վագոնների և լոկոմոտիվների հզորության և բեռնատարողության ցուցանիշներ,
2. շարժակազմի արագության, պտույտի և վազքի ցուցանիշներ:

Ցուցանիշների առաջին խմբի մեջ մտնում են վագոնի ստատիկ և դինամիկ բեռնվածությունը, գնացքի նետտո և բրուտտո քաշերը: Իսկ երկրորդ խմբի մեջ՝ վագոնի պտույտը, վագոնի լրիվ չվերթը, տեխնիկական արագությունը, վագոնի միջին օրական վազքը և այլն:

Այդ ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է բարձրացնել շարժակազմի օգտագործման արդյունավետությունը, այնուհետև հաշվարկվում է տրանսպորտի շարժակազմի նկատմամբ լրացուցիչ պահանջարկը: Նույն կերպ են վարվում նաև տրանսպորտի մյուս ենթաճյուղերում:

11.3. Կապի գործունեության գնահատման ցուցանիշները և դրանց պետական կարգավորումը

Կապը հանրապետության տնտեսության կարևոր բնագավառներից մեկն է, որի արտադրանքը դրսևորվում է որոշակի ծառայությունների ձևով: Կապի ծառայությունները բաժանվում են երկու մասի. մի մասը սպասարկում է տնտեսությանը, իսկ մյուս մասը՝ բնակչությանը: Պետության մակրոտնտեսական քաղաքականությունն ուղղված է տնտեսության, բնակչության և երկրի պաշտպանության պահանջները կապի ծառայությունների նկատմամբ առավելագույնս բավարարելուն: Հետևապես, ՀՀ կապի զարգացման հիմնական խնդիրն է՝ կենսագործել պետական տնտեսական քաղաքականությունն այդ բնագավառում և հասնել այն բանին, որ տնտեսության, բնակչության և երկրի պաշտպանության պահանջները փոստային, հեռագրային և հեռախոսային ծառայությունների, հեռուստառադիոհաղորդումների, ինչպես նաև պարբերական մամուլի տարածման նկատմամբ բավարարվեն արագ և արդյունավետ: Այդ նպատակով խնդիր է դրվում բարելավել գոյություն ունեցող կապի միջոցները, հետագայում դրանք կատարելագործել ու զարգացնել, ներդնել կապի նորագույն տեխնիկա, մեքենայացնել և ավտոմատացնել կապի արտադրական գործընթացները: Կապը սերտորեն առնչվում է տրանսպորտի հետ, և դրանք հիմնականում հանդես են գալիս միասնաբար: Այսպես, և՛ կապը, և՛ տրանսպորտը իրականացնում են փոխադրումներ: Եթե տրանսպորտը փոխադրում է բեռներ և ուղևորներ, ապա կապը փոխադրում է տեղեկատվություն՝ լինի դա փոստային ծառայություն, թե՝ հեռուստա կամ ռադիոհաղորդագրություն:

Կապի ծառայությունների ծավալը չափվում է բնեղեն և արժեքային ցուցանիշների միջոցով: Բնեղեն արտահայտությամբ չափվում է կապի ծառայությունների առանձին տեսակների ծավալը՝ նամակների, ծանրոցների փոխադրումը, հեռուստահաղորդումների, ռադիոհաղորդումների ծավալը: Կապի ծառայությունների ծավալն արժեքային արտահայտությամբ կարող ենք որոշել այդ ծառայությունների թիվը (բնեղեն արտահայտությամբ) բազմապատկելով համապատասխան սակագներով:

Կապի զարգացման ցուցանիշներն են՝ հեռուստատեսային և հեռախոսային ալիքների երկարությունը, կապի միջքաղաքային գծերը, ռադիոռելեային գծերի երկարությունը, հեռուստատեսային կայանների հզորությունը, հեռախոսային կայանների թիվը, դրանց հզորությունը և տարողությունը, փոստային կապի համալիր մեքենայացված–հանգուցային ձեռնարկությունների թիվը, կապիտալ ներդրումների և արտադրական կարողությունների գործարկման ծավալները:

Կապի ծառայությունների ծավալի ցուցանիշի օգնությամբ որոշվում են շահագործական–տեխնիկական կարիքների համար անհրաժեշտ միջոցների ծավալը, կապիտալ ներդրումների արդյունավետությունը և այլն:

Կապի ծառայությունների պահանջարկի կանխատեսման նպատակով լայնորեն կիրառվում է նորմատիվային մեթոդը՝ ըստ մեկ բնակչի հաշվով ծառայությունների սպառման մակարդակի: Կապի ծառայությունների նկատմամբ պահանջարկը գալիք ժամանակաշրջանի համար որոշելիս ելնում ենք բազիսային տարում մեկ բնակչի հաշվով այդ ծառայությունների ծավալից, դրանց աճի գործակցից և բնակչության թվաքանակից: Կապի ծառայությունների ծավալը կարող է ավելանալ տարբեր պատճառներով: Այսպես, գրավոր թղթակցության (նամակների), հեռախոսի ծառայությունների աճը կախված է բնակչության թվաքանակից, բնակչության առաքած ծանրոցներինը՝ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի, ձեռնարկությունների և կազմակերպությունների առաքած ծանրոցներինը՝ արդյունաբերական արտադրանքի, դրամական փոխանցումներինը՝ բնակչության եկամուտների աճից և այլն:

11.4. Կապիտալ շինարարության քաղաքականության հիմնական գծերը

Տնտեսության իրական հատվածի ճյուղերի համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի կապիտալ շինարարությունը, որի միջոցով իրականացվում է արտադրական և ոչ արտադրական հիմնական ֆոնդերի պարզ ու ընդլայնված վերարտադրությունը: Այդ նպատակով կապիտալ շինարարության միջոցով կառուցվում են նոր ձեռնարկություններ, վերակառուցվում և ընդլայնվում են գործող ձեռնարկությունները, գործարկվում են նոր արտադրական կարողություններ, արտադրական և ոչ արտադրական հիմնական ֆոնդեր, շահագործման են հանձնվում

առողջապահության, կրթության, մշակութային, կոմունալ-կենցաղային, բնակելի շենքեր ու տարբեր նշանակության կառույցներ:

Կապիտալ շինարարության նշանակությունը պայմանավորված է նաև նրանով, որ դրա միջոցով փոխհատուցվում է հիմնական ֆոնդերի մաշվածքը, վերակառուցվում են գործող հիմնական ֆոնդերը, ընդլայնվում և տեխնիկապես նորացվում են գործող արտադրական և ոչ արտադրական ֆոնդերը:

Շինարարության, որպես նյութական արտադրության ճյուղի, խնդիրը շինարարական և մոնտաժային աշխատանքների ամբողջ համալիրի կատարումն է, որն ապահովում է նոր արտադրական և ոչ արտադրական հիմնական ֆոնդերի գործարկումը և գործող հիմնական ֆոնդերի ընդլայնումը: Այս ամենից հետևում է, որ կապիտալ շինարարության հիմնական խնդիրը տնտեսության ընդլայնված վերարտադրության ապահովումն է: Բացի դրանից, կապիտալ շինարարության առջև դրված են նաև բազմաթիվ այլ խնդիրներ, որոնց հիմնական նպատակը տնտեսության զարգացման կայունության և մակրոտնտեսական հավասարակշռության ապահովումն է:

Այդ խնդիրներն են.

- երկրի արտադրական ներուժի աճն ապահովել ժամանակակից գիտատեխնիկական առաջադիմության պահանջներին համապատասխան,
- ավելացնել կոմունալ-կենցաղային, սոցիալ-մշակութային, բնակարանային օբյեկտների կառուցման շինարարական աշխատանքները՝ դրանց նկատմամբ տնտեսության և բնակչության պահանջների բավարարման համար,
- արմատապես բարելավել շինարարական ինդուստրիայի գործունեությունը, բարձրացնել օգտագործվող ներդրումների տնտեսական արդյունավետությունը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հիմնական ֆոնդերի և արտադրական կարողությունների գործարկման նորմատիվային ժամկետների պահպանման վրա,
- կրճատել անավարտ շինարարության ծավալները, արդյունավետ կազմակերպել անավարտ շինարարական աշխատանքների մասնավորեցման գործընթացը,
- առկա ներդրումներն օգտագործել ամենից առաջ ձեռնարկությունների վերակառուցման ու տեխնիկական վերազինման, ինչպես նաև անավարտ շինարարական կառույցների ավարտման նպատակով,
- բարելավել նախագծային-հետազոտական աշխատանքների կազմակերպման մակարդակը, շինարարությունն իրականացնել առավել առաջադիմական մեթոդներով,
- կատարելագործել շինարարական աշխատանքների կատարման եղանակները՝ լայնորեն կիրառելով շինարարական կազմակերպությունների ընտրության մրցութային եղանակը:

Այդ խնդիրները դրված են ՀՀ կապիտալ շինարարության քաղաքականության հիմքում:

Անցումային շրջանի բարդությունները հաղթահարելու նպատակով առաջադրված խնդիրների լուծումը պահանջում էր հսկայական կապիտալ ներդրումներ, որոնց իրականացման համար չկային բավարար ֆինանսական ռեսուրսներ: Այդ պատճառով խիստ կարևորություն ձեռք բերեց օտարերկրյա ներդրումների ներգրավումը:

Կապիտալ շինարարության խնդիրները միաժամանակ իրենց արտացոլում են գտնում տնտեսության տարբեր ոլորտների քաղաքականության մեջ, քանի որ այս ճյուղի ու մյուս ոլորտների ծրագրերը փոխադարձաբար և երկկողմանիորեն կապված են:

Շինարարությունն իր զարգացման աստիճանով անհրաժեշտ պայմաններ է ստեղծում արտադրության բոլոր ճյուղերի զարգացման համար, նպաստում է դրանցում տեխնիկական առաջադիմության արմատավորմանը, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության բարձրացմանն ու բնակչության սոցիալական պայմանների բարելավմանը: Այս առումով շինարարությունն անխզելիորեն կապված է նյութական արտադրության բոլոր ճյուղերի և հատկապես արդյունաբերության հետ: Այդ կապն արտահայտվում է նրանում, որ արդյունաբերությունը շինարարությանն ապահովում է զանազան շինանյութերով, շինարարական մեքենաներով և մեխանիզմներով:

Բավական է նշել, որ արդյունաբերության երկու կարևորագույն ճյուղերի՝ շինանյութերի արդյունաբերության և մեքենաշինության արտադրանքը օգտագործվում է կապիտալ շինարարության ճյուղում: Մյուս կողմից՝ կապիտալ շինարարությունը սպառում է էլեկտրաէներգիա, մետաղ, փայտանյութ, վառելիք և այլ արտադրանքներ:

Կապիտալ շինարարությունն իր հերթին արդյունաբերությանն ապահովում է արտադրական բնույթի շենքերով, կառույցներով, տեղակայում է մեքենաներն ու սարքավորումները:

Կապիտալ շինարարության միջոցով են ստեղծվում նաև գյուղատնտեսության և տրանսպորտի հիմնական արտադրական և ոչ արտադրական ֆոնդերը, կառուցվում են ջրամբարներ, ջրանցքներ, ոռոգման ցանցեր, դպրոցներ, կենցաղային ու առողջապահական շինություններ, շենքեր և այլն:

Կապիտալ շինարարության միջոցով տրանսպորտի ճյուղի ծրագրային առաջադրանքների կատարման համար կառուցվում են հաղորդակցության ճանապարհներ, երկաթուղային գծեր, երկաթուղային և ավտոմոբիլային կայարաններ, օդանավակայաններ և այլ բնույթի օբյեկտներ:

Տնտեսության մյուս ճյուղերի հետագա զարգացումը պահանջում է ավելացնել ներդրումների և կապիտալ շինարարության ծավալները:

Կապիտալ շինարարության ծրագրի ցուցանիշները կապված են նաև առևտրի և հանրային սննդի զարգացման ծրագրային առաջադրանքների հետ: Բանն այն է, որ շինարարության միջոցով է ձևավորվում այդ կարևոր ոլորտի նյութատեխնիկական բազան:

Կապիտալ շինարարության ծրագրի ցուցանիշները կապված են նաև երկրի սոցիալ-մշակութային զարգացման, կենցաղսպասարկման, բնակարանային կոմունալ տնտեսության ծրագրերում սահմանված ցուցանիշների հետ:

Կապիտալ շինարարության քաղաքականության իրականացման գործում կարևոր դեր ունի պետական կարգավորումը:

Հանրապետությունում շինարարության պետական կարգավորման հիմնահարցերը լուծվում են երկրի կառավարության և նրա կողմից լիազորված մարմնի՝ քաղաքաշինության նախարարության կողմից:

Կապիտալ շինարարության պետական կարգավորման համար ելակետային հիմք է ծառայում այդ ոլորտի համար ձևավորված օրենսդրական դաշտը:

11.5. Կապիտալ շինարարության զարգացման ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդիկան

Կապիտալ շինարարության ծրագիրը մշակվում է հետևյալ բաժիններով.

- արտադրական կարողությունների ու հիմնական արտադրական և ոչ արտադրական ֆոնդերի գործարկման ենթածրագիր,
- կապիտալ ներդրումների և շինարարական-մոնտաժային աշխատանքների ենթածրագիր,
- տիտղոսային ցուցակներ,
- շինարարական ինդուստրիայի զարգացման ենթածրագիր,
- նախագծային-հետազոտական աշխատանքների ենթածրագիր:

Նշված բաժիններից յուրաքանչյուրում սահմանվում են բազմաթիվ ցուցանիշներ:

Այսպես, կապիտալ ներդրումների և շինարարական-մոնտաժային աշխատանքների ենթաբաժնում հաշվարկվում են կապիտալ ներդրումների և շինարարական-մոնտաժային աշխատանքների ծավալները, որոշվում են ներդրումների վերարտադրական, ճյուղային, տեխնոլոգիական և տարածքային կառուցվածքները: Այդ ցուցանիշների էությունը և դրանց նշանակությունը տնտեսավարման շուկայական տնտեսության պայմաններում ամբողջությամբ առնչվում են երկրի ներդրումային քաղաքականությանը, որը քննարկված է դասագրքի համապատասխան բաժնում:

Առավել հանգամանորեն անդրադառնանք ծրագրի մյուս ենթաբաժիններում հաշվարկվող ցուցանիշներին և դրանց հաշվարկման մեթոդական հիմնահարցերին:

Կապիտալ շինարարության նպատակային խնդիրները իրենց արտացոլումն են գտնում արտադրական կարողությունների և արտադրական ու ոչ արտադրական հիմնական ֆոնդերի գործարկման բաժնում, որտեղ առանձին-առանձին որոշվում են դրանցից յուրաքանչյուրի գործարկման ծավալները: Արտադրական կարողությունների գործարկման ծավալները

հաշվարկվում են առանձին տեսակների կամ խմբերի համար մշակված արտադրական կարողությունների հաշվեկշռի միջոցով: Այն ճյուղերում, որտեղ արտադրվում են միատարր արտադրանքներ, արտադրական կարողությունների գործարկման ծավալը հաշվարկվում է բնեղեն արտահայտությամբ, իսկ բազմատեսականի արտադրություններում՝ արժեքային արտահայտությամբ: Արտադրական կարողությունների միջոցով պարզվում են գործող արտադրական կարողությունների օգտագործման վիճակը, բարելավման ուղիները և դրանց նկատմամբ ընդհանուր և լրացուցիչ պահանջարկը: Ուստի արտադրական կարողությունների գործարկման առաջադրանքները որոշվում են՝ ելնելով արտադրանքի համապատասխան տեսակի արտադրության ծավալներից:

Ցանկացած արտադրությունում նախատեսված աճն ապահովվում է ամենից առաջ առկա կարողությունների օգտագործումը բարելավելու, տեխնոլոգիական գործընթացները կատարելագործելու, հնացած սարքավորումները նորերով փոխարինելու, մոդեռնացնելու և կազմակերպական այլ միջոցառումներ իրականացնելու միջոցով: Այնուհետև հիմնավորվում է նոր օբյեկտների կառուցման անհրաժեշտությունը:

Հիմնական ֆոնդերի գործարկման ծավալներն արտացոլվում են հիմնական ֆոնդերի հաշվեկշռում, որտեղ ցույց են տրվում հիմնական ֆոնդերի օգտագործման աստիճանը, այն բարելավելու ուղիները և դրանց նկատմամբ ընդհանուր ու լրացուցիչ պահանջը:

Հիմնական ֆոնդերի գործարկման ցուցանիշի մեջ ներառում են կառուցված և շահագործման հանձնված արտադրական և ոչ արտադրական նշանակության շինությունների ու կառույցների արժեքները, նոր շահագործվող մեքենաների, բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների արժեքները, հիմնական միջոցների կազմում ընդգրկվող գործիքների, գույքի և այլ առարկաների արժեքները, բազմամյա տնկիների արժեքը, հողերի ոռոգման ու մելիորատիվ աշխատանքների արժեքը և հիմնական միջոցների արժեքի մեծացման հետ կապված այլ ծախսեր:

Շինարարական աշխատանքների ընդհանուր ծավալում ընդգրկվում են գործող արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, առևտրային և այլ կազմակերպությունների նոր շինարարության, վերակառուցման, ընդլայնման և տեխնիկական վերազինման ծախսերը, բնակարանային և մշակութային, կենցաղային շինարարության ծախսերը:

Հիմնական արտադրական ֆոնդերի գործարկման ծավալը նաև հաշվարկվում է նախագծային և նախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Այդ նպատակով հաշվարկվում են շինարարական–մոնտաժային աշխատանքների արժեքը, նոր տեղակայվող սարքավորումների, մեքենաների արժեքը, ինչպես նաև այն գործիքների արժեքը, որոնց ծառայության ժամկետը մեկ տարուց ավելի է, իսկ գինը գերազանցում է 25000 դրամը: Բացի դրանից, նախահաշվում հաշվի են առնվում նաև գործարկվող օբյեկտի վարչակազմի պահպանման ծախսերը, ինչպես նաև կատարված աշխատանքների արժեքը, որոնք մտնում են հիմնական ֆոնդերի արժեքի մեջ: Որպես կանոն, կապիտալ ներդրումների ծավալն

ավելի մեծ է, քան հիմնական ֆոնդերի գործարկման արժեքը: Դա պայմանավորված է նրանով, որ կապիտալ ներդրումների մի մասը չի ավելացնում հիմնական ֆոնդերի արժեքը, և տարեվերջին անավարտ շինարարության մնացորդներ են գոյանում: Այն կապիտալ ծախսերը, որոնք կատարվում են շինարարության համար անհրաժեշտ ժամանակավոր կառույցների և շենքերի կառուցման, օբյեկտի համար անհրաժեշտ կադրերի պատրաստման, գործիքների ձեռքբերման համար, և ծառայության ժամկետը փոքր է մեկ տարուց, իսկ արժեքը 25000 դրամից, չեն ներառվում հիմնական ֆոնդերում:

Կապիտալ շինարարության ծրագրում շինարարական օբյեկտների գծով տիտղոսացուցակների մշակումը կազմում է այդ ծրագրի հաջորդ կարևոր բաժինը, որտեղ էլ ավելի են կոնկրետացվում շինարարության ծրագրի ցուցանիշները՝ ըստ ճյուղերի ու օբյեկտների ներդրումների բաշխման, արտադրական կարողությունների և հիմնական ֆոնդերի, առողջապահության և մշակույթի օբյեկտների գործարկման վերաբերյալ:

Կապիտալ շինարարության ծրագրում ընդգրկված կառուցվող օբյեկտների ցանկը, որոնց շինարարությունը, ըստ գործող օրենսդրության, թույլատրված է իրականացնել տվյալ տարում, ընդունված է անվանել տիտղոսային ցուցակներ:

Այս առումով առանձին կառույցների տիտղոսային ցուցակները համարվում են կապիտալ շինարարության ծրագրի մշակման համար պահանջվող կարևոր փաստաթղթերից մեկը, որտեղ որոշակիացվում են սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով գործարկվող նոր կարողությունների ծավալը, բնակելի տների, լուսավորության օբյեկտների, առողջապահության և մշակութային-կենցաղային օբյեկտների հիմնական ֆոնդերի գործարկման ծավալները:

Որպես կանոն, կառուցվող օբյեկտների տիտղոսացուցակները ընդգրկում են ինչպես վերակառուցվող, ընդլայնվող, այնպես էլ նոր կառուցվող օբյեկտները: Տիտղոսացուցակները ներառում են կառուցվող յուրաքանչյուր օբյեկտի ծավալուն բնութագրերը, որոնք ամբողջական պատկերացում են տալիս առանձին փուլերում կատարվող շինարարական աշխատանքների մասին:

Տիտղոսային ցուցակներում նշվում են կառուցվող օբյեկտի լրիվ անվանումը, կառուցման վայրը, շինարարությունն իրականացնող կազմակերպության անվանումը, շինարարությունը սկսելու և ավարտելու ժամկետները, կառուցվող օբյեկտի նախահաշվային արժեքը, առանձին տարիներին գործարկվող արտադրական կարողությունների և հիմնական ֆոնդերի ծավալները:

Առանձին շինարարական օբյեկտներում ներդրումների բաշխումն ու օգտագործումը վերահսկելու, շինարարության հաջորդականությունը որոշելու նպատակով տիտղոսացուցակներ են մշակվում նաև կառուցվող օբյեկտի առանձին բաղադրամասերի համար, որոնք անվանվում են ներշինարարական տիտղոսացուցակներ:

Տիտղոսային ցուցակների կազմումը շինարարական աշխատանքների կազմակերպման կարևոր փուլերից մեկն է, որը համալիր միջոցա-

ռումներ մշակելու և շինարարության ժամկետներն ու նախահաշվային արժեքը կրճատելու հնարավորություն է տալիս:

Տնտեսության մասշտաբով մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման նպատակով անհրաժեշտ է տիտղոսացուցակները կազմելիս ելնել նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները կարևորագույն կառույցներում և օբյեկտներում համակենտրոնացնելու անհրաժեշտությունից: Դա նշանակում է, որ միջոցների կենտրոնացումը արտադրական կարողությունների և բնակելի տարածության գործարկումն արագացնելու, ներդրումների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու կարևոր պայման է:

Տիտղոսային ցուցակները կազմելիս անչափ կարևոր է կիրառել շինարարական աշխատանքների տևողության վերաբերյալ տեխնիկապես հիմնավորված նորմեր, որոնց պահպանումը հնարավորություն է տալիս ճիշտ հարաբերակցություն սահմանել ներդրումների, նոր օբյեկտների գործարկման և անավարտ շինարարության ծավալի միջև, որոշել անհրաժեշտ ներդրումների ծավալը, արտադրական կարողությունների և բնակելի տարածությունը գործարկելու ժամկետները, շինարարական-մոնտաժային աշխատանքների ծավալը, անհրաժեշտ սարքավորումների և շինանյութերի նկատմամբ պահանջարկը:

Շինարարության տևողության նորմերը կարևոր նշանակություն ունեն նաև նախագծային-նախահաշվային փաստաթղթերը մշակելու, ինչպես նաև ներդրումների ընդհանուր ծավալը տիտղոսային ցուցակներում ըստ տարիների բաշխելու համար:

Այսպիսով, շինարարության տիտղոսացուցակները ընդգրկում են համապատասխան կառույցներում տվյալ տարվա համար սահմանված կապիտալ ներդրումների ծավալի և հիմնական ֆոնդերի ու արտադրական կարողությունների գործարկման առաջադրանքները: Դրանով կառույցի տիտղոսային ցուցակը արտացոլում է փոխկապվածությունը ներդրումների ծրագրի և շինարարական կազմակերպության աշխատանքային ծրագրի միջև:

Շինարարական ինդուստրիայի զարգացումը որոշվում է ինչպես կապիտալ շինարարության, այնպես էլ բուն շինարարական կազմակերպությունների զարգացմանը վերաբերող և դրանց նյութատեխնիկական զարգացումը բնութագրող ցուցանիշների միջոցով:

Շինարարական ինդուստրիան ինքնուրույն, մասնագիտացված շինարարական կազմակերպությունների, ձեռնարկությունների և շինարարական արտադրությունը նյութատեխնիկական ռեսուրսներով ու ծառայություններով ապահովող տնտեսությունների ամբողջություն է:

Շինարարական ինդուստրիայի ձեռնարկությունների գործունեության հիմնական խնդիրը տնտեսության տարբեր ճյուղերի ու ենթաճյուղերի համար կապալառուական աշխատանքներ իրականացնելն է: Այդ նպատակով շինարարական ինդուստրիայի արտադրական ծրագրում սահմանվում են ներդրումների և շինարարական-մոնտաժային աշխատանքների ծավալի, նոր գործարկվող արտադրական կարողությունների և հիմնական ֆոնդերի գործարկման ծավալների վերաբերյալ կոնկրետ

առաջադրանքներ: Շինարարական ինդուստրիայի արտադրական ծրագրում շինարարական-մոնտաժային աշխատանքները բաշխվում են ըստ պատվիրատուների և կապալառու կազմակերպությունների, տրվում են դրանց կարողությունների ավելացման, առաջադիմական մեթոդներով շինարարական աշխատանքների կատարման, այդպիսի աշխատանքների համալիր մեքենայացման և մասնագիտացման առաջադրանքներ:

Շինարարական ինդուստրիան, որպես տնտեսության ինքնուրույն ճյուղ, ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են նրա արտադրանքի բնույթով, շինարարական կազմակերպությունների տեղաբաշխվածությամբ, արտադրության պարբերաշրջանի տևողությամբ և այլն: Դրանք են.

- Շինարարական ինդուստրիայի առաջին առանձնահատկությունն այն է, որ արտադրանքը մնում է տեղում, անշարժ է և կարող է օգտագործվել միայն կառուցված վայրում՝ զբաղեցնելով կառույցին համապատասխան հողատարածք: Մինչդեռ արդյունաբերական արտադրանքն իրացվում է այլ վայրերում, իսկ աշխատանքի գործիքները մնում են նույն տեղում: Շինարարության մեջ տեղի է ունենում հակառակ գործընթաց. աշխատանքի գործիքները մշտապես գտնվում են շարժման մեջ, իսկ կառուցվող օբյեկտը ստանում է անշարժ դիրք:

- Այս կամ այն շինարարական հրապարակում աշխատանքներն ավարտելուց հետո ինչպես աշխատանքի գործիքներն ու մեխանիզմները, այնպես էլ շինարարության աշխատողները տեղափոխվում են այլ շինարարական հրապարակ: Ելնելով այդ առանձնահատկությունից՝ պահանջվում է շինարարական ինդուստրիայի կազմակերպությունները երկրի տարածքում տեղաբաշխել այնպես, որ նյութական ռեսուրսների, շինարարական մեխանիզմների փոխադրման ծախսերը հասցվեն նվազագույնի:

- Շինարարական արտադրության երրորդ առանձնահատկությունն այն է, որ շինարարական արտադրության գործընթացն ունի ավելի երկար տևողություն, որի պատճառով պատրաստի արտադրանքի արժեքը անհամեմատ բարձր է ստացվում: Շինարարության արտադրանքը կառուցված և գործարկման հանձնված շենքերն ու կառույցներն են: Այդ առանձնահատկությունը էլ ավելի է կարևորում ինչպես շինարարության ժամկետների կրճատման, այնպես էլ օգտագործվող շինանյութերի, շինարարական կոնստրուկցիաների, աշխատանքային ու ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման խնդիրները:

Շինարարության անընդհատությունն ապահովելու համար անհրաժեշտ է մշտապես ունենալ անավարտ շինարարության որոշակի պաշար, որի ծավալը հիմնականում կախված է կառուցվող օբյեկտի արտադրության պարբերաշրջանի տևողությունից: Անավարտ շինարարություն են համարվում կառուցման տարբեր փուլերում գտնվող և դեռևս գործարկման չհանձնված շինարարական օբյեկտները:

Շինարարական ինդուստրիայի զարգացումը բնութագրվում է երկու խումբ ցուցանիշներով: Առաջին խմբում ընդգրկվում են շինարարական-

մոնտաժային աշխատանքների ծավալը, գործարկվող արտադրական կարողությունների և հիմնական ֆոնդերի ծավալը:

Երկրորդ խմբում ներառվող ցուցանիշները ամբողջությամբ վերաբերում են շինարարական ինդուստրիայի զարգացմանը: Խմբի հիմնական ցուցանիշներն են՝ շինարարական կազմակերպությունների արտադրական հզորությունների ծավալը, առաջադիմական մեթոդներով կատարվող շինարարական աշխատանքների ծավալը, շինարարական-մոնտաժային աշխատանքների մեքենայացման ու ավտոմատացման, ինչպես նաև շինարարական աշխատանքների մասնագիտացման վերաբերյալ առաջադրանքները:

Շինարարական աշխատանքները, որպես կանոն, կազմակերպվում են երկու եղանակով. կապալառուական և տնտեսավարական: Կապալառուական եղանակով շինարարությունը, որպես կանոն, իրականացնում են շինարարական կազմակերպությունները: Ներկայումս ՀՀ-ում այդպիսի ձեռնարկությունների թիվը հասնում է 541-ի, որոնցում աշխատում է ավելի քան 15000 մարդ: Շինարարական աշխատանքների կատարման կապալառուական եղանակի դեպքում նախապես հայտարարվում է մրցույթ: Այդ նպատակով պատվիրատու կազմակերպություններն առաջադրում են մրցույթի պայմանները: Մրցույթին մասնակցել ցանկացող շինարարական կազմակերպությունը նախապես հայտնում է իր տեխնիկական և ֆինանսական հնարավորությունների մասին:

Ընտրվում է այն շինարարական կազմակերպությունը, որը բավարարում է մրցույթի պայմանները: Մրցույթում հաղթող շինարարական կազմակերպությունը կապալառուական պայմանագիր է կնքում պատվիրատու կազմակերպության հետ, որով սահմանվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Եթե անհրաժեշտ է լինում կատարել զուտ մասնագիտական շինարարական աշխատանքներ, ապա շինարարական կազմակերպությունները իրավասու են պայմանագիր կնքել այլ մասնագիտացված շինարարական-մոնտաժային կազմակերպությունների հետ՝ նրանց հանձնարարելով այս կամ այն աշխատանքները: Այդ պայմանագիրը կոչվում է ենթակապալառուական պայմանագիր: Կապալառուական եղանակով շինարարություն իրականացնող կազմակերպությունները միավորվում են առանձին շինարարական վարչությունների, տրեստների և կոմբինատների մեջ:

Կապալառուական եղանակով կատարվող շինարարական աշխատանքներն ունեն որոշակի առավելություններ տնտեսավարական եղանակով շինարարական աշխատանքների նկատմամբ: Բանն այն է, որ կապալառուական եղանակով աշխատանքներն իրականացնում են ժամանակակից շինարարական մեխանիզմներ ու որակյալ շինարարական մասնագետ կադրեր ունեցող համաշինարարական և մասնագիտացված շինարարական կազմակերպությունները: Այդ հանգամանքը հնարավոր է դարձնում ոչ միայն կրճատել շինարարության համար անհրաժեշտ ժամանակը, այլև բարձրացնել կապալառուական եղանակով կատարվող

շինարարական աշխատանքների որակը, հանգեցնում է օբյեկտների շինարարության նախահաշվային արժեքի կրճատմանը:

Բավական է նշել, որ ներկայումս շինարարական աշխատանքների ավելի քան 90 տոկոսը ՀՀ-ում իրականացվում է շինարարական կազմակերպությունների կողմից, որոնք ապահովում են ոչ միայն բարձրորակ շինարարական աշխատանքների ավելի առաջավոր եղանակներով կատարում, այլև իջեցնում են օբյեկտների կառուցման շինարարական-մոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը:

Շինարարական աշխատանքների կատարման տնտեսավարական եղանակի առանձնահատկությունն այն է, որ իրականացվում է ձեռնարկության ուժերով ու հիմնական ֆոնդերով, քանի որ շինարարական աշխատանքների ծավալները համեմատաբար փոքր են:

Սովորաբար տնտեսավարական եղանակով կազմակերպվող շինարարական աշխատանքների կատարման միջոցով տեղի է ունենում հիմնական ֆոնդերի մասնակի վերարտադրությունը, որը հաճախ իրականացվում է ավելի արդյունավետ եղանակներով, և պահանջվում են կարճատև ժամանակ ու քիչ ծախսումներ:

Շինարարական աշխատանքների նշված եղանակների զուգահեռաբար կիրառումը որոշիչ նշանակություն ունի հիմնական ֆոնդերի պարզ և ընդլայնված վերարտադրության ապահովման գործում:

Անցումային շրջանի սկզբնական տարիներին օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով դադարեցին ոչ միայն արդյունաբերական ձեռնարկությունների, այլև շինարարական կազմակերպությունների աշխատանքները՝ անավարտ մնացին թե՛ արտադրական և թե՛ ոչ արտադրական բնույթի տարբեր շինարարական կառույցները:

Անշուշտ, ֆինանսական ռեսուրսների սղության պատճառով մինչև 1990-ական թվականների վերջը անչափ դանդաղ էին իրականացվում շինարարական աշխատանքները, բացառությամբ աղետի գոտու, որտեղ հիմնականում կատարվում էր բնակարանային, հանրակրթական դպրոցների շինարարություն: Այդ ընթացքում զգալի փոփոխվեցին նաև շինարարության ֆինանսավորման աղբյուրները:

Բավական է նշել, որ եթե մինչև հանրապետության անկախացումը բյուջեի միջոցներից կատարվող հատկացումները կազմում էին ներդրումների ավելի քան 70 տոկոսը, ամորտիզացիոն մասհանումները՝ 10, ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների միջոցները՝ 11, իսկ մնացածը ներքին ռեսուրսները, ապա 2003թ. պետական բյուջեի միջոցները կազմել են 5 տոկոս, կազմակերպությունների միջոցները՝ 17, բնակչության միջոցները՝ 35, իսկ օտարերկրյա ներդրումները՝ 23 տոկոս:

Շինարարական այս կամ այն օբյեկտը կառուցելու համար անհրաժեշտ է ունենալ այդ օբյեկտի տեխնիկական-տնտեսական հիմնավորումը: Այն կատարվում է տվյալ օբյեկտի նախագծային-նախահաշվային փաստաթղթերի միջոցով: Այս կամ այն շինարարական օբյեկտի նախագիծը համապատասխան հաշվարկներով հիմնավորված փաստաթղթերի մի ամբողջական համալիր է: Նախագծում նշվում են տվյալ օբյեկտի ճարտարապետական և կոնստրուկտիվ լուծումները, հատուկ կոնստրուկցիա-

ների հաշվարկները, որոնց հիման վրա կազմվում է օբյեկտի նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով:

Շինարարական օբյեկտի կառուցման նախահաշվային արժեքի հիման վրա որոշվում են անհրաժեշտ ներդրումների և շինարարական-մոնտաժային աշխատանքների ծավալները, ընտրվում են ներդրումների ֆինանսավորման աղբյուրները, որոշվում շինանյութերի նկատմամբ պահանջարկը:

Նախագծային–հետազոտական աշխատանքներն իրականացնում են համապատասխան նախագծային գիտահետազոտական ինստիտուտներն ու կազմակերպությունները, որոնք գտնվում են ՀՀ քաղաքաշինության նախարարության իրավասության ներքո: Այդ կազմակերպությունների հիմնական խնդիրը կապիտալ շինարարության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը բարձրորակ տեխնիկական նախագծերով և նախահաշիվներով ապահովելն է՝ հաշվի առնելով նորագույն գիտատեխնիկական նվաճումների արդյունքները:

11.6. Առևտրի և հանրային սննդի պետական կարգավորման հիմնահարցերը

Ապրանքների շրջանառության ոլորտում կատարվում են բազմաբնույթ գործընթացներ, որոնք իրենց նշանակությամբ կարելի է բաժանել երկու խմբի. մի մասն ամբողջությամբ ներառում է շրջանառության ոլորտում իրականացվող արտադրական գործընթացները, իսկ մյուս մասը՝ զուտ առևտրային գործընթացները: Բանն այն է, որ արտադրական գործընթացների մի մասը շարունակվում է շրջանառության ոլորտում և հանդիսանում է արտադրության շարունակությունը: Այդ գործընթացները կապված են արտադրողներից մինչև սպառողները ապրանքների փոխադրման, պահեստավորման, պահեստներում տեսակավորման, փաթեթավորման, ապրանքային պաշարների ձևավորման հետ:

Առևտրային գործունեությունը առավել լայն իմաստով ներկայացնում է առևտրական կազմակերպության, ձեռնարկության օպերատիվ կազմակերպական այն գործողությունները, որոնք ամբողջությամբ առնչվում են ապրանքների առքուվաճառքի գործընթացի կատարելագործման միջոցով բնակչության պահանջների բավարարմանը և շահույթի ստացմանը:

Առևտուրը, լինելով ձեռնարկատիրական գործունեության առանձնահատուկ ոլորտ, իրականացնում է ապրանքներն արտադրողներից սպառողներին հասցնելու, հասարակության աճող պահանջմունքները բավարարելու, շուկան անհրաժեշտ ապրանքներով հագեցնելու գործառույթներ:

Առևտրի միջոցով ապրանքները արտադրողներից սպառողներին հասցնելու գործառույթի իրականացումը պահանջում է ուսումնասիրել շուկայի իրավիճակը, բնակչության աճող պահանջմունքները և դրանց բավարարման ուղիները, գնահատել միջնորդավորված կապերը, կազ-

մակերպել գովազդը: Ապրանքները սպառողներին են հասցվում մեծածախ, մանրածախ առևտրի և հանրային սննդի միջոցով:

Առևտրի կարգավորման նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել դրա առանձնահատկությունները:

Առաջին հիմնական առանձնահատկությունն այն է, որ առևտրի միջոցով ձևավորվում են փոխհարաբերություններ արտադրական ոլորտի ճյուղերի և սպառողների միջև, որոնց կարգավորումը կնպաստի ինչպես առևտրի զարգացմանը, այնպես էլ բնակչության սպասարկման բարելավմանը:

Առևտրի հաջորդ առանձնահատկությունը դրսևորվում է նրանում, որ առքուվաճառքի շնորհիվ փոխհատուցվում են արտադրության ճյուղերում կատարված ծախսումները, ձևավորվում են պետության կենտրոնացված ֆոնդերը, որոնց վերաբաշխման միջոցով փոխհատուցվում են երկրի պաշտպանության, գիտության և կրթության, առողջապահության, կառավարման ապարատի պահպանման, մշակույթի և բազմաթիվ այլ ոլորտների պահպանման ծախսումները:

Առևտրի առանձնահատկություն պետք է համարել նաև այն, որ ապրանքների շրջանառությունը սերտորեն փոխկապակցված է դրամաշրջանառության հետ: Փողի միջնորդության շնորհիվ ապրանքը արտադրողից անցնում է սպառողին: Այդ գործընթացի արդյունավետ կազմակերպումը կախված է շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակության և շրջանառությունում առկա ապրանքների քանակության հավասարակշռությունից: Իսկ շրջանառության մեջ գտնվող փողի քանակը և դրա շրջապտույտի արագությունը կախված են երկրի ներքին շուկա մուտք գործող ապրանքների զանգվածից, կառուցվածքից, գների մակարդակից, ապրանքների շրջանառության արագությունից, արժույթի փոխանակային կուրսից:

Առևտրի կազմակերպման արդյունավետությունը պայմանավորված է նաև նրա հիմնական սկզբունքների պահպանմամբ: Այդ սկզբունքներն են՝ առևտրային գործունեության ճկունության ապահովումը, առևտրային ռիսկի կանխատեսումը, անձնական նախաձեռնության դրսևորումը, ստանձնած պարտավորությունների կատարման հարցում բարձր պատասխանատվությունը, ապրանքների մատակարարման, գնման և վաճառքի գործընթացների ինքնակարգավորումը, ազատ և արդարացի գնագոյացման կազմակերպումը, մատակարարների և գնորդների միջև մրցակցության ապահովումը և այլն:

Ապրանքների շրջանառությունը կազմակերպվում է մեծածախ և մանրածախ առևտրային կազմակերպությունների միջոցով: Առևտրային գործունեություն իրականացնելիս պահանջվում է արտադրողներից ձեռք բերել բնակչության պահանջներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, որը իրականացվում է արտադրողների և առաքողների միջև կնքվող պայմանագրերով:

Շուկայական տնտեսավարման և գների ազատականացման պայմաններում լայն հնարավորություններ ստեղծվեցին ապրանքների ազատ

առքուվաճառքի համար, որի շնորհիվ ավելի է մեծացել տնտեսական պայմանագրերի նշանակությունը:

Առևտրային գործունեությամբ զբաղվող մեծածախ և մանրածախ առևտրային կազմակերպությունները համարվում են միևնույն շղթայի տարբեր օղակներ, որոնց միջոցով տարբեր աղբյուրներից ապրանքները հոսում են ապրանքաշրջանառության ոլորտ, այնուհետև հասնում են սպառողին:

Ապրանքների մեծածախ առևտրի շնորհիվ մեծանում են ինչպես մանրածախ ցանցին ապրանքներ առաքելու, այնպես էլ արտադրության կառուցվածքային փոփոխության հնարավորությունները:

Ապրանքների մեծածախ առևտուրը իրականացվում է որոշակի փուլերով: Նախնական փուլում որոշվում է տվյալ ապրանքի նկատմամբ գնողունակ պահանջարկը: Երկրորդ փուլում որոշվում են մատակարարող արտադրական ձեռնարկություններից և այլ մատակարարներից ապրանքների գնումների կազմակերպման հնարավորությունները: Հաջորդ փուլում մատակարարների հետ կնքվում են ապրանքների առքուվաճառքի պայմանագրեր:

Որպես կանոն, ապրանքների մեծածախ առևտուր կազմակերպելիս հաշվի են առնվում մարքեթինգային հետազոտության արդյունքները, որոնց հիման վրա ճշգրտվում է գնողունակ պահանջարկը:

Մանրածախ առևտրի կազմակերպությունները իրենց գործունեությունը կազմակերպում են արտադրող մատակարարների և միջնորդ մատակարարների հետ: Որպես միջնորդ մատակարարներ կարող են հանդես գալ հանրապետական և մարզային մեծածախ առևտրային կազմակերպությունները, ինչպես նաև մեծածախ շրջանառության կազմակերպիչները, մասնավորապես՝ տոնավաճառները, աճուրդները և այլն: Առևտրամիջնորդային գործառնությունների 75–80 տոկոսը իրականացվում է միջնորդների միջոցով:

Ինչպես մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում աստիճանաբար նեղանում է մեծածախ կազմակերպությունների շրջանակը, և դրանք հիմնականում գործում են որպես մանրամեծածախ առևտրի կենտրոններ:

Իրականում մանրամեծածախ առևտրի կենտրոններն ունեն իրենց պահեստային տնտեսությունը և ապրանքներն առաքողներից պայմանագրերով կարող են ստանալ այնպիսի պարբերականությամբ, որը չի ազդի մանրածախ ցանցի գործունեության կազմակերպման անընդհատության վրա:

Մեծածախ առևտրային կազմակերպությունների շրջանակի կրճատմանը նպաստել է նաև այն, որ շուկայական տնտեսության պայմաններում ապրանքները արտադրողներից անմիջապես մուտք են գործում մանրածախ առևտրի ցանց, այսինքն՝ ձևավորվում են ուղղակի կապեր արտադրողի և մանրածախ առևտրի կազմակերպությունների միջև, որը բացառում է միջանկյալ օղակի առկայությունը:

Շուկայական տնտեսության պայմաններում, բացի սպառման ապրանքների առևտրից, աստիճանաբար ընդլայնվում է նաև արտադրական նշանակության ապրանքների շրջանառության շրջանակը:

Արտադրական նշանակության ապրանքների գծով իրականացվող առևտրային գործունեության կազմակերպումն ունի որոշակի առանձնահատկություն, որն արտահայտվում է նրանում, որ այն կապված չէ որոշակի ճյուղի հետ և ունի միջճյուղային բնույթ, որի միջոցով ճյուղերի միջև ձևավորված կապերը բնութագրում են հանրային արտադրության գործընթացի միասնությունը:

Առևտրային կապերի պահպանումը դրական ներգործություն է ունենում արտադրության վրա, բացահայտում է առանձին ապրանքների պահանջարկի և առաջարկի միջև առաջացող անհամամասնությունները: Առևտրի կազմակերպման գործում մեծ դեր ունի նաև պետությունը, որն ակտիվ մասնակցում է առևտրային գործարքների և գործառնությունների կարգավորմանը ու նպաստում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի ավելացմանը:

Բավական է նշել, որ ՀՀ-ում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը 2003թ., 1999թ. համեմատ ավելացել է 1.8, իսկ մեկ շնչի հաշվով՝ ավելի քան 2 անգամ[1]:

Մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի խանութների միջոցով կատարվող առևտրի ծավալը (52.4%), երկրորդ տեղում է սպառողական ապրանքների շուկաների միջոցով կատարվող առևտուրը (34.2 %): Երևանին բաժին է ընկնում ՀՀ ընդհանուր ապրանքաշրջանառության 83.9%-ը[2]:

Առևտրի կարգավորման գործում պետությունը մասնավորապես ապահովում է ապրանքարտադրողների և սպառողների միջև ներդաշնակություն, որը կարող է նպաստել ինչպես առևտրի, այնպես էլ ամբողջ տնտեսության զարգացմանն ու բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Սակայն պետք է նշել, որ առևտրային կազմակերպություններին տրված հնարավորությունները, պետության կողմից նրանց համար սահմանված տնտեսական լծակները, ինչպես նաև տնտեսահիրավական դաշտի առկա վիճակը առևտրային գործարքների մասնակիցներին ազատ գործելու հնարավորություն չի տալիս:

Շուկայական տնտեսության պայմաններում, սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված առևտրի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը հնարավոր է բարձրացնել միայն այդ ոլորտի գործընթացների կարգավորման միջոցով: Դա նշանակում է, որ առևտրային գործունեության պետական կարգավորումը նույնպես օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Առևտրի պետական կարգավորման համակարգն ընդգրկում է իրավական, գործադիր, օրենսդիր և վերահսկողական բնույթի համալիր միջոցառումներ, որոնք կարգավորվում են ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ

[1] Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, Երևան, 2004, էջ 360-362:
[2] Նույն տեղում:

քաղաքացիական օրենսգրքով, հարկային օրենսդրությամբ և բազմաթիվ իրավական ակտերով ու նորմատիվներով:

Առևտրի պետական կարգավորումն իրականացվում է՝ հաշվի առնելով այդ ոլորտի առանձնահատկությունները: Առևտրի կարգավորմամբ զբաղվում են ոչ միայն պետական, այլ նաև միջպետական կոորդինացնող կազմակերպությունները, որոնք կարող են սահմանել միջպետական նորմերին համապատասխան նվազագույն և առավելագույն գներ, կիրառել արտահանման ու ներմուծման, ինչպես նաև արտոնյալ վարկերի սահմանափակումներ:

Առևտրի պետական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է ամենից առաջ նրանով, որ հանրապետությունում շուկայական մեխանիզմը դեռևս ամբողջությամբ կայացած չէ և չի կարող ապահովել արտադրողների և սպառողների միջև առևտրային հարաբերությունների զարգացման կայուն մակարդակ:

Առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող գործարքների ու գործառնությունների պետական կարգավորման գործում առանձնահատուկ նշանակություն ունի կայուն օրենսդրական դաշտի ձևավորումը, որը խթանում է նաև այդ կազմակերպությունների գործունեությունը:

2001թ. հունիսի 3-ին ընդունված «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են սպառողների և արտադրողների կամ վաճառողների փոխհարաբերությունները: Մասնավորապես սահմանվել են սպառողների կողմից պատշաճ որակի և սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների ձեռքբերման, արտադրողների մասին անհրաժեշտ տեղեկատվության ստացման, ինչպես նաև սպառողների շահերի պետական և հասարակական պաշտպանության իրավունքներն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այս օրենքի առանձին դրույթներ 2004թ. նոյեմբերին վերանայվել են և փոփոխվել, օրենսդիր մարմնի կողմից հստակեցվել են սպառողների իրավունքների պաշտպանության և պատասխանատվության հարցերը:

Առևտրի պետական կարգավորման գործում կարևոր դեր ունեն նաև «Սննդամթերքի անվտանգության մասին» (1998թ., դեկտեմբեր), «Ստանդարտների մասին» (1999թ., դեկտեմբերի 9), «Նորմատիվ պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության հավաստման մասին» (1999թ., նոյեմբերի 9), «Հայաստանի Հանրապետությունում չափումների միասնականության ապահովման մասին» (1997թ., ապրիլի 30) ՀՀ օրենքները և «Հայաստանի հանրային արտադրանքի և ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման մասին» ՀՀ կառավարության որոշումը, ինչպես նաև բազմաթիվ այլ որոշումներ ու հրամաններ, որոնցով հաստատվել են պարենային և ոչ պարենային ապրանքների մանրածախ առևտրի կանոնները:

Առևտրի գործունեությունը կարգավորվում է ոչ միայն տնտեսական, այլ նաև վարչական, իրավական և կազմակերպչական մեթոդներով:

Առևտրի պետական կարգավորումը տնտեսական մեթոդներով իրականացվում է ֆինանսավարկային, հարկաբյուջետային կարգավորման մեխանիզմների միջոցով, մասնավորապես՝ անուղղակի հարկերի գծով սահմանված դրույքների, վճարման ժամկետների, հարկային արտոնությունների մասին դրույթների կիրառմամբ:

Առևտրի պետական կարգավորումը վարչական մեթոդներով իրականացվում է պետական իշխանությունների կողմից կանխարգելող միջոցառումների մշակման, քաղաքացիաիրավական բարոյական նորմերի կիրառման, առևտրի կանոնների տարբեր տեսակի խախտումների արգելման միջոցով:

Առևտրի պետական կարգավորման իրավական մեթոդները կիրառելիս առևտրային կառույցների համար պետության կողմից մշակվում են հակամենաշնորհային և իրավական ակտեր, սահմանվում է ապրանքների հավաստագրման կարգը և այլն:

Կազմակերպչական մեթոդներով առևտրի պետական կարգավորման էությունն այն է, որ պետական մարմինները առևտրային կազմակերպությունների համար հաշվապահական, վիճակագրական և այլ տեղեկատվական ձևերի մշակման ու դրանց ստանդարտացման զգալի աշխատանքներ են կատարում:

Ընդհանուր առմամբ, առևտրի պետական կարգավորման համակարգն ընդգրկում է կարգավորման ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ձևեր ու մեթոդներ:

Պետական կարգավորման ուղղակի եղանակի դեպքում բյուջետային ֆինանսավորման միջոցով պետության կողմից հատկացումներ են կատարվում պետական նպատակների, դրամական օժանդակության, ինչպես նաև դոտացիաների ձևերով:

Շատ դեպքերում այդ միջոցների մի մասը ուղղակի ճանապարհով ուղղվում է այն արտադրական ձեռնարկություններին ու կազմակերպություններին, որոնք ունեն արտադրության և իրացման հետ կապված որոշակի կորուստներ: Դրանք, նախևառաջ, առաջին անհրաժեշտության ապրանքներ արտադրող և իրացնող ձեռնարկություններն են:

Ուղղակի եղանակով պետական կարգավորման նպատակով պետությունը ֆինանսավորում է տրված պետական պատվերի դիմաց: Այս դեպքում պետությունը հանդես է գալիս որպես սպառող (գնորդ): Սովորաբար այդպիսի պատվերները տրվում են ռազմական արդյունաբերական համալիրին կամ այն կազմակերպություններին, որոնք նոր արտադրանք արտադրողներ են, ինչպես նաև սոցիալական նշանակություն ունեցող կատարելագործված տեխնոլոգիաներ մշակողներ:

Պետությունը ֆինանսավորում է նաև պետական գնումները, որոնց շնորհիվ նախադրյալներ են ստեղծվում որոշակի համապետական խնդիրների լուծման, երկրի անվտանգության, ոստիկանության, հրշեջ ու բժշկական ծառայությունների և վարչական ապարատի պահպանման համար: Դա նշանակում է, որ պետությունն ակտիվ մասնակցություն է ունենում համատեղ սպառման համար անհրաժեշտ ապրանքների ու ծառայությունների պահանջարկի բավարարման գործում, նպաստում է

համապատասխան պետական պահուստների և ռազմավարական նշանակություն ունեցող կենտրոնացված պաշարների ոչ միայն ձևավորմանը, այլ նաև դրանց պահպանմանը:

Առևտրի պետական կարգավորման ուղղակի եղանակով պետության մասնակցությունը դրսևորվում է արտաքին տնտեսական կապերի և տնտեսական համագործակցության միջոցով: Պետությունը իրականացնում է տնտեսական, վարչական և տեխնիկական բնույթի միջոցառումներ, որոնք որոշ չափով դժվարացնում կամ սահմանափակում են առևտուրը պետությունների միջև: Պետությունն առաջնորդվում է քվոտավորման, արտոնագրման (լիցենզավորման) հնարավորություններով, կարգավորում է արտահանումն ու ներմուծումը՝ նպատակ ունենալով ապահովել արտաքին առևտրային շրջանառության առավել շահավետ հաշվեկշիռ:

Քանի որ արտահանման ու ներմուծման գործառնությունը պետական հսկողության համակարգ է և կարող է իրականացվել որոշակի ապրանքների հոսքերի նկատմամբ խիստ հսկողություն սահմանելու միջոցով, ուստի կիրառվում է արտոնագրման (լիցենզավորման) կարգը: Արտոնագիրը (լիցենզիան) պաշտոնական փաստաթուղթ է, որը որոշակի ժամկետում արտահանման և ներմուծման գործառնություններ իրականացնելու իրավունք է տալիս:

Անուղղակի մեթոդներով առևտրի պետական կարգավորումն իրականացվում է որոշակի տնտեսական լծակների միջոցով, որոնք պետությունը սահմանում է դրամավարկային, հարկաբյուջետային, մաքսային քաղաքականությունների իրականացման միջոցով:

Դրանով պետությունն իր առջև խնդիր է դնում առևտրային կազմակերպությունների համար ստեղծել շուկայական մեխանիզմին բնորոշ միասնական կարգ և նրանց նկատմամբ ցուցաբերել հավասար մոտեցում գնային քաղաքականության ոլորտում:

Այսպես օրինակ, դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքում կիրառվող տնտեսական լծակների միջոցով պետությունը ձգտում է կարգավորել հասարակության ապրանքադրամական հարաբերությունները, նպաստել առևտրային կազմակերպությունների վերակառուցմանը, բարձրացնել կուլտուրական սպասարկման մակարդակը, ժամանակին կիրառել գիտատեխնիկական նորամուծությունները:

Հարկաբյուջետային քաղաքականության իրականացման միջոցով կարգավորվում են պետության և առևտրային կազմակերպությունների այն հարաբերությունները, որոնք ամենից առաջ դրսևորվում են առևտրային կազմակերպություններից հարկային եկամուտների գանձումով:

Հարկային լծակների կիրառումն ազդում է ապրանքների մանրածախ գների ձևավորման վրա, ուստի պահանջվում է վարել այնպիսի հարկային քաղաքականություն, որը կխթանի հարկային բազայի ընդլայնումը և դրական ազդեցություն կունենա պետության գանձարանային գործառույթի իրականացման առումով: Դա ոչ միայն առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման նա-

խադրյալներ կստեղծի, այլև կնպաստի այդ ոլորտում փոքր և միջին բիզնեսի շրջանակի ու հարկային բազայի ընդլայնմանը:

Շուկայական տնտեսության պայմաններում առևտրի անուղղակի եղանակով կարգավորման գործում առանձնահատուկ նշանակություն ունի նաև երկրի մաքսային քաղաքականությունը, որն ազդում է նաև ապրանքների արտահանման և ներմուծման հարաբերակցության կարգավորման վրա:

Ներմուծման և արտահանման սակագների (դրույքաչափերի) կիրառումն ու դրանց նկատմամբ վերահսկողության սահմանումը կարևորվում է նրանով, որ խթանող մաքսային քաղաքականությունը կարող է նպաստել ոչ միայն պետական բյուջեում մաքսատուրքերի ձևով ստացվող եկամուտների աճին, այլև ազդել վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի կրճատման վրա:

Առևտրի բաղկացուցիչ մասն է կազմում հանրային սնունդը, որը հասարակության համար կատարում է առանձնահատուկ սպասարկումներ ու ծառայություններ: Վերջիններիս շրջանակների ընդլայնումը անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում կենցաղային ծառայությունների վերակառուցման համար:

Հասարակական սնունդն ունի որոշակի առանձնահատկություններ:

Դրանք են.

- Հասարակական սննդի ձեռնարկությունները իրացնում են պարենային ապրանքների զգալի մասը, մշակում, վերամշակում և որպես պատրաստի սնունդ՝ մատուցում հասարակությանը:
- Սպառողներին ծառայությունները մատուցվում են անմիջապես հանրային սննդի օբյեկտներում:
- Հասարակական սննդի ոլորտում առևտրային գործառույթի իրականացման ժամանակ համատեղվում են թե՛ առևտրային, թե՛ արտադրական և թե՛ պատրաստի սննդի սպառման կազմակերպման գործընթացները:
- Հասարակական սննդի օբյեկտների ծառայություններից բնակչության մի մասը օգտվում է առողջարանների, հանգստյան տների և այլ օբյեկտների կողմից կազմակերպվող ծառայությունների միջոցով:

Վերջին տարիներին հանրային սննդի ոլորտը զգալի զարգացում ապրեց, որը հանգեցրեց նաև մանրածախ ապրանքաշրջանառության աճին:

Այսպես, եթե 1999թ. հանրապետության հանրային սննդի օբյեկտների մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2991.0 մլն դրամ էր, ապա 2003թ.՝ 6752.0 մլն դրամ:

Հասարակական սննդի օբյեկտներում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը որոշելիս պետք է առանձնացնել վաճառքի երկու հիմնական տեսակներ: Վաճառքի առաջին տեսակն ընդգրկում է սեփական արտադրության արտադրանքը՝ ճաշի առանձին տեսակներ, տաք և սառը խորտիկներ, կիսաֆաբրիկատներ, պատրաստի թեյ, սուրճ և այլն, իսկ երկրորդը՝ գնովի ապրանքների վաճառքը: Դրանք այն ապրանքներն են, որոնք հանրային սննդի ձեռնարկությունների

կողմից ձեռք են բերում այլ կազմակերպություններից և սպառողներին վաճառվում են առանց վերամշակման, մասնավորապես՝ հացամթերքներ, ոգելից խմիչքներ, հանքային ջրեր, ծխախոտ, հրուշակեղեն, պահածոներ և զանազան այլ ապրանքներ:

Հայաստանի Հանրապետությունում գործող 720 հանրային սննդի օբյեկտներում իրականացվող ապրանքաշրջանառության շուրջ 28.3%-ը կատարում են գերփոքր (մինչև 5 մարդ ունեցող) ձեռնարկությունները:

Հասարակական սննդի օբյեկտների գործունեության պետական կարգավորումն իրականացվում է օրենսդրական ու նորմատիվային ակտերով և ընդգրկում է վարչական, իրավական, ինչպես նաև կազմակերպչական մեթոդներով կարգավորման գործընթացները: Այդ գործընթացներն իրականացվում են ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի մեթոդներով:

Հասարակական սննդի ուղղակի եղանակով կարգավորման գործընթացն արտացոլում է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջները, որում կարևորվում են ապրանքների որակական հատկանիշների բարձրացման, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության հարցերը:

Անուղղակի մեթոդներով պետական կարգավորման գործընթացը հասարակական սննդի ոլորտում իրականացվում է որոշակի, մասնավորապես՝ դրամավարկային, հարկաբյուջետային քաղաքականությամբ սահմանված տնտեսական լծակների միջոցով: Դրանցով կարգավորվում են հանրային սննդի օբյեկտների, դրանց ծառայություններից օգտվողների և պետության հարաբերությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տրանսպորտի քաղաքականությունը այն միջոցառումների ամբողջությունն է, որոնք ուղղված են բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների նկատմամբ տնտեսության և բնակչության պահանջարկի բավարարմանը, տրանսպորտի տեխնիկական մակարդակի բարձրացմանը, նրա առանձին տեսակների զարգացմանը:

2. ՀՀ կապի քաղաքականության հիմնական գծերն են՝ կապի ծառայությունների նկատմամբ տնտեսության, բնակչության և երկրի պաշտպանության պահանջների առավելագույն բավարարումը, գոյություն ունեցող կապի միջոցների հետագա զարգացումն ու արդյունավետ օգտագործումը, կապի նորագույն տեխնիկայի ներդրումը և արտադրական գործընթացների ավտոմատացումը, հեռուստա- և ռադիոհաղորդումների ցանցի զարգացումն ու կատարելագործումը:

3. Կապիտալ շինարարության քաղաքականությունն ընդգրկում է այն միջոցառումների ամբողջությունը, որոնք ուղղված են նոր տեխնիկական հիմքի վրա երկրի արտադրական ներուժի մեծացմանը, բնակարանների և կոմունալ-կենցաղային ու սոցիալ-մշակութային օբյեկտների կառուցման համար անհրաժեշտ կապիտալ ներդրումների ավելացմանը, հիմնական ֆոնդերի ու արտադրական կարողությունների գործարկման ծավալների մեծացմանը, նախագծային – հետազոտական աշխատանքների բարելավմանը, շինարարության եղանակների ու մեխանիզմների կատարելագործմանը:

4. .Առևտրային գործունեությունը իրենից ներկայացնում է առևտրական կազմակերպության, ձեռնարկության օպերատիվ կազմակերպական այն գործողությունները, որոնք ամբողջությամբ առնչվում են ապրանքների առքուվաճառքի գործընթացի կատարելագործման միջոցով բնակչության պահանջների բավարարմանը և շահույթի ստացմանը:

5. Հասարակական սննդի ձեռնարկությունները մի կողմից իրացնում են պարենային ապրանքների զգալի մասը, իսկ մյուս կողմից, վերջիններիս մշակման և վերամշակման միջոցով, պատրաստի սնունդը մատուցում հասարակությանը: Սպառողներին ծառայությունները մատուցվում են հանրային սննդի օբյեկտներում, որտեղ համատեղվում են թե՛ առևտրական, թե՛ արտադրական և թե՛ պատրաստի սննդի սպառման կազմակերպման գործընթացները:

Թեստեր և խնդիրներ

1. Մեր հանրապետությունում շինարարության պետական կարգավորման հիմնահարցերը լուծվում են.

ա. քաղաքաշինության նախարարության և կառավարության կողմից,
բ. առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից,
գ. տրանսպորտի և կապի նախարարության կողմից,
դ. բնապահպանության նախարարության կողմից:

2. Միատարր արտադրանք արտադրող ճյուղերում արտադրական կարողությունների գործարկման ծավալը հաշվարկվում է.

ա. արժեքային արտահայտությամբ,
բ. բնեղեն արտահայտությամբ,
գ. արտադրանքի իրացման ծավալով,
դ. թվարկվածները սխալ են:

3. Հիմնական ֆոնդերի գործարկման ծավալները, դրանց օգտագործման աստիճանը բարելավելու ուղիները և դրանց ընդհանուր ու լրացուցիչ պահանջարկը ցույց են տրվում /արտացոլվում են.

ա. արտադրական կարողությունների հաշվեկշռում,
բ. հիմնական ֆոնդերի հաշվեկշռում,
գ. պետական բյուջեում,
դ. բնակչության դրամական եկամուտների ու ծախսերի հաշվեկշռում:

4. Որպես կանոն, շինարարական տիտղոսացուցակները ընդգրկում են.

ա. վերակառուցվող օբյեկտները,
բ. ընդլայնվող օբյեկտները,
գ. նոր կառուցվող օբյեկտները,
դ. վերը թվարկվածները միասին:

5. Թվարկվածներից ո՞րը շինարարական ինդուստրիայի զարգացումը բնութագրող ցուցանիշ չէ.

ա. շինարարական-մոնտաժային աշխատանքների ծավալը,
բ. գործարկվող արտադրական կարողությունների ծավալը,
գ. գործարկվող հիմնական ֆոնդերի ծավալը,
դ. աշխատանքային ռեսուրսների թվաքանակը:

6. Արտոնագիրը /լիցենզիան/ պաշտոնական փաստաթուղթ է, որը տրված ժամկետում.

ա. արտահանման գործառնություններ իրականացնելու իրավունք չի տալիս,
բ. ներմուծման գործառնություններ իրականացնելու իրավունք չի տալիս,
գ. իրավունք է տալիս իրականացնելու արտահանման և ներմուծման գործառնություններ,
դ. պետական հսկողություն իրականացնելու իրավունք չի տալիս:

7. Տրանսպորտային հաշվեկշիռները չեն բնութագրում.

ա. ներկրվող և արտակրվող բեռների ծավալները,
բ. տնտեսական կապերը այլ շրջանների հետ,
գ. տնտեսական կապերը այլ երկրի հետ,
դ. տվյալ վայրի բնաշխարհագրական դիրքը:

8. Կապը, որպես տնտեսության ոլորտ.

ա. սպասարկում է տնտեսությանը,
բ. սպասարկում է բնակչությանը,
գ. մի մասով սպասարկում է տնտեսությանը, մյուս մասով՝ բնակչությանը,
դ. բավարարում է երկրի պաշտպանության պահանջները:

9. Եթե տրանսպորտը փոխադրում է բեռներ և ուղևորներ, ապա կապը տեղեկատվություն է փոխադրում.

ա. փոստային ծառայության ձևով,
բ. հեռուստահաղորդագրության ձևով,
գ. ռադիոհաղորդագրության ձևով,
դ. վերը թվարկվածները միասին:

10. 1 տարում տվյալ երկրի յուրաքանչյուր բնակչի կատարած ուղևորությունների քանակը կիլոմետրերով ցույց տվող բնակչության շարժի գործակիցը որոշվում է ուղևորաշրջանառության և բնակչության թվաքանակի.

ա. հարաբերությամբ,
բ. գումարով,
գ. տարբերությամբ,
դ. արտադրյալով:

Տրանսպորտի քաղաքականություն
Բեռնափոխադրումներ
Ուղևորափոխադրումներ
Բեռնաշրջանառություն
Ուղևորաշրջանառություն
Կապի ծառայություններ
Կապիտալ շինարարություն
Արտադրական կարողություններ
Հիմնական արտադրական ֆոնդեր
Հիմնական ոչ արտադրական ֆոնդեր
Կապիտալ ներդրումներ
Շինարարական մոնտաժային աշխատանքներ
Կապիտալ շինարարության տիտղոսացուցակ
Շինարարական ինդուստրիա
Կապալառուական պայմանագիր
Նախագծային-նախահաշվային փաստաթուղթ
Ապրանքների շրջանառություն
Առևտրային գործընթաց
Տնտեսական պայմանագրեր
Գնողունակ պահանջարկ
Առքուվաճառքի պայմանագիր
Մանրածախ ապրանքաշրջանառություն
Ներմուծման և արտահանման դրույքաչափեր
Հասարակական սնունդ
Հասարակական սննդի սեփական արտադրանք

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ է նշանակում տրանսպորտային քաղաքականություն:
2. Ի՞նչ քաղաքականություն է իրականացվում ՀՀ կապի զարգացման բնագավառում:
3. Որո՞նք են տրանսպորտի տեսակները, և դրանք ի՞նչ հեռանկարներ ունեն ՀՀ-ում:
4. Որո՞նք են տրանսպորտի ծրագրի հիմնական բաժինները և ցուցանիշները:
5. Ինչպե՞ս է որոշվում բեռնաշրջանառության ծավալը:
6. Ինչպե՞ս է որոշվում փոխադրման ենթակա բեռների քանակը:
7. Ի՞նչ սկզբունքներ են կիրառվում բեռները տրանսպորտի առանձին տեսակներով փոխադրելիս:
8. Ինչպե՞ս է որոշվում ուղևորաշրջանառության ծավալը:
9. Որո՞նք են երկաթուղային տրանսպորտի շարժակազմի օգտագործման ցուցանիշները:
10. Որո՞նք են կապիտալ շինարարության հիմնական խնդիրները:
11. Ո՞ւմ կողմից են լուծվում մեր հանրապետությունում կապիտալ շինարարության պետական կարգավորման հիմնահարցերը:
12. Որո՞նք են կապիտալ շինարարության ծրագրի բաժինները:
13. Ի՞նչ նորմեր են կիրառվում տիտղոսային ցուցակները կազմելիս:
14. Ո՞ր ցուցանիշների միջոցով է բնութագրվում շինարարական ինդուստրիայի զարգացումը:
15. .Ի՞նչ եղանակներով են կազմակերպվում շինարարական աշխատանքները:
16. Որո՞նք են առևտրի գործառույթները:
17. Որո՞նք են առևտրի հիմնական առանձնահատկությունները:
18. Ո՞ր առևտրային կազմակերպությունների միջոցով է կազմակերպվում ապրանքների շրջանառությունը:
19. Ինչպիսի՞ միջոցառումներ է ընդգրկում առևտրի պետական կարգավորման համակարգը:
20. Ի՞նչ առանձնահատկություններ ունի հանրային սնունդը:
21. Ի՞նչ մեթոդներով է կարգավորվում առևտրի և հանրային սննդի օբյեկտների գործունեությունը:

ԳԼՈՒԽ 12

ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Երկրի արտաքին տնտեսական հարաբերությունները բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները:
- Ի՞նչ է իրենից ներկայացնում երկրի վճարային հաշվեկշիռը, ինչպես կարելի է կարգավորել այն արտաքին առևտրային քաղաքականությամբ:
- Ինչպե՞ս են ձևավորվում ապրանքների և կապիտալի միջերկրային հոսքերը և ինչպես կարելի է ազդել դրանց վրա:
- Ինչպիսի՞ փոխանակային կուրսեր կարող են օգտագործվել, ինչպիսի՞ն է դրանց կիրառման մեխանիզմը:
- Ինչպիսի՞ն է փոխանակային կուրսերի կարգավորման քաղաքականությունը:
- Որո՞նք են ՀՀ արտաքին առևտրի զարգացման հնարավորությունները:

12.1. Մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկումը բաց տնտեսությունում

Աշխարհի բոլոր երկրները հաստատում են արտաքին տնտեսական կապեր: Նրանք վաճառում են ապրանքներ, կատարում ներդրումներ այլ երկրներում, մատուցում ծառայություններ այլ երկրների համար: Նույն ձևով՝ գնում են ապրանքներ և ծառայություններ, օգտվում համաշխարհային ֆինանսական շուկայից՝ իրենց երկրում ներդրումներ կատարելու համար: Ուստի երկրի տնտեսությունը կոչվում է բաց, եթե նա ազատ համագործակցում է այլ երկրների տնտեսությունների հետ, արտահանում և ներմուծում ապրանքներ ու ծառայություններ, թույլատրում կապիտալի ազատ արտահոսք և ներհոսք:

Դա նշանակում է, որ երկրի տնտեսական զարգացման և մակրոտնտեսական հաշվեկշռվածության վրա ազդում են արտաքին տնտեսական կապերը: Մինչև այժմ մակրոտնտեսական երևույթները դիտարկել ենք փակ տնտեսության համար: Բաց տնտեսության մակրոտնտեսական երևույթների քննարկման ժամանակ անհրաժեշտ է պարզել, թե երկրում արտադրվող ապրանքների և ծառայությունների որ մասն է արտահանվում կամ երկրում օգտագործվող ազգային եկամտի որ մասն է ծախսվում այլ երկրներից ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար: Դրանք անհրաժեշտ են արտահանում, ներմուծում, զուտ արտահանում,

առևտրային հաշվեկշիռ, ակտիվ կամ պասիվ առևտրային հաշվեկշիռ հասկացությունները պատկերացնելու և տվյալ երկրի տնտեսական զարգացման վրա դրանց ազդեցությունը գնահատելու համար:

Արտահանումը տվյալ երկրում արտադրված և այլ երկրներում վաճառված ապրանքների ու ծառայությունների արժեքն է:

Ներմուծումը այլ երկրներում արտադրված և տվյալ երկրում վաճառված ապրանքների ու ծառայությունների արժեքն է:

Զուտ արտահանումը և առևտրային հաշվեկշիռը նույն բովանդակությամբ հասկացություններ են և արտահայտում են արտահանված և ներմուծված ապրանքների և ծառայությունների արժեքների տարբերությունը:

Այդ հասկացությունների միջև քանակական կապերի բացահայտման համար նախ դիտարկենք երկրում արտադրված ապրանքների ու ծառայությունների օգտագործման նպատակները: Երկրում արտադրված ապրանքները և ծառայությունները օգտագործվում են չորս բաղադրիչների տեսքով: Դրանց մի մասը օգտագործվում է սպառման համար (C), երկրորդ մասը՝ տնտեսության մեջ ներդրումներ կատարելու (I), երրորդը՝ պետական ծախսերի (G) և մնացած՝ չորրորդ մասը արտահանվում է երկրից: Ուստի բանաձևի տեսքով կարելի է գրել.

$$Y= C^{ն} +I^{ն} +G^{ն} +E X,$$

որտեղ՝ C, I, G բաղադրիչների վրա դրված ,,ն,, տառը նշանակում է, որ խոսքը վերաբերում է երկրի ներսում արտադրված ապրանքների ու ծառայությունների սպառմանը, ներդրումներին և պետական ծախսերին,

EX-ը՝ արտահանվող ապրանքների ու ծառայությունների արժեքն է:

Սակայն, եթե նկատի ունենանք, որ մեր երկրում սպառվում են նաև այլ երկրներում արտադրված ապրանքներ, ապա կարող ենք ասել, որ երկրի ներսում ամբողջ սպառումը (C) ձևավորվում է.

$$C=C^{ն} +C^{ա} ,$$

որտեղ՝ $C^{ա}$-ն այլ երկրներում արտադրված և մեր երկիր ներմուծվող ապրանքների սպառումն է: Նույն ձևով կարելի է գրել.

$$I =I^{ն}+I^{ա} ,$$

որտեղ՝ $I^{ա}$ -ն ներմուծված ապրանքների օգտագործումն է՝ ներդրումների համար:

Պետական ծախսերի համար նույնպես օգտագործվում են ներմուծված ապրանքներ, ուստի կարելի է գրել.

$$G=G^{ն} + G^{ա},$$

որտեղ՝ $G^{ա}$ -ն ներմուծվող ապրանքների օգտագործումն է՝ պետական ծախսերի համար:

Եթե այդ հավասարումների արժեքները տեղադրենք ազգային հաշիվների նույնության հավասարման մեջ, կստանանք.

$$Y= (C-C^{ա}) + (I-I^{ա}) +(G-G^{ա})+EX$$

Հավասարման ձևափոխումից հետո կարելի է գրել.

$$Y=C+I+G+EX-(C^{ա}+I^{ա}+G^{ա})$$

Դժվար չէ պատկերացնել, որ ($C^{ա}+I^{ա}+G^{ա}$) տարրերի գումարը տվյալ երկիր ներմուծվող ապրանքների ու ծառայությունների արժեքն է, որը IM-ով նշանակելու դեպքում հավասարումը ստանում է

$$Y=C+I+G+(EX-IM)$$ տեսքը:

Եթե զուտ արտահանում հասկացությունը վերագրենք արտահանման և ներմուծման արժեքների տարբերությանը և նշանակենք NX-ով, ապա երկրում արտադրված ապրանքների ու ծառայությունների օգտագործումը չորս բաղադրիչների համար ստանում է $Y=C+I+G+NX$ տեսքը: Այս բանաձևի օգտագործման ժամանակ խիստ կարևոր է, թե երկրում արտադրված ապրանքների ու ծառայությունների արժեքը (Y) ինչ ցուցանիշով է հաշվարկվում: Ինչպես գիտենք, բոլոր երկրների կողմից ազգային արդյունքի հաշվարկման համար օգտագործվում է ՀՆԱ ցուցանիշը: Դա նշանակում է, որ մեր երկրի գործակալների կողմից այլ երկրների համար կատարված ծառայությունները ընդգրկվում են արտահանման, իսկ այլ երկրների գործակալների կողմից մեր երկրի համար կատարված ծառայությունները՝ ներմուծման ծավալում:

Այսպիսով, եթե երկրի արտահանումը գերազանցում է ներմուծումը, ապա երկրի առևտրային հաշվեկշիռը ակտիվ է, այսինքն՝ արտադրվում են ավելի շատ ապրանքներ և ծառայություններ, քան օգտագործվում են: Եթե երկրի արտահանումը պակաս է, քան ներմուծումը, ապա առևտրային հաշվեկշիռը պասիվ է, այսինքն՝ օգտագործվում են ավելի շատ ապրանքներ և ծառայություններ, քան արտադրվում են:

Եթե երկրից արտահանվող ապրանքների և ծառայությունների արժեքը հավասար է ներմուծվող ապրանքների ու ծառայությունների արժեքին, ապա այն անվանում ենք <u>նետտո հաշվեկշիռ</u>: Արտաքին առևտրի հաշվեկշիռը կապվում է տվյալ երկրի կապիտալի շարժի հաշվեկշռի հետ: Այդ կապը բացահայտելու համար նորից օգտվենք ազգային հաշիվների նույնության հավասարումից.

$$Y=C+I+G+NX$$

Եթե այս հավասարումը գրենք $Y-C-G=I+NX$ տեսքով, ապա պարզ է դառնում, որ երկրի ֆինանսական միջոցները կապվում են ապրանքների և ծառայությունների արտաքին առևտրի մնացորդի հետ: Այսպես, վերջին հավասարման ձախ մասը ցույց է տալիս երկրի ազգային տնտեսումը, որը պետական և մասնավոր խնայողության գումարն է: Եթե պետական խնայողությունը կազմում է (T-G), իսկ մասնավոր խնայողությունը՝ Y-C-T, ապա այդ երկուսի գումարը կազմում է.

$$Y-C-G$$

Ուստի կարող ենք գրել.

$$S=I+NX,$$

որտեղ՝ S-ը ազգային խնայողությունն է,

կամ՝

S-I=NX

Վերջին հավասարումը արտահայտում է կապիտալի շարժի մնացորդի և արտաքին առևտրի մնացորդի հավասարությունը: Այն հաճախ անվանում ենք նաև վճարային հաշվեկշռի հավասարում՝ նկատի ունենալով, որ հավասարման ձախ մասը արտահայտում է կապիտալի շարժի հաշվեկշռի, իսկ աջ մասը՝ արտաքին առևտրի ընթացիկ հաշվի մնացորդը: Եթե կապիտալն ավելի շատ է հոսում երկիր, քան դուրս է հոսում, ապա նշանակում է, որ երկրի խնայողությունը փոքր է ներդրումներից, և կապիտալի հաշվի մնացորդը դրական է: Գրում ենք՝ (I-S)>0: Դա նշանակում է, որ արտաքին առևտրի ընթացիկ հաշիվը բացասական մնացորդ ունի և NX<0: ՀՀ անկախացումից հետո երկրի արտաքին առևտրի հաշվեկշիռը բոլոր տարիներին ունեցել է բացասական մնացորդ: Այսպես, ՀՀ-ն 1995թ. 403 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ ավելի շատ ապրանքներ է ներմուծել, քան արտահանել: Բացասական մնացորդը 1996թ. կազմել է 565.6, 1997թ.՝ 659.8, 1998թ.՝ 682, 1999թ.՝ 579.6, 2000 թ.՝ 463.3, 2001 թ.՝ 420.2, 2002թ.՝ 368.7, և 2003թ.՝ 434.0 մլն ԱՄՆ դոլար[1]: Նշանակում է, որ նույն չափով կապիտալ է հոսել մեր երկիր միջազգային ֆինանսական կազմակերպություններից, այլ երկրներից վերցրած վարկերի և տրամադրված օգնությունների, այլ երկրներ արտագաղթած մեր բնակչությունից ստացված տրանսֆերտների, պետական սեփականությունը և մասնավոր բնակարանները այլ երկրների գործակալներին վաճառելու հաշվին:

Այդ բոլոր գործարքներն արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռի կառուցվածքում: Վճարային հաշվեկշռի կառուցվածքն է՝

1. Ընթացիկ հաշվի գործառույթներ
   - 1.1. Առևտրային հաշվեկշիռ
     - Ապրանքների ներմուծում
   - 1.2. Ծառայությունների հաշիվ
     - Ոչ գործոնային ծառայություններ (զբոսաշրջություն)
     - Կապիտալի ծառայություններ (տոկոսների ստացում)
     - Աշխատանքի ծառայություններ (անձնական տրանսֆերտներ)
   - 1.3. Միակողմանի տրանսֆերտներ
2. Կապիտալի շարժի հաշիվ
   - 2.1. Արտասահմանյան զուտ ներդրումներ
   - 2.2. Արտասահմանյան վարկեր
3. Սխալներ
4. Ընդամենը՝ վճարային հաշվեկշիռ (1+2)

Եթե երկրի խնայողություններն ավելի մեծ են, քան կատարվող ներդրումները, ապա կապիտալը դուրս է հոսում երկրից: Այդ դեպքում կարելի է գրել, որ.

[1] Տնտեսական միտումներ, եռամսյակային թողարկում, Հայաստան, հուլիս-սեպտեմբեր, 2000թ., էջ 166 և Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2004թ.:

$$S=I+NFI,$$

որտեղ՝ NFI-ն օտարերկրյա զուտ ներդրումների մնացորդն է, այսինքն՝ մեր երկրի գործակալներն ավելի շատ ներդրումներ են կատարում այլ երկրներում, քան օտարերկրյա գործակալները՝ մեր երկրում: Հետևաբար կարելի է համոզվել նաև այն բանում, որ օտարերկրյա զուտ ներդրումների ծավալը հավասար է արտաքին առևտրի ընթացիկ հաշվի մնացորդին, քանի որ, եթե.

$$S=I+NX \text{ և } S=I+NFI$$

ապա՝

$$NFI=NX$$

Այս հավասարումը ցույց է տալիս, որ կապիտալի շարժի և ընթացիկ հաշվի մնացորդներն արտահայտում են միևնույն մակրոտնտեսական երևույթի երկու կողմերը: Այսինքն, եթե արտաքին առևտրի ընթացիկ հաշիվը բացասական է, ապա երկրի ազգային հարստության մի մասն անցնում է այլ երկրների գործակալներին, կամ երկիրը պարտք է մնում այլ երկրներին ու միջազգային կազմակերպություններին:

Հետևաբար, բաց տնտեսություն ունեցող երկիրը այլ երկրների հետ փոխհարաբերություններ ստեղծում է ոչ միայն ապրանքների ու ծառայությունների, այլև կապիտալի որոշակի հոսքերի տեսքով, որոնք էական ազդեցություն են գործում երկրի տնտեսական զարգացման վրա:

12.2. Կապիտալի և ապրանքների միջազգային հոսքերը

Մենք համոզվեցինք, որ ապրանքների ու ծառայությունների հոսքերը յուրաքանչյուր երկրի համար հավասարակշռվում են կապիտալի հոսքերի հետ: Դա թույլ է տալիս ենթադրելու, որ արտաքին առևտրի միջպետական հոսքերը կապված են համաշխարհային ֆինանսական շուկայում փոխառու միջոցների շարժի հետ: Ուստի պահանջվում է պարզել երկու հարց: Նախ՝ ինչ մեխանիզմով է կարգավորվում արտաքին առևտրի և համաշխարհային ֆինանսական շուկայի կապիտալի հոսքերի հավասարակշռությունը և երկրորդ՝ ինչպիսի քաղաքականությամբ կարելի է ազդել տվյալ երկրի ապրանքների ու ծառայությունների հոսքերի վրա:

Առաջին հարցին պատասխանելու համար բավական է հիշել, որ ինչպես առանձին երկրի կապիտալի շուկայում տոկոսադրույքը, այսինքն՝ կապիտալը փոխատվությամբ վերցնելու համար լրացուցիչ վճարը, ձևավորվում է տվյալ երկրի ազգային խնայողության (կապիտալի առաջարկը) և ներդրումների պահանջարկի հարաբերակցությամբ, այնպես էլ համաշխարհային ֆինանսական շուկայում տոկոսադրույքը ձևավորվում է կապիտալի պահանջարկի ու առաջարկի հարաբերակցությամբ, եթե, իհարկե, համաշխարհային ֆինանսական շուկան պատկերացնենք որպես միասնական տնտեսության շուկա:

Այլ խոսքով, եթե կապիտալի պահանջարկը ավելի մեծ է, քան կապիտալի առաջարկը, ապա համաշխարհային ֆինանսական շուկայում

տոկոսադրույքը բարձրանում է: Այդ դեպքում կապիտալի ցածր տոկոսադրույք ունեցող առանձին երկրներից այն հոսում է այլ երկրներ, որոնցում կապիտալի տոկոսադրույքը բարձր է: Դրա շնորհիվ համաշխարհային ֆինանսական շուկայում տոկոսադրույքը ձեռք է բերում հավասարակշիռ վիճակ, քանի որ կապիտալի առաջարկը ձգտում է հավասարվել կապիտալի պահանջարկին:

Երկրորդ հարցին պատասխանելու համար նախ պետք է երկրները դասակարգել <u>փոքր</u> կամ <u>մեծ տնտեսություն</u> ունեցողների: Փոքր բաց տնտեսություն ունեցող են համարվում այն երկրները, որոնցից ապրանքների և կապիտալի հոսքերը էական ազդեցություն չեն գործում ապրանքների և կապիտալի համաշխարհային շուկաների գների և տոկոսադրույքների վրա: Այդպիսի երկրներ են Հայաստանը, Վրաստանը, Դանիան, Հոլանդիան, Սալվադորը և 100-ից ավելի այլ երկրներ, որոնց արտահանումը չի կարող միջազգային շուկայում զգալի տեսակարար կշիռ ունենալ, իսկ կապիտալի ներմուծումը կամ արտահանումը չեն կարող ազդել համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքի վրա:

Նկատի ունենալով, որ Հայաստանը նույնպես փոքր տնտեսություն ունեցող երկիր է, նպատակահարմար է ուսումնասիրել փոքր բաց տնտեսության ապրանքների և կապիտալի շուկաների փոխազդեցության մոդելը: Այդ մոդելը հնարավորություն կտա պարզել, թե ինչպիսին է խնայողության և ներդրումների հավասարակշռությունը համաշխարհային ֆինանսական շուկայի ազդեցության պայմաններում, և ինչպես կարելի է տնտեսական քաղաքականությամբ ազդել կապիտալի և ապրանքների միջերկրային հոսքերի վրա: Միայն այն տարբերությամբ, որ Հայաստանը դեռևս չունի կատարյալ բաց տնտեսություն, քանի որ մեր երկրի գործակալները դեռևս համաշխարհային ֆինանսական շուկա ազատ ներթափանցելու պայմաններ չունեն՝ տնտեսական, քաղաքական, իրավական մի շարք պատճառներով: Ուստի, եթե այդպիսի պայմաններ ունեցող երկրների համար, որպես կանոն, ընդունվում է, որ փոքր երկրի կապիտալի շուկայի իրական տոկոսադրույքը (r) հավասարվում է համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքին (r*), կարող ենք գրել հետևյալ հավասարումը՝

$$r=r^*$$

Ինչպես գիտենք, նույնիսկ 2000թ., երբ ՀՀ-ում տնտեսությունը մի փոքր կայունացել էր, համաշխարհային ֆինանսական շուկայում տոկոսադրույքը 5-6%-ի միջակայքում էր, իսկ ՀՀ կապիտալի շուկայում նույնիսկ արտարժույթով (ԱՄՆ դոլարով) ավանդների տոկոսադրույքը գերազանցում էր 10%-ը:

Այնուամենայնիվ, կատարյալ փոքր բաց տնտեսության մոդելի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն կտա պարզել խնայողության, ներդրումների, տոկոսադրույքի և զուտ արտահանման փոխադարձ կապը:

Այսպես, եթե դիտարկել ենք, որ արտադրության ծավալը որոշվում է աշխատուժի և կապիտալի առկա մեծությամբ, ապա տվյալ պահի համար կարող ենք գրել.

$$Y=F(\bar{K}, \bar{L})=\bar{Y},$$

այսինքն՝ արտադրության ծավալը կայուն է յուրաքանչյուր պահի:

Միաժամանակ գիտենք նաև, որ սպառումը ֆունկցիա է տնօրինվող եկամուտների մեծությունից.

$$C=C(Y-T)$$

Վերջապես, սահմանել ենք, որ յուրաքանչյուր երկրում ներդրումների պահանջարկը հակադարձ կախվածություն ունի տոկոսադրույքից.

$$I=I(r)$$

Այժմ, հաշվի առնելով մեր ենթադրությունները, NX=(Y-C-G)-I հավասարումը կարող ենք գրել նաև.

$$NX=\{\bar{Y}-C(\bar{Y}-T)-G\}-I(r)$$

Մեր ենթադրություններից հետևում է նաև երկրի ազգային խնայողության (S) կայուն լինելը տվյալ տարվա ընթացքում, ուստի գրում ենք, որ.

$$NX=\bar{S}-I(r^*)$$

Այս հավասարման գրաֆիկը խիստ տարբերվում է փակ տնտեսության խնայողության, ներդրումների պահանջարկի կախվածությունը տոկոսադրույքից արտահայտող գրաֆիկից: Տարբերությունն այն է, որ փակ տնտեսությունում տոկոսադրույքը փոփոխվում էր այնպես, որ հավասարակշռի խնայողության և ներդրումների ծավալները: Քանի որ բաց տնտեսությունում երկրի կապիտալի շուկայի իրական տոկոսադրույքը ինքնաբերաբար հավասարվում է համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքին, ազգային խնայողության և ներդրումների տարբերությունը հավասարվում է արտաքին առևտրի ընթացիկ հաշվի մնացորդին: Ուստի երկրի վճարային հաշվեկշռի կապիտալի շարժի և համաշխարհային տոկոսադրույքի պայմաններում ընթացիկ հաշվի մնացորդը որոշվում է երկրի ազգային խնայողության և ներքին ներդրումների տարբերությամբ:



Նկարում r_0-ն երկրի կապիտալի շուկայի իրական տոկոսադրույքն է փակ տնտեսությունում, r_0^*-ը՝ համաշխարհային շուկայի իրական տոկոսադրույքը: Քանի որ ներդրումների ծավալը փոքր է, համաշխարհային տոկոսադրույքի պայմաններում, խնայողության և ներդրումների տարբերությունը կազմող զուտ արտահանումը դրական մեծություն ունի:

Նկ. 12.1. Խնայողության և ներդրումների կախվածությունը իրական տոկոսադրույքից

Մեր այս վերլուծությունների ընթացքում ենթադրում ենք, որ երկրի հարկերը (T) և պետական ծախսերը (G) կայուն մեծություններ են, և դրանցով է պայմանավորված խնայողությունների կայուն լինելը: Դա

նշանակում է, որ երկիրը հարկաբյուջետային քաղաքականությամբ կարող է փոփոխել T և G մեծությունները, որի արդյունքում կձևավորվեն խնայողության, ներդրումների և զուտ արտահանման նոր ցուցանիշներ:

Տնտեսական քաղաքականության ազդեցությունը երկրի վճարային հաշվեկշռի վրա

Ենթադրենք՝ ապրանքների արտահանումը երկրից հավասար է դրանց ներմուծմանը, այլ խոսքով՝ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդը և կապիտալի շարժի հաշվի մնացորդը հավասար են զրոյի: Փորձենք դիտարկել, թե ինչպիսի տնտեսական քաղաքականությամբ կարելի է ազդել խնայողության, ներդրումների և զուտ արտահանման վրա:

ա. Երկրի ներքին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Եթե երկիրը իրականացնում է խթանող հարկաբյուջետային քաղաքականություն, այսինքն՝ ավելացնում է պետական գնումները կամ կրճատում է հարկերը, ապա երկու դեպքում էլ տեղի է ունենում ազգային խնայողության կրճատում:



Խթանող հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում ազգային խնայողության S_1 ծավալը դառնում է S_2, այսինքն՝ գիծը շարժվում է դեպ ձախ: Դա նշանակում է, որ S_1-S_2 տարբերությամբ փոքրանում է նաև զուտ արտահանումը, այսինքն՝ ΔNX-ը բացասական է: Քանի որ համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքը պահպանվում է, նույնքան ավելանում է կապիտալի հոսքը տվյալ երկիր:

Նկ.12.2. Խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Խնայողության փոքրացման դեպքում ներդրումները չեն կրճատվում, քանի որ դրանք որոշվում են տոկոսադրույքի մեծությամբ: Այդ դեպքում տոկոսադրույքը բարձրանալու միտում է հանդես բերում, սակայն փոքր բաց երկրի տոկոսադրույքը հավասարվում է համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքին, և կապիտալը ազատորեն հոսում է տվյալ երկիր: Կապիտալի ներհոսքը մեծանում է, և երկրից արտահանումը կրճատվում է նույն չափով:

բ. Այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը փոքր երկրի տնտեսության վրա

Եթե խթանող հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնում են մյուս, հատկապես կապիտալի մեծ արտահանում ունեցող երկրները, ապա համաշխարհային ֆինանսական շուկայում պակասում է կապիտալի առաջարկը, քանի որ այդ երկրներում ազգային խնայողությունը պակասում է, և ներդրումների նույն ծավալի դեպքում փոքրանում

է նաև (S-I) տարբերությունը, այսինքն՝ կապիտալի արտահոսքի հնարավորությունը: Դրա հետևանքով համաշխարհային ֆինանսական շուկայում տոկոսադրույքը բարձրանում է, քանի որ ներդրումների համաշխարհային պահանջարկը չի կրճատվում: Համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքի աճը ստիպում է տվյալ երկրի գործարարներին իրենց ազատ կապիտալները արտահանել այլ երկրներ այնքան ժամանակ, քանի դեռ քննարկվող երկրում տոկոսադրույքը չի բարձրացել համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքի մակարդակին:



Այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությամբ համաշխարհային տոկոսադրույքը r_1^*-ից դառնում է r_2^*: Դրա հետևանքով կապիտալի արտահոսքը փոքր բաց տնտեսությունից մեծանում է, և նույն չափով աճում է զուտ արտահանման ծավալը, այսինքն՝ ΔNX-ը դրական մեծություն է:

Նկ.12.3. Այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Քանի որ այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության հետևանքով փոքր բաց երկրի խնայողությունները չեն փոփոխվել, ուստի կապիտալի արտահոսքի աճը տեղի է ունենում զուտ արտահանման ավելացման հաշվին:

Այսպիսով, այլ երկրների խթանող հարկաբյուջետային քաղաքականության հետևանքով կապիտալի համաշխարհային շուկայում տոկոսադրույքի բարձրացումը հանգեցնում է կապիտալի շարժի հաշվի մնացորդի կրճատման և ընթացիկ հաշվի մնացորդի ավելացման:

գ. Ներդրումային պահանջարկի խթանումը

Երկրի տնտեսական զարգացումն արագացնելու նպատակով փոքր բաց տնտեսություն ունեցող երկրները հաճախ խթանում են ներդրումների ավելացումը՝ առանձին տնտեսավարող սուբյեկտների համար սահմանելով հարկային արտոնություններ, այսինքն՝ ներդրումների չափով կրճատում են հարկվող շահույթը, որը մենք նախորդ գլուխներում անվանել ենք ներդրումային հարկային վարկ: Փակ տնտեսությունում դա կհանգեցներ կապիտալի շուկայի տոկոսադրույքի աճի: Քանի որ փոքր բաց տնտեսությունում տոկոսադրույքի մակարդակը հավասարվում է համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքին, կապիտալը ավելի մեծ չափով է հոսում տվյալ երկիր:

Կապիտալի հոսքը դեպի փոքր բաց տնտեսություն ունեցող երկիր մեծացնում է կապիտալի շարժի հաշվի մնացորդը և փոքրացնում ընթացիկ հաշվի մնացորդը:



Երկրի խնայողությունները մնում են անփոփոխ: Սակայն ներդրումների խթանման շնորհիվ ներդրումների ֆունկցիայի I (r_1) գիծը բարձրանում է և ստանում I(r_2) դիրքը: Տոկոսադրույքը բարձրանալ չի կարող, քանի որ միջազգային ֆինանսական շուկայից կապիտալը հոսում է այդ երկիր, որի հետևանքով զուտ արտահանումը կրճատվում է ΔNX չափով:

Նկ. 12.4. Ներդրումների պահանջարկի խթանման ազդեցությունը

Այսպիսով, մեզ համար պարզ է դառնում, որ փոքր բաց տնտեսություն ունեցող երկրի կառավարությունը որոշակի քաղաքականությամբ կարող է ազդել խնայողության, ներդրումների և զուտ արտահանման ծավալի փոփոխության վրա շնորհիվ այն հանգամանքի, որ նման տնտեսության կապիտալի շուկայում տոկոսադրույքը ինքնաբերաբար հավասարվում է համաշխարհային ֆինանսական շուկայի կապիտալի տոկոսադրույքին: Միաժամանակ պարզ է դառնում նաև, որ երկրի խնայողությունն ավելացնող հարկաբյուջետային քաղաքականությունը նպաստում է կապիտալի արտահանմանը և դրանով իսկ փոքրացնում վճարային հաշվեկշռի կապիտալի շարժի մնացորդը և մեծացնում արտաքին առևտրի ընթացիկ հաշվի մնացորդը: Պարզ է, որ խնայողությունը կրճատող քաղաքականությունը ավելացնում է կապիտալի շարժի հաշվի մնացորդը և կրճատում ընթացիկ հաշվի մնացորդը: Իր հերթին, երկրի ներդրումները խթանող քաղաքականությունը ավելացնում է վճարային հաշվեկշռի կապիտալի շարժի հաշվի մնացորդը և պակասեցնում ընթացիկ հաշվի մնացորդը: Իրականում յուրաքանչյուր երկիր ձգտում է որքան հնարավոր է ավելի շատ ներդրումներ կլանել՝ իր երկրի տնտեսական զարգացման ընթացքը արագացնելու նպատակով, ուստի հնարավորություններ է ստեղծում համաշխարհային ֆինանսական շուկայից ներդրումների հոսքի համար: Այդպիսի ձգտումներ հանդես են բերում հատկապես շուկայական տնտեսության անցնող հետկոմունիստական երկրները, որոնք ներդրումներն ավելացնում են պետական պարտքի ավելացման ճանապարհով՝ հույս ունենալով վերադարձնել տնտեսական զարգացման արագացման միջոցով:

Մենք դիտարկեցինք խնայողության և ներդրումների փոխադարձ կապը և համոզվեցինք, որ երբ տվյալ երկրի գործարարները ցանկանում են ներդրումներ կատարել, բայց երկրի խնայողությունները չեն բավա-

րարում, ապա պարտք են վերցնում համաշխարհային ֆինանսական շուկայից, իսկ եթե տվյալ երկրի գործարարներն ունեն ազատ կապիտալ, ապա նրանք ցանկանում են ներդրումներ կատարել այլ երկրներում: Սակայն մեզ համար դեռևս պարզ չեն այն մեխանիզմները, որոնք ստիպում են կապիտալի կարիք ունեցողներին և ազատ կապիտալի տերերին վարվել հատկապես նշված ձևով: Դրա համար անհրաժեշտ է պարզել փոխանակային կուրսերի էությունը և դրանց ազդեցության մեխանիզմները:

12.3. Արժույթի փոխանակային կուրսերը

Երբ հայ գործարարները ցանկանում են որևէ երկրից արտադրանք գնել կամ հայաստանցիները ցանկանում են հանգստանալ կամ սովորել որևէ երկրում, նրանք ձեռք են բերում այդ երկրի արժույթը, ուստի օգտվում են արժութային շուկայի ծառայությունից: Այդ շուկայում արժույթները փոխանակվում են որոշակի կուրսով, որն իրենից ներկայացնում է երկու երկրների արժույթների հարաբերությունը: Եթե ԱՄՆ մեկ դոլարը Հայաստանում փոխանակվում է 500 դրամով, ապա ասում ենք, որ դոլարի կուրսը 500 դրամ է, իսկ դրամի կուրսը՝ 0.002 ԱՄՆ դոլար:

Երկու արժույթների հարաբերությունն արտահայտում է <u>անվանական կուրսը</u>: Արժույթների անվանական կուրսը կարող է փոփոխվել ամեն օր և ժամ: Դրա համար երկրի կենտրոնական բանկը առևտրային բանկերին, տնտեսավարող սուբյեկտներին, արժույթի փոխանակման կետերին և երկրի քաղաքացիներին տեղեկատվական միջոցներով ամեն օր ներկայացնում է իր երկրի արժույթի և աշխարհի մի շարք երկրների արժույթների կուրսերի հարաբերությունը: Եթե Հայաստանի արժույթի փոխանակման կետերը իրենց հայտարարություններում ներկայացնում են ԱՄՆ դոլարի, Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգի, ռուսական ռուբլու և եվրոյի կուրսերը՝ դրամով արտահայտված, ապա դրանք այդ արժույթների անվանական կուրսերն են:

Իրական փոխանակային կուրսը երկու երկրներում արտադրված ապրանքների գների հարաբերությունն է և ցույց է տալիս, թե մեկ երկրում արտադրված ապրանքը ինչ հարաբերակցությամբ է փոխանակվում մյուս երկրում արտադրված ապրանքի հետ: Իրական և անվանական կուրսերի փոխհարաբերությունը պատկերացնելու համար փորձենք համեմատել հայկական և ամերիկյան նույնատիպ կոշիկների գները: Ենթադրենք՝ տղամարդու ամերիկյան մեկ զույգ կոշիկը վաճառվում է 40 ԱՄՆ դոլարով, իսկ հայկական նույն որակի կոշիկը՝ 10 հազար դրամով: Եթե ընդունենք, որ ԱՄՆ մեկ դոլարը փոխանակվում է 500 դրամով, ապա իրական փոխանակային կուրսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Իրական փոխանակային կուրսը} \div \frac{\text{0,002 դոլար/դրամ x10000դրամ}}{\text{40 դոլար}} = \frac{\text{0.5 ամերիկ.կոշիկ}}{\text{հայկակ.կոշիկ}}$$

Տնտեսագետները իրական փոխանակային կուրսը հաճախ անվանում են նաև առևտրի պայմաններ, որը հնարավոր է դիտարկել անվանական փոխանակային կուրսի և երկու երկրների ապրանքների հարաբերական գների միջոցով:

Այսպիսով, եթե անվանական փոխանակային կուրսը նշանակենք e տառով (մեր օրինակում՝ 0.002 դրամ/դոլար), հայկական կոշիկի գինը՝ P-ով, ամերիկյան կոշիկի գինը՝ P*-ով, իսկ իրական փոխանակային կուրսը՝ E -ով, ապա կարող ենք գրել.

$$E = e \times \frac{P}{P^*}$$

Երկու երկրների միջև փոխանակվող բոլոր ապրանքների համար նման հաշվարկը մեզ հնարավորություն կտա պարզել դոլարի և դրամի իրական փոխանակային կուրսը: Այսպիսով, երկու երկրների արժույթների իրական փոխանակային կուրսը հաշվարկվում է անվանական փոխանակային կուրսի և երկու երկրներում ապրանքների գների հարաբերության միջոցով: Բանաձևը միաժամանակ ցույց է տալիս, որ եթե դրամի իրական փոխանակային կուրսը բարձր է, ապա արտասահմանյան ապրանքները էժան են մեզ համար, և մեր ապրանքները թանկ են արտասահմանցիների համար: Ընդհակառակը, եթե դրամի իրական փոխանակային կուրսը ցածր է, ապա մեր ապրանքները էժան են արտասահմանցիների համար, իսկ արտասահմանյան ապրանքները թանկ են մեզ համար: Նշված օրինաչափությունը բացահայտելու համար ենթադրենք՝ հայաստանցին ցանկանում է ձեռք բերել ամերիկյան ավտոմեքենա, որն արժե 24 հազար ԱՄՆ դոլար, իսկ ամերիկացին ցանկանում է ձեռք բերել հայկական ձեռագործ գորգ, որն արժե 2.0 մլն դրամ: Պարզ է, 500 դրամ/դոլար փոխանակային կուրսի դեպքում հայաստանցին մեկ գորգի համար ստանալու է 4000 դոլար և պետք է վաճառի 6 գորգ՝ մեկ ավտոմեքենա գնելու համար: Ենթադրենք՝ դրամի փոխանակային կուրսը բարձրանում է մինչև 400 դրամ/դոլար մակարդակի, այդ դեպքում յուրաքանչյուր գորգի համար հայաստանցին կստանա 5000 դոլար, և 5 գորգի վաճառքից ստացված արտարժույթը բավական է ավտոմեքենա գնելու և 1000 դոլար տնտեսելու համար (2 մլն դրամ x 400 դրամ/դոլար - 24000 դոլար =1000): Բայց եթե դրամի կուրսը իջնի, և մեկ դոլարը դառնա 600 դրամ, ապա հայաստանցին յուրաքանչյուր գորգի համար կստանա ընդամենը 3333 դոլար և կպահանջվի 7.2 գորգ վաճառել՝ ամերիկյան մեկ ավտոմեքենա գնելու համար:



Եթե նկատի ունենանք, որ իրական փոխանակային կուրսի աճի դեպքում զուտ արտահանումը կրճատվում է, իսկ իջնելու դեպքում՝ ավելանում, ապա 0 կետից ձախ զուտ արտահանման ծավալը բացասական է, իսկ 0-ից դեպի աջ՝ դրական:

O NX

Նկ. 12.5. Զուտ արտահանման կախվածությունը իրական փոխանակային կուրսից

Ինչպես տեսնում ենք, դրամի կուրսի իջեցումը խթանում, իսկ բարձրացումը կաշկանդում է ապրանքների արտահանումը: Եթե մտածենք, որ հակադարձ երևույթը նկատվում է ներմուծման համար, ապա կարող ենք գրել, որ զուտ արտահանումը կախված է իրական փոխանակային կուրսից, այսինքն՝

$$NX=NX\ (E)$$

Իրական փոխանակային կուրսի վրա ազդում են երկու հիմնական գործոններ.

- Նախ, այն փոփոխվում է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդի ազդեցությամբ: Որքան երկիրը ավելի շատ է արտահանում, քան ներմուծում է, այնքան արտարժույթի առաջարկը մեծանում է, և երկրի արժույթի փոխանակային կուրսը բարձրանում: Դրա հետևանքով մեր ապրանքները դառնում են ավելի թանկ արտասահմանցիների համար, և զուտ արտահանումը կրճատվում է:
- Երկրորդ գործոնը հանդես է գալիս կապիտալի շարժի մնացորդի ազդեցությամբ: Եթե վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդները պետք է հավասարվեն, և մենք գիտենք, որ կապիտալի հաշվի մնացորդը խնայողության և ներդրումների տարբերությունն է, ապա պետք է դիտարկել նաև այն հանգամանքը, որ խնայողությունը սպառման ֆունկցիայով և հարկաբյուջետային քաղաքականությամբ է որոշվում, իսկ ներդրումները՝ համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքից կախված ներդրումների ֆունկցիայով: Այդ երկու խումբ գործոնների ազդեցությամբ ձևավորվում է իրական փոխանակային կուրսի մակարդակը (տես՝ նկ.12.6):



Ուղղահայաց գիծը պատկերում է խնայողության և ներդրումների տարբերությունը, իսկ թեք, ներքև իջած գիծը՝ զուտ արտահանման ֆունկցիան՝ կախված արժութային կուրսից: Դրանց հատման կետը ցույց է տալիս այն հավասարակշիռ փոխանակային կուրսը (E), որն ապահովում է կապիտալի շարժի այնպիսի մնացորդ, որն անհրաժեշտ է ընթացիկ հաշվի մնացորդը ծածկելու համար:*

Նկ. 12.6. Իրական փոխանակային կուրսը որոշող գործոնները

Նկ.12.6-ը արտացոլում է արտարժույթի պահանջարկի և առաջարկի հավասարակշռվածության մեխանիզմը: Խնայողության և ներդրումների տարբերությունը դրամի այն քանակությունն է, որն անհրաժեշտ է արտարժույթով փոխանակելու և այլ երկրներից ապրանքներ գնելու համար: Քանի որ ՀՀ-ում այդ տարբերությունը բացասական է, նշանակում է, որ անհրաժեշտ է համաշխարհային ֆինանսական շուկայից կամ այլ աղբյուրներից այնքան արտարժույթ պարտք վերցնել, որ հնարավոր լինի չեզոքացնել արտաքին առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդը:

Գրաֆիկը ցույց է տալիս նաև, որ որոշակի քաղաքականությամբ ազդելով իրական փոխանակային կուրսի վրա՝ կարող ենք ազդել նաև վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդների վրա:

ա. Երկրի հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Եթե երկիրը վարում է խթանող հարկաբյուջետային քաղաքականություն և ավելացնում է պետական ծախսերը կամ կրճատում է հարկերը, ապա S_1-I գիծը դրանց ազդեցությամբ շարժվում է դեպի ձախ, որի հետևանքով իրական փոխանակային կուրսը բարձրանում է:



Խնայողության կրճատման հետևանքով S_1-I գիծը տեղաշարժվում է դեպի ձախ և ընդունում S_2-I դիրքը: Դրա հետևանքով իրական փոխանակային կուրսը՝ E_1, դառնում է E_2, որի ազդեցությամբ զուտ արտահանումը NX_1 կետից փոխադրվում է NX_2 կետը:

Նկ. 12.7. Խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը իրական փոխանակային կուրսի վրա

Իրական փոխանակային կուրսի բարձրացման հետևանքով այլ երկրների ապրանքները մեզ համար դառնում են էժան, իսկ մեր ապրանքները արտասահմանցիների համար՝ թանկ: Դրա հետևանքով արտահանման ծավալը կրճատվում է, և զուտ արտահանման մնացորդը՝ փոքրանում:

բ. Այլ երկրների հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Այլ երկրների խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը կրճատում է այդ երկրների խնայողությունների ծավալը: Համաշխարհային ֆինանսական շուկայում փոքրանում է կապիտալի առաջարկը, և

դրա հետևանքով բարձրանում է տոկոսադրույքը: Փոքր բաց երկրում կապիտալի տոկոսադրույքը նույնպես բարձրանում է և հանգեցնում ներդրումների կրճատման, որի հետևանքով S-I տարբերությունը մեծանում է:

Երկրում չօգտագործված խնայողությունը հոսում է միջազգային ֆինանսական շուկա, որի արդյունքում վճարային հաշվեկշռի կապիտալի շարժի հաշիվը փոքրանում է, իսկ զուտ արտահանումը՝ աճում:



Համաշխարհային ֆինանսական շուկայում տոկոսադրույքի բարձրացման արդյունքում մեր երկրում այն նույնպես բարձրանում է, ներդրումները $I(r_1^*)$-ից դառնում են $I(r_2^*)$, ուստի $(S-Ir_1^*)$ գիծը փոխադրվում է դեպի աջ: Իրական փոխանակային կուրսը իջնում է, որը խթանում է զուտ արտահանման ավելացումը:

Նկ. 12.8. Այլ երկրների խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը իրական փոխանակային կուրսի վրա

գ. Ներդրումային պահանջարկի փոփոխություն

Եթե փոքր բաց տնտեսություն ունեցող երկիրը խթանում է ներդրումների ավելացումը, ապա դրա հետևանքով S-I տարբերությունը փոքրանում է:

Խնայողության և ներդրումների տարբերության կրճատման հետևանքով կապիտալն ավելի քիչ կարող է դուրս հոսել երկրից, ուստի վճարային հաշվեկշռի կապիտալի շարժի հաշիվը մեծանում է, իսկ ընթացիկ հաշվի մնացորդը՝ փոքրանում:



Ներդրումների ավելացման հետևանքով $S-I_1$ գիծը փոխադրվում է ձախ և ընդունում է $S-I_2$ դիրքը: Դրա հետևանքով իրական փոխանակային կուրսը E_1-ից բարձրանում է E_2 կետը, իսկ NX_1 զուտ արտահանման ծավալը ստանում է NX_2 արժեքը:

Նկ. 12.9. Ներդրումների խթանման ազդեցությունը իրական փոխանակային կուրսի վրա

դ. Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը

Արտաքին առևտրի հովանավորչական քաղաքականության արդյունքն այն է, որ կապիտալի շարժի մնացորդի վրա ազդել չի կարող, ուստի ընթացիկ հաշվի մնացորդը նույնպես փոփոխվել չի կարող:



Եթե երկիրը վարում է ներմուծման կաշկանդման քաղաքականություն, ապա զուտ արտահանումը կարող է ավելանալ, որի հետևանքով իրական փոխանակային կուրսը կբարձրանա և կկաշկանդի արտահանումը այնքան ժամանակ, մինչև որ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մնացորդը ընդունի իր նախկին ծավալը:

Նկ. 12.10. Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը իրական փոխանակային կուրսի վրա

Փաստորեն արտաքին առևտրային հովանավորչական քաղաքականությունը չի ազդում զուտ արտահանման ծավալի փոփոխության վրա, և միայն բարձրանում է իրական փոխանակային կուրսը, որի ազդեցությամբ հետագայում զուտ արտահանումը նույնպես կվերականգի իր նախկին մակարդակը, եթե երկրում պահպանվեն կայուն գներ:

Իրական փոխանակային կուրսի վերլուծությունը ցույց տվեց, որ իրական և անվանական կուրսերը սերտորեն կապված են, սակայն մենք սահմանել ենք, որ անվանական փոխանակային կուրսը որոշվում է արտարժույթի պահանջարկի և առաջարկի հարաբերակցությամբ: Բնականաբար, հարց է առաջանում, թե ինչ մեխանիզմի շնորհիվ են արտարժույթի պահանջարկը և առաջարկը առնչվում այն երկու երկրների գների հարաբերությանը, որոնց արժույթները փոխանակվում են: Այդ մեխանիզմը պարզելու համար հիշենք, որ իրական փոխանակային կուրսը որոշվում է.

$$E=e\frac{P}{P*}$$

բանաձևով, որից կարող ենք գրել.

$$e=E\frac{P*}{P}$$

Պարզվում է, որ անվանական կուրսը որոշվում է երկու երկրների գների մակարդակների փոփոխության հարաբերությամբ և իրական

փոխանակային կուրսով: Եթե փորձենք բանաձևը գրել վիճակագրական մեծությունների հավելաճերի տեսքով, կստանանք.

$$\Delta e\% = \Delta E\% + \Delta P^*\% - \Delta P\%$$

Այս բանաձևում Δe-ն անվանական կուրսի փոփոխությունն է՝ տոկոսով,

ΔE-ն՝ իրական կուրսի փոփոխությունը՝ նույնպես տոկոսով,

ΔP*-ն՝գների փոփոխությունը այլ երկրում,

ΔP-ն՝ գների փոփոխությունը մեր երկրում:

Ուստի կարող ենք գրել նաև.

$$\Delta e\% = \Delta E\% + (\Pi^* - \Pi)$$

որտեղ՝

Π*-ը ինֆլյացիայի տոկոսն է մյուս երկրում, որով արտահայտում ենք մեր արժույթը,

Π-ն՝ ինֆլյացիայի տեմպը մեր երկրում:

Ինչպես տեսնում ենք, եթե ինֆլյացիայի տեմպը մեծ է մեր երկրում, ապա մեր արժույթի կուրսը իջնում է, եթե ինֆլյացիայի տեմպը մեծ է մյուս երկրում, որի արժույթի հետ փոխանակում ենք մեր արժույթը, ապա մեր արժույթի կուրսը բարձրանում է: Այսպես, 1997թ. ռուսական ռուբլու վերանվանումից հետո 1 ռուբլին փոխանակվում էր 88 դրամով, 1998թ. ռուսական ֆինանսական ճգնաժամից հետո՝ 20 դրամով:



NX(E) ֆունկցիայի խիստ զառիկող լինելը նշանակում է, որ արժութային կուրսի չնչին փոփոխությունը մեծ չափով ազդում է զուտ արտահանման ծավալի վրա:

Նկ.12.11. Համարժեքային գնողունակության օրենքը և զուտ արտահանման ֆունկցիան

Ինչո՞ւ են արտարժույթի առաջարկը և պահանջարկը կապվում առանձին երկրներում տեղի ունեցող՝ ապրանքների գների փոփոխության հետ: Հարցն այն է, որ կատարյալ բաց տնտեսություն ունեցող երկրների միջև գործում է համարժեքային գնողունակության օրենքը, այնպես, ինչպես միևնույն երկրում գները տարբեր քաղաքներում կարգավորվում են վաճառականների գործունեությամբ: Եթե որևէ քաղաքում տվյալ ապրանքը էժան է, մյուսում՝ թանկ, ապա վաճառականները գնում և փոխա-

դրում են՝ մյուս քաղաքում վաճառելու համար, այնպես, որ բոլոր քաղաքներում ապրանքների պահանջարկը և առաջարկը հավասարակշռվում են միջին գնի պայմաններում: Այդ գործողությունը տեղի է ունենում տարբեր երկրներում, միայն տարբերությունը արտարժույթի փոխանակության մեջ է: Դրա հետևանքով խիստ բաց տնտեսություն ունեցող երկրների արժութային փոխանակային կուրսերը սահմանվում են այն հարաբերակցությամբ, որ փոխադարձաբար հնարավոր լինի գնել նույն քանակությամբ ապրանքներ երկու երկրներում: Այդ օրենքը կոչվում է համարժեքային գնողունակության օրենք և պահպանվում է տնտեսական զարգացման նույն մակարդակ ունեցող երկրների միջև և այն ապրանքների համար, որոնք մենաշնորհային ձևով արտադրվում են մի քանի երկրներում ու իրացվում աշխարհի բոլոր երկրներում (սուրճ, կակաո, ցիտրուսներ): Համարժեքային գնողունակությունը չի տարածվում ծառայությունների բնագավառում, քանի որ դրանք փոխադրելի չեն և հարուստ երկրներում ավելի թանկ արժեն, քան աղքատ երկրներում:

Այսպիսով, որքան ավելի է համարժեքային գնողունակության օրենքի ազդեցությունը, այնքան զուտ արտադրանքի առաձգականությունը մեծանում է՝ կախված իրական փոխանակային կուրսի փոփոխությունից: Դա նշանակում է՝ NX (E) ֆունկցիան ունի խիստ զառիկող տեսք:Այլ խոսքով, իրական փոխանակային կուրսի չնչին փոփոխությանը զուտ արտահանումը արձագանքում է մեծ չափով, քանի որ գների նույնիսկ չնչին տարբերության դեպքում կապիտալը հոսում է այդ ապրանքները մյուս երկիր փոխադրելու գործունեության բնագավառ:

Համարժեքային գնողունակության օրենքի պահպանումը թույլ զարգացած և անցումային տնտեսություն ունեցող երկրներում հանդես է բերում առանձնահատկություններ՝ կապված արտաքին տնտեսական կապերի բնույթի և արտաքին առևտրի հնարավորությունների օգտագործման հետ:

12.4. ՀՀ արտաքին տնտեսական կապերի բնույթը և առևտրի զարգացման առանձնահատկությունները

ՀՀ արտաքին տնտեսական կապերը ձևավորվել են օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք գործոնների ազդեցությամբ.

- Նախ, մինչև անկախացումը Հայաստանի տնտեսական կապերը սերտ էին հիմնականում ԽՍՀՄ մյուս հանրապետությունների հետ, որոնց ձեռնարկությունները կոոպերացված կապերի մեջ էին: Գրականության մեջ արտադրանքի այդպիսի մատակարարումը անվանում էինք <u>ներկրում</u> և <u>արտակրում</u> հանրապետությունից: Իրական արտահանումը և ներմուծումը իրականացնում էր Խորհրդային Միությունը (ԽՄ), որի արտաքին առևտրի հաշվեկշիռը դրական էր մինչև 1988 թվականը և բացասական դարձավ 1989-1990թթ: Ընդհանուր առմամբ, ԽՄ-ը խիստ բաց տնտեսություն չուներ, քանի որ 1990թ. արտահանվել է ՀԱԱ ընդամենը

6.1 և ներմուծվել՝ 7.1%-ը: Արտահանման 57.6%-ը[1] կազմել են էներգակիրները և հումքատեսակները:

Այսպիսով, ՀՀ-ն ԽՄ գոյության տարիներին արտաքին ինքնուրույն առևտուր ունենալ և արտարժութային գործարքներ իրականացնել չէր կարող:

- Երկրորդ, ԽՄ նախկին հանրապետությունների արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը ընդգրկված էր ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի մեջ և կոմպլեկտավորող արտադրանք էր մատակարարում գլխամասային գործարաններին, որոնք հիմնականում գտնվում էին ՌԴ տարածքում: ԽՍՀՄ կազմալուծումից հետո այդ համալիրը դադարեց գործելուց: Հայաստանի ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունները դադարեցրին իրենց գործունեությունը, քանի որ վերջնական արտադրանք չէին թողարկում, իսկ կոմպլեկտավորող արտադրանքի պատվերներ չէին ստանում: Դրանց արտաքին արդի կապերը մշտական բնույթ չունեն և սահմանափակվում են միանվագ գործարքներով:
- Երրորդ, ՀՀ ձեռնարկությունները նախկինում արտադրանք չարտահանելով այլ երկրներ, չէին կրում միջազգային մրցակցության ազդեցությունը և պատրաստ չէին մարքեթինգային հետազոտություններ կատարելու, արտաքին շուկաներում մրցակցությանը դիմակայելու: Դրա հետևանքով դեռևս կայուն, արմատական կապեր չեն հաստատվել:
- Չորրորդ, սոցիալիստական տնտեսության արտաքին կապերը պետական մենաշնորհ էին. ոչ մի ձեռնարկություն չէր մասնակցում արտաքին տնտեսական կապերի հաստատմանը և իրականացմանը: Այժմ տնտեսավարող սուբյեկտները իրենք պետք է արտաքին շուկաներում հանդես գան որպես արտադրանքի գնորդներ, իրացման և ներդրումների աղբյուրների ձեռք բերողներ:

Վերջապես, համաշխարհային շուկայում մրցակցությանը դիմանալու և տեղ գրավելու համար անհրաժեշտ է ունենալ գիտատեխնիկական ժամանակակից պահանջներին համապատասխանող սարքավորումներ և տեխնոլոգիաներ, որոնք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չեն ներդրվել հանրապետության արդյունաբերության մեջ: Նախ, արդյունաբերական մի շարք ձեռնարկություններում դեռևս 1980թ. վերջին տեխնիկական մակարդակն անբավարար էր, իսկ արդյունաբերության անկումը դադարեցրեց հիմնական ֆոնդերի նորացման գործընթացը: Սուբյեկտիվ պատճառները վերաբերում են ՀՀ արդյունաբերական մի շարք ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի թալանի կազմակերպմանը, վաճառքին ու դրանց գործունեության դադարեցմանը: Դրա հետևանքով ՀՀ արդյունաբերության մեջ XXI դարի սկզբին մեկ աշխատողի հաշվով հիմնական ֆոնդերի միջին արժեքը կազմում էր 225 ԱՄՆ դոլար, իսկ աշխարհի զարգացած երկրներում՝ 250 հազար դոլար: Վերոհիշյալ գործոնները իրենց ազդեցությունը թողել են ՀՀ արտաքին տնտեսական կապերի

[1] Տե՛ս Í/õ ÑÑÑÐ â 1990 ãîäó. Ì., 1991, էջ 659:

բնույթի և ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքի ու զարգացման հեռանկարների վրա:

ՀՀ արտաքին տնտեսական կապերի բնույթը

ՀՀ արտաքին տնտեսական կապերը ձևավորվում են՝ հանրապետության տնտեսական կայունացման ու զարգացման պահանջներից ելնելով: Սովորաբար փոքր երկրները իրենց արտաքին տնտեսական կապերը չեն կառուցում այլ երկրներում տնտեսական և քաղաքական ազդեցություն ունենալու համար: Նրանք ցանկանում են ստեղծել փոխադարձ համաձայնության վրա ձևավորվող հարաբերություններ: Սկզբնական շրջանում այդ երկրները կարող են ունենալ վճարային հաշվեկշռի պակասուրդ, սակայն նպատակ ունեն հետագայում ապահովել այդ հաշվեկշռի դրական մնացորդ:

Փոքր երկրները գերադասում են ազատ տնտեսական հարաբերությունները, սակայն ինչ-որ չափով ձգտում են սեփական արտադրության որոշ ճյուղերի նկատմամբ վարել հովանավորչական քաղաքականություն: Այդ սկզբունքներից բացի, ՀՀ-ին բնորոշ են արտաքին տնտեսական կապերի հաստատման առանձնահատուկ սկզբունքներ, որոնք բխում են մեր տնտեսության պահանջներից:

Այսպես, Հայաստանը առաջին հերթին սև մետաղներ և էներգակիրներ ներմուծող երկիր է: Դա նշանակում է, որ Հայաստանը տնտեսական կապեր պետք է ունենա պողպատի գլանվածք, նավթամթերքներ, գազ, քարածուխ արտադրող երկրների հետ, որոնց հիմնական մատակարարը Ռուսաստանի Դաշնությունն է (ՌԴ), որին բաժին է ընկնում ներմուծվող արտադրանքի 17.3%-ը, այն դեպքում, երբ Հայաստանից արտահանման մեջ ՌԴ բաժինը կազմում է ընդամենը 4.8%, որը իր ծավալով կազմում է այդ երկրից ներմուծման միայն 8%-ը:

Փոքր երկրների արտաքին կապերի հաստատման երկրորդ հատկանիշը տարածաշրջանային երկրների հետ տնտեսական սերտաճումն է, որի նպատակը տնտեսական աճի ապահովումն է: Բավական է ասել, որ տարածաշրջանային կազմակերպությունների թիվը Հարավային Ամերիկայում կազմում է 8, Ասիական խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում՝ 7, Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում՝ 11: Դրանք հիմնականում ազատ առևտրի, մաքսային սահմանափակումների վերացման, կապիտալի և աշխատուժի ազատ հոսքերի ապահովման միություններ են: Տարածաշրջանային համագործակցությունը երկրների միջև իրականացվում է երկու հիմնական նպատակներով.

- տարածքի երկրների շահերը շոշափող համատեղ ծրագրերի մշակում և իրականացում,
- տնտեսական սերտաճում՝ ազատ առևտրի, մաքսային միության և այդ երկրների ընդհանուր շուկայի ձևավորման համար:

Հարավային Կովկասի երկրների միջև գոյություն ունեցող որոշակի տնտեսական ու քաղաքական հակասությունների պատճառով ՀՀ-ն ծրագրերի մշակման ու իրագործման կազմակերպության մեջ ընդգրկվել չի

կարող: Սերտաճման նպատակով միության մեջ ընդգրկվելու ուղիները հանրապետության համար երկուսն են: Հայաստանը համագործակցում է ԱՊՀ երկրների և Սևծովյան տնտեսական միության հետ: Առաջինի ստեղծումը զուտ քաղաքական բնույթ ունի: Ռուսաստանը ցանկանում է ստեղծել ազատ առևտրի և մաքսային սահմանափակումների վերացման գոտի, այնուամենայնիվ, այդ երկրներում իրականացվող բարեփոխումների մակարդակները թույլ չեն տալիս լուրջ արդյունքների հասնել համագործակցության հարցում:

Սևծովյան տնտեսական համագործակցությունը նույնպես, հարևան երկրների հետ տարածաշրջանային խնդիրների լուծման վերաբերյալ գոյություն ունեցող հակադիր կարծիքների պատճառով, Հայաստանին տնտեսական սերտաճման լայն հնարավորություններ չի տալիս:

Արտաքին կապերի երրորդ հատկանիշը արտաքին մարդասիրական օգնության ցուցաբերումն է. այն սկսվեց 1988թ. աղետալի երկրաշարժից հետո և շարունակվեց Խորհրդային Միության փլուզումից հետո: Հայաստանին ցույց տրվող մարդասիրական օգնությունը դեռևս զգալի է: 1998թ. կազմել է 81.6, 1999թ.՝ 66.2 ԱՄՆ դոլարին համարժեք արտադրանք, որի մեջ հիմնական համարվում են քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, մեքենաները, մեխանիզմները: Մարդասիրական օգնություն ստացվում է աշխարհի 34 երկրներից, որոնց մեջ ԱՄՆ-ին բաժին է ընկնում արտաքին օգնության 76, Իտալիային՝ 6, Ճապոնիային՝ 4, Գերմանիային և Ֆրանսիային 3-ական տոկոսը: Աշխարհի տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ մարդասիրական օգնությամբ ոչ մի երկիր հարստանալ չի կարող, այլ միայն կարող է գոյատևել: Ուստի փոքր երկրները իրենց տնտեսական կապերը պետք է կառուցեն տնտեսական աճի արագացման նպատակներով:

Այդպիսի ուղի է տնտեսական սերտաճման հաջորդ ձևը՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանումը փոքր երկրներում: Տնտեսապես թույլ զարգացած երկրներն ունեն գործազրկության բարձր մակարդակ, չափազանց էժան աշխատուժ և կապիտալի ներհոսքի խիստ կարիք են զգում: Սակայն օտարերկրյա կապիտալի ներհոսքը պահանջում է, որպեսզի տվյալ երկրում գոյություն ունենան հետևյալ պայմանները՝ կապիտալի բարձր տոկոսադրույք, գործարարության իրավական կատարելագործված դաշտ, քաղաքական և տարածաշրջանային հակասությունների բացակայություն և մարդու իրավական պաշտպանվածություն: Եթե առաջին պայմանը առկա է ՀՀ-ում, ապա մյուս պայմանները դեռևս ամբողջությամբ ստեղծված չեն: Ուստի օտարերկրյա ուղղակի ներդրումները դեռևս էական դեր չեն խաղում ՀՀ տնտեսության աճի տեմպերի արագացման գործում: Դրանք չնչին են եղել հատկապես մինչև 1996 թվականը: 1997թ. կազմել են 52, 1998թ.՝ 229, 1999թ.՝ 122 և 2000թ.՝ շուրջ 145 մլն ԱՄՆ դոլար:

Արտաքին տնտեսական կապերը հանդես են գալիս նաև ծառայությունների, զբոսաշրջության, սփյուռքի հայ համայնքների կապերի և այլ ձևերով, որոնք սակայն էական ազդեցություն չունեն հանրապետության տնտեսական կայունացման ու զարգացման գործում:

ՀՀ արտաքին առևտրի առանձնահատկությունները

ՀՀ անկախացումը առաջադրեց արտաքին առևտրի կազմակերպման օբյեկտիվ անհրաժեշտություն, և այն կապերը, որոնք գոյություն ունեին նախկին ԽՄ հանրապետությունների միջև, այժմ կարող էին իրականացվել միայն արտաքին առևտրի միջոցով: Այդ պայմաններում առավել բարենպաստ էր վերջնական արդյունքներ թողարկող հանրապետությունների վիճակը: ՀՀ-ն հայտնվեց արտահանվող արտադրանքի ռեսուրսներ չունեցող և ներմուծման խիստ կարիք ունեցող երկրների շարքում: Այդ հակասությունն ավելի մեծացավ կաուչուկի և ձուլված պղնձի արտադրությունը հանրապետությունում դադարեցնելու պատճառով:

ՀՀ արտահանման և ներմուծման ռազմավարության նպատակը վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բացասական մնացորդի հաղթահարումը և արտաքին շրջանառության կառուցվածքի բարելավումն է այն հաշվով, որ հանրապետությունը մշտապես ունենա արտաքին շուկաներ՝ պատրաստի սննդի արտադրանքի (հանքային ջրեր, պահածոներ), հանքահումքային (հատկապես շինանյութեր), թանկարժեք և կիսաթանկարժեք վերամշակված քարերի, ճշգրիտ սարքերի և հարմարանքների իրացման համար, ինչպես նաև ներմուծվող արտադրանքի մի շարք տեսակների փոխարինիչների (գարեջուր, հյութեր, ծխախոտ, ձու) արտադրության կազմակերպման ճանապարհով:

Հանրապետության արտաքին առևտրի առանձնահատուկ գծերն են.

- <u>Արտաքին առևտուրը մշտապես հանդես է բերել ընթացիկ հաշվի պակասուրդի միտումներ:</u> Դեռևս 1994թ., սեփական արժույթի ներդրման առաջին տարում, արտաքին առևտրի շրջանառությունը կազմել է 609 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ արտահանումը՝ 215.5, ներմուծումը՝ 393.9 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ զուտ արտահանումը կազմել է -178.4 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին առևտրի բացասական մնացորդը, ինչպես արդեն նշել ենք, պահպանվել է հետագա բոլոր տարիներին: Արտաքին առևտրի պակասուրդը բացարձակ մեծությամբ աճել է մինչև 1998թ.: Վերջին երկու տարիներին այն սկսել է նվազել: Սակայն մշտապես ունենալով վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բացասական ցուցանիշ՝ հանրապետությունը մեծացնում է իր արտաքին պարտքի մնացորդը, չնայած արտասահմանյան օգնությանը, պետական ու մասնավոր տրանսֆերտներին: ՀՀ արտաքին պարտքը 1996թ. վերջին կազմել է՝ 522, 1997թ.՝ 640, 1998թ.՝ 739, 1999թ.՝ 840.6, 2000թ.՝ 819, 2001 թ.՝ 905.4, 2002 թ.՝ 1025.5, 2003 թ.՝ 1097.6 մլն ԱՄՆ դոլար:
- <u>ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքում տեղի են ունենում էական տեղաշարժեր:</u> Արտահանման ընդհանուր ծավալում 1995թ. ամենամեծ տեսակարար կշիռն ուներ Ռուսաստանը (33.5%), այնուհետև՝ Թուրքմենստանը (25.4%), Իրանը (12.9%), Բելգիան (14.5%): 1999թ. առաջին տեղում էր Բելգիան (36.3%), այնուհետև՝ Իրանը (14.7%), Ռուսաստանը (14.6%), ԱՄՆ-ն՝ (7%): Ընդհանրապես, ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը ՀՀ արտահանման մեջ 1995թ. 62.6%-ից իջել է և 1999թ. կազմել արտահանման 24.3%-ը: Էական փոփոխություններ տեղի են

ունենում նաև ՀՀ ներմուծման կառուցվածքում: ԱՊՀ երկրներից ներմուծման տեսակարար կշիռը 1995թ. կազմել է 49.6, 1999թ.՝ 23.1%: 1995թ. ներմուծման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող երկրներն էին՝ Ռուսաստանը (20.0), Թուրքմենստանը (19.2), ԱՄՆ-ն՝ (17.0), Իրանը (13.3), 1999թ.՝ Ռուսաստանը (18.5), ԱՄՆ-ն (10.7), Բելգիան (10.5), Իրանը (9.7):

- *ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքը ըստ հիմնական ապրանքախմբերի արտահայտում է մի կողմից՝ ՀՀ մասնագիտացման ուղղությունը, մյուս կողմից՝ հանրապետության պահանջարկը ներմուծվող արտադրանքի նկատմամբ:* Այսպես, 1999թ. արտահանման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռ ունեին «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»՝ (42.8%), «Հանքահումքային արտադրանք»՝ 16.8, «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր»՝ 10.7, «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»՝ 7.5% ապրանքախմբերը: Ներմուծման կառուցվածքում առաջին 4 խումբ ապրանքներն են՝ հանքահումքային արտադրանքը՝ 21.4, մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները՝ 10.9, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը՝ 10.8, պատրաստի սննդի արտադրանքը՝ 9.6%:
- *Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բացասական մնացորդի աճը արտահանման կայուն ծավալի պայմաններում ներմուծման արագ աճի արդյունք է:* Այսպես, 1994թ. համեմատությամբ 1999թ.ՀՀ արտահանման ծավալն ավելացել է ընդամենը 7.5%-ով: Արտահանման ամենամեծ ծավալը ՀՀ-ն ունեցել է 1996թ.՝ 290.3 մլն ԱՄՆ դոլար, 1999թ.՝ 231.7 մլն դոլար: Մինչդեռ ներմուծումը այդ նույն ժամանակահատվածում ավելացել է 2.1 անգամ: Արտահանման ամենափոքր ծավալը 1998 թվականին էր՝ 220.5 մլն դոլար: Այդ նույն տարում ներմուծման ամենամեծ ծավալն էր՝ 902.4 մլն դոլար և ընթացիկ հաշվի ամենամեծ մնացորդը նույնպես 1998թ. էր՝ 681.9 մլն դոլար: Ընթացիկ հաշվի բացասական մնացորդի կրճատումը փոքր երկրները սովորաբար իրականացնում են ինչպես արտահանման աճի, այնպես էլ ներմուծման ծավալի աստիճանաբար կրճատման հաշվին: Ներմուծման կրճատման հնարավորություններ ՀՀ-ն ունի պատրաստի սննդի արտադրանքի, քարից, գիպսից, ցեմենտից պատրաստված իրերի, բուսական ծագման արտադրանքի սեփական արտադրություն կազմակերպելու հաշվին: Արտահանման ծավալի ավելացումը հնարավոր է կաուչուկի, պղնձի արտադրության կազմակերպման և էլեկտրատեխնիկական արդյունաբերության, ճշգրիտ սարքաշինության արտադրանքի արտադրության ավելացման հաշվին:

Ամփոփում

1. Փոքր բաց տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշները հաշվարկվում են ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման, կապիտալի արտահոսքի և ներհոսքի ազդեցությամբ, որոնք հանդես են գալիս երկրի ներսում խնայողությունների և ներդրումների հավասարակշռման որոշակի մեխանիզմով: Այդ մեխանիզմը տարբերվում է փակ տնտեսությունում խնայողությունների ու ներդրումների հավասարակշռման մեխանիզմից:
2. Փոքր բաց տնտեսությունում խնայողության և ներդրումների հավասարակշռությունը ձևավորվում է կապիտալի համաշխարհային շուկայի տոկոսադրույքի ազդեցությամբ: Ցանկացած երկրի կառավարություն հարկաբյուջետային և ներդրումային քաղաքականությամբ կարող է ազդել երկրի խնայողության, հետևաբար նաև՝ ապրանքների և կապիտալի միջերկրային հոսքերի վրա:
3. Վճարային հաշվեկշռի ընթացիկ և կապիտալի շարժի հաշիվներն ազդում են տվյալ երկրի արժույթի իրական փոխանակային կուրսի վրա: Սակայն այդ ազդեցությունը փոխադարձ է, քանի որ տվյալ երկրի արժույթի փոխանակային կուրսի բարձրացումը կաշկանդում, իսկ իջեցումը խթանում է արտահանումը, ուստի փոփոխությունը ազդում է նաև ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի մնացորդների վրա:
4. Երկրի արժույթի փոխանակային կուրսի փոփոխությունը կապված է երկրի ներքին հարկաբյուջետային քաղաքականության, երկրի ներքին ներդրումային և առևտրային քաղաքականությունների հետ, որոնց ազդեցությամբ զուտ արտահանման ծավալը կարող է պակասել, ավելանալ կամ մնալ անփոփոխ:
5. ՀՀ արտաքին տնտեսական կապերը ձևավորվել են օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք այնպիսի գործոնների ազդեցությամբ, որոնց մի մասի ազդեցությունը (էներգակիրների և մետաղների պակաս) կպահպանվի նաև ապագայում, իսկ մյուսներինը հաղթահարվում է երկրում իրականացվող տնտեսական բարեփոխումների շնորհիվ:
6. ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքում կատարվող զգալի փոփոխությունները դեռևս էական ազդեցություն չունեն վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բացասական մնացորդի կրճատման վրա, քանի որ ներմուծման պահանջարկի աճը տեղի է ունենում արտահանման ծավալի հարաբերական կայունության պայմաններում:

Թեստեր և խնդիրներ

1. ***Զուտ արտահանման մեծությունը համարվում է հավասար մեծություն.***
   ա. զուտ ներդրումներին,
   բ. զուտ խնայողությանը,
   գ. ազգային խնայողությանը,
   դ. ներքին ներդրումները գերազանցող ազգային խնայողությանը:

2. ***Փոքր բաց տնտեսություն ունեցող երկրներում հավասարակշռված առևտրային հաշվեկշռի դեպքում, եթե կառավարությունը մեծացնում է պետական գնումների ծավալը, ապա այդպիսի քաղաքականությունը հանգեցնում է.***
   ա. վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի և կապիտալի հաշվի դրական մնացորդի,
   բ. ընթացիկ հաշվի դրական մնացորդի և կապիտալի հաշվի պակասուրդի,
   գ. ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի պակասուրդի,
   դ. ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի դրական մնացորդի:

3. ***Եթե արտասահմանյան երկրների կառավարությունները կրճատում են իրենց ազգային խնայողությունը, ապա փոքր բաց տնտեսությունում իրական փոխանակային կուրսի հավասարակշիռ արժեքը.***
   ա. բարձրանում է, իսկ զուտ արտահանումը կրճատվում է,
   բ. բարձրանում է, իսկ զուտ արտահանումը մեծանում է,
   գ. իջնում է, իսկ զուտ արտահանումը կրճատվում է,
   դ. իջնում է, իսկ զուտ արտահանումը մեծանում է:

4. ***Վճարային հաշվեկշռի ընթացիկ գործառնությունների հաշիվը չի ներառում.***
   ա. ապրանքների արտահանումը,
   բ. զուտ եկամուտները ներդրումներից,
   գ. տրանսպորտային ծառայությունները այլ երկրներին,
   դ. արտասահմանում գտնվող երկրի ակտիվների փոփոխությունը:

5. ***Փոքր բաց տնտեսությունում, եթե երկիրն ունի հավասարակշռված առևտուր, հարկերի ավելացումը կհանգեցնի.***
   ա. կապիտալի հաշվի դրական մնացորդի,
   բ. տոկոսադրույքի բարձրացման,
   գ. զուտ արտահանման կրճատման,
   դ. ընթացիկ գործառնությունների հաշվի դրական մնացորդի:

6. Եթե Ճապոնիան ցանկանում է նվազեցնել ԱՄՆ հետ առևտրային հաշվեկշռի դրական մնացորդը, ապա ի՞նչ միջոցառում պետք է իրականացնել այդ նպատակին հասնելու համար.

ա. ԱՄՆ ավտոմեքենաների ներմուծման քվոտաների վերացում,

բ. ճապոնական ավտոմեքենաների արտահանման քվոտաների սահմանում,

գ. ճապոնական ընկերությունների մրցակցությունը սահմանափակող օրենսդրության ընդունում,

դ. նշված տարբերակներից ոչ մեկը:

7. Եթե ԿԲ պաշտոնական արժութային պաշարների մեծությունը չի փոփոխվում, ապա, այլ հավասար պայմաններում, կարելի է հաստատել, որ.

ա. առևտրային հաշվեկշռի մնացորդը միշտ հավասար է 0-ի,

բ. ընթացիկ գործառնությունների հաշվի մնացորդը միշտ հավասար է 0-ի,

գ. կապիտալի հաշվի մնացորդը միշտ հավասար է 0-ի,

դ. վճարային հաշվեկշռի մնացորդը միշտ հավասար է 0-ի:

8. Երկրի տնտեսությունը ունի հետևյալ ցուցանիշները.
Y=1000, C=700, G=150, I=250-10r:
Համաշխարհային տոկոսադրույքը 5% է: Հաշվել զուտ արտահանումը:

9. ԱՄՆ-ում ինֆլյացիայի տեմպը 10% է, իսկ Մեծ Բրիտանիայում՝ 12%: ԱՄՆ դոլարի անվանական փոխանակային կուրսը բրիտանական ֆունտի համեմատ բարձրացել է 3%-ով: Հաշվել ԱՄՆ դոլարի իրական փոխանակային կուրսի փոփոխությունը բրիտանական ֆունտի համեմատ:

10. Տնտեսությունը բնութագրվում է հետևյալ տվյալներով.

1. ապրանքների արտահանումը՝ 19650 դոլար,
2. ապրանքների ներմուծումը՝ 21758,
3. երկրի քաղաքացիները օտարերկրյա ներդրումներից ստանում են եկամուտ՝ տոկոսային վճարի տեսքով՝ 3621,
4. երկիրը արտասահմանյան ներդրողներին վճարում է տոկոսներ՝ 1394,
5. այդ երկրի քաղաքացիների զբոսաշրջության ծախսերը կազմում են 1919,
6. տվյալ երկրի եկամուտը զբոսաշրջությունից կազմում է 1750,
7. երկրի միակողմանի տրանսֆերտները հավասար են՝ 2388,
8. կապիտալի արտահոսքը երկրից՝ 4174,
9. կապիտալի ներհոսքը երկիր՝ 6612:

Օգտագործելով խնդրի տվյալները, հաշվել ընթացիկ գործառնությունների հաշվի մնացորդը, ֆինանսական հաշվի և վճարային հաշվեկշռի մնացորդները:

Հիմնական հասկացություններ

Զուտ արտահանում
Առևտրային հաշվեկշիռ
Առևտրային նետտո հաշվեկշիռ
Վճարային հաշվեկշիռ
Փոքր բաց տնտեսություն
Անվանական փոխանակային կուրս
Իրական փոխանակային կուրս
Համարժեքային գնողունակություն

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞ւ են երկրի մակրոտնտեսական ցուցանիշները կապվում արտաքին տնտեսական կապերի հետ, և ինչպե՞ս են դրանք գնահատվում:
2. Ի՞նչ նպատակների համար են օգտագործվում երկիր ներմուծվող ապրանքները և ծառայությունները:
3. Ի՞նչ նպատակներով է օգտագործվում երկրի ազգային խնայողությունը:
4. Ինչպե՞ս է տոկոսադրույքը հավասարակշռում խնայողությունը և ներդրումները:
5. Ինչպիսի՞ քաղաքականությամբ կարելի է ազդել զուտ արտահանման ծավալի վրա:
6. Ինչպիսի՞ փոխանակային կուրսեր գոյություն ունեն, և դրանք ինչպե՞ս են կապված կապիտալի շարժի մնացորդի հետ:
7. Ինչպիսի՞ քաղաքականությամբ կարող է երկիրը ազդել իրական փոխանակային կուրսի փոփոխության վրա:
8. Ինչպե՞ս է արժույթի անվանական փոխանակային կուրսը կապվում երկու երկրների գների միջին մակարդակի փոփոխության հետ:
9. Ինչպիսի՞ն է ՀՀ արտաքին տնտեսական կապերի բնույթը:
10. Որո՞նք են ՀՀ արտաքին առևտրի արդի փուլի առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 13

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում կանդրադառնանք «ներդրումներ» մակրոտնտեսական հասկացությանը, ներդրումային քաղաքականությանը, ընդլայնված վերարտադրության գործում ներդրումների ունեցած դերին, դրանց ֆինանսավորման աղբյուրներին, մասնավոր ներդրումների խթանման պետական լծակներին, ֆինանսական շուկաներում փոխառու միջոցների առաջարկի ու պահանջարկի մոդելին: Այն հնարավորություն կտա օգտագործել ներդրումային պահանջարկի մոդելը պետական ներդրումային քաղաքականության տարբերակների վերլուծության համար:

Այս մոդելները քննարկելիս դիտարկելու ենք հետևյալ երեք հարցերը.

- ինչու՞ են ներդրումները նվազում տոկոսադրույքի աճի դեպքում,
- ի՞նչն է առաջացնում ներդրումային ֆունկցիայի կորի տեղաշարժ,
- ինչու՞ է ներդրումների ծավալը տնտեսական վերելքների ժամանակ աճում, իսկ անկման ժամանակ՝ նվազում:

Կներկայացվեն նաև ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդները:

13.1. Ներդրումային քաղաքականության էությունը, խնդիրները

Ցանկացած երկրի տնտեսական, սոցիալական ու գիտատեխնիկական զարգացումը կապված է ներդրումային գործունեության հետ: Ներդրումային գործունեությունը ներդրումներ իրականացնելու ուղղությամբ ներդրողի գործնական աշխատանքի ամբողջությունն է: Ներդրումային գործունեությունը կարգավորող օրենքների և այլ նորմատիվային ակտերի ընդունումը պետական ներդրումային քաղաքականության իրականացման կարևոր խնդիրներից մեկն է: Այդ քաղաքականության օրենսդրական հիմքերը կարգավորում են տարբեր ձևերի ներդրումային գործունեությունը:

«Ներդրումներ» հասկացությունը խիստ լայն է: Տնտեսագիտության տարբեր բաժիններում և պրակտիկ գործունեության տարբեր ոլորտներում դրա բովանդակությունն ունի իր առանձնահատկությունը: Մակրոմակարդակում ներդրումներն ամբողջական ծախսերի մի մասն են՝ ներառում են արտադրության նոր միջոցների վրա ծախսերը (արտադրական կամ ֆինանսական ներդրումներ), ներդրումներ բնակարանային շինարարությունում և ներդրումներ ապրանքային պաշարներում: Այ-

սինքն՝ ներդրումները երկրի համախառն ներքին արդյունքի մի մասն են, որոնք ընթացիկ ժամանակահատվածում չեն սպառվում և տնտեսության մեջ ապահովում են կապիտալի աճ:

Ներդրումների և կապիտալի միջև գոյություն ունի անխզելի կապ. ներդրումները հանդես են գալիս որպես փոփոխական հոսք, իսկ կապիտալը՝ պաշար: *Կապիտալն* իրենից ներկայացնում է փողի միջոցների և իրական կապիտալային ապրանքների ձևով խնայողությունների կուտակումներ, որոնք դրանց սեփականատերերի կողմից ներգրավվում են տնտեսության գործընթացներում որպես ներդրումային ռեսուրս՝ եկամուտ ստանալու նպատակով:

Ըստ կապիտալի ներդրման օբյեկտների՝ ներդրումները դասվում են իրականի և ֆինանսականի: Նոր կապիտալի ստեղծման կամ գործող կապիտալի վերականգնման վրա կատարված ցանկացած ծախս իրական ներդրում է: Իրական ներդրումներ են նյութական օբյեկտների վրա կատարված ծախսերը, որոնք օգտագործվում են որոշակի ժամանակահատվածում և շահույթ են ապահովում: Ֆինանսական է համարվում կապիտալի ներդրումը տարբեր ֆինանսական ակտիվներում, գլխավորապես արժեթղթերում՝ եկամուտ ստանալու նպատակով: Ներդրումների այս երկու ձևերը լրացնում են միմյանց: Այս տեսակետից ներդրումներ հասկացությունը կարելի է բնութագրել ֆինանսական և տնտեսագիտական իմաստով:

Ֆինանսական իմաստով ներդրումները եկամուտ ստանալու նպատակով տնտեսական գործունեության մեջ դրվող բոլոր ֆինանսական ակտիվներն են: *Տնտեսագիտական իմաստով*՝ հիմնական կապիտալի ստեղծման, ընդլայնման ու վերակառուցման, ինչպես նաև դրանով պայմանավորված՝ շրջանառու կապիտալի փոփոխության հետ կապված ծախսերն են:

Երկրի տնտեսության ներդրումային գործունեությունը պայմանավորվում է դրա զարգացման երկարաժամկետ նպատակներով, որն իրականացվում է նախապես մշակված ներդրումային քաղաքականությանը համապատասխան: Ներդրումային քաղաքականությունը կապված է երկրի տնտեսության զարգացման ռազմավարության հետ:

Ներդրումային քաղաքականությունը ներդրումային գործունեության պետական կարգավորման գործընթաց է, ներդրումների հոսքերի ակտիվացմանը և խթանմանն ուղղված միջոցառումների ամբողջություն: Ներդրումային քաղաքականություն վարվում է պետության և տնտեսավարող մյուս սուբյեկտների առումով: Ամեն մի տնտեսավարող սուբյեկտ մշակում և իրականացնում է իր ներդրումային քաղաքականությունը: Պետության ներդրումային գործունեության կարգավորումն ուղղված է ընդհանուր տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական ենթակառուցվածքների զարգացմանը: Այն իրականացվում է պետական ներդրումների, ինչպես նաև տնտեսական լծակների օգնությամբ մասնավոր ներդրումային գործունեությունը խթանելու միջոցով:

Ներդրումային գործունեությանը պետության մասնակցությունը իրականացվում է ներդրումային նախագծերի մշակման, հաստատման և ֆինանսավորման միջոցով՝ պետական բյուջեի հաշվին:

Տարբերվում են ներդրումային գործունեության վրա պետական ներգործության պասիվ և ակտիվ մեթոդներ: Պասիվ մեթոդների օգտագործումը կապված է վերարտադրության պայմանների և սպառման մասին տեղեկատվության ապահովման հետ: Դրանք ներառում են նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների հիմնավորումը:

Ներդրումային գործունեության մեջ պետության ակտիվ մասնակցության մեթոդներն են.

1. Անհատ ձեռներեցների համար բարենպաստ պայմանների ստեղծումը՝ առաջին հերթին բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորումը, ինչպես նաև ներքին և արտաքին ներդրումները խթանող հարկային և ամորտիզացիայի քաղաքականության մշակումը:
2. Պետության ուղղակի մասնակցությունը երկրի համար կարևոր և արդյունավետ նախագծերում:
3. Պետության մասնակցությունը ենթակառուցվածքային օբյեկտների ստեղծմանը:

Ներդրումային քաղաքականությունն ամեն մի երկրի տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և բխում է երկրի տնտեսական զարգացման նպատակներից՝ արդյունավետ ներդրումային գործունեության միջոցով երկրի տնտեսական զարգացման բարձր տեմպերի և ազգային եկամտի առավելագույն ծավալի ապահովում:

Ներդրումային քաղաքականության էությունը բացահայտում են լուծում պահանջող խնդիրները.

1. ներքին ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծում, այդ նպատակների համար խնայողությունների կուտակում,
2. տնտեսության կառուցվածքային քաղաքականության մեջ պետական ներդրումների դերի բարձրացում,
3. օտարերկրյա ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծում:

Ներդրումային գործունեության զարգացման համար բարենպաստ տնտեսական պայմաններ ստեղծելիս պետությունը կարող է օգտագործել արտոնյալ հարկային քաղաքականությունը, արագացված ամորտիզացիայի մեթոդները, բնակչության դրամական միջոցները և այլ արտաբյուջետային աղբյուրները, շարժական և անշարժ ֆինանսական լիզինգի զարգացումը:

Ներդրումային քաղաքականության մշակումը ընդգրկում է հետևյալ հիմնական փուլերը.

1. Երկրի տնտեսության տնտեսական ու ֆինանսական ռազմավարությանը համապատասխան՝ ներդրումային գործունեության առանձին ուղղությունների ձևավորում:

2. Ներդրումային միջավայրի և ներդրումային շուկայի իրավիճակի հետազոտում:
3. Ներդրումային առանձին օբյեկտների ընտրություն և դրանց համապատասխանեցում երկրի ներդրումային քաղաքականությանը:
4. Ներդրումային ռեսուրսների անհրաժեշտ ծավալի որոշում և դրանց աղբյուրների կառուցվածքի օպտիմալացում:
5. Ներդրումային ծրագրերի իրականացումը արագացնելու ուղիների ապահովում:

Ներդրումային քաղաքականության տարրերն են.

- ներդրումային ներքին աղբյուրների, ինչպես նաև արտասահմանյան երկրներից կապիտալի ներգրավման ձևերի ու մեթոդների մշակում,
- ներդրված կապիտալի տեղաբաշխման սկզբունքների և մեթոդների սահմանում:

Ներդրումային քաղաքականության հիմքում դրվում է ներդրումային հոսքերի ակտիվացումը տնտեսության այն ճյուղերում, որոնք կապահովեն մրցակցություն համաշխարհային շուկայում և միջազգային տնտեսական կապերի զարգացում:

13.2. Ներդրումների դերը ընդլայնված վերարտադրության գործում

Ներդրումային գործընթացը անմիջականորեն կապված է տնտեսական համակարգի դինամիկայի հետ: Այն հասարակական վերարտադրության բաղկացուցիչ մասն է, այսինքն՝ արտացոլում է վերարտադրության գործընթացի բոլոր փուլերը՝ արտադրությունը, բաշխումը, փոխանակումը և սպառումը: Ներդրումային գործընթացը ներառում է.

1. ներդրումային ապրանքների ստեղծում (շինարարության օբյեկտներ, մեքենաներ ու սարքավորումներ, տեխնոլոգիաներ),
2. նոր արտադրական կարողությունների ստեղծման և յուրացման գործընթաց,
3. ապրանքների բնականոն թողարկման ռեժիմով գործող օբյեկտների շահագործում:

Տնտեսության արագ զարգացման համար պահանջվում են հսկայական ներդրումներ: Դրանց հաշվին ոչ միայն իրականացվում է դուրս գրվող ֆոնդերի փոխարինումը, այլև գիտատեխնիկական առաջադիմության հիման վրա ապահովվում է արտադրական կարողությունների աճը: Ներդրումները համարվում են ընդլայնված վերարտադրության գլխավոր գործոն, ինչպես նաև տնտեսության հաշվեկշռվածության ստեղծման կարևոր միջոց: Ցանկացած ներդրում մեծ կամ փոքր չափով փոփոխություններ է առաջացնում արտադրության ձևավորվող կառուցվածքում: Ներդրումները վերջին հաշվով փոխում են ազգային տնտեսության

կառուցվածքը: Այն կարևոր է արտադրության մեջ գիտատեխնիկական նորամուծությունների ներդրման առումով, որովհետև գիտության ու տեխնիկայի նվաճումները, ինչպես հայտնի է, իրացվում են ներդրումային գործընթացի միջոցով, որի ընթացքում տեղի է ունենում նորի ստեղծումը, գործող արտադրական համալիրների և ձեռնարկությունների արդիականացումը և վերազինումը:

Երկրի ֆինանսական կայունությունը կապված է ներդրումների ավելացման հետ: Հասկանալի է, որ տնտեսական աճը և բնակչության բարեկեցությունը անհնար է ապահովել առանց տնտեսության իրական հատվածում կապիտալ ներդրումներ կատարելու:

Մակրոէկոնոմիկայում դիտարկում ենք ներդրումների երկակի դերը: Քանի որ դրանք ծախսերի մեջ անփոփոխ բաղադրիչ են, ապա ներդրումների կտրուկ ավելացումը կամ կրճատումը կարող է մեծ ներգործություն ունենալ ամբողջական պահանջարկի վրա, իսկ դա իր հերթին ազդում է թողարկման ու զբաղվածության վրա: Բացի դրանից, ներդրումները նպաստում են կապիտալի կուտակմանը: Կառույցների ու սարքավորումների պաշարների աճը ավելացնում է երկրի թողարկման ներուժը և ապահովում տնտեսական աճ երկար ժամանակահատվածում: ՀՀ տնտեսության մեջ կատարվող ներդրումների ծավալները տարեցտարի կրճատվում են: Այսպես, 1990թ. հիմնական ֆոնդերի կուտակման համար օգտագործվել է ՀՆԱ 34.3, 1992թ.՝ 16.9, 1993թ.՝ 12.3, 1997թ.՝ 19.6, 1998թ.՝ 17, 2001թ.՝ 19.7%-ը: Արդյունաբերության մեջ կատարված ներդրումները 1990թ. ՀՀ-ում կազմել են ՀՆԱ 6.7%-ը, 1995թ.՝ 0.5% և 1999թ.՝ 0.55%-ը[1]:

Ազգային տնտեսության աճի աղբյուրներից են օտարերկրյա ներդրումները: Դրանք ավելացնում են երկրի արտադրական ներուժը: Չնայած այդ կապիտալով ստեղծված շահույթի մի մասը երկրից դուրս է բերվում, սակայն այն բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը: Բացի դրանից, զարգացող երկրներին հնարավորություն է ընձեռում յուրացնելու արդյունաբերական զարգացած երկրներում մշակված և օգտագործվող նոր տեխնոլոգիաները:

Այսպիսով, ներդրումների ծավալը և տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշները փոխադարձ կապի մեջ են: Մի կողմից արդյունքի արտադրության ծավալի աճի հնարավորությունները որոշվում են կատարվող ներդրումների ծավալի միջոցով, մյուս կողմից՝ ներդրումներ անելու հնարավորությունը և անհրաժեշտությունը պայմանավորված են արտադրված արտադրանքի մեծությամբ:

Ազգային եկամտի կուտակման ֆոնդը օգտագործվում է հիմնական արտադրական և ոչ արտադրական ֆոնդերի և պետական պաշարների (պահուստների) ստեղծման համար: Առաջին երկուսը միասին ձևավորում են ազգային եկամտից կատարվող ներդրումների ծավալը (զուտ ներդրումներ): Ներդրումներ են արվում հիմնական կապիտալի ամորտի-

[1] Տե՛ս ԵՊՀ, Բանբեր, 3 (102), Երևան, 2000թ., Հ.Բ. Ղուշչյան, ՀՀ տնտեսական անվտանգության հիմահարցերը:

զացիայի այն մասի հաշվին, որը կատարվում է դրա փոխհատուցման համար: Այդպիսի ներդրումներն ապահովում են միայն պարզ վերարտադրությունը, եթե արտադրության նախկին միջոցների փոխարեն ավելի կատարելագործվածներ չեն ներդրվում:

Արտադրության աճը ձեռք է բերվում զուտ ներդրումների հաշվին:

1990-ական թվականներին ՀՀ-ում համախառն ներդրումները փոքր են եղել ամորտիզացիայի հատկացումներից: Դա վկայում է ՀՀ տնտեսության ներուժի, եկամուտների ձևավորման տնտեսական բազայի կրճատման և ներդրումային գործունեության ճգնաժամի մասին: Միայն ամորտիզացիայի հատկացումներին համախառն ներդրումների գերազանցման պայմաններում է, որ ապահովվում է ընդլայնված վերարտադրությունը և ազգային եկամտի ձևավորման տնտեսական բազան: Դրանում կարելի է համոզվել՝ դիտարկելով ՀՀ տնտեսության մեջ հայրենական ներդրումները 1994-2003թթ.:

Աղյուսակ 13.1

ՀՀ տնտեսության մեջ հայրենական ներդրումները 1994-2003թթ. (ընթացիկ գներով, մլրդ դրամ)

N	Ցուցանիշներ	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
1.	Ամորտիզացիա	27.6	74.7	99.0	116.0	130.6	139.0	150,3	168,1	202,7	228.0
2.	Համախառն ներդրումներ	24.2	38.5	52.2	57.0	76.0	79.0	101,0	110,4	166,6	237.8
3.	Զուտ ներդրումներ	-6.3	-36.2	-46.8	-59.0	-54.6	-60.0	-49,3	-57,7	-36,1	+9.8

Աղյուսակից երևում է, որ զուտ ներդրումները բերված բոլոր տարիների համար բացասական են, բացի 2003 թ.-ի տվյալներից, ինչը վկայում է ներդրումային գործունեության ճգնաժամի մասին:

Իրականում, հաշվարկային տվյալներով, հիմնական ֆոնդերի կուտակման տեսակարար կշռի նվազումը կազմել է 14 տոկոսային կետ: Ներդրումներն ավելի արագ տեմպերով են կրճատվել արտադրական ոլորտում, որի հետևանքով արտադրական ներուժի արագացող ֆիզիկական և բարոյական մաշվածությունը զարգացող այլ երկրներից հետ մնալու պատճառ է դառնում: Ներդրումային գործունեության վերականգնումը համարվում է ճգնաժամից դուրս գալու և տնտեսական աճի համար պայմաններ ստեղծելու միակ ուղին: Հասկանալի է, որ պետք է ակտիվացնել ներդրումների համար միջոցների հավաքագրման բոլոր աղբյուրները՝ հաշված ձեռնարկությունների շահույթը, բյուջետային ռեսուրսները և արտասահմանյան ներդրումները: Սակայն զարգացման ներկա փուլում, երբ դեռ չեն վերացել տնտեսական ճգնաժամի հետևանք-

ները (բյուջեի ճեղքվածքը), դրանք նույնպես չեն կարող ապահովել ներդրումների երկարաժամկետ ֆինանսավորումը:

13.3. Պետության ներդրումային քաղաքականության ձևավորումը ՀՀ-ում

Տնտեսության շուկայական համակարգին համապատասխանող գործունեության իրականացումը ենթադրում է ներդրումային ռեսուրսների կենտրոնացված բաշխման փոխարինում նոր շուկայական ձևի: Դա իր հերթին պայմանավորում է փոփոխվող տնտեսական պայմաններին համապատասխանող նոր ներդրումային քաղաքականության մշակման անհրաժեշտությունը:

ՀՀ տնտեսության շուկայական բարեփոխումների հայեցակարգը հենվում է մոնետարիստական սկզբունքների վրա, որոնց գործնական իրականացումը տնտեսության մեջ արտահայտվում է պետության դերի նվազեցման կոնկրետ միջոցառումներով:

ՀՀ-ում շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում իրականացվող ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է երկրի մրցակցային առավելությունների բարձրացմանը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավմանը: Իրականացվող քաղաքականության հիմնական նպատակն է տնտեսական ակտիվության բարձրացման, բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման և ներդրումային ծավալների մեծացման միջոցով կայուն տնտեսական աճի ապահովումը: Այն իրագործվում է.

- ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման,
- ներդրումային ոլորտը կարգավորող իրավապայմանագրային դաշտի կայացման,
- ներդրումների ներգրավման,
- ներդրումային ծրագրերի մշակման ու իրականացման աջակցության,
- ներդրումների ոլորտը կարգավորող կառավարման մարմինների օպտիմալ կառուցվածքի ձևավորման,
- ներդրումները խթանող ենթակառույցների ստեղծման միջոցով:

Ներդրումային քաղաքականության նպատակները հիմնականում իրականացվում են հետևյալ ուղղություններով.

- կայուն և կանխատեսելի իրավապայմանագրային դաշտի ձևավորում,
- օտարերկրյա և ներքին ներդրումների ոլորտում վարչարարական խոչընդոտների հաղթահարում,
- ինստիտուցիոնալ խնդիրների լուծում:

Պետական ներդրումային քաղաքականության միջոցառումները հիմնականում կապվում են ՀՀ տնտեսության մեջ հայրենական ու օտար-

երկրյա ներդրումները խթանող համալիր ծրագրերի հետ: Ներդրումները կարգավորող բարենպաստ և վստահություն ներշնչող օրենսդրական դաշտի ապահովումը չափազանց կարևոր է ՀՀ տնտեսություն ներդրումների հոսք ապահովելու համար: Ներդրումային ճիշտ քաղաքականության ձևավորմամբ և արդյունավետ իրականացմամբ է մեծ չափով պայմանավորված երկրի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքը: Այդ նպատակով, Հայաստանի անկախացումից հետո, ՀՀ ներդրումային ոլորտը կարգավորող իրավա-պայմանագրային դաշտի բարելավման ու կատարելագործման աշխատանքներ են կատարվել:

1994թ. մշակվել է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2000 թվականից սկսած՝ մշակվել են միջազգային չափանիշներին համապատասխանող ներդրումային ծրագրեր. մշակվել է ներդրումային ծրագրերի փաթեթ, որում ընդգրկվել են 100 ներդրումային ծրագրեր՝ հանրապետության տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի ներկայացմամբ:

Բացի ծրագրերի մշակումից, որոշակի աշխատանքներ են կատարվել գործնականում դրանց կիրառման ուղղությամբ: Հայաստանում ներդրումային գործունեության ծավալման, ներդրումների ներգրավման և կոնկրետ ծրագրերի իրականացման նպատակով բանակցություններ և գործնական հանդիպումներ են տեղի ունեցել օտարերկրյա տասնյակ ընկերությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում պոտենցիալ գործարարներին ներկայացվել են Հայաստանի մակրոտնտեսական իրավիճակը, ներդրումային մթնոլորտը, գործող տնտեսական, իրավապայմանագրային դաշտը, ներդրումային հնարավորությունները, ներդրումային գործունեության համար առկա համեմատական առավելությունները:

2003թ. ընթացքում սերտ համագործակցություն է իրականացվել Հայաստանի միջազգային գրասենյակների հետ, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության, ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի հետ և այլն: Համաշխարհային բանկի հետ համագործակցությունը կենտրոնացված է եղել հիմնականում գործարար և ներդրումային միջավայրի բարելավման խնդիրների ուղղությամբ, հատկապես SAC-5-ի շրջանակներում:

Նույն տարվա սեպտեմբերի 22-24-ը Երևանում անցկացվել է Հայաստան-Սփյուռք առաջին տնտեսական համաժողովը, որին մասնակցել են Հայաստանի և ավելի քան 20 երկրների սփյուռքահայ գործարարներ:

2003 թ. մայիսի 19-21-ը Երևանում անցկացվեց Հայ-ռուսական ներդրումային հանձնաժողովի նախապատրաստական փուլը:

Ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման համար ստեղծվել են ներդրումները օժանդակող և խթանող, ինչպես նաև

ներդրումների և ներդրողների աջակցության հարցերով զբաղվող մասնագիտացված ենթակառույցներ:

Օտարերկրյա ներդրողների հետ աշխատանքի կենտրոնացման նպատակով Զարգացման հայկական գործակալությունում ՀՀ կառավարության թիվ 83 որոշմամբ ստեղծվել է «Մեկ կանգառի կենտրոն»: Վերջինիս հիմնական նպատակն է օտարերկրյա ներդրողներին Հայաստանում ներդրումային գործունեություն իրականացնելու համար, մեկ գրասենյակի միջոցով, միջազգային չափանիշներին համապատասխան, անհրաժեշտ ծառայությունների ողջ ծավալի տրամադրումը, ինչպես նաև պոտենցիալ ներդրողներին Հայաստանը որպես գրավիչ և բազմապիսի ներդրումային հնարավորություններով օժտված երկիր ներկայացնելը:

Ներդրումային ոլորտում պետության դերի ուժեղացման պայմանները

Անցումային ժամանակահատվածում ներդրումային ոլորտում պահանջվում է պետության դերի ուժեղացում, տնտեսական քաղաքականության ճշգրտում, պետական և շուկայական կարգավորման օպտիմալ զուգակցում: Այս դեպքում անհրաժեշտ է որոշել ներդրումային գործընթացին պետության մասնակցության սահմանները, սկզբունքները:

Ներդրումային ոլորտում պետության դերի ուժեղացման հնարավորությունները մի կողմից պայմանավորված են իրական ֆինանսական հնարավորություններով, մյուս կողմից՝ տնտեսության մեջ պետության մասնակցության ուժեղացմամբ: Ներդրումային ոլորտում պետության դերի ուժեղացումը չի նշանակում վերադարձ վարչական տնտեսական գործունեության: Այն ենթադրում է շուկայական ազատության և մասնավոր ներդրումների խթանման դեպքում պետական երկարաժամկետ քաղաքականության և կոնկրետ գործողությունների արդյունավետության բարձրացում: Ներդրումային գործունեությանը պետության մասնակցության հարցը շատ բանով կապված է ներդրումային սահմանափակ ֆինանսական ներուժի ակտիվացման հիմնախնդրի հետ: Տվյալ հիմնախնդիրը լուծելիս ներդրումների բավարարվածության չափանիշ սահմանելու անհրաժեշտություն է առաջանում: Միջին ժամկետային ժամանակահատվածի համար բավարար է համարվում ներդրումային ռեսուրսների այնպիսի ծավալը, որը թույլ է տալիս ապահովել կայուն տնտեսական աճ: Մակրոէկոնոմիկայի տեսանկյունից դա նշանակում է հասնել ամբողջական զուտ ներդրումների կայուն դրական մեծության, որը ներդրվող ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման դեպքում կհամապատասխանի հիմնական կապիտալի նորացման համար միջոցների ծավալների հավելաճին: Դրա համար անհրաժեշտ է ներդրումները խթանել մինչև արտադրողական կապիտալի կուտակված տարրերի դուրսգրմանը գերազանցող մակարդակը: Այս կողմնորոշումը պայմանավորված է նրանով, որ ներդրումների ցածր մակարդակի դեպքում չի փոխհատուցվում հիմնական կապիտալի դուրս գրվող մասը: Հաշվի առնելով ռեսուրսային կոշտ սահմանափակումները՝ ներդրումային շուկայի ձևավորվածությունը, անհրաժեշտ է, որ ներդրումային ոլորտում

պետական քաղաքականությունը մշակվի գերակա ուղղությունների ընտրության սկզբունքների հիմնավորվածության ուժեղացման, ներդրումային գործընթացների կառավարելիության աստիճանի բարձրացման, մշակվող միջոցառումների հաջորդականության և համալիրության հիման վրա:

Տվյալ առանձնահատկությունը ներգործում է նաև ներդրումային գործունեությանը պետության մասնակցության ձևերի վրա:

Ավելի կարևոր նշանակություն է ձեռք բերում մասնավոր ներդրողների ներդրումային գործունեության համար բարենպաստ ռեժիմի ստեղծմանն ուղղված ներդրումային գործընթացի կարգավորումը: Պետական ներդրումների հետ միասին մասնավոր ներդրողների համար բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման ընթացքում պետության դերի ուժեղացումը պետք է հենվի հարկային, դրամավարկային, ամորտիզացիայի և այլ ձևերով կապիտալի ներհոսք ապահովող մեթոդների կատարելագործման վրա: Պետական ներդրումային քաղաքականության երկու բաղադրիչները՝ ինչպես պետական ներդրումները, այնպես էլ ներդրումային գործունեության պետական կարգավորումը պետք է նպաստեն գերակա ճյուղերի և արտադրությունների ավելի արագ զարգացմանը:

Արդյունավետ պետական ներդրումային քաղաքականության կարևոր պայման է արտադրական հատվածի կառուցվածքային վերակառուցման հայեցակարգի մշակումը, հատկապես գերակա ուղղությունների մասով: Դրա բազայի վրա տարբեր խմբի ձեռնարկությունների համար պետք է որոշվեն ռազմավարությունը, բարեփոխումների մեխանիզմը, պետական մասշտաբները, ձևերն ու մեթոդները: Հայաստանում սովորաբար մրցակցային առավելություններ ունեցողներ են համարվում խոշոր արտադրական համալիրները: Հատկապես խոշոր կորպորացիաները, ունենալով մեծ գիտատեխնիկական ներուժ, ռեսուրսների ներգրավման և համաշխարհային կապերում արդյունավետ համագործակցելու հնարավորություններ, կարող են հիմք հանդիսանալ տնտեսության վերելքի և արագ զարգացման համար: Մանր գործարարության ձեռնարկությունները շուկայական տնտեսության համար ունենալով մեծ նշանակություն՝ ներկայումս բնութագրվում են ծայրահեղ ցածր տեխնիկական մակարդակով և ներդրումային ռեսուրսների բացակայությամբ:

13.4. Ներդրումների ֆինանսավորման աղբյուրները

Ներդրումների համար գլխավոր աղբյուր են ազգային եկամուտը և ամորտիզացիայի հատկացումները: ՀՀ ազգային եկամտի մեջ կուտակման բաժնի անկման պայմաններում ներդրումային գործունեության ակտիվացման վրա դրականորեն կարող է ազդել նախորդ տարիների համեմատ ազգային եկամտի ծավալի ավելի արագ աճը: Ընդ որում, այն պետք է առաջանցիկ աճ ունենա համախառն ներդրումների նկատմամբ,

որպեսզի փոխհատուցվի կուտակման մասի կրճատումով պայմանավորված ներդրումների սահմանափակումը և հնարավորություններ ստեղծվի ներդրումային ռեսուրսների լրացուցիչ հավելաճի համար:

Վերջին տասնամյակում ՀՀ ներդրումային գործընթացում տեղի են ունեցել.

1. պետական ներդրումների բաժնի կրճատում,
2. նոր ներդրումային համակարգի խթանների ձևավորում,
3. ոչ պետական ֆինանսավորման աղբյուրների ձևավորում:

Նման իրավիճակում մեծանում է ֆինանսական համակարգի ազդեցությունը ներդրումային գործընթացի վրա: Ֆինանսական շուկայի հիմնական խնդիրն է դառնում խնայողությունների ներգրավումը տնտեսության իրական հատվածում:

Անցումային տնտեսության պայմաններում ազգային կապիտալի կուտակումը իրականացվում է պետական և մասնավոր հատվածների կողմից: Կենտրոնացված ներդրումները օգտագործվում են համազգային ծրագրերի իրագործման համար՝ ապահովելով արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը:

ՀՀ ներդրումային գործունեության ֆինանսավորման մեջ պետական միջոցներից կատարված ներդրումները կազմել են 1994թ.՝ 38.4%, 2003թ.՝ 4.5%, ոչ պետական միջոցներից ներդրումների ֆինանսավորման բաժինը 2003թ. կազմել է 68.6%՝ 1994թ. 44.2%-ի փոխարեն:

Անցումային ժամանակահատվածում հանրապետությունում զուտ ներդրումները բացասական են, քանի որ ամորտիզացիայի հատկացումները ամբողջությամբ չեն ներդրվել:

Դա բացատրվում է նրանով, որ անցումային փուլում ձեռնարկությունները շահագրգռված են ամորտիզացիայի ֆոնդերում ավելացնել հատկացումները: Այդ միջոցները, շահույթի համեմատ, շահավետ է օգտագործել ներդրումների ֆինանսավորման համար, որովհետև դրանք չեն հարկվում:

Չափազանց փոքր ամորտիզացիայի հատկացումները, ազգային առումով, անբավարար են ընդլայնված՝ նույնիսկ պարզ վերարտադրության ներդրումների պահանջարկը բավարարելու համար: Ավելի շուտ, կապիտալի դուրսգրումը նպաստում է ներդրումների աճին, հիմնական կապիտալի նորացմանը, սակայն կրճատում է հայտարարված շահույթը, որը համարվում է հարկման բազա, այսինքն՝ փոքրացնում է բյուջեում հարկային ստացումները: Դրա համար հիմնական կապիտալի իրային կրողների ծառայության ժամկետների որոշումը և դուրսգրման կարգը շուկայական տնտեսությամբ երկրներում դարձել է պետության գործառույթը:

Ինչպես հայտնի է, ամորտիզացիայի ֆոնդին հատկացվող միջոցներն ազատվում են հարկերից և կարող են օգտագործվել միայն ներդրումների ֆինանսավորման համար: Հատկացված միջոցները, մտնելով ամորտիզացիայի ֆոնդի մեջ, երկար ժամանակ չեն կարող մնալ առանց շարժի, որովհետև այդ կապիտալը վերարտադրական է:

Ձեռնարկատիրոջ բնական ձգտումն է այդ կապիտալը շրջանառության մեջ արագ մտցնելը, այսինքն՝ դա ներդնել նոր հիմնական կապիտալի ստեղծման կամ վերակառուցման մեջ:

Մաշված կապիտալի դուրսգրման կարգի ու նորմի փոփոխության, ամորտիզացիայի ֆոնդում ստացվող միջոցների հոսքի ընդլայնման կամ նեղացման միջոցով պետական կարգավորող մարմիններն ավելացնում կամ կրճատում են ներդրումների ֆինանսավորման համար իրացվելի միջոցների ստացումները: Պետական կարգավորող մարմինները, փոխելով ամորտիզացիայի հատկացումների կարգը և դրույքաչափերը, որոշում են զուտ շահույթի այն մասը, որը կարող է ազատվել հարկերից: Զարգացած երկրներում ամորտիզացիայի հատկացումները գլխավոր աղբյուր են ծառայում ներդրումների ֆինանսավորման համար: Այսպես, ԱՄՆ-ի արդյունաբերության մեջ ամորտիզացիայի հատկացումները կազմում են կապիտալ ներդրումների ծավալի 60-70%-ը և համարվում են ներդրումների ֆինանսավորման գլխավոր ներքին աղբյուր[1]:

Արագացված ամորտիզացիայի հատկացումների միջոցով հիմնական կապիտալը արժեքային արտահայտությամբ ավելի արագ է վերարտադրվում, քան ֆիզիկապես կամ բարոյապես մաշվում է: Արագացված ամորտիզացիոն հատկացումները համարվում են շահույթի կապիտալացման մեթոդներից մեկը: Շահույթի՝ կապիտալի վերածման նման կարգը կատարվում է ավելի արագ:

Հիմնական ֆոնդերի վերարտադրության մեջ որոշակի դեր ունեն վարկերը: Վարկերի օգտագործման շնորհիվ մեծանում են ներդրումային գործընթացի արագացման հնարավորությունները, և բարձրանում է դրանց արդյունավետությունը: Վարկերը ներդրողներին կողմնորոշում են խելամիտ նախագծային լուծումների և միջոցների խնայողաբար օգտագործման: Երկարաժամկետ վարկերն առաջին հերթին նպատակահարմար է հատկացնել տեխնիկական վերազինմանը և վերակառուցմանը: Երկարաժամկետ վարկավորումը խթանող ներգործություն ունի ներդրումների արդյունավետության աճի վրա: Ձեռնարկությունների շահույթը ծառայում է որպես վարկերը վերադարձնելու և տոկոսները մարելու միջոց: Դրանով ձեռնարկություններում կապիտալ ծախսումների արդյունավետ տարբերակների ընտրության շահագրգռվածություն է առաջանում:

Ներդրումների ֆինանսավորման կարևոր աղբյուր է ֆոնդային շուկայի միջոցով բնակչության ազատ միջոցների ներգրավումը: ՀՀ-ում դեռևս ֆոնդային շուկայի զարգացում չի նկատվում. գրեթե ամբողջ բորսային շրջանառությունը բաժին է ընկնում պետական արժեթղթերի առևտրին: Արտադրական ձեռնարկությունների և բանկերի բաժնետոմսերի բաժինը բորսային ֆոնդային շուկայում աննշան է:

Բաժնետիրական արժեթղթերի շուկան դեռևս ձևավորման գործընթացում է: Հայաստանի բաժնետոմսերի գերակշռող մասը թողարկվել է մասնավորեցման գործընթացում հիմնական ֆոնդերի մոտավոր գնա-

[1] Տե՛ս Ë.Ë. Èãîíèíà, “Èíâåñòèöèè”, Ì., 2000, էջ 155:

հատման հիման վրա: Արևմտյան երկրներում արժեթղթերի թողարկումը հիմնականում ծառայում է ներդրումային նախագծերի ֆինանսավորմանը, ազատ դրամական միջոցների ներգրավմանը: Բաժնետիրական արժեթղթերի շուկայի զարգացման դժվարությունը բացատրվում է առկա տնտեսական իրավիճակով: Չնայած ինֆլյացիայի կրճատմանը՝ արտադրության աճ տեղի չունեցավ: Արտադրության մեջ ներդրումները շարունակում են նվազել, շատ ձեռնարկությունների ֆինանսական դրությունը անբավարար է, դրանց կառուցվածքային վերակառուցումը և հիմնական կապիտալի նորացումը անդամալուծված է:

Ներդրումների ֆինանսավորման մյուս աղբյուրը օտարերկրյա ներդրողների միջոցների ներգրավումը և դրամաշնորհներն են: Արտասահմանյան կապիտալի ներգրավումը վերաբերում է Հայաստանի տնտեսության զարգացման ռազմավարական խնդիրներին: Դա ամենից առաջ անհրաժեշտ է արտասահմանյան տեխնոլոգիաների և կառավարման փորձի ներգրավման համար:

Աշխարհի շատ երկրներում հայրենական ներդրումներն արտասահմանյանի համեմատ մեծ են, իսկ ՀՀ-ում 1990-ական թվականներից շարունակ նվազում են հայրենական ներդրումները: Հայաստանում փոքր է նաև արտասահմանյան ներդրումների բացարձակ ծավալը:

Ներդրումային ոլորտի օրենսդրությունը ձևավորման փուլում է: Կան շատ իրավական հիմնախնդիրներ հատկապես օտարերկրյա ներդրումների ոլորտում, որոնք լուծում են պահանջում: Բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման խնդիրները կապված են սեփականության իրավունքի երաշխիքի, հատկապես մասնավոր սեփականության իրավունքի իրական ապահովման հետ: Ուստի պետության և մասնավոր ներդրողների միջև իրավական հարաբերություններն ամբողջությամբ կարգավորված չեն:

Արտասահմանյան համագործակցության ծրագրերով մեծ ծավալի ներդրումներ են կատարվում հատկապես դրամաշնորհների ձևով: Նման համագործակցության նախընտրելի ձևեր են համարվում.

- պայմանագրային արտադրությունը, երբ արտասահմանյան գործընկերներն ապահովում են շրջանառու կապիտալը հումքի, երբեմն էլ փողի տեսքով՝ դառնալով պատրաստի արտադրանքի տերը, փոխհատուցելով միայն ձեռնարկության կատարած ծախսերը,
- տեխնոլոգիայի փոխանցումը, երբ արտասահմանյան գործընկերը ներդնում է սարքավորում կամ տեխնոլոգիա, երբեմն շրջանառու կապիտալ՝ որպես փոխհատուցում ստանալով բաժնետոմսեր, շահաբաժիններ կամ արտադրանք,
- հիմնական կապիտալի ներդրումը, երբ արտասահմանյան գործընկերները շահույթ ստանալու նպատակով ներդնում են հիմնական կապիտալ:

Կան նաև միջազգային կազմակերպություններից միջոցների ներգրավման հնարավորություններ: Նման միջազգային կազմակերպություններ են՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, Եվրոմիության՝ ԱՊՀ երկրներին տեխնիկական օգնության

գործակալությունը (TACIS), ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը: Այս կազմակերպությունները տարբեր ծրագրերի շրջանակներում ստեղծել են դրամաշնորհային բարեգործական հիմնադրամներ, որոնք վարկավորում են, տրամադրում դրամաշնորհներ և աջակցում ձեռնարկություններին ֆինանսական միջոցների ներգրավման գործում:

Արտադրության մեջ ներդրումների ֆինանսավորման տարածված ձևերից է ֆինանսական լիզինգը: Ձեռնարկությունը լիզինգի ձևով փաստացի վարկ է ստանում սարքավորումների լրիվ արժեքի չափով: Դա հատկապես կարևոր է միջոցների պակասի դեպքում: Իր հերթին, բանկերի համար հեշտանում է գրավի խնդիրը: Լիզինգը արտասահմանյան կապիտալի ներգրավման եղանակ է, որը նպաստում է բնակչության զբաղվածության աճին, արտադրական բազայի զարգացմանը:

13.5.Մասնավոր ներդրումների պետական խթանման լծակները

Ներդրումային քաղաքականությունը ներառում է միջոցառումներ, որոնք նպաստում են մասնավոր ներդրումների ավելացմանը:

Այդպիսի միջոցառումների համար որպես տնտեսական լծակ կարող են ծառայել հարկերը, վարկերը, մաքսային վճարները, երաշխավորված փոխառությունները: Ներդրումային ոլորտում հիմնական լծակ է հարկային քաղաքականությունը: Հարկումը պետության կողմից արտադրության վրա անուղղակի ազդեցության տարր է: Այս առումով հարկը և հարկային բեռը, հանդիսանալով ներդրումային գործունեության պետական կարգավորման տարրեր, չպետք է հանդես գան որպես արտադրության ծավալների հակախթաններ: Ուստի կարևորվում է հարկային տոկոսադրույքը օպտիմալ մակարդակի վրա սահմանելու խնդիրը: Հատկապես ներդրումների իրականացման տեսանկյունից անհրաժեշտ է, որ չհարկվեն այն միջոցները, որոնք ուղղված են արտադրության տեխնիկական վերազինմանը և վերակառուցմանը: Ներդրումներ իրականացնելիս հարկային արտոնությունների գործունակության բարձրացումը ենթադրում է արտադրական հատվածի հարկային քաղաքականության ոլորտում ներդրումային գործունեության ակտիվացման համար բարենպաստ պայմանների ստեղծում: Հարկային արտոնությունները կարելի է իրականացնել հետևյալ ձևերով.

- շահույթի հարկվող մասը ազատել հարկումից և ուղղել սեփական արտադրության տեխնիկական բազայի զարգացման և բնակելի շինարարության կապիտալ ներդրումների ֆինանսավորմանը,
- սահմանել զեղչեր, որոնց գործողությունը կապված է հարկման արդյունքների վրա ազդող ծախսերի՝ հարկային վարկերի և հարկային արձակուրդների հետ: Ամենատարածված ձևը շահութահարկային արձակուրդն է, որը ձեռնարկություններին ազատում է դրված հարկի վճարումից 2-5 տարի ժամանակահատվածում,

կամ էլ կիրառվում է մեկ այլ խթան՝ մասամբ նվազեցնելով շահութահարկի դրույքը:

Դիտարկենք փոխառու միջոցների շուկայի վրա խնայողությունների խթանման ազդեցությունը: Հարկերի կրճատման պայմաններում տնային տնտեսությունները սպառման սահմանափակման հաշվին ավելացնում են խնայողությունների բաժինը և ավելի մեծ միջոցներ են ուղղում փոխառու միջոցների ձեռք բերմանը: Արդյունքում՝ ավելանում է դրանց առաջարկը, ինչը պատկերված է գրաֆիկում.



Խնայողությունների խթանմանն ուղղված հարկային օրենսդրության փոփոխության արդյունքում փոխառու միջոցների առաջարկի կորը տեղաշարժվում է դեպի աջ՝ S_1-ից S_2: Արդյունքում՝ հավասարակշիռ տոկոսադրույքի մակարդակը իջնում է՝ լրացուցիչ խթաններ ստեղծելով ներդրումների համար:

Նկ. 13.1. Փոխառու միջոցների առաջարկի ավելացումը

Խնայողությունների խթանման նպատակով կատարված հարկային օրենսդրության փոփոխությունը (հարկերի կրճատումը) տեղաշարժում է փոխառու միջոցների առաջարկի կորը դեպի աջ՝ S_1-ը տեղաշարժվում է դեպի S_2: Արդյունքում՝ հավասարակշիռ տոկոսադրույքը r_1-ից իջնում է r_2, ինչը իր հերթին բարձրացնում է փոխառու միջոցների նկատմամբ պահանջարկը: Հիմնական հետևությունն այն է, որ խնայողությունների ավելացման նպատակով հարկային դրույքի կրճատումը հանգեցնում է տոկոսադրույքի կրճատման ու ներդրումների աճի: Ենթադրենք՝ նոր շինարարության մեջ միջոցներ ներդնող ձեռնարկությունների համար սահմանվում են հարկային արտոնություններ: Ըստ էության, դա նման է ներդրումային հարկային վարկին:

Այժմ գրաֆիկորեն ցույց տանք, թե ինչպես են այդ արտոնություններն ազդում փոխառու միջոցների շուկայի իրավիճակի վրա.



Ներդրումային հարկային զեղչը ավելացնում է փոխառու միջոցների պահանջարկը: Արդյունքում՝ տոկոսադրույքը բարձրանում է՝ խթանելով խնայողությունների աճը: Այս դեպքում պահանջարկի կորը D_1-ից տեղաշարժվում է D_2:

D_1

→

I,S

Փոխառու միջոցներ

Նկ.13.2. Փոխառու միջոցների հավասարակշռված ծավալների աճ

Հարկային զեղչը վարկեր ստանալու և դրանք արտադրության մեջ ներդնելու նոր խթան է ստեղծում: Փոխառու միջոցների նկատմամբ պահանջարկը մեծանում է, իսկ տոկոսադրույքը՝ բարձրանում: Ինչ վերաբերում է տնային տնտեսություններին, ապա այդ զեղչը ամեն մի տոկոսադրույքի դեպքում ոչ մի կերպ չի ազդում նրանց խնայողության հակումների վրա: Նշանակում է՝ չի փոփոխվում ազատ դրամական ռեսուրսների առաջարկը: Քանի որ ձեռնարկությունները յուրաքանչյուր հնարավոր տոկոսադրույքի դեպքում լրացուցիչ խթան են ստանում ներդրումների ավելացման համար, ապա ցանկացած տոկոսադրույքի դեպքում փոխառու միջոցների պահանջարկն ավելանում է: Այսպիսով, պահանջարկի կորը տեղաշարժվում է աջ՝ վերև (D_1-ը ընդունում է D_2 դիրքը), արդյունքում՝ տոկոսադրույքի և փոխառու միջոցների հավասարակշռված մակարդակներն աճում են: Տնային տնտեսությունների հետաքրքրությունը խնայողությունների աճի նկատմամբ մեծանում է, հետևապես մեծանում է նաև փոխառու միջոցների առաջարկը: Այսպիսով, ներդրումների խթանմանն ուղղված հարկային զեղչը հանգեցնում է տոկոսադրույքի և խնայողությունների աճի:

Հարկային քաղաքականության նպատակն է պետական սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման համար բյուջեում ստեղծել բավարար քանակությամբ միջոցներ, ինչպես նաև՝ տնտեսությունում գործարար ակտիվության աճի և առաջադիմական կառուցվածքային տեղաշարժերը խթանելու պայմաններ: ՀՀ-ում գործող հարկային քաղաքականությունը կողմնորոշված է նշված խնդիրներից միայն առաջինի լուծմանը:

Արտադրական ձեռնարկությունների գործարար ակտիվության բարձրացման և գերակա ճյուղերի զարգացման համար նպատակահարմար է նվազեցնել ձեռնարկություններից հարկագանձման ընդհանուր չափը, սահմանել տարբերակված հարկային դրույքներ: Հարկային դրույքների տարբերակումը նպատակահարմար է իրականացնել առաջնային ուղղություններով՝ արտոնյալ հարկման միջոցով:

Հարկային արտոնությունների ավելի արդյունավետ ձև, որը լայն տարածում է ստացել արևմտյան պրակտիկայում, համարվում է ներդրումային հարկային վարկը: Այն նախատեսում է որոշակի ժամանակահատվածում և թույլատրելի սահմաններում կրճատել շահութահարկը,

տարածաշրջանային, ինչպես նաև տեղական հարկերը՝ հետագայում առանձին փուլերով վճարելով վարկի գումարը՝ տոկոսների հետ միասին:

Ներդրումային հարկային վարկը, ի տարբերություն մյուս արտոնությունների, հարկային պարտավորությունների ուղղակի կրճատում է նշանակում, այդ դեպքում հաշվի է առնվում հարկատուի գույքային դրությունը:

Եթե տվյալ ձեռնարկությունը հնարավորություն ունի որևէ տարում ավելացնելու սեփական կապիտալը, ապա նպատակահարմար է հարկերը կրճատելու հաշվին այդպիսի ձեռնարկություններին այդ գումարի չափով հատկացնել լրացուցիչ վարկ:

Տնտեսագետները ներդրումային հարկային վարկը համարում են ներդրումների ակտիվացման ամենակարևոր խթաններից մեկը: ՀՀ բյուջեի մասին օրենքում նույնպես նշվում է ներդրումների նկատմամբ հարկային արտոնությունների կիրառման նպատակահարմարության մասին: Դրա հետ միասին, շատ ձեռնարկությունների և կազմակերպությունների ցածր շահութաբերության և վնասով աշխատելու հետ կապված՝ տնտեսության հիմնական ճյուղերում նախատեսված արտոնությունները չեն հանգեցնում ներդրումային ակտիվության սպասվելիք աշխուժացման:

Ներդրումային հարկային վարկը ձեռնարկություններին տրվում է գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքներ կատարելու կամ գործող ձեռնարկությունների տեխնիկական վերազինման, ինչպես նաև տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող կարևոր պատվերներ կատարելու համար:

Մեր հանրապետությունում ներդրումային գործունեության ակտիվացումը պահանջում է պետության կողմից հայրենական ներդրողներին աջակցություն, որը պետք է ներառի ինչպես ուղղակի ֆինանսական լրահատկացումների և հարկային արտոնությունների տրամադրումը, այնպես էլ արտոնյալ վարկային ֆինանսավորումը:

Ինչպես արդեն նշել ենք, ներկայումս Հայաստանում ներդրումների ֆինանսավորման իրատեսական աղբյուրը օտարերկրյա ներդրումներն են: Սակայն, որպեսզի օտարերկրյա ներդրողին հետաքրքրի տվյալ ձեռնարկությունը, անհրաժեշտ է, որ այն ունենա, այսպես կոչված, «ներդրումային գրավչություն»:

Ձեռնարկության ներդրումային գրավչություն ասելով կարելի է հասկանալ յուրաքանչյուր ներդրողի նպատակների ու խնդիրների նախընտրելիությունը՝ կապիտալ ներդրումների ուղղությունը որոշելիս, ինչպես նաև որպես տվյալ ձեռնարկության արտադրատնտեսական գործունեությունից ստացվող կայուն ընդհանուր արդյունքի առկայություն կամ երաշխիք:

Ձեռնարկության ներդրումային գրավչությունը ձեռնարկության գործունեության և ներկա վիճակի տնտեսագիտական-հոգեբանական և սոցիալական-գոյապահպանական, ինչպես նաև տնտեսական և ազգային անվտանգությանն առնչվող ցուցանիշների համակարգ է, որը կանխորոշում է պոտենցիալ ներդրողի ներդրումային վարքագծի նախընտրե-

լիության ոլորտը: Հետևաբար, ձեռնարկության ներդրումային գրավչությունը ներառում է կադրային, տարածքային, գոյապահպանական, սոցիալական, նորամուծական, ազգային անվտանգության և այլ բնութագրիչներ: Եթե խոսքը օտարերկրյա ներդրողի մասին է, ապա նրա համար գոյապահպանական, սոցիալական և անվտանգության հարցերը կարող են նշանակություն չունենալ: Սակայն պետությունը լուծում է այս խնդիրը հատուկ հարկերի և տուրքերի միջոցով, որը օտարերկրյա ներդրողի համար անշահավետ և աննպատակահարմար է դարձնում այդպիսի ներդրման հեռանկարը:

Որպես ներդրումների իրականացման խթանների չափման միջոց է ծառայում Տոբինի q գործակցի որոշումը: Նոբելյան մրցանակի դափնեկիր Ջեյմս Տոբինը ենթադրել է, որ ձեռնարկությունները ներդրումների վերաբերյալ որոշում են ընդունում հետևյալ հարաբերակցության հիման վրա.

$$q = \frac{\text{Տեղակայված կապիտալի շուկայական արժեք}}{\text{Կապիտալի վերականգնման արժեք}}$$

Տոբինի q-ի համարիչը արժեթղթերի շուկայում գոյացած կապիտալ ակտիվների արժեքն է: Հայտարարը՝ կապիտալ բարիքների գինը, որով կարող են այդ բարիքները ձեռք բերել ներկա պահին: Ըստ Տոբինի՝ զուտ ներդրումների ծավալը պետք է կախված լինի այն բանից, թե q-ն մեկից մեծ է, թե՝ փոքր: Եթե q-ն մեկից մեծ է, ապա արժեթղթերի շուկան տեղակայված կապիտալը գնահատում է ավելի մեծ գումարով, քան նրա փոխարինման արժեքն է: Այս դեպքում մենեջերները հնարավորություն ունեն ավելացնելու իրենց ձեռնարկությունների բաժնետոմսերի շուկայական արժեքը՝ ձեռք բերելով շատ կապիտալ: Եվ ընդհակառակը՝ երբ q-ն փոքր է մեկից, ապա արժեթղթերի շուկան տեղակայված կապիտալը գնահատում է դրա փոխարինման արժեքից փոքր գումարով: Այս դեպքում մենեջերները կապիտալը չեն փոխարինի դրա դուրսգրման չափով: Չնայած առաջին հայացքից Տոբինի ներդրումների տեսությունը նոր դասական մոդելից կարող է տարբեր երևալ, իրականում այդ երկու մոդելները սերտորեն կապված են: Այս կապը ակնհայտ է դառնում, եթե հիշենք, որ Տոբինի q-ն կախված է տեղակայված կապիտալի ընթացիկ և սպասվելիք շահույթից: Եթե կապիտալի սահմանային արդյունքը գերազանցում է կապիտալ ծախքերը, ապա տեղակայված կապիտալը շահույթ է բերում: Այդ փաստը կապիտալը վարձակալման տվող ձեռնարկությանը դարձնում է գրավիչ, որը բարձրացնում է տվյալ ձեռնարկության բաժնետոմսերի շուկայական արժեքը և հանգեցնում q-ի մեծացման: Նմանապես, եթե կապիտալի սահմանային արդյունքը փոքր է կապիտալի միավորի ծախքերից, ապա տեղակայված կապիտալը հանգեցնում է կորուստների, հետևապես՝ բաժնետոմսերի շուկայական ցածր արժեքի և q-ի փոքր մեծության:

13.6. Ներդրումները արտադրական ոլորտում

Հիմնական ֆոնդերում ներդրումների մոդելը ստացել է ներդրումների նոր դասական մոդել անվանումը: Նոր դասական մոդելում դիտարկվում են ներդրումային ապրանքներ ունեցող ձեռնարկությունների եկամուտներն ու ծախսերը: Մոդելում ցույց է տրվում, թե ինչպես է ներդրումների մեծությունը կապիտալի պաշարների հետ միասին կապվում սահմանային հատույցի, տոկոսադրույքի և ձեռնարկությունների նկատմամբ կիրառելի հարկագանձման կարգի հետ:

Մոդելի ձևավորման համար ենթադրենք՝ տնտեսությունում գործում են երկու տեսակի ձեռնարկություններ՝ արտադրական, որոնք արտադրում են ապրանքներ ու ծառայություններ՝ օգտագործելով վարձակալվող կապիտալը և ձեռնարկություններ, որոնք կապիտալը տալիս են վարձակալման, տնտեսության մեջ իրականացնում են ամեն տեսակի ներդրումներ, գնում են արտադրական ֆոնդեր և վարձակալման տալիս արտադրական ձեռնարկություններին: Իրական տնտեսության մեջ ձեռնարկությունների մեծամասնությունը կատարում է այդ երկու գործառնությունները: Մոդելը լավ պատկերացնելու նպատակով նախ դիտարկենք կապիտալի վարձակալման գինը: Նախորդ թեմաներից հիշենք, թե ինչպես է օրինակելի ձեռնարկությունը որոշում ընդունում օգտագործվող կապիտալի մասին. նա համեմատում է կապիտալի լրացուցիչ միավորից ստացվող ծախսերն ու եկամուտները: Ձեռնարկությունը կապիտալը վարձակալում է R դրույքով և իր արտադրանքը վաճառում է P գնով: Արտադրական ձեռնարկության կապիտալի միավորին բաժին ընկնող իրական ծախսերը կազմում են R/P: Միավոր կապիտալի օգտագործման իրական արդյունքը կապիտալի սահմանային արդյունքն է (MPK), այսինքն՝ լրացուցիչ թողարկումը, որը ստացվում է կապիտալի լրացուցիչ միավորի օգտագործման դեպքում: Օգտագործվող կապիտալի ծավալը մեծացնելիս դրա սահմանային արդյունքը կրճատվում է. ինչքան շատ կապիտալ ունի ձեռնարկությունը իր տրամադրության տակ, այնքան կապիտալի միավորի ավելացման դեպքում թողարկման աճը փոքրանում է: Այսպիսով, կարող ենք անել եզրակացություն, որ առավելագույն չափի շահույթի համար ձեռնարկությունը վարձակալող կապիտալն ավելացնում է այնքան, քանի դեռ դրա սահմանային արդյունքը չի իջնում մինչև կապիտալի վարձակալման իրական գնի մակարդակը: Գրաֆիկորեն ցույց տանք շուկայում վարձակալվող կապիտալի հավասարակշռությունը.



Կապիտալի իրական վարձավճարը որոշում է կապիտալի պահանջարկի (վերջինս հանդես է գալիս կապիտալի սահմանային արդյունքի տեսքով) և դրա կայուն առաջարկի հավասարակշռությամբ:

$\bar{K}$ K

Կապիտալի պաշար

Նկ. 13.3. Կապիտալի վարձակալման գինը

Կապիտալի սահմանային արդյունքը որոշում է պահանջարկի կորի դիրքը: Կապիտալի պահանջարկի կորը շեղվում է աջ՝ ներքև, որովհետև հայտնի է՝ ինչքան մեծ է կապիտալի ծավալը, այնքան փոքր է դրա սահմանային արդյունքը: Տնտեսության մեջ յուրաքանչյուր պահի կապիտալի քանակը հաստատուն է, այդ պատճառով առաջարկի կորը ուղղահայաց է: Վարձակալման վերցված կապիտալի գինը ճշգրտվում է առաջարկի ու պահանջարկի հավասարակշռման համար:

Որպեսզի որոշենք, թե ինչպիսի փոփոխականներ են ազդում վարձակալվող կապիտալի հավասարակշռված գնի վրա, որպես հիմք վերցնենք Կոբբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան, որը շատ տնտեսագետներ դիտարկում են որպես հիմնավոր արտացոլում, թե ինչպես են աշխատանքը, կապիտալը իրական տնտեսության մեջ վերափոխվում ապրանքների և ծառայությունների: Կոբբ-Դուգլասի ֆունկցիան արտահայտվում է՝

$$Y = AK^{\alpha}L^{1-\alpha}$$

տեսքով: Այս ֆունկցիայում կապիտալի սահմանային արդյունքը գրվում է՝

$$MPK = \alpha A(L/K)^{1-\alpha}$$

որտեղ՝

K-ն՝ կապիտալն է,

L-ը՝ աշխատանքը

A-ն՝ պարամետր, որը ցույց է տալիս տեխնոլոգիայի մակարդակը,

α-ն՝ զրոյից մեծ և մեկից փոքր պարամետր, որով չափվում է պատրաստի արտադրանքի թողարկման մեջ կապիտալի ներդրման բաժինը: Քանի որ հավասարակշռության պայմաններում կապիտալի վարձակալման գինը հավասար է կապիտալի սահմանային արդյունքին, ապա կարող ենք գրել՝

$$R/P = \alpha A(L/K)^{1-\alpha}$$

Փոփոխականների մեծության այդ արտահայտությունը որոշում է վարձակալած կապիտալի իրական գինը: Այն ցույց է տալիս, որ՝

- որքան փոքր է կապիտալի պաշարը, այնքան բարձր է դրա վարձակալման իրական գինը,

- որքան շատ է օգտագործվող աշխատանքի քանակը, այնքան բարձր է կապիտալի վարձակալման գինը,
- որքան որակյալ է տեխնոլոգիան, այնքան բարձր է վարձակալման գինը:

Կապիտալի պաշարը նվազեցնող, զբաղվածությունը բարձրացնող կամ տեխնոլոգիան բարելավող իրադարձությունները բարձրացնում են կապիտալի վարձակալման իրական գնի հավասարակշռված մեծությունը:

Այժմ դիտարկենք ձեռնարկություններ, որոնք կապիտալը տալիս են վարձակալման: Նման ձեռնարկությունները ձեռք են բերում ներդրումային ապրանքներ և դրանք տալիս վարձակալման: Դրա համար սկսենք սեփական կապիտալի ծախսերի ու եկամուտների վերլուծությունից: Սեփական կապիտալից ստացվող եկամուտը գոյանում է կապիտալը արտադրական ձեռնարկություններին վարձակալման տալուց: Վարձակալման տրված կապիտալի յուրաքանչյուր միավորի համար ձեռնարկությունը ստանում է իրական գինը (R/P): Սեփական կապիտալի ծախսերն ունեն ավելի բարդ կառուցվածք: Յուրաքանչյուր անգամ, երբ ձեռնարկությունը միավոր կապիտալը տալիս է վարձակալման, կատարում է երեք տեսակի ծախսեր.

1. Երբ ձեռնարկությունը ձեռք է բերում միավոր կապիտալ և այնուհետև տալիս վարձակալման, կորցնում է տոկոսները: Դրանք կարող էր ստանալ, եթե կապիտալի ձեռքբերման գումարը դներ բանկի հաշվում կամ, որ նույնն է՝ եթե կապիտալի ձեռքբերման համար ձեռնարկությունը օգտագործեր փոխառու միջոցներ, ապա ստիպված կլիներ վարկի դիմաց տոկոսներ վճարել: Եթե P_K-ն կապիտալի ձեռքբերման գինն է, i-ն՝անվանական տոկոսադրույքը, ապա iP_K-ն ծախսերն են՝ ըստ տոկոսադրույքների:
2. Մինչ ձեռնարկությունը կապիտալը տալիս է վարձակալման, դրա գինը կարող է փոփոխվել: Եթե կապիտալի գինը ընկնում է, ապա ձեռնարկությունը վնասներ է կրում, որովհետև ձեռնարկության ակտիվների արժեքը իջնում է: Երբ կապիտալի արժեքը բարձրանում է, ձեռնարկությունը շահում է, որովհետև մեծանում է դրա ակտիվների արժեքը: Այդ կորստի կամ շահի մեծությունը հավասար է ΔP_K:
3. Քանի որ կապիտալը վարձակալման է տրվում, այն մաշվում է և կորցնում արժեքը, որը կոչվում է ամորտիզացիա: Եթե δ-ն ամորտիզացիայի նորմն է, այսինքն՝ արժեքի մի մասը մաշվածության հետևանքով որոշակի ժամանակահատվածում պակասել է, ապա ամորտիզացիայի արժեքային մեծությունը կլինի՝ δP_K:

Այսպիսով, միավոր ժամանակահատվածում կապիտալի վարձակալման տալու ընդհանուր ծախսերը կազմում են.

$$\text{Կապիտալի միավոր ծախսեր}=iP_K-\Delta P_K+\delta P_K=P_K\left(i-\Delta P_K/P_K+\delta\right)$$

Կապիտալի միավորի վրա ծախսերը կախված են կապիտալի միավորի գնից, տոկոսադրույքից, կապիտալի գնի հարաբերական փոփոխությունից և ամորտիզացիայի նորմից: Որպեսզի պարզվի կապիտալի միավորի վրա ծախսերի ազդեցությունը, նպատակահարմարության համար ընդունենք, որ ներդրումային ապրանքների գները բարձրանում են մնացած ապրանքների գների հետ միասին: Այս դեպքում, այն հավասար է ինֆլյացիայի ընդհանուր մակարդակին՝ Π-ին: Քանի որ i-Π-ն հավասար է իրական տոկոսադրույքին (r), միավոր կապիտալի ծախսերը կարող ենք գրել հետևյալ ձևով՝

$$\text{Միավոր կապիտալի ծախսերը} = P_K(r+\delta)$$

Տվյալ հավասարումից հետևում է, որ կապիտալի միավորի ծախսերը կախված են կապիտալի գնից, իրական տոկոսադրույքից և ամորտիզացիայի նորմից: Կապիտալի միավորին բաժին ընկնող ծախսերը կազմում են՝

$$\text{Կապիտալի միավորին բաժին ընկնող իրական ծախսերը} = P_K/P(r+\delta)$$

Կապիտալի միավորին բաժին ընկնող իրական ծախսերը կախված են ներդրումային ապրանքների հարաբերական գնից, իրական տոկոսադրույքից և ամորտիզացիայի նորմից:

Այժմ դիտարկենք ներդրումների մեծությունը որոշող գործոնները: Այն հարցը, թե ձեռնարկությունը ինչպես որոշի՝ մեծացնի, թե՝ փոքրացնի իր կապիտալի պաշարը, պարզաբանվում է շահույթի հաշվարկումով.

$$\text{Շահույթը} = \text{եկամուտ} - \text{ծախսեր}$$

$$\text{Շահույթը} = R/P - P_K/P(r+\delta)$$

Քանի որ հավասարակշռության վիճակում կապիտալի վարձակալման գինը հավասար է կապիտալի սահմանային արդյունքին, ուստի շահույթի նորմի արտահայտությունը կարող ենք գրել հետևյալ ձևով.

$$\text{Շահույթի նորմը} = MPK - P_K/P(r+\delta)$$

Կապիտալը վարձակալման տվող ձեռնարկությունը շահույթ է ստանում, եթե կապիտալի սահմանային արդյունքը մեծ է կապիտալի միավորին բաժին ընկնող ծախսերից և վնասներ է կրում, եթե կապիտալի սահմանային արդյունքը փոքր է կապիտալի միավորին բաժին ընկնող ծախսերից:

Կապիտալի պաշարը մեծացնելու կամ փոքրացնելու որոշումը կախված է նրանից, թե շահութաբեր է արդյոք կապիտալի սեփականատեր լինելը և կապիտալը վարձակալման տալը: Եթե կապիտալի սահմանային արդյունքը (MPK) գերազանցում է կապիտալի միավորին բաժին ընկնող ծախսերը, ապա ձեռնարկության համար շահավետ է ավելացնել կապիտալի պաշարը, իսկ եթե կապիտալի սահմանային արդյունքը փոքր է կապիտալի միավորին բաժին ընկնող ծախսերից, ապա ձեռնարկությունը փոքրացնում է իր կապիտալի պաշարը:

Սեփական կապիտալը օգտագործող ձեռնարկության համար կապիտալի ամեն մի լրացուցիչ միավորից ստացված շահույթը կապիտալի սահմանային արդյունքն է, իսկ ծախսերը հավասար են կապիտալի միավորին բաժին ընկնող ծախսերին: Նման ձեռնարկությունը ավելացնում է կապիտալի իր պաշարը, եթե կապիտալի սահմանային արդյունքը գերազանցում է կապիտալի միավորին բաժին ընկնող ծախսերը:

Այսպիսով, կապիտալի պաշարի համար ներդրումները որոշվում են.

$$\Delta k = \ln\left[MPK - P_K / P\left(r + \delta\right)\right]$$

որտեղ՝ In-ը զուտ ներդրումների ֆունկցիան է:

Ձեռնարկությունների հիմնական ֆոնդերում ներդրումների վրա ծախսերի ընդհանուր ծավալը հավասար է ներդրումների և շարքից դուրս եկող կապիտալի փոխարինման համար ներդրումների գումարին:

Ներդրումների ֆունկցիան կլինի.

$$I = \ln[MPK - P_k / P(r + \delta)] + \delta k$$

Ձեռնարկությունների հիմնական ֆոնդերում ներդրումները կախված են կապիտալի սահմանային արդյունքից, կապիտալի միավորին բաժին ընկնող ծախսերից և շարքից դուրս եկող կապիտալի մեծությունից: Տոկոսադրույքի աճը մեծացնում է կապիտալի միավորին բաժին ընկնող ծախսերը: Դա հանգեցնում է կապիտալի սեփականատերերի շահույթի փոքրացման: Նույն ձևով, տոկոսադրույքի նվազման հետևանքով կրճատվում են կապիտալի միավորին բաժին ընկնող ծախսերը և ավելանում ներդրումները:

13.7. Ներդրումները բնակարանային տնտեսության մեջ և պաշարներում

Ներկայացնենք պարզ մոդել՝ ցույց տալով, թե ինչպիսի գործոններ են ազդում բնակարանային շինարարությունում կատարվող ներդրումների ծավալի վրա: Բնակարանային ներդրումների նպատակը նոր բնակարանների ձեռքբերումն է՝ ինչպես դրանցում ապրելու, այնպես էլ հետագայում վարձակալման տալու համար: Պարզության համար ենթադրենք, որ բոլոր տները պատկանում են առաջին խմբին՝ ապրելու համար են: Մոդելը բաղկացած է երկու մասից: Առաջին՝ բնակարանների գործող շուկան որոշում է գնի հավասարակշռված մեծությունը, երկրորդ՝ բնակարանի գինը որոշում է շինարարությունում ներդրումների մեծությունը:

ա. Բնակարանների շուկա



բ. Նոր բնակարանների առաջարկը



պահանջարկ

K_H I_n

Բնակելի ֆոնդ Ներդրումներ շինարարության մեջ

Նկ. 13.4. Բնակարանային շինարարությունում ներդրումները որոշող գործոնները

13.5ա գրաֆիկում ցույց է տրված, թե ինչպես է բնակարանի հարաբերական գինը P_H/P որոշվում բնակարանների՝ գոյություն ունեցող առաջարկով և պահանջարկով: Ժամանակի ցանկացած պահին բնակարանների առաջարկը կայուն է: Այդ առաջարկը հանդես է գալիս ուղղահայաց գծի տեսքով: Բնակարանի պահանջարկի կորը ուղղված է ներքև, որովհետև ավելի բարձր գների պատճառով մարդիկ ստիպված են բնակվել փոքր տներում կամ վարձակալությամբ, երբեմն էլ՝ մնալ առանց բնակարանի: Բնակարանի գինը փոփոխվում է այնպես, որ ապահովվի պահանջարկի և առաջարկի հավասարակշռություն: 13.5բ գրաֆիկում ցույց է տրված, թե ինչպես է բնակարանի հարաբերական գինը պայմանավորում նոր տների առաջարկը:

<u>Բնակարանների պահանջարկի մեծացում</u>

ա. Բնակարանների շուկա բ. Բնակարանների առաջարկ



Բնակելի ֆոնդ Ներդրումներ բնակարանային շինարարության մեջ

Նկ.13.5. Բնակարանների պահանջարկի մեծացում

Բնակարանների պահանջարկի մեծացումը, օրինակ, առաջանալով տոկոսադրույքի իջեցման հետևանքով, բարձրացնում է բնակարանների գները և ավելացնում ներդրումները բնակարանային շինարարությունում:

Շինարարական ձեռնարկությունները ձեռք են բերում շինանյութեր և վարձակալում բանվորներ՝ տների շինարարության համար, որոնք այնուհետև վաճառում են շուկայական գներով: Ձեռնարկությունների ծախքերը կախված են գների (P) ընդհանուր մակարդակից, իսկ եկամուտները՝ բնակարանների գներից (P_H): Ինչքան բարձր է բնակարանի հարաբերական գինը, այնքան մեծ են տուն կառուցելու խթանները և այնքան ակտիվ է բնակարանային շինարարությունը: Այսպիսով, նոր տների շինարարությունը, այսինքն՝ բնակարանային շինարարությունում ներդրումները կախված են բնակարանների շուկայի գների հավասարակշռված մեծությունից:

Բնակարանի պահանջարկի փոփոխության դեպքում փոխվում է բնակարանի գնի հավասարակշիռ մեծությունը, որն իր հերթին ազդում է բնակարանային շինարարությունում կատարվող ներդրումների վրա: Բնակարանի պահանջարկի կորը կարող է տեղաշարժվել շատ պատճառներով: Տնտեսական վերելքն ավելացնում է ազգային եկամուտը և համապատասխանաբար՝ բնակարանի պահանջարկը: Բնակչության զգալի ավելացումը, օրինակ, ներգաղթի պատճառով, նույնպես ավելացնում է բնակարանի պահանջարկը: 13.5ա գրաֆիկում ցույց է տրված, որ պահանջարկի կորի տեղաշարժն ավելացնում է հավասարակշիռ գինը: 13.5բ գրաֆիկում ցույց է տրված, որ բնակարանի գների աճն ավելացնում է ներդրումները բնակարանային շինարարությունում:

Բնակարանների պահանջարկի մեծացումը բարձրացնում է բնակարանի գները և ավելացնում ներդրումները բնակարանային շինարարությունում: Բնակարանների պահանջարկը որոշող կարևոր գործոններից մեկը իրական տոկոսադրույքն է: Շատերը վարկ են վերցնում՝ կառուցվող տունը գրավ դնելով՝ դրա ծախսերը ֆինանսավորելու համար: Տոկոսադրույքը հանդես է գալիս որպես վարկեր մարելու ծախքեր: Բնակարանային շինարարություն իրականացնողները արձագանքում են տոկոսադրույքի փոփոխությանը, որովհետև տոկոսադրույքը հանդես է գալիս որպես այլընտրանքային ծախս, այսինքն՝ արժե արդյոք փողը ներդնել բնակարան ձեռք բերելու համար, թե նպատակահարմար է պահել բանկում:

Ներդրումներ պաշարներում

Պաշարներում ներդրումները համարվում են ծախսերի ոչ մեծ բաղադրամասերից մեկը՝ ՀՀ ՀՆԱ մոտավորապես 1%-ը: Անկման ժամանակահատվածում ներդրումները պաշարներում դառնում են բացասական, որովհետև ձեռնարկությունները ապրանքները վաճառելուց հետո չեն ավելացնում իրենց պաշարները: Անկման ժամանակ ծախսերի կրճատման կեսից ավելին սովորաբար կապված է ներդրումների կրճատման հետ: Պաշարները ծառայում են շատ նպատակների: Մինչ

պաշարների մեջ ներդրումների տատանումների մոդելի վերլուծությանն անցնելը՝ քննարկենք ձեռնարկությունների՝ պաշարներ ստեղծելու որոշ դրդապատճառներ: Պաշարների ստեղծման պատճառներից մեկը արտադրության ծավալի տատանումների հարթեցումն է: Դիտարկենք մի ձեռնարկություն, որն ունենում է իրացման ծավալի ժամանակավոր թռիչքներ և անկում: Արտադրության ծավալը վաճառքի ծավալի տատանումներին համապատասխան փոփոխելու փոխարեն կարող է ավելի շահավետ լինել ապրանքների որոշակի քանակության կայուն արտադրությունը: Երբ վաճառքի ծավալը փոքր է, ձեռնարկությունը արտադրում է ավելի շատ, քան վաճառում է, իսկ ավելցուկային ապրանքները ձևավորում են պաշարները: Երբ վաճառքի ծավալն ավելի է, ձեռնարկությունը արտադրում է ավելի քիչ, քան վաճառում է, ուստի պաշարներից վերցնում է ապրանքներ: Պաշարների ստեղծման այսպիսի ձևը արտադրության տատանումները կանխելու նպատակ ունի: Պաշարների ստեղծման երկրորդ պատճառն այն է, որ դրանք ձեռնարկություններին հնարավորություն են ընձեռում գործելու ավելի արդյունավետ: Օրինակ, մանրածախ խանութները կարող են ապրանքն արդյունավետ վաճառել, եթե անմիջաբար տնօրինում են ապրանքները, որոնք կարելի է առաջարկել սպառողներին: Արտադրական ձեռնարկություններն ունեն որոշակի քանակությամբ պահեստամասեր, որպեսզի սարքավորումների ջարդվելու դեպքում կրճատեն հավաքման գծերի պարապուրդների ժամանակը: Որոշ իմաստով մենք կարող ենք պաշարները դիտարկել որպես արտադրության գործոն: Ձեռնարկությունը իր տրամադրության տակ ինչքան շատ պաշարներ ունենա, այնքան շատ պատրաստի արտադրանք կարող է արտադրել: Պաշարների ստեղծման երրորդ պատճառը վաճառքի անսպասելի մեծ ծավալի դեպքում ապրանքների պակասից խուսափելն է: Ձեռնարկություններին հաճախ հարկ է լինում արտադրությանը վերաբերող որոշումներ ընդունել՝ չիմանալով, թե ինչ ծավալի պահանջարկ է ներկայացվում: Օրինակ, հրատարակիչը որոշում է, թե նոր գրքի քանի օրինակ հրատարակի, չիմանալով՝ դա մեծ պահանջարկ կունենա, թե՝ ոչ: Եթե պահանջարկը գերազանցում է արտադրության ծավալը, ապա որոշակի ժամանակահատվածում ապրանքների պակաս կզգացվի, և ձեռնարկությունը կզրկվի իրացման հնարավորությունից և շահույթից: Պաշարների առկայությունը կարող է դա կանխել: Պաշարների ստեղծման չորրորդ պատճառը թելադրվում է հենց արտադրության գործընթացով: Շատ ապրանքներ անցնում են արտադրության մի քանի փուլեր, ուստի դրանց պատրաստման վրա ժամանակ է ծախսվում: Երբ ապրանքների արտադրությունը ավարտված չէ, դրա բաղադրիչները հաշվի են առնվում որպես ձեռնարկությունների պաշարների մաս: Այդ տեսակի պաշարները ստացել են անավարտ արտադրություն անվանումը:

Քանի որ պաշարների ստեղծման պատճառները շատ են, տնտեսագետները մշակել են պաշարների մեջ ներդրումների բազմաթիվ մոդելներ, որոնցից հետաքրքրություն է ներկայացնում պաշարների ակսելերատորի պարզ մոդելը: Չհիմնվելով պաշարների ստեղծման բացառապես մեկ պատճառի վրա, այն բավականին լավ բացատրում է վիճա-

կագրական տվյալները: Մոդելը ստեղծվել է մոտավորապես կես դար առաջ, և այն փորձել են օգտագործել բոլոր տեսակի ներդրումների վերլուծության համար:

Պաշարների ակսելերատորի մոդելում ենթադրվում է, որ ձեռնարկությունը տնօրինում է պաշարները՝ դրա թողարկման ծավալին համամասնորեն: Պաշարների ծավալի այս մոդելով որոշման պատճառները շատ են: Թողարկման մեծ ծավալի դեպքում արտադրական ձեռնարկություններում կուտակվում են շատ նյութեր՝ հետագա օգտագործման համար, և շատ արտադրանք է գտնվում անավարտ արտադրության փուլում: Երբ տնտեսությունը վերելք է ապրում, մանրածախ առևտրի ձեռնարկությունները գերադասում են վաճառասեղաններին ունենալ շատ ապրանքներ՝ դրանք ցուցադրելով գնորդներին:

Այսպիսով, եթե N-ը պաշարների մեծությունն է, իսկ Y- ը՝ թողարկումը, ապա՝

$$N = \beta \times y,$$

որտեղ՝ β-ն պարամետր է, որը ցույց է տալիս, թե ինչ քանակությամբ պաշարներ է ցանկանում ունենալ ձեռնարկությունը թողարկման միավորի համար: Պաշարների մեջ ներդրումները (I) հավասար են պաշարների ծավալի փոփոխությանը (ΔN) : Այսպիսով՝

$$I = \Delta N = \beta \times \Delta y$$

Ակսելերատորի մոդելից հետևում է, որ պաշարներում ներդրումները համամասնական են թողարկման փոփոխություններին: Երբ ձեռնարկությունների թողարկումն ավելանում է, նրանք ցանկանում են ավելացնել պաշարները և իրականացնում են անհրաժեշտ ներդրումներ: Իսկ թողարկման նվազման դեպքում ձեռնարկությունները ցանկանում են կրճատել պաշարները և չեն իրականացնում ներդրումներ: Այլ խոսքով՝ թույլ են տալիս, որ պաշարները կրճատվեն:

Քանի որ y փոփոխականը ձեռնարկության ապրանքների արտադրության արագությունն է, ապա Δy–ը արտադրության «արագացումն է»: Այսպիսով, մոդելից երևում է, որ պաշարներում ներդրումները կախված են տնտեսության զարգացման տեմպերից:

13.8. Ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատումը

Բոլոր ձեռնարկություններն այս կամ այն չափով առնչվում են ներդրումային գործունեությանը: Ներդրումների վերաբերյալ որոշումների ընդունումը բարդանում է՝ կապված տարբեր հանգամանքների հետ: Առանձնապես դա պայմանավորված է ներդրումների տեսակներով, ներդրումային նախագծերի արժեքով, մատչելի նախագծերի բազմությամբ, ֆինանսական ռեսուրսների սահմանափակությամբ, ներդրումային այս կամ այն համարձակ որոշումների ընդունմամբ:

Ներդրումային նախագծի տնտեսական արդյունավետության գնահատումը մինչներդրումային հետազոտության ամենապատասխանատու փուլերից մեկն է: Այն ներառում է տեխնիկատնտեսական տեղեկատվության մանրամասն վերլուծությունը և գնահատումը: Մինչև շուկայական հարաբերություններին անցնելը Հայաստանում կապիտալ ներդրումների և արտադրական շինարարության տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդները կիրառվում էին վարչահրամայական կենտրոնացված պլանային տնտեսության կարգավորման նպատակով: Դրա հիմքում ամբողջ երկրի կապիտալ ներդրումների ժողովրդատնտեսական արդյունավետության չափանիշն էր՝ ազգային եկամտի հավելաճը (համադրելի գներով) հարաբերվում էր այդ աճը ապահովող կապիտալ ներդրումներին, իսկ կառավարման մյուս մակարդակներում չափանիշը զուտ արտադրանքի և այդ աճը ապահովող կապիտալ ներդրումների հարաբերությունն էր: Կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության չափանիշը կոնկրետացվել է ընդհանուր (բացարձակ) և համեմատելի տնտեսական արդյունավետության որոշման համար հաշվարկված ցուցանիշների մեջ: Շուկայական հարաբերությունների պայմաններում ներդրումային նախագծերի տնտեսական արդյունավետության որոշման համար օգտագործվում են նաև այլ չափանիշներ և մեթոդներ: Շուկայական տնտեսությամբ զարգացած երկրներում մշակվել և լայնորեն օգտագործվում են ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատման բազմաթիվ ցուցանիշներ: Այդ ցուցանիշներն առավելապես հիմնված են շահութաբերության համեմատման վրա: Այս դեպքում որպես դիտարկվող տարբերակ են հանդես գալիս ուրիշ արտադրական օբյեկտներում, ինչպես նաև բանկերում կամ էլ արժեթղթերի մեջ ֆինանսական ներդրումները: Ֆինանսական վերլուծության տեսանկյունից ներդրումային նախագծերի իրականացումը կարելի է ներկայացնել որպես երկու փոխկապակցված գործընթաց: Արտադրական օբյեկտների ստեղծման նպատակով ներդրումային (կամ կապիտալի կուտակում) և ներդրված միջոցներից եկամուտների ստացման գործընթաց: Այս երկու գործընթացները ընթանում են հաջորդաբար կամ որոշակի ժամանակահատվածում՝ զուգահեռաբար: Վերջին դեպքում ենթադրվում է, որ ներդրումահատույցը սկսվում է մինչև ներդրման ավարտի պահը: Երկու գործընթացներն էլ ըստ ժամանակի ինտենսիվության ունեն տարբեր բաշխում, որը զգալի չափով որոշում է ներդրումների արդյունավետությունը:

Ներդրումային գործընթացում ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատումը համարվում է ամենապատասխանատու փուլերից մեկը: Թե որքան օբյեկտիվ և բազմակողմանի է այդ գնահատումը, կախված է ներդրված կապիտալից ստացվող շահույթից, դրա այլընտրանքային օգտագործումից և փոխհատուցման ժամկետից: Գնահատման այդ օբյեկտիվությունը և բազմակողմանիությունը զգալի չափով պայմանավորված են ժամանակակից մեթոդների օգտագործմամբ:

Այդ նպատակով դիտարկենք իրական ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատման սկզբունքները և մեթոդական մոտե-

ցումները: Իրական ներդրումային նախագծերի տնտեսական արդյունավետության գնահատումը իրականացվում է մի կողմից՝ ներդրումային ծախսերի ծավալի, մյուս կողմից՝ ներդրվող կապիտալի վերադարձվող գումարի և ժամկետների համեմատման հիման վրա: Արդյունավետությունը գնահատող ցուցանիշները ձևավորող համակարգի այդ ընդհանուր սկզբունքին համապատասխան՝ ցանկացած գործունեության արդյունքները և դրա իրականացման ծախսերի օգտագործվող ռեսուրսները պետք է լինեն համադրելի: Ներդրումային ծախսերի տնտեսական գնահատումը ընդգրկում է նախագծի իրականացման համար օգտագործվող ռեսուրսների ամբողջությունը: Գնահատման ընթացքում հաշվի են առնվում կապիտալի (սեփական և փոխառու) ուղղակի և անուղղակի բոլոր ծախսերը, նյութական և ոչ նյութական ակտիվները, աշխատանքային և մյուս տեսակի ռեսուրսները: Ժամանակակից պրակտիկան վկայում է, որ ներդրումային ծախսերի գնահատումը մեծամասամբ չի արտահայտում նախագծի իրականացման նախապատրաստական ու հսկողության, ինչպես նաև ներդրումային ռեսուրսների անհրաժեշտ ծավալների ձևավորման հետ կապված անուղղակի ծախսերը: Դա թույլ չի տալիս իրականացնելու ներդրումային նախագծերի համեմատելի արդյունավետության գնահատումը:

Ներդրվող կապիտալի վերադարձման գնահատումը իրականացվում է «փողի զուտ հոսքերի» ցուցանիշի հիման վրա: Այդ ցուցանիշը ձևավորվում է ներդրումային նախագծերի շահագործման ընթացքում զուտ շահույթի և ամորտիզացիայի հատկացումների գումարների հաշվին: Տարբեր տեսակի գնահատումներ կատարելիս այդ ցուցանիշը դիտարկվում է որպես միջին տարեկան մեծություն, ինչպես նաև տարբերակվում է ներդրումային նախագծերի շահագործման առանձին ժամկետներով:

Գնահատման ընթացքում ներդրումային ծախսերի գումարը և փողի զուտ հոսքերը բերվում են ներկա պահի արժեքի: Շատ դեպքերում ներդրումային գործընթացը իրականացվում է մի շարք փուլերով: Դրա համար էլ, բացառությամբ առաջին փուլի, ներդրումային հաջորդ բոլոր ծախսումները բերվում են ներկա պահի արժեքին՝ տարբերակելով ներդրման յուրաքանչյուր հաջորդ փուլը: Ներկա արժեքի է բերվում նաև փողի զուտ հոսքի գումարը:

Առանձին ցուցանիշներ ներկա արժեքի բերելիս զեղչատոկոսի ընտրությունը տարբեր ներդրումային նախագծերի համար տարբերակված է լինում: Տարբերակելիս հաշվի են առնվում ռիսկը, իրացվելիությունը և իրական ներդրումային նախագծի առանձնահատուկ բնութագրերը:

Իրական ներդրումային նախագծերի տնտեսական արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշներն են.

- բերված զուտ արդյունքը,
- եկամտաբերության ինդեքսը,
- ներդրումների հետգնման ժամկետը,
- ներդրումների արդյունավետության գործակիցը:

Բերված զուտ արդյունքի ցուցանիշը թույլ է տալիս ստանալ ներդրումային վերջնական արդյունքի բնութագիրը՝ բացարձակ գումարով և արտահայտում է ներդրումային նախագծի շահագործման ժամանակահատվածում փողի զուտ հոսքերի ներկա արժեքի և դրա իրացման ծախսերի գումարների բացարձակ տարբերությունը: Փողի զուտ հոսքերի ներկա (ընթացիկ) արժեքը որոշելիս օգտագործվում է եկամուտների կապիտալացման մեթոդը: Այս մեթոդով կապիտալի իրական (ընթացիկ) արժեքը որոշվում է այդ կապիտալը տնօրինող ներդրողների՝ փողի սպասվելիք հոսքերի հիման վրա: Քանի որ այդ հոսքը սպասվում է ապագայում, ուստի դրա մեծությունը ճշգրտվում է զեղչման դրույքի օգնությամբ: Այս ձևով փողի հոսքի բերված արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$PV = \frac{C_1}{(1+k)} + \frac{C_2}{(1+k)^2} + \frac{C_3}{(1+k)^3} + ... = \sum_{t=1}^{\infty} \frac{C_t}{(1+k)^t}$$

որտեղ՝

PV-ն՝ դրամամուտքերի ընթացիկ արժեքն է,

C_t-ն՝ կապիտալի հետ կապված՝ փողի սպասվող հոսքերը,

K-ն՝ զեղչման դրույքը:

Բերված զուտ արդյունքը կլինի դրամամուտքերի և սկզբնական ներդրումների տարբերությունը.

$$NPV = \sum_{t=1}^{\infty} \frac{C_t}{(1+k)^t} - I_C$$

որտեղ՝

I_c-ն սկզբնական միանվագ ներդրումներն են: Եթե նախագիծը պահանջում է ոչ միանվագ ներդրումներ, ապա t տարիների ընթացքում ֆինանսական ռեսուրսները հաջորդաբար ներդնելիս բերված զուտ արդյունքը (NPV) հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$NPV = \sum_{t=1}^{\infty} \frac{C_t}{(1+k)^t} - \sum_{j=1}^{\infty} \frac{Ic}{(1+i)^j}$$

որտեղ՝

i-ն՝ ներդրումներից կանխատեսվող եկամտաբերության միջին մեծությունն է:

Եթե փողի զուտ հոսքերի գումարը հաշվարկելիս նախագծի շահագործման ամբողջ ժամանակահատվածի հաշվարկը դժվարանում է, ապա հաշվարկներում այն ընդունվում է հինգ տարի:

Երկարատև ներդրումների առանձին տարբերակներից ստացվող եկամտաբերությունը գնահատելիս և առավել նպատակահարմար տարբերակը ընտրելիս օգտագործվում է նաև ներդրումների եկամտաբերության ինդեքսը: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$P_i = \sum_{t=1}^{\infty} \frac{C_t}{(1+k)^t} \div I_C$$

Եթե.

P_i >1, նախագիծը ընդունվում է,

P_i <1, նախագիծը մերժվում է,

P_i=1, նախագիծը օպտիմալ է:

Բերված զուտ արդյունքի և եկամտաբերության ինդեքսի ցուցանիշները օգտագործվում են ոչ միայն իրական ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատման համար, այլև ծառայում են որպես ներդրումային նախագծերի իրականացման նպատակահարմարության չափանիշ:

Ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատման ամենատարածված և պարզ ցուցանիշներից է ներդրումների հետգնման ժամկետի ցուցանիշը: Այս ցուցանիշը ցույց է տալիս այն ժամկետը, որի ընթացքում դրամամուտքերի գումարը հավասարվում է ներդրված միջոցների գումարին: Եթե դրամամուտքերը ամենամյա են և հավասար մեծությամբ, ապա հետգնման ժամկետը հավասար կլինի. $T_0 = I_C / C_t$

որտեղ՝

I_c-ն՝ միանվագ ներդրումների գումարն է,

C_t-ն՝ ամենամյա դրամամուտքերի գումարը:

Եթե դրամամուտքերը կատարվում են տարբեր ժամկետներում, և գումարները տարբեր են, ապա հետգնման ժամկետը կարող է որոշվել հաջորդական հաշվարկումների միջոցով: Եթե եկամուտները հավասարաչափ բաշխված են ըստ տարիների, ապա հետգնման ժամկետը հաշվարկվում է միանվագ ծախսերը բաժանելով այդ ծախսերով պայմանավորված տարեկան եկամուտների վրա:

Եթե եկամուտները (շահույթը) բաշխված են անհավասարաչափ, հետգնման ժամկետը հաշվարկվում է ուղղակիորեն այն տարիների քանակով, որի ընթացքում կուտակվող եկամուտների հաշվին կատարված ներդրումները մարվում են:

Ընդհանուր բանաձևը կլինի.

$$\sum_{t=1}^{n} C_t > I_C$$

որտեղ՝

C_t –ն՝ ըստ տարիների կուտակված եկամուտներն են,

I_c – ն՝ նախնական ներդրումները:

Ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատման կարևոր ցուցանիշ է նաև ներդրումների արդյունավետության գործակիցը: Այս ցուցանիշի հաշվարկումն ունի երկու բնորոշ գիծ. նախ՝ չի ենթադրում եկամտի ցուցանիշների զեղչում, երկրորդ՝ եկամուտը բնութագրվում է զուտ շահույթի (հաշվարկային շահույթ՝ հանած հատկացումները պետբյուջին) ցուցանիշով: Հաշվարկման ալգորիթմը բացարձակապես պարզ

է, ինչով և պայմանավորված է գործնական կիրառությունը: Ներդրումների արդյունավետության գործակիցը հաշվարկվում է միջին տարեկան շահույթը բաժանելով ներդրումների միջին մեծության վրա:

Ներդրումների միջին մեծությունը հավասար է՝ այդ ներդրումների ելակետային գումարը բաժանած երկուսի, եթե ենթադրվում է, որ դիտարկվող նախագծի իրացման ժամկետի ավարտով բոլոր կապիտալ ծախսերը դուրս են գրվելու: Մնացորդի առկայության դեպքում այն հանվում է ելակետային ներդրումներից՝ գնահատման գումարով:

Ներդրումների արդյունավետության գործակիցը (ARR) հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$ARR = \frac{\text{միջին տարեկան շահույթ}}{1/2(I_C - RV)}$$

որտեղ՝ RV- ն կապիտալի լուծարային արժեքն է:

Ամփոփում

1. Մակրոտնտեսական առումով՝ ներդրումները երկրի համախառն ներքին արդյունքի մի մասն են, որոնք ընթացիկ ժամանակաշրջանում չեն սպառվում և տնտեսության մեջ ապահովում են տնտեսական աճ:

2. Ներդրումային քաղաքականությունը ներդրումային գործունեության պետական կարգավորման գործընթաց է, ներդրումների հոսքերի ակտիվացմանը և խթանմանն ուղղված միջոցառումների ամբողջություն:

3. Նոր ներդրումային ռեժիմին անցումը կապված է փոփոխվող տնտեսական պայմաններին համապատասխանող նոր ներդրումային քաղաքականության մշակման հետ:

   Ներդրումային քաղաքականության հիմնական ուղղություններն են.

   - ներդրումային գործընթացի ապակենտրոնացումը,
   - անվերադարձ ֆինանսավորումից վարկավորմանն անցումը,
   - կարևոր արտադրություններում, սոցիալական ոլորտներում և հասարակական նշանակության սուբյեկտներում պետության՝ որպես անմիջական ներդրողի դերի ուժեղացումը,

4. ՀՀ տնտեսության ներդրումային ոլորտում պետության դերի ուժեղացումը պետք է կենտրոնացվի պետական ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման վրա՝ միաժամանակ պահպանելով շուկայական ազատությունը և մասնավոր ներդրումների խթանումը:

5. Պետական հարկային օրենսդրությունը կարող է ազդեցություն ունենալ ներդրումների խթանման վրա: Ձեռնարկությունների շահույթի վրա հարկը արգելակում է ներդրումները, իսկ ներդրումային հարկային վարկը խթանում է դրանք:

6. Նոր դասական մոդելի ներկայացման այլընտրանքային եղանակը համարվում է այն բանի հաստատումը, որ ներդրումները կախված են Տոբինի q-ից՝ տեղակայված կապիտալի շուկայական արժեքի և դրա վերականգնման արժեքի հարաբերությունից: Այդ հարաբերակցությունը արտահայտում է կապիտալի ընթացիկ և սպասվող շահութաբերությունը:

7. Կապիտալի սահմանային արդյունքը որոշում է դրա իրական գինը: Իրական տոկոսադրույքը, ամորտիզացիայի նորմը և ներդրումային ապրանքների հարաբերական գները որոշում են միավոր կապիտալին բաժին ընկնող ծախքերը: Նոր դասական մոդելին համապատասխան՝ ձեռնարկությունները իրականացնում են ներդրումներ, եթե կապիտալի վարձակալման գինը գերազանցում է միավոր կապիտալին բաժին ընկնող ծախսերը և դադարեցնում են ներդրումները, եթե վարձակալման գինը փոքր է միավոր կապիտալի ծախքերից:

8. Ներդրումները բնակարանային շինարարությունում կախված են բնակարանի հարաբերական գնից: Բնակարանի պահանջարկի ավելացումը, տոկոսադրույքի իջեցման հետ կապված, բարձրացնում է բնակարանի գները և հանգեցնում բնակարանային շինարարության ներդրումների աճի:

9. Գոյություն ունեն մի շարք պատճառներ, որոնք ձեռնարկություններին խթանում են ստեղծելու ապրանքների պաշարներ: Պաշարների ստեղծման բոլոր հանգամանքները հաշվի առնող մոդելներից մեկը ակսելերատորի մոդելն է, որին համապատասխան՝ պաշարների ծավալը համամասնական է ՀՆԱ-ին:

10. Ձեղչման հիման վրա հաշվարկված ցուցանիշները տեսականորեն ավելի հիմնավորված են, որովհետև հաշվի են առնում ինչպես դրամական հոսքերի, այնպես էլ ծախսերի բաղադրիչները, սակայն շատ աշխատատար են:

11. Ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգում գերադասելի է բերված զուտ արդյունքի ցուցանիշը: Ներդրումային նախագիծն ընդունելիս տրվում է ձեռնարկության կապիտալի աճի հավանական գնահատականը: Այս ցուցանիշը լիովին համապատասխանում է ձեռնարկության գործունեության հիմնական նպատակին՝ տնտեսական ներուժի աճին:

12. Հետգնման ժամկետի վրա հիմնված մեթոդի կիրառումը նպատակահարմար է այն դեպքում, երբ ձեռնարկության ղեկավարությունը մտահոգված է լուծելու իրացվելիության հիմնախնդիրը, այլ ոչ թե ապահովելու նախագծի բարձր շահութաբերությունը: Այս դեպքում գլխավոր է դառնում ներդրումների արագ փոխհատուցման հարցը:

Թեստեր և խնդիրներ

1. ***Նշվածները համարվում են տվյալ երկրի ներդրումային ծախսեր, բացի.***
   ա. պետական կապիտալ ներդրումներից,
   բ. բնակարանային շինարարության մեջ կատարվող ներդրումներից,
   գ. հիմնական ֆոնդերում ներդրումներից,
   դ. պաշարներում ներդրումներից:

2. ***Կապիտալը վարձակալող ընկերության համար ծախս չի հանդիսանում.***
   ա. կորցրած տոկոսը, որը նա կարող էր ստանալ իր կապիտալը բանկում դնելու դեպքում,
   բ. մաշվածքը և կապիտալի կորուստը,
   գ. աշխատողների աշխատավարձը,
   դ. ակտիվների գնից կախված՝ կապիտալի կորուստը և հասույթը:

3. ***Եթե արտադրական ֆունկցիան ունի Կոբբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայի տեսքը, ապա կապիտալի պաշարի ավելացման դեպքում կապիտալի վարձակալման իրական գինը.***
   ա. կիջնի,
   բ. կմնա նույնը,
   գ. կբարձրանա ավելի մեծ համամասնությամբ, քան կապիտալի պաշարը,
   դ. կբարձրանա ավելի փոքր համամասնությամբ, քան կապիտալի պաշարը:

4. ***Կապիտալի պաշարի փոփոխությունը, որը կոչվում է զուտ ներդրումներ, ուղիղ համամասնորեն կախված է.***
   ա. ինֆլյացիայի մակարդակից,
   բ. շահույթի մակարդակից,
   գ. անվանական տոկոսադրույքից,
   դ. կորպորացիաների կողմից վճարվող հարկերի մակարդակից:

5. ***Տոբինի գործակիցը.***
   ա. կապիտալի շուկայական արժեքի հարաբերությունն է կապիտալի վերականգնման արժեքին,
   բ. կապիտալի բերած շահույթի հարաբերությունն է կապիտալի արժեքին,
   գ. կապիտալի վարձակալման վճարի հարաբերությունն է կապիտալի վերանորոգման արժեքին,
   դ. կապիտալի բերած շահույթի հարաբերությունն է կապիտալի սահմանային արդյունքի արժեքին:

6. ***Պաշարներում կատարվող ներդրումների ակսելերատորի մոդելում ընդունվում է, որ ֆիրմայի ապրանքանյութական պաշարները.***
   ա. կայուն են,

բ. թողարկման կայուն մասն են,
գ. թողարկման այն մասն են, որը պակասում է արտադրության ավելացման դեպքում,
դ. թողարկման այն մասն են, որն ավելանում է արտադրանքի ավելացման դեպքում:

7. Թվարկվածներից ո՞րն է վերաբերում ազգային հաշիվների համակարգի «ներդրումներ» հասկացությանը.

ա. փոխառության պարտատոմսերի ցանկացած գնումը,
բ. կուտակված եկամտի ցանկացած քանակությունը, որը չի ուղղվում խնայողությանը,
գ. բաժնետոմսերի ցանկացած գնումը,
դ. բոլոր տարբերակները սխալ են:

8. Աղյուսակներում բերված երկու ներդրումային նախագծերի տվյալների հիման վրա որոշել փողի զուտ հոսքերի գումարը, նախագծի շահագործման ամբողջ ժամանակահատվածում դիսկոնտային գործակիցը, ներկա արժեքը, շահույթի ներքին նորմը, եկամտաբերության ինդեքսը և փոխհատուցման ժամկետը:

Ներդրումային նախագծերի ելակետային տվյալները

Ցուցանիշներ	*Ներդրումային նախագծեր*	
	1	*2*
ներդրումների ծավալը, մլն դրամ	*1500*	*1700*
ներդրումային նախագծերի շահագործման ժամանակը, տարի	*3*	*4*
դրամական հոսքերի գումարը, մլն դրամ	*2300*	*2600*
այդ թվում՝ ըստ տարիների *առաջին 1* *երկրորդ 2* *երրորդ 3* *չորրորդ 4*	 *1300* *600* *400* *-*	 *500* *700* *700* *700*
դիսկոնտային դրույքը, %	*10*	*12*
ինֆլյացիայի միջին տարեկան տեմպը, %	*9*	*9*

Որոշել ներդրումային նախագծերի դիսկոնտային գործակիցը և ընթացիկ արժեքը.

	N_1 ներդրումային նախագիծ	*N_2 ներդրումային նախագիծ*

	գալիք արժեքը	դիսկոնտ. գործակ. 10%-ի դեպքում	ներկա արժեքը	գալիք արժեքը	դիսկոնտ. գործակ. 12%-ի դեպքում	ներկա արժեքը
1	1300	0.909	1282	500	0.893	447
2	600	0.826	496	700	0.797	558
3	400	0.752	301	700	0.712	498
4	-	-	-	700	0.636	445
ընդամենը	2300	-	2079	2600	-	1948

Ծանոթություն: Դիսկոնտավորման գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$K_գ = \frac{1}{(1+K)^t}$$

որտեղ՝ K- դիսկոնտային դրույքն է, t – տարիների թիվը:

9. Ենթադրենք՝ ձեռնարկությունը քննարկում է նոր տեխնոլոգիական գծի ձեռքբերման նպատակահարմարությունը: Գծի արժեքը 10 մլն դոլար է, շահագործման ժամկետը՝ 5 տարի, սարքավորումների մաշվածությունը՝ տարեկան 20%:

Ցուցանիշներ	Տարիներ				
	1	2	3	4	5
իրացման ծավալը	6800	7400	8200	8000	5000
ընթացիկ ծախսեր	3400	3502	3607	3715	3827
մաշվածք	2000	2000	2000	2000	2000
հարկվող շահույթ (1-(2+3)	1400	1898	2593	2285	173
շահութահարկ	420	569	778	686	52
զուտ շահույթ (4-5)	980	1329	1815	1599	121
զուտ դրամական հոսքեր (3+6)	2980	3329	3815	3599	2121
K_1=10% K_2=20%					

Հաշվել.

ա) զուտ բերված արդյունքը,
բ) հաշվել ներդրումների եկամտաբերության ինդեքսը,
դ) ծախսածածկման ժամկետը:

10. Ենթադրենք՝ ձեռնարկությունը ձեռք է բերել մի հաստոց, որի դիսկոնտային արժեքը 5540 դոլար է: Այս դեպքում իմաստ ունի հաստոցը գնել 5600 դոլարով, եթե ձեռնարկությունը մտադիր է 3 տարի շահագործելով՝ ստանալ 6500 դոլարի եկամուտ: Հակառակ դեպքում պարզապես իմաստ չունի գնել հաստոցը:
Հաստոցի շահագործումից ստացված եկամուտը կարելի է դնել բանկ 8 տոկոսով և ստանալ լրացուցիչ եկամուտ, պայմանականորեն առաջին տարին՝ 15000 ԱՄՆ դոլար, իսկ երկրորդ տարին՝ 3000 ԱՄՆ դոլար: Արդյոք նպատակահարմար է գնել հաստոցը 5600 դոլարով, թե այդ գումարը շահավետ է դնել բանկ:

Հիմնական հասկացություններ

Ներդրումային գործունեություն
Իրական և ֆինանսական ներդրումներ
Ներդրումային քաղաքականություն
Ներդրումներ հիմնական ֆոնդերում
Բնակարանային ներդրումներ
Ներդրումներ պաշարներում
Կապիտալի իրական ծախքեր
Զուտ ներդրումներ
Ներդրումային հարկային վարկ
Տոբինի ցուցանիշ
Ակսելերատորի մոդել

Հարցեր կրկնության համար

1. Բնորոշեք ներդրումներ հասկացությունը մակրոտնտեսական առումով: Ինչպե՞ս են դրանք կապված ազգային խնայողությունների հետ:
2. Նկարագրեք ներդրումների և կապիտալի միջև գոյություն ունեցող կապը:
3. Բնութագրեք ներդրումներ հասկացությունը ֆինանսական և տնտեսագիտական առումով:
4. Թվարկեք ներդրումային գործունեության մեջ պետության ակտիվ մասնակցության մեթոդները:
5. Թվարկեք ներդրումային քաղաքականության էությունը արտահայտող խնդիրները:
6. Թվարկեք ներդրումային քաղաքականության տարրերը:
7. Որո՞նք են ներդրումների ֆինանսավորման աղբյուրները:
8. Բերեք հարկային օրենսդրության փոփոխության օրինակներ, որոնք նպաստում են մասնավոր խնայողությունների ավելացմանը:
9. Ի՞նչ է նշանակում Տոբինի q և ինչպե՞ս է կապված ներդրումների հետ:
10. Ինչպիսի՞ պայմանների դեպքում է ձեռնարկությանը շահավետ ավելացնել կապիտալի պաշարը (ձեռնարկության հիմնական ֆոնդերում ներդրումների նոր դասական մոդելի շրջանակներում):
11. Թվարկեք այն 4 պատճառները, ըստ որոնց ձեռնարկությունները ստեղծում են պաշարներ:
12. Թվարկեք ներդրումների տնտեսական արդյունավետությունը գնահատող ցուցանիշները:

ԳԼՈՒԽ 14

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- ՀՀ սոցիալական համակարգի կառուցվածքը:
- Բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները:
- Բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրները:
- Բնակչության իրական եկամուտների հաշվարկման կարգը:
- Կրթության պետական քաղաքականության խնդիրները:
- Առողջապահության պետական կարգավորման խնդիրները:
- Մշակույթի և սպորտի զարգացման խնդիրները:

14.1. ՀՀ սոցիալական համակարգը

Տնտեսության սոցիալական ոլորտը ներկայացնում է կենսական բարիքների սպառման միջոցով վերջնական պահանջմունքների բավարարման գործընթացը, որն ապահովում է տնային տնտեսությունների անհրաժեշտ կենսապայմանները:

Սոցիալական ոլորտը ներառում է այն գործընթացները, օբյեկտները, որոնք անմիջականորեն կապված են կամ վերաբերում են մարդկանց կենսաձևին, հասարակության նյութական և հոգևոր բարիքների սպառմանը, մարդու, ընտանիքի վերջնական պահանջմունքների բավարարմանը:

Սոցիալական ոլորտը հասարակության գլխավոր արտադրողական ուժի՝ մարդու միջոցով մեծապես ազդում է հասարակական արտադրության վրա: Այդ ազդեցությունը տեղի է ունենում, երբ բարձրանում է հասարակության անդամների կրթական, մշակութային մակարդակը, նվազում են հիվանդությունները, կրճատվում են աշխատաժամանակի կորուստները, բարելավվում են սոցիալ-կենցաղային կամ բնակարանային պայմանները, մեծանում է զբաղվածությունը, զարգանում է մանկական նախադպրոցական ցանցը և այլն: Սոցիալական ոլորտի ճյուղերի զարգացումը նպաստում է բնակչության բարեկեցության բարձրացմանը: Այսպիսով, այն ամենը ինչը անմիջականորեն առնչվում է մարդկանց բարեկեցությանը, իրենից ներկայացնում է տնտեսության սոցիալական բնագավառը:

Ըստ պահանջմունքների բավարարման բնույթի, այս ոլորտի ճյուղերը ընդունված է բաժանել երկու խմբի: Առաջինում այն ճյուղերն են, որոնց գործունեությունն ուղղված է մարդու սոցիալ-մշակութային, հոգևոր, մտավոր պահանջմունքների բավարարմանը, բնականոն կենսա-

գործունեության ապահովմանը (առողջապահություն, գիտություն, կրթություն, մշակույթ, արվեստ, ֆիզկուլտուրա և սպորտ): Երկրորդն ընդգրկում է այն ճյուղերը, որոնց գործունեության նպատակն է նյութական բարիքների ստեղծման գործընթացի ավարտը և դրանք սպառողին հասցնելը (մանրածախ առևտուր, հանրային սնունդ, բնակարանային-կոմունալ տնտեսություն, բնակչության կենցաղային սպասարկում):

Փոխանակելով իր եկամտի մի մասը, բնակչությունը ստանում է հատուկ սպառողական արժեք՝ ծառայություններ: Շուկայական տնտեսության պայմաններում բնակչությանը մատուցվող ծառայությունները կարող են լինել վճարովի և անվճար: Հասարակական բարիքների ձևով տրամադրվող անվճար ծառայությունները իրականացնում է պետությունը (կրթություն, հասարակական կարգի պահպանություն, քաղաքների բարեկարգում, առողջապահություն, գրադարան, սպորտ):

Սոցիալական ոլորտի ծառայություններ են մատուցում սեփականության տարբեր ձևի պայմաններում գործող կազմակերպությունները, որոնց գործունեության պետական կարգավորումը իրականացվում է տարբեր շրջանակներում:

Սոցիալական ոլորտի զարգացման պետական քաղաքականության հիմքերի մշակումը, այդ ոլորտը կարգավորող օրենքների ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը կառավարման պետական մարմինների իրավասությունն է:

Սոցիալական ոլորտի զարգացման հարցերի մեծ մասը (կրթություն, առողջապահություն, մշակույթ, բնության և շրջակա միջավայրի պահպանություն, աշխատանք և զբաղվածություն) կարգավորվում է և՛ պետական կառավարման, և՛ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Սոցիալական որոշ բնագավառներ կարող են անմիջաբար կարգավորվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից (բնակարանային կոմունալ տնտեսություն, առևտուր և հանրային սնունդ, բնակչության կենցաղային սպասարկում):

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման շրջանակներում գործող սոցիալական ենթակառուցվածքի ճյուղերի զարգացման քաղաքականությունը ներառում է միջոցառումների մի ամբողջ համակարգ: Այն ուղղված է սոցիալական ոլորտի լիարժեք պետական աջակցության հնարավորությունների ստեղծմանը, սոցիալական պաշտպանության համակարգի պետական նպատակային ծրագրերի իրականացմանը նպաստող նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը:

Երկրի սոցիալական պաշտպանության համակարգի նպատակը յուրաքանչյուր քաղաքացու համար այնպիսի պայմանների ապահովումն է, որոնք կենսագործունեության, առողջությունը պահպանելու, ինչպես նաև գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, ծերության, կերակրողին կորցնելու և մի շարք այլ դեպքերում երաշխավորում են անհրաժեշտ նվազագույն միջոցներ:

Սոցիալական պաշտպանությունը իրականացվում է երկրի ողջ բնակչության համար: Լայն իմաստով սոցիալական պաշտպանությունը հասա-

րական հարաբերությունների համակարգ է, որն ուղղված է մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների և երաշխիքների ապահովմանը:

Սոցիալական ապահովության նպատակն է օգնել ծանր սոցիալական կացության մեջ հայտնված մարդկանց կամ կանխել հնարավոր դժվարությունները:

Հասարակության մեջ միշտ էլ կան արտադրական գործընթացներից կտրված մարդիկ, այդ թվում՝ երեխաներ, ծերեր, հաշմանդամներ, ինչպես նաև այնպիսիք, ովքեր ցանկանում են աշխատել, սակայն մրցունակ չեն և աշխատանք չեն գտնում: Նման մարդիկ սոցիալական ապահովության կարիք ունեն:

Երկրում առաջացած սոցիալական հիմնահարցերի լուծման, ՀՀ սոցիալական ամբողջ համակարգը՝ սոցիալական ապահովության և սոցիալական ենթակառուցվածքի ճյուղերի ոլորտը կարգավորելու նպատակով հանրապետությունում ընթացել են կառավարման համակարգի բարեփոխումներ և մշակվել ու ընդունվել են բազմաթիվ օրենսդրական ակտեր:

Պետությունը սոցիալական գործառույթներ է իրականացնում իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների միջոցով:

Իշխանության պետական մարմինները սոցիալական երաշխիքների միջոցով ապահովում են բնակչության աշխատանքային իրավունքը, աշխատանքի նորմալ պայմանները, աշխատավարձի նվազագույն մակարդակը, նորմալ աշխատանքային օրվա տևողությունը, հանգիստը, առողջության պահպանումը, կրթությունը, կենսաթոշակային ապահովումը և այլն: Սոցիալական երաշխիքներին զուգահեռ, սոցիալական պաշտպանության կարևոր ձև է սոցիալական ապահովագրությունը: Դրա հիմնական խնդիրն է ռիսկի այս կամ այն ձևի կանխարգելումը և նվազեցումը: Այն տարածվում է տնտեսապես ակտիվ բնակչության վրա և ֆինանսավորվում է նրանց եկամուտների հաշվին:

Սոցիալական քաղաքականության հիմնական խնդիրներից է եկամուտների վերաբաշխումը՝ բնակչությանը որոշակի սոցիալական վտանգներից պաշտպանելու համար: Պետությունն այդ պարտականությունը հիմնականում իրականացնում է կենսաթոշակային ապահովության միջոցով՝ այդ նպատակի համար ծախսերը կատարելով տնտեսության զարգացմանը համապատասխան:

ՀՀ կառավարությունը սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի միջոցով իրականացնում է պարտադիր սոցիալական ապահովագրության պետական ծրագիր: Այդ հիմնադրամի նպատակն է հավաքագրել պարտադիր սոցիալական վճարները և իրականացնել կենսաթոշակների վճարում:

Պետական սոցիալական ապահովագրությանն օժանդակող գործընթաց կարող է լինել ոչ պետական, կամավոր կենսաթոշակային ապահովագրական համակարգերի ներդրումը: Շուկայական հարաբերություններին անցման հետևանքով առաջացած բացասական երևույթները կարող են մեղմվել, եթե հնարավոր լինի լրիվ անցնել սոցիալական ապահովագրության համակարգին, որը հենվում է սերունդների հասարակական համերաշխության վրա:

Այս համակարգի սկզբունքներից առաջինն այն է, որ սոցիալական ապահովագրությունը, չբացառելով համանման ոչ պետական կազմակերպությունների գործունեությունը (որոնք պետք է գործեն կամավորության սկզբունքով), պետք է լինի պետական կառույց: Հայտնի է, որ բնակչության սոցիալական նվազագույն պահանջմունքները բավարարում և սոցիալական առաջնահերթ հարցերը լուծում է պետությունը: Մյուս սկզբունքն այն է, որ սոցիալական ապահովագրությունը պետք է բոլոր քաղաքացիների (սկսած աշխատունակ տարիքից) համար լինի պարտադիր, որն էլ հենց սերունդների համերաշխության երաշխիքն է: Երրորդ սկզբունքն այն է, որ սոցիալական ապահովագրության մուծումներ պետք է անեն ոչ միայն քաղաքացիները (իրենց եկամտից), այլև բոլոր տնտեսավարող սուբյեկտները (անկախ սեփականության ձևից), այդ թվում նաև՝ անհատ ձեռներեցները:

Կենսաթոշակային ապահովության ոլորտի հիմնական ցուցանիշներից են՝ կենսաթոշակառուների ընդհանուր թիվը, կազմը և կառուցվածքը, կենսաթոշակի միջին ամսական մեծությունը, կենսաթոշակային համակարգի իրավիճակը բնութագրող ցուցանիշները: Կենսաթոշակային ապահովության ոլորտի ռազմավարության հիմքը հանրապետության տնտեսական աճի և կենսաթոշակային ապահովության ուղղությամբ կատարվող պետական ծախսերի միջև համամասնության ապահովումն է: Այս ոլորտի ռազմավարական խնդիրներից են՝ կենսաթոշակի չափի բարձրացումը՝ այն կապելով նախկինում կատարված ապահովագրական մուծումների հետ, կենսաթոշակների և նպաստների վճարման մեխանիզմի, ապահովագրական համակարգի կատարելագործումը:

ՀՀ-ում տնտեսական զարգացման ներկա փուլում միջին կենսաթոշակի մեծությունը կազմում է միջին աշխատավարձի 23%-ը, իսկ դա նշանակում է, որ չի ապահովվում կենսաթոշակառուի գոյամիջոցների նույնիսկ նվազագույն չափը: ՀՀ կառավարությունը իրականացնում է կենսաթոշակային բարեփոխումների ծրագիր: Նախատեսվում է հստակ տարանջատել պետական կենսաթոշակային համակարգի երկու բաղկացուցիչները՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների: Այդ բաղկացուցիչներն են՝

1. պետական (պարտադիր) կենսաթոշակային ապահովագրություն, որում ընդգրկված քաղաքացիները սոցիալական վճարումներ են կատարում, և նրանց կենսաթոշակները վճարվում են ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի միջոցներից,
2. պետական կենսաթոշակային ապահովագրություն, որում ներառված քաղաքացիները սոցիալական վճարումներ չեն կատարում, և նրանց կենսաթոշակները պետք է վճարվեն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Բարեփոխումների այս ծրագիրը հնարավորություն կտա բարձրացնել կենսաթոշակային միջոցների օգտագործման արդյունավետությունը և ապահովագրական կենսաթոշակների չափը կապել սոցիալական վճարումների հետ:

Սոցիալական ապահովության ձև է նաև սոցիալական աջակցությունը, որի նպատակն է առանձին դեպքերում անհատական կարիքավորության վերացումը: Այն ունի կոնկրետ և ժամանակավոր բնույթ:

Բնակչության սոցիալական աջակցության ոլորտի կարևոր ռազմավարական խնդիրներից են ընտանեկան նպաստի համակարգի կատարելագործումը և պետական նպաստների տեսակների ճշգրտումն ու օրենսդրորեն ամրագրումը:

Հասարակության զարգացմանը զուգընթաց, պետական սոցիալական ծրագրերն անընդհատ ենթարկվում են փոփոխության՝ համապատասխանելով առաջացող նորանոր պահանջներին:

Բնակչության սոցիալական պաշտպանության յուրօրինակ ձև է սոցիալական գործընկերությունը, որը ենթադրում է իրավահավասար գործընկերների՝ աշխատողների, գործատուների և պետության միջև ընդհանուր շահերի, նպատակների իրականացման ընթացքում դրսևորվող աշխատանքային հարաբերությունների ամբողջությունը: Ըստ էության, այն հակադիր շահերի համաձայնեցման եղանակ է, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման մեթոդ:

Ըստ ՀՀ 2004-2006 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնական նպատակներն են.

- կենսաթոշակների ամենամյա բարձրացում,
- մեկ շնչին բաժին ընկնող աղքատության ընտանեկան նպաստի մոտեցում աղքատության պարենային գծին,
- աշխատանք փնտրող չզբաղված անձանց ապահովում եկամտով՝ «Նպաստ՝ աշխատանքի դիմաց» ծրագրի շնորհիվ,
- հանրապետության բոլոր տուն-ինտերնատներում և մանկատներում խնամքի պաշտոնական նորմերի պահպանում:

Ներկայումս ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվում են հետևյալ ծրագրերը՝

1. պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր (դրանք ենթադրում են տարիքային և հաշմանդամության կենսաթոշակների, ժամանակավոր անաշխատունակության նպաստների տրամադրում),
2. սոցիալական ապահովության ծրագրեր հաշմանդամների, վետերանների և երեխաների համար,
3. պետական սոցիալական օժանդակության ծրագրեր,
4. զբաղվածության ծրագրեր,
5. բնակչության առանձին նպատակային խմբերի համար արտոնությունների սահմանման ծրագրեր:

Բոլոր այս ծրագրերը ֆինանսավորվում են պետական բյուջեի և ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի միջոցների հաշվին:

Երկրում ընթացող սոցիալական գործընթացների վրա ազդելու լավագույն մեթոդներից մեկը ֆինանսավարկային լծակների կիրառումն է: Սոցիալական ենթակառուցվածքի շատ ճյուղեր կա՛մ լրիվ բյուջետային ֆինանսավորման շրջանակներում են, կա՛մ պետության կողմից ֆինան-

սական աջակցության կարիք ունեն: Սոցիալական միջոցառումների ֆինանսավորման աղբյուր են արտաբյուջետային հիմնադրամները՝ կենսաթոշակային, զբաղվածության, բժշկական ապահովագրության և այլն:

Սոցիալական ոլորտի ծախսերի կրճատումը բնականաբար մեծացնում է սոցիալական լարվածությունը: Սոցիալական համակարգի զարգացման հիմքը սոցիալական երաշխիքների ամբողջությունն է, որից օգտվում են հասարակության բոլոր անդամները: Հասարակության աշխատող մասի համար նախատեսված սոցիալական երաշխիքները ստեղծում են բարենպաստ և տարատեսակ պայմաններ՝ աշխատանքային գործունեության և գործարար ակտիվության համար:

14.2. Բնակչության կենսամակարդակի բարձրացման և սոցիալական զարգացման ծրագրերը

Հասարակության զարգացման ընթացքում ձևավորվում են սոցիալական տարաբնույթ հարաբերություններ: Մարդկանց կենսագործունեության պայմանները և սոցիալական հարաբերությունների ոլորտում նրանց շահերն ու պահանջները բազմաթիվ և բազմատեսակ են, ու անհրաժեշտ է, որ դրանք կարգավորվեն պետության կողմից:

ՀՀ տնտեսության զարգացման անցումային փուլում իրականացվում են սոցիալական ու տնտեսական կոնկրետ բարեփոխումներ, որոնց արդյունավետությունը կարող է մեծանալ սոցիալական խնդիրների գերակայության և պետության պատասխանատվության բարձրացման պայմաններում: Երկրում իրականացվող սկզբնական բարեփոխումներն ուղեկցվեցին կենսամակարդակի կտրուկ անկմամբ, զանգվածային գործազրկությամբ, բնակչության մեծամասնության աղքատացմամբ, սոցիալական բևեռացմամբ, ժողովրդագրական ցուցանիշների վատթարացմամբ և արտագաղթով: Հայտնի է, որ երկիրը տնտեսապես չի կարող զարգանալ, եթե մշտապես սպառվեն և վերաբաշխվեն նախորդ սերունդների կողմից ստեղծված բարիքները: Բնակչության բարեկեցության աճը վերջին հաշվով պայմանավորված է նրանով, թե բնակչության լայն խավերի իրական *պահանջարկը* ինչպես է բավարարվում տնտեսության կողմից: Իսկ ազգային տնտեսության սոցիալական ուղղվածության հիմքը սոցիալական հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվող գործունեությունն է, որի հիմնական ուղղությունները երեքն են՝ բնակչության սոցիալական պաշտպանվածությունը, բնակչության ապահովումը սոցիալական ծառայությունների բավարար մակարդակով և բնակչության անհրաժեշտ կենսամակարդակի *ապահովումը*: Շուկայական տնտեսությունում սոցիալական գործընթացների կարգավորման կարևորագույն գործիք է պետության սոցիալական քաղաքականությունը, որն իր հատուկ տեղն է գրավում երկրի *տնտեսական* քաղաքականության մեջ: Սոցիալական քաղաքականության նպատակը սոցիալական գործընթացների և հարաբերությունների ամբողջ համալիրի կարգավորումն է: Այդ քա-

ղաքականության կարևոր հատկանիշներից է այն, որ խտացված արտահայտում է սոցիալական տարբեր խմբերի, դասերի, կուսակցությունների շահերը: Այսինքն՝ այդ քաղաքականությունը սոցիալական հարաբերությունների և մարդկանց կենսագործունեության ոլորտում ծագած շահերի և պահանջների արտահայտությունն է: Ուրեմն, սոցիալական քաղաքականության գլխավոր օբյեկտը երկրի բնակչությունն է: *Շուկայական տնտեսության պայմաններում սոցիալական քաղաքականությունը միջոցառումների համակարգ է, որը երկրի բնակչության հիմնական պահանջմունքների բավարարման, հասարակությունում սոցիալական համերաշխության ապահովման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու նպատակ ունի:* Սոցիալական քաղաքականությունը կարող է լիովին իրականացվել, եթե մշակվի որոշակի հիմնարար սկզբունքներով: Դրանցից են՝

1. անհատի տնտեսական ազատության, ձեռներեցների, վարձու աշխատողների իրավունքների ճանաչումը,
2. շուկայի կարգավորիչ դերի գնահատումը,
3. պետության պատասխանատվությունը՝ տնտեսական և սոցիալական կյանքի մակրոտնտեսական կարգավորման անհրաժեշտ պայմանների ստեղծման համար:

Այսպիսի սկզբունքներով ձևավորված սոցիալական քաղաքականությունը հնարավորություն է տալիս ապահովելու երկրի բնակչության եկամուտների աճը, ստեղծում է բնակչության սոցիալական ապահովության գործուն մեխանիզմ:

Երկրի սոցիալական քաղաքականությունը իրականացվում է այն ուղղություններով, որոնցով ընթանում է սոցիալական գործընթացների կարգավորումը: Դրանք են՝ ընտանիքի անձնական սպառման և եկամուտների, հասարակության բարեկեցության, աշխատուժի վերարտադրության և զբաղվածության, հասարակության անապահով խավերին օգնելու, սոցիալական ենթակառուցվածքի ճյուղերի զարգացման ուղղությունները:

2004-2006 թթ. ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվել են սոցիալական քաղաքականության հետևյալ հիմնական ուղղությունները՝ աշխատանքի, բնակչության զբաղվածության, պետական կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, ընտանիքի, հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության, փախստականների սոցիալական խնդիրների լուծման, օրենսդրության կատարելագործման ու դրա իրականացման ապահովումը:

Պետության սոցիալական քաղաքականությունը իրականացվում է սոցիալական պաշտպանության և սոցիալական երաշխիքների միջոցով: Առաջադրված տնտեսական և սոցիալական հիմնահարցերի լուծումը կանխորոշում է հասարակության սոցիալական կայունությունը կամ անկայունությունը:

Սոցիալական կայունությունը ենթադրում է ապրանքների և ծառայությունների հիմնական տեսակների գների կայուն մակարդակ, բնակչության եկամուտների խորը շերտավորման կանխում, սոցիալ-երաշխի-

քային և սոցիալական պաշտպանության հուսալի համակարգի ձևավորում:

Սոցիալական զարգացման նպատակային ռազմավարության և համապատասխան տեղեկատվության ապահովումը պահանջում է սոցիալական հիմնախնդիրները համախմբող ծրագրի մշակում:

Ծրագիրը, ըստ էության, պետք է լինի գիտականորեն հիմնավորված, ներառի սոցիալական տվյալ բնագավառի զարգացման նպատակների և հիմնախնդիրների լուծման առաջադրանքները: Ծրագիրը սոցիալական ոլորտի զարգացման գերակայությունները որոշելու, ընթացիկ և հեռանկարային նպատակները, առաջնային խնդիրների լուծման եղանակները և հիմնահարցերի լուծման զանազան տարբերակներից առավել արդյունավետը ընտրելու հնարավորություն է ընձեռում: Ծրագրում նախատեսված միջոցառումներն արտահայտում են տվյալ ոլորտի զարգացման ուղղությունները և գերակայությունները, թույլ են տալիս հիմնավորել զարգացման ուղիները՝ համապատասխան ցուցանիշներով: Այս բոլորի արդյունքում սոցիալական այս կամ այն ոլորտի տնտեսավարող սուբյեկտները ավելի հստակ որոշումներ ընդունելու հնարավորություն են ստանում: ՀՀ-ում բնակչության զանգվածային աղքատացումը, եկամուտների անհավասարությունը և հասարակության մեծ չափերի հասնող բևեռացումը վտանգում էին ազգային անվտանգության հիմքերը: Հիմնախնդրի լուծման նպատակով մշակվեց և իրագործվեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը»:

Տնտեսական զարգացման նախորդ փուլերում սոցիալական զարգացման ծրագրերը մշակվել են տարբեր բաժիններով և ունեցել են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ խնդիրներ ու նպատակներ: Սակայն բնակչության կենսամակարդակի բարձրացման ապահովումը մակրոտնտեսական կարգավորման մշտական խնդիրներից է: Բնակչության կենսամակարդակը բնութագրվում է մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման աստիճանով: Անհրաժեշտ է տարբերել նաև «կյանքի որակ» հասկացությունը, որը բնութագրում է մարդու ֆիզիկական և հոգևոր առողջության վիճակը, կրթական, մշակութային և մտավոր ներուժը, ինչպես նաև նրա կենսապայմանները, ապրելու միջավայրը:

Կենսաձևը ցույց է տալիս մարդկանց կյանքի ընդհանուր պատկերը, որը որոշվում է այն բանով, թե նրանք ի՞նչ և ինչքա՞ն են սպառում, ինչպե՞ս են օգտագործում ժամանակը, ինչո՞վ են հետաքրքրվում:

Բնակչության բարեկեցության բարձրացումը հենվում է ազգային եկամտի, աշխատավարձի, գների և սակագների պետական կարգավորման, ինչպես նաև սոցիալական ենթակառուցվածքի ճյուղերի զարգացման պետական միջոցառումների վրա: Իհարկե, յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում իր անձնական սպառման կառուցվածքը՝ ելնելով եկամուտների մակարդակից, ճաշակից, սովորույթներից: Սակայն պետությունը իր ձևավորած մեխանիզմներով կարգավորելով եկամուտների բաշխման գործընթացը՝ մեծապես ազդում է կենսամակարդակի բարձրացման վրա:

Բնակչության կենսամակարդակի բարձրացման ցուցանիշները արտացոլվում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի տարբեր բաժիններում, տնտեսության զարգացման ներկա վիճակը բնութագրող վերլուծություններում, ինչպես նաև բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշռի հաշվարկներում:

Կենսամակարդակը ցույց է տալիս բնակչության ապահովվածությունը անհրաժեշտ նյութական բարիքներով և ծառայություններով, նրանց սպառման մակարդակը և բնական պահանջմունքների բավարարման աստիճանը:

Բնակչության բարեկեցությունը ներկայացվում է զբաղվածության, աշխատավարձի և եկամուտների, սոցիալական վճարների, բնակչության ձեռք բերած նյութական և հոգևոր բարիքների, ֆիզիկական և հոգևոր առողջության մակարդակի, կրթության, մշակույթի և մտավոր ներուժի ցուցանիշներով: Կենսամակարդակի գնահատման ընթացքում օգտագործվում է ցուցանիշների մի ամբողջ համակարգ, որը կարելի է բաժանել երեք խմբի.

1. *Կենսամակարդակի ամփոփ ցուցանիշներ՝* ազգային եկամտի, վերջնական եկամուտների մեծությունը բնակչության մեկ շնչի հաշվով, տնային տնտեսությունների կողմից սպառված ապրանքների և ծառայությունների ծավալը, ծնելիության, մահացության, բնակչության բնական աճի գործակիցները, կյանքի տևողությունը, տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածությունը, գործազրկության մակարդակը, աշխատանքային շաբաթվա տևողությունը, կրթական տարբեր մակարդակի բնակչության թիվը, կրթության և մշակույթի վրա ծախսվող միջոցների տեսակարար կշիռը պետական բյուջեում, բնակտարածությունը մեկ մարդու հաշվով, շրջակա միջավայրի վիճակը բնութագրող ցուցանիշներ և այլն:

2. *Կենսամակարդակի բնահիրային ցուցանիշներ՝* արտահայտում են կոնկրետ նյութական բարիքների սպառման ծավալները (ապահովվածությունը անձնական գույքով, սննդամթերքի սպառումը, կենսական նվազագույնը, տրանսպորտի առանձին տեսակներով տեղափոխված ուղևորների թիվը և այլն):

3. *Կենսամակարդակի տեսակարար ցուցանիշներ՝* արտահայտում են կենսամակարդակի կառուցվածքը և համամասնությունները (բնակչության բաշխումը՝ ըստ եկամտային խմբերի, եկամուտների համակենտրոնացումը և տարբերակումը և այլն):

Բնակչության կենսամակարդակի գնահատման ցուցանիշներից է նվազագույն սպառողական բյուջեն: Այն որոշվում է որպես տարբեր ապրանքների, ծառայությունների և այլ բարիքների հավաքածուի արժեք, որը մարդուն անհրաժեշտ է գոյության համար: Սպառողական բյուջեն պետք է երաշխավորի ոչ միայն գոյության միջոցների նվազագույնը, այլև դրանց աճի հնարավորությունը, սպառողական ընտրության որոշակի ազատությունը:

Կենսաապահովման նվազագույնի մեծությունը հաշվարկվում է *վիճակագրական, նորմատիվային, համակցված, ռեսուրսային, պայմանական հաշվարկների և այլ մեթոդներով:*

Վիճակագրական եղանակով հաշվարկելիս կենսական նվազագույնը սահմանվում է երկրի բնակչության առավել պակաս ունևոր մասի (10-20%) կողմից տնօրինվող եկամուտների մակարդակին համապատասխան:

Նորմատիվային մեթոդով կատարվող հաշվարկների հիմքում դրվում են սպառողական զամբյուղի մեջ մտնող ապրանքների և ծառայությունների ձեռքբերման փաստացի ծախսերը:

Ըստ համակցված մեթոդի՝ *կենսական նվազագույնը* ընդգրկում է պարենամթերքի հավաքածու, որը պետք է ապահովի անհրաժեշտ կալորիայի նվազագույն քանակը, ինչպես նաև ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ծախսերը, հարկերը և պարտադիր մուծումները, որոնք ծախսերի այդ կառուցվածքով համապատասխանում են ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների բյուջեներին:

Կենսական նվազագույնը կարող է հաշվարկվել նաև՝ ելնելով տնտեսության հնարավորություններից (ռեսուրսային մեթոդ), ինչպես նաև բնակչության շրջանում կատարված սոցիոլոգիական հարցումներից: Հաշվարկման մեկ ուրիշ եղանակի դեպքում աղքատության շեմը սկսվում է բնակչության միջին շնչային եկամտի կեսից:

Սոցիալական նվազագույնը, ի տարբերություն կենսականի, ներառում է արդյունաբերական ապրանքների ավելի լայն շրջանակ:

Նվազագույն պարենային զամբյուղը ընդգրկում է այն մթերքների տեսականին և սպառման չափերը, որոնք անհրաժեշտ են մարդու բնականոն գոյատևման և գործունեության համար: Ստորև ներկայացված է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի հաշվարկը՝ սպառման օրական նորմերի հիման վրա:

Աղյուսակ 14.1

ՀՀ-ում նվազագույն պարենային զամբյուղի արժեքը 2003թ. VI եռամսյակի միջին գներով

N	Պարենամթերքի անվանումը	Չափի միավոր	Օրական սպառման նորմը 1 շնչի հաշվով	Տարեկան սպառման նորմը 1 շնչի հաշվով	Օրական պահանջվող կալորիան 1 շնչի հաշվով	Միավորի գինը (դրամ)	Տարեկան նորմայի արժեքը 1 շնչի հաշվով (դրամ)
1	հացամթերք	կգ	0.355		992.2		35984.3
2	մսամթերք	կգ	0.1	36.5	203	1202	43873.0
3	կաթնամթերք				339.7		45208.6
4	կարտոֆիլ	կգ	0.25	91.3	167.5	132.5	12097.3
5	բանջարեղեն	-	0.3	109.5	87	168.3	18428.9
6	միրգ	-	0.2	73.0	96	213.4	15578.2
7	շաքար	-	0.05	18.3	193.5	255.5	4675.7
8	ձու	հատ	0.5	182.5	40	47.8	8723.5
9	բուսական յուղ	կգ	0.02	7.3	176.8	664.2	4848.7
10	մարգարին	-	0.01	3.7	72	790.3	2924.1

11	ձուկ	-	0.03	11.0	44.4	579.3	6372.3

Հաշվարկված է ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված սննդամթերքի կազմի և կառուցվածքի:

Այսպիսով, ըստ այս հաշվեկշռի, պարենային զամբյուղի տարեկան արժեքը կկազմի 198,7 հազ. դրամ, ամսականը՝ 16559,5 դրամ, նվազագույն սպառողական զամբյուղի տարեկան արժեքը՝ 323,9 հազ. դրամ, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով պարենային զամբյուղի արժեքը և 1.63 գործակիցը: Հիմնախնդիրների լուծման նպատակով մշակված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում» (ԱՀՌՕ) նպատակ է դրված կրճատել աղքատությունը, որպեսզի այն դադարի երկրի տնտեսական, սոցիալական ու մարդկային առաջադիմությունը արգելակող և հասարակությունը կազմալուծող գործոն լինելուց:

Փաստացի պարենային զամբյուղի դրամական արտահայտությունը ընդունվում է որպես աղքատության պարենային գիծ:

ԱՀՌՕ բնորոշմամբ՝ աղքատությունը կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինությունն է:

Աղքատության բնութագրիչներն են նաև.

1. *Աղքատության խորությունը*, որը ցույց է տալիս, թե աղքատները աղքատության գծից ինչքան ներքև են գտնվում: Արտահայտում է հետազոտվող ընտանիքների եկամուտների միջին շեղումը կենսապահովման նվազագույնից և բնութագրվում է եկամտի գումարային պակասուրդի մեծությամբ՝ հարաբերած հետազոտվող ընտանիքների ընդհանուր թվին:
2. *Աղքատության սրությունը* ցույց է տալիս, թե որքան աղքատներ են կենտրոնացած աղքատության ստորին մակարդակում: Այն արտահայտում է հետազոտվող ընտանիքների եկամուտների միջին կշռված շեղումը կենսապահովման նվազագույնից և որոշվում է եկամուտների քառակուսիների պակասուրդի գումարի մեծությամբ՝ հարաբերած հետազոտվող ընտանիքների ընդհանուր թվին: Հաշվարկվում է որպես աղքատության խորությունների քառակուսիների միջին թվաբանական:
3. *Եկամուտների, ծախսերի և սպառման բաշխումը դեցիլային կամ քվինտիլային խմբերի:* Սա անհավասարության ուղղակի չափման ցուցանիշ է և ցույց է տալիս տարբեր դեցիլների կամ քվինտիլների հարաբերակցությունը կամ դրանց տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ:
4. *Ջինիի գործակիցը:* Ցույց է տալիս, թե ինչքան անհավասարաչափ են բաշխված եկամուտները բնակչության բոլոր անդամների միջև, և որքան գործակիցը 1-ի մոտ է, այնքան հասարակության բևեռացման աստիճանը բարձր է:

ՀՀ-ում քաղաքական, տնտեսական և սոցիալական վերափոխումների իրականացման ընթացքում ավելի ակնհայտ է դառնում լուծում

պահանջող հիմնահարցերի ողջ ծավալը և բարդությունը: Սոցիալական ոլորտում ստեղծված իրավիճակը ցույց է տալիս, որ հայտարարված նպատակը, այսինքն՝ սոցիալամետ շուկայական տնտեսության կառուցումը, դեռևս չի իրականացվել:

14.3. Բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրները և դրանց կարգավորման պետական քաղաքականությունը

Շուկայական տնտեսական համակարգում բնակչության կենսամակարդակը որոշվում է այն եկամուտների ծավալով, որ ստանում են հասարակության անդամները աշխատանքի դիմաց՝ առևտրային գործունեությունից, սեփականությունից, ընտանեկան տնտեսությունում կատարած աշխատանքից, ինչպես նաև հանրապետական և տեղական բյուջեներից ստացվող սոցիալական հատկացումներից:

Ընդհանրապես, բնակչության ստացած եկամուտները բնութագրվում են որպես՝ *անվանական եկամուտներ, իրական եկամուտներ, իրական օգտագործվող (վերջնական) եկամուտներ*:

Անվանական եկամուտները ՀԱԱ, ՀՆԱ, կամ ազգային եկամտի մի մասն են: Դրա մեջ մտնում են՝ որևէ տեսակի գործունեությունից ստացած եկամուտը, ինչպես նաև պետական տրանսֆերտները (թոշակ, պետական պարտքի տոկոս, կենսաթոշակ), սոցիալական ապահովագրության վճարները, կազմակերպությունների տրանսֆերտները (մի կազմակերպությունը շահաբաժին է ստանում մյուսից), ոչ առևտրային հովանավորչական հատկացումները: Ըստ էության, նշվածները կազմում են բնակչության դրամական, բնաիրային և անուղղակի եկամուտները: *Բնակչության դրամական* եկամուտները ստացվում են պետական, կոոպերատիվ, մասնավոր ձեռնարկություններից, հիմնարկներից ու կազմակերպություններից և գյուղացիական տնտեսությունների արտադրանքի իրացումից:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր գումարը յուրաքանչյուր տարվա համար որոշվում է բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշռի հիման վրա: Հեռանկարային ժամանակաշրջանի համար կատարվում են խոշորացված հաշվարկներ: Բնակչության բնաիրային եկամուտները ստացվում են ընտանեկան տնտեսություններից, գյուղատնտեսական ձեռնարկություններից, սեփականության տարբեր ձևերի ձեռնարկություններից ու կազմակերպություններից: Դրանք որոշվում են ազգային հաշիվների համակարգի տվյալների հիման վրա: Բնակչության անուղղակի եկամուտները ստացվում են բնակչությանը սպասարկող սոցիալական ոլորտի հիմնարկների անվճար ծառայություններից օգտվելու ընթացքում: Դրանք որոշվում են պետական բյուջեի հաշվարկային և կանխատեսվող տվյալների հիման վրա:

Բնակչության անվանական եկամուտների հաշվարկման ընթացքում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անվանական եկամուտները բնակչության տվյալ խմբի համար մասնակիորեն ձևավորվում են բնակչության մյուս խմբերի միջոցներից. բնակչությունը *վճարում է* հարկեր, կատարում

պարտադիր մուծումներ, ինչպես նաև վճարում է սոցիալական ոլորտի կազմակերպությունների, հիմնարկների, ձեռնարկությունների և ֆիզիկական անձանց կողմից տրամադրված ծառայությունների արժեքը:

Բնակչության իրական եկամուտները որոշվում են անվանական եկամուտներից հանելով բնակչության կողմից վճարվող հարկերի, այլ պարտադիր մուծումների գումարը՝ միաժամանակ հաշվի առնելով գների ինդեքսը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ:

Վերջնական եկամուտները բնակչության եկամուտների այն մասն են, որն անմիջականորեն օգտագործվում է նյութական բարիքների ձեռքբերման և բազմատեսակ ծառայություններից օգտվելու համար: Վերջնական (իրական օգտագործվող) եկամուտների մեջ չեն մտնում դրամական խնայողությունները, հասարակական կազմակերպությունների անդամավճարները, հովանավորչական ծախսերը, ինչպես նաև պետությանը, ձեռնարկություններին, ֆինանսական համակարգին բնակչության պարտքի մնացորդը:

Բնակչության եկամուտների հաշվարկման սխեման ունի հետևյալ տեսքը.

1. Անվանական եկամուտներ, այդ թվում՝
   - դրամական եկամուտներ,
   - բնաիրային եկամուտներ,
   - բնակչությանը անվճար սպասարկող հիմնարկների նյութական ծախսեր.

Հանած.

- պարտադիր մուծումները և հարկերը,
- կամավոր մուծումները և անդամավճարները,
- խնայողությունների աճը,
- բնակչության՝ վարկով գնված ապրանքների, գույքի համար պարտքի կրճատումը.

Հավասար է.

2.Վերջնական եկամուտներ

Գների և սակագների ինդեքսը

3.Վերջնական (իրական օգտագործվող) եկամուտները համադրելի գներով և սակագներով

Ընդամենը,

այդ թվում՝

- բնակչության մեկ շնչի հաշվով,
- եկամուտների աճի (նվազման) ինդեքսը:

Բնակչության եկամուտների կանխատեսումը ապագայի համար իրականացվում է տարբեր մեթոդներով: Այդ հաշվարկների հիմքում դրվում է անձնական տնօրինվող եկամտի մեծությունը, որից հանելով խնայողու-

թյունները՝ կարելի է պատկերացում կազմել բնակչության այն եկամուտների մասին, որոնք կարող են օգտագործվել նյութական բարիքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով:

Բնակչության իրական եկամուտների հաշվարկման կարգը

Բնակչության իրական եկամուտների ցուցանիշի միջոցով հաշվարկվում է բնակչության սպառման ամբողջ ծավալը, դինամիկան և կառուցվածքը: Կանխատեսվող ժամանակաշրջանում բնակչության իրական եկամուտների հաշվարկները իրականացվում են հետևյալ սխեմայով.

1. Դրամական եկամուտներ,
ընդամենը,
այդ թվում՝
- աշխատավարձ,
- եկամուտներ սեփականությունից,
- սոցիալական տրանսֆերտներ,
- այլ եկամուտներ:

2. Դրամական եկամուտներ, որոնք չեն օգտագործվում ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար,
ընդամենը,
այդ թվում՝
- հարկեր և այլ պարտադիր վճարներ,
- անդամավճարներ հասարակական կազմակերպություններին,
- վիճակախաղի տոմսերի ձեռքբերում,
- արժեթղթերի ձեռքբերում,
- վարկի տոկոսի վճարում,
- ոչ ապրանքային այլ ծախսեր:

3. Բնակչության խնայողությունների փոփոխություն (հավելաճ՝-, նվազում՝+):
4. Դրամական եկամուտներ, որոնք իրացվում են ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար (1- 2 ± 3):
5. Բնաիրային եկամուտներ տնային տնտեսություններից, գյուղացիական տնտեսություններից:
6. Նյութական սպառում՝ հասարակական սպասարկման ոլորտում:
7. Բնակչության օգուտը կամ վնասը գների դինամիկայից (իջեցումը՝+, աճը՝-):
8. Վերջնական (իրական օգտագործվող) եկամուտներ (4+5+6± 7):
9. Բնակչության թիվը:
10. Իրական եկամուտները բնակչության մեկ շնչի հաշվով (8:9):
11. Իրական եկամուտների դինամիկան (աճը՝+%, անկումը՝-%):

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշռի կառուցվածքը և մշակման մեթոդիկան

Բնակչության կենսամակարդակի ցուցանիշների հաշվարկման ընթացքում օգտագործվում են բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռները, կենսական նվազագույնի մեծության հաշվարկները, ազգային հաշիվների համակարգը և հատկապես «Ըստ ճյուղերի եկամուտների գոյացման հաշվարկը», ինչպես նաև «Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը ամբողջ տնտեսությունում» և «Աշխատավարձը ամբողջ տնտեսությունում» աղյուսակները:

Հատկապես նշանակալի է բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշռի դերը: Դրա օգնությամբ որոշվում է բնակչության դրամական եկամուտների և ծախսերի ընդհանուր ծավալը և կառուցվածքը, հաշվարկվում բնակչության իրական և անվանական եկամուտները և գնողունակությունը, հաշվվում են բնակչության՝ ըստ եկամուտների մակարդակի բաշխման ցուցանիշները, ինչպես նաև աղքատության մակարդակից ցածր գտնվող բնակչության տեսակարար կշիռը: Այդ հաշվեկշիռը թույլ է տալիս բնակչության եկամուտների և ծախսերի մասին պատկերացում կազմել ըստ միջոցների ստացման խմբերի և դրանց ծախսման ուղղությունների: Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը մշակվում է հետևյալ հոդվածներով.

<u>Եկամուտներ</u>

1. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ:
2. Աշխատանքի վարձատրություն:
3. Վարձատրության այլ միջոցներ՝ բացի աշխատավարձից:
4. Սոցիալական տրանսֆերտներ (կենսաթոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ):
5. Եկամուտներ սեփականությունից:
6. Արտարժույթի վաճառքից ստացվող մուտքեր:
7. Փոխանցումներով ստացված զուտ եկամուտներ (ստացումներ-փոխանցումներ):
8. Այլ եկամուտներ (10-1-2-3-4-5-7):
9. Ծախսերի գերազանցումը եկամուտներին:
10. Ընդամենը դրամական եկամուտներ (17+18):

<u>Ծախսեր և խնայողություններ</u>

11. Ապրանքների գնում և ծառայությունների ձեռքբերում, ընդամենը, *այդ թվում՝*
    ա) ապրանքների գնում իրացման բոլոր ուղղություններով,
    բ) ծառայությունների ձեռքբերում և այլ ծախսեր:
12. Պարտադիր վճարներ և կամավոր մուծումներ:
13. Խնայողությունների հավելաճը (նվազումը) ավանդներում և արժեթղթերում:
14. Անշարժ գույքի ձեռքբերման ծախսեր:
15. Արտարժույթի ձեռքբերման վրա կատարվող ծախսեր:

16. Վարկային պարտավորությունների փոփոխությունները:
17. Ընդամենը դրամական ծախսեր և խնայողություններ (11+12+13+14+16):
18. Եկամուտների գերազանցումը ծախսերին:

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը մշակվում է սոցիալական առանձին խմբերի համար: Քանի որ յուրաքանչյուր խմբի համար հաշվեկշիռ մշակվում է բնակչությանը հարցումներ կատարելու միջոցով, ուստի ամբողջ բնակչության մասին տեղեկատվություն հավաքելն անհնար է, և տվյալ սոցիալական խմբի եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ մշակվում է ընտրանքային եղանակով ու ընդհանրացվում տվյալ սոցիալական խմբի համար:

Բնակչության կենսամակարդակի վրա, եկամուտների և ծախսերի հաշվեկշռին զուգահեռ, ազդում է սպառման և եկամուտների միջև կախվածությունը, որը, ինչպես մեզ հայտնի է, կոչվում է սպառման ֆունկցիա: Սովորաբար այդ կախվածությունը գծային է:

Ջ. Քեյնսը տնօրինվող եկամտի բաժանումը՝ սպառման և խնայողությունների, համարում էր շրջապտույտի կարգավորման բանալին: Հարցի քննարկումը նա սկսում էր այն մտքից, որ սպառողների կողմից ծախսվում է լրացուցիչ ստացված եկամտի յուրաքանչյուր միավորի միայն հարաբերականորեն կայուն մասը, և դրանից ելնելով ենթադրում էր, որ առկա է կախվածություն իրական տնօրինվող եկամտի և սպառման իրական ծախսերի միջև: Սպառման ֆունկցիայի կորը ներկայացված է 14.1 նկարում:



Գրաֆիկը ցույց է տալիս, թե ինչպես են մնացած հավասար պայմաններում փոփոխվում սպառման վրա կատարվող ծախսերը՝ կախված տնօրինվող եկամտի փոփոխությունից: MPC-ն այն մեծությունն է, որով ավելանում է սպառման ծավալը, երբ եկամուտը մեծանում է 1 միավորով:

Նկ. 14.1. Սպառման ֆունկցիան

Տնային տնտեսությունները իրենց եկամտի մի մասը կուտակում են՝ ենթադրելով գալիք ժամանակաշրջանի ծախսերը, և այդ պատճառով էլ սպառման մեծությունը պակաս է եկամուտներից, որը երաշխավորում է կուտակումների առկայությունը: Սպառումը տնօրինվող եկամտից կախված ֆունկցիա է և գրվում է հետևյալ կերպ.

$$C=C(Y-T):$$

Տնօրինվող եկամուտը ստացվում է, երբ ամբողջ եկամտից հանվում են հարկերը:

Սպառման հակումը որքան մոտ է 1-ին, այնքան տնային տնտեսությունները մտածում են ներկա սպառման մասին, իսկ որքան այդ հակումը փոքր է, այնքան նրանք մտածում են վաղվա օրվա մասին:

14.4. Կրթության պետական քաղաքականությունը

Հասարակության սոցիալական զարգացման գործում կրթությունը կարևոր նշանակություն ունի: Այս ոլորտի հիմնարկների գործունեության շնորհիվ ստեղծվում է երկրի մտավոր ներուժը: Կրթական հիմնարկները ձևավորում են բոլոր տեսակի մասնագիտությունների աշխատանքային ռեսուրսները՝ պատրաստվածության տարբեր մակարդակներով: ՀՀ-ում կրթության բնագավառում կարգավորման սկզբունքները և այդ համակարգի տնտեսական, իրավական, ֆինանսական հիմքերը սահմանվում են «Կրթության մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 1999թ. ապրիլի 14-ին[1]: Հանրապետության կրթական համակարգը ընդգրկում է՝

- պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի համալիրը,
- այդ ծրագրերն իրականացնող տարբեր տիպի ուսումնական հաստատությունների ցանցը,
- կրթության կառավարման մարմինների, նրանց ենթակայության հիմնարկների ու հաստատությունների համակարգը:

ՀՀ կրթական համակարգը ներառում է կրթության բոլոր մասնակիցներին՝ նախադպրոցականից մինչև հետբուհական, և գործում է գլխավորապես բյուջետային նպատակային ֆինանսավորման շնորհիվ:

Ներկայումս կրթության բնագավառի կարևոր խնդիրը կրթական ծառայությունների որակի բարձրացումն է կրթական գործընթացի բոլոր փուլերում: Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որն ըստ ուսումնական հաստատությունների տիպերի և մակարդակների՝ ներառում է հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի ամբողջությունը: Հանրակրթության մեջ ընդգրկվում են տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթությունը, հատուկ ընդհանուր կրթությունը և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթության ծրագրերը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝ կրթության մարդասիրական բնույթը, մատչելիությունը, շարունակականությունը, այդ բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը, սերտաճումը միջազգային կրթական համակարգին, պետական և ոչ պետական հաստատություններում քաղաքացիների՝ կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը:

Միջնակարգ հանրակրթական դպրոցական ցանցի զարգացման ծրագրում նախատեսվող ցուցանիշներից են՝ դպրոցների, դասարանների, աշակերտների և ուսուցիչների թիվը, դասարանների խտությունը, ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածությունը, աշակերտ/ուսուցչական

[1] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 12 (78):

դրույք հարաբերակցությունը: Այստեղ օգտագործվում է պլանավորման նորմատիվային մեթոդը: Օրինակ՝ ուսուցիչների կանխատեսվող թիվը որոշվում է դասարանների թիվը բազմապատկելով շաբաթվա ուսումնական ժամերի քանակով և հարաբերելով մեկ մանկավարժի շաբաթվա ծանրաբեռնվածության նորմին: Համաձայն հանրակրթության պետական կրթակարգի՝ նախատեսվում է ՀՀ-ում միջնակարգ ընդհանուր կրթությունն իրականացնել 12-ամյա տևողությամբ, հետևյալ հաջորդական աստիճաններով՝ տարրական դպրոց (1-4 դասարաններ), միջին դպրոց (5-9-րդ դասարաններ) և ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ): Հատուկ ընդհանուր կրթությունն իրականացվում է գիշերօթիկ հաստատություններում՝ հանրակրթական և հատուկ ծրագրերով:

Ըստ ԱՀՌՕ-ի և 2004-2006 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ հանրակրթական հաստատությունների զարգացման հիմնական նշանակետերն են՝

- մեկ ուսուցչին բաժին ընկնող սովորողների թիվը հասցնել15,1-ի,
- բարձրացնել դասարանների միջին խտությունը՝ 20-ից հասցնելով 23,44-ի,
- ուսուցչի դրույքաչափը սահմանել 22 ժամ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը իրականացվում է մասնագիտական տեխնիկական ուսումնարաններում, իսկ միջին մասնագիտական կրթությունը՝ մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում:

Բարձրագույն մասնագիտական կրթությունը իրականացվում է եռաստիճան համակարգով՝ բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի կրթական ծրագրերով: Հետբուհական մասնագիտական կրթության համակարգում գործում են ասպիրանտուրա և դոկտորանտուրա:

Բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրի հատուկ նշանակությունը որոշվում է նրանով, որ այն անմիջականորեն ծրագրավորում է բարձրագույն կրթությամբ արհեստավարժ մասնագետների ձևավորումը: Կրթական ծրագրի մշակումը նպատակ ունի կանխել համապատասխան մասնագիտությունների պահանջարկի ապահովման անհամամասնությունները այն հաշվով, որ յուրաքանչյուր ձեռնարկություն, կազմակերպություն միշտ կարողանա բավարարել կադրերի նկատմամբ իր պահանջարկը: Ծրագրի այս բաժնի հիմնական ցուցանիշը տնտեսության պահանջարկն է բարձրագույն կրթությամբ կադրերի նկատմամբ: Դրա մեծությունը որոշվում է նորմատիվային-գործոնային մեթոդով: Այդ ցուցանիշի վրա ազդեցություն են գործում արտադրատնտեսական գործունեության մասշտաբները ծրագրավորվող ժամանակաշրջանում, ԳՏԱ ինտենսիվությունը, որի արդյունքում առաջանում են նոր մասնագիտություններ, ավելանում է աշխատանքի արտադրողականությունը, կրճատվում է կադրերի պահանջարկը, կառավարման, արտադրության, աշխատանքի կազմակերպման կատարելագործումը և այլ գործոններ: Յուրաքանչյուր գործոնի և բոլոր գործոնների գումարային ազդեցությունը կարող է հաշվարկվել տնտեսամաթեմատիկական մեթոդներով: Հաշվարկներում

օգտագործվում են նաև համապատասխան նորմատիվներ, օրինակ՝ բնակչության որոշակի թվի սպասարկման համար՝ բուժաշխատողների, տրանսպորտի շարժակազմի սպասարկման համար անհրաժեշտ մասնագետների թիվը և այլն: Բարձրագույն կրթությամբ կադրերի պահանջարկի կանխատեսման հիման վրա հաշվարկվում են այդ ծրագրի մյուս ցուցանիշները՝ ուսանողների (սովորողների) թիվը, ընդունելությունը առաջին կուրսում, ավարտող մասնագետների քանակը և այլն:

Ընդունելության ծրագիրը մշակելիս նախատեսվում է պետական պատվերով ընդունվողների թիվը: Դրանց և պետպատվերից դուրս ընդունվողների ընդհանուր թիվը կազմում է ընդունելության պլանը:

Վերը նշված ցուցանիշների հաշվարկը թույլ է տալիս կանխատեսել բարձրագույն հաստատությունների նյութատեխնիկական բազայի զարգացումը, ուսումնական լաբորատորիաների, հանրակացարանների կառուցումը և շահագործումը, դրանց ապահովումը ուսումնական և գիտական սարքավորումներով:

ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղություններն են՝ համակարգի ներքին արդյունավետության բարձրացման ապահովումը, աշխատանքի շուկայի հետ կապերի արդյունավետության բարձրացումը, համակարգի արտաքին արդյունավետության ապահովումը, համակարգի մատչելիության ապահովումը, անցումը պետական պատվերից ուսումնական նպաստների համակարգի, ուսանողական վարկերի համակարգի ներդրումը: Բարձրագույն կրթության համակարգում նախատեսվում է կրեդիտային համակարգի պարտադիր ներդրումը: Հիմնական նպատակը ուսուցման արդյունքների հաշվարկումն է, արդյունավետության գնահատումը և միասնական կրթական համակարգում այդ արդյունքների համեմատության դաշտի ապահովումը: Ընդհանուր կրեդիտային համակարգի ընդունումը Բոլոնիայի գործընթացի անկյունաքարերից է: Այդ գործընթացի հիմնական խնդիրներից են նաև որակավորման համեմատելի աստիճանների համակարգի ստեղծումը, բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի ներդրումը, բարձրագույն կրթության գործընթացի մասնակիցների շարժունակության և համագործակցության ապահովումը:

Պետությունը հատուկ ուշադրություն է դարձնում նաև լրացուցիչ կրթությանն ու վերապատրաստման ծրագրերին՝ փորձելով հարմարվել աշխատանքի շուկայի ժամանակակից պահանջներին:

Ուսումնական հաստատությունները կարող են լինել պետական և ոչ պետական, որից կախված էլ՝ տարբեր են դրանց ֆինանսավորման աղբյուրները:

Բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման նպատակով 2004 թ. անցում է կատարվել հանրակրթական բոլոր դպրոցների ֆինանսավորման նոր կարգի՝ ըստ աշակերտների թվի և խորհուրդներով կառավարման համակարգի:

Պետական պատվերով ուսումնական հաստատության՝ պետբյուջեից ֆինանսավորման չափանիշները հաստատում է կառավարությունը՝ մեկ սովորողի հաշվարկով: Օրենքով սահմանված է, որ պետական բյուջեի

ընթացիկ ծախսերում կրթության ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը չպետք է ցածր լինի նախորդ բյուջետային տարվա համապատասխան ցուցանիշից: Իսկ ոչ պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորման չափանիշները մեկ սովորողի հաշվով չեն կարող ավելի ցածր լինել պետական չափանիշներից:

Ուսումնական հաստատության ֆինանսավորման հիմնական աղբյուրները պետական և համայնքային բյուջեներն են: Գոյություն ունեն նաև ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ, ինչպես օրինակ՝ ուսուցման վճարովի համակարգից գոյացած սեփական միջոցները:

14.5. Առողջապահության պետական կարգավորման խնդիրները և առողջապահության զարգացման ծրագրի բաժիններն ու ցուցանիշները

Առողջապահական համալիրը այն բուժական կազմակերպությունների, հաստատությունների ամբողջությունն է, որոնք զբաղվում են բնակչության առողջության պահպանման և ամրապնդման, հիվանդությունների կանխման և բուժման գործընթացով:

ՀՀ առողջապահության համակարգի բուժհաստատությունները բաժանվում են հետևյալ խմբերի.

- բուժական-պրոֆիլակտիկ,
- սանիտարապրոֆիլակտիկ,
- դատաբժշկական հետազոտության,
- դեղատնային հաստատություններ:

Այս բոլոր հաստատությունները գտնվում են ՀՀ առողջապահության նախարարության և կառավարման տարածքային մարմինների ենթակայության ներքո: Նախարարությունը վերահսկողություն է իրականացնում բնակչության ստացիոնար բուժումը կազմակերպող հիվանդանոցների շուրջ 96.6%-ի և ամբուլատոր-համաբուժական հիմնարկների 98.2%-ի նկատմամբ: Առողջապահական համակարգի գործունեությունն ուղղված է այնպիսի խնդիրների լուծմանը, որոնք, վերջին հաշվով, նպաստում են բնակչության բարեկեցության բարձրացմանը: Այդպիսի նշանակության խնդիրներից են՝ առավել առաջավոր և կատարյալ մեթոդներով բնակչության բուժման, առողջության վերականգնման միջոցառումների իրականացումը, ապագա սերնդի առողջության պահպանումը, առողջապահական հաստատությունների նյութատեխնիկական ապահովվածության մեծացումը, բուժանձնակազմի վերարտադրումը, առողջապահության բնագավառի աշխատողների աշխատանքի վարձատրության գործընթացի կատարելագործումը: Անցումը շուկայական հարաբերություններին այս ոլորտում ևս առաջացրեց բազմաթիվ հիմնահարցեր, որոնք շուտափույթ լուծման կարիք ունեն:

Իր գործունեության ընթացքում ՀՀ առողջապահության նախարարությունն իրականացնում է մի շարք գործառույթներ: Դրանցից են՝

- առողջապահության ոլորտի պետական քաղաքականության մշակումը,
- առողջապահության բնագավառի օրենսդրական ակտերի և օրենքների նախագծերի մշակումը,
- առողջապահության զարգացման գերակայությունների սահմանումը և ծրագրերի մշակումը,
- առողջապահության ոլորտի տեղեկատվական-վերլուծական համակարգի ստեղծումը,
- բժշկական և դեղագործական հիմնարկների և կադրերի լիցենզավորումը,
- հիգիենիկ հակահամաճարակային անվտանգության ապահովումը,
- առողջապահության մարզային վարչությունների կազմակերպչական, մեթոդական օգնության իրականացումը:

ՀՀ առողջապահական ամբողջ համակարգը զարգանում է 1996թ-ից գործող «Առողջապահության բարեփոխումների և զարգացման ծրագրին» համապատասխան:[1] Դրանում նախատեսված զարգացման հիմնական ուղղություններից են՝

- առողջապահության կառավարման ապակենտրոնացումը,
- ֆինանսավորման աղբյուրների բազմազանությունը,
- բժշկական ապահովագրության ներդրումը,
- բժշկական հիմնարկների սեփականաշնորհումը և այլն:

ՀՀ 2004-2006 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով առողջապահության ոլորտի գերակայություններ են համարվում բնակչության հիգիենիկ-հակահամաճարակային անվտանգության, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության պահպանման, բնակչության աղքատ խավերի բուժօգնության ապահովումը, սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը:

Առողջապահության զարգացման ծրագրման նպատակով առանձնացվում է տարբեր տեսակի բժշկական ծառայությունների նկատմամբ բնակչության պահանջարկը, որի հիման վրա էլ հաշվարկվում են ծրագրի մյուս ցուցանիշները: Առողջապահության զարգացման ծրագիրը կարող է ներկայացվել հետևյալ բաժիններով.

- առողջապահական ցանցի զարգացման ու տեղաբաշխման ծրագիր, որը մշակվում է ծրագրվող ժամանակահատվածի բնակչության թվից և բժշկական ծառայություններով նրանց ապահովվածությունից ելնելով,

[1] Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության նյութերից:

- առողջապահական հիմնարկներում կատարվող ներդրումների ծրագիր,
- կադրերի վերապատրաստման և առողջապահական հաստատությունները կադրերով ապահովելու ծրագիր,
- առողջապահության ֆինանսական ապահովման ծրագիր:

Այս ծրագրերը ներառում են որակական և քանակական տարբեր ցուցանիշներ: Կարևոր քանակական ցուցանիշներ են՝ հիվանդանոցային մահճակալների, դեղատների, բուժանձնակազմի, ամբուլատոր-համաբուժական հիմնարկների թիվը և այլն: Որակական ցուցանիշներ են՝ բնակչության ապահովվածության մակարդակը 10 հազար բնակչի հաշվով՝ մահճակալների, բժիշկների ընդհանուր թիվը, մեկ մահճակալի հաշվով հիվանդների թիվը, հիվանդանոցային մահճակալների օգտագործումը և այլն: Բժշկական ծառայությունների նկատմամբ բնակչության նախատեսվող պահանջարկը կարող է հաշվարկվել նորմատիվային մեթոդով: Բացահայտելով առանձին գործոնների ազդեցությունը առողջապահական համալիրի զարգացման վրա և առանձին հիվանդությունների բնույթը, կարելի է որոշել բնակչության իրական պահանջարկը առանձին մասնագիտությունների բժշկական ծառայությունների նկատմամբ: Բացահայտված կապերի հիման վրա հաշվարկվում են բժշկական առանձին հիմնարկների ծառայությունների նկատմամբ բնակչության պահանջարկի նորմատիվները:

Բժշկական ծառայությունների նկատմամբ բնակչության ընդհանուր պահանջարկը ($Q_{\text{ընդ.}}$) որոշվում է բնակչության կանխատեսվող թվի և բնակչության՝ բժշկական ծառայությունների պահանջարկի նորմատիվների միջոցով (երկրի առանձին տարածքային միավորների ընդհանուր գումարը հաշվելով).

$$Q = \Sigma N \times S_{(1....n)},$$

որտեղ՝

N–ը՝ բժշկական ծառայությունների նկատմամբ բնակչության պահանջարկի նորմատիվներն են (ըստ տարածքների),

S-ը՝ բնակչության կանխատեսվող թիվը՝ ըստ տարածքների,

n-ը՝ տարածքների թիվը:

Առողջապահության ծրագրի կարևոր ցուցանիշներից է հիվանդանոցային մահճակալների նկատմամբ նորմատիվային պահանջարկի ցուցանիշը ($Q_{մ}$).

$$Q_{մ} = \frac{N_1 \times S \times t_{մ}}{t_{օր}}$$

որտեղ՝

N_1 -ը՝ կանխատեսվող ժամանակաշրջանի համար հոսպիտալացման նորմն է (%-ով),

S-ը՝ բնակչության կանխատեսվող թիվը,

$t_{մ}$ -ը՝ հիվանդի՝ մահճակալին պառկելու միջին տևողությունը (օրերով),

$t_{օր}$–ը՝ տարվա ընթացքում մահճակալի օգտագործման տևողությունը (օրերով):

Հասկանալի է, որ բժշկական բոլոր ծառայությունները պետք է ապահովված լինեն բժշկական համապատասխան կադրերով: Այդ նպատակով որոշվում է այն աշխատանքների ծավալը, որ պետք է կատարվի մեկ բժշկի կողմից: Դրա մեծությունը կախված է մեկ ժամում մեկ բժշկի կողմից հիվանդների ընդունելության նորմից (Nբ), օրվա ընթացքում բժշկի աշխատանքի տևողությունից՝ ժամերով ($t_{ժամ}$), ինչպես նաև՝ մեկ տարում բժշկի աշխատանքային օրերի թվից (T): Այս դեպքում կարող ենք գրել, որ բժշկական մեկ հաստիքի գծով տարեկան աշխատանքների ծավալը ($Q_{աշ.}$) որոշվում է.

$$Q_{աշ.} = N_{բ} \times t_{ժամ} \times T$$

Այս ցուցանիշը հաշվարկվում է բժշկական յուրաքանչյուր մասնագիտության համար (թերապևտ, վիրաբույժ, ակնաբույժ և այլն):

Բժշկական պաշտոնների ծրագրվող թիվը յուրաքանչյուր մասնագիտության գծով կարելի է որոշել՝ օգտագործելով հաճախելիության ցուցանիշը.

$$A_{բժիշկ} = \frac{\delta}{q}$$

որտեղ՝

$A_{բժիշկ}$՝ յուրաքանչյուր մասնագիտության բժիշկների ծրագրվող թիվն է,

δ-ն՝ բժշկական հաճախումների կանխատեսվող թիվը՝ յուրաքանչյուր մասնագիտության գծով,

q-ն՝ յուրաքանչյուր մասնագիտության բժշկի աշխատանքի ծրագրվող ծավալը:

Առողջապահության նյութատեխնիկական ապահովման ծրագրում առանձնահատուկ տեղ է գրավում մահճակալային ֆոնդի հաշվարկը, որի հիման վրա որոշվում են առողջապահական, հիվանդանոցային ցանցի զարգացման, տեղաբաշխման հիմնական ուղղությունները, աշխատանքային, նյութական, տեխնիկական, ֆինանսական ռեսուրսները և այլ ցուցանիշներ:

Առողջապահության զարգացման ֆինանսական ապահովման ծրագիրը հնարավորություն է տալիս պարզելու այդ համակարգի ֆինանսավորման աղբյուրները, դրանց չափերը, ձևերը: Տարիներ շարունակ հանրապետության առողջապահությունը իրենից ներկայացնում էր պետական բյուջեից ֆինանսավորվող և բնակչությանը անվճար, համընդհանուր բժշկական օգնությամբ ապահովող միասնական համակարգ: Բյուջեի հատկացումները բավարարում էին համակարգի նվազագույն ֆինանսական կարիքների քառորդ մասը միայն: Առողջապահության համակարգի ֆինանսավորման բարեփոխումների անխուսափելի փուլերից մեկը համարվեց վճարովի բժշկական ծառայությունների իրականացումը՝ պետպատվերով ֆինանսավորվող ծառայություններին զուգահեռ: Պետպատվերով կարող են բուժվել բնակչության ռիսկային տարբեր խմբերի ներկայացուցիչները: Առողջապահության գործունեությունը և ֆինանսա-

վորման համակարգի վերլուծությունը զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում թույլ է տալիս եզրակացնել, որ առողջապահական գործունեության հիմքում բնակչության *բժշկական ապահովագրության* կազմակերպումն է տարբեր ձևերով, որը կարելի է բաժանել երեք խմբերի:

1. Բժշկական ապահովագրության ազգային համակարգը, որի ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է հարկային մուտքերով պայմանավորված միջոցների հաշվին: Դրա շնորհիվ պետության կողմից երաշխավորվում է բժշկական օգնության հասանելիությունը երկրի յուրաքանչյուր բնակչի:

2. Բժշկական ապահովագրության սոցիալական համակարգը: Այս համակարգի ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է առողջության սոցիալական հատուկ ֆոնդերին ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների պարտադիր մուծումներից, որը սահմանվում է երկրի օրենքով:

3. Մասնավոր ապահովագրական համակարգը: Բնակչության մեծ մասի համար առողջության ապահովագրումը յուրաքանչյուրի անձնական գործն է, և գործնականում բացակայում է պետական միջամտությունը:

ՀՀ առողջապահության ոլորտի ֆինանսավորման համակարգը կատարելագործելու ուղիներից է պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրումը: Ըստ էության, դա կլինի բնակչության մի զգալի հատվածն ընդգրկող հասցեագրված համակարգ, որը հնարավորություն կտա մատչելի դարձնել բուժօգնության առավել թանկ՝ հիվանդանոցային փուլը և լրացուցիչ ֆինանսական միջոցները նպատակաուղղել առողջապահության ոլորտ: Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի նպատակն է՝ առանց պետբյուջեի համար լրացուցիչ ծանրաբեռնվածության և միաժամանակ հիմնականում պահպանելով բնակչության սոցիալական պաշտպանվածության խնդիրը՝ առողջապահության զարգացման և բժշկական ծառայությունների մատուցման նոր հնարավորություններ ստեղծել:

14.6. Մշակույթի և սպորտի զարգացման ծրագրերը

ՀՀ սոցիալական ոլորտի կարևորագույն բաղկացուցիչներից է մշակույթը, որտեղ ներկայումս շարունակվում են տնտեսական բարեփոխումների և կառավարման համակարգի կատարելագործման աշխատանքները:

Ըստ մատուցվող ծառայությունների՝ այստեղ առանձնացվում են հետևյալ հիմնարկները.

- թատերական-ներկայացումային (բոլոր տեսակի և ժանրի թատրոնները, համերգասրահները, ֆիլհարմոնիաները, կրկեսները, կինոթատրոնները և այլն),

- մշակութային-լուսավորական (գրադարաններ, թանգարաններ, ցուցասրահներ և այլն),
- հեռահաղորդակցական-տեղեկատվական (հեռուստատեսություն և ռադիոցանց),
- հրատարակչություն:

Այս բոլոր ուղղություններով էլ մշակվում են զարգացման առանձին ծրագրեր: Հաստատությունների յուրաքանչյուր խմբի համար օգտագործվում են բնակչությանը ծառայություններով ապահովելու համապատասխան նորմատիվներ:

Ըստ ՀՀ 2004-2006 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ մշակույթի ոլորտի զարգացման քաղաքականության հիմնական գերակայություններն են՝ ստեղծագործական գործունեության աջակցումը և խթանումը, մշակութային ժառանգության պահպանությունը, մշակութային արժեքների տարածումը, հասարակական ստեղծագործական ներուժի վերարտադրումը և զարգացումը, մշակութային զարգացման իրավական և տնտեսական կարգավորումը:

Թատերական արվեստի զարգացման ծրագրերում օգտագործվում են հետևյալ ցուցանիշները՝ թատրոնների ցանցը (քանակը), թատրոնների տարողունակությունը (տեղերի թիվը դահլիճներում), ներկայացումների ընդհանուր թիվը (այդ թվում՝ հյուրախաղերի ժամանակ), հանդիսասրահի հաճախելիությունը, խաղացանկը, հանդիսատեսի միջին թիվը և այլն:

Կինոզարգացման ծրագրերում սահմանվում են կինոցանցի զարգացման և տեղաբաշխման, կինոցանցի շահագործման, ֆինանսատնտեսական, կինոֆիլմերի արտադրությանը վերաբերող ցուցանիշներ: Այս ոլորտի ծրագրում հաշվարկվում են բնակչության կինոսպասարկման մակարդակը բնութագրող ցուցանիշներ՝ ստացվող համախառն եկամուտը, կինոցանցի աշխատանքային օրերի թիվը, ծանրաբեռնվածությունը և այլն: Կինոզարգացման ծրագրում կարևոր է համարվում կինոնստատեղերի պահանջի որոշման ցուցանիշը:

Գրադարանային ցանցի զարգացման ծրագրի հիմնական ցուցանիշներից են՝ ընթերցելիությունը, գրքային ֆոնդի շրջանառելիությունը, հաճախումները գրադարաններ և այլն: Ընթերցելիությունը ցույց է տալիս տարվա ընթացքում միջին հաշվով մեկ ընթերցողին տրված գրքերի քանակը: Այն որոշվում է մեկ տարում տրված գրքերի ծավալը հարաբերելով տարվա ընթացքում գրադարանից օգտված ընթերցողների թվին: Գրքային ֆոնդի շրջանառելիությունը որոշվում է որպես տարվա ընթացքում տրված գրքերի քանակի հարաբերություն գրքային ֆոնդի ծավալին: Գրադարանների հաճախելիությունը չափվում է տարվա ընթացքում մեկ ընթերցողի՝ գրադարան հաճախումների միջին թվով և հաշվարկվում է որպես մեկ տարում հաճախումների թվի հարաբերություն ընթերցողների թվին: ՀՀ գրադարանների աշխատանքները կարգավորելու համար նախատեսվում է ստեղծել հանրապետական գրադարանային տեղեկատվական ավտոմատացված համակարգեր, եղած գրքացուցակների էլեկտրոնային տարբերակի ձևավորում, խոշոր գրադարանների ներկայացում «Ինտերնետ» համակարգչային ցանցում և ակտիվ

մասնակցություն աշխարհի տեղեկատվության փոխանակման աշխատանքներին:

Սոցիալական ոլորտի զարգացման հիմնահարցերը քննարկելիս առանձին ներկայացվում են նաև սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացման ծրագրերը:

ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գերակայություններն են՝ բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, տարբեր տարիքային և սոցիալական խմբերի քաղաքացիների ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովումը, բարձրակարգ մարզիկների պատրաստումը, համահայկական մարզական միջոցառումների անցկացումը:

Ֆիզիկական կուլտուրան անհատի ընդհանուր կուլտուրայի առանձին բաղկացուցիչն է, մարդկանց սոցիալական գործունեության տեսակ, որն ուղղված է առողջության ամրապնդմանը և ֆիզիկական հնարավորությունների զարգացմանը:

Ֆիզիկական կուլտուրայի զարգացման ցուցանիշները ներկայացնում են այն նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունը, որ ստեղծվել է մարդու ֆիզիկական զարգացման համար:

Սպորտը ֆիզիկական կուլտուրայի մի մասն է, ֆիզիկական դաստիարակության միջոց և մեթոդ, ֆիզիկական վարժությունների առանձին համալիրների, մրցումների նախապատրաստման, անցկացման և կազմակերպման համակարգ: Պրոֆեսիոնալ սպորտը առևտրային-սպորտային գործունեություն է, որը նախատեսում է սպորտային-ներկայացումային միջոցառումների տնտեսական արդյունավետություն և տեղեկատվական արժեք: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ֆինանսավորման աղբյուրներ են՝ պետբյուջեն, տարբեր կազմակերպությունների, հաստատությունների, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների միջոցները, որոնք ունեն ֆիզիկական-առողջարարական և սպորտային ուղղվածություն: Ֆինանսավորման աղբյուրներ են նաև սպորտային միջոցառումների հեռուստահաղորդման և գովազդի իրավունքի վաճառքից ստացվող միջոցները, ֆիզկուլտուրային-հանդեսային միջոցառումների անցկացումից, սպորտային վիճակախաղերից ստացվող միջոցները, պետական սոցիալական ապահովագրության միջոցները, ֆիզիկական անձանց և տարբեր կազմակերպությունների նվիրատվությունները և այլ մուտքեր:

Ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում ՀՀ պետական քաղաքականությունը ներառում է հանրապետությունում մարզական հարուստ ավանդույթների վերականգնման, միջազգային մարզական բնագավառներում հանրապետության ընդգրկման, վարկանիշի բարձրացման, պրոֆեսիոնալ սպորտի պահպանման և ֆիզկուլտուրայի զարգացման համար կարևորվող միջոցառումները:

Ամփոփում

1. Սոցիալական քաղաքականությունը նպատակ ունի կարգավորել երկրի ողջ սոցիալական ոլորտը, որի զարգացումը ապահովելու նպատակով մշակվում են սոցիալական հիմնախնդիրները համախմբող ծրագրեր:
2. Բնակչության բարեկեցության բարձրացումն ընդգրկում է սոցիալական ենթակառուցվածքի բոլոր ճյուղերի զարգացումը, որը կարգավորվում է պետության կողմից:
3. Սոցիալական քաղաքականության հիմնական խնդիրներից է եկամուտների վերաբաշխումը:
4. Բնակչության կենսամակարդակը կախված է նրա ստացած եկամուտներից և սպառումը ֆունկցիա է՝ կախված տնօրինվող եկամտից:
5. Բնակչության իրական եկամուտների հաշվարկման միջոցով ցույց է տրվում բնակչության սպառման ամբողջ մեծությունը, դրա դինամիկան և կառուցվածքը:
6. Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրների և ծախսման ուղղությունների մասին:
7. Առողջապահության պետական կարգավորման խնդիրներից կարևորագույնը բնակչության բուժման, առողջության վերականգնման միջոցառումների իրականացումն է, որի ֆինանսավորման համակարգի կատարելագործման հիմքում բնակչության առողջության ապահովագրության կազմակերպումն է՝ տարբեր ձևերով:

Թեստեր և խնդիրներ

1. ***Տնտեսության սոցիալական ոլորտը ընդգրկում է.***
   ա. սպառման առարկաների արտադրությունը,
   բ. արտադրական կարողությունների գործարկման պայմանները,
   գ. գործունեության այն բնագավառները, որոնց արդյունքները չունեն նյութաիրային տեսք,
   դ. բանկային համակարգի ձևավորման մեխանիզմները:

2. ***Սոցիալական ոլորտում կատարվող ծախսերի աղբյուր են.***
   ա. օտարերկրյա կապիտալ ներդրումները,
   բ. առողջապահական հաստատությունների բանկային հաշիվները,
   գ. ձեռնարկությունների ամորտիզացիոն մասհանումները,
   դ. նյութական արտադրության ոլորտում ստեղծված հավելյալ արդյունքը և քաղաքացիների անձնական եկամուտները:

3. ***Սոցիալական երաշխիք է.***
   ա. շահույթի նորմալ մակարդակի ապահովումը,
   բ. աշխատավարձի նվազագույն մակարդակի սահմանումը,
   գ. ավելացված արժեքի հարկի դրույքաչափը,
   դ. գործող առևտրային բանկերի թիվը:

4. ***Սոցիալական ոլորտի կառավարման գործառույթներ չի իրականացնում.***
   ա. առողջապահության նախարարությունը,
   բ. մշակույթի և սպորտի նախարարությունը,
   գ. գյուղատնտեսության նախարարությունը,
   դ. գիտության և կրթության նախարարությունը:

5. ***Ներքոնշյալներից ո՞րը պետության սոցիալական քաղաքականության ուղղություններից չէ.***
   ա. հասարակության անդամների նվազագույն եկամտի երաշխավորումը,
   բ. հասարակության անդամների աշխատանքի ընդունակության պահպանումն ու զարգացումը,
   գ. երկրի ընտրական համակարգի կատարելագործմանը հասարակության անդամների մասնակցության ապահովումը,
   դ. հասարակության անդամներին սոցիալական ծառայությունների ընդունելի մակարդակով ապահովումը:

6. ***Բնակչության սոցիալական ոլորտին չի վերաբերում.***
   ա. որակյալ աշխատանքային գործունեության նախապատրաստումը,
   բ. աշխատանքային և արտադրական գործունեության գործընթացի ապահովումը,
   գ. ազգային արժույթի կայունության ապահովումը,
   դ. նոր աշխատատեղերի ստեղծումը:
7. ***Կենսամակարդակի ամփոփ ցուցանիշ է.***

ա. համախառն ազգային արդյունքի մեծությունը,
բ. վերջնական եկամուտը՝ բնակչության մեկ շնչի հաշվով,
գ. հարկային բազմարկիչը,
դ. շահաբաժինները:

8. *Բնակչության կենսամակարդակը բնութագրող մեծություն չէ.*
ա. ձեռնարկությունների ստացած շահույթը,
բ. բնակչության բնական աճի գործակիցը,
գ. գործազրկության մակարդակը,
դ. ազգային եկամտի մեծությունը՝ բնակչության մեկ շնչի հաշվով:

9. *Բնակչության դրամական եկամուտները տարվա սկզբին կազմել են 120 մլն դրամ, իսկ այն դրամական եկամուտները, որոնք չեն օգտագործվում ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար՝ 30 մլն դրամ:*
Հաշվարկել բնակչության այն դրամական եկամուտների մեծությունը, որոնք կծախսվեն ապրանքների ձեռքբերման համար, եթե հայտնի է, որ տարվա վերջին եկամուտների 25%-ը կազմող աշխատավարձը ավելացել է 4%-ով, թոշակները և նպաստները, որ կազմում էին դրամական եկամուտների 8%-ը, բարձրացել են 2%-ով, իսկ պետական գանձապետական պարտատոմսերի ձեռքբերման ծախսերը մեծացել են 3 մլն դրամով:

10. *ՀՀ տնային տնտեսության մեկ անդամի հաշվով ոչ դրամական եկամուտները կազմում են ամբողջական եկամտի 18.9%-ը, պետական թոշակները և նպաստները՝ 7.8%-ը, սեփականությունից, բանկարժեք իրերի ու անշարժ գույքի և գյուղատնտեսական մթերքի վաճառքից ստացվող եկամուտը՝ 16.4%-ը, տրանսֆերտները՝ 15%-ը, այլ եկամուտները՝ 7.5%-ը: Դրամական եկամուտները կազմում են 1127 դրամ:*
Բնութագրել ամբողջական եկամտի մնացյալ մասը և հաշվարկել դրա մեծությունը:

Սոցիալական ոլորտ
Սոցիալական ապահովության համակարգ
Բնակչության կենսամակարդակ
Սոցիալական պաշտպանվածություն
Սոցիալական աջակցություն
Կենսաթոշակային ապահովագրություն
Նվազագույն սպառողական բյուջե
Սոցիալական երաշխիքներ
Սոցիալական քաղաքականություն
Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ
Բնակչության անվանական եկամուտներ
Իրական եկամուտներ
Կրթության պետական քաղաքականություն
Կրթական հաստատություններ
Առողջապահական համալիր
Բժշկական ապահովագրություն
Մշակութային հիմնարկներ

Հարցեր կրկնության համար

1. Ինչպիսի՞ն է սոցիալական համակարգի կառուցվածքը ՀՀ-ում:
2. Որո՞նք են ՀՀ սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները, սոցիալական զարգացման ծրագրի բաժինները և ցուցանիշները:
3. Բնութագրեք բնակչության կենսամակարդակի ցուցանիշների համակարգը և նվազագույն սպառողական զամբյուղ հասկացությունը:
4. Ներկայացրեք կենսաթոշակային ապահովության համակարգը ՀՀ-ում և բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրները, տեսակները:
5. Բացատրեք բնակչության իրական եկամուտների հաշվարկման կարգը, բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշռի կառուցվածքը:
6. Ներկայացրեք սպառման ֆունկցիա և սպառման սահմանային հակում հասկացությունները:
7. Ինչպիսի՞ն է ՀՀ կրթական համակարգի կառուցվածքը:
8. Ինչպե՞ս է որոշվում բարձրագույն կրթությամբ կադրերի նկատմամբ տնտեսության պահանջարկը :
9. Բնութագրեք ՀՀ առողջապահական համակարգը:
10. Ներկայացրեք առողջապահության զարգացման ծրագիրն ու ցուցանիշները. ինչպե՞ս է կատարվում հիվանդանոցային մահճակալների պահանջարկի հաշվարկը:
11. Ո՞րն է մշակույթի, սպորտի զարգացման ծրագրերի նշանակությունը:

ԳԼՈՒԽ 15

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Աշխատուժի և աշխատանքային ռեսուրսների բնութագրերը:
- Աշխատանքի շուկայի ենթակառուցվածքները ՀՀ-ում:
- Աշխատանքային ռեսուրսների ամփոփ և մասնակի հաշվեկշիռները և դրանց մշակման կարգը:
- Գործազրկության բնական մակարդակը և գործազրկության հիմնական ձևերը:
- Զբաղվածության ապահովման պետական ռազմավարական խնդիրները:
- Կայուն իրական աշխատավարձը և սպասման գործազրկությունը:
- Աշխատուժի օգտագործման արդյունավետության գնահատումը աշխատանքի արտադրողականության միջոցով:

15.1. Աշխատանքային ռեսուրսների բնութագիրը

Շուկայական տնտեսության պետական կարգավորման գործում կարևոր նշանակություն ունեն բնակչության զբաղվածության խնդիրները, որոնց հաջող լուծման համար նախ և առաջ անհրաժեշտ է իրականացնել բնակչության՝ որպես հասարակության արտադրողական ուժի և արտադրության սուբյեկտի որակական և քանակական վերլուծությունը: Բնակչությունը՝ որպես հասարակության արտադրողական ուժ, պետական կարգավորման օբյեկտ է: Այս առումով, զբաղվածության պետական կարգավորման խնդիրներն ուսումնասիրելիս դիտարկում ենք աշխատուժ և աշխատանքային ռեսուրսներ կատեգորիաները:

Աշխատուժը մարդու ֆիզիկական և մտավոր ունակությունների ամբողջությունն է, որը նա օգտագործում է իր արտադրական գործունեության ընթացքում: Բնակչության այն մասը, որն ունի անհրաժեշտ կրթություն, ունակություններ, որակավորում, մասնագիտական գիտելիքներ և առողջություն՝ որևէ օգտակար գործունեությամբ զբաղվելու համար, համարվում է աշխատանքային ռեսուրս:

Աշխատանքային ռեսուրսները՝ որպես տնտեսական կատեգորիա, դիտարկվում են ժողովրդագրական, տնտեսական, սոցիոլոգիական և վիճակագրական առումներով: Աշխատանքային ռեսուրսների ժողովրդագրական մոտեցումն արտահայտում է այդ ռեսուրսների կախվածությունը բնակչության վերարտադրությունից և հաշվի է առնում այնպիսի բնութա-

գրեր, ինչպիսիք են՝ սեռը, տարիքը, տարաբնակեցումը և այլն: Որպես տնտեսական կատեգորիա՝ աշխատանքային ռեսուրսներն արտահայտում են հասարակական արտադրության և մարդկային գործունեության այլ ոլորտներում աշխատունակ բնակչության ձևավորման, բաշխման և օգտագործման տնտեսական հարաբերությունները:

Աշխատանքային ռեսուրսները սոցիոլոգիական առումով դիտարկվում են պատմականորեն ձևավորված հասարակարգերում՝ որպես սոցիալական խմբերի և դասերի ամբողջություն:

Աշխատանքային ռեսուրսների վիճակագրական տեսակետը բնութագրվում է բնակչության աշխատունակ տարիքով: Վերջինս սահմանվում է տվյալ երկրի օրենսդրական ակտերով և տարբեր երկրներում կարող է տարբեր լինել: Աշխատանքային ռեսուրսների կազմում ամենամեծ տեսակարար կշիռն ունի աշխատունակ տարիքի բնակչությունը:

Աշխատանքային ռեսուրսների կազմում առանձնացնում են բնակչության հետևյալ երեք խմբերը.

1. աշխատունակ տարիքից ցածր տարիք ունեցող և արտադրության մեջ ընդգրկված բնակչությունը (16 տարեկանից փոքր),
2. աշխատունակ տարիքի բնակչությունը (այսինքն՝ աշխատունակ բնակչությունը՝ 16-ից մինչև 63 տարեկան անձինք՝ հանած 1-ին և 2-րդ կարգի չաշխատող հաշմանդամներին և արտոնյալ պայմաններով կենսաթոշակի տարիքից ավելի շուտ կենսաթոշակի անցած անձանց),
3. աշխատունակ տարիքից մեծ և դեռևս արտադրության մեջ աշխատող բնակչությունը:

Տարբերում ենք նաև տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչություն հասկացությունները:

Տնտեսապես ակտիվ է համարվում բնակչության այն մասը, որն ապահովում է աշխատուժի առաջարկ՝ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման համար: Այս խմբի մեջ մտնում են զբաղվածները և գործազուրկները: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը աշխատունակ տարիքի բնակչության այն մասն է, որ ժամանակի տվյալ պահին չի ցանկանում աշխատել հասարակական արտադրությունում:

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության շարքն են դասվում.

1. ցերեկային ուսուցմամբ ուսումնական հաստատություններում սովորողները,
2. արտոնյալ պայմաններով ծերության կենսաթոշակ ստացողները (մինչև կենսաթոշակի տարիքը),
3. հաշմանդամության թոշակ ստացողները,
4. տնային տնտեսուհիները և աշխատել չցանկացող բնակիչները:

Զբաղվածությունը երկրի օրենսդրությանը չհակասող, անձնական և հասարակական պահանջմունքների բավարարման հետ կապված գործունեություն է, որն ապահովում է համապատասխան եկամուտ: Բնակչության զբաղվածության մակարդակը բնորոշվում է զբաղվածների ընդհանուր թվի և աշխատունակ տարիքի բնակչության հարաբերությամբ:

Զբաղվածության մակարդակի առավել ամբողջական բնութագրման նպատակով օգտագործվում են արդյունքային զբաղվածություն և արդյունավետ զբաղվածություն հասկացությունները: Առաջինը զբաղվածությունն է նյութական արտադրության ոլորտներում: Այն որոշվում է արտադրական ոլորտում աշխատողների թվի և բնակչության ընդհանուր զբաղվածության հարաբերությամբ:

Արդյունավետ զբաղվածությունը զբաղված աշխատուժի օգտագործումն է՝ առանց կորուստների: Այս ցուցանիշի օգնությամբ որոշվում է ներուժային ՀՆԱ մեծությունը:

«Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքով՝ աշխատունակ բնակչությունը բաժանվում է զբաղվածների, աշխատանք փնտրողների, չզբաղված անձանց և գործազուրկների:

Զբաղված են համարվում՝

- գործատուների մոտ վարձու աշխատանք կատարողները,
- վարձատրվող պաշտոններում ընտրված, նշանակված կամ հաստատված անձինք,
- աշխատանքով ինքնուրույնաբար իրենց ապահովող անձինք,
- զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք,
- ուսումնական հաստատություններում, մասնագիտական պատրաստման, վերամասնագիտացման, որակավորման բարձրացման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում ընդգրկված աշխատանքային տարիքի անձինք:

Աշխատանք փնտրող են համարվում 16 տարին լրացած այն աշխատունակ անձինք, ովքեր, անկախ զբաղված լինելու հանգամանքից, աշխատանքի տեղավորման նպատակով դիմել են զբաղվածության պետական ծառայություն:

Չզբաղված են համարվում աշխատանքային տարիքի այն աշխատունակ անձինք, ովքեր չեն համալրում զբաղված անձանց կարգավիճակ ունեցողների շարքերը, ինչպես նաև՝

- տվյալ ժամանակաշրջանում աշխատելու ցանկություն չեն հայտնում (կամավոր չզբաղվածություն),
- ցանկություն ունեն աշխատելու և փնտրում են հարմար աշխատանք (հարկադիր չզբաղվածություն):

Գործազուրկ են համարվում աշխատանքային տարիքի, աշխատանք փնտրող, աշխատունակ այն չզբաղված անձինք, ովքեր չեն ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակներ, ունեն առնվազն 1 տարվա աշխատանքային ստաժ, աշխատանքի տեղավորման նպատակով դիմել են զբաղվածության պետական ծառայություն և ստացել գործազուրկի կարգավիճակ: Մինչդեռ Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանման համաձայն՝ գործազուրկներ են համարվում հանրապետության տարածքում մշտապես բնակվող աշխատունակ տարիքի աշխատունակ քաղաքացիները, ովքեր դիտարկվող ժամանակաշրջանում աշխատանք չեն ունեցել, աշխատանք են փնտրել զբաղվածության ծառայությունների օգնությամբ կամ ինքնուրույն, պատրաստ են եղել

անմիջապես կամ օրենսդրությամբ սահմանված ժամանակաշրջանում անցնել աշխատանքի:

2003թ. դեկտեմբերի վերջին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության զբաղվածության ծառայություններում հաշվառման են կանգնել աշխատանք փնտրող 148.4 հազ. քաղաքացիներ, որոնցից աշխատանքի են տեղավորվել ընդամենը 7889-ը կամ դիմողների 5.3%-ը: Գործազրկության՝ պաշտոնական հայտարարված մակարդակը ՀՀ-ում 2003թ. դեկտեմբերին 10.1% էր, իսկ գործազուրկների ընդհանուր թվաքանակը՝ 118.6 հազար:

15.2. Աշխատանքի շուկայի պետական կարգավորումը

Աշխատանքի շուկան և դրա ենթակառուցվածքները

Աշխատանքի շուկան շուկայական տնտեսության կառուցվածքի բաղկացուցիչ մասերից է: Ընդհանուր առմամբ, աշխատանքի շուկան ընդգրկում է աշխատուժի վարձակալման և առաջարկի կամ առք ու վաճառքի հետ կապված հասարակական հարաբերությունների համակարգը:

Առանձնացնում ենք աշխատանքի շուկայի հետևյալ բաղադրիչները.

- աշխատանքի շուկայի սուբյեկտները,
- սուբյեկտների կողմից ընդունված տնտեսական ծրագրերը, որոշումները և նրանց հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը,
- աշխատանքի պահանջարկը և առաջարկը, աշխատանքի գինը, մրցակցությունը,
- գործազրկությունը և դրա հետ կապված սոցիալական վճարները,
- շուկայական ենթակառուցվածքները:

Աշխատանքի շուկայի սուբյեկտներն են վարձու աշխատողները և նրանց միավորումները (արհմիությունները), գործատուները (ձեռներեցները) և նրանց միությունները, պետությունը: Աշխատանքի շուկայում մի կողմը՝ վաճառողը, ներկայանում է որպես հարմար աշխատանք փնտրող, իսկ մյուս կողմը՝ գնորդը, որպես գործատու:

Պետությունը, որպես շուկայական տնտեսության սուբյեկտ, աշխատանքի շուկայում իրականացնում է մի շարք գործառույթներ, ինչպիսիք են.

- սոցիալ-տնտեսական գործառույթ, որը կապված է լրիվ զբաղվածության ապահովման հետ՝ աշխատատեղերի ստեղծման խթանման ճանապարհով,
- հիմնական իրավական նորմերի և կանոնների մշակում,
- աշխատանքի շուկայի սուբյեկտների իրավունքների պաշտպանություն:

Աշխատանքի շուկայի փոխհարաբերությունների կարգավորումը պահանջում է իրավական համապատասխան նորմերի, կանոնների առկայություն, որոնցով սահմանվում են կողմերի իրավունքները, նախատեսվում սոցիալական ապահովագրություն և այլն:

Աշխատանքի շուկան հաջողությամբ կարող է գործել համապատասխան տնտեսական պայմանների առկայության, պետության կողմից զբաղվածության քաղաքականության, գործազուրկների վերապատրաստման ծրագրերի իրականացման դեպքում:

Աշխատանքի շուկայում զբաղվածության բարելավման կարելի է հասնել աշխատուժի առաջարկի և պահանջարկի վրա համապատասխան ներգործության միջոցով: Ընդ որում, քաղաքականության որոշ ուղղություններ ազդում են աշխատուժի առաջարկի, իսկ մյուսները՝ պահանջարկի վրա: Աշխատուժի պահանջարկի վրա ազդող հիմնական ուղղություններն են.

- աշխատատեղերի պահպանումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և անարդյունավետ ու ավելորդ աշխատատեղերի կրճատումը,
- ձեռնարկատիրական գործունեության զարգացման հիման վրա նոր աշխատատեղերի ստեղծումը,
- վճարվող հասարակական աշխատանքների կազմակերպումը,
- աշխատանքային ներուժի օգտագործման սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդկանց համար աշխատատեղերի ստեղծումը,
- տնտեսության կառուցվածքային փոփոխությունները:

Վճարվող հասարակական աշխատանքների կազմակերպումը հիմնականում ապահովում է ժամանակավոր աշխատանք և կապված է մարզերում, համայնքներում գտնվող տարածքների, կառույցների շինարարության, վերանորոգման, սպասարկման, մաքրման, բնապահպանական աշխատանքների հետ, ինչը կարող է իրականացվել տարածքային կառավարման մարմինների միջոցով: Սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդկանց համար աշխատատեղերի ստեղծումը հաճախ խրախուսվում է պետության կողմից՝ նման գործատուներին լրացուցիչ արտոնություններ տրամադրելու ճանապարհով: «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի «ե» կետից բխում է, որ պետությունը կարող է նախապես քվոտաներ սահմանել՝ հաշմանդամներին աշխատատեղերով ապահովելու նպատակով:

Աշխատուժի առաջարկի վրա կարելի է ազդել.

- Աշխատուժի որակի բարձրացման ճանապարհով:
- Ինքնազբաղվածության զարգացմամբ, որը դիտարկվում է որպես ձեռներեցության անհատական ձև: Այս դեպքում ձեռներեցը հանդես է գալիս նաև որպես աշխատող՝ ազդելով ոչ միայն աշխատուժի առաջարկի, այլև պահանջարկի վրա:
- Աշխատաժամանակի տևողության կարգավորմամբ, որի դեպքում ավելանում է ազատ ժամանակը, աշխատանքային համատեղությունների հնարավորություն ստեղծվում, ինչը նպաստում է լրացուցիչ եկամուտների ձեռքբերմանը:
- Աշխատուժի ներքին և արտաքին միգրացիայի կարգավորմամբ և շարժունակության ապահովմամբ:

Աշխատանքային ռեսուրսների շարժունակությունը ենթադրում է աշխատավայրը, մասնագիտությունը, բնակության վայրը ազատորեն փոխելու հնարավորություն: Այն, վերջին հաշվով, կարող է նպաստել աշխատանքային ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխմանը: Առանձնացնում ենք աշխատուժի տարածքային, մասնագիտական և ճյուղային շարժունակություն հասկացությունները: Տարածքային շարժունակությունը հնարավորություն է ընձեռում չեզոքացնելու կամ մեղմացնելու տարբեր մարզերում աշխատուժի ավելցուկի կամ պակասուրդի բացասական հետևանքները: Շուկայական տնտեսությանն անցման, ինչպես նաև գիտատեխնիկական առաջադիմության արագ աճի տեմպերի պայմաններում տեղի են ունենում տնտեսության կառուցվածքային լուրջ փոփոխություններ: Չնայած աշխատուժի ավելցուկին և գործազրկության բարձր մակարդակին, մի շարք մասնագիտությունների գծով մեծ պահանջարկ է զգացվում, և անհրաժեշտություն է առաջանում վերաորակավորման ճանապարհով աշխատողներին հնարավորինս արագ ուղղել դեպի նոր զարգացող ճյուղեր ու կազմակերպություններ:

Աշխատուժի առաջարկի և պահանջարկի վրա կարգավորող ազդեցություն է ունենում աշխատանքի վարձատրության մակարդակը: Վերջինիս ազդեցությամբ աշխատանքի շուկայում փաստացի առաջարկը կարող է զգալիորեն ցածր լինել աշխատանքային ռեսուրսների առկա մեծությունից և դրա նկատմամբ պահանջարկից: Արդյունքում՝ կառաջանա աշխատուժի պակասուրդ: Իսկ աշխատավարձի բարձր մակարդակի դեպքում տեղի կունենա հակառակ երևույթը, այսինքն՝ աշխատուժի առաջարկը կգերազանցի պահանջարկը: Մյուս ռեսուրսների գների համեմատ աշխատանքային ռեսուրսների գինը ունի որոշ առանձնահատկություններ: Նախ՝ աշխատավարձը մարդկանց մի զգալի մասի եկամտի հիմնական աղբյուրն է, և նրանց ընտանիքների կենսամակարդակը պայմանավորված է դրա մեծությամբ: Հետևաբար այն չի կարող ցածր լինել կենսական նվազագույնից: Երկրորդ՝ աշխատողները որոշակի կախվածություն ունեն գործատուներից և վերջիններս կարող են առաջարկել աշխատանքի իրենց պայմանները՝ առավելապես օգտվելով այն ժամանակահատվածում, երբ գործազրկության մակարդակը երկրում բարձր է: Երրորդ առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ աշխատավարձի մեծությունը կախված է ոչ միայն աշխատանքային գործունեության արդյունքներից, այլև արտադրության ոլորտից դուրս գոյություն ունեցող գործոններից, ինչպիսիք են՝ սպառողական ապրանքների գների աճը, կրթության համար կատարվող ծախսերի աճը և նմանատիպ այլ գործոններ: Չորրորդ առանձնահատկությունն այն է, աշխատուժի առք ու վաճառքի գործարքից հետո սեփականատիրոջ փոփոխություն չի արձանագրվում: Աշխատողը մնում է որպես աշխատուժի սեփականատեր, հետևաբար հնարավոր է աշխատանքի պայմանների և աշխատավարձի մեծության հետագա ճշգրտում ու փոփոխություն: Հենց այս առանձնահատկություններն են, որ պայմանավորում և պահանջում են պետության ու արհմիությունների միջամտությունը՝ աշխատուժի վարձակալման արդարացի պայմանների ձևավորման նպատակով:

Աշխատանքի շուկայի ենթակառուցվածքները ներառում են զբաղվածությանը, մասնագիտական կողմնորոշմանը, կադրերի պատրաստմանը և վերապատրաստմանը օժանդակող ինստիտուտների ամբողջությունը. հիմնադրամներ, զբաղվածության կենտրոններ (աշխատանքի բորսա), աշխատուժի պատրաստման և վերապատրաստման կենտրոններ և այլն:

Աշխատանքի շուկան կարգավորվում է պետական և ոչ պետական զբաղվածության ծառայությունների, ինչպես նաև անմիջականորեն ձեռնարկությունների և կազմակերպությունների կադրային ծառայությունների կամ էլ աշխատողի և գործատուի փոխհարաբերության միջոցով:

Աշխատանքի տեղավորման, ազատ աշխատատեղերի վերաբերյալ տեղեկությունների ստացման, մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության, մասնագիտական պատրաստման, վերամասնագիտացման և որակավորման բարձրացման հարցերով դիմող անձանց հաշվառումը ՀՀ-ում իրականացնում է զբաղվածության պետական ծառայությունը: Հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը:

Աշխատանք փնտրող չզբաղված անձանց գործազուրկի կարգավիճակ է տալիս նույնպես զբաղվածության պետական ծառայությունը: ՀՀ-ում զբաղվածության և աշխատուժի շուկայի կարգավորման հարցերով զբաղվում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում ձևավորված ՀՀ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամը, որը ստեղծվել էր 1997թ. և ուներ համապատասխան տարածքային զբաղվածության կենտրոններ և Զբաղվածության ապահովագրական գործակալություն: 2001թ. կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի փոխարեն ստեղծվեց ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ, որը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման, հավաքագրման, կենսաթոշակների նշանակման և վճարման, ինչպես նաև պետական սոցիալական ապահովագրության ծրագրերի ֆինանսավորման աշխատանքներն իրականացնող մարմին է: ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի համակարգն իր ենթակայության մարզային և տարածքային մարմինների ամբողջությունն է: Այս հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը խորհուրդն է, որի կազմի մեջ մտնում են ՀՀ սոցիալական ապահովության նախարարը (խորհրդի նախագահ), հիմնադրամի նախագահը, ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալը, ՀՀ առողջապահության նախարարի տեղակալը, գործատուների և աշխատողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հիմնադրամի բյուջեի միջոցները ծախսվում են.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակների վճարման և թաղման ծախսերի մասնակի փոխհատուցման,
- պետական սոցիալական ապահովագրության առանձին ծրագրերի ֆինանսավորման,
- բնակչության զբաղվածության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պետական ծրագրերի իրականացման,

- հիմնադրամի ընթացիկ գործունեության, դրա աշխատակազմի և համակարգի մարմինների պահպանման և զարգացման ծախսերի ապահովման,
- հիմնադրամի նյութատեխնիկական բազայի ստեղծման և զարգացման,
- հիմնադրամի գործունեության վերաբերյալ տեղեկատվության ապահովման և այլ միջոցառումների իրականացման նպատակով:

ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահպանման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում՝ առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով 2004թ. ստեղծվել է ՀՀ աշխատանքի պետական տեսչություն: Այն իր գործունեությունն իրականացնում է՝ համագործակցելով Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիայի (միավորումների), գործատուների միությունների, իրավապահ մարմինների, հսկողության և վերահսկողության իրավասություններ ունեցող հանրապետական գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ պետական և հասարակական կազմակերպությունների հետ: Այս տեսչությունը պետական վերահսկողություն է ապահովում աշխատանքային օրենսդրության և այլ նորմատիվ իրավական ակտերի կիրարկման նկատմամբ, կազմակերպում է արտադրական վնասվածքների և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ, ապահովում է աշխատանքի պայմանների, աշխատողների աշխատանքային իրավունքների և ազատությունների պահպանումը և պաշտպանությունը, գործատուներին և աշխատողներին տեղեկատվություն է տրամադրում աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի պահպանման արդյունավետ միջոցների և մեթոդների, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման մասին: Աշխատանքի պետական տեսչության գործունեությունը մեծամասամբ ունի կանխարգելող բնույթ:

ՀՀ-ում կարող են գործել նաև աշխատանքի տեղավորման, այդ թվում՝ այլ պետություններում ծառայություններ մատուցող ոչ պետական ձեռնարկություններ, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են համապատասխան լիցենզիա ունենալու դեպքում:

Զբաղվածության ապահովման պետական քաղաքականությունը

Աշխատանքային ռեսուրսների օգտագործման բարելավման առանցքային խնդիրը աշխատուժի լրիվ զբաղվածության ապահովումն է: Դա նշանակում է աշխատանքային տարիքի աշխատունակ այն բնակչությանը, որը ցանկություն ունի աշխատելու, ապահովել իրենց կրթությանը և մասնագիտական պատրաստվածությանը համապատասխան աշխատատեղերով:

Բնակչության զբաղվածությանը նպաստող պետական քաղաքականության միջոցառումներն ուղղված են երկրի բոլոր քաղաքացիների համար զբաղվածության ազատ ընտրության հավասար պայմանների ձևավորմանը և աշխատանքային ռեսուրսների որակավորմանը: Նման միջոցառումների շարքը կարող են դասվել քաղաքացիների ազատ զարգացմանը նպաստող պայմանների ապահովումը, նրանց աշխատանքային և ձեռնարկատիրական գործունեությանը աջակցությունը և այլն:

Զբաղվածության ապահովումը պետության տնտեսական քաղաքականության կարևորագույն նպատակն է: Այս քաղաքականությունը նախատեսում է այնպիսի ռազմավարական խնդիրների իրականացում, ինչպիսիք են.

1. բնակչության զբաղվածության բանական կառուցվածքի ապահովումը,
2. աշխատուժի և աշխատատեղերի հաշվեկշռվածության ապահովումը,
3. զանգվածային գործազրկության կանխարգելումը,
4. կադրային ներուժի զարգացումը,
5. կադրերի ուսուցման, վերապատրաստման, որակավորման բարձրացման համակարգի կատարելագործումը:

Նշված խնդիրների իրականացումը հնարավոր է ապահովել աշխատատեղերի օգտագործումը և նոր աշխատատեղերի ստեղծումը խթանող հարկային, վարկային և ներդրումային քաղաքականությամբ, մարզերում, մասնավորապես՝ սահմանամերձ վայրերում փոքր և միջին բիզնեսը և անհատական աշխատանքային գործունեությունը խթանող համակարգային ծրագրերի ընդունման ու իրականացման ճանապարհով:

Ընդհանրապես, մրցունակ աշխատանքի շուկան ենթադրում է աշխատավարձի սահմանման մեխանիզմի և աշխատողների վարձակալման հարցում պետության պասիվ միջամտություն: Այդուհանդերձ, պետությունը կարևոր դեր ունի մասնավոր սեփականության իրավունքի և մրցակցության ապահովման գործում:

Աշխատանքի շուկայի ձևավորման հարցերը դիտարկվում են երկու տեսանկյունից.

- շուկայական տնտեսության անցման փուլում, երբ բացակայում է կամ դեռևս կայացած չէ համապատասխան ենթակառուցվածքը, որպես կարճաժամկետ խնդիր կարևորվում է աշխատավարձի և զբաղվածության պետական կարգավորումը,
- երկարաժամկետ հեռանկարի կարևոր նպատակ է ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը:

Աշխատանքի շուկայի բնագավառում քաղաքականության կարևոր տարր է պետության դերի որոշումը և աշխատանքի շուկայի անհրաժեշտ ինստիտուտների ձևավորումը: Մակրոտնտեսական առումով հատկապես կարևոր է ընտրություն կատարել աշխատավարձի չափի մասին բանակցությունների կենտրոնացված և ապակենտրոնացված համակարգերի

միջև: Եթե այդ հարցում պետությունն իրականացնում է ակտիվ միջամտություն՝ տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում ներառելով գործատուների ներկայացուցիչներին և արհմիություններին, ապա անհրաժեշտ է ստեղծել համապատասխան ինստիտուցիոնալ կառույցներ, ինչը կներառի գործատուներին և արհմիություններին:

Աշխատանքի վարձատրության և զբաղվածության կարգավորման հարցերում պետական միջամտության չափերը և բնույթը տարբեր երկրներում տարբեր են: Արևելյան Եվրոպայի երկրների մի մասը հետևելով սկանդինավյան երկրների և Ավստրիայի օրինակին, ստեղծել են աշխատավարձի չափի սահմանման յուրահատուկ մեխանիզմ: Այս դեպքում աշխատավարձը սահմանվում է սոցիալական գործընկերների միջև (գործատուներ, արհմիություններ և պետություն) համաձայնագրի միջոցով, այլ ոչ թե շուկայական մեխանիզմների ազդեցությամբ: Տարբեր երկրների փորձը թույլ է տալիս նկատել, որ պետության կողմից աշխատանքի շուկայի համեմատաբար կոշտ կարգավորումն ապահովում է զբաղվածության ավելի բարձր և կայուն մակարդակ, քան այն դեպքերում, երբ աշխատավարձի չափերի մասին բանակցություններն ապակենտրոնացված են: Բանակցությունների ապակենտրոնացված համակարգի կիրառման դեպքում գործազրկության մակարդակը բարձր է, երբ արհմիություններն ուժեղ են, և ցածր է, երբ շուկան մրցակցային է:

Շուկայական տնտեսության պայմաններում զբաղվածության ոլորտը կարող է կարգավորվել աշխատողների և գործատուների միջև կնքվող պայմանագրերի միջոցով: Այդ պայմանագրերն իրավական ուժ կունենան միայն համապատասխան իրավական բազայի առկայության դեպքում:

Աշխատանքի շուկայի կարևորագույն ինստիտուտ է պետության ակտիվ քաղաքականությունը՝ ուղղված գործազուրկներին աշխատատեղերով ապահովելուն, ի տարբերություն պասիվի, որը սահմանափակվում է գործազրկության նպաստներ տրամադրելով: Ակտիվ բնույթի միջոցառումները, ինչպիսիք են խորհրդատվությունները, ուսուցման և վերապատրաստման ծրագրերը, ժամանակավոր աշխատանքի տրամադրումը, ընդհանուր առմամբ ավելի շատ ծախսեր են պահանջում, քան գործազրկության նպաստները, բայց հնարավորություն են տալիս կրճատելու գործազրկության ժամանակահատվածը և բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը: Նպաստների կիրառման դեպքում պետության միջամտությունը զգալիորեն թույլ է: Այն ապահովվում է գործազրկության ապահովագրության համակարգի միջոցով, որը, սակայն, նպաստում է հպանցիկ գործազրկության աճին, քանի որ գործազուրկները, որոշակի ժամանակահատվածի ընթացքում ապահովվում են նպաստով, հետևաբար թուլացնում են աշխատանքի որոնման ակտիվությունը կամ էլ հաճախ մերժում են ոչ գրավիչ կամ ցածր վարձատրվող աշխատանքների առաջարկը: Սա նշանակում է, որ թուլանում են աշխատանքի որոնման խթանները: Գործազրկության ապահովագրության համակարգի դրական կողմն այն է, որ թեթևանում են գործազրկության տնտեսական հետևանքները, գործազուրկներն ապահովվում են որոշակի

եկամուտներով և հնարավորություն են ստանում ինքնուրույն ընտրելու նոր աշխատանք, մասնագիտություն և բնակավայր: Նպաստները հաճախ կարող են աշխատանքի շուկայում ստվերային տնտեսության ձևավորման առիթ հանդիսանալ: Օրինակ, ՀՀ բնակչության մի մասը զբաղված է սպասարկման բնագավառում, սակայն պաշտոնապես համարվում է գործազուրկ:

Գործազրկության ապահովագրության այս համակարգն ունի մշտապես կատարելագործման անհրաժեշտություն: Ամենատարածված մոտեցումներից մեկն այն է, որ գործազրկության նպաստ պետք է վճարեն այն գործատուները, որոնք աշխատանքից ազատել են աշխատողներին: «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ գործատուները պարտավոր են. «վերակազմավորման, լուծարման, աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման հետևանքով ազատվող յուրաքանչյուր անձի համար զբաղվածության հիմնադրամ փոխանցել գումար՝ ազատվողի ամսական միջին վաստակի չափով» (հոդված 18, կետ «դ»): Ըստ վերոհիշյալ օրենքի՝ Զբաղվածության հիմնադրամը կոչված է ապահովելու զբաղվածության պետական կարգավորման իրականացման ֆինանսավորումը: Այն ձևավորվում է հետևյալ աղբյուրներից.

- գործատուների պարտադիր ապահովագրական մուծումներից,
- աշխատողների աշխատավարձից կատարվող պարտադիր ապահովագրական մուծումներից,
- գործատուների լրացուցիչ հատկացումներից, որոնք մուծվում են, եթե գործատուն, ըստ ՀՀ կառավարության սահմանած քվոտայի, չի կատարում հաշմանդամներին աշխատանքի տեղավորման կամ համապատասխան նոր աշխատատեղերի ստեղծման պահանջները, յուրաքանչյուր չհատկացված աշխատատեղի դիմաց մուծում է իր մեկ աշխատողի տարեկան միջին աշխատավարձի չափով,
- պետական և համայնքների բյուջեներից կատարվող հատկացումներից,
- ՀՀ և այլ երկրների գործատուների, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, անձանց կամավոր մուծումներից և այլ մուտքերից:

Տարբեր երկրներում գործող ապահովագրական ծրագրերի մեծ մասը հիմնված է մասնակի փոխհատուցման համակարգի վրա: Այսինքն՝ աշխատողներին աշխատանքից ազատող ձեռնարկություններից գանձվում է հետագա նպաստի միայն մի մասը:

Աշխատանքի շուկայի կարգավորման ակտիվ քաղաքականությունը զերծ է վերոհիշյալ թերություններից: Այս քաղաքականությունը նպաստում է աշխատուժի շարժունակության աճին: Տնտեսական անկման ժամանակաշրջանում այն կարող է ներառել ժամանակավոր աշխատանքների տրամադրում՝ նպատակ ունենալով պահպանել աշխատողների ստաժը և որակավորումը: Սակայն ակտիվ քաղաքականությամբ նախատեսվող ծրագրերը ոչ միշտ են ցանկալի արդյունքներ տալիս, քանի որ վերապատրաստում կարելի է իրականացնել այն մասնագիտությունների

գծով միայն, որոնց նկատմամբ շուկայում գոյություն ունի պահանջարկ: Իսկ գործնականում զբաղվածության ծառայությունների կողմից դրա հաշվառումը ոչ միշտ է ճշգրտորեն և հեշտությամբ իրականացվում: Այդ պատճառով էլ ակտիվ քաղաքականությունը ևս հաճախ արդյունավետ չի լինում: Սակայն զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ ակտիվ քաղաքականության՝ հստակ, հասցեագրված և արդյունավետ կառավարմամբ իրականացման դեպքում հնարավոր է հասնել գործազրկության մակարդակի կրճատման:

Ընդհանրացնելով, կարելի է ասել, որ ակտիվ քաղաքականության միջոցները կարևոր դեր ունեն, սակայն դրանք մեծ ծախսեր են պահանջում, ուստի պետությունն այն պետք է իրականացնի այն դեպքերում, երբ հնարավոր չէ սպասել շուկայական մեխանիզմի արագ ինքնակարգավորում: Աճող գործազրկության պայմաններում համատարած վերապատրաստման ծախսերը կարող են քիչ արդյունավետ լինել: Նման պայմաններում պետության զբաղվածության ծառայություններն իրենց ուշադրությունը պետք է կենտրոնացնեն ամենաանպաշտպան խավերի, հատկապես երկարաժամկետ գործազուրկների վրա՝ տարբեր ծրագրերի միջոցով փորձելով նրանց ապահովել համապատասխան աշխատանքով:

Աշխատանքի շուկայում ակտիվ քաղաքականության հիմնական խնդիրն է՝ արագացնել կառուցվածքային վերակազմավորման գործընթացը, կանխարգելել գործազրկության տևողության աճը և իջեցնել գործազրկության մակարդակը:

Գործազրկության դեմ պայքարի ռազմավարությունը պետք է ներառի հետևյալ տարրերը.

- Ըստ տարբեր ցուցանիշների (ըստ ճյուղերի, մարզերի, մասնագիտության, սեռատարիքային խմբերի) գործազուրկների թվի մոնիտորինգ,
- Աշխատանքի շուկայի ենթակառուցվածքների ստեղծում,
- Քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների հայթայթում:

Ակտիվ քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները կարող են ձևավորվել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր աղբյուրներից: Ակտիվ քաղաքականության իրականացման ժամանակ զբաղվածության ծառայությունները, բացի իրենց հիմնական գործառույթից (գործազուրկների հաշվառում, թափուր տեղերի գրանցում և ներկայացում), պետք է կանխատեսեն սպասվող կրճատումները և արագորեն արձագանքեն դրան, ինչպես նաև օգնեն գործազուրկներին իրենց հնարավորությունները գնահատելու հարցում՝ վերապատրաստման համապատասխան ծրագրերում ընդգրկվելու համար: Նման ծառայությունների համար կատարվող ծախսումները մեծ չեն, իսկ դրանց արդյունավետությունը կարող է տարբեր լինել՝ կախված աշխատողների կատեգորիայից:

Բնակչության զբաղվածության և աշխատանքի շուկայի կարգավորման բնագավառում ՀՀ պետական քաղաքականությունը որոշվում է

«Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածով: Զբաղվածության ապահովման և կարգավորման պետական ծրագրերն իրականացնում է Զբաղվածության պետական ծառայությունը, որի հիմնական լիազորությունները ևս սահմանվում են վերոհիշյալ օրենքով:

Աշխատանքի, զբաղվածության և սոցիալական պաշտպանվածության բնագավառում պետական քաղաքականությունը և կառավարումն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Աշխատանքի շուկայի և զբաղվածության բնագավառում այս նախարարության նպատակներն ու հիմնական խնդիրներն են.

- աշխատանքի պետական կարգավորման քաղաքականության մշակումը և դրա իրականացումը,
- բնակչության զբաղվածության քաղաքականության մշակումը և դրա իրականացումը,
- պետական պարտադիր սոցիալական ապահովագրության քաղաքականության մշակումը և դրա իրականացումը,
- սոցիալական ապահովության քարտերի համակարգի վրա հիմնված սոցիալական ապահովագրության միասնական սկզբունքների մշակումը և դրանց իրագործման կազմակերպումը,
- սոցիալական աջակցության քաղաքականության մշակումը և դրա իրականացումը,
- հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության քաղաքականության մշակումը և դրա իրականացումը,
- սոցիալական ապահովության ոլորտի պետական նպատակային ծրագրերի մշակումը և դրանց կատարման համակարգումը,
- միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Վերոնշյալ նպատակների իրականացման և խնդիրների լուծման համար նախարարությունն իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնց մեծ մասը վերաբերում է աշխատանքի շուկայի և զբաղվածության հիմնախնդիրներին: Դրանցից կարևորագույններն են.

- աշխատանքային օրենսդրության կատարելագործման, աշխատանքային հարաբերություններում սոցիալական գործընկերության զարգացման առաջարկությունների մշակումը,
- աշխատանքային պայմանների բարելավման և աշխատանքի պաշտպանության վերաբերյալ առաջարկությունների մշակումը,
- բնակչության զբաղվածության բնագավառը կարգավորող օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկությունների մշակումը,
- աշխատուժի ներքին և արտաքին տեղաշարժի քաղաքականության մշակումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վրա է դրված նաև զանգվածային ազատումների կասեցումը՝ օրենքով նախատեսված շրջանակներում, ինչպես նաև սոցիալապես անապահով խա-

վերի համար նոր աշխատատեղեր ստեղծող և հները պահպանող գործատուների խրախուսումը:

15.3. Աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռները

Աշխատանքային ռեսուրսների վերարտադրության, դրանց բաշխման և օգտագործման վերլուծության և կանխատեսման նպատակով մշակվում են աշխատանքային ռեսուրսների ամփոփ հաշվեկշիռներ: Հանրապետության աշխատանքային ռեսուրսների հաշվետու ամփոփ հաշվեկշիռը մշակվում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, իսկ պլանային հաշվեկշիռը՝ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից:

Այս հաշվեկշիռների միջոցով ցույց են տրվում բնակչության զբաղվածության կառուցվածքը, բացահայտվում են տարբեր ոլորտների և ճյուղերի միջև աշխատանքային ռեսուրսների բաշխման իրական կապերը և համամասնությունները, ինչպես նաև աշխատուժի՝ գոյություն ունեցող ռեսուրսները:

Ամփոփ հաշվեկշիռ մշակվում է ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ առանձին մարզերի և տարածքների համար: Առանձին մարզերի և տարածքների կտրվածքով ամփոփ հաշվեկշիռների կազմումը հնարավորություն է տալիս պարզելու դրանց հագեցվածությունը աշխատանքային ռեսուրսներով և զբաղվածության աստիճանը:

Պլանային ամփոփ հաշվեկշռի մշակման նախնական փուլում վերլուծության է ենթարկվում հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքային ռեսուրսների օգտագործումը, դրանց կազմն ու կառուցվածքը և տրվում է բնակչության թվի ու սեռահասակային կազմի փոփոխության կանխատեսումը մոտակա ժամանակաշրջանի համար:

Նախնական փուլում աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռը կարող է մշակվել մի քանի տարբերակով՝ կախված աշխատանքի արտադրողականության աճի տեմպերից, արտադրողական ուժերի տեղաբաշխումից և այլն: Աշխատողների ընդհանուր թվի և արտադրությունից կտրված սովորողների թվի որոշումից հետո անցնում են աշխատանքային ռեսուրսների ամփոփ հաշվեկշռի մանրամասն մշակմանը: Այն բաղկացած է չորս բաժիններից: Առաջին բաժնում տրվում է բնակչության ընդհանուր թիվը, երկրորդում արտացոլվում են աշխատանքային ռեսուրսների թիվը և կազմը, երրորդ և չորրորդ բաժիններում՝ աշխատանքային ռեսուրսների բաշխումը՝ ըստ զբաղվածության ձևերի և ըստ տնտեսության ոլորտների ու ճյուղերի: Հանրապետության աշխատանքային ռեսուրսների տիպային ամփոփ հաշվեկշիռը՝ պայմանական թվերով, ներկայացվում է հետևյալ աղյուսակի ձևով (տե՛ս աղյուսակ 151.):

Անձնական օժանդակ և տնային տնտեսություններում զբաղվածների թիվը կանխատեսվում է՝ ելնելով այդ կատեգորիաների փաստացի թվաքանակի և կազմի վերլուծությունից և հաշվի առնելով այն գործոնները, որոնք կարող են ազդել նրանց փոփոխության վրա: Այդպիսի գործոն-

ներից են կանանց աշխատուժի ընդհանուր պահանջարկի ավելացումը, մինչև 3 տարեկան երեխաներ ունեցող կանանց և բազմազավակ մայրերի թվի փոփոխությունը:

Աշխատանքային ռեսուրսների ամփոփ հաշվեկշիռ (միջին տարեկան կտրվածքով), հազ. մարդ

Ցուցանիշներ	Բազիսային տարի	Կանխատես-վող տարի	Աճը կամ նվա-զումը (%%)
I. Բնակչության թիվը	3750	3770	100.5
II. Աշխատանքային ռեսուրսները, այդ թվում՝	2108	2120	100.6
• աշխատունակ տարիքի բնակչություն	2027	2040	100.6
• բարձր տարիքի աշխատողներ և մինչև 16 տարեկան աշխատող անչափահասներ	81	80	98.8
III. Աշխատանքային ռեսուրսների բաշխում, այդ թվում՝			
1. Զբաղված են տնտեսությունում, այդ թվում՝	1500	1455	97.0
• պետական հատվածում,	850.5	805.3	94.7
• ոչ պետական հատվածում, որից՝	649.5	649.5	100.0
- գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում,	469.0	482.0	102.8
- կոոպերատիվներում,	118.0	104.0	88.1
- անձնական օժանդակ տնտեսություններում,	49.0	49.0	100
- անհատական աշխատանքային գործունեություն:	13.5	14.7	106.9
2. Արտադրությունից կտրված սովորողներ	125.0	120.0	96.0
3. Տնային տնտեսությունում զբաղվածներ, որոնցից՝	371.0	385.0	103.8
• երեխաներ դաստիարակող կանայք	127.0	125.0	98.4
4.Գործազուրկներ	112.0	160.0	142.9
5. Գործազրկության մակարդակը՝ % (4:II)	5.3	7.5	-
IV. Զբաղվածների բաշխումը ըստ ոլորտների և ճյուղերի. ընդամենը, որից՝	1500	1455	97.0
1. Նյութական արտադրության ոլորտ, այդ թվում՝	1093	1067	97.6
- արդյունաբերություն,	323	300	92.9
- շինարարություն,	108	99.8	92.4
- գյուղատնտեսություն,	536	546	101.9
- անտառային տնտեսություն,	2.4	2.3	95.8
- տրանսպորտ և կապ,	28	27	96.4
- առևտուր, հանրային սնունդ,	65	62	95.4
- տեղեկատվական հաշվողական սպասարկում,	1.6	1.6	100.0
- նյութական արտադրության այլ ճյուղեր:	29	28.3	97.6

2. Սոցիալական ոլորտ, այդ թվում՝	368	351	95.4
- կրթություն, մշակույթ, արվեստ,	181	172	95.0
- գիտություն և գիտական սպասարկում,	23	21	91.3
- առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովման բնագավառ,	81	77	95.1
- բնակկոմունալ տնտեսություն:	83	81	97.6
3. Պետական, կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների կառավարման մարմինների ապարատ:	39	37	95.0

Աշխատանքային ռեսուրսների ամփոփ հաշվեկշռի չորրորդ բաժինը բնութագրում է ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը: Նյութական արտադրության մեջ զբաղվածների տեսակարար կշռի կրճատումը խոսում է աշխատանքային ռեսուրսների բաշխման առաջադեմ կառուցվածքի մասին, ենթադրում է աշխատանքի արտադրողականության ավելի բարձր մակարդակ:

Աշխատանքային ռեսուրսների փաստացի ամփոփ հաշվեկշիռը կազմելու նպատակով ԱՎԾ զբաղվածության և աշխատանքի վարձատրության բաժինը ամսական, եռամսյակային և տարեկան պարտադիր հաշվետվություններ է ստանում տնտեսավարող 9000 սուբյեկտներից: Ընդ որում, այդ սուբյեկտների կազմում ներառված են գրեթե բոլոր խոշոր և միջին ձեռնարկությունները, իսկ փոքրերի մասին տեղեկատվությունը ստացվում է ընտրանքային հետազոտությունների միջոցով: Այս հաշվեկշռի կազմման ժամանակ աշխատանքային ռեսուրսների հաշվարկը կատարվում է՝ ելնելով մշտական բնակչության թվաքանակից, որի մեջ մտնում են տվյալ տարածքում մշտապես բնակվողները, ներառյալ՝ մարդահամարի պահին ժամանակավոր բացակայողները: Այս հաշվառումն իրականացվում է վերջին մարդահամարի արդյունքների, հետագայում ծնվածների, մահացածների, հանրապետություն ժամանողների և հանրապետությունից մեկնողների կտրոնների հիման վրա: Ընդ որում, զբաղվածների և գործազուրկների թվաքանակի մասին 9000 սուբյեկտներից ստացված տվյալները ճշգրտվում են ընտրանքային հետազոտությունների արդյունքների և վարչական վիճակագրության տվյալների հիման վրա:

Օպերատիվ կառավարման և առանձին մարզերի ու քաղաքների աշխատանքային ռեսուրսների օգտագործման ու զբաղվածության մակարդակի գնահատման նպատակով մշակվում են նաև մասնակի հաշվեկշիռներ, ինչպիսիք են՝ առանձին մարզերի և քաղաքների աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռները, որակյալ աշխատուժի, կանանց աշխատուժի մասնակի հաշվեկշիռները և այլն:

15.4. Գործազրկության բնական մակարդակը և դրա ձևերը

Գործազրկության որոշակի մակարդակի առկայությունը բնորոշ է շուկայական տնտեսություն ունեցող բոլոր երկրներին: Նման տնտեսություններում գործազրկությունը գոյություն ունի մշտապես: Եվ գործազրկության բնական մակարդակը այն է, որի շուրջը տատանվում է իրական գործազրկությունը: Հաշվարկներ կատարելիս յուրաքանչյուր տարվա գործազրկության բնական մակարդակը ընդունվում է որպես նախորդ և գալիք 10 տարիների գործազրկության մակարդակների միջին թվաբանական: Գործազրկության բնական մակարդակը կարելի է բնութագրել նաև որպես մակրոտնտեսական հավասարակշիռ իրավիճակին համապատասխանող մակարդակ:

Գործազրկության բնական մակարդակը որոշող գործոնների մասին որոշակի պատկերացում կազմելու համար մշակվում է աշխատուժի դինամիկայի մոդելը: Ենթադրենք՝ L-ը տվյալ երկրի ողջ աշխատուժն է, E-ն՝ աշխատողների թիվը, իսկ U-ն՝ գործազուրկների թիվը: Այս դեպքում.

$$L=E+U \quad (1)$$

Իսկ գործազրկության մակարդակը՝ $\frac{U}{L}$ (2):

Հաշվարկների պարզեցման և ուշադրությունը գործազրկության մակարդակը որոշող գործոնների վրա կենտրոնացնելու նպատակով ենթադրենք, որ աշխատուժի մեծությունը մնում է անփոփոխ: s-ով նշանակենք աշխատողների՝ աշխատանքից ազատման մակարդակի ցուցանիշը, այսինքն՝ աշխատողների այն մասը, որը կորցնում է աշխատանքը, իսկ f-ով՝ աշխատանքի տեղավորման մակարդակի ցուցանիշը՝ գործազուրկների այն մասը, որը ամեն ամիս աշխատանք է գտնում: Ենթադրենք, որ այս երկու ցուցանիշներն էլ կայուն են և համոզվենք, որ դրանք են որոշում գործազրկության մակարդակը:

Եթե գործազրկության մակարդակը չի փոխվում, այսինքն՝ աշխատանքի շուկան կայուն է, ապա աշխատանքի ընդունվողների և աշխատանքից ազատվողների թիվը պետք է հավասար լինի.

$$fU=sE \quad (3)$$

Գործազրկության կայուն մակարդակը գտնելու համար կարող ենք ձևափոխել վերը նշված բանաձևը: Քանի որ (1) հավասարումից հետևում է, որ E=L-U, տեղադրելով E-ի արժեքը (3)-ի մեջ՝ կստանանք.

$$fU=s\,(L-U)$$

Հավասարման երկու մասերն էլ բաժանելով L-ի՝ կստանանք.

$f\frac{U}{L} = s(1-\frac{U}{L})$, առանձնացնելով $\frac{U}{L}$, կստանանք՝

$$\frac{U}{L} = \frac{s}{f+s}$$

Այս հավասարումը ցույց է տալիս, որ գործազրկության մակարդակը ($\frac{U}{L}$) կախված է աշխատանքի տեղավորման և աշխատանքից ազատման մակարդակներից: Որքան բարձր է աշխատանքից ազատման մակարդակը, այնքան բարձր է գործազրկությունը և որքան բարձր է աշխատանքի տեղավորման մակարդակը, այնքան ցածր է գործազրկությունը:

Ենթադրենք՝ ամեն ամիս աշխատանքից ազատվում է աշխատողների 1%-ը (S=0.01) և աշխատանքի է տեղավորվում գործազուրկների 20%-ը (f=0.20): Այս դեպքում գործազրկության կայուն մակարդակը կլինի.

$$\frac{U}{L} = \frac{0.01}{0.01+0.20} = 0.0476$$

Տվյալ օրինակում գործազրկության մակարդակը 5%-ի սահմաններում է:

Ելնելով գործազրկության բնական մակարդակի բերված մոդելից՝ կարելի է հանգել եզրակացության, որ գործազրկության բնական մակարդակի իջեցմանն ուղղված ցանկացած տնտեսական քաղաքականություն պետք է նպաստի կա՛մ աշխատանքից ազատումների մակարդակի կրճատմանը, կա՛մ էլ աշխատանքի տեղավորման մակարդակի բարձրացմանը:

Տնտեսագիտական գրականության մեջ հիմնականում տարբերակում են գործազրկության երեք ձև: Գործազրկության ամենատարածված ձևը հպանցիկ գործազրկությունն է: Յուրաքանչյուր չափահաս մարդու իրավունք է վերապահված ըստ իր ունակությունների և հնարավորությունների՝ ընտրելու գործունեության ցանկացած տեսակ, որն օրենքով արգելված չէ: «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքով (1.01.1997թ.) նախատեսվում է աշխատանքի ազատ ընտրության իրավունք: Այս իրավունքից օգտվելիս աշխատանքային ռեսուրսները կարող են գտնվել մշտական շարժման մեջ: Աշխատողների մի մասը կամավոր փոխում է աշխատատեղը, մյուսները նոր աշխատանք են փնտրում՝ աշխատանքից ազատվելու պատճառով, երրորդները ժամանակավորապես կորցնում են աշխատանքը՝ վերջինիս սեզոնայնության պատճառով: Աշխատանքային ռեսուրսների մի զգալի մասն էլ, հատկապես երիտասարդները, միայն առաջին անգամ են մտնում աշխատանքի շուկա և կատարում են աշխատանքի որոնման դեռևս առաջին քայլերը: Վերոհիշյալ բոլոր մարդիկ, նոր աշխատատեղերի որոնման ընթացքում, ժամանակավորապես լրացնում են գործազուրկների բանակը: Գործազուրկների այս խումբը անընդհատ շարժման և փոփոխման մեջ է: Այն ժամանակ, երբ նշված գործազուրկների մի մասը նորից տեղավորվում է աշխատանքի, աշխատանքային ռեսուրսների մեկ այլ խումբ, նմանատիպ պատճառներով, համալրում է գործազուրկների թիվը: Հպանցիկ գործազրկությունը կապված է աշխատանքի որոնման հետ: Հպանցիկ գործազրկությունն առաջանում է այն պատճառով, որ որոշակի ժամանակ է պահանջվում աշխատանքային ռեսուրսների կառուցվածքի և ազատ

աշխատատեղերի միջև համապատասխանության ապահովման համար: Գործազրկության այս տեսակը գոյություն ունի մշտապես, և դրա գոյությունը ինչ-որ տեղ նույնիսկ ցանկալի է ու կարող է դրական ազդեցություն ունենալ տնտեսության զարգացման վրա: Դա պայմանավորված է նրանով, որ սովորաբար հպանցիկ գործազրկությունն առաջանում է այն դեպքում, երբ աշխատողները, չբավարարվելով իրենց նախկին աշխատավարձով, սկսում են որոնել նոր, առավել արդյունավետ և բարձր վարձատրվող աշխատանք: Իսկ վերջինս աշխատողների համար ապահովում է ավելի մեծ եկամուտներ և նպաստում է աշխատանքային ռեսուրսների առավել արդյունավետ բաշխմանը:

Գործազրկության մյուս տեսակը *կառուցվածքային* գործազրկությունն է: Կառուցվածքային գործազրկությունը կարելի է նույնիսկ բնութագրել որպես հպանցիկ գործազրկության հաջորդ փուլ: Այս գործազրկությունն առաջանում է այն ժամանակ, երբ փոփոխվում են սպառողական պահանջարկի կառուցվածքը և արտադրության տեխնոլոգիան: Այսպես, որևէ արտադրատեսակի նկատմամբ սպառողական պահանջարկի նվազումը մինչև զրոյական մակարդակ, հանգեցնում է այդ արտադրատեսակն արտադրող մասնագետների գործազրկության: Կամ, եթե տվյալ արտադրատեսակն արտադրելու համար ներդրվում են նոր, ավելի կատարյալ տեխնոլոգիաներ, որոնք հին մասնագետները իրենց նախկին գիտելիքներով չեն կարող աշխատեցնել, դարձյալ այդ մասնագետները համալրում են գործազուրկների բանակը: Գիտության և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց, հին, իրենց դարն ապրած մասնագիտությունների փոխարեն նոր մասնագիտությունների պահանջարկ է առաջանում: Կառուցվածքային գործազրկության առաջացման պատճառն այն է, որ աշխատուժը բավականին դանդաղ է արձագանքում գիտատեխնիկական առաջադիմության պահանջներին, և նրա կառուցվածքը չի համապատասխանում աշխատատեղերի նոր կառուցվածքին: Այս անհամապատասխանությունն ունի օբյեկտիվ հիմքեր, քանի որ նոր մասնագետների պատրաստումը որոշակի ժամանակ և միջոցներ է պահանջում:

Հպանցիկ և կառուցվածքային գործազրկությունների միջև գոյություն ունեցող հիմնական տարբերությունները կարելի է բնորոշել հետևյալ կերպ.

- հպանցիկ գործազուրկներն ունեն որոշակի գիտելիքներ և ունակություններ, որոնք նրանք ցանկանում են ներդնել նոր աշխատատեղերում, իսկ կառուցվածքային գործազուրկները առանց որոշակի վերապատրաստման չեն կարող նոր աշխատանք ստանալ,
- հպանցիկ գործազրկությունն ունի կարճաժամկետ բնույթ, իսկ կառուցվածքայինը՝ երկարաժամկետ, ուստի վերջինս համարվում է գործազրկության ավելի բարդ տեսակ:

Գործազրկության հաջորդ տեսակը *պարբերաշրջանայինն է:* Այն անմիջականորեն կապված է տնտեսական զարգացման պարբերաշրջանների հետ: Բնականաբար, այդ գործազրկությունն ավելանում է տնտեսության անկման փուլում: Միանգամայն պարզ է, որ ապրանքների ու ծառայությունների նկատմամբ ընդհանուր պահանջարկի անկումը հան-

գեցնում է զբաղվածության կրճատման, հետևաբար և՝ գործազրկության աճի: Գործազրկության այս տեսակը խիստ բնութագրական է ՀՀ ժամանակակից տնտեսությանը:

Պարբերաշրջանային գործազրկությունը անմիջականորեն կախվածության մեջ է ապրանքների և ծառայությունների պահանջարկից: Այդ պահանջարկի պակասը նպաստում է պարբերաշրջանային գործազրկության աճին: Պարբերաշրջանային գործազրկությունը համարվում է գործազրկության ամենածանր տեսակը, և տնտեսության պետական կարգավորման հիմնական միջոցառումներն ուղղված են լինում հատկապես այս գործազրկության կրճատմանը: Պարբերաշրջանային գործազրկության մակարդակով է պայմանավորված լրիվ զբաղվածության մակարդակը: Աշխատանքային ռեսուրսների լրիվ զբաղվածությունն ապահովվում է այն դեպքում, երբ պարբերաշրջանային գործազրկության մակարդակը հավասար է զրոյի: Իսկ հպանցիկ և կառուցվածքային գործազրկությունները համարվում են տնտեսության բնականոն զարգացման հետևանքներ, որոնցից խուսափելն անհնար է: Այսինքն՝ լրիվ զբաղվածությունը դեռևս չի նշանակում գործազրկության այդ երկու տեսակների բացակայություն: Թերևս հակառակը, լրիվ զբաղվածության դեպքում գործազրկության մակարդակը հավասար է հպանցիկ և կառուցվածքային գործազրկությունների մակարդակների գումարին և համապատասխանում է գործազրկության բնական մակարդակին:

15.5. Կայուն իրական աշխատավարձը և սպասման գործազրկությունը

Գործազրկության պատճառների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատուժի շուկայում հավասարակշռության ձևավորման մեխանիզմները տարբերվում են ապրանքների և ծառայությունների շուկայի համապատասխան մեխանիզմներից: Ապրանքների և ծառայությունների շուկայում գները համեմատաբար ճկուն են, արագորեն արձագանքում են պահանջարկի ու առաջարկի փոփոխություններին և վերականգնում շուկայի հավասարակշռությունը: Իսկ աշխատավարձը այդքան ճկուն չէ: Եթե իրական աշխատավարձը ինչ-ինչ պատճառներով բարձր է առաջարկի և պահանջարկի հավասարակշռության մակարդակից, ապա աշխատուժի շուկայում առաջարկը կգերազանցի պահանջարկը: Սակայն կայուն աշխատավարձի պայմաններում ձեռնարկությունները (ֆիրմաները) կարող են ընդունել քիչ աշխատողներ, և առաջանում է գործազրկություն, որը կոչվում է սպասման գործազրկություն (տե՛ս գծապատկեր 15.1):

Եթե իրական աշխատավարձը հավասարակշռությունից բարձր է, տրամաբանական է գործատուների՝ աշխատավարձի իջեցման ձգտումը: Սակայն մի շարք պատճառներով գործատուները չեն կարող դիմել այդ քայլին: Այդ պատճառներն են.

1. բոլոր երկրներում գործում է նվազագույն աշխատավարձի մասին օրենքը,

2. արհմիությունները պայքարում են աշխատավարձի իջեցման դեմ,

3. գոյություն ունի խթանող աշխատավարձ հասկացությունը, որը ենթադրում է, որ բարձր աշխատավարձը նպաստում է աշխատանքի արտադրողականության աճին:



Կայուն իրական աշխատավարձի գոյությունը հանգեցնում է աշխատատեղերի կրճատման: Եթե իրական աշխատավարձը բարձր է աշխատուժի շուկայի հավասարակշռությամբ որոշվող մակարդակից, ապա աշխատուժի առաջարկը գերազանցում է պահանջարկը, որի հետևանքով առաջացած գործազրկությունը կոչվում է սպասման:

Նկ. 15.1. Կայուն իրական աշխատավարձի ազդեցությունը գործազրկության վրա

Նվազագույն աշխատավարձի մասին օրենքը բոլոր գործատուների համար սահմանում է աշխատանքի վարձատրության նվազագույն չափը: Շատ աշխատողների համար այդ նվազագույն չափը ոչ մի նշանակություն չունի, բայց որակավորում չունեցող և անփորձ մարդկանց համար այդ սահմանը աշխատավարձը բարձրացնում է հավասարակշռության մակարդակից վեր, որն էլ կրճատում է նման աշխատանքի նկատմամբ գործատուների պահանջարկը:

Աշխատավարձի չափը հաճախ որոշվում է արհմիությունների և գործատուների միջև կնքված կոլեկտիվ պայմանագրերի միջոցով: Խոշոր արհմիությունները կարողանում են պարտավորեցնել գործատուներին՝ վճարել առաջարկի և պահանջարկի հավասարակշռությունից բարձր աշխատավարձ, իսկ անհրաժեշտ աշխատողների թիվը որոշում են գործատուները: Այս դեպքում գործատուները վարձում են ավելի քիչ աշխատողներ՝ դրանով իսկ նպաստելով սպասման գործազրկության աճին: Վերջինս աշխատողների տարբեր խմբերի միջև տարաձայնությունների և բախումների պատճառ է դառնում: Այդ խմբերը կոչվում են աուտսայդերներ և ինսայդերներ: Ինսայդերներն այն աշխատողներն են, ովքեր զբաղված են որևէ աշխատանքով և կարող են ազդել աշխատավարձին առնչվող բանակցությունների ընթացքի վրա՝ ձգտելով պահպանել դրա բարձր մակարդակը: Իսկ աուտսայդերները տվյալ պահին չզբաղված-

ներն են, ովքեր չեն մասնակցում աշխատավարձի վերաբերյալ բանակցություններին: Վերջիններն իրենց ուսերին են կրում մյուսների բարձր աշխատավարձի բեռը:

Իրական աշխատավարձի կայունության վերջին պատճառը՝ խթանող աշխատավարձ հասկացությունը, բացատրվում է նրանով, որ բարձր աշխատավարձը.

1. նվազեցնում է աշխատուժի հոսունությունը, ինչն էլ կրճատում է նոր աշխատողների ընդունման և ուսուցման հետ կապված ժամանակը և ծախսերը,
2. բարելավում է աշխատողների որակական կազմը, որն էլ նպաստում է աշխատանքի արտադրողականության աճին,
3. բարձրացնում է աշխատողների ջանասիրությունը և պատասխանատվությունը:

Աշխատավարձի՝ հավասարակշռության մակարդակից բարձր պահպանումը հաճախ համապատասխանում է նաև գործատուների շահերին, քանի որ նպաստում է աշխատանքի արտադրողականության աճին, ինչպես նաև գործատուների եկամուտների ավելացմանը:

15.6. Աշխատանքի արտադրողականությունը և դրա աճի գործոնները

Աշխատանքի արտադրողականությունը բնութագրում է աշխատողների աշխատանքային ծախսերի արդյունավետության աստիճանը, որը չափվում է աշխատաժամանակի միավորի ընթացքում արտադրված արտադրանքի կամ մատուցված ծառայությունների մեծությամբ կամ էլ հակադարձ մեծությամբ՝ արտադրանքի կամ ծառայության միավորի վրա ծախսված աշխատաժամանակով: Աշխատանքի արտադրողականության աճը նպաստում է հասարակական արտադրության զարգացմանն ու մարդկանց՝ անընդհատ աճող նյութական ու հոգևոր պահանջմունքների բավարարմանը: Նյութական բարիքների արտադրության և ծառայությունների մատուցման ծավալի մեծացման հիմնական ուղին աշխատանքի արտադրողականության աճն է: Իսկ վերջինիս աճի հիմքը տեխնիկական առաջադիմությունն է:

Տնտեսության կառավարման, կազմակերպման և կարգավորման բնագավառի կարևորագույն խնդիրներից է աշխատանքի արտադրողականության բարձրացման հնարավորությունների բացահայտումը և դրանց արդյունավետ օգտագործմանը նպաստող միջոցառումների իրականացումը: Աշխատանքի արտադրողականության բարձրացման հնարավորությունները բացահայտելու և աճի տեմպերը կանխատեսելու համար պահանջվում է որոշել և դասակարգել արտադրողականության աճի վրա ազդող գործոնները:

Աշխատանքի արտադրողականության աճի գործոնները այն շարժիչ ուժերն ու պատճառներն են, որոնց ազդեցությամբ փոխվում է աշխա-

տանքի արտադրողականության մակարդակը: Այս գործոններն ըստ բնույթի բաժանվում են 3 խմբի.

1. նյութատեխնիկական գործոններ, որոնք կապված են արտադրության միջոցների կատարելագործման մակարդակի, որակի և օգտագործման աստիճանի հետ,
2. սոցիալ-տնտեսական գործոններ, որոնք կապված են կադրերի կազմի, նրանց որակավորման աստիճանի, աշխատանքային պայմանների, աշխատանքի նկատմամբ աշխատողների վերաբերմունքի հետ,
3. կազմակերպական գործոններ, որոնք կապված են արտադրության, աշխատանքի և կառավարման կատարելագործման հետ:

Առաջին խումբ գործոնների թվում գլխավոր տեղը զբաղեցնում է արտադրության տեխնիկական զինվածության բարձրացումը: Տեխնիկական առաջադիմությունը ենթադրում է աշխատանքի գործիքների, աշխատանքի առարկաների և աշխատուժի կատարելագործում: Աշխատանքի արտադրողականության հավելաճի շուրջ 75%-ը սովորաբար ձեռք է բերվում տեխնիկական առաջադիմության արդյունքում:

Սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունն աշխատանքի արտադրողականության աճի վրա, ըստ էության, քանակական գնահատման չի ենթարկվում:

Երրորդ խումբ գործոններն ունեն ինչպես ինքնուրույն տնտեսական նշանակություն, այնպես էլ պայմանավորում են գիտության և տեխնիկայի նվաճումների արդյունավետ օգտագործումը:

Աշխատանքի արտադրողականության աճի վրա գործոնների ազդեցությունը գնահատելու նպատակով դրանք ըստ ազդեցության ուղղությունների դասակարգվում են հետևյալ խմբերում.

1. Արտադրության կառուցվածքային տեղաշարժերը, որոնք ներկայացնում են թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ արտադրանքի առանձին տեսակների կամ առանձին արտադրությունների տեսակարար կշռի փոփոխությունները:
2. Արտադրության տեխնիկական մակարդակի բարձրացումը, որը ենթադրում է նոր տեխնոլոգիաների, ավելի արտադրողական մեքենաների և սարքավորումների ներդրում, ձեռքի աշխատանքի մեքենայացում:
3. Կառավարման, արտադրության և աշխատանքի կազմակերպման կատարելագործում, ինչին կարելի է հասնել արտադրության համակենտրոնացման, մասնագիտացման խորացման, աշխատաժամանակի օգտագործման բարելավման, աշխատանքի կազմակերպման առաջադիմական մեթոդների ներդրման, արտադրության կառավարման կատարելագործման ճանապարհով:
4. Արտադրության ծավալի փոփոխություն, որի արդյունքում փոփոխվում է արդյունաբերաարտադրական անձնակազմի կառուցվածքը:
5. Ճյուղային գործոններ, որոնք ենթադրում են արդյունահանող արդյունաբերության ճյուղերում բնական պայմանների փոփոխու-

թյուն և գյուղատնտեսական սեզոնային արտադրություններում արտադրության ժամանակի մեծացում և այլն:

Արտադրության կառավարման մակրոմակարդակում կիրառվում է աշխատանքի արտադրողականության աճի հաշվարկման անուղղակի մեթոդը: Այս մեթոդի էությունն այն է, որ նախ և առաջ պարզվում է, գործոններից յուրաքանչյուրի ազդեցությամբ աշխատուժի հարաբերական տնտեսումը, հետո միայն հաշվարկվում է այդ տնտեսման արդյունքում աշխատանքի արտադրողականության աճը: Այսինքն, նախ որոշվում է արդյունաբերաարտադրական անձնակազմի պայմանական այն թվաքանակը, որը կպահանջվեր բազիսային արտադրողականությամբ կանխատեսվող ժամանակաշրջանում նախատեսված արտադրանքն արտադրելու համար: Դա իրենից ներկայացնում է հաշվարկային թվաքանակը ($Թ_հ$), որը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Թ_հ = \frac{Ա_կ}{Ա_ա} \quad \text{կամ} \quad Թ_հ = Թ_բ \times \frac{Գ_ժ}{100}$$

որտեղ՝

$Ա_կ$-ն՝ արտադրանքի թողարկման ծավալն է կանխատեսվող ժամանակաշրջանում,

$Ա_ա$-ն՝ աշխատանքի արտադրողականությունը բազիսային տարում,

$Թ_բ$-ն՝ արդյունաբերաարտադրական աշխատողների թվաքանակը բազիսային տարում,

$Գ_ժ$-ն՝ արտադրանքի ծավալի աճը գալիք ժամանակաշրջանում, տոկոսներով:

Այնուհետև, ըստ վերոհիշյալ գործոնների, որոշվում է աշխատողների թվի հարաբերական տնտեսումը՝ արտահայտված արդյունաբերաարտադրական անձնակազմի թվով:

Այդ տվյալների հիման վրա աշխատանքի արտադրողականության հավելաճը ($\Delta Ա$) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$_{\Delta}Ա = \frac{Հ_տ}{Թ_հ \pm Հ_տ} \times 100$$

որտեղ՝

$Հ_տ$-ն՝ աշխատուժի հարաբերական տնտեսումն է բացարձակ թվով:

($Թ_հ – Հ_տ$)-ն՝ աշխատողների թիվը գալիք ժամանակաշրջանում, եթե գոյություն ունի աշխատուժի հարաբերական տնտեսում:

Ենթադրենք՝ բազիսային տարում արդյունաբերաարտադրական աշխատողների թվաքանակը 40000 է, մեկ աշխատողին բաժին ընկնող արտադրանքը կամ աշխատանքի արտադրողականությունը՝ 2 մլն դրամ, հետևաբար, արտադրանքի բազիսային թողարկումը կլինի.

40000 x 2 մլն = 80.000 մլն դրամ

Եթե նախատեսվում է արտադրանքի ծավալն ավելացնել 10%-ով (1.1 անգամ), ապա կանխատեսվող տարում պետք է արտադրվի 88000 մլն

դրամի (80.000x1.1=88000) արտադրանք: Բազիսային արտադրողականությամբ այդ արտադրանքը թողարկելու համար կպահանջվեր.

88000 մլն : 2 մլն =44000 աշխատող (կամ 40000 x 1.1=44000):

Իսկ եթե տեղի է ունեցել աշխատուժի հարաբերական տնտեսում, որը, ենթադրենք, կազմել է 2 հազար մարդ, ապա աշխատանքի արտադրողականության հավելաճը կկազմի.

$$\Delta Ա = \frac{2000 \times 100}{44000 - 2000} = 4.8\%$$

Կարևոր է նաև, թե արտադրանքի հավելաճի որ մասն է ձեռք բերվում աշխատանքի արտադրողականության աճի հաշվին: Այդ հաշվարկը կարելի է կատարել հետևյալ բանաձևի միջոցով.

$$Հ_ա = \left(1 - \frac{\Delta Թ_ա}{\Delta Ա_ծ}\right) \times 100$$

որտեղ՝

$Հ_ա$-ն՝ կանխատեսվող ժամանակաշրջանում արտադրանքի ծավալի հավելաճի բաժինն է (տոկոսներով) աշխատանքի արտադրողականության աճի հաշվին,

$\Delta Ա_ծ$-ն՝ արտադրանքի ծավալի հավելաճը (%),

$\Delta Թ_ա$-ն՝ աշխատողների թվի հավելաճը (%):

Մեր օրինակում՝ $Հ_ա = \left(1 - \frac{5}{10}\right) \times 100 = 50\%$

Արտադրության ծավալի աճի 50%-ը ձեռք է բերվել աշխատանքի արտադրողականության աճի, իսկ մնացած 50%-ը՝ աշխատողների թվի ավելացման հաշվին :

Ամփոփում

1. Աշխատուժը մարդու ֆիզիկական և մտավոր ունակությունների ամբողջությունն է, որը նա օգտագործում է արտադրական գործունեության ընթացքում:
2. Աշխատանքային ռեսուրս համարվում է բնակչության այն մասը, որն ունի անհրաժեշտ կրթություն, ունակություններ, որակավորում, մասնագիտական գիտելիքներ և առողջություն՝ որևէ օգտակար գործունեությամբ զբաղվելու համար:
3. Աշխատանքի շուկան աշխատուժի պահանջարկի և առաջարկի կամ առք ու վաճառքի հետ կապված հասարակական հարաբերությունների համակարգ է, որտեղ վաճառողն աշխատուժի տերն է, իսկ գնորդը՝ գործատուն:
4. Աշխատանքային ռեսուրսների վերարտադրության, նրանց բաշխման, օգտագործման, զբաղվածության մակարդակի գնահատման և կանխատեսման, ինչպես նաև օպերատիվ կառավարման նպատակով մշակվում են աշխատանքային ռեսուրսների ամփոփ և մասնակի հաշվեկշիռներ:
5. Գործազրկության բնական մակարդակը այն մակարդակն է, որը համապատասխանում է տնտեսության կայուն վիճակին և ըստ էության ներկայացնում է հպանցիկ և կառուցվածքային գործազրկությունների մակարդակների գումարը:
6. ՀՀ-ում զբաղվածության ապահովման պետական քաղաքականությունն իրականացվում է՝ ելնելով «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքից և մի շարք ենթաօրենսդրական ակտերից:
7. Սպասման գործազրկություն առաջանում է այն ժամանակ, երբ տարբեր պատճառներից և հանգամանքներից ելնելով՝ իրական աշխատավարձի մակարդակը բարձր է աշխատանքի շուկայում աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռության մակարդակից: Կայուն իրական աշխատավարձի առաջացման հիմնական պատճառներն են. օրենսդրորեն սահմանվող նվազագույն աշխատավարձի մեծությունը, արհմիությունների պայքարը աշխատավարձը բարձրացնելու և բարձր մակարդակի վրա պահելու ուղղությամբ, ինչպես նաև բարձր աշխատավարձի խթանող հատկությունը:
8. Աշխատանքի արտադրողականության աճը՝ բարձրացնելով աշխատանքի արդյունավետության մակարդակը, ՀՆԱ-ի, ԱԵ-ի, արտադրության ծավալի ավելացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, Զբաղվածության հիմնադրամի աղբյուրների ձևավորման պայմաններ է ստեղծում:

Թեստեր և խնդիրներ

1. ***Տնտեսապես ակտիվ բնակչություն համարվում են.***
   ա. նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտի աշխատողները,
   բ. աշխատանքային տարիքի բնակչությունը,
   գ. աշխատանքով զբաղվածները և գործազուրկները,
   դ. արդյունաբերության և գյուղատնտեսության աշխատողները:

2. ***Գործազրկության բնական մակարդակը կազմված է.***
   ա. թաքնված և սպասվող գործազրկության մակարդակների գումարից,
   բ. հպանցիկ և պարբերաշրջանային գործազրկության մակարդակների գումարից,
   գ. թաքնված և սեզոնային գործազրկության մակարդակների գումարից,
   դ.հպանցիկ և կառուցվածքային գործազրկության մակարդակների գումարից:

3. ***եթե s-ը աշխատողների աշխատանքից ազատման տեմպի ցուցանիշն է, f-ը՝ աշխատանքի անցնելու տեմպի ցուցանիշը, և այդ երկու ցուցանիշներն անփոփոխ են, ապա գործազրկության մակարդակը մոտավորապես հավասար է.***
   ա. f/ (f+s),
   բ. s/ (f+s),
   գ.(f+s) / f,
   դ.(f+s)/ s:

4. ***Ատոմային էլեկտրակայանի կառուցման հետևանքով փակվեցին մի շարք ՋԷԿ-եր և բազմաթիվ աշխատողներ կորցրեցին իրենց աշխատանքը: Դրա հետևանքով աճեց.***
   ա. և՛ հպանցիկ, և՛ պարբերաշրջանային գործազրկությունը,
   բ. միայն պարբերաշրջանային գործազրկությունը,
   գ. հպանցիկ գործազրկությունը,
   դ. կառուցվածքային գործազրկությունը:

5. ***Ըստ «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի՝ աշխատունակ բնակչության խմբերի դասակարգման մեջ չեն ներառվում.***
   ա. զբաղվածները,
   բ. գործազուրկները,
   գ. աշխատանք փնտրողները և չզբաղվածները,
   դ. անձնական տնտեսություններում զբաղվածները:

6. ***«Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ զբաղված են համարվում բնակչության հետևյալ խմբերը, բացառությամբ.***

ա. վարձատրվող պաշտոններում ընտրված, նշանակված կամ հաստատված անձինք,
բ. զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք,
գ. աշխատանքով ինքնուրույն իրենց ապահովող անձինք,
դ. միայնակ մայրերը:

7. Զբաղվածության ապահովման պետական քաղաքականության ռազմավարական խնդիրներից չէ.

ա. գործատուների մոտ աշխատունակ բնակչության տեղաբաշխումը,
բ. զանգվածային գործազրկության կանխարգելումը,
գ. կադրային ներուժի զարգացումը,
դ. կադրերի ուսուցման, վերապատրաստման, որակավորման բարձրացման համակարգի կատարելագործումը:

8. Եթե իրական աշխատավարձը բարձր է հավասարակշռության մակարդակից, ապա աշխատանքի առաջարկը.

ա. կախված է անվանական աշխատավարձից,
բ. պակաս է աշխատանքի պահանջարկից,
գ. ավել է աշխատանքի պահանջարկից,
դ. հավասար է աշխատանքի պահանջարկին:

9. Աշխատողների աշխատանքի արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշը.

ա. ֆոնդհատույցի ցուցանիշն է,
բ. կապիտալազինվածության ցուցանիշն է,
գ. թողարկվող արտադրանքի ծավալի աճն է,
դ. աշխատանքի արտադրողականության ցուցանիշն է:

10. Եթե թողարկվող արտադրանքի հավելաճը նշանակենք ΔL-ով, իսկ աշխատողների թվի հավելաճը՝ ΔY–ով, ապա աշխատանքի արտադրողականության աճի հաշվին ձեռք բերված արտադրանքի հավելաճի բաժինը կկազմի.

ա. $(1-\frac{\Delta L}{\Delta Y})x100$,

բ. $(1+\frac{\Delta L}{\Delta Y})x100$,

գ. $(1-\frac{\Delta Y}{\Delta L})x100$,

դ. $(1+\frac{\Delta Y}{L})x100$:

Հիմնական հասկացություններ

Աշխատուժ
Աշխատանքային ռեսուրս
Արդյունավետ զբաղվածություն
Գործազուրկներ
Աշխատանքի շուկա
Ամփոփ և մասնակի հաշվեկշիռներ
Գործազրկության բնական մակարդակ
Հպանցիկ գործազրկություն
Կառուցվածքային գործազրկություն
Պարբերաշրջանային գործազրկություն
Գործազրկության ապահովագրություն
Կայուն իրական աշխատավարձ
Սպասման գործազրկություն
Խթանող աշխատավարձ
Արտադրողականության աճի գործոններ

Հարցեր կրկնության համար

1. Բնակչության ո՞ր խմբերն են ընդգրկվում աշխատանքային ռեսուրսների կազմում:
2. Ովքե՞ր են դասվում տնտեսապես ակտիվ և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության շարքը:
3. Ու՞մ կողմից է կարգավորվում աշխատանքի շուկան:
4. Ի՞նչ նպատակ է հետապնդում աշխատանքային ռեսուրսների ամփոփ հաշվեկշռի մշակումը:
5. Ի՞նչ գործոններ են ազդում գործազրկության բնական մակարդակի վրա:
6. Ի՞նչ տարբերություններ գոյություն ունեն հպանցիկ և կառուցվածքային գործազրկությունների միջև:
7. Որո՞նք են զբաղվածության ապահովման պետական քաղաքականության ռազմավարական խնդիրները:
8. Ինչու՞ իրական աշխատավարձի մակարդակը կարող է բարձր լինել աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության մակարդակից:
9. Որո՞նք են աշխատանքի արտադրողականության աճի գործոններն ըստ ազդեցության ուղղությունների:

Գ Լ Ո Ւ Խ 16

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Դրամավարկային քաղաքականության էությունը և խնդիրները:
- Փողի կառուցվածքը և գործառույթները:
- Փողի շուկան և դրա հավասարակշռության պայմանները փողի քանակական տեսության և իրացվելիության նախընտրելիության տեսության շրջանակներում:
- Դրամավարկային հարաբերությունների պետական կարգավորումը, դրա մեխանիզմները, գործիքները և մարմինները:
- Ինֆլյացիան, դրա առաջացման պատճառները և հետևանքները:
- Հակաինֆլյացիոն քաղաքականությունը և դրա առանձնահատկությունները ՀՀ-ում:

16.1. Դրամավարկային քաղաքականության խնդիրները

Դրամավարկային քաղաքականությունը պետության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է: Այն դրամաշրջանառության և վարկերի կարգավորման նպատակով իրականացվող միջոցառումների համակարգ է, որը կոչված է ապահովելու կայուն տնտեսական աճ: Դրամավարկային քաղաքականությունն ուղղված է ինֆլյացիայի մակարդակի և դինամիկայի կարգավորմանը, ներդրումային ակտիվության աճին, ազգային արժույթի կայուն փոխարժեքի պահպանմանը և շուկայական տնտեսության սահուն գործունեության համար արդյունավետ ֆինանսական պայմանների ստեղծմանը:

Դրամավարկային քաղաքականությունը շուկայական տնտեսության պետական կարգավորման կարևորագույն միջոցներից է: Այդ է պատճառը, որ փողը և փողային մեխանիզմների գործունեությունը կարևոր տեղ են գրավել շուկայական տնտեսական հարաբերություններում: Սակայն դրանց հանդեպ վերաբերմունքը 20-րդ դարի ընթացքում բազմիցս փոփոխվել է: Այսպես 1920-ական թվականներին դրամական քաղաքականությանը տրվում էր չափազանց մեծ դեր և դիտարկվում էր իբրև երկրի զարգացման համար «հավերժական ծաղկում» ապահովելու միջոց:

1930-ական թվականների ճգնաժամի ցնցումներից հետո դրամավարկային կարգավորման արդյունավետության հարցը կասկածի տակ դրվեց: 1950-ական թվականներին կապիտալիստական աշխարհում

տեղի ունեցավ նոր շրջադարձ դեպի դրամական գործիքների կտրուկ ակտիվացումը, և փողը կրկին ձեռք բերեց կարևոր դեր տնտեսության կայունացման ծրագրերում:

Դրանում որոշակի նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ հետպատերազմյան շրջանում երկրների դրամավարկային համակարգը սկսեց ձերբազատվել պետության կողմից իրականացվող խիստ միջամտություններից, որի նպատակը վարկային շուկայի ու փողի էմիսիայի միջոցով պատերազմական ծախսերի ֆինանսավորումն էր: Դրա հետևանքով մեծացավ կենտրոնական բանկերի ինքնուրույնությունը, որոնք սկսեցին ակտիվ միջոցառումներ իրականացնել՝ փողի գնողունակության ամրապնդման նպատակով: Տնտեսական կյանքում փողի դերի մեծացումը առաջ բերեց նաև այդ ոլորտում կատարվող տնտեսագիտական հետազոտությունների աշխուժացում, որն անվանվեց «փողային ռենեսանս»:

Փողի և դրամական քաղաքականության տեսական հիմնախնդիրների ուսումնասիրությանը բնորոշ է երկու մոտեցում՝ քեյնսյան և մոնետարիստական: Առաջինի հիմքում տնտեսության ամենօրյա կառավարման գործընթացում փողի օպերատիվ օգտագործման գաղափարն է, իսկ երկրորդը մերժում է դրամական ոլորտում իրականացվող նման գործողությունները, քանի որ դրանք սրում են տնտեսական հակասություններն ու անհամամասնությունները և դժվարացնում շուկայական տարերային կայունացուցիչների գործողությունը: Ընդհանրապես, փողի լծակների օգտագործման ռազմավարությունը տնտեսական վերլուծության առավել քիչ համաձայնեցված և խիստ բևեռացված ոլորտներից է:

Դրամավարկային քաղաքականությունը առնչվում է վերարտադրության գործընթացի մակրոտնտեսական հիմնական համամասնություններին, տնտեսության կառուցվածքային փոփոխություններին, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, արտադրության դինամիկային, տնտեսության կայունացման և պետական շահերն արտահայտող այլ խնդիրներին:

Դրամավարկային քաղաքականության խնդիրներն են.

- դրամական շուկայի հավասարակշռության պահպանումը, շրջանառության մեջ եղած փողի զանգվածի վերահսկողությունն ու դրա կարգավորումը,
- տնտեսությունում ինֆլյացիայի երևույթների դեմ պայքարի կազմակերպումը, ազգային արժույթի փոխարժեքի կարգավորումը,
- տնտեսական պարբերաշրջանների կարգավորումը և տնտեսության աճի տեմպերի համահարթումը,
- տնտեսության իրական հատվածի ապահովումը էժան վարկային ռեսուրսներով:

Դրամավարկային քաղաքականությունն իրականացվում է դրամաշրջանառության կարգավորման, բանկային տոկոսադրույքների սահմանման, արժութային «միջանցքի» հաստատման և այլ միջոցառումների օգնությամբ:

16.2. Փողի էությունը, գործառույթները և կառուցվածքը

Փողը շուկայական տնտեսության անբաժան տարրերից է և կոչված է ապահովելու ինչպես տնտեսական աճի, այնպես էլ գների, զբաղվածության մակարդակների և դինամիկայի կայուն տեմպերը:

Փողն ունի էական և անընդհատ ազդեցություն շուկայի իրավիճակի և տնտեսական պարբերաշրջանների ընթացքի վրա: Փողն ապահովում է տնտեսական օրգանիզմում տեղի ունեցող «նյութափոխանակությունը»՝ փողային և ապրանքային անընդհատ հոսքերը: Այդ հոսքերն արտահայտվում են շուկայի և արտադրության միջև ձևավորվող կապերում, ապրանքների հսկա զանգվածի և փողային կապիտալի շարժերում, արտադրողական ուժերի զարգացումը վարկային, մասնավոր և պետական ֆինանսավորման աղբյուրներով խթանելու ընթացքում:

Տնտեսական կյանքում փողն ունի ավելի մեծ դեր, քան տնտեսական համակարգի մյուս՝ համեմատաբար պասիվ բաղադրիչները, գործիքներն ու միջոցները, որոնք կոչված են նպաստելու տնտեսության բնականոն աշխատանքին:

Փողն է, որ կենսունակություն է տալիս տնտեսական ողջ շրջապտույտին: Փողն է, իր «հակասություններով» հանդերձ, պայմանավորում մարդկանց բարեկեցության մակարդակը, նրանց հասարակական դիրքը, թույլ է տալիս հնարավորինս օգտվել քաղաքակրթության բարիքներից: Փողի տնտեսագիտական ուսումնասիրությունը խիստ կարևոր է շուկայական տնտեսության մեխանիզմի ըմբռնման և պետության կողմից տնտեսական կյանքի վերահսկողության կազմակերպման տեսակետից:

Փողը վճարման միջոց է, որը փոխանակվում է ապրանքների ու ծառայությունների հետ, ինչպես նաև վճարվում պարտքերի դիմաց: Այլ խոսքով, փողն ակտիվների ամբողջություն է, որն օգտագործվում է գործարքների կատարման ժամանակ:

Փողի էության բացատրման լավագույն միջոցը դրա գործառույթների բնութագրումն է: Դիտարկենք փողի հիմնական գործառույթները.

1. փողը կուտակման կամ խնայողության միջոց է,
2. փողն արժեչափ է,
3. փողը շրջանառության միջոց է:

Խնայողության միջոց լինելու գործառույթն արտահայտվում է այն ժամանակ, երբ ներկա գնումների ու գործարքների իրականացումը տեղափոխվում է ժամանակի մեջ, հետաձգվում: Փողի՝ խնայողության միջոց լինելը հնարավորություն է տալիս այն կուտակել, այսինքն՝ կուտակել գնողունակությունը և դա իրացնել որոշ ժամանակ անց, տնտեսական գործունեության կարգավորման նպատակով: Ամենևին պարտադիր չէ, որ դրամական մուտքերի ստացումն ու դրանց օգտագործումը անմիջաբար հաջորդեն միմյանց: Սակայն կուտակման համար փողը ամենակատարյալ միջոցը չէ, քանի որ գների բարձրացման հետևանքով դրա արժեքն ընկնում է: Բայց, այնուամենայնիվ, փողի որոշակի միջոցներ տնօրինելիս մարդիկ կենցաղում կամ տնտեսական գործունեության ընթացքում շահագրգռված են լինում փողը կուտակել՝ ապագայում ապրանքներ ու

ծառայություններ ձեռք բերելու կամ դրանց տնտեսական օգտագործումն առավելագույն չափով ապահովելու նպատակով:

Որպես արժեչափ, փողը հնարավորություն է տալիս քանակապես որոշել և հաշվի առնել տնտեսական պաշարների և հոսքերի մեծությունը, սահմանել և պահպանել համամասնությունները տնտեսական կյանքի տարբեր ոլորտների և երևույթների միջև, իրականացնել տնտեսության կարգավորումը բոլոր մակարդակներում, գնահատել տնտեսական գործառույթները:

Որպես շրջանառության միջոց, փողը հնարավորություն է տալիս նվազեցնել գնման և վաճառքի հետ կապված շրջանառության ծախսերը: Այսպես, փողի կիրառմամբ հնարավոր է խուսափել բարտերային փոխանակության հետ կապված դժվարություններից, որոնք առաջանում են շուկայի բարդ տնտեսական գործունեությունների ընթացքում, երբ շուկայի մասնակիցների պահանջմունքները չեն համընկնում: Հայտնի է, որ բարտերային տնտեսության պայմաններում գոյություն չունի փոխանակության միասնական, բոլորի կողմից ընդունված միջոց, և ապրանքները փոխանակվում են անմիջականորեն միմյանց հետ:

Տնտեսական քաղաքականության մշակման և տնտեսական վերլուծությունների համար բավական չէ պարզել փողի էությունն ու դրա գործառույթները: Անհրաժեշտ է նաև որոշել փողի կազմը, հիմնավորվել շրջանառության մեջ եղած փողի այն զանգվածը, որն անհրաժեշտ է արտադրության ծավալի աճն ապահովելու, զբաղվածության և ինֆլյացիայի ծրագրային մակարդակները պահպանելու համար:

Տվյալ պահին տնտեսությունում եղած փողի զանգվածը կոչվում է փողի առաջարկ: Այն կարգավորվում և վերահսկվում է պետության կողմից, օրենսդրությանը համաձայն:

Արդեն ասվել է, որ փողը գործառնությունների իրականացման ժամանակ օգտագործված ակտիվների ամբողջությունն է: Հետևաբար, փողի քանակը կամ դրա առաջարկը հենց այդ ակտիվների ամբողջությունն է: Գործարքների համար, ելնելով նպատակահարմարությունից, կարող են օգտագործվել տարբեր ակտիվներ կամ փողի տեսակներ:

Նախ, փողի քանակի մեջ պետք է առաջին հերթին ընդգրկել ակտիվները՝ կանխիկ փողի տեսքով: Դա շրջանառության մեջ մտած թղթադրամի ու մետաղադրամի հանրագումարն է: Սրանց սեփական արժեքը չնչին է, և փողի դերը դրանց տրված է կառավարության որոշմամբ:

Ժամանակակից աշխարհում ընդունված են թղթադրամները, սակայն երկար ժամանակ փողի դեր են կատարել այնպիսի ապրանքներ, որոնք ունեն իրենց սեփական արժեքը: Նման փողերը կոչվում են ապրանքային փողեր: Այդ տեսակետից, առավել տարածված ապրանքային փողի օրինակ են ոսկին, արծաթը:

Ակտիվների մյուս տեսակը այն փողերն են, որոնք հայտնի են իբրև չեկային ավանդներ կամ չեկային հաշիվներ: Դրանք այնպիսի ավանդներ են, որոնցից միջոցները կարող են փոխանցվել երրորդ անձանց՝ գործարքների դիմաց վճարման նպատակով: Սրանց մեջ են մտնում նաև ցպահանջ ավանդները, որոնց հաշիվներից տրված չեկերը նույնքան

հարմար են, ինչպես և կանխիկ դրամը փոխանակային գործառնությունների դեպքում:

Այսպիսով, շրջանառության մեջ եղած փողի զանգվածի տարրերն են՝ կանխիկ փողը, չեկային ավանդները, ցպահանջ ավանդները, իրացվելի արժեթղթերը, ոչ փողային իրացվելի միջոցները:

Փողի քանակը, որն անհրաժեշտ է տվյալ պահին շուկայական տնտեսության գործունեության ապահովման համար, որոշվում է դրամաշրջանառության օրենքով:

Շրջանառության մեջ եղած փողի քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Φ = \frac{Գ+Վ - Վ_ժ - Վ_{Φմ}}{Ա_ր}$$

որտեղ՝

Գ - ն՝ ապրանքների և ծառայությունների գների գումարն է,

Վ – ն՝ տվյալ ժամանակահատվածում իրականացվող վճարումների գումարն է,

$Վ_ժ$ – ն՝ ժամկետը չլրացած վճարումների գումարն է,

$Վ_{փմ}$ – ն՝ փոխադարձ մարվող վճարների գումարն է,

$Ա_ր$ - ն՝ փողի շրջանառության արագությունը:

16.3. Փողի շուկան և դրա հավասարակշռությունը

Շուկայական տնտեսության նորմալ գործունեության ապահովումը ենթադրում է փողի շուկայի առկայություն: Այդ շուկայում փողի նկատմամբ եղած պահանջարկի և առաջարկի փոխազդեցության հետևանքով ձևավորվում է հավասարակշիռ տոկոսադրույք, որն էլ հանդես է գալիս իբրև փողի «գին»:

Փողի առաջարկը շրջանառության մեջ եղած փողի զանգվածն է, որը տվյալ պահին երկրում շրջանառվող վճարման միջոցների ամբողջությունն է: Երկրի կենտրոնական բանկը վերահսկում է շրջանառության մեջ եղած փողի քանակը, որը կախված է փողի պահանջարկից:

Փողի շուկայի հավասարակշռությունն առաջանում է փողի պահանջարկի ու առաջարկի հավասարության դեպքում: Դիտարկենք այդ հավասարակշռությունը փողի դասական քանակական տեսության և Քեյնսի իրացվելիության նախընտրելիության տեսության հիման վրա:

Փողի քանակական տեսությունն արտահայտում է փողի քանակի և տնտեսական այլ փոփոխականների միջև գոյություն ունեցող կապերը: Մասնավորապես, այն հնարավորություն է տալիս վերլուծելու գների մակարդակի, արտադրության իրական ծավալի, զբաղվածության մակարդակների կայունացման, մակրոտնտեսական իրավիճակների և փողի քանակի միջև գոյություն ունեցող փոխկապվածությունը:

Փողի քանակական տեսության համաձայն՝ փողի նկատմամբ պահանջարկը ուղիղ կախվածության մեջ է գների մակարդակից և արտադրության իրական ծավալից և հակադարձ կախվածության մեջ՝ փողի

շրջապտույտի արագությունից: Դա երևում է փողի քանակական տեսության հավասարումից, որն ունի հետևյալ տեսքը.

$$M \cdot V = P \cdot Y$$

որտեղ՝

M- ը՝ փողի քանակն է,

V- ն՝ փողի պտույտի արագությունը կամ փողի միավորի՝ ձեռքից ձեռք անցնելու թիվը,

Y – ը՝ թողարկված արտադրանքի ծավալը,

P – ն՝ արտադրանքի միավորի գինը:

Բանաձևից երևում է, որ եթե տնտեսությունում շրջանառվում է M քանակի փող, տարվա ընթացքում հասարակության կողմից ստեղծվում է (P.Y) արժեքի արտադրանք, և գործարքների իրականացման ժամանակ օգտագործվում է (M V) չափով փողի զանգված, ապա անհրաժեշտ է, որ դրամի յուրաքանչյուր միավոր 1 տարվա ընթացքում ձեռքից ձեռք անցնի

$$V = \frac{PY}{M}$$ անգամ:

Փողի քանակական տեսության հավասարումը նույնություն է, և որևէ փոփոխականի փոփոխությունը հանգեցնում է նաև մյուսների փոփոխությանը: Օրինակ, եթե փողի քանակն ավելանում է, իսկ դրա պտույտի արագությունը մնում է նույնը, ապա պետք է աճի կամ գինը, կամ արտադրության ծավալը:

Փոխարինելով շրջանառության մեջ եղած փողի քանակը (M) փողի պահանջարկով (MD) և ձևափոխելով հավասարումը՝ կստանանք.

$$MD = \frac{PY}{V}$$

Վերջինս արտահայտում է փողի պահանջարկի վրա ազդող գործոնները: Հավասարումը ցույց է տալիս, որ փողի պահանջարկն ուղիղ համեմատական է գներին ու արտադրության իրական ծավալին և հակադարձ համեմատական փողի շրջապտույտի արագությանը: Փողի պահանջարկի ֆունկցիան կարելի է արտահայտել նաև փողի քանակական տեսության հավասարման հետևյալ ձևափոխությամբ.

$$M/p = Y/V$$

(M/P) արտահայտությունը ցույց է տալիս ապրանքների ու ծառայությունների այն ծավալը, որ կարելի է ձեռք բերել փողի տվյալ քանակի պայմաններում: Այն ստացել է «փողի իրական պաշար» անվանումը և փաստորեն հաշվի է առնում փողի գնողունակությունը: Հավասարումը ցույց է տալիս, որ փողի իրական պաշարի պահանջարկը $(M/p)^d$ համեմատական է եկամտին: Եթե նշանակենք $K = \frac{1}{V}$, ապա՝ $(M/p)^d = K\ Y$: Դա կնշանակի, որ եկամտի աճը հանգեցնում է փողի իրական պաշարի պահանջարկի մեծացման:

Ընդունենք պայման փողի պտույտի կայուն արագության վերաբերյալ, որը հնարավորություն կտա կատարելու որոշակի հետևություններ տնտեսության վրա փողի առաջարկի ազդեցության մասին: Օրինակ, փողի պտույտի կայուն արագության դեպքում փողի առաջարկի յուրաքանչյուր փոփոխություն կհանգեցնի ՀՆԱ անվանական ծավալի համամասնական փոփոխությանը: Քանի որ ՀՆԱ իրական մեծությունը որոշված է արտադրական ֆունկցիայով $\left(\overline{Y} = F(\overline{K}, \overline{L})\right)$, ապա ՀՆԱ անվանական ծավալի փոփոխությունը ամբողջովին պայմանավորված է գների մակարդակով: Այսպիսով, քանակական տեսությունից բխում է, որ գների մակարդակը որոշվում է փողի առաջարկով: Դա պարզորոշ երևում է նաև քանակական տեսության հավասարումը տոկոսային արտահայտությամբ ներկայացնելիս.

M (%-ային փոփ.) + V (%-ային փոփ.) = P (%-ային փոփ.) + Y (%-ային փոփ.):

M-ի տոկոսային փոփոխությունը վերահսկվում է երկրի կենտրոնական բանկի կողմից: V-ի տոկոսային փոփոխությունը ընդունել ենք հավասար 0-ի: Y-ի տոկոսային փոփոխությունը պայմանավորված է արտադրության գործոններով, որոնք տվյալ ժամանակահատվածում կայուն են: Իսկ P-ի տոկոսային փոփոխությունը ներկայացնում է հենց ինֆլյացիայի տեմպը, որն էլ մեր վերլուծության օբյեկտն է:

Այսպիսով, փողի քանակական տեսությունը ցույց է տալիս, որ եթե ԿԲ-ն պահպանում է փողի առաջարկը նույն մակարդակի վրա, ապա գների մակարդակը մնում է անփոփոխ, կամ՝ փողի առաջարկը պայմանավորում է ինֆլյացիայի տեմպը:

Փողի առաջարկը փոփոխվում է փողի լրացուցիչ քանակության թողարկման հետևանքով: Դա, հարկային մուտքերի մեծացման և բնակչությունից պարտք վերցնելու եղանակների հետ միասին, դառնում է պետության ծախսերը ֆինանսավորելու ուղիներից մեկը:

Երբ պետությունը ֆինանսավորում է իր ծախսերը փողի տպագրության միջոցով, տեղի է ունենում փողի առաջարկի աճ, և, արդեն հայտնի պատճառներով, դա էլ հանգեցնում է ինֆլյացիայի: Հաճախ ընդունված է նման իրավիճակը հավասարազոր համարել ինֆլյացիոն հարկի սահմանմանը: Այդ «հարկը» մուծում են նրանք, ովքեր պահում են կանխիկ փող, քանի որ գների բարձրացման հետևանքով բնակչության ձեռքին եղած փողի արժեքն ընկնում է:

Այդ պատճառով ինֆլյացիան հանդիսանում է հարկ՝ կանխիկ փողի վրա:

Ջ.Մ. Քեյնսը մերժեց փողի քանակական տեսությունը:

Փողի պահանջարկի քեյնսյան տեսությունը ստացավ *իրացվելիության նախընտրելիության տեսություն* անվանումը, ըստ որի՝ փողի պահանջարկը կախվածության մեջ դրվեց փողի իրացվելիության հատկությունից: Իրացվելիությունը կարելի է սահմանել իբրև ակտիվների արագ վերածում կանխիկի՝ առանց դրանց արժեքի կորստի: Մետաղադրամները և թղթադրամը, բանկային ցպահանջ ավանդները առավել իրացվելի ակտիվներ են:

Իրացվելիության նախընտրելիության տեսության մեջ կարևոր տեղ է հատկացվում տոկոսադրույքին: Հետևաբար, շրջանառության մեջ եղած փողի քանակի և ինֆլյացիայի փոխադարձ կապի քննարկումից հետո դիտարկենք ինֆլյացիայի և տոկոսադրույքի կապը: Տոկոսադրույքը տոկոսով արտահայտված այն գումարն է, որ վճարում է պարտատուն՝ պարտք վերցրած փողի համար:

Ենթադրենք՝ տեղադրել ենք մեր խնայողությունները բանկում՝ տարեկան 6%-ով: Մեկ տարի անց հանում ենք այդ խնայողությունները՝ տոկոսագումարի հետ միասին: Արդյոք հարստացել ենք 6%-ով՝ նախորդ տարվա համեմատ: Իհարկե, փողի քանակությունը այդքանով ավելացել է, բայց եթե այդ ընթացքում գները բարձրացել են, ապա մեր գնողունակությունը այդ մեծությամբ չի աճել: Այսպես, եթե ինֆլյացիայի տեմպը 4% է, ապա մեր կողմից ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների քանակը կաճի 2%-ով (6%-4%=2%): Իսկ եթե ինֆլյացիայի տեմպը լինի 8%, ապա մեր գնողունակությունը իրականում կնվազի 2%-ով:

Բանկի կողմից փաստացի տրվող տոկոսը կոչվում է անվանական տոկոսադրույք: Իսկ իրական տոկոսադրույքը հաշվի է առնում նաև ինֆլյացիայի ազդեցությունը, հետևաբար և՝ գնողունակությունը:

Եթե անվանական տոկոսադրույքը նշանակենք i-ով, իրականը՝ r-ով, ինֆլյացիայի տեմպը՝ Π-ով, ապա դրանց փոխադարձ կապը կարելի է արտահայտել հետևյալ կերպ.

$$r = i - \Pi$$

Այս տեսքով արտահայտված հավասարումը կոչվում է *Ֆիշերի հավասարում,* որը ցույց է տալիս, որ անվանական տոկոսադրույքի փոփոխությունը պայմանավորված է իրական տոկոսադրույքի և ինֆլյացիայի տեմպով:

Փողի քանակական տեսությունը և Ֆիշերի հավասարումը արտահայտում են փողի քանակի և անվանական տոկոսադրույքի կապը: Փողի քանակական տեսության համաձայն՝ փողի զանգվածի 1% հավելաճն առաջ է բերում ինֆլյացիայի տեմպի աճ նույնպես 1%-ով: Իսկ Ֆիշերի հավասարման համաձայն՝ ինֆլյացիայի տեմպի 1%-ով ավելացումը իր հերթին առաջ է բերում անվանական տոկոսադրույքի աճ 1%-ով: Այս հարաբերակցությունը ստացել է *Ֆիշերի էֆեկտ* անվանումը:

Իրական տոկոսադրույքը կարող է լինել երկու տեսակ: Այսպես, եթե փոխառուն և վարկատուն համաձայնության են գալիս անվանական տոկոսադրույքի սահմանման հարցում, նրանք չեն կարող իմանալ ինֆլյացիայի իրական մակարդակի մասին վարկի մարման պահին, բայց կարող են ինչ-որ չափով կանխատեսել այն: Այդ տեսանկյունից էլ առաջանում են իրական տոկոսադրույքի երկու հասկացություններ: Նշանակենք Π^e-ով ինֆլյացիայի սպասվող տեմպը ապագայում և $\Pi -$ով՝ ինֆլյացիայի փաստացի տեմպը: Այդ դեպքում սպասվող իրական տոկոսադրույքը հավասար կլինի (i-Π^e) -ի, իսկ փաստացի իրական տոկոսադրույքը՝ (i-Π)-ի:

Իրական տոկոսադրույքի երկու տեսակները կլինեն տարբեր, եթե ինֆլյացիայի փաստացի Π տեմպը շեղվի սպասվող Π^e-ից: Քանի որ անվանական տոկոսադրույքը սահմանելիս դեռ հայտնի չէ ինֆլյացիայի

փաստացի տեմպը, նշանակում է այն կարող է փոփոխվել միայն՝ կախված ինֆլյացիայի սպասվող տեմպից: Այստեղից էլ Ֆիշերի էֆեկտը ավելի ճշգրիտ կարելի է արտահայտել հետևյալ կերպ.

$$i = r + \Pi^e$$

Բանաձևից հետևում է, որ անվանական տոկոսադրույքի դինամիկան համընկնում է ինֆլյացիայի սպասվող տեմպի դինամիկային:

Այժմ դիտարկենք անվանական տոկոսադրույքի, փողի իրական պաշարի պահանջարկի ազդեցությունը ընթացիկ գների փոփոխության վրա: Ըստ փողի քանակական տեսության՝ ենթադրվում է, որ փողի իրական պաշարի նկատմամբ պահանջարկը համամասնական է եկամտին:

$$(M/p)^d = K\,Y$$

Սակայն փողի պահանջարկը կախված է ոչ միայն եկամտից, այլև տոկոսադրույքից: Այսինքն՝ ինչպես ապրանքների նկատմամբ պահանջարկը պայմանավորված է դրանց գնով, այնպես էլ փողի նկատմամբ պահանջարկը պայմանավորված է այն գնով, որը ստիպված ենք վճարել կանխիկ դրամի պահպանման դեպքում:

Դիտարկենք փողի առաջարկի ու պահանջարկի փոփոխության հետևանքով ձևավորվող՝ փողի շուկայի հավասարակշռության փոփոխությունը: Նախ դիտարկենք փողի առաջարկի փոփոխությունը, երբ պահանջարկը մնում է անփոփոխ:



Փողի առաջարկի աճը MS_1 -ից MS_2, երբ MD պահանջարկը անփոփոխ է, իջեցնում է անվանական տոկոսադրույքը i_1-ից i_2:

Նկ.16.1. Փողի առաջարկի փոփոխությունը կայուն պահանջարկի պայմաններում

Այժմ դիտարկենք, թե ինչ տեղի կունենա փողի պահանջարկի փոփոխության դեպքում, երբ առաջարկը մնա անփոփոխ.



Կայուն MS առաջարկի պայմաններում փողի պահանջարկի աճը MD_1-ից MD_2, բարձրացնում է տոկոսադրույքը i_1-ից i_2:

Նկ.16.2. Փողի պահանջարկի փոփոխությունը կայուն առաջարկի պայմաններում

Այսպիսով, կանխիկ դրամի պահպանման ծախսերը հավասար են անվանական տոկոսադրույքին: Հետևաբար՝ փողի պահանջարկի ֆունկցիան ընդհանուր տեսքով կարելի է գրել.

$$(M/p)^d = L\ (i,Y),$$

որտեղ՝ L-ը փողի պահանջարկի ֆունկցիան է:

Հավասարությունից հետևում է, որ փողի իրական պաշարի պահանջարկը ֆունկցիա է եկամտից և տոկոսադրույքից: Ընդ որում, որքան բարձր է եկամուտների Y մակարդակը, այնքան մեծ է փողի իրական պաշարի պահանջարկը: Եվ հակառակը, որքան բարձր է անվանական i տոկոսադրույքը, այնքան այդ պահանջարկը փոքր է:

Փողի պահանջարկի ընդհանուր բանաձևը, փողի քանակական տեսության համեմատությամբ, ավելի խորը պատկերացում է տալիս գների մակարդակի վրա ազդող գործոնների մասին: Քանակական տեսության համաձայն՝ փողի առաջարկը պայմանավորում է ընթացիկ գների մակարդակը: Մասամբ դա ճիշտ է, եթե ընդունենք, որ անվանական տոկոսադրույքն ու թողարկված արտադրանքի քանակը կայուն մեծություններ են: Սակայն անվանական տոկոսադրույքն անփոփոխ չէ և կախված է փողի քանակից:

Ասվածը բանաձևի տեսքով ներկայացնելու համար նախ հավասարեցնենք փողի իրական պաշարների առաջարկը դրա պահանջարկին.

$$M/p = (M/p)^d, \text{ հետևաբար}$$

$$M/p = L(i,Y) \text{ կամ}$$

$$M/p = (r+\Pi^e, Y):$$

Վերջին բանաձևից հետևում է, որ փողի իրական պաշարը կախված է ինֆլյացիայի սպասվող տեմպից: Հետևաբար, գների մակարդակը կախված է ոչ միայն փողի առաջարկի ներկա, այլև ապագայում սպասվող մակարդակից:

Իրոք, եթե երկրի ԿԲ-ն հայտարարում է փողի առաջարկի նախատեսվող ավելացման մասին, բայց փաստացի քանակությունը թողնում է

անփոփոխ, ապա կարելի է սպասել ինֆլյացիայի տեմպի արագացում: Ֆիշերի էֆեկտի համաձայն՝ դա հանգեցնում է անվանական տոկոսադրույքի բարձրացման, որն էլ իր հերթին առաջացնում է փողի իրական պաշարի պահանջարկի նվազում: Եվ քանի որ շրջանառության մեջ եղած փողի քանակը դեռ չի փոփոխվել, ապա փողի իրական պաշարի պահանջարկի $(M/p)^d$ նվազումը հանգեցնում է գների մակարդակի բարձրացման:

16.4. Դրամավարկային հարաբերությունների պետական կարգավորումը

Ինչպես տնտեսական բոլոր հարաբերությունների, այնպես էլ դրամավարկային հարաբերությունների կարգավորումը ենթադրում է փոխադարձաբար կապված գործընթացների առկայություն: Դրանք են՝ դրամավարկային հարաբերությունների կարգավորման մեխանիզմը, գործիքները կամ միջոցները և ինստիտուտները:

Դրամավարկային հարաբերությունների կարգավորման մեխանիզմը ենթադրում է համապատասխան ծրագրերի մշակում, օրինակ՝ հակաինֆլյացիոն ծրագրերի մշակում, որը ինֆլյացիայի դեմ պետական մարմինների կողմից իրականացվող պայքարի ակտիվ միջոց է: Այն կիրառվում է, որպես կանոն, արտակարգ իրավիճակներում, երբ պարզվում է, որ ազդեցության մնացած միջոցները (իրավիճակի համահարթումը, տնտեսական պարբերաշրջանի կարգավորումը և այլն) այլևս արդյունավետ չեն: Հակաինֆլյացիոն ծրագրերի հիմնական միջոցառումները ենթադրում են երկրի կառավարության և ԿԲ այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ դրամական քաղաքականության խստացումը, էմիսիայի կրճատումը, բնակչության եկամուտների կարգավորումը, բնական մենաշնորհ ունեցող ձեռնարկությունների արտադրանքի գների սահմանափակումը:

Դրամավարկային քաղաքականության գործիքներից են հաշվարկային տոկոսադրույքի քաղաքականությունը, գործառնությունները բաց շուկայում, պարտադիր պահուստների քաղաքականությունը:

Հաշվարկային տոկոսադրույքի քաղաքականությունը կիրառվում է ԿԲ կողմից տոկոսադրույքի որոշման ընթացքում, որը պայմանավորում է առևտրային բանկերին տրամադրվող վարկերի դիմաց վճարների մեծությունը:

Եթե ԿԲ-ն իջեցնում է հաշվարկային տոկոսադրույքը, ակնկալում է առևտրային բանկերի կողմից վարկերի ձեռքբերման հանդեպ հետաքրքրության մեծացում, հետևաբար՝ վարկերի տրամադրման գործում դրանց ակտիվության աճ և, վերջին հաշվով, տնտեսության մեջ փողի առաջարկի ավելացում: Դրա հետևանքով իջնում է առևտրային բանկերի վարկերի դիմաց տոկոսադրույքը, և ավելանում երկրի ներդրումային ակտիվությունը: Իսկ եթե ԿԲ-ն բարձրացնում է հաշվարկային տոկոսադրույքը, տեղի է ունենում հակառակ գործընթացը, և տոկոսադրույքը բարձրանում է՝ նվազեցնելով երկրի ներդրումային ակտիվությունը:

Առաջին դեպքում իրականացվում է «էժան» փողերի, իսկ երկրորդ դեպքում՝ «թանկ» փողերի կոշտ քաղաքականություն:

Հաշվարկային տոկոսադրույքի քաղաքականության նպատակը վարկային ինստիտուտների վերաֆինանսավորման պայմանների փոփոխության միջոցով փողի շուկայի և կապիտալի շուկայի իրավիճակի վրա ազդելն է:

Բաց շուկայում գործառնությունները տոկոսադրույքի քաղաքականության արդյունավետության բարձրացման գործիք են: Դրանց գործողության մեխանիզմը հիմնված է պետական արժեթղթերի և այլ վարկային պարտավորությունների գնման և վաճառքի վրա:

Բաց շուկայի գործառնությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք իրականացվում են ոչ թե շուկայական տոկոսադրույքներով, այլ նախապես որոշված կուրսով: Տոկոսադրույքները սահմանվում են դիֆերենցված ձևով, ԿԲ կողմից՝ ելնելով տնտեսական արժեթղթերի ժամկետից: Այսպես, եթե անհրաժեշտ է ընդլայնել փողի զանգվածը, ԿԲ-ն հրահանգ է տալիս ձեռք բերել պետական արժեթղթեր, այսինքն՝ իրականացնել գնումներ բաց շուկայում: Իսկ եթե ԿԲ-ն որոշում է կրճատել փողի քանակը, ապա հրահանգ է տալիս իրականացնել արժեթղթերի վաճառք:

Պարտադիր պահուստների քաղաքականությունը, որպես երկրի տնտեսության դրամավարկային կարգավորման գործիք, առավել գործուն միջոցներից է, որով ԿԲ-ն ազդում է բանկերի կանխիկ դրամի ռեսուրսների ծավալի և դրանց հնարավորությունների վրա: Պարտադիր պահուստների քաղաքականությունը կարելի է վերագրել փողի շուկայի վրա պետության ազդեցության ուղղակի, վարչական մեթոդներին:

Պարտադիր պահուստների նորմի բարձրացումը նվազեցնում է առևտրային բանկերի՝ վարկային փողերի ստեղծման հնարավորությունները: Նորմի իջեցումը ունենում է հակառակ ազդեցություն: Առաջին դեպքում տոկոսադրույքը բարձրանում է, երկրորդ դեպքում՝ իջնում: Դրան համապատասխան էլ ներդրումային ակտիվությունն առաջին դեպքում իջնում է, երկրորդ դեպքում՝ բարձրանում ու պայմանավորում տնտեսական աճի տեմպերի փոփոխությունը:

Այսպիսով, դրամավարկային քաղաքականության մեխանիզմում կարելի է առանձնացնել փոխկապված հինգ լծակներ.

- դրամավարկային քաղաքականության գործիքների օգտագործում (գործառնություններ բաց շուկայում, հաշվարկային տոկոսադրույքի սահմանում, պարտադիր պահուստների նորմի փոփոխություն),
- փողի զանգվածի ընդլայնում կամ նվազեցում,
- տոկոսադրույքի փոփոխություն փողի շուկայում,
- ամբողջական պահանջարկի փոփոխություն՝ կապված տնտեսության մեջ ներդրումային գործունեության ակտիվացման կամ դրա թուլացման հետ,
- ամբողջական առաջարկի փոփոխություն, որը կատարվում է ի պատասխան ամբողջական պահանջարկի փոփոխության:

Նշված լծակները միմյանց հետ սերտորեն կապված են: Այդ պատճառով դրանցից որևէ մեկի խափանումը թուլացնում է ամբողջ դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը: Այսպես, եթե ներ-

դրողները թույլ են արձագանքում տոկոսադրույքի նվազմանը, որը ձեռք էր բերվել փողի զանգվածի ընդլայնման հետևանքով, չի առաջանում ամբողջական պահանջարկի, հետևաբար և առաջարկի համապատասխան աճ: Այդ պայմաններում կարող են դիտարկվել ինֆլյացիոն երևույթներ: Նման իրավիճակը կարող է պայմանավորված լինել երկրում ոչ կայուն քաղաքական դրությամբ, որը սովորաբար ճնշում է ներդրումային ակտիվությունը:

16.5. Դրամավարկային քաղաքականության իրականացման մարմինները

Դրամավարկային քաղաքականություն իրականացնող ինստիտուտներից են՝ ԿԲ-ն, առևտրային բանկերը, ոչ բանկային վարկային կազմակերպությունները, ինչպես նաև ֆինանսների նախարարությունը:

Բանկային համակարգը բանկային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կառուցվածքի առաջատար օղակն է: Դրա գլխավոր խնդիրն է կուտակված կապիտալը ուղղել այն ոլորտները, որտեղ դրա նկատմամբ պահանջ կա: Բանկային համակարգի միջոցով է գործում կապիտալը տնտեսության առանձին ճյուղերի ու ոլորտների միջև բաշխելու շուկայական մեխանիզմը, և տեղի է ունենում շահույթի նորմի համահարթում:

Բանկային համակարգը տվյալ երկրում գործող բանկերի ամբողջությունն է: Այդ համակարգում, իր խնդիրներով ու գործառույթներով, ԿԲ-ն ունի առաջնային դեր, քանի որ որոշում է երկրի դրամավարկային քաղաքականությունը: ԿԲ-ն իրականացնում է առևտրային բանկերի և մասնագիտացված ֆինանսավարկային հիմնարկների (խնայողական հիմնարկների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային ֆոնդերի, ներդրումային ընկերությունների) գործունեության կարգավորումը: Այդ կարգավորման խնդիրը փողի նորմալ շրջանառության իրականացումն է՝ տնտեսության աճի կայուն տեմպերի ապահովման նպատակով:

ԿԲ հիմնական գործառույթներն են. փողի էմիսիան, երկրում փողի շրջանառության ու առևտրային բանկերի գործունեության վերահսկողությունը:

Առևտրային բանկերը մասնավոր բանկեր են: Դրանք փաստորեն անկախ են, բայց գործում են միասնական ֆինանսավարկային համակարգում և ենթարկվում են ինչպես օրենսդրությամբ նախատեսված, այնպես էլ ԿԲ կողմից սահմանված կարգավորման և վերահսկման կանոններին: Առևտրային բանկերն իրականացնում են ֆինանսավարկային ոլորտի գործառնություններ. ավանդների ընդունում և վարկերի տրամադրում, միջնորդություն վճարումներում, արժեթղթերի առքուվաճառք, պետական փոխառությունների տեղաբաշխում, քաղաքացիների գույքի՝ երաշխավորմամբ իրականացվող կառավարում:

Բանկային գործառնությունները բերում են շահույթ, որի մեծությունը որոշվում է իբրև փոխառուներից գանձվող տոկոսի գումարի և փոխատուներին վճարվող տոկոսի գումարի տարբերություն: Բանկային

շահույթից բացի, բանկի եկամտի մեջ ներառվում է նաև ներդրումներից ու բորսային գործառնություններից ստացվող շահույթը:

Բանկերից բացի, երկրի վարկային համակարգում ներառվում են նաև ոչ բանկային մասնագիտացված ֆինանսավարկային հիմնարկները, որոնք իրենց գործունեության բազմազանությամբ զիջում են բանկերին, սակայն մասնագիտացած են որոշակի ոլորտների և ճյուղերի վարկավորման ավելի նեղ շրջանակների գործառնություններում: Ոչ բանկային ֆինանսավարկային կազմակերպություններ են ներդրումային ընկերությունները: Սրանք տեղաբաշխում են իրենց բաժնետոմսերը մանր բաժնետերերի միջև և ստացված միջոցներով ձեռք բերում տարբեր ճյուղերի ֆիրմաների արժեթղթեր: Միջոցների նման ապակենտրոնացումը կամ, անհրաժեշտության դեպքում կենտրոնացումը, նվազեցնում է խնայողությունները ամբողջությամբ կորցնելու ռիսկը, որը ներդրողների համար կարևոր հանգամանք է:

16.6. Ինֆլյացիան և դրա առաջացման պատճառները

Ինֆլյացիան տնտեսության մակրոտնտեսական անկայունությունը բնութագրող հատկանիշներից է: Այն դրսևորվում է գների ընդհանուր մակարդակի բարձրացմամբ: Ընդ որում, գները կարող են բարձրանալ անհավասարաչափ. որոշ ապրանքների գներ կարող են կտրուկ բարձրանալ, մյուսներինը՝ ավելի դանդաղ, իսկ մնացածների գները կարող են ընդհանրապես չփոփոխվել:

Մինչև 1950-ական թվականները ինֆլյացիայի բարձր տեմպերը սովորաբար կապված են եղել պատերազմների հետ, իսկ դրանց բռնկումների միջև ընկած ժամանակահատվածում դիտվել են գների իջեցման կամ դեֆլյացիայի ժամանակաշրջաններ: Բայց ինֆլյացիան, իբրև երկարատև, կայուն բնութագրիչ, տնտեսությանը բնորոշ է դարձել հիմնականում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Ինֆլյացիայի մակարդակը բնութագրվում է որոշակի ժամանակահատվածում (ամիս, եռամսյակ, տարի) գների տոկոսային փոփոխությամբ: Ինֆլյացիան ձևավորվում է գնողունակ պահանջարկի ավելցուկի պայմաններում: Դրա պատճառները և՛ առաջարկի, և՛ պահանջարկի ոլորտներում են: Առաջինը կապված է ապրանքների ու ծառայությունների արտադրության ծավալի նվազման հետ, իսկ երկրորդը՝ շրջանառության մեջ բաց թողնված փողի զանգվածի աճի հետ: Այսպիսով, կարելի է ասել, որ ինֆլյացիան տնտեսական համակարգում առկա անհամամասնությունների բնականոն արձագանքն է շուկայական տնտեսության կողմից:

Տնտեսագետները դիտարկում են ինֆլյացիայի երկու տեսակ, որոնք հնարավորություն են տալիս առավել խորը բնութագրելու այդ երևույթն առաջացնող պատճառները: Դրանք են.

1. ծախսերի ինֆլյացիա,
2. պահանջարկի ինֆլյացիա:

Ծախսերի աճով պայմանավորված ինֆլյացիայի պատճառը այնպիսի գործոնների հետևանքով առաջացած գների բարձրացումն է, որոնք հանգեցնում են միավոր արտադրանքի ծախսերի մեծացման:

Միավոր արտադրանքի ծախսերի աճի հետևանքով կրճատվում է շահույթը և արտադրանքի այն ծավալը, որը կարող են առաջարկել ֆիրմաները գների գոյություն ունեցող մակարդակների պայմաններում: Արդյունքում՝ կնվազի ապրանքների ու ծառայությունների առաջարկը ողջ տնտեսությունում, որն էլ կհանգեցնի գների բարձրացման: Ծախսերի աճով պայմանավորված ինֆլյացիայի առաջացման պատճառներից են անվանական աշխատավարձի և հումքի, էներգիայի գների բարձրացումը: Դրանց հիմքում կարող են լինել արհմիությունների գործունեությունը կամ էլ հումքի և էներգիայի գների և դրանց ծախսերի չնախատեսված աճը:

Պահանջարկի ինֆլյացիան սովորաբար բացատրվում է առաջարկի նկատմամբ ամբողջական պահանջարկի գերազանցումով: Ստեղծվում է մի իրավիճակ, երբ տնտեսությունը փորձում է ծախսել ավելի շատ, քան ի վիճակի է արտադրել, քանի որ արտադրական ոլորտը արտադրանքի իրական ծավալը ավելացնելու հնարավորություն չունի: Այդ պատճառով պահանջարկի ավելցուկը հասցնում է գների բարձրացման:

Սակայն այս մեկնաբանություններն ավելի պարզունակ են, քան ամբողջական պահանջարկի և արտադրության ծավալի, ինչպես նաև զբաղվածության և գների մակարդակի միջև գոյություն ունեցող իրական փոխհարաբերությունները: Ներկայացված գրաֆիկը հնարավորություն է տալիս բացատրել այդ բարդությունները.



Անցումը առաջին հատվածից երկրորդին տեղի է ունենում գների աննշան աճի պայմաններում: Անցումը երկրորդ հատվածից երրորդին ուղեկցվում է գների արագ աճով, և արտադրության ծավալի լրացուցիչ միավոր աճի դեպքում ծախսերն ավելի արագ են աճում:

Նկ. 16.3. Գների և զբաղվածության մակարդակի կախվածությունը

Գրաֆիկի առաջին հատվածում ընդհանուր ծախսերը չափազանց փոքր են (C+I+G+NX), իսկ ՀՆԱ ծավալը՝ խիստ ցածր իր առավելագույն մակարդակից (լրիվ զբաղվածության պայմաններում): Գործազրկության մակարդակը բարձր է, արտադրական կարողությունների օգտագործման

աստիճանը՝ ցածր: Եթե ամբողջական պահանջարկն ավելանա, արտադրության ծավալը կմեծանա, գործազրկությունը կնվազի: Այս դեպքում գները կբարձրանան աննշան կամ ընդհանրապես չեն բարձրանա, որովհետև այդ փուլում գոյություն ունեն մեծ քանակությամբ անգործության մատնված աշխատանքային և նյութական ռեսուրսներ, որոնք կարող են գործարկվել գոյություն ունեցող գներով: Հետևանքը լինում է այն, որ արտադրության ծավալը էականորեն ավելանում է, իսկ գները չեն բարձրանում:

Պահանջարկի աճին զուգընթաց, տնտեսությունը մտնում է երկրորդ հատվածի մեջ, որը բնութագրվում է զբաղվածության և նյութական ռեսուրսների օգտագործման ավելի բարձր մակարդակով: Սակայն գները կարող են բարձրանալ հենց այս փուլում, որովհետև միշտ կլինեն այնպիսի ճյուղեր և ձեռնարկություններ, որոնք իրենց աշխատանքային և նյութական ռեսուրսներն ավելի շուտ կսպառեն և չեն կարողանա մեծացնել արտադրանքի առաջարկը: Այդ պատճառով էլ գները կբարձրանան՝ արտադրական ծախսերի մեծացման պատճառով: Աշխատանքի շուկայի սահմանափակումը մեծացնում է արհմիությունների ազդեցությունը աշխատավարձի բարձրացման վրա: Ինչ վերաբերում է ֆիրմաներին, ապա դրանք հիմնականում ընդունում են արհմիության պահանջները, քանի որ խուսափում են գործադուլներից՝ հատկապես երբ տնտեսությունը վերելք է ապրում: Բացի դրանից, գոյություն ունի նաև բարձր գների բեռը սպառողների ուսերին դնելու տարբերակը:

Այսպիսով, երկրորդ հատվածում առաջացած ինֆլյացիան անվանում են նաև «վաղաժամ», որովհետև այն սկսվում է մինչև երկրում լրիվ զբաղվածության ի հայտ գալը:

Երրորդ հատվածում լրիվ զբաղվածությունը արտահայտվում է ամբողջ տնտեսության առումով: Այստեղ արդեն տնտեսությունը չի կարող պահանջարկի հետագա աճին արձագանքել արտադրության ծավալի աճով: ՀՆԱ ծավալը հասնում է իր առավելագույն մակարդակին, և պահանջարկի հետագա աճը հանգեցնում է ինֆլյացիայի: Այսպիսով, հասարակության արտադրական հնարավորությունները գերազանցող պահանջարկը առաջ է բերում գների մակարդակի բարձրացում:

Ինֆլյացիայի առաջացման պահանջարկի և առաջարկի գործոնները կարող են արտահատվել բազմաթիվ երևույթներում:

Այսպես, տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են ինֆլյացիայի առաջացման հետևյալ պատճառները.

1. *Տնտեսությանը պետական միջամտության ուժեղացումը և պետական հատվածի աճը:* Սրա հետևանքով մեծանում է պետբյուջեի պակասուրդը, որի ֆինանսավորումը կատարվում է ԿԲ վարկերի հաշվին: Իսկ դա ենթադրում է շրջանառությունում փողի զանգվածի աճ:
2. *Խոշոր ֆիրմաների և տրանսպորտային կորպորացիաների առաջացումը:* Մենաշնորհները շահագրգռված են, որ առաջանա դեֆիցիտ, քանի որ գների բարձր մակարդակը պահպանելու հնարավորություն է ընձեռվում: Իրենց հերթին, արհմիությունները պայքարում են աշխատավարձի բարձրացման համար: Այդ «միացյալ

ջանքերի» շնորհիվ գներն ու աշխատավարձը «շարժվում» են միայն դեպի վեր:

3. *Տնտեսության կողմնորոշումը դեպի ծառայությունների ոլորտը:* Աշխատանքի արտադրողականությունն այս ոլորտում մեծանում է ավելի դանդաղ, քան ապրանքների արտադրությունում, որը չի անդրադառնում ծառայությունների ոլորտում զբաղվածների աշխատավարձի վրա:
4. *Եկամուտների ինդեքսավորման մեխանիզմների լայն տարածումը:* Կառավարությունը, ղեկավարվելով սոցիալական կայունություն հաստատելու խնդիրներով, բավարարում է հասարակության ավելացող պահանջմունքները, որով, փաստորեն, խթանում է ինֆլյացիայի հետագա ուժեղացումը:
5. *Արտաքին տնտեսական կապերի ընդլայնումը:* Բաց տնտեսության աճը մեծացնում է «ներմուծվող» ինֆլյացիայի վտանգը: Դա վերաբերում է արտասահմանյան ռեսուրսների գների բարձրացմանն ու արժույթների կուրսերի տատանումներին:
6. *Փողի զանգվածի նկատմամբ հսկողության բացակայությունը և թղթադրամի չհիմնավորված էմիսիան:* Սա անխուսափելիորեն հանգեցնում է շուկայում փողի այնպիսի զանգվածի առաջացման, որն ապահովված չէ ապրանքներով: Արդյունքում՝ բոլոր ապրանքների գները սկսում են բարձրանալ բոլոր շուկաներում՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ ինֆլյացիոն գործընթացների համար:
7. *Տնտեսության ոչ ռացիոնալ կառուցվածքը:* Ինչպես բոլոր տնտեսական երևույթները, այնպես էլ ինֆլյացիան, արտահայտում են այն երկրի տնտեսական առանձնահատկությունները, որտեղ դրանք ձևավորվում են: Այդ է պատճառը, որ տնտեսության կառուցվածքի բնորոշ գծերը դառնում են ինֆլյացիայի խորացման աղբյուր: Օրինակ, տնտեսության և բնակչության իրական պահանջմունքներին ապրանքների ու ծառայությունների արտադրության անհամապատասխանությունը առաջացնում է անհավասարակշռություն ու անհամամասնություն առաջարկի ու պահանջարկի միջև, ձևավորվում է դեֆիցիտ, որն էլ դառնում է գների բարձրացման պատճառ:

Այսպիսով, ինֆլյացիայի առաջացման պատճառների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կրում է ոչ միայն դրամական ու արտադրական գործընթացների ազդեցությունը, այլև բարդ սոցիալ-տնտեսական երևույթ է, որը պայմանավորված է շուկայական տնտեսության տարբեր ոլորտներում ձևավորվող անհամամասնություններով:

16.7. Ինֆլյացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները

Նախորդ ենթագլխում անդրադարձանք ինֆլյացիայի առաջացման պատճառներին, իսկ այժմ դիտարկենք դրա հետևանքները: Նախ քննարկենք ինֆլյացիայի ազդեցությունը եկամուտների վերաբաշխման գործընթացի վրա, այնուհետև այն վերլուծենք հասարակական արդյունքի ծավալի փոփոխության տեսակետից:

ա. Ինֆլյացիայի ազդեցությունը վերաբաշխման վրա

Ընդունելով, որ լրիվ զբաղվածության պայմաններում ազգային արդյունքի իրական ծավալը կայուն է, ավելի հեշտ է ներկայացնել, թե ինչպես է ազդում ինֆլյացիան բնակչության տարբեր խավերի եկամուտների ձևավորման վրա:

Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ իրական և անվանական եկամուտների միջև գոյություն ունեցող տարբերությունը: Անվանական եկամուտը փողի այն քանակն է, որ ստանում է մարդը աշխատավարձի, ռենտայի, տոկոսի կամ շահույթի տեսքով: Իսկ իրական եկամուտը որոշվում է ապրանքների ու ծառայությունների այն քանակով, որը կարելի է ձեռք բերել անվանական եկամտի գումարով: Հետևաբար, եթե անվանական եկամուտը աճի ավելի արագ, քան գների մակարդակը, ապա իրական եկամուտը կմեծանա: Եվ հակառակը, եթե գների մակարդակն աճի ավելի արագ, քան անվանական եկամուտը, ապա իրական եկամուտը կպակասի:

Իրական եկամտի փոփոխությունը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով.

Իրական եկամտի փոփոխություն (%) = Անվանական եկամտի փոփոխություն (%) - Գների մակարդակի փոփոխություն (%)

Այսպես, եթե անվանական եկամուտը տարվա ընթացքում աճում է 15%-ով, իսկ գների մակարդակը բարձրանում է 5%-ով, ապա նույն ժամանակահատվածում իրական եկամուտը մեծանում է 10%-ով (15%-5%): Եվ հակառակը, անվանական եկամտի 15% աճը, 20% ինֆլյացիայի պայմաններում, կիջեցնի իրական եկամուտը 5%-ով (15-20%):

Ինչպես տեսանք, ինֆլյացիան իրենից ներկայացնում է գնողունակության նվազում կամ այն ապրանքների ու ծառայությունների քանակի նվազում, որոնք կարելի է ձեռք բերել դրամի միավորով: Սակայն ինֆլյացիան միշտ չէ, որ հասցնում է անձնական եկամտի իրական մեծության նվազմանը կամ կենսամակարդակի իջեցմանը: Ճիշտ է, ինֆլյացիան նվազեցնում է գնողունակությունը, սակայն իրական եկամուտները կամ կենսամակարդակը կնվազեն այն դեպքում, երբ անվանական եկամտի աճը հետ մնա ինֆլյացիայի տեմպերից: Իսկ այս երևույթը տարբեր ձևով է արտահայտվում բնակչության տարբեր խավերի շրջանում՝ պայմանավորելով նրանց միջև եկամուտների վերաբաշխման ընթացքը: Այսպես, ակնհայտ է, որ ինֆլյացիան հարվածում է հաստատագրված եկա-

մուտներ ստացողների շահերին, որովհետև գների աճը գերազանցում է նրանց անվանական եկամուտների աճը:

Ինչ վերաբերում է չհաստատագրված եկամուտներ ստացողներին, ապա նրանք կարող են նույնիսկ շահել, քանի որ նրանց անվանական եկամուտները կարող են գերազանցել գների աճի տեմպերը: Սա հիմնականում վերաբերում է ֆիրմաների կառավարողներին և ընդհանրապես շահույթ ստացողներին: Օրինակ, եթե ֆիրմայի կողմից թողարկված պատրաստի արտադրանքի գները բարձրանան ավելի արագ, քան ռեսուրսների գները, ապա դրամական եկամուտները, ծախսերի համեմատ, կաճեն ավելի արագ: Արդյունքում՝ այդ խավի իրական եկամուտները կաճեն:

Ինֆլյացիան առնչվում է նաև խնայողություններ ունեցողների շահերին: Այսպես, գների բարձրացմանը զուգընթաց, նվազում է խնայողությունների իրական արժեքը կամ դրանց գնողունակությունը՝ իջեցնելով բնակչության այդ մասի իրական եկամուտների մակարդակը: Եկամուտների վերաբաշխումը, կապված ինֆլյացիայի հետ, արտահայտվում է վարկ ստացողների և վարկ տրամադրողների հարաբերություններում նույնպես: Օրինակ, անսպասելի ինֆլյացիան օգուտ է բերում առաջիններին և վնաս հասցնում երկրորդներին, քանի որ վարկի մարման ընթացքում ընկնում է փողի իրական արժեքը: Այդ պատճառով հաճախ ասում են, որ վարկ ստացողներին ինֆլյացիայի հետևանքով տրվում են «թանկ» փողեր, իսկ նրանք վերադարձնում են «էժան» փողերով:

Ինֆլյացիայի հետևանքների բնույթը կապված է նաև այն հանգամանքի հետ, թե այն սպասվող է, թե՝ անսպասելի: Սպասվող ինֆլյացիայի դեպքում եկամուտներ ստացողը կարող է միջոցներ ձեռնարկել ինֆլյացիայի բացասական հետևանքները կանխելու կամ գոնե մեղմելու համար:

Սակայն, քննարկելով ինֆլյացիայի հետևանքները հասարակության տարբեր խավերի համար, անհրաժեշտ է նշել, որ յուրաքանչյուր ընտանիք միաժամանակ և՛ հաստատագրված, և՛ չհաստատագրված եկամուտներ ստացող է և անշարժ գույքի սեփականատեր: Նրանցից ամեն մեկը տարբեր ձևով է արձագանքում ինֆլյացիային՝ նվազեցնելով կամ մեծացնելով ընտանիքի իրական եկամուտները:

Հետևաբար, անհրաժեշտ է ուսումնասիրել ինֆլյացիայի հետևանքները, որպեսզի օբյեկտիվ պատկերացում կազմենք բնակչության իրական իրավիճակի մասին:

Ինչպես տեսանք, ինֆլյացիայի տեմպերի արագացումը առաջացնում է դրամական միջոցների իրական պաշարի կրճատում: Հետևաբար, եթե բնակչության ձեռքին եղած դրամի իրական պաշարը միջին հաշվով պակասում է, նրանք ստիպված են լինում ավելի հաճախ գնալ բանկ: Այդ պատճառով առաջացած անհարմարությունը ստացել է «մաշված կոշիկների ծախսեր» պատկերավոր անվանումը:

Ինֆլյացիայի ծախսերի հաջորդ տեսակը կապված է գնացուցակների փոփոխման անհրաժեշտության հետ: Եթե գները հաճախ են փոփոխվում, ապա ֆիրմաները ստիպված են լինում անընդհատ նոր գնացուցակներ հրապարակել ու տարածել: Այս ծախսերը ստացել են «մենյուի ծախսեր»

անվանումը: Սրանցից խուսափելու համար ֆիրմաները երբեմն հրաժարվում են գների փոփոխությունից: Դրա հետևանքով, որքան բարձր են ինֆլյացիայի տեմպերը, այնքան ավելի անկայուն են հարաբերական գները: Քանի որ շուկայական տնտեսության պայմաններում ռեսուրսների բաշխումը կատարվում է հարաբերական գների համաձայն, ապա ինֆլյացիան առաջ է բերում անհամամասնություններ միկրոտնտեսական մակարդակում:

Հաջորդ խումբ ծախսերը կապված են հարկային օրենսդրության այն դրույթների հետ, որոնք չեն արտացոլում ինֆլյացիայի ազդեցությունը: Այդ պատճառով ինֆլյացիան կարող է առաջացնել առանձին անձանց կամ ֆիրմաների ոչ հիմնավոր հարկային պարտավորությունների ձևավորում: Օրինակ՝ 100 միավոր արժողության կապիտալը 10% ինֆլյացիայի դեպքում կունենա 110-ի հավասար իրական գին: Բայց վաճառքի դեպքում այդ 10-ը դիտարկվում է իբրև եկամուտ և հարկվում պետության կողմից: Խնդիրն այն է, որ հարկային օրենսդրությունը ելնում է կապիտալի արժեքի անվանական և ոչ թե իրական հավելաճից:

բ. Ինֆլյացիայի ազդեցությունը ազգային արդյունքի վրա

Մինչև հիմա դիտարկել ենք այն դեպքը, երբ ազգային արդյունքի իրական ծավալը, լրիվ զբաղվածության պայմաններում, կայուն մեծություն է: Սակայն գործնականում ազգային արդյունքի ծավալը կարող է փոխվել՝ կախված գների տատանումներից: Դիտարկենք երեք մոդելներ, որոնցից մեկում ինֆլյացիան ուղեկցվում է արտադրության ծավալի աճով, իսկ մյուս երկու դեպքերում՝ դրա նվազմամբ: Ինչպես տեսանք, ազգային արդյունքի ծավալը և զբաղվածության մակարդակները կախված են համախառն ծախսերից: Ընդ որում, փոքր ծախսերի դեպքում տնտեսությունը գործում է գրաֆիկ 16.3-ի առաջին հատվածում: Այստեղ գները կայուն են, բայց ազգային արդյունքի իրական ծավալը բավական ցածր է ներուժայինից, իսկ գործազրկության մակարդակը՝ բարձր: Եթե համախառն ծախսերն ավելանան այնքան, որ տնտեսությունը տեղափոխվի գրաֆիկի երկրորդ հատվածը, պարզ կդառնա, որ ազգային արդյունքի իրական ծավալի մեծացման համար, ավելի ցածր գործազրկության հետ մեկտեղ, պետք է տեղի ունենա գների մակարդակի որոշակի բարձրացում՝ ինֆլյացիա: Իհարկե, եթե համախառն ծախսերի հետագա աճի հետևանքով տնտեսությունը տեղափոխվի երրորդ հատված, ապա այդ ծախսերը կդառնան զուտ ինֆլյացիոն, որովհետև ձեռք կբերվի իրական արդյունքի այնպիսի մակարդակ, որի դեպքում տնտեսությունը գործում է լրիվ հզորությամբ և ապահովում է լրիվ զբաղվածություն:

Գրաֆիկի երկրորդ հատվածում կարծես առաջանում է հավասարակշռություն արտադրության, զբաղվածության և ինֆլյացիայի միջև: Դա նշանակում է որ, եթե ցանկանում ենք ապահովել արտադրության աճի բարձր տեմպեր և զբաղվածություն, պետք է հաշտվենք չափավոր ինֆլյացիայի հետ:

Այսպիսով, ծախսերի բարձր մակարդակը, որը հանգեցնում է արտադրության ծավալի և զբաղվածության մակարդակի աճի, կարող է նույնպես լինել ինֆլյացիայի առաջացման պատճառ:

Ինֆլյացիայի ազդեցությունը արտադրության վրա միանշանակ չի արտահայտվում և կախված է դրա չափերից: Չափավոր ինֆլյացիան տնտեսության վրա բացասական ազդեցություն չի ունենում: Ավելին, դրա նվազումը գործազրկության մեծացման և իրական ազգային արդյունքի կրճատման հետևանք է: Որոշ դեպքերում ինֆլյացիան կարող է նույնիսկ առաջացնել տնտեսության ժամանակավոր ակտիվություն՝ կապված պահանջարկի մեծացման և արտադրության ընդլայնման հետ: Ինֆլյացիայի բարձր տեմպերի դեպքում (տարեկան 20-200%) բնակչությունը, գործարարները ձգտում են ազատվել փողից՝ գնելով ապրանքներ, անշարժ գույք: Ինֆլյացիայի այս տեսակը կործանիչ ազդեցություն է ունենում արտադրության, ֆինանսների, վարկերի, փողի շրջանառության վրա: Դրա հետևանքով խաթարվում է շուկայական տնտեսության գլխավոր օղակը՝ գների համակարգը, որը դադարում է օբյեկտիվ պատկերացում տալ ներդրողներին հասարակական պահանջմունքների իրական ծավալի մասին, իջեցնում է տնտեսական ռեսուրսների տեղաբաշխման արդյունավետությունը: Իսկ ներդրումների՝ տնտեսապես չհիմնավորված շարժն առաջացնում է տարածքային և ճյուղային անհամամասնություններ, որոնք դառնում են տնտեսական աճի ցածր տեմպերի պատճառ:

Տնտեսության զարգացման դինամիկայի վերաբերյալ վերջին 20 տարվա ուսումնասիրություններն հաստատում են, որ բարձր ինֆլյացիան հակազդում է տնտեսական աճին: Ինֆլյացիայի 40% և ավելի միջին տարեկան տեմպերի դեպքում տնտեսական աճը, որպես կանոն, դադարում է: Եվ հակառակը, որքան չափավոր են երկրում ինֆլյացիայի տեմպերը, այնքան բարձր են տնտեսական աճի տեմպերը:[1]

Ինֆլյացիայի հետևանքները բացասաբար են անդրադառնում նաև գիտատեխնիկական առաջադիմության արդյունքում տեղի ունեցող տնտեսական աճի հնարավորությունների վրա: Քանի որ արտադրության մեջ նոր տեխնիկայի ներդրումը թանկ է նստում ձեռնարկատիրոջ վրա, նպատակահարմար է դառնում ավելի հին, բայց էժան սարքավորումներ և տեխնոլոգիա օգտագործելը:

Տնտեսական ակտիվության նվազման պատճառ է նաև ինֆլյացիայի պայմաններում տնտեսական զարգացման հեռանկարների անորոշությունը, անկայունությունը, գների փոփոխության վերաբերյալ կանխատեսումների հավաստիության բացակայությունը, որոնք ստիպում են հրաժարվել հեռանկարային, երկարատև հետգնման ժամկետ ունեցող ծրագրերից: Կապիտալը սկսում է արտադրական ոլորտից հոսել շրջանառության ոլորտ կամ օգտագործվել սպեկուլյատիվ նպատակներով:

Ինֆլյացիայի հետևանքներից է վարկի տոկոսի աճը, որը բխում է փողի արժեզրկման հետ կապված ծախսերի փոխհատուցման անհրաժեշտությունից: Աճում են շրջանառության մեջ եղած փողի քանակի ավելացման հետ կապված ծախսերը, մեծանում է փողի փոխարեն ապրանքներ ձեռք բերելու ձգտումը, ձևավորվում է ապրանքային սով, որն անդրադառնում է փողի կուտակման լծակների վրա և իր հերթին

[1] #Â ••< ³ · " , " > #Ë 1⁄4Ð " fi– • · #¼ ¶ " , " „ · Ã–...¶" fl" #³ < † > · ¿ · ý# #™ " ..... · ý1#Š " » ³ " ... ˘ # Ž ¶ " , " „ · ¶ · 14 << 9 ⁄4Ò #: 1##

խախտում դրամավարկային համակարգի գործունեությունն ու ընդլայնում բարտերային գործարքները:

Ինֆլյացիան արտահայտվում է նաև արտարժույթի նկատմամբ ազգային արժույթի արժեզրկմամբ, որը տեղի է ունենում արժույթների գնողունակության տարբերության հաշվին՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Առավել մեծ է հիպերինֆլյացիայի պատճառած վնասը: Դրա ծավալմանը զուգընթաց, պետությունը չի կարողանում վերահսկել փողի էմիսիան, փողը դադարում է կատարել իր գործառույթները: Շրջանառության մեջ են դրվում փողային տարբեր փոխարինիչներ, առաջանում են լոկալ փողային միավորներ, արտասահմանյան առավել կայուն արժույթը դուրս է մղում ազգային արժույթը:

Դրամաշրջանառության համակարգի նման վիճակը անխուսափելիորեն հանգեցնում է ազգային տնտեսության փլուզմանն ու անկմանը: Դրան գումարվում են բազմաթիվ սոցիալական խնդիրներ, որոնց արդյունքում հաճախ իշխանության են գալիս տոտալիտար (ամբողջատիրական) ռեժիմներ:

Ինֆլյացիայի այս բազմատեսակ սոցիալական ու տնտեսական բացասական հետևանքները ստիպում են երկրի կառավարությանը իրականացնել որոշակի տնտեսական, հակաինֆլյացիոն քաղաքականություն:

16.8. Հակաինֆլյացիոն քաղաքականություն

Հակաինֆլյացիոն քաղաքականության նպատակը ինֆլյացիան կառավարելի դարձնելն է, դրա աճի համաչափ և մեղմ տեմպեր ապահովելը: Ժամանակակից պայմաններում ինֆլյացիան լիակատար հաղթահարել հնարավոր չէ, քանի որ ինֆլյացիա առաջացնող բազմաթիվ գործոնները միաժամանակ վերացնելն անհնար է: Այդ գործոններից են՝ բյուջեի պակասուրդը, տնտեսության անհամամասնությունները, մենաշնորհների գործունեությունը, բնակչության ու գործարարների ինֆլյացիոն սպասումները, կապիտալի կարճաժամկետ սպեկուլյատիվ միջազգային հոսքերը, բնական ռեսուրսների արդյունահանման ծախսերի աճը և այլն:

Հակաինֆլյացիոն քաղաքականության իրականացման ընթացքում օգտագործվում են բազմաթիվ լծակներ: Դրանցից են՝ դրամավարկային, հարկաբյուջետային միջոցառումները, եկամուտների կարգավորումը, կայունացման ծրագրերը, դրամի արմատական ռեֆորմները:

Գոյություն ունի ինֆլյացիայի դեմ մղվող պայքարի հարուստ փորձ, որը կիրառվում է երկու տարբերակով.

Առաջին տարբերակը ենթադրում է շուկայական կարգավորիչների առավելագույն օգտագործում և ներառում է հետևյալ միջոցառումները.

- ձեռնարկությունների գործունեության պայմանների լիբերալացում (ազատականացում) ներքին և համաշխարհային շուկայում,
- ազատ գների կիրառում՝ աշխատավարձի աճի սահմանափակման պայմաններում, և ազգային արժույթի՝ լողացող և հնարավորին չափ կայուն կուրսի պահպանում,

- տնտեսության մեջ պետության դերի աստիճանական նվազում, դրա գործառույթների սահմանափակում՝ բյուջեի հաշվեկշռվածության ապահովման, շրջանառության մեջ փողի զանգվածի աճի տեմպերի պահպանման շրջանակներում:

Շուկայական համակարգի թվարկված մեխանիզմների ամրապնդման միջոցառումներից են՝ երկրում մրցակցային դաշտի ուժեղացումը, ներքին և արտաքին տնտեսական գործունեության ազատականացումը, մենաշնորհային երևույթների կասեցումը, պետության կողմից ոչ մրցունակ ճյուղերի հովանավորչության դադարեցումը, փոքր բիզնեսի խթանումը և այլն:

Հակաինֆլյացիոն միջոցառումների *երկրորդ* տարբերակը, որը նախատեսում է պետության առավել ակտիվ միջամտություն տնտեսական կյանքին, ինֆլյացիայի կարգավորման ավելի գործուն միջոց է և արտահայտվում է հետևյալ ուղղություններով.

- գների և աշխատավարձի ժամանակավոր սառեցում («եկամուտների քաղաքականություն»),
- գործարարության և բնակչության խնայողությունների խթանում՝ հարկային բեռի թեթևացման պայմաններում,
- շուկայական ենթակառուցվածքի զարգացում և կենսականորեն կարևոր ճյուղերի ու արտադրությունների պաշտպանություն,
- արտաքին առևտրի և արժութային գործառնությունների կարգավորում:

Տնտեսական քաղաքականության նշված ուղղությունները սովորաբար զուգակցվում են դրամաշրջանառության ոլորտում իրականացվող միջոցառումներով՝ ԿԲ կողմից փողի զանգվածի նկատմամբ խիստ հսկողության սահմանմամբ: Սակայն նման կարգավորման հետևանքները միանշանակ չեն: Այսպես, փողի զանգվածի աճի տեմպերի կրճատումը կարող է և չհանգեցնել գների իջեցման՝ հատկապես շուկայի մոնոպոլացման պայմաններում: Ինչ վերաբերում է հակաինֆլյացիոն այնպիսի միջոցառումներին, ինչպիսիք են արտադրության և խնայողությունների խթանումը, ապա դրանք ձեռք են բերվում հարկերի իջեցման արդյունքում: Մասնավորապես, եկամտահարկի իջեցման արդյունքում ավելանում են մասնավոր խնայողությունները, որը դրական ազդեցություն է ունենում ներդրումային իրավիճակի և բյուջետային պակասուրդի ծածկման վրա, քանի որ բնակչությունը ավելի ակտիվորեն է սկսում ձեռք բերել արժեթղթեր (պետական փոխառություններ և կորպորացիաների բաժնետոմսեր): Իսկ շահութահարկի իջեցումը հեռանկարում ապահովում է արտադրության և զբաղվածության աճ, հետևաբար և եկամուտների աճ, որոնք ենթակա են հարկման:

Հակաինֆլյացիոն քաղաքականության ռազմավարական խնդիրներից է նաև պետբյուջեի պակասուրդի նվազումը, որին կարելի է հասնել կամ պետության եկամուտների մեծացման, կամ ծախսերի նվազման միջոցով: Ընտրությունը հիմնականում կատարվում է հօգուտ երկրորդի, որովհետև հարկերի բարձրացումը և անկայուն հարկային համակարգը ինֆլյացիայի առաջացման գործոններ են: Իսկ ԿԲ վարկերի հաշվին

բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը մեծացնում է փողի էմիսիայի մասշտաբները, որոնք նույնպես հասցնում են ինֆլյացիայի:

Հաշվառման դրույքի կարգավորման միջոցառումները սովորաբար ուղեկցվում են ԿԲ գործառնություններով բաց շուկայում, որոնք ազդում են բանկային համակարգի ազատ ռեսուրսների չափերի վրա: ԿԲ-ն, պետական արժեթղթերի հետ մեկտեղ, վաճառում է նաև արտարժույթ առևտրային բանկերին, որով կրճատվում են վերջիններիս վարկային հնարավորությունները և խթանվում արտասահմանում կատարվող ներդրումները: Տոկոսադրույքի մակարդակի բարձրացումը կարող է հասցնել ներդրումային ակտիվության ու արտադրության ծավալի նվազման և միևնույն ժամանակ նպաստել արտասահմանից արտարժույթի հոսքի մեծացմանը, որը կդառնա «ներմուծվող» ինֆլյացիայի զարգացման պատճառ: Հետևաբար, արտաքին տնտեսական գործոնների ազդեցության սահմանափակումը նույնպես հակաինֆլյացիոն քաղաքականության ուղղություններից է:

Հակաինֆլյացիոն ռազմավարությանը վերաբերող ոչ փողային միջոցառումներից են.

- ԳՏԱ և արտադրության կառուցվածքի կատարելագործման պետական խթանումը,
- ներդրումային հոսքերի ուղղորդումը սպառման ապրանքների արտադրության ոլորտ,
- տնտեսության ռազմական հատվածի կոնվերսիան և այլն:

Տնտեսության մեջ ստեղծված իրավիճակը հաճախ պահանջում է ինֆլյացիայի տեմպերի նվազեցման այնպիսի անհետաձգելի քայլեր, որոնք կիրառվում են կարճաժամկետ քաղաքականություն իրականացնելիս: Օգտագործվող մեթոդների միջոցով հնարավոր է թուլացնել ինֆլյացիոն ճնշումը կամ նախապատրաստել տնտեսությանը ավելի արմատական հակաինֆլյացիոն միջոցառումների:

Այստեղ հիմնական խնդիրը պահանջարկի և առաջարկի միջև ճեղքվածքի կրճատումն է: Դրան կարելի է հասնել կամ ընդլայնելով ամբողջական առաջարկը՝ առանց ավելացնելու ամբողջական պահանջարկը, կամ նվազեցնել ընթացիկ պահանջարկը՝ առանց համապատասխան չափով առաջարկը փոքրացնելու: Առաջին դեպքում նախատեսվում են հարկային արտոնություններ այն ձեռնարկություններին, որոնք բազմազանեցնում են արտադրությունն ու վաճառքը, ինչպես նաև թողարկում ու տրամադրում են լրացուցիչ ապրանքներ ու ծառայություններ:

Հակաինֆլյացիոն միջոցառումներից է նաև պետական սեփականության մասնավորեցումը, որն ազդում է պետբյուջեի վրա երկու ուղղությամբ. մի կողմից համալրվում է պետբյուջեի եկամտային մասը, մյուս կողմից՝ թուլանում լարվածությունը ծախսային մասում: Իրենց հերթին, սեփականաշնորհված ձեռնարկությունների բաժնետոմսերի ի հայտ գալը ֆոնդային բորսայում նպաստում է ազատ դրամական ռեսուրսների արտահոսքին փողի շուկայից:

Պահանջարկի ինֆլյացիան կասեցնելու համար սկզբնական շրջանում իրականացվում է սպառման ապրանքների զանգվածային ներմու-

ծում և ձեռնարկությունների ու պետության կողմից ապրանքանյութական պաշարների իրացում:

Հակաինֆլյացիոն կարճաժամկետ քաղաքականության միջոցառումներից է նաև տոկոսադրույքների բարձրացումը, դրանց ժամկետների երկարացումը, խնայողությունների իրացվելիության մակարդակի նվազեցումը: Ծայրահեղ դեպքերում կարող է իրականացվել ավանդների ժամանակավոր սառեցում կամ կոշտ դրամական ռեֆորմ:

16.9. Ինֆլյացիայի և հակաինֆլյացիոն կարգավորման առանձնահատկությունները ՀՀ-ում

ՀՀ տնտեսությունն ունի անցումային բնույթ, որով պայմանավորվում են ինֆլյացիոն երևույթների ընթացքի առանձնահատկությունները:

ԽՍՀՄ փլուզումը, անկախության ձեռքբերումը ենթադրում էին ազգային դրամական համակարգի ստեղծում և անկախ դրամավարկային քաղաքականության մշակում: Դրանց իրականացումը կապված էր որոշակի դժվարությունների հետ, որոնք բխում էին ինչպես նախկին ԽՍՀՄ-ից ժառանգած տնտեսական, ֆինանսական համակարգից, դրանց կառուցվածքից, այնպես էլ այդ համակարգի վերակառուցման, շուկայական տնտեսությանը համապատասխան մեխանիզմների, կառույցների ստեղծման անհրաժեշտությունից:

Այսպես, նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող մյուս հանրապետությունների նման ՀՀ-ում շուկայական հարաբերությունների կառուցումն ընթանում էր տնտեսության անհաշվեկշռվածության ու անհամամասնականության, թողարկվող արտադրանքի ու ծառայությունների արտադրության ու տնտեսության իրական պահանջմունքների անհամապատասխանության, հսկայական կուսակցական ապարատի ու բանակի պահպանման, սոցիալական ոլորտի ձեռնարկությունների հետ մնալու, համընդհանուր պակասուրդի, նախարարությունների ու գերատեսչությունների տեսքով գերմենաշնորհների մեծ թվի առկայության պայմաններում:

Եթե նման անհամամասնությունների դրսևորումը կենտրոնացված պլանային տնտեսության պայմաններում կանխվում էր գների շեղման, ռեսուրսների վարչական վերաբաշխման, արտաքին առևտրի ու արտարժույթի պետական մենաշնորհի միջոցով, ապա տնտեսության ազատականացմամբ, այդ հնարավորությունները վերացան, և կառուցվածքային անհաշվեկշռվածության դրսևորումները հայտնվեցին տնտեսական կյանքի մակերևույթին: Դա ոչ միայն հզոր լիցք հաղորդեց ինֆլյացիոն երևույթներին, այլև թաքնված ինֆլյացիան փոխարինեց բաց ինֆլյացիայով: 1993թ. ինֆլյացիան հանրապետությունում մոտ 10000% էր, որը ԱՊՀ երկրների մեջ ամենաբարձրն էր:

Անհրաժեշտ էր մակրոտնտեսական կարգավորման միջոցով կայունացնել տնտեսությունը, իրականացնել հակաինֆլյացիոն միջոցառումներ, որոնց ապահովումը կախված էր ազգային արժույթի ու ֆինանսական համակարգի ձևավորումից: 1993թ. մտցվեց սեփական դրամական

համակարգը, և ԿԲ-ն սկսեց իրականացնել անկախ հակաինֆլյացիոն քաղաքականություն, որը դրսևորում էր, ինչպես կառավարելի, այնպես էլ անկառավարելի բնույթ:

1993թ. վերջին և 1994թ. առաջին կիսամյակում ինֆլյացիան անկառավարելի էր, որի հիմնական պատճառը դրամավարկային քաղաքականության վարչական բնույթն էր, տնտեսության անկումը, պետբյուջեի հսկայական պակասուրդը, հանրապետության աշխարհաքաղաքական անկայուն դրությունը: ԿԲ-ն չէր կարող իր առջև դնել սղաճի սահմանափակման խնդիր, քանի որ բյուջեի պակասուրդը ուղղակիորեն ֆինանսավորվում էր ԿԲ վարկերի հաշվին, անհետաձգելի էր պարենամթերքի, մասնավորապես՝ հացահատիկի պակասուրդի հիմնահարցի լուծումը, ակնհայտ էր արտաքին քաղաքական իրավիճակի կաշկանդող ազդեցությունը արտադրության ծավալների աճի ու արտասահմանյան ներդրումների իրականացման, մարդասիրական օգնության ստացման, գազի, մազութի ու բենզինի մատակարարումների վրա:

Այդ պայմաններում բնակչության գոյատևման նվազագույն մակարդակի ապահովումը ենթադրում էր փաստացի դրամական զանգվածի աճ մինչև 13.9 մլրդ դրամ՝ նախատեսված 10.5 մլրդ-ի փոխարեն:

Այսպիսով, ամսական 18.7%-ով դրամական զանգվածի մեծացման դեպքում ինֆլյացիայի ամսական տեմպերը կազմեցին 27.5%, այսինքն՝ դրամական զանգվածն ավելացավ 7.8 անգամ, սպառողական գները՝ 48.1 անգամ: Հետևաբար, հակաինֆլյացիոն քաղաքականությունն անկառավարելի էր հիմնականում մինչև 1994թ. վերջը, որից հետո սկսվեց տնտեսության կայունացման առաջին միասնական ծրագրի իրականացումը: Նոր ստեղծվող դրամական համակարգի հիմքում փողի կարգավորման՝ Արժույթի միջազգային հիմնադրամի սկզբունքներն էին, իսկ դրամավարկային քաղաքականությունը կառուցվում էր դրամական զանգվածի աճի հաստատուն տեմպերի վրա:

1995-1996թթ. դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակն էր ինֆլյացիայի իջեցումը համապատասխանաբար 30%-ից մինչև 15%, որի իրականացման հիմնական գործիքը կոշտ դրամավարկային քաղաքականությունն էր:

ՀՀ ԿԲ հակաինֆլյացիոն քաղաքականությունը առավել արդյունավետ էր 1996թ., որի սկզբին ինֆլյացիայի փաստացի ամսական ցուցանիշները գերազանցում էին ծրագրայինը, իսկ տարվա կեսին դրանք նախատեսվածից արդեն ավելի ցածր էին: Տարվա վերջին սպառողական գների ինդեքսը կազմեց 5.7%՝ ծրագրային 14%-ի փոխարեն, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ 125.5%: Ամենայն հավանականությամբ նման իրավիճակին նպաստել էր նաև այլ երկրների տարադրամի դուրսմղումը ապրանքաշրջանառությունից:

ՀՀ դրամավարկային քաղաքականության 1997թ. ծրագրով ինֆլյացիան պետք է կազմեր 10.5%: Սակայն դրամական զանգվածի 27.9% հավելաճի և ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի 13.7% նվազման դեպքում փաստացի ինֆլյացիան կազմեց 21.7%: Ինֆլյացիոն գործընթացի անկառավարելիությունը ձևավորվեց մի քանի գործոնների ազդեցությամբ, որոնցից էին.

- հարկային քաղաքականության փոփոխությունները՝ կապված ակցիզային հարկի մեծացման և ներմուծվող ապրանքների վրա ԱԱՀ սահմանելու հետ,
- էմիսիայի հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը,
- պետության կողմից կարգավորվող գների բարձրացումը (էլեկտրաէներգիա՝ 44.3%-ով, խմելու ջուր՝ 95.4%-ով, բնակվարձ՝ 21.7%-ով),
- իրական ՀՆԱ ցածր աճը և նախորդ տարվա դրամի կուրսի անկայուն փոփոխությունների հետևանքով բնակչության սպասելիքները, գյուղատնտեսական արտադրության ծավալների կրճատումը շրջանառության մեջ:

ՀՀ-ում 1998-1999թթ. արձանագրվել է ծրագրայինի նկատմամբ ավելի ցածր սղաճ, որի վրա մեծ ազդեցություն է ունեցել կանխիկ դրամի բաժնի կրճատումը:

2000թ., նախորդ տարվա համեմատությամբ, նվազել են իրական աշխատավարձի տեմպերը՝ պայմանավորված համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությամբ: Դրան զուգահեռ նկատվել է նաև արտադրության աճի տեմպերի ավելացումը, որը տեղի է ունեցել տարվա ընթացքում գործազրկության աճի պայմաններում: Այս երկու գործոնների հետևանքով 2000թ. սղաճը նվազել է 2.3 տոկոսային կետով: Հաջորդ տարի արձանագրվեցին արտադրողականության համեմատ իրական աշխատավարձի ավելի բարձր տեմպեր, որով պայմանավորվեց սղաճի մակարդակի բարձրացումը: Դրան ավելի նպաստեց համախառն պահանջարկի ընդլայնողական բնույթը, որը մի կողմից խթանեց տնտեսությունում իրական աշխատավարձի աճը, մյուս կողմից ապահովեց նոր աշխատատեղերի ստեղծումը:

Մակրոմակարդակում գների համեմատական աճը շարունակվել է նաև հաջորդ տարիներին՝ պայմանավորված եկամուտների, հետևաբար՝ պահանջարկի աճով, տնտեսական աճի բարձր տեմպերով:

Արդեն նշվել է, որ մեր հանրապետությունում շուկայական տնտեսության կառուցման սկզբում, ինֆլյացիայի առանձնահատկությունները պայմանավորված են եղել ԽՍՀՄ տնտեսությունից ստացած ժառանգության բնույթով: Չնայած դրանց մի մասի բացասական հետևանքները մեղմվել են, բայց այս տարիների ընթացքում ավելացել են նորերը: Այդ է պատճառը, որ սղաճի հաղթահարումը շարունակում է մնալ տնտեսական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը:

ՀՀ-ում սղաճի առաջացումը հիմնականում պայմանավորված է տնտեսության կառուցվածքով և ոչ թե ֆինանսադրամական ոլորտի գործունեությամբ: Սղաճի առաջացման գլխավոր պատճառներն են.

- սպառողական ճյուղերի համեմատությամբ ներդրումային ճյուղերի բացարձակ գերակշռությունը,
- անավարտ շինարարության հսկայական ծավալները,
- խոշոր ձեռնարկությունների մենաշնորհային կարգավիճակի բարձր տեսակարար կշիռը:

Սղաճի հաղթահարումը պահանջում է թվարկված պատճառների վերացում, որը չափազանց բարդ է: Բացի այդ, ինֆլյացիան ուղեկցվում է նաև ինֆլյացիոն սպասումներով: Գների հերթական բարձրացման պարագայում սպառողները ավելացնում են ընթացիկ գնումների ծավալները, ինչը հանգեցնում է պահանջարկի խուճապային աճի:

Վաճառողը գործում է հակառակ տեսանկյունից. ակնկալելով գների հետագա բարձրացում, նա չի վաճառում ապրանքը, որպեսզի իրացնի ավելի ուշ: Այսպիսով, գնորդը ձգտում է գնել ապրանքներն այսօր, իսկ վաճառողը՝ վաճառել վաղը: Այդ տրամագծորեն տարբեր գործողությունները հակադրում են պահանջարկը առաջարկին, տնտեսությունը դարձնում անկառավարելի: Արդյունքում՝ գնորդների և վաճառողների ինֆլյացիոն սպասումների զսպումը հաճախ ավելի բարդ է լինում, քան զուտ տնտեսական հիմնախնդիրների լուծումը: Հետևաբար, ինֆլյացիան հնարավոր է մեղմել միայն դրա դեմ պայքարի բոլոր միջոցները ՀՀ պայմաններին համապատասխանեցնելով:

Ամփոփում

1. Դրամավարկային քաղաքականությունը պետության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որն ուղղված է ինֆլյացիայի մակարդակի կարգավորմանը, ազգային արժույթի կուրսի կայունացմանը և շուկայական տնտեսության սահուն գործունեության համար արդյունավետ ֆինանսական պայմանների ստեղծմանը:
2. Դրամավարկային քաղաքականության և ֆինանսական համակարգի կենտրոնում փողն է, որն իրենից ներկայացնում է գործառնությունների ընթացքում օգտագործվող ակտիվների ամբողջությունը: Փողը պայմանավորում է ոչ միայն շուկայական տնտեսության մեխանիզմների գործունեությունը, այլև պետության կողմից տնտեսական կյանքի վերահսկման կազմակերպման գործընթացը:
3. Փողի քանակի, գների մակարդակի, արտադրության իրական ծավալի և զբաղվածության միջև գոյություն ունեցող փոխկապվածության վերլուծության գործում կարևոր դեր ունի փողի քանակական տեսությունը: Դրա հիման վրա որոշված փողի պահանջարկի մեծությունը կախված է գներից, տոկոսադրույքից և եկամտից: Փողի քանակական տեսությունը հնարավորություն է տալիս բացահայտելու, որ փողի առաջարկի յուրաքանչյուր փոփոխություն հանգեցնում է ՀՆԱ անվանական ծավալի համամասնական փոփոխության, որը արտադրական գործոնների կայունության դեպքում ամբողջովին պայմանավորված է գների մակարդակով:
4. Անվանական տոկոսադրույքի կախվածությունը իրական տոկոսադրույքից և ինֆլյացիայից արտահայտվում է Ֆիշերի հավասարման միջոցով: Փողի քանակական տեսության և Ֆիշերի հավասարման համաձայն՝ փողի զանգվածի 1% հավելաճը առաջ է բերում ինֆլյացիայի տեմպի աճ նույնպես 1%-ով, որն իր հերթին հանգեցնում է անվանական տոկոսադրույքի 1%-ով աճի: Այս հարաբերակցությունը ստացել է «Ֆիշերի էֆեկտ» անվանումը:
5. Դրամավարկային հարաբերությունների պետական կարգավորման մեխանիզմը ներգործության գործիքների կամ միջոցների և ինստիտուտների ամբողջություն է: Դրամավարկային քաղաքականության գործիքներն են՝ վերաֆինանսավորման քաղաքականությունը, գործառնությունները բաց շուկայում, պարտադիր պահուստավորումը:
6. Ինֆլյացիան տնտեսության մակրոտնտեսական անկայունությունը բնութագրող մեծություն է և դրսևորվում է գների ընդհանուր մակարդակի բարձրացմամբ: Առանձնացվում է ինֆլյացիայի երկու տեսակ՝ ծախսերի և պահանջարկի ինֆլյացիա:
7. Ինֆլյացիայի հետևանքները դիտարկվում են մի կողմից՝ եկամուտների վերաբաշխման, մյուս կողմից՝ համախառն ներքին արդյունքի ծավալի փոփոխության տեսակետից: Առաջին դեպքում ինֆլյացիայի հետևանքները դիտարկվում են բնակչության տարբեր խավերի եկամուտների ձևավորման ընթացքում, իսկ երկրորդ դեպքում դրանք դիտարկվում են երեք մոդելով, որոնցից մեկում ինֆլյացիան ուղեկցվում է արտադրության ծավալի աճով, մյուս երկուսում՝ դրա նվազմամբ:
8. Հակաինֆլյացիոն քաղաքականությունն ուղղված է դրա աճի համաչափ ու մեղմ տեմպերի ապահովմանը, այն կառավարելի դարձնելուն:
9. ՀՀ-ում ինֆլյացիայի առաջացումը պայմանավորված է տնտեսության կառուցվածքով և ոչ թե ֆինանսադրամական ոլորտի գործունեությամբ:

Թեստեր և խնդիրներ

1. ***Փողի քանակական տեսության համաձայն՝ եթե փողի քանակը ավելանում է 5%-ով, իսկ փողի շրջանառության արագությունը մեծանում է 2%-ով, ապա.***
   ա. իրական եկամուտը կավելանա մոտավորապես 7%-ով,
   բ. անվանական եկամուտը կավելանա մոտավորապես 7%-ով,
   գ. գների մակարդակը կբարձրանա մոտավորապես 7%-ով,
   դ. անվանական տոկոսադրույքը կավելանա մոտավորապես 7%-ով:

2. ***Եթե փողի առաջարկն ավելանում է 12%-ով, շրջանառության արագությունը կրճատվում է 4%-ով, իսկ գների մակարդակը բարձրանում է մինչև 5%, ապա իրական ՀՆԱ փոփոխությունը կկազմի.***
   ա. 3%,
   բ. 4%,
   գ. 9%,
   դ. 11%:

3. ***Ֆիշերի հավասարումը սահմանում է, որ ինֆլյացիայի մակարդակի 1% -ով աճը հանգեցնում է հետևյալ ցուցանիշի 1%-ով աճի.***
   ա. իրական տոկոսադրույքի,
   բ. անվանական տոկոսադրույքի,
   գ. փողի առաջարկի,
   դ. գործարքների թվի:

4. ***Սպասվող իրական տոկոսադրույքը տարբերվում է փաստացի իրական տոկոսադրույքից, երբ.***
   ա. փողի առաջարկը կայուն տեմպով աճում է,
   բ. փողի առաջարկը մնում է անփոփոխ,
   գ. փողի առաջարկը կայուն տեմպով նվազում է,
   դ. փաստացի ինֆլյացիան տարբերվում է սպասվող ինֆլյացիայից:

5. ***Փողի իրական պաշարի ընդհանուր պահանջարկի ֆունկցիան կախված է եկամտից և .***
   ա. իրական տոկոսադրույքից,
   բ. անվանական տոկոսադրույքից,
   գ. ինֆլյացիայի մակարդակից,
   դ. գների մակարդակից:

6. ***Թվարկվածները դրամավարկային քաղաքականության գործիքները են, բացառությամբ.***
   ա. հաշվառման (դիսկոնտային) քաղաքականությունից,
   բ. բաց շուկայում գործառնություններից,
   գ. պարտադիր պահուստների քաղաքականությունից,
   դ. ակտիվ տնտեսական քաղաքականությունից:

7. *Եթե փողի առաջարկն ավելանում է 15%-ով, շրջանառության արագությունը կրճատվում է 5%-ով, իսկ գների մակարդակը բարձրանում է 6%-ով, ապա ինչքանով կփոփոխվի իրական ՀՆԱ-ն:*

8. *Աղյուսակում տրված են գների ինդեքսները՝ ըստ տարիների*

Տարի	Գների ինդեքս	Ինֆլյացիայի մակարդակ
1	100000	-
2	112000	-
3	123000	-
4	129000	-

ա) հաշվել ինֆլյացիայի մակարդակը յուրաքանչյուր տարվա համար,
բ) օգտագործելով «70 թվի կանոնը»՝ որոշել, թե քանի տարում գների մակարդակը կկրկնապատկվի (հաշվարկի համար վերցնել խնդրի «ա» կետի ինֆլյացիայի տեմպերը):

9. *Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գների գումարը 240 մլն դրամական միավոր է: Վարկով վաճառված ապրանքների գների գումարը՝ 10 մլն, փոխադարձ հաշվարկները՝ 50 մլն, ժամկետային վճարումները՝ 20 մլն: Դրամական միավորը տարեկան կատարում է միջինը 20 պտույտ, շրջանառության մեջ գտնվում է 10 մլն դրամական միավոր: Ի՞նչ տեղի կունենա ապրանքափողային շրջանառության հետ:*

Հիմնական հասկացություններ

Փողի առաջարկ
Փողի պահանջարկ
Կանխիկ փող
Վարկային փող
Ինֆլյացիա
Սենյորաժ
Անվանական և իրական տոկոսադրույք
Ֆիշերի էֆեկտ
Թաքնված ինֆլյացիա
Հիպերինֆլյացիա
Հակաինֆլյացիոն ծրագիր
Ինֆլյացիոն հարկ
Վերաֆինանսավորման քաղաքականություն
Գործառնություններ բաց շուկայում
Պարտադիր պահուստավորման քաղաքականություն:

Հարցեր կրկնության համար

1. Որո՞նք են դրամավարկային քաղաքականության խնդիրները:
2. Ինչու՞ է փողը համարվում ֆինանսական համակարգի հիմնական օղակը:
3. Որո՞նք են փողի գործառույթները և ագրեգատները:
4. Ինչպիսի՞ փոխադարձ կապեր է սահմանում փողի քանակական տեսությունը տնտեսական երևույթների միջև:
5. Ո՞ր երևույթների միջև է Ֆիշերի էֆեկտը կապեր սահմանում:
6. Ո՞րն է փողի իրական պաշարների պահանջարկի ֆունկցիան, և ինչ գործոններ են ազդում դրա մեծության վրա:
7. Որո՞նք են դրամավարկային հարաբերությունների պետական կարգավորման եղանակները, մեխանիզմները և մարմինները:
8. Որո՞նք են ինֆլյացիայի առաջացման պատճառները:
9. Ի՞նչ հետևանքներ է ունենում ինֆլյացիան եկամուտների բաշխման և ազգային արդյունքի տեսակետից:
10. Որո՞նք են հակասղաճային կարգավորման մեխանիզմները:

ԳԼՈՒԽ 17

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Ֆինանսների և ֆինանսական հարաբերությունների էությունը:
- Հարկերի էությունը և ՀՀ հարկային համակարգը:
- Հարկային քաղաքականության սկզբունքները:
- Պետական տուրքերի էությունն ու տուրքերի համակարգը:
- Բյուջետային համակարգը և դրա դերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:
- ՀՀ պետական պարտքը և դրա կարգավորման մեխանիզմը:
- ՀՀ մաքսային քաղաքականությունը և դրա պետական կարգավորման հիմնախնդիրները:

17.1. Ֆինանսների և ֆինանսական հարաբերությունների պետական կարգավորումը

ա. Ֆինանսների և ֆինանսական հարաբերությունների էությունը

Ապրանքափողային հարաբերությունների, պետության, ինչպես նաև փողի ծագմանը զուգընթաց, ձևավորվել են նաև ֆինանսներն ու ֆինանսական հարաբերությունները, որոնք որոշիչ դեր են կատարել արտադրական հարաբերությունների հետագա զարգացման գործում:

Ապրանքափողային հարաբերությունների հետագա զարգացմանը, ինչպես նաև պետության դերի ու տնտեսական գործառույթների ընդլայնմանը զուգընթաց, ֆինանսներ հասկացությունը ձեռք է բերում նոր բովանդակություն: Այս տեսակետից դեռևս 18-րդ դարում ուշադրության արժանացավ «Ֆինանսների էության համակարգը» խորագրով Գ. Յուտինի աշխատությունը, որտեղ հետազոտվել են պետության եկամուտներն ու ծախսերը, պետական վարկը, նշվել «ֆինանսներ» գիտության և ֆինանսական քաղաքականության բնորոշ գծերը, հիմնավորվել ֆինանսների և ֆինանսական հարաբերությունների փոխկապվածությունը:

Արդի տնտեսագիտական գրականության մեջ Փ. Սամուելսոնն ընդգծում է, որ ֆինանսներ ու ֆինանսական քաղաքականություն ասելով պետք է նկատի ունենալ հանրային ծախսերը ձևավորելու գործընթաց, որը նպաստում է գործարարության զարգացմանը, պարբերաշրջանների

տատանումները մեղմելուն և բարձր կամ անկայուն գնաճից զերծ աճող և զբաղվածության բարձր մակարդակ ունեցող տնտեսության պահպանմանը[1]:

Ֆինանսների էության և ֆինանսական հարաբերությունների փոխկապվածության առանձնահատուկ կողմն արտահայտվում է նրանում, որ նշված հարաբերությունները ձևավորվում են օրենսդրական ակտերի հիման վրա, որոնք գործնականում կիրառվում են պետական իշխանության լիազորություններով օժտված մարմինների կողմից:

Այս ամենից հետևում է, որ տնտեսության պետական կարգավորման համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի ֆինանսական կարգավորումը, որը պայմանավորված է վերարտադրության գործընթացում ֆինանսների կարևորությամբ:

Վերարտադրության գործընթացում նյութական և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը ուղեկցվում է փողի միջոցների շարժով, որը իրականացվում է պետական և սեփականության տարբեր ձևերի վրա հիմնված ձեռնարկությունների, ինչպես նաև բնակչության դրամական եկամուտների և ծախսերի կազմավորման, բաշխման և օգտագործման հիման վրա:

Փողի միջոցների ձևավորման, բաշխման և օգտագործման հարաբերությունների համակարգում ֆինանսական հարաբերություններ առաջանում են տնտեսության մեջ՝ եկամուտների բաշխման և օգտագործման հարաբերությունների ձևավորման ընթացքում:

Ֆինանսների էությունը, դրա դերն ու նշանակությունը որոշվում են տնտեսական հարաբերությունների բնույթով և դրան համապատասխան՝ պետության գործառույթների իրականացման անհրաժեշտությամբ:

Այսպիսով, ֆինանսական հարաբերություններ դրսևորվում են փողի միջոցների կենտրոնացված ֆոնդերի ձևավորման ու դրանց օգտագործման գործընթացներում, արտացոլում են մակրոմակարդակի հիմնական ցուցանիշների՝ համախառն ազգային արդյունքի, համախառն ներքին արդյունքի և ազգային եկամտի բաշխման ու վերաբաշխման հարաբերությունները, որոնք հանդես են գալիս նյութական բարիքների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացներում:

Դա նշանակում է՝ ֆինանսները միշտ էլ արտահայտում են տնտեսական ֆինանսական հարաբերություններ և համարվում են արտադրական հարաբերություններ արտահայտող տնտեսական կատեգորիա:

Զարգացած ապրանքային արտադրության պայմաններում մակրոտնտեսական ցուցանիշները վերարտադրության սկզբնական փուլից մինչև վերջնական փուլ միջնորդավորվում են օգտագործման գործընթացով: Ուստի անհրաժեշտ է պարզել դրամավարկային և ֆինանսական հարաբերությունների փոխկապվածությունը և ցույց տալ դրանց առանձնահատուկ գծերը: Բանն այն է, որ փողի միջոցների հետ կապված գործառնությունները ընդգրկում են հարաբերությունների ավելի լայն շրջանակ, այդ թվում՝ ամբողջ դրամաշրջանառությունը, գնագոյացման

[1] Փոլ Ա. Սամուելսոն, Ուիլյամ Դ. Նորդհաուս, «Տնտեսագիտություն», Երևան, 1995:

համակարգը, ապրանքաշրջանառությունը, արտաքին առևտրաշրջանառությունը, վճարովի ծառայությունների դիմաց կատարվող վճարումները, իսկ ֆինանսները ներառում են միայն դրանց այն մասը, որի ձևավորումը տեղի է ունենում արտադրության վերջնական գործընթացից հետո:

Դա նշանակում է, որ եթե դրամական հարաբերություններն ընդգրկում են արտադրության համար անհրաժեշտ ֆոնդերի շրջապտույտի բոլոր փուլերը, ապա ֆինանսներն արտացոլում են դրամավարկային հարաբերությունների առանձնահատուկ կողմերը, այսինքն՝ փողի միջոցների բաշխման, վերաբաշխման և օգտագործման գործընթացը: Այդ հարաբերությունները տնտեսավարող սուբյեկտների միջև ձևավորվում են անմիջաբար պետության կողմից ընդունված որոշումների, օրենսդրական և նորմատիվային ակտերի հիման վրա: Շուկայական տնտեսության անցումային փուլում ֆինանսներն արտահայտում են այնպիսի տնտեսական-արտադրական հարաբերություններ, որոնք բխում են անցման շրջանի առանձնահատկություններից, ընդգրկում են մակրոտնտեսական ցուցանիշների և վարկային ռեսուրսների բաշխման ու վերաբաշխման գործընթացները: Ֆինանսներն արտահայտում են այնպիսի դրամական հարաբերություններ, որոնք առկա են.

- պետական և մասնավոր ձեռնարկությունների, գյուղացիական տնտեսությունների միջև,
- պետության և պետական ձեռնարկությունների ու գյուղացիական տնտեսությունների միջև,
- պետության և ձեռնարկությունների ու դրանցում զբաղված աշխատողների միջև:

Ֆինանսական հարաբերությունների շնորհիվ պետության տրամադրության տակ հավաքագրված փողի միջոցները, այդ թվում նաև վարկային ռեսուրսները, վերաբաշխվում են սոցիալ-մշակութային միջոցառումների իրականացման, երկրի պաշտպանության, պետական ապարատի պահպանման, տարերային աղետների պատճառներով առաջացած վնասների փոխհատուցման, ժամանակավորապես առաջացած անհամամասնությունների վերացման և այլ նպատակներով:

բ. Ֆինանսների պետական կարգավորման խնդիրները

Ֆինանսների էության, դրանց նշանակության լուսաբանումը ցույց տվեց, որ ֆինանսները կոչված են իրականացնելու պետական կարգավորման որոշակի խնդիրներ: Այդ խնդիրների լուծումը շուկայական տնտեսության անցման փուլում առավել կարևոր են՝ կապված տնտեսության կայունացման անհրաժեշտության, ճգնաժամային երևույթների հաղթահարման, բյուջեի պակասուրդի կրճատման և բնակչության կենսապայմանների բարելավման հետ:

Այս առումով ֆինանսների պետական կարգավորման հիմնական խնդիրներն են.

- բացահայտել պետության ֆինանսական ռեսուրսները ու դրանց ավելացման հնարավորությունները, կազմակերպել պետական բյուջեի եկամուտների ձևավորումը,
- արդյունավետ կազմակերպել պետական բյուջեի եկամուտների բաշխումը, ապահովել այդ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը,
- ապահովել ֆինանսական ռեսուրսների և ծախսերի միջև հաշվեկշռվածությունը ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին հատվածների ու համայնքների առումով:

Ֆինանսների պետական կարգավորման խնդիրները իրականացվում են պետական բյուջեի բաշխման, վերաբաշխման և հսկողության գործառույթների միջոցով:

Ֆինանսների բաշխման, վերաբաշխման և հսկողության գործառույթների դերի ու նշանակության բարձրացման կարևորությունը պայմանավորված է հարկային ապառքների կրճատման, նախատեսված ժամկետներում հարկերի վճարման, արտադրության զարգացման ու տնտեսության կայունացման, շուկայում պահանջարկի ու առաջարկի միջև հավասարակշռության ապահովման, ֆինանսական հարաբերությունների կարգավորման ու զարգացման անհրաժեշտությամբ:

Վերարտադրության գործընթացի զարգացմանը զուգընթաց կատարելագործվում է նաև ֆինանսների համակարգը՝ իր օղակներով հանդերձ, որոնցից յուրաքանչյուրը բնութագրում է ֆինանսական հարաբերությունների առանձնահատուկ կողմերը:

Ֆինանսների համակարգը ներառում է հետևյալ հիմնական օղակները.

1. պետական և մասնավորեցված ձեռնարկությունների, ընկերությունների ֆինանսները,
2. պետական բյուջեն և բյուջետային համակարգը,
3. ֆինանսական հատուկ կենտրոնացված ֆոնդերը, պետական տուրքերը, պետական և ոչ պետական ապահովագրական ֆոնդերը, պետական կենսաթոշակային ապահովագրության և սոցիալական ապահովության ֆոնդերը,
4. վարկային ֆոնդերը և բանկային համակարգը:

17.2. Հարկերի էությունը և ՀՀ հարկային համակարգը

ա. Հարկերի սոցիալ-տնտեսական էությունը

Հարկը և հարկային հարաբերությունները պատմականորեն առաջացել են հասարակության սոցիալական խմբերի ու պետության առաջացման հետ միաժամանակ:

Շուկայական տնտեսության պայմաններում հարկային հարաբերությունների և առանձին հարկատեսակների ձևավորման ու դրանց շարժի գործընթացը կազմում է համախառն ազգային արդյունքի բաշխման ու

վերաբաշխման ընդհանուր գործընթացի բաղկացուցիչ մասը: Հարկային հարաբերությունները ձևավորվում են արտադրության և շրջանառության ոլորտում ծախսերի և եկամուտների կազմավորման ընթացքում: Այդ հարաբերությունների կարգավորման նպատակը սոցիալական խմբերի, սեփականության տարբեր ձևերի պայմաններում գործող տնտեսավարող սուբյեկտների և պետության շահերի զուգակցումն է:

Հարկերի միջոցով իրականացվող ազգային եկամտի վերաբաշխման գործընթացը վերարտադրության միասնական գործընթացի բաղկացուցիչ մասն է և արտացոլում է առանձնահատուկ արտադրական հարաբերություններ:

«Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով կատարվող համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, հիմնարկներից, պետական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով ու սահմանված ժամկետներում»[2]:

Հարկերը դասվում են հիմնական ֆինանսական կատեգորիաների շարքը: Հարկերը ձևավորում են պետության ֆինանսական ռեսուրսները և նպաստում են տնտեսական, սոցիալական քաղաքականության իրականացմանը:

Հարկերը, որպես ֆինանսական կատեգորիա, արտացոլում են որոշակի հարկային հարաբերություններ և համարվում են ֆինանսական հարաբերությունների բաղկացուցիչ մասը:

Միաժամանակ, հարկերը, արտահայտելով ֆինանսական հարաբերություններին բնորոշ գծեր, ունեն իրենց առանձնահատկությունները, շարժման ինքնուրույն ձևը, դրսևորում են յուրահատուկ վարքագիծ՝ ներգործելով գների, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության, բնակչության իրական եկամուտների վրա:

Հարկային հարաբերությունների բնորոշ առանձնահատկությունը համախառն ազգային արդյունքի վերաբաշխման և արժեքի մի մասի հավաքագրման գործընթացն է, որի հաշվին ձևավորվում են պետության ֆինանսական ռեսուրսները:

Հարկերի ձևով ստացված ֆինանսական ռեսուրսները մի կողմից նախադրյալներ են ստեղծում պետության գործառույթների իրականացման, մյուս կողմից՝ սոցիալական ոլորտի վերարտադրության գործընթացի կազմակերպման համար:

բ. ՀՀ հարկային օրենսդրությունը

ՀՀ-ում, շուկայական նոր կառույցների ձևավորմանը զուգընթաց, կատարվեցին բարեփոխումներ, որոնց շարքում առանձնահատուկ նշանակություն ունեցավ անցումը նոր հարկային համակարգին: Շուկայական տնտեսությանն անցման շրջանի հիմնախնդիրների հետևողական լուծումը հարկաբյուջետային հարաբերությունների կատարելագործման և

[2] Հայաստանի Հանրապետության հարկային օրենքները, Երևան 2003 թ., էջ 19:

դրան համապատասխան նոր հարկային ռազմավարության մշակման պահանջներ առաջադրեց: Այդ նպատակով հանրապետության Ազգային Ժողովի կողմից 1992թ. ապրիլին ընդունվեց օրենք հարկերի և տուրքերի մասին, որտեղ սահմանվեցին ՀՀ հիմնական հարկատեսակները:

Հարկային օրենսդրության հիմնական դրույթներով սահմանվեցին ՀՀ-ում գործող հարկերի, տուրքերի ընդհանուր հասկացությունները, հարկման օբյեկտներն ու հարկ վճարող սուբյեկտները, հարկային վճարումների գործընթացի իրականացման ժամանակ զանազան խախտումների համար պատասխանատվությունը, զանազան պատճառներով առաջացած հարկային վեճերի լուծման կարգը և այն հիմնական սկզբունքները, որոնցով կարգավորվում են հարկային հարաբերությունները:

Հարկային հարաբերությունների հետագա կատարելագործումը պայմանավորված էր առանձին հարկատեսակների գծով մի շարք փոփոխությունների ու լրացումների կատարմամբ, ինչպես նաև նոր հարկատեսակների ձևավորմամբ:

1997թ. ՀՀ Ազգային Ժողովը հաստատեց մինչ այդ կատարված փոփոխություններն ու լրացումները ընդգրկող հարկային նոր օրենսդրություն:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքը Ազգային Ժողովի կողմից վերջին անգամ ընդունվել է 1997թ. ապրիլի 14-ին և գործողության մեջ դրվել նույն տարվա մայիսի 30-ին:

Նոր հարկային օրենսդրության ընդհանուր դրույթներին համապատասխան՝ հարկերի հաշվարկման մեխանիզմներում կատարվեցին փոփոխություններ ու լրացումներ, որոնք ավելի պարզություն ու որոշակիություն մտցրին հարկային հարաբերությունների կարգավորման գործընթացներում:

Հանրապետությունում հարկային օրենսդրությամբ ներկայումս սահմանվել և գործում են հետևյալ արտոնությունները՝ հարկվող օբյեկտի նվազեցում, հարկային դրույքաչափերի պակասեցում, հարկի հաշվարկման և վճարման ժամկետների հետաձգում: Որոշակի արտոնություններ են նախատեսված նաև առանձին հարկատուների կողմից հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը խախտելու դեպքում՝ օրենսդրությամբ հաշվարկված տույժերից ու տուգանքներից ազատում, դրանց նվազեցում, ինչպես նաև վճարման ժամկետների երկարացում:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ ձևավորվում են հանրապետության համախմբված բյուջեի եկամուտները: Օրենսդրությամբ նախատեսված են պետական բյուջեի և համայնքային բյուջեի եկամուտները ձևավորող հարկատեսակները:

գ. ՀՀ հարկային համակարգը

Հարկային համակարգը բոլոր երկրներում ներառում է հարկերի տարբեր տեսակներ, որոնք ունեն ազգային և տարածաշրջանային նշանակություն: Դա նշանակում է, որ հարկային համակարգը ներկայացնում է

հարկերի առանձին տեսակների ամբողջությունը, որոնք սահմանվում են օրենսդրությամբ:

ՀՀ-ում գոյություն ունեցող հարկերը կարելի է դասակարգել՝ հաշվի առնելով, թե հարկի այս կամ այն տեսակը բյուջեի որ օղակն է մուտք լինում՝ պետական, թե՝ տեղական, որը միաժամանակ հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու այդ բյուջեների եկամուտների ձևավորման աղբյուրների մասին:

Այդ սկզբունքով հարկերը դասակարգվում են հանրապետական և տեղական բնույթի հարկերի: Հանրապետական բնույթի հարկերը ձևավորում են պետական բյուջեի հարկային եկամուտները:

Համաձայն ՀՀ հարկերի մասին օրենքի դրույթների՝ պետական բյուջեի եկամուտները ձևավորվում են հետևյալ հարկային և ոչ հարկային եկամուտներից՝ ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ), ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտահարկ, գույքահարկ, հողի հարկ, պարզեցված հարկ, մաքսային տուրք, հաստատագրված վճարներ, բնական պաշարների օգտագործման և բնապահպանական վճարներ:

Հարկային համակարգում ներառված հարկերը, ըստ գանձման եղանակի, ինչպես նաև հարկ վճարողների ու պետության փոխհարաբերության հատկանիշի, դասակարգվում են.

1. ուղղակի հարկեր,
2. անուղղակի հարկեր,
3. սոցիալական ապահովագրության վճարներ:

Ուղղակի հարկերը անմիջաբար կապված են եկամուտների և ունեցվածքի հետ ու գանձվում են հարկ վճարողներից: Դա նշանակում է, որ այդ հարկատեսակները վճարվում են ստացված եկամուտներից, այդ թվում՝ աշխատավարձից, շահույթից, շահութաբաժնից, ռենտայից, տոկոսից, ինչպես նաև ունեցվածքից, այդ թվում՝ գույքից, շինություններից և այլն: Ուղղակի հարկերի շարքն են դասվում շահութահարկը, եկամտահարկը, հողի հարկը, գույքահարկը, ինչպես նաև պարզեցված հարկը:

Անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների գների ու ծառայությունների սակագների կազմում: Անուղղակի հարկեր են ավելացված արժեքի հարկը և ակցիզային հարկը:

Հարկերի հաջորդ խումբը սոցիալական ապահովագրության վճարներն են, որոնք գործող օրենսդրական ու նորմատիվային ակտերի համաձայն, ֆիզիկական և իրավաբանական անձինք վճարում են սոցիալական ապահովագրության ֆոնդերին:

Հարկային եկամուտները ներկայացնում են պետության ֆինանսական ռեսուրսների առաջացման հիմնական աղբյուրները և որոշիչ դեր են կատարում բյուջեի եկամուտների ձևավորման, տնտեսության կայունացման, պետության գործառույթների կատարման, սոցիալ-տնտեսական նպատակային խնդիրների լուծման և բնակչության կենսապայմանների բարելավման գործում: Ժամանակակից պայմաններում առանձին երկրներում բավականին ավելացել են սոցիալական ապահովության ֆոնդերին կատարվող վճարումները, որոնք իրենց աճի տեմպերով հա-

ճախ գերազանցում են ուղղակի և անուղղակի հարկերի աճի տեմպերը (տե՛ս աղյուսակ 17.1):

Աղյուսակ 17.1

Հարկերի առանձին տեսակների կառուցվածքը մի քանի առաջատար երկրների բյուջեներում (%)[3]

N	*Երկրներ*	*Ուղղակի հարկեր*	*Անուղղակի հարկեր*	*Սոցիալական ապահովագրական վճարներ*
1	ԱՄՆ	48	27.1	24.9
2	Անգլիա	40.3	38.9	20.8
3	Ֆրանսիա	19.1	36.0	44.9
4	ԳՖՀ	31.6	30.9	37.5
5	Ճապոնիա	40.2	29.4	30.4

Ուղղակի հարկերի բաժինը, բացառությամբ Ֆրանսիայի, բավականին բարձր է և կազմում է միջին հաշվով 37.0%, անուղղակի հարկերինը՝ մոտ 27.0%, իսկ սոցիալական ապահովագրության վճարները խիստ տատանվում են, որը համեմատաբար բարձր է Ֆրանսիայում (44.9%), Գերմանիայում (37.5%) և Ճապոնիայում (30.4%):

ՀՀ հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի բաժինը 2003 թ. համապատասխանաբար կազմել են 16.3 և 69.2%, ոչ հարկային եկամուտներինը, սոցիալական ապահովության վճարների հետ միասին՝ 17.6%[4]:

Այսպիսով, հարկերի հիմնական տեսակների ու դրանց դասակարգման միջոցով հարկերի կառուցվածքային տվյալների ուսումնասիրությունը մի կողմից ցույց է տալիս դրանց հարաբերակցությունը և ունեցած հետևանքները, իսկ մյուս կողմից հարկային քաղաքականության կատարելագործմանը նպաստող միջոցառումների մշակման և դրանց կառուցվածքի բարելավման հիմք է հանդիսանում:

17.3. Հարկային քաղաքականության սկզբունքները

ա. Հարկային քաղաքականության մակրոտնտեսական մոտեցումները

Պետության կողմից արտադրատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով պահանջվող ծախսերի ֆինանսավորման, ինչպես նաև պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրը հարկերն են, պետական տուրքերը, ոչ հարկային եկամուտները, ինչպես նաև փոխառություններից ստացված եկամուտները:

Դա նշանակում է, որ յուրաքանչյուր երկրում հարկային քաղաքականության իրականացման հիմնական նպատակը անհրաժեշտ քանա-

[3] ¤‰¿ <³„·,<#Â1Ô1/#Ð<•"fl·#¶<»·¿ <•·…¿ ·Ã–…¶"fl"#Ì"…‰fi<³…¿ ><Ñ1/#Ð¿ ³1#K3.

[4] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը. 2003 թ. հունվար-դեկտեմբեր, Երևան, 2004, էջ 129-130:

կության հարկային եկամուտների ձևավորումն է՝ ըստ գործող հարկային օրենսդրության ու սահմանված նորմատիվային ակտերի:

Յուրաքանչյուր երկրում իրականացվող հարկային քաղաքականության շնորհիվ մի դեպքում կարող են ապահովվել բարձր հարկային եկամուտներ՝ հարկային դրույքաչափերի անընդհատ վերանայման ճանապարհով, որի հիմնական նպատակը բյուջեի հարկային եկամուտների ավելացումն է և համախառն ներքին արդյունքի կառուցվածքում հարկային եկամուտների տեսակարար կշիռի բարձրացումը: Մյուս դեպքում՝ հարկային քաղաքականությունը կարող է հանգեցնել հարկային եկամուտների կրճատման և հարկերի խթանող դերի բարձրացման:

Հարկային քաղաքականության նշված ուղղություններից առաջինը մակրոտնտեսագիտության կողմից ընդունվել է որպես տնտեսությունը կաշկանդող, իսկ երկրորդը՝ որպես խթանող հարկային քաղաքականություն:

Հարկային ճկուն քաղաքականության իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ հարկերի ավելացումը, հարկային դրույքաչափերի վերանայումները պետք է համատեղելի լինեն տնտեսական արդյունավետության բարձրացման, արտադրության գործոնների արդյունավետ բաշխման և օգտագործման հետ:

Դա նշանակում է, որ հարկային քաղաքականությունը պետք է խթանի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և բացառի այնպիսի երևույթների առկայությունը, որոնք կհանգեցնեն գների բարձրացման, պահանջարկի և առաջարկի կտրուկ փոփոխման, սոցիալական շերտավորման խորացման: Նման իրավիճակը կանդրադառնա վճարունակության մակարդակի իջեցման վրա, որի հետևանքով պահանջարկի աստիճանաբար կրճատումը կհանգեցնի նաև առաջարկի տեղաշարժերի՝ տնտեսավարող սուբյեկտները կսկսեն ուղիներ փնտրել հարկերից խուսափելու, ստվերային տնտեսության շրջանակները ընդլայնելու համար:

Այստեղից հետևում է, որ հարկերի անընդհատ աճը և դրա հետևանքով գների բարձրացումը, ազդելով պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխության վրա, կաշկանդում կամ խոչընդոտում են ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Այդ պատճառով նման հարկային քաղաքականությունը հանգեցնում է բացասական հետևանքների, խոչընդոտում է ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը:

Եթե հարկային քաղաքականության արդյունքում հարկերը պակասեն, ապա դա դրական ներգործություն կունենա տնօրինվող եկամտի աճի վրա, կխթանի սպառման միջոցների աճը և ազգային խնայողությունների կրճատումը:

Հարկային խթանող քաղաքականության հիմնական դրույթները առանձին երկրներում տնտեսագետների կողմից հասցվեցին մինչև տնտեսական քաղաքականության աստիճանի, և հարկերի իջեցումը ընդունվեց որպես ազգային արդյունքի աճի հիմնական աղբյուր ու տնտեսության կայունացման հիմնական գործոն:

Այդ դրույթները գնահատվել են դեռևս ԱՄՆ նախագահ Ջոն Քենեդիի կողմից, որը հարկերի իջեցման քաղաքականությունը համարեց տնտեսության խթանման հիմնական գործոններից մեկը:[5]

Երկրի հարկային քաղաքականության շնորհիվ ձևավորված հարկային համակարգը, առանձին հարկերի գծով սահմանված դրույքաչափերը պետք է նպաստեն հարկերի այնպիսի քաղաքականության ձևավորմանը, որը կարող է համատեղելի լինել տնտեսության արդյունավետության բարձրացման, արտադրության կազմակերպման սկզբունքների ու պետության նպատակային խնդիրների հետ:

Հարկային ճիշտ քաղաքականությունը պետք է ապահովի նաև տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ հավասարարական մոտեցման սկզբունք, որը արտադրության արդյունավետության բարձրացման գործում ունի առանձնահատուկ նշանակություն:

Այս հիմնախնդիրը մակրոտնտեսագիտության կողմից լուծվում է հարկային խթանող քաղաքականության *հորիզոնական* և *ուղղահայաց* հավասարարական մոտեցման հիմնարար դրույթներով ու սկզբունքներով:

Հարկային խթանող քաղաքականության հորիզոնական հավասարարական սկզբունքի էությունն այն է, որ միանման պայմաններում գտնվող և հավասար եկամուտներ ստացող ձեռնարկություններին ու ընկերություններին, որպես հարկատուների, պետք է հավասարարական մոտեցում ցուցաբերվի: Այսինքն՝ առանձին հարկատեսակների դրույքաչափերի համատեղելիությունը ձեռնարկության, նրա կոլեկտիվի ու պետության նպատակային խնդիրների հետ, կհանգեցնի նրանց շահերի հիմնավոր զուգակցման և հասարակության կենսապայմանների բարձրացման:

Հարկային խթանող քաղաքականության ուղղահայաց հավասարարության սկզբունքի հիմնական պահանջն է՝ տնտեսության մասշտաբով վարել հարկային տարբերակված քաղաքականություն, այսինքն՝ հարկային խթանող քաղաքականությունը այնպես իրականացնել, այնպիսի դրույքաչափեր սահմանել, որոնց միջոցով հնարավոր կլինի տնտեսությունում տարբեր հասարակական դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ ցուցաբերել տարբեր մոտեցումներ:

բ. Հարկային խթանող քաղաքականությունը և վճարելու հնարավորության սկզբունքը

Հարկային խթանող քաղաքականության ուղղահայաց հավասարարության սկզբունքը մակրոտնտեսագիտության կողմից ընդունվել է որպես «վճարելու հնարավորություն», որն ունի խթանող հատկություն և կարող է գործող հարկային քաղաքականությունը համատեղելի դարձնել տնտեսության տարբեր ոլորտներում արտադրության արդյունավետության բարձրացման, նպատակային խնդիրների լուծման և շահերի զուգակցման հետ:

---

[5] Տե՛ս Մենքյու Գ., «Մակրոէկոնոմիկա», Եր., Հայաստան, 1997, էջ 218:

Արտադրության արդյունավետության և հարկային խթանող քաղաքականության համատեղելիություն համարվում է առանձին հարկատեսակների գծով օրենքով սահմանված դրույքաչափերի սահմանային այն մակարդակը, որը համապատասխանում է հարկատուների կողմից հարկ վճարելու հնարավորությանը:

Այդ նպատակով անհրաժեշտ է պարզել և գիտականորեն հիմնավորել, թե վճարելու հնարավորություն ունեցող հարկատուների համար որ սահմանային դրույքաչափը կարող է համարվել հարկման թույլատրելի սահմանային դրույքաչափ և ցույց տալ, թե այդ դրույքաչափը որքան կարող է բարձր լինել վճարման հնարավորություն չունեցողների համար:

Դա նշանակում է, որ եթե գործող հարկային համակարգի առանձին հարկերի դրույքաչափերի մակարդակը սահմանելիս անտեսենք տնտեսությունում գործարարության ծավալման հնարավորության հարցը, ապա տնտեսության մեջ ռեսուրսների օգտագործման բարձր արդյունավետություն, տնտեսական կայունություն և արտադրության աճի կայուն տեմպեր ապահովել հնարավոր չէ:

Եթե հարկային համակարգի առանձին հարկատեսակների դրույքաչափերի առկայության դեպքում տնտեսավարող սուբյեկտները կարողանում են գործարարության միջոցով եկամուտ ստանալ, նշանակում է՝ տվյալ գործատուի կամ տնտեսավարող սուբյեկտների համար հարկային բեռը տանելի է: Ուստի, եթե այս կամ այն բնագավառում տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը հարկվում է ավելի մեծ դրույքաչափերով, ապա գները, դրան համապատասխան, բարձրանում են, որը անդրադառնում է գնողունակության կրճատման վրա: Այսինքն՝ հարկային դրույքաչափերի բարձրացումը հանգեցնում է հարկային բազայի կրճատման, քանի որ արտադրողներին ձեռնտու չէ վնասաբեր ապրանքի իրացումը: Հետևաբար հարկային բեռի աճը հանգեցնում է նաև սպասվելիք հարկային եկամուտների կրճատման, որը բարձր դրույքաչափերի հետևանք է:

Այստեղից հետևում է, որ հարկման բազայի մակարդակը հակադարձ կախվածության մեջ է հարկային դրույքաչափերից: Այսինքն՝ հարկման բարձր դրույքաչափի սահմանումը հանգեցնում է ոչ թե իրացման խթանման, այլ կրճատման, հետևաբար նաև՝ հարկային եկամուտների կրճատման:

Հարկային դրույքաչափերի ոչ հիմնավոր բարձրացումը բացասական ազդեցություն է ունենում նաև սպառողների և հարկատուների, այսինքն՝ արտադրողների վարքագծի ու նախասիրության վրա: Նրանք սկսում են ուղիներ փնտրել հարկերից խուսափելու համար, ընդլայնվում են ստվերային տնտեսության շրջանակները, որոնք ազդում են հարկային բազայի կրճատման վրա և հանգեցնում հարկային եկամուտների կրճատման:

Այսպիսով, հարկային խթանող քաղաքականության հիմնական խնդիրն է՝ ընտրել դրույքաչափի այն օպտիմալ սահմանը, որն ընդլայնելով հարկային բազան՝ հարկային եկամուտների ավելացման նախադրյալներ կստեղծի:

Հարկային խթանող քաղաքականության հիմնական դրույթները տնտեսագիտության մեջ ընդհանրացրել է Արթուր Լաֆֆերը, որը հիմնավորել է, որ հարկերի դրույքաչափի աճը մինչև որոշակի սահման կարող է հանգեցնել հարկային եկամուտների աճի, իսկ որոշակի մակարդակից սկսած՝ բարձր դրույքաչափը ազդում է հարկման բազայի կրճատման վրա և հանգեցնում հարկային եկամուտների նվազեցման: Դրանով նա վերջնականապես հիմնավորեց հարկային եկամուտների և հարկային դրույքաչափերի փոխադարձ կապը, որը տնտեսագիտության մեջ ստացել է Լաֆֆերի կոր անվանումը:

17.4. Պետական տուրքերի էությունը և դրանց համակարգը

Հանրապետության անկախացումից հետո կատարված բարեփոխումների համակարգում առանձնահատուկ մոտեցում ցուցաբերվեց նաև տուրքերին:

Այդ նպատակով պահանջվեց ինչպես պետական, այնպես էլ տեղական տուրքերի ու վճարների վերաբերյալ ձևավորել օրենսդրական դաշտը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, որի դրույթները գործում են դեռևս 1996թ., վերջնական բարեփոխումներով ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 28-ին՝ ներառելով մինչ այդ կատարված փոփոխությունները: «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանվեցին պետական տուրք հասկացությունը, տուրքի տեսակները և դրույքաչափերը, տուրք վճարողները, ինչպես նաև տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները: Օրենքը կարգավորում է նաև պետական տուրքի հետ կապված մյուս հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետությունում տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենսդրությամբ սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից պետական և համայնքների բյուջեներ մուծվող, օրենքով սահմանված պարտադիր գանձույթ է: Դա նշանակում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրենց գոյատևման համար անհրաժեշտ կենսամիջոցների ձեռքբերման հետ միաժամանակ, իրենց պահանջմունքները բավարարում են նաև համապատասխան ծառայությունների միջոցով, որոնց դիմաց նրանցից կատարվում են գանձույթներ՝ օրենքով սահմանված կարգի համաձայն:

Ըստ օրենսդրության՝ պետական տուրք վճարող են համարվում նախատեսված ծառայություններից կամ գործողություններից օգտվել ցանկացող ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց համար սահմանված են համապատասխան իրավունքներ և պարտականություններ:

Հայաստանի Հանրապետությունում տուրք է գանձվում հետևյալ ծառայությունների համար.

– իրավական մարմիններին հայցադիմումներ, գանգատներ ներկայացնելու, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանների կողմից փաստաթղթերի պատճենները տալու համար,
– նոտարական գրասենյակների բոլոր կարգի ծառայությունների համար,
– քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանցում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու համար,
– Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար,
– հետազոտական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար,
– պետական գրանցման համար,
– մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր հանձնելու համար,
– գիտական հայտնագործությունների վերաբերյալ նմուշների պատրաստման և զանազան իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար,
– ֆիզիկական անձանց տրվող՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար,
– լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար:

Նշված ուղղություններով կատարվող ծառայությունների դիմաց գանձույթի հաշվարկման համար ելակետային հիմք են ծառայում պետական տուրքի՝ օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերը, որոնք հաշվարկվում են գնահատման ենթակա գույքի արժեքից և սահմանված բազային տուրքի չափից ելնելով: Օրենսդրությամբ բազային տուրքի չափը սահմանված է 1000 դրամ:

Բացի դրանից՝ հաշվի են առնվում նաև կատարված ծառայության դիմաց սահմանված բազային տուրքի տոկոսաչափերը կամ ուղղակի օրենսդրությամբ սահմանված բազային տուրքի քառապատիկը, եռապատիկը, տասնապատիկը և այլն:

Ինչպես առանձին հարկերի, այնպես էլ պետական տուրքի գծով սահմանվում են որոշակի արտոնություններ, մասնավորապես՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, դրույքաչափերի նվազեցում, վճարման ժամկետի հետաձգում, զանազան բնույթի տույժերի վճարումից ազատում[6]:

Պետական տուրքի դրույքաչափերի, սահմանված արտոնությունների հիման վրա՝ կատարված ծառայությունների դիմաց հաշվարկված պետական տուրքը գանձվում է ծառայությունների մատուցման ավարտից

[6] Մյուս ուղղությունների վերաբերյալ մանրամասն տե՛ս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, Երևան, 2003, էջ 173-219:

հետո: Եթե պետական տուրքի գանձման համար միաժամանակ կատարվում են մի քանի գործառնություններ, ապա պետական տուրքը այդ գործառնությունների համար հաշվարկվում է առանձին-առանձին և փոխանցվում համապատասխան բանկային հաշվին:

Պետական տուրքի ժամանակին հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնում են ՀՀ կառավարության լիազորված մարմինները:

Աղյուսակ 17.2

ՀՀ պետական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները (մլն դրամ)

		2003
	Եկամուտներ և պաշտ. տրանսֆերտներ այդ թվում՝	250087,1
	Ընդամենը եկամուտներ	240215,2
Ա	Ընթացիկ եկամուտներ այդ թվում՝	236970,7
1.	Հարկային եկամուտներ	212232,8
2.	Պետական տուրք	15213,7
3.	Ոչ հարկային եկամուտներ	9524,2
Բ	Կապիտալի գործառնություններից եկամուտներ	3244,5
	Պաշտոնական տրանսֆերտներ	9871,9

Բնակչության համար կատարված ծառայությունների դիմաց գանձումները պետական բյուջեի եկամուտների աճի վրա ազդող հիմնական գործոններից են:

Տուրքերի վճարումների համակարգում առանձնահատուկ նշանակություն ունեն նաև տեղական տուրքերը և վճարները, որոնք ձևավորվում են «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիաիրավական նորմերին ու պայմանագրերին համապատասխան գանձվող վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ այլ օրենքներով ու իրավական ակտերով:

Տեղական տուրքը ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց և սահմանված կարգով ու չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Համաձայն գործող կարգի՝ ՀՀ համայնքներում կարող են սահմանվել տեղական տուրքերի հետևյալ տեսակները.

– համայնքի տարածքում շինարարության, շենքերի, շինությունների և այլ օբյեկտների ամրացման, արդիականացման, արտաքին տես-

քի փոփոխման աշխատանքներ սկսելու թույլտվության համար, ինչպես նաև շենքերի ու շինությունների քանդման աշխատանքներ սկսելու թույլտվության համար,
- համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի համար ստացած թույլտվության դիմաց,
- համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար, բացառությամբ տոնավաճառների, ինչպես նաև համայնքի տարածքում հասարակական սննդի և սպասարկման գործունեության կանոնների համաձայն, խաղատների, բաղնիքների, շահումներով խաղերով զբաղվելու թույլտվության դիմաց,
- Երևանի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար,
- համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար,
- համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար,
- համայնքի տարածքում, բացառությամբ քաղաքային համայնքների, մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար:

Օրենսդրության համաձայն՝ համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները.

- համայնքի տարածքում շինարարություն և շինությունների արտաքին տեսքի փոփոխման հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը,
- տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողատարածություններ հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարները,
- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարը:

Տեղական տուրքերի գանձման գործընթացում բոլոր վճարողների համար միասնականության սկզբունք ապահովելու նպատակով սահմանվում են միասնական դրույքաչափեր: Օրենսդրությամբ արգելված է տեղական տուրքերի դրույքաչափերի փոփոխությունը:

Օրենսդրության համաձայն՝ դրույքաչափեր են սահմանվում նաև տեղական վճարների համար: Սովորաբար տեղական վճարի դրույքաչափը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, սահմանում է համայնքի ավագանին՝ որոշակի գործողություն իրականացնելու համար անհրաժեշտ

նվազագույն ծախսերի չափով: Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական վճարների միասնական դրույքաչափեր, որոնք ամբողջ տարվա ընթացքում փոփոխման ենթակա չեն:

Այսպիսով, տեղական տուրքի և վճարի հաշվարկման համար ելակետային հիմք են ծառայում սահմանված դրույքաչափերը, իսկ հաշվարկված գումարները գանձվում են տեղական մարմինների պաշտոնատար անձանց կողմից՝ հաշվի առնելով այն արտոնությունները, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանվում են համայնքի ավագանու կողմից:

Այսպիսով, տեղական տուրքերի և վճարների օրենսդրական դրույթների համաձայն՝ գանձված տուրքերի և վճարների գումարները ամբողջությամբ ամրագրվում են տեղական բյուջեում և ապահովում են համակցված բյուջեում այդ ուղղությամբ հավաքագրվող եկամուտների ավելացումը:

17.5. Բյուջետային համակարգը և դրա դերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում

Ֆինանսական հարաբերությունների բնույթին համապատասխան՝ ձևավորվում է նաև պետական ֆինանսների համակարգը, որտեղ համակարգված օղակների շարքում առանձնահատուկ նշանակություն ունի երկրի բյուջետային համակարգը՝ հանձինս պետական ու տեղական բյուջեների, ինչպես նաև սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն:

Համախմբված բյուջեն, որպես ֆինանսական համակարգի հիմնական օղակ, իրենից ներկայացնում է փողի միջոցների համապետական ֆոնդերի ձևավորման և օգտագործման հիմնական ֆինանսական պլանը:

ՀՀ ներկայիս պետական կառուցվածքին ու վարչատարածքային բաժանմանը համապատասխան՝ Սահմանադրության 104-րդ հոդվածի համաձայն՝ բյուջետային համակարգը ներառում է հանրապետության պետական բյուջեն, տեղական բյուջեները և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն, որոնք պետական բյուջեի մասին օրենքի համաձայն՝ դիտարկվում են որպես համախմբված բյուջեի բաղկացուցիչ մասեր:

Բյուջեն որոշակի ժամանակահատվածի՝ սովորաբար մեկ տարվա համար եկամուտների ու ծախսերի ֆինանսական պլանն է, որտեղ ըստ աղբյուրների հավաքագրվում են համապատասխան եկամուտները և կատարվում է դրանց բաշխումը ըստ առանձին ուղղությունների:

Տնտեսության մասշտաբով պետական բյուջեի միջոցով ֆինանսական հարաբերությունները արտացոլվում են որոշակի հիմնական ուղղություններով, որը հնարավորություն է տալիս իրականացնելու մի շարք նպատակային խնդիրներ:

Կարևորագույն նպատակային խնդիրներ են.

- ինչպե՞ս ձևավորել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցները,
- ի՞նչ ուղղություններով են պետական կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինները ծախսում առանձին աղբյուրներից հավաքագրված գումարները, և դրանցից որքանն է հատկացվելու երկրի պաշտպանունակությանը, միջավայրի պահպանությանը, սոցիալական ծառայություններին, գիտությանն ու կրթությանը, առողջապահությանը, մշակույթին և այլ ծրագրային ուղղություններին,
- ի՞նչ ուղղություններով կարող են ներգրավվել փոխառու միջոցներ, ինչպիսի՞ն պետք է լինի պետական պարտքի մարման քաղաքականությունը, ինչպե՞ս պետք է փոխհատուցվի բյուջեի պակասուրդը:

Բյուջետային համակարգը իրենից ներկայացնում է պետության տնտեսական ու սոցիալական քաղաքականության ռազմավարական խնդիրների լուծումը ապահովող միջոցառումների իրականացման ֆինանսական պլան:

Հանրապետության համախմբված բյուջեի առանձին օղակների գծով ստացված եկամուտները բնութագրվում են ներքոնշյալ աղյուսակի տվյալներով (տե՛ս աղյուսակ 17.3)

Աղյուսակ 17.3

Համախմբված բյուջեի եկամուտների կառուցվածքը (տոկոսներով)[7]

	Համա-խմբված բյուջե (%-ով)	Որից	
		Պետական բյուջե	Համայնք. բյուջե
Եկամուտներ և պաշտոնական անհատույց փոխատվություններ. ընդամենը, այդ թվում՝	100	100	100
Հարկային եկամուտներ	63,6	73,0	53,0
Պետական տուրք	4.6	5,2	6,9
Ոչ հարկային եկամուտներ	4,0	3,7	26,7
Կապիտալի գործառնություններից եկամուտ	1,2	1,1	6,8
Պաշտոնական անհատույց փոխատվություն	14,9	17,0	6,6
Սոցապ հիմնադրամ	11,7	-	-

Ըստ աղյուսակի տվյալների՝ համախմբված բյուջեի եկամուտների կառուցվածքում հարկային եկամուտները 2003թ. կազմել են 63,6%, այն դեպքում, երբ պետական բյուջեում կազմել են 73,0%:

[7] Հայաստանի վիճակագրական տարեգիրք: Երևան, 2004թ., էջ 383-384:

Վերջին տարիներին համախմբված բյուջեի առանձին բաղադրիչների գծով կատարված ծախսերը կազմել են ստեղծված ՀՆԱ-ի մոտ մեկ քառորդը:

Աղյուսակ 17.4

ՀՀ համախմբված բյուջեի ծախսերի կառուցվածքը ՀՆԱ-ում (տոկոսներով)[8]

Բյուջեի համակարգը	2003
Համախմբված բյուջե	23.5
Պետական բյուջե	20.1
Համայնքային բյուջե	1.6
Սոցիալ. ապահովագրության պետական հիմնադրամ	3.9
Միջբյուջետային փոխանցումներ[9]	2.05

Հանրապետության բյուջետային համակարգի միասնությունը երաշխավորված է բյուջեների կազմման ընդհանուր սկզբունքներով, եկամուտների և ծախսերի բյուջետային դասակարգման, դրանց հաշվառման ու հաշվարկման համասեռությամբ, ինչպես նաև դրանց եկամուտների ձևավորման դրամարկղային կատարման ընդհանրությամբ:

ա) ՀՀ պետական բյուջեն և դրա դերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում

Բյուջետային համակարգում առանձնահատուկ դեր ունի պետական բյուջեն, որի միջոցով ապահովվում են մակրոմակարդակի արժեքային համամասնությունները: Պետական բյուջեի ձևավորման անհրաժեշտությունը պայմանավորված է պետության հիմնական տնտեսական գործառույթների կատարման անխուսափելիությամբ, ոչ արտադրական ոլորտի գործունեության անընդհատության ապահովման, մասնավորապես՝ գիտության և կրթության, առողջապահության, մշակույթի, երկրի պաշտպանության, կառավարման ապարատի պահպանման և այլ գործառնությունների ծավալման կարևորությամբ:

Պետական բյուջեն համարվում է շուկայական տնտեսության պետական կարգավորման հիմնական լծակներից մեկը, քանի որ դրանում է կենտրոնացվում երկրի ամբողջ դրամական ռեսուրսների մեծ բաժինը, որը տնօրինում է կառավարությունը: Միևնույն ժամանակ, երկրի պետական բյուջեն պետք է դիտարկել նաև որպես պետական եկամուտների և ծախսերի միասնական ֆինանսական պլան: Այս առումով կառավարության հիմնական խնդիրներից է նաև պետական բյուջեի եկամուտների և ծախսերի միջև այնպիսի հավասարակշռության ապահովումը, որը կարող է երաշխավորել տնտեսական նպատակային խնդիրների լուծումը:

---

[8] ՀՀ 2002թ. պետական բյուջեի կատարում, համառոտ ուղեցույց: ՀՀ ՖԷ նախարարություն, Երևան, 2003թ., էջ 7:

[9] **Ծանոթություն:** Որպես կանոն՝ միջբյուջետային փոխանցումների տոկոսը համախմբված բյուջեի հաշվարկման ժամանակ հանվում է մյուս բյուջեների տոկոսների հանրագումարից (19.4+1.5+3.4-2.02=22.88)

Պետական բյուջեն արտահայտում է պետության, ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց միջև ամբողջական ֆինանսական հարաբերությունները և ձևավորում է երկրի կենտրոնացված միասնական դրամական ֆոնդերը: Պետական բյուջեի կարևոր նշանակությունն արտահայտվում է նաև նրանում, որ պետական բյուջեի միջոցով կառավարությունը կարգավորում է ֆինանսական ենթակառուցվածքների ձևավորման ու զարգացման, արտադրության խթանման, ինչպես նաև տնտեսությունը կայունացնելու, ֆինանսական անկայունությունը և ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու, բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու խնդիրները:

Պետական բյուջեի կառուցվածքը տարբեր երկրներում ունի կառուցվածքային տարրերի տարբերություններ: Օրինակ, ԱՄՆ-ում ֆիզիկական անձանցից գանձվող հարկերը բյուջեի ընդհանուր եկամուտների կառուցվածքում կազմում են շուրջ 60%, Ռուսաստանում՝ 10-12%:

Շուկայական տնտեսությանն անցման անհրաժեշտությամբ պայմանավորված, ինչպես նաև կառուցվածքային լուրջ փոփոխությունների կատարման, հարկային նոր քաղաքականության անցման շնորհիվ ամբողջությամբ վերակառուցվեց հանրապետության պետական բյուջեի եկամուտների կազմն ու կառուցվածքը (տե՛ս աղյուսակ 17.5):

Աղյուսակ 17.5

Պետական բյուջեի եկամուտների կազմը (մլն դրամ)[10]

	1999	2000	2001	2002	2003
Եկամուտներ և պաշտոնական անհատույց փոխատվություն Այդ թվում՝	190917.8	172132.8	193577.8	228317.9	292035.3
Հարկային եկամուտներ	149359.4	143661.5	154892.3	185437.4	212232.8
Հարկային եկամուտները ընդհանուր եկամուտների նկատմամբ, %-ով	78.2	83.5	80.0	81.2	72.7
Պետական տուրք	9743.3	8889.2	13916.7	13181.5	15213.7
Ոչ հարկային եկամուտներ	16254.4	11064.7	1387.7	10915.2	10864.6
Կապիտալի գործառնություններից եկամուտներ	760.4	14.3	1586.1	1764.8	3244.5
Պաշտոնական անհատույց փոխատվություն	15100.3	8503.1	9309.0	17019.0	50479.6

[10] Հայաստանի վիճակագրական տարեգիրք: Երևան, 2004թ., էջ 386-387:

Չնայած վերջին հինգ տարիներին հարկային եկամուտներն ավելացել են շուրջ 42.0%-ով, այնուամենայնիվ պետական բյուջեի ընդհանուր եկամուտների և պաշտոնական անհատույց փոխատվության նկատմամբ հարկային եկամուտներն ունեցել են նվազման միտում. 2000թ. 83.5%-ի փոխարեն 2003թ. կազմել են միայն 72.7%: Նման իրավիճակը պայմանավորված է ինչպես պաշտոնական անհատույց փոխատվության կտրուկ ավելացմամբ, կապիտալի գործառնություններից եկամուտների, պետական տուրքի ավելացմամբ, այնպես էլ ստվերային տնտեսության շրջանակների ընդլայնմամբ:

Պետական բյուջեի եկամուտների ձևավորման նպատակը պետության տնտեսական գործառույթներին համապատասխան ծախսումների իրականացումն է: ՀՀ պետական բյուջեի օրենքի հիմնական դրույթներին համապատասխան՝ պետական բյուջեի ձևավորված եկամուտներն ըստ գործառնական դասակարգման ծախսվում են հետևյալ հիմնական ուղղություններով (տես՝ աղյուսակ 17.6):

Աղյուսակ 17.6

ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման[11]

	1999	2003
1. Ընդամենը ծախսեր	100	100
Այդ թվում՝ 2. Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ	8,3	9,6
3. Պաշտպանություն	15,0	14,2
4. Հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն	6,0	6,6
5. Կրթություն	9,1	11,1
6. Առողջապահություն	5,5	5,0
7. Սոցիալական ապահովագրություն և սոց. ապահովություն	10,8	9,4
8. Մշակույթ, սպորտ և կրոն	1,5	4,5
9. Բնակարանային կոմունալ տնտեսություն	5,5	12,0
10. Վառելիքաէներգետիկ համալիր	1,9	2,0
11. Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն, ձկնաբուծություն	11,0	6,3
12. Լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ, շինարարություն, բնապահպանություն	2,5	-
13. Այլ ծախսեր	22,9	19,0

Ընդհանուր բնույթի պետական ծառայությունների ուղղությամբ բյուջեից ծախսերի կատարմանը զուգընթաց, այնուհետև ծախսումները բաշխվում են ըստ նպատակայնության, մասնավորապես՝ երկրի պաշտպանության, հասարակական կարգի պահպանության, սոցիալական

[11] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2004, էջ 390-391:

ոլորտների պահպանման և զանազան այլ ծառայությունների կատարման համար:

Պետական բյուջեի ծախսային ուղղությունների կառուցվածքային տվյալների համաձայն՝ բարձր տեսակարար կշիռ ունեն պաշտպանության, սոցիալական ապահովագրության և սոցապահովության, գյուղատնտեսության, անտառային և ջրային տնտեսության ու ձկնաբուծության խմբերի գծով կատարված ծախսումները:

բ) Համայնքային (տեղական) բյուջեն և դրա դերը համայնքների գործունեության զարգացման գործում

Շուկայական տնտեսության անցման պայմաններում, ելնելով տնտեսության ինքնակառավարման կատարելագործման հիմնական պահանջներից, տեղական ֆինանսական համակարգի դերի բարձրացման նոր հիմնախնդիրներ առաջացան: Դա նշանակում է, որ տնտեսության կառավարման ապակենտրոնացված համակարգին անցնելն անխուսափելիորեն հանգեցրեց ֆինանսական նոր հարաբերությունների ձևավորմանը, որին համապատասխան վարչական տարածքների սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակումը ուղեկցվեց դրանց կատարումն ապահովող տեղական իշխանության մարմինների կողմից նախատեսվող ծախսերի և առկա ամբողջ ֆինանսական ռեսուրսների միջև անհրաժեշտ համամասնությունների ապահովմամբ և տեղական բյուջեների մշակման աշխատանքների բարելավմամբ:

Տեղական ինքնակառավարման ֆինանսական համակարգում կարևոր դեր ունեն տեղական բյուջեները, որտեղ արտացոլվում են ֆինանսական այն ռեսուրսները, որոնք անմիջականորեն ու ամբողջությամբ օգտագործվում են պետական իշխանության տեղական ինքնակառավարման մարմինների՝ մասնավորապես գյուղական և քաղաքային համայնքների կողմից՝ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում առաջադրված խնդիրների ֆինանսավորման նպատակով[12]:

Հանրապետության տեղական բյուջեների համակարգի միջոցով կատարվող ծախսերի միայն աննշան մասն է, որ ֆինանսավորվում է գյուղական և քաղաքային բյուջեներից: Վերջինս պայմանավորված է նրանով, որ գյուղական և քաղաքային վայրերում սոցիալ-մշակութային հիմնարկների կողմից միջոցառումների ծախսերը վերջին տարիներին հիմնականում կատարվում են պետական բյուջեից:

Գյուղական և քաղաքային համայնքերի բյուջեներում որոշակի եկամուտներ են հավաքագրվում նաև ձեռնարկությունների, տնտեսական կազմակերպությունների ու հիմնարկությունների, ինչպես նաև առանձին քաղաքացիների կամավոր փողային մուծումների, ինչպես նաև այդ

[12] Ծանոթություն. տեղական բյուջեները չեն ընդգրկում վարչական տարածքների ամբողջ ֆինանսական ռեսուրսները, մասնավորապես՝ իշխանության ու տեղական կառավարման մարմիններին ենթակա ձեռնարկությունների ու կազմակերպությունների տրամադրության տակ եղած ֆինանսական միջոցները:

վայրերում դրամա-իրային վիճակախաղերի տոմսերի և մյուս արժեթղթերի իրացման հաշվին:

Որպես կանոն, համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է համայնքի զարգացման եռամյա ծրագրին համապատասխան, տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:

Համայնքի բյուջեի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային համակարգի գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

Պետական կառավարման մարմնի կողմից բյուջետային ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները համայնքների բյուջեներով նախատեսվող ծախսերի հաշվարկման ժամանակ կրում են խորհրդատվական բնույթ:

Համայնքի բյուջեի նախագծի մշակման նախնական փուլում համայնքի ղեկավարը բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվարկման ու ներկայացման հանձնարարականներ ու հրահանգներ է տալիս բյուջետային հիմնարկություններին: Հաշվարկը ներկայացվում է մինչև ընթացիկ տարվա հուլիսի 1-ը՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված կարգին համապատասխան: Ստացված տեղեկատվական նյութերի հիման վրա կազմվում է համայնքի բյուջեի նախագիծը, որը հաստատում է համայնքի ավագանին: ՀՀ պետական բյուջեի հաստատումից հետո համայնքների հաստատված բյուջեներում թույլատրվում է կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

Համայնքների բյուջեների կառուցվածքը ընդգրկում է.

ա) համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե),

բ) համայնքի բյուջեի ֆոնդային մաս (ֆոնդային բյուջե):

Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն համայնքի ղեկավարն է, իսկ կատարման վերահսկողությունը իրականացնում են համայնքի ավագանին, Ազգային ժողովը և կառավարությունը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է ավագանու անդամների և աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների միջոցով:

Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման կարգը սահմանված է համայնքի ավագանու կանոնակարգով: Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանին ընդունում է համապատասխան որոշում:

գ) Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն և դրա տեղը բյուջետային համակարգում

Բնակչության եկամուտների ավելացման աղբյուրների համակարգում առանձնահատուկ նշանակություն ունեն սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամից ստացվող միջոցները: Հասարակության սոցիալական պաշտպանվածության ապահովման համար ստեղծվում է սոցիալական ապահովության համակարգ, որի հիմնական նպատակը հասարակության կենսունակ հատվածից սոցիալական ապահովության պարտադիր վճարների հավաքագրումը և դրանց նկատմամբ պահանջարկ ունեցողների միջև հիմնավորված տեղաբաշխումն է:

Սոցիալական ապահովագրության պարտադիր վճարների հավաքագրման հիմնական նպատակն է նշանակել տարիքային և հաշմանդամության կենսաթոշակների, ժամանակավոր անաշխատունակների և հղիության համար նպաստներ, ընտանեկան և հաշմանդամության նպաստներ, երեխաների ծննդյան միանվագ նպաստներ, մինչև 2 տարեկան երեխային խնամելու նպաստներ:

Նախատեսված է, զբաղվածության ծրագրերին համապատասխան, սահմանել գործազրկության նպաստ, գործազուրկների վերապատրաստման դիմաց վճարներ և այլն:

Օրենսդրության համաձայն՝ սոցիալական ապահովագրության պարտադիր վճարները կատարում են Հայաստանի տարածքում աշխատող բոլոր ՀՀ քաղաքացիները: Այդ նպատակով յուրաքանչյուր աշխատող աշխատանքի դիմաց վաստակած աշխատավարձից վճարում է 3%:

Բացի դրանից, օրենսդրության համաձայն, գործատուն իր ստացած միջոցներից կատարում է սոցիալական վճար՝ վճարվող աշխատավարձի 5-15%-ի չափով՝ կախված վճարվելիք աշխատավարձի չափից:

Ըստ աղյուսակ 17.7-ի տվյալների՝ վերջին տարիներին իրոք տեղի են ունեցել սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեի եկամուտների դրական տեղաշարժեր:

ՀՀ-ում սոցիալական ապահովագրության վճարների ավելի քան 73 տոկոսը ծախսվում է միայն կենսաթոշակային վճարումների, իսկ մնացածը այդ հիմնադրամի համակարգի ապարատի պահպանման և զանազան այլ ծախսերի կատարման համար:

դ) Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները

Վերջին տասնամյակում մակրոտնտեսագիտության կողմից հետազոտվող ֆինանսական հարաբերություններին առնչվող հիմնահարցերի համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի պետական բյուջեի պակասուրդի հիմնահարցը:

Բավական է նշել, որ մակրոտնտեսագիտության կողմից XX դարի երկրորդ կեսին և մասնավորապես 1960-1970թթ. ենթադրվում էր, որ բյուջեի պակասուրդը ժամանակավոր երևույթ է, որը հեշտությամբ հնարավոր է հաղթահարել: Սակայն, 1970թ.-ից հետո, մասնավորապես՝ 1980-ական

թվականներին, երբ աստիճանաբար մեծանում էր բյուջեի պակասուրդը և մեծ չափերի հասնում, ինչպես տնտեսագետները, այնպես էլ քաղաքագետները սկսեցին նոր մոտեցումներ ցուցաբերել այդ խնդրին:

Բյուջեի պակասուրդը նրա ծախսերի գերազանցումն է ստացված եկամուտներից: Մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ զգալի չափերի է հասնում բյուջեի պակասուրդը:

Այսպես, օրինակ՝ ԱՄՆ-ում, պակասուրդը կազմել է 281 մլրդ դոլար, Ռուսաստանի Դաշնության բյուջեի պակասուրդը 1999թ. կազմել է 101.4 մլրդ ռուբլի:

Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեի պակասուրդը 1999թ. կազմել է 51.7 մլրդ դրամ:

Բյուջեի պակասուրդի առաջացման հիմնական պատճառներն են.

- օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով՝ ստացվող եկամուտների նվազումը,
- չհիմնավորված հարկային քաղաքականության հետևանքով՝ հարկային եկամուտների ցածր մակարդակը,
- բյուջետային ծախսերի աննախադեպ ավելացումը,
- երկրի մասշտաբով ֆինանսատնտեսական, դրամավարկային ոչ ճիշտ քաղաքականությունը:

Բյուջեի պակասուրդի կրճատման ուղղություններն են.

- պետական բյուջեից տրվող դոտացիաների աստիճանական կրճատումը,
- պետական պարտքի ծախսերը կրճատելու նպատակով անցյալում թողարկված պետական փոխառությունների պայմանների փոփոխությունը, տոկոսի իջեցման կամ մարման ժամկետների փոփոխությունը,
- հարկային խթանող քաղաքականության ապահովումն ու հարկային բարեփոխումների իրականացումը:

ՀՀ-ում վերջին տարիներին պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և համախառն ներքին արդյունքի ցուցանիշները փոփոխվել են:

Աղյուսակ 17.7

ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի տեղաշարժը ՀՆԱ-ի նկատմամբ (մլրդ դրամ)

	1999	2000	2001	2002	2003
Համախառն ներքին արդյունք	991.6	1032.6	1154.0	1302.7	1491.6
Պետական բյուջեի եկամուտներ	190.9	172.1	193.6	228.3	292.0
Տոկոսով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	19.3	16.7	16.8	17.5	19.6
Պետական բյուջեի ծախսեր	242.6	222.9	244.4	263.9	312.7
Տոկոսով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	24.5	21.6	21.2	20.3	21.0
Պակասուրդ	51.7	50.8	50.8	35.6	20.7
Տոկոսով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	5.2	4.9	4.4	2.7	1.4

Ըստ աղյուսակի տվյալների՝ հանրապետությունում համախառն ներքին արդյունքի աճին զուգընթաց աճել են նաև պետական բյուջեի եկամուտները և ծախսերը:

Բավական է նշել, որ 1999թ. պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ նկատմամբ կազմել են 19.3%, սակայն 2000թ. և 2001թ. համապատասխանաբար կազմել են 16.7 և 16.8 տոկոս: Վերջին տարիներին եկամուտներն ավելացել են և 2003թ. կազմել 19.6 տոկոս: Առավել նկատելի են պետական բյուջեի ծախսերի դրական փոփոխությունները, որոնք հանգեցրել են բյուջեի պակասուրդի զգալի տեղաշարժերի: Այսպես, եթե 1999թ. պետական բյուջեի պակասուրդը 51.7 մլրդ դրամ էր, ապա վերջին տարիներին նվազել է և 2003թ. կազմել է 20.7 մլրդ դրամ: Նման իրավիճակը հանգեցրել է նաև ՀՆԱ նկատմամբ պակասուրդի նվազմանը, այսինքն՝ 1999թ. 5.2%-ից 2003թ. դարձել է 1.4%:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման նոր կարգի համաձայն՝ փոփոխվել է նաև ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը (տե՛ս աղյուսակ 17.8):

Աղյուսակ 17.8

ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները 1999-2003թթ.

	1999	2000	2001	2002	2003
Պակասուրդ (մլրդ դրամ)	51.7	50.8	50.8	35.6	20.7
Տոկոսներով	100	100	100	100	100
Ֆինանսավորման արտաքին աղբյուրները (մլրդ դրամ)	23.5	22.5	20.7	15.4	8.6
Տոկոսով ընդհանուրի նկատմամբ	45.6	44.3	40.7	43.3	42.0
Ֆինանսավորման ներքին աղբյուրները (մլրդ դրամ)	28.2	28.3	30.1	20.2	12.1
Տոկոսով ընդհանուրի նկատմամբ	54.5	55.7	59.3	56.7	58.0

Պետական բյուջեի պակասուրդի փոփոխությունները կարելի է գնահատել դրական, քանի որ ֆինանսավորման արտաքին աղբյուրները ունեցել են նվազման, իսկ ներքին աղբյուրները՝ աճի միտում:

Վերջինիս կարևորությունը արտահայտվում է նրանում, որ պետական բյուջեի պակասուրդը փոխհատուցելու համար պետությունը ստիպված վերցնում է մեծ չափերի հասնող փոխառություններ, համաշխարհային կազմակերպություններից՝ վարկային ռեսուրսներ, որոնց քանակական ավելացումը հանգեցնում է երկրի պարտքի ավելացմանը: Դա նշանակում է, որ ներքին աղբյուրների հաշվին բյուջեի պակասուրդի փոխհատուցման հնարավորությունների մեծացումը հանգեցնում է երկրի արտաքին պարտքի կրճատմանը:

Պակասուրդի ֆինանսավորման ուղիներից են նաև փոխառությունները մարելու նպատակով պետության կողմից թողարկված տոկոսաբեր պարտատոմսերը, զանազան արժեթղթերի տեղաբաշխումից ստացվող եկամուտները:

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման հիմնական ներքին աղբյուրներ են՝ պետական արժեթղթերը, որոնց հաշվին ֆինանսավորվել է պակասուրդի 11.1%-ը:

Հարաբերականորեն կայուն տնտեսության պայմաններում բյուջետային պակասուրդը չի դիտարկվում որպես բացասական ֆինանսական ցուցանիշ: Հայտնի է, որ ժամանակին Քեյնսը ընդգծել է, որ տնտեսական աճի ապահովման, ինչպես նաև զբաղվածության մակարդակի բարձրացման նպատակով պետք է վարել պակասուրդի քաղաքականություն: Նման մոտեցումը, իհարկե, պարունակում է որոշակի ռացիոնալ հատիկ:

1990-ական թվականներին արևմտաեվրոպական մի շարք երկրներում տնտեսական խթանումը հանգեցրել էր բյուջեի պակասուրդի կրճատման, իսկ ԱՄՆ-ում գործնականում հաղթահարվել էր: 1999թ. արդեն եկամուտները գերազանցում էին ծախսերը 10 մլրդ դոլարով: Դա մասամբ պայմանավորված էր նրանով, որ դեռևս 1985թ. ԱՄՆ-ում ընդունվեց «Գրեմմ-Ռուդման-Հոլինգզի» օրենքը, որով հսկողություն էր սահմանվում պակասուրդի մակարդակի վրա: Դրա արդյունավետ գործունեության հիման վրա 1990թ. մշակվեց ակտ՝ առանց պակասուրդի բյուջետային քաղաքականություն վարելու մասին:

Այսպիսով, բյուջեի պակասուրդի կրճատման նպատակով ֆինանսական հարաբերությունների կարգավորման հիմնական խնդիրներն են երկրի մասշտաբով ինֆլյացիոն երևույթների հաղթահարումը և արտաքին փոխառությունների աստիճանական կրճատումը:

17.6. ՀՀ պետական պարտքը և դրա կարգավորման մեխանիզմը

ՀՀ պետական պարտքը կառավարում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պետական պարտքի կառավարման վարչությունը, որի իրավասությունների շրջանակներում է պետական պարտքի ռազմավարության մշակումն ու իրականացումը, պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման արտաքին և ներքին պարտքի ցուցանիշների ծրագրավորումը, կանխատեսումը, ձևավորված պետական պարտքի հաշվարկումը, գնահատումն ու վերլուծությունը:

Հանրապետության պետական պարտքը ներառում է ներքին պետական պարտքը և արտաքին պետական պարտքը: Դրանցից յուրաքանչյուրի կազմը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով (տե՛ս գծապատկեր 17.1):

Ներքին պետական պարտքը ձևավորվում է հիմնականում պետական պարտատոմսերի թողարկման միջոցով: Արտաքին պետական պարտքը հիմնականում ձևավորվում է արտասահմանյան կազմակերպություններից ստացվող երկկողմ և բազմակողմ վարկերի հաշվին:

ՀՀ պետական պարտքի ձևավորման հիմնական նպատակներն են՝ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը, պահուստների

համալրումը, կառավարության կողմից ներդրումային քաղաքականությամբ նախատեսված գերակա ոլորտների ծրագրերի ֆինանսավորումը, վարկային պարտավորությունների իրագործումը, ինչպես նաև նախկինում ստանձնած պետական պարտքի վերաձևակերպումը:

Գծապատկեր 17.1



→

Շուկայական տնտեսության պայմաններում, արտաքին պարտքի կառավարման նոր ռազմավարության համաձայն՝ պետական պարտքի կառավարման կազմակերպման հիմնական նպատակն է օպտիմալացնել պետական պարտքը ըստ կառուցվածքի:

Կառավարել և կարգավորել ներքին պետական պարտքը՝ նշանակում է պլանավորել կարճաժամկետ, միջինժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր, հաշվառել, վերլուծել և վերահսկել պետական պարտատոմսերով կատարվող գործարքներն ու գործառնությունները:

Պետական պարտքի կառավարման նպատակային խնդիրների իրականացման համար պահանջվում է առաջնորդվել այնպիսի կարևոր սկզբունքներով, ինչպիսիք են՝ շուկայի թափանցիկության, տեղեկատվության ազատ փոխանակման ապահովումը, թողարկողի և նրա ֆինանսական գործակալի վարքագծի կանխատեսելիությունը:

Պետական պարտքի ձևավորման հիմնական աղբյուրներն են.

ա) Ներքին պետական պարտքի գծով.

- ՀՀ ազգային արժույթով պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխումից ստացված հասույթը,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված փոխատվությունը,
- ՀՀ առևտրային բանկերից ստացվող փոխատվությունը կառավարությանը՝ վարկերի տեսքով,
- ՀՀ գործակալ ֆիզիկական և իրավաբանական անձանցից փոխատվությունը՝ ՀՀ կառավարությանը:

բ) Արտաքին պետական պարտքի գծով.

- օտարերկրյա կազմակերպություններից և միջազգային կազմակերպություններից ստացված բազմակողմ և երկկողմ փոխառությունները՝ վարկերի ձևով,
- ֆիզիկական և իրավաբանական անձանցից փոխառությունները (վարկերը),
- արտաքին երաշխիքները,
- այլ պարտքեր:

Աղյուսակ 17.9

ՀՀ պետական պարտքի փոփոխությունները 2001-2003թթ.
(մլրդ դրամ)

	2001	2002	2003
Պետական պարտք այդ թվում՝	545.2	640.6	664.4
Ներքին պարտք ՀՆԱ-ի նկատմամբ /տոկոս/	36.4 3.1	40.8 3	43.1 2.7
Արտաքին պարտք ՀՆԱ-ի նկատմամբ /տոկոս/	508.8 42.7	599.8 43.3	621.3 39.8

Ինչպես նկատում ենք, հանրապետության պետական պարտքի կառուցվածքում դեռևս փոքր բաժին է կազմում ներքին պարտքը, ուստի

պահանջվում է աստիճանաբար ընդլայնել արժեթղթերի շուկան, բարձրացնել պետական պարտատոմսերի իրացվելիության աստիճանը և դրան համապատասխան՝ կրճատել երկկողմ և բազմակողմ վարկերի բաժինը:

17.7. ՀՀ մաքսային քաղաքականությունը և դրա պետական կարգավորման հիմնախնդիրները

Արտաքին տնտեսական գործունեության մաքսային ռազմավարության կարգավորման գործընթացը, ներառյալ արտահանման և ներմուծման հետ կապված բոլոր գործարքներն ու գործառնությունները, համարվում են տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

Մաքսային քաղաքականության ռազմավարական կարգավորման հիմնախնդիրները կախվածության մեջ են ապրանքների խմբերի կառուցվածքից, ապրանքային հոսքերի աշխարհագրական ուղղություններից, ինչպես նաև ազգային էկոնոմիկայի իրավիճակից, օգտագործվող սակագնային և ոչ սակագնային սահմանափակումներից, դրանց հաշվարկման մեխանիզմներից ու մեթոդներից:

Մաքսային վճարները ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման համար մաքսային մարմինների կողմից գանձվող պարտադիր վճարներն են՝ մաքսատուրքի, հարկերի (անուղղակի) և տուրքերի ձևով:

Հայաստանի Հանրապետությունում մաքսային օրենսդրությունը ներառում է Մաքսային օրենսգիրքը, «Մաքսատուրքերի մասին», «Մաքսավճարի մասին» ՀՀ օրենքները և բազմաթիվ այլ իրավական նորմատիվային ակտեր: ՀՀ մաքսային օրենսգիրքը նպատակ ունի ապահովելու երկրի ինքնիշխանությունը, տնտեսական անվտանգությունը, ներքին շուկայի պաշտպանվածությունը, խթանելու հանրապետության արտաքին տնտեսական կապերի զարգացումը, սահմանելու մաքսային և այլ պետական մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները մաքսային գործի բնագավառում:

Մաքսային օրենսդրության դրույթների ու իրավական ակտերի հիման վրա մաքսային հիմնավոր լծակների սահմանման շնորհիվ բարելավվել են երկրի մաքսային սահմանով ապրանքների արտահանման և ներմուծման աշխատանքները՝ կապված ապրանքների առուվաճառքի գործարքների և գործառնությունների իրականացման, արտահանման և ներմուծման հարաբերակցության կարգավորման հետ:

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2003թ. ընթացիկ գներով կազմել է 1145 մլրդ դրամ, որից արտահանումը՝ 409,1 մլրդ

դրամ, իսկ ներմուծումը 735,8 մլրդ դրամ: Առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 326,7 մլրդ դրամ[1]:

Անշուշտ, արտահանման և ներմուծման նման հարաբերակցությունը իր ներգործությունն է ունեցել մաքսատուրքերի փոփոխության վրա:

Չնայած արտաքին առևտրի զարգացման ուղղությամբ ձեռքբերված դրական տեղաշարժերին, մաքսային օրենսդրական փաթեթների պարբերաբար փոփոխությունները, մաքսային գործընթացի նկատմամբ վերահսկողության վարչարարության բնագավառում տեղ գտած բացթողումները, վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի դեռևս բարձր մակարդակը վկայում են այն մասին, որ մաքսային օրենսդրությամբ սահմանված լծակները չեն ապահովում արտաքին առևտրի՝ պատշաճ մակարդակով պետական կարգավորումը: Այդ պատճառով այդ լծակների փոփոխությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է, որը մաքսային գործունեության ոլորտում տեղ գտած թերությունների վերացման, մաքսային հսկողության դերի բարձրացման ու մաքսային վարչարարության կարգավորման նախադրյալներ կստեղծի:

Մաքսային հսկողությունը ՀՀ մաքսային օրենսդրությամբ և առևտրային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգ է, որը կիրառվում է մաքսային հսկողության գոտում՝ ապրանքների զննման, համապատասխան փաստաթղթերի ստուգման ու դրանց ձևակերպման ժամանակ:

Մաքսային համակարգի կարգավորման ռազմավարության տնտեսական լծակները կարող են կիրառվել տարբեր ձևերով՝ նախ ներմուծվող ապրանքների գների վրա ներգործելու, ինչպես նաև ապրանքների հոսքերի քանակական և արժեքային ծավալների սահմանափակումների միջոցով:

Մաքսային համակարգի գործունեությամբ սահմանված տնտեսական լծակների առանձնահատկությունը գնահատելու, ինչպես նաև բնակչության տարբեր խավերի գործարարների ու պետության շահերի միջև ներդաշնակությունը ապահովելու նպատակով այդ հիմնական լծակները դասակարգվում են հետևյալ խմբերի.

- Սակագնային (տարիֆային) սահմանափակումները բնութագրող լծակներ,
- Ոչ սակագնային սահմանափակումները բնութագրող լծակներ:

ՀՀ մաքսային օրենսգրքի և ընդունված զանազան նորմատիվային ակտերի համաձայն՝ ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ժամանակ օգտագործվող սակագնային սահմանափակումների գծով որպես հիմնական լծակներ կիրառվում են մաքսային սակագինը, մաքսային տուրքը, մաքսային վճարը, ինչպես նաև, որպես անուղղակի հարկեր, ակցիզային հարկը և ավելացված արժեքի հարկը:

[1] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-դեկտեմբերին, Երևան, 2004թ., էջ 146:

Մաքսային սակագինը (տարիֆը) մաքսային օրենսդրությամբ համակարգված ապրանքների ցանկում յուրաքանչյուր խմբի համար սահմանված սակագինն է և հիմք է ծառայում ապրանքահոսքերի՝ պետական սահմանը հատելու պահին մաքսային տուրքի գումարը հաշվարկելու համար:

Մաքսային սակագինը (տարիֆը) կարգավորում է ապրանքների առանձին ապրանքախմբերի արտաքին հոսքերը և պաշտպանում է հայրենական արտադրողներին մրցակցային միջավայրում: Այն միաժամանակ հիմք է ծառայում մաքսատուրքի հաշվարկման համար:

Մաքսային օրենսդրության համաձայն՝ ներմուծվող ապրանքների որոշակի խմբերի համար սահմանված է զրոյական դրույքաչափ, մյուսների համար՝ 10 տոկոս դրույքաչափ, իսկ արտահանվող ապրանքների համար՝ միայն զրոյական դրույքաչափ:

Իրականում մաքսային սակագինը (տարիֆը), որպես առևտրային սահմանափակումների հնագույն տեսակ, օրենսդրությամբ սահմանված այն դրույքաչափն է, որը նպաստում է մաքսային տուրքի հաշվարկմանը, ինչպես նաև հայրենական ապրանքները մրցակցությունից պաշտպանելուն: Դա նշանակում է, որ սակագինը միաժամանակ կարելի է դիտել որպես հովանավորչական դրույքաչափ, որը նպատակ ունի պաշտպանելու հայրենական կամ տեղական արտադրողներին օտարերկրյա մրցակցությունից:

Մաքսային տուրքի կիրառման նպատակն է՝ սահմանափակել առանձին ապրանքախմբերի ներմուծումը, խթանել հայրենական արտադրողների գործունեությունը, պետական բյուջեում ավելացնել մաքսատուրքի գծով եկամուտները:

Մաքսային տուրքերի նշանակությանը համապատասխան՝ դրանք դասակարգվում են ըստ գործառնական բնույթի, հաշվարկման մեթոդի, ըստ նպատակայնության և մեծության հատկանիշների (տե՛ս գծապատկեր 17.2)

Մաքսային տուրքերի հաշվարկման գործընթացը իրականացվում է մաքսային մարմինների կողմից՝ հայտարարագրերի ներկայացման օրվա դրությամբ գործող դրույքաչափերի հիման վրա, իսկ վճարումը կատարվում է մաքսային սահմանով ապրանքի փոխադրման օրվանից՝ տասնօրյա ժամկետում:

Մաքսատուրքի գումարը որոշվում է ներմուծման ընդհանուր ծավալի և օրենսդրությամբ սահմանված դրույքաչափի արտադրյալով:


Մաքսային տուրքի տեսակները
Ըստ գործառ-նության
Ըստ հաշ-վարկման մեթոդի
Ըստ նպա-տակայ-նության
Ըստ մեծու-թյան
1. արտահանման
2. ներմուծման
3. սեզոնային
4. տրանզիտային
5. խորհրդանշական
6. արտոնյալ
1. արժեքային
2. հատուկ տեսակի
3. հաշվառման
4. ընդլայնված
1. հակադրող
2. խթանող
3. փոխհատուցման
4. հակադեմպինգային
1. առանձնաբնույթ
2. արտոնյալ
3. կարգավորիչ

Ամփոփում

1. Ֆինանսների էությունը, դրա դերն ու նշանակությունը որոշվում են տնտեսական հարաբերությունների բնույթով և դրան համապատասխան՝ պետության գործառնությունների իրականացման անհրաժեշտությամբ:
2. Ֆինանսական հարաբերություններն արտահայտում են դրամական միջոցների կենտրոնացված ֆոնդերի ձևավորման ու դրանց օգտագործման գործընթացների հարաբերությունները և արտացոլում են համախառն ազգային արդյունքի, համախառն ներքին արդյունքի և ազգային եկամտի բաշխման ու վերաբաշխման հարաբերությունները:
3. Ֆինանսական հարաբերությունները ներառում են դրամական ֆոնդերի հետ կապված այն գործառույթները, որոնց ձևավորմանը մասնակցում է պետությունը՝ իր որոշումներով, ընդունած օրենսդրական և նորմատիվային ակտերով:
4. Հարկերի ձևով ստացված ֆինանսական ռեսուրսները մի կողմից նախադրյալներ են ստեղծում պետության գործառույթների իրականացման համար, իսկ մյուս կողմից՝ նպաստում են սոցիալական ոլորտի վերարտադրության գործընթացի իրականացմանը:
5. Հարկերի հիմնական տեսակների միջոցով պարզում ենք դրանց կառուցվածքը, որը հիմք է հանդիսանում հարկային քաղաքականության կատարելագործման միջոցառումների մշակման և դրանց կառուցվածքի բարելավման համար:
6. Հարկային քաղաքականությունը պետք է ապահովի հարկային եկամուտների աճ, խթանի հարկային բազայի ընդլայնումը և նպաստի ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը և տնօրինվող եկամուտների աճին:
7. Հարկային խթանող քաղաքականության հիմնական խնդիրն է՝ ընտրել հարկային դրույքաչափի այն օպտիմալ սահմանը, որն ընդլայնելով հարկային բազան՝ նախադրյալներ է ստեղծում հարկային եկամուտների ավելացման համար:
8. Բյուջետային համակարգը ընդգրկում է պետական բյուջեն, համայնքային (տեղական) բյուջեները և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն:
9. Բյուջեի պակասուրդը նրա ծախսերի և եկամուտների տարբերությունն է: Հարաբերականորեն կայուն տնտեսության պայմաններում բյուջետային պակասուրդը չպետք է դիտարկել որպես բացասական ֆինանսական ցուցանիշ:
10. Պետական պարտքը ներառում է հանրապետության ներքին պետական պարտքը և արտաքին պետական պարտքը:
11. Ներքին պետական պարտքը ձևավորվում է պետական պարտատոմսերի թողարկման միջոցով, իսկ արտաքին պետական պարտքը՝ հիմնականում արտասահմանյան կազմակերպություններից ստացվող երկկողմ և բազմակողմ վարկերի հաշվին:
12. Մաքսային հսկողությունը ՀՀ մաքսային օրենսդրությամբ և առևտրային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգ է:

Թեստեր և խնդիրներ

1. *Ֆինանսների պետական կարգավորման խնդիրների իրականացման գործում որոշիչ դեր են կատարում ֆինանսներին բնորոշ գործառույթների հետևողական իրականացումը, մասնավորապես.*
   ա. բաշխման և հսկողության գործառույթները,
   բ. վերաբաշխման և հսկողության գործառույթները,
   գ. հսկողության գործառույթը,
   դ. բաշխման, վերաբաշխման և հսկողության գործառույթները:

2. *Հարկային հարաբերությունները ձևավորվում են.*
   ա. հասարակության և աշխատանքային ռեսուրսների առկայության հիման վրա,
   բ. հասարակության և բնական ռեսուրսների առկայության հիման վրա,
   գ. ֆինանսական ռեսուրսների առկայության հիման վրա,
   դ. ոչ թե աշխատանքային, այլ բնական ռեսուրսների առկայության հիման վրա:

3. *ՀՀ-ում գործող հարկային օրենսդրության համաձայն՝ հարկերը վճարվում են .*
   ա. ՀՀ պետական բյուջե,
   բ. համայնքային բյուջե,
   գ. հանրապետության համախմբված բյուջե,
   դ. ՀՀ պետական և համայնքային բյուջե:

4. *Հարկային դրույքաչափերի և հարկային եկամուտների փոխկապվածության հետազոտությունը Լաֆֆերի կորի միջոցով ցույց է տալիս, որ.*
   ա. հարկման եկամտի մակարդակը ուղիղ համեմատական է հարկման դրույքաչափին,
   բ. բարձր հարկային դրույքաչափերը հարկային եկամուտը չեն կրճատում,
   գ. հարկման եկամտի մակարդակը հակադարձ համեմատական է հարկային դրույքաչափին,
   դ. բարձր հարկային դրույքաչափերը նպաստում են գործունեության ծավալմանը:

5. *Պետական բյուջեն իր եկամուտների կազմով ու կառուցվածքով.*
   ա. համարվում է ֆինանսական հարաբերությունների առաջատար օղակը,
   բ. սերտորեն կապված է ֆինանսական հարաբերությունների համակարգի բոլոր օղակների հետ,
   գ. կոորդինացնում ու կարգավորում է ֆինանսավարկային համակարգի բոլոր օղակների ռեսուրսների ձևավորման և օգտագործման հիմնական համամասնությունները,
   դ. վերը թվարկվածները միասին:

6. *Տնտեսությունը բնութագրվում է հետևյալ տվյալներով. C=20+0.8(Y-T+F) (սպառում), I=60 (ներդրումներ), T=40 (հարկեր), F=10 (տրանսֆերտներ), G=30 (պետական ծախսեր), MPC=0.8:*

ա. Հաշվել հավասարակշռված եկամտի մակարդակը:
բ. Եթե պետական ծախսերը ավելացվեն մինչև 40, որքան կկազմի հավասարակշռված եկամտի մակարդակը և գրաֆիկորեն ինչ տեսք կունենա: Ինչի՞ է հավասար պետական ծախսերի բազմարկիչը:

7. Ենթադրենք՝ պետական գնումները հավասար են 500-ի, հարկերի ֆունկցիան տրված է T=0.4Y հավասարությամբ, տրանսֆերտների ֆունկցիան՝ F=0.2Y, գների մակարդակը՝ P=1, պետական պարտքը՝ D=1000, տոկոսադրույքը՝ R=0.1: Արտադրության իրական ծավալը հավասար է 2000, իսկ պոտենցիալը կազմում է 2500.

ա. ինչպիսի՞ն է բյուջեն ըստ արտադրության իրական ծավալի՝ դրական, թե՝ բացասական,
բ. ինչպիսի՞ն է բյուջեն ըստ արտադրության պոտենցիալ ծավալի:

8. 2003թ. պետական գնումները կազմել են 700 միավոր, տրանսֆերտները՝ 1500 միավոր, իսկ պետական պարտքի սպասարկման ծախսերը՝ 250 միավոր: 2004թ. տվյալները համապատասխանաբար կազմել են 800, 2000, 300 միավոր: 2004թ., 2003թ. համեմատությամբ, որքանով են փոփոխվել պետական ծախսերը:

9. Պետական պարտքի սպասարկման ծախսը տրված է E=DR հավասարմամբ, որտեղ D-ն պետական պարտքն է, R-ը՝ տոկոսադրույքը: D=4000, պետական գնումները՝ 600, տրանսֆերտները՝ 400, պետական ծախսերը՝ 1240 միավոր: Որքան է կազմում տոկոսադրույքը:

10.2004 թ. արտադրվել է 5000 դրամի արտադրանք, հարկերը կազմել են արդյունքի 28 տոկոսը, տրանսֆերտները տրված են T= 0.3Y ֆունկցիայով, պետական գնումները՝ 300 դրամ, պետական պարտքի սպասարկման ծախսերը՝ 200 դրամ: Որքանո՞վ պետք է փոփոխվեն հարկերը, որպեսզի բյուջեն հավասարակշռվի:

Ֆինանսներ
Պակասուրդ
Համակցված բյուջե
Հարկային դրույքաչափ
Պետական բյուջե
Տեղական բյուջե
Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջե
Եկամուտների կառուցվածք
Ծախսերի կառուցվածք
Պետական պարտք
Արտաքին պարտք
Ներքին պարտք
Մաքսատուրք
Մաքսային սակագին
Մաքսային արժեք

Հարցեր կրկնության համար

1. Ո՞րն է ֆինանսների էությունը:
2. Ի՞նչ են արտահայտում ֆինանսական հարաբերությունները:
3. Որո՞նք են ֆինանսների պետական կարգավորման խնդիրները:
4. Որո՞նք են ֆինանսներին բնորոշ գործառույթները:
5. Որո՞նք են ֆինանսների համակարգի օղակները:
6. Ի՞նչ ենք հասկանում հարկ ասելով (կամ ո՞րն է հարկ կատեգորիայի տնտեսական բովանդակությունը):
7. Որո՞նք են հարկային հարաբերություններին բնորոշ առանձնա-հատկությունները:
8. Ի՞նչ խմբերի են դասակարգվում հարկերը:
9. Ի՞նչ առանձնահատկություն ունեն ուղղակի և անուղղակի հարկերը:
10. Ո՞րն է խթանող հարկային քաղաքականության հորիզոնական և ուղղահայաց սկզբունքների էությունը:
11. Ինչու՞ է անհրաժեշտ հարկային դրույքաչափերի օպտիմալ սահմանը:
12. Ո՞րն է պետական բյուջեի դերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:
13. Ի՞նչ հարաբերություններ է արտահայտում պետական բյուջեն:
14. Ո՞րն է պետական բյուջեի դերը համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման գործում:
15. Ի՞նչ ենք հասկանում պետական բյուջեի եկամուտների կառուցվածք ասելով:
16. Ի՞նչ է ցույց տալիս պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը:
17. Որո՞նք են պետական բյուջեի պակասուրդի առաջացման պատճառները:
18. Ի՞նչ խմբերի է դասակարգվում պետական պարտքը՝ ըստ ձևավորման հատկանիշի:
19. Որո՞նք են պետական պարտքի կարգավորման մեխանիզմները:
20. Որո՞նք են ներքին պետական պարտքի և արտաքին պետական պարտքի ձևավորման աղբյուրները:
21. Ի՞նչ փոփոխություններ են կատարվել ՀՀ պետական պարտքի գծով վերջին տարիներին:
22. Ի՞նչ առանձնահատկություններ ունեն մաքսային սակագները՝ ըստ ապրանքախմբերի:

ԳԼՈՒԽ 18

ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Գնագոյացման պետական կարգավորման հիմնախնդիրները:
- Գնագոյացման հիմնական տեսությունները:
- Գների գործառույթները:
- Գնագոյացման վրա ազդող գործոնները և դրանց դասակարգումը:
- Գնագոյացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները:

18.1. Գնագոյացման պետական կարգավորման հիմնախնդիրները

Կարգավորվող շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկության ազատ գնային գործընթացի կազմակերպումը պետության կողմից սահմանափակվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- պետության կողմից հաստատագրված գների սահմանման,
- գների կարգավորման նպատակով պետության կողմից ձեռնարկությունների համար մշակված գնագոյացման պայմանների, գների վերադիրների, շահութաբերության մակարդակի, պետական ձեռնարկությունների արտադրանքի գների սահմանման,
- գնային խտրականության, դեմպինգի քաղաքականության, ոչ որակյալ ապրանքների գովազդների կանխման միջոցով:

Գնագոյացման մակրոտնտեսական կարգավորման խնդիրները կարող են լուծվել ուղղակի և անուղղակի մեթոդներով:

Տնտեսավարող սուբյեկտների գործունեության վրա գների պետական կարգավորման *ուղղակի* մեթոդի էությունն արտահայտվում է նրանում, որ մշակվում են գների մակարդակի որոշման մեթոդական ցուցումներ, հրահանգներ, սահմանվում է գների հաշվարկման կարգը, կազմվում են համապատասխան օրենսդրական, իրավական ու նորմատիվային ակտեր, որոնք հիմք են ծառայում գների մակարդակի որոշման համար: Կարգավորվող շուկայական տնտեսության պայմաններում ուղղակի մեթոդով գների պետական կարգավորման գործընթացն իրականացվում է

նաև անմիջականորեն պետության կողմից հաստատագրված գների սահմանման միջոցով:

Հայաստանի Հանրապետությունում հաստատագրված գներ սահմանվում են էլեկտրաէներգիայի, խմելու և ոռոգման ջրի, ջեռուցման, էլեկտրատրանսպորտի և զանազան այլ ծառայությունների համար: Մի շարք երկրներում պետության կողմից հաստատագրված գների տեսակարար կշիռը տատանվում է 10-15%-ի սահմաններում. Հայաստանի Հանրապետությունում այն կազմում է 0.01%: Ուղղակի մեթոդով գների պետական կարգավորումը և գների նկատմամբ հսկողությունը կարող են իրականացվել նաև պայմանագրային գների կիրառման միջոցով:

Գնագոյացման մակրոտնտեսական կարգավորման *անուղղակի* մեթոդի էությունն այն է, որ պետությունը արտադրողների նկատմամբ իրականացնում է ֆինանսավարկային, հարկաբյուջետային, մաքսային քաղաքականություն՝ փոխադրումների սակագների, այլ տնտեսական լծակների միջոցով: Գների պետական կարգավորման անուղղակի մեթոդի պահանջներով պայմանավորված տնտեսական լծակների փոփոխությունները հատկապես կարևորվում են այն երկրների համար, որոնցում դեռևս վերջնականապես չեն ձևավորվել շուկայական կառույցները, իսկ տնտեսությունը զանազան օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով շարունակում է գործել ճգնաժամային պայմաններում:

Գների պետական կարգավորման հիմնախնդիրներն են.

Նախ, շուկայական տնտեսության անցումային փուլի պայմաններին համապատասխան՝ մշակել գնագոյացման պետական կարգավորման կանոնակարգ, օրենսդրական նորմատիվային անհրաժեշտ ակտեր, գնագոյացման կարգավորման մեխանիզմներ, գների ձևավորման մեթոդներ ու սկզբունքներ, որոնք կարևոր են տեխնիկատնտեսական հաշվարկների իրականացման և գների մակարդակի որոշման համար:

Երկրորդ, կիրառել այնպիսի տնտեսական լծակներ, մասնավորապես, հարկաբյուջետային, ֆինանսավարկային, մաքսային, աշխատանքային և այլն, որոնք կարգավորված գների միջոցով կխթանեն տնտեսավարման շուկայական մեխանիզմի ձևավորման գործընթացը, կնպաստեն տնտեսավարող սուբյեկտների ու պետության շահերի զուգակցմանը, կհանգեցնեն տնտեսության կայունացմանը և վերարտադրության պարբերաշրջանային տատանումների համահարթմանը:

Երրորդ, կայունացնել գները և բացառել սղաճը ավելացնող երևույթները՝ կապված ապրանքների պակասուրդի առկայության, ռեսուրսային շուկայում գների բարձրացման հետ, նպաստել մրցակցության շրջանակների ընդլայնմանը, գիտատեխնիկական առաջադիմության ոլորտում նորամուծությունների ներդրմանը և այլն:

Չորրորդ, ապահովել շուկայի կողմից կարգավորվող և պետության կողմից հաստատագրված գների միջև այնպիսի հարաբերակցություն, որը կնպաստի սեփականության մասնավոր, պետական, համայնքային այլ ձևերի գործունեության արդյունավետության բարձրացմանը, մրցակցության շրջանակների ընդլայնմանը և ազատ ձեռնարկատիրության զարգացմանը:

Հինգերորդ, կասեցնել արտադրության անկումային երևույթները, խթանել արտադրողների արտադրական գործունեությունը, ապահովել պետական բյուջեի եկամուտների աճ ոչ թե գների բարձրացման, այլ արտադրության խթանման ու տեխնիկական վերակառուցման ճանապարհով:

Այսպիսով, գների պետական կարգավորման գործընթացի իրականացման անհրաժեշտությունն ու կարևորությունը պայմանավորված են ինչպես խառը տնտեսության համակարգի հիմնական օրինաչափություններով, այնպես էլ շուկայի ինքնակարգավորման և պետական կարգավորման միջև հարաբերակցության ճշգրտմամբ, շուկայի կառուցվածքի ուսումնասիրությամբ, արտադրական և անձնական սպառման պահանջների հարաբերակցության կարգավորմամբ:

18.2. Գնագոյացման տեսությունների առանձնահատկությունները

Ապրանքափողային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, շուկայական արտադրական հարաբերությունների ձևավորման ու զարգացման պայմաններում, տնտեսագիտական տեսություններն էլ ավելի հիմնավոր դարձան, և այդ բնագավառում կատարվեցին շրջադարձային փոփոխություններ: Հետազոտությունները շրջանառության ոլորտից աստիճանաբար փոխադրվեցին արտադրության ոլորտ: Դա նոր նախադրյալներ ստեղծեց տնտեսագիտական տեսությունների զարգացման համար:

Արժեքի աշխատանքային տեսությունը: Հասարակական կյանքի զարգացման ընթացքում արժեքի ուսումնասիրությանը նվիրված բազմաթիվ տնտեսագիտական տեսություններ անընդհատ փոխվել ու կատարելագործվել են՝ արտացոլելով տվյալ փուլին բնորոշ առանձնահատկությունները: Այդ տեսությունների համակարգում հատկապես մեծ է արժեքի աշխատանքային տեսության նշանակությունը, որն առանձնապես կարևորվեց ապրանքային արտադրության զարգացման պայմաններում:

Արժեքի աշխատանքային տեսության գաղափարը առաջ են քաշել դասական քաղաքատնտեսության հիմնադիրներ Վ.Պետին (1623-1687), Ա.Սմիթը (1723-1790), Դ.Ռիկարդոն (1772-1823), Ժ.Սեյը (1767-1832), Կ.Մարքսը (1818-1883) և շատ ուրիշներ:

Վ.Պետին առաջինն էր, որ փոխանակության գործընթացի հիմնական օրինաչափությունների լուսաբանման հիման վրա ձևավորեց արժեքի աշխատանքային տեսությունը: Այդ կարևոր գործընթացի հետազոտության շնորհիվ տարբերակեց շուկայական ու բնական գինը և հիմնավորեց, որ դրանք կարող են փոխվել պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխության հետևանքով:

Արժեքի աշխատանքային տեսության հիմնավորման գործընթացում մեծ ծառայություն է մատուցել Ա. Սմիթը, որը մարդկային հասարակությունը դիտում է որպես փոխանակողների ամբողջական միություն, որոնց

բնական հատկանիշը փոխանակության և առևտրի նկատմամբ հակվածությունն է:

Նա գիտականորեն հիմնավորեց, որ թե՛ արտադրության և թե՛ փոխանակության գործընթացում յուրաքանչյուր անհատի ձգտումը ստացվող արդյունքի նկատմամբ համընկնում է հասարակության շահերի հետ, որը տնտեսագիտության մեջ հայտնի է Սմիթի «անտեսանելի ձեռք» հասկացությամբ:

Ա.Սմիթի գլխավոր ծառայությունն այն է, որ, զարգացնելով արժեքի աշխատանքային տեսությունը, հիմնավորեց փոխանակության գործընթացում համարժեքային փոխանակության անխուսափելիությունը և դա դիտեց որպես շուկայական մեխանիզմի հետագա զարգացման կարևոր շարժիչ ուժ:

Դ.Ռիկարդոն իր հետազոտություններում տարբերակում է համեմատական և իրական արժեքները: Նա ընդգծում է, որ եթե իրական արժեքը ձևավորվում է ապրանքի արտադրության վրա ծախսված աշխատանքով, ապա համեմատական արժեքը ներկայացնում է փոխանակային արժեքը, որն իր վրա է կրում բազմաթիվ գործոնների՝ ամենից առաջ պահանջարկի և առաջարկի հարաբերակցության ներգործությունը:

Դ. Ռիկարդոն առաջինն էր, որ հիմնավորեց գնի և ռենտայի միջև կապը և ռենտան դիտեց որպես գյուղատնտեսության մեջ ներդրվող կապիտալից ստացվող լրացուցիչ շահույթ, որը ստեղծվում է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների աշխատանքով:

Վերոհիշյալ տնտեսագետների ծառայությունները այս բնագավառում դրականորեն է գնահատել Կ. Մարքսը՝ ընդգծելով, որ անժխտելի է նրանց ավանդը գնագոյացման տեսական հիմքերի, մասնավորապես՝ արժեքի բովանդակության (սուբստանցի) պարզաբանման խնդրում: Այդ նշանավոր տնտեսագետներին նա համարում էր արժեքի աշխատանքային տեսության հիմնադիրներ:

Կ.Մարքսը, արժեքի աշխատանքային տեսության համաձայն, ապրանքի արժեքը բնութագրում է որպես այդ ապրանքի վրա կատարված հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքային ծախսումների հանրագումար, իսկ գինը՝ որպես ապրանքի արժեքի դրամական արտահայտություն:

Արժեքի ոչ աշխատանքային տեսությունները: Ապրանքի արժեքին վերաբերող տեսությունների համակարգում առանձնահատուկ նշանակություն ունեն նաև արժեքի ոչ աշխատանքային տեսությունները, որոնց ընդհանուր դրույթների ուսումնասիրությունը օգտակար կլինի շուկայական տնտեսության պայմաններում գնագոյացման կազմակերպման հարցերը լուսաբանելու համար:

Հայ տնտեսագիտական միտքը բոլոր ժամանակներում արժանիորեն է գնահատել վերոհիշյալ տեսությունների նշանակությունը: Այդ առումով կարելի է նշել «Տնտեսագիտության ժամանակակից տեսությունները» աշխատությունը, որում իրավացիորեն նշվում է, որ կարելի է արժեքի մասին գոյություն ունեցող տեսությունները բաժանել երկու խմբի՝

ելնելով արժեքի սուբստանցից: Դրանք են՝ արժեքի աշխատանքային կամ միագործոնային և արժեքի ոչ աշխատանքային կամ բազմագործոնային տեսությունները[1]:

Արժեքի արտադրության գործոնային տեսությունը: Շուկայական տնտեսության պայմաններում ազատ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար պահանջվում է նախապես հայթայթել այն բոլոր ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման համար:

Այդ ռեսուրսները միաժամանակ դիտվում են որպես արտադրության գործոններ: Դրանք, որպես կանոն, ընդգրկում են հողը՝ իր բնական հարստություններով, աշխատանքային ռեսուրսները, կապիտալը (հիմնական միջոցները) և ձեռնարկատիրությունը:

Արտադրության գործոնային տեսության կողմնակից Ժ.Բ.Սեյը արտադրության երեք գործոնային տեսության հայեցակարգը համարում է եկամուտների բաշխման տեսությունների հիմքը և հաստատում, որ արտադրության յուրաքանչյուր գործակալ կամ մասնակից ստանում է իր եկամուտը:

Արտադրության գործոնային տեսության համաձայն, ապրանքի արժեքը ձևավորվում է արտադրության գործընթացում՝ այդ գործոններից յուրաքանչյուրի դիմաց ստացվող եկամուտների գումարից:

Արժեքի ոչ աշխատանքային տեսությունների համակարգում որոշակի տեղ է զբաղեցնում պահանջարկի և առաջարկի հարաբերակցության տեսությունը: Այդ տեսության կողմնակիցներն արժեքից գնի շեղումները հիմնավորում են պահանջարկի և առաջարկի տատանումների միջոցով և հաստատում արժեքի տեսությունից գների տեսությանն անցման անհրաժեշտությունը (Ա. Մարշալ՝ 1842-1924):

Ա. Մարշալը արմատական փոփոխություն մտցրեց տնտեսագիտության բնագավառում արժեքի ոչ աշխատանքային տեսությունների շուրջ առաջացած բանավեճերի համահարթման գործում:

Մարշալի գլխավոր ծառայությունն այն է, որ, քննադատական մոտեցում ցուցաբերելով արժեքի հիմնախնդրի շուրջ ծագած բանավեճերի նկատմամբ, բարձր գնահատեց արտադրության բազմագործոնային տեսությունը, հիմնավորեց արժեքի տեսությունից գների տեսությանն անցման անհրաժեշտությունը:

Այսպիսով, գնագոյացման տեսությունների զարգացումն ու կատարելագործումը նախադրյալներ ստեղծեցին գնագոյացման բազմագործոնային տեսության հիմնավորման, արժեքի տեսությունից գների տեսությանն անցման, գնագոյացման կազմակերպման գործում պահանջարկի և առաջարկի հարաբերակցության կարգավորման համար:

19–րդ դարի 70-ական թվականներից ձևավորվեց և մեծ ճանաչում ստացավ *արժեքի սահմանային օգտակարության տեսությունը*, որը համարվեց արժեքի ոչ աշխատանքային տեսության հիմնական ուղղություններից մեկը: Դրա հիմքում ընկած է արժեքի զուտ սուբյեկտիվ գնահա-

[1] Կիրակոսյան Գ.Ե., Խլղաթյան Ի.Ե., Երևան, «Տնտեսագետ», 1995, էջ 5:

տումը: Այդ ուղղության համաձայն, արժեքը դիտվում է որպես զուտ հոգեբանական երևույթ և ապրանքի սուբյեկտիվ գնահատման արդյունք, որի մակարդակը ապրանքի փոխանակության ժամանակ որոշվում է օգտակարությամբ, այլ ոչ թե արժեքով:

Սահմանային օգտակարության տեսության համաձայն, միայն ապրանքի օգտակարությունը կարող է աշխատանքային ծախսումներին տալ հասարակականորեն անհրաժեշտ բնույթ: Դա նշանակում է, որ, չնայած ապրանքը ստեղծվում է աշխատանքի արդյունքում, այնուամենայնիվ, արժեքը դրսևորվում է շուկայում՝ փոխանակության ժամանակ դրա օգտակարության աստիճանը գնահատելիս: Ուստի, արժեքը, ամենից առաջ, փոխանակային հասկացություն է:

Օգտակարության մոտեցման կողմնակից Փ.Սամուելսոնը ընդունում է, որ նույնիսկ ամենահայտնի գործարարը չի կարող նախապես որոշել՝ որքա՞ն արտադրել և ի՞նչ գնով վաճառել, քանի դեռ նրան հայտնի չէ արտադրության ծախսերի մակարդակը: Այդ պատճառով էլ նախ պետք է պարզել ծախսերի մակարդակը, որից հետո որոշում կայացնել բարիքի արտադրության քանակի և դրա գնի վերաբերյալ:

Գնագոյացման տեսությունների առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցից յուրաքանչյուրը բնութագրում է գնի ձևավորման մեխանիզմի միայն որոշակի կողմը: Ուստի, այդ տեսությունների դրույթները պետք է գնահատել համակցված ձևով: Միայն այս դեպքում հնարավոր կլինի հաղթահարել տարբեր ապրանքների (բարիքների) միավորի օգտակարության առանձնահատկությունների հետ կապված հակասությունը:

18.3. Գների գործառույթները

Գնագոյացման մեխանիզմի և գների տնտեսական բովանդակությունը պարզաբանելու համար կարևոր է գների հիմնական գործառույթների ուսումնասիրությունը, որը հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմելու տնտեսական խնդիրների լուծման գործում գների ունեցած դերի և գին կատեգորիային բնորոշ հիմնական հատկությունների մասին:

Գները հիմնականում կատարում են՝ հաշվառման և կարգավորման, խթանման, բաշխման և վերաբաշխման, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության կարգավորման գործառույթներ:

Գների հաշվառման և կարգավորման գործառույթը հնարավորություն է տալիս համապատասխան հաշվարկների միջոցով որոշել սպառողական տարբեր արժեքներ ունեցող ապրանքների արտադրության վրա կատարված հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքային ծախսումները: Այդ հաշվարկների հիման վրա ստացված շուկայական գները ելակետային հիմք են ծառայում մակրոմակարդակի և միկրոմակարդակի արժեքային ցուցանիշների հաշվարկման համար:

Գների խթանման գործառույթի տնտեսական էությունն այն է, որ պահանջարկին և առաջարկին համապատասխան արտադրության կազմակերպման արդյունքում արտադրված արտադրանքի իրացումը ազատ շուկայական և պետականորեն կարգավորվող հաստատագրված գներով, ենթադրում է ոչ միայն արտադրության և իրացման ծախսերի փոխհատուցում, այլև որոշակի շահույթի ստացում: Արտադրության զարգացման վրա գների խթանող գործառույթի ազդեցությունը ձեռք է բերվում առանձին արտադրանքների համար սահմանված գների կազմում շահույթի տարբերակման միջոցով: Այսպես, արտադրությունը խթանելու համար գների կազմում սահմանվում է շահույթի բարձր մակարդակ՝ ըստ նախկինում արտադրված արտադրանքի: Դրանով շուկայական գները խթանում են փոխարինող արտադրանքի իրացման գործընթացը:

Գների բաշխման և վերաբաշխման գործառույթի էությունն այն է, որ ազատ շուկայական գների մեխանիզմին, դրանց կազմին ու կառուցվածքին համապատասխան, իրականացվում է համախառն ազգային արդյունքի և ազգային եկամտի բաշխումն ու վերաբաշխումը: Գների բաշխման ու վերաբաշխման գործառույթի միջոցով արժեքային արտահայտությամբ ստեղծված արդյունքները բաշխվում են արտադրողների, սպառողների և պետության միջև: Գները իրենց այդ գործառույթով, փաստորեն, հանդես են գալիս որպես բաշխման և վերաբաշխման միջոց: Նյութական արտադրության ոլորտի առանձին ճյուղերում ստեղծված ազգային եկամուտը հաշվարկվում է արտադրանքի արտադրության և իրացման գործընթացում կատարված կենդանի և առարկայացած աշխատանքային ծախսումների հիման վրա: Այս առումով, առաջնային դեր ունեն սպառման արտադրանքների շուկայական գները: Այն դեպքում, երբ շուկայական գների աճը չի ուղեկցվում աշխատավարձի համապատասխան բարձրացմամբ, ազգային եկամտի մեջ կրճատվում է սպառման ֆոնդի բաժինը, և ավելանում է կուտակման ֆոնդը: Ազգային եկամտի վերջնական վերաբաշխումը իրականացվում է ֆինանսական համակարգի և, ամենից առաջ, պետական բյուջեի միջոցով: Դա նշանակում է, որ շուկայական գինը չի կարող դիտվել որպես համախառն ազգային արդյունքի և ազգային եկամտի բաշխման ու վերաբաշխման միակ և գլխավոր տնտեսական լծակ:

Գների պահանջարկի և առաջարկի հարաբերակցության կարգավորման գործառույթի դերը և նշանակությունը հատկապես ցայտուն ձևով դրսևորվում են շուկայական տնտեսությունում, որտեղ պահանջարկի և առաջարկի միջև հավասարակշռությունը կարգավորվում է ազատ շուկայական գների միջոցով: Այսինքն, գնի ձևավորման արդյունքում շուկան գործում է հավասարակշռված: Այդ գործընթացը իրականացվում է պահանջարկի և առաջարկի հարաբերակցության կարգավորման նպատակով, և եթե այս գործառույթը չգործի, ապա կառաջանա ապրանքների ավելցուկ կամ պակաս: Դա նշանակում է, որ պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխությունը ենթադրում է գների շեղում արժեքից, քանի որ շուկայական գների համար հիմք է ծառայում ոչ միայն ապրանքների արժեքը, այլև օգտակարությունը, բնակչության վճարունակ

պահանջարկը և դրանք առաջարկին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը: Նման պայմաններում առանձին ապրանքների գների շեղումները արժեքից փոխադարձաբար մարում են միմյանց, և ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ գների գումարը հավասարվում է արժեքին:

18.4. Գնագոյացման սկզբունքներն ու մեթոդները

Շուկայական տնտեսության պայմաններում գնագոյացման հիմնական սկզբունքներն են.

1. տնտեսական քաղաքականության և գնագոյացման քաղաքականության միասնության սկզբունքը,
2. տնային տնտեսությունների, ձեռնարկությունների և պետության շահերի զուգակցման սկզբունքը,
3. գնագոյացման, պահանջարկի ու առաջարկի և մրցակցության փոխկապվածության սկզբունքը,
4. գների նկատմամբ վերահսկողության սահմանման սկզբունքը:

Գնագոյացման օգտագործվող մեթոդների համակարգում առաջնային նշանակություն ունի ծախսային մեթոդը, որի հիմնական պահանջն է հաշվարկել և գնահատել արտադրության և իրացման գործընթացներում կատարված ծախսումները: Հայտնի է, որ շուկայական տնտեսության պայմաններում արտադրանքի և ծառայությունների գները վերջնականապես ձևավորվում են շրջանառության ոլորտում՝ պահանջարկի և առաջարկի օրենքի պահանջներին համապատասխան: Սակայն արտադրանքների և ծառայությունների գների ձևավորումը ամենից առաջ կապվում է բուն արտադրության գործընթացում իրացվող արտադրանքի ու ծառայությունների կազմակերպական ծախսերի հետ: Ուստի պահանջվում է, գնագոյացման ծախսային մեթոդի պահանջներին համապատասխան, ճշտել արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսների արդյունահանման, փոխադրման հետ կապված ծախսերը:

Ձեռնարկության կողմից շուկա հանվող ապրանքների և ստացված արդյունքների քանակությունը մի կողմից կախված է տնտեսական ռեսուրսների ձեռքբերման գնից և դրանց արդյունավետ օգտագործման մակարդակից, մյուս կողմից՝ բուն արտադրության գործընթացում կատարված ծախսերից: Դրան ավելացնելով արտադրության գործընթացի շարունակությունը կազմող արտադրանքի իրացման ծախսերը՝ հաշվարկվում են արտադրության լրիվ ծախսերը: Գնագոյացման կազմակերպման ծախսային մեթոդի առաջին հիմնական պահանջն այն է, որ ձեռնարկության արտադրական գործունեության արդյունք հանդիսացող արտադրանքների կամ ծառայությունների իրացման շուկայական գները գերազանցեն արտադրանքի լրիվ ծախսերը:

Գնագոյացման կազմակերպման ծախսային մեթոդի հաջորդ պահանջն այն է, որ ձեռնարկության կողմից արտադրանքի իրացումից

ստացվող հասույթը պետք է երաշխավորի ձեռնարկության բնականոն գործունեությունը:

Գնագոյացման նորմատիվային մեթոդի հիմնական պահանջն է՝ առաջնորդվել հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի, աշխատանքի վարձատրության՝ գիտականորեն հիմնավորված ծախսային նորմատիվներով: Եթե վարչահրամայական տնտեսության պայմաններում արտադրության ծախսերը հաշվարկելիս կիրառվում էին վերադասի կողմից հաստատված ծախսային նորմեր, ապա շուկայական տնտեսության պայմաններում անհրաժեշտ նորմատիվները հաշվարկվում են ձեռնարկությունների կողմից, որոնք նախապես հիմնավորվում են գիտատեխնիկական առաջընթացի բնագավառում ձեռք բերված նվաճումներով: Շուկայական տնտեսության պայմաններում արտադրության գործընթացում կատարված ծախսերը հաշվարկելիս օգտագործված նորմերն ու նորմատիվները ունեն ինքնակարգավորման նպատակ: Արտադրության տարբեր օղակներում կիրառվող առաջադիմական նորմերի իջեցման խնդիրը անհատ ձեռներեցների, գիտահետազոտական հիմնարկների ուշադրության կենտրոնում է: Գնագոյացման նորմատիվային մեթոդի պահանջներին համապատասխան առաջադիմական նորմերն ու նորմատիվները հաշվարկելիս պետք է հաշվի առնել բազմաթիվ գործոնների ազդեցությունները, որոնք որոշիչ են գները կարգավորող ծախսերի ճիշտ հաշվարկման համար: Գնագոյացման ծախսային և նորմատիվային մեթոդների միասնությունը պահանջում է հաշվարկել միավոր արտադրանքի վրա կատարվող ծախսերը և դրան ավելացնել նախատեսվող շահույթը:

Գնագոյացման մեթոդներից է նաև անվնասաբերության և նպատակային շահույթի ստացման մեթոդը, որի հիմնական պահանջն է ձեռնարկության ծախսերը, շահույթը և արտադրության ծավալը համակցել այնպես, որ հնարավոր լինի պարզել, թե որքա՞ն պետք է արտադրել և ի՞նչ գնով վաճառել: Դա նշանակում է, որ ձեռնարկությունը պետք է ձգտի սահմանել այնպիսի գին, որի դեպքում արտադրությունը լինի անվնասաբեր, ստացվի նպատակային շահույթ: Այսինքն՝ սահմանված գինը պետք է փոխհատուցի բոլոր ծախսերը և ապահովի շահույթի ստացումը:

Գնագոյացման մեթոդների համակարգում լայն կիրառություն ունեն նաև մաթեմատիկական մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս արտադրության ծախսերի և գնի մակարդակի վրա ազդող մյուս փոփոխականների համեմատության միջոցով ընտրելու գնի առավել օպտիմալ մակարդակի որոշման առաջադիմական տարբերակ:

Գնագոյացման մեթոդներից է ապրանքի գնի արժեքավորման մեթոդը, որի միջոցով որոշակի կապ է ստեղծվում արտադրողների և սպառողների պահանջունակության միջև: Դա նշանակում է, որ այդ մեթոդի պահանջին համապատասխան, խնդիր է դրվում առավել արդյունավետ համակցել ինչպես արտադրողների և սպառողների պահանջները, այնպես էլ նպատակային խնդիրները: Գնի արժեքավորումը ենթադրում է սահմանել այնպիսի գին, որը ձեռնարկության համար կապահովի շահույթ, իսկ սպառողների համար՝ խնայողությունների աճ:

Ձեռնարկությունը պարտավոր է սահմանել այնպիսի գին, որն ավելի ճիշտ կբնութագրի ապրանքի արժեքը, իսկ սպառողը պատրաստ կլինի վճարել այդ ապրանքի դիմաց: Այդ նպատակով հաճախ փորձ է արվում հարցման միջոցով պարզել, թե սպառողը ինչ գնով կցանկանա գնել ապրանքը, սակայն, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, հարցման պատասխանները ոչ միշտ են հիմնավոր, քանի որ սպառողների սուբյեկտիվ մոտեցումները հաճախ հանգեցնում են ոչ իրական արդյունքների:

Գնի արժեքավորման գործընթացը պետք է դիտարկել թե՛ արտադրողի, թե՛ սպառողի տեսանկյունից, քանի որ դրանք տարբեր են: Եթե արտադրողի (վաճառողի) մոտեցումը գնի նկատմամբ վերջինիս անընդհատ բարձրացումն է, ապա սպառողինը (գնորդինը)՝ ապրանքի օգտակարությանը համապատասխան՝ գնի իջեցումը: Իրականում սպառողների նման ձգտումը հանգեցնում է արտադրողների միջև մրցակցության, որի ընթացքում վերջիններս, ելնելով սպառողների ցանկություններից, ձգտում են գինը մոտեցնել սպառողների կողմից արժեքավորված գնին:

Անշուշտ, գնի արժեքավորումը կախված է այն բանից, թե յուրաքանչյուր գնորդ ինչպես է ընկալում այդ գործոնների նշանակությունը: Բնական է՝ որքան սպառողի (գնորդի) զգայունության աստիճանը բարձր լինի, որքան ապրանքի սպառողական հատկությունների ընկալման վերաբերյալ տվյալները հավաստի լինեն, այնքան նրա կողմից գնի արժեքավորումը՝ կապված ապրանքի օգտակարության հետ, ավելի հիմնավոր կլինի:

18.5. Գնագոյացման վրա ազդող գործոնները և դրանց դասակարգումը

Գնագոյացման տեսական դրույթների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ արժեքը դիտվում է որպես արտադրության գործոններից յուրաքանչյուրի օգտագործման դիմաց ստացվող եկամուտների հանրագումար և ձևավորվում է փոխանակության գործընթացում, որի մակարդակը կարող է փոփոխվել բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ: Դա նշանակում է, որ ապրանքափողային հարաբերություններով պայմանավորված՝ արտադրության գործոններից յուրաքանչյուրի փոփոխությունը ազդում է փոխանակության գործընթացի վրա, հետևաբար նաև՝ գների մակարդակի վրա: Գնի մեծությունը կախված է մի շարք գործոններից, այդ թվում՝ ապրանքների իրացման պայմաններից, արտադրության առանձին գործոնների, տնտեսական, ֆինանսական, հարկաբյուջետային քաղաքականության, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխություններից, բնակչության վճարունակության աստիճանից, երկրի տնտեսական իրավիճակից և այլն: Ազատ գնագոյացման, մրցակցության և ձեռնարկատիրական գործունեության պայմաններում գների վրա ազդող գործոնների վերլուծությունն ունի

բացառիկ կարևոր նշանակություն: Այդ կարևորությունը արտահայտվում է նրանում, որ գների վրա ազդող գործոնների հետազոտության միջոցով պարզում ենք ոչ միայն շուկայական գների փոփոխության աստիճանը, այլև՝ թե ինչ գործոնների ազդեցությամբ են գները շեղվում արժեքից, և ինչպիսի կապ գոյություն ունի գների փոփոխության և պետության վարած տնտեսական քաղաքականության միջև:

Գների վրա ազդող գործոնները կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

- արժեգոյացնող կամ գնի մակարդակը պայմանավորող գործոններ,
- գինն արժեքից շեղող գործոններ,
- տնտեսական քաղաքականության հետ կապված գործոններ:

Գնի մակարդակը պայմանավորող գործոններ: Քանի որ ապրանքների արժեքը ձևավորվում է արտադրության բոլոր գործոնների օգտագործման դիմաց ստացվող եկամուտներով, ուստի դրանք էլ պետք է դիտել որպես գնի մակարդակը ձևավորող գործոններ: Հայտնի է, որ արտադրության գործոնների համակարգում առաջնային դեր ունի մարդկային գործոնը: Արտադրության այդ կարևոր գործոնի օգտագործման դիմաց կատարվող ամբողջ վճարները՝ որպես աշխատուժի օգտագործման գին, ամբողջությամբ ներառվում են գնի մեջ: Աշխատանքային ծախսումների մակարդակը գնի կազմում կապված է ոչ միայն աշխատողների բացարձակ թվաքանակից, այլև կրթական, մասնագիտական հմտությունից և ունակության աստիճանից: Ցանկացած ապրանքի արտադրության գործընթացում որքան շատ աշխատուժ օգտագործվի, որքան բարձր լինի կրթական, մասնագիտական ունակությունների աստիճանը, այնքան գնի կազմում մեծ կլինի աշխատանքային ծախսումների բաժինը:

Գնի մակարդակի ձևավորման վրա ազդող հաջորդ գործոնը, այսպես կոչված, իրային կամ կապիտալի գործոնն է: Այդ գործոնի շնորհիվ ձևավորվում է առարկայական աշխատանքի՝ աշխատանքի միջոցների ամբողջությունը: Եթե աշխատանքի առարկաներին առնչվող ծախսումները դիտվում են որպես գնի ձևավորման ուղղակի ծախսումներ, ապա աշխատանքի միջոցների ծախսումները գնի կազմում ներառվում են իբրև անուղղակի ծախսումներ: Գյուղատնտեսական արտադրանքների արտադրության բնագավառում, գների ձևավորման նշված գործոններից բացի, հաշվի են առնվում նաև զուտ հողի գործոնը (որի օգտագործման դիմաց վճարները նույնպես ընդգրկվում են գնի կազմում) և բնակլիմայական պայմանների ազդեցությունը (որը անուղղակիորեն դարձյալ ազդում է գնի վրա):

Գների մակարդակի վրա որոշակի ներգործություն է ունենում նաև բնական գործոնը՝ կապված բնական ռեսուրսների առկայության, դրանց արդյունահանման եղանակների կատարելագործման հետ:

Գինը արժեքից շեղող գործոններ: Գների մակարդակի վրա ազդող գործոնների երկրորդ խումբը ընդգրկում է գինն արժեքից շեղող գործոնների ամբողջությունը.

- արտադրանքի սպառողական հատկանիշների փոփոխությունները,
- պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխությունները,
- սոցիալական գործոնները:

Գինն արժեքից շեղող առաջին գործոնը կապված է արտադրանքի սպառողական հատկանիշների փոփոխության հետ և բնութագրում է բարիքի օգտակարության աստիճանը: Այն միաժամանակ ներառում է արտադրանքի առանձին խմբերի ինչպես որակական, այնպես էլ փոխադարձ փոխարինելիության հատկանիշները: Որպեսզի գները նպաստեն բարձր որակ ունեցող արտադրանքի թողարկմանը, պահանջվում է շուկայական գների միջոցով ապահովել յուրաքանչյուր ապրանքատեսակի երկու կողմերի՝ արժեքի և սպառողական արժեքի միասնությունը: Դա նշանակում է, որ տարբեր որակ ունեցող ապրանքների գները պետք է համապատասխանեն դրանց հասարակական օգտակարությանը, քանի որ միայն շուկայում է սպառողական արժեքը դրսևորվում փոխանակային արժեքի տեսքով: Ճիշտ է, արժեքը ձևավորվում է արտադրության և շրջանառության գործընթացում, սակայն դրա օգտակարության աստիճանը բացահայտվում և գնահատվում է միայն շուկայում, որտեղ ձևավորվում է փոխանակային արժեքը: Բանն այն է, որ արժեքն ապրանքի օգտակար հատկություններից առանձին գոյություն չունի: Ուստի գները սահմանելիս պահանջվում է հաշվի առնել ապրանքի սպառողական բոլոր հատկանիշները, սահմանային օգտակարության աստիճանը: Որքան բարձրանում է ապրանքի օգտակարության աստիճանը, այնքան, դրա որակական հատկանիշների բարելավմանը զուգընթաց, գներն ավելի մեծ չափով են շեղվում արժեքից: Արժեքից գների շեղման գործոնը առավել հանգամանորեն հետազոտել և լուսաբանել է Ա. Մարշալը: Նա, ընդունելով սահմանային օգտակարության տեսության միակողմանիությունը, դրան միացրեց նաև սպառողական շուկայում պահանջարկի և առաջարկի փոխհարաբերակցությունը, որը ազատ մրցակցության պայմաններում ազդում է գնի՝ արժեքից շեղման վրա: Հետևաբար, գներն արժեքից շեղող հաջորդ գործոնը պահանջարկի և առաջարկի հարաբերակցության փոփոխությունն է:

Այստեղ հարկ ենք համարում ընդգծել, որ պահանջարկի և առաջարկի միջև համապատասխանություն ստեղծելու նպատակով գները կարելի է օգտագործել միայն հետևյալ դեպքում.

- երբ հնարավոր չէ տվյալ ապրանքի արտադրությունը ընդլայնել և հավասարեցնել պահանջարկին,
- երբ պահանջարկը ոչ միայն բավարարված է, այլև՝ հագեցած, այսինքն՝ արտադրված է ավելին, քան անհրաժեշտ է,
- երբ որոշ ապրանքներ ունեն արտադրության և իրացման սեզոնային բնույթ:

Գինն արժեքից շեղող հաջորդ գործոնների խումբը ներառում է *սոցիալական խնդիրները*: Հաճախ գինն օգտագործվում է համապատասխան նշանակություն ունեցող սոցիալական խնդիրների լուծման, սոցիա-

լապես անպաշտպան խմբերի կարիքների բավարարման, առանձին քաղաքացիներին արտոնյալ պայմաններով ապրանքների տրամադրման նպատակով և այլն: Որքան նշված ուղղություններով պետության կողմից իրականացվող միջոցառումների շրջանակները ընդլայնվեն, այնքան բնակչության որոշ խմբերի ապրելակերպը կբարելավվի, և առավել մեծ չափով կգնահատվեն ու կպաշտպանվեն մարդու իրավունքները տվյալ երկրում:

Տնտեսական քաղաքականության հետ կապված գործոններ: Պետության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը կազմում է գների ռազմավարությունը, որի ճիշտ և ժամանակին իրականացումը որոշիչ դեր է կատարում երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում: Գործոնների այս խմբի առանձնահատկությունն արտահայտվում է նրանում, որ յուրաքանչյուր երկրում, ելնելով տնտեսական իրավիճակից, կառավարությունն ընդունում է համապատասխան որոշումներ, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում են գների հետ և կարող են ներգործել դրանց բարձրացման կամ իջեցման վրա: Ինչպես տնտեսության կայունացման համար անհրաժեշտ ամեն մի գործունեություն, այնպես էլ գնագոյացման ռազմավարությունը սկսվում է որոշակի նպատակային խնդիրների որոշմամբ և ավարտվում այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակմամբ: Գնագոյացման ռազմավարության նպատակային խնդիրների մշակումը պետք է զուգակցվի տնտեսական բնագավառի մյուս բոլոր խնդիրների և, մասնավորապես, ձեռնարկությունների նպատակային խնդիրների ու պետության շահերի հետ: Գնագոյացման ռազմավարության նպատակային խնդիրների մշակումը միանգամյա բնույթ չունի: Այն մշտապես վերանայվում և փոփոխվում է՝ կապված մրցակցության միջավայրի փոփոխության, արտադրության ռազմավարության կառուցվածքային տեղաշարժերի, նոր արտադրատեսակների յուրացման, ծախսերի փոփոխության, կառավարության կողմից կիրառվող նոր տնտեսական, հարկաբյուջետային ու ֆինանսավարկային քաղաքականության հետ: Շուկայական տնտեսությունում գնագոյացման ռազմավարության արդյունավետությունը կարելի է գնահատել և հիմնավորել տնտեսության տարբեր բնագավառներում գների փոփոխության աստիճանով, իրացնող սուբյեկտների կողմից ստացվող շահույթի, ապրանքների վրա պարբերաբար սահմանվող զեղչերի մակարդակներով, գների հարկադրաբար իջեցման կամ բարձրացման չափով և այլն: Գնագոյացման ռազմավարության նպատակային խնդիրները կարող են լինել առանձին ձեռնարկությունների գործունեության շրջանակներում՝ կապված դրանց նպատակային խնդիրների տարբերությունների հետ: Այսպես, օրինակ, ձեռնարկություններից մի քանիսում գնագոյացման ռազմավարության նպատակը կարող է կապված լինել արտադրանքի իրացման, մյուսներինը՝ առկա իրավիճակի, մեկ այլ խմբինը՝ շուկայում դիրքի ամրապնդման, առավելագույն շահույթի ստացման հետ: Արտադրանքի իրացման հետ կապված նպատակային խնդիրը գնագոյացման ռազմավարության միջոցով լուծելու համար ձեռնարկությունը ձգտում է ավելացնել շուկայում իրացման

ծավալի իր բաժինը: Այդ ռազմավարությունը կարող է դրական արդյունք ապահովել միայն այն դեպքում, երբ սպառողները զգայուն են գնի նկատմամբ, ցածր գները վանում են հնարավոր մրցակիցներին, արտադրության ծավալը երաշխավորում է բավականին խնայողություն, ընդլայնվում են ձեռնարկության սպառողական շուկայի շրջանակները և այլն: Գնագոյացման ռազմավարության արդյունավետ կազմակերպման շնորհիվ ստացված առավելագույն շահույթը ձեռնարկությունները կարող են օգտագործել նպատակային մյուս խնդիրների լուծման համար: Առանձին ձեռնարկությունների համար ռազմավարության նպատակային խնդիր է համարվում ոչ այնքան հարաբերական, որքան բացարձակ շահույթի ստացումը: Նման ռազմավարության դեպքում նույնիսկ մենաշնորհային ձեռնարկությունը կարող է սահմանել ցածր շուկայական գին, որն իրացված արտադրանքի քանակի ավելացման հաշվին երաշխավորում է առավելագույն շահույթ:

18.6. Գնագոյացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները

Ցանկացած երկրի տնտեսություն չի կարող զարգանալ և առաջադիմել առանց հիմնավորված քաղաքականության որոշակի համակարգի, առանց տնտեսական ու սոցիալական զարգացման որոշակի ուղղությունների ու նպատակային խնդիրների առաջադրման ու հետևողական լուծման:

Ելնելով այդ խնդիրների լուծման առանձնահատկություններից, որոնք առնչվում են նյութական ու հոգևոր բարիքների ստեղծման, դրանց նկատմամբ հասարակության պահանջների բավարարման, երկրի պաշտպանունակության ամրապնդման անհրաժեշտության հետ, աստիճանաբար ձևավորվում է պետության կողմից իրականացվող քաղաքականության համակարգը:

Տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը կազմող գնային քաղաքականության հիմնահարցերի ուսումնասիրության նպատակն է հիմնավորել կարգավորվող տնտեսությունում նոր գնային քաղաքականության անհրաժեշտությունն ու նպատակային խնդիրները, ներկայացնել նրա կապը տնտեսական քաղաքականության հետ, պարզաբանել դրանց դերը շուկայական հարաբերությունների զարգացման ու կարգավորման, տնտեսության կայունացման, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության կարգավորման, բնակչության սոցիալական պաշտպանվածության ապահովման գործում:

Այս առումով ուշադրության են արժանի այն տնտեսագետների մոտեցումները, ովքեր շուկայական տնտեսությունը դիտում են որպես գներով կարգավորվող տնտեսական համակարգ, իսկ գները՝ այդ համակարգի մեխանիզմը կարգավորող անիվներ: Դա նշանակում է, որ անցումը նոր գնային քաղաքականության օբյեկտիվ անհրաժեշտություն է, որի համար

պահանջվում է հետազոտել այդ քաղաքականության հիմնական ուղղությունները:

Շուկայական տնտեսության անցումային փուլում գնային նոր քաղաքականության իրականացումը համարվում է ամենաբարդ բարեփոխումներից մեկը: Դա բացատրվում է նրանով, որ գնագոյացման հետ կապված ամեն մի բարեփոխում կարող է ունենալ աղետալի հետևանքներ՝ հանգեցնել գների արագ աճի և բնակչության եկամուտների կրճատման: Դա վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը, որտեղ 1992թ. հունվարի 5-ից կիրառված նոր գնային քաղաքականությունը հանգեցրեց որոշակի ծանր հետևանքների՝ գների կտրուկ բարձրացման և հիպերինֆլյացիոն երևույթների առաջացման:

Նոր գնային քաղաքականության ծանր հետևանքները սկզբնական տարիներին կապված էին շուկայական տնտեսության համար անհրաժեշտ կառույցների և մրցակցության բացակայության, արտադրողների մենաշնորհային դիրքի առկայության, պարենային և ոչ պարենային ապրանքների խիստ պակասության հետ:

Բավական է նշել, որ սպառման ապրանքների և ծառայությունների գների ինդեքսը 1993թ., 1992թ. համեմատությամբ, աճեց մոտ 110 անգամ, իսկ 1994թ., 1993թ. համեմատությամբ՝ 50,6 անգամ:

Ցանկացած ձեռնարկատիրության գնային քաղաքականությունը որոշվում է նրա տնտեսական ներուժի, ունեցած ռեսուրսների, արտադրական գործունեության, արտադրանքների պահանջարկի և առաջարկի հարաբերակցության հիման վրա: Նույնիսկ պահանջարկի առկայության դեպքում ձեռնարկությունը պարտավոր է հաշվի առնել մի շարք նպատակային խնդիրներ՝ կապված արտադրանքի որակի, սեզոնայնության, իրացման պարբերականության, գնային ռազմավարության հետ և այլն:

Հիմնավորված գնային քաղաքականության նշանակությունն ու անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ դրա շնորհիվ լայն հնարավորություններ է ստեղծվում ինչպես ձեռնարկությունների, ճյուղերի, ընկերությունների, այնպես էլ պետության նպատակային խնդիրների լուծման համար: Դա նշանակում է, որ գնային քաղաքականության միջոցով մի կողմից խթանվում է արտադրության տարբեր ոլորտների գործունեությունը, իսկ մյուս կողմից իրականացվում են պետության վերջնական արդյունքների բաշխումն ու վերաբաշխումը, կարգավորվում պահանջարկն ու առաջարկը:

Գնային քաղաքականությունը կապված է ապրանքափողային հարաբերությունների հետ, արտացոլում է պահանջարկի և առաջարկի հարաբերակցության հիմնական օրինաչափությունները, համարվում է պետության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը և շուկայական հարաբերությունները կարգավորող ինքնուրույն բնագավառ: Տնտեսական քաղաքականության արդյունավետությունը, վերջին հաշվով, գնահատվում է հենց գնագոյացման քաղաքականության միջոցով:

Գնային քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղություններն են համարվում.

• Յուրաքանչյուր ձեռնարկություն մշակված հիմնավոր գնային քաղաքականության միջոցով պետք է ձգտի մրցակցության պայմաններում կայունացնել դիրքերը շուկայում: Այդ նպատակով պահանջվում է հաղթահարել արտադրական հզորությունների թերօգտագործումը, ծավալել առավել ինտենսիվ մրցակցություն, գնահատել շուկայի իրավիճակի փոփոխությունները՝ կապված պահանջարկի և առաջարկի, սպառողների նախասիրությունների ու վարքագծի փոփոխությունների հետ և այլն:

• Գնագոյացման քաղաքականության կատարելագործման կարևոր ուղղություն է նաև առավելագույն շահույթի ստացման ապահովումը, որի համար պահանջվում է սահմանել առավելագույն շահույթ երաշխավորող հիմնավոր գին: Դրա համար յուրաքանչյուր ձեռնարկություն պարտավոր է որոշել իր արտադրանքի առաջարկն ու անհրաժեշտ ծախսերի մակարդակը և այլընտրանքային սկզբունքով սահմանել են առավելագույն շահույթ ապահովող օպտիմալ գին:

• Գնագոյացման քաղաքականության հաջորդ հիմնական ուղղությունը ապրանքաշրջանառության ծավալը առավելագույնի հասցնելն է: Անշուշտ, հիմնավորված գինը միշտ էլ խթանում է ապրանքաշրջանառության ընդլայնումը: Այդպիսի հիմնավորված գնի սահմանումը հաճախ իր վրա է կրում խմբակային եղանակով արտադրված արտադրանքի հետ կապված համալիր ծախսերի կառուցվածքն ու հաշվարկման բարդությունը: Նման պայմաններում պահանջարկի գնահատմանը համապատասխան, ինչպես նաև առաջադրված խնդիրների իրականացման նպատակով թույլատրելի է համարվում, ելնելով առաքման ծավալից, սահմանել միջանկյալ տոկոսաչափ, այսինքն՝ գնին վերադիր կամ զեղչեր, որը կարող է խթանել շրջանառության ընդլայնումը: Յուրաքանչյուր ձեռնարկություն առաքման ծավալի ավելացումը պետք է զուգակցի միավոր ապրանքի հաշվով ծախսերի իջեցման հետ և դրա շնորհիվ ապահովի շահույթի ավելացումը, ինչպես նաև մյուս տնտեսավարող սուբյեկտների և պետության շահերի հիմնավոր զուգակցումը:

Նման իրավիճակի բացասական հետևանքներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար հետազոտել շուկայի իրավիճակի, մասնավորապես, պահանջարկի, գների նկատմամբ սպառողների զգայունության, պահանջարկի գնային ճկունության փոփոխությունները և դրանց համապատասխան՝ որոշել գնի վերին և ներքին սահմանը:

• Գնային քաղաքականության կատարելագործման հաջորդ ուղղությունը արտադրության ծախսերի պարբերական վերլուծությունն է, մասնավորապես՝ հաստատուն և փոփոխուն ծախսերի ուսումնասիրությունը, որոնց հիման վրա ձեռնարկությունը կարող է վերանայել գնի ներքին սահմանը և խուսափել վնասներից: Դրա հետ միաժամանակ, պահանջվում է հետազոտել արտադրության կառուցվածքային փոփոխությունների հետևանքով առաջացած միջին ծախսերի փոփոխությունները միավոր արտադրանքի հաշվով, որոնք նույնպես կարող են ազդել սպասվող արդյունքների մակարդակի վրա: Հետևապես, ձեռնարկությունների կողմից շուկայի իրավիճակների, ինչպես նաև արտադրության ծախսերի մանրակրկիտ վերլուծությունը՝ կապված ժամանակի գործոնի

գնահատման հետ, նույնպես կարելի է դիտել որպես գնային քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

• Քանի որ գնային քաղաքականությունը համարվում է կառավարման կարևոր օղակներից մեկը, ուստի դրա բազմաթիվ հարցեր լուծվում են օրենսդիր և գործադիր բարձրագույն մարմինների կողմից, որոնց հիմնական խնդիրների համակարգում որոշիչ տեղ ունի գների խթանման, բաշխման և վերաբաշխման գործառույթների ճիշտ կիրառումը: Բանն այն է, որ շուկայական տնտեսության անցումային փուլում յուրաքանչյուր երկրի կառավարություն, որպես կառավարման բարձրագույն գործադիր մարմին, կոչված է սոցիալ-տնտեսական զարգացման բազմաթիվ խնդիրներից բացի իրականացնելու գների ազատականացման այնպիսի քաղաքականություն, որը բխի տնտեսության զարգացման շահերից և ճիշտ արտացոլի պահանջարկի և առաջարկի հարաբերակցությամբ պայմանավորված գների ինքնակարգավորման և դրանց պետական կարգավորման խնդիրները, նպաստի առանձին ճյուղերի ու ենթաճյուղերի տնտեսական գործունեության խթանմանը, բաշխման հարաբերությունների կատարելագործմանը և բնակչության կենսապայմանների բարելավմանը:

• Այդ հիմնախնդիրների իրականացումը պահանջում է, որ կառավարությունը հիմնավոր գնահատի գների պետական կարգավորման ուղղակի և անուղղակի մեթոդների պահանջները, որը նույնպես համարվում է գնային քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Ուղղակի մեթոդով գների պետական կարգավորման պահանջների համաձայն՝ պետությունը պետք է առանձին ապրանքախմբերի կամ ծառայությունների գծով սահմանի գնի կայուն մակարդակ, երաշխավորված նվազագույն գին[1], անհրաժեշտությունից ելնելով՝ կիրառի պայմանագրային գներ[2], սահմանի նախահաշվային գներ:

Ըստ գնագոյացման պետական կարգավորման անուղղակի մեթոդի պահանջների՝ պետությունը պարտավոր է վարել այնպիսի հարկաբյուջետային, դրամավարկային, աշխատանքի վարձատրության, մաքսային քաղաքականություն և սահմանի ծառայությունների այնպիսի սակագներ (տարիֆներ), որոնք օժտված կլինեն խթանող գործառույթով և կնպաստեն երկրի ֆինանսական կայունացմանն ու երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Նշված խթանող քաղաքականությունների տնտեսական լծակների հիման վրա գների պետական կարգավորումը միաժամանակ կարող է հանգեցնել պահանջարկի և առաջարկի միջև օպտիմալ հարաբերակցության և արտադրության կառուցվածքային փոփոխության կայունացման, տնտեսավարող սուբյեկտների և պետության շահերի արդյունավետ զուգակցման:

---

[1] **Ծանոթություն:** Երաշխավորված նվազագույն գնի գրավային գին սահմանելու պրակտիկան լայն տարածում է ստացել ԱՄՆ-ում: Ֆերմերային տնտեսության գործունեության խթանման նպատակով, երբ շուկայական գինը գերազանցում է գրավային գինը, ֆերմերն է վաճառում իր ապրանքը, իսկ երբ շուկայական գինը ցածր է գրավային գնից, վաճառում է պետությունը:

[2] Òðóøèòåí Ñ., Îñîáåííîñòè ãîñóäàðñòâåííîãî ðåãóëèðîâàíèÿ öåí âî Ôðàíöèè. “Âîïðîñû ýêîíîìèêè” 1991 N 6, ñò. 58-59.

Ամփոփում

1. Չնայած ազատ մրցակցության պայմաններում շուկային բնորոշ է ինքնակարգավորման գործառույթը, այնուամենայնիվ, գների պետական կարգավորումը օբյեկտիվ անհրաժեշտություն է:
2. Ազատ գնագոյացմանն ու ազատ մրցակցությանը զուգընթաց, տնտեսական լծակների միջոցով պետությունը պարտավոր է կարգավորել գնային քաղաքականությունը:
3. Գնային մակրոտնտեսական կարգավորման հիմնախնդիրները հաջողությամբ կարող են լուծվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի մեթոդներով:
4. Գնագոյացման տեսությունների դրույթներին համապատասխան ձևավորված գինն իրենից ներկայացնում է առքուվաճառքի ժամանակ ապրանքի կամ ծառայության դիմաց գնորդի կողմից վճարվող փողի այն քանակը, որը ցանկանում է ստանալ ապրանքը վաճառողը (արտադրողը)՝ իր համար օգտակարություն ներկայացնող ապրանքի դիմաց:
5. Գնագոյացման կարգավորմանը պետության աջակցությունը չի հակասում շուկայական մեխանիզմի պահանջներին և որոշիչ դեր է կատարում տնտեսավարող սուբյեկտների շահերի զուգակցման գործում:
6. Առանց գնագոյացման տեսությունների, մեթոդների ու սկզբունքների իմացության հնարավոր չէ պարզել պահանջարկի, առաջարկի հարաբերակցության ու գնագոյացման միջև գոյություն ունեցող օրինաչափություններն ու գնագոյացման վրա ազդող գործոնները:
7. Գնագոյացման մեխանիզմի կարգավորման ու բովանդակության պարզաբանման համար կարևոր է գների հիմնական գործառույթների ուսումնասիրությունը, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունը:
8. Ռեսուրսների սղության պայմաններում նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքի արտադրությունը, արտադրության գործոնների ճիշտ համակցումը յուրաքանչյուր արտադրողի գլխավոր նպատակային խնդիրն է:
9. Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսության պետական կարգավորման ու տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ազատության հիմնավոր զուգակցումը կարևոր նշանակություն ունի ինչպես տնտեսության բոլոր նպատակային խնդիրների, այնպես էլ գնային ռազմավարության հիմնախնդիրների լուծման համար:
10. Շուկայական տնտեսությունը, իր առավելություններով հանդերձ, միաժամանակ դիտվում է գներով կարգավորվող համակարգ, իսկ գները՝ այդ համակարգի մեխանիզմը կարգավորող անիվներ:
11. Հիմնավորված գնային քաղաքականությունը կարևոր է ոչ միայն արտադրողների ու սպառողների, այլև մյուս տնտեսավարող սուբյեկտների և պետության միջև նորմալ հարաբերությունների կարգավորման և նպատակային խնդիրների լուծման համար:

1. **Գների մակարդակի որոշման մեթոդական ցուցումների, հրահանգների մշակումը, գների հաշվարկման կարգի հաստատումը, համապատասխան օրենսդրական, իրավական ու նորմատիվային ակտերի կազմումը հիմք են հանդիսանում գների մակարդակի որոշման համար և արտահայտում են գների պետական կարգավորման.**

ա. անուղղակի մեթոդի էությունը,
բ. ուղղակի մեթոդի էությունը,
գ. նորմատիվային մեթոդի էությունը,
դ. մաթեմատիկական մեթոդի էությունը:

2. **Պահանջարկի գինը ձևավորվում է.**

ա. սպառողների պահանջներին համապատասխան և բխում է գնագոյացման արժեքավորման մեթոդի պահանջներից,
բ. արտադրողների պահանջներին համապատասխան,
գ. պետության պահանջներին համապատասխան,
դ. նախարարության պահանջներին համապատասխան:

3. **Առաջարկի գինն առաջարկում է.**

ա. սպառողը,
բ. արտադրողը,
գ. շուկան,
դ. պետությունը:

4. **Կարգավորվող սահմանային գինը գնի այն սահմանն է.**

ա. որից ցածր ձեռնարկությունը չի կարող վաճառել իր արտադրանքը,
բ. որից բարձր ձեռնարկությունը կարող է վաճառել իր արտադրանքը,
գ. որին հավասար ձեռնարկությունը չի կարող վաճառել իր արտադրանքը,
դ. որից բարձր ձեռնարկությունը չի կարող վաճառել իր արտադրանքը:

5. **Արտադրողի կողմից առաջարկված արտադրանքի գինը հաշվարկվում է.**

ա. ելնելով միավոր արտադրանքի վրա կատարված ծախսերի մակարդակից,
բ. ելնելով միջին շահույթի մակարդակից,
գ. ելնելով ինչպես միավոր արտադրանքի վրա կատարված ծախսերի, այնպես էլ միջին շահույթի մակարդակից,
դ. ավանսավորված ամբողջ կապիտալի օգտագործմանը համապատասխան:

6. **Ծախսային մեթոդի պահանջն է՝ հաշվարկել և գնահատել.**

ա. արտադրության գործընթացներում կատարված ծախսումները,
բ. իրացման գործընթացներում կատարված ծախսումները,
գ. արտադրության և իրացման գործընթացներում կատարված ծախսումները,
դ. միայն ծառայությունների գործընթացներում կատարված ծախսերը:

7. **Արտադրության լրիվ ծախսերը հաշվարկում են.**

ա. տնտեսական ռեսուրսների ձեռքբերման գին + դրանց արդյունավետ օգտագործման մակարդակ,
բ. տնտեսական ռեսուրսների ձեռքբերման գին + արտադրության գործընթացում կատարված ծախսեր,
գ. տնտեսական ռեսուրսների ձեռքբերման գին + արտադրանքի իրացման ծախսեր,
դ. տնտեսական ռեսուրսների ձեռքբերման գին + արտադրության գործընթացում կատարված ծախսեր + արտադրանքի իրացման ծախսեր:

8. **2003թ-ին Ա ձեռնարկությունում արտադրանքի իրացումից ստացված զուտ հասույթը կազմել է 30 մլն դրամ, իսկ ծախսերը՝ 27.5 մլն դրամ: 2004 թ-ին, այլ հավասար պայմաններում, արտադրողականության բարձրացման հաշվին որքանո՞վ պետք է մեծացնեն հասույթը, որպեսզի համախառն շահույթը հավասարվի 4 մլն դրամի.**
ա. 10 մլն դրամով,
բ. 18 մլն դրամով,
գ. 20 մլն դրամով,
դ. 1.5 մլն դրամով:

9. **Ձեռնարկության Ա արտադրանքի շուկայական գինը 60125 դրամ է, որի իրացումից հետո դրա գնի 16.7 տոկոսը կամ 1/6 մասը վճարվում է որպես ԱԱՀ: Այդ դեպքում արտադրանքի բացթողնման գինը կկազմի.**
ա. մոտ 70145.8,
բ. 70145,
գ. 70140,
դ. 70150:

10. **Տրված է, որ ձեռնարկության Ա արտադրանքի շուկայական գինը 47250 դրամ է, ԱԱՀ-ը՝ շուկայական գնի 1/6 մասը կամ 16.7 տոկոսը, իսկ ակցիզային հարկը գնի 10 տոկոսն է: Դա նշանակում է, որ Ա արտադրանքի բացթողնման գինը կկազմի.**
ա. 50000,
բ. 55000,
գ. 59850,
դ. 60000:

Հիմնական հասկացություններ

Արժեք
Գին
Գնային խտրականություն
Գների կարգավորման ուղղակի մեթոդ
Գների կարգավորման անուղղակի մեթոդ
Շուկայական գին
Բորսայական գնանշումներ
Հաստատուն գներ
Սեզոնային գներ
Պայմանագրային գներ
Համաշխարհային գին
Անվնասաբերություն
Նպատակային շահույթ
Արժեքավորման մեթոդ
Խթանող գործառույթ
Գնային քաղաքականություն

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ մեթոդներով է կարգավորվում գինը:
2. Ո՞րն է գնի կարգավորման ուղղակի մեթոդի էությունը:
3. Ո՞րն է գնի կարգավորման անուղղակի մեթոդի էությունը:
4. Ի՞նչ առանձնահատկություններ ունեն գնագոյացման տեսությունները:
5. Որո՞նք են գնագոյացման սկզբունքները:
6. Որո՞նք են գնագոյացման մեթոդները:
7. Որո՞նք են գների հիմնական գործառույթները:
8. Որո՞նք են գների վրա ազդող գործոնները:
9. Որո՞նք են գինը արժեքից շեղող գործոնները:
10. Հիմնավորեք գների խթանող գործառույթի էությունը:
11. Հիմնավորեք կառավարության ընդունած որոշումների ու գնագոյացման ռազմավարության փոխկապվածությունը և սոցիալ-տնտեսական նշանակությունը:
12. Ըստ ծախսման ուղղությունների՝ հիմնավորեք ծախսային և նորմատիվային մեթոդների էությունը:
13. Հիմնավորեք ապրանքի գնի արժեքավորման մեթոդի նշանակությունը ձեռնարկության շահույթի և սպառողների խնայողությունների աճի ապահովման գործում:
14. Որո՞նք են գնագոյացման պետական կարգավորման արդի հիմնախնդիրները:
15. Որո՞նք են գնագոյացման քաղաքականության կատարելագործման հիմնական ուղղությունները:

ԳԼՈՒԽ 19

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՃ ԺԱՄԿԵՏՈՒՄ

Այս գլխում դիտարկվում են հետևյալ հարցերը.

- Մակրոտնտեսական հավասարակշռության հաստատման պայմանները և մեխանիզմը կարճ ժամկետում:
- Տնտեսության հավասարակշռության ձեռք բերումը ոչ լրիվ զբաղվածության պայմաններում:
- Կարճաժամկետ մակրոտնտեսական հավասարակշռության IS-LM մոդելը որպես ամբողջական պահանջարկի տեսություն:
- IS-LM մոդելի օգտագործումը, տնտեսական քաղաքականության ազդեցությունը ազգային արդյունքի արտադրության վրա գնահատելու համար:

19.1. IS-LM մոդելի ընդհանուր բնութագիրը

1929-33 թվականները աշխարհի զարգացած երկրների տնտեսական պատմության մեջ հայտնի են որպես Մեծ ճգնաժամի տարիներ: Մասնավորապես, ԱՄՆ տնտեսությունը 1933թ. բնութագրվում էր հետևյալ տվյալներով՝ գործազրկության մակարդակը 25% էր, իրական ՀՆԱ-ն 30%-ով ցածր էր 1928թ. մակարդակից, սպառողական գները 1929-33թթ. նվազել էին 25%-ով, ներդրումները 1929թ. համեմատությամբ 1932թ. կրճատվել էին շուրջ 9 անգամ:

Տնտեսական ճգնաժամը ուղեկցվում էր պասիվ տնտեսական քաղաքականությամբ: ԱՄՆ ֆեդերալ պահուստային համակարգը (ՖՊՀ) միջոցներ չէր ձեռնարկում բանկերի սնանկացման հետևանքով առաջացած փողի առաջարկի կրճատումը մեղմելու և կանխելու համար, իրականացվում էր բյուջեն հաշվեկշռելու քաղաքականություն և բարձրացվում էին հարկերը՝ ծախսերը ֆինանսավորելու նպատակով: Վերջինս ունենալով զսպող արդյունք՝ էլ ավելի էր խորացնում բյուջեի պակասուրդը: Դասական տնտեսագիտությունը մինչ այդ պնդում էր, որ ազգային արդյունքը (ՀՆԱ) կախված է արտադրության գործոնների առաջարկից և գոյություն ունեցող տեխնոլոգիայից: Մեծ ճգնաժամի տարիներին նշված գործոնները էական փոփոխություն չէին կրել, հետևաբար դրանցով չէին

պայմանավորված ՀՆԱ կտրուկ կրճատումը, գործազրկության մակարդակի աննախադեպ բարձրացումը: Փաստորեն այդ տարիներին դասական տնտեսագիտության մեջ բացակայում էր այն տեսությունը, որը կարող էր բացատրել տնտեսական ճգնաժամի առաջացման պատճառները և առաջարկել դրա հետևանքների հաղթահարման, ծագած հիմնահարցերի լուծման միջոցառումների համակարգ: Մեծ ճգնաժամը խթանեց տնտեսագիտության առաջընթացը: 1936թ. լույս տեսավ անգլիացի տնտեսագետ Ջ.Մ.Քեյնսի «Զբաղվածության, փողի և տոկոսի ընդհանուր տեսություն» աշխատությունը, որում առաջարկված՝ տնտեսությունը վերլուծելու նոր մեթոդներն ու միջոցները դրեցին քեյնսյան տնտեսական տեսության հիմքը: Նոր տնտեսական տեսությունը կարողացավ հիմնավորել, որ անբավարար ամբողջական պահանջարկն է եկամուտների ցածր մակարդակի ու գործազրկության բարձր մակարդակի պատճառը և առաջարկեց պետական քաղաքականության միջոցառումների համակարգ, որոնք կարող էին մեղմել ճգնաժամի հետևանքները և հաղթահարել դրանք: Ըստ քեյնսյան տեսության՝ մակրոտնտեսական հավասարակշռության կարելի է հասնել անգամ ոչ լրիվ զբաղվածության պայմաններում՝ ակտիվորեն ազդելով ամբողջական պահանջարկի վրա, փոփոխելով վերջինս այնպես, որ հավասարվի ամբողջական առաջարկին: Մակրոտնտեսական այդպիսի հավասարակշռությունը կարճաժամկետ է, իսկ մենք գիտենք, որ կարճ ժամկետում գները համեմատաբար կայուն են: Հետևաբար, քեյնսյան տեսությունը, ուսումնասիրելով և վերլուծելով տնտեսական տատանումները կարճ ժամկետում, դասական տեսությանը այլընտրանքային տեսություն է առաջարկում՝ ապացուցելով, որ կայուն գների պայմաններում ամբողջական եկամտի մեծությունը որոշվում է ամբողջական պահանջարկով, իսկ վերջինս էլ ենթակա է տնտեսական ակտիվ քաղաքականության ազդեցությանը: Ամբողջական պահանջարկի վրա ազդելով՝ տնտեսական քաղաքականությունը կարող է կայունացնել տնտեսությունը անկումների և ինֆլյացիայի փուլերում:

Անբավարար պահանջարկը ենթադրում է գործազրկության աճ, չծանրաբեռնված հզորություններ և չարտադրված արտադրանք, ներուժային ՀՆԱ-ին զիջող ՀՆԱ: Ավելցուկային պահանջարկը՝ գների մակարդակի և դրամական եկամուտների ընդհանուր աճ, որը չի ազդում կամ շատ քիչ է ազդում իրական եկամուտների և թողարկման մակարդակի վրա: Կայունացնող քաղաքականության նպատակն է նվազեցնել այդպիսի շեղումները, այսինքն՝ ամբողջական պահանջարկը համապատասխանեցնել տնտեսության արտադրական ներուժին: Կայունացումը արտադրության և զբաղվածության վերելքների և անկումների պարզ հարթեցում չէ: Զարգացող տնտեսությունում պահանջարկը պետք է աճի՝ ապահովելու համար լրիվ զբաղվածություն և հզորությունների լրիվ օգտագործում կայուն գների պայմաններում:

Այսպիսով, նոր տեսությունը հատուկ ուշադրություն էր դարձնում ամբողջական պահանջարկին և նրա տատանումներին, այդ տատանումներն առաջացնող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության միջոցառումներին:

Ամբողջական պահանջարկի մոդելը, որը Քեյնսի տեսության հիման վրա մշակվել է անգլիացի տնտեսագետ Ջ.Հիքսի կողմից, կոչվում է IS-LM մոդել և ընկած է ժամանակակից մակրոտնտեսագիտության հիմքում: Այս մոդելը.

1. իրար է կապում տնտեսության իրական հատվածը, որտեղ փողը ոչ մի դեր չի խաղում, և դրամական հատվածը,
2. տնտեսությունը մեկնաբանում է որպես ապրանքների ու ծառայությունների և փողի շուկաներից կազմված համակարգ,
3. օգտագործվում է՝ վերլուծելու համար նշված շուկաներում միաժամանակյա հավասարակշռության հաստատման մեխանիզմը:

IS-LM մոդելը բացահայտում է, թե կարճ ժամկետում ինչն է առաջացնում ամբողջական արդյունքի փոփոխություններ և ցույց է տալիս, թե ինչ են նշանակում ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժերը: Ինչպես երևում է 19.1 նկարից, գների կայուն մակարդակի պայմաններում, կարճ ժամկետում, ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժերն են որոշում եկամտի մակարդակի փոփոխությունները:



Գների կայուն մակարդակում ամբողջական թողարկումը և եկամուտը տատանվում են ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժի պատճառով:

Նկ.19.1. Ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժերը

IS-LM մոդելը ընդգրկում է երկու կորեր՝ IS և LM: IS նշանակում է՝ «ներդրումներ» և «խնայողություններ»: IS կորը արտացոլում է իրավիճակը ապրանքների և ծառայությունների շուկայում, իսկ LM կորը՝ փողի շուկայում: LM նշանակում է՝ «իրացվելիություն» և «փող»: Ապրանքների և փողի շուկաները փոխկապված են և փոխազդում են տոկոսադրույքի միջոցով՝ քանի որ վերջինս ազդում է ինչպես ներդրումների, այնպես էլ փողի պահանջարկի վրա:

IS-LM մոդելը ցույց է տալիս, թե ինչպես է նշված շուկաների փոխազդեցությունը որոշում ամբողջական պահանջարկը, և ինչպես է տոկոսադրույքի ու եկամտի փոխկապվածությունը արտացոլում ապրանքների և փողի շուկաների մակրոտնտեսական կարճաժամկետ հավասարակշռությունը:

19.2. Ապրանքների և ծառայությունների շուկան: IS կորի կառուցումը

IS կորը արտացոլում է ապրանքների և ծառայությունների շուկայում տոկոսադրույքի և եկամտի կապը, փոխհարաբերությունը: IS կորի յուրաքանչյուր կետ ցույց է տալիս եկամտի և տոկոսադրույքի այնպիսի զույգ, որի պայմաններում հավասարակշռվում է ապրանքների և ծառայությունների շուկան կարճ ժամկետում:

Հավասարակշռված եկամտի ձևավորման մեխանիզմը դիտարկենք ապրանքների պահանջարկի պարզագույն տեսության ուսումնասիրության միջոցով, տեսություն, որը ստացել է «քեյնսյան խաչ» անվանումը:

Պլանավորված ծախսեր: Քեյնսյան խաչը կառուցելու համար դիտարկենք այն գործոնները, որոնք որոշում են պլանավորված ծախսերի մեծությունը: Պլանավորված են համարվում այն ծախսերը, որոնք տնային տնտեսությունները, ձեռնարկությունները և պետությունը նախատեսում են ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար: Փաստացի ծախսերը պլանավորված ծախսերից տարբերվում են այն դեպքում, երբ ձեռնարկությունները ստիպված չնախատեսված ներդրումներ են կատարում պաշարներում, այսինքն, երբ ձեռնարկությունները ավելացնում կամ պակասեցնում են իրենց ապրանքանյութական պաշարները՝ ի պատասխան վաճառքի ծավալների անսպասելի կրճատման կամ ավելացման: Վերլուծության պարզության նպատակով ենթադրենք՝ տնտեսությունը փակ է, այսինքն՝ զուտ արտահանումը հավասար է 0-ի: Պլանավորված ծախսերը նշանակենք E տառով: Պլանավորված ծախսերը, փաստորեն, պլանավորված ամբողջական պահանջարկն է երկրում: Պլանավորված ծախսերի գումարը հավասար է պլանավորված սպառման (C), պլանավորված ներդրումների (I) և պլանավորված պետական ծախսերի (G) գումարին:

$$E=C+I+G$$

Գիտենք, որ սպառումը կախված է տնօրինվող (Y-T) եկամտից և ներկայացվում է C=C(Y-T) տեսքով, ընդունում ենք, որ ներդրումները հաստատագրված են ($I=\bar{I}$), իսկ հարկաբյուջետային քաղաքականությունը՝ անփոփոխ՝ $G=\bar{G}$, և $T=\bar{T}$: Միավորելով նշված հավասարումները՝ կստանանք $E=C(Y-\bar{T})+\bar{I}+\bar{G}$: Այս հավասարումը ցույց է տալիս, որ պլանավորված ծախսերը կախված են ազգային արդյունքից (Y), պլանավորված ներդրումների հաստատագրված մակարդակից և հարկաբյուջետային քաղաքականության արտածին (էկզոգեն) փոփոխականներից (G և T): Պլանավորված ծախսերի գրաֆիկը ուղիղ գիծ է, որն ունի վերընթաց տեսք: Վերջինս բացատրվում է այն հանգամանքով, որ ամբողջական արդյունքի ավելացումը ավելացնում է նաև սպառումը: Եթե ազգային արդյունքի ավելացումը ժամանակավոր է, ապա սպառումը կավելանա ավելի քիչ, քան ՀՆԱ-ն: Եթե ՀՆԱ ավելացումը անընդհատ է, ապա սպառումը կավելանա ՀՆԱ ավելացմանը համամասնորեն: Քանի որ ենթադրվում է, որ ապագա իրավիճակը արտածին է, ապա եկամտի փոփո-

խությունները միշտ դիտարկվում են ժամանակավոր, այդ պատճառով էլ և՛ սպառումը, և՛ պլանավորված ծախսերը կավելանան ավելի քիչ, քան ՀՆԱ-ն: Հետևաբար, պլանավորված ծախսերի ֆունկցիայի գրաֆիկի թեքության անկյունը 45^0–ից փոքր կլինի:



E-ի գրաֆիկը վերընթաց գիծ է, քանի որ եկամտի ավելացումը ավելացնում է սպառումը, իսկ վերջինս էլ՝ պլանավորված ծախսերը: E-ի գրաֆիկի թեքության անկյունը կախված է MPC-ից, որը ցույց է տալիս, թե որքան են ավելանում սպառումը և պլանավորված ծախսերը, եթե եկամուտը ավելանում է մեկ միավորով:

Նկ.19.2. Պլանավորված ծախսերի գրաֆիկը

Տնտեսությունը կգտնվի հավասարակշռության վիճակում, եթե պլանավորված ծախսերը (E) հավասարվեն փաստացի ծախսերին՝ ՀՆԱ-ին (Y): E=Y պայմանը կատարվում է անկյան կիսորդը ներկայացնող գծի յուրաքանչյուր կետում: Եթե ուղղահայաց առանցքի վրա ցույց տանք պլանավորված ծախսերը, իսկ հորիզոնական առանցքի վրա՝ փաստացի ծախսերը՝ ազգային արդյունքը, և կառուցենք նաև պլանավորված ծախսերի գրաֆիկը, ապա ստացված պատկերը կլինի քեյնսյան խաչը (տե՛ս նկ.19.3):



A կետում E=Y: Եկամտի Y_1 մակարդակի պայմաններում պլանավորված ծախսերը՝ E_1, գերազանցում են փաստացի ծախսերը, և ձեռնարկությունները ավելացնում են արտադրանքի ծավալները, իսկ եկամտի Y_2 մակարդակի պայմաններում E_2-ը զիջում է փաստացի ծախսերին և ձեռնարկությունները կրճատում են արտադրության ծավալները:

Նկ. 19.3. Հավասարակշռության հաստատումը քեյնսյան խաչում

1*- պաշարների չնախատեսված կրճատում,
2* - պաշարների չնախատեսված ավելացում:

A կետում տնտեսությունը հավասարակշռության վիճակում է, քանի որ արտադրված արտադրանքի ողջ քանակությունը՝ ՀՆԱ-ն, ճշտությամբ հավասար է գնված ապրանքների ողջ քանակությանը (C+I+G)-ին: Միա-

ժամանակ, A կետում հավասար են պլանավորված և՛ փաստացի ներդրումները, և՛ խնայողությունները, այսինքն՝ հաստատված է մակրոտնտեսական հավասարակշռություն:

Այժմ դիտարկենք, թե ինչպես է ձեռք բերվում այդ հավասարակշռությունը, որն է հավասարակշռության հաստատման մեխանիզմը:

Հավասարակշռության վիճակի հասնելու գործընթացում կարևոր դեր ունեն ապրանքանյութական պաշարները: Եթե ձեռնարկությունները արտադրում են ավելի, քան պլանավորել է գնել հասարակությունը, ապա ապրանքանյութական պաշարներն ավելանում են, իսկ եթե ձեռնարկությունները արտադրում են ավելի քիչ, քան պլանավորել է գնել հասարակությունը, ապա ապրանքանյութական պաշարները նվազում են: Ապրանքանյութական պաշարների այսպիսի չնախատեսված փոփոխությունները փոփոխում են արտադրության մակարդակի վերաբերյալ ձեռնարկությունների որոշումները:

Հավասարակշռության հաստատման մեխանիզմը դիտարկենք 19.3 նկարի օգնությամբ:

Երբ փաստացի ծախսերը հավասար են Y_1-ի, ապա պլանավորված ծախսերը (E_1) գերազանցում են արտադրված արտադրանքը: Պլանավորված ամբողջական պահանջարկը բավարարելու նպատակով ձեռնարկությունները ստիպված պետք է վաճառեն ավելի շատ, քան արտադրել են: Դա նրանց կհաջողվի ապրանքանյութական պաշարները օգտագործելու ճանապարհով, և վերջիններս չնախատեսված ձևով կկրճատվեն: Չնախատեսված կրճատում թույլ չտալու համար ձեռնարկությունները կվարձեն լրացուցիչ աշխատողներ, կավելացնեն արտադրության ծավալները, ՀՆԱ-ն կսկսի ավելանալ մինչև կհասնի Y_0 մակարդակին: Այսինքն, կհաստատվի հավասարակշռություն՝ AD=AS: Երբ արտադրված արտադրանքը հավասար է Y_2 -ի, իսկ հասարակությունը նախատեսել է գնել E_2 –ին հավասար արտադրանք, ապա ապրանքանյութական պաշարներն ավելանում են, քանի որ ձեռնարկությունները չեն կարողանում վաճառել այնքան, ինչքան արտադրել են: Չնախատեսված կուտակում թույլ չտալու համար ձեռնարկությունները ազատում են աշխատողներին, կրճատում են արտադրանքը, մինչև ձեռք է բերվում Y_0 արտադրության մակարդակը: Այսինքն, նորից AD=AS: Այսպիսով, քեյնսյան խաչը ցույց է տալիս, թե ինչպես է որոշվում հավասարակշռված եկամուտը պլանավորված ներդրումների տրված մակարդակի և անփոփոխ հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում: Օգտվելով քեյնսյան խաչի մոդելից՝ կարող ենք ցույց տալ, թե ինչպես կփոխվի հավասարակշռված եկամուտը, եթե նշված արտածին փոփոխականներից մեկը փոխվի:

Հարկաբյուջետային քաղաքականությունը և բազմարկիչները

Քեյնսյան խաչի մոդելի օգնությամբ պարզենք, թե ինչպես է հարկաբյուջետային քաղաքականությունը ազդում եկամտի մակարդակի վրա: Նախ դիտարկենք պետական ծախսերի փոփոխությունը: Ենթադրենք՝ պետությունը որոշում է ավելացնել պետական ծախսերը ΔG չափով:

Քանի որ պետական ծախսերը պլանավորված ծախսերի մի մասն են, ապա դրանց ավելացումը տրված եկամտի պայմաններում ավելացնում է պլանավորված ծախսերը ΔG չափով, և E_1 գիծը տեղաշարժվում է վերև ΔG չափով (նկ.19.4):



ΔG չափով պետական ծախսերի ավելացումը տեղաշարժել է պլանավորված ծախսերի գիծը վերև: Հավասարակշռությունը տեղաշարժվում է A կետից B կետ և հավասարակշռված եկամուտը ավելացնում է Y_1-ից Y_2: ΔY-ը գերազանցում է ΔG-ն, ինչը բազմարկչի արդյունք է:

Նկ.19.4.Պետական ծախսերի ավելացումը քեյնսյան խաչում

Հավասարակշռությունը տնտեսությունում տեղաշարժվում է A կետից B կետ, և հավասարակշռված եկամուտը ΔY չափով ավելանում է: ΔY/ΔG հարաբերությունը անվանում են պետական ծախսերի բազմարկիչ: Այն ցույց է տալիս, թե որքան է ավելանում (նվազում) եկամուտը, եթե պետական ծախսերը ավելանում են (կրճատվում են) մեկ միավորով: Ինչպես երևում է գրաֆիկից, ΔY-ը մեծ է ΔG-ից, այսինքն՝ եկամուտը ավելանում է ավելի մեծ չափով, քան ավելացել են պետական ծախսերը: Սա բազմարկչի ազդեցության արդյունքն է: Հարց է առաջանում, թե ինչպես է հարկաբյուջետային քաղաքականությունը եկամտի վրա ազդում բազմարկչային արդյունքի միջոցով: Բազմարկչի ազդեցությունը հիմնվում է 2 փաստի վրա.

1. Տնտեսությանը բնորոշ են ծախսերի և եկամուտների կրկնվող անընդհատ հոսքերը: Պետության ծախսած 1 դրամը, օրինակ, որպես եկամուտ, ստանում է պետական ծառայողը:
2. Եկամտի յուրաքանչյուր փոփոխություն նույն ուղղությամբ փոփոխում է նաև սպառումը:

Հետևաբար, պետական ծախսերի սկզբնական փոփոխությունը առաջ է բերում ռեակցիա, որը թեկուզ և մարում է յուրաքանչյուր հաջորդ փուլում, բայց վերջնահաշվարկում բերում է ՀՆԱ բազմակի ավելացման:

Պետական ծախսերի բազմարկչի մեծությունը հաշվարկելու համար քայլ առ քայլ հետևենք եկամտի փոփոխությանը:

Գործընթացը սկսվում է, երբ պետական ծախսերն ավելանում են ΔG-ով և նույնքանով ավելանում է ՀՆԱ-ն: ՀՆԱ-ի ավելացումը ΔG չափով սպառումը առաջին անգամ ավելացնում է MPC x ΔG չափով: Սպառման այս ավելացումը պլանավորված ծախսերը և եկամուտը ավելացնում է (ΔG x MPC) չափով: Եկամտի ավելացումը սպառումը երկրորդ անգամ ավելացնում է (ΔG x MPC)x MPC չափով:

Անցումը եկամտից սպառմանը, սպառումից եկամտին շարունակվում է մինչև մարումը: Պետական ծախսերի ավելացման արդյունքում ստացված ընդհանուր արդյունքը ներկայացնենք սխեմատիկ տեսքով:

Եկամտի առաջին փոփոխությունը = Δ G
Սպառման առաջին փոփոխությունը = Δ G x MPC
Սպառման երկրորդ փոփոխությունը = (Δ G x MPC)xMPC= Δ GxMPC^2
Սպառման երրորդ փոփոխությունը = (Δ G x MPC xMPC)xMPC= Δ GxMPC^3
Սպառման n-րդ փոփոխությունը = Δ G x MPC x MPC ….x= Δ GxMPC^n

ΔY = Δ G (1+MPC+MPC^2+MPC ^{3} +……)

Պետական ծախսերի բազմարկիչը հավասար է $\frac{\Delta Y}{\Delta G} = \frac{1}{1-MPC}$, քանի որ փակագծում նշվածը անվերջ փոքրացող երկրաչափական պրոգրեսիա է, և հանրահաշվական կանոնները թույլ են տալիս կատարել համապատասխան ձևափոխություն:

$\frac{1}{1-MPC}$ կոչվում է Քեյնսի պարզ բազմարկիչ:

Մենք գիտենք, որ (1-MPC)=MPS, որտեղ՝ MPS-ը խնայողության սահմանային հակումն է, հետևաբար կարող ենք գրել նաև, որ պետական ծախսերի բազմարկիչը հավասար է.

$$\frac{\Delta Y}{\Delta G} = \frac{1}{MPC}$$

Ենթադրենք՝ սպառման սահմանային հակումը հավասար է 0.75-ի: Պետական ծախսերի բազմարկիչը (Քեյնսի պարզ բազմարկիչ) հավասար կլինի $\frac{1}{1-0.75}$ = 4: Եթե պետական ծախսերն ավելանում են 1 դրամով, ապա ՀՆԱ-ն ավելանում է 4 դրամով:

Այժմ դիտարկենք, թե եկամտի վրա ինչպես է ազդում հարկերի փոփոխությունը: Ենթադրենք՝ ծախսերը ֆինանսավորելու նպատակով պետությունը որոշել է բարձրացնել հարկերը ΔT չափով: Հարկերի այս բարձրացումը ազդում է տնօրինվող եկամտի (Y-T) վրա և կրճատում է այն ΔT չափով: Տնօրինվող եկամտի կրճատումը ազդում է սպառման մակարդակի վրա, որը կրճատվում է ΔTxMPC չափով, արդյունքում կրճատվում են նաև պլանավորված ծախսերը և ամբողջական եկամուտը:

Հարկերի փոփոխությունը եկամտի վրա թողնում է բազմարկչի արդյունք այնպես, ինչպես պետական ծախսերի փոփոխությունը:

Հարկային բազմարկիչը նույն կերպ հաշվարկելիս ստանում ենք.

$\frac{\Delta Y}{\Delta T} = \frac{-MPC}{1-MPC}$: Եթե MPC=0.75, ապա հարկային բազմարկիչը հավասար կլինի՝ $\frac{-0.75}{1-0.75}$ = -3, դա նշանակում է, որ եթե պետությունը իջեցնի հարկերը 1 դրամով, ապա հավասարակշռված իրական ՀՆԱ-ն կավելանա 3 դրամով:

Պետք է հիշել, որ պետական ծախսերի և հարկերի բազմարկիչների ազդեցությունը ՀՆԱ-ի փոփոխությունների վրա տարբեր է: Հարկերի բազմարկչի ազդեցությունը ավելի թույլ է, քան ծախսերի բազմարկչինը: Սրանով էլ պայմանավորված է հարկաբյուջետային քաղաքականության գործիքների ընտրությունը տնտեսական պարբերաշրջանի տարբեր փուլերում: Դա մենք կքննարկենք տնտեսական քաղաքականության ազդեցությունը ներկայացնելիս:

Այժմ, երբ ծանոթացել ենք բազմարկիչների էությանը և ՀՆԱ-ի վրա դրանց ազդեցության մեխանիզմին, կարող ենք քեյնսյան խաչի մոդելի օգնությամբ պարզել, թե ինչպես է բազմարկիչը հավասարակշռված եկամտի մակարդակը փոփոխում՝ մինչև լրիվ զբաղվածության և արտադրության բնական մակարդակի ձեռքբերումը: Դա դիտարկենք նկ.19.5 -ի օգնությամբ:



1. Ինֆլյացիոն խզում

2. Ռեցեսիոն խզում

Նկ.19.5. Ինֆլյացիոն և ռեցեսիոն խզումների առաջացումը

Ինֆլյացիոն խզում է առաջանում, երբ ամբողջական պահանջարկը (պլանավորված ծախսերը) գերազանցում է ազգային արդյունքը:

<u>Ինֆլյացիոն</u> խզումը մի մեծություն է, որի չափով պետք է կրճատվի ամբողջական պահանջարկը՝ հավասարակշռված եկամուտը լրիվ զբաղվածության բնական մակարդակին իջեցնելու նպատակով:

Եթե փաստացի հավասարակշռված եկամուտը՝ Y_0-ն, մեծ է ներուժային եկամտից՝ Y_1*-ից, ապա ամբողջական պահանջարկը ավելցուկային է, որը առաջացնում է ինֆլյացիա: Գների մակարդակը բարձրանում է, քանի որ ձեռնարկությունները չեն կարողանում ավելացնել արտադրանքի ծավալները՝ բոլոր ռեսուրսների արդեն զբաղված լինելու պատճառով: Ինֆլյացիոն խզման հաղթահարումը պահանջում է զսպել ամբողջական պահանջարկը՝ անցում կատարել A կետից B_1 կետ:

Հավասարակշռված եկամտի կրճատումը՝

ΔY = ինֆլյացիոն խզման մեծություն x ծախսերի բազմարկիչ

Ռեցեսիոն խզում է առաջանում, երբ ամբողջական պահանջարկը (պլանավորված ծախսերը) քիչ է փաստացի ազգային արդյունքից:

<u>Ռեցեսիոն խզումը</u> մի մեծություն է, որի չափով պետք է ավելանա ամբողջական պահանջարկը՝ հավասարակշռված եկամուտը լրիվ զբաղվածության բնական մակարդակին բարձրացնելու համար: Եթե Y_0 -ն փոքր է Y^*_2-ից, ապա ամբողջական պահանջարկը անբավարար է, որը կաշկանդող ազդեցություն է թողնում տնտեսության վրա:

Որպեսզի հաղթահարվի ռեցեսիոն խզումը, պետք է խթանվի AD-ն, և հավասարակշռությունը A – ից տեղափոխվի B_2 կետ:

Հավասարակշռված եկամտի աճը՝

ΔY = ռեցեսիոնի խզման մեծություն x ծախսերի բազմարկիչ

IS կորի կառուցումը

Քեյնսյան խաչի մոդելում տոկոսադրույքը արտաքին (էկզոգեն) փոփոխական է, ձևավորվում է փողի շուկայում՝ հարաբերականորեն անկախ ապրանքների շուկայի հավասարակշռությունից:



Նկ. 19.6. IS կորի կառուցումը

Քեյնսյան խաչը ցույց է տալիս պլանավորված ամբողջական պահանջարկի և փաստացի եկամտի կապը կայուն տոկոսադրույքի պայմաններում, երբ պլանավորված ներդրումների մակարդակը կախված չէ տոկոսադրույքից և կայուն է: IS կորը կառուցելու համար ներմուծում ենք ամբողջական պահանջարկի վրա ազդող ևս մեկ գործոն՝ իրական տոկոսադրույքը: Տոկոսադրույքի փոփոխությունները հանգեցնում են ներդրումների ծավալի ու ամբողջական պահանջարկի փոփոխության:

Ներդրումային ծախսերը նոր մոդելում ներծին (էնդոգեն) են: Պլանավորված ներդրումները կլինեն այնքան ավելի քիչ, որքան ավելի բարձր կլինի իրական տոկոսադրույքը: Այսինքն՝ կապը պլանավորված ներդրումների և իրական տոկոսադրույքի, հետևաբար նաև պլանավորված ծախսերի և իրական տոկոսադրույքի միջև հակադարձ է: Ներդրումների գրաֆիկի թեքությունը կախված է տոկոսադրույքի նկատմամբ ներդրումների ճկունության աստիճանից: Եթե ներդրումների զգայունությունը մեծ է տոկոսադրույքի փոփոխությունների նկատմամբ, ապա ներդրումների կորը կլինի զառիկող, եթե արձագանքը թույլ է, ապա այդ կորը ուղղաձիգ է:

IS կորը կառուցվում է՝ օգտագործելով ներդրումների ֆունկցիայի և քեյնսյան խաչի գրաֆիկները և ցույց է տալիս, թե ինչպես են տոկոսադրույքի փոփոխությունները ազդում եկամտի մակարդակի վրա:

Քանի որ ներդրումների և տոկոսադրույքի կապը հակադարձ է, ապա ամենաբարձր տոկոսադրույքին (r_1) համապատասխանում է ներդրումների փոքր մակարդակը (I_1) և պլանավորված ծախսերի ամենացածր մակարդակը [E_1 (r_1)]: Ամենաքիչ պլանավորված ծախսերին համապատասխանում է հավասարակշռված եկամտի ամենացածր մակարդակը (Y_1): Ստացվում է, որ ամենաբարձր տոկոսադրույքին համապատասխանում է եկամտի ամենացածր մակարդակը:

Այսպիսով, IS կորի յուրաքանչյուր կետ ցույց է տալիս տոկոսադրույքի և հավասարակշռված եկամտի այնպիսի համադրում, որի պայմաններում հավասարակշռություն է հաստատվում ապրանքների շուկայում, կարճ ժամկետում: Պետք է հիշել, որ IS կորի յուրաքանչյուր կետում ներդրումները և խնայողությունները հավասար են:

IS կորի հանրահաշվական հավասարումը

IS կորի մասին ավելի շատ բան իմանալու համար ստանանք դրա հանրահաշվական հավասարումը, այսինքն՝ r –ի և Y-ի այն զույգերը, որոնք կբավարարեն Y=C(Y-T) + I (r) +G հավասարմանը:

Ենթադրենք՝ և՛ սպառման, և՛ ներդրումների ֆունկցիաները գծային են:

$C= a+b(Y-T)$, որտեղ՝ $T=T_o + tY$

$I=c-dr$

որտեղ՝ a,b,c, և d-ն դրական գործակիցներն են. b = MPC և $0 < b < 1$,
d –ն ցույց է տալիս, թե ինչպես են ներդրումներն արձագանքում տոկոսադրույքի փոփոխություններին: Բոլոր գրված ֆունկցիաների արժեքները տեղադրենք եկամուտների նույնության՝ Y-ի մեջ.

$Y= a + b (Y- (To +tY)) + c – dr + G = a + bY – b To – b t Y + c – dr +G$

Եթե հավասարումը լուծենք ըստ Y-ի, ապա կստանանք.

$$Y = \frac{a + c + G}{1 - b(1 - t)} - \frac{b}{1 - b(1 - t)} T_o - \frac{d}{1 - b(1 - t)} r$$

Եթե հավասարումը լուծենք ըստ r-ի, ապա կստանանք.

$$r = \frac{a + c + G}{d} - \frac{1 - b(1 - t)}{d} Y - \frac{b}{d} T_o$$

Ստացված հավասարումները թույլ են տալիս կատարել մի շարք հետևություններ.

- Քանի որ տոկոսադրույքի գործակիցը բացասական է, IS-ը ունի բացասական թեքություն, $\frac{1 - b(1 - t)}{d}$-ն բնութագրում է IS-ի թեքության անկյունը y-ի առանցքի նկատմամբ:
- Քանի որ G-ի գործակիցը դրական է, ապա պետական ծախսերի աճը տեղաշարժում է IS-ը աջ-վերև:
- Քանի որ T_o –ի գործակիցը բացասական է, ապա հարկերի ավելացումը տեղաշարժում է IS-ը ձախ –ներքև:

IS կորն ունի բացասական թեքություն, քանի որ բարձր տոկոսադրույքը կրճատում է ներդրումային ծախսերը, ամբողջական պահանջարկը, հետո նաև՝ հավասարակշռված եկամտի մակարդակը: Կորի թեքության անկյունը կախված է տոկոսադրույքի նկատմամբ ներդրումային ծախսերի զգայունությունից (d) և բազմարկչի (b) մեծությունից: Եթե ներդրումները շատ զգայուն են տոկոսադրույքի նկատմամբ, ապա եկամտի մակարդակը ավելի շատ կփոփոխվի տոկոսադրույքի փոքր փոփոխությունից, և IS կորը կլինի առավել զառիկող: IS-ը զառիկող կլինի նաև այն դեպքում, երբ b-ն (MPC-ն) մեծ է, երբ սահմանային հարկադրույքը՝ t-ն, մեծ չէ:

Հարկաբյուջետային քաղաքականությունը և IS կորի տեղաշարժերը

IS կորի յուրաքանչյուր կետ ցույց է տալիս հավասարակշռված եկամտի մակարդակը՝ տրված տոկոսադրույքի պայմաններում: Միաժամանակ, յուրաքանչյուր IS կոր կառուցվում է տրված հարկաբյուջետային քաղաքականության համար, այսինքն՝ արտածին և հաստատագրված պետական ծախսերի և հարկերի (G և T) համար: Երբ փոխվում են վերջիններս, ապա փոխվում է նաև հավասարակշռված եկամտի մակարդակը (դա դիտարկեցինք քեյնսյան խաչի մոդելն ուսումնասիրելիս), և տեղաշարժվում է IS կորը: IS կորի տեղաշարժը նշանակում է անփոփոխ տոկոսադրույքի պայմաններում եկամտի մակարդակի փոփոխություն և եկամտի անփոփոխ մակարդակի պայմաններում՝ տոկոսադրույքի փոփոխություն:

Ենթադրենք, պետությունը իրականացնում է խթանող հարկաբյուջետային քաղաքականություն և ավելացնում է պետական ծախսերը ΔG չափով: Անփոփոխ տոկոսադրույքի ($\bar{r}$) պայմաններում պլանավորված ներդրումները (I($\bar{r}$)) չեն փոխվում, բայց պլանավորված ծախսերն ավե-

լանում են ΔG չափով, իսկ հավասարակշռված եկամուտն ավելանում է $\Delta G \times \frac{1}{1-MPC}$ չափով: Նշված չափով IS կորը տեղաշարժվում է աջ-վերև: IS կորի տեղաշարժը աջ-վերև նշանակում է տրված տոկոսադրույքի ($\bar{r}$) պայմաններում հավասարակշռված եկամտի մակարդակի ավելացում $\frac{\Delta G}{1-MPC}$ չափով (նկ.19.7):



Նկ.19.7. IS կորի տեղաշարժը

Գծագրում (ա) ներկայացված է քեյնսյան խաչի մոդելը և պետական ծախսերի ավելացման արդյունքը՝ հավասարակշռված եկամտի մակարդակի ավելացումը $\Delta Y = \frac{\Delta G}{1-MPC}$ *չափով:*

Գծագրում (բ) անփոփոխ տոկոսադրույքի ($\bar{r}$) պայմաններում IS կորը տեղաշարժվել է $\frac{\Delta G}{1-MPC}$ *չափով, երբ հավասարակշռված եկամտի մակարդակը ավելացել է ապրանքների շուկայում իրականացվող խթանող քաղաքականության արդյունքում:*

Եթե պետությունը խթանող հարկաբյուջետային քաղաքականություն իրականացներ հարկերը կրճատելու միջոցով, ապա գրաֆիկորեն կունենայինք նույն պատկերը, ինչ որ՝ նախորդ դեպքում, միայն եկամտի

մակարդակի փոփոխությունը կլիներ $-\frac{\Delta T x MPC}{1-MPC}$ չափով, և IS-ն էլ աջ-վերև կտեղաշարժվեր նշված չափով: Պետության զսպող, կաշկանդող հարկաբյուջետային քաղաքականությունը կրճատում է ամբողջական պահանջարկը՝ պլանավորված ծախսերը, հետո նաև՝ ամբողջական եկամուտը, և IS կորը տեղաշարժվում է ձախ –ներքև:

19.3. Փողի շուկան և LM կորի կառուցումը

IS-LM մոդելի երկրորդ կորը (LM) վերաբերում է փողի շուկային: Փողի շուկայի ուսումնասիրությունները թույլ են տալիս պարզել, թե ինչպես է ձևավորվում հավասարակշռված տոկոսադրույքը, ինչն է որոշում և փոփոխում վերջինիս մակարդակը, տոկոսադրույքն ինչպես է ազդում հավասարակշռված եկամտի և զբաղվածության մակարդակի վրա: Այսպիսով, անհրաժեշտ է դառնում վերլուծել նաև ֆինանսական ակտիվների շուկաները և բացահայտել ապրանքների և ֆինանսական ակտիվների շուկաների փոխազդեցությունները:

Ակտիվի շուկաները այն շուկաներն են, որտեղ վաճառվում կամ գնվում է փող, փոխառություն, արժեթղթեր, հող և անշարժ գույք: Վերլուծության պարզության նպատակով, ակտիվները բաժանենք 2 մասի՝ փող և տոկոսային եկամուտ բերող ակտիվներ և ուսումնասիրենք ակտիվների այն շուկան, որտեղ հիմնական տարրեր են փողը և փոխառությունը:

LM կորը ցույց է տալիս հավասարակշռված տոկոսադրույքի և ամբողջական եկամտի կապը փողի շուկայում: Որպեսզի հասկանանք այդ կախվածությունը, ծանոթանանք տոկոսադրույքի պարզագույն տեսությանը, որը կոչվում է իրացվելիության նախընտրելիության տեսություն: Այս տեսությունը հիմք է հանդիսանում LM կորը կառուցելու համար: Տեսությունը բացատրում է, թե ինչպես են փողի իրական պաշարի առաջարկն ու պահանջարկը որոշում հավասարակշռված տոկոսադրույքը: Իրացվելիության նախընտրելիության տեսությունը փողի պահանջարկի քեյնսյան տեսությունն է, որն առանձնացնում է փողը կանխիկ պահելու երեք դրդապատճառ.

1. տրանսակցիոն (ընթացիկ գործարքներ կատարելու համար անհրաժեշտ կանխիկ փող)
2. նախազգուշական (որոշակի գումարի կանխիկ փող պահելու անհրաժեշտություն՝ չնախատեսված գնումների համար)
3. սպեկուլյատիվ (այլ ակտիվներ ձեռք բերելու համար անհրաժեշտ կանխիկ փող):

Փողի սպեկուլյատիվ պահանջարկը հիմնված է իրական տոկոսադրույքի և փոխառության գնի միջև առկա հակադարձ կապի վրա: Եթե իրական տոկոսադրույքը բարձրանում է, ապա փոխառության գինը

իջնում է, դրա պահանջարկն ավելանում է, ինչը բերում է կանխիկ փողի պահանջարկի նվազման:

Այսպիսով, հակադարձ կապ կա նաև իրական տոկոսադրույքի և փողի իրական պաշարի պահանջարկի միջև:

Փողի առաջարկը (M) կարգավորվում է Կենտրոնական բանկի կողմից, հետևաբար այն մոդել է մուտք արվում որպես էկզոգեն, տրված փոփոխական: Քանի որ մենք վերլուծում ենք տնտեսությունը կարճ ժամկետում, ապա գների մակարդակը (P) կայուն է, արդյունքում՝ փողի իրական պաշարի ($\frac{M}{P}$) առաջարկը հայտնի մեծություն է $(\frac{M}{P})^s = \frac{M}{\bar{P}}$: Այստեղից բխում է, որ փողի շուկայում փողի իրական պաշարի առաջարկը տոկոսադրույքից կախված չէ և գրաֆիկորեն ուղիղ գիծ է:

Այժմ դիտարկենք փողի իրական պաշարի պահանջարկը:

Ժամանակի յուրաքանչյուր պահի տնտեսավարողը պետք է որոշի ինչպես բաշխել իր ֆինանսական ակտիվները երկու այլընտրանքային ակտիվների՝ կանխիկ փողի և փոխառության միջև: Որքան շատ փոխառություն ձեռք բերի գործակալը, այնքան ավելի շատ տոկոսային եկամուտ կստանա, և որքան շատ կանխիկ փող ունենա տնտեսավարողը, այնքան ավելի հեշտ կլինի ցանկացած պահի գնումներ կատարելը: Ընտրությունը կանխիկ փողի՝ առավել իրացվելի, բայց եկամուտ չբերող ակտիվի և փոխառության՝ եկամուտ բերող, բայց պակաս իրացվելի ակտիվի միջև ֆինանսական ճամպրուկի կազմի և կառուցվածքի ընտրություն է:

Փողի իրական պաշարի պահանջարկը կախված է տնտեսավարողի իրական եկամուտներից և տոկոսադրույքից, քանի որ վերջինս կանխիկ փող պահելու «ծախսն» է, այն եկամուտը, որից ստիպված ենք լինում հրաժարվել՝ կանխիկ փող պահելով, ի տարբերություն տոկոսային եկամուտ բերող մյուս ակտիվների: Որքան բարձր է տոկոսադրույքը, այնքան «թանկ» է կանխիկ փողը պահելը և այնքան փոքր է կանխիկ փողի իրական պաշարի պահանջարկը՝ եկամտի յուրաքանչյուր տրված մակարդակի պայմաններում: Ասվածից կարելի է եզրակացնել, որ փողի իրական պաշարի՝ տոկոսադրույքից կախված պահանջարկի հավասարումը կարելի է գրել այսպես՝ $(\frac{M}{P})^D = L(r)$, որտեղ՝ L ֆունկցիան նշանակում է իրացվելի ակտիվ՝ փող: Այս հավասարումը ցույց է տալիս, որ փողի պահանջարկի մեծությունը ֆունկցիա է իրական տոկոսադրույքից: Համեմատելով փողի իրական պաշարի առաջարկի և փողի իրական պաշարի պահանջարկի հավասարումները, կարող ենք գծել փողի շուկայի գրաֆիկական պատկերը:

$\bar{M}/\bar{P}$

Տոկոսադրույքը փոփոխվում է այնքան ժամանակ, քանի դեռ

Հավասարակշռված տոկոսադրույք

.....

M/P

Նկ.19.8. Իրացվելիության նախընտրելիության տեսության մոդելի գրաֆիկական պատկերը

Իրացվելիության նախընտրելիության տեսության համաձայն՝ տոկոսադրույքի փոփոխությունը հանգեցնում է փողի շուկայի հավասարակշռության: Տոկոսադրույքը ձգտում է հավասարակշռության, քանի որ տնտեսական գործակալները իրենց ակտիվների կառուցվածքը փոփոխում են հետևյալ սխեմայով. եթե տոկոսադրույքը շատ բարձր է, ապա փողի իրական պաշարի ավելցուկ ունեցողները ձգտում են իրենց տոկոս չբերող եկամուտները փոխարինել տոկոս բերող փոխառություններով կամ բանկային ավանդով: Բանկերը և վարկատուները վերոնշյալ ավելցուկային առաջարկին պատասխանում են տոկոսադրույքների իջեցմամբ: Հակառակ գործընթացն է տեղի ունենում, եթե տոկոսադրույքները շատ ցածր են: Միայն հավասարակշռված տոկոսադրույքի պայմաններում է փողի իրական պաշարի և մյուս ակտիվների հարաբերակցությունը օպտիմալ և փողի շուկան հավասարակշռված:

Իրացվելիության նախընտրելիության տեսությունը բխում է այն բանից, որ փողի առաջարկի ավելացումը իջեցնում է տոկոսադրույքը, և փողի առաջարկի կրճատումը բարձրացնում է տոկոսադրույքը:

Ենթադրենք, ԿԲ-ն կրճատում է փողի առաջարկը՝ M-ը: Փողի առաջարկի կրճատումը կկրճատի նաև փողի իրական պաշարի առաջարկը՝ $(\frac{M}{P})$ -ն, քանի որ կարճ ժամկետում գների մակարդակը՝ P-ն, կայուն է՝ $P=\bar{P}$: Փողի իրական պաշարի առաջարկը ներկայացնող ուղղահայացը կտեղաշարժվի ձախ, և իրական տոկոսադրույքը կբարձրանա (նկ.19.9):

LM կորը կառուցելու համար օգտվում ենք իրացվելիության նախընտրելիության տեսության և փողի իրական պաշարի պահանջարկի դասական տեսության, որը փողի պահանջարկը կապում է իրական եկամտի հետ և ներկայացվում է $(\frac{M}{P})^D = kY$ հավասարմամբ:

Փողի իրական պաշարի պահանջարկի քեյնսյան և դասական տեսությունների համադրումից կարելի է եզրակացնել, որ հավասարակշռված իրական տոկոսադրույքը, որը հավասարակշռում է փողի առաջարկն ու պահանջարկը, կախված է եկամտի մակարդակից: Արդեն նշել ենք, որ փողի իրական պաշարի պահանջարկի մեծության վրա

ազդում է ոչ միայն իրական տոկոսադրույքը, այլև եկամտի մակարդակը:



ԿԲ-ն փողի իրական պաշարը կրճատել է M_1-ից M_2: Դրա հետևանքով կրճատվել է փողի իրական պաշարի առաջարկը՝ $M_1/\bar{P}$-ից $M_2/\bar{P}$, և իրական տոկոսադրույքը բարձրացել է r_1-ից r_2:

Նկ.19.9. Փողի իրական պաշարի կրճատումը

Երբ վերջինս բարձր է, մեծ են ծախսերը, տնտեսական գործակալներին ավելի շատ փող է անհրաժեշտ՝ ծախսերը ֆինանսավորելու համար, և փողի իրական պաշարի պահանջարկը մեծ է: Այսինքն, եկամտի բարձր մակարդակը ենթադրում է մեծ պահանջարկ փողի իրական պաշարի նկատմամբ: Այսպիսով, փողի իրական պաշարի պահանջարկի լրիվ հավասարումը կունենա հետևյալ տեսքը.

$$\left(\frac{M}{P}\right)^D = L(r,Y)$$

(-) (+)

որտեղ՝ r –ը իրական տոկոսադրույքն է, իսկ Y-ը իրական եկամուտն է:

Փողի իրական պաշարի պահանջարկը ուղիղ կապով կապված է եկամտի և հակադարձ կապով՝ տոկոսադրույքի հետ:

LM կորը ցույց է տալիս փողի շուկայում հավասարակշռված տոկոսադրույքի և եկամտի կապը կարճ ժամկետում:

Տեսնենք, թե ինչ կկատարվի իրական հավասարակշռված տոկոսադրույքի հետ, եթե եկամտի մեծությունը փոփոխվի: Ենթադրենք, ազգային արդյունքը՝ Y-ը, ավելացել է Y_1-ից մինչև Y_2: Այդ դեպքում փողի իրական պաշարի պահանջարկը կավելանա, և փողի շուկայում փողի իրական պաշարի պահանջարկի կորը կտեղաշարժվի աջ-վերև: Դրա հետևանքով իրական հավասարակշռված տոկոսադրույքը կբարձրանա (նկ.19.10 ա):

19.10 ա) գրաֆիկում պատկերված է փողի իրական պաշարի շուկան: Եկամտի աճը Y_1-ից Y_2 բարձրացնում է հավասարակշռված տոկոսադրույքը r_1–r_2: 19.10 բ) գրաֆիկում ներկայացված է LM կորը: Մեծ եկամտին՝ Y_2, համապատասխանում է բարձր տոկոսադրույք՝ r_2, և ցածր եկամտին՝ Y_1, համապատասխանում է ցածր տոկոսադրույք՝ r_1:

<u>LM կորի յուրաքանչյուր</u> կետ ցույց է տալիս հավասարակշռված իրական տոկոսադրույքի (r) և ամբողջական եկամտի (Y) այնպիսի համադրում, որի պայմաններում հավասարակշռություն է հաստատվում փողի շուկայում, կարճ ժամկետում: LM կորն ունի դրական թեքություն: Տոկոսադրույքի բարձրացումը առաջ է բերում փողի իրական պաշարի

պահանջարկի կրճատում: Որպեսզի փողի իրական պաշարի պահանջարկը հնարավոր լինի պահել փողի իրական պաշարի տրված հաստատագրված առաջարկին հավասար, եկամտի մակարդակը պետք է ավելանա: Հետևաբար, փողի իրական պաշարի շուկայի հավասարակշռությունը ենթադրում է, որ տոկոսադրույքի բարձրացումը ուղեկցվում է եկամտի մակարդակի ավելացմամբ:



Նկ.19.10. LM կորի կառուցումը

LM կորի հանրահաշվական հավասարումը

Ենթադրենք՝ փողի իրական պաշարի պահանջարկի կախվածությունը ցույց տվող ֆունկցիան գծային է և ունի հետևյալ տեսքը.

$$\left(\frac{M}{P}\right)^D = ey - fr$$

որտեղ՝ e-ն և f-ը դրական գործակիցներ են:

Եթե հավասարումը լուծենք ըստ r-ի, կստանանք.

$$r = \frac{e}{f}y - \frac{1}{f}\frac{M}{P}$$

Ստացված իրական տոկոսադրույքը ապահովում է փողի շուկայի հավասարակշռությունը ցանկացած տրված եկամտի և փողի իրական պաշարի առաջարկի դեպքում:

$\frac{e}{f}$ գործակիցը բնութագրում է LM կորի թեքության անկյունը:

LM կորի թեքությունը կախված է այն բանից, թե որքանով է փողի պահանջարկը ճկուն եկամտի և տոկոսադրույքի նկատմամբ: LM –ը կլինի հարաբերականորեն զառիկող, եթե.

1. զգայունությունը տոկոսադրույքի նկատմամբ մեծ է,
2. փողի իրական պաշարի պահանջարկի զգայունությունը ՀՆԱ-ի փոփոխության նկատմամբ (e-ն) փոքր է:

Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը LM կորի տեղաշարժերի վրա

Իրացվելիության նախընտրելիության տեսությունը ցույց է տալիս, որ հավասարակշռված տոկոսադրույքը կախված է նաև փողի առաջարկից: Այսինքն՝ յուրաքանչյուր LM կառուցվում է տրված դրամավարկային քաղաքականության համար, և եթե փոխվում է վերջինս, ապա տեղաշարժվում է LM կորը:

Ենթադրենք, ծախսերը ֆինանսավորելու նպատակով ԿԲ-ն ավելացրել է փողի առաջարկը: Դա առաջ կբերի փողի իրական պաշարի՝ ($\frac{M}{P}$) -ի առաջարկի ավելացում, քանի որ մեր կողմից քննարկվող կարճ ժամանակահատվածում գների մակարդակը կայուն է: Փողի իրական պաշարի առաջարկի ավելացումը առաջարկը ներկայացնող ուղղահայացը կտեղաշարժի դեպի աջ, և փողի շուկայում իրական հավասարակշռված տոկոսադրույքը կիջնի (նկ.19.11ա): Իրական հավասարակշռված տոկոսադրույքի իջեցումը անփոփոխ եկամտի պայմաններում նշանակում է LM կորի տեղաշարժ աջ-ներքև (նկ.19.11բ):

ա)



ա) Գրաֆիկում փողի առաջարկի ավելացումը M_1-ից մինչև M_2 իջեցրել է իրական հավասարակշռված տոկոսադրույքը r_1-ից մինչև r_2:

բ)



բ) Գրաֆիկում իրական տոկոսադրույքի իջեցումը արտահայտվել է LM կորի տեղաշարժով աջ-ներքև, որը նշանակում է՝ անփոփոխ տոկոսադրույքի պայմաններում եկամտի ավելացում:

Նկ.19.11. Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը LM կորի վրա

19.4. Հավասարակշռությունը կարճ ժամկետում

Ուսումնասիրելով ապրանքների և փողի շուկաների հավասարակշռության պայմաններն ու մեխանիզմը կարճ ժամկետի համար, կարող ենք անցնել այդ շուկաների կապը բացատրող IS-LM մոդելին: Ապրանքների և փողի շուկաները փոխկապված են, և այդ կապը ապահովում է իրական տոկոսադրույքը: Ապրանքների և ծառայությունների շուկայի հիմնական պարամետրը ազգային արդյունքն է՝ Y-ը: Y-ի մեծությունից է կախված փողի իրական պաշարի պահանջարկը, այսինքն՝ ազգային արդյունքի փոփոխությունը ապրանքների շուկայում առաջ է բերում փողի իրական պաշարի պահանջարկի փոփոխություն փողի շուկայում: Մյուս կողմից, փողի շուկայի հիմնական պարամետրը տոկոսադրույքն է: Տոկոսադրույքի փոփոխությունը փողի շուկայում առաջացնում է ներդրումային պահանջարկի փոփոխություն և ապրանքների շուկայում ազդում է պլանավորված ծախսերի՝ E-ի վրա: Պլանավորված ծախսերի փոփոխություններն ազդում են ազգային արդյունքի ծավալի վրա: Ապրանքների շուկայում հավասարակշռված ազգային արդյունքի՝ Y-ի ձևավորման մեխանիզմը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել այսպես.

$$\Delta r \rightarrow I(r) \rightarrow \Delta E \rightarrow \Delta Y$$

Փողի շուկայում հավասարակշռված իրական տոկոսադրույքի ձևավորման մեխանիզմը կարելի է սխեմատիկորեն ներկայացնել այսպես.

$$\Delta Y \rightarrow \Delta \left(\frac{M}{P}\right)^{D} \rightarrow \Delta r$$

Մենք ունենք IS-LM մոդելի 2 կորերի հավասարումները.

$$\text{(IS)} \qquad Y=C(Y-T)+I(r)+G$$
$$\text{(LM)} \qquad P=L(r, y)$$

Հարկաբյուջետային քաղաքականության փոփոխականները՝ T-ն և G-ն, դրամավարկային քաղաքականության փոփոխականը՝ M-ը, և գների մակարդակը արտածին են՝ $T=\bar{T}$, $G=\bar{G}$, $M=\bar{M}$, $P=\bar{P}$: Այս պայմաններում ապրանքների և փողի շուկաները միաժամանակ կգտնվեն հավասարակշռված վիճակում միայն մի դեպքում՝ IS և LM կորերի հատման A կետում (նկ.19.12):

A կետում տնտեսությունը գտնվում է հավասարակշռության վիճակում՝ գների տրված մակարդակի (կայուն) պայմաններում, քանի որ և՛ ապրանքների շուկան, և՛ փողի շուկան հավասարակշռության վիճակում են: Ապրանքների պահանջարկը հավասար է թողարկման ծավալին IS կորի վրա, և փողի իրական պաշարի պահանջարկը հավասար է փողի իրական պաշարի առաջարկին LM կորի վրա:

A կետում ձևավորվում է հավասարակշռված եկամտի և հավասարակշռված տոկոսադրույքի միակ զույգը, որը բավարարում է ապրանքների շուկայի և փողի շուկայի հավասարակշռության պայմաններին:



A կետում պլանավորված ծախսերը հավասար են փաստացի ծախսերին, և հավասարակշռված է ապրանքների շուկան, միաժամանակ A կետում փողի իրական պաշարի պահանջարկը հավասար է փողի իրական պաշարի առաջարկին, և հավասարակշռված է փողի շուկան:

Նկ. 19.12. IS-LM մոդելը

Երբ գների մակարդակը հաստատագրված է, ապա Y-ի հավասարակշռված արժեքը կլինի միակը: Հավասարակշռված իրական տոկոսադրույքի արժեքը հաշվարկելու համար կարելի է հավասարակշռված Y-ի արժեքը տեղադրել IS-ի կամ LM-ի հավասարման մեջ և այն լուծել ըստ r-ի:

Տնտեսագետները IS-LM մոդելը օգտագործում են տնտեսական քաղաքականության կարճաժամկետ փոփոխությունների ազդեցությունը ազգային արդյունքի վրա վերլուծելու համար:

19.5. Տնտեսական ակտիվության տատանումների բացատրությունը IS-LM մոդելի օգնությամբ

IS-LM մոդելը ցույց է տալիս հավասարակշռված եկամտի և հավասարակշռված տոկոսադրույքի ձևավորման մեխանիզմը, և կարճ ժամկետում մակրոտնտեսական հավասարակշռությունը, երբ, ըստ Ջ.Մ.Քեյնսի ենթադրության, գները կայուն են:

Եկամտի և տոկոսադրույքի հավասարակշռված վիճակները փոխվում են ամեն անգամ, երբ արտածին որևէ գործոնի փոփոխության արդյունքում տեղաշարժվում են IS կամ LM կորերը:

Դիտարկենք, թե ինչպես են տնտեսական քաղաքականության փոփոխություններն ազդում IS և LM կորերի վրա, տեղաշարժում դրանք, փոխում հավասարակշիռ իրավիճակը տնտեսությունում և որոշում եկամտի հավասարակշռված նոր ծավալը:

Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Այժմ դիտարկենք, թե ինչպես է հարկաբյուջետային քաղաքականությունը ազդում եկամտի հավասարակշռված մակարդակի փոփոխությունների վրա: Արդեն դիտարկել ենք, որ հարկաբյուջետային քաղաքականությունը ազդում է IS կորի վրա և տեղաշարժում է այն:

Ենթադրենք՝ տնտեսական տատանումների անկման փուլում պետությունը որոշում է խթանել ամբողջական պահանջարկը և ավելացնում է պետական ծախսերը ΔG չափով: Քեյնսյան խաչի մոդելից մեզ հայտնի է, որ պետական ծախսերի ավելացումը ավելացնում է պլանավորված ծախսերը, և յուրաքանչյուր տրված տոկոսադրույքի պայմաններում հավասարակշռված եկամուտը ավելանում է $\frac{\Delta G}{1-MPC}$ չափով (նկ.19.13):



Նկ.19.13. IS կորի տեղաշարժը IS-LM մոդելում

Խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությամբ IS-ը տեղաշարժվում է աջ-վերև: Հավասարակշռված եկամուտը ավելանում է Y_1-ից Y_2, իսկ հավասարակշռված տոկոսադրույքը՝ r_1–ից r_2:

Սակայն, ինչպես երևում է նկար 19.13-ից, IS-LM մոդելում հավասարակշռված եկամուտը, խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությամբ, ավելանում է ավելի քիչ չափով, քան քեյնսյան խաչում: Դրա պատճառը LM կորի դիրքն է: Եթե վերջինս լիներ հորիզոնական, ապա ոչ մի տարբերություն չէր լինի IS կորի հորիզոնական տեղաշարժի և եկամտի փոփոխության չափի միջև: Եթե LM-ը լիներ հորիզոնական, ապա IS-ի տեղաշարժերի ժամանակ չէր փոխվի տոկոսադրույքը: Վերոնշյալ դատողությունների տնտեսագիտական իմաստն այն է, որ պետական ծախսերի ավելացումը իրոք առաջ է բերում եկամտի աճ: Բայց եկամտի աճը ավելացնում է փողի իրական պաշարի պահանջարկը: Այդ դեպքում տոկոսադրույքը պետք է բարձրանա, որ ապահովվի փողի պահանջարկի համապատասխանությունը փողի հաստատագրված առաջարկին: Երբ տոկոսադրույքը բարձրանում է, ներդրումային ծախսերը կրճատվում են, քանի որ ներդրումային պահանջարկը հակադարձ կախվածության մեջ է տոկոսադրույքից: Արդյունքում՝ եկամտի հավասարակշռված մակարդակի ավելացումը զգալիորեն քիչ է (IS-LM մոդելում), քան IS-ի հորիզոնական տեղաշարժը՝ $\frac{\Delta G}{1-MPC}$ (հավասարակշռված եկամտի մակարդակի փոփոխությունը քեյնսյան խաչում): Սա պայմանավորված է ներդրումների «դուրսմղման» էֆեկտով, որը զգալիորեն նվազեցնում է խթանող հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը:

Եթե պետությունը խթանող հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնի և կրճատի հարկերը ΔT չափով, ապա IS կորը կտեղաշարժվի աջ-վերև (հորիզոնական տեղաշարժը հավասար կլինի

$\frac{\Delta T x MPC}{1-MPC}$-ին), հավասարակշռված եկամուտը կավելանա, և հավասարակշռված տոկոսադրույքը կբարձրանա: Այստեղ նույնպես գործում է «դուրսմղման» էֆեկտը:

Պետության զսպող, կաշկանդող հարկաբյուջետային քաղաքականությունը տեղաշարժում է IS կորը ձախ-ներքև, իջեցնում տոկոսադրույքը և նվազեցնում հավասարակշռված եկամուտը:

Դրամավարկային քաղաքականության փոփոխությունները

Այժմ քննարկենք մակրոտնտեսական կարճաժամկետ հավասարակշռության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Ենթադրենք, պետությունը իրականացնում է խթանող դրամավարկային քաղաքականություն և ավելացնում է փողի առաջարկը: Նախորդ քննարկումներից մեզ հայտնի է, որ փողի առաջարկի փոփոխությունը ազդում է փողի շուկայի հավասարակշռության վրա, փոփոխում է հավասարակշռված տոկոսադրուքը և տեղաշարժում է LM կորը:

Կարճ ժամկետում, երբ գների մակարդակը՝ P-ն, կայուն է, փողի առաջարկի՝ M-ի ավելացումը ավելացնում է նաև փողի իրական պաշարի՝ ($\frac{M}{P}$) -ի առաջարկը, և իրական տոկոսադրույքը փողի շուկայում, համաձայն իրացվելիության նախընտրելիության տեսության, իջնում է: Արդյունքում՝ LM-ը տեղաշարժվում է աջ-ներքև, և IS-LM մոդելի վրա հավասարակշռված եկամուտն ավելանում է, հավասարակշռված տոկոսադրույքը՝ իջնում (նկ.19.14):



Ավելացնելով փողի առաջարկը երկրում, պետությունը, անփոփոխ գների պայմաններում, առաջ է բերում փողի իրական պաշարի առաջարկի ավելացում. LM-ը տեղաշարժվում է աջ-ներքև, և եկամուտը ավելանում է Y_1 -ից Y_2 , տոկոսադրույքը իջնում է r_1-ից r_2:

Նկ. 19.14. LM կորի տեղաշարժը դրամավարկային քաղաքականության արդյունքում

IS-LM մոդելը ցույց է տալիս, որ դրամավարկային քաղաքականությունը եկամտի հավասարակշռված մակարդակի վրա ազդում է տոկոսադրույքի փոփոխության միջոցով: Եկամտի հավասարակշռված նոր մակարդակի ձեռքբերման մեխանիզմը հետևյալն է. փողի իրական

պաշարի ավելացումը իջեցնում է տոկոսադրույքը, վերջինս խթանում է ներդրումային ծախսերը, իսկ ներդրումների ավելացումը ավելացնում է հավասարակշռված եկամուտը: Եթե պետությունը ինֆլյացիան զսպելու նպատակով կրճատեր փողի առաջարկը, ապա փողի իրական պաշարի առաջարկը՝ ($\frac{M}{P}$)-ն, կկրճատվեր, LM-ը կտեղաշարժվեր ձախ-վերև, իրական տոկոսադրույքը կբարձրանար, իսկ հավասարակշռված եկամուտը կնվազեր:

Այժմ քննարկենք տնտեսական քաղաքականության արդյունքները մի քանի մասնավոր դեպքերի համար.

1. *Իրացվելիության ծուղակ:* Երբ LM կորը հորիզոնական է, այսինքն՝ փողի շուկայում հավասարակշռություն է հաստատվում միայն իրական տոկոսադրույքի միակ արժեքի դեպքում, մասնավորները պատրաստ են տվյալ տոկոսադրույքի պայմաններում պահել այնքան կանխիկ փող, ինչքան իրենց առաջարկվում է: Փողի առաջարկի փոփոխությունը չի տեղաշարժում LM կորը: Իրացվելիության ծուղակը ի հայտ է գալիս իրական տոկոսադրույքի զրոյական արժեքի դեպքում: Երբ իրական տոկոսադրույքը հավասար է զրոյի, որևէ գործակալ շահագրգռված չէ փոխառություն պահել: Հետևաբար, որքան էլ փողի առաջարկը մեծանա, որևէ մեկը պարտադրված չի լինի փոխառություն ձեռք բերել: Արդյունքում՝ փողի առաջարկի փոփոխությունը չի ազդի ոչ տոկոսադրույքի, ոչ էլ եկամտի վրա, և տնտեսությունը կգտնվի իրացվելիության ծուղակում: Այսպիսի վիճակի մասին առաջին անգամ խոսել է Ջ.Մ.Քեյնսը, նշելով սակայն, որ իրեն որևէ նման դեպք հայտնի չէ: Եթե տնտեսությունը գտնվում է «իրացվելիության ծուղակում», ապա հարկաբյուջետային քաղաքականությունը եկամտի հավասարակշռված ծավալի վրա թողնում է լրիվ բազմարկչային էֆեկտ, առավելագույն չափով արդյունավետ է, քանի որ իրական տոկոսադրույքի փոփոխություն չկա, և ներդրումային ծախսերը չեն կրճատվում («դուրսմղման» էֆեկտը բացակայում է):

Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը հավասարակշռված եկամտի վրա (և իրական տոկոսադրույքի վրա) իրացվելիության ծուղակի դեպքում հավասար է զրոյի:

Երկրորդ դեպք: LM կորը ուղղահայաց է: Սա հաճախ համարվում է մոնետարիզմի «կոպիտ ձևը» կամ դասական տեսության դեպքը: Երբ LM-ը ուղղահայաց է, փողի իրական պաշարի պահանջարկը բոլորովին զգայուն չէ տոկոսադրույքի մակարդակի նկատմամբ: Այդ դեպքում հարկաբյուջետային քաղաքականությունը չի ազդում եկամտի հավասարակշռված մակարդակի վրա, քանի որ տեղի է ունենում լրիվ «դուրսմղում», այսինքն՝ պետական ծախսերի ΔG ավելացումը տեղի է ունենում ներդրումների և մասնավոր սպառման ΔG չափով կրճատման հաշվին: IS կորի տեղաշարժը խթանող հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում բարձրանում է միայն իրական տոկոսադրույքը: Եթե LM կորի դիրքը ուղղահայաց է, դեպքը կոչվում է դասական, քանի որ, ըստ դա-

սականների, փողի իրական պաշարի պահանջարկը կախված է իրական եկամտից և կախված չէ տոկոսադրույքի մակարդակից:

Դրամավարկային քաղաքականությունը ուղղահայաց LM-ի դեպքում առավելագույն չափով արդյունավետ է եկամտի վրա ազդելու տեսանկյունից: Ծայրահեղ («կոպիտ») մոնետարիզմը ընդունում է, որ ազգային արդյունքի ծավալի որոշման ժամանակ «դեր ունի միայն փողը», այսինքն՝ անվանական ՀՆԱ-ի մակարդակը որոշվում է փողի անվանական առաջարկով:

Խթանող դրամավարկային քաղաքականությունը տեղաշարժում է ուղղահայաց LM-ը աջ, իջեցնում է իրական տոկոսադրույքը և առավելագույն չափով ավելացնում է եկամուտը:

Երրորդ դեպք: IS կորը ուղղահայաց է: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ սպառումը և ներդրումային պահանջարկը ճկուն չեն, C-ն և I-ը զգայուն չեն իրական տոկոսադրույքի նկատմամբ:

Այս դեպքում խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը եկամտի վրա զգալի ազդեցություն է ունենում, իսկ դրամավարկային քաղաքականությունը որևէ կերպ չի ազդում եկամտի վրա:

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների համատեղ ազդեցությունը IS-LM մոդելում

Տնտեսության իրավիճակը վերլուծելիս պետք է հիշենք, որ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները հաճախ կիրառվում են համատեղ և փոխկապակցված: Ընդ որում, մի բնագավառում իրականացվող քաղաքականությունը ազդում է մյուս բնագավառի իրավիճակի վրա և արդյունքում՝ աղավաղում նախօրոք ակնկալվող ցուցանիշներն ու արդյունքները:

Այժմ դիտարկենք պետության կաշկանդող հարկաբյուջետային քաղաքականությանը դրամավարկային քաղաքականության՝ տարբեր միջոցառումներով արձագանքելու դեպքերը: Ենթադրենք, պետական ծախսերը ֆինանսավորելու նպատակով Ազգային ժողովը բարձրացրել է հարկերը:

Կենտրոնական բանկը, որը դրամավարկային քաղաքականություն իրականացնողն է, ի պատասխան վերոնշյալ միջոցառման, կարող է իրականացնել. ա) փողի առաջարկը անփոփոխ պահելու, բ) իրական տոկոսադրույքը անփոփոխ պահելու, գ) ամբողջական եկամուտը անփոփոխ պահելու քաղաքականություն:

Առաջին տարբերակի դեպքում (նկ.19.15 ա) հարկերի բարձրացումը IS կորը տեղաշարժում է ձախ-ներքև, իրական տոկոսադրույքը իջնում է, ամբողջական արդյունքը՝ նվազում: ԿԲ-ն, պահելով փողի առաջարկը անփոփոխ, որևէ կերպ չի միջամտում տնտեսությանը, և հարկաբյուջետային կաշկանդող քաղաքականության արդյունքները չեն աղավաղվում:

Երկրորդ տարբերակի դեպքում ԿԲ-ն, որպեսզի պահի իրական տոկոսադրույքը նույն մակարդակի վրա, կրճատում է փողի առաջարկը, LM-ը տեղաշարժվում է ձախ-ներքև, մինչև վերականգնվում է տոկոսադրույքի նախկին մակարդակը: Իրական տոկոսադրույքը այս դեպքում չի

կրճատվում, սակայն ամբողջական եկամուտը նվազում է ավելի շատ, քան առաջին տարբերակի դեպքում էր (նկ. 19.15 բ):

Երրորդ տարբերակի դեպքում ԿԲ-ն փորձում է ամբողջական եկամտի կրճատումը կանխել՝ ավելացնելով փողի առաջարկը: Փողի առաջարկի ավելացումը իրոք չի թողնում, որ եկամտի ծավալը կրճատվի, սակայն զգալիորեն իջեցնում է իրական տոկոսադրույքը (նկ. 19.15 գ):



Նկ.19.15. Ի պատասխան հարկերի ավելացման՝ դրամավարկային քաղաքականության միջոցառումների արդյունքները

Բերված օրինակներից պարզ է դառնում, որ տնտեսական իրավիճակի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը կախված է դրամավարկային քաղաքականության միջոցառումների ընտրությունից: Մակրոտնտեսական քաղաքականության այս կամ այն միջոցառման ընտրությունը կախված է քաղաքական նախապատվություններից, ազդեցության արագության և միջոցառումների հետևանքների կանխատեսելիության աստիճանից:

Վերոհիշյալ քննարկումները ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ IS-LM մոդելը ցույց է տալիս, թե ինչպես են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության միջոցառումները ազդում եկամտի հավասարակշռված ծավալի վրա: Սակայն պետք է հիշել, որ մոդելի ենթադրությունները որակական են և ոչ թե քանակական: Քանակական փոխկապվածությունները ստանում են՝ կիրառելով ավելի բարդ և ավելի

իրական վարկածներով մակրոէկոնոմետրիկական մոդելներ, որտեղ ոչ միայն երևում է, որ պետական ծախսերի ավելացումը ավելացնում է հավասարակշռված եկամուտը, այլև երևում է, թե պետական ծախսերի կոնկրետ չափով ավելացումը ինչ չափով է ավելացնում ամբողջական արդյունքը:

IS-LM մոդելը օգնում է պարզել, թե ինչպես են տարբեր կարգի արտաքին փոփոխությունները ազդում հավասարակշռված ՀՆԱ-ի վրա և փոփոխում վերջինս:

Արտաքին ցնցումները լինում են երկու տեսակ՝ կապված IS կորի հետ և LM կորի հետ: Օրինակ, IS կորի ցնցումներ են առաջանում ապրանքների և ծառայությունների պահանջարկի արտածին փոփոխությունների արդյունքում, իսկ LM կորի ցնցումներ՝ փողի պահանջարկի՝ արտաքին պատճառներով փոփոխության արդյունքում: Նշված ցնցումները տեղաշարժում են IS և LM կորերը և առաջ բերում տնտեսական ակտիվության տատանումներ:

19.6. IS-LM մոդելը՝ որպես ամբողջական պահանջարկի տեսություն

Մինչև այժմ IS-LM մոդելը օգտագործել ենք ազգային արդյունքի փոփոխությունները բացատրելու համար: Գիտենք, որ IS-LM մոդելով վերլուծություններ կատարելիս հիմնվում ենք քեյնսյան կանխադրույթի՝ գների կայունության նախապայմանի վրա: Սակայն, երբ հարկ է լինում բացատրել ընդհանուր մակրոտնտեսական հավասարակշռության՝ ամբողջական առաջարկի (AS) և ամբողջական պահանջարկի (AD) հավասարակշռության ձևավորման մեխանիզմը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել գների ճկունության գաղափարը, այսինքն՝ IS-LM մոդելը կապել AD-AS մոդելի հետ:

Արդեն գիտենք, որ ամբողջական պահանջարկի կորը ցույց է տալիս գների մակարդակի և ՀՆԱ կապը: Այս կապը պարզել էինք՝ օգտվելով փողի քանակական տեսությունից: Երբ փողի առաջարկը անփոփոխ է, գների մակարդակի բարձրացումը հանգեցնում է եկամտի մակարդակի կրճատման: Փողի առաջարկի ավելացումը ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժում է աջ, իսկ կրճատումը՝ ձախ:

Այժմ կարող ենք AD կորը ստանալ՝ օգտվելով IS-LM մոդելից և այն նախապայմանից, որ գները ճկուն են: IS-LM-ի օգնությամբ կարելի է տեսնել, թե ինչպես են գների մակարդակի փոփոխությունները փոխում փողի իրական պաշարի առաջարկը. փողի շուկայում փոխվում է իրական տոկոսադրույքը, տեղաշարժվում է LM կորը, և եկամտի ծավալը փոխվում է: Կքննարկենք նաև, թե ինչ պատճառներով են առաջանում ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժերը: Դիտարկենք, թե ինչ փոփոխություն կկրի IS-LM մոդելը, երբ գների մակարդակը, ասենք, սկսի բարձրանալ (նկ. 19.16 ա):



Նկ. 19.16. AD-ի ստացումը IS-LM մոդելից

Փողի անփոփոխ առաջարկի (M) պայմաններում գների մակարդակի (P) բարձրացումը կրճատում է փողի իրական պաշարի՝ ($\frac{M}{P}$) առաջարկը:

Փողի իրական պաշարի առաջարկի կրճատումը LM-ը տեղաշարժում է ձախ-վերև և իջեցնում է հավասարակշռված եկամտի ծավալը:

Գների մակարդակի և եկամտի կապն արտահայտվում է AD կորի միջոցով, որն էլ ստացվում է IS-LM մոդելից, երբ հաշվի ենք առնում գների ճկունությունը:

Քանի որ IS-LM մոդելը իրենից ներկայացնում է ամբողջական պահանջարկի կորի տեսական նկարագրությունը, ապա այն կարելի է օգտագործել AD կորի տեղաշարժերի պատճառները քննարկելիս: Տրամաբանական է, որ այն գործոնները, որոնք ազդում են IS-ի կամ LM-ի վրա և տեղաշարժում են դրանք, կտեղաշարժեն նաև AD կորը:

Վերոնշյալ քննարկումները կարելի է ամփոփել հետևյալ եզրակացությամբ: Երբ IS-LM մոդելում եկամտի ծավալը փոխվում է գների մակարդակի փոփոխության պատճառով, ապա դա AD կորի մոդելում արտահայտվում է տեղաշարժով AD կորի վրայով, իսկ եթե IS-LM մոդելում եկամտի փոփոխությունը տնտեսական քաղաքականության արդյունք է, ապա AD կորի մոդելում եկամտի մակարդակի փոփոխությունը արտահայտվում է AD կորի տեղաշարժի միջոցով:

Վերոնշյալ վերլուծությունը ապացուցում է, որ գոյություն ունի սերտ կապ IS—LM մոդելի օգնությամբ ստացված AD կորի և փողի քանակական տեսության հավասարման օգնությամբ դուրս բերված AD կորի միջև:

19.7. IS-LM մոդելը կարճ և երկար ժամկետներում

IS-LM մոդելը օգտագործվում է տնտեսական գործառնությունները կարճ ժամկետում, երբ գները կայուն են, բացատրելու համար: Կայուն գների պայմաններում արտադրության ծավալը մի մեծություն է, որը որոշվում է ամբողջական պահանջարկով, այսինքն՝ արտադրողները թողարկում են այն ամենը, ինչի նկատմամբ, գների տրված մակարդակում, պահանջարկ է դրսևորվում: Արդեն քննարկել ենք, թե ինչպես է գների փոփոխությունը ազդում մակրոտնտեսական հավասարակշռության վրա: Դասական տնտեսագիտության համաձայն՝ գները հավասարակշռող դեր են խաղում: Բոլոր գների բացարձակ ճկունությունը առաջացնում է ընդհանուր մակրոտնտեսական հավասարակշռություն: Երբ գների մակարդակը արագ տատանվում է, արտադրության ծավալը որոշվում է ամբողջական առաջարկով: Հաշվի առնելով, որ IS-ը կարելի է համարել տնտեսության պահանջարկի կոր, իսկ IS-LM-ը՝ ամբողջական պահանջարկի տեսության մոդել, վերջինս նպատակահարմար է օգտագործել նաև երկար ժամկետում տնտեսությունը նկարագրելու և վերլուծելու համար:

Երկար ժամկետում գները ճկուն են և տատանվում են այնպես, որ համապատասխանեցնեն թողարկվող արտադրանքի ծավալը արտադրության ներուժային մակարդակին:

Վերոնշյալ քննարկումը պարզաբանում է, թե ինչով է ազգային եկամտի քեյնսյան մոդելը տարբերվում դասական մոդելից: Վերլուծությունը կատարենք գրաֆիկների օգնությամբ: Նկ. 19.17 ա-ում պատկերված են IS և LM կորերը և լրիվ զբաղվածության պայմաններում արտադրության ներուժային ծավալը ներկայացնող ամբողջական առաջարկի երկարաժամկետ ուղղահայացը՝ LRAS-ը: Կարճաժամկետ հավասարակշռությունը համընկնում է IS-ի և LM-ի հատման K կետին: Այդ կետով անցնող LM-ը կառուցված է գների բարձր մակարդակի՝ P_1 -ի պայմաններում: Նկ. 19.17 բ-ում պատկերված են երկարաժամկետ և կարճաժամկետ ամբողջական առաջարկի LRAS և SRAS կորերը և ամբողջական պահանջարկի AD կորը: Կարճաժամկետ հավասարակշռությունը AD-AS մոդելում համընկնում է SRAS-ի և AD-ի հատման K կետին: Այդ կետում գների մակարդակը բավական բարձր է և հավասար է P_1-ի: Գների P_1 մակարդակի պայմաններում ամբողջական պահանջարկը բավական ցածր է արտադրության պոտենցիալ մակարդակից, տնտեսությունը այդ վիճակում երկար մնալ չի կարող, գների մակարդակը կսկսի իջնել մինչև P_2, իսկ ամբողջական պահանջարկը՝ ավելանալ այնքան, մինչև հավասարվի լրիվ զբաղվածության պայմաններում արտադրված ՀՆԱ-ի բնական $\bar{Y}$ մակարդակին: Այսինքն, տնտեսությունում աստիճանաբար կհաստատվի երկարաժամկետ հավասարակշռություն C կետում:

Երբ գների մակարդակը սկսի իջնել մինչև P_2, փողի անփոփոխ առաջարկի ($\bar{M}$) պայմաններում փողի իրական պաշարը՝ ($\frac{M}{P}$), կմեծանա,

տոկոսադրույքը կիջնի, LM-ը կտեղաշարժվի աջ–ներքև (նկ.19.17 ա), մինչև երկարաժամկետ հավասարակշռություն կհաստատվի C կետում:

ա) IS-LM մոդելը



Կարճաժամկետ հավասարակշռությունը հաստատվում է K կետում: Երբ գների մակարդակը սկսում է իջնել, հավասարակշռությունը տեղաշարժվում է C կետ, որտեղ ամբողջական պահանջարկն ու արտադրության պոտենցիալ ծավալը՝ Ȳ, հավասար են: C կետում տնտեսությունը գտնվում է երկարաժամկետ հավասարակշռության վիճակում:

բ) AD-AS մոդելը



Նկ.19.17. Հավասարակշռությունը կարճ և երկար ժամկետում

Ներկայացված երկու գրաֆիկներում (նկ. 19.17 ա և բ) երևում են հավասարակշռության քեյնսյան և դասական մոտեցումների տարբերությունները: Քեյնսյան կանխադրույթը (ներկայացված է K կետով) այն է, որ գների մակարդակը կայուն է, և ամբողջական պահանջարկը որոշող դրամավարկային, հարկաբյուջետային քաղաքականություններից, այլ գործոններից կախված՝ արտադրանքի ծավալը կարող է շեղվել իր բնական մակարդակից և հաստատվել մակրոտնտեսական հավասարակշռություն՝ անգամ ոչ լրիվ զբաղվածության պայմաններում: Դասական տեսակետն այն է, որ գները ճկուն են և կարգավորվում են այնպես, որ ապահովեն արտադրանքի ծավալի և արտադրության բնական մակարդակի համապատասխանությունը (C կետ): Ասվածից հետևում է, որ կա 3 հավասարում, որոնցից առաջին երկուսը ընդհանուր են, իսկ երրորդը առանձնահատուկ է քեյնսյան և դասական մոտեցումների համար:

1. IS $Y=C(Y-T)+I(r)+G$
2. LM $M/P = L(r, Y)$
3. Դասական $Y=\bar{Y}$ 3. Քեյնսյան $P=\bar{P}$

Այս երեք հավասարումներում կան երեք փոխկապակցված փոփոխականներ՝ Y, r, P: Եթե $Y=\bar{Y}$, ապա r-ը և P-ն պետք է տատանվեն այնպես, որ առաջին և երկրորդ հավասարումները լուծվեն միաժամանակ և եթե $P=\bar{P}$, ապա պետք է գտնենք վերոնշյալ երկու հավասարումներին բավարարող Y և r: Թե որ կանխադրույթը պետք է հիմք ընդունենք վերլուծություններ կատարելիս, կախված է վերլուծության ժամանակահատվածից:

Ամփոփում

1. Քեյնսյան խաչը եկամտի հավասարակշռված մակարդակի որոշման պարզագույն մոդել է: Հարկաբյուջետային քաղաքականությունը և ներդրումները ընդունելով արտածին, մոդելը ցույց է տալիս, որ գոյություն ունի ազգային արդյունքի միայն մի ծավալ, որի պայմաններում պլանավորված և փաստացի ծախսերը հավասար են:
2. Եթե ընդունում ենք, որ ներդրումները կախված են տոկոսադրույքից, ապա քեյնսյան խաչում ծագում է կայուն կապ ազգային արդյունքի և տոկոսադրույքի միջև: Այդ կապը հակադարձ է: Դա արտացոլվում է IS կորի միջոցով:
3. Իրացվելիության նախընտրելիության տեսությունը տոկոսադրույքի որոշման պարզագույն մոդելն է: Այն դիտարկում է փողի առաջարկը և գների մակարդակը արտածին և ենթադրում, որ տոկոսադրույքը փոխվում է, որ հավասարակշռի փողի շուկայում առաջարկն ու պահանջարկը:
4. Երբ ենթադրում ենք, որ փողի պահանջարկը կախված է ազգային արդյունքից, ծագում է ուղիղ կախվածություն եկամտի և տոկոսադրույքի միջև: Դա արտահայտվում է LM կորի միջոցով:
5. IS-LM մոդելը ցույց է տալիս կարճաժամկետ մակրոտնտեսական հավասարակշռությունը: Հավասարակշռությունը համընկնում է IS-ի և LM-ի հատման կետին:
6. IS-LM մոդելը ամբողջական պահանջարկի ընդհանուր տեսությունն է: Մոդելի արտածին փոփոխականներն են՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները և գների մակարդակը, ներծին (էնդոգեն) փոփոխականներն են՝ տոկոսադրույքը և ազգային արդյունքի մակարդակը:
7. Խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը տեղաշարժում է IS կորը աջ-վերև, ավելացնում է տոկոսադրույքը և եկամտի ծավալը, տեղաշարժում է AD-ն աջ-վերև:
8. Խթանող դրամավարկային քաղաքականությունը տեղաշարժում է LM կորը աջ-ներքև, իջեցնում տոկոսադրույքը, ավելացնում ազգային արդյունքը և տեղաշարժում AD -ն աջ-վերև:

Թեստեր և խնդիրներ

1. ***Քեյնսյան խաչի մոդելում, եթե փաստացի ծախսերը գերազանցում են պլանավորված ծախսերը, ապա եկամուտը տեղաբաշխված է.***
   ա. հավասարակշռված եկամտից աջ, և տեղի է ունենում պաշարների չպլանավորված կրճատում,
   բ. հավասարակշռված եկամտից աջ, և տեղի է ունենում պաշարների չպլանավորված կուտակում,
   գ. հավասարակշռված եկամտից ձախ, և տեղի է ունենում պաշարների չպլանավորված կրճատում,
   դ. հավասարակշռված եկամտից ձախ, և տեղի է ունենում պաշարների չպլանավորված կուտակում:
2. ***Ցանկացած տրված IS-ի համար.***
   ա. հարկային դրույքաչափը հաստատուն է, իսկ պետական ծախսերը տատանվում են,
   բ. պետական ծախսերը հաստատուն են, իսկ հարկային դրույքաչափը տատանվում է,
   գ. և՛ պետական ծախսերը, և՛ հարկային դրույքաչափը տատանվում են,
   դ. և՛ պետական ծախսերը, և՛ հարկային դրույքաչափը հաստատուն են:
3. ***LM-ի թեքությունը բացատրվում է նրանով, որ.***
   ա. տոկոսադրույքի բարձրացման ժամանակ եկամուտներն ավելանում են,
   բ. եկամտի ավելացումը ավելացնում է փողի պահանջարկը, և ավելի բարձր տոկոսադրույքը պահանջում է փողի շրջանառության արագության ավելացում,
   գ. տոկոսադրույքի աճը ենթադրում է եկամուտների կրճատում,
   դ. եկամտի ավելացումը ավելացնում է փողի պահանջարկը, և ավելի ցածր տոկոսադրույքը պահանջում է փողի շրջանառության արագության ավելացում:
4. ***LM կորն ունի ավելի կտրուկ թեքություն, որքան.***
   ա. մեծ է փողի պահանջարկի տոկոսային զգայունությունը, և մեծ է եկամտի ազդեցությունը փողի պահանջարկի վրա,
   բ. մեծ է փողի պահանջարկի տոկոսային զգայունությունը, և փոքր է եկամտի ազդեցությունը փողի պահանջարկի վրա,
   գ. փոքր է փողի պահանջարկի տոկոսային զգայունությունը, և փոքր է եկամտի ազդեցությունը փողի պահանջարկի վրա,
   դ. փոքր է փողի պահանջարկի տոկոսային զգայունությունը, և մեծ է եկամտի ազդեցությունը փողի պահանջարկի վրա:
5. ***Եթե MPC-ն հավասար է 0.75, և G-ն ավելանում է 100-ով, ապա IS կորը տրված տակոսադրույքի պայմաններում տեղաշարժվում է աջ՝ հետևյալ չափով.***
   ա. 100, բ. 200,
   գ. 300, դ. 400:

6. *Տրված է IS-LM մոդելը: Եթե պետությունը իջեցնում է հարկերը, բայց անփոփոխ է պահում իրական հավասարակշռված տոկոսադրույքը, ապա.*
   ա. ԿԲ-ն պետք է ավելացնի փողի առաջարկը,
   բ. ԿԲ-ն պետք է նվազեցնի փողի առաջարկը,
   գ. ԿԲ-ն չպետք է փոխի փողի առաջարկը,
   դ. պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ:
7. *Ամբողջական պահանջարկի կորը սովորաբար ունի բացասական թեքություն դեպի աջ, քանի որ փողի առաջարկի պայմաններում.*
   ա. ավելի բարձր գների P մակարդակը հանգեցնում է ավելի ցածր M/P փողի առաջարկի, որը ավելացնում է տոկոսադրույքը և կրճատում ծախսերը,
   բ. ավելի բարձր գների մակարդակը ավելացնում է M/P-ն, որը կրճատում է տոկոսը և ավելացնում ծախսերը,
   գ. գների ավելի բարձր մակարդակը հանգեցնում է ավելի ցածր M/P-ի, որը իջեցնում է տոկոսադրույքը և ավելացնում ծախսերը,
   դ. ավելի բարձր P-ն ավելացնում է M/P-ն և տոկոսադրույքը, կրճատում ծախսերը:
8. *Քեյնսյան խաչի մոդելում սպառումը տրված է C=200+0.75(Y-T) հավասարմամբ: Պլանավորված ներդրումները 100 միավոր են, պետական բյուջեն հավասարակշռված է, պետական ծախսերը 500 միավոր են: Հաշվել եկամտի հավասարակշռված մակարդակը:*
9. *Տրված է փողի իրական պաշարի պահանջարկի հավասարումը՝ (M/P) = Y-100r: Որքա՞ն պետք է լինի փողի առաջարկը, որ փողի շուկայում հավասարակշռություն հաստատվի, եթե գների մակարդակը հավասար է 2-ի, իրական տոկոսադրույքը՝ 5%-ի, սպառումը տրված է C=0.5Y հավասարմամբ, ներդրումները՝ I=200-10r, իսկ պետական ծախսերը հավասար են 500-ի:*
10. *Տրված են սպառման ֆունկցիան C=200+0.75(Y-T), ներդրումային ֆունկցիան I=200-25r: Հարկերը և պետական ծախսերը հավասար են 100-ական միավորի: Փողի իրական պահանջարկի հավասարումը (M/P) = Y-200r է, M=1000, P=2: Հաշվել.*
    ա. հավասարակշռված եկամտի և հավասարակշռված տոկոսադրույքի մեծությունները,
    բ. IS-ի հորիզոնական տեղաշարժը, եթե պետական ծախսերը ավելանան 50 միավորով,
    գ. հավասարակշռված տոկոսադրույքի և հավասարակշռված եկամտի նոր արժեքները,
    դ. LM-ի հորիզոնական տեղաշարժը, եթե ԿԲ-ն փողի առաջարկը ավելացնի 200 միավորով:

Հիմնական հասկացություններ

IS-LM մոդել
IS կոր
LM կոր
Պետական ծախսերի բազմարկիչ
Հարկերի բազմարկիչ
Իրացվելիության նախընտրելիության տեսություն
Իրացվելիության ծուղակ

Հարցեր կրկնության համար

1. Ինչպե՞ս է հարկերի բարձրացումը ազդում տոկոսադրույքի, եկամտի, սպառման և ներդրումների վրա:
2. Քեյնսյան խաչի միջոցով ցույց տվեք, որ հարկաբյուջետային քաղաքականությունը ազդում է ազգային արդյունքի վրա:
3. Իրացվելիության նախընտրելիության տեսության միջոցով բացատրեք, թե ինչո՞ւ է փողի առաջարկի փոփոխությունը փոփոխում տոկոսադրույքը:
4. Ի՞նչ գործոններ են որոշում IS և LM կորերի թեքությունները:
5. Ինչո՞ւ է IS կորը համարվում ապրանքների շուկայի հավասարակշռության, իսկ LM կորը՝ փողի շուկայի հավասարակշռության գրաֆիկ:
6. Ինչո՞ւ է IS կորի վրա եկամուտը հավասարակշռված, LM-ի վրա՝ տոկոսադրույքը:
7. Բացատրեք տնտեսական քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական կարճաժամկետ հավասարակշռության վրա՝ օգտվելով IS-LM մոդելից:
8. Ինչո՞ւ է IS-LM մոդելը ներկայացնում ամբողջական պահանջարկի ընդհանուր տեսությունը: Բացատրեք:
9. Նկարագրեք գների մակարդակի անկման հնարավոր հետևանքները եկամտի հավասարակշռված մակարդակի վրա:
10. Ինչպե՞ս է փողի առաջարկի կրճատումն ազդում տոկոսադրույքի, եկամտի, սպառման և ներդրումների վրա:

ԳԼՈՒԽ 20

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև այժմ տնտեսական տատանումները ներկայացրել ենք՝ կապված ամբողջական պահանջարկի փոփոխությունների հետ, այսինքն՝ ուշադրությունը կենտրոնացրել էինք ամբողջական ծախսերի վրա, որոնցով որոշվում էր արտադրության ծավալը և զբաղվածությունը: Սակայն տնտեսական էական տատանումներ են առաջացնում նաև ամբողջական առաջարկի փոփոխությունները: Մասնավորապես՝ առաջարկի շոկերի առկայությամբ առաջանում են ստագֆլյացիոն երևույթներ, բավականին բարդ հիմնահարցեր՝ կապված ինֆլյացիայի զսպման, գործազրկության մակարդակի կրճատման հետ:

Այս գլխում կդիտարկենք.

- Ինչպե՞ս է ձևավորվում ամբողջական առաջարկի կորը աշխատանքի շուկայի իրավիճակի հիման վրա:
- Ինչպե՞ս է այն արտացոլում ինֆլյացիայի ու գործազրկության միջև գոյություն ունեցող հակադարձ կապը, որն արտահայտվում է Ֆիլիպսի կորում:
- Ի՞նչ դեր են կատարում սպասումները՝ տնտեսական քաղաքականության բնագավառում որոշումներ կայացնելիս:

20.1. Ամբողջական առաջարկի կորը և դրա մեկնաբանումները

Ինչպես արդեն նշել ենք, ամբողջական առաջարկը արտադրանքի այն գումարային թողարկումն է, որը նախընտրում են ձեռնարկությունները և տնային տնտեսությունները՝ գոյություն ունեցող գների և աշխատավարձի պայմաններում: Սակայն, քանի որ արտադրանքի թողարկման կամ աշխատանքի առաջարկի մասին որոշումներ ընդունելիս ձեռնարկությունները և տնային տնտեսությունները պետք է հաշվի առնեն, որ թողարկված արտադրանքի մի մասը իրացվելու է ապագայում, անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ընթացիկ գների մակարդակը, այլև՝ նրանց դինամիկան, ոչ միայն աշխատավարձի ներկա մակարդակը, այլև՝ դրա սպասվող փոփոխությունները: Առայժմ կդիտարկենք ամբողջական առաջարկը միայն ընթացիկ գների և աշխատավարձի պայմաններում:

Կարճ ժամկետում օգտագործվող կապիտալի ծավալը և տեխնոլոգիան չեն փոփոխվում: Ձեռնարկությունները իրենց առավելագույն շա-

հույթը ձևավորում են՝ հաշվի առնելով գների մակարդակը և աշխատանքի սահմանային արդյունքը (MPL): Հետևաբար, MPL-ը իրենից ներկայացնում է աշխատանքի նկատմամբ պահանջարկի ֆունկցիան, որն ունի հետևյալ տեսքը.

$$L^D = L^D (W/P, K),$$

այսինքն՝ աշխատանքի նկատմամբ պահանջարկը ուղիղ համեմատական է կապիտալին և հակադարձ համեմատական՝ իրական աշխատավարձին: Օգտագործելով այս բանաձևը՝ կարող ենք ստանալ արտադրանքի թողարկման առաջարկի ֆունկցիան.

$$Y^s = Y(W/P, K)$$

Հետևաբար՝ առաջարկը նվազող ֆունկցիա է իրական աշխատավարձից (W/P): Ինչքան բարձր է իրական աշխատավարձը, այնքան փոքր է աշխատանքի նկատմամբ L^D պահանջարկը, իսկ որքան փոքր է L^D-ն, այնքան քիչ է արտադրանքի ծավալը:

Մյուս կողմից, տնային տնտեսությունների աշխատանքի առաջարկը նույնպես կախված է աշխատավարձի մակարդակից: Սակայն որքան բարձր է իրական աշխատավարձը, այնքան դրա ավելացումը քիչ է ազդում աշխատանքի առաջարկի վրա: Դա պայմանավորված է նրանով, որ W/P-ի մեծացմանը զուգընթաց, տնային տնտեսությունները դառնում են ավելի հարուստ և ավելի շատ ժամանակ կարող են հատկացնել հանգստին:

Այսպիսով, ամբողջական առաջարկի ֆունկցիան պայմանավորված է աշխատանքի նկատմամբ պահանջարկով և աշխատանքի առաջարկով: Այժմ փորձենք միավորել աշխատանքի նկատմամբ պահանջարկի և առաջարկի հարաբերակցությունը ամբողջական առաջարկի կորի հետ, որը ներկայացնում է թողարկման և գների միջև կապը: Այս կորի ձևը բազում քննարկումների և տարբեր մեկնաբանությունների թեմա է:

ա. Ամբողջական առաջարկի դասական մոդելը

Ա. Աշխատանքի շուկա



Ա. Աշխատանքի շուկայում աշխատանքի պահանջարկի և աշխատանքի առաջարկի կորերի հատմամբ որոշվում է վարձու աշխատողների թիվը:

Բ. Արտադրական ֆունկցիա



Բ. Վարձու աշխատողների թվին համապատասխան՝ արտադրական ֆունկցիայի գրաֆիկում որոշվում է արդյունքի քանակը կամ ամբողջական առաջարկը:



Գ. Քանի որ աշխատանքի շուկայում աշխատանքի հավասարակշիռ քանակը չի փոխվում, արտադրության ծավալի կորը ընդունում է ուղղահայաց տեսք: Ճկուն աշխատավարձի պայմաններում գների փոփոխությունը համընկնում է աշխատավարձի փոփոխությանը, և իրական աշխատավարձը մնում է նույնը:

Նկ. 20.1. ***Ամբողջական առաջարկի ձևավորման մեխանիզմը դասական մոդելում***

Աշխատանքի հավասարակշռված շուկայում L_f-ը ցույց է տալիս լրիվ զբաղվածության պայմաններում աշխատանքի քանակը: Այդ քանակը ապահովում է Y_f արդյունքի թողարկում, որը հենց ամբողջական առաջարկն է:

Երբ գները բարձրանում են, աշխատանքի շուկայում առաջանում է լրացուցիչ պահանջարկ, եթե անվանական աշխատավարձը չի փոխվում: Սակայն ճկուն աշխատավարձի պայմաններում դրա անվանական մեծությունը աճում է նույն չափով, ինչ գների մակարդակը, և իրական աշխատավարձի հավասարակշռված մակարդակը չի փոխվում: Հետևաբար չի փոխվում նաև զբաղվածության հավասարակշիռ մակարդակը և թողարկման առաջարկը: Այսպիսով, դասական մոդելում, հավասարակշիռ աշխատանքի շուկայի պայմաններում, թողարկման ծավալը չի կարող փոխվել, եթե չեն փոխվում աշխատանքի նկատմամբ պահանջարկի և առաջարկի ծավալները:



Կապիտալի ավելացումը հանգեցնում է աշխատանքի սահմանային արտադրողականության աճի ցանկացած L աշխատուժի քանակի համար՝ տեղաշարժելով աշխատանքի պահանջարկի կորը դեպի աջ: Նոր հավասարակշիռ մակարդակը ապահովում է արդյունքի աճը Y_1-ից Y_2: Դա իր հերթին տեղաշարժում է ամբողջական առաջարկի կորը դեպի աջ:



Նկ. 20.2. Դասական մոդելը կուտակված կապիտալի աճի դեպքում

Եթե, օրինակ, տնտեսության մեջ տեղի է ունենում կապիտալի աճ, ապա աշխատանքի սահմանային արտադրողականությունը աճում է, որի հետևանքով L^D կորը տեղափոխվում է աջ: Նոր հավասարակշիռ մակարդակում զբաղվածությունն աճում է մինչև L_2, իսկ իրական աշխատավարձը՝ $(W/P)_2$: Կապիտալի և աշխատանքի այդպիսի աճը հանգեցնում է թողարկման հավասարակշիռ մակարդակի ավելացման՝ մինչև Y_2 լրիվ զբաղվածության մակարդակը: Այսինքն՝ ամբողջական առաջարկի գրաֆիկում Y_1-ը տեղափոխվում է դեպի աջ, մինչև Y_2 դիրքը:

բ. Ամբողջական առաջարկի քեյնսյան մոդելը

Քեյնսյան մոդելում գործազրկությունը բացատրվում է այն թեզով, որ անվանական աշխատավարձը այնքան արագ չի փոփոխվում, որ վերականգնի հավասարակշռությունը աշխատանքի շուկայում: Այս մոդելը տարբերվում է դասականից նրանով, որ ուշադրությունը կենտրոնացնում է անվանական, այլ ոչ թե իրական մեծությունների կայունության վրա: Քեյնսը ընդունում էր, որ ժամանակի ընթացքում անվանական աշխատավարձը հարմարվում է աշխատանքի շուկայի անհավասարակշռությանը, սակայն, նրա կարծիքով, դա կատարվում է շատ դանդաղ, որպեսզի ցանկացած պահի ապահովվի լրիվ զբաղվածություն: Քեյնսյան ստատիկ մոդելում W և P մեծությունները կայուն են:

Գնի P մակարդակի աճի դեպքում իրական աշխատավարձը կրճատվում է, քանի որ, օրինակ, աշխատանքային պայմանագրերի առկայությունը թույլ չի տալիս նույն չափով ավելացնել աշխատավարձը: Իրական աշխատավարձի կրճատումը մեծացնում է աշխատանքային ծախսումների ցանկալի մակարդակը, հետևաբար նաև՝ թողարկման ցանկալի մակարդակը:

Ենթադրենք՝ P_f –ը գնի այնպիսի մակարդակն է, որի դեպքում աշխատավարձը գտնվում է լրիվ զբաղվածության մակարդակում: Եթե P_1-ը փոքր է P_f-ից, իրական աշխատավարձը բարձր է հավասարակշիռ մակարդակից, իսկ թողարկման ծավալը փոքր է Y_f-ից: Աշխատանքի շուկայում աշխատանքի առաջարկի L^s ծավալը գերազանցում է պահանջարկի մակարդակը, որը որոշվում է $(W/P)_1$ իրական աշխատավարձի մակարդակում: Աշխատանքի առաջարկի այդ ավելցուկն էլ հենց ներկայացնում

է գործազրկությունը: Այն փաստը, որ ամբողջական առաջարկի քեյնսյան կորը ուղղված է վեր՝ ունի կարևոր գործնական նշանակություն:



Երբ գինը հավասարակշիռ մակարդակից իջնում է, իրական աշխատավարձը բարձրանում է, որի հետևանքով թողարկումը կրճատվում է: Գնի և թողարկման միջև այդ կապը արտահայտվում է ամբողջական առաջարկի թեք կորի վրա:

Նկ. 20.3. Ամբողջական առաջարկի քեյնսյան մոտեցումը

Ինչպես կտեսնենք հետագայում, պետությունը հնարավորություն է ստանում էականորեն ազդելու տնտեսության թողարկման ծավալի և զբաղվածության վրա: Ազդելով գների մակարդակի վրա, պետությունը դրանով փոփոխում է իրական աշխատավարձը, հետևաբար նաև՝ ամբողջական առաջարկի ծավալը: Օրինակ, արժույթի դևալվացիան /արժեզրկումը/ հանգեցնում է գների բարձրացման, իրական աշխատավարձի նվազման և զբաղվածության աճի: Դասական մոդելում այդպիսի քաղաքականությունը հանգեցնում է միայն գների աճի՝ առանց փոխելու իրական աշխատավարձը և զբաղվածությունը:



Քանի որ անվանական աշխատավարձը հաստատագրված է, հաստատուն է նաև գների մակարդակը, ապա թողարկման ծավալն ամբողջությամբ որոշվում է ամբողջական պահանջարկի պայմաններով:

Նկ. 20.4. Ամբողջական առաջարկի ֆունկցիան

Եթե մոդելում ընդունենք ծայրահեղ դեպք՝ աշխատավարձը հաստատագրված է, ապա կարճ ժամկետում գները նույնպես չեն փոխվում, և իրական աշխատավարձը (W/P) հաստատագրվում է: Այդ դեպքում, եթե W/P > MPL, ձեռնարկությունները աշխատանքի նկատմամբ ոչ մի պահանջ չեն ներկայացնում, իսկ եթե W/P < MPL, կներկայացնեն ոչնչով չսահմանափակված պահանջարկ: Երբ W/P = MPL, ամբողջական առաջարկի կորը կընդունի հորիզոնական տեսք, որը գտնվում է P = W/ MPL մակարդակում:

Այդ դեպքում արդեն արտադրության ծավալը որոշվում է բացառապես ամբողջական պահանջարկի փոփոխություններով:

20.2. Ամբողջական առաջարկի 4 մոդելների մեխանիզմը

ա. Կայուն աշխատավարձի մոդելը

Ո՞րն է ամբողջական առաջարկի կորի թեքության պատճառը: Այս հարցում տնտեսագետները միասնական կարծիք չունեն: Նրանց մի մասը, հետևելով Քեյնսին, կողմնակից է վերը նկարագրված կայուն աշխատավարձի մոդելին: Ինչպես պարզաբանեցինք, երբ գները փոխվում են, իսկ անվանական աշխատավարձը չի փոխվում, փոխվում է իրական աշխատավարձը: Այսինքն՝

1. Եթե գները սպասվում են P^e մակարդակում, մինչդեռ իրականում այն կազմել է P, որը սպասվածից ավելի է՝ իրական աշխատավարձը իջնում է:

2. Աշխատանքի շուկայի գրաֆիկից երևում է, որ իրական աշխատավարձը իջնելիս աշխատուժի նկատմամբ պահանջարկը աճում է: Հետևաբար ձեռնարկությունները սկսում են ավելի շատ աշխատուժ վարձել, քանի որ ծախսերի կրճատումը ավելացնում է նրանց շահույթը:

3. Ըստ արտադրական ֆունկցիայի՝ աշխատուժի ավելացումը հանգեցնում է արտադրության ծավալի համապատասխան աճի: Այսինքն՝ աշխատավարձի կայունության դեպքում, գների աճը նպաստում է արտադրության ծավալի աճին:

Այսպիսով, կարելի է պնդել, որ թողարկման մեծությունը /Y/ շեղվում է իր բնական մակարդակից /$\overline{Y}$/, երբ գնի մակարդակը շեղվում է սպասվածից:

$$Y = \overline{Y} + a(P - P^e)$$

Նման պնդումը չի կարելի համարել բացարձակ, քանի որ աշխատավարձի կայունությունը նույնպես բացարձակ չէ: Ճիշտ է, աշխատավարձի չափը պայմանագրերում նշելը, նվազագույն աշխատավարձի սահմանումը և մի շարք այլ գործոններ նպաստում են անվանական աշխատավարձի կայունությանը, սակայն կարելի է նաև նշել բազմաթիվ պատճառներ, որոնք գների բարձրացման պայմաններում նպաստում են աշխատավարձի աճին: Երբ ինֆլյացիայի տեմպերը կայուն են, հաճախ պայմանագրերում նախատեսվում է անվանական աշխատավարձի բարձրացում,

ինդեքսավորում: Դա նպաստում է աշխատավարձի բարձրացմանը, սակայն այդ գործոնի ազդեցությունը չի վերանում, և անվանական աշխատավարձի աճի հետ մնալը գների աճից դառնում է առաջարկի կորի թեքության պատճառ: Սակայն սա առաջարկի կորի թեքության միակ բացատրությունը չէ:

բ. Աշխատողների սխալ պատկերացումների մոդելը

Տնտեսագետների մեկ այլ խմբի կարծիքով, առաջարկի կորի թեքության պատճառը աշխատանքի շուկայի վերաբերյալ աշխատուժի սխալ պատկերացումներն են: Նրանք գտնում են, որ աշխատանքի շուկայում աշխատավարձի փոփոխությունը հավասարակշռում է աշխատուժի առաջարկը և պահանջարկը: Ինչպես տեսանք, աշխատանքի շուկան ներկայացվում է հետևյալ գրաֆիկով.



Աշխատողների սխալ պատկերացումների մոդելում հավասարակշռությունը աշխատանքի շուկայում ձեռք է բերվում այնպես, որ աշխատանքի պահանջարկի և աշխատանքի առաջարկի կետը նշում է վարձու աշխատողների թիվը: Աշխատանքի առաջարկի կորի դիրքը կախված է գնի մակարդակի մասին աշխատողների պատկերացումներից:

Նկ. 20.5. Հավասարակշռությունը աշխատանքի շուկայում

Ինչպե՞ս է ձեռք բերվում աշխատավարձի մակարդակի մասին համաձայնությունը աշխատողների ու ձեռնարկատերերի միջև, ինչպիսի՞ գործոններ են ազդում դրա վրա: Դրանք երկուսն են՝ բանակցությունների պահին գործազրկության մակարդակը և ինֆլյացիայի մակարդակը պայմանագրի գործողության ժամկետում:

Եթե արտադրության ծավալը, այսինքն՝ նաև գործազրկության մակարդակը, շեղվում է իր բնական մակարդակից, դա ազդում է ոչ միայն անվանական, այլև իրական աշխատավարձի մակարդակի վրա: Երբ գործազրկությունը ցածր է, աշխատողների դիրքերը ուժեղ են, և իրական աշխատավարձը բարձրանում է: Սակայն բարձր գործազրկության պայմաններում հնարավոր է միայն իրական աշխատավարձի իջեցում:

Ընդունենք՝ աշխատավարձի մակարդակը $(W/P)_1$ հավասարակշռության կետից բարձր է: Այդպիսի մակարդակի դեպքում աշխատանք առաջարկողների թիվը ավելի շատ է, քան ձեռնարկությունները ի վիճակի են վարձել: Գործազրկության բարձր մակարդակը ազդում է իրական աշխատավարձի վրա՝ իջեցման ուղղությամբ: Եթե աշխատավարձը $(W/P)_2$ մակարդակի վրա է, ձեռնարկությունները դժվարությամբ են գտնում նոր

աշխատողներ: Աշխատանքի շուկայում այսպիսի սահմանափակ առաջարկի պայմաններում գործազրկությունը ցածր է, իսկ իրական աշխատավարձը բարձրացման միտում ունի: Հետևաբար, աշխատողների կողմից առաջարկվող աշխատանքը կախված է սպասվող իրական աշխատավարձի մեծությունից:

Սակայն աշխատողներին հայտնի է իրենց անվանական աշխատավարձը, բայց հայտնի չէ գների ընդհանուր մակարդակը: Որոշում ընդունելու համար նրանք պետք է հաշվի առնեն նաև երկրորդ գործոնը՝ սպասվող ինֆլյացիան: Այսինքն՝ իրական աշխատավարձը պետք է ճշգրտեն սպասվող գների փոփոխությամբ. այսինքն՝

$$W/P = P/P^e$$

Ենթադրենք՝ աշխատողները ճիշտ են կանխատեսել սպասվող գների աճը՝ P^e: Այդ դեպքում իրական աշխատավարձը և զբաղվածության մակարդակը չեն փոխվի, քանի որ անվանական աշխատավարձը կավելանա այնքան, որքան գնի մակարդակը: Աշխատանքի շուկայում հավասարակշռության կետը չի տեղափոխվի:

Բայց երբ տեղի է ունենում գների չնախատեսված աճ, ապա P-ն աճում է ավելի արագ, քան P^e-ն: Այդ ժամանակ աշխատողները, սխալմամբ ընդունելով, որ իրենց աշխատավարձը բարձր կլինի, ավելի շատ աշխատանք կառաջարկեն իրական աշխատավարձի յուրաքանչյուր մեծության դեպքում: Աշխատանքի առաջարկի կորը կտեղաշարժվի ներքև, աջ: Իրական աշխատավարձը կիջնի:

Ձեռնարկությունները ավելի ճիշտ են կարողանում կանխատեսել իրական աշխատավարձի անկումը, վարձում են ավելի շատ աշխատողներ և թողարկում են ավելի շատ արտադրանք: Այսպիսով, գների մակարդակի փոփոխության հետևանքով իրական աշխատավարձը իջնում է, իսկ դրա հետևանքով արտադրության ծավալը շեղվում է իր բնական մակարդակից, այսինքն՝

$$Y = \overline{Y} + a(P - P^e)$$

գ. Անկատար տեղեկատվության մոդելը

Տնտեսագետների երրորդ խումբը ամբողջական առաջարկի կորի թեքության պատճառը համարում է անկատար տեղեկատվությունը: Ընդ որում, այդ տեղեկատվությունը թերի է և՛ ձեռնարկությունների, և՛ աշխատողների համար հավասարապես: Իսկապես, եթե ձեռնարկությունը որևէ արտադրանք է թողարկում, նա այդ արտադրանքի գների փոփոխության մասին ավելի ամբողջական տեղեկություններ ունի, քան այն բազմաթիվ ապրանքների գների մասին, որոնք ինքը սպառում է: Օրինակ, երբ ֆերմերը որոշում է ընդունում արտադրվող հացահատիկի ծավալի մասին, նա ստացվող եկամուտը համեմատում է այն ապրանքների և ծառայությունների գների հետ, որոնք կարող է ձեռք բերել այդ եկամտով: Քանի որ նա հացահատիկ արտադրող է, ուշադիր հետևում է հացահատիկի անվանական գնին, սակայն լավ չգիտի մյուս ապրանքների գները, այսինքն՝ որո-

շում ընդունելիս լավ չի պատկերացնում հացահատիկի համեմատական գինը:

Այժմ ենթադրենք՝ գների մակարդակը բարձրանում է: Նկատելով հացահատիկի գնի բարձրացում՝ ֆերմերը /նմանապես և մյուս արտադրողները/ վստահ չէ, թե մնացած ապրանքների գները նույնպես բարձրացել են: Նա ենթադրում է, որ հացահատիկի համեմատական գինը մի փոքր բարձրացել է և ավելացնում է արտադրության ծավալը: Եթե այդպես են վարվում բոլոր ապրանքարտադրողները, արդյունքում ավելանում է ամբողջական առաջարկը:

դ. Ոչ ճկուն գների մոդել

Վերջապես, չորրորդ տեսակետի կողմնակիցները ելնում են այն փաստից, որ ձեռնարկությունները, ի պատասխան պահանջարկի տատանումների, անմիջապես չեն փոխում իրենց ապրանքների գները: Ընդհանրապես գոյություն ունեն երկու տիպի ձեռնարկություններ: Դրանց մի խումբը ձգտում է գները չփոխել, քանի որ կնքվել են երկարատև համաձայնագրեր, տպվել են գնացուցակներ, կամ շուկայի բնույթը թույլ չի տալիս փոխել գները և այլն: Այդ ձեռնարկությունների տեսակարար կշիռը նշանակենք s-ով: Ոչ ճկուն գներով ձեռնարկությունները իրենց գները սահմանում են նախօրոք, հետևյալ բանաձևով.

$$P = P^e + a(Y^e - \overline{Y}^e)$$

Ընդունենք՝ ձեռնարկությունները համարում են, որ $Y^e = \overline{Y}^e$, այսինքն՝ թողարկման սպասվող չափը հավասար կլինի բնական մակարդակին: Այդ դեպքում՝

$$P = P^e$$

Մյուս ձեռնարկությունների տեսակարար կշիռը, որոնք ունեն ճկուն գնագոյացում, կլինի (1- s): Այդ դեպքում գնի ընդհանուր մակարդակը կլինի.

$$P = s\,P^e + (1-s)\,[\,P^e + a(Y^e - \overline{Y}^e)\,]$$

Այսինքն՝ այն ձեռնարկությունները, որոնք գները սահմանում են նախօրոք, դրանք սահմանում են բարձր մակարդակում: Դա ստիպում է մյուս ձեռնարկություններին նույնպես գները բարձրացնել: Այսպիսով, սպասվող բարձր գները հանգեցնում են գների իրական աճի: Ճկուն գներ ունեցող ձեռնարկությունները սահմանում են բարձր գներ, որի հետևանքով բարձրանում է գների ընդհանուր մակարդակը: Ուստի թողարկման մեծության ազդեցությունը գների մակարդակի վրա կախված է ճկուն գներ ունեցող ձեռնարկությունների տեսակարար կշռից: Հանրահաշվական ձևափոխումներով՝ վերը բերված հավասարումը կարող ենք բերել սովորական տեսքի.

$$Y = \overline{Y} + a(P - P^e)$$

a պարամետրը ցույց է տալիս, թե որքանով է թողարկման ծավալը զգայուն գների անսպասելի փոփոխության նկատմամբ. 1/a-ն ցույց է տալիս կորի թեքությունը:

20.3. Ֆիլիպսի կորը

Անդրադառնանք աշխատանքի շուկայի իրադրությանը և դիտարկենք մեկ այլ տեսանկյունից: Շուկայի իրադրությամբ է որոշվում աշխատավարձի մակարդակը աշխատանքային պայմանագիր կնքելու ժամանակ: Ինչպես նշեցինք, երբ գործազրկության մակարդակը ցածր է, և տնտեսությունը մոտ է լրիվ զբաղվածությանը, աշխատողների դիրքերը ուժեղ են, արհմիությունները՝ ագրեսիվ: Աշխատանքի այդպիսի շուկայում իրական աշխատավարձը բարձրանում է: Սակայն երբ գործազրկության մակարդակը բարձր է, աշխատողների դիրքերը թուլանում են, և իրական աշխատավարձը կարող է նույնիսկ իջնել:



Գնի մակարդակը հավասարակշռվածից աճելու դեպքում իրական աշխատավարձը իջնում է, որի հետևանքով մեծանում է աշխատուժի նկատմամբ պահանջարկը: Պահանջարկի ավելցուկի դեպքում ֆիրմաներն ավելացնում են վարձվող բանվորների քանակը, և զբաղվածությունն ավելանում է: Գնի մակարդակը հավասարակշռվածից նվազելու դեպքում, ընդհակառակը՝ իրական աշխատավարձը աճում է, առաջանում է առաջարկի ավելցուկ: Քանի որ աշխատուժի առաջարկը գերազանցում է նրա պահանջարկը, զբաղվածության մակարդակը իջնում է:

Նկ. 20.6. Զբաղվածության կախվածությունը իրական աշխատավարձից

Ինչպես տեսանք, եթե իրական աշխատավարձի $(W/P)_1$ մակարդակը հավասարակշռության կետից բարձր է, աշխատել ցանկացողների թիվը ավելի շատ է, քան ձեռնարկությունները կարող են վարձել: Գործազրկության բարձր մակարդակը ազդում է իրական աշխատավարձի իջեցման ուղղությամբ: Սակայն $(W/P)_2$ աշխատավարձի մակարդակի պայմաններում ձեռնարկությունները դժվարությամբ են գտնում աշխատողներ: Գործազրկությունը այս դեպքում ցածր է, և իրական աշխատավարձն ունի աճելու միտում: Իրական աշխատավարձի փոփոխության կախվածությունը գործազրկությունից արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$(W/P) = -\beta(U-Un)$$

U - գործազրկության մակարդակն է ընթացիկ տարում,

Un- գործազրկության բնական մակարդակը,

β- գործակից, որը ցույց է տալիս իրական աշխատավարձի արձագանքը գործազրկության կոնկրետ մակարդակին:

Այս կախվածությունը առաջին անգամ նկատել և վերլուծել է Լոնդոնի տնտեսագիտական դպրոցի պրոֆեսոր Ա. Ու. Ֆիլիպսը: Այն, ըստ էության, ամբողջական առաջարկի տեսության մեկ այլ մեկնաբանություն է: Փորձենք ապացուցել դա:

Անցումը Ֆիլիպսի կորից ամբողջական առաջարկին

Տոկոսային փոփոխության տեսքով հավասարումը կարելի է գրել հետևյալ կերպ.

$$W_{+1}-P_{+1}= -\beta(U-Un)$$
$$W_{+1}= P_{+1}-\beta(U-Un)$$

Երբ համաձայնագիր է կնքվում ապագա աշխատավարձի վերաբերյալ, գործատուն և աշխատողը պայմանավորվում են աշխատավարձի միջին մակարդակի մասին: Սակայն հնարավոր չէ կանխատեսել ինֆլյացիայի իրական ապագա մակարդակը: Այդ պատճառով, նրանք ստիպված են կողմնորոշվել ինֆլյացիայի P^e տեմպերի վերաբերյալ իրենց ենթադրություններով կամ սպասումներով: Հետևաբար, բանաձևը կլինի.

$$W_{+1}= P^e_{+1} -\beta(U-Un)$$

Այսպիսով, ստացանք դինամիկ մոդել, որտեղ անվանական աշխատավարձը հիմնված է նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունների վրա, կանխորոշված է, սահմանված է նախօրոք: Առանձին ժամանակահատվածներում աշխատավարձը փոխվում է՝ կախված ինֆլյացիոն սպասումներից և գործազրկության մակարդակից:

Եթե բանաձևում ընդունենք, որ աշխատավարձի աճի տեմպը հավասար է գների ինֆլյացիոն տեմպին, որը իրական է և տրամաբանական, ապա կարող ենք գրել.

$$P= P^e_{+1} -\beta(U-Un)$$

Հիշենք, որ Օուկենի օրենքը վերաբերում է գործազրկության և ապրանքների ու ծառայությունների արտադրության ծավալի հարաբերակցությանը: Այս օրենքը նշում է, որ թողարկման շեղումը իր բնական մակարդակից հակադարձ համեմատական է գործազրկության՝ բնական մակարդակից շեղումներին: Չևափոխելով ամբողջական առաջարկի բանաձևը՝ կարող ենք գրել. $P=P^e+1/a(Y-\overline{Y})$ և օգտագործելով նշված հարաբերակցությունը $1/a(Y-\overline{Y})$-ի փոխարեն, կարող ենք գրել $\beta(U-Un)$ և ստանալ նույն Ֆիլիպսի կորը: Հետևաբար, Ֆիլիպսի կորը ամբողջական առաջարկի ներկայացման և վերլուծության միայն առավել հարմար եղանակն է:

20.4. Ինֆլյացիայի և գործազրկության միջև ընտրության հիմնահարցը

Ինչպես արդեն նշել ենք, ամբողջական պահանջարկի կորը անընդհատ կարող է տեղաշարժվել աջ՝ առաջ բերելով երկարատև ինֆլյացիա: Դա կարող է տեղի ունենալ տարբեր պատճառներով: Ձեռնարկատերերը կարող են ձեռք բերվող ներդրումային ապրանքների ծավալները մեծացնելու որոշում ընդունել, իսկ կառավարությունը՝ պետական ծախսերը ավելացնելու և այլն:

Ընդունենք՝ որոշակի ժամանակամիջոցում ամբողջական պահանջարկը ընդլայնվել է AD_0-ից AD_1: Դրա հետևանքով գները բարձրացել են P_0-ից P_1, իսկ իրական թողարկումն աճել է Y_0-ից Y_1: Այժմ ենթադրենք՝ պետությունը շարունակում է խթանող քաղաքականությունը, և ամբողջական պահանջարկի կորը ավելի մեծ չափով է տեղափոխվում աջ՝ մինչև AD_2: Նոր հավասարակշռության կետում և՛ ինֆլյացիան, և՛ արտադրության ծավալը ավելի մեծ են: Հետևաբար, որքան բարձր է ամբողջական պահանջարկի հավելաճը, այնքան մեծ է դրա հետևանքով առաջացող ինֆլյացիան և իրական արդյունքի աճը, ցածր՝ գործազրկության մակարդակը: Այսինքն՝ ինֆլյացիայի բարձր տեմպերը պետք է ուղեկցվեն գործազրկության ցածր մակարդակով, և հակառակը:



Ամբողջական պահանջարկի մեծացման տարբերակների համեմատությունը ցույց է տալիս, որ որքան մեծ է ամբողջական պահանջարկը, այնքան բարձր է դրա հետևանքով առաջացող ինֆլյացիան և թողարկման ծավալը: Քանի որ արտադրության իրական ծավալը և գործազրկության մակարդակները հակադարձ համեմատական են, կարելի է եզրակացնել, որ ինֆլյացիայի բարձր մակարդակը պետք է ուղեկցվի գործազրկության ցածր մակարդակով:

Նկ. 20.7. Ամբողջական պահանջարկի ազդեցությունը գների մակարդակի և արտադրության ծավալի վրա

Այսպիսով, առաջանում է երկվություն քաղաքականության բնագավառում: Դրամական և հարկաբյուջետային քաղաքականության գործիքներով ամբողջական պահանջարկի փոփոխությունների ապահովման հետևանքով տեղի է ունենում տեղաշարժ Ֆիլիպսի կորի երկայնքով: Այսինքն՝ խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը, «էժան» փողերի քաղաքականությունը, որն ապահովում է ամբողջական պահանջարկի բարձր մակարդակ և գործազրկության ցածր մակարդակ, ծնում է ինֆլյացիայի բարձր տեմպեր: Եվ հակառակը, սահմանափակ հարկա-

բյուջետային քաղաքականությունը և «թանկ» փողերը կարող են օգտագործվել ինֆլյացիայի մակարդակը կրճատելու նպատակով, սակայն միայն գործազրկության մակարդակի աճի հաշվին: Ամբողջական պահանջարկի կարգավորման քաղաքականությունը կարող է օգտագործվել Ֆիլիպսի կորի վրա որևէ կետ ընտրելու համար: Այն չի կարող ապահովել «լրիվ զբաղվածություն՝ առանց ինֆլյացիայի»:



Կարճ ժամկետում գոյություն ունի հակադարձ կախվածություն գործազրկության և ինֆլյացիայի միջև: Ժամանակի ցանկացած պահի կառավարությունը կարող է Ֆիլիպսի կորի վրա ընտրել դրանց որոշակի համադրում:

Նկ. 20.8. Ինֆլյացիայի և գործազրկության միջև հակադարձ կապը կարճ ժամկետում

Վերը կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ նախ՝ իրական տնտեսության մեջ ամբողջական առաջարկի կորն ունի թեքություն և երկրորդ՝ նկարագրում է գների փոփոխության /ինֆլյացիայի/ և զբաղվածության միջև կապը: Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ ամբողջական առաջարկի կորը արտահայտում է ինֆլյացիայի և զբաղվածության միջև փոխադարձ կապը: Սակայն ինչպես նշվեց նախորդ շարադրանքում, ամբողջական առաջարկի տեսությունները հենվում են գների փոփոխությունների վրա:

Նախկինում ինֆլյացիան քննարկելիս հենվում էինք միայն պահանջարկի փոփոխությունների վրա և ենթադրում, որ գները բարձրանում են, որովհետև փողի զանգվածի աճին հետևում է ամբողջական պահանջարկի աճը: Վերը բերված գրաֆիկից երևում է, որ գների բարձրացումը պայմանավորված է ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժով դեպի աջ, որը կարող է պայմանավորված լինել, օրինակ, հարկային քաղաքականությամբ: Սակայն գները կարող են աճել նաև ամբողջական առաջարկի կորի տեղաշարժման պատճառով, նույնիսկ ամբողջական պահանջարկի կորի կայուն դիրքի պայմաններում: Դա կատարվում է ամբողջական առաջարկի կրճատման հետևանքով: Դրա պատճառը առաջարկի շոկերն են:

Առաջարկի շոկերը

Առաջարկի շոկի ժամանակ AS կորը տեղափոխվում է ձախ: Առաջարկի շոկերը առաջանում են տարբեր պատճառներով:

Ագրարային երկրներում, օրինակ, բնակլիմայական պայմանների կտրուկ փոփոխությունները կամ գյուղատնտեսական վնասատուները

կարող են բերքատվության կրճատման պատճառ դառնալ, որը, արտադրության ծավալի կրճատման հետ միաժամանակ, հանգեցնում է գների աճի:

Առաջարկի շոկ է առաջացնում նաև նավթի համաշխարհային գների աճը, քանի որ դրա հետևանքով արտադրության սահմանային ծախսերը ավելանում են: Դա կրճատում է արտադրության ծավալը և բարձրացնում գները:



Ամբողջական առաջարկի կորը տեղափոխվում է ձախ՝ առաջարկի այնպիսի շոկերի ազդեցությամբ, ինչպիսիք են՝ էներգակիրների թանկացումը, գյուղատնտեսական մթերքների քանակի կրճատումը, ներմուծվող ապրանքների գների աճը, աշխատուժի արտադրողականության նվազումը, իրական աշխատավարձի աճը: Սրանց հետևանքը ստագֆլյացիան է՝ արտադրության իրական ծավալի կրճատումը, որը ուղեկցվում է գների աճով:

Նկ. 20.9. Ամբողջական առաջարկը և ստագֆլյացիան

Իրական կյանքում երկարատև, կայուն ինֆլյացիան հնարավոր չէ բացատրել միայն առաջարկի շոկերով: Եթե ամբողջական պահանջարկի կորը կարող է անընդհատ տեղափոխվել աջ, օրինակ՝ սենյորաժի հետևանքով, ապա դժվար է պատկերացնել, որ ամբողջական առաջարկի կորը կարող է անընդհատ տեղափոխվել ձախ, քանի որ առաջարկի շոկերն ունեն ժամանակավոր, կարճատև բնույթ: Սակայն տնտեսագետների մի մասն այն կարծիքին է, որ աշխատավարձի բարձրացումը, որը նշվում է աշխատանքային պայմանագրերում, նույնպես հանգեցնում է առաջարկի շոկի, քանի որ անվանական աշխատավարձի բարձրացումը առաջարկի կորը տեղափոխում է ձախ: Այդպիսի տեղաշարժ է կատարվում նաև, երբ, հաշվի առնելով սպասվող գների աճը, իրականացվում է աշխատավարձի ինդեքսավորում:

Երբ աշխատավարձի մակարդակը նախօրոք սահմանված է, դրա ցանկացած փոփոխություն կարելի է դիտարկել որպես առաջարկի յուրահատուկ շոկ, քանի որ այն առաջարկի կորը տեղափոխում է ձախ: Որոշ տնտեսագետներ կարող են առարկել, քանի որ առաջարկի շոկերը ընդունված է համարել արտաքին գործոն, այնինչ աշխատավարձը ներքին փոփոխական է: Այնուամենայնիվ, աշխատավարձի բարձրացումը տեղափոխում է առաջարկի կորը ձախ, և արդարացիորեն այն կարելի է համարել առաջարկի շոկի աղբյուր:

Նշված գործոնների ազդեցությամբ ամբողջական առաջարկի կորը տեղափոխվում է ձախ, որի հետևանքով ստեղծվում է մակրոտնտեսական հնարավոր վատթարագույն իրավիճակ՝ արտադրության ծավալի կրճատումը և գործազրկության աճը ուղեկցվում են գների մակարդակի բարձրացմամբ: Թվում է, թե Ֆիլիպսի կորը հերքվում է: Գրաֆիկից երևում է, որ այս դեպքում կառավարությունը չի կարողանում միաժամանակ պահպանել գների կայունություն և լրիվ զբաղվածություն: Գների կայունություն

ապահովելու համար պետք է կրճատվի ամբողջական պահանջարկը, այսինքն՝ էլ ավելի կրճատվի արտադրության ծավալը և զբաղվածությունը: Սա փաստորեն «ինֆլյացիա, թե՝ բարձր գործազրկություն» երկվության առաջացման երկրորդ պատճառն է: Ընդ որում, ստագֆլյացիայի պայմաններում ընտրությունը իրականացվում է ոչ թե Ֆիլիպսի կորի երկայնքով, այլ արդեն կորն է տեղափոխվում աջ, և գործազրկության նախկին մակարդակը պահպանելու համար անհրաժեշտ է ապահովել ինֆլյացիայի ավելի բարձր տեմպ: Հետագայում այս հիմնահարցը կքննարկենք ավելի հանգամանորեն:

20.5. Սպասումները ամբողջական առաջարկի մոդելում

Ամբողջական առաջարկի մոդելում կարևոր դեր է կատարում սպասումների հիմնահարցը: Ինֆլյացիա-գործազրկություն երկընտրանքում գների մակարդակի ճիշտ կանխատեսումը կախված է սպասումների ընկալումից: Գոյություն ունեն սպասումների ձևավորման տարբեր տեսություններ, որոնցից առավել տարածվածը երկուսն են: Նախ քննարկենք դրանցից առաջինը:

Հարմարեցվող կամ իներցիոն սպասումներ

Այս տեսությունը անվանում են հարմարեցվող այն պատճառով, որ տրամաբանորեն ինֆլյացիայի սպասումները ձևավորվում են նախորդ և ընթացիկ ինֆլյացիայի մակարդակների հիման վրա: Այս տեսությունը առաջ է քաշվել Մ. Ֆրիդմենի կողմից և հիմնավորում է, որ կարճ ժամկետում կարող է գոյություն ունենալ հակադարձ կապ գործազրկության և ինֆլյացիայի միջև: Միևնույն ժամանակ, այն պնդում է, որ երկար ժամկետում այդպիսի կապ գոյություն չունի:

Ինչպես նշել ենք, հարմարեցվող սպասումների ժամանակ տնտեսական սուբյեկտները ինֆլյացիան կանխատեսում են նախորդ ժամանակաշրջանի ինֆլյացիայի հիման վրա, այսինքն՝ $P^e_{+1} = P^e + v(P - P^e)$, որտեղ՝ v-ն՝ ինֆլյացիայի սպասման ճշգրտման գործակիցն է:

Գալիք ինֆլյացիան հավասար է ընթացիկ ժամանակաշրջանում ինֆլյացիոն սպասումներին՝ ճշգրտված կանխատեսման շեղումների չափով $v(P - P^e)$: Այսինքն, եթե ընթացիկ ժամանակաշրջանում ինֆլյացիան ավելի բարձր է, քան կանխատեսված էր, սպասվող ինֆլյացիան ճշգրտվում է բարձրացման ուղղությամբ: Եթե փաստացի ինֆլյացիան ավելի ցածր է կանխատեսվածից, ապա սպասվող ինֆլյացիան ճշգրտվում է իջեցման ուղղությամբ: Ճշգրտման v գործակիցը որոշում է սպասումների վերանայման արագությունը: Երբ այս գործակիցը մոտ է 1-ին, ինֆլյացիոն սպասումները արագ են ճշգրտվում: Երբ v=1՝ բանաձևը կընդունի հետևյալ տեսքը.

$$P^e_{+1} = P$$

Այդ դեպքում կանխատեսվող ինֆլյացիան կհամընկնի ընթացիկին: Ֆիլիպսի կորը կունենա հետևյալ տեսքը.

$$P_{+1}=P-\beta(U-U_n)$$

Այս արտահայտության առաջին անդամը՝ P-ն, ցույց է տալիս, որ ինֆլյացիան իներցիոն գործընթաց է: Եթե գործազրկությունը գտնվում է բնական մակարդակի վրա, ապա գները մշտապես կաճեն որոշակի տեմպով: Այդ իներցիան առաջանում է այն պատճառով, որ նախկին ինֆլյացիան ազդում է սպասվող ինֆլյացիայի վրա, իսկ սպասումը ազդում է աշխատավարձի և գների սահմանման վրա: «Ինչո՞ւ են մեր փողերը անընդհատ էժանանում, - հարցնում է Ռ.Սոլոուն և պատասխանում, - հավանաբար ինֆլյացիան չի հաղթահարվում այն պարզ պատճառով, որովհետև մենք դրան սպասում ենք, իսկ սպասում ենք, որովհետև այն կար նախկինում»:

Բանաձևից բխում է, որ ինֆլյացիայի տեմպերը չեն փոխվում միայն այն ժամանակ, երբ գործազրկության ընթացիկ U մակարդակը հավասար է դրա բնական մակարդակին: Եթե U-ն ցածր է Un-ից, ապա P_{+1}-ը մեծ է P-ից և հակառակը: Հետևաբար, գործազրկությունը կարելի է պահել բնական մակարդակից ցածր միայն այն քաղաքականությամբ, որը նպաստում է ինֆլյացիայի տեմպերի աճին: Այս հետևությունը, որն անվանում են արագացման սկզբունք, հանգեցնում է մեկ այլ հետևության. գործազրկության բնական մակարդակը չի արագացնում ինֆլյացիան, քանի որ դրանից ցածր գործազրկության պայմաններում ինֆլյացիան ավելացնում է տեմպը, ավելիի դեպքում՝ դանդաղեցնում: Այս հիմնահարցը քննարկենք ավելի հանգամանորեն:

Ֆիլիպսի կարճաժամկետ կոր - երկարաժամկետ կոր երկընտրանքը

Արագացման սկզբունքը հանգեցնում է մի կարևոր հետևության ևս: Ինֆլյացիայի և գործազրկության միջև փոխզիջումը հնարավոր է միայն կարճ ժամկետում, երկար ժամկետում այն գոյություն չունի: Ինչո՞ւ:

Երբ Ֆիլիպսը առաջին անգամ առաջարկեց իր հայտնի «ինֆլյացիա-գործազրկություն» երկընտրանքը, շատ տնտեսագետներ դա մեկնաբանում էին հետևյալ կերպ.



Ամբողջական պահանջարկի փոփոխությունների օգնությամբ կառավարությունը կարճ ժամկետում կարող է ընտրել Ֆիլիպսի կորի երկայնքով ցանկացած կետ (օրինակ՝ B): Սակայն երկար ժամկետում այդ հարաբերակցությունը հնարավոր չէ պահպանել, քանի որ զբաղվածությունը վերադառնում է իր բնական մակարդակին: Երկար ժամկետում կորը ընդունում է ուղղահայաց տեսք:

U_1 U_n U

Նկ. 20.10. Ֆիլիպսի կարճաժամկետ և երկարաժամկետ կորերը

Կառավարությունը կարող է ընտրել գործազրկության անընդհատ ցածր մակարդակ՝ ապահովելով ինֆլյացիայի ավելի բարձր և կայուն տեմպեր: Նայելով Ֆիլիպսի կարճաժամկետ կորին՝ նրանք պնդում էին, որ կարելի է անընդհատ անցնել A կետից B կետին, այսինքն՝ հաշտվել ինֆլյացիայի բարձր տեմպերի հետ՝ հանուն գործազրկության մշտական ցածր տեմպերի: Սակայն արագացման սկզբունքը հուշում է, որ երկար ժամկետում այդպիսի փոխզիջում հնարավոր չէ: Բանն այն է, որ Ֆիլիպսի կորի վրա B կետը կայուն հավասարակշռության վիճակ չի նշանակում: Ըստ հարմարեցվող սպասումների տեսության, աշխատողները գիտակցում են, որ իրենց իրական աշխատավարձը և եկամուտները կրճատվել են, այսինքն՝ անվանական աշխատավարձը աճել է ավելի դանդաղ, քան ինֆլյացիայի տեմպերն են: Հետևաբար աշխատողները կպահանջեն և կստանան աշխատավարձի բարձրացում՝ իրենց նախկին գնողունակությունը պահպանելու համար: Բայց երբ անվանական աշխատավարձը բարձրանա, ձեռնարկատերերի շահույթները կկրճատվեն մինչև նախկին մակարդակը: Դա նշանակում է, որ վերանում են այն սկզբնական դրդապատճառները, որոնք խթանել էին զբաղվածության ավելացումը և արտադրության ծավալի աճը:

Ինչպիսին են հետևանքները: Գործազրկությունը վերադառնում է իր բնական մակարդակին A_1 կետում: Սակայն տնտեսությունը բախվում է ավելի բարձր փաստացի ինֆլյացիոն սպասումների: Ավելի բարձր ինֆլյացիոն սպասումների պայմաններում Ֆիլիպսի կորը տեղափոխվում է վեր: Կարճ ասած, Ֆիլիպսի կորով A-ից B շարժվելը կարճաժամկետ, անցողիկ երևույթ է: Երկար ժամկետում, այն բանից հետո, երբ անվանական աշխատավարձի աճը հասնում է գների աճին, գործազրկությունը վերադառնում է իր բնական մակարդակին, իսկ նոր կարճաժամկետ Ֆիլիպսի կորը կարող է ունենալ ավելի բարձր սպասվող ինֆլյացիայի մակարդակ, այսինքն՝ աջ տեղափոխված:

Եթե կառավարությունը նորից խթանի պահանջարկը, նոր կորի երկայնքով տեղի կունենա կարճաժամկետ տեղափոխություն, և պարբերաշրջանը նորից կկրկնվի: Վերջին հաշվով, կորի երկայնքով կարճաժամկետ տեղափոխությունը հանգեցնում է հենց կորի տեղաշարժին ավելի անբարենպաստ դիրքով, քանի որ կորի վրա A-ից B-ին անցնելու համար պահանջվում է ինֆլյացիայի ավելի բարձր տեմպ:

Հետևաբար, երկար ժամկետում «ինֆլյացիա-գործազրկություն» երկվությունը չի ծագում: Ինֆլյացիայի կայուն մակարդակի հետ համատեղվում է միայն գործազրկության բնական մակարդակը: Ավելին, վերջինս համատեղվում է ինֆլյացիայի ցանկացած մակարդակի հետ: Այդ պատճառով, Ֆիլիպսի երկարաժամկետ կորը ուղղահայաց գիծ է: Այլ կերպ ասած՝ նշանակություն չունի՝ ինչպիսին է ինֆլյացիայի մակարդակը՝ գործազրկությունը միշտ վերադառնում է իր բնական մակարդակին:

Այժմ պատկերացնենք հավասարակշռության վիճակում գտնվող մի տնտեսություն՝ կայուն գներով և գործազրկության Սո բնական մակարդակում: Ֆիլիպսի կարճաժամկետ կորի վրա գների զրոյական աճի դեպքում դա համապատասխանում է A կետին:

Ենթադրենք՝ պետությունը ընդլայնում է ամբողջական պահանջարկը՝ ձգտելով իջեցնել գործազրկությունը իր բնական մակարդակից: Պահանջարկի կորը տեղաշարժվում է աջ, արտադրության ծավալն աճում է, գործազրկությունը՝ կրճատվում: Այսինքն՝ տեղի է ունենում տեղաշարժ Ֆիլիպսի կորի երկայնքով: Փաստացի ինֆլյացիան աճում է մինչև P_2, չնայած ինֆլյացիոն սպասումները դեռևս մնացել են զրոյական: Քաղաքական գործիչներին կարող է թվալ, որ նրանք հասել են փոխզիջման՝ ինֆլյացիայի և գործազրկության միջև: Չնայած ինֆլյացիան աճել է, գործազրկությունը նվազել է: Սակայն ինչպես տեսանք, այս հավասարակշռությունը հնարավոր չէ պահել: Այդ ժամանակամիջոցում տեղի է ունենում աշխատավարձի աճ՝ կապված գների բարձրացման հետ, և արտադրության ծավալը նախկին մակարդակի վրա պահելու համար անհրաժեշտ է ավելացնել պահանջարկը: Սակայն 2-րդ ժամանակահատվածում ինֆլյացիոն սպասումները նույնպես կավելանան: Ենթադրենք՝ 3-րդ ժամանակահատվածում դրանք ունեն 2-րդ ժամանակահատվածի ինֆլյացիայի մակարդակը՝ $P^e_3=P_2$: Այդ դեպքում 2-րդ ժամանակահատվածում բանվորները կձգտեն իրենց աշխատավարձերը հարմարեցնել 3-րդ ժամանակահատվածի սպասումներին: Ֆիլիպսի կարճաժամկետ կորը կտեղափոխվի վեր: Ինֆլյացիայի մակարդակը կհասնի P_2-ի, եթե գործազրկությունը նույնիսկ վերադառնա բնական մակարդակին: Եթե կառավարությունը ձգտի գործազրկությունը պահել U_1 մակարդակի վրա, ինչպես 1-ին ժամանակահատվածում, ապա 2-րդ ժամանակահատվածում նորից պետք է խթանի պահանջարկը: Բայց այդ դեպքում ինֆլյացիան կբարձրանա C կետ: Այլ կերպ ասած՝ գործազրկությունը բնական մակարդակից ցածր պահելու համար անհրաժեշտ է անընդհատ ավելացնել ինֆլյացիայի տեմպը /արագացման սկզբունք/:

Հակառակը, երբ կառավարությունը որոշում է կասեցնել ինֆլյացիան 2-րդ մակարդակում, գործազրկությունը կվերադառնա իր բնական մակարդակին: Վերջին հաշվով, ավելի բարձր ինֆլյացիան ապահովում է գործազրկության ժամանակավոր, այլ ոչ թե մշտական նվազում: Բարձր ինֆլյացիան մնում է, իսկ գործազրկությունը վերադառնում է իր բնական մակարդակին: Այսպիսի «ինֆլյացիոն քաղաքականություն» իրականացնելը այնքան էլ նպատակահարմար չէ:

Կորուստներ և արդյունքներ

Վերը շարադրված սցենարը կարող է կիրառվել ինֆլյացիայի մակարդակի կրճատման կամ դրա իսպառ վերացման համար: Ենթադրենք՝ տնտեսությունը գտնվում է A_2 կետում: Ամբողջական պահանջարկի կրճատումը կարող է իջեցնել ինֆլյացիայի մակարդակը՝ սպասվող ինֆլյացիայի համեմատ: Այդ ժամանակ ձեռնարկությունների շահույթը կնվազի, քանի որ գները կնվազեն ավելի արագ, քան աշխատավարձը: Հիշենք, որ

աշխատավարձը սահմանվել էր՝ նկատի ունենալով բարձր ինֆլյացիոն սպասումները: Շահույթի կրճատմանը ի պատասխան՝ ձեռնարկությունները կրճատում են զբաղվածությունը: Տնտեսությունը ժամանակավորապես Ֆիլիպսի կորով իջնում է ներքև: Սակայն բնական մակարդակի տեսության համաձայն, եթե ինֆլյացիայի փաստացի մակարդակը ցածր է սպասվածից, գործազրկության մակարդակը բարձրանում է:

Քանի որ ժամանակի ընթացքում ինֆլյացիոն սպասումները նվազում են, իջնում է նաև աշխատավարձը, շահույթը վերականգնվում է, Ֆիլիպսի կորը տեղափոխվում է ձախ, և բնական գործազրկության մակարդակը վերականգնվում է:

Հետևաբար, Ֆիլիպսի կորի վերլուծությունից բխում է, որ ինֆլյացիայի կասեցման ցանկացած փորձ պահանջում է գործազրկության ժամանակավոր աճ՝ բնական մակարդակից: Ձևափոխելով Ֆիլիպսի կորի հավասարումը՝ կարելի է գտնել այն «գինը», որն անհրաժեշտ է վճարել ինֆլյացիայի նվազեցման համար.

$$U-Un = -1/\beta(P_{+1}-P) = SR (P - P_{+1})$$

Ինֆլյացիայի կրճատման յուրաքանչյուր տոկոսը պահանջում է գործազրկության մակարդակի աճ իր բնական մակարդակից՝ 1/β տոկոսով: Կորուստների SR գործակիցը արտահայտում է գործազրկության գերազանցումը իր բնական մակարդակից՝ հարաբերած նույն ժամանակաշրջանում ինֆլյացիայի կրճատմանը:

1978-1980թթ. ԱՄՆ-ում տարեկան ինֆլյացիայի տեմպը գերազանցում էր 10,0%-ը: 1980թ. Ռեյգանը խոստացավ կրճատել ինֆլյացիան, որի նպատակով կասեցվեց փողի զանգվածի աճը, կիրառվեց խթանող հարկային քաղաքականություն /հարկերը կրճատվեցին/, և ավելացան ռազմական ծախսերը: Ինֆլյացիան 1980-1982թթ. 10,4%-ից իջավ 3,2%-ի: 1980-1984թթ. գործազրկության բնական մակարդակից (6%) շեղումների գումարը կազմեց 10,8%: Այդ ժամանակաշրջանում ինֆլյացիան կրճատվեց 7,2%-ով: Այսպիսով, SR կորստի գործակիցը կազմեց 1,5 (10,8 : 7,2), այսինքն՝ գործազրկության մակարդակի բարձրացումը 1,5 կետով ապահովել է 1% ինֆլյացիայի տեմպի կրճատում:

Այս գործակիցը կարելի է արտահայտել նաև արտադրության ծավալի կորուստներով: Վիճակագրական շարքերի հիման վրա ստացված արդյունքներով՝ այդ նույն ժամանակաշրջանում արտադրության ծավալի գումարային կրճատումը իր ներուժային մակարդակից կազմել է 21,5%: Այսինքն, կորուստների SR գործակիցը հավասար է 3-ի (21,5: 7,2): Դա նշանակում է, որ տարեկան ինֆլյացիայի տեմպի կրճատման յուրաքանչյուր տոկոսի համար «զոհաբերվել» է 3% ՀՆԱ՝ նրա ներուժային մակարդակի համեմատ:

Ֆիլիպսի կորը և բանական սպասումները

Սպասումների ձևավորման երկրորդ ուղղությունը բանական սպասումներն են: Այս տեսությունը, ըստ էության, նոր դասական տեսությունների ուղղություններից մեկն է: Վերջիններս, ինչպես գիտենք, օգտվում են

այն մոդելներից, որոնցում աշխատավարձը և գները արագ փոփոխվում են՝ ապահովելով շուկայի հավասարակշռությունը:

1970-ական թթ. սկզբներին մի խումբ տնտեսագետներ, Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Լուկասի գլխավորությամբ, քննադատեցին ինֆլյացիայի և գործազրկության միջև վերը շարադրված վերլուծությունը: Նրանք հերքում էին հարմարվող սպասումները և պնդում, որ աշխատողներն ու ձեռնարկությունները լիովին տիրապետում են տնտեսական իրավիճակին և սպասումները ձևավորում են ոչ թե նախորդ ժամանակաշրջանի իներցիայով, այլ՝ ելնելով դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների փոփոխություններից: Այդպիսի մոտեցումը ստացավ «բանական սպասումներ» անվանումը: Մարդիկ հասկանում են, թե պետական քաղաքականությունը ինչպես կազդի տնտեսության վրա և հաշվի են առնում դա որոշումներ ընդունելու գործընթացում: Այսինքն, ի տարբերություն հարմարեցվող սպասումների, որոնք ձևավորվում են անցյալի հիման վրա, բանական սպասումները ձևավորվում են պետության ապագա քաղաքականությունից ելնելով:

Այս ենթատեքստում ենթադրենք՝ պետությունը իրականացնում է խթանող քաղաքականություն: Աշխատողները պետք է ենթադրեն ինֆլյացիայի աճ և իրական աշխատավարձի հետագա կրճատում: Հետևաբար, նրանք այս սպասվող ինֆլյացիան հաշվի են առնում աշխատավարձը սահմանելիս: Եթե մենք ենթադրենք, որ աշխատողները ճշգրիտ հաշվի են առել սպասվող ինֆլյացիայի չափը և անվանական աշխատավարձը սահմանել են այնպես, որ պահպանեն իրական աշխատավարձի մակարդակը, ապա շահույթի, արտադրության ծավալի և զբաղվածության նույնիսկ ժամանակավոր աճ չի կարող լինել: Այդ դեպքում զբաղվածության ժամանակավոր բարձրացման փոխարեն, որը մեր գրաֆիկում երևում էր A կետից B տեղաշարժով, միանգամից տեղի կունենա տեղաշարժ A-ից A_1: Եթե աշխատողները ճշգրիտ կանխատեսել են ինֆլյացիան, ապա ոչ մի կարճաժամկետ գործազրկության կրճատում չի լինի, և կձևավորվի ուղղահայաց գիծ, որն անցնում է A, A_1, A_2 կետերով:

Այստեղից գալիս ենք այն եզրակացության, որ պահանջարկի խթանման միջոցառումները, որոնց նպատակը լրիվ զբաղվածության ապահովումն է, հանգեցնում են ինֆլյացիայի արագացման, սակայն չեն ազդում գործազրկության վրա: Այսպիսի մոտեցումը բացարձակ առումով գործնականում չի հաստատվում: Սակայն այս տեսությունը էականորեն փոխեց տնտեսագետների մոտեցումները սպասումների ձևավորման նկատմամբ, քանի որ հարմարեցվող սպասումների մեխանիզմը թեև խելամիտ, սակայն շատ պարզունակ է: Բանական սպասումները լրացնում են այն, քանի որ որոշումներ կայացնելիս իրականում մարդիկ հաշվի են առնում ոչ միայն անցյալի օրինաչափությունները /նայում են հետ/, այլև սպասվող իրադարձությունները /նայում են առաջ/:

Ինչպես տեսնում ենք, այս տեսության հիմքում ձեռնարկությունների և տնային տնտեսությունների կողմից ինֆլյացիայի կանխատեսման արժանահավատությունն է:

Լրիվ զբաղվածության պայմաններում իրական աշխատավարձը նշանակենք wp^f: Որպեսզի պարզենք այս տեսության կիրառելիությունը, ենթադրենք, որ հաջորդ ժամանակաշրջանի անվանական աշխատավարձը ընտրվում է այնպես, որ սպասվող իրական աշխատավարձը գալիք ժամանակաշրջանում հավասարվում է լրիվ զբաղվածության պայմաններում սահմանվող իրական աշխատավարձին: Սպասվող իրական աշխատավարձը պետք է հավասար լինի լրիվ զբաղվածության իրական աշխատավարձին.

$$W_{+1}/P^e_{+1} = wp^f$$

այսինքն՝

$$W_1=(P^e+1)\ wp^f$$

Այս հավասարումը կարևոր տեղեկատվություն է պարունակում: Եթե ընդունենք, որ աշխատողները և ձեռնարկությունները ճիշտ են կանխատեսում գների մակարդակը հաջորդ ժամանակաշրջանի համար, ապա իրական աշխատավարձը կլինի շուկայական հավասարակշռությանը համապատասխանող մակարդակի վրա: Այդ պատճառով կանխատեսման մեջ սխալների բացակայության դեպքում տնտեսությունը պետք է ապահովի լրիվ զբաղվածություն՝ անկախ նախորդ ժամանակաշրջանից:

Աշխատանքի շուկայի գրաֆիկից հիշենք, որ գործազրկության մակարդակը ֆունկցիա է աշխատավարձից: Որքան մեծ է $wp_{+!}$ մեծությունը հավասարակշռված մակարդակից, այնքան ցածր է զբաղվածությունը և բարձր՝ գործազրկության մակարդակը: Դա իր արտահայտությունն է գտնում հետևյալ բանաձևում.

$$U_{+1}=Un+g(wp_{+1}-wp^f)$$

Հավասարումը ցույց է տալիս, որ U_{+1}-ը հավասարվում է գործազրկության բնական մակարդակին, երբ իրական աշխատավարձը՝ wp_{+1}-ը, հավասարվում է wp^f-ին: Երբ իրական աշխատավարձը բարձր է այդ մակարդակից, գործազրկության մակարդակը նույնպես բարձր է և հակառակը: Հանրահաշվական ձևափոխումներ կատարելով՝ մենք կարող ենք ստանալ բանական սպասումների տեսության գլխավոր հավասարումը.

$$U_{+1}=Un+h(P_{+1} - P^e_{+1})$$

որտեղ՝

h-ը փոփոխական է, որը հավասար է $g(wp^f)$:

Օգտագործելով Ֆիլիպսի կորը՝ բանական սպասումների տեսության կողմնակիցները հանգում են հետևյալ եզրակացության. հաջորդ ժամանակաշրջանում գործազրկությունը ֆունկցիա է նույն ժամանակաշրջանի ինֆլյացիայի կանխատեսման անճշտությունից: Եթե ինֆլյացիան սպասվածից ավելի է, գործազրկությունը ցածր է, քանի որ իրական աշխատավարձը բարձր չէ: Երբ ինֆլյացիան սպասվածից քիչ է, գործազրկությունը բարձր է, քանի որ բարձր է նաև իրական աշխատավարձը:

Տրամաբանությունը այսպիսին է. բանական սպասումների ժամանակ աշխատավարձը սահմանվում է ապագա սպասումների հիման վրա: Նախորդ ժամանակաշրջանի ինֆլյացիան ինքնըստինքյան ոչ մի նշանակություն չունի, հետևաբար չկա նաև նախկինում մեր նկարագրած իներ-

ցիան: Ինֆլյացիայի կանխատեսումը հիմնված է քաղաքական գործիչների՝ ապագայի վերաբերյալ պատկերացումների վրա: Եթե բոլորը համոզվում են, որ ինֆլյացիան հավասարվելու է զրոյի, աշխատավարձը ինքնըստինքյան սահմանվում է այնպիսի անվանական մակարդակում, որն ապահովում է լրիվ զբաղվածություն:

Բանական սպասումների տեսության հայեցակարգով քաղաքական գործիչները պետք է համոզեն հասարակությանը, որ ամբողջական պահանջարկի կրճատումը կատարվում է միայն այն չափով, որ ինֆլյացիան հավասարվի զրոյի: Սա վճռական պահ է: Մարդիկ պետք է հասկանան կատարվող փոփոխությունների իմաստը և հավատան կառավարությանը: Այդ դեպքում նրանք համապատասխան ձևով կճշտեն իրենց սպասումները:

Սակայն հազիվ թե որևէ կառավարություն հեշտությամբ ձեռք բերի այդպիսի վստահություն: Հնարավոր է, որ նախկինում նա արդեն չի կատարել իր խոստումները, հնարավոր է, որ մոտ ապագայում սպասվում են ընտրություններ՝ համապատասխան խոստումներով, հնարավոր է կառավարության փոփոխություն: Հնարավոր է նաև, որ կառավարությունը խոստանա կոշտ քաղաքականություն, սակայն չկատարի իր խոստումները: Այս բոլորը պատճառ են դառնում, որպեսզի մարդիկ չհավատան կատարվող փոփոխություններին և չճշգրտեն իրենց սպասումները:

Այսպիսով, «անկորուստ» ինֆլյացիայի վերացման տեսությունը պահանջում է մի շարք գործոնների առկայություն. աշխատանքի շուկայում արագ հավասարակշռության նվաճում, աշխատավարձի ոչ երկարատև պայմանագրի առկայություն, ապագային ուղղված սպասումներ և վստահություն՝ հայտարարված քաղաքականության նկատմամբ: Գործնականում այդպիսի համատեղություն գրեթե հնարավոր չէ:

20.6. Հիստերեզիս և նորքեյնսականություն

Ի տարբերություն նորդասականների, որոնց տեսության հիմքում գործազրկության բնական մակարդակի վարկածն է, ըստ որի, տնտեսությունը կայուն է երկարատև ժամանակաշրջանում, նորքեյնսականները, հակառակը, պնդում են, որ ամբողջական պահանջարկի տատանումները կարող են թողարկման մեծության և զբաղվածության վրա ազդել նաև երկարատև ժամանակաշրջանում: Հիստերեզիսը տերմին է, որն օգտագործվում է տնտեսական փոփոխականների նշանակության վրա իրադարձությունների երկարատև ազդեցությունը նկարագրելու համար:

Ժամանակակից քեյնսականությունը ժխտում է կատարյալ տեղեկատվությունը և ապագային ուղղորդված վարքի մասին ենթադրությունները, որոնք ընկած են նորդասական տնտեսագետների բանական սպասումների տեսության հիմքում: Հակառակը, այսօրվա քեյնսականները համաձայնվում են, որ անվանական աշխատավարձի հարմարվողականությունը ամբողջական առաջարկի երկարատև ուղղահայաց կորի

ձևավորման կարևորագույն պայմանն է, սակայն իրականում դա շատ հիվանդագին, դանդաղ ընթացող գործընթաց է, քանի որ անվանական աշխատավարձը ունի շատ ցածր բացասական ճկունություն:

Դրա պատճառները բազմաթիվ են. նախ՝ աշխատավարձի մասին երկարատև համաձայնագրերի առկայությունը. ընթացիկ ժամանակաշրջանի աշխատավարձի մակարդակը կանխորոշված է նախկինում կնքված համաձայնագրերով: Երկրորդ՝ գործազուրկ դարձած մարդիկ կարող են կորցնել իրենց ազդեցությունը աշխատավարձի մեծության որոշման գործընթացի վրա՝ զրկվելով արհմիության անդամի իրենց կարգավիճակից: Երրորդ՝ եթե ինսայդերների ոչ մեծ խումբը ավելի շատ մտահոգված է սեփական աշխատավարձով, այլ ոչ թե զբաղվածության բարձր մակարդակով, ապա անկումը կարող է հանգեցնել հավասարակշիռ մակարդակից աշխատավարձի մշտական գերազանցմանը և գործազրկության ավելացմանը, դրա բնականոն մակարդակի բարձրացմանը:

Այդ պատճառով քեյնսականները կոչ են անում ակտիվորեն օգտագործել կայունացման քաղաքականությունը՝ բարձր ծախսերի կրճատման նպատակով, որը ծնվում է գործազրկության կամ բարձր ինֆլյացիայի հետևանքով:

Ամփոփում

1. Ամբողջական առաջարկը թողարկման այն գումարային ծավալն է, որը գների տվյալ մակարդակի պայմաններում ֆիրմաները առաջարկում են վաճառքի համար: Սակայն դրա ձևավորման պայմանները տարբեր ձևով են մեկնաբանվում դասական և քեյնսյան մոդելներում:

2. Դասական մոդելում աշխատանքի շուկան միշտ հավասարակշռված է, հետևաբար՝ ամբողջական առաջարկի կորն ունի ուղղահայաց տեսք: Գործազրկություն կարող է ծագել միայն այն դեպքում, եթե իրական աշխատավարձի կոշտությամբ պայմանավորված՝ այն գերազանցի հավասարակշիռ աշխատավարձին:

3. Քեյնսյան մոդելում կոշտ է ընդունվում ոչ թե իրական, այլ անվանական աշխատավարձը: Այդ պատճառով գների աճը հանգեցնում է իրական աշխատավարձի իջեցման, ձեռնարկությունների կողմից աշխատուժի քանակի ավելացման, հետևաբար՝ թողարկման ծավալի մեծացման: Ամբողջական առաջարկի կորի թեքությունը կարճ ժամկետում բացատրվում է նաև աշխատողների սխալ պատկերացումների, անկատար տեղեկատվության և ոչ ճկուն գների մոդելներում: Բոլոր այս մոդելներում թողարկման մեծությունը գերազանցում է բնական մակարդակը այն ժամանակ, երբ գնի մակարդակը գերազանցում է սպասումները:

4. Ամբողջական առաջարկի մեկ այլ մեկնաբանություն է Ֆիլիպսի կորը, որը ցույց է տալիս, որ ամբողջական պահանջարկի կարգավորմանն ուղղված տնտեսական քաղաքականությունը բախվում է ինֆլյացիայի և գործազրկության միջև կարճաժամկետ ընտրության հետ: Ֆիլիպսի կորը որոշում է անվանական աշխատավարձի և սպասվող ինֆլյացիայի մակարդակի, ինչպես նաև գործազրկության աճի տեմպերի և դրա բնական մակարդակի միջև կախվածությունը:

5. Ինֆլյացիայի և գործազրկության ընտրությունը պայմանավորված է ինֆլյացիոն սպասումների մեխանիզմով: Հարմարեցվող կամ իներցիոն սպասումների տեսության մեջ ապագայի մասին պատկերացումները ձևավորվում են նախկինում դրսևորված ինֆլյացիայի տեմպերի հիման վրա: Բանական սպասումների տեսությունը պնդում է, որ ինֆլյացիոն սպասումները ձևավորվում են՝ ելնելով ապագա տնտեսական քաղաքականության մասին տեղեկատվությունից: Այս դեպքում կարելի է վերացնել ինֆլյացիան՝ առանց արտադրության ծավալի կրճատման և գործազրկության աճի: Սակայն այս դեպքում հակաինֆլյացիոն քաղաքականությունը պետք է ստանա վստահության քվե:

Թեստեր և խնդիրներ

1. ***Աշխատողների սխալ պատկերացումների մոդելում աշխատանքի առաջարկի վրա չի ազդում.***
   ա/ գների սպասվող մակարդակը,
   բ/ գների փաստացի մակարդակը,
   գ/ անվանական աշխատավարձը,
   դ/ աշխատանքի նկատմամբ պահանջարկը:

2. ***Համաձայն անկատար տեղեկատվության մոդելի, երբ գների մակարդակը իջնում է, և արտադրողը դա չի սպասում, ապա նա.***
   ա/ ավելացնում է արտադրությունը,
   բ/ չի փոխում արտադրությունը,
   գ/ կրճատում է արտադրությունը,
   դ/ վարձում է ավելի շատ բանվորներ:

3. ***Եթե ոչ ճկուն գների մոդելում գները նախօրոք սահմանող ֆիրմաների տեսակարար կշիռը բարձրանա, կարելի է սպասել, որ ամբողջական առաջարկի կորը.***
   ա/ կտեղափոխվի վերև,
   բ/ կտեղափոխվի ներքև,
   գ/ կդառնա ավելի կտրուկ,
   դ/ կդառնա ավելի հարթ:

4. ***Ֆիլիպսի ժամանակակից կորի համաձայն, ինֆլյացիայի մակարդակը պայմանավորված է երեք գործոններով: Հետևյալ գործոններից որո՞վ այն չի պայմանավորված.***
   ա/ դրամի առաջարկով,
   բ/ սպասվող ինֆլյացիայով,
   գ/ պարբերաշրջանային գործազրկությամբ,
   դ/ առաջարկի շոկերով:

5. ***Եթե սպասվող ինֆլյացիան աճում է, Ֆիլիպսի կորը.***
   ա/ տեղափոխվում է վերև,
   բ/ տեղափոխվում է ներքև,
   գ/ դառնում է ավելի կտրուկ,
   դ/ դառնում է ավելի հարթ:

6. ***Ենթադրենք՝ կարճաժամկետ AS կորը տրված է հետևյալ հավասարումով.***
   $P = Pe + 1/a(Y - \bar{Y}) + E$ ***, որտեղ՝ a=10, E-առաջարկի շոկերն են: Ելակետային վիճակում E=0, P=Pe=100, Y=1000 /թողարկման պոտենցիալ ծավալը/:***
   Ամբողջական պահանջարկի AD կորը տրված է հետևյալ հավասարումով. Y=2000+10P.
   ա. Գտեք շոկերի բացակայության դեպքում տնտեսության մեջ ելակետային հավասարակշիռ վիճակի կոորդինատները, որոնք նկարա-

գրվում են այս հավասարումներով: Արդյոք այդ հավասարակշռությունը երկարատև է:

բ. Ենթադրենք՝ առաջարկի շոկը հանգեցրել է գների 10 տոկոս աճի՝ թողարկման ցանկացած հնարավոր մակարդակի համար: Այսինքն՝ E=10: Գտեք նոր կարճաժամկետ հավասարակշռության կոորդինատները:

7. *Ինֆլյացիայի իջեցումից կորուստների գործակիցը հավասար է 4.5-ի: Գործազրկության՝ 1 տոկոսային կետով գերազանցումը իր բնական մակարդակից, նշանակում է 2 տոկոս ՀՆԱ կորուստ: Դիտարկվող ժամանակաշրջանում պարբերաշրջանային գործազրկության կուտակված ցուցանիշը կազմել է 9%:*

   Քանի՞ տոկոսով է իջել ինֆլյացիայի մակարդակն այդ ժամանակաշրջանում:

Հիմնական հասկացություններ

Առաջարկի շոկ
Կայուն աշխատավարձի մոդել
Աշխատողների սխալ պատկերացումների մոդել
Անկատար տեղեկատվության մոդել
Կայուն գների մոդել
Ֆիլիպսի կարճաժամկետ և երկարաժամկետ կորեր
Ինֆլյացիոն սպասումներ
Հարմարեցվող սպասումներ
Բանական սպասումներ
Հիստերեզիս

Հարցեր կրկնության համար

1. Ինչպե՞ս է բացատրվում գործազրկության առկայությունը ամբողջական առաջարկի դասական և քեյնսյան մոդելներում:
2. Ի՞նչ տարբերություններ և ընդհանրություններ ունեն ամբողջական առաջարկի չորս մոդելները:
3. Ինչպե՞ս է Ֆիլիպսի կորը կապված ամբողջական առաջարկի հետ:
4. Որո՞նք են հարմարեցվող և բանական սպասումների տեսությունների տարբերությունները:
5. Ի՞նչ հանգամանքներում կարելի է կրճատել ինֆլյացիան՝ չառաջացնելով անկում:

ԳԼՈՒԽ 21

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԾԱԺԱՄԿԵՏ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում կդիտարկվեն հետևյալ հարցերը.

- Որո՞նք են փոքր բաց տնտեսության կարճաժամկետ հավասարակշռության պայմանները:
- Ինչո՞ւ է երկիրն ընտրում ազգային արժույթի փոխարժեքի «լողացող» կամ հաստատագրված տարբերակը:
- Ինչպե՞ս է գնահատվում ապրանքների և փողի շուկաների հավասարակշռության մեխանիզմը Մանդել-Ֆլեմինգի մոդելում:
- Ինչպե՞ս են ազդում տնտեսական քաղաքականության ձևերը զուտ արտահանման ծավալի, արժութային կուրսի և ազգային արդյունքի ծավալի վրա:

21.1. Մանդել-Ֆլեմինգի մոդելը և դրա օգնությամբ լուծվող խնդիրները

Տնտեսության կարճաժամկետ վերլուծությունների նպատակով մենք ներկայացրեցինք IS-LM մոդելը, որի միջոցով հնարավոր է պարզել տնտեսական կարճաժամկետ իրավիճակի փոփոխությունները, երբ գները որոշակիորեն կայուն են: Ուսումնասիրել ենք նաև փոքր բաց տնտեսության զարգացման օրինաչափությունները, ինչպես նաև ապրանքների և կապիտալի միջերկրային հոսքերի ազդեցությունը երկրում կատարվող ներդրումների, կապիտալի շուկայի տոկոսադրույքի և զուտ արտահանման ծավալի վրա: Դիտարկել ենք, թե երկիրն ինչպիսի քաղաքականությամբ կարող է ազդել իր արժույթի փոխանակային կուրսի վրա, և դրանք ինչպես են կապվում ապրանքների ու ծառայությունների ներմուծման և արտահանման հետ, ինչպես կարելի է կարգավորել երկրի վճարային հաշվեկշիռը:

Սակայն մեզ համար դեռևս պարզ չէ, թե ինչու է երկիրն ընտրում արժույթի «լողացող» կամ հաստատագրված փոխանակային կուրս, և

դրանք ինչ առանձնահատկություններ են դրսևորում այլ երկրների հետ ունեցած տնտեսական կապերի ընթացքում:

Այս հարցերի լուսաբանման համար ծանոթանանք Մանդել-Ֆլեմինգի մոդելի[1] հավասարումներին և դրանցում գոյություն ունեցող փոփոխականների հիմնական փոխկապվածություններին: Մոդելի հավասարումները երեքն են՝

$$Y=C(Y-T)+I(r)+G+NX(e) \qquad IS$$

$$\frac{M}{P}=L(r\ ;y) \qquad LM$$

$$r=r^*$$

Առաջին հավասարումն արտահայտում է ամբողջական պահանջարկի տարրերը, այն, որ սպառումը որոշվում է տնային տնտեսությունների կողմից տնօրինվող եկամտի մեծությամբ, ներդրումները՝ տոկոսադրույքի մակարդակով, իսկ զուտ արտահանման մեծությունը կախված է փոխանակային կուրսից (e): Երկրորդում փողի շուկայում փողի իրական պաշարը որոշվում է եկամուտների և տոկոսադրույքի մեծությամբ: Երրորդ հավասարումն արտահայտում է փոքր բաց երկրի տոկոսադրույքի հավասարվելը համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքին: Նկատի պետք է ունենալ, որ կարճ ժամկետում գների կայունության պայմաններում իրական տոկոսադրույքը հավասարվում է անվանականին, և անվանական ու իրական փոխանակային կուրսերը միմյանց հավասար են:



IS(e) կորի կախվածությունը փոխանակային կուրսից ցույց է տալիս, որ այն տեղաշարժվում է այնպես, որպեսզի LM կորի հետ հատվի r=r ուղղի վրա:*

Նկ. 21.1. ***Մանդել-Ֆլեմինգի մոդելը Y- r գրաֆիկի վրա***

Այս հավասարումներում գոյություն ունեն երեք փոփոխականներ՝ y, r, e՝ եկամուտների ծավալը, իրական տոկոսադրույքը և փոխանակային կուրսը: Դրանց միջև կախվածությունը հնարավոր է արտահայտել երկու գրաֆիկների միջոցով: Մի դեպքում կարելի է դիտարկել եկամուտների և տոկոսադրույքի միջև կախվածությունը, որն անվանում ենք y-r գրաֆիկ, մյուս դեպքում՝ եկամուտների և փոխանակային կուրսի միջև, որն անվա-

[1] Մոդելի անվանումը կապված է ամերիկացի տնտեսագետներ Ա.Ռ.Մանդելի և Ջ.Մ.Ֆլեմինգի անունների հետ, ովքեր 1960-ական թվականներին զգալի ավանդ ներդրեցին միջազգային առևտրի զարգացման վրա արժութային փոխանակային կուրսերի ազդեցության տեսության մշակման գործում:

նում ենք y-e գրաֆիկ: Դրանցում մոդելի էությունը չի փոխվում, քանի որ y-r գրաֆիկի վրա երեք հավասարումներն էլ հատվում են մի կետում:

Այդ երեք հավասարումների՝ մի կետում հատվելու մեխանիզմը պատկերացնելու համար բավական է հիշել փոքր երկրի տոկոսադրույքը համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքին ինքնըստինքյան հավասարվելու մեխանիզմը: Եթե երկրում տոկոսադրույքը բարձր է, և տեղի է ունենում կապիտալի ներհոսք, ապա արտարժույթի առաջարկը ավելանում է: Ուստի, եթե IS (e) կորը LM-ի հետ հատվում է այնպիսի կետում, որ տոկոսադրույքը բարձր է, ապա կապիտալի ներհոսքը բարձրացնում է երկրի արժույթի փոխանակային կուրսը, որի հետևանքով զուտ արտահանումը փոքրանում է, և IS (e) կորը տեղաշարժվում է դեպի ձախ-ներքև այնքան, մինչև երկրի տոկոսադրույքը համընկնում է համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքին: Ավելի ցածր տոկոսադրույքի պայմաններում IS (e) և LM կորերի հատման դեպքում կապիտալը սկսում է հոսել մեր երկրից, մեր արժույթի կուրսը իջնում է, որը խթանում է զուտ արտահանման ավելացումը, և IS (e) կորը շարժվում է դեպի աջ- վերև, քանի դեռ r-ը չի հավասարվել r*-ին: Քանի որ մեր երկրի համար համաշխարհային տոկոսադրույքը (r*) տրված մեծություն է, ուստի երեք հավասարումների փոխարեն մենք կարող ենք դիտարկել երկուսը, եթե r-ը փոխարինենք r*-ով: Դա հնարավորություն կտա դիտարկելու եկամուտների կախվածությունը փոխանակային կուրսից, և մենք անցում կկատարենք y-e գրաֆիկին, որը կարտահայտվի երկու հավասարությամբ:

$$y=C(y-T)+I(r^*)+G+NX(e) \qquad IS^*$$

$$\frac{M}{P}=L(r^*,y) \qquad LM^*$$

Այս երկու հավասարումների գրաֆիկը ցույց է տալիս, որ LM* կորը կախված չէ փոխանակային կուրսից, իսկ IS* կորը ցույց է տալիս եկամուտների հակադարձ կախվածությունը փոխանակային կուրսից:



Հավասարակշիռ փոխանակային կուրսը ձևավորում է եկամուտների մի ծավալ, որը որոշվում է զուտ արտահանման մեծությամբ, երբ եկամուտների մյուս տարրերը ընդունվում են նախապես տրված:

Նկ. 21.2. Մանդել-Ֆլեմինգի մոդելը Y- e գրաֆիկի վրա

Եթե փորձենք դիտարկել IS* կորի հակադարձ կախվածությունը փոխանակային կուրսից, բավական է հիշել, որ փոխանակային կուրսի և

զուտ արտահանման ծավալի միջև գոյություն ունի հակադարձ կախվածություն, որի հետևանքով պլանավորվող ծախսերի մեջ զուտ արտահանման ծավալը կփոքրանա, սպառման, ներդրումների և պետական ծախսերի նույն ծավալի պայմաններում, և փոխանակային կուրսի աճը կհանգեցնի թողարկման ծավալի կրճատման:

Այսպիսով, այս մոդելը մեզ հնարավորություն է տալիս քննարկել փոխանակային կուրսի և եկամուտների կապը կարճ ժամկետում, որը հնարավոր է օգտագործել տնտեսական քաղաքականության նպատակահարմար ուղղություն ընտրելու, փոխանակային կուրսի այս կամ այն տարբերակը որոշելու, կապիտալի ներհոսքի և արտահոսքի ազդեցությունը տնտեսության կայունացման վրա գնահատելու համար:

Այս բոլոր հարցերը կարելի է լուծել, եթե փորձենք դիտարկել տնտեսական քաղաքականության այս կամ այն ուղղության ազդեցությունը «լողացող» և հաստատագրված փոխանակային կուրսեր օգտագործող փոքր բաց տնտեսությամբ երկրի մակրոտնտեսական ցուցանիշներից երեքի՝ եկամուտների, զուտ արտահանման և փոխանակային կուրսի փոփոխության վրա: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը կիրառում է «լողացող» փոխանակային կուրսի մեխանիզմը, առաջին հերթին քննարկենք տնտեսական քաղաքականության ազդեցությունը այդ պայմաններում:

21.2. Փոքր բաց տնտեսությունը «լողացող» փոխանակային կուրսի դեպքում

Մակրոտնտեսական թվարկված երեք փոփոխականների վրա տնտեսական քաղաքականության ազդեցությունը պարզելու համար հիշենք, որ դրանց վրա կարելի է ազդել հարկաբյուջետային, դրամավարկային և առևտրային քաղաքականությունների միջոցով: Ընդունենք՝ երկիրը իրականացնում է խթանող քաղաքականություն:

Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Ինչպես գիտենք, խթանող հարկաբյուջետային քաղաքականություն իրականացվում է հարկերի կրճատման և պետական ծախսերի ավելացման ճանապարհով: Երկու դեպքում էլ IS* կորը շարժվում է դեպ աջ - վերև, և քանի որ LM* կորը ուղղահայաց գծի տեսք ունի, ապա կորի տեղաշարժը ընդամենը բարձրացնում է արժույթի փոխանակային կուրսը:

Արժույթի փոխանակային կուրսի բարձրացումը հայրենական ապրանքները արտասահմանցիների համար դարձնում է ավելի թանկ, իսկ ներմուծվող ապրանքները ավելի էժան՝ մեզ համար, որի հետևանքով ներմուծումը խթանվում է, իսկ արտահանումը՝ կաշկանդվում: Եթե ազգային արդյունքը չի ավելանում, ապա սպառման ծավալի աճի (երբ կրճատվում են հարկերը) կամ պետական գնումների աճի դեպքում զուտ արտա-

հանման ծավալը պետք է նվազի: IS* կորի հավասարումը կարելի է գրել նաև այլ տեսքով՝

$$NX(e) = y - c(y-T) - G - I(r^*)$$



IS կորի տեղաշարժը բարձրացնում է երկրի արժույթի փոխանակային կուրսը, սակայն եկամուտների մակարդակը մնում է նույնը:*

Նկ. 21.3. Խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը

Այսպիսով, փոքր բաց տնտեսությունում, «լողացող» փոխանակային կուրսի պայմաններում, խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը չի փոփոխում եկամուտների ծավալը, բարձրացնում է երկրի արժույթի փոխանակային կուրսը և կրճատում զուտ արտահանման ծավալը:

Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը

Խթանող դրամավարկային քաղաքականություն իրականացնելու նպատակով երկրի կենտրոնական բանկն ավելացնում է շրջանառության մեջ դրված փողի զանգվածը: Եթե կարճ ժամկետում գները կայուն են, ապա փողի զանգվածի աճը մեծացնում է փողի իրական պաշարը: Փողի իրական պաշարի ավելացումը տեղաշարժում է LM* կորը դեպի աջ, որի ազդեցությամբ երկրի արժույթի փոխանակային կուրսը իջնում է, իսկ եկամուտների հավասարակշիռ ծավալը՝ աճում:



LM կորի տեղաշարժը դեպի աջ հանգեցնում է արժույթի փոխանակային կուրսի անկմանը, որը խթանում է զուտ արտահանումը՝ ազգային արդյունքի ավելացման հաշվին:*

Նկ. 21.4. Խթանող դրամավարկային քաղաքականության ազդեցությունը

Փողի իրական պաշարի ավելացումը բաց տնտեսությունում չի հանգեցնում փողի շուկայի տոկոսադրույքի իջեցմանը, քանի որ կապիտալը սկսում է դուրս հոսել երկրից: Երկրից դուրս հոսող կապիտալի չափով աճում է արտահանումը, ավելանում է նաև զուտ արտահանումը:

Հայաստանի Հանրապետությունում փողի զանգվածի աճի դեպքում կապիտալի շուկայում տոկոսադրույքի անկում չի նկատվում, քանի որ Հայաստանը փակ տնտեսություն չունի, սակայն կապիտալի շուկայում խիստ բարձր տոկոսադրույքը նույնպես չի նպաստում օտարերկրյա կապիտալի ներհոսքին, քանի որ Հայաստանը, ունենալով տարածաշրջանային հակասություններ, կատարյալ բաց տնտեսություն նույնպես չունի: Ուստի պետք է նկատի ունենալ, որ խթանող դրամավարկային քաղաքականության վերոհիշյալ օրինաչափությունները հանդես են գալիս միայն կատարյալ բաց տնտեսություն ունեցող փոքր երկրներում:

Այսպիսով, փոքր բաց տնտեսությունում, «լողացող» փոխանակային կուրսի պայմաններում, խթանող դրամավարկային քաղաքականության արդյունքում թողարկումը (y) ավելանում է, փոխանակային կուրսը (e) իջնում է, զուտ արտահանումը՝ (NX) ավելանում:

Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը

Երկրները արտաքին առևտրային քաղաքականության նպատակ են համարում զուտ արտահանման ավելացումը և արտաքին առևտրի դրական մնացորդի ապահովումը: Այդպիսի քաղաքականության իրականացման երկու ուղի գոյություն ունի՝ սահմանափակել ներմուծվող ապրանքների քանակությունը և տեսականին կամ սահմանել ներմուծվող ապրանքների բարձր մաքսավճարներ, որպեսզի ներմուծումը կրճատվի: Այս քաղաքականությունը ենթադրում է, որ արտահանման նույն ծավալի դեպքում ներմուծման կրճատումը կավելացնի զուտ արտահանումը: Սակայն, երբ զուտ արտահանումը ավելանում է, աճում է նաև արտարժույթի առաջարկը, որի հետևանքով երկրի արժույթի փոխանակային կուրսը բարձրանում է:



Զուտ արտահանման ավելացումը մեծացնում է երկրում արտարժույթի առաջարկը, և արժույթի փոխանակային կուրսը աճում է, սակայն եկամուտը և դրա բաղադրիչները չեն փոփոխվում:

Նկ. 21.5. Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը «լողացող» փոխանակային կուրսի դեպքում

Եթե զուտ արտահանման կախվածությունը փոխանակային կուրսից հակադարձ է, ապա փոխանակային կուրսի աճի դեպքում զուտ արտահանումը կրճատվելու է: Այդ մեխանիզմի գործողությունը տեղի է ունենում այնքան ժամանակ, քանի դեռ արժույթի բարձր փոխանակային կուրսի հետևանքով ապրանքները թանկ են արտասահմանցիների համար: Երբ արտահանումը սկսում է կրճատվել, արժույթի փոխանակային կուրսը

նախկին մակարդակին հասցնելու համար, փաստորեն, արտահանումը կրճատվում է այնքան, որքան նվազել է ներմուծման ծավալը, և զուտ արտահանումը հասնում է նախկին մակարդակին:

Այսպիսով, «լողացող» փոխանակային կուրս ունեցող փոքր բաց տնտեսությունում արտաքին առևտրային խթանող քաղաքականության արդյունքում ո՛չ թողարկումը և ո՛չ էլ զուտ արտահանումը փոփոխություն չեն կրում, այլ կարճ ժամկետում տեղի է ունենում միայն արժույթի փոխանակային կուրսի աճ:

Տնտեսական քաղաքականության վերոհիշյալ երեք ուղղությունների կիրառման արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ փոքր բաց տնտեսության համար ավելի նպատակահարմար է, «լողացող» փոխանակային կուրսի պայմաններում, կարճ ժամկետում կիրառել խթանող դրամավարկային քաղաքականություն: Սակայն այդ եզրահանգումը կարող է խաբուսիկ լինել շուկայական տնտեսության անցնող երկրների համար, քանի որ շուկայական տնտեսության ոչ բոլոր ինստիտուտներն են գործունակ, առավել ևս, եթե տեղի է ունենում տնտեսության խիստ անկում: Տնտեսական անկման պայմաններում ամբողջական պահանջարկը կորցնում է իր խթանող ազդեցությունը, և փողի զանգվածի աճը առաջ է բերում փողի ինֆլյացիայի նոր պոռթկում, որը բացասական ազդեցություն է թողնում տնտեսության մեջ ներդրումներ կատարելու գործընթացի վրա: Դրամավարկային քաղաքականության արդյունավետ ազդեցությունը ՀՀ տնտեսական զարգացման վրա ի հայտ կգա, եթե երկրի ներքին շուկայում կապիտալի տոկոսադրույքը առավելագույն չափով արծագանքի կապիտալի ներհոսքին և մոտենա համաշխարհային ֆինանսական շուկայի տոկոսադրույքին: Սակայն վերջինս կաշկանդվում է հետևյալ պատճառներով.

- Դեռևս խիստ մեծ է զուտ արտահանման բացասական ծավալը (1997թ.՝ 546.9, 1998թ.՝ 681.9, 1999թ.՝ 568.1, 2000թ.՝ 579.6, 2001թ.՝ 531.5 մլն ԱՄՆ դոլար), և արժույթի փոխանակային կուրսի անկումը էական ազդեցություն չի գործում արտահանման ծավալի աճի վրա, քանի որ հայրենական ապրանքները դեռևս չեն կարող մրցակցել համաշխարհային շուկայում:
- Բարձր է ստվերային տնտեսության տեսակարար կշիռը, և կապիտալի տերերը գերադասում են կապիտալի «ստվերային» արտահոսքը դեպի եվրոպական երկրների բանկեր՝ խուսափելով երկրի ներսում ներդրումներ կատարելուց: Դրա հետևանքով կապիտալի տոկոսադրույքը խիստ բարձր է երկրի ներսում և չի նպաստում տնտեսության իրական հատվածում ներդրումներ կատարելուն: Հետևաբար, խթանող դրամավարկային քաղաքականությունը էական ազդեցություն չի կարող ունենալ իրական տոկոսադրույքի իջեցման վրա:
- Ներդրումային դաշտի անկատարությունը, ներդրումների և ներդրողների իրավական անպաշտպանվածությունը, կառավարությունների փոփոխման արագությունը ներքին և արտաքին ներդրողների շրջանում առաջացնում են անվստահություն, որի հետևանքով կապիտալի տերերի

մի մասը նույնպես արտագաղթում է՝ դրանով իսկ մեծացնելով լարվածությունը կապիտալի շուկայում:

Այս ամենի հետևանքով ՀՀ ԿԲ կողմից իրականացվում է ինֆլյացիայի զսպման և արժույթի կուրսի մեծ անկում թույլ չտալու քաղաքականություն, իսկ փողի զանգվածի քանակական աճի դեպքում շատ հաճախ տեղի է ունենում փողի շրջանառության արագության նվազում, քանի որ ստեղծված արդյունքի կենտրոնացման աստիճանը բնակչության փոքր մասի ձեռքում խիստ մեծանում է՝ վերադառնալով առևտրային բանկեր՝ ավանդների տեսքով: Դրա հետևանքով, փողի զանգվածի աճի դեպքում ինֆլյացիայի տեմպերը չեն աճում, և դրամավարկային քաղաքականության ազդեցությունը ՀՀ-ում չեզոքացվում է:

21.3. Փոքր բաց տնտեսությունը հաստատագրված փոխանակային կուրսի պայմաններում

Հաստատագրված փոխանակային կուրսի կիրառման դեպքում երկրի կենտրոնական բանկը նախապես հայտարարում է սեփական արժույթի անվանական փոխանակային կուրսը (օրինակ՝ 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը 550 հայկական դրամ է) և այն պահում է կայուն մակարդակի վրա: Դա նշանակում է, որ այդ դեպքում ԿԲ-ն պետք է պարտավորվի 1 դոլար վճարել 550 դրամ ներկայացնողին և 550 դրամ վճարել 1 դոլար ներկայացնողին: Այլ խոսքով, ԿԲ-ն պետք է ունենա դոլարի և դրամի անհրաժեշտ պաշարներ՝ նշված գործարքները կատարելու համար:

Հաստատագրված փոխանակային կուրս ունեցող երկրի ԿԲ-ի դրամավարկային քաղաքականության հիմնական գործառույթը արժույթի փոխանակային կուրսի կայունության պահպանումն է, քանի որ փողի զանգվածի ցանկացած փոփոխություն արժույթի փոխանակային շուկայական կուրսը շեղում է հաստատագրված կուրսից, որի հետևանքով դրամավարկային քաղաքականության ազդեցությունը չեզոքացվում է:

Այսպես, եթե փողի զանգվածի աճը գերազանցում է փողի պահանջարկի աճի տեմպը, ապա երկրի արժույթի կուրսը իջնում է ինֆլյացիայի արագացման հետևանքով: Այդ օրինաչափությունը դիտարկել ենք 12-րդ գլխում: Երկրի արժույթի շուկայական կուրսի անկման դեպքում մարդիկ կսկսեն ԿԲ-ից գնել արտարժույթ և վաճառել շուկայում ավելի բարձր գնով, որի հետևանքով շրջանառության մեջ գտնվող սեփական արժույթը կհոսի ԿԲ այնքան ժամանակ, քանի դեռ արժույթի շուկայական կուրսը չի հավասարվի հաստատագրված կուրսի մակարդակին:

Եվ հակառակը, եթե ԿԲ-ն կրճատում է փողի զանգվածը փողի պահանջարկից ավելի, ապա տեղի է ունենում երկրի արժույթի կուրսի բարձրացում՝ փողի դեֆլյացիայի հետևանքով: Այս դեպքում վերավաճառողները շուկայում կգնեն արտարժույթ և կվաճառեն ԿԲ-ին, որի հետևանքով փողի զանգվածը շրջանառության մեջ կավելանա այնքան

ժամանակ, քանի դեռ արժույթի շուկայական կուրսը չի հավասարվել հաստատագրված կուրսի մակարդակին:

Երկու դեպքերի քննարկումից կարող ենք եզրակացնել, որ արժույթի հաստատագրված կուրս ունեցող երկրի ԿԲ խնդիրը այդ կուրսի պահպանումն է, որը հնարավոր է իրականացնել մակրոտնտեսական անհրաժեշտ պայմաններ ունենալու դեպքում: Այդպիսի պայմաններ են՝ տնտեսական աճի որոշակի կայուն տեմպերի պահպանումը, սեփական արժույթի ինֆլյացիայի չափավոր կայուն տեմպերը, վճարային հաշվեկշռի ոչ մեծ պակասուրդը, պետական բյուջեի հաշվեկշռվածությունը:

Տնտեսական աճի կայուն տեմպեր ունեցող երկրները փողի զանգվածի աճը համապատասխանեցնում են իրական ՀՆԱ աճի տեմպերին, և դրա հետևանքով ազգային արժույթը չի արժեզրկվում այլ արժույթների հետ փոխանակման ընթացքում: Ազգային արժույթի փոխանակային կուրսի չնչին տատանումները էականորեն չեն ազդում արտարժույթի պաշարների փոփոխության վրա, և երկիրը կարողանում է կիրառել ազգային արժույթի հաստատագրված կուրս:

Սեփական արժույթի ինֆլյացիայի չափավոր տեմպերի դեպքում փոխանակային կուրսը չի փոփոխվում, քանի որ զարգացած բոլոր երկրների ազգային արժույթները (դոլար, ֆունտ ստեռլինգ, իեն, եվրո և այլն) նույնպես տարեկան արժեզրկվում են 3-5 տոկոսի սահմաններում: Ուստի, երբ երկու երկրների արժույթները արժեզրկվում են նույն տոկոսաչափով, ապա արժույթի անվանական կուրսը հավասարվում է իրական կուրսին, և դրանք կայունանում են (տես՝ 12-րդ գլուխը):

Երկրի վճարային հաշվեկշռի ոչ մեծ պակասուրդը թույլ է տալիս հավասարակշռել արտարժույթի պահանջարկը և առաջարկը, որը արժույթի փոխանակային կուրսի կայունության պայմանն է: Իրոք, եթե արտարժույթի պահանջարկը մի փոքր գերազանցում է առաջարկը, ապա երկրի ԿԲ-ն իր պահուստներից որոշակի քանակությամբ արտարժույթ է շուկա հանում և բավարարում պահանջարկի նկատմամբ առաջարկի այդ պակասուրդը: Այդպիսի գործառնություն կիրառեց ՀՀ ԿԲ-ն, երբ 1998թ. ՌԴ օգոստոսյան ֆինանսական ճգնաժամից հետո մեր երկրում արտարժույթի պահանջարկը սկսեց աճել: Այդ գործընթացի հետևանքով հանրապետության արժույթի (դրամ) և զարգացած երկրների արժույթների հարաբերակցությունը էական փոփոխություն չկրեց:

Պետական բյուջեի հաշվեկշռվածությունը արժույթի փոխանակային կուրսի կայունության համար անհրաժեշտ պայման է, քանի որ բյուջեի պակասուրդի դեպքում երկրի արտաքին և ներքին պարտքը ավելանում է: Եթե երկրի արտաքին պարտքը ավելանում է, ապա տվյալ պահին այդ չափով արտարժույթի առաջարկ է ձևավորվում, սակայն պարտքի վերադարձման ընթացքում արտարժույթի պահանջարկն է կտրուկ աճում, որի հետևանքով հաստատագրված կուրսի կիրառումը կասկածի տակ է դրվում: Եթե երկրի ներքին պարտքն է ավելանում, ապա այն վերադարձնելու համար կառավարությունը կամա-ակամա պետք է ավելացնի գանձվող հարկերը, որը գների աճի նախադրյալ է հանդիսանալու: Իսկ վերջինիս ազդեցությամբ՝ արժույթի փոխանակային կուրսը կնվազի: Գոյություն

ունեն հաստատագրված փոխանակային կուրսի կիրառման այլ պայմաններ (քաղաքական իրադրությունը երկրում, միջազգային հարաբերությունները և այլն), սակայն հիմնականը վերոհիշյալ չորս դեպքերն են, որոնց առկայությամբ միայն երկիրը կարող է ունենալ արժույթի հաստատագրված փոխանակային կուրս:

Այժմ դիտարկենք տնտեսական քաղաքականության հնարավոր ազդեցությունները հաստատագրված փոխանակային կուրսի դեպքում:

Հարկաբյուջետային քաղաքականություն

Ինչպես գիտենք, խթանող հարկաբյուջետային քաղաքականություն վարելու համար երկրի կառավարությունը պետք է կրճատի հարկերը կամ ավելացնի պետական ծախսերը: Երկու դեպքում էլ IS* կորը տեղաշարժվում է աջ-վերև, որի ազդեցությամբ երկրի արժույթի փոխանակային կուրսը կբարձրանա, քանի որ LM* կորի հետ այն հատվում է ավելի բարձր փոխանակային կուրսի պայմաններում (տես՝ նկար 21.6):



Երբ IS^*_1 կորը ընդունում է IS^*_2 կորի դիրքը, ապա ԿԲ-ն հաստատագրված փոխանակային կուրսը պահելու համար ավելացնում է փողի զանգվածը, և LM^*_1 կորը ընդունում է LM_2^* կորի դիրքը, որի ազդեցությամբ Y_1-ը ընդունում է Y_2-ի դիրքը:

Նկ. 21.6. Խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը հաստատագրված կուրսի պայմաններում

Սակայն երկրի ԿԲ խնդիրը հաստատագրված փոխանակային կուրսի պահպանումն է, որի համար նա պարտավոր է ավելացնել փողի զանգվածը այն չափով, որ IS* և LM* կորերը հատվեն հաստատագրված ($\overline{e}$) կուրսի պայմաններում: Եկամուտների աճը կլանվում է պետական ծախսերի կամ հարկերի կրճատման դեպքում՝ սպառման ծավալի ավելացմամբ, որոնց հետևանքով զուտ արտահանումը մնում է անփոփոխ:

Այսպիսով, խթանող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը հաստատագրված փոխանակային կուրսի պայմաններում արտահայտվում է միայն եկամուտների (թողարկման) ավելացման վրա:

Դրամավարկային քաղաքականություն

Հաստատագրված փոխանակային կուրսի քաղաքականություն ընդունած երկրներում դրամավարկային քաղաքականություն իրականացնելը անհնար է դառնում, քանի որ, եթե երկրի ԿԲ-ն ավելացնի փողի զանգվածը, ապա LM* կորը կշարժվի դեպի աջ, և արժույթի փոխանակա-

յին շուկայական կուրսը կիջնի հաստատագրված կուրսի մակարդակից: Այս դեպքը արդեն մեզ ծանոթ է: Այդ պայմաններում կսկսեն ԿԲ-ից գնել արտարժույթ և իրացնել շուկայում, որի հետևանքով երկրի արժույթը կհոսի ԿԲ: Այդ գործընթացը կիրականացվի այնքան ժամանակ, քանի դեռ արժույթի շուկայական փոխանակային կուրսը չի հավասարվել հաստատագրված կուրսի մակարդակին: Դրա հետևանքով LM* կորը կշարժվի մինչև իր նախկին դիրքը:

Հետևաբար, խթանող դրամավարկային քաղաքականությունը չի կարող ազդեցություն ունենալ եկամուտների և զուտ արտահանման վրա և միայն կնպաստի սպեկուլյանտների հարստանալուն:

Արտաքին առևտրային քաղաքականություն

Արդեն գիտենք, որ երկու ուղիով իրականացվող արտաքին առևտրային քաղաքականության նպատակը ներմուծման կրճատման հաշվին զուտ արտահանման ավելացումն է: Եթե երկիրը արտահանում է ավելի, քան ներմուծում է, ապա արտարժույթի առաջարկը գերազանցում է արտարժույթի պահանջարկը, և արժույթի փոխանակային կուրսը բարձրանում է: Դա արտահայտվում է այն բանում, որ IS* կորը տեղաշարժվում է աջ-վերև: Սակայն, երկրի ԿԲ-ն իր առջև խնդիր ունենալով պահել հաստատագրված փոխանակային կուրսը, պարտավոր է շրջանառության մեջ ավելացնել փողի զանգվածը այն չափով, որ IS* և LM* կորերը հատվեն հաստատագրված ($\bar{e}$) կուրսի պայմաններում (տե՛ս նկ. 21.7):



Երբ IS^*_1 կորը ընդունում է IS^*_2 կորի դիրքը, երկրի արժույթի փոխանակային կուրսը խիստ աճում է, որի համար ԿԲ-ն ավելացնում է փողի զանգվածը, և LM^*_1 կորը ընդունում է LM^*_2 կորի դիրքը: Դրա հետևանքով եկամուտները Y_1–ից դառնում են Y_2:

Նկ. 21.7. Արտաքին առևտրային քաղաքականության ազդեցությունը հաստատագրված փոխանակային կուրսի պայմաններում

Եկամուտների ավելացման դեպքում երկրի ներսում սպառումը, ներդրումները և պետական ծախսերը չեն փոփոխվում, և զուտ արտահանումը նույնպես ավելանում է, քանի որ գործում է հաստատագրված փոխանակային կուրսերի մեխանիզմը: Պետք է նկատի ունենալ նաև, որ եկամուտների աճի դեպքում ազգային խնայողություններն աճում են, որի հետևանքով S-I տարբերությունը նույնպես մեծանում է, իսկ այդ տարբերությունը հավասար է զուտ արտահանմանը:

Այսպիսով, ի տարբերություն «լողացող» փոխանակային կուրսի, հաստատագրված փոխանակային կուրսի դեպքում արտաքին առևտրա-

յին քաղաքականությունը հանգեցնում է եկամուտների և զուտ արտահանման ծավալների ավելացմանը:

Արդեն պարզ է, թե «լողացող» կամ հաստատագրված փոխանակային կուրսի պայմաններում տնտեսական ինչպիսի քաղաքականությամբ կարելի է ազդել մակրոտնտեսական երեք ցուցանիշների՝ ամբողջական եկամուտների, փոխանակային կուրսի և զուտ արտահանման ծավալի վրա: Ուստի յուրաքանչյուր երկիր ընտրություն է կատարում, թե իր համար որ փոխանակային կուրսի կիրառությունն է անհրաժեշտ՝ նկատի ունենալով դրանց առավելությունների և թերությունների ամբողջությունը:

21.4. ՀՀ արժույթի փոխանակային կուրսը և դրա ձևավորման պայմանները

Երկրի արժույթի փոխանակային կուրսի ընտրությունը կապված է երկու հիմնախնդիրների հետ՝ նախ, որո՞նք են «լողացող» և հաստատագրված փոխանակային կուրսերի առավելությունները տվյալ երկրի համար և երկրորդ, ինչ հնարավորություններ և պայմաններ ունի երկիրը դրանցից որևէ մեկի ընտրության համար:

Աղյուսակ 21.1

Ամբողջական եկամտի (y), փոխանակային կուրսի (e) և զուտ արտահանման (NX) փոփոխությունները տնտեսական քաղաքականության ազդեցությամբ

Տնտեսական քաղաքականությունը	«լողացող» կուրսեր			հաստատագրված կուրսեր		
	Y	e	NX	Y	e	NX
Հարկաբյուջետային	0	↑	↓	↑	0	0
Դրամավարկային	↑	↓	↑	0	0	0
Արտաքին առևտրային	0	↑	0	↑	0	↑

Առաջին խնդիրը պարզելու համար բավական է ընդհանրացնել «լողացող» և հաստատագրված կուրսերի պայմաններում տնտեսական քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Այդ նպատակով, փորձենք ընդհանրացնել «լողացող» և հաստատագրված կուրսերի պայմաններում հարկաբյուջետային, դրամավարկային և արտաքին առևտրային քաղաքականությունների ազդեցությունը մակրոտնտեսական երեք նշված ցուցանիշների վրա՝ նշանակելով ցուցանիշների աճը՝ դեպի վեր ուղղված, ցուցանիշների անկումը՝ դեպի ներքև ուղղված սլաքների միջոցով, իսկ ցուցանիշի անփոփոխ մնալը՝ 0-ով:

Մակրոտնտեսական ցուցանիշների վրա ավելի մեծ ազդեցություն է ունենում դրամավարկային քաղաքականությունը՝ «լողացող» փոխանակային կուրսերի պայմաններում: Տնտեսության վրա դրական ազդեցություն է գործում հաստատագրված կուրսի պայմաններում արտաքին առևտրային քաղաքականությունը: Ուստի «լողացող» կամ հաստատագրված կուրսերից որևէ մեկի առավելությունը միանշանակ չէ: Եթե ամբողջական եկամուտը և զուտ արտահանումը «լողացող» կուրսի պայմաններում հնարավոր է խթանել դրամավարկային քաղաքականությամբ, ապա հաստատագրված կուրսի պայմաններում այդ նույն ցուցանիշները խթանվում են արտաքին առևտրային քաղաքականությամբ:

Այդ է պատճառը, որ տնտեսագետները միանշանակ առավելություն չեն տալիս հաստատագրված կամ «լողացող» փոխանակային կուրսերից որևէ մեկին: Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը աշխարհի բոլոր երկրներում տիրապետող են եղել հաստատագրված կուրսերը՝ *ոսկու ստանդարտի* տեսքով. յուրաքանչյուր երկիր իր արժույթի միավորի համար սահմանում էր ոսկու որոշակի պարունակություն, ըստ որի՝ թղթադրամը ցանկացած բանկի կողմից փոխարինվում էր ոսկով, երկրների արժույթների կուրսերի հարաբերությունը որոշվում էր արժույթի՝ միավորի ոսկու պարունակությամբ:

Թղթադրամի փոխարինումը ոսկով իրականացվեց մինչև 1934թ.: Քանի որ զարգացած երկրների ռազմականացման համար պահանջվում էր ավելացնել պետական ծախսերը, և դա իրականացվում էր սենյորաժի ճանապարհով, ուստի երկրների կենտրոնական բանկերը այլևս հնարավորություն չունեին թղթադրամի դիմաց ոսկի տրամադրել: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում երկրների միջև առևտուրն իրականացվում էր նախապես պայմանավորված փոխանակային կուրսերով, որոնք կայուն չէին: Այդ պատճառով, դեռևս պատերազմի ավարտից առաջ, աշխարհի զարգացած երկրների տնտեսագետների ներկայացուցիչների մասնակցությամբ, 1944թ. կնքվեց Բրետոն-Վուդյան համաձայնագիրը (ըստ խորհրդակցության վայրի, ԱՄՆ, Հեմփշիրի նահանգ), որի հիման վրա հաստատագրված կուրսերի մեխանիզմը՝ ոսկու ստանդարտը, փոխարինվեց *դոլարի ստանդարտով*:

Դոլարի ստանդարտը պահանջում էր բոլոր երկրների արժութային կուրսերը որոշել այդ երկրի և ԱՄՆ դոլարի փոխանակային կուրսի միջոցով, ընդունելով, որ մեկ ունցիա ոսկին (31.1 գրամ) համարժեք է 35 ԱՄՆ դոլարի: Ուստի, եթե որոշում ենք ֆունտ ստեռլինգի (Մեծ Բրիտանիա), իենի (Ճապոնիա) կամ եվրոյի կուրսը դոլարի նկատմամբ, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ այդ արժույթների միավորի՝ ոսկու պարունակությունը: Դա, իհարկե, Խորհրդային Միությանը չէր վերաբերում, քանի որ

խորհրդային ռուբլին փոխանակվում էր միայն երկրի կառավարության կողմից և փոխանակային շուկայական կուրս գոյություն չուներ[1]:

Դոլարի ստանդարտը զգալի ազդեցություն ունեցավ ԱՄՆ-ի ֆեդերալ պահուստային համակարգի (ՖՊՀ) ոսկու պաշարների պակասեցման վրա, քանի որ մյուս երկրների բանկերի կողմից 35 դոլար ներկայացնելու դեպքում ՖՊՀ-ը պարտավոր էր վճարել մեկ ունցիա ոսկի, մինչդեռ մյուս երկրների արժույթների միավորի առկա պարունակությունը անընդհատ նվազում էր: Այդ էր պատճառը, որ ՖՊՀ-ը 1968թ. դադարեցրեց դոլարի դիմաց ոսկի վճարել, իսկ 1971թ. հրաժարվեց դոլարի ստանդարտից:

Վերջին երեք տասնամյակներում աշխարհի բոլոր երկրները կիրառում են «լողացող» փոխանակային կուրս: Սակայն այլ երկրների հետ առևտրային կապերի պահպանման և մյուսներին վնաս չպատճառելու համար աշխատում են որոշակիորեն կայուն պահել իրենց արժույթի փոխանակային կուրսը և այն արժեզրկման (դևալվացիա) չենթարկել: Պատահական չէ, որ ձևավորվեցին արժութային միություններ: Այսպես, 1979թ. եվրոպական 8 երկրներ (Բելգիա, ԳՖՀ, Դանիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Իսլանդիա, Ֆրանսիա) ստեղծեցին եվրոպական արժութային համակարգը (ԵԱՀ): ԵԱՀ-ն նպատակ ուներ նպաստել այդ երկրների տնտեսական զարգացման սերտաճմանը և փոխանակային կուրսերը կայուն պահելուն: Եթե որևէ երկրի արժույթի կուրսը նվազում է, ապա ԵԱՀ խորհուրդը որոշում է թույլատրել այդ կուրսի չափավոր անկում, սակայն այն պետք է իրականացվի ԵԱՀ անդամ բոլոր երկրներում:

Այսպիսով, եթե փորձենք ընդհանրացնել «լողացող» և հաստատագրված փոխանակային կուրսերի դրական և բացասական գծերը, կարելի է ընդգծել.

♦ Հաստատագրված փոխանակային կուրսերը նպաստում են արտաքին տնտեսական կապերի խորացմանը, երկրների տնտեսական սերտաճմանը և երկրի ներսում սեփական արժույթի ինֆլյացիայի տեմպերի նվազեցմանը: Սակայն այդպիսի կուրսերի պայմաններում դադարում է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների՝ որպես տնտեսության մակրոտնտեսական կարգավորման պետական լծակների ազդեցությունը: Այդ է պատճառը, որ հաստատագրված կուրսերին առավելություն են տալիս տնտեսությանը պետական պասիվ միջամտության կողմնակից տնտեսագետները, հատկապես՝ մոնետարիստները:

♦ «Լողացող» փոխանակային կուրսը հնարավորություն է տալիս երկրի տնտեսական դժվարությունների ժամանակ ներգործել դրամավարկային քաղաքականության միջոցով՝ գործազրկության և ինֆլյա-

[1] 1947թ. Խորհրդային Միությունում տեղի ունեցավ դրամական ռեֆորմ: Տնտեսագետները առաջարկեցին մեկ ԱՄՆ դոլարի դիմաց սահմանել 14 խորհրդային ռուբլի: Ի.Վ.Ստալինը կապույտ մատիտով ջնջեց մեկ թիվը՝ ասելով որ կապիտալիստներին բավական է 4 ռուբլին: Դա հարցի էությունը չէր փոխում, քանի որ արտաքին առևտրի և մյուս ֆինանսական հարաբերությունների գնահատումը կատարվում էր ԱՄՆ դոլարով: Խորհրդային ցանկացած քաղաքացու կողմից արժույթի փոխանակության փորձը համարվում էր քրեական հանցագործություն:

ցիայի կարճաժամկետ խնդիրները լուծելու համար: Մի հանգամանք, որը հնարավոր չէ իրագործել հաստատագրված կուրսի պայմաններում: «Լողացող» փոխանակային կուրսի ջատագովներ են տնտեսությանը պետական ակտիվ միջամտության կողմնակիցները, հատկապես՝ նորքեյնսականները:

Տնտեսագետների շրջանում փոփոխվում է «լողացող» և հաստատագրված փոխանակային կուրսերի կողմնակիցների հարաբերակցությունը: Եթե 1970-ական թվականներին տնտեսագետների գերակշիռ մասը կողմնակից էր «լողացող» փոխանակային կուրսերի կիրառմանը, ապա դարավերջին արդեն տնտեսագետները առավելություն էին տալիս հաստատագրված կուրսին՝ նկատի ունենալով երկրների տնտեսական սերտաճման և խորքային տնտեսական կապերի անհրաժեշտությունը:

ԱՄՆ դոլարի և ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխանակային կուրսերի դինամիկան 1994-2004 թթ. (տարեսկզբի դրությամբ)



Սակայն հաստատագրված կուրսի կիրառման հնարավորության մասին այս գլխում ներկայացված պահանջները ՀՀ-ում դեռևս ստեղծված չեն: Դա է ապացուցում նաև ՀՀ դրամի արժեզրկման ընթացքի դիտարկումը: Դեռևս 1993 թ. նոյեմբերին հանրապետությունում սեփական արժույթ մտցնելու ժամանակ ՀՀ ԿԲ կողմից սահմանվեց ԱՄՆ մեկ դոլարի փոխանակային կուրսը՝ 14.5 դրամ: Սակայն շատ կարճ ժամկետում դրամի կուրսը խիստ անկում ապրեց և 1994 թ. սկզբին արդեն հասնում էր ԱՄՆ մեկ դոլարի դիմաց 100, իսկ 1994 թ. վերջին՝ 410 դրամի:

Չնայաց ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի կուրսի որոշակի կայունացմանը, այնուամենայնիվ, դրամի հաստատագրված կուրսի քաղաքականության կիրառման հնարավորություն դեռևս ՀՀ-ն չունի, քանի որ սեփական արտադրության արտահանման հարաբերությունը ներմուծմանը 2000 թ. կարողացել է ապահովել արտարժույթի (դոլարի) պահանջարկի միայն 40 տոկոսը: Նշանակում է՝ «լողացող» կուրսի կիրառումը ՀՀ-ում դեռևս անհրաժեշտություն է և մոտ ապագայում հնարավոր չի լինելու անցնել դոլարի նկատմամբ դրամի կայուն արժութային կուրսի քաղաքականությանը:

Ամփոփում

1. Մանդել-Ֆլեմինգի մոդելը հնարավորություն է տալիս դիտարկել փոքր բաց տնտեսություն ունեցող երկրի արտաքին տնտեսական կապերի կարգավորման մեխանիզմները և բացահայտել դրանց բարելավման ուղղությունները պետական քաղաքականության միջոցով:

2. «Լողացող» փոխանակային կուրսի քաղաքականություն կիրառող փոքր բաց տնտեսությամբ երկրներում պետական քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական երկու ցուցանիշների՝ ամբողջական եկամտի և զուտ արտահանման վրա ավելի մեծ է համապատասխան դրամավարկային քաղաքականության իրականացման պայմաններում:

3. Հաստատագրված փոխանակային կուրս ունեցող փոքր բաց տնտեսությամբ երկրներում պետական քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական այդ երկու ցուցանիշների վրա ավելի մեծ է՝ արտաքին առևտրային քաղաքականության ներգործությամբ:

4. ՀՀ-ում դրամի հաստատագրված կուրսի օգտագործման իրական տնտեսական պայմաններ դեռևս ստեղծված չեն, և նոր տնտեսական համակարգին անցնելու ընթացքում նպատակահարմար է «լողացող» փոխանակային կուրսի կիրառումը:

Թեստեր և խնդիրներ

1. Մանդել-Ֆլեմինգի մոդելի համաձայն՝ արժութային փոխանակային կուրսի բարձրացումը կհանգեցնի.

ա. և՛ ներմուծման պահանջարկի, և՛ արտահանման պահանջարկի նվազմանը,
բ. ներմուծման պահանջարկի ավելացմանը և արտահանման պահանջարկի նվազմանը,
գ. ներմուծման պահանջարկի նվազմանը և արտահանման պահանջարկի ավելացմանը,
դ. և՛ ներմուծման պահանջարկի, և՛ արտահանման պահանջարկի ավելացմանը:

2. Եթե Հայաստանի կառավարությունը որևէ երկրի արտադրանքի նկատմամբ սահմանի քվոտա՝ առևտրային պակասուրդը փոքրացնելու համար, ապա.

ա. փոխանակային կուրսը կբարձրանա, և ընթացիկ գործառնությունների հաշվի պակասուրդը կնվազի,
բ. փոխանակային կուրսը կբարձրանա, և ընթացիկ գործառնությունների հաշվի պակասուրդը կմնա անփոփոխ,
գ. փոխանակային կուրսը կիջնի, և ընթացիկ գործառնությունների հաշվի պակասուրդը կմնա անփոփոխ,
դ. և՛ փոխանակային կուրսը, և՛ ընթացիկ գործառնությունների հաշվի պակասուրդը կմնա անփոփոխ:

3. Հաստատագրված փոխանակային կուրսով բաց տնտեսությունում խթանող դրամավարկային քաղաքականությունը.

ա. ավելացնում է եկամուտը,
բ. պակասեցնում է եկամուտը,
գ. իջեցնում է տոկոսադրույքը,
դ. անհնար է իրականացնել դրամավարկային քաղաքականություն:

4. Հաստատագրված փոխանակային կուրսի պայմաններում.

ա. միայն դրամավարկային քաղաքականությունը կարող է փոխել եկամուտը,
բ. միայն հարկաբյուջետային քաղաքականությունը կարող է փոխել եկամուտը,
գ. և՛ դրամավարկային քաղաքականությունը, և՛ հարկաբյուջետային քաղաքականությունը կարող են փոխել եկամուտը,
դ. ո՛չ դրամավարկային քաղաքականությունը, ո՛չ հարկաբյուջետային քաղաքականությունները չեն կարող փոխել եկամուտը:

5. Լողացող փոխանակային կուրս ունեցող փոքր բաց տնտեսությունում խթանող դրամավարկային քաղաքականության արդյունքում.

ա. եկամուտը ավելանում է,
բ. եկամուտը պակասում է,
գ. եկամուտը մնում է անփոփոխ,
դ. եկամուտը կարող է ավելանալ կամ պակասել՝ կապված փոխանակային կուրսի փոփոխությունից:

6. Լողացող փոխանակային կուրս ունեցող փոքր բաց տնտեսությունում խթանող դրամավարկային քաղաքականության արդյունքում.

ա. եկամուտը ավելանում է, փոխանակային կուրսը բարձրանում է, զուտ արտահանումը նվազում է,

բ. եկամուտը ավելանում է, փոխանակային կուրսը իջնում, զուտ արտահանումը ավելանում է,

գ. բոլոր ցուցանիշներն ավելանում են,

դ. բոլոր ցուցանիշները նվազում են:

7. Ենթադրենք՝ լողացող փոխանակային կուրսով փոքր բաց տնտեսության LM կորն ունի Y=200r-200+ 2 (M/P) հավասարում, իսկ IS կորը տրված է Y=400+3G –2T +3NX –200r հավասարությամբ: NX ֆունկցիան տրված է NX=200-100e, որտեղ՝ e-ն փոխանակային կուրսն է: Գների մակարդակը (P) հաստատագրված է P=1.0 արժեքում:

Համաշխարհային տոկոսադրույքը՝ r*=2.5%:

ա) Սկզբնական փոխանակային կուրսը հավասար է 1.0: Նկատի չունենալով համաշխարհային տոկոսադրույքը, որոշել հավասարակշիռ վիճակում Y, r, NX մեծությունների արժեքները LM, IS կորերի հատման կետում, եթե M=100, G=100, T=100 e=1.0: Ստացված r տոկոսադրույքը բարձր է, թե՞ ցածր համաշխարհային r* տոկոսադրույքից:

բ) IS կորը հավասարակշիռ վիճակի չձգտելու համար պետք է շարժվի արդյոք դեպի աջ-վերև կամ դեպի ձախ-ներքև, կորի տեղափոխումը տեղի կունենա փոխանակային կուրսի փոփոխությամբ, այն կաճի, թե՞ կնվազի:

գ) Զուտ արտահանման ի՞նչ ծավալ է անհրաժեշտ հավասարակշռության համար, ինչի՞ է հավասար հավասարակշիռ փոխանակային կուրսը: Ինչպիսի՞ն են կարճաժամկետ Y-ի և r-ի մակարդակները:

դ) Եթե կառավարությունը ցանկանում է պահպանել փոխանակային կուրսը e=1.0 կետում, ի՞նչ ծավալի G-ի դեպքում կստեղծվի հավասարակշիռ վիճակ: Ինչպիսի՞ն կլինեն Y-ի և r-ի մակարդակները այդ դեպքում:

ե) Ենթադրենք՝ մենք շարժվում ենք հավասարակշիռ վիճակից, երբ G=100, և այն աճում է մինչև G=200, ինչպիսի՞ն կլինի նոր հավասարակշիռ վիճակը Y, r, NX, e մեծությունների համար: Փոփոխվել է արդյոք այլ մեծություն, բացի G/Y հարաբերությունից: Ի՞նչն է փոփոխվել:

զ) Ենթադրենք՝ M-ը (e) կետի վիճակից աճել է մինչև 150 (G=200): Ինչի՞ են հավասար Y,r, NX, e մեծությունները կարճաժամկետ հեռանկարում: Ինչո՞վ են տարբերվում այդ տվյալները (ե) կետի տվյալներից:

Հիմնական հասկացություններ

Մանդել-Ֆլեմինգի մոդելը
«Լողացող» փոխանակային կուրս
Կապիտալի համաշխարհային շուկայի տոկոսադրույք
Հաստատագրված փոխանակային կուրս
Արժույթի արժեզրկում (դևալվացիա)
Արժութային կուրսի պահպանման պայմաններ
Ոսկու ստանդարտ
Դոլարի ստանդարտ

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ նպատակով ենք ուսումնասիրում Մանդել-Ֆլեմինգի մոդելը:
2. Ինչո՞ւ է Մանդել-Ֆլեմինգի մոդելում ենթադրվում գների կայունություն:
3. «Լողացող» փոխանակային կուրսի պայմաններում տնտեսական որ քաղաքականությունն է ավելի շատ ազդում մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության վրա:
4. Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ ՀՀ-ում կապիտալի իրական տոկոսադրույքի իջեցման համար:
5. Հաստատագրված փոխանակային կուրսի պայմաններում տնտեսական որ քաղաքականությամբ է նպատակահարմար ազդել ամբողջական եկամտի և զուտ արտահանման վրա:
6. Ինչո՞ւ ոսկու ստանդարտը փոխարինվեց դոլարի ստանդարտով:
7. Ինչո՞ւ դադարեց դոլարի ստանդարտի կիրառությունը:
8. Որո՞նք են ՀՀ դրամի կուրսի արագ անկման պատճառները:
9. Ի՞նչ պայմաններում կայունացավ դրամի փոխանակային կուրսը: